

ՀԱՏՈՐ XV

01.01.2021 – 01.07.2022

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
01.01.2021 – 01.07.2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

**ՀՀ
ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆԻ**

01.01.2021

01.07.2022

ՀԱՏՈՐ XV

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ

01.01.2021 – 01.07.2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Հատոր XV

ԵՐԵՎԱՆ - 2023

ՀՏԴ 347.992
ԳՄԴ 67.410
Հ 247

Կազմողներ՝

*Լիլիանա Սիսակյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության առաջարար
մասնագետ*

*Ելենա Մարտոյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության առաջին կարգի
մասնագետ*

*Օքսանա Դիլբանդյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր
մասնագետ*

*Նարինե Առաքելյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր
մասնագետ*

*Անի Սարգսյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր
մասնագետ*

*Զարուհի Զոհրաբյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության առաջին կարգի
մասնագետ*

Հ 247 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ 01.01.2021 – 01.07.2022
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ: ՀԱՏՈՐ XV.– ԵՐ.
ԱՆՏԱՐԵՍ, 2023.– 1136 էջ:

ՀՏԴ 347.992
ԳՄԴ 67.410

ISBN 978-9939-98-083-6

© Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան, 2023

Համաֆինանսավորվում
է Եվրոպական
միության կողմից



Եվրոպական միություն

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Համաֆինանսավորվում
և իրականացվում
է Եվրոպայի խորհրդի
կողմից

Գործընկերություն հանուն լավ կառավարման Աջակցություն դատաիրավական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում

Սույն տպագրությունն իրականացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից համաֆինանսավորվող ծրագրի շրջանակներում: Սույն տպագրության մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում կողմերի պաշտոնական տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆ

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի ուժով հանդիսանալով բարձրագույն դատական ատյան, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Վճռաբեկ դատարանը վերը նշված լիազորության իրականացումը քաղաքացիական և վարչական դատավարության օրենսդրության շրջանակներում գործնականում ապահովում է նաև ինչպես դատարանի կիրառած նյութական և դատավարական իրավունքի նորմերի զարգացմանը՝ ձևավորելով նոր իրավական դիրքորոշումներ ու զարգացնելով արդեն իսկ արտահայտված իրավական դիրքորոշումները, այնպես էլ՝ դատարանի թույլ տված նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումների վերացմանը, որոնց արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը: Ընդ որում, վերը նշված լիազորությունն իրականացնելու արդյունքում որոշումներ կայացնելիս Վճռաբեկ դատարանը բոլոր դեպքերում անհրաժեշտ է համարում ապահովել դրանց համահունչ լինելը նաև ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից համապատասխան հարցերի վերաբերյալ արտահայտված ուղենիշային դիրքորոշումներին:

Միասնական դատական պրակտիկայի չափանիշների մշակումը և ամրագրումն օրենքի ու դատարանի առջև բոլորի հավասարության, իրավական որոշակիության, ինչպես նաև իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքների ապահովման հիմնական և ամենաարդյունավետ մեխանիզմն է:

Նշված լիազորություններով պայմանավորված Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումներն ուղղորդող նշանակություն ունեն ինչպես դատավորների, իրավաբանական համայնքի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար, այնպես էլ որոշ դեպքերում հիմք են հանդիսանում համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու միջոցով օրենքներում և այլ իրավական ակտերում կատարել որոշակի փոփոխություններ ու լրացումներ:

ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ Վճռաբեկ դատարանի գործառույթների կյանքի կոչման հարցում մեծ նշանակություն ունի հասարակության վերաբերմունքը և վստահությունն արդարադատության նկատմամբ, որն էլ իր հերթին արտահայտվում է վճռաբեկ բողոքներ ներկայացնելու միջոցով:

2021 թվականի և 2022 թվականի մինչև հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում ներկայացված ու վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները քննելու արդյունքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը կայացրել է մի շարք որոշումներ, որոնք իրենց բնույթով, ըստ էության, հանդիսանում են նախադեպային նշանակության և նպաստում են ինչպես միասնական դատական պրակտիկայի ապահովմանը, իրավունքի զարգացմանը, այնպես էլ՝ ինչ-որ չափով կանխարգելող միջոց են հանդիսանում ապագայում մարդու իրավունքների և ազատությունների հնարավոր նմանատիպ հիմնարար խախտումներ թույլ տալու համար:

Սույն ընտրանին հանդիսանում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից կայացված որոշումների թվով 15-րդ հատորը: Այն բաղկացած է նախադեպային որոշումներում քննության առարկա դարձած իրավական հարցադրումներից, չորս բաժնից՝ «Եզրափակիչ դատական ակտեր» (քաղաքացիական գործերով), «Քաղաքացիական գործերով միջանկյալ դատական ակտեր», «Գործն ըստ էության

լուծող դատական ակտեր» (վարչական գործերով), «Վարչական գործերով միջանկյալ դատական ակտեր»: Բաժիններն իրենց հերթին ներառում են քաղաքացիական իրավունքին, քաղաքացիական դատավարությանը, վարչական իրավունքին և վարչական դատավարությանը վերաբերող գլուխներ:

Բացի Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումներից ներկայացված են նաև դատավորների կողմից կոնկրետ գործերով հայտնված հատուկ կարծիքները:

Սույն ընտրանիում ներառվել են որոշումներ, որոնք ուղղորդող նշանակություն ունեն, մասնավորապես, այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ քաղաքացիական օրենդրության ոլորտում՝ սնանկությունը, սեփականության իրավունքը, ապահովագրությունը, ժառանգությունը, աշխատանքային վեճերը և դատական ծախսերը, իսկ վարչական օրենսդրության ոլորտում՝ վարչական վարույթը, վարչական պատասխանատվությունը, հարկային իրավունքը, մաքսային իրավունքը, հողային իրավունքը, ընդերքօգտագործման իրավունքը, հարկադիր աճուրդը և վարչական դատավարությունը:

Բացի այդ, առանձին այլ ինստիտուտների վիճահարույց հարցերի վերաբերյալ նույնպես սույն ընտրանիում տեղ են գտել որոշակի դիրքորոշումներ:

Վստահ եմ, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշումների հերթական ընտրանին, ինչպես և նախորդները, կդառնա իրավաբանական հանրության գրադարանի անբաժանելի մասը, ՀՀ բուհերի և այլ կրթական հաստատությունների ուսանողների կրթության համար կունենա գործուն նշանակություն, ինչպես նաև կամրապնդի հասարակության վստահությունը դատական իշխանության նկատմամբ:

**ՀՀ Վճռաբեկ դատարանի
քաղաքացիական պալատի նախագահ
Գ. Հակոբյան**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

Թիվ 15

2021 թ. հունվարից 2022 թ. հուլիս

**ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ԵԶՐԱՓՎԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ	1
Ընդհանուր սեփականություն	1
Կառուցապատման իրավունք	24
Ներկայացուցչություն	36
Գործարքների անվավերությունը	58
Պայմանագրերից ծագող պարտավորություններ	71
Ապահովագրություն	71
Ժառանգություն	101

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Աշխատանքային օրենսդրությունը և դրանով կարգավորվող հարաբերությունները	111
Աշխատանքային կարգապահությունը	123
Աշխատանքային պայմանագրի լուծումը	130

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ **186**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գործերի ընդդատությունը	268
Քաղաքացիական դատավարության մասնակիցները	290

Դատական ծանուցումներ: Դատավարական փաստաթղթերն ուղարկելու (հանձնելու) կարգը	304
Դատական ծախսեր	317
Հատուկ վարույթի կարգով քննվող գործերը	358
Վարույթի ավարտն առանց գործն ըստ էության լուծելու	369
Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը	377
Վարույթը վերաքննիչ դատարանում	387
Դատական ակտերը նոր երևան եկած և նոր հանգամանքներով վերանայելու վարույթը	437
Դատական ակտերի հարկադիր կատարում	455
 ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ	
Դատական ծախսեր	499
 ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ	
ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ	
ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ	
 ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Վարչական վարույթ	508
Վարչական պատասխանատվություն	702
Հարկային իրավունք	771
Մաքսային իրավունք	830
Հողային իրավունք	855
Ընդերքօգտագործման իրավունք	871
Հարկադիր աճուրդ	885
 ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	
Գործերի ընդդատություն	910
Դատավարական ժամկետներ	923
Դատական ծանուցումներ	941
Վարույթը վարչական դատարանում	949

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ****ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Վարչական վարույթ 968

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարույթը վարչական դատարանում 1007

Դատավարական ժամկետներ 1028

Գործ հարուցելու հիմքը 1078

Վարույթը վերաքննիչ դատարանում 1091

Աղբյուրների ցանկ թիվ 1
Սույն ընտրանիում ներառված քաղաքացիական գործերով
կայացրած դատական ակտերում կիրառված
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

1. ՄԴՈ-630, 2006 թվականի ապրիլի 18	(4), (12)
2. ՄԴՈ-652, 2006 թվականի հոկտեմբերի 18	(36)
3. ՄԴՈ-690, 2007 թվականի ապրիլի 9	(29), (36)
4. ՄԴՈ-719, 2007 թվականի նոյեմբերի 28	(36)
5. ՄԴՈ- 731, 2008 թվականի հունվարի 29	(12)
6. ՄԴՈ-735, 2008 թվականի փետրվարի 25	(15)
7. ՄԴՈ-753, 2008 թվականի մայիսի 13	(4), (12)
8. ՄԴՈ-765, 2008 թվականի հոկտեմբերի 8	(36)
9. ՄԴՈ-787, 2009 թվականի փետրվարի 3	(20)
10. ՄԴՈ-804, 2009 թվականի մայիսի 26	(12)
11. ՄԴՈ- 844, 2009 թվականի դեկտեմբերի 7	(36)
12. ՄԴՈ-873, 2010 թվականի ապրիլի 13	(36)
13. ՄԴՈ-881, 2010 թվականի մայիսի 4	(4)
14. ՄԴՈ-890, 2010 թվականի մայիսի 25	(36)
15. ՄԴՈ-932, 2011 թվականի հունվարի 11	(36)
16. ՄԴՈ- 942, 2011 թվականի փետրվարի 22	(36)
17. ՄԴՈ-984, 2011 թվականի հուլիսի 15	(12), (33)
18. ՄԴՈ-991, 2011 թվականի հոկտեմբերի 11	(4)
19. ՄԴՈ-1004, 2011 թվականի դեկտեմբերի 6	(30)
20. ՄԴՈ-1037, 2012 թվականի հուլիսի 18	(36)
21. ՄԴՈ-1038, 2012 թվականի հուլիսի 18	(4)
22. ՄԴՈ-1052, 2012 թվականի հոկտեմբերի 16	(19), (36)
23. ՄԴՈ-1099, 2013 թվականի մայիսի 31	(33)
24. ՄԴՈ-1114, 2013 թվականի սեպտեմբերի 18	(33)
25. ՄԴՈ-1115, 2013 թվականի սեպտեմբերի 24	(24), (36)
26. ՄԴՈ-1127, 2013 թվականի դեկտեմբերի 10	(36)
27. ՄԴՈ-1142, 2014 թվականի ապրիլի 2	(4), (12), (23)
28. ՄԴՈ-1176, 2014 թվականի դեկտեմբերի 2	(4), (23), (34)
29. ՄԴՈ-1190, 2015 թվականի փետրվարի 10	(36)
30. ՄԴՈ-1192, 2015 թվականի մարտի 3	(36)
31. ՄԴՈ-1196, 2015 թվականի մարտի 17	(36)
32. ՄԴՈ-1197, 2015 թվականի ապրիլի 7	(36)
33. ՄԴՈ-1213, 2015 թվականի հունիսի 9	(12), (34)
34. ՄԴՈ- 1220, 2015 թվականի հունիսի 16	(36)
35. ՄԴՈ-1222, 2015 թվականի հունիսի 26	(36)
36. ՄԴՈ-1224, 2015 թվականի հուլիսի 7	(4)
37. ՄԴՈ-1249, 2015 թվականի դեկտեմբերի 22	(19)
38. ՄԴՈ-1257, 2016 թվականի մարտի 10	(36)
39. ՄԴՈ-1270, 2016 թվականի մայիսի 3	(4), (23), (34)
40. ՄԴՈ-1289, 2016 թվականի հունիսի 23	(36)
41. ՄԴՈ-1357, 2017 թվականի մարտի 14	(4)
42. ՄԴՈ-1424, 2018 թվականի հուլիսի 10	(12)
43. ՄԴՈ-1439, 2019 թվականի հունվարի 22	(4)
44. ՄԴՈ-1449, 2019 թվականի մարտի 19	(4)
45. ՄԴՈ-1575, 2021 թվականի փետրվարի 2	(19)

Աղբյուրների ցանկ թիվ 2
Սույն ընտրանիում ներառված քաղաքացիական գործերով
կայացրած դատական ակտերում կիրառված Մարդու
իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. Ashingdane v. The United Kingdom, 1985 թվականի մայիսի 28-ի վճիռ (36)
2. Brumărescu v. Romania, 1999 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (28)
3. Burdov v. Russia, 2002 թվականի մայիսի 7-ի վճիռ (34), (35)
4. Busuioc v. Moldova, 2004 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռ (12)
5. De Haan v. The Netherlands, 1997 թվականի օգոստոսի 26-ի վճիռ (23)
6. Dumitru Gheorghe v. Romania, 2016 թվականի ապրիլի 12-ի վճիռ (28)
7. Fazil Fazil Aslaner v. Turkey, 2014 թվականի հուլիսի 7-ի վճիռ (23)
8. Garcia Ruiz v. Spain, 1999 թվականի հունվարի 21-ի վճիռ (29)
9. Ghulyan v. Armenia, 2019 թվականի հունվարի 24-ի վճիռ (23)
10. Grieves v. The United Kingdom, 2003 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռ (23)
11. Hornsby v. Greece, 1997 թվականի մարտի 19-ի վճիռ (24)
12. Ivanova and Ivashova v. Russia, 2017 թվականի ապրիլի 26-ի վճիռ (19)
13. James and others v. The United Kingdom, 1986 թվականի փետրվարի 21-ի վճիռ (3)
14. Khachatryan v. Armenia, 2009 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռ (24)
15. Khalfaoui v. France, 2000 թվականի մարտի 14-ի վճիռ (30), (36)
16. Kopecký v. Slovakia, 2004 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռ (34), (35)
17. Kreuz v. Poland, 2001 թվականի հունիսի 19-ի վճիռ (36)
18. Kudla v. Poland, 2000 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռ (8)
19. Kyprianou v. Cyprus, 2005 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռ (23)
20. Micallef v. Malta, 2009 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռ (23)
21. Morel v. France, 2000 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռ (23)
22. Mostacciolo v. Italy, 2006 թվականի մարտի 29-ի վճիռ (24)
23. Nicholas v. Cyprus, 2018 թվականի հունվարի 9-ի վճիռ (23)
24. Piersack v. Belgium, 1982 թվականի հոկտեմբերի 1-ի վճիռ (23)
25. Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium, 1995 թվականի նոյեմբերի 20-ի վճիռ (34),(35)
26. Ramirez Sanchez v. France, 2006 թվականի հուլիսի 4-ի վճիռ (8)
27. Raylyan v. Russia, 2007 թվականի փետրվարի 15-ի վճիռ (24)
28. Rotaru v. Romania, 2000 թվականի մայիսի 4-ի վճիռ (8)
29. Salov v. Ukraine, 2005 թվականի սեպտեմբերի 6-ի վճիռ (29)
30. Sporrang and Lönnroth v. Sweden, 1982 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռ (3)
31. The former king of Greece v. Greece, 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռ (3)
32. Zavodnik v. Slovenia, 2015 թվականի մայիսի 21-ի վճիռ (19)

Աղբյուրների ցանկ թիվ 3
Սույն ընտրանիում ներառված վարչական գործերով
կայացրած դատական ակտերում կիրառված
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

1. ՄԴՆ-1037, 2012 թվականի հուլիսի 18	(33)
2. ՄԴՆ-652, 2006 թվականի հոկտեմբերի 18	(31), (33)
3. ՄԴՆ-690, 2007 թվականի ապրիլի 9	(31), (33)
4. ՄԴՆ-719, 2007 թվականի նոյեմբերի 28	(31), (33)
5. ՄԴՆ- 765, 2008 թվականի հոկտեմբերի 8	(31), (33)
6. ՄԴՆ- 844, 2009 թվականի դեկտեմբերի 7	(31), (33)
7. ՄԴՆ-873, 2010 թվականի ապրիլի 13	(31), (33)
8. ՄԴՆ-890, 2010 թվականի մայիսի 25	(31), (33)
9. ՄԴՆ-932, 2011 թվականի հունվարի 11	(31), (33)
10. ՄԴՆ- 942, 2011 թվականի փետրվարի 22	(31), (33)
11. ՄԴՆ-1037, 2012 թվականի հուլիսի 18	(31), (33)
12. ՄԴՆ-1052, 2012 թվականի հոկտեմբերի 16	(31), (33)
13. ՄԴՆ-1115, 2013 թվականի սեպտեմբերի 24	(31), (33)
14. ՄԴՆ-1127, 2013 թվականի դեկտեմբերի 10	(31), (33)
15. ՄԴՆ-1190, 2015 թվականի փետրվարի 10	(31), (33)
16. ՄԴՆ-1192, 2015 թվականի մարտի 3	(31), (33)
17. ՄԴՆ-1196, 2015 թվականի մարտի 17	(31), (33)
18. ՄԴՆ-1197, 2015 թվականի ապրիլի 7	(31), (33)
19. ՄԴՆ- 1220, 2015 թվականի հունիսի 16	(31), (33)
20. ՄԴՆ-1222, 2015 թվականի հունիսի 26	(31), (33)
21. ՄԴՆ-1257, 2016 թվականի մարտի 10	(31), (33)
22. ՄԴՆ-1289, 2016 թվականի հունիսի 23	(31), (33)
23. ՄԴՆ-902, 2010 թվականի հուլիսի 7	(28)
24. ՄԴԱՆ-175, 2021 թվականի օգոստոսի 5	(29)
25. ՄԴՆ-1143, 2014 թվականի ապրիլի 8	(29)
26. ՄԴՆ-864, 2010 թվականի փետրվարի 5	(29)
27. ՄԴՆ-914, 2010 թվականի սեպտեմբերի 14	(29)
28. ՄԴՆ-630, 2006 թվականի ապրիլի 18	(5), (6), (29)
29. ՄԴՆ-731, 2008 թվականի հունվարի 29	(29)
30. ՄԴՆ-753, 2008 թվականի մայիսի 13	(29)
31. ՄԴՆ-984, 2011 թվականի հուլիսի 15	(29)
32. ՄԴՆ-1142, 2014 թվականի ապրիլի 2	(6), (8), (29)
33. ՄԴՆ-1176, 2014 թվականի դեկտեմբերի 2	(29)
34. ՄԴՆ-1213, 2015 թվականի հունիսի 9	(29)
35. ՄԴՆ-1270, 2016 թվականի մայիսի 3	(6), (29)
36. ՄԴՆ-1423, 2018 թվականի հուլիսի 10	(12)
37. ՄԴՆ-920, 2010 թվականի հոկտեմբերի 12	(5), (13)
38. ՄԴՆ-906, 2010 թվականի սեպտեմբերի 7	(27)
39. ՄԴՆ-1022, 2012 թվականի ապրիլի 17	(27)
40. ՄԴՆ-1115, 2013 թվականի սեպտեմբերի 24	(4)
41. ՄԴՆ-1153, 2014 թվականի հունիսի 3	(5)
42. ՄԴՆ-1448, 2019 թվականի մարտի 19	(5)
43. ՄԴՆ-753, 2008 թվականի մայիսի 13	(5)
44. ՄԴՆ-1148, 2014 թվականի ապրիլի 18	(5)
45. ՄԴՆ-1213, 2015 թվականի հունիսի 9	(5)

46. ՄԴՈ-1270, 2016 թվականի մայիսի 3	(5)
47. ՄԴՈ-1432, 2018 թվականի հոկտեմբերի 30	(6)
48. ՄԴՈ-903, 2010 թվականի հուլիսի 13	(6)
49. ՄԴՈ-1529, 2020 թվականի մայիսի 12	(6)
50. ՄԴՈ-787, 2009 թվականի փետրվարի 3	(32)
51. ՄԴՈ-741, 2008 թվականի մարտի 18	(7)
52. ՄԴՈ-1137, 2014 թվականի փետրվարի 4	(8)
53. ՄԴՈ-1592, 2021 թվականի մայիսի 4	(9)
54. ՄԴՈ-1546, 2020 թվականի հունիսի 18	(9)
55. ՄԴՈ-1448, 2019 թվականի մարտի 19	(9)
56. ՄԴՈ-1127, 2013 թվականի դեկտեմբերի 10	(31)
57. ՄԴՈ-1257, 2016 թվականի մարտի 10	(31)
58. ՄԴՈ-1344, 2017 թվականի փետրվարի 7	(31)

Աղբյուրների ցանկ թիվ 4
Սույն ընտրանիում ներառված վարչական գործերով
կայացրած դատական ակտերում կիրառված Մարդու
իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. Ankerl v. Switzerland, 1996 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռ (25)
2. Ashingdane v. The United Kingdom, 1985 թվականի մայիսի 28-ի վճիռ (31), (33)
3. Hornsby v. Greece, 1997 թվականի մարտի 19-ի վճիռ (4)
4. Khachatryan v. Armenia, 2009 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռ (4)
5. Khalfaoui v. France, 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (33)
6. Mostacciuolo v. Italy, 2006 թվականի մարտի 29-ի վճիռ (4)
7. Papon v. France, 2002 թվականի հուլիսի 25-ի վճիռ (33)
8. Raylyan v. Russia, 2007 թվականի փետրվարի 15-ի վճիռ (4)
9. Staroszczyk v. Poland, 2007 թվականի մարտի 22-ի վճիռ (33)
10. Stubbings and Others v. The United Kingdom, Judgment,
1996 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռ (31)
11. The Sunday Times v. the United Kingdom, 1979 թվականի ապրիլի 26-ի վճիռ (6)
12. Trgo v. Croatia, 2009 թվականի հունիսի 11-ի վճիռ (7)
13. Varnima Corporation International S.A. v. Greece (N° 48906/06),
2009 թվականի մայիսի 28-ի վճիռ (29)
14. Vasilescu v. Romania, 1998 թվականի մայիսի 22-ի վճիռ (28)
15. Zouboulidis v. Greece (N 36963/06), 2009 թվականի հունիսի 25-ի վճիռ (29)

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի մայիսի 24

1. Պավել Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանն ընդդեմ Սվետլանա Եփրեմյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԱԳԳ/0223/02/17

Էջ
1-8

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի հիմքով գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության պարտադիր պայմանի առկայությանը, ինչպես նաև փաստի հաստատված լինելու հարցը պարզելիս դատարանի կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գործում եղած բոլոր ապացույցները գնահատելուն:

2021 թվականի սեպտեմբերի 30

2. Անահիտ Ղազարյանն ընդդեմ Հարություն Ղազարյանի, «Շանտան» ՍՊԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/4634/02/16

Էջ
9-23

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի բաժնեմասը դրանում ներառված իրավունքների և պարտականությունների ամբողջ ծավալով, կարող է համարվել ամուսինների համատեղ սեփականություն.

2. արդյո՞ք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալիս ամուսնության ընթացքում ամուսինների կողմից ձեռք բերված գույքի տնօրինում է, թե միայն ընկերության մասնակցի՝ կորպորատիվ սուբյեկտիվ իրավունքի իրացում:

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

2021 թվականի հոկտեմբերի 19

3. «Երևանի Կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ն ընդդեմ Նաիրա Ավետիսյանի և Ա/Ձ Մհեր Հարությունյանի, քաղաքացիական գործ թիվ ԵՄԳ/3644/02/17

Էջ
24-35

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն փաստական հանգամանքներին, որոնք ենթակա են պարզման ձեռքբերողի կողմից ներկայացված՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հայցի հիման վրա հարուցված քաղաքացիական գործն ըստ էության քննելիս և լուծելիս:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հուլիսի 22

4. Կարեն Խաչատրյանն ընդդեմ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, քաղաքացիական գործ թիվ ԵԳ/1134/02/19

Էջ
36-57

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով բանկում ղեկավար համարվող անձի պաշտոնավարությունը ժամանակավորապես դադարեցնելու, նրան տրված լիազորագրերը վերացնելու և նրա պարտականությունները ժամանակավորապես այլ անձի վրա դնելու մասին իրավական ակտի առկայության պարագայում վերջինիս նկատմամբ, որպես բանկի ղեկավարի, կարող է կիրառվել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը:

ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

2022 թվականի փետրվարի 24

5. Ստեփան Գրիգորյանը, Անահիտ Գրիգորյանն ընդդեմ Արսեն Բաղդասյանի, Սուսաննա Խաչյանի և Արթուր Ավայանի, քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/5820/02/14

Էջ
58-70

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ այն իրավական հարցին, թե արդյոք լիազորագիրը խաբեության արդյունքում տալու հանգամանքը հիմնավորող օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը բավարար է հաստատված համարելու գործարքը խաբեությամբ կնքված լինելու հանգամանքը, թե դա կարող է հիմնավորվել միայն քաղաքացիական գործի շրջանակներում ձեռք բերված այլ ապացույցներով:

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի փետրվարի 23

6. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությունն ընդդեմ Արամ Խաչունցի, քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԳ/2065/02/17

Էջ
71-84

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե ո՞ր պահից սկսած է կիրառելի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցն ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքի հիման վրա վերջինիս վճարման ենթակա գումարի նկատմամբ:

2021 թվականի հուլիսի 23

7. «Ռոսգոստորախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն ընդդեմ Արկադի Անդրեասյանի և Խաչատուր Ենգոյանի, քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0611/02/18

Էջ
85-100

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. ո՞ր դեպքերում են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոյի (Բյուրո) կանոնները հանդիսանում ապահովագրության պայմանագրի մաս և արդյո՞ք այդ կանոններով կարգավորվում են միայն ապահովագրության պայմանագրից ծագած իրավահարաբերություններ,

2. արդյո՞ք ապահովագրական ընկերությունը գրկվում է հետադարձ պահանջի ներկայացման իր իրավունքից բոլոր այն դեպքերում, երբ նման պահանջը նախ և առաջ չի ներկայացնում պարտապահին ծանուցում իրականացնելու միջոցով:

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի մարտի 3

8. Ըստ Էդուարդ Մանասյանի դիմումի՝ կտակի ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0019/02/17

Էջ
101-110

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք կտակի գոյության մասին տեղյակ չլինելու պատճառով ժառանգության ընդունման ժամկետի բացթողնումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածում որպես ժամկետի վերականգնման հիմք չնախատեսելը կարող է արդյոք որակվել իրավունքի բաց և հաղթահարվել իրավունքի անալոգիայի (praeter legem) սկզբունքի կիրառմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ԳՐԱՆՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2021 թվականի հոկտեմբերի 22

9. Գևորգ Կարապետյանն ընդդեմ «Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԳ/0392/02/20

Էջ
111-122

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է բաժնետիրական ընկերության վերստուգողի հետ որոշակի ժամկետով կնքված պայմանագրից ծագող իրավահարաբերությունների նկատմամբ կիրառման ենթակա օրենսդրության, ինչպես նաև բաժնետիրական ընկերության վերստուգողի հետ որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը դրա ժամկետը լրանալուց հետո անորոշ ժամկետով կնքված համարելու իրավական հնարավորության հարցերին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

2021 թվականի փետրվարի 23

10. Արմենակ Մարկոսյանն ընդդեմ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԳ/42766/02/19

Էջ
123-129

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. գրավոր բացատրություն ներկայացնելու համար աշխատողին ժամկետ տրամադրված չլինելու դեպքում արդյո՞ք կարգապահական տույժ կիրառելու՝ օրենքով սահմանված կարգը համարվում է պահպանված, երբ գործատուի մոտ քննարկման ժամանակ աշխատողը հրաժարվել է բացատրություններ տալուց:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

2021 թվականի փետրվարի 26

11. Ադիս Աբրահամյանն ընդդեմ «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամի, քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/2552/02/17

Էջ
130-140

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու առանձնահատկություններին:

2021 թվականի մարտի 19

12. Հրայր Լևոնյանը, Մարի Քոչարյանը և Արարատ Հարությունյանն ընդդեմ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/0834/02/16

Էջ
141-157

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք մինչև «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 24.06.2010 թվականի թիվ ՀՕ-117-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 07.08.2010 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի կարգավորումների ուժով աշխատանքային պայմանագիրը լուծելիս վերջնահաշվարկ կատարելիս գործատուն պարտավոր էր աշխատողին արձակուրդից հետ կանչելու հետևանքով վճարված, սակայն չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի համար վճարել միջին աշխատավարձ.

2. արդյո՞ք Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատողին արձակուրդից հետ կանչելու հետևանքով վճարված, սակայն չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի համար միջին աշխատավարձ վճարելու վերաբերյալ նորմերը կիրառելի են մինչև Օրենքն ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

2021 թվականի դեկտեմբերի 30

13. Մակյա Գասպարյանն ընդդեմ «Ինթելիջենթ Դիջիթլ Թեքնոլոջիա» ՍՊԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԳ/40356/02/19

Էջ
158-170

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է աշխատանքային պայմանագրով սահմանված փորձաշրջանի արդյունքներով աշխատանքային պայմանագիրը լուծելու առանձնահատկություններին:

2022 թվականի ապրիլի 28

14. Աստղիկ Մխիթարյանն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի, քաղաքացիական գործ թիվ ԱՐԳ/3713/02/20

Էջ
171-185

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ հարցերին.

1. արդյո՞ք հանրակրթական դպրոցի տնօրենը հանդիսանում է ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատող,

2. արդյո՞ք սույն գործով հայցվորի կողմից թույլ տրված արարքներն իրենց բնույթով համարվում են վերջինիս աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի:

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հունվարի 27

15. «Արդշինբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Ա/Ձ Արմենուհի Գրիգորյանի, սնանկության գործ թիվ ՄնԳ/0276/04/19

Էջ
186-193

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք պայմանագրային վեճերը լուծելու արբիտրաժային համաձայնության առկայությունը կարող է սահմանափակել պարտապահին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու պարտատիրոջ իրավունքը:

2021 թվականի հուլիսի 13

16. «Յունիբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հին Էրիվան հողինգ» ՍՊԸ-ի, սնանկության գործ թիվ ԵԿԳ/0090/04/13

Էջ
194-206

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք գրավի առարկայի նկատմամբ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած ապահովված պարտատիրոջ կողմից գրավի առարկան դեռևս չիրացված լինելը կարող է խոչընդոտ հանդիսանալ սնանկության գործի վարույթն ավարտելու համար:

2022 թվականի ապրիլի 29

17. Երևան համայնքի դիմումը՝ «Ընդերքաբեր» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործ թիվ ԿԳ/0040/04/15

Էջ
207-234

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ սնանկության դատարանի որոշմամբ վարձակալի գործունեությունը կասեցված լինելու պայմաններում անշարժ գույքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այդ պայմանագիրը վերսկսված համարելու առանձնահատկություններին և դրանցից բխող իրավական հետևանքներին:

2022 թվականի փետրվարի 25

18. Արթուր Շահինյանի դիմումը՝ «ԴԵԼՏԱ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործ թիվ ԵԱԲԳ/0112/04/14

Էջ
235-245

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մսնանկության մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածում նշված հաշվետվությունը կառավարչի կողմից չներկայացվելու հիմքով վերջինիս լիազորությունները նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով վաղաժամկետ դադարեցնելու առանձնահատկություններին:

2021 թվականի հուլիսի 21

19. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիմումն ընդդեմ Ա/Ձ Զոյա Մկրտչյանի, սնանկության գործ թիվ ԱՐԳ/0070/04/15

Էջ
246-267

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով

սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելն ու բաց թողնված ժամկետը վերականգնելը կարող է մերժվել, եթե բողոքարկման ժամկետի բացթողումը պայմանավորված է դատարանի կողմից իր պարտականության ոչ պատշաճ կատարման հետ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴԳԱՏՈՒԹՅՈՒՆԸ

2022 թվականի սեպտեմբերի 19

Էջ
268-289

20. Երվանդ Վարոյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, քաղաքացիական գործ թիվ ԵԴ-21389/02/18

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածին, իրականացնելով օրենքի միատեսակ կիրառության իր գործառույթը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

2021 թվականի մարտի 24

Էջ
290-303

21. «Սիմարքիս» ՍՊԸ-ն ընդդեմ Նարեկ Ասատրյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ-4336/02/15

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. հանդիսանում է արդյոք ապահովադիրը պատշաճ պատասխանող այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասի հատուցման պահանջն օրենքի ուժով դրված է ապահովագրական ընկերության վրա, սակայն հայցը ներկայացվել է ընդդեմ ապահովադիրի:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ: ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ (ՀԱՆՁՆԵԼՈՒ) ԿԱՐԳԸ

2021 թվականի մարտի 19

Էջ
304-316

22. «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Քրիստինե Տոնոյանի և Օվսաննա Մեսրոբյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ-2357/02/17

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք հասցեն փոփոխելու վերաբերյալ հաղորդման բացակայության դեպքում ծանուցումը համարվում է հանձնված հասցեատիրոջը՝ անկախ հասցեատիրոջ՝ այդ հասցեում բնակվելու հանգամանքից.

2. գործով մի քանի անձանց կողմից մեկ բողոք ներկայացնելու դեպքում, երբ վիճելի իրավահարաբերությունը ենթադրում է համապարտություն, արդյոք նրանցից յուրաքանչյուրից պետք է գանձվի պետական տուրքի ամբողջ գումարը:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

2022 թվականի փետրվարի 24

Էջ
317-327

23. Դոնարա Նազարյանը և Ռուբեն Բաբակեյանն ընդդեմ Արտակ Գալստյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԴ-6604/02/19

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի գործողության ժամանակ հարուցված քաղաքացիական գործով կողմի կրած փաստաբանի վարձատրության գումարը կարո՞ղ է արդյոք դրախտ դատական ծախս պահանջվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին ուժի մեջ մտնելուց հետո հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում:

2022 թվականի մարտի 4

24. «Ինվեսթմենթ Լո Գրուպ» ՍՊԸ-ն ընդդեմ Վիկտոր Տեր-Հովսեփյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/4708/02/17

Էջ
328-357

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. փաստաբանի և վստահորդի միջև կնքված պայմանագրով հաջողության հոնորար սահմանված լինելու դեպքում արդյո՞ք ծագում է հոնորարի վճարման պարտականությունը, եթե վերջինս կախվածության մեջ է դրվել վստահորդի կողմից դրամական գումարներ կամ այլ գույք փաստացի ստանալու հանգամանքից, որը, սակայն, չի ստացվել, իսկ վստահորդն առաջնորդվել է իրավունքների պաշտպանության այլ եղանակով, քան առաջարկել է իր փաստաբանը:

ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐԳՈՎ ՔՆՆՎՈՂ ԳՈՐԾԵՐԸ

2021 թվականի փետրվարի 23

25. Ըստ դիմումի՝ Մեյրան Խաչատրյանի իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին, քաղաքացիական գործ թիվ ԵԿ/3061/02/19

Էջ
358-368

Խնդիր. Վճռաբեկ դատարանն հատուկ և հայցային վարույթների առանձնահատկությունների լույսի ներքո անդրադարձել է փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու վերաբերյալ գործերով աշխատողի և կենսաթոշակային ապահովության դրոշմում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի միջև իրավունքի մասին վեճի ծագման իրավական հնարավորության խնդրին:

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՎԱՐՏՆ ԱՌԱՆՑ ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԵԼՈՒ

2022 թվականի հոկտեմբերի 7

26. «Յունիքումի» ՓԲԸ-ն ընդդեմ «Դիեքս փորձագիտական կենտրոն» ՍՊԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԿ/23320/02/20

Էջ
369-376

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում կրկին անդրադառնալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով հայցն առանց քննության թողնելու իրավական հնարավորության հարցին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

2022 թվականի փետրվարի 24

27. Ըստ Նաիրա Աբգարյանի դիմումի՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու պահանջի մասին, քաղաքացիական գործ թիվ ԼԳ-2/1719/02/20

Էջ
377-386

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ իրավական հարցերին.

1. Ի՞նչ որոշում է ենթակա կայացման այն պարագայում, երբ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, և քացակայում է բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը,
2. Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացված լինելու պայմաններում արդյո՞ք առկա է նույն որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ հաճախորդի կողմից դիմում ներկայացվելու հնարավորություն:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

2021 թվականի մայրի 26

28. Վեներա Մկրտչյանն ընդդեմ Լիանա և Արման Մկրտչյանների, քաղաքացիական գործ թիվ ԵՄԳ/1083/02/11

Էջ
387-393

Խնդիր. Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուն վերաբերող իրավական կարգավորումները:

2021 թվականի փետրվարի 26

29. Նելլի Միքայելյանն ընդդեմ ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի, քաղաքացիական գործ թիվ ՎԳ-7104/05/15

Էջ
394-413

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դատական ակտի պատճառաբանական մաս չունենալու հիմքով անվերապահ բեկանելու պայմաններին:

2021 թվականի դեկտեմբերի 24

30. Արմեն Եղիազարյանն ընդդեմ Հայրապետ Դավթյանի իրավահաջորդներ Հայկ, Վարդուհի և Մելսիդա Դավթյանների, քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԳ-1535/02/11

Էջ
414-430

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք վերաքննիչ բողոքը չի կարող քննվել վերաքննիչ դատարանում այն հիմնավորմամբ, որ կողմը բողոքում շոշափվող հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը չի հայտնել առաջին ատյանի դատարանում, եթե բողոքը ներկայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից գործի փաստերի նկատմամբ կիրառելի իրավական կարգավորումները սխալ որոշված լինելու հիմքով:

2021 թվականի մայիսի 14

31. «Ավիակոմպանիա «Պրեդա»» ՍՊԸ-ի դիմումի՝ Ստավրոպոլի շրջանի Միներալ-նիե Վոդիի քաղաքային դատարանի, քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/0006/16/19

Էջ
431-436

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտի յուրաքանչյուր էջը կնքված չլինելու պատճառաբանությամբ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքին՝ անկախ այդ մասին վճռաբեկ բողոքում նշված լինելու հանգամանքից:

Էջ
437-444

**ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԿԱՄ ՆՈՐ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՎԱՐՈՒՅԹԸ**

2021 թվականի մայիսի 13

32. Երևան համայնքն ընդդեմ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԳ-2543/02/16

Էջ
445-454

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք նոր Երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտը բողոքարկելիս վարչական մարմնին կարող է տրամադրվել պետական տուրքից ազատման ձևով արտոնություն:

2022 թվականի հունիսի 6

33. Նելլի Միքայելյանն ընդդեմ Անահիտ Եղիազարյանի, Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի, քաղաքացիական գործ թիվ ԵՄԳ/0992/02/14

Էջ
455-480

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոքի հիման վրա հարուցված վարույթի քննության առանձնահատկություններին:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ

2021 թվականի մայիսի 14

34. «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն ընդդեմ Թամարա Մարգարյանի, Դիանա և Շողիկ Աղաջանյանների, Ռոման Առաքելյանի, Քյարամ Գուսեյանի, Վայա Ավետիսյանի ու Հայկ Մահակյանի, քաղաքացիական գործ թիվ ԱՐԳ/3612/02/16

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք դատարանը կարող է մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությանը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիմքով տարածամկետել դատական ակտի կատարումը, եթե դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին դիմումը ներկայացվել է այդ դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

2021 թվականի նոյեմբերի 25

35. «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն ընդդեմ Արթուր Լալայանի, Արտակ Ավալյանի, Կարեն Գրիգորյանի և Վարդան Գրիգորյանի, քաղաքացիական գործ թիվ ՏԳ/0956/02/17

Էջ
480-498

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ այն հարցին, թե արդյո՞ք անհրաժեշտ է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին դիմումի հետ միաժամանակ ներկայացնել պարտապանների՝ պահանջին համարժեք ապահովում տրամադրելու մասին պատրաստակամությունը և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտ լինելը հիմնավորող ապացույցներն այն դեպքում, երբ դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին դիմումը ներկայացրել է պահանջատերը:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

2022 թվականի հունիսի 24

1. Արմեն Գևորգյանն ընդդեմ Մուշեղ Շուշանյանի և Արուսյակ Ջուլիակյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԳ/28353/02/19

Էջ

499-507

Խնդիր. Վճռարեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ պետական տուրքի գծով արտոնություններ կիրառելու առանձնահատկություններին:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՑ

2021 թվականի հունիսի 11

1. Անահիտ Մխիթարյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/5859/05/16

Էջ
508-517

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք իրավաչափ է վարչական մարմնի կողմից անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելն այն դեպքում, երբ այդ նույն անշարժ գույքի նկատմամբ արդեն իսկ առկա է այլ անձի սեփականության իրավունքի գրանցում:

2021 թվականի նոյեմբերի 26

2. Սամվել Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/1626/05/16

Էջ
518-544

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք պարտավորեցման հայցը կարող է համարվել թույլատրելի և ենթակա լինել դատարանի քննությանն այն պարագայում, երբ առկա չէ հայցվող բարենպաստ վարչական ակտը մերժելու մասին վարչական մարմնի կողմից ընդունված միջամտող վարչական ակտ:

2021 թվականի նոյեմբերի 26

3. «Արմոյլ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ պետական եկամտունների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/1945/05/18

Էջ
545-562

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եկամտային հարկի հաշվարկման և վճարման իրավական հարցին այլ անձի պարտավորությունների կատարման նպատակով ֆիզիկական անձի կողմից գրավադրված գույքի իրացման դեպքում:

2021 թվականի դեկտեմբերի 30

4. Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամն ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության, վարչական գործ թիվ ՎԳ/10676/05/18

Էջ
563-574

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք կատարողական թերթի առկայության և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հիմքերի բացակայության պայմաններում հարկադիր կատարողն իրավասու է կատարողական թերթով պարտապան կամ պահանջատեր հանդիսացող ֆիզիկական անձի մահացած լինելու դեպքում չհարուցել կատարողական վարույթ և վերադարձնել կատարողական թերթն այն տրամադրած դատարան:

2022 թվականի փետրվարի 23

5. Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Էրիկա Չիլինգարյանի, վարչական գործ թիվ ՎԳ/0376/05/17

Էջ
575-596

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Պարտավոր է արդյո՞ք վարչական մարմինն իրականացնել մեկ վարչական վարույթ նույն շինարարության թույլտվության ժամկետը խախտած մեկից ավելի կառուցապատողների նկատմամբ տուգանք կիրառելու համար:

2022 թվականի ապրիլի 04

6. Աղասի Ավետիսյանը և Մկրտիչ Ավետիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության,

Էջ
597-613

Վարչական գործ թիվ ՎԳ/2664/05/15

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող, սակայն կատարողական վարույթում պարտապան չհանդիսացող անձը պետք է ներգրավվի կատարողական վարույթում, և ինչ կարգով պետք է ապահովվի վերջինիս լաված լինելու իրավունքը:

2022 թվականի սպրիլի 14

7. Մարետա Խուրշուդյանը և Նաիրա Ավետիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչական գործ թիվ ՎԳ/0424/05/18

Էջ
614-634

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցադրմանը, թե արդյո՞ք պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների օտարման պահանջն ինքնին ներառում է նաև այդ կառույցի օրինականացման պահանջ:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը անդրադարձել է պարտավորեցման հայցի շրջանակներում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափության պարզման համար ձեռք բերված անհրաժեշտ ապացույցների գանգվածին:

2022 թվականի մայիսի 10

8. Գոհար Հակոբյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/8932/05/18

Էջ
635-659

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրում. Արդյո՞ք վարչական մարմինն իրավասու է սեփական նախաձեռնությամբ հարուցել վարչական վարույթ և միջամտող վարչական ակտ ընդունել այն անձի վերաբերյալ, որի նկատմամբ միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով նախկինում ընդունված վարչական ակտը ճանաչվել է անվավեր՝ օրենքի խախտմամբ ընդունված լինելու հիմքով:

2022 թվականի մայիսի 26

9. Մուսաննա Համբարձումյանն ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության, վարչական գործ թիվ ՎԳ/9457/05/18

Էջ
660-701

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. Հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուտի մեկնարկային գնի և ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունն արդյո՞ք գործում է նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ, թե ոչ,

2. Արդյո՞ք աճուրդ նշանակելու մասին որոշումն անվավեր ճանաչելն ինքնին հանգեցնում է աճուրդի արդյունքում այն հաղթած անձի հետ կնքված պայմանագրին ու սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու իրավական հետևանքի, թե ոչ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՄԵԼՆԵԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հուլիսի 23

10. Գագիկ Բոյախյանն ընդդեմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, վարչական գործ թիվ ՎԳ/3231/05/17

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք ղեղատնային գործունեության իրականացմող սուբյեկտը կրում է իրացվող ղեղերի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու փաստը ստուգելու պարտականություն:

Էջ
702-717

2021 թվականի օգոստոսի 27

11. «Յունի Ռ-ենտ» ՍՊԸ-ի տնօրեն Լևոն Աբրահամյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչական գործ թիվ ՎԳ/8445/05/16

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությանը կից լուսանկարի պատճենով հաստատվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման համար անհրաժեշտ՝ ենթադրյալ իրավախախտման փաստը:

Էջ
718-728

2021 թվականի փետրվարի 12

12. Զարար Ջերեջյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչական գործ թիվ ՎԳ/1979/05/17

Էջ
729-745

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. Արդյո՞ք դատարանն իրավասու է տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով վարչական իրավախախտումը հաստատված համարել այն պարագայում, երբ վարչական ակտի հիմքում ընկած տեսանյութը, որպես ապացույց, գործում առկա չէ:

2. Արդյո՞ք վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա կարող է դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն այն դեպքում, երբ այդ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գործի ելքը փոխվել է ի վնաս հայցվորի:

2021 թվականի օգոստոսի 27

13. Գևորգ Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչական գործ թիվ ՎԳ/10036/05/18

Էջ
746-753

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք այլ պետական մարմինների կողմից լիազորությունների ենթադրյալ ոչ պատշաճ իրականացնելը և դրա արդյունքում անձի՝ օրենքով սահմանված իրավական պարտականության մասին ենթադրաբար չճանաչելը հիմք են արարքի կատարման մեջ անձի մեղքը բացառելու և վերջինիս վարչական պատասխանատվության չենթարկելու համար:

2021 թվականի նոյեմբերի 19

14. Արծրուն Խաչատրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչական գործ թիվ ՎԳ/6527/05/18

Էջ
754-770

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտում կատարած անձի ներկայությամբ կազմելու և այն վերջինիս կողմից առանց որևէ առարկության ստորագրելու դեպքում կարող է արդյոք համարվել վարչական իրավախախտման առկայության փաստը հաստատող բավարար ապացույց:

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

2021 թվականի հոկտեմբերի 1

15. Հասմիկ Խաչատրյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/10397/05/18

Էջ
771-779

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք հսկիչ գնումների իրականացման կարգն ու պայմանները հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում կիրառելի լինելու վերաբերյալ Օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասը հարկային մարմնին իրավունք է վերապահում առանց գրավոր հանձնարարագրի կամ դրանում հսկիչ գնում իրականացնելու իրավական հիմքը վկայակոչելու հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ հարկային ստուգման շրջանակներում իրականացնել հսկիչ գնում:

2021 թվականի մայիսի 27

16. «Նոր-Հենդ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/0286/05/17

Էջ
780-789

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք հարկային մարմինն իրավասու է վերստուգման արդյունքում կազմվող ակտով նախորդ ստուգման ակտի համապատասխան կետերը շարադրել այլ խմբագրությամբ:

2021 թվականի փետրվարի 16

Էջ
790-800

17. «ՌՈՒԲ և ԿԱՐԵՆ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/2338/05/18

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ավելացված արժեքի հարկի հաշվարկով հաշվանցման ենթակա են հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները, եթե դրանք մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ չեն վավերացվել էլեկտրոնային ստորագրությամբ:

2021 թվականի մայիսի 10

Էջ
801-829

18. «Դալար Գազ» ՍՊԸ-ի տնօրեն Ռուբիկ Փանոսյանն ընդդեմ Պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/2553/05/19

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու իրավախախտումն առկա է այն պայմաններում, երբ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարն արգելում է հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը (հարկային ստուգումը)՝ ստուգման իրականացման համար հիմք հանդիսացող հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը պատճառաբանված չլինելու հիմքով:

ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Էջ
830-854

2022 թվականի մարտի 3

19. «ԱՄՈԿԱ ԳԼԱՍ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/7522/05/17

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավական հարցադրմանը, թե ինչ միջոցներով կարող է անձը վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում կատարել իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը և ինչ հետևանք կարող է ունենալ նրա կողմից այդ պարտականությունը չկատարելը:

ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Էջ
855-870

2021 թվականի հոկտեմբերի 22

20. Դավիթ Մելիք-Ստեփանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչական գործ թիվ ՎԳ/0325/05/19

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Որևէ հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում ընդգրկված լինելու հարց քննարկելիս արդյո՞ք դատարանն իրավասու է ինքնուրույն որոշելու դրա նպատակային նշանակությունը կամ գնահատելու սահմանված նպատակային նշանակությամբ այն օգտագործելու հնարավորությունը:

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Էջ
871-884

2022 թվականի մարտի 4

21. «ՄԵԳԱՇԻՆ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության վարչական գործ թիվ ՎԳ/5267/05/19

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փորձաքննական դրական եզրակացությունը պարտադիր է ընդերքօգտագործման իրավունք տրամադրելու համար և արդյո՞ք այդ եզրակացության բացակայության պարագայում կարող է բավարարվել հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք տրամադրելուն վարչական մարմնին պարտավորեցնելու հայցապահանջը:

ՀԱՐԿԱԴԻՐ ԱՃՈՒՐԳ

Էջ
885-909

2022 թվականի փետրվարի 22

22. Գագիկ Կոստանյանն ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային բաժնի, վարչական գործ թիվ ՎԳ-5/0136/05/19

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուծի մեկնարկային գնի և ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունն արդյո՞ք գործում է նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ, թե ոչ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴԳԱՏՈՒԹՅՈՒՆ

Էջ
910-922

2022 թվականի ապրիլի 13

23. Տիգրան Սահակյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, քաղաքացիական գործ թիվ 2-2040

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Ո՞ր դատարանին է վերապահված այն վերաքննիչ բողոքի քննությունը, որը բերվել է վարչական և վերաքննիչ վարչական դատարանների ստեղծումից հետո, սակայն մինչև դրանց ստեղծումը քաղաքացիական գործեր քննող դատարանի կողմից՝ հանրային իրավահարաբերություններից բխող իրավական վեճով կայացված վճռի դեմ:

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Էջ
923-940

2021 թվականի ապրիլի 22

24. Գարեգին Խաչատրյանն ընդդեմ Երևան համայնքի, վարչական գործ թիվ ՎԳ/9652/05/16

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք բոլոր դեպքերում է վարչական ակտը համարվում ընդունված, եթե դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտն ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտն օրենքով սահմանված ժամկետում չի ընդունվել:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Էջ
941-948

2021 թվականի օգոստոսի 27

25. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Արարատ Բարսեղյանի, վարչական գործ թիվ ՎԳ/2778/05/16

Խնդիր. Վճռաբեկ դատարանը նմանատիպ գործերով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքով դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցման հարցին:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Էջ
949-967

2021 թվականի հուլիսի 21

26. «Լուսակերտի Հարություն թոշնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/6098/05/17

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել հետևյալ իրավական հարցադրումներին.

1) դատական կարգով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը գործարք է, թե՛ ոչ.

2) արդյո՞ք դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա անշարժ գույքի օտարումը փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց իրավահարաբերության ծագման պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով եկամտի աղբյուր է.

3) արդյո՞ք դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա անշարժ գույքի օտարումը փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց կարող է համարվել ապրանքի մատակարարում և առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն.

4) դատական կարգով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնության արդյունքում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու, թե այդ դատական ակտի հիման վրա իրավունքի պետական գրանցման պահից:

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

2021 թվականի դեկտեմբերի 17

Էջ
968-1006

1. «Էյ -Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ի ստորին Արբեն Դույանն ընդդեմ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, վարչական գործ թիվ ՎԳ/11082/05/20

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը եզրափակող փաստաթուղթը, որում արձանագրվել են կոնկրետ ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումներ, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում կարող է որակվել վարչական ակտ և ըստ այդմ վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցով:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

2021 թվականի նոյեմբերի 19

Էջ
1007-1027

2. Հայկ Ֆարմանյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/2635/05/19

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.
1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասում նշված՝ լրացուցիչ վճիռ կայացնելու արգելքին՝ բացահայտելով նույն նորմում գործածված «այն հարցի կապակցությամբ» արտահայտության բովանդակությունը,
2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ աշխատողին դատական կարգով հատուցում տրամադրելու իրավական հնարավորությանը՝ վերջինիս կողմից նման հայցապահանջ ներկայացված չլինելու պարագայում:

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

2021 թվականի նոյեմբերի 9

Էջ
1028-1050

3. ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ի դեմս ՀՀ կառավարության, երրորդ անձինք՝ «Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ, «Արդ-շինքանկ» ՓԲԸ, Երևան համայնք, վարչական գործ թիվ ՎԳ/1951/05/20

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.
1. Արդյո՞ք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու համար կարող է հիմք ընդունվել նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դատավարական ժամկետը.
2. Ո՞ր պահից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտների համար հոսում նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը:

Էջ
1051-1060

2021 թվականի սեպտեմբերի 10

4. Նարինե Չարչյանը, Վահե և Աննա Տեր-Եսայաններն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչական գործ թիվ ՎԳ/11139/05/18

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված դատավարական ժամկետը կարող է վերականգնվել այն պարագայում, երբ հայցադիմումը ներկայացվել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից:

Էջ
1061-1077

2022 թվականի հունիսի 24

5. Տիգրան Կոտոլիկյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/4608/05/19

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է սխալ առարկայական ընդդատության դատական պաշտանության դիմելու պահին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետների պահպանման հարցին:

Էջ
1078-1090

ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԻՄՔԸ

2022 թվականի ապրիլի 29

6. Հայկանուշ Մանուկյանն ընդդեմ ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ նոտարական պալատի, ՀՀ կադաստրի կոմիտեի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի, վարչական գործ թիվ ՎԳ/6418/05/21

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջների ներկայացման դեպքում պատասխանողի ներգրավվման առանձնահատկություններին՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ և 70-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումների համատեքստում:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք հայցադիմումին կից ներկայացված վիճարկվող վարչական ակտի կամ դրա պատճենի անընթեռնելի լինելը կարող է հինք հանդիսանալ հայցադիմումը վերադարձնելու համար:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Էջ
1091-1099

2022 թվականի մայիսի 21

7. Ներսես, Խաչատուր և Սերգեյ Հակոբյանները և Էլենուրա Մախլովան ընդդեմ Երևան համայնքի, Երևանի քաղաքապետարանի, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/6829/05/14

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյո՞ք վարչական դատարանի վճիռը միայն պատճառաբանական մասով բողոքարկվելու դեպքում այդ բողոքի ընդունումը ենթակա է մերժման՝ վերաքննիչ բողոքը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունեցող անձի կողմից բերված լինելու հիմքով:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ԵԶՐԱՓՎԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ	ԵԱԴԴ/0223/02/17 2021թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԱԴԴ/0223/02/17	
Նախագահող դատավոր՝	Ն. Մարգարյան	
Դատավորներ՝	Ա. Սմբատյան Ա. Պետրոսյան	

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող</i>	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
<i>զեկուցող</i>	Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
	Մ. ԴՐՄԵՅԱՆ
	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Է. ՄԵԴՐԱԿՅԱՆ
	Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի մայիսի 27-ին գրավոր ընթացակարգով քննելով Պավել Մարգարյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.10.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Պավել Մարգարյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանի ընդդեմ Սվետլանա Եփրեմյանի և Էրրորդ անձ ՀՀ գլխավոր դատախազության՝ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը համատեղ սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ բաշխելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Պավել Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանը (այսուհետ՝ նաև՝ Կառավարիչ) պահանջել է հրապարակային սակարկություններով վաճառել Երևանի Բաշինջաղյան փողոցի 2-րդ կրթանցքի թիվ 2 շենքի 25-րդ բնակարանը, ստացված գումարը բաշխել ընդհանուր սեփականության մասնակիցներ Պավել Սարգսյանի և Սվետլանա Եփրեմյանի միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մխիթարյան) (այսուհետ՝ Դատարան) 20.04.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.10.2018 թվականի որոշմամբ Կառավարչի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.04.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կառավարիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սվետլանա Եփրեմյանը (ներկայացուցիչ Լուսինե Մարտիրոսյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 200-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրք) 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես անընդհատաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Դատարանը և Վերաքննիչ դատարանը հայցի ու վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել են այն հանգամանքը, որ Կառավարչի կողմից չեն ներկայացվել Պավել Սարգսյանի մոտ այլ գույքի անբավարարության մասին ապացույցներ: Մինչդեռ դատարանների կողմից անտեսվել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի իմաստով բաժնային սեփականատերը բաժինն առանձնացնելու պահանջով դատարան դիմելու պարագայում օրենքի ուժով չի կրում գույքային անբավարարությունն ապացուցելու պարտականություն:

Դատարանները չպետք է կիրառեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածը և Կառավարչի վրա չպետք է դնեն Պավել Սարգսյանի մոտ գույքային անբավարարությունն ապացուցելու պարտականություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.10.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պայտասխանի հիմնավորումները

Սվետլանա Եփրեմյանի ներկայացուցչի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանում նշվել է, որ Պավել Սարգսյանի սնանկության գործով կառավարիչը չի ապացուցել օրենքով սահմանված այլ գույքի անբավարարության փաստը, հետևաբար Դատարանն ու Վերաքննիչ դատարանը կայացրել են իրավաչափ որոշում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) թիվ ԵԱԴԴ/2780/02/16 քաղաքացիական գործով Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 13.12.2016 թվականին կայացված վճռով հաստատվել է, որ Երևանի Բաշինջաղյան փողոցի 2-րդ

նրբանցքի թիվ 2 շենքի 25-րդ բնակարանը հանդիսանում է Սվետլանա Եփրեմյանի և Պավել Սարգսյանի համատեղ անունական գույքը (**հատոր 1-ին, գ.թ. 11-13**)։

2) Պավել Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանը սույն գործի հարուցման հիմք հանդիսացած հայցադիմումի իրավական հիմքում դրել է «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 199-րդ հոդվածները (**հատոր 1-ին, գ.թ. 3-7, 62-65**)։

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի հիմքով գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության պարտադիր պայմանի առկայության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի և Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով։

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի հիմքով գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս բաժնային կամ համարյալ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության պարտադիր պայմանի առկայությանը, ինչպես նաև վերահասարակելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ փաստի հաստատված լինելու հարցը պարզելիս դատարանի կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գործում եղած բոլոր սպառցույցները գնահատելուն։

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը սնանկության գործով դիմում է դատարան՝ նույն օրենքով նախատեսված դեպքերում։

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը *պարտապանի անունից* դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից։

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս *կառավարիչը գործում է պարտապանի անունից* և իր պատասխանատվությամբ։

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի դատավարական իրավունքներն իրացնում է կառավարիչը։ Մասնավորապես՝ վերջինս պարտապանի անունից դիմում է դատարաններ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից։ Նշվածից հետևում է, որ սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի անունից դատարան հայց ներկայացնելու իրավունքը ևս իրացնում է կառավարիչը։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքը կարող է ընդհանուր սեփականությանը պատկանել սեփականության իրավունքում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշելով (բաժնային սեփականություն) կամ առանց այդ բաժինները որոշելու (համատեղ սեփականություն):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու հիմքերը և կարգը սահմանվում են նույն օրենսգրքի 197-րդ հոդվածի կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժինների համաչափ:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է նաև, որ տվյալ դեպքում ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց պատկանում է ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով: Այդ գույքը համատեղ սեփականության մասնակիցների միջև բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո: Ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս համատեղ սեփականության մասնակիցների բաժինները որպես կանոն համարվում են հավասար, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ: Ընդ որում, համատեղ սեփականության ներքո գտնվող ընդհանուր գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու հիմքերի և կարգի նկատմամբ հավասարապես կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածով նախատեսված՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու կանոնները: Նշված հոդվածով սահմանված կանոնի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը: Այն դեպքում, երբ ընդհանուր գույքը բաժանելը կամ դրանից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ

հողվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելն ակնհայտ աննպատակահարմար է, ապա դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սնանկության գործով կառավարչի լիազորություններին, նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ կառավարիչը սնանկ ճանաչված պարտապանի անունից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածով նախատեսված կարգով դատարան դիմելու իրավունք չունի այն դեպքում, երբ պահանջում է առանձնացնել սնանկ ճանաչված պարտապանի՝ ընդհանուր գույքում ունեցած բաժնետնային և դրա վրա բռնագանձում տարածել սնանկության վարույթում գրանցված պարտատիրոջ պահանջը բավարարելու համար: ՀՀ վճռաբեկ դատարանը նման եզրահանգումը նախևառաջ պայմանավորել է այն հանգամանքով, որ կառավարիչը հայցը հարուցում է բացառապես սնանկ ճանաչված պարտապանի անունից, որը տվյալ պարագայում սնանկության վարույթում գրանցված պահանջատերերի հետ փոխհարաբերություններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի իմաստով ևս հանդիսանում է պարտապան, մինչդեռ, նման հայցապահանջով դատարան կարող է դիմել պարտատերն ընդդեմ պարտապանի:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության գործով կառավարիչը, իրականացնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունները, պարտավոր է գրանցված պահանջատերերի պահանջները բավարարելու համար հավաքագրել և իրացնել պարտապանին պատկանող ակտիվներն ու գույքը: Ընդհանուր սեփականությունում պարտապանի մասնակցության պայմաններում օգտվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված իրավունքից՝ սնանկության գործով կառավարիչը, ելնելով նպատակահարմարությունից, կարող է ընդհանուր սեփականությունում պարտապանի բաժինն օտարել բնեղենով՝ առանց այդ բաժինն առանձնացնելու կամ բաժինն առանձնացնելուն միտված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված գործողությունները կատարելուց հետո, բայց բոլոր դեպքերում հանդես գալով որպես սնանկ ճանաչված պարտապանի ներկայացուցիչ (*դեռևս Մասցակյան Նաիրյանի սնանկության գործով կառավարիչ Աշոտ Տեր-Վարդանյանն ընդդեմ Լեյլի Պետրոսյանի, Թերեզա և Մարի Նաիրյանների թիվ ԱՐԱԿ/0333/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կառավարիչը, նպատակ ունենալով գրանցված պահանջատերերի պահանջները բավարարելու համար հավաքագրելու և իրացնելու պարտապանին պատկանող ակտիվներն ու գույքը, օգտվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով իրեն վերապահված իրավունքից, հայցադիմումի իրավական հիմքում դնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 199-րդ հոդվածները, պարտապան Պավել Սարգսյանի անունից հայցադիմում է ներկայացրել Դատարան՝ խնդրելով հրապարակային սակարկություններով վաճառել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Պավել Սարգսյանին և Սվետլանա Եփրեմյանին պատկանող Երևանի Բաշինջաղյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 2 շենքի 25-րդ բնակարանը, և ստացված գումարը բաշխել ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Դատարանը, պատճառաբանելով, որ «*հայցվորի կողմից դատարանն չեն ներկայացվել ապացույցներ առ այն, որ ընդհանուր սեփականության մասնակցի մուր այլ գույքն անբավարար է պարտարիքոջ նկատմամբ պարտավորությունները մարելու համար*, ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջվել է շուկայական գնով գնել պարտապանի բաժինը, և, որ ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարվել են ձեռք բերել պարտապանի բաժինը», հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը, իր հերթին պատճառաբանելով, որ «բողոքարկվող վճռի բովանդակությունից հետևում է, որ Դատարանը հայցը մերժել է հայցվորի կողմից վկայակոչած փաստը՝ Պավել Սազյանի մոտ այլ ակտիվների առկայությունը հավաստող ապացույց ներկայացված չլինելու պատճառաբանությամբ: 16.11.2017 թվականին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում Դատարանը որոշել է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը, կատարել է ապացուման բեռի բաշխում: Քննարկվող պարագայում, հատկանշական է նաև այն հանգամանքը, որ կողմերը մասնակցել են տվյալ դատական նիստին, ավելին՝ հայցվորը նշել է, որ իր ձեռքի տակ առկա բոլոր ապացույցները ներկայացրել է հայցադիմումին կից», հետևություն է արել այն մասին, որ «Վերոգրյալ պատճառաբանության լույսի ներքո հերքվում են բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ Դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն, չի գնահատել հայցվորի կողմից ներկայացված գրավոր ապացույցները, ինչով էլ թույլ է տվել 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջների խախտում և չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը»:

Միննույն ժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ «անհիմն են նաև բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ Դատարանը չի պահպանել 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածների պահանջները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի պահանջներն ու ճիշտ չի ընկալել հայցի առարկան, քանի որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, 20.04.2018 թվականին կայացնելով թիվ ԵԱԴԴ/0223/02/17 վճիռը, վճռի պատճառաբանական մասում նշել է Դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև այն օրենքներն ու իրավական ակտերը, որոնցով Դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս»:

Արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «քննարկվող պարագայում թիվ ԵԱԴԴ/0223/02/17 քաղաքացիական գործի նյութերում առկա են եղել բավարար ապացույցներ գործի քննության և ելքի որոշման համար, հետևաբար առկա չէ բողոքաբերի կողմից Դատարանին վերագրվող դատավարական և նյութական իրավունքի նորմերի որևէ խախտում»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն

ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա (*լրեն «Շենքերի կառավարում» համադրիությունն ընդդեմ Մասիս Ղազանյանի թիվ ԵԱԲԴ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*լրեն Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սյրեփան և Անահիտ Մարությանների թիվ 3-54(ՎԲ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել սույն գործով ձեռք բերված ապացույցները, սխալ է որոշել կիրառման ենթակա իրավունքը՝ անտեսելով, որ սույն գործով ձեռք բերված ապացույցների համաձայն՝ Դատարան հայցադիմում է ներկայացրել ոչ թե սնանկ ճանաչված Պավել Սարգսյանի պարտատերը, այլ՝ վերջինիս սնանկության գործով կառավարիչը՝ օգտվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով իրեն վերապահված իրավունքից, ով հայցադիմումի իրավական հիմքում ճիշտ կերպով դրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հենց 197-րդ և 199-րդ հոդվածները, որոնց վկայակոչմամբ հայցադիմում ներկայացնելու դեպքում հայցվորը, ի տարբերություն նույն օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված օրենսդրական կարգավորման, չունի որևէ պարտականություն՝ ապացուցելու, որ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքն անբավարար է: Նշված փաստն ապացուցելու պարտականությունը ծագում է բացառապես պարտավանի պարտատիրոջ համար, ով, օգտվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետով իրեն վերապահված իրավունքից, հայց է ներկայացնում դատարան ընդհանուր գույքում պարտավանի բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջով:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Դատարանի պատճառաբանությունների հետ, իր հերթին սխալ է որոշել կիրառման ենթակա իրավունքը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետը կիրառելու փոխարեն կիրառել է նույն օրենսգրքի 200-րդ հոդվածը, ինչի արդյունքում Կառավարչի վրա անհիմն կերպով դրվել է Պավել Սարգսյանի պարտավորությունները մարելու համար վերջինիս մոտ այլ գույքի անբավարարությունն ապացուցելու պարտականություն:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետի դիպուկահիշի վավերապայմանները գործի փաստերի հետ համադրելու ու դրանք գնահատելու համար գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ

կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.10.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/4634/02/16
2021թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/4634/02/16

Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան
Դատավորներ՝ Ս. Թորոսյան
Հ. Ենքոյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի սեպտեմբերի 30-ին գրավոր ընթացակարգով քննելով «Շանտան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Հարություն Ղազարյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.08.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Անահիտ Ղազարյանի ընդդեմ Հարություն Ղազարյանի, Ընկերության, երրորդ անձինք Արմեն Մարտիրոսյանի, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) սեփականության իրավունքը ճանաչելու, գրառումը մասնակի անվավեր ճանաչելու և բաժնեմասի նկատմամբ իրավունքը գրանցելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Անահիտ Ղազարյանը պահանջել է ճանաչել իր սեփականության իրավունքը Հարություն Ղազարյանի կողմից Ընկերությանը փոխանցված և Ընկերության կանոնադրական կապիտալի 50% բաժնեմասի կեսի՝ 25% բաժնեմասի նկատմամբ, մասնակի՝ 25%-ի մասով վերացնել Գործակալության կողմից 21.11.2016 թվականին

պետական միասնական գրանցամատյանում կատարված գրառումը՝ անվավեր ճանաչելով Հարություն Ղազարյանի անվամբ գրանցված 50% բաժնեմասի Ընկերության անվամբ կատարված գրանցումը, ինչպես նաև պարտավորեցնել Գործակալությանը իրավաբանական անձանց պետական գրանցման մատյանում կատարել գրառում Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100% բաժնեմասից 25% բաժնեմասը Ասահիտ Ղազարյանի անվամբ գրանցելու վերաբերյալ:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Է. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 22.03.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.08.2018 թվականի որոշմամբ Ընկերության և Հարություն Ղազարյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 22.03.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Ընկերությունը (ի պաշտոնե ներկայացուցիչ՝ Հ.Ղազարյան) և Հարություն Ղազարյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

2. Հարություն Ղազարյանի վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածը, «Մասնանսափակ պարտահամարվությանը ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը:

Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել կորպորատիվ իրավահարաբերությունների առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ Հարություն Ղազարյանը ունեցել է բացառիկ, որևէ մեկի կողմից չվերահսկվող Ընկերությունից դուրս գալու իրավունք: Կորպորատիվ իրավահարաբերություններն ունեն մի շարք առանձնահատկություններ և էականորեն տարբերվում են քաղաքացիաիրավական այլ իրավահարաբերություններից: Հետևաբար այդ իրավահարաբերությունները չեն կարող նույնացվել քաղաքացիական իրավահարաբերության համատեղ սեփականության ինստիտուտի հետ:

Վերաքննիչ դատարանը, Ընկերության կազմից դուրս գալը գնահատելով որպես գործարք, հաշվի չի առել, որ հայցապահանջում չի ներկայացվել պահանջ պատասխանողի կողմից կատարված գործարքն անվավեր ճանաչելու մասին: Գործարքներից բխող հետևանքները կարող են վերացվել բացառապես դատարանի կողմից այդ գործարքներն անվավեր ճանաչելուց հետո, մինչդեռ գործարքը վիճահարույց դիտարկելու և այն անվավեր ճանաչելու պահանջի բացակայության պայմաններում ստորադաս դատարանը, առանց անվավեր ճանաչված գործարքի առկայության, անվավեր է ճանաչել այդ գործարքից բխող հետևանքը՝ իրավունքի գրանցումը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցադիմումը ներկայացնելու պահին Հարություն Ղազարյանը չի հանդիսացել բաժնեմասի սեփականատեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.08.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Ընկերության վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածը, «Մասնանսափակ պարտահամարվությանը ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 23-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, Հարություն Ղազարյանի Ընկերության մասնակիցներից դուրս գալը դիտարկելով իբրև հատուցելիության հատկանիշ ունեցող գործարք, դասել է

անվավեր գործարքների շարքին, այն դեպքում երբ հայցվորը չի ներկայացրել գործարքն անվավեր ճանաչելու պահանջ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հարություն Ղազարյանը իրացրել է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված ընկերությունից դուրս գալու բացառիկ իրավունքը և այլևս չի հանդիսանում Ընկերության մասնակից: Ավելին, Վերաքննիչ դատարանը հաստատված համարելով Հարություն Ղազարյանի Ընկերությունում մասնակից չհանդիսանալու փաստը, բավարարել է հայցվորի հիմնական պահանջը՝ ճանաչել է Անահիտ Ղազարյանի սեփականության իրավունքը Հարություն Ղազարյանին չպատկանող բաժնեմասի նկատմամբ:

Ստորադաս դատարաններն անտեսել են, որ այս իրավահարաբերությունները կրում են յուրօրինակ կորպորատիվ բնույթ, հետևաբար Ընկերության մասնակցի բացառիկ իրավունքները չեն կարող նույնացվել այլ գույքային իրավունքների հետ: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի ամուսինը չի կարող ձեռք բերել ընկերության նկատմամբ այն նույն իրավունքների և պարտականությունների ամբողջությունը, որով օժտվում է հենց գրանցված մասնակիցը:

Բացի այդ, Դատարանը հայցի բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը անփոփոխ թողնելու հիմքում դրել են այն հանգամանքը, որ Հարություն Ղազարյանը տնօրինել է համատեղ գույքը՝ անտեսելով, որ մասնակցի իրավունքները տարանջատում են բաժնեմասի զուտ գույքային իրավունքների և ընկերության մասնակցության իրավունքի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.08.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայրը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի կողմից 31.05.1989 թվականին տրված թիվ II CL N 452884 ամուսնության վկայականի համաձայն՝ Անահիտ Վարդանյանը (վերջինս ամուսնությունից հետո կրել է Ղազարյան ազգանունը) և Հարություն Ղազարյանը ամուսնացել են 31.05.1989 թվականին (**հատոր 1-ին, գ. թ. 10**).

2) Ընկերությունը (գրանցման համար՝ 273.110.03187, ՀՎՀՀ՝ 01542462, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ալ. Մանուկյան 7 շենք, 48 բնակարան) գրանցվել է 15.04.2002 թվականին (**հատոր 1-ին, գ. թ. 96**).

3) Գործակալության 17.10.2016 թվականի N 3-2/1622-16 գրության համաձայն՝ պետական միասնական գրանցամատյանում 17.10.2016 թվականին առկա տեղեկություններով Ընկերության մասնակիցներն են Հարություն Ղազարյանը (բաժնեմաս 50%) և Արմեն Մարտիրոսյանը (բաժնեմաս 50%) (**հատոր 1-ին, գ. թ. 11**).

4) Անահիտ Ղազարյանի ներկայացուցչի կողմից 07.11.2016 թվականին դիմում է ներկայացվել Գործակալության պետին՝ խնդրելով իրավաբանական անձանց պետական գրանցման մատյանում կատարել գրառում Ընկերության մասնակից Հարություն Ղազարյանի անվամբ գրանցված 50% բաժնեմասի կեսը՝ 25% բաժնեմասը Անահիտ Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ. թ. 42-43**).

5) Գործակալության պետի 16.11.2016 թվականի թիվ 3-2/1752-16 գրությամբ, ի պատասխան 07.11.2016 թվականի դիմումի, Անահիտ Ղազարյանի ներկայացուցչին հայտնվել է, որ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածը, կարելի է հաստատված համարել այն հանգամանքը, որ Ընկերության մասնակից Հարություն Ղազարյանին Ընկերության կանոնադրական կապիտալում սեփականության իրավունքով պատկանող 50% չափով բաժնեմասի կեսը՝ 25% չափով բաժնեմասը օրենքի ուժով պատկանում է Անահիտ Ղազարյանին: (...) Հայտնվել է նաև, որ ընկերության մասնակիցների փոփոխության պետական գրանցման համար, ի լրումն դիմումատուի կողմից ներկայացված

փաստաթղթերի, անհրաժեշտ է ներկայացնել ընկերության մասնակից Հարություն Ղազարյանի համաձայնությունը կամ դատարանի համապատասխան վճիռը, ինչպես նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված մյուս փաստաթղթերը (**հատոր 1-ին, գ. թ. 92-93**).

6) Հարություն Ղազարյանը 16.11.2016 թվականին դիմում է ներկայացրել Գործակալությանը՝ հայտնելով, որ օգտվելով «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասով իրեն՝ որպես մասնակցի ընձեռած հնարավորությունից և հիմք ընդունելով Ընկերության կողմից մասնակիցների կազմից իր դուրս գալու մասին դիմումը փաստացի ստանալու հանգամանքը, խնդրել է իրեն հանել Ընկերության մասնակիցների կազմից՝ կատարելով համապատասխան գրանցում (**հատոր 1-ին, գ. թ. 50**).

7) Անահիտ Ղազարյանի ներկայացուցչի կողմից 23.12.2016 թվականին դիմում է ներկայացվել Գործակալության պետին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն, թե ովքեր են Ընկերության մասնակիցները (**հատոր 1-ին, գ. թ. 56**).

8) Գործակալության պետի 27.12.2016 թվականի թիվ 3-212015-16 գրությամբ, ի պատասխան 23.12.2016 թվականի դիմումի, տրամադրվել է տեղեկանք պետական միասնական գրանցամատյանում առկա տեղեկությունների վերաբերյալ առ այն, որ 27.12.2016 թվականի դրությամբ Ընկերության մասնակիցներն են՝ Արմեն Մարտիրոսյանը (բաժնեմասի չափը՝ 50%, բաժնեմասի չափը ՀՀ դրամով՝ 25.000) և Ընկերությունը (բաժնեմասի չափը՝ 50%, բաժնեմասի չափը ՀՀ դրամով՝ 25.000): Գործակալությունը 21.11.2016 թվականին պետական միասնական գրանցամատյանում կատարել է գրառում, համաձայն որի՝ Հարություն Ղազարյանի բաժնեմասը գրանցել է Ընկերության անվամբ (**հատոր 1-ին, գ.թ. 17, 18, 25, 26**).

9) Ըստ հայցի Անահիտ Ղազարյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, մասնակցությամբ՝ երրորդ անձինք Հարություն Ղազարյանի, Ընկերության՝ մասնակիորեն՝ 25%-ի մասով, Գործակալության կողմից 21.11.2016 թվականին պետական միասնական գրանցամատյանում կատարված գրառումը վերացնելու՝ Հարություն Ղազարյանի անվամբ գրանցված 50% բաժնեմասը Ընկերության անվամբ գրանցելու անվավեր ճանաչելով, Ընկերության Հարություն Ղազարյանին իր բաժնեմասի արժեքի 25%-ից ավել չափով չվճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին թիվ ՎԳ/0480/05/17 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը 07.07.2017 թվականի վճռով հայցը բավարարել է մասնակի՝ անվավեր է ճանաչել (վերացրել) ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պետական միասնական գրանցամատյանում Հարություն Ղազարյանի անվամբ գրանցված 50% բաժնեմասի նկատմամբ Ընկերության անվամբ 21.11.2016 թվականին կատարված գրանցումը: Վարչական գործի վարույթն՝ ըստ հայցի Անահիտ Ղազարյանի ընդդեմ ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, երրորդ անձ Հարություն Ղազարյան, Ընկերության՝ մասնակի՝ 25%-ի մասով, ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պետական միասնական գրանցամատյանում Հարություն Ղազարյանի անվամբ գրանցված 50% բաժնեմասի նկատմամբ Ընկերության անվամբ 21.11.2016 թվականին կատարված գրանցումն անվավեր ճանաչելու (վերացնելու), Ընկերությանը՝ Հարություն Ղազարյանին իր բաժնեմասի արժեքի 25%-ից ավել չափով չվճարելուն պարտավորեցնելու պահանջների մասով, կարճվել է:

Նույն գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.07.2018 թվականի որոշմամբ «Շանտան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և ՀՀ վարչական դատարանի 07.07.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.09.2018 թվականի և 24.10.2018 թվականի որոշումներով համապատասխանաբար Հարություն Ղազարյանի և «Շանտան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վճարել բողոքները թողնվել են առանց քննության:

4. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքները վարոյթ ընդունելը և բողոքարկված դատական ակտը վճարելության կարգով վերանայման ենթարկելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասի 3-րդ կետերով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Հաշվի առնելով, որ սույն գործով ներկայացված վճարել բողոքների հիմքերը և հիմնավորումները, ըստ էության, նույնաբովանդակ են, Վճարել դատարանը նպատակահարմար է համարում դրանց անդրադարձնալ ներքաշարադրյալ ընդհանուր պարճատարանությամբ.

Սույն վճարել բողոքների քննության շրջանակներում Վճարել դատարանն հարկ է համարում անդրադարձնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

- արդյո՞ք սահմանափակ պարասխանատվությամբ ընկերության մասնակցի բաժնեմասը դրանում ներառված իրավունքների և պարտականությունների ամբողջ ծավալով, կարող է համարվել ամուսինների համարեղ սեփականություն.

- արդյո՞ք սահմանափակ պարասխանատվությամբ ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալիս ամուսնության ընթացքում ամուսինների կողմից ձեռք բերված գույքի փոփոխում է, թե միայն ընկերության մասնակցի կորպորատիվ սուբյեկտիվ իրավունքի իրացում:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցները միասին տիրապետում և օգտագործում են ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անհատական օգտագործման գույքը (հագուստը, կոշիկը և այլն), բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկաների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության

ընթացքում ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և **գույքային իրավունքները**:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներով բազմիցս անդրադարձել է ամուսինների համատեղ սեփականության հարցին՝ մասնավորապես արձանագրելով, որ ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միևնույն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը (*լրեն Ռաֆայել Աբազյանը և Մեծիկ Երիցյանն ընդդեմ Ռուբեն Աբազյանի և «Կենտրոն» նույն անվան փարածքի նույնիսկ թիվ 3-415(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը*): ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի իմաստով բացառություն է կազմում այն գույքը, որն ամուսիններից յուրաքանչյուրն ունեցել է մինչև ամուսնությունը, ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը, անհատական օգտագործման առարկաները, ինչպես նաև սեփականաշնորհմամբ ձեռք բերված գույքը (*լրեն Ռուզաննա Ծարությունն ընդդեմ Գևորգ Թաթոսյանի և մյուսների թիվ ԵԱԲԴ/2304/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում հայտնած դիրքորոշումը, այդուհանդերձ գտնում է, որ կորպորատիվ հարաբերությունների զարգացումը պահանջում է, որ Վճռաբեկ դատարանը՝ որպես օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովող սահմանադրական մարմին, հստակեցնի ամուսինների համատեղ սեփականության հարաբերակցությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում մասնակցի ունեցած բաժնեմասի հետ՝ այդպիսով զարգացնելով իրավունքը ինչպես ամուսինների համատեղ սեփականության զանգվածի մեջ մտնող գույքի, այնպես էլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում մասնակցի ունեցած բաժնեմասի էության մասով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ որպես ինքնուրույն կազմակերպչական ձևի առանձնահատկություններին, ինչպես նաև ընկերության մասնակիցներին պատկանող բաժնեմասից բխող իրավունքների և պարտականությունների ծավալին:

Այսպես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (այսուհետև՝ ընկերություն) է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընկերության ստեղծումն իրականացվում է հիմնադրի (հիմնադիրների) որոշմամբ: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընկերության ստեղծման (հիմնադրման) մասին հիմնադրի (հիմնադիրների) որոշումը կամ ընկերության հիմնադիր ժողովի արձանագրությունը պետք է բովանդակի դրույթներ ընկերության հիմնադրման, մասնակիցների **կազմի**, մասնակիցների **բաժնեմասերի չափերի**, ընկերության կանոնադրության հաստատման, ընկերության գործադիր մարմնի ձևավորման մասին, դրույթ այն մասին, որ բոլոր որոշումներն ընդունվել են միաձայն: Ընկերության ստեղծման (հիմնադրման) մասին հիմնադրի (հիմնադիրների) որոշումը կամ ընկերության հիմնադիր ժողովի արձանագրությունը ստորագրում են ընկերության **բոլոր հիմնադիրները**:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերություն հիմնադրել ցանկացող անձինք (հիմնադիրները) կնքում են գրավոր պայմանագիր: (...) Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընկերության հիմնադրման մասին պայմանագրով սահմանվում են նրա հիմնադրման համար համատեղ գործունեության կարգը, ընկերությանն իրենց գույքը հանձնելու և նրա կառավարմանն իրենց մասնակցության պայմանները, (...) ընկերության հիմնադիրների կազմը, ընկերության կանոնադրական կապիտալի և յուրաքանչյուր հիմնադրի բաժնեմասի չափը, (...):

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության հիմնադիր փաստաթուղթ է հանդիսանում նրա *հիմնադիրների (մասնակիցների) կողմից հասարակված* կանոնադրությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կանոնադրությունը հաստատելու մասին որոշումը հիմնադիրները (մասնակիցները) պետք է ընդունեն միաձայն: Ընկերության կանոնադրությունը պետք է պարունակի՝

(...) գ) ընկերության կանոնադրական կապիտալի չափը, *մասնակիցների բաժնեմասերի չափերը*.

դ) տեղեկություններ *ընկերության մասնակիցների մասին*, (...):

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընկերության կանոնադրությունում փոփոխությունները կատարվում են ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության կանոնադրությունում կատարված փոփոխությունները երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում նրանց պետական գրանցման պահից, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին տեղյակ պահելուց հետո:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե ընկերության կանոնադրությանը համապատասխան, մասնակցի բաժնեմասի (դրա մասի) օտարումը երրորդ անձանց հնարավոր չէ, իսկ ընկերության մյուս մասնակիցները հրաժարվում են այն գնելուց, ապա ընկերությունը պարտավոր է մասնակցի պահանջով ձեռք բերել մասնակցի բաժնեմասը: Բաժնեմասն ընկերությանը փոխանցվում է մասնակցի կողմից այն ձեռք բերելու պահանջն ընկերությանը ներկայացնելու պահից, կամ ընկերության մասնակցին ընկերությունից հեռացնելու մասին դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու, *կամ եթե ընկերության որևէ մասնակցից սպացվել է մերժում բաժնեմասն ընկերության մասնակցի ժառանգներին (իրավահաջորդներին) փոխանցելու*, կամ այն ընկերության մասնակցի լուծարված իրավաբանական անձի մասնակիցների միջև բաշխելու կապակցությամբ, ինչպես նաև ընկերության կողմից նրա մասնակիցների պարտատերերի պահանջով բաժնեմասի (դրա մասի) արժեքի վճարման դեպքում:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընկերության մասնակցին պատկանող բաժնեմասն ընկերությանն անցնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, *ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ* պետք է բաշխվի ընկերության բոլոր մասնակիցների միջև՝ նրանց բաժնեմասերին համապատասխան կամ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ, եթե դա արգելված չէ ընկերության կանոնադրությամբ՝ երրորդ անձանց, և *ամբողջությամբ վճարվի*: Բաժնեմասի չբաշխված մասը պետք է մարվի՝ ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման միջոցով:

Վերոգրյալ նորմերի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը բաժնեմասերի միավորմամբ գործող տնտեսական ընկերություն է, այսինքն՝ ընկերություն, որի գործունեությանն անձի մասնակցության աստիճանը որոշվում է այդ անձի բաժնեմասի՝ ընդհանուր կանոնադրական կապիտալում ունեցած տոկոսով: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ընկերության ստեղծման և գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունի հենց ընկերության մասնակիցների ունեցած բաժնեմասը և դրա հարաբերակցությունն ընդհանուր կանոնադրական կապիտալին: Մասնավորապես, ընկերության բարձրագույն մարմնում՝

ընդհանուր ժողովում, ընկերության յուրաքանչյուր մասնակցի ձայների քանակը որոշվում է ըստ ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասերի քանակի («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդված):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը կարևորել է ընկերության հիմնադիրների և մասնակիցների դերն ընկերության համար բոլոր առանցքային որոշումների կայացման հարցում: Այսպես, ընկերությունը ստեղծվում է հիմնադրման պայմանագրով, որը հիմնադիրների համաձայնությունն է՝ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կանոնները որոշելու վերաբերյալ: Այնուհետև ընկերությունը հիմնադրած անձինք **միաձայն** հաստատում են ընկերության կանոնադրությունը, որն ընկերության հիմնադիր փաստաթուղթն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ կանոնադրությունն ընկերության իրավական կարգավիճակը սահմանող կարևորագույն փաստաթուղթ է: Կանոնադրությունը կարգավորում է հիմնադիրների (մասնակիցների) ներքին փոխհարաբերությունները, դրանով սահմանվում են, մասնավորապես, ընկերության անվանումը, գտնվելու վայրը, գործունեության նպատակը և առարկան, կառավարման և վերահսկողության մարմինները, շահույթի բաշխման կարգը և այլն: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընկերության, ընկերության մասնակիցների, ընկերության կանոնադրության (նաև փոփոխությունների) գրանցումն ինքնանպատակ չէ: Բացի այն, որ պետական գրանցումը հնարավորություն է տալիս միասնական ամբողջական տեղեկատվություն հավաքել պետության տարածքում գործող իրավաբանական անձանց մասին, այն նաև հնարավորություն է տալիս հանրությանը՝ ամբողջական տեղեկություններ ստանալ իրավաբանական անձանց մասին: Դա հատկապես կարևորվում է առևտրային գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, այդ թվում՝ ընկերությունների համար, քանի որ վերջիններիս ապագա հնարավոր կոնտրագենտները հնարավորություն են ունենում տեղեկություններ ձեռք բերել իրենց ապագա գործընկերների մասին՝ բացահայտելով վերջիններիս գործունեության նպատակները, կառավարման մարմինների արդյունավետությունը, մասնակիցների շրջանակը, ինչը ոչ պակաս կարևոր է, քանի որ մասնակիցների շրջանակով պայմանավորված՝ ապագա կոնտրագենտները կարող են հրաժարվել պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել տվյալ իրավաբանական անձի հետ: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է, որ անկախ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների կամ հնարավոր մասնակիցների ներքին հարաբերություններից, ներքին պայմանավորվածությունից՝ բաժնեմասը ձեռք բերող անձի իրավունքը ծագում է միայն ընկերության մասնակիցների գրանցամատյանում գրանցվելու, ընկերության կանոնադրությունում փոփոխություն կատարելու և այն գրանցելու պահից (*լրես՝ Սուսաննա Խաչատրյանն ընդդեմ Վիզեն Ապանյան Ավանեսյանի թիվ ԵԿԴ/0779/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ ընկերության կանոնադրությունը՝ որպես ընկերության վերաբերյալ առանցքային տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, հաստատվում է մասնակիցների կողմից **միաձայն**, ինչը ենթադրում է, որ դրանում փոփոխությունները՝ ներառյալ մասնակիցների կազմի կապակցությամբ, նույնպես պետք է կատարվեն մասնակիցների՝ ընդհանուր ժողովի կողմից: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը նաև ընդգծում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է ընկերության մասնակիցների կողմից բաժնեմասի տնօրինման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) *գնելու նախապայմանությամբ իրավունքից* (...): Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝

նույն օրենքով նախատեսված բաժնետնասը գնելու նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում:

Ավելին, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անգամ մասնակցի բաժնետնասի վրա բռնագանձում տարածելիս գործում է հատուկ կարգավորում: Մասնավորապես, «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության մասնակցի պարտքերի համար պարտատերերի պահանջով նրա բաժնետնասի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն այդ մասնակցի պարտքերը մարելու համար *այլ գույքի անբավարարության դեպքում*՝ դատարանի վճռի հիման վրա:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը վստահության ավելի բարձր աստիճանի վրա հիմնված ընկերություն է, որով էլ պայմանավորված է ընկերության մասնակիցների առավելագույն քանակը՝ 49 («Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված): Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ենթադրում է ձեռնարկատիրական գործունեության իրականացման ավելի անմիջական ձև, քան, օրինակ, բաց բաժնետիրական ընկերությունն է: Այլ կերպ ասած, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների շրջանակն ավելի սահմանափակ է, վերջիններս գործնականում հիմնականում իրենք էլ իրականացնում են ընկերության անմիջական ղեկավարումը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալով է պայմանավորված նաև օրենսդրական այն կարգավորումը, ըստ որի՝ ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն 10 տոկոս բաժնետնասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հետացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը: Ընդ որում, ընկերությունից հետացված մասնակցի բաժնետնասն անցնում է ընկերությանը, իսկ ընկերությունը պարտավոր է մասնակցին վճարել բաժնետնասի արժեքը («Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված):

Ավելին, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անգամ ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու դեպքում այդ մասնակցի բաժնետնաս մնում է նույն անձանց շրջանակում (երրորդ անձանց կարող է փոխանցվել միայն այն դեպքում, երբ դա արգելված չէ ընկերության կանոնադրությամբ): Այսպես, «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից՝ անկախ ընկերության կամ նրա մասնակիցների համաձայնությունից: (...) Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից նրա բաժնետնասը փոխանցվում է ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում, մասնակցին վճարել բաժնետնասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնետնասի) արժեքը (...): Նույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընկերության մասնակցին պատկանող բաժնետնասն ընկերությանն անցնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ պետք է բաշխվի ընկերության բոլոր մասնակիցների միջև՝ նրանց բաժնետնասերին համապատասխան կամ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ, եթե դա արգելված չէ ընկերության կանոնադրությամբ՝ երրորդ անձանց, և ամբողջությամբ վճարվի: Բաժնետնասի չբաշխված մասը պետք է մարվի՝ ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման միջոցով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև նշել, որ բաժնետնասով պայմանավորված ընկերության մասնակիցները ձեռք են բերում իրավունքներ և կրում պարտականություններ՝ մասնավորապես իրավունք ունեն մասնակցել ընկերության կառավարմանը, ստանալ տեղեկություններ ընկերության գործունեության վերաբերյալ, ստանալ ընկերության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը, իր բաժնետնասը

(դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց, անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից, ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալ ընկերության մնացած գույքից («Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված): Միաժամանակ մասնակիցները պարտավոր են ներդրումներ կատարել ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության հիմնադրման մասին պայմանագրով կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված կարգով, չիրապարակել ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ, բացի օրենքով սահմանված դեպքերից («Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված):

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ անգամ բաժնեմասի օտարման դեպքում գործում են սահմանափակումներ, և օտարվող բաժնեմասի իրավական ճակատագիրը կախված է ընկերության մասնակիցների կամքից: Այսպես, վերջիններս կանոնադրությամբ կարող են արգելել բաժնեմասի օտարումը երրորդ անձանց, և եթե անգամ մասնակիցները հրաժարվեն բաժնեմասը գնելուց, բաժնեմասն օտարող մասնակիցն իրավունք չունի այն օտարել երրորդ անձի. տվյալ դեպքում բաժնեմասը ձեռք է բերում ընկերությունը՝ այնուհետ մեկ տարվա ընթացքում բոլոր մասնակիցների միաձայն որոշմամբ բաշխվում է բոլոր կամ մեկ կամ մի քանի մասնակիցների միջև:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ համանման կարգավորում գործում է նաև այն դեպքում, երբ ընկերության որևէ մասնակցից ստացվել է մերժում բաժնեմասն ընկերության մասնակցի ժառանգներին (իրավահաջորդներին) փոխանցելու վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ եթե անգամ ընկերության մասնակիցը մահացել է, իսկ ընկերության թեկուզ մեկ մասնակից համաձայն չէ, որ վերջինիս ժառանգները դառնան ընկերության մասնակից, ապա այդ մասնակիցն ունի բացարձակ իրավունք՝ խոչընդոտելու այլ երրորդ անձի՝ ընկերության մասնակից դառնալուն: Այսինքն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում մասնակիցների շրջանակը որոշվում է միայն մասնակիցների ցանկությամբ, և անգամ օրենքի ուժով ծագող իրավունքը (օրինակ՝ ժառանգման իրավունքը) չի կարող սահմանափակել ընկերության մասնակցի իրավունքը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման մոտեցումը պայմանավորված է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության առանձնահատուկ կարգավիճակով, մասնակիցների առավել սերտ գործընկերային հարաբերություններով, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների՝ իրավաբանական անձի ավելի պարզ կազմակերպահրավական ձևով:

Ամփոփելով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի բաժնեմասի և դրանից բխող՝ ընկերության մասնակցի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վերոգրյալ կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ բաժնեմասն ընկերության և ընկերության մասնակցի միջև կորպորատիվ հարաբերությունների ծագման հիմքն է, որի միջոցով որոշվում է ընկերության և ընկերության մասնակցի՝ միմյանց միջև փոխադարձ իրավունքների և պարտականությունների ծավալը:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, կորպորատիվ բնույթի օբյեկտ լինելուց բացի, բաժնեմասը հիմք է հանդիսանում նաև այլ գույքի (ներառյալ՝ գույքային իրավունքների առաջացման համար): Մասնավորապես, բաժնեմասն իրավունք է տալիս մասնակցին՝ ստանալ ընկերության գործունեությունից ստացվող շահույթի մասը, ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալ ընկերության մնացած գույքից, բաժնեմասի օտարման դեպքում ստանալ դրա արժեքը:

Վերոգրյալը հիմք է տալիս Վճռաբեկ դատարանին եզրահանգելու, որ բաժնեմասն իրենում ներառում է ինչպես *գույք քաղաքացիաիրավական, այնպես էլ կորպորատիվ բնույթի գույքեր*: Հետևաբար գնահատելու համար, թե որքանով կարող է բաժնեմասը համարվել ամուսինների համատեղ կյանքում ձեռք բերված գույք, անհրաժեշտ է տարանջատել բաժնեմասի այդ երկու առանցքային տարրերը:

Այսպես, կորպորատիվ տեսանկյունից բաժնեմասը չի կարող համարվել ընդհանուր համատեղ սեփականություն՝ նկատի ունենալով, որ ամուսինը չի կարող համարվել ընկերության մասնակից օրենքի ուժով՝ առանց ընկերության մյուս մասնակիցների համաձայնության և առանց ընկերության հանդեպ պարտականությունների կատարման (մասնավորապես՝ ավանդի վճարման): Ավելին, հակառակ մեկնաբանության դեպքում խախտվում են ոչ միայն ընկերության մյուս մասնակիցների, այլ նաև ընկերության կոնտրագենտների շահերը, ովքեր լիարժեք տեղեկություն չեն ունենում ընկերության մասնակիցների կազմի վերաբերյալ:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ եթե բաժնեմասի նկատմամբ ամուսնու իրավունքը ծագել օրենքի ուժով ամբողջ ծավալով՝ և կորպորատիվ իմաստով և քաղաքացիաիրավական գույքի իմաստով, ապա բազմաթիվ իրավիճակներում կարող էին ծագել իրավական խնդիրներ: Օրինակ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող (...) զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, (...) *(նույն օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում նաև առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կտավարման):* Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ եթե բաժնեմասն ամբողջությամբ համարվի համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույք, ապա այն բոլոր հանրային ծառայողները կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք, որոնց ամուսիններն ընկերության մասնակից են, կհամարվեն անհամատեղելիության պահանջը խախտած:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ կորպորատիվ իրավունքներն իրականացնելու նպատակով և իմաստով ամուսինների համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույք կարող է համարվել միայն բաժնեմասի միջոցով ձեռք բերվող այլ գույքը՝ ընկերության գործունեությունից ստացվող շահույթը, ընկերության լուծարումից հետո ստացվող գույքը, բաժնեմասի օտարման դիմաց ստացվող հատուցումը, իսկ ընդհանուր քաղաքացիաիրավական իմաստով՝ ամուսինների համատեղ գույքը բաժանելու կամ ժառանգման կարգով բաժնեմասը փոխանցվելու, ինչպես նաև ոչ կորպորատիվ բնույթի այլ իրավունքների դեպքերում: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ամուսնուն բաժնեմասը կորպորատիվ առումով չի կարող պատկանել, քանի դեռ վերջինս օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով չի դարձել ընկերության մասնակից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու հարցին՝ մասնավորապես պատասխանելով այն հարցին, թե արդյոք այս իրավունքը համատեղ գույքի տնօրինում է, թե կորպորատիվ իրավունքի իրացում:

«Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից՝ անկախ ընկերության կամ նրա մասնակիցների համաձայնությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածից ուղղակիորեն բխում է, որ ընկերության մասնակցի ընկերությունից ցանկացած պահի դուրս գալու իրավունքի իրացման համար որևէ նախապայման չի պահանջվում, և դա կախված է բացարձակապես մասնակցի կամահայտնությունից: Մա նշանակում է, որ մասնակցի (նույն գործով հայցվորի) նշված իրավունքի իրացման հիմքում ընկած չէ այս կամ այն սուբյեկտի (նույն գործով պատասխանողների) պարտականությունը՝ դրսևորելու որոշակի վարքագիծ (գործողություն, անգործություն), որի կատարումն անհրաժեշտ կլինի մասնակցի այդ իրավունքի իրացման համար *(տե՛ս «Ազուր-Քոնի» ՄՊԸ-ի հիմնադիր անդամ Գուրդաս Հարթունյանն ընդդեմ «Ազուր-Քոնի» ՄՊԸ-ի, նույն ընկերության հիմնադիր անդամ և փնթեռն Ռաֆայել Մկրտչյանի, հիմնադիր անդամ Գուրգեն Մարտիրոսյանի*

թիվ ԵԱԴԴ/0832/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 14.11.2011 թվականի որոշումը):

Սույն որոշմամբ արդեն իսկ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ընկերությունից դուրս գալիս ընկերության մասնակցի բացարձակ՝ որևէ մեկի կամքով չչայմանավորված կորպորատիվ իրավունք է, որը մասնակցի և ընկերության համար առաջացնում է կորպորատիվ բնույթի հարաբերություն: Մասնավորապես՝ բաժնեմասը, որպես կանոն, մնում է ընկերության նույն անձանց շրջանակում, իսկ դուրս եկող մասնակիցը ստանում է բաժնեմասի արժեքը: Ուստի Վճարելի դատարանը եզրահանգում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալը մասնակցի՝ կորպորատիվ իրավունքի իրացում է, այլ ոչ թե համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի տնօրինում:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Անահիտ Ղազարյանը և Հարություն Ղազարյանը ամուսնացել են 31.05.1989 թվականին: Ընկերությունը գրանցվել է 15.04.2002 թվականին: 17.10.2016 թվականին առկա տեղեկություններով Ընկերության մասնակիցներն են հանդիսացել Հարություն Ղազարյանը (բաժնեմաս 50%) և Արմեն Մարտիրոսյանը (բաժնեմաս 50%): 07.11.2016 թվականին Անահիտ Ղազարյանի ներկայացուցչի կողմից դիմում է ներկայացվել Գործակալության պետին՝ խնդրելով իրավաբանական անձանց պետական գրանցման մատյանում կատարել գրառում Ընկերության մասնակից Հարություն Ղազարյանի անվամբ գրանցված 50% բաժնեմասի կեսը՝ 25% բաժնեմասը Անահիտ Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանելու վերաբերյալ:

Գործակալության պետի 16.11.2016 թվականի գրությամբ Անահիտ Ղազարյանի ներկայացուցչին հայտնվել է, որ անհրաժեշտ է ներկայացնել ընկերության մասնակից Հարություն Ղազարյանի համաձայնությունը կամ դատարանի համապատասխան վճիռը, ինչպես նաև օրենքով սահմանված մյուս փաստաթղթերը: Հարություն Ղազարյանը 16.11.2016 թվականի դիմումով Գործակալությանը խնդրել է իրեն հանել Ընկերության մասնակիցների կազմից՝ կատարելով համապատասխան գրանցում: Գործակալությունը 21.11.2016 թվականին պետական միասնական գրանցամատյանում կատարել է գրառում, համաձայն որի՝ Հարություն Ղազարյանի բաժնեմասը գրանցել է Ընկերության անվամբ: 27.12.2016 թվականի դրությամբ Ընկերության մասնակիցներն են եղել՝ Արմեն Մարտիրոսյանը (բաժնեմասի չափը՝ 50%, բաժնեմասի չափը ՀՀ դրամով՝ 25.000) և Ընկերությունը (բաժնեմասի չափը՝ 50%, բաժնեմասի չափը ՀՀ դրամով՝ 25.000):

Թիվ ՎԴ/0480/05/17 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը 07.07.2017 թվականի վճռով անվավեր է ճանաչել (վերացրել) ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պետական միասնական գրանցամատյանում Հարություն Ղազարյանի անվամբ գրանցված 50% բաժնեմասի նկատմամբ Ընկերության անվամբ 21.11.2016 թվականին կատարված գրանցումը: Նշված դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ:

Դատարանը հայցը բավարարել է՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ Հարություն Ղազարյանի իրավունքն Ընկերության բաժնեմասի նկատմամբ գրանցվել է օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության ընթացքում, իսկ գույքն ամուսիններից մեկի սեփականությունը հանդիսանալու հիմքերը բացակայում են: Հետևաբար Դատարանը գտել է, որ Հարություն Ղազարյանի անվամբ դեռևս 2002 թվականի դրությամբ գրանցված Ընկերության բաժնեմասերի կեսի նկատմամբ պետք է ճանաչել հայցվոր Անահիտ Ղազարյանի սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումը և հավելել է, որ Հարություն Ղազարյանի կողմից ձեռք է բերվել բաժնեմաս, որի կեսի նկատմամբ ձեռքբերման պահից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի հիմքով, ծագել է Անահիտ Ղազարյանի սեփականության իրավունքը: Վերաքննիչ դատարանը արձանագրել է, որ Հարություն Ղազարյանը իրեն

պատկանող 50% բաժնեմասն օտարել է Ընկերությանը՝ չունենալով կնոջ համաձայնությունը, ով օրենքի ուժով հանդիսացել է այդ 50% բաժնեմասի կեսի՝ 25% բաժնեմասի սեփականատերը, այսինքն՝ առանց վերջինիս գիտության և համաձայնության՝ օտարվել է ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի գնահատմամբ պարզ է դառնում, որ Հարություն Ղազարյանը համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք է բերել բաժնեմաս Ընկերությունում: Այդուհանդերձ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Անահիտ Ղազարյանը, որպես համատեղ գույք, կարող է հավակնություններ ունենալ ոչ թե բաժնեմասի նկատմամբ ամբողջությամբ, այլ միայն բաժնեմասի միջոցով ստացվող այլ գույքի նկատմամբ: Վճռաբեկ դատարանի նման մտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործով ներկայացված չեն ապացույցներ այն մասին, որ Անահիտ Ղազարյանն օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով դարձել է Ընկերության մասնակից՝ այդպիսով ձեռք բերելով հավակնություններ բաժնեմասից բխող կորպորատիվ իրավունքների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ կորպորատիվ հարաբերությունների տեսանկյունից Անահիտ Ղազարյանը չի կարող օրենքի ուժով համարվել Ընկերության մասնակից՝ օրենքի ուժով ունենալով, օրինակ, Ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու, որոշումներ կայացնելու կամ Ընկերության փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Անահիտ Ղազարյանի՝ օրենքի ուժով ծագով համատեղ սեփականության իրավունքը տարածվում է միայն Ընկերության բաժնեմասի՝ ոչ կորպորատիվ բնույթի իրավունքների վրա:

Մինչդեռ Դատարանը և Վերաքննիչ դատարանը հաշվի չեն առել բաժնեմասի՝ նաև կորպորատիվ բնույթ ունենալու հանգամանքը և անհիմն կերպով եզրահանգել են, որ Անահիտ Ղազարյանի իրավունքն ամբողջ ծավալով տարածվում է Հարություն Ղազարյանի բաժնեմասի նկատմամբ: Ավելին, դատարաններն անհիմն կերպով նաև արձանագրել են, որ Հարություն Ղազարյանի կողմից Ընկերությունից դուրս գալու կորպորատիվ իրավունքը համատեղ գույքի տնօրինում է, որն իրականացվել է առանց Անահիտ Ղազարյանի համաձայնության: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման մեկնաբանության արդյունքում խաթարվել է ինչպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի բաժնեմասի էությունը, այնպես էլ անտեսվել են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ որպես ինքնուրույն կազմակերպիչական ձևի առանձնահատկությունները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ արտահատված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ եզրահանգում է, որ տվյալ դեպքում կիրառման էր ենթակա «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, մինչդեռ ստորադաս դատարանները կիրառել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածը, որը չէր կարող կիրառվել:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 364-րդ հոդվածի և 390-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար՝ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պետք է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը՝ հետևյալ պատճառարանությամբ.

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ

դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Սահմանադրության նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքնության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված հիմնական իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր փաստ հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [«Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքների բավարարման և Վերաքննիչ դատարանի որոշման բեկանման արդյունքում հայցը ենթակա է մերժման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անահիտ Ղազարյանից հոգուտ Հարություն Ղազարյանի ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար: Միաժամանակ Անահիտ Ղազարյանից հոգուտ Ընկերության ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար: Առաջին ատյանի դատարանում գործի քննության համար վճարման ենթակա պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված, քանի որ Անահիտ Ղազարյանի կողմից պետական տուրքի գումարը վճարվել է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հարություն Ղազարյանի և «Շանտան» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.08.2018 թվականի որոշումը և փոփոխել:

2. Անահիտ Ղազարյանի հայցն ընդդեմ Հարություն Ղազարյանի, «Շանտան» ՍՊԸ-ի, Երրորդ անձինք Արմեն Մարտիրոսյանի, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության՝ սեփականության իրավունքը ճանաչելու, գրառումը մասնակի անվավեր ճանաչելու և բաժնեմասի նկատմամբ իրավունքը գրանցելու պահանջների մասին, մերժել:

Անահիտ Ղազարյանից հոգուտ Հարություն Ղազարյանի բռնազանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Անահիտ Ղազարյանից հոգուտ «Շանտան» ՍՊԸ-ի բռնազանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/3644/02/17
Քաղաքացիական գործ թիվ	ԵՄԴ/3644/02/17
Նախագահող դատավոր՝	Ս. Թորոսյան
Դատավորներ՝	Ա. Խատատյան Դ. Սերոբյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի հոկտեմբերի 19-ին գրավոր ընթացակարգով քննելով Նաիրա Ավետիսյանի և անհատ ձեռնարկատեր Մհեր Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.03.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Երևանի Կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Նաիրա Ավետիսյանի և անհատ ձեռնարկատեր Մհեր Հարությունյանի՝ պատասխանողներին պատկանող սեփականությունը փոխհատուցման դիմաց օտարելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է փոխհատուցման դիմաց օտարել պատասխանողների սեփականությունը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 12.12.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.03.2020 թվականի որոշմամբ Նաիրա Ավետիսյանի և անհատ ձեռնարկատեր Մհեր Հարությունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.12.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Նաիրա Ավետիսյանը և անհատ ձեռնարկատեր Մհեր Հարությունյանը (ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասը, 60-րդ հոդվածի 1-ին մասը, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 16-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և 381-րդ հոդվածի 5-րդ մասը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարզապես անտեղի են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցվորը փոխհատուցման գումարը դատարանի դեպոզիտ հաշվին է փոխանցել օրենքով նախատեսված ժամանակահատվածի խախտմամբ, ինչն արդեն իսկ հիմք է սեփականությունը հանրության գերակա շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերն անվավեր ճանաչելու և հայցը մերժելու համար: Ավելին, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվորը 08.06.2017 թվականին Նաիրա Ավետիսյանին է փոխանցել սեփականության օտարման պայմանագրի նախագիծը, որով առաջարկվել է անկախ գնահատողի կողմից հաշվարկված փոխհատուցում, սակայն սեփականության օտարման պայմանագրի նախագիծը Նաիրա Ավետիսյանին ուղարկելուց հետո 3 ամսվա ընթացքում անշարժ գույքի օտարման պայմանագիր չի կնքվել, ուստի ձեռքբերողը պարտավոր էր 08.09.2017 թվականից սկսած 1 ամսվա ընթացքում սեփականության օտարման դիմաց օրենքով սահմանված կարգով որոշված փոխհատուցման գումարը փոխանցել դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին՝ այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնելով օտարվող սեփականության սեփականատիրոջը: Մինչդեռ, սույն գործի փաստերից հետևում է, որ վերոնշյալ պահանջները չեն պահպանվել, ինչը պետք է հանգեցնէր տվյալ սեփականության մասով հանրության գերակա շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերի անվավերության:

Ինչ վերաբերում է անհատ ձեռնարկատեր Մհեր Հարությունյանին փոխհատուցման ենթակա գումարի չափին, ապա այն չի բխում օրենքով սահմանված փոխհատուցման կարգից, քանի որ գումարի չափը մի քանի անգամ ցածր է օրենքով հասանելի փոխհատուցման չափից:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը չի կատարել փաստական հանգամանքների և օրենսդրական կարգավորումների վերաբերյալ վերլուծություն, որն է ձևով չի պատճառաբանել դատական ակտը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 27.03.2020 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերությունը Երևանի քաղաքապետի 26.10.2017 թվականի թիվ 3701-Ա որոշման համաձայն իրականացնում է ՀՀ կառավարության 06.10.2016 թվականի թիվ 1027-Ն որոշմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված գույքերի/հողերի օտարման համապատասխան գործընթաց, որը տարածվել է նաև Երևանի Շերամի փողոց թիվ 34 հասցում գտնվող թիվ 01-007-0453-0046 ծածկագրով /վկայական թիվ 14122012-01-3425/ անշարժ գույքի նկատմամբ (**հատոր 2-րդ, գ.թ. 10-23**).

2) 14.12.2012 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14122012-01-3425 վկայականի համաձայն՝ Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա, Շերամի 34 հասցեի նկատմամբ գրանցվել է Նաիրա Ավետիսյանի սեփականության իրավունքը (**հատոր 2-րդ, գ.թ. 24**).

3) Հասարակության և պետության կարիքների համար օտարվող սեփականության նկարագրության արձանագրության համաձայն՝ օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակն այն կազմելուց հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում պատշաճ ձևով ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց, որոնք իրավունք ունեն արձանագրությունն ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում, այն բողոքարկել լիազոր մարմնին կամ դատարան: Նկարագրության մեջ նշված են՝ հողի կադաստրային ծածկագիրը՝ 0453-0046, ազդեցության ենթակա անձանց և հողի իրավական կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն՝ սեփականատեր՝ Նաիրա Ավետիսյան, ձեռնարկատիրական գործունեություն՝ Ա/Չ Միեր Հարությունյան, իրավունքի պետական գրանցման վկայական՝ 14122012-01-3425, 14.12.2014 թվական, հողամասի մակերեսն ըստ վկայականի՝ 742.20քմ, ազդեցության ենթակա մակերեսը՝ 285.13քմ (**հատոր 2-րդ, գ.թ. 10-23**).

4) 02.11.2017 թվականի թիվ 2022-1 վճարման հանձնարարագրի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը թիվ 900012005063 հաշվից Կենտրոնական գանձապետարանի թիվ 900053423019 հաշվին փոխանցել է 20.428.139 ՀՀ դրամ, որպես ստացող նշված է «ՀՀ Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան», վճարման հիմքը և նպատակը նշված է՝ «Շերամի փողոցի թիվ 34 հասցեում գտնվող թիվ 0453-0046 ծածկագրով Նաիրա Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի փոխհատուցման համար» (**հատոր 2-րդ, գ.թ. 34**):

5) 01.11.2017 թվականի թիվ 171101003062000-468 վճարման հանձնարարականի համաձայն՝ Ընկերությունը թիվ 90000901612 հաշվից թիվ 900053423019 հաշվին փոխանցել է 11.970.760 ՀՀ դրամ, որպես ստացող նշված է «Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան», որպես նպատակ՝ «Շերամի փողոց, թիվ 34, Նաիրա Վարդգեսի Ավետիսյան» (**հատոր 2-րդ, գ.թ. 35**).

6) Ընկերության 06.11.2017 թվականի գրության համաձայն՝ Նաիրա Վարդգեսի Ավետիսյանը տեղեկացվել է, որ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքով սահմանված կարգով փոխհատուցման գումարը հանձնվել է Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի հ/հ 900053423019 դեպոզիտ հաշվին (**հատոր 2-րդ, գ.թ. 32-33**):

4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի և 16-րդ հոդվածի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան մասնատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադարձնալ այն փաստական հանգամանքներին, որոնք ենթակա են պարզման ձեռքբերողի կողմից ներկայացված՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հայցի հիման վրա հարուցված քաղաքացիական գործն ըստ էության քննելիս և լուծելիս:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վկայակոչված նորմերից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային-իրավական նորմերի ուժով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածում գործածվող «սեփականություն» եզրույթը մեկնաբանելիս պետք է ելանքտ ընդունել և հաշվի առնել սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) իրավակիրառ պրակտիկան:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում մեջբերել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանների վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքը, որի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) միջամտությունը բխում է հանրային շահից,
- 3) միջամտությունը բավարարում է համաչափության պահանջներին:

Այսպես, ըստ ՄԻԵԴ-ի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին և կարևորագույն պահանջն այն է, որ գոյքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը պետք է հիմնված լինի օրենքի վրա. այս պահանջը բխում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրավունքի գերակայության էությունից (յրեն՝ *Հունաստանի նախկին թագավորը և մյուսներն ընդդեմ Հունաստանի գործով ՄԻԵԴ-ի 23.11.2000 թվականի վճիռը, 79-րդ կետ*): Հետևաբար, առաջին պայմանը ենթադրում է ոչ միայն ներպետական օրենսդրության շրջանակներում սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումը՝ նախատեսող օրենքի առկայությունը, այլ նաև այդ օրենքի համապատասխանությունը իրավունքի գերակայության սկզբունքից բխող որոշակի որակական հատկանիշների (յրեն՝ *Ջեյմսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ-ի 21.02.1986 թվականի վճիռը, 67-րդ կետ*):

Սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության երկրորդ պայմանի համաձայն՝ այդ միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից, որի գնահատման հարցում հանրային իշխանության մարմիններն օժտված են որոշակի հայեցողությամբ (յրեն՝ *Ջեյմսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ-ի 21.02.1986 թվականի վճիռը, 46-րդ կետ*):

Սեփականության իրավունքից զրկելը Կոնվենցիայի տեսանկյունից իրավաչափ որակելու հարցը գնահատման առարկա դարձնելիս ՄԻԵԴ-ը անդրադառնում է նաև կիրառված միջոցի համաչափության պահպանման հարցին: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը արձանագրել է. «Բավարար չէ, որ սեփականության իրավունքից զրկման եղանակը հետապնդի «հանրության շահի» իրավաչափ նպատակը, նաև պետք է գոյություն ունենա համաչափության ողջամիտ հարաբերակցություն կիրառված միջոցների և դրված նպատակների միջև» (յրեն՝ *Ջեյմսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ-ի 21.02.1986 թվականի վճիռը, կետ 50*):

Սպորրոնգը և Լոնսրոտն ընդդեմ Շվեդիայի գործով ՄԻԵԴ-ը նշել է. «Այնպիսի բարդ բնագավառում, ինչպիսին է քաղաքների կառուցապատումը, պայմանավորվող պետությունները օգտվում են լայն հայեցողության սահմանից՝ քաղաքաշինական քաղաքականության իրականացման համար» (յրեն՝ *Սպորրոնգը և Լոնսրոտն ընդդեմ Շվեդիայի գործով ՄԻԵԴ-ի 23.09.1982 թվականի վճիռը, կետ 69*): Չնայած դրան՝ ՄԻԵԴ-ը նույն գործով արձանագրել է անհամաչափ բեռի առկայություն՝ հաշվի առնելով **միջամտության ժամանակի տևողությունը**:

Սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափության երրորդ պայմանը նախատեսում է, որ միջամտությունը պետք է ապահովի արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (յրեն՝ *Սպորրոնգը և Լոնսրոտն ընդդեմ Շվեդիայի գործով ՄԻԵԴ-ի 23.09.1982 թվականի վճիռը, 69-րդ կետ*):

Նույն գործով ՄԻԵԴ-ը նաև արձանագրել է, որ համաչափության սկզբունքը բնորոշ է ողջ Կոնվենցիային և արտացոլված է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքում (յրեն՝ *վճիռը կետ 69*): Նշվածից հետևում է, որ անձի սեփականության նկատմամբ կատարված ցանկացած միջամտություն պետք է լինի համաչափ: Միջամտության համաչափությունը գնահատելիս Դատարանի կողմից հաշվի առնվող հանգամանքներն են՝

- կամայականության արգելք,
- հետապնդվող նպատակին հասնելու այլ միջոցների բացակայություն,
- **ընթացակարգային (պրոցեսուալ) երաշխիքների առկայություն,**
- հասցեատերերի համար միջամտության հետևանքները:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը անհրաժեշտ է համարում անդրադառնալ Օրենքի կարգավորումներին:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է:

2. Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական պայմաններն են՝

ա) օտարումը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով.

բ) օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական համարժեք փոխհատուցում (այսուհետ՝ փոխհատուցում):

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ձեռքբերողը պարտավոր է մինչև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշմամբ սահմանված սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետից օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին պատշաճ ձևով ուղարկել սեփականության օտարման պայմանագրի (այսուհետ՝ օտարման պայմանագիր) նախագիծը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սեփականությունը կարող է օտարվել ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն: Այս դեպքում կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը: Եթե օտարվող սեփականության նկատմամբ կան ձեռքբերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողներ, ապա օտարման պայմանագրի կողմ պետք է հանդիսանան նաև օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե օտարման պայմանագրի նախագիծն օտարվող սեփականության սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին ուղարկելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, օտարման պայմանագիր չի կնքվում, ապա ձեռքբերողը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում սեփականության օտարման դիմաց ոչ պակաս, քան նույն օրենքով սահմանված կարգով որոշված փոխհատուցման ենթակա գումարը հանձնել դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշիվ (այսուհետ՝ դեպոզիտ)՝ այդ մասին եռօրյա ժամկետում պատշաճ ձևով տեղեկացնելով օտարվող սեփականության սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ ձեռքբերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողներին: Փոխհատուցման գումարի չափի հաշվարկը պետք է կատարված լինի այն դեպոզիտ հանձնելուց ոչ շուտ, քան մեկ շաբաթ առաջվա դրությամբ:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ձեռքբերողի կողմից փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, չի կնքվում օտարման պայմանագիրը, կամ նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն սեփականությունը չի օտարվում, ապա ձեռքբերողը պարտավոր է մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայցով դիմել դատարան: Այս դեպքում դատարանի քննարկման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի հարցը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե դատարանը փոխհատուցման ենթակա գումարի չափը որոշելուց հետո պարզում է, որ եթե՝

ա) ձեռքբերողի կողմից դեպոզիտ հանձնած փոխհատուցման ենթակա գումարը համարժեք կամ ավելի է դեպոզիտ հանձնելու օրվա դրությամբ սեփականության օտարման դիմաց փոխհատուցման ենթակա գումարից, ապա սեփականությունը դատական կարգով օտարվում է դեպոզիտ հանձնած գումարի չափով փոխհատուցմամբ, ընդ որում, դեպոզիտ հանձնված ավել գումարը ձեռք բերողին չի վերադարձվում.

բ) ձեռքբերողի կողմից դեպոզիտ հանձնած գումարը պակաս է դեպոզիտ հանձնելու օրվա դրությամբ սեփականության օտարման դիմաց համարժեք փոխհատուցման ենթակա գումարից, ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է դատարանի կողմից՝ այդ օրվա դրությամբ: Դատարանի վճռում պետք է նշվի դեպոզիտ հաշվին վճարման ենթակա փոխհատուցման լրացուցիչ գումարը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատական կարգով սեփականությունն օտարված է համարվում հետևյալ պայմաններով՝

ա) ձեռքբերողը պարտավոր է դատարանի կողմից սահմանված փոխհատուցման լրացուցիչ գումարը, եթե այդպիսին կա, դեպոզիտ հանձնել դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում:

բ) սեփականատերը պարտավոր է դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց և ձեռքբերողի կողմից փոխհատուցման լրացուցիչ գումարը (եթե այդպիսին նախատեսված է դատարանի կողմից) դեպոզիտ հաշվին հանձնելուց հետո՝ հինգ օրվա, իսկ անշարժ գույքը՝ նույն օրենքի 14-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ժամկետի ընթացքում օտարված սեփականությունը հանձնել ձեռքբերողին:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ձեռքբերողը նույն օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում օտարվող սեփականության սեփականատիրոջը և գույքային իրավունք ունեցողին չի ուղարկում օտարման պայմանագրի նախագիծը կամ նույն օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվին չի հանձնում փոխհատուցման գումարը կամ նույն օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում չի դիմում դատարան սեփականության օտարման հայցով կամ նույն օրենքի 13-րդ հոդվածի վեցերորդ մասով սահմանված ժամկետում դեպոզիտ հաշվին չի փոխանցում դատարանի կողմից սահմանված փոխհատուցման լրացուցիչ գումարը, ապա համարվում է, որ ձեռքբերողը հրաժարվում է տվյալ սեփականությունը ձեռք բերելուց, և տվյալ սեփականության մասով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերը համարվում են անվավեր:

Վերոգրյալ իրավադրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը հստակ ամրագրել է, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է, այսինքն՝ բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայությունն այն պայմանն է, որի պարագայում հնարավոր է դառնում սեփականության օտարումը պետության և հասարակության կարիքների համար, և գերակա հանրային շահի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց տվյալ սեփականության օտարման:

Միաժամանակ, օրենսդիրը սահմանել է որոշակի և հստակ կառուցակարգ, որի պահանջների պահպանմամբ միայն հնարավոր է իրականացնել գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշմամբ սահմանված սեփականության օտարման գործընթացը: Ընդ որում, օրենսդիրը հանրային գերակա շահ ճանաչված սեփականությունը ձեռքբերողի համար իմպերատիվ կերպով սահմանել է որոշակի և հստակ ժամկետներ, որոնց պահպանմամբ միայն հնարավոր է իրականացնել գույքի օտարման գործընթացը: Մասնավորապես, սահմանված առաջին նախապայմանը սեփականությունը ձեռքբերողի պարտականությունն է՝ մինչև գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշմամբ սահմանված սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնաժամկետից օտարվող սեփականության սեփականատերերին և այդ սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին պատշաճ ձևով ուղարկելու սեփականության օտարման պայմանագրի նախագիծը:

Անհրաժեշտ է նկատել, որ օրենսդիրն Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է եռամսյա ժամկետ՝ սեփականատիրոջը և գույքային իրավունք ունեցող անձին օտարման պայմանագրի նախագիծն ուղարկելուց հետո սեփականության օտարման պայմանագիր կնքելու համար, իսկ չկնքվելու դեպքում ձեռքբերողը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում սեփականության օտարման դիմաց ոչ պակաս, քան նույն օրենքով սահմանված կարգով որոշված փոխհատուցման ենթակա գումարը հանձնել դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշիվ՝ եռօրյա ժամկետում այդ մասին պատշաճ ձևով տեղեկացնելով օտարվող սեփականության սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ ձեռքբերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողներին:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ձեռքբերողի հաջորդ պարտականությունը՝ փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում օտարման պայմանագիրը չկնքվելու դեպքում մեկամսյա ժամկետում սեփականության

օտարման հայցով դիմելու դատարան: *Արդյախի ղեպերում դատարանի քննարկման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի հարցը:*

Միևնույն ժամանակ, Օրենքի 16-րդ հոդվածով ամրագրված է, որ *վերոնշյալ ժամկետով սահմանափակված ընթացակարգերը չպահպանելը հանգեցնում է ավյալ սեփականության մասով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերի անվավերության:*

Վերոնշյալ իրավական կարգավորումների բովանդակությունից բխում է, որ հանրային գերակա շահ ճանաչված սեփականության օտարման գործընթացն իրենից ներկայացնում է միմյանց հաջորդող գործողությունների շղթա, երբ սեփականության ձեռքբերողի և սեփականատիրոջ կամ այլ գույքային իրավունք ունեցող անձի միջև որևէ հարցի շուրջ համաձայնությունը չկայանալու դեպքում դրան հաջորդող գործողություն կատարելու համար սահմանված է որոշակի ժամանակահատված: Ընդ որում, յուրաքանչյուր գործողություն իրականացնելու համար օրենքով սահմանված ժամկետի ցանկացած խախտում օրենքի իմաստով մեկնաբանվում է որպես հանրային գերակա շահ ճանաչված սեփականությունը ձեռքբերողի կողմից տվյալ սեփականությունը ձեռք բերելուց հրաժարում, ինչը հանգեցնում է գերակա հանրային շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերի անվավերության:

Վճարել դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը Երևանի քաղաքապետի 26.10.2017 թվականի թիվ 3701-Ա որոշման համաձայն իրականացնում է ՀՀ կառավարության 06.10.2016 թվականի թիվ 1027-Ն որոշմամբ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված գույքերի/հողերի օտարման համապատասխան գործընթաց, որը տարածվել է նաև Երևանի Շերամի փողոց թիվ 34 հասցում գտնվող թիվ 01-007-0453-0046 ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ, որի սեփականատերն է Նաիրա Ավետիսյանը:

02.11.2017 թվականի թիվ 2022-1 վճարման հանձնարարականի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը թիվ 900012005063 հաշվից Կենտրոնական գանձապետարանի թիվ 900053423019 հաշվին փոխանցել է 20.428.139 ՀՀ դրամ, որպես ստացող նշված է «ՀՀ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան», վճարման հիմքը և նպատակը նշված է՝ «Շերամի փողոցի թիվ 34 հասցեում գտնվող թիվ 0453-0046 ծածկագրով Նաիրա Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի փոխհատուցման համար»:

01.11.2017 թվականի թիվ 304 վճարման հանձնարարականի համաձայն՝ Ընկերությունը թիվ 90000901612 հաշվից թիվ 900053423019 հաշվին փոխանցել է 11.970.760 ՀՀ դրամ, որպես ստացող նշված է «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան», որպես նպատակ՝ «Շերամի փողոց, թիվ 34, Նաիրա Վարդգեսի Ավետիսյան»:

Ընկերությունը 06.11.2017 թվականի գրությամբ Նաիրա Ավետիսյանին տեղեկացրել է, որ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքով սահմանված կարգով փոխհատուցման գումարը հանձնվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի հաշվեհամարի դեպոզիտ հաշվին:

Դատարանը հայցը բավարարել է այն պատճառաբանությամբ, որ սույն գործում առկա չէ ապացույց այն մասին, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում կողմերի միջև կնքվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված գույքի օտարման պայմանագիր, կամ գույքն օտարվել է Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն, ինչը հիմք է հանդիսացել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության օտարման հայցով դատարան դիմելու համար: Դատարանը հաստատված է համարել այն փաստը, որ պատասխանող Նաիրա Ավետիսյանին տրամադրվելիք

փոխհատուցման արժեքը ընդհանուր առմամբ կազմում է 38.605.801 ՀՀ դրամ, որը հայցվորի կողմից փոխանցվել է Դատարանի դեպոզիտ հաշվին: Ինչ վերաբերում է պատասխանող կողմի այն առարկությանը, որ հայցվորը բաց է թողել համապատասխան գործողություններ կատարելու օրենքով սահմանված ժամկետները, ինչը հանգեցրել է տվյալ սեփականությունը ձեռք բերելուց ձեռքբերողի /հայցվորի/ հրաժարվելուն և տվյալ սեփականության մասով հանրության գերակա շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերի անվավերության՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, ապա Դատարանն արձանագրել է, որ հայցվորը փոխհատուցման գումարը Դատարանի դեպոզիտ հաշվին փոխանցելուց հետո օրենքով սահմանված կարգով հայց է ներկայացրել Դատարան, որպիսի պայմաններում չի հիմնավորվում սեփականությունը ձեռք բերելուց ձեռքբերողի /հայցվորի/ հրաժարվելու հանգամանքը: Վերը նշվածը հիմք ընդունելով՝ Դատարանը գտել է, որ հաստատված է անհրաժեշտ փաստական կազմը՝ վեճի առարկա անշարժ գույքը փոխհատուցմամբ դատական կարգով օտարելու համար:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, վերահաստատել է Դատարանի պատճառաբանությունները և հավելել, որ անկախ Օրենքի 16-րդ հոդվածի՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման անվավերության որևէ կամ բոլոր հիմքերի առկայությունից՝ դատարանը չի կարող քննության առարկա դարձնել օտարման գործընթացի իրավական փաստաթղթերի անվավերության հարցը, քանի որ քննվող գործի շրջանակներում որևէ վարչական ակտի իրավաչափությունը վիճարկելու պահանջի բացակայության պայմաններում դատարանն իրավասու չէ անդրադառնալ այդ հարցին և դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությանը: Ելնելով վերը շարադրված վերլուծություններից, համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրքը)¹ 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար երկան նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Նույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*լրեն՝ Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ՝ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԳ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը պետք է ոչ միայն նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*լրեն՝ Ռազմիկ Մարությանն*

¹ Սույն գործով հայցադիմումը վարույթ է ընդունվել 29.12.2017 թվականին, հետևաբար գործի քննության նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով կիրառելի են 17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները:

ընդդեմ Սյրեիան և Անահիտ Մարությունների թիվ 3-54(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):

Սույն գործով ներկայացված հայցապահանջի մերժման կամ բավարարման հարցը լուծելու համար անհրաժեշտ է պարզել հետևյալ հարցը.

արդյո՞ք հանրային գերակա շահ ճանաչված սեփականության ձեռքբերողը պահպանել է օրենսդրությամբ սահմանված ժամկետային պահանջները, մասնավորապես՝

1) արդյո՞ք մինչև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշմամբ սահմանված սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը ձեռքբերողն օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին պատշաճ ձևով ուղարկել է սեփականության օտարման պայմանագրի նախագիծը.

2) էթե ձեռքբերողն օտարման պայմանագրի նախագիծն օտարվող սեփականության սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին ուղարկելուց հետո երեք ամսվա ընթացքում չի կնքել սեփականության օտարման պայմանագիրը, արդյո՞ք ձեռքբերողը մեկ ամսվա ընթացքում սեփականության օտարման փոխհատուցման ենթակա գումարը հանձնել է դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշիվ,

3) էթե ձեռքբերողի կողմից փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո յոթ օրվա ընթացքում չի կնքվել օտարման պայմանագիրը կամ սեփականությունը չի օտարվել, արդյո՞ք ձեռքբերողը մեկամսյա ժամկետում է դիմել դատարան սեփականության օտարման հայցով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վեճի լուծման համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ հանրային գերակա շահ ճանաչված սեփականության ձեռքբերողի վերոնշյալ գործողություններն իրականացված լինեն օրենքով սահմանված ժամկետներում: Վերոնշյալ ժամկետների պահպանման դեպքում միայն դատարանը կարող է սեփականության օտարման հայցի շրջանակներում քննության առնել փոխհատուցման չափի հարցը: Հետևաբար էական է, որ ստորադաս ատյաններում քննության առարկա դարձած լինեն վերոնշյալ հարցերը և դրանց պատասխանները լինեն հստակ՝ առանց հակասությունների:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Դատարանը գործի քննությունն իրականացնելիս չի անդրադարձել նշված բոլոր հարցերի պարզաբանմանը, ինչն էլ անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Սույն քաղաքացիական գործի ուսումնասիրությունից պարզ չէ, թե Ընկերությունը երբ է սեփականության օտարման պայմանագրի նախագիծը պատշաճ ձևով ուղարկել օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին, և արդյոք դրանից հետո ձեռքբերողի կողմից պահպանվել են հաջորդող գործողություններից յուրաքանչյուրի իրականացման՝ օրենքով սահմանված ժամկետները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենքով ամրագրված այդ ժամկետներն ուղղակիորեն փոխկապված են միմյանց հետ:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել այն հարցերին, թե Ընկերության կողմից որ ժամկետում է կատարվել առաջին գործողությունը, այն է՝ մինչև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշմամբ սահմանված սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին սեփականության օտարման պայմանագրի նախագիծը պատշաճ ձևով ուղարկելը, և արդյոք դրանից հետո օրենքով սահմանված ժամկետում է դատարանի դեպոզիտ հաշվին փոխանցվել պայմանագրով սահմանված փոխհատուցման գումարը, որից հետո միայն պարզ կլիներ մյուս գործողությունների կատարման ժամկետների պահպանված լինելու հարցը: Վերաքննիչ դատարանը միայն արձանագրել է, որ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում կողմերի միջև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված գույքի օտարման պայմանագիր չկնքվելու դեպքում Ընկերությունը համապատասխան հայցով դիմել է դատարան:

Վերոգրյալից հետևում է, որ ստորադաս ատյանները քննության առարկա չեն դարձրել և չեն բացահայտել վերոգրյալ հանգամանքները, որոնք էական նշանակություն ունեն գործի լուծման համար: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հայցվոր Ընկերությունը և բողոքաբերները այդ կապակցությամբ հայտներ են տարբեր տեղեկություններ՝ տարբեր ամսաթվեր, իսկ գործում բացակայում են ապացույցներն այն մասին, թե Ընկերությունը երբ է սեփականության օտարման պայմանագրի նախագիծը պատշաճ կարգով ուղարկել սեփականատիրոջը և գույքային իրավունք ունեցող անձին, և արդյոք դրանից հետո օրենքով սահմանված ժամկետում են կատարվել մյուս ընթացակարգերը:

Անփոփելի վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն չի իրականացվել, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ոչ բոլոր հանգամանքներն են բացահայտվել, որպիսի պարագայում առկա է գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտություն: Գործի նոր քննության ընթացքում դատարանը, գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, պետք է որոշի սույն որոշմամբ առաջադրված հարցերը՝ ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարզապահությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.03.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/1134/02/19
2021թ.

ԵԴ/1134/02/19
Կ. Չիլինգարյան
Ա. Պետրոսյան
Լ. Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի հուլիսի 22-ին
գրավոր ընթացակարգով քննելով «Հայրիզնեսքանկ» փակ բաժնետիրական ընկե-
րության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի 16.07.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կարեն Խաչատրյանի ընդ-
դեմ Ընկերության՝ իրեն աշխատանքից ազատելու և աշխատանքային պայմանագիրը
լուծելու մասին Ընկերության վարչության նախագահի 31.10.2018 թվականի թիվ Կ2984-Ա
հրամանն անվավեր ճանաչելու, իր նախկին պաշտոնում վերականգնելու, 07.08.2018
թվականի թիվ Կ2047-Ա հրամանի հիման վրա իր պաշտոնավարման ժամանակավոր դա-
դարեցման ժամանակահատվածում (08.08.2018 թվականից մինչև 31.10.2018 թվականը)
չվճարված միջին աշխատավարձը և 01.11.2018 թվականից ի վեր հարկադիր պարապուր-
դի ամբողջ ժամանակահատվածի համար հաշվեգրման ենթակա միջին աշխատավարձը
բռնագանձելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Կարեն Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել Ընկե-
րության վարչության նախագահի 31.10.2018 թվականի Ընկերության գործառնական

դեպարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետ Կարեն Խաչատրյանին աշխատանքից ազատելու և 06.06.2006 թվականին կնքված թիվ 40 աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ թիվ Կ2984-Ա հրամանը (այսուհետ՝ Հրաման), իրեն վերականգնել իր նախկին՝ Ընկերության գործառնական դեպարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետի պաշտոնում և պատասխանողից բռնագանձել 07.08.2018 թվականի թիվ Կ2047-Ա հրամանի հիման վրա իր պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման ժամանակահատվածում (08.08.2018 թվականից մինչև 31.10.2018 թվականը) չվճարված միջին աշխատավարձի գումարը՝ 3.280.000 դրամի չափով, ինչպես նաև 01.11.2018 թվականից ի վեր հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար հաշվեգրման ենթակա միջին աշխատավարձի գումարը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ժ. Ասատրյան) (այսուհետ՝ Դատարան) 29.01.2020 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.07.2020 թվականի որոշմամբ հայցվորի անունից բերված վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Հրամանն անվավեր ճանաչելու և հայցվորին նախկին պաշտոնում վերականգնելու պահանջների մերժմանը վերաբերող մասով վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ վճիռի եզրափակիչ մասում դրան վերաբերող եզրակացությունը շարադրելով հետևյալ կերպ. «Հայցը բավարարել մասնակի՝ հայցվորին աշխատանքից ազատելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին [Ընկերության] վարչության նախագահի կողմից 31.10.2018 թվականին արձակված թիվ Կ2984-Ա հրամանը ճանաչել անվավեր և վերականգնել հայցվորի՝ մինչև նշված հրամանի արձակումն ունեցած կարգավիճակը (բանկի երբեմնի ղեկավար, ում պաշտոնավարումը ժամանակավորապես դադարեցված է)»: Վերաքննիչ բողոքը՝ հարկադիր պարապորդի համար հատուցման պահանջին վերաբերող մասով, մերժվել է, այդ մասով Դատարանի 29.01.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 109-րդ, հողվածները, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ աշխատանքային հարաբերությունները դադարում են աշխատանքային պայմանագրի լուծմամբ, որը ձևակերպվում է անհատական իրավական ակտով, բացառությամբ ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքի: Մինչդեռ 07.08.2018 թվականի թիվ Կ20174-Ա հրամանով Կարեն Խաչատրյանի աշխատանքային հարաբերությունները չեն դադարել, վերջինս շարունակել է զբաղեցնել պլաստիկ քարտերի վարչության պետի հաստիքը: Բանկի բնականոն գործունեությունը չխթաթարելու նպատակով Կարեն Խաչատրյանի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դրվել է մեկ այլ աշխատողի վրա, ով, սակայն, չի զբաղեցրել Կարեն Խաչատրյանի հաստիքը: Վերաքննիչ դատարանի նույն տրամաբանությամբ կարելի է պնդել, որ բանկի ղեկավարներից յուրաքանչյուրը դադարում է ղեկավար լինելուց ամենամյա արձակուրդ գնալիս կամ ժամանակավոր անաշխատունակության ընթացքում:

Տվյալ դեպքում 07.08.2018 թվականի թիվ Կ20174-Ա հրամանի արձակումը նպատակ է ունեցել ժամանակավորապես դադարեցնել (կասեցնել) Կարեն Խաչատրյանի՝ որպես պլաստիկ քարտերի վարչության պետի լիազորությունները, հետագայում դրա անհրաժեշտությունը վերանայլու դեպքում վերացնել պաշտոնավարման ժամանակավոր դադարեցումը: «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով սահմանված նորմի նպատակն է բացառել կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի կարգավիճակ ունեցող անձանց՝ բանկում ղեկավար պաշտոն

գրադեցնելու հնարավորությունը, ինչը նշանակում է վերջինիս հետ աշխատանքային հարաբերությունների անժամկետ դադարեցում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է. «Ամբողջությամբ բավարարել վճռաբեկ բողոքը՝ բեկանել թիվ ԵԴ/1134/02/19 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 16.07.2020 թվականին կայացված որոշումը՝ վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու՝ հայցը մասնակի բավարարելու մասով: Մնացած մասով որոշումը թողնել անփոփոխ: Ամբողջությամբ օրինական ուժ տալ Դատարանի 29.01.2020 թվականի վճռին»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կողմերի միջև 30.06.2006 թվականին կնքված և մի շարք համաձայնագրերով հետագայում փոփոխված թիվ 40 աշխատանքային պայմանագրի (Պայմանագրի) հիման վրա Կարեն Խաչատրյանը գրադեցրել է Ընկերության (նախկինում՝ «Հայինվեստբանկ») փակ բաժնետիրական ընկերություն) գործառնական դեպարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետի պաշտոնը (**հատոր 1-ին, գ.թ. 40-43, հատոր 2, գ.թ. 36, 41-49**).

2) 06.08.2018 թվականին Ընկերության անունից ՀՀ գլխավոր դատախազին է ներկայացվել հանցագործության մասին հաղորդում՝ Կարեն Խաչատրյանի և այլ անձանց կողմից կեղծ փաստաթղթեր կազմելու միջոցով հափշտակություններ կատարված լինելու և Ընկերությանն առանձնապես խոշոր չափերի վնաս պատճառված լինելու ենթադրությամբ (**հատոր 2, գ.թ. 152-153**).

3) Ընկերության վարչության նախագահի կողմից 07.08.2018 թվականին արձակվել է «[Ընկերության] գործառնական դեպարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետ Կարեն Խաչատրյանի պաշտոնավարությունը ժամանակավոր դադարեցնելու, նրան տրված լիազորագրերը վերացնելու և [Ընկերության] գործառնական դեպարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետի պարտականությունները ժամանակավորապես պլաստիկ քարտերի վարչության պլաստիկ քարտերի բաժնի պետ Արսեն Ասատրյանի վրա դնելու մասին» թիվ Կ2074-Ա հրամանը, որի համաձայն՝ 08.08.2018 թվականից ժամանակավորապես դադարեցվել է Ընկերության գործառնական դեպարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետ Կարեն Խաչատրյանի պաշտոնավարությունը, ներառյալ բոլոր տեսակ լիազորություններն ու իրավասությունները: Սահմանվել է, որ Կ. Խաչատրյանի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը կարող է վերացնել Ընկերության վարչության նախագահի հրամանով, երբ վերանս դրա անհրաժեշտությունը (**հատոր 1-ին, գ.թ. 44**).

4) ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչ Ս. Նավոյանի 16.10.2018 թվականի որոշմամբ Ընկերության հաղորդման արդյունքում հարուցված թիվ 58218118 քրեական գործով Կարեն Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ: Նրան առաջադրվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով՝ առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու համար, որն առաջացրել է ծանր հետևանք (**հատոր 2-րդ, գ.թ. 33-35**).

5) Ընկերության վարչության նախագահի կողմից 31.10.2018 թվականին արձակվել է «Կարեն Խաչատրյանին աշխատանքից ազատելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» թիվ Կ2984-Ա հրամանը, որում որպես իրավական հիմքեր վկայակոչվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 122-րդ հոդվածի 1-ին մասը, 123-րդ հոդվածը, 22-րդ գլխի իրավակարգավորումները, «Բանկերի և քանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը, Ընկերության կանոնադրության 9.3.6 կետը: Որպես փաստական հիմք՝ նշվել է, որ Ընկերության գործառնական դեպարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետ Կարեն Խաչատրյանին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննվող գործով 16.10.2018 թվականին առաջադրվել է մեղադրանք՝ ՀՀ քրեական

օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչի 16.10.2018 թվականի որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է տուժող, որին հանցագործությամբ պատճառվել է վնաս, ինչպես նաև որ Կարեն Խաչատրյանի հետ 06.04.2010 թվականին կնքվել է լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիրը, Կարեն Խաչատրյանը Ընկերության ղեկավար է, իսկ Ընկերությունը կորցրել է վստահությունը վերջինիս նկատմամբ (**հատոր 1-ին, գ.թ. 45**):

4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով բանկի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձին աշխատանքից ազատելու հարցի վերաբերյալ առկա է իրավունքի զարգացման խնդիր: Մինևնույն ժամանակ սույն գործով վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- *արդյո՞ք «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով բանկում ղեկավար համարվող անձի պաշտոնավարությունը ժամանակավորապես դադարեցնելու, նրան փրկված լիազորագրերը վերացնելու և նրա պարտականությունները ժամանակավորապես այլ անձի վրա դնելու մասին իրավական ակտի առկայության պարագայում վերջինիս նկատմամբ, որպես բանկի ղեկավարի, կարող է կիրառվել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը:*

1.1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներից է աշխատանքային հարաբերությունների կայունությունը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառնություններ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված դեպքերում աշխատանքային պայմանագրի լուծումը ձևակերպվում է գործատուի ընդունած անհատական իրավական ակտով, բացառությամբ նույն օրենսգրքի 128-րդ հոդվածով նախատեսված դեպքի (*Աշխատանքային պայմանագրի լուծումը ֆիզիկական անձ գործարարի մասի վրա դեպքում*):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե սույն օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ:

Անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցին՝ ՀՀ սահմանադրական դատարանը 18.07.2012 թվականի թիվ ՄԴՈ-1038 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը որպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման իրավական հիմք է դիտարկում աշխատանքային պայմանագիրը: Ըստ այս նորմի՝ աշխատանքային պայմանագիրը հանդիսանում է իրավաբանական փաստ, որը բավարար և անհրաժեշտ նախադրյալ է աշխատանքային իրավահարաբերությունների ծագման համար: Օրենքով այս կամ այն իրավահարաբերության ծագման համար անհրաժեշտ և բավարար հիմքերի սահմանումը՝ ընդհանրապես, և տվյալ դեպքում աշխատանքային իրավահարաբերությունների համար՝ մասնավորապես, հետապնդում է իրավական կարգավորման ոլորտում որոշակիություն և կանխատեսելիություն ապահովելու իրավաչափ նպատակ:

Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներով անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ մասնավորապես արձանագրելով.

- ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի (ՄԴՈ-1270).

- Մի շարք այլ որոշումների (ՄԴՈ-630, ՄԴՈ-1142) համատեքստում, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում (ՄԴՈ-1439).

- (...) Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ դիրքորոշումներն ամրագրված են Սահմանադրական դատարանի մի շարք, մասնավորապես, ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-1270 որոշումներում, որոնցից բխում է, որ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ (ՄԴՈ-1357).

- Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ, մասնավորապես, որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՄԴՈ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՄԴՈ-753), օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՄԴՈ-1176, ՄԴՈ-1449):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում, կարևորելով իրավական որոշակիության և միևնույն ժամանակ աշխատանքային հարաբերություններում կայունությամբ սկզբունքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ աշխատանքային հարաբերությունների **ծագումը և դադարումը**, բացառությամբ օրենքով ուղղակիորեն նախատեսված

դեպքերի (մասնավորապես՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ, 128-րդ հոդվածներ), **հավաստվում է համապատասխան իրավական ակտով՝** աշխատանքային պայմանագիր կամ անհատական իրավական ակտ: Նման կարգավորումն ինքնանպատակ չէ և ուղղված է որոշակիացնելու գործատուի և աշխատողի միջև հարաբերությունները՝ ապահովելով հստակություն և կանխատեսելիություն:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ քանի դեռ առկա չէ ուժի մեջ մտած համապատասխան իրավական ակտ՝ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման վերաբերյալ, աշխատանքային հարաբերությունները դադարած համարվել չեն կարող *(պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում պայմանագրի լուծման և լուծման ձևակերպման մասով առկա են որոշ առանձնահատկություններ, որոնց մասին փեն Խորեն Նասիրյանն ընդդեմ «Ինտերսպլոկ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԳ/3295/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը):* Ավելին՝ աշխատանքային պայմանագրի լուծումը ենթադրում է նաև աշխատողի հետ վերջնահաշվարկի կատարում: Ուստի Վճռաբեկ դատարանը նաև կարևորում է, որ աշխատանքային պայմանագրի լուծման մասին իրավական ակտը պետք է զուգորդվի նաև աշխատողի հետ կատարվող վերջնահաշվարկով՝ այդպիսով ազդարարելով աշխատանքային հարաբերությունների դադարումը:

1.2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են աշխատանքի իրավունքը, որն իր մեջ ներառում է յուրաքանչյուր մարդու իրավունքը իր ապրուստի համար աշխատանքով վաստակելու հնարավորություն ստանալը, որը նա ազատորեն ընտրում է, կամ որին նա ազատորեն համաձայնում է, և կձեռնարկեն հարկ եղած քայլեր այդ իրավունքի ապահովման համար:

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 1-ին մասի համաձայն՝ կողմերը, որպես իրենց քաղաքականության նպատակ, պարտավորվում են արդյունավետ իրականացման համար նպաստել նաև, որ յուրաքանչյուր ոք ունենա վաստակելու հնարավորություն՝ իր կողմից ազատորեն ընտրված ցանկացած աշխատանքով:

«Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին» կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ որոշակի աշխատանքի հետ կապված ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որը հիմնված է այդ աշխատանքին հատուկ պահանջների վրա, խտրականություն չի համարվում, իսկ հիշյալ կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ այն անձի դեմ ուղղված ցանկացած միջոցառում, որի վերաբերյալ կա հիմնավորված կասկած կամ ապացուցված է, որ նա զբաղվում է պետության անվտանգությունը վտանգող գործունեությամբ, խտրականություն չի համարվում՝ պայմանով, որ տվյալ անձն իրավունք ունենա դիմելու ներպետական պրակտիկային համապատասխան ստեղծված իրավասու մարմնին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով:**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերով: (...)

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի հիմնական խնդիրը բանկային համակարգի զարգացումը, հուսալիությունը և բնականոն գործունեությունն ապահովելն ու բանկերի գործունեության համար ազատ տնտեսական մրցակցության հավասար պայմաններ ստեղծելն է:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է որևէ կերպ ներգործել բանկի ղեկավարների վրա՝ նրանց պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում կամ միջամտել բանկի գործունեությանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքով սահմանված կարգով բանկի ղեկավարներին կարող է տրվել զենք կրելու իրավունք:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **բանկի ղեկավարներ են համարվում** բանկի խորհրդի նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը, նրա անդամները, բանկի տնօրինության անդամները, ռիսկերի կառավարման գործառնայթի իրականացման համար պատասխանատու անձը և համապատասխանության ապահովման գործառնայթի իրականացման համար պատասխանատու անձը, ինչպես նաև բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները և **կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները**՝ բանկի ղեկարտամենտի, վարչության, բաժնի, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով որևէ կերպ բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող աշխատակիցները:

Նույն հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ բանկի ղեկավար չեն կարող լինել անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական բանկն իրավունք ունի սահմանելու բանկի ղեկավարների որակավորման կարգ և մասնագիտական համապատասխանության չափանիշներ:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են այն ֆինանսական գործառնությունները, որոնք կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխով նախատեսվում են բանկային գործունեության հիմնական և այլ տնտեսական նորմատիվները և մասնավորապես նույն օրենքի 44-րդ հոդվածով սահմանվում է, որ բանկերի գործունեության կարգավորման, բանկային համակարգի ֆինանսական կայունության ապահովման նպատակով Կենտրոնական բանկը կարող է սահմանել բանկային գործունեության՝ նույն հոդվածում թվարկված հիմնական տնտեսական նորմատիվները:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կենտրոնական բանկը կարող է սահմանել բանկերի կանոնադրական հիմնադրամի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը՝ որոշակի գումարների ձևով: Կենտրոնական բանկը կարող է վերանայել բանկերի կանոնադրական հիմնադրամի կամ ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը, բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բանկային ոլորտի առանձնահատկությունները պայմանավորում են նաև կարգավորման առանձնահատկություններ: Ուստի պատահական չէ, որ նախ որպես «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի նպատակ՝ սահմանվել է **բանկային համակարգի**

գարգացումը, հուսալիությունը և բնականոն գործունեությունն ապահովելն ու բանկերի գործունեության համար ազատ տնտեսական մրցակցության հավասար պայմաններ ստեղծելը: Բացի այդ, սահմանվել են Կենտրոնական բանկի կողմից վերահսկողության մեխանիզմներ բանկերի նկատմամբ, որը ներառում է ինչպես բանկերի և հաճախորդների միջև ծագող հարաբերությունների հետ կապված վերահսկողություն, այնպես էլ բանկերի ներսում ծագող հարաբերություններից բխող վերահսկողություն: Մասնավորապես, վերջինիս օրինակ է Կենտրոնական բանկի վերահսկողությունը բանկի ղեկավարների նկատմամբ՝ նկատի ունենալով վերջիններիս ազդեցությունը ողջ բանկի գործունեության նկատմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պայմանավորված բանկային ոլորտի առանձնահատկություններով՝ պատահական չէ, որ օրենքով սահմանված են առանձնահատկություններ բանկի ղեկավարների աշխատանքային հարաբերությունների համար:

Այսպես. նախ օրենսդիրն ամրագրել է, որ Կենտրոնական բանկին իրավունք ունի սահմանելու բանկի ղեկավարների որակավորման կարգ և մասնագիտական համապատասխանության չափանիշներ, որը պայմանավորված է բանկի ղեկավարների՝ բանկերի գործունեության վրա ազդեցության աստիճանով և նպատակ ունի վերահսկել բանկի բնականոն գործունեությունը:

Բացի այդ, օրենսդիրը սահմանել է նաև բանկի ղեկավարների լիազորությունների դադարեցման հատուկ հիմքեր, մասնավորապես՝ բանկի ղեկավար չեն կարող լինել անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

Վերոգրյալ կարգավորումը Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել ՀՀ աշխատանքային օրենսգրքի կարգավորումների համատեքստում:

Այսպես. 11.10.2011 թվականի թիվ ՄԴՌ-991 որոշման մեջ մեկնաբանելով այդ պահին գործող Սահմանադրության 32-րդ հոդվածում ամրագրված աշխատանքի ընտրության ազատության սահմանադրական ինստիտուտը՝ ՀՀ սահմանադրական դատարանը հանգել է հետևյալ եզրակացությանը. «Սահմանադրության 32-րդ հոդվածում երաշխավորված աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Միաժամանակ, այն չի խոչընդոտում օրենսդիրն աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, և նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են և ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում»:

ՀՀ սահմանադրական դատարանի նշված դիրքորոշումների հաշվառմամբ անդրադառնալով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետին՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ բանկի ղեկավարը, իր աշխատանքային պարտականությունների բնույթով պայմանավորված, ենթարկվում է ավելի խիստ սահմանափակումների, քան բանկի սովորական աշխատակիցը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման մոտեցումն արդարացված է, քանի որ բանկի ղեկավարը, այդ թվում՝ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, տիրապետում է այնպիսի տեղեկատվության, գործունեության այնպիսի լծակների, որ վերջինիս կողմից բանկին կամ վերջինիս հաճախորդներին հասցվող վնասը կարող է մի քանի անգամ գերազանցել սովորական աշխատակցի կողմից հասցվող վնասին՝ ընդհուպ վտանգի տակ դնելով բանկի հետագա բնականոն գործունեությունը, գործարար համբավը:

Հետևաբար ՀՀ սահմանադրական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումները սույն հարաբերության նկատմամբ կիրառելիս պետք է գնահատել ինչպես օրենսդրական նորմով բանկի ղեկավարի իրավունքների սահմանափակման համաչափությունը, այնպես էլ դրանց որոշակիությունն ու կանխատեսելիությունը:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ «*բանկի ղեկավար չեն կարող լինել անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ*» նորմը պետք է մեկնաբանել այնպես, որ այն ներառի միայն այնպիսի քրեական գործերը, որոնք առնչվում են տվյալ անձի աշխատանքային գործունեության հետ: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշման հիմքում ընկած է բանկի ղեկավարի՝ բանկի բնականոն գործունեության համար առանցքային նշանակություն ունենալը: Ուստի եթե բանկի ղեկավարն իր զբաղեցրած պաշտոնից բխող գործառնությունների առնչությամբ քրեական գործով ներգրավվում է որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ, ապա պարտադրել բանկին՝ պահպանել վերջինիս պաշտոնը մինչև վերջնական դատական ակտի կայացումը, ոչ միայն կիսաթարի և վտանգի տակ կոդի բանկի բնականոն գործունեությունը, այլ կասկածի տակ կոդի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով որպես օրենքի նպատակ սահմանված դրույթների գոյությունը՝ **բանկային համակարգի զարգացումը, հուսալիությունը և բնականոն գործունեությունն ապահովելն ու բանկերի գործունեության համար ազատ տնտեսական մրցակցության հավասար պայմաններ ստեղծելը:**

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի նպատակը բանկերի, պետության ֆինանսատնտեսական գործունեության և հասարակության շահերի միջև արդարացի հավասարակշռության ապահովումն է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով բանկի ղեկավար համարվող անձն **իր աշխատանքային գործառնությունների իրականացման կապակցությամբ** քրեական գործով ներգրավվում է որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ, ապա վերջինս չի կարող շարունակել մնալ բանկի ղեկավար, և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել բանկի կողմից՝ նույն հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով: Ավելին՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի հիմքով նման անձը կարող է անգամ զրկվել որակավորման վկայականից Կենտրոնական բանկի որոշմամբ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարագրմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կարեն Խաչատրյանը զբաղեցրել է ղեկավար պաշտոն Ընկերությունում՝ համարվելով բանկի ղեկավար «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով:

Ընկերության անունից 06.08.2018 թվականին ՀՀ գլխավոր դատախազին է ներկայացվել հանցագործության մասին հաղորդում՝ Կարեն Խաչատրյանի և այլ անձանց կողմից կեղծ փաստաթղթեր կազմելու միջոցով հափշտակություններ կատարված լինելու և Ընկերությանն առանձնապես խոշոր չափերի վնաս պատճառված լինելու ենթադրությամբ:

Ընկերության վարչության նախագահի կողմից 07.08.2018 թվականին արձակվել է «Ընկերության գործառնական ղեկավարամենտի պլաստիկ քարտերի վարչության պետ Կարեն Խաչատրյանի պաշտոնավարությունը ժամանակավոր դադարեցնելու, նրան տրված լիազորագրերը վերացնելու և Ընկերության գործառնական ղեկավարամենտի պլաստիկ քարտերի վարչության պետի պարտականությունները ժամանակավորապես պլաստիկ քարտերի վարչության պլաստիկ քարտերի բաժնի պետ Արսեն Ասատրյանի վրա դնելու մասին» թիվ Կ2074-Ա հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչ Ս. Նավոյանի 16.10.2018 թվականի որոշմամբ Ընկերության հաղորդման արդյունքում հարուցված թիվ 58218118 քրեական գործով Կարեն Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և վերջինիս առաջադրվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով՝ առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու համար, որն առաջացրել է ծանր հետևանք:

Ընկերության վարչության նախագահի կողմից 31.10.2018 թվականին արձակվել է «Կարեն Խաչատրյանին աշխատանքից ազատելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» թիվ Կ2984-Ա հրամանը, որում որպես իրավական հիմք վկայակոչվել է նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը: Որպես փաստական հիմք՝ նաև նշվել է, որ Ընկերության գործառնական դեպարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետ Կարեն Խաչատրյանին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննվող գործով 16.10.2018 թվականին առաջադրվել է մեղադրանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչի 16.10.2018 թվականի որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է տուժող, որին հանցագործությամբ պատճառվել է վնաս, ինչպես նաև որ Կարեն Խաչատրյանը Ընկերության ղեկավար է:

Դատարանը հայցը մերժել է նաև այն պատճառաբանությամբ, որ բանկային բնագավառում աշխատանքային հարաբերությունները ենթակա են կարգավորման «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով՝ հատկապես ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատողի կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու հավակնություն ունեցող անձանց նկատմամբ: Նկատի ունենալով, որ հայցվոր Կարեն Խաչատրյանը համարվել է բանկի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձ, այնուհետև Ընկերության ներկայացրած հաղորդմամբ հարուցված քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ՝ առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու մեղադրանքով, Դատարանը գտել է, որ սույն գործով ենթակա է կիրառման «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը:

Վերաքննիչ դատարանը հաստատած է համարել, որ Հրամանի արձակման պահի դրությամբ հայցվորը Ընկերության ղեկավար համարվել չէր կարող, քանի դեռ նրա պաշտոնավարման ժամանակավոր դադարեցումը վերացված չէր կամ այդ դադարեցման անհրաժեշտությունը վերացած համարելու կամ չհամարելու համար անհրաժեշտ և բավարար փաստական հանգամանքներ չէին ծագել: Վերաքննիչ դատարանը գտել է, որ բանկի ղեկավարի պաշտոնը փաստացի չկարող անձը չի կարող համարվել բանկի ղեկավար, առավել ևս այն պայմաններում, երբ այդ պաշտոնը փաստացի վարում է մեկ այլ անձ, և այս համոզմունքն ինքնին բավարար է բանկի ղեկավարի պաշտոնը փաստացի չկարող և բանկի ղեկավար չհամարվող անձի նկատմամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «գ» կետը կիրառելի չլինելու մասին հետևության հանգեցնելու համար: Հետևաբար Վերաքննիչ դատարանի գնահատմամբ հայցվորի նկատմամբ մեղադրանք առաջադրված լինելու փաստը կորցրել է սույն գործով իր ապացուցողական նշանակությունը:

Անդրադառնալով հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի գումարն Ընկերությունից բռնագանձելու մասին հայցվորի պահանջին՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ սույն գործի փաստերը և Հրամանի անվավերության վերը նշված հետևանքի կիրառելիությունը դեռևս հնարավորություն չեն տալիս արձանագրելու հարկադիր պարապորդի առկայություն և կայացնելու հայցվորի այդ պահանջը բավարարելու մասին նոր դատական ակտ, և հայցվորն այդ հարցին կարող է անդրադառնալ միայն հետագայում՝ իրեն մեղսագրված արարքը կատարած լինելու փաստի հաստատմանը կամ հերքմանը և դրա՝ աշխատանքային օրենսդրության շրջանակներում կիրառելի հետևանքներին համապատասխան:

Սույն որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն որոշման 4.1 կետում ներկայացված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ աշխատանքային հարաբերությունները դադարած համարելու համար անհրաժեշտ է համապատասխան իրավական ակտ: Ավելին՝ նաև անհրաժեշտ է, որ գործատուն վերջնահաշվարկ կատարի աշխատողի հետ: Ընդ որում, նշվածը կիրառելի է նաև բանկի ղեկավար հանդիսացող աշխատողների նկատմամբ:

Հետևաբար Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ վիճարկվող հրամանի արձակման պահի դրությամբ հայցվորը Ընկերության ղեկավար համարվել էր կարող, քանի որ նրա լիազորությունները ժամանակավորապես փոխանցված էին այլ անձի, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ չի բխում աշխատանքային օրենսդրության կարգավարումներից: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Կարեն Խաչատրյանը կադրերը համարվել էր Բանկի ղեկավար միայն վերջինիս հետ աշխատանքային հարաբերությունների դադարման կամ այլ հաստիքի վերջինիս տեղափոխման դեպքում, իսկ աշխատանքային հարաբերությունների դադարման էլ կարող է հաստատվել միայն աշխատանքային հարաբերությունների դադարման վերաբերյալ համապատասխան իրավական ակտի առկայությամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քանի դեռ աշխատողի և գործատուի միջև կնքված աշխատանքային պայմանագիրն օրենքով սահմանված կարգով չի լուծվել, և գործատուն աշխատանքային պայմանագրի լուծման օրը աշխատողի հետ չի կատարել լրիվ վերջնահաշվարկ, աշխատողի և գործատուի միջև գոյություն ունեցող աշխատանքային հարաբերությունները դադարած համարվել չեն կարող:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Հրամանի արձակման պահի դրությամբ հայցվորը բանկի ղեկավար համարվել էր կարող: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ մինչև Ընկերության վարչության նախագահի 31.10.2018 թվականի Հրամանի ընդունումը Կարեն Խաչատրյանը հանդիսացել է Ընկերության աշխատող և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համարվել է բանկի ղեկավար:

Մինևույն ժամանակ սույն որոշման 4.2 կետում ներկայացված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գնահատելով Կարեն Խաչատրյանի՝ բանկի ղեկավար հանդիսանալը, Ընկերության հաղորդմամբ հարուցված քրեական գործով վերջինիս մեղադրանք առաջադրելն իր աշխատանքային գործառնությունների կատարման կապակցությամբ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով Կարեն Խաչատրյանի նկատմամբ կիրառելի է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով սահմանված դրույթը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին ամբողջությամբ օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելը և առաջին ատյանի դատարանի դատական ակտին ամբողջությամբ օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվել է միայն Ընկերության կողմից՝ Ընկերության վարչության նախագահի 31.10.2018 թվականի թիվ Կ2984-Ա հրամանն անվավեր ճանաչելու և հայցվորին նախկին պաշտոնում վերականգնելու պահանջների մասով Դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու մասով:

5. Վճռարեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռարեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռարեկ բողոքների համար:

Նկատի ունենալով, որ սույն գործով հայցվորը՝ Կարեն Խաչատրյանը, վերոնշյալ իրավանորմի ուժով ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ Հնկերությունը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, և վերջինիս վճռարեկ բողոքը բավարարվում է, Վճռարեկ դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված, քանի որ օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտները չեն կարող կրել պետական տուրք վճարելու կամ վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականություն՝ թե՛ առաջին ատյանի դատարանում, թե՛ դատական բողոքարկման փուլերում՝ անկախ գործի էլքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռարեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.07.2020 թվականի որոշման՝ «Հայքիզնեքանկ» փակ բաժնետիրական ընկերության վարչության նախագահի 31.10.2018 թվականի թիվ Կ2984-Ա հրամանն անվավեր ճանաչելու, հայցվորին նախկին պաշտոնում վերականգնելու պահանջների մասով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2020 թվականի վճիռը բեկանելու և փոփոխելու մասը, և այդ մասով օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2020 թվականի թվականի վճիռին:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵԴ/1134/02/19 քաղաքացիական գործով 2021 թվականի հուլիսի 22-ին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

22.07.2021 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2021 թվականի հուլիսի 22-ին գրավոր ընթացակարգով «Հայրիզնետրանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.07.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կարեն Խաչատրյանի ընդդեմ Ընկերության՝ իրեն աշխատանքից ազատելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին Ընկերության վարչության նախագահի 31.10.2018 թվականի թիվ Կ2984-Ա հրամանն անվավեր ճանաչելու, իր նախկին պաշտոնում վերականգնելու, 07.08.2018 թվականի թիվ Կ2047-Ա հրամանի հիման վրա իր պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման ժամանակահատվածում (08.08.2018 թվականից մինչև 31.10.2018 թվականը) չվճարված միջին աշխատավարձը և 01.11.2018 թվականից ի վեր հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հաշվեգրման ենթակա միջին աշխատավարձը բռնագանձելու պահանջների մասին, նույն պալատի ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.07.2020 թվականի որոշման՝ Ընկերության վարչության նախագահի 31.10.2018 թվականի թիվ Կ2984-Ա հրամանն անվավեր ճանաչելու, հայցվորին նախկին պաշտոնում վերականգնելու պահանջների մասով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2020 թվականի թվականի վճիռը բեկանելու և փոփոխելու մասը, և այդ մասով օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2020 թվականի թվականի վճիռը:

Վճռաբեկ դատարանի դատավորներ՝ Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս, Էդ. Սեդրակյանս համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Կարեն Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության վարչության նախագահի 31.10.2018 թվականի՝ Ընկերության գործառնական դեպարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետ Կարեն Խաչատրյանին աշխատանքից ազատելու և 06.06.2006 թվականին կնքված թիվ 40 աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ թիվ Կ2984-Ա հրամանը (այսուհետ՝ Հրաման), իրեն վերականգնել իր նախկին՝ Ընկերության գործառնական դեպարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետի պաշտոնում և պատասխանողից բռնագանձել 07.08.2018 թվականի թիվ Կ2047-Ա հրամանի հիման վրա իր պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման ժամանակահատվածում (08.08.2018 թվականից մինչև 31.10.2018 թվականը) չվճարված միջին աշխատավարձի գումարը՝ 3.280.000 դրամի չափով, ինչպես նաև 01.11.2018 թվականից ի վեր հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հաշվեգրման ենթակա միջին աշխատավարձի գումարը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ժ. Ասատրյան) (այսուհետ՝ Դատարան) 29.01.2020 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.07.2020 թվականի որոշմամբ հայցվորի անունից բերված վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Հրամանն անվավեր ճանաչելու և հայցվորին նախկին պաշտոնում վերականգնելու պահանջների մերժմամբ վերաբերող մասով վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ վճռի եզրափակիչ մասում դրան վերաբերող եզրակացությունը շարադրելով հետևյալ կերպ. «Հայքը բավարարել մասնակի՝ հայցվորին աշխատանքից ազատելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին [Ընկերության] վարչության նախագահի կողմից 31.10.2018 թվականին արձակված թիվ Կ2984-Ա հրամանը ճանաչել անվավեր և վերականգնել հայցվորի՝ մինչև նշված հրամանի արձակումն ունեցած կարգավիճակը (բանկի երբեմնի ղեկավար, ում պաշտոնավարումը ժամանակավորապես դադարեցված է)»: Վերաքննիչ բողոքը՝ հարկադիր պարապուրդի համար հատուցման պահանջին վերաբերող մասով, մերժվել է, այդ մասով Դատարանի 29.01.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 109-րդ, հոդվածները, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ աշխատանքային հարաբերությունները դադարում են աշխատանքային պայմանագրի լուծմամբ, որը ձևակերպվում է անհատական իրավական ակտով, բացառությամբ ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքի: Մինչդեռ 07.08.2018 թվականի թիվ Կ20174-Ա հրամանով Կարեն Խաչատրյանի աշխատանքային հարաբերությունները չեն դադարել, վերջինս շարունակել է զբաղեցնել պլաստիկ քարտերի վարչության պետի հաստիքը: Բանկի բնականոն գործունեությունը չխաթարելու նպատակով Կարեն Խաչատրյանի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դրվել է մեկ այլ աշխատողի վրա, ով, սակայն, չի զբաղեցրել Կարեն Խաչատրյանի հաստիքը: Վերաքննիչ դատարանի նույն տրամաբանությամբ կարելի է պնդել, որ բանկի ղեկավարներից յուրաքանչյուրը դադարում է ղեկավար լինելուց ամենամյա արձակուրդ գնալիս կամ ժամանակավոր անաշխատունակության ընթացքում:

Տվյալ դեպքում 07.08.2018 թվականի թիվ Կ20174-Ա հրամանի արձակումը նպատակ է ունեցել ժամանակավորապես դադարեցնել (կասեցնել) Կարեն Խաչատրյանի որպես պլաստիկ քարտերի վարչության պետի լիազորությունները, հետագայում դրա անհրաժեշտությունը վերանալու դեպքում վերացնել պաշտոնավարման ժամանակավոր դադարեցումը: «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով սահմանված նորմի նպատակն է բացառել կանակաձյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի կարգավիճակ ունեցող անձանց՝ բանկում ղեկավար պաշտոն զբաղեցնելու հնարավորությունը, ինչը նշանակում է վերջինիս հետ աշխատանքային հարաբերությունների անժամկետ դադարեցում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է. «Ամբողջությամբ բավարարել վճռաբեկ բողոքը՝ բեկանել թիվ ԵԴ/1134/02/19 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 16.07.2020 թվականին կայացված որոշումը՝ վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու՝ հայքը մասնակի բավարարելու մասով: Մնացած մասով որոշումը թողնել անփոփոխ: Ամբողջությամբ օրինական ուժ տալ Դատարանի 29.01.2020 թվականի վճիռն»:

3. Որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճռաբեկ դատարանը նշել է, որ՝

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կողմերի միջև 30.06.2006 թվականին կնքված և մի շարք համաձայնագրերով հետագայում փոփոխված թիվ 40 աշխատանքային պայմանագրի (Պայմանագրի) հիման վրա Կարեն Խաչատրյանը զբաղեցրել է Ընկերության (նախկինում՝ «Հայինվեստբանկ») փակ բաժնետիրական ընկերություն) գործառնական ղեկարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետի պաշտոնը (**հատոր 1-ին, գ.թ. 40-43, հատոր 2, գ.թ. 36, 41-49**).

2) 06.08.2018 թվականին Ընկերության անունից ՀՀ գլխավոր դատախազին է ներկայացվել հանցագործության մասին հաղորդում՝ Կարեն Խաչատրյանի և այլ անձանց կողմից կեղծ փաստաթղթեր կազմելու միջոցով հափշտակություններ կատարված լինելու և Ընկերությանն առանձնապես խոշոր չափերի վնաս պատճառված լինելու ենթադրությամբ (**հատոր 2, գ.թ. 152-153**).

3) Ընկերության վարչության նախագահի կողմից 07.08.2018 թվականին արձակվել է «[Ընկերության] գործառնական ղեկարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետ Կարեն Խաչատրյանի պաշտոնավարությունը ժամանակավոր դադարեցնելու, նրան տրված լիազորագրերը վերացնելու և [Ընկերության] գործառնական ղեկարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետի պարտականությունները ժամանակավորապես պլաստիկ քարտերի վարչության պլաստիկ քարտերի բաժնի պետ Արսեն Ասատրյանի վրա դնելու մասին» թիվ Կ2074-Ա հրամանը, որի համաձայն՝ 08.08.2018 թվականից ժամանակավորապես դադարեցվել է Ընկերության գործառնական ղեկարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետ Կարեն Խաչատրյանի պաշտոնավարությունը, ներառյալ բոլոր տեսակ լիազորություններն ու իրավասությունները: Սահմանվել է, որ Կ. Խաչատրյանի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը կարող է վերացնել Ընկերության վարչության նախագահի հրամանով, երբ վերանա դրա անհրաժեշտությունը (**հատոր 1-ին, գ.թ. 44**).

4) ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչ Ս. Նավոյանի 16.10.2018 թվականի որոշմամբ Ընկերության հաղորդման արդյունքում հարուցված թիվ 58218118 քրեական գործով Կարեն Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ: Նրան առաջադրվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով՝ առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու համար, որն առաջացրել է ծանր հետևանք (**հատոր 2-րդ, գ.թ. 33-35**).

5) Ընկերության վարչության նախագահի կողմից 31.10.2018 թվականին արձակվել է «Կարեն Խաչատրյանին աշխատանքից ազատելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» թիվ Կ2984-Ա հրամանը, որում որպես իրավական հիմքեր վկայակոչվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 122-րդ հոդվածի 1-ին մասը, 123-րդ հոդվածը, 22-րդ գլխի իրավակարգավորումները, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը, Ընկերության կանոնադրության 9.3.6 կետը: Որպես փաստական հիմք՝ նշվել է, որ Ընկերության գործառնական ղեկարտամենտի պլաստիկ քարտերի վարչության պետ Կարեն Խաչատրյանին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական ղեկարտամենտում քննվող գործով 16.10.2018 թվականին առաջադրվել է մեղադրանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչի 16.10.2018 թվականի որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է տուժող, որին հանցագործությամբ պատճառվել է վնաս, ինչպես նաև որ Կարեն Խաչատրյանի հետ 06.04.2010 թվականին կնքվել է լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիրը, Կարեն Խաչատրյանը Ընկերության ղեկավար է, իսկ Ընկերությունը կորցրել է վստահությունը վերջինիս նկատմամբ (**հատոր 1-ին, գ.թ. 45**):

4. Հարուկ կարծիքի հիմնավորումները՝

Դատարանը հայցը մերժել է նաև այն պատճառաբանությամբ, որ բանկային քննչականում աշխատանքային հարաբերությունները ենթակա են կարգավորման «Բանկերի և

բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով՝ հատկապես ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատողի կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու հավակնություն ունեցող անձանց նկատմամբ: Նկատի ունենալով, որ հայցվոր Կարեն Խաչատրյանը համարվել է բանկի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձ, այնուհետև Ընկերության ներկայացրած հաղորդմամբ հարուցված քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ՝ առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու մեղադրանքով, Դատարանը գտել է, որ սույն գործով ենթակա է կիրառման «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը:

Վերաքննիչ դատարանը հաստատած է համարել, որ Հրամանի արձակման պահի դրությամբ հայցվորը Ընկերության ղեկավար համարվել չէր կարող, քանի դեռ նրա պաշտոնավարման ժամանակավոր դադարեցումը վերացված չէր կամ այդ դադարեցման անհրաժեշտությունը վերացած համարելու կամ չհամարելու համար անհրաժեշտ և բավարար փաստական հանգամանքներ չէին ծագել: Վերաքննիչ դատարանը գտել է, որ բանկի ղեկավարի պաշտոնը փաստացի չվարող անձը չի կարող համարվել բանկի ղեկավար, առավել ևս այն պայմաններում, երբ այդ պաշտոնը փաստացի վարում է մեկ այլ անձ, և այս համոզմունքն ինքնին բավարար է բանկի ղեկավարի պաշտոնը փաստացի չվարող և բանկի ղեկավար չհամարվող անձի նկատմամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «գ» կետը կիրառելի չլինելու մասին հետևության հանգեցնելու համար: Հետևաբար Վերաքննիչ դատարանի գնահատմամբ հայցվորի նկատմամբ մեղադրանք առաջադրված լինելու փաստը կորցրել է սույն գործով իր ապացուցողական նշանակությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քանի դեռ աշխատողի և գործատուի միջև կնքված աշխատանքային պայմանագիրն օրենքով սահմանված կարգով չի լուծվել, և գործատուն աշխատանքային պայմանագրի լուծման օրը աշխատողի հետ չի կատարել լրիվ վերջնահաշվարկ, աշխատողի և գործատուի միջև գոյություն ունեցող աշխատանքային հարաբերությունները դադարած համարվել չեն կարող: Վճռաբեկ դատարանն անհիմն է համարել Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Հրամանի արձակման պահի դրությամբ հայցվորը բանկի ղեկավար համարվել չէր կարող: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ մինչև Ընկերության վարչության նախագահի 31.10.2018 թվականի Հրամանի ընդունումը Կարեն Խաչատրյանը հանդիսացել է Ընկերության աշխատող և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համարվել է բանկի ղեկավար: Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Կարեն Խաչատրյանի նկատմամբ կիրառելի է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով սահմանված դրույթը:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս, Էդ. Սեդրակյանս համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը դրա վերաբերյալ:

Սույն բողոքի քննության շրջանակներում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

Աշխատողին քրեական գործով որպես մեղադրյալ ներգրաված լինելու ժամանակահատվածում, նրա լիազորությունների ժամանակավոր դադարեցման պայմաններում, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի իրավակարգավորումը կարող է արդյոք աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմք հանդիսանալ, եթե այն հիմնված է աշխատողի քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված լինելու փաստի վրա:

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական

հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Խտրականության արգելքն ամրագրող հիմնարար սկզբունքի ձևակերպումը՝ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշների մասով, ի թիվս այլնի, վերաբերում է նաև քրեական հետապնդում հարուցելու փաստին:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է խտրականության արգելքի սկզբունքին՝ արտահայտելով, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

1) «...պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները» (ՄԴՈ-731),

2) «Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, **որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից**» (ՄԴՈ-881),

3) «...աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Միաժամանակ, այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել **անձանց իրավական տարբեր կարգավիճակներ**՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, և նույնիսկ նախատեսել **առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր**, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են և ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում» (ՄԴՈ-991),

4) «...խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ (ՄԴՈ-1224):

ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ անմեղության կանխավարկածը՝ համակցված խտրականության արգելքի սկզբունքի հետ, բացառում է օրենքով քրեական հետապնդում հարուցելու հետ կապված այնպիսի սահմանափակումների ամրագրման իրավական հնարավորությունը, որոնք վերաբերում են անձի ընդհանուր կարգավիճակին, այդ թվում՝ որոշակի պաշտոնում նրա հետագա պաշտոնավարման կամ ծառայությունից ազատվելու իրավունքին, և որոնք անհրաժեշտ չեն քրեական վարույթի իրականացման համար: Հետևապես՝ նախ՝ քրեական հետապնդում հարուցելու փաստը որևէ կերպ չի կարող հիմք դառնալ որևէ պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնավարումը կասեցնելու կամ դադարեցնելու համար, եթե նրա նկատմամբ չի ընտրվել դատավարական ներգործության այնպիսի միջոց, որը արգելափակում է նրա հետագա պաշտոնավարումը: Դա նշանակում է, որ նման հիմքով չի կարող արգելափակվել նաև պաշտոնից ազատվելու՝ անձի իրավունքը:

Այսպիսով, առկա չէ որևէ հիմնավորում՝ **քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված լինելու փաստի հիմքով** պաշտոն գրադեցնող անձի՝ այդ պաշտոնից աճանցվող որևէ իրավունքի սահմանափակման համար: Նշվածը վերաբերելի է ինչպես պետական ծառայության, համայնքային ծառայության, հանրային պաշտոններ գրադեցնող, այնպես էլ աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցետերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով:**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերով: (...)

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառնություններ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում, որին համապատասխան՝ աշխատողը ենթարկվել է այնպիսի պատասխանատվության, որը հնարավորություն չի տալիս շարունակելու աշխատանքը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է նորմատիվ իրավական ակտի հանրային քննարկման, կարգավորման ազդեցության գնահատման, փորձաքննության, հրապարակման, ուժի մեջ

մտնելու, գործողության, փոփոխման, լրացման և գործողության դադարեցման, ինչպես նաև իրավական հակասությունների (իրավական կոլիզիաների) և օրենսդրական բացերի դեպքում իրավական ակտերի նորմերի կիրառման, մեկնաբանման, պարզաբանման հետ կապված հարաբերությունները և օրենսդրական տեխնիկայի կանոնները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանելիս պարտադիր պետք է հաշվի առնել նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով այդ նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի կարգավորման համատեքստից:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող և գործող բանկերի, նրանց և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների գրանցման, լիցենզավորման, գործունեության կարգավորման և դադարման, ինչպես նաև բանկային գործունեության վերահսկողության կարգը և պայմանները:

Օրենքի 22-րդ հոդվածով սահմանված են «**Բանկի ղեկավարները, նրանց որակավորման կարգը**» համաձայն որի՝ **բանկի ղեկավարներ են համարվում** բանկի խորհրդի նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը, նրա անդամները, բանկի տնօրինության անդամները, ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը և համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը, ինչպես նաև բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները և **կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները**՝ բանկի ղեկավարումնտի, վարչության, բաժնի, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով որևէ կերպ բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող աշխատակիցները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բանկի ղեկավար չեն կարող լինել՝

- ա) դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք.
- բ) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք.
- գ) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք.
- դ) անձինք, որոնց որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշերին.
- ե) անձինք, որոնք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը՝ որպես բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել բանկի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները

կարող են հանգեցնել բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը.

զ) անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական բանկն իրավունք ունի սահմանելու բանկի ղեկավարների որակավորման կարգ և մասնագիտական համապատասխանության չափանիշներ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բանկի խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել տվյալ բանկի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ եթե տվյալ բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք: Սույն օրենքի 21.3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքում բանկի խորհրդի անդամը կարող է միաժամանակ լինել այլ բանկի խորհրդի անդամ:

Բանկի գործադիր տնօրենը, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը, տնօրինության անդամները, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ անդամները չեն կարող միաժամանակ լինել այլ բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ:

Բանկի գործադիր մարմնի անդամները բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, կարող են կատարել վճարովի այլ աշխատանք միայն բանկի խորհրդի համաձայնությամբ:

Վերագրյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ պայմանավորված բանկային ոլորտի առանձնահատկություններով՝ օրենքով սահմանված են բանկի ղեկավարների որակավորման կարգը և գործառույթները: Հատկանշական է, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով թեև առկա են դրույթներ, որոնցով սահմանվել է որոշ պաշտոններ զբաղեցնող անձանց նշանակման վերաբերյալ սահմանափակումներ՝ սահմանելով հատուկ պահանջներ և ընթացակարգեր, սակայն օրենսդիրը, հաշվի առնելով բանկային համակարգի հուսալիությունը և բնականոն գործունեությունն ապահովելն ու բանկերի գործունեության համար ազատ տնտեսական մրցակցության հավասար պայմաններ ստեղծելու հանգամանքը, այնուամենայնիվ սահմանել է նաև ընդհանուր նորմ բանկային համակարգում բանկի ղեկավար անձանց նկատմամբ ամրագրելով սահմանափակումներ և բանկի ղեկավար լինելու արգելք: Օրենսդիրն ամրագրել է նաև, որ Կենտրոնական բանկն իրավունք ունի սահմանելու բանկի ղեկավարների որակավորման կարգ և մասնագիտական համապատասխանության չափանիշներ, որը պայմանավորված է բանկի ղեկավարների՝ բանկերի գործունեության վրա ազդեցության աստիճանով և նպատակ ունի վերահսկել բանկի բնականոն գործունեությունը:

Սույն գործով հայցվորի՝ բանկի ղեկավար հանդիսանալու հանգամանքը և նրա նկատմամբ Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի կիրառելիության հարցը դրվել են ինչպես հայցի, այնպես էլ դրա դեմ Ընկերության առարկությունների հիմքում, և Դատարանն էլ հայցը մերժել է հենց հայցվորի նկատմամբ Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետը կիրառելի լինելու մասին եզրակացության հանգելու արդյունքում:

Ընկերության վարչության նախագահի կողմից 07.08.2018 թվականին արձակված, չվիճարկված, ուժի մեջ մտած և Կարեն Խաչատրյանին աշխատանքից ազատման հրամանի արձակման պահի դրությամբ էլ ուժի մեջ գտնվող թիվ Կ2074-Ա հրամանով հայցվորի պաշտոնավարումը հաջորդ օրվանից ժամանակավորապես դադարեցվել է, ամրագրվել է դրա անհրաժեշտությունը հետագայում վերանայու պարագայում հայցվորի պաշտոնավարման ժամանակավոր դադարեցումն Ընկերության վարչության նախագահի հրամանով վերացվելու հնարավորությունը, և հայցվորի պաշտոնից բխող պարտականությունները ժամանակավորապես դրվել են այլ անձի վրա:

Գտնում ենք, որ հայցվորն իր աշխատանքից ազատման հրամանի արձակման պահին թեկուզև ժամանակավորապես՝ անորոշ ժամկետով, չի պաշտոնավարել, նրա պարտականությունները կատարել է այլ անձ, իսկ նրա պաշտոնավարման վերականգնումն էլ չէր բացառվել հենց Ընկերության կողմից, այսինքն՝ Ընկերությունը հայցվորի պաշտոնավարման ժամանակավոր դադարեցմամբ արդեն իսկ իրականացրել էր Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով հետապնդվող իրավական նպատակը, և դրանով արդեն իսկ կատարմամբ սպառվել էր նշված նորմի կիրառելիության հարցը:

Հայցվորի պաշտոնավարման դադարեցումը, իսկ հետագայում նաև աշխատանքից ազատումը պայմանավորված է եղել սույն հայցվորին մեղսագրվող արարքը նրա կողմից կատարված լինելու փաստը հաստատելու կամ հերքելու նպատակով հարուցված քրեական գործի քննության արդյունքներով, որպիսիք դեռևս առկա չէին աշխատանքից ազատման հրամանի արձակման պահին, ընդ որում, այդպիսիք առկա չեն նաև սույն գործով վերաքննիչ և վճռաբեկ բողոքների քննության պահին, իսկ սույն գործի քննության ընթացքում էլ Ընկերությունը Դատարանին չի ներկայացրել հայցվորին վերագրվող արարքը նրա կողմից կատարված և դրա արդյունքում իրեն նյութական վնաս պատճառված լինելու մասին ապացույցներ: Դատարանին չեն ներկայացվել վերը նշված քրեական գործի քննության արդյունքում հայցվորի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացված, այն օրինական ուժի մեջ մտած և հայցվորին մեղսագրվող արարքը նրա կողմից կատարված լինելու փաստը հաստատող ապացույցներ, ուստի սույն որոշման կայացման պահի դրությամբ էլ ապացուցված չէ հայցվորի նկատմամբ Ընկերության վստահության կորստի համար բավարար որևէ փաստի առկայությունը:

Ակնհայտ է, որ Օրենքի 22-րդ հոդվածով սահմանելով չափորոշիչներ բանկի ղեկավար պաշտոն գրառեցնող անձի համար, օրենսդիրն ի նկատի է ունեցել բանկի ղեկավար պաշտոնում նշանակվելու թեկնածուներին, քանի որ թվարկված սահմանափակումների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ դրանցից յուրաքանչյուրի առկայությունն արգելք է նման պաշտոն գրառեցնելու համար:

Սակայն միևնույն ժամանակ չի կարող անձը, տվյալ դեպքում աշխատողը լինել և կասկածյալ և մեղադրյալ և դատապարտյալ, իսկ պաշտոնում նշանակված ղեկավարի գիտելիքները Կենտրոնական բանկի կողմից սահմանված մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշներին չհամապատասխանող: Արգելք կա նաև բանկում աշխատող որոշ ղեկավար պաշտոններ համատեղելու հարցում, որը ևս կարող է կիրառվել բացառապես համատեղվող պաշտոնում սկզբնապես նշանակվելիս:

Մինչդեռ աշխատանքային պայմանագիրը լուծելիս կիրառման ենթակա են նաև Սահմանադրությամբ, քաղաքացիական և աշխատանքային օրենսդրությամբ աշխատողի համար նախատեսված երաշխիքները:

Այսպիսով, կարծում են, որ Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով աշխատողի հետ չոր կարող լուծվել աշխատանքային պայմանագիրը, որպիսի իրավաչափ եզրահանգման էլ եկել է Վերաքննիչ դատարանը, քանի որ նշված նորմով սահմանված՝ ղեկավար պաշտոնի նշանակվելու արգելքը կարող է արդարացված լինել, եթե ղեկավար պաշտոն չգրառեցնող անձը պետք է դրանով խրախուսվի՝ գրառեցնելով ավելի բարձր պաշտոն կամ տեղափոխվելով ավելի մեծ պատասխանատվություն ենթադրող համարժեք այլ պաշտոնի: Նման դեպքերում թույլատրելի է քրեական հետապնդում հարուցելու փաստի ուժով ժամանակավորապես ձեռնպահ մնալ այնպիսի խրախուսական միջոցներ կիրառելուց, որոնք կասկածի տակ կդնեն հանցագործությունների բացահայտման հանրային շահը: Սակայն այդ դեպքերում ևս, ելնելով անմեղության կանխավարկածի հրամայական պահանջից՝ չպետք է ամրագրվի պարտադիր կարգով կիրառվող բացարձակ արգելք՝ հատկապես հաշվի առնելով մեղսագրվող արարքի ծանրությունը և անձը բնութագրող, ինչպես նաև յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատման ենթակա մյուս բոլոր անհրաժեշտ հանգամանքները:

Տվյալ դեպքում, Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով սահմանված նորմը չի կարող մեկնաբանվել այնպես, որ անձին քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելը գնահատվի իբրև աշխատանքային պայմանագիրը լուծելու բավարար հիմք:

Հակառակ մեկնաբանության պարագայում կարող է ստողծվել մի իրավիճակ, երբ անձը, օրինակ, հետագայում արդարացվելու պարագայում չի ունենա իր խախտված իրավունքները վերականգնելու արդյունավետ հնարավորություն, քանի որ կատարվի, որ անկախ մեղադրանքը հիմնավոր կամ անհիմն լինելու հանգամանքից, բոլոր դեպքերում, գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծումը կհամարվի իրավաչափ: Մինչդեռ ակնհայտ է, որ եթե անձին առաջադրված մեղադրանքը հետագայում չհիմնավորվի, այդ պարագայում պարզ կլինի, որ աշխատանքային պայմանագրի լուծումը այն կատարվելու պահին իրավաչափ չէր, սակայն աշխատողը չի որնեցել այդ պահին իր իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորություն:

Վերոգրյալ դատողություններից բխում է , որ Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «բանկի ղեկավար չեն կարող լինել» եզրույթը պետք է մեկնաբանվի ոչ թե որպես ղեկավար աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու անվերապահ հնարավորություն, այլ՝ նման պաշտոն զբաղեցնելու ժամանակավոր արգելք, ինչը և իրականացված է եղել մինչև սույն գործով աշխատանքային վեճի ծագումը: Տվյալ դեպքում, անմեղության կանխավարկածի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքը թույլ չի տալիս աշխատանքային պայմանագրի լուծում այդ հիմքով, քանի որ առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ քրեական հետապնդման դադարեցում ոչ արդարացման հիմքով:

Մինևս սույն ժամանակ հաշվի առնելով բանկային գործունեության առանձնահատկությունները, պետք է նկատել, որ անձի կասկածյալի կամ մեղադրյալի քրեադատավարական կարգավիճակ ունենալու դեպքում կիրառելի են ղեկավարի պաշտոնավարման սահմանափակումները, որոնք թույլ կտան խուսափել անձի իրավունքների սահմանադրական երաշխիքների խախտումներից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում ենք, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանի վերլուծությունները հայցը մասնակի բավարարելու մասով բխում են սույն գործի փաստերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունից, որի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ է:

Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճռաբեկ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ սույն հատուկ կարծիքում նշված պատճառաբանություններով:

Նման պայմաններում վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունների հիման վրա գտնում ենք, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.07.2020 թվականի որոշումը բեկանելու համար, որպիսի պայմաններում այն պետք է թողնել օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ա. Աստույան
Ա. Բարսեղյան
Էդ. Սեդրակյան

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/5820/02/14
2022թ.

Քաղաքացիական գործ թիվ

ԵԿԴ/5820/02/14

Նախագահող դատավոր՝

Ն. Կարապետյան

Դատավորներ՝

Ա. Մխիթարյան

Ն. Մարգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի փետրվարի 24-ին

գրավոր ընթացակարգով քննելով Ստեփան և Անահիտ Գրիգորյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ստեփան Գրիգորյանի, Անահիտ Գրիգորյանի ընդդեմ Արսեն Բաղրամյանի, Սուսաննա Խաչյանի և Արթուր Ավայանի, երրորդ անձինք «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ), Ռոբերտ Մարտիրոսյանի՝ Երևան քաղաքի Նոր Արեշի 25-րդ փողոցի թիվ 19/1 հասցեում գտնվող 0,02654քմ մակերեսով հողամասի և 83քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ հայցվորների սեփականության իրավունքի խախտումները վերացնելու՝ պատասխանողներին պատճառված վնասը հատուցելուն պարտավորեցնելու, այն է՝ 12.05.2008 թվականին Ստեփան Գրիգորյանի և Անահիտ Գրիգորյանի կողմից Ռոբերտ Մարտիրոսյանին տրված լիազորագիրն անվավեր ճանաչելու, Բանկի և Ստեփան Գրիգորյանի ու Անահիտ Գրիգորյանի լիազոր ներկայացուցիչ Ռոբերտ Մարտիրոսյանի միջև 12.05.2008 թվականին կնքված թիվ 388/1 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը և Բանկի ու Ռոբերտ Մարտիրոսյանի միջև 12.05.2008 թվականին կնքված թիվ 388 վարկային պայմանագրի 3-րդ գլխի 3.4.1 կետը՝ վճարումն ապահովող պարտավորության՝ Երևան քաղաքի Նոր Արեշի 25-րդ փողոցի թիվ 19/1 հասցեում գտնվող տան

մասով, անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից Երևան քաղաքի Նոր Արեշի 25-րդ փողոցի թիվ 19/1 հասցեում գտնվող անշարժ գույքի (այսուհետ՝ Անշարժ գույք) նկատմամբ 12.05.2008 թվականին կնքված Անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրի հիման վրա Բանկի անվամբ կատարված գրավի իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ստեփան և Անահիտ Գրիգորյանները պահանջել են վերացնել հայցվորների սեփականության իրավունքի խախտումները՝ պարտավորեցնելով պատասխանողներին հատուցելու պատճառված վնասները, այն է՝ անվավեր ճանաչել 12.05.2008 թվականին Բանկի և Ստեփան և Անահիտ Գրիգորյանների լիազոր ներկայացուցիչ Ռոբերտ Մարտիրոսյանի միջև կնքված թիվ 388/1 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը և 12.05.2008 թվականին Բանկի և Ռոբերտ Մարտիրոսյանի միջև 12.05.2008 թվականին կնքված թիվ 388 վարկային պայմանագրի 3-րդ գլխի 3.4.1 կետը՝ վճարումն ապահովող պարտավորության՝ Անշարժ գույքին վերաբերող մասով, և կիրառել անվավերության հետևանք, այն է՝ անվավեր ճանաչել Կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից Անշարժ գույքի նկատմամբ 12.05.2008 թվականին կնքված թիվ 3292 անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրի հիման վրա Բանկի անունով կատարված գրավի իրավունքի գրանցումը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Մելքումյան) 25.03.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր Կ. Չիլինգարյան, դատավորներ Կ. Հակոբյան, Ա. Պետրոսյան) 06.10.2016 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ րեկանվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.03.2016 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության: Վճիռը այն փոփոխելու պահանջին վերաբերող մասով մերժվել է:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Գ. Մազմանյան) (այսուհետ՝ Դատարան) 24.09.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.07.2019 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ րեկանվել է Դատարանի 24.09.2018 թվականի վճիռն ամբողջությամբ և փոփոխվել: Ստեփան և Անահիտ Գրիգորյանների հայցն ընդդեմ Արսեն Բաղրամյանի, Սուսաննա Խաչյանի և Արթուր Ավալյանի, երրորդ անձինք Բանկի, Ռոբերտ Մարտիրոսյանի՝ Երևան քաղաքի Նոր Արեշի 25-րդ փողոցի թիվ 19/1 հասցեում գտնվող 0,02654քմ մակերեսով հողամասի և 83քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ հայցվորների սեփականության իրավունքի խախտումները վերացնելու՝ պատասխանողներին պատճառված վնասը հատուցելուն պարտավորեցնելու, այն է՝ 12.05.2008 թվականին Ստեփան Գրիգորյանի և Անահիտ Գրիգորյանի կողմից Ռոբերտ Մարտիրոսյանին տրված լիազորագիրն անվավեր ճանաչելու, Բանկի և Ստեփան ու Անահիտ Գրիգորյանների լիազոր ներկայացուցիչ Ռոբերտ Մարտիրոսյանի միջև 12.05.2008 թվականին կնքված թիվ 388/1 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը և Բանկի ու Ռոբերտ Մարտիրոսյանի միջև 12.05.2008 թվականին կնքված թիվ 388 վարկային պայմանագրի 3-րդ գլխի 3.4.1 կետը՝ վճարումն ապահովող պարտավորության՝ Երևան քաղաքի Նոր Արեշի 25-րդ փողոցի թիվ 19/1 հասցեում գտնվող տան մասով, անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ Կոմիտեի Էրեբունի տարածքային

ստորաբաժանման կողմից Երևան քաղաքի Նոր Արեշի 25-րդ փողոցի թիվ 19/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ 12.05.2008 թվականին կնքված թիվ 3292 անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրի հիման վրա Բանկի անվամբ կատարված գրավի իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 25.09.2019 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 02.07.2019 թվականի որոշման դեմ Ստեփան և Անահիտ Գրիգորյանների վճռաբեկ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է ժամկետ՝ թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Սույն գործով կրկին վճռաբեկ բողոք են ներկայացրել Ստեփան և Անահիտ Գրիգորյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 10-րդ, 60-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունը, իրավահարաբերության պահին գործող (17.06.1998 թվական) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածները, սիսայ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վեճի առարկա լիազորագրի տրամադրման հետ կապված օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքներին, ինչպես նաև խախտել է փաստերի գնահատման դատավարական կանոնները, համակցությունից կտրել, հետազոտել և իրավական գնահատական է տվել հանցակազմի օբյեկտիվ տարրը բնույթագրող գործողությունների մի մասին, որը այլ հանգամանքների հետ միասին դրվել է թիվ ԵԿԳ/0223/01/09 քրեական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.11.2009 թվականի դատավճռի հիմքում, որը մտել է օրինական ուժի մեջ:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը գերազանցել է իր լիազորությունները, գնահատական է տվել այնպիսի փաստերի, որոնց սահմանները կանխորոշված են ապացուցման պարտականությունից ազատելու դատավարական սկզբունքով:

Բացի դրանից, արդեն իսկ հաստատված և կրկին ապացուցման կարիք չունի այն հանգամանքը, որ վեճի առարկա լիազորագիրը տրվել է խաբեությամբ՝ Անշարժ գույքը հափշտակելու դիտավորությամբ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վեճի առարկա լիազորագրի տրամադրման հետ կապված օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքներին:

Վերաքննիչ դատարանի դատական ակտը զուրկ է իրավական հիմնավորումից, ինչպես նաև դրանով խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.07.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.09.2018 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկը Ռոբերտ Մարտիրոսյանի հետ 12.05.2008 թվականին կնքած թիվ 388 վարկային պայմանագրի /Վարկային պայմանագիր/ հիման վրա նրան տրամադրել է 10.000.000 ՀՀ դրամի չափ վարկ՝ տարեկան 22 տոկոս տոկոսադրույքով, մինչև 12.05.2011 թվականը

մարման ժամկետով: Բանկի հանդեպ վարկառուի պարտավորությունների կատարումն ապահովվել է Ստեփան և Անահիտ Գրիգորյաններին պատկանող Անշարժ գույքի գրավով՝ Բանկի, հայցվորների /նրանց անունից լիազորագրի հիման վրա հանդես է եկել Ռոբերտ Մարտիրոսյանը/ և վարկառուի միջև 12.05.2008 թվականին կնքված անշարժ գույքի գրավի թիվ 388/1 պայմանագրին համապատասխան **(հատոր 1-ին, գ.թ. 13-20)**:

2) Թիվ ԵԿԴ/0223/01/09 քրեական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 18.11.2009 թվականին հրապարակված և հետագայում օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստերը, ի թիվս այնի, վերաբերում են նաև հետևյալ գործողություններին և դրանք կատարած անձանց. «2008թ. մայիս ամսին Արսեն Բաղրամյանը, Արթուր Ավալյանի և Մուսաննա Խաչյանի հետ նահանսական համաձայնությամբ, անշարժ գույքի գրավի դիմաց 2.470.000 ՀՀ դրամ վարկ սրանալու ինդրանքով «Ա. Բաղրամյան» ՄՊ ընկերությանը դիմած Սրեփան Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Նոր-Արեշ 25 փողոցի թիվ 19/1 տունը խաբեությանը համապատասխան, նրա տունը բանկում գրավ դնելու, նույն գումարի վարկ սրանալու և նրան փրամադրելու պատրվակով, չարաչափելով նրա վարակությունը, 12.05.2008թ. նրանից իր աշխատանքային ընկեր Ռոբերտ Մարտիրոսյանի անունով արագել է նրա՝ նշված հասցեի անշարժ գույքը գրավ դնելու իրավունքով նույնական վավերացմանը լիազորագիր: Նույն օրն Արսեն Բաղրամյանը Սրեփան Գրիգորյանի անշարժ գույքը Ռոբերտ Մարտիրոսյանի անունից կնքված հիփոթեքի թիվ 388/1 պայմանագրով 10.000.000 ՀՀ դրամ վարկի դիմաց, մինչև 12.05.2011 թվականը մարման ժամկետով գրավ է դրել Բանկի «Արարկիր» մասնաձյուղում: 15.05.2008 թվականին Արսեն Բաղրամյանը Ռոբերտ Մարտիրոսյանի հետ միասին ներկայացել է Բանկի «Արարկիր» մասնաձյուղ, ուր նրանից վերցրել է նրա կողմից արագած 10.000.000 ՀՀ դրամ վարկի գումարը, որից 2.470.000 ՀՀ դրամ գումարը որպես վարկ փրամադրել է Սրեփան Գրիգորյանին, իսկ մնացած գումարը փոխել է անձամբ, որով կրկին անգամ համապատասխան է Սրեփան Գրիգորյանի առանձնապես խոշոր չափի 13.400.000 ՀՀ դրամ արժողության Երևան քաղաքի Նոր-Արեշ 25 փողոցի թիվ 19/1 տունը ...: Նշված գործարքը Սրեփան Գրիգորյանից գաղտնի պահելու, նրա հետ կնքված գործարքին օրինական փեսք տալու և ապօրինի ձեռնարկատիրությանը պրամադրված վարկի դիմաց փոկաստորոյք գանձելու նպատակով 23.05.2008 թվականին «Ա. Բաղրամյան» ՄՊ ընկերության և Սրեփան Գրիգորյանի միջև կնքվել է թիվ 34 վարկային ապօրինի պայմանագիրը, որի համաձայն՝ իբր Սրեփան Գրիգորյանի՝ արդեն իսկ բանկում գրավադրված՝ Երևան քաղաքի Նոր-Արեշ 25 փողոցի թիվ 19/1 տան գրավի դիմաց «Ա. Բաղրամյան» ՄՊ ընկերությունը 2 փարով, 3,0 փոկոսով նրան փրամադրել է 2.470.000 ՀՀ դրամ գումարի վարկ, որի դիմաց Սրեփան Գրիգորյանից գանձվել է ընդհանուր գումարով 205.100 ՀՀ դրամ փոկոսավճար: «Ա. Բաղրամյան» ՄՊ ընկերության փոօրենի անունից պայմանագիրը ստորագրել է Մուսաննա Խաչյանը» **(հատոր 1-ին, գ.թ. 21-24)**:

3) 12.05.2008 թվականին նոտարական կարգով վավերացված լիազորագրով հայցվորների կողմից Ռոբերտ Մարտիրոսյանին տրվել են, մասնավորապես, հետևյալ լիազորությունները. «Մեր փոխարեն իր նահալնարած պայմաններով գրավ դնել և գրավից հանել սեփականության իրավունքով մեզ պատկանող p. Երևան, Էրեքունի համայնք, Նոր Արեշի 25 ... փողոց հ 19/1 ... հասցեի անշարժ գույքը ...», «հանդես գալ նաև ... ՀՀ բանկերում», «... կնքել անշարժ գույքի գրավի, հիփոթեքի, վարկային և փոխատույթյան պայմանագրեր ... սրանալ գումար...»: Հայցվոր Անահիտ Գրիգորյանը, հայցվորների ներկայացուցիչներ Աշոտ Արախանյանը և Հայկ Եգանյանն ընդունել են, որ լիազորագիրը երբևէ անվավեր չի ճանաչվել և վիճարկվող գործարքները կնքելու պահի դրությամբ վերացված չի եղել, իսկ լիազորագրի վրա առկա «չեղյալ է արված» գրառումը նոտարի կողմից կատարվել է վիճարկվող գործարքների կնքմանը հաջորդած ժամանակահատվածում **(հատոր 1-ին, գ.թ. 12)**:

4) «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Ա. Հարությունյանի՝ 19.09.2017 թվականին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան մուտքագրված գրության համաձայն՝ Ստեփան Գրիգորյանը, ծնված՝ 09.08.1959թ., ԸՄՀ՝ 1908590572, և Անահիտ Գրիգորյանը, ծնված՝ 19.03.1960թ., ԸՄՀ՝ 6903600698, 12.05.2008 թվականին ՀՀ Երևանի Կենտրոն Նոտարական գրասենյակում

կնքել և ստորագրել են թիվ 3479 լիազորագիրը, որը վավերացվել է նոտար Ա. Հարությունյանի կողմից: Լիազորագրի նոտարական գրասենյակում պահվող օրինակի վրա կողմերն իրենց ձեռքով գրել են այն իրավունքները, որոնք վերապահել են լիազորված անձին, լիազորագրի բովանդակությունը, և դրանից բխող իրավական բոլոր հետևանքները նրանց բացատրվել են նոտարի կողմից:

5) 18.11.2008 թվականին Ստեփան և Անահիտ Գրիգորյանները թիվ 10333 հայտարարությամբ չեղյալ են համարել իրենց կողմից Ռոբերտ Մարտիրոսյանին տրված և 12.05.2008 թվականին ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակում նոտար Ա. Հարությունյանի կողմից վավերացված՝ Անշարժ գույքը գրավ դնելու լիազորագիրը, որը գրանցվել է նոտարական գործողությունների գրանցամատյանում և վավերացվել է նոտարի կողմից **(հատոր 1-ին, գ.թ. 12):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրք) 52-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ կետերը և 53-րդ հոդվածը խախտելու հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, ինչը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե արդյոք լիազորագիրը խաբեության արդյունքում փախու հանգամանքը հիմնավորող օրինական ուժի մեջ մտած դատավճեղի առկայությունը բավարար է հաստատված համարելու գործարքը խաբեությամբ կնքված լինելու հանգամանքը, թե դա կարող է հիմնավորվել միայն քաղաքացիական գործի շրջանակներում ձեռք բերված այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ըստ էության հանդիսանալով միակողմանի գործարք՝ լիազորագիրը լիազորվողի (պարտապանի) մոտ առաջացնում է միայն որոշակի պարտականություններ, նախ՝ լիազորողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև, երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված հանձնարարությունը, իսկ լիազորողի (պարտատիրոջ) համար սահմանում է միայն որոշակի իրավունք՝ լիազորվողից պահանջել կատարելու լիազորագրով ստանձնած հանձնարարությունը (պարտավորությունը) *(տե՛ս Վարդուշ Ղազարյանն ընդդեմ Գևորգ Ղազարյանի թիվ ԼԴ/0423/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ հավելել է, որ լիազորագիրը՝ որպես միակողմ գործարք, նախևառաջ հանդիսանալով կամային ակտ, պետք է համապատասխանի լիազորողի ներքին կամքին: Հետևաբար, այն պարագայում, երբ լիազորագրում արտացոլված բովանդակությունն իրականում էլ համապատասխանում լիազորողի ներքին կամքին, այսինքն՝ լիազորողը նման կամահայտությամբ հանդես չի ելել, ապա լիազորագրի

հիման վրա կատարված գործողություններին գնահատական տալիս պետք է հաշվի առնել նշված հանգամանքը: Վճռարեկ դատարանի նման դիրքորոշումը բխել է նաև այն հանգամանքից, որ ներկայացուցչի կողմից ներկայացվողի անունից լիազորագրի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացվողի համար, ուստի եթե լիազորագրի բովանդակությունը չի համապատասխանում ներկայացվողի ներքին կամքին, այսինքն՝ ներկայացվողը նպատակ չի հետապնդել և հետապնդել նաև դրա հիման վրա կնքելու գործարք: Այլ կերպ ասած՝ **երբ վիճարկվում է լիազորագրի հիման վրա կնքված գործարքն այն հիմնավորմամբ, որ ներկայացվողի անունից ներկայացուցչի բավարար լիազորություններ չի ունեցել կնքելու նման գործարք, ապա դատարանի կողմից գնահատման առարկա պետք է դարձվի նաև լիազորագրի բովանդակությունը և այն հանգամանքը, թե վերջինս որքանով է համապատասխանում ներկայացվողի ներքին կամքին և արտացոլում վերջինիս արտաքին կամահայտնությունը** (տե՛ս Մարի, Մամիկոն, Գայանե և Ամեդեա Ղունաշյաններն ընդդեմ Վահագն Մահակյանի, երրորդ անձ Երևանի «Շենգալիթ» նուրարական փարսաքի նուրար Ասրդիկ Մազմանյանի և հսկրնորեմ հայցով Վահագն Մահակյանն ընդդեմ Մարի, Մամիկոն, Գայանե և Ամեդեա Ղունաշյանների թիվ ԵՇԴ/0056/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինություն դեպքում (ներառյալ, երբ ստացածը արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կնքված գործարքը, ինչպես նաև այն գործարքը, որն անձն ստիպված է եղել կնքելու ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը (ստրկացուցիչ գործարք), տուժողի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Նախկինում կայացրած որոշմամբ ՀՀ վճռարեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: Հետևաբար ՀՀ վճռարեկ դատարանը հարկ է համարել բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է: Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ներգործության ազդեցությամբ (տե՛ս Նելլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համիս» ՄՊԸ-ի թիվ

ԵԿԳ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

Անդրադառնալով խաբեության ազդեցության ներքո կնքված գործարքներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ խաբեությունն անձին գիտակցաբար մուրթության մեջ գցելն է՝ նրա հետ գործարք կնքելու նպատակով: Գործարքը, լինելով կամային ակտ, ենթադրում է, որ կողմերից ոչ մեկը չպետք է այնպիսի միջոցներ գործադրի, որպեսզի մյուս կողմը չհամանա կամ սխալ պատկերացնի այն հանգամանքները, որոնք նրա համար վճռական նշանակություն կարող են ունենալ գործարքը կնքելիս: Խաբեությամբ կնքված գործարքներում մեկ կողմի անբարեխղճությունն անպայման ենթադրվում է (տե՛ս Վլադիմիր Գրիգորյանն ընդդեմ Ռոզա Թովմասյանի և մյուսների թիվ ԵՇԴ/1671/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները գործարք են կնքում որոշակի նպատակով և այդ նպատակին հասնելու համար արտահայտում են իրենց կամքը, որն էլ պետք է արտահայտվի առանց որևէ արտաքին ազդեցության, ուստի այն դեպքերում, երբ գործարք կնքող անձն ազատ չի արտահայտել իր կամքը, արտաքին ազդեցության հետևանքով նրա կամքը խաթարվել է, նա իրավունք ունի վիճարկել այդպիսի կամահայտնությամբ կնքված գործարքը: Այդ տիպի գործարքներն անվավեր ճանաչելու հիմքն արտաքին հակաիրավական գործողությունների միջոցով անձին խեղաթյուրված կամք դրսևորելուն հասցնելու հետևանքով նրա կամքին չհամապատասխանող գործարք կնքելն է:

Նման գործարք է նաև խաբեության ազդեցության ներքո կնքված գործարքը: Զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ խաբեությունը գործարքի կողմերից մեկի գիտակցաբար դրսևորած անբարեխիղճ վարքագիծն է՝ ուղղված նրան, որ գործարքի մյուս կողմն իր համար ձեռնտու պայմաններով կնքի գործարքը: Գործարքի կնքման մեջ շահագրգռված, անբարեխիղճ կողմն իր մեղավոր գործողություններով մյուս՝ տուժող կողմի մոտ ստեղծում է իրականությանը չհամապատասխանող տպավորություն գործարքի էության, առարկայի, պայմանների վերաբերյալ՝ ազդելով նման գործարք կնքելու նրա որոշման վրա: Ընդ որում, եթե տուժող կողմի կամքը խաթարվել է գործարքի կողմ (ներկայացուցիչ) չհանդիսացող այլ անձանց կողմից՝ առանց գործարքի կողմի որևէ կերպ մասնակցության, ապա գործարքը չի կարող վիճարկվել խաբեության հիմքով, քանի որ գործարքը խաբեության ազդեցության տակ կնքված որակելու համար անհրաժեշտ պայման է այն, որ գործարք կնքելիս տուժող կողմի կամքը խաթարված լինի գործարքի մյուս կողմի (ներկայացուցիչ) մեղավոր վարքագծի՝ այդ թվում և այլ անձանց միջոցով դրսևորված գործողությունների հետևանքով: Այսպիսով, գործարքը խաբեության ազդեցության տակ կնքված լինելու հիմքով անվավեր ճանաչվելու համար տուժող կողմը պետք է որոշակի ապացույցներ ներկայացնի իր կամքը խաթարվելու հարցում գործարքի մյուս կողմի (ներկայացուցիչ) կողմից անձամբ կամ այլ անձանց միջոցով մեղավոր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) մասնակցության մասին:

Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերը նշված իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող յուրաքանչյուր փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն

ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ՝ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա (*տե՛ս «Շենքերի կառավարում» համապիտրությունն ընդդեմ Մաւսիս Ղազանչյանի թիվ ԵԱԲԳ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը պետք է ոչ միայն նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*տե՛ս Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սյուրեփան և Անահիր Մարությանների թիվ 3-54(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ դատարանները, հիմք ընդունելով ապացույցների գնահատման վերոգրյալ կանոնները, պետք է առաջնորդվեն նաև այն հանգամանքով, որ որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի: Այսինքն՝ բոլոր ապացույցները պետք է գնահատվեն գործն ըստ էության լուծող դատական ակտով՝ ապացուցման բեռի բաշխման կանոններին համապատասխան: Նշված ընդհանուր կանոնից օրենսդիրը կատարել է բացառություն: Այդ բացառություններից է, մասնավորապես, Նախկին օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթը:

Նախկին օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց՝ հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով Նախկին օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չլինելու վերաբերյալ կարգավորմանը, նշել է, որ գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Հետևաբար, նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ նախադատելիության օբյեկտիվ սահմանների որոշման համար էական նշանակություն ունի հետևյալ երկու դատավարական կանոնների պահպանումը՝

1) վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը դատարանը պարզում է միայն օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված և հետազոտված ապացույցների միջոցով (բացառություն են կազմում միայն Նախկին օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերը)։

2) դատարանը պարզում է միայն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները)։ Այս կանոնը կիրառելիս դատարանը պարտավոր է առաջնորդվել հայցվորի կողմից կանխորոշված հայցի առարկայի և հիմքի սահմաններով, որի փոփոխման բացառիկ իրավունքը պատկանում է հայցվորին (Նախկին օրենսգրքի 32-րդ հոդված)։

ՀՀ վճռաբեկ դատարանը հատկապես կարևորել է ապացուցման առարկայի՝ վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների ճիշտ որոշման հարցը, քանի որ դատարանի կողմից ապացուցման առարկայի սահմանների կամայական (առանց դատավարական նախադրյալի՝ հայցվորի կամահայտնության) ընդլայնումը բերում է այդ գործով կայացված դատական ակտով հաստատված որոշակի հանգամանքների նախադատելիության բացառման (տե՛ս «Մարթն» ՍՊԸ-ն ընդդեմ Աշոտ և Հենրիկ Այվազյանների թիվ 3-93(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը)։

Նախադատելիության սուբյեկտային շրջանակի սահմաններն այն անձինք են, որոնց համար դատական ակտով հաստատված հանգամանքներն ունեն նախադատելի նշանակություն։ Նախկին օրենսգրքի 52-րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ փաստերը կարող են նախադատելի նշանակություն ունենալ այն անձանց համար, որոնք մասնակցել են գործի քննությանը։

ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ ընդգծել է, որ նախադատելիության ինստիտուտը կարևոր նշանակություն ունի դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի միջև անհարթահարելի հակասությունների կանխարգելման առումով։ Մասնավորապես՝ այն մի կողմից կոչված է պարզեցնելու խախտված իրավունքները վերականգնելու դատավարական կարգը՝ ազատելով կողմերին նույն փաստը կրկին ապացուցելու պարտականությունից, մյուս կողմից կոչված է բացառելու միևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման։

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է դատավճռի նախադատելիության հարցին՝ արձանագրելով, որ Նախկին օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով օրինական ուժի մեջ մտած դատավճռը նախադատելի (պրեյյուդիցիալ) նշանակություն ունի միայն հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար հետևյալ հարցերի շրջանակներում.

1. արդյոք կատարվել են որոշակի գործողություններ (հանցագործության օբյեկտիվ կողմը),
2. արդյոք այդ գործողությունները կատարվել են տվյալ անձի կողմից (հանցագործության սուբյեկտ) (տե՛ս Կարապետ Գրայսյան ընդդեմ Արոմ Ղազազյանի թիվ 3-1091(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը)։

Սույն գործով Դատարանն արձանագրել է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 18.11.2009 թվականի թիվ ԵԿԴ/0223/01/09 քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փաստական հանգամանքները Նախկին օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի իմաստով քաղաքացիական գործի քննության համար նախադատելի փաստեր են, մասնավորապես այն, որ հայցվորն իր անշարժ գույքը գրավ դնելու իրավունքով նոտարական վավերացման լիազորագիրը տվել է խաբեության ազդեցության ներքո, և պատասխանողները, չարաշահելով Ստեփան Գրիգորյանի վստահությունը, ստացված գումարը տնօրինել են անձամբ ու 10.000.000 ՀՀ դրամ գումարից նրան տրամադրել և հետ են ստացել 2.470.000 ՀՀ դրամ գումար, որով կրկին համիշտակել են Ստեփան

Գրիգորյանին պատկանող առանձնապես խոշոր չափի՝ 13.400.000 ՀՀ դրամ արժողության Անշարժ գույքը, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի ուժով պետք է անվավեր ճանաչել 12.05.2008 թվականին Ստեփան Գրիգորյանի և Անահիտ Գրիգորյանի կողմից Ռոբերտ Մարտիրոսյանին տրված լիազորագիրը անվավեր ճանաչելով լիազորված անձի կողմից կնքված գործարքները՝ 12.05.2008 թվականին Ստեփան և Անահիտ Գրիգորյանների լիազոր սերկայացուցիչ Ռոբերտ Մարտիրոսյանի և Բանկի միջև կնքված թիվ 388/1 անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը և 12.05.2008 թվականին Բանկի և Ռոբերտ Մարտիրոսյանի միջև կնքված թիվ 388 վարկային պայմանագրի 3-րդ գլխի «3.4.1» կետը վճարումն ապահովող պարտավորության՝ Անշարժ գույքի մասով կիրառել անվավերության հետևանքները:

Դատարանը նշել է, որ թիվ ԵԿԲ/0223/01/09 քրեական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.11.2009 թվականի դատավճռով պատասխանողներ Արսեն Բաղրամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 188-րդ հոդվածի 2-րդ մասով, 205-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքներ կատարելու մեջ, Արթուր Ավալյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 188-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքներ կատարելու մեջ, իսկ Մուսանա Խաչյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 188-րդ հոդվածի 2-րդ մասով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքներ կատարելու մեջ: Հիմք ընդունելով Նախկին օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետը՝ Դատարանն արձանագրել է, որ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ հանցագործության օբյեկտ է հանդիսացել հայցվոր Ստեփան Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Անշարժ գույքը, հաստատվել է Անշարժ գույքը խաբեությամբ հափշտակելու մեջ Արսեն Բաղրամյանի, Արթուր Ավալյանի և Մուսանա Խաչյանի մեղքը, հաստատվել է հանցագործության օբյեկտիվ կողմը՝ դիտավորությունը, և կատարման եղանակը՝ գործարքների /լիազորագրի, գրավի և վարկային պայմանագրերի/ կնքումը: Արսեն Բաղրամյանը, Արթուր Ավալյանը և Մուսանա Խաչյանը մեղավոր են ճանաչվել վերոհիշյալ հանցագործությունների կատարման մեջ և դատապարտվել են ազատազրկման:

Բացի դրանից, Դատարանը նշել է, որ գործի նոր քննության ընթացքում 14.06.2017 թվականին ներկայացվել է հայցադիմումի լրացում, որով հայցվորները մնացած պահանջների հետ միասին խնդրել են նաև անվավեր ճանաչել 12.05.2008 թվականին Ստեփան և Անահիտ Գրիգորյանների կողմից Ռոբերտ Մարտիրոսյանին տրված լիազորագիրը (գրանցված սեղանամատյանում 3479 համարի տակ), որի՝ քրեական գործով հաստատված և սույն գործի փաստերի հետ համադրումից հետևում է, որ հայցվորները, հասկանալով, որ վեճի առարկա գործարքները մի խումբ մարդկանց խարդախության արդյունքն է, 18.11.2008 թվականին դիմել են նոտարական գրասենյակ և վերացրել են 12.05.2008 թվականին նոտարական կարգով վավերացված թիվ 3479 լիազորագիրը:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը, նշել է, որ վարկային պայմանագիրը կնքվել է Ընկերության և Ռոբերտ Մարտիրոսյանի միջև, ովքեր էլ հենց հանդիսանում են գործարքի կողմերը: Ի տարբերություն հիփոթեքի պայմանագրի, որտեղ գործարքի սուբյեկտներ հանդես են եկել մի կողմից Ընկերությունը, մյուս կողմից՝ Ստեփան և Անահիտ Գրիգորյանները (քանի որ նրանց անունից լիազորագրի հիման վրա հանդես է եկել Ռոբերտ Մարտիրոսյանը)՝ վարկային պայմանագիրը կնքվել է հենց Ռոբերտ Մարտիրոսյանի անունից՝ իրավունքներ և պարտականություններ ստեղծելով անձամբ նրա համար:

Անդրադառնալով հիփոթեքի պայմանագրի անվավերության պահանջին՝ վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ գործարքը խաբեության ազդեցությամբ կնքված լինելու հիմքով կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, երբ այդպիսի խաբեությունը դրսևորվել է գործարքի մյուս մասնակցի կողմից: Սույն դեպքում հիփոթեքի պայմանագրի

մյուս կողմը Բանկն է, ուստի քննարկվող պահանջի լույսի ներքո անհրաժեշտ է, որ հենց Բանկի՝ ի դեմս նրա աշխատակիցների կամ ներկայացուցիչների կողմից դրսևորված լինի խաբեությունը հայցը բավարարելու համար: Մինչդեռ, սույն գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Բանկը՝ ի դեմս նրա աշխատակիցների կամ ներկայացուցիչների, հիփոթեքի պայմանագիրը կնքելիս իրականացրել է խաբեության որևէ դրսևորում, այլ կերպ՝ գործել է անբարեխիղճ: Հայցվորները ևս հայցադիմումի մեջ մատնանշել են, որ խաբեությունը դրսևորվել է պատասխանող Արսեն Բաղրամյանի կողմից, որպիսի հանգամանքը հաստատված է նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Վերաքննիչ դատարանը, գտել է, որ այլ անձանց կողմից դրսևորված անբարեխիղճ վարքագծի բացասական հետևանքները չեն կարող դրվել գործարքի կողմի վրա: Այսինքն՝ սույն դեպքում Բանկը չի կարող կրել այլ անձանց գործողությունների հետևանքով հայցվորներին պատճառված վնասների հատուցման, հայցվորների խախտված իրավունքների վերականգնման պարտականությունը: Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ գրավոր գործարքն առանց կարդալու ստորագրելը չի ազատում դրանից առաջացած պարտավորություններից:

Վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 12.05.2008 թվականին նոտարական կարգով վավերացված լիազորագրով հայցվորների կողմից երրորդ անձ Ռոբերտ Մարտիրոսյանին, ի թիվս այլնի, տրվել են մասնավորապես հետևյալ լիազորությունները՝ հայցվորների փոխարեն լիազորված անձի նախընտրած պայմաններով գրավ դնել և գրավից հանել սեփականության իրավունքով իրենց պատկանող Անշարժ գույքը, հանդես գալ նաև ՀՀ բանկերում, կնքել անշարժ գույքի գրավի, հիփոթեքի, վարկային և փոխառության պայմանագրեր, ստանալ գումար:

12.05.2008 թվականին կնքված Վարկային պայմանագրի հիման վրա Բանկը Ռոբերտ Մարտիրոսյանին տրամադրել է 10.000.000 ՀՀ դրամի չափով վարկ՝ տարեկան 22 տոկոս տոկոսադրույքով, մինչև 12.05.2011 թվականը մարման ժամկետով: Բանկի հանդեպ վարկառուի պարտավորությունների կատարումն ապահովվել է Ստեփան և Անահիտ Գրիգորյաններին պատկանող Անշարժ գույքի գրավով՝ Բանկի, հայցվորների /նրանց անունից լիազորագրի հիման վրա հանդես է եկել Ռոբերտ Մարտիրոսյանը/ և վարկառուի միջև 12.05.2008 թվականին կնքված անշարժ գույքի գրավի թիվ 388/1 պայմանագրին համապատասխան:

Հետագայում Ստեփան և Անահիտ Գրիգորյանները հայտարարությամբ չեղյալ են համարել իրենց կողմից Ռոբերտ Մարտիրոսյանին տրված և նոտարի կողմից վավերացված՝ Անշարժ գույքը գրավ դնելու լիազորագիրը, ինչը գրանցվել է նոտարական գործողությունների գրանցամատյանում և վավերացվել է նոտարի կողմից:

Թիվ ԵԿԳ/0223/01/09 քրեական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.11.2009 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ի թիվս այլնի, հաստատվել է, որ 12.05.2008 թվականին **Արսեն Բաղրամյանը**, Արթուր Ավայանի և Մուսաննա Խաչյանի հետ նախնական համաձայնությամբ, անշարժ գույքի գրավի դիմաց 2.470.000 ՀՀ դրամ վարկ ստանալու խնդրանքով «Ա. Բաղրամյան» ՍՊ ընկերությանը դիմած **Ստեփան Գրիգորյանի սեփականության իրավունքով պատկանող Անշարժ գույքը խաբեությամբ հափշտակելու դիտավորությամբ**, նրա տունը բանկում գրավ դնելու, նույն գումարի վարկ ստանալու և նրան տրամադրելու պատրվակով, չարաշահելով նրա վստահությունը, իր աշխատանքային ընկեր Ռոբերտ Մարտիրոսյանի անունով նրանից ստացել է Անշարժ գույքը գրավ դնելու իրավունքով նոտարական վավերացմամբ լիազորագիր: Նույն օրն **Արսեն Բաղրամյանը** Ռոբերտ Մարտիրոսյանի անունից կնքված հիփոթեքի թիվ 388/1 պայմանագրով 10.000.000 ՀՀ դրամ վարկի դիմաց, մինչև 12.05.2011 թվականը մարման ժամկետով **գրավ է դրել Անշարժ գույքը Բանկի «Արաբկիր» մասնաճյուղում**: 15.05.2008 թվականին Արսեն Բաղրամյանը Ռոբերտ Մարտիրոսյանի հետ ներկայացել է

Բանկի «Արաբկիր» մասնաճյուղ և վերցրել է նրա ստացած 10.000.000 ՀՀ դրամ վարկի գումարը, որից 2.470.000 ՀՀ դրամ գումարը որպես վարկ տրամադրել է Ստեփան Գրիգորյանին, իսկ մնացած գումարը տնօրինել է անձամբ: **Նշված գործարքը Ստեփան Գրիգորյանից գաղտնի պահելու, նրա հետ կնքված գործարքին օրինական տեսք տալու և ապօրինի ձեռնարկատիրությամբ տրամադրված վարկի դիմաց տոկոսադրույք գանձելու նպատակով 23.05.2008 թվականին «Ա. Բաղրամյան» ՍՊ ընկերության և Ստեփան Գրիգորյանի միջև կնքվել է թիվ 34 վարկային ապօրինի պայմանագիրը, որի համաձայն՝ իբր Ստեփան Գրիգորյանի՝ արդեն իսկ բանկում գրավադրված Անշարժ գույքի գրավի դիմաց «Ա. Բաղրամյան» ՍՊ ընկերությունը 2 տարով, 3,0 տոկոս տոկոսադրույքով նրան տրամադրել է 2.470.000 ՀՀ դրամ գումարի վարկ, որի դիմաց Ստեփան Գրիգորյանից գանձվել է ընդհանուր 205.100 ՀՀ դրամ տոկոսագումար:**

Վերոգրյալից հետևում է, որ թիվ ԵԿԴ/0223/01/09 քրեական գործով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ սույն գործով պատասխանող Արսեն Բաղրամյանը, **չարաշահելով քրեական գործով տուժող և սույն գործով հայցվոր Ստեփան Գրիգորյանի վստահությունը**, նրան և Անահիտ Գրիգորյանին պատկանող Անշարժ գույքը բանկում գրավ դնելու, վարկ ստանալու և գումարը Ստեփան Գրիգորյանին տրամադրելու պատրվակով, 12.05.2008 թվականին **խաբեությամբ**, նոտարական վավերացմամբ նրանից սույն գործով երրորդ անձ **Ռոբերտ Մարտիրոսյանի միջոցով և նրա անունով ձեռք է բերել լիազորագիր**, որի հիման վրա կնքվել է վիճահարույց Անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագիրը՝ ի կատարումն Բանկի ու Ռոբերտ Մարտիրոսյանի միջև 12.05.2008 թվականին կնքված թիվ 388 վարկային պայմանագրի 3-րդ գլխի 3.4.1 կետի:

Ընդ որում, այդ մասին տեղեկանալուց հետո հայցվորներ Ստեփան և Անահիտ Գրիգորյանների հայտարարության հիման վրա լիազորագիրը նոտարական կարգով չեղյալ է համարվել:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թիվ ԵԿԴ/0223/01/09 քրեական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.11.2009 թվականի դատավճռով արդեն իսկ հիմնավորվել է, որ վիճահարույց հիփոթեքի պայմանագիրը կնքվել է խաբեությամբ ձեռք բերված լիազորագրի հիման վրա, հետևաբար՝ Ստեփան Գրիգորյանի ազատ կամքի բացակայությամբ, ուստի հիշյալ պայմանագիրը, անկախ այն հանգամանքից, որ կնքվել է օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ, ստացել է նոտարական վավերացում, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցում, հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված՝ իրավահարաբերության մասնակիցների կամքի ազատ իրականացման սկզբունքին: Չնայած այն հանգամանքին, որ Ռոբերտ Մարտիրոսյանը Անշարժ գույքի վերաբերյալ գործարքներ կնքելիս առերևույթ ունեցել է նման լիազորություն, սակայն դատավճռով հաստատված նախադատելի փաստերից հետևում է, որ տվյալ լիազորագրի բովանդակությունը չի համապատասխանել ներկայացվողների իրական կամքին, ուստի դրա հիման վրա իրականացված գործարքները ևս չեն բխել հայցվորների իրական կամքից, և լիազորագրի անվավերության ուժով դրանք ևս ենթակա են անվավեր ճանաչման: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձի փաստարկը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.11.2009 թվականի թիվ ԵԿԴ/0223/01/09 դատավճռով նախադատելիության վերաբերյալ, հիմնավոր է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ Վերաքննիչ դատարանի որոշումն ամբողջությամբ բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և առաջին ատյանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ) գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման և օրինական ուժ է տրվում Դատարանի վճռին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Բանկից հօգուտ Ստեփան և Անահիտ Գրիգորյանների ենթակա է բռնագանձման 80.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 24.09.2018 թվականի վճռին:

2. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ից հօգուտ Ստեփան և Անահիտ Գրիգորյանների բռնագանձել 80.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/2065/02/17 2021թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԱՆԴ/2065/02/17
Նախագահող դատավոր՝	Ա. Սմբատյան
Դատավորներ՝	Մ. Հարթենյան Կ. Չիլինգարյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի փետրվարի 23-ին գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության (այսուհետ՝ Բյուրո) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.06.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Բյուրոյի ընդդեմ Արամ Խաչունցի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բյուրոն պահանջել է Արամ Խաչունցից բռնագանձել 941.000 ՀՀ դրամ, որից 911.000 ՀՀ դրամը՝ որպես տուժողների գույքին պատճառված և Բյուրոյի կողմից հատուցված վնասի գումար, 30.000 ՀՀ դրամը՝ որպես նշանակված փորձաքննությունների դիմաց Բյուրոյի կողմից վճարված գումար, ինչպես նաև տրամադրված ժամկետների ավարտից՝ 17.05.2017 թվականից սկսած պատասխանողի կողմից ապօրինի պահված 631.000 ՀՀ դրամի և 01.06.2017 թվականից սկսած պատասխանողի կողմից ապօրինի պահված 280.000 ՀՀ դրամի նկատմամբ մինչև պարտավորության դադարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվեգրվող տուկոսների գումարը և նախապես վճարված 18.820 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Բաղիրյան) (այսուհետ՝ Դատարան) 28.12.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է Արամ Խաչունցից հոգուտ Բյուրոյի բռնագանձել 911.000 ՀՀ դրամ՝ որպես հատուցված վնաս, 30.000 ՀՀ դրամ՝ որպես նշանակված փորձաքննությունների դիմաց Բյուրոյի կողմից վճարված գումար, ինչպես նաև 18.220 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Հայցապահանջը՝ մնացած մասով, մերժվել է՝ մնացած մասով դատական ծախսերի հարցը համարելով լուծված: Միաժամանակ վճռվել է դատական ակտի կատարումից հետո Դատարանի 29.05.2017 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը՝ հայցագնի՝ 911.000 ՀՀ դրամի չափով Արամ Խաչունցիին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա դրված արգելանքը, վերացնել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.06.2019 թվականի որոշմամբ Բյուրոյի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 28.12.2018 թվականի վճիռը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով հաշվեգրվող տոկոսները բռնագանձելու պահանջը մերժելու մասով, մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել հետևյալ կերպ՝ «Արամ Խաչունցից հոգուտ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության սկսած վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարումը բռնագանձել 911.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսի գումարները: «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության հայցը՝ 631.000 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 17.05.2017 թվականից, իսկ 280.000 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 01.06.2017 թվականից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսի գումարները բռնագանձելու մասով, մերժել: Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 29.05.2017 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, այն է՝ հայցագնի՝ 911.000 ՀՀ դրամի չափով Արամ Խաչունցիին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա դրված արգելանքը, պահպանել մինչև սույն դատական ակտի կատարումը»: Դատական ծախսերի հարցը համարել լուծված»:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բյուրոն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնարանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածը, 352-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ հոդվածները, 66-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանի վճռով ոչ թե ստեղծվել է պատասխանողի պարտավորությունը Բյուրոյի նկատմամբ, այլ հաստատվել է օրենքի ուժով վաղուց առկա, պատասխանողի կողմից կատարման ենթակա, սակայն չկատարված պարտավորությունը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Բյուրոն պարտավորությունը կատարելու համար պատասխանողին տրամադրել է երկու ամիս ժամկետ՝ առանց որևէ տոկոսների վճարման: Այդ ժամկետը Բյուրոյի ներքին իրավական ակտերով նախատեսված ողջամիտ ժամկետն է, որը շատ ավելի երկար է, քան ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածով սահմանված ժամկետն է:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ կետանցի օրը չի կարող կապվել վճիռն օրինական ուժի մեջ մտնելու հետ, քանի որ կետանցի առկայությունը, ըստ էության, վճիռը կայացնելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի՝ տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից:

Բյուրոյի համոզմամբ կետանցի օրը սկսվում է պարտավորությունը կատարելու համար տրամադրված ողջամիտ ժամկետի ավարտի օրվան հաջորդող օրը:

Վերագրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է «մասնակիորեն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների բռնագանձման պահանջի մերժման մատով, բեկանել Վերաքննիչ դատարանի 28.06.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ ամբողջությամբ բավարարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների բռնագանձման հայցվորի պահանջը, ինչպես նաև անդրադառնալ դատական ծախսերի բաշխմանը»:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից 20.02.2017 թվականին կազմված եզրակացության համաձայն՝ 14.02.2017 թվականին ժամը 00:30-ի սահմաններում Երևան քաղաքի Քանաքեռ 14-րդ և Զ. Քանաքեռցու փողոցների խաչմերուկում Արամ Խաչունցին պատկանող և նրա վարած «Մերսեդես» մակնիշի 34 FL 407 հաշվառման համարանիշով ավտոմոբիլը բախվել է սեփականության իրավունքով Վանիկ Հակոբյանին պատկանող և նրա վարած «Մերսեդես» մակնիշի 35 CF 669 հաշվառման համարանիշի ավտոմոբիլին: Բախման հետևանքով վերջինս կորցրել է ավտոմեքենայի կառավարումը և դեպի ձախ գնալով՝ դուրս է եկել ճանապարհի երթևեկելի հատվածից և առջևի մատով բախվել է խանութի պատին և գազատար խողովակին: Վթարի հետևանքով պատճառվել է գույքի վնասում **(գ.թ. 8):**

2) Տուժող Վանիկ Հակոբյանի կողմից 24.02.2017 թվականին ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում է ներկայացվել Բյուրո (դիմումի հերթական համարը՝ 2155) **(գ.թ. 15-16):**

3) Տուժող «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 16.03.2017 թվականին ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում է ներկայացվել Բյուրո (դիմումի հերթական համարը՝ 2176) **(գ.թ. 17-18):**

4) «Ալտա Վիպ» ՍՊԸ-ի կողմից 09.03.2017 թվականին տրված ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման թիվ ՇԳՀ/03/078 հաշվետվության համաձայն՝ «Մերսեդես» մակնիշի, 35 CF 669 հ/հ-ի թեթև մարդատար մեքենային պատճառված վնասի արժեքը կազմել է 631.000 ՀՀ դրամ **(գ.թ. 27-31):**

5) «Ար Վի Էմ Քոնսալտ» ՍՊԸ-ի կողմից 27.03.2017 թվականին տրված՝ գույքին պատճառված վնասի գնահատման թիվ Հ046 հաշվետվության համաձայն՝ ք. Երևան, Մարկավազի թիվ 12, 2-րդ շենքի դիմաց գտնվող, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին պատկանող գազատարին պատճառված վնասը 27.03.2017 թվականի դրությամբ գործող շուկայական գներով կարող է կազմել (կլորացված) 280.000 հազար ՀՀ դրամ, որն էլ տվյալ դեպքում դիտվել է որպես սեփականատիրոջը պատճառված նյութական վնասի չափ **(գ.թ. 35-37):**

6) Բյուրոն 16.03.2017 թվականի թիվ ՀՈ/17-078 «Հատուցում վճարելու վերաբերյալ» որոշմամբ բավարարել է Վանիկ Հակոբյանի կողմից ներկայացված հատուցում ստանալու վերաբերյալ դիմումը՝ որոշելով նրան վճարել 631.000 ՀՀ դրամ **(գ.թ. 42):**

7) Համաձայն 23.03.2017 թվականի թիվ 170323037306053 մեմորիալ օրդերի՝ Բյուրոյի կողմից Վանիկ Հակոբյանին է փոխանցվել 631.000 ՀՀ դրամ **(գ.թ. 44):**

8) Բյուրոն 31.03.2017 թվականի թիվ ՀՈ/17-098 «Հատուցում վճարելու վերաբերյալ» որոշմամբ բավարարել է «Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հատուցում ստանալու վերաբերյալ դիմումը՝ որոշելով վերջինիս վճարել 280.000 ՀՀ դրամ **(գ.թ. 43):**

9) Համաձայն 05.04.2017 թվականի թիվ 170405030505001-121245 վճարման հանձնարարագրի՝ Բյուրոյի կողմից «Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ-ին է փոխանցվել 280.000 ՀՀ դրամ **(գ.թ. 45):**

10) Բյուրոյի կողմից 646.000 ՀՀ դրամ պարտավորության վերաբերյալ Արամ Խաչունցին ուղղված 16.03.2017 թվականի թիվ Բ/17-01414 «Վնասի հատուցմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի իրականացման» ծանուցման 2-րդ կետի համաձայն՝ Բյուրոն երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ պատճառված վնասը, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր՝ համապատասխանաբար հետադարձ պահանջի իրավունք ստանալով վնաս պատճառած անձի և ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ, որոնք Բյուրոյի նկատմամբ հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ:

Նույն ծանուցման 7-րդ կետի համաձայն՝ որպես պարտավորության մարման հնարավոր 1-ին տարբերակ՝ առաջարկվել է հատուցումը վճարելու որոշման ամսաթվից հետո՝ առավելագույնը 2 ամսվա ընթացքում, վճարել պարտավորության ամբողջ գումարը՝ առանց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների: Որպես պարտավորության մարման հնարավոր 2-րդ տարբերակ՝ առաջարկվել է հատուցումը վճարելու որոշման ամսաթվից հետո՝ առավելագույնը 2 ամսվա ընթացքում, վճարել առնվազն 161.500 ՀՀ դրամ և Բյուրոյի հետ կնքել համաձայնագիր՝ պարտավորության մնացորդային գումարը՝ ներառյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները, առավելագույնը 12 ամսվա ընթացքում՝ ամսական առնվազն 1/12 չափով հավասարաչափ մարումներ կատարելու միջոցով վճարելու վերաբերյալ **(գ.թ. 46)**:

11) Բյուրոյի կողմից 295.000 ՀՀ դրամ պարտավորության վերաբերյալ Արամ Խաչունցին ուղղված 04.04.2017 թվականի թիվ Բ/17-01798 «Վնասի հատուցմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի իրականացման» ծանուցման 2-րդ կետի համաձայն՝ Բյուրոն երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ պատճառված վնասը, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր՝ համապատասխանաբար հետադարձ պահանջի իրավունք ստանալով վնաս պատճառած անձի և ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ, որոնք Բյուրոյի նկատմամբ հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ:

Նույն ծանուցման 7-րդ կետի համաձայն՝ որպես պարտավորության մարման հնարավոր 1-ին տարբերակ առաջարկվել է հատուցումը վճարելու որոշման ամսաթվից հետո՝ առավելագույնը 2 ամսվա ընթացքում, վճարել պարտավորության ամբողջ գումարը՝ առանց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների: Որպես պարտավորության մարման հնարավոր 2-րդ տարբերակ՝ առաջարկվել է հատուցումը վճարելու որոշման ամսաթվից հետո՝ առավելագույնը 2 ամսվա ընթացքում, վճարել առնվազն 75.000 ՀՀ դրամ և Բյուրոյի հետ կնքել համաձայնագիր՝ պարտավորության մնացորդային գումարը՝ ներառյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները, առավելագույնը 6 ամսվա ընթացքում՝ ամսական առնվազն 1/6 չափով հավասարաչափ մարումներ կատարելու միջոցով վճարելու վերաբերյալ **(գ.թ. 47)**:

12) Բյուրոյի կողմից Արամ Խաչունցին ուղարկված ծանուցումները հետ են վերադարձվել «Տեղափոխված» և «Չպահանջված» նշումներով **(գ.թ. 48-49)**:

4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անորոշառնայ հերկյալ հարցադրմանը. ո՞ր պահից սկսած է կիրառելի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով

սահմանված պարասիսանարվության միջոցն ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքի հիման վրա վերջինիս վճարման ենթակա գումարի նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝ **այլ անձին վնաս պատճառելու հետևանքով:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝ վնասներ հատուցելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: (...):

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում գույքին պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ Բյուրոյի որակավորած փորձագետների (այսուհետ՝ փորձագետ) կողմից, բացառությամբ նույն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի, որոնց համար Բյուրոյի կանոններով կարող է նախատեսվել ապահովագրական ընկերության կողմից մեղավորության որոշման և (կամ) վնասի չափի գնահատման պարզեցված կարգ:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի, Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին տուժած անձանց պատճառված վնասները սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գումարների սահմաններում և սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և 11-18-րդ հոդվածներով սահմանված դրույթներին համապատասխան հատուցվում են, եթե վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:

Վճուրքել դատարանը, անդրադառնալով վնաս պատճառելու հետևանքով հարաբերությունների ծագման համար անհրաժեշտ պայմանների առկայության հարցին, արձանագրել է, որ վնասի հատուցման համար *պարպադիր պայման է պարպապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պարճառահետևանքային կապի ու պարպապանի մեղքի միաժամանակյա առկայությունը* (տե՛ս Նաբալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճուրքել դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Ջարգացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, ի թիվս այլ դեպքերի, կարող են ծագել այլ անձին վնաս պատճառելու հետևանքով: Ընդ որում, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով ոչ միայն հստակեցրել է «վնաս» հասկացությունը և սահմանել դրա շրջանակները, այլ նաև նույն հոդվածի 1-ին կետով ամրագրել է, որ իր իրավունքների խախտման դեպքում անձը կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում: Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների բովանդակային վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար անհրաժեշտ է, որպեսզի միաժամանակ առկա լինի իրավաբանական փաստերի հետևյալ կազմը.

1. վնասի առկայությունը,
2. պատասխանող կողմի անիրավաչափ գործողությունը,
3. պատճառական կապը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոգրյալ կարգավորումները կիրառելի են նաև ապահովագրության ոլորտում՝ վնասից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետով հստակեցվում է, որ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովագրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով, որից ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածի 1-ին կետով հստակեցվում է, որ եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովագրին (ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով: (...): Այսինքն՝ ապահովագրական հատուցումը պատահարի դեպքում ապահովագրողի կողմից տուժողին վճարման ենթակա գումարն է: Ընդ որում, ապահովագրական հատուցում է նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված դեպքերում Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին Բյուրոյի կողմից՝ տուժած անձանց պատճառված վնասների հատուցումը: Տարկ է նշել նաև, որ ապահովագրական հատուցումը տրամադրելու պահից սկսած այդ գումարի շրջանակներում վնաս պատճառած անձից հետադարձ պահանջի իրավունքն անմիջակա-նորեն փոխանցվում է ապահովագրողին: Օրենսդիրը նման պայման է նախատեսել նաև այն դեպքերի համար, երբ վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱԳՊԱ պայմանագիր, և որոնց նկատմամբ ապահովագրական հատուցումն իրականացվում է Երաշխավորման ֆոնդի հաշվին:

Այսպիսով, այն դեպքերում, երբ ապացուցվում է, որ ավտոտրանսպորտային պատահարի արդյունքում այլ անձանց պատճառվել է վնաս, վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱԳՊԱ պայմանագիր, ապա տուժած անձանց վնասների հատուցումն իրականացվում է Բյուրոյի կողմից: Նման պարագայում, Բյուրոն հետագայում վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ հետադարձ պահանջի իրավունք է ստանում:

Անդրադառնալով այն դեպքերին, երբ արդեն իսկ հաստատվել է վնասի առկայությունը, Երաշխավորման ֆոնդի հաշվին հատուցվել է տուժողին պատճառված վնասը և Բյուրոյի մոտ ծագել է հետադարձ պահանջի իրավունք, այն է՝ հաստատվել է վնաս պատճառած անձի պարտավորությունը Բյուրոյի հանդեպ, սակայն վիճելի է մնացել, թե որ պահից սկսված պետք է այդ պարտավորության նկատմամբ կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի դրույթները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ 1. պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն

կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: 2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների: Նույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Եթե օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար, ապա նույն կետով նախատեսված կարգը չի գործում միայն տվյալ ժամանակահատվածում: (...):

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ պարտավորությունը պետք է կատարվի պատշաճ: Այսպես՝ պարտավորության ուժով պարտապանը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Հակառակ դեպքում՝ պարտավորությունը խախտողի նկատմամբ առաջանում են որոշակի բացասական հետևանքներ: Մասնավորապես, եթե այդ պարտավորական հարաբերություններն ունեն դրամային բնույթ, և դրա ուժով պարտապանը պարտավոր է վճարել դրամ, ապա այդ դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու համար այդ գումարին վճարվում են նաև տոկոսներ (*լրեն «Դվին կոնցեռն» ՓԲԸ-ն ընդդեմ Հայկանոշ Գրիգորյանի և մյուսների թիվ ԵԿԴ/1060/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի վերլուծությանը՝ մասնավորապես նշելով, որ դրամական պարտավորությունը չկատարելու համար գումարին տոկոսներ վճարելու պարտավորության ծագման հիմքն ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելն է (*լրեն Արամ Հայրապետյանն ընդդեմ Նորիկ Գրիգորյանի և մյուսների թիվ 3-502/ԿԴ քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 26.09.2008 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը վրա է հասնում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում, և

- եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով կամ օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար:

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման, եթե առկա է դրամային պարտավորություն, որի կատարումը խախտվել է, կամ այն չի կատարվել (*լրեն «Գազարին» սերմնաբուծական սպառողական կոոպերատիվն ընդդեմ «Նաիրի Ինշուրանս» սպահովագրական*

սահմանափակ պարտասխանարվությանը ընկերության թիվ ԵԿԴ/0735/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Ջարգացնելով վերոգրյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ նույն հոդվածով նախատեսված տոկոսները հաշվարկվում են օրենսդրի կողմից սահմանված կոնկրետ պահանջների դեպքում: Մասնավորապես, 1. երբ պարտավորությունն ունի դրամական բնույթ, 2. երբ անձն ապօրինի պահել է ուրիշի դրամական միջոցները, 3. երբ խուսափել է դրանք վերադարձնելուց, 4. երբ օգտագործել է դրանք վճարման այլ կետանցով, կամ 5. երբ այլ անձի հաշվին անհիմն ստացել կամ խնայել է գումար: Միաժամանակ օրենսդիրը հստակեցրել է, որ տոկոսների հաշվարկը պետք է կատարել սկսած կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ սահմանելով նաև, որ նույն հոդվածով նախատեսված կարգը կիրառելի է բացառապես այն դեպքերի համար, երբ հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Այսինքն՝ վիճարկվող գումարը վերադարձնելու պարտավորության ծագման պահից սկսած, երբ անձը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում այդ պարտավորությունը, առաջ է գալիս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված պարտավորության կատարման կետանցում: Նման պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգավորումները կիրառելու համար էական նշանակություն ունի այն հարցերի պարզաբանումը, թե որ դրամական հարաբերությունների նկատմամբ է կիրառելի նշված իրավանորմի կանոնը և որ պահից է դրամական պարտավորությունը որակվում կետանցված:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը՝ տոկոսների հաշվարկը և բռնագանձումը, կիրառելի է այնպիսի իրավահարաբերությունների նկատմամբ, որտեղ պարտապանը պարտատիրոջը պարտավոր է վերադարձնել իր մոտ առկա՝ վերջինիս պատկանող դրամական միջոցը, սակայն խուսափում է դրանք վերադարձնելուց կամ պարտավորությունը կատարում է անպատշաճ: Նշվածից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տոկոսների բռնագանձումը պարտավորության կատարման ապահովման եղանակ է, որը կիրառելի է պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում: Ընդ որում, նշված հոդվածով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման պարտավորության կատարման ժամկետի ավարտից սկսած մինչև գումարը վերադարձնելու օրը: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի առաջին պարբերության դրույթը կիրառելու համար հարկ է պարզել, թե որ պահից սկսած է պարտապանի մոտ առաջացել պարտավորության կետանցը, որի արդյունքում վերջինիս մոտ պահվել կամ խնայվել կամ այլ անձի հաշվին անհիմն ստացվել կամ խնայվել է գումար:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ և 409-րդ հոդվածներով սահմանվել են պարտավորության խախտման հասկացությունը և պարտավորության խախտմամբ առաջացած վնասները հատուցելու կարգը: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածով արձանագրվել է, որ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը: Նույն օրենսգրքի 409-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով ամրագրվել է, որ 1. պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները, 2. վնասները որոշվում են նույն օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված կանոններին համապատասխան: Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 421-րդ հոդվածը սահմանել է պարտապանին պարտավորության կետանցող որակելու փաստական հանգամանքների կազմը: Ըստ այդմ՝ նույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կատարման կետանց թույլ տված պարտապանը պարտատիրոջ առաջ պատասխանատվություն է կրում կետանցով պատճառված վնասների և կետանցի ժամանակ պատահաբար առաջացած կատարման անհնարինության հետևանքների համար:

Քննարկվող պարագայում նկատի ունենալով, որ սույն քաղաքացիական գործով Բյուրոյի փաստարկը պարտավորության ժամկետանց վերադարձման վերաբերյալ եղել է Արամ Խաչունցի կողմից վիճելի գումարը համապատասխան ժամկետներում չվերադարձնելու հանգամանքը, ուստի վերը ներկայացված իրավանդությունների համադրմամբ, հարկ է բացահայտել, թե վիճելի իրավահարաբերության մեջ պարտապանի մոտ որ պահից սկսած է ծագել պարտավորության կետանցը: Նշված հանգամանքը սույն վեճի լուծման համար ունի էական նշանակություն, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածում ամրագրված դրույթների կիրառությունն ուղղակիորեն պայմանավորված է պարտապանի կողմից կետանցման պահի բացահայտմամբ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածով օրենսդիրն անդրադարձել է պարտավորության կատարման ժամկետներին՝ ամրագրելով, որ 1. եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: 2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում: 3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ պարտավորության կատարման համար որևէ ժամկետ նախատեսված չէ կամ նախատեսված է ցպահանջ, ապա պարտավորության ծագումը կախման մեջ է դրվում պարտատիրոջ կողմից պահանջ ներկայացնելու իրավաբանական փաստով (փաստի ծագմամբ): Նման պայմաններում օրենսդիրը հստակեցրել է, որ պարտավորությունները պետք է կատարվեն պարտավորության ծագումից հետո՝ **ողջամիտ ժամկետում**: Հակառակ պարագայում՝ նշված ժամկետում պարտավորության չկատարման դեպքում, կիրառելի է դառնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը:

Այսպիսով, պատասխանելով վերոգրյալ հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված պարտավորության կատարման կետանցումն առաջ է գալիս վիճարկվող գումարը վերադարձնելու պարտավորության ծագման պահից սկսած, երբ անձը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում այդ պարտավորությունը: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածում ամրագրված դրույթների կիրառությունն ուղղակիորեն պայմանավորված է պարտապանի կողմից կետանցման պահով: Ընդ որում, այն դեպքում, երբ պարտավորության կատարման համար ժամկետ նախատեսված չէ՝ այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում: Միաժամանակ՝ այդ ժամկետում պարտավորության չկատարման դեպքում օրենքով սահմանված կարգով կիրառվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ տուժող Վանիկ Հակոբյանը 24.02.2017 թվականին և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 16.03.2017 թվականին սպահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումներ են ներկայացրել Բյուրո: Բյուրոն 16.03.2017 թվականի թիվ ՀՈ/17-078 և 31.03.2017 թվականի թիվ ՀՈ/17-098 «Հատուցում վճարելու վերաբերյալ» որոշմաներով բավարարել է Վանիկ Հակոբյանի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հատուցում ստանալու վերաբերյալ դիմումները՝ որոշելով նրանց վճարել համապատասխան 631.000 ՀՀ դրամ և 280.000 ՀՀ դրամ: Համաձայն 23.03.2017 թվականի թիվ 170323037306053 մեմորիալ օրդերի՝ Բյուրոյի կողմից Վանիկ Հակոբյանին

է փոխանցվել 631.000 ՀՀ դրամ, իսկ 05.04.2017 թվականի թիվ 170405030505001-121245 վճարման հանձնարարագրի՝ «Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ-ին է փոխանցվել 280.000 ՀՀ դրամ:

Բյուրոյի կողմից 646.000 ՀՀ դրամ պարտավորության վերաբերյալ Արամ Խաչունցին ուղղված 16.03.2017 թվականի թիվ Բ/17-01414 «Վնասի հատուցմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի իրականացման» ծանուցման 7-րդ կետի համաձայն՝ որպես պարտավորության մարման հնարավոր 1-ին տարբերակ առաջարկվել է *հայրուցումը վճարելու որոշման ամսաթվից հետո առավելագույնը 2 ամսվա ընթացքում* վճարել պարտավորության ամբողջ գումարն առանց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների: Որպես պարտավորության մարման հնարավոր 2-րդ տարբերակ առաջարկվել է հատուցումը վճարելու որոշման ամսաթվից հետո առավելագույնը 2 ամսվա ընթացքում վճարել առնվազն 161.500 ՀՀ դրամ և Բյուրոյի հետ կնքել համաձայնագիր՝ պարտավորության մնացորդային գումարը՝ ներառյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներն առավելագույնը 12 ամսվա ընթացքում՝ ամսական առնվազն 1/12 չափով հավասարաչափ մարումներ կատարելու միջոցով վճարելու վերաբերյալ: Բյուրոյի կողմից 295.000 ՀՀ դրամ պարտավորության վերաբերյալ Արամ Խաչունցին ուղղված 04.04.2017 թվականի թիվ Բ/17-01798 «Վնասի հատուցմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի իրականացման» ծանուցման 7-րդ կետի համաձայն՝ որպես պարտավորության մարման հնարավոր 1-ին տարբերակ առաջարկվել է *հայրուցումը վճարելու որոշման ամսաթվից հետո առավելագույնը 2 ամսվա ընթացքում* վճարել պարտավորության ամբողջ գումարն առանց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների: Որպես պարտավորության մարման հնարավոր 2-րդ տարբերակ առաջարկվել է հատուցումը վճարելու որոշման ամսաթվից հետո առավելագույնը 2 ամսվա ընթացքում վճարել առնվազն 75.000 ՀՀ դրամ և Բյուրոյի հետ կնքել համաձայնագիր՝ պարտավորության մնացորդային գումարը՝ ներառյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներն առավելագույնը 6 ամսվա ընթացքում՝ ամսական առնվազն 1/6 չափով հավասարաչափ մարումներ կատարելու միջոցով վճարելու վերաբերյալ:

Բյուրոյի կողմից Արամ Խաչունցին ուղարկված ծանուցումները հետ են վերադարձվել «Տեղավոյված» և «Զպահանջված» նշումներով:

Դատարանը 28.12.2018 թվականի վճռով, գործում առկա ապացույցների գնահատման արդյունքում, հանգել է հետևության, որ Արամ Խաչունցի կողմից տուժողներ Վանիկ Հակոբյանին և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին պատճառված վնասը Բյուրոյի կողմից հատուցելու պայմաններում վերջինիս հայցը՝ հատուցված վնասի պահանջի մասով, ենթակա է մասնակիորեն բավարարման: Նույն վճռով Դատարանը Բյուրոյի պահանջը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների հաշվեգրման և բռնագանձման մասով, մերժել է՝ պատճառաբանելով, որ «(...) պահանջվող գումարը /911.000 ՀՀ դրամ/ չի համընկնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածում շարադրված պայմաններին: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք չվերադարձնելու համար, մինչդեռ տվյալ դեպքում նման իրավահարաբերությունը բացակայում է, և խոսքը գնում է ապահովագրական դեպքից բխող և պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունների մասին, որոնց նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը կիրառելի չէ»:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ մասնակիորեն բավարարել է Բյուրոյի բողոքը՝ արձանագրելով, որ «(...) տվյալ դեպքում Արամ Խաչունցի հայցվորին դրամական միջոցներ վճարելու պարտավորության ծագումը կախված է հայցվորի հետադարձ պահանջը բավարարման ենթակա լինելու կամ չլինելու հարցի դատական լուծումից, ուստի այդ պարտավորությունը չի կարող ծագած և կետանցված համարվել նախքան այդ հարցի դրական լուծումը, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներն Արամ Խաչունցին չեն կարող հաշվեգրվել մինչև համապատասխան դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածի համար,

այսինքն՝ տոկոսների հաշվեգրումը չի կարող սկսվել հայցվորի մատնանշած օրվանից (631.000 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 17.05.2017 թվականից, իսկ 280.000 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 01.06.2017 թվականից), և տվյալ ժամանակահատվածին վերաբերող մատվ հայցը բավարարելու վերաբերյալ նոր դատական ակտ կայացնելու մասին բողոք բերած անձի պահանջը ենթակա է մերժման: Խնդրո առարկա տոկոսները կարող են հաշվեգրվել միայն նրան համապատասխան դրամական պարտավորություն վերագրող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կամովին և անհապաղ չկատարվելու դեպքում՝ այդ ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող և մինչև պարտավորության կատարման օրն ընկած ժամանակահատվածի համար»:

Սույն գործի փաստերի հաշվառմամբ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի դիրքորոշման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառման համար հիմք է դրամային պարտավորության առկայությունը, և այդ հոդվածով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվարկման պարտավորության կետանցի օրվանից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե Արամ Խաչունցի մոտ երբ է առաջացել վնասի հատուցմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքով վիճելի գումարները Բյուրոյին վճարելու պարտավորությունը:

Սույն քաղաքացիական գործով կողմերի միջև իրավահարաբերությունները, որոնք ծագել են ապահովագրության ոլորտում, ի սկզբանե հանդիսացել են եռակողմ՝ Բյուրոյի, տուժող կողմի՝ Վանիկ Հակոբյանի, և վնաս պատճառած անձի՝ Արամ Խաչունցի միջև, ինչպես նաև Բյուրոյի, տուժող «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և վնաս պատճառած անձի՝ Արամ Խաչունցի միջև: Այսինքն՝ Արամ Խաչունցի կողմից Վանիկ Հակոբյանին և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին պատճառված վնասի արդյունքում Բյուրոյի կողմից, Վանիկ Հակոբյանի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի դիմումների հիման վրա, վերջիններիս հատուցվել է Արամ Խաչունցի կողմից պատճառված վնասը, իսկ Բյուրոն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ձեռք է բերել հետադարձ պահանջի իրավունք: Նշված փաստը հաստատվել է նաև ստորադաս դատարանների կողմից:

Այսինքն, Բյուրոյի համար, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով, առկա է հետադարձ պահանջի ուժով տուժողների վճարած 911.000 ՀՀ դրամ գումարը, որպես իրեն պատկանող գումար, Արամ Խաչունցից ստանալու իրավունք, իսկ Արամ Խաչունցի մոտ՝ այդ գումարը Բյուրոյին վճարելու պարտավորություն:

Տվյալ դեպքում, այն պահից, երբ Արամ Խաչունցի մոտ ծագում է հայցվորին վիճարկվող գումարը վերադարձնելու պարտավորություն, դրա չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ենթակա է որակման պարտավորության կատարման կետանցում: Այն հարցը, թե երբ է Արամ Խաչունցի մոտ ծագում վիճարկվող գումարի վերադարձման պարտավորությունը, պայմանավորված է այն ժամանակահատվածի վրա հասնելու հանգամանքով, որի դեպքում վերջինս պարտավորված կլինեք կատարելու օրենքով նախատեսված գումարի վճարման պահանջը:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ պարտավորությունների կատարման պահի առաջ գալը պայմանավորված է կոնկրետ որոշակի ժամանակահատվածի կամ

հանգամանքի վրա հասնելով կամ ավարտով, արձանագրում է, որ տվյալ դեպքում պատասխանողի մոտ Բյուրոյի հանդեպ պարտավորությունը ծագել է ոչ թե Դատարանի վճռով, այլ վճռով հաստատվել է արդեն իսկ առկա՝ Արամ Խաչունցի կողմից կատարման ենթակա, սակայն չկատարված պարտավորությունը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վեճին լուծում տալու և պարտավորության կետանցի պահը որոշելու համար, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր ելակետային համարել ոչ թե Դատարանի կողմից կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, այլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի իրավակարգավորման համաձայն՝ պարտավորության կետանցի պահը:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ պարտավորության կետանցը վրա է հասնում պահանջի իրավաբանական փաստի իրացման արդյունքում: Ընդ որում, նույն հոդվածի իրավաբանական հետևում է նաև, որ պարտավորությունը պարտատիրոջ կողմից պահանջված կարող է համարվել բոլոր այն դեպքերում, երբ պարտապանն իրագեղված է պահանջի մասին: Նշվածից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը (այսինքն, երբ պարտավորությունը ժամկետային է):

Հետևաբար՝ սույն վեճի լուծման և պարտավորության կետանցի պահը որոշելու համար, վերը ներկայացված իրավանորմի կիրառմամբ, նախ հարկավոր է տարանջատել Արամ Խաչունցի կողմից Բյուրոյի հանդեպ վճարման պարտավորության ծագման պահը վճարման ծանուցման պահից:

Տվյալ դեպքում, այն պահից, երբ Արամ Խաչունցի մոտ ծագել է Բյուրոյին վիճարկվող գումարը վերադարձնելու պարտավորություն, դրա չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ենթակա է որակման պարտավորության կատարման կետանցում: Այն հարցը, թե երբ է Արամ Խաչունցի մոտ ծագել վիճարկվող գումարի վերադարձման պարտավորությունը, պայմանավորված է այն ժամանակահատվածի վրա հասնելու հանգամանքով, երբ պատասխանող կողմը պարտավորված է եղել կատարելու օրենքով նախատեսված գումարի վճարման պահանջը:

Քննարկվող պարագայում, Բյուրոն **16.03.2017 թվականին և 31.03.2017 թվականին որոշումներ** է կայացրել Վանիկ Հակոբյանին և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին համապատասխանաբար 631.000 ՀՀ դրամ ու 280.000 ՀՀ դրամ վճարելու մասին: Միաժամանակ Բյուրոյի կողմից Արամ Խաչունցը ծանուցվել է «Վնասի հատուցմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի իրականացման» մասին: Այն է՝ Բյուրոյի կողմից 646.000 ՀՀ դրամ պարտավորության վերաբերյալ 16.03.2017 թվականի թիվ Բ/17-01414 և 295.000 ՀՀ դրամ պարտավորության վերաբերյալ 04.04.2017 թվականի թիվ Բ/17-01798 «Վնասի հատուցմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի իրականացման» ծանուցումների 7-րդ կետերի համաձայն՝ Արամ Խաչունցին որպես պարտավորության մարման հնարավոր 1-ին տարբերակ առաջարկվել է հատուցումը վճարելու որոշման անառաթվից հետո առավելագույնը 2 ամսվա ընթացքում վճարել պարտավորության ամբողջ գումարն առանց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների:

Սույն գործով հիմնավորվել է, որ Բյուրոյի կողմից Արամ Խաչունցի անվամբ ուղարկված ծանուցումներով առաջարկվել է վերջինիս 16.03.2017 թվականին և 31.03.2017 թվականին կայացված որոշումներն ստանալուց հետո՝ երկամսյա ժամկետում, Բյուրոյին վճարել վիճելի գումարները:

Փաստորեն, քննարկվող պարագայում, Արամ Խաչունցի մոտ պարտավորությունների կատարման պահի առաջ գալը պայմանավորված է կոնկրետ որոշակի ժամանակահատվածի (կամ հանգամանքի) վրա հասնելով (կամ ավարտով), սույն վեճին լուծում տալու համար, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր նախ պարզել, թե երբ է Արամ Խաչունցն իրագեղվել Բյուրոյի պահանջի մասին, այնուհետ նաև քննության առարկա դարձնել սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի իրավակարգավորման՝ ողջամիտ ժամկետի կիրառման հարցը, հետևյալ պատճառաբանությամբ.

Քննարկվող պարագայում, Բյուրոյի կողմից Արամ Խաչունցին ուղղված ծանուցումներով պարտավորությունը կատարելու համար վերջինիս տրվել է երկամսյա ժամկետ: Նշված ծանուցումները, սակայն, ետ են վերադարձվել «Տեղափոխված» և «Չպահանջված» նշումներով, ինչը հիմք է եզրակացնելու, որ վերջինս օբյեկտիվորեն չէր կարող ծանուցումներով նախատեսված ժամկետում կատարել պարտավորությունները: Նման պայմաններում, այն հարցը, թե երբ է Արամ Խաչունցը վիճելի գումարը Բյուրոյին վճարելու պարտավորության մասին տեղեկացել, սույն գործով ունի էական նշանակություն: Ուստի, Վերաքննիչ դատարանը սույն վեճին իրավաչափ լուծում տալու համար պետք է պարզեր նշված ժամանակահատվածը և դրա հաշվառմամբ վիճելի գումարների նկատմամբ կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կանոնները:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունները, ի թիվս այլնի, կարգավորվում են նաև Բյուրոյի կանոններով: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Բյուրոյի կողմից վիճարկվող գումարի վերադարձման պարտավորության վերաբերյալ Արամ Խաչունցի իրազեկման օրը պարզելու համար դատարանը որպես չափորոշիչ պետք է ընդունի Բյուրոյի կանոններով նախատեսված՝ ծանուցումներն անձանց կողմից պատշաճ ստացված լինելու ժամկետների հաշվարկման կարգը: Միաժամանակ, նկատի ունենալով, որ Բյուրոյի կողմից 646.000 և 295.000 ՀՀ դրամ պարտավորությունների վերաբերյալ Արամ Խաչունցը ծանուցվել է համապատասխանաբար 16.03.2017 թվականի թիվ Բ/17-01414 և 04.04.2017 թվականի թիվ Բ/17-01798 «Վնասի հատուցմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի իրացման» ծանուցումներով, ուստի դատարանը պետք է ղեկավարվի նշված ծանուցումների կազմման պահին գործող խմբագրություններով Բյուրոյի կողմից սահմանված կանոններով:

Ըստ այդմ, 16.03.2017 թվականի թիվ Բ/17-01414 ծանուցման կազմման պահին գործող խմբագրությամբ՝ 01.11.2016 թվականին ընդունված և 01.04.2017 թվականին ուժը կորցրած թիվ RL 1-001 ԱՊՊԱ ընդհանուր պայմանների 4-րդ գլխի 9-րդ կետի համաձայն՝ պայմաններով նախատեսված կարգով ծանուցումներն անձի կողմից համարվում են պատշաճ ստացված և վերջինների կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետներն ապահովագրողի կողմից սկսվում են հաշվարկվել՝

(...) 2) ծանուցումն ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ հանձնելու օրվանից,

3) պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ հետպատասխան տեղեկացման մեջ նշված ծանուցման ստացման կամ որևէ հիմքով նամակը հետ վերադարձվելու հաջորդող օրվանից, (...):

Համանման դրոյթներ է պարունակում նաև 04.04.2017 թվականի թիվ Բ/17-01798 ծանուցման կազմման պահին գործող խմբագրությամբ՝ 01.04.2017 թվականին ընդունված և 01.11.2017 թվականին ուժը կորցրած թիվ RL 1-001 ԱՊՊԱ ընդհանուր պայմանների 2-րդ գլխի 9-րդ կետը, ըստ որի՝ նույն կանոններով նախատեսված կարգով ծանուցումներն անձի կողմից համարվում են պատշաճ ստացված և վերջինների կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետներն ապահովագրողի կողմից սկսվում են հաշվարկվել՝

(...) 2) ծանուցումն ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ հանձնելու օրվան հաջորդող օրվանից,

3) պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ հետպատասխան տեղեկացման մեջ նշված ծանուցման ստացման կամ որևէ հիմքով նամակը հետ վերադարձվելու հաջորդող օրվանից, (...):

Այսպիսով, վերոգրյալի հաշվառմամբ, սույն վեճի լուծման համար, հարկ է հստակ տարանջատել Արամ Խաչունցի կողմից Բյուրոյի հետադարձ պահանջի հանդեպ վճարման պարտավորության ծագման պահը, պարզել, թե որ ժամանակահատվածում է պատասխանողը համարվում Բյուրոյի պահանջի մասին իրազեկված, այդ հիմքով ճշտել

կետանցի օրը և նոր միայն կիրառության մեջ դնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումը:

Նման պայմաններում վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվեգրվող տոկոսների բռնագանձման մասով, բեկանելու և գործը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան նոր քննության ուղարկելու համար:

5. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճարել դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճարել դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարել բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվեգրվող տոկոսների բռնագանձման մասով, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.06.2019 թվականի որոշումը և գործն այդ մասով ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԼԴ/0611/02/18**
2021թ.

Քաղաքացիական գործ թիվ

ԼԴ/0611/02/18

Նախագահող դատավոր՝

Դ. Սերոբյան

Դատավորներ՝

Ա. Պետրոսյան

Լ. Գրիգորյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ն.ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի հուլիսի 23-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.12.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ Արկադի Անդրեասյանի և Խաչատուր Ենգոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դարավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Արկադի Անդրեասյանից և Խաչատուր Ենգոյանից համապարտության կարգով բռնագանձել 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես հետադարձ պահանջի գումար:

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մկոյան) (այսուհետ՝ Դատարան) 20.06.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.12.2019 թվականի որոշմամբ Արկադի Անդրեասյանի վերաքննիչ բողոքը բավարարվել

է, իսկ Խաչատուր Ենգոյանի վերաքննիչ բողոքը՝ մերժվել: Վերաքննիչ դատարանը որոշել է՝ Դատարանի 20.06.2019 թվականի վճիռը բեկանել և փոփոխել հետևյալ կերպ. հայցը՝ Խաչատուր Ենգոյանից 2.000.000 ՀՀ դրամ բռնագանձելու մասով, բավարարել, իսկ Արկադի Անդրեասյանից 2.000.000 ՀՀ դրամ բռնագանձելու մասով՝ մերժել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ Կարեն Դանիելյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ (այսուհետ՝ Բյուրո) խորհրդի 26.09.2016 թվականի թիվ 37-Լ որոշմամբ հաստատված (փոփոխված 28.02.2017 թվականի թիվ 8-Լ որոշմամբ) «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» թիվ RL 1-001 կանոնների 100-րդ կետը, մինչդեռ այն սույն գործի նկատմամբ կիրառելի չէ, քանի որ նշված խմբագրությանը կանոնները գործում են 01.04.2017 թվականից, իսկ ապահովագրական վկայագիրը, որի գործողության ժամանակ տեղի է ունեցել պատահարը, կնքվել է 25.04.2014 թվականին և գործել է մինչև 25.04.2015 թվականը, հետևաբար պատասխանողներին ներկայացված պահանջը բխել է պայմանագրից, որի գործողության ժամկետի ընթացքում կանոնների հիշյալ դրույթը գոյություն անգամ չի ունեցել: Այսպիսով՝ Ընկերությունը չի կրում վերոհիշյալ կանոնների 100-րդ կետով սահմանված պարտավորությունը:

Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված կանոնները չեն պարունակում որևէ դրույթ, որից կարելի էր եզրակացնել, որ նշված պայմանների գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա, որպիսի պահանջը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի դրույթներից:

Վերաքննիչ դատարանը Ընկերության պահանջը մերժելու հիմքում դրել է նաև Բյուրոյի կանոնների 17-րդ կետը, որը կիրառելի է պատահարի հետևանքով պատճառված վնասի հատուցում ակնկալող անձանց նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մերժված մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 30.12.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել ամբողջությամբ կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Արկադի Անդրեասյանի միջև 25.04.2014 թվականին կնքված «Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» թիվ SG 936001 վկայագրի համաձայն՝ ապահովագրվել է «Mazda MPV» մակնիշի 34 DZ 878 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: Ապահովագրության ժամկետի սկիզբ է սահմանվել 25.04.2014 թվականը, իսկ ապահովագրության ժամկետի ավարտ՝ 25.04.2015 թվականը: Վկայագրի համաձայն՝ ավտոմեքենայի սեփականատեր է հանդիսանում Արկադի Անդրեասյանը: Միաժամանակ վկայագիրը պարունակում է նշում առ այն, որ Բյուրոյի խորհրդի կողմից 13.09.2010 թվականին հաստատված Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանները նույն վկայագրի անբաժանելի մասն են (**հատոր 1-ին գ. թ. 17, 42**):

2) ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 05.08.2016 թվականի թիվ ՇԴ3/0018/01/16 քրեական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն՝ Խաչատուր Ենգոյանը 18.02.2015 թվականին ժամը 22:30-ի սահմաններում իր վարած «Mazda MPV» մակնիշի 34 DZ 878 հաշվառման համարանիշով ավտոմեքենայով Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում վրաերթի է ենթարկել հետիոտներ Մանուկ Ամիրյանին, Գագիկ Մանուկյանին և Գարիկ Արշակյանին, որի արդյունքում անզոչությանը առաջացրել է Մանուկ Ամիրյանի և Գագիկ Մանուկյանի մահը: Խաչատուր Ենգոյանը ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողել և դիմել է փախուստի, սակայն հաջորդ օրը ներկայացել է ոստիկանություն և հայտնել իր կատարած հանցանքի մասին (**հատոր 1-ին գ. թ. 33-41**):

3) Պատահարը տեղի է ունեցել 18.02.2015 թվականին ժամը 22:30-ի սահմաններում, որի մասին Ընկերությունը տեղեկացվել է 10.05.2017 թվականին (**չլիճարկվող փաստ**):

4) Տուժողի իրավահաջորդներ Ասքանազ Մանուկյանը և Լեոնիկ Ամիրյանը դիմել են Ընկերությունը Ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ (**հատոր 1-ին գ. թ. 19, 25**):

5) Թիվ A07785 վճարման հանձնարարագրի համաձայն՝ 17.05.2017 թվականին ապահովագրողի կողմից տուժողի իրավահաջորդ Լեոնիկ Ամիրյանին որպես ապահովագրական հատուցում վճարվել է 1.000.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին գ. թ. 29-30**):

6) Թիվ A07784 վճարման հանձնարարագրի համաձայն՝ 17.07.2017 թվականին ապահովագրողի կողմից տուժողի իրավահաջորդ Ասքանազ Մանուկյանին որպես ապահովագրական հատուցում վճարվել է 1.000.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին գ. թ. 31-32**):

7) Ընկերությունն իր կողմից վճարված ապահովագրական հատուցման չափով դատական կարգով հետադարձ պահանջ է ներկայացրել ապահովադիր Արկադի Անդրեասյանին, ինչպես նաև վնաս պատճառած անձ Խաչատուր Ենգոյանին: Հայցադիմումը դատարան է մուտքագրվել 23.02.2018 թվականին (**հատոր 1-ին գ. թ. 8-12**):

4. Վճարել դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ապահովագրության ընդհանուր պայմանների դերի և պարտադիրության վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. *ո՞ր դեպքերում են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատահանապարտության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոյի (Բյուրո) կանոնները հանդիսանում ապահովագրության պայմանագրի մաս և արդյո՞ք այդ կանոններով կարգավորվում են միայն ապահովագրության պայմանագրից ծագած իրավահարաբերություններ,*

2. *արդյո՞ք ապահովագրական ընկերությունը գրկվում է հետադարձ պահանջի ներկայացման իր իրավունքից բոլոր այն դեպքերում, երբ նման պահանջը նախ և առաջ չի ներկայացնում պարտապահին ծանուցում իրականացնելու միջոցով:*

ա. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝

սահմանադրական օրենքներին և օրենքներին: Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **նորմատիվ իրավական ակտը** Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտն է, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:

Նույն հոդվածի համաձայն՝

օրենսդրական ակտը Հայաստանի Հանրապետության ժողովրդի կամ Ազգային ժողովի ընդունած նորմատիվ իրավական ակտն է՝ Սահմանադրությունը, սահմանադրական օրենքները և օրենքները,

ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտն է,

անհատական իրավական ակտը նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտն է, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց,

ներքին (ոլկալ) իրավական ակտը նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտն է, որը, սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային, քաղաքացիաիրավական կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավական ակտը վարքագծի կանոններ պարունակող գրավոր փաստաթուղթ է, որը պայմանավորված իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող սուբյեկտների կարգավիճակով, կարգավորման ենթակա իրավահարաբերությունների բնույթով և հասցեատերերի շրջանակով՝ դասակարգվում է մի քանի տեսակների: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում հայտնի են իրավական ակտերի հետևյալ տեսակները՝ **1. նորմատիվ իրավական ակտեր, 2. անհատական իրավական ակտեր, 3. ներքին (ոլկալ) իրավական ակտեր:**

Նորմատիվ իրավական ակտերը բաժանվում են երկու խմբի՝ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի, ընդ որում՝ ենթաօրենսդրական ակտերն իրենց իրավաբանական ուժով ստորադասվում են օրենսդրական ակտերին: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրական ակտերի շարքում բարձրագույն իրավաբանական ուժ ունի Սահմանադրությունը, այնուհետև՝ սահմանադրական օրենքները, որից հետո՝ օրենքները: Սահմանադրությունը, սահմանադրական օրենքները և օրենքները, ինչպես նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պարունակում են վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար: Ի տարբերություն նորմատիվ իրավական ակտերի, անհատական իրավական ակտերը վերաբերում են միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց, իսկ ներքին (ոլկալ) իրավական ակտերը վերաբերում են անձանց խմբի, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային, քաղաքացիաիրավական կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել այն կարևոր հանգամանքը, որ ինչպես անհատական, այնպես էլ ներքին (ոլկալ) իրավական ակտերն ընդունվում են նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան, ինչից ուղղակիորեն բխում է, որ անհատական և ներքին (ոլկալ) իրավական ակտերը ևս պարտադիր են այդ ակտերի հասցեատերերի համար: Այլ կերպ ասած՝ չնայած այն հանգամանքին, որ անհատական և ներքին (ոլկալ) իրավական ակտերը չեն պարունակում վարքագծի պարտադիր

կանոններ անորոշ թվով անձանց համար, այդուհանդերձ, այդպիսի ակտերով սահմանված նորմերը պարտադիր են այդ ակտերի հասցեատերերի համար, որը մի դեպքում կոնկրետ անձը կամ անձինք են, իսկ մյուս դեպքում՝ անձանց կոնկրետ խումբը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն իրավական նորմի հասցեատիրոջը, այլ կերպ ասած՝ այն սուբյեկտներին, որոնց վարքագծի կարգավորման նպատակով ընդունվել է համապատասխան իրավական նորմը, պարզելու համար նախևառաջ կարևոր է պարզել տվյալ իրավական նորմի տեսակը, որն էլ անմիջականորեն բխում է այն իրավական ակտի տեսակից, որում արտացոլված է այդ նորմը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում առաջացող իրավահարաբերությունները կարգավորվում են ամենատարբեր իրավական ակտերով, ընդ որում՝ միևնույն ոլորտը կարող է կարգավորվել ինչպես տարբեր իրավաբանական ուժ, այնպես էլ տարբեր հասցեատերեր ունեցող իրավական ակտերով, ինչը նշանակում է, որ իրավահարաբերության այս կամ այն մասնակցի գործողությունները պետք է գնահատվեն հենց այդ մասնակցի վարքագիծը կարգավորող իրավական նորմեր պարունակող իրավական ակտի լույսի ներքո՝ անկախ տվյալ ոլորտում առաջացող հարաբերությունների մյուս մասնակիցների վարքագիծը այլ իրավական ակտերով կարգավորման ենթարկված ինչելու հանգամանքից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսդիրը իրավահարաբերության մասնակիցներին հնարավորություն է ընձեռել նաև փոխադարձ համաձայնությամբ սահմանել միմյանց վարքագծի կարգավորման կանոններ՝ պայմանագիր կնքելու միջոցով, ինչը, անշուշտ, պետք է համապատասխանի օրենսդրի սահմանած ընդհանուր կանոններին:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Պայմանագիր և օրենք» վերաբերությամբ 438-րդ հոդվածին:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագիրը կնքելուց հետո ընդունվել է օրենք, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ, քան պայմանագիրը կնքելիս գործող կանոնները, ապա կնքված պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, բացի այն դեպքերից, երբ օրենքում սահմանված է, որ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

Վերոհիշյալ իրավանորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողմերի միջև կնքված պայմանագրի դրույթները պետք է համապատասխանեն և չհակասեն պայմանագրի կնքման պահին օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված իմպերատիվ կանոններին, իսկ եթե պայմանագրի կնքումից հետո օրենսդիրը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ, այլ կերպ ասած՝ հակասություն է առաջանում արդեն իսկ կնքված պայմանագրի դրույթների և հետագայում օրենսդրի կողմից ընդունված նոր կանոնների միջև, ապա նախկինում կնքված պայմանագրից ծագող հարաբերությունները շարունակում են կարգավորվել պայմանագրի դրույթներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքում սահմանվում է, որ դրա գործողությունը տարածվում է նաև նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա: Ընդ որում՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 2-րդ կետի տառացի մեկնաբանությունից բխում է, որ նախկինում կնքված պայմանագրերից ծագած հարաբերությունների վրա կարող են տարածվել միայն պայմանագրերի կնքումից հետո ընդունված օրենքի դրույթները, ինչից էլ հետևում է, որ օրենսդիրն ի սկզբանե բացառել է այլ իրավական ակտերով (այդ թվում նաև Բյուրոյի կանոններով²) սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոնների գոր-

² Այս հարցին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել սույն որոշման 4-րդ կետի «գ» ենթակետում:

ծողությունը՝ նախկինում կնքված պայմանագրերից ծագած հարաբերությունների վրա տարածելու հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողմերի միջև կնքված պայմանագրից ծագած իրավահարաբերությունները կարգավորվում են պայմանագրով սահմանված պայմաններով, իսկ հետագայում ընդունված օրենքով կողմերի համար պայմանագրի համեմատ նոր կանոններ սահմանված լինելու դեպքում նոր օրենքով սահմանված կանոնները պայմանագրից ծագած հարաբերությունների վրա կարող են տարածվել միայն այն դեպքում, երբ օրենքում ուղղակիորեն նշված է՝ դրա գործողությունը նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա տարածվելու մասին:

բ. Սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում առաջացող իրավահարաբերությունների կարգավորման հարցերին:

Այսպես՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, նույն օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (...) իրավական ակտերով, Բյուրոյի կանոններով և իրավական այլ ակտերով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում առաջացող իրավահարաբերությունները, նախևառաջ, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, որը, որպես ապահովագրության ոլորտի ընդհանուր սկզբունքները և կանոնները սահմանող նորմատիվ իրավական ակտ, պարունակում է հետևյալ կարևոր դրույթները.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կարող է իրականացվել կամավոր և պարտադիր ապահովագրություն: Կամավոր ապահովագրությունն ապահովադրի կամավոր ցանկությամբ ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու միջոցով իրականացվող ապահովագրությունն է: Պարտադիր ապահովագրությունը ապահովադրի կամքից անկախ ապահովագրողի հետ օրենքի ուժով ծագող հարաբերություններն են, որի տեսակները, պայմաններն ու իրականացման կարգը կարգավորվում են նույն օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և պարտադիր ապահովագրության մասին համապատասխան օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 996-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ ապահովագրողը, որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց պարտավորվում է մյուս կողմին՝ ապահովադրին կամ նրա մատնանշած անձին (շահառուին), որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել որոշակի իրադարձության (իրադարձությունների) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում), եթե այդ իրադարձությունների տեղի ունենալը կրում է հավանական և (կամ) պատահական բնույթ և կախված չէ կողմերի կամ ապահովագրված անձի կամ շահառուի կամքից (բացառությամբ կյանքի ապահովագրության այն դեպքերի, երբ հատուցվում է որոշակի հավաստի և ակնկալվող իրադարձության տեղի ունենալը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 998-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրի էական պայմաններն են՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական պատահարը (պատահարները) կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքում տրվում է ապահովագրական հատուցումը, ապահովագրական գումարի չափը, ապահովագրական հատուցման կարգը, ապահովագրավճարի չափը, ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ապահովադրի և (կամ) շահառուի կողմից ապահովագրողին տեղեկացնելու կարգը և ժամկետները, վնասի գնահատման կարգը, ապահովադրի կողմից ապահովագրավճարի՝ պայմանագրում սահմանված ժամկետներում և կարգով չվճարելու հետևանքները:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրում պետք է նշվեն նաև՝ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը, ապահովագրության պայմանագրի փոփոխման, լրացման և վաղաժամկետ լուծման կարգը, նշում այն մասին, որ ապահովադիրը ծանոթացել է ապահովագրության վկայագրի պայմաններին, ապահովագրության պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապահովագրության վկայագիրը պետք է ներառի հետևյալ վավերապայմանները՝ ապահովագրության վկայագրի համարը, ապահովագրողի անվանումը և գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ինտերնետային կայքի հասցեն, ապահովադրի շահառուի անունը կամ անվանումը, գտնվելու վայրն ու հեռախոսահամարը, ապահովագրության համապատասխան դասը և ենթադասը, ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը, ապահովադրի ստորագրությունը (եթե ապահովադիրը իրավաբանական անձ է, նրա գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությունը) և նշում այն մասին, որ ապահովադիրը ծանոթացել է ապահովագրության պայմանագրի պայմաններին, ապահովագրողի կողմից լիազորված անձի ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը, ապահովագրության վկայագիրը տալու տարին, ամիսը, ամսաթիվը, ապահովագրական գումարի չափը, ապահովագրական պատահարը կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքում տրվում է ապահովագրական հատուցումը, ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ապահովադրի և (կամ) շահառուի կողմից ապահովագրողին տեղեկացնելու կարգը և ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 999-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանները, որոնցով կնքվում է ապահովագրության պայմանագիրը, կարող են որոշվել ապահովագրողի կամ ապահովագրողների միության ընդունած կամ հաստատած ապահովագրության համապատասխան տեսակի, դասի համար սահմանված ստանդարտ պայմաններով (ապահովագրության ընդհանուր պայմաններ): Եթե ապահովագրության պայմանագիրը կնքվել է ապահովագրողի կամ ապահովագրական միությունների կողմից հաստատված ապահովագրության պայմանագրի ընդհանուր պայմաններին հիման վրա, ապա ապահովագրության պայմանագիրը պետք է հղում պարունակի այդ պայմաններին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապահովագրության ընդհանուր պայմաններում պարունակվող և ապահովագրության պայմանագրի մեջ չընդգրկված պայմանները պարտադիր են ապահովադրի (շահառուի) համար, եթե պայմանագրում ուղղակի վկայակոչված է այդ ընդհանուր պայմանների կիրառումը, և այդ պայմանները կցված են պայմանագրին, ընդ որում, պայմանագիր կնքելիս ապահովագրական պայմանների հանձնումն ապահովադրին պետք է հավաստվի պայմանագրի մեջ կատարվող գրառմամբ:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովադիրը և ապահովագրողը պետք է գրավոր (ապահովագրական պայմանագրով կամ առանձին համաձայնությամբ) պայմանավորվեն ապահովագրության ընդհանուր պայմանների առանձին դրույթներ փոփոխելու, վերացնելու կամ լրացնելու կարգի վերաբերյալ: Ընդ որում, եթե նախատեսված է ընդհանուր պայմանների միակողմանի փոփոխումն առանց ապահովադրի համաձայնության, ապա պայմանագրում պետք է ամրագրվի այդպիսի փոփոխության դեպքում ապահովագրողի կողմից ապահովադրին նախապես ծանուցելու պարտականությունը և այդպիսի փոփոխության

հետ համաձայն չլինելու դեպքում պայմանագիրն անմիջապես լուծելու ապահովադրի իրավունքը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրի հիման վրա, ընդ որում՝ օրենքով սահմանված են այն անհրաժեշտ և էական պայմանները, որոնք պետք է պարտադիր նշվեն ապահովագրության պայմանագրի կամ ապահովագրական վկայագրի մեջ: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ապահովագրության պայմանագրի որոշակի պայմաններ կարող են որոշվել նաև ապահովագրողի կամ ապահովագրողների միության ընդունած կամ հաստատած ապահովագրության համապատասխան տեսակի, դասի համար սահմանված ստանդարտ պայմաններով (ապահովագրության ընդհանուր պայմաններ), ինչի պարագայում ապահովագրության պայմանագիրը պետք է պարտադիր հղում պարունակի այդ պայմաններին: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովադիրը և ապահովագրողը պետք է գրավոր (ապահովագրական պայմանագրով կամ առանձին համաձայնությամբ) պայմանավորվեն ապահովագրության ընդհանուր պայմանների առանձին դրույթներ փոփոխելու, վերացնելու կամ լրացնելու կարգի վերաբերյալ և եթե նախատեսված է ընդհանուր պայմանների միակողմանի փոփոխումն առանց ապահովադրի համաձայնության, ապա պայմանագրում պետք է ամրագրվի այդպիսի փոփոխության դեպքում ապահովագրողի կողմից ապահովադրին նախապես ծանուցելու պարտականությունը և այդպիսի փոփոխության հետ համաձայն չլինելու դեպքում պայմանագիրն անմիջապես լուծելու ապահովադրի իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապահովագրողի կամ ապահովագրողների միության ընդունած կամ հաստատած ապահովագրության համապատասխան տեսակի, դասի համար սահմանված ստանդարտ պայմանները հանդիսանում են ապահովագրական պայմանագրի անբաժանելի մաս միայն այն դեպքում, երբ ապահովագրողի և ապահովադրի միջև կնքված ապահովագրության պայմանագիրը պարտադիր հղում է պարունակում այդ պայմաններին, իսկ բոլոր այն դեպքերում, երբ ապահովագրության պայմանագիրը հղում է պարունակում ապահովագրության ընդհանուր պայմաններին, ապա ապահովագրության ընդհանուր պայմանները ևս, ի թիվս ապահովագրության պայմանագրի մյուս էական պայմանների, դառնում են պարտադիր ապահովագրության պայմանագրի կողմերի համար: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել այն կարևոր հանգամանքը, որ ապահովագրության պայմանագրի անբաժանելի մաս են հանդիսանում միայն ապահովագրության այն ընդհանուր պայմանները, որոնք վերաբերում են կողմերի միջև ապահովագրության պայմանագրից ծագած հարաբերություններին, իսկ այն պայմանները, որոնք կարգավորում են կողմերի միջև կնքված ապահովագրության պայմանագրի կարգավորման ոլորտից դուրս գտնվող հարաբերություններ, բնականաբար, չեն հանդիսանում ապահովագրության պայմանագրի անբաժանելի մաս:

Այսպիսով Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ապահովագրության ընդհանուր պայմանների՝ ապահովագրության պայմանագրի մաս հանդիսանալու համար անհրաժեշտ է երկու հանգամանքի միաժամանակյա առկայություն՝ **1. պայմանագիրը պետք է պարտադիր հղում պարունակի ապահովագրության ընդհանուր պայմաններին և 2. ապահովագրության ընդհանուր պայմանները պետք է կարգավորեն ապահովագրության պայմանագրից ծագած իրավահարաբերություններ:**

գ. Վճռաբեկ դատարանը հաջորդիվ հարկ է համարում անդրադառնալ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում առաջացող իրավահարաբերությունների կարգավորման հարցում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական

ընկերությունների բյուրոյի (Բյուրո) ընդունած իրավական ակտերի, մասնավորապես՝ **Բյուրոյի կանոնների** դերին և նշանակությանը:

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կանոնադրության «Իրավական ակտերի մասին կանոններ» վերտառությամբ Հավելված 2-ի 6-րդ բաժնի 1-ին գլխի 6-րդ կետի համաձայն՝ **Բյուրոյի իրավական ակտերը** Բյուրոյի կառավարման մարմինների, ինչպես նաև Բժշկական հանձնաժողովի կողմից «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի կամ Բյուրոյի կանոնադրությամբ սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում ընդունված ժամանակավոր կամ մշտական բնույթ կրող, մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար նախատեսված պաշտոնական գրավոր փաստաթղթեր են, որոնցով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություններ, սահմանափակումներ կամ վարքագծի այլ կանոններ:

Նույն գլխի 7-րդ կետի համաձայն՝ Բյուրոյի իրավական ակտերն ըստ բնույթի ստորաբաժանվում են երկու տեսակի՝ անհատական և ներքին (լուկա):

Նույն գլխի 8-րդ կետի համաձայն՝ անհատական են համարվում Բյուրոյի այն իրավական ակտերը, որոնք սահմանում են վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) անձանց համար:

Նույն գլխի 9-րդ կետի համաձայն՝ Ներքին են համարվում Բյուրոյի այն իրավական ակտերը, որոնցով սահմանվող վարքագծի կանոնները տարածվում են միայն անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) այն անձանց վրա, ովքեր՝ 1) Բյուրոյի հետ գտնվում են աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ կամ 2) օգտվում են Բյուրոյի ծառայություններից կամ աշխատանքներից կամ 3) Բյուրոյի անդամներ են:

Նույն գլխի 10-րդ կետի համաձայն՝ Բյուրոյի կողմից ընդունվում են երկու խմբի ներքին իրավական ակտեր՝ 1) Բյուրոյի կանոններ, 2) Բյուրոյի այլ ներքին իրավական ակտեր:

Նույն գլխի 11-րդ կետի համաձայն՝ Բյուրոյի կանոններն իրենց հերթին բաժանվում են հետևյալ տեսակների՝ 1) Բյուրոյի ընդհանուր կանոններ, 2) Բյուրոյի ներքին կանոններ:

Նույն գլխի 12-րդ կետի համաձայն՝ **Բյուրոյի ընդհանուր կանոններ** են համարվում Բյուրոյի այն ներքին իրավական ակտերը, որոնք Բյուրոյի կողմից ընդունվում են որպես ԱՊՊԱ համակարգի կարգավորող մարմին կամ հասարակական կազմակերպություն, և որոնցով պահանջներ են սահմանվում ԱՊՊԱ համակարգի մասնակիցների, Բյուրոյի և (կամ) Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների՝ միմյանց միջև հարաբերությունների նկատմամբ: Բյուրոյի կողմից ընդունված ցանկացած իրավական ակտ համարվում է Բյուրոյի ընդհանուր կանոն, եթե պարունակում է թեկուզ մեկ դրույթ, որն առնչվում է Բյուրոյի, նրա անդամ ապահովագրական ընկերությունների և (կամ) ԱՊՊԱ համակարգի մասնակիցների՝ միմյանց միջև հարաբերություններին: Բյուրոյի ընդհանուր կանոններ են համարվում նաև Բյուրոյի ընդհանուր կանոններում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող, ինչպես նաև Բյուրոյի ընդհանուր կանոնների կամ դրանց մի մասի գործողությունը դադարեցնող իրավական ակտերը՝ նույնիսկ այդ փոփոխությունների կամ լրացումների՝ նույն կետով նախատեսված հարաբերությունները կարգավորող դրույթներ չպարունակելու դեպքում: Բյուրոյի ընդհանուր կանոնները հաստատվում են Բյուրոյի խորհրդի կողմից, իսկ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի կամ Բյուրոյի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի կամ Բժշկական հանձնաժողովի կողմից:

Այսպիսով Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Բյուրոյի կանոնները հանդիսանում են ներքին (լուկա) իրավական ակտեր, ինչը ենթադրում է, որ Բյուրոյի կանոնները սահմանում են վարքագծի կանոններ անձանց խմբի համար, ընդ որում՝ պայմանավորված յուրաքանչյուր կանոնի բովանդակությամբ՝ յուրաքանչյուր դեպքում տարբեր է անձանց այն խումբը, որը հանդիսանում է Բյուրոյի այս կամ այն կանոնի հասցեատեր, քանի որ մի

դեպքում այդ հասցեատերերը Բյուրոյի անդամ հանդիսացող ապահովագրական ընկերություններն են, իսկ մյուս դեպքում՝ ԱՊՊԱ համակարգի մասնակիցները:

դ. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապահովագրության ոլորտում ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքին և այդ իրավունքի ծագման հիմքերին, ինչպես նաև իրացման պայմաններին, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով հստակ և սպառիչ սահմանված են այն դեպքերը, երբ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք է ձեռք բերում վնաս պատճառած անձի, վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի), ինչպես նաև օրենքով սահմանված այլ անձանց նկատմամբ:

Այսպես. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի՝

1) վնաս պատճառած անձի նկատմամբ, եթե՝

ա. նա ապահովագրական պատահարի ժամանակ ավտոտրանսպորտային միջոցը վարել է ակոնոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության ներքո.

բ. նա առանց հիմնավոր պատճառի լքել է պատահարի վայրը կամ խուսափել է ակոնոլի, թմրանյութերի կամ այլ հոգեմետ նյութերի օգտագործման փաստի վերաբերյալ քննություն անցնելուց.

գ. նա ապահովագրական պատահարի պահին չի ունեցել ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ օրենքով սահմանված կարգով գրկված է եղել այդպիսի իրավունքից, բացառությամբ նույն մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքի.

դ. ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին.

2) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ, եթե՝

ա. ավտոտրանսպորտային միջոցը վնասի պատճառման պահի դրությամբ չի անցել տեխնիկական զննություն, և պատահարի առաջացման անմիջական պատճառ է դարձել ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի անսարքությունը, որը կարող էր բացահայտվել տեխնիկական զննություն անցնելու դեպքում.

բ. ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին.

գ. ավտոտրանսպորտային միջոցի վարումը վստահել է այն վարելու իրավունք չունեցող անձին և գիտեր կամ կարող էր իմանալ, որ այդ անձը չունի վարելու իրավունք.

դ. ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական ընկերությանն ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել ապահովագրական ընկերությանը մինչև ապահովագրական պատահարը.

3) ինչպես նաև՝

ա. պատահարի տարածքի կամ ճանապարհի սեփականատիրոջ նկատմամբ, եթե պատահարը տեղի է ունեցել տարածքի կամ ճանապարհի անսարքության կամ թերության պատճառով, և դրանում առկա է սեփականատիրոջ մեղքը.

բ. ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական զննություն իրականացրած կազմակերպության նկատմամբ, եթե պատահարի առաջացման անմիջական պատճառ է դարձել ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի անսարքությունը, որը չի բացահայտվել տեխնիկական զննության ընթացքում՝ դրա թերի կամ ոչ պատշաճ իրականացման հետևանքով.

գ. օրենքով սահմանված դեպքերում և կարգով այլ անձանց նկատմամբ, որոնց մեղքով տեղի է ունեցել պատահարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում մի քանի անձի նկատմամբ, ապա այդ անձինք ապահովագրական ընկերության նկատմամբ հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ:

Այսպիսով Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուրբոգացիայի) իրավունքը ծագում է օրենքի ուժով, քանի որ այդ իրավունքի ծագման հիմքերը թվարկված են օրենքում, ինչից էլ բխում է, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի (սուրբոգացիայի) իրավունքի իրացման արդյունքում առաջացող հարաբերությունները դուրս են ԱՊՊԱ պայմանագրի կարգավորման ոլորտից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ հետադարձ պահանջի իրավունքն ապահովագրական ընկերության սուբյեկտիվ իրավունքն է և վերջինս ինքն է որոշում իրացնել, թե չիրացնել իր սուբյեկտիվ իրավունքը, ինչպես նաև ինքնուրույն է որոշում իր իրավունքի իրացման, այսինքն՝ պարտապանի նկատմամբ հետադարձ պահանջի ներկայացման պայմանները և ժամանակը: Այդուհանդերձ, բոլոր այն դեպքերում, երբ ապահովագրական ընկերությունը որոշում է օգտվել իր իրավունքից և հետադարձ պահանջ ներկայացնել պարտապանի նկատմամբ, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապահովագրական ընկերությունը պարտավոր է իր այդ իրավունքն իրացնել այդ իրավունքի իրացման պահին գործող իրավակարգավորումների, այդ թվում նաև՝ Բյուրոյի այդ պահի դրությամբ գործող կանոնների համաձայն:

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհրդի 26.09.2016 թվականի թիվ 37-Լ որոշմամբ հաստատված և 28.02.2017 թվականի թիվ 8-Լ որոշմամբ փոփոխված «ԱՊՊԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ» թիվ RL 1-001 կանոնների գործողության ժամկետի սկիզբ է սահմանվել 01.04.2017 թվականը:

Վերոհիշյալ կանոնների 1-ին կետի համաձայն՝ նույն կանոններով կարգավորվում են ԱՊՊԱ ոլորտի մասնակիցների միջև պայմանագրերի կնքման, պատահարների կարգավորման, փորձաքննությունների իրականացման, հատուցումների կարգավորման և հետադարձ պահանջի կիրառման գործընթացում առաջացող հարաբերությունները:

Վերոհիշյալ կանոնների 100-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ ՀՊԱ-ն (Հատուցման պարտավորությամբ Ապահովագրողը՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի համաձայն տուժողին ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն ունեցող Ապահովագրողը կամ Բյուրոն) մտադիր է օգտվել հետադարձ պահանջի իրականացման իր իրավունքից, ապա նման պահանջը նախ և առաջ պետք է ներկայացվի պարտապանին ծանուցում իրականացնելու միջոցով՝ նույն կանոններով նախատեսված ծանուցման եղանակներով և պարտավորության կատարման համար ողջամիտ ժամկետ տրամադրելով:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բյուրոյի վերոհիշյալ կանոնը կարգավորում է ապահովագրական ընկերության կողմից օրենքով նախատեսված հիմքերից ծագած հետադարձ պահանջի իրավունքի իրացման կարգը, ուստի վերոհիշյալ կանոնի հասցեատերը հետադարձ պահանջի իր իրավունքից օգտվող ապահովագրական ընկերությունն է, ինչը նշանակում է, որ անկախ ապահովագրական ընկերության և ապահովադրի միջև կնքված ապահովագրության պայմանագրի կնքման, ինչպես նաև գործողության ժամանակից, վերոհիշյալ կանոնը գործողության մեջ դրվելու պահից սկսած պարտադիր է ապահովագրական ընկերության համար՝ վերոհիշյալ կանոնի գործողության մեջ դրվելուց հետո պարտապանին հետադարձ պահանջ ներկայացնելիս, քանի որ այդ կանոնով կարգավորվող հարաբերությունը պարտապանի նկատմամբ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի ներկայացումը դուրս է ապահովագրության պայմանագրով կարգավորվող հարաբերությունների շրջանակից:

Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարագրմամբ.

Ընկերության և Արկադի Անդրեասյանի միջև 25.04.2014 թվականին կնքված «Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» թիվ SG 936001 վկայագրի համաձայն՝ ապահովագրվել է «Mazda MPV» մակնիշի 34 DZ 878 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: Ապահովագրության ժամկետի սկիզբ է սահմանվել 25.04.2014 թվականը, իսկ ապահովագրության ժամկետի ավարտ՝ 25.04.2015 թվականը: Վկայագրի համաձայն՝ ավտոմեքենայի սեփականատեր է հանդիսանում Արկադի Անդրեասյանը: Միաժամանակ վկայագիրը պարունակում է նշում առ այն, որ Բյուրոյի խորհրդի կողմից 13.09.2010 թվականին հաստատված Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանները նույն վկայագրի անբաժանելի մասն են:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 05.08.2016 թվականի թիվ ՇԴՅ/0018/01/16 քրեական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն՝ Խաչատուր Ենգոյանը 18.02.2015 թվականին ժամը 22:30-ի սահմաններում իր վարած «Mazda MPV» մակնիշի 34 DZ 878 հաշվառման համարանիշով ավտոմեքենայով Շիրակի մարզի Մարտիկ քաղաքում վրատրթի է ենթարկել հետիոտներ Մանուկ Ամիրյանին, Գագիկ Մանուկյանին և Գարիկ Արշակյանին, որի արդյունքում անզգուշությամբ առաջացրել է Մանուկ Ամիրյանի և Գագիկ Մանուկյանի մահը: Խաչատուր Ենգոյանը ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողել և դիմել է փախուստի, սակայն հաջորդ օրը ներկայացել է ոստիկանություն և հայտնել իր կատարած հանցանքի մասին:

Պատահարը տեղի է ունեցել 18.02.2015 թվականին ժամը 22:30-ի սահմաններում, որի մասին Ընկերությունը տեղեկացվել է 10.05.2017 թվականին:

Տուժողի իրավահաջորդներ Ասքանազ Մանուկյանը և Լեոնիկ Ամիրյանը դիմել են Ընկերությանը Ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ:

Թիվ A07785 վճարման հանձնարարագրի համաձայն՝ 17.05.2017 թվականին ապահովագրողի կողմից տուժողի իրավահաջորդ Լեոնիկ Ամիրյանին որպես ապահովագրական հատուցում վճարվել է 1.000.000 ՀՀ դրամ:

Թիվ A07784 վճարման հանձնարարագրի համաձայն՝ 17.07.2017 թվականին ապահովագրողի կողմից տուժողի իրավահաջորդ Ասքանազ Մանուկյանին որպես ապահովագրական հատուցում վճարվել է 1.000.000 ՀՀ դրամ:

Ընկերությունն իր կողմից վճարված ապահովագրական հատուցման չափով դատական կարգով հետադարձ պահանջ է ներկայացրել ապահովագրի Արկադի Անդրեասյանին, ինչպես նաև վնաս պատճառած անձ Խաչատուր Ենգոյանին: Հայցադիմումը դատարան է մուտքագրվել 23.02.2018 թվականին:

Դատարանը հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ Ընկերությունը պատահարից հետո ոչ միայն անհապաղ (ողջամիտ ժամկետում) չի տեղեկացվել պատահարի մասին, այլ միայն տուժողների իրավահաջորդներից է տեղեկացվել, ուստի և հատուցելով պատճառված վնասը, Ընկերությունը ձեռք է բերել հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք Արկադի Անդրեասյանի և Խաչատուր Ենգոյանի նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Արկադի Անդրեասյանի վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհրդի 26.09.2016 թվականի թիվ 37-Լ որոշմամբ հաստատված և 28.02.2017 թվականի թիվ 8-Լ որոշմամբ փոփոխված «ԱՊՊԱ ԸՆԳԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ» թիվ RL 1-001 կանոնների 100-րդ կետից բխում է, որ ապահովագրողի մոտ հետադարձ պահանջ ներկայացնելու իրավունքը ծագում է այն դեպքում, երբ վերջինս հետադարձ պահանջ ներկայացնելու իր մտադրության մասին սահմանված կարգով ծանուցում է պարտասպանին: Ուստի, քանի դեռ ապահովագրողի կողմից ծանուցման նշված կարգը չի պահպանվել, Վերաքննիչ դատարանի համոզմամբ վերջինս իր իսկ գործողություններով զրկել է իրեն հետադարձ պահանջ ներկայացնելու իրավունքից:

Վերոհիշյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արկադի Անդրեասյանի նկատմամբ Ընկերության հետադարձ պահանջի իրավունքը ծագել է 17.05.2017 թվականին, այսինքն՝ Ընկերության կողմից տուժողների իրավահաջորդներին ապահովագրական հատուցումներ վճարվելու պահից՝ ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին ապահովագրական ընկերությանը չտեղեկացնելու փաստի ուժով: Նման եզրահանգման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ հետադարձ պահանջի ծագման համար անհրաժեշտ նախապայման է նաև Ընկերության կողմից հիմնական պարտավորությունը կատարելու հանգամանքը:

Այսպիսով հաշվի առնելով, որ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհրդի 26.09.2016 թվականի թիվ 37-Լ որոշմամբ հաստատված և 28.02.2017 թվականի թիվ 8-Լ որոշմամբ փոփոխված «ԱՊՊԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ» թիվ RL 1-001 կանոնների գործողության ժամկետի սկիզբ է սահմանվել 01.04.2017 թվականը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինչպես 17.05.2017 թվականի դրությամբ, այսինքն՝ պարտապանների նկատմամբ Ընկերության հետադարձ պահանջի իրավունքի ծագման պահի դրությամբ, այսպես էլ 23.02.2018 թվականի դրությամբ, այսինքն՝ այն պահի դրությամբ, երբ Ընկերությունը դատական կարգով հետադարձ պահանջ է ներկայացրել պարտապաններին, վերոհիշյալ կանոնների 100-րդ կետն արդեն իսկ գործողության մեջ է եղել:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոհիշյալ կանոնների 100-րդ կետի բովանդակությունից բխում է, որ այն կարգավորում է Բյուրոյի անդամ հանդիսացող ապահովագրական ընկերությունների վարքագիծը: Ուստի, ակնհայտ է, որ վերոհիշյալ կանոնների 100-րդ կետը գործողության մեջ դրվելու պահից՝ 01.04.2017 թվականից սկսած պարտադիր է ապահովագրական ընկերությունների համար այն դեպքում, երբ վերջիններս ցանկանում են իրացնել հետադարձ պահանջի իրենց իրավունքը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոհիշյալ կանոնների 100-րդ կետը չի հանդիսանում ապահովագրության պայմանագրի մաս, ուստի վերոհիշյալ կանոնի գործողությունը որևէ կերպ կախվածության մեջ չի գտնվում ապահովագրական ընկերության և ապահովադրի միջև կնքված ապահովագրության պայմանագրի կնքման կամ գործողության ժամանակից, քանի որ ապահովագրության պայմանագրով կարգավորվում են ապահովագրության պայմանագրի կողմերի՝ ապահովագրական ընկերության և ապահովադրի հարաբերությունները, մինչդեռ վերոհիշյալ կանոնների 100-րդ կետը կարգավորում է օրենքի ուժով ծագած իրավահարաբերություններ, մասնավորապես՝ ապահովագրական ընկերության կողմից պարտապանին հետադարձ պահանջ ներկայացնելու արդյունքում առաջացող իրավահարաբերությունները, ընդ որում՝ որպես պարտապան կարող են հանդես գալ ինչպես վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը (ապահովադիրը), այնպես էլ վնաս պատճառած անձը կամ օրենքով նախատեսված այլ անձինք, այսինքն՝ նաև ապահովագրական ընկերության հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չգտնվող անձինք:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Ընկերությունը ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին չտեղեկացվելու փաստի ուժով իր կողմից վճարված ապահովագրական հատուցման չափով հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերել ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր Արկադի Անդրեասյանի և վնաս պատճառած անձ Խաչատուր Ենգոյանի նկատմամբ և հետադարձ պահանջի իր իրավունքն իրացրել է 23.02.2018 թվականին՝ դատարան հայց ներկայացնելու միջոցով, այսինքն՝ այն պահին, երբ արդեն իսկ գործողության մեջ են եղել «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհրդի 26.09.2016 թվականի թիվ 37-Լ որոշմամբ հաստատված և 28.02.2017 թվականի թիվ 8-Լ, 21.07.2017 թվականի թիվ 39-Լ, 26.09.2017 թվականի թիվ 50-Լ, 13.11.2017 թվականի թիվ 56-Լ և 30.01.2018 թվականի թիվ 1-Լ որոշումներով փոփոխված «ԱՊՊԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ» թիվ RL 1-001 կանոնները: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը պարտավոր էր ղեկավարվել

հիշյալ կանոնների 100-րդ կետով և իր հետադարձ պահանջը նախևառաջ ներկայացնել պարտապանին ծանուցելու միջոցով, որպիսի իրավաչափ եզրահանգման հանգել է նաև Վերաքննիչ դատարանը:

Միաժամանակ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգմանն այն մասին, որ ապահովագրական ընկերությունը գրկվում է հետադարձ պահանջի ներկայացման իր իրավունքից բոլոր այն դեպքերում, երբ նման պահանջը նախ և առաջ չի ներկայացնում պարտապանին ծանուցում իրականացնելու միջոցով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բյուրոյի կանոններով նման կարգավորում նախատեսված չէ, իսկ ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված Բյուրոյի կանոնների 17-րդ կետին` (*մինչև 03.03.2019 թվականը նույն բովանդակությամբ կանոնը գործողության մեջ է եղել 15-րդ կետով*), համաձայն որի` նույն կանոններով նախատեսված դիմումները, պատասխանները կամ փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ **տեղեկացումները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում համապատասխան ժամկետները կետանցած անձը** գրկվում է դիմումը, փաստաթղթերը կամ պատասխանը ներկայացնելու արդյունքում առաջացող իրավունքից և (կամ) կրում է չտեղեկացման համար սահմանված բացասական հետևանքները, բացառությամբ այն դեպքերի, երբ ժամկետի բացթողումը նույն կանոններով սահմանված հիմքերով հարգելի է ճանաչվել դիմումը, պատասխանը կամ տեղեկացումն ստացած անձի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից կամ դատական կարգով, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ կանոնը վերաբերում է տեղեկացումները **սահմանված ժամկետում** չկատարելու դեպքերին, մինչդեռ վերոհիշյալ կանոնների 100-րդ կետով պարտապանին ծանուցում իրականացնելու միջոցով ապահովագրական ընկերության կողմից հետադարձ պահանջ ներկայացնելու ժամկետ սահմանված չէ, ուստի ակնհայտ է, որ բացակայում է համապատասխան կարգավորումը, որը թույլ կտար հետևություն անելու առ այն, որ ապահովագրողի կողմից ծանուցման նշված կարգը չպահպանելու դեպքում ապահովագրական ընկերությունը գրկվում է հետադարձ պահանջ ներկայացնելու իրավունքից: Նման եզրահանգումը բխում է այն հանգամանքից, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքը ծագում է օրենքով նախատեսված հիմքերից, ուստի պարտապանին նախապես չծանուցելը չի կարող հետադարձ պահանջի ներկայացման իրավունքից գրկվելու հիմք հանդիսանալ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափորեն է ելել եզրահանգման առ այն, որ Արկադի Անդրեասյանի մասով հայցը ենթակա է մերժման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար` ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված` առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու` ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ` Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն` յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական

դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի 20.06.2019 թվականի վճռին՝ Արկադի Անդրեասյանից համապարտության կարգով 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես հետադարձ պահանջի գումար, բռնագանձելու մասով օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է դրամական պահանջի գործերով՝ հայցագնի երեք տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն ենթակա է բեկանման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, գտնում է, որ Արկադի Անդրեասյանից հօգուտ Ընկերության ենթակա է բռնագանձման 60.000 ՀՀ դրամ՝ որպես Ընկերության կողմից վճռաբեկ բողոքի համար սահմանված և նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.12.2019 թվականի որոշման՝ Արկադի Անդրեասյանի վերաքննիչ բողոքը բավարարելու մասը, և Արկադի Անդրեասյանից հօգուտ «Ռոսգոստորախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության 2.000.000 ՀՀ դրամ համապարտության կարգով բռնագանձելու պահանջը բավարարելու մասով օրինական ուժ տալ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 20.06.2019 թվականի վճռին:

2. Արկաղի Անդրեասյանից հոգուտ «Ռոսգոսստրախ-Արմենիա» սպահովագրական փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԼԴ/0019/02/17**
2022թ.

Քաղաքացիական գործ թիվ

ԼԴ/0019/02/17

Նախագահող դատավոր՝

Ա. Խառատյան

Դատավորներ՝

Մ. Հարթենյան

Կ. Չիլինգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ

Մ. ԴՐՄԵՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Գ. ՀԱԿՈՒՅԱՆ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ա. ՄԿՐՏՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Է. ՄԵԴԱԿՅԱՆ

Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2022 թվականի մարտի 03-ին

գրավոր ընթացակարգով քննելով Էդուարդ Մանասյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.06.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ Էդուարդ Մանասյանի դիմումի՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դարավարական նախապարամոթյունը

Դիմելով դատարան՝ Էդուարդ Մանասյանը պահանջել է իրեն ճանաչել Լևոն Մանասյանի՝ 22.06.1998 թվականի կտակի հիման վրա ժառանգությունն ընդունած ժառանգ՝ հարգելի համարելով ըստ կտակի ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Տ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 16.11.2017 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.06.2018 թվականի որոշմամբ Էդուարդ Մանասյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.11.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Էդուարդ Մանասյանը (ներկայացուցիչ Ադելինա Հակոբյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 2-րդ մասը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ կտակի մասին իմանալու ժամկետի հոսքը պետք է հաշվել 2016 թվականի մայիս ամսից, հիմնավոր չէ, քանի որ կտակի առկայության մասին իմանալու ժամկետը պետք է հաշվարկել այն պահից, երբ ժառանգը նոտարից ստացել է կտակի վավերացված պատճենը: Սույն գործով Էդուարդ Մանասյանը, ունենալով սուբյեկտիվ իրավունք ըստ կտակի ժառանգելու իր հոր՝ Լևոն Մանասյանի գույքը, օբյեկտիվ պատճառներով չի իմացել այդ մասին, իսկ իմանալուց հետո չի խախտել օրենքով նախատեսված վեցամսյա ժամկետը և դիմել է դատարան՝ խնդրելով հարգելի համարել ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները:

Էդուարդ Մանասյանը կտակի մասին իմացել է 17.10.2016 թվականից հետո, երբ վերջինիս լիազորված անձը ստացել է նոտարով հաստատված կտակի պատճենը: Այսինքն, նշված ամսաթիվը պետք է համարվի կտակի առկայության մասին իմանալու ժամկետի սկիզբը: 17.10.2016 թվականին Էդուարդ Մանասյանը, իմանալով կտակի առկայության մասին, ձեռնարկել է ակտիվ գործողություններ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու ուղղությամբ, այն է՝ դիմել է նոտարին ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար: Բացի այդ, ժառանգը կարող է կամ պարտավոր է իմանալ կտակի մասին այն հայտնաբերելու, ստանալու և դրա բովանդակությանը ծանոթանալու պահից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.06.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ դիմումը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Թիվ II-ՔԾ № 940095 ծննդյան վկայականի ռուսերենից հայերեն նոտարական կարգով վավերացված թարգմանության համաձայն՝ Էդուարդ Լևոնի Մանասյանը ծնվել է 30.04.1959 թվականին: Հայրն է՝ Լևոն Գևորգի Մանասյանը, իսկ մայրը՝ Սիրանուշ Կնյազի Սարկիսովան (**հատոր 1-ին, գ.թ. 111**):

2) Թիվ ՔԿ № 758576 մահվան վկայականի ռուսերենից հայերեն թարգմանության համաձայն՝ Լևոն Մանասյանը մահացել է 07.05.2004 թվականին՝ Ռուսաստանի Դաշնությունում (**հատոր 1-ին, գ.թ. 63, 64, 74**):

3) Էդուարդ Լևոնի Մանասյանի կողմից Լարիսա Ասատուրի Գևորգյանին 06.06.2016 թվականին տրված թիվ 64AA1581594 լիազորագրի ռուսերենից հայերեն նոտարական կարգով վավերացված թարգմանության համաձայն՝ Լարիսա Ասատուրի Գևորգյանը լիազորվել է, ի թիվս այլնի, ընդունելու ժառանգություն և վարելու ժառանգական գործը գույքի նկատմամբ, որը բաղկացած է քաղաք Վանաձոր, Լազյան փողոց, շենք 43 Ա, բնակարան 15 հասցեում գտնվող գույքից, լինելու իր ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության բոլոր լիազոր մարմիններում (**հատոր 1-ին, գ.թ. 16-19**):

4) Էդուարդ Մանասյանի ներկայացուցիչ Ա. Հակոբյանը «Վանաձոր» նոտարական տարածքի նոտար Անժելա Կիրակոսյանին ուղղված 03.10.2016 թվականի գրությամբ հայտնել է, որ ըստ ստացված տեղեկությունների ք. Վանաձոր, Լազյան 43 Ա շենքի թիվ 15 կոդաբերատիվ բնակարանի բնակիչներ Լևոն Գևորգի Մանասյանը և Սիրանուշ Կնյազի Մանասյանը 1988-1992թթ. ստորագրել և Վանաձորի նոտարական գրասենյակում վավերացրել են կտակ, որով իրենց ամբողջ գույքը կտակել են որդուն՝ Էդուարդ Լևոնի Մանասյանին: Ինչդեռ է տալ կտակի վավերացված պատճենը՝ ժառանգության գործընթացը սկսելու համար **(հատոր 1-ին, գ.թ. 55):**

5) 17.10.2016 թվականին Վանաձոր նոտարական տարածքի նոտար Անժելա Կիրակոսյանի կողմից վավերացվել է 22.06.1995 թվականի կտակի պատճենի իսկությունն իսկականի հետ՝ նշելով, որ դրանում չեն հայտնաբերվել ուղղումներ, ավելացումներ, ջնջված բառեր և այլ չճանոթագրված ուղղումներ կամ այլ ուրիշ առանձնահատկություններ **(հատոր 1-ին, գ.թ. 39-40):**

6) 22.06.1995 թվականի կտակի պատճենի համաձայն՝ Լևոն Գևորգի Մանասյանն արել է հետևյալ կարգադրությունը. «Ինձ պատկանող ամբողջ գույքը, որտեղ էլ որ այն գտնվի, ինչից էլ որ այն կայանա, որն առ իմ մահվան օրը պատկանելիս է եղել ինձ, կտակում եմ քաղ. Էդուարդ Լևոնի Մանասյանին»: Նշված պատճենին կից առկա է նոտարի կողմից տրված փաստաթուղթը, ըստ որի՝ նոտարը վավերացրել է հիշյալ փաստաթղթի պատճենի իսկությունը բնօրինակի հետ, ինչը գրանցվել է սեղանամատյանում թիվ 3269 համարի տակ **(հատոր 1-ին, գ.թ. 53-54):**

7) «Վանաձոր» նոտարական տարածքի նոտար Ա. Կիրակոսյանի թիվ 386 գրությամբ ի պատասխան Էդուարդ Մանասյանի 14.12.2016 թվականի դիմումի հայտնվել է, որ հանգուցյալ Լևոն Գևորգի Մանասյանի մահից հետո ժառանգության իրավունքի վկայագիր չի կարող տրվել՝ նկատի ունենալով, որ օրենքով սահմանված 6-ամսյա ժամկետում նոտարական գրասենյակ չեն ներկայացել և ըստ կտակի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ դիմում չեն տվել **(հատոր 1-ին, գ.թ. 73):**

8) Համաձայն «Վանաձոր» նոտարական տարածքի նոտար Թ. Մարտիրոսյանի 16.08.2017 թվականի թիվ 461 գրության՝ փաստաբան Ադելինա Հակոբյանին հայտնվել է, որ հանգուցյալ Լևոն Մանասյանի մահից հետո նրա ժառանգական գույքն ընդունելու վերաբերյալ «Վանաձոր» նոտարական տարածք դիմումներ չեն ներկայացվել, ժառանգական գործ չի կազմվել **(հատոր 1-ին, գ.թ. 57):**

9) Վկա Միմալոն Տեր-Բայանը ցուցմունք է տվել այն մասին, որ ճանաչում է դիմումատուին: Հայտնել է, որ ինքը տեղյակ է եղել, որ դիմողի անունով կտակ է գրվել, իսկ այդ մասին իմացել է իր մորից մի քանի տարի առաջ, սակայն, հաշվի առնելով, որ Էդուարդ Մանասյանը վատառողջ է եղել և նրա հետ խոսակցություն չի եղել՝ ինքն այդ մասին դիմողին չի տեղեկացրել: 2016 թվականի մայիս ամսին դիմողի հետ խոսակցության ժամանակ ինքն ասել է, որ նրա հայրն իր անունով կտակ է գրել, որից դիմողը շատ է զարմացել: Վկան պնդել է, որ 2016 թվականի մայիսին ինքն է կտակի մասին տեղյակ պահել դիմողին, որից հետո դիմողը լիազորագիր է ուղարկել իր հորեղբոր կնոջը՝ Լարիսա Գևորգյանին, որպեսզի վերջինս ճշտի կտակի առկայության հանգամանքը:

Վկա Լարիսա Գևորգյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ճանաչում է դիմումատուին, ով իր ամուսնու եղբոր որդին է: Հայտնել է, որ դիմողի հայրը կտակ էր գրել դիմողի անունով, սակայն դիմողը չի իմացել կտակի առկայության մասին, իսկ իմանալուց անմիջապես հետո ասել է իրեն, որպեսզի ինքը գնա նոտարական գրասենյակ և ճշտի կտակ կա, թե՛ ոչ: Ինքը դիմել է նոտարական գրասենյակ և Արուսյակ Ազարյանն իրեն բանավոր ասել է, որ կտակ չկա: Միայն փաստաբանի կողմից դիմելուց հետո է պարզվել, որ առկա է կտակ **(հիմք՝ դատական նիստերի արձանագրություն, հատոր 2-րդ, գ.թ. 6-11):**

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արճանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ նույն հոդվածի 2-րդ

մասի 2-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքարկվող դատական ակտում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի մեկնաբանությունը հակասում է 06.07.2007 թվականի թիվ 3-753 (ՎԴ) և 10.10.2007 թիվ 3-1345 (ՎԴ) քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

Միաժամանակ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի իրավանորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

կրակի գոյության մասին տեղյակ չլինելու պատճառով ժառանգության ընդունման ժամկետի բացթողնումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածում որպես ժամկետի վերականգնման հիմք չնախատեսելը կարող է արդյոք որակվել իրավունքի բաց և հարթահարվել իրավունքի անալոգիայի (praeter legem) սկզբունքի կիրառմանը՝ վերահասարակելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումը.

Նշված իրավական հարցադրմանը պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ իրավանորմում իրավունքի բացը բնութագրող հատկանիշներին և դրանց հաղթահարման իրավական մեխանիզմներին:

Իրավանորմում իրավունքի բացը դրսևորվում է՝

1. իրավանորմի հիփոթեզում այն նվազագույն վավերապայմանների բացակայությամբ, որոնք անհրաժեշտ են տվյալ հարաբերության նկատմամբ դիսպոզիցիայում ամրագրված կանոնը կիրառելու համար,
2. իրավանորմի դիսպոզիցիայում ամրագրված այն կանոնակարգման բացակայությամբ, որը թույլ կտա իրավական կարգավորման տակ ներառել տվյալ հասարակական հարաբերությունը,
3. իրավանորմի սանկցիայի և դրա կիրառման դրույթների ոչ բավարար ամրագրմամբ:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավանորմի բացն այն իրավիճակն է, երբ կոնկրետ իրավանորմի տարրերի կառուցվածքային կազմը հնարավորություն չի տալիս իրավական կարգավորման ենթարկել այն հասարակական հարաբերությունը, որը բովանդակային առումով գտնվում է որևէ իրավական ինստիտուտի կարգավորման տիրույթում: Այդ առումով հարկ է տարանջատել այն դեպքերը, երբ օրենսդրի դիտավորությունը եղել է տվյալ հարաբերությունը դուրս թողնել իրավական կարգավորման ոլորտից և այդ առումով նման հարաբերությանը չտալ իրավահարաբերության որակում, և երբ տվյալ հարաբերությունը դուրս է մնացել իրավական կարգավորումից՝ օրենսդրական անկատարության հետևանքով:

Մասնավորապես՝ օրենսդրական անկատարության դրսևորում է հանդիսանում այն իրավիճակը, երբ օրենքով նախատեսված իրավաբանական փաստի վրա հասնելու արդյունքում, օրենքի ուժով իրավունքի սուբյեկտը ձեռք է բերում կոնկրետ իրավական կարգավիճակ, սակայն բացակայում են այդ կարգավիճակով պայմանավորված սուբյեկտիվ իրավունքների իրականացման իրավական մեխանիզմները: Նման պայմաններում, իրավունքի սուբյեկտը, անկախ օրենքով նախատեսված կարգավիճակ ձեռք բերած լինելու հանգամանքից, իրավական հնարավորություն չի ստանում ներառվելու համապատասխան իրավահարաբերության մեջ և օգտվելու այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմող իրավական արդյունավետ միջոցների կիրառումից:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածը, սահմանելով իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից օգտվելու անձի իրավունքը, ազդարարում է, որ յուրաքանչյուր ոք, ում կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության

արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) արձանագրել է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական օրենսդրության մեջ իրավական պաշտպանության այնպիսի միջոցի առկայությունը, որը հնարավոր է դարձնում Կոնվենցիայով նախատեսված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը (*լե՛ւ Rotaru c. Roumanie [GC], 2000, § 67*):

Մեկ այլ որոշմամբ Եվրոպական դատարանը, անդրադառնալով իրավունքի արդյունավետ պաշտպանության հիմնախնդրին, մասնավորապես նշել է, որ իրավունքի պաշտպանության միջոցը համարվում է «արդյունավետ», եթե այն հնարավորություն է տալիս կանխել խախտումը, դադարեցնել դրա շարունակությունը, կամ ստանալ համապատասխան փոխհատուցում արդեն իսկ տեղի ունեցած խախտման դեպքում (*լե՛ւ Kudka c. Pologne [GC], 2000, § 158; Ramirez Sanchez c. France [GC], 2006, § 160*):

Նշված կոնվենցիոն պահանջից ակնհայտ է դառնում, որ պետության պոզիտիվ պարտականություններից է հանդիսանում իրավունքի սուբյեկտի համար նախատեսել այնպիսի իրավական մեխանիզմներ, որոնք թույլ կտան նրան, իր կարգավիճակին համապատասխան, իրացնել իրավունքի արդյունավետ միջոցներ:

Հիշատակվածն ամիջականորեն վերաբերում է նաև այն դեպքերին, երբ իրավունքի սուբյեկտին, օրենսդրի կողմից վերապահվելով որոշակի իրավական վիճակ, միաժամանակ չեն ապահովվում նրա սուբյեկտիվ իրավունքների իրականացման համար անհրաժեշտ և բավարար իրավական մեխանիզմները:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավանորմի բացը հանդիսանում է նորմատիվային բնույթ կրող այնպիսի թերություն, որի առկայությունը խաթարում է *սուբյեկտի իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության* նորմ-սկզբունքի պահանջը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդված): Ուստի, պետության պոզիտիվ պարտականության մեջ է մտնում իրավունքի բացի հաղթահարումը: Այդ առումով օրենսդիրը նախատեսել է օրենսդրության անկատարության վերացման այնպիսի ինքնուրույն իրավական մեխանիզմ, ինչպիսին է իրավանորմի բացի հաղթահարումը, որը կարող է իրականացվել իրավակիրառ մարմնի կողմից՝ իրավանորմի բաց պարունակող կոնկրետ իրավանորմի մեկնաբանության միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

Նշված իրավանորմից ակնհայտ է դառնում, որ օրենսդիրն իրավական կարգավորման տիրույթ է ներառում քաղաքացիական իրավունքի այն սուբյեկտներին, որոնք ժառանգական իրավահարաբերությունում ունեն ժառանգի կարգավիճակ: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածը վերաբերում է այն անձանց, որոնք օրենսդրի կողմից որակվում են որպես ժառանգներ: Այդ առումով գործնական կարևորություն ունի այն հարցի պարզումը, թե օրենսդիրը որ դեպքերում և պայմաններում է անձին որակում ժառանգ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածը, որում ամրագրված են ժառանգության հիմքերը, սահմանում է, որ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի: Ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանով տնօրինված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը:

Նույն օրենսգրքի 1190-րդ հոդվածն ազդարարում է, որ ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգներ կարող են լինել ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո

կենդանի ծնված քաղաքացիները: Ըստ կտակի ժառանգներ կարող են լինել ժառանգության բացման օրը գոյություն ունեցող իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները, ինչպես նաև օտարերկրյա պետություններն ու միջազգային կազմակերպությունները:

Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ ժառանգի կարգավիճակ ձեռք բերելու նպատակով օրենսդիրը ժառանգի համար չի նախատեսել այդ կարգավիճակի ձեռք բերման որևէ գործընթաց: Անձը ժառանգ է դառնում անկախ որևէ գործողություն կատարելու հանգամանքից, օրենքի հիման վրա, ժառանգության բացման փաստի ուժով, երբ ժառանգատուն իր գույքը կամ դրա մի մասը, կտակի միակողմանի գործարքի ուժով, ժառանգում է վերջինիս, իսկ դրա բացակայության դեպքում, ժառանգի կարգավիճակ են ձեռք բերում ժառանգատուի ազգականները՝ ըստ ՀՀ օրենսգրքի 1216-1219 հոդվածներով սահմանված հերթականության: Փաստորեն, ըստ օրենքի ժառանգման դեպքում օրենսդիրը ժառանգատու-ժառանգ հարաբերության հիմքում դրել է նրանց միջև գոյություն ունեցող ազգակցական կապը: Դրան համապատասխան, ըստ օրենքի ժառանգման հրավիրված անձի համար, ժառանգության բացված լինելու փաստին տեղյակ լինելու դեպքում, օբյեկտիվ հնարավորություն է ստեղծվում իրազեկվել ժառանգի կարգավիճակ ձեռք բերած լինելու մասին և դրան համապատասխան իրացնելու ժառանգի համար օրենքով նախատեսված իր սուբյեկտիվ իրավունքներն ու պարտականությունները: Այլ կերպ ասած, ներառվելու ժառանգության ընդունման կամ ժառանգությունից հրաժարվելու գործընթացներին:

Իրավիճակն այլ է ըստ կտակի ժառանգման դեպքում, երբ ժառանգի կարգավիճակի ձեռք բերման համար ազգակցական կապը որոշիչ նշանակություն չի ստանում: Նման պայմաններում, մինչև ժառանգության ընդունման գործընթացին ներգրավվելը, անձը պետք է իրազեկված լինի կտակի ուժով ժառանգության հրավիրված ժառանգի կարգավիճակ ձեռք բերած լինելու մասին: Առավել ևս, երբ կտակը հանդիսանում է միակողմանի գործարք և դրա հրապարակայնությունը կամ կտակի գոյության մասին ժառանգին իրազեկելն իրավահարաբերության ծագման պահին օրենքով նախատեսված չէր:

Տվյալ դեպքում, իր կարգավիճակի մասին տեղյակ չլինելու պայմաններում, անձն օբյեկտիվորեն դուրս է մնում ժառանգական իրավահարաբերության մեջ ներառվելու հնարավորությունից: Այդ խոչընդոտը կվերանա այն պահից, երբ նա կիրազեկվի իր վերաբերյալ ժառանգատուի կողմից թողած կտակի գոյության մասին: Այսինքն՝ ժառանգի կարգավիճակի ձեռք բերումը կտակի դեպքում ոչ միայն պայմանավորված է ժառանգության բացման և կտակի գոյության փաստով, **այլև կտակի գոյության մասին իրազեկված լինելու հանգամանքով:** Ուստի, կտակի ուժով ժառանգի կարգավիճակի ստանձնումը դեռևս բավարար չէ այդ կարգավիճակով պայմանավորված իրավունքների իրացման համար, քանի դեռ անձն իրազեկված չէ այդ կարգավիճակը ձեռք բերած լինելու մասին: Այսինքն՝ այն փաստական կազմը, որն անձի համար օբյեկտիվորեն իրավական հնարավորություն կստեղծի կտակի ուժով մտնել ժառանգական իրավահարաբերությունների մեջ, պայմանավորված կլինի հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայությամբ.

1. ժառանգության բացում,
2. ժառանգության բացման մասին իրազեկվածություն,
3. կտակի գոյություն,
4. կտակի գոյության մասին իրազեկվածություն:

Քննարկվող պարագայում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածը, նախատեսելով ժառանգության ընդունման ժամկետի բաց թողնման պատճառները հարգելի համարելու մեկ հիմք՝ ժառանգության բացման մասին ժառանգի անիրազեկությունը, փաստորեն, ըստ օրենքի ժառանգության հրավիրված ժառանգների մեջ ստեղծում է արտոնյալ վիճակ: Նշվածը հիմնավորվում է նրանով, որ եթե ըստ օրենքի ժառանգական իրավահարաբերությունների մեջ մտնելու համար բավարար է միայն ժառանգության բացման մասին տեղեկացված լինելը, ապա ըստ կտակի ժառանգության հրավիրված անձի համար այդ փաստական հանգամանքը բավարար չէ, և նա պետք է նաև իրազեկված լինի իր վերաբերյալ կտակի գոյության մասին:

Նման իրավակարգավորման պայմաններում խախտվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին նորմ-սկզբունքը, որի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության վրա, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետն ըստ օրենքի ժառանգների համար ըստ կտակի ժառանգների համեմատությամբ ստեղծում է անհավասար պայմաններ: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ նորմը սահմանում է կամքի ինքնավարության սկզբունքը, ինչը տվյալ դեպքում հանդիսանում է կտակարարի կամքի ազատ դրսևորման պահանջը՝ միակողմանի գործարքի ուժով տնօրինելու իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը, իր հայեցողությամբ որոշած անձին, իր մահվան դեպքում, համապարփակ իրավահաջորդությամբ փոխանցելու կամահայտության մասին և վերոգրյալ իրավակարգավորման պայմաններում չի ապահովվում ժառանգատուի ինքնավար կամքի իրացումը:

Վերոգրյալ երկու նորմ-սկզբունքները հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող պարագայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետն առկա խնդրագրությամբ խաթարում է՝

1. ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգության հրավիրման ենթակա անձանց՝ ժառանգական իրավահարաբերություններում հավասար պայմանների ապահովումը,

2. կտակարարի կողմից իր գույքի տնօրինման ազատ կամքի և կամահայտության հետագա իրացումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է կտակի մասին չիմանալը ժառանգությունն ընդունելու օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի գնահատելու իրավական խնդրին՝ արձանագրելով, որ ժառանգության բացման պահից առաջացել է իրավահարաբերություն, որի բովանդակության տարրերից մեկը եղել է ժառանգի սուբյեկտիվ իրավունքը ժառանգելու ժառանգատուի ունեցվածքը: Եվ այդ սուբյեկտիվ իրավունքի դադարման փաստը եղել է ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված ժամկետի ավարտը: Հետևաբար, ժառանգն իրավունք ունի դիմելու դատարան ժառանգությունն ընդունած համարվելու պահանջով՝ հիմք ընդունելով ժառանգության համար նախատեսված ժամկետի բացթողման հարգելի պատճառները, քանի որ նրա սուբյեկտիվ իրավունքը գոյություն է ունեցել, սակայն դրա մասին նա օբյեկտիվ պատճառներով չի իմացել (*լրեն Աթանես Սրեփանյանն ընդդեմ Ռազմիկ Սրեփանյանի, երրորդ անձինք Գառնիի գյուղապետարան և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմյանի տարածքային պորտաբաժանման թիվ 3-753 (ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետի բաց թողնելու պատճառը պետք է հիմնավոր լինի: Այն կարող է դատարանի կողմից հարգելի ճանաչվել, եթե ժառանգության բացման, **կտակի առկայության մասին ժառանգը տեղյակ չի եղել**, կամ ժառանգության ընդունման համար օրենքով սահմանված ժամկետը բաց է թողել այլ հարգելի պատճառներով (ժառանգի անչափահաս լինելը, ժառանգի ծանր հիվանդությունը, նրա անօգնական վիճակում գտնվելը, անգրագիտությունը, իրավաբանական գործողություններ կատարելու հնարավորությունը բացառող կամ սահմանափակող պայմաններում երկարատև գործուղման մեջ գտնվելը և այլն) (*լրեն Սամսոն Շահվերդյանն ընդդեմ Ջոյա Գրիգորյանի, Մարգարիտա և Սունաս Շահվերդյանների թիվ 3-1345 (ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի հիփոթեզում առկա նորմատիվային բացը պետք է լրացնել այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ ըստ կտակի ժառանգման դեպքում ժառանգության ընդունման բացթողման ժամկետի համար հարգելի պատճառ նախատեսելով *կրակի գոյության մասին իրազեկված չլինելու իրավաբանական փաստը*:

Նորմատիվային այդ բացը հաղթահարելով՝ իրավական հնարավորություն կստեղծվի ապահովելու նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածում ամրագրված մյուս սկզբունքը, որը որպես հրամայական պահանջ ազդարարում է **քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության պահանջը**:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ իրավունքի բացը *praeter legem* կանոնի կիրառմամբ վերացնելը պայմանավորված է ինչպես ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածում ամրագրված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու վճարելի դատարանի առաքելությամբ և այդ առումով իրավունքի զարգացումն ապահովելու օրենսդրական կարգավորումով, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածում ամրագրված պետության պոզիտիվ պարտականության, այն է՝ **«Ժառանգելու իրավունքը երաշխավորում է», սկզբունքի ապահովմամբ (ընեն Մանուշ Սկրյոչյանն ընդդեմ Տիգրան Բառապրյանի, Սուսաննա և Անահիտ Զոհրանյանների թիվ ԼԳ/0462/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 19.01.2022 թվականի որոշումը)**:

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ժառանգատու Լևոն Գևորգի Մանասյանը մահացել է 07.05.2004 թվականին, և որի վերաբերյալ մահվան ակտերի գրանցման գրքում կատարվել է թիվ 400 գրառումը, ինչպես նաև ՔԿԱԳ Տատիշևի շրջանի բաժնի կողմից 22.12.2011 թվականին տրված թիվ II-ՊԿ №758576 մահվան վկայականը: 22.06.1995 թվականի կտակի պատճենի համաձայն՝ Լևոն Մանասյանն իրեն պատկանող ամբողջ գույքը, որտեղ էլ որ այն գտնվի, ինչից էլ որ այն կայանա, որն առ իր մահվան օրը պատկանելիս է եղել իրեն, կտակել է Էդուարդ Լևոնի Մանասյանին: Նշված պատճենին կից առկա է նոտարի կողմից տրված փաստաթուղթը, ըստ որի՝ նոտարը վավերացրել է հիշյալ փաստաթղթի պատճենի իսկությունը բնօրինակի հետ, ինչը գրանցվել է սեղանամատյանում թիվ 3269 համարի տակ:

«Վանաձոր» նոտարական տարածքի նոտար Ա. Կիրակոսյանի թիվ 386 գրությամբ, ի պատասխան Էդուարդ Մանասյանի 14.12.2016 թվականի դիմումի, հայտնվել է, որ Լևոն Մանասյանի մահից հետո ժառանգության իրավունքի վկայագիր չի կարող տրվել՝ նկատի ունենալով, որ օրենքով սահմանված 6-ամսյա ժամկետում նոտարական գրասենյակ չեն ներկայացրել և ըստ կտակի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ դիմում չի տրվել:

Համաձայն «Վանաձոր» նոտարական տարածքի նոտար Թ. Մարտիրոսյանի 16.08.2017 թվականի թիվ 461 գրության՝ փաստաբան Ադելինա Հակոբյանին հայտնվել է, որ Լևոն Մանասյանի մահից հետո նրա ժառանգական գույքն ընդունելու վերաբերյալ «Վանաձոր» նոտարական տարածք դիմումներ չեն ներկայացվել, ժառանգական գործ չի կազմվել:

Վկա Սիմավոն Տեր-Բալյանը պնդել է, որ 2016 թվականի մայիսին ինքն է կտակի մասին տեղյակ պահել դիմողին, որից հետո դիմողը լիազորագիր է ուղարկել Լարիսա Գևորգյանին, որպեսզի վերջինս ճշտի կտակի առկայության հանգամանքը:

Վկա Լարիսա Գևորգյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ճանաչում է դիմումատուին, ով իր ամուսնու եղբոր որդին է: Հայտնել է, որ դիմողի հայրը կտակ էր գրել դիմողի անունով, սակայն դիմողը չի իմացել կտակի առկայության մասին, իսկ իմանալուց անմիջապես հետո դիմել է նոտարական գրասենյակ և Արուսյակ Ազարյանը բանավոր պատասխանել է, որ կտակ չկա: Միայն փաստաբանի կողմից դիմելուց հետո է պարզվել կտակի առկայության մասին:

Դատարանը, մերժելով Էդուարդ Մանասյանի դիմումը, նշել է, որ լիազորագիրը տալուց հետո՝ մինչև կտակի հայտնաբերումը, բավարար ժամանակ է եղել կտակի հայտնաբերմանն ուղղված այլ գործողությունների իրականացման համար, ուստի, դիմումատուի կողմից լիազորված անձը կարող էր չսահմանափակվել միայն նոտարի օգնականին բանավոր հարցում կատարելով և ունենալով բավարար ժամանակ՝ կարող էր կտակը ստանալու համար ողջամիտ գործողություններ կատարել՝ չխախտելով օրենքով նախատեսված

Ժամանակահատվածը, որի արդյունքում բացառված չէ նաև, որ դիմումատուն հնարավորություն կունենար ավելի շուտ դիմելու դատարան: Դատարանը նաև նշել է, որ սույն գործով ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառը կտակի մասին չիմանալն է: Ոստի, կտակի մասին տեղեկանալուց հետո ինչպես դիմումատուն, այնպես էլ նրա կողմից լիազորված անձն օրենքով նախատեսված բավարար և ողջամիտ ժամկետ են ունեցել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառը վերացվելուց հետո դիմելու դատարան: Հետևաբար, Դատարանը գտել է, որ դիմումը ենթակա չէ բավարարման:

Վերաքննիչ դատարանը, անվտոմիջ թողնելով Դատարանի վճիռը, արձանագրել է, որ դիմումատուն կտակի մասին տեղեկացել է 2016 թվականի մայիսին, և իր փոխարեն կտակի ընդունմանն ուղղված գործողություններ կատարելու համար լիազորագիր է ուղարկել Լարիսա Գևորգյանին, սակայն դատարան է դիմել միայն 2017 թվականի հունվարին, ինչից էլ հետևում է, որ ժամկետը բաց թողնելու պատճառները վերանալուց հետո վեց ամսվա ընթացքում դիմումատուն չի դիմել դատարան: Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել բողոքաբերի այն փաստարկը, որ դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետի սկիզբը պետք է համարվի կտակի հայտնաբերման, այլ ոչ դրա առկայության մասին տեղեկանալու օրը, և նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը վեցամսյա ժամկետի սկիզբ է համարել կտակի առկայության մասին իմանալը, և որևէ կերպ այդ ժամկետը չի պայմանավորել կտակի հայտնաբերման պահով:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումներն ու պատճառաբանությունները՝ նշելով, որ ըստ կտակի ժառանգության ընդունմանն ուղղված ակտիվ և գիտակցված գործողություն պետք է դիտարկել միայն օրենքով սահմանված ժամկետում նոտարական գրասենյակ դիմելու փաստը, մինչդեռ սույն գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ 2016 թվականի մայիս ամսին կտակի գոյության մասին տեղեկացված Էդուարդ Մանասյանը ըստ կտակի ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետում ձեռնարկել է գիտակցված և ակտիվ գործողություններ, այն է՝ դիմել է նոտարական գրասենյակ կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված հիմքով և ընթացակարգով օգտվել է ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքից:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը:

Վերաքննիչ դատարանն Էդուարդ Մանասյանի վերաքննիչ բողոքը՝ ըստ կտակի ժառանգության ընդունման համար նախատեսված ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու մերժումը պայմանավորել է կտակի մասին 2016 թվականին Էդուարդ Մանասյանի տեղեկացված լինելու, սակայն 2017 թվականի հունվարին միայն դատարան դիմելու հանգամանքով: Այսինքն, ըստ Վերաքննիչ դատարանի տրամաբանության, այն փաստը, որ Էդուարդ Մանասյանն իմացել է ժառանգատուի՝ Լևոն Մանասյանի մահվան, կտակի առկայության մասին, արդեն իսկ հիմք է արձանագրելու, որ Էդուարդ Մանասյանն իրագրված է եղել նաև կտակի առկայության մասին:

Վճռաբեկ դատարանը, սակայն, գտնում է, որ մինչև ժառանգության ընդունման գործընթացին ներգրավվելը՝ անձը պետք է *իրագրելիված լինի կրակի ուժով* ժառանգության իրավիրված *ժառանգի կարգավիճակ* ձեռք բերված լինելու, ինչպես նաև կոնկրետ կտակի առկայության մասին:

Տվյալ դեպքում, ինչպես նշվեց, Վերաքննիչ դատարանը Էդուարդ Մանասյանի կողմից ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելը մերժել է հաշվի չառնելով այն հանգամանքը, որ կտակի մասին իմանալուց և կտակն ստանալուց հետո դիմումատուն վեց ամսվա ընթացքում դիմել է դատարան: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի՝ վերը նշված մեկնաբանության արդյունքում ակնհայտ է դառնում, որ Վերաքննիչ դատարանի

կողմից պետք է քննարկման առարկա դառնա, թե Էդուարդ Մանասյանը ե՞րբ է տեղեկացել կտակի գոյության մասին և արդյոք կտակի առկայության մասին տեղեկանալուց հետո պահպանել է ժամկետի վերականգնման համար դատարան դիմելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետով պայմանավորված վեցամսյա ժամկետը: Նշված հանգամանքները պարզելուց հետո միայն Վերաքննիչ դատարանը կկարողանար հանգել համապատասխան եզրակացության՝ ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու կամ մերժելու տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ նման պայմաններում հիմնավոր են նաև բողոք բերած անձի փաստարկները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետին Վերաքննիչ դատարանի կողմից տրված մեկնաբանությունը՝ կտակի մասին չիմանալը ժառանգությունն ընդունելու օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի գնահատելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 06.07.2007 թվականի թիվ 3-753 (ՎԴ) և 10.10.2007 թվականի թիվ 3-1345 (ՎԴ) քաղաքացիական գործերով նույն նորմին տրված մեկնաբանությանը հակասելու վերաբերյալ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հատուկ վարույթներով, ինչպես նաև սույն օրենսգրքի 44-52-րդ գլուխներով նախատեսված դիմումների քննության հետ կապված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է դիմողների վրա:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ելթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.06.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/0392/02/20 2021թ.
ԵԴ/0392/02/20
Լ. Գրիգորյան
Ա. Պետրոսյան
Կ. Չիլինգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող
զեկուցող

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՄԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի հոկտեմբերի 22-ին
գրավոր ընթացակարգով քննելով «Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.03.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գևորգ Կարապետյանի ընդդեմ Ընկերության՝ 11.11.2013 թվականին կնքված և 09.11.2016 թվականին թիվ A13P030-2 համաձայնագրով փոփոխված աշխատանքային պայմանագիրն անորոշ ժամկետով կնքված համարելու, նախկին պաշտոնում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար սկսած 12.11.2019 թվականից մինչև հարկադիր պարապուրդի վերջին օրը մինչին աշխատավարձը բռնագանձելու, 602.272,5 ՀՀ դրամ գումար որպես տուժանք հաշվեզրված, չվճարված աշխատավարձի կետանցված յուրաքանչյուր օրվա համար 11.06.2020 թվականի դրությամբ բռնագանձելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Գևորգ Կարապետյանը պահանջել է անվավեր ճանաչել տնօրենի 11.11.2019 թվականի թիվ 1108 հրամանը, վերականգնել իրեն նախկին աշխատանքում՝ վերստուգողի պաշտոնում և բռնագանձել հարկադիր պարապուրդի գումարը:

Գևորգ Կարապետյանի ներկայացուցիչը 11.06.2020 թվականի նախնական դատական նիստում ներկայացրել է հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին միջնորդություն, որով խնդրել է փոփոխել հայցի առարկան, այն է՝ անորոշ ժամկետով կնքված համարել 11.11.2013 թվականին կնքված և 09.11.2016 թվականին թիվ A13P030-2 համաձայնագրով փոփոխված աշխատանքային պայմանագիրը, բռնագանձել Գևորգ Կարապետյանի միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 12.11.2019 թվականից մինչև հարկադիր պարապուրդի վերջին օրը, բռնագանձել 602.272,5 ՀՀ դրամ որպես տուժանք հաշվեգրված չվճարված աշխատավարձի կետանցված յուրաքանչյուր օրվա համար սույն միջնորդությունը Դատարան մուտք անելու օրվա դրությամբ, վերականգնել նախկին պաշտոնում, հաշվեգրել և բռնագանձել տուժանք չվճարված աշխատավարձի կետանցված յուրաքանչյուր օրվա համար սույն միջնորդությունը Դատարան մուտք անելու օրվանից մինչև դատական ակտի կատարման օրը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Լ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 02.11.2020 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.03.2021 թվականի որոշմամբ Գևորգ Կարապետյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 02.11.2020 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Հայկ Մալխասյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասը, կիրառել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետը, որը չպետք է կիրառեր, և չի կիրառել նույն օրենքի 67-րդ հոդվածի 3-րդ մասը, 88-րդ հոդվածի 2-րդ մասն ու 3-րդ մասի «գ» և «ժ» կետերը, որոնք պետք է կիրառեր, ինչպես նաև խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետը, իր որոշման հիմքում դրել է այն եզրակացությունը, որ հայցվորին աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցելու իրավասությունը վերապահված է գործատուի բաժնետերերի ընդհանուր ժողովին, և այնուհետ եզրակացրել է, որ ընդհանուր ժողովն այդ իրավասությունը չի իրագործել: Մինչդեռ, սույն գործով հայցվորի հետ աշխատանքային պայմանագիրը չի լուծվել վաղաժամկետ, այլ լուծվել է դրա ժամկետը լրանալու հիմքով, ուստի և վկայակոչված իրավանորմը վերաբերելի չէ վերստուգողի հետ աշխատանքային պայմանագրի լուծմանը՝ դրա ժամկետը լրանալու հիմքով: Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը բաժնետերերի ընդհանուր ժողովին վերապահել է մի լիազորություն, որը ժողովին որևէ նորմատիվ իրավական ակտով վերապահված չէ:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, 88-րդ հոդվածի 2-րդ մասի, նույն հոդվածի 3-րդ մասի «գ» և «ժ» կետերի պահանջները, հանգել է սխալ հետևության այն մասին, որ եթե բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահը չի կարող համարվել վերստուգողի գործատու, ապա ընկերության տնօրենը վերստուգողի հետ հարաբերություններում առավել ևս չի կարող համարվել վերջինիս գործատու: Մինչդեռ, գործատուն վերստուգողի կամ ցանկացած այլ աշխատողի համար իրավասություններ ունի օժտված իրավաբանական անձն է, և ոչ այդ անձի այս կամ այն մարմինը:

Այլ անձին որպես վերստուգող ընտրելը նախկին վերստուգողի հետ իրավահարաբերությունները չշարունակելուն ուղղված հստակ կամահայտնություն է, ինչը ինքնին բավարար է որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը ժամկետը լրանալու հիմքով լուծելու համար, իսկ այդ կամահայտնության մասին ծանուցելու մասով որևէ հատուկ ընթացակարգ սահմանված չէ: Տվյալ պարագայում բաժնետերերի ընդհանուր ժողովի 13.09.2019 թվականի թիվ 03 արձանագրությամբ ընդունված որոշմամբ հանձնարարվել և լիազորվել է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Դավիթ Նահապետյանին՝ ծանուցագիր ուղարկելու Ընկերության վերստուգող Գևորգ Կարապետյանին՝ պաշտոնավարման ժամկետը լրանալու պահից վերջինիս հետ աշխատանքային հարաբերությունները դադարելու վերաբերյալ, որպիսի փաստն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ժամկետն ավարտվելու հիմքով որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի լուծման իրավասությունը, ինչպես նաև Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը (բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և կանոնադրությամբ ժողովի և խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի ու 3-րդ մասի «ժ» և «գ» կետերի համաձայն պատկանում են տնօրենի իրավասությանը: Ուստի, Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է այն փաստը, որ գործատուն, ի դեմս նման իրավասություն ունեցող տնօրենի, աշխատողին թույլ չի տվել շարունակելու աշխատանքը և հայցվորին հայտնել է աշխատանքային հարաբերությունները չշարունակելու իր կամքը: Աշխատողը չի շարունակել աշխատանքը, իսկ գործատուն չի ընդունել նրա աշխատանքի արդյունքը:

Տվյալ դեպքում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասը հանդիսանում է հատուկ նորմ, որն ամեն դեպքում ենթակա է կիրառման և բացառում է վերստուգողի հետ աշխատանքային պայմանագիրն անորոշ ժամկետով կնքված համարելը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 05.03.2021 թվականի որոշումը և ամբողջությամբ օրինական ուժ տալ Դատարանի 02.11.2020 թվականի վճռին, կամ գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 11.11.2013 թվականին Ընկերության և Գևորգ Կարապետյանի միջև կնքվել է թիվ A13P030 աշխատանքային պայմանագիրը, որի համաձայն՝ գործատուն աշխատողին ընդունել է աշխատանքի գործատուի վերստուգողի ժամանակավոր պաշտոնակատարի, իսկ ՀՀ Կենտրոնական բանկում որպես վերստուգող գրանցվելու պահից՝ վերստուգողի պաշտոնում (**հատոր 1-ին, գ.թ. 29-33**).

2) Ընկերության բաժնետերերի 09.11.2016 թվականի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 04 արձանագրության համաձայն՝ 11.11.2016 թվականից Գևորգ Կարապետյանը վերանշանակվել է Ընկերության վերստուգողի պաշտոնում՝ պաշտոնավարման երեք տարի ժամկետով (**հատոր 1-ին, գ.թ. 36-37**).

3) Ընկերության բաժնետերերի 13.09.2019 թվականի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 03 արձանագրությունից կատարված քաղվածքի 3.1 կետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշել է Ընկերության վերստուգող Գ. Կարապետյանի պաշտոնավարման ժամկետը լրանալու պահից՝ 12.11.2019 թվականից վերստուգողի պաշտոնում նշանակել Վանիկ Իվանյանին՝ պաշտոնավարման 3 (երեք) տարի ժամկետով, (...): Նույն քաղվածքի 3.5 կետի համաձայն՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշել է հանձնարարել և լիազորել Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Դավիթ Նահապետյանին Ընկերության վերստուգող Գևորգ Կարապետյանին ուղարկելու ծանուցագիր՝ պաշտոնավարման ժամկետը լրանալու պահից վերջինիս հետ աշխատանքային հարաբերությունները դադարելու վերաբերյալ (**հատոր 2-րդ, գ.թ. 60**).

4) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահ Դավիթ Նահապետյանի կողմից 23.09.2019 թվականին Գևորգ Կարապետյանին ուղղված լիազորությունների դադարեցման վերաբերյալ ծանուցման համաձայն՝ վերջինիս հայտնվել է հետևյալի մասին. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի 09.11.2016 թվականի թիվ 04 նիստի արձանագրությամբ որոշվել էր 11.11.2016 Գևորգ Կարապետյանին վերանշանակել վերստուգողի պաշտոնում՝ պաշտոնավարման 3 տարի ժամկետով, և նշված արձանագրության հիման վրա Գևորգ Կարապետյանի և Ընկերության միջև 09.11.2016 թվականին կնքվել է համաձայնագիր՝ կնքված աշխատանքային պայմանագրում փոփոխություն կատարելու մասին, որով նրա պաշտոնավարման ժամկետը սահմանվել էր «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասի նորմերի և Ընկերության կանոնադրության 12.1 կետի դրույթների համաձայն: Գևորգ Կարապետյանի՝ որպես Ընկերության վերստուգողի պաշտոնավարման ժամկետը լրանում է 12.11.2019 թվականին, և նրա վերջին աշխատանքային օրն է 11.11.2019 թվականը:

Միաժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունում առկա չէ վերստուգողի աշխատանքի կարգ և 2019 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան աշխատանքային ծրագիր՝ Գևորգ Կարապետյանին առաջարկվել է մինչև նրա պաշտոնավարման ժամկետը լրանալը առաջնորդվել միայն Ընկերության խորհրդի որոշումներով և գրավոր հանձնարարականներով, ինչպես նաև ձեռնպահ մնալ առանց ընկերության խորհրդի հետ համաձայնեցնելու որևէ գործողություն կատարելուց:

Ծանուցման վրա առկա է «ստացա բնօրինակը» գրառում և ստորագրություն, և հայցվորն ընդունում է այն փաստը, որ ստորագրությունը կատարված է իր կողմից (**հատոր 2-րդ, գ.թ. 55**).

5) Ընկերության տնօրեն Ա. Տերյանի 11.11.2019 թվականի թիվ 1108-Ա հրամանի 1-ին կետի համաձայն՝ Հաշվապահական հաշվառման բյուրոյի հրամայվել է սահմանված կարգով և ՀՀ աշխատանքային օրենսգրքի ուժով Գևորգ Կարապետյանի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ, 2-րդ կետի համաձայն՝ ծանուցել Գևորգ Կարապետյանին անհապաղ Ընկերությանը վերադարձնել Ընկերության սեփականությունը հասդիսացող և իր տիրապետման ու օգտագործման ներքո գտնվող համակարգիչը (...), 4-րդ կետի համաձայն՝ Տեղեկատվական համակարգի անվտանգության և կառավարման բաժնին հրամայվել է 2019 թվականի նոյեմբերի 12-ից «Աուլթուք» (Outlook) համակարգից արգելափակել և հեռացնել «Gevorg.Karapetyan@kamurj.am» օգտագործողի հասցեն, 2019 թվականի նոյեմբերի 12-ից փակել AS-Bank համակարգում «GEVORG.KARAPETYAN» օգտագործողի մուտքը, 5-րդ կետի համաձայն՝ Անձնակազմի կառավարման բաժնին հրամայվել է պատշաճ կերպով ծանոթացնել Գևորգ Կարապետյանին տվյալ հրամանի բովանդակությանը (...) (**հատոր 1-ին, գ.թ. 48**).

6) ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 04.12.2019 թվականի թիվ 1/917Ա որոշման համաձայն՝ որոշվել է գրանցումից հանել Ընկերության վերստուգողի պաշտոնում գրանցված Գևորգ Կարապետյանին, վերստուգողի պաշտոնում գրանցել Վանիկ Իվանյանին (հատոր 1-ին, գ.թ. 32):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ բաժնետիրական ընկերության վերստուգողի հետ որոշակի ժամկետով կնքված պայմանագրից ծագող իրավահարաբերությունների նկատմամբ կիրառման ենթակա օրենսդրության, ինչպես նաև բաժնետիրական ընկերության վերստուգողի հետ որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը դրա ժամկետը լրանալուց հետո անորոշ ժամկետով կնքված համարելու իրավական հնարավորության հարցերին:

Ա. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին համապատասխան սահմանում է բաժնետիրական ընկերությունների իրավական վիճակը, նրանց ստեղծման, գործունեության իրականացման և դադարեցման կարգը, բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ապահովում է բաժնետերերի, պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում ստեղծված կամ ստեղծվող բաժնետիրական ընկերությունների վրա:

Օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող): Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) իրավասությունները և ստուգումների անցկացման կարգը սահմանվում են նույն օրենքով և Կանոնադրությամբ: Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը (...):

Օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերստուգող հանձնաժողովի անդամներին (վերստուգողին) ընտրում է ժողովը՝ 3 տարի ժամկետով: Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հաշվետու է ժողովին: Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ: Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ: Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք հոգուց պակաս լինել: Կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ Ընկերության վերստուգող հանձնաժողովի իրավասությունները կարող են դրվել վերստուգողի վրա (...):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե աշխատանքային հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով, ապա նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող աշխատանքային օրենսդրության նորմերը:

Կորպորացիաների ստեղծման և գործունեության կապակցությամբ կորպորացիայի, դրա մասնակիցների և կորպորացիայի կառավարման մարմինների միջև ծագում են կորպորատիվ իրավահարաբերություններ, որոնց կարգավորումը, կորպորացիայի տեսակով պայմանավորված, իրականացվում է իրավունքի համապատասխան ճյուղի իրավանորմերով: Ըստ այդմ՝ բաժնետիրական ընկերությունների իրավական վիճակը, նրանց

ստեղծման, գործունեության իրականացման և դադարեցման կարգը, բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև բաժնետերերի, պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի այլ օրենքներով և իրավական ակտերով: Բաժնետիրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Օրենքն ընկերության ժողովին իրավունք է վերապահում՝ ընտրելու Ընկերության վերստուգող հանձնաժողով կամ վերստուգող, որի հիմնական գործառույթն է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը հետևելը, Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանն ապահովելն է: Բաժնետիրական ընկերության և դրա ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնող անձի՝ ընկերության վերստուգողի միջև նախևառաջ ծագում են կորպորատիվ իրավահարաբերություններ, որոնք կարգավորվում են կորպորատիվ օրենսդրությամբ: Վերագրյալով հանդերձ՝ բաժնետիրական ընկերության և վերստուգողի միջև կարող են ծագել նաև կորպորատիվ իրավահարաբերություններից բխող այնպիսի իրավահարաբերություններ, որոնք կրում են ածանցյալ բնույթ և կոչված են ապահովելու բուն՝ կորպորատիվ իրավահարաբերություններից բխող իրավունքների և պարտականությունների իրականացումը: Ածանցյալ իրավահարաբերության գոյությունը բացառապես պայմանավորված է հիմնական իրավահարաբերության առկայությամբ:

Առավել մանրամասնելով վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Ընկերության նկատմամբ ստանձնած իր գործառույթները լիարժեք կերպով իրականացնելու համար Ընկերության և վերստուգողի միջև կարող են ծագել նաև աշխատանքային հարաբերություններ: Այդուհանդերձ, վերստուգողի իրավական կարգավիճակով պայմանավորված՝ նրա հետ կնքվող աշխատանքային պայմանագիրը տարբերվում է ընկերության աշխատակիցների հետ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվող աշխատանքային պայմանագրերից, քանի որ այն ուղղված է բացառապես վերստուգողի կորպորատիվ իրավահարաբերություններից բխող գործառույթի կազմակերպման ու անխոչընդոտ իրականացումն ապահովելուն:

Հետևաբար, Ընկերության և վերստուգողի միջև առկա կորպորատիվ-աշխատանքային համալիր իրավահարաբերությունները կարգավորվում են ինչպես կորպորատիվ, այնպես էլ աշխատանքային օրենսդրությամբ, ընդ որում **ՀՀ աշխատանքային օրենսգրքը կիրառելի է այնքանով, որքանով այն չի հակասում կորպորատիվ օրենսդրությանը սահմանված հատուկ նորմերի պահանջներին:**

Բ. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը կնքվում է՝

(...) 2) որոշակի ժամկետով, եթե աշխատանքային պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված դեպքերում աշխատանքային պայմանագրի լուծումը ձևակերպվում է գործատուի ընդունած անհատական իրավական ակտով, (...):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պատճառով գործատուն կամ աշխատողն իրավունք ունեն լուծելու պայմանագիրը, բացառությամբ նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործատուն կարող է ժամկետը լրանալու պատճառով լուծել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով աշխատողին առնվազն տասն օր առաջ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում նույն հոդվածով սահմանված կարգով, և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

Վկայակոչված իրավաբանների մեկնաբանությանը ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձ է կատարել *Խորեն Նասիբյանն ընդդեմ «Բնարերպակ» ՍՊԸ-ի և «Բնարերպակ» ՍՊԸ-ն ընդդեմ Խորեն Նասիբյանի* թիվ ԵԿԴ/3295/02/15 քաղաքացիական գործով 20.07.2017 թվականի որոշմամբ: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ընդհանուր կանոնն այն է, որ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո գործատուի և աշխատողի միջև աշխատանքային հարաբերությունները դադարում են: Օրենսդիրը նշված կարգից սահմանել է մեկ բացառություն, այն է՝ եթե որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում օրենքով սահմանված կարգով, և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով: Նման իրավակարգավորումից բխում է, որ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի լրանալն ինքնին չի հանգեցնում աշխատանքային պայմանագրի դադարման, եթե պայմանագրի երկու կողմերն էլ դրսևորում են աշխատանքային հարաբերությունները շարունակելու կամք, այսինքն՝ աշխատողը շարունակում է աշխատանքը, իսկ գործատուն՝ ընդունում նրա աշխատանքի արդյունքը, ինչպես նաև կողմերը շարունակում են իրացնել աշխատանքային պայմանագրով նախատեսված իրենց իրավունքներն ու պարտականությունները: Ուստի, այն դեպքերում, երբ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո աշխատողը փաստացի շարունակում է աշխատել և աշխատանքային պայմանագիրը չի լուծվում, ապա աշխատանքային պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով, որից հետո աշխատանքային պայմանագիրն արդեն չի կարող լուծվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 111-րդ հոդվածով սահմանված՝ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով: Նման դեպքերում աշխատանքային պայմանագիրը, համարվելով անորոշ ժամկետով կնքված պայմանագիր, կարող է լուծվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածով նախատեսված այլ հիմքերով:

Սույն գործով, նկատի ունենալով բողոքի հիմքում բարձրացված հարցադրումը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն խնդրին, թե արդյոք ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 5-րդ մասը և դրա կապակցությամբ արտահայտված վերոնշյալ իրավական դիրքորոշումը կարող է կիրառելի համարվել բաժնետիրական ընկերության վերստուգողի հետ հարաբերությունների նկատմամբ, ի մասսնավորի, երբ աշխատանքային հարաբերությունների ծագման նախադրյալն աշխատողի՝ որոշակի ժամանակահատվածի համար օրենքով սահմանված կարգով ընտրված լինելու իրավաբանական փաստն է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրենսդիրը բաժնետիրական ընկերության վերստուգողի համար սահմանել է հատուկ իրավական կարգավիճակ՝ նրա պաշտոնավարման նախադրյալ դիտարկելով Ժողովի կողմից վերջինիս ընտրությունը և սահմանափակելով պաշտոնավարումը երեք տարի ժամկետով: Հետևաբար, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով վերստուգողի հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքման իրավական հնարավորությունը բացակայում է, իսկ հակառակ եզրահանգումը կհակասի կորպորատիվ օրենսդրությամբ սահմանված հատուկ նորմի պահանջին:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ աշխատանքային հարաբերությունների ծագման նախապայմանն աշխատողի ընտրված լինելն է տվյալ աշխատատեղում, որն օրենքով սահմանափակված է հստակ ժամանակահատվածով, այդ ժամանակահատվածը լրանալու փաստի միով դադարում է գոյության ունենալ աշխատանքային հարաբերությունների ծագման նախադրյալը, և արդյունքում դադարում է նաև կողմերի միջև գոյություն ունեցող աշխատանքային հարաբերությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անկախ պայմանագրի լուծման վերաբերյալ գործատուի կողմից ծանուցման պահանջը պահպանված լինելուց կամ աշխատանքային հարաբերությունները փաստացի շարունակվելու հանգամանքից, հատուկ նորմի ուժով՝ ժամկետն ավարտվելու հիմքով վերստուգողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը համարվում է դադարած:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը հանգում է ամփոփիչ հետևության. բաժնետիրական ընկերության և վերստուգողի հետ հարաբերությունների նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումը կիրառելի չէ:

Գ. Անդրադատնալով բաժնետիրական ընկերության վերստուգողի հետ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու կարգին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետի համաձայն՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Նշված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) **ընտրությունը** և նրանց (նրա) լիազորությունների **վաղաժամկետ դադարեցումը**, ուստի որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով վերստուգողի լիազորությունների դադարեցումը չի ենթադրում բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից համապատասխան որոշման ընդունում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով «գործատու» հասկացությունը պետք է մեկնաբանել տառացի նշանակությամբ՝ նույն օրենսգրքի ընդհանուր կարգավորման համատեքստում՝ չփոփոխելով տվյալ իրավանորմի իմաստը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդված, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդված): Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործատուն աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը:

2. Գործատու կարող է լինել աշխատանքային իրավունակություն և գործունակություն ունեցող իրավաբանական անձը՝ անկախ կազմակերպական-իրավական և սեփականության ձևից, գործունեության բնույթից և տեսակից, և ֆիզիկական անձը (...):

Իսկ նույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպության կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերություններում որպես գործատուի ներկայացուցիչ հանդես է գալիս կազմակերպության ղեկավարը (տնօրեն, գլխավոր տնօրեն, նախագահ և այլն) (...):

Վկայակոչված իրավանորմերի բովանդակային համադրումից հետևում է, որ ՀՀ աշխատանքային օրենսդրության իմաստով գործատուն (ոչ ֆիզիկական անձ) այն իրավաբանական անձն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը, հետևաբար «գործատու» եզրույթը չի կարող նույնացվել գործատու իրավաբանական անձի առանձին մարմինների, այդ թվում ընկերության տնօրենի կամ բաժնետիրական ընկերության ղեկավար՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի հետ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարմանը.

Դատարանը մերժել է հայցն այն հիմնավորմամբ, որ գործատուն աշխատանքային պայմանագիրը լուծելուն ուղղված գործուն միջոցներ է ձեռնարկել՝ այդ մասին արձանագրելով ընդհանուր ժողովի արձանագրությամբ, և պայմանագիրը լուծելու մասին ծանուցել է աշխատողին, այսինքն՝ առկա է Պատասխանողի կողմից աշխատանքային հարաբերությունները չարունակելու կամքը, իսկ ինչ վերաբերում է պայմանագրի լուծման մասին անհատական իրավական ակտ չընդունելուն, ապա որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը օրենսդրի կողմից սահմանված ժամկետը լրանալու հիմքով լուծելու դեպքում անհատական իրավական ակտի ընդունումը որևէ դերակատարություն չունի պայմանագիրը լուծված համարելու համար, եթե գործատուի կամքի ազատ դրսևորումն ակնհայտորեն վկայում է պայմանագրի լուծման մասին: Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը գտել է, որ Հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ փաստական հանգամանք և այն հիմնավորող ապացույց, որը կվկայեր որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը անորոշ ժամկետով կնքված համարելու և կողմերի միջև աշխատանքային հարաբերությունները շարունակվելու մասին:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Դատարանի վճիռը բեկանել և գործն ուղարկել է նոր քննության հետևյալ պատճառաբանություններով՝

1) բաժնետիրական ընկերության վերստուգողի համար գործատուն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է՝ որպես կառավարման բարձրագույն մարմին: Հայցվորի հետ աշխատանքային հարաբերություններում գործատուի որևէ պաշտոնատար անձ ինքնուրույն չէր կարող հանդես գալ որպես գործատու և գործատու կարող է հանդես գալ միայն բաժնետերերի ընդհանուր ժողովը: Հետևաբար, Գևորգ Կարապետյանին ուղղված 23.09.2019 թվականի ծանուցումը չի կարող համարվել աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու հիմքով աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու մասին գործատուի կողմից աշխատողին ներկայացված ծանուցում, քանի որ այդ ծանուցումը ստորագրել է «Կամուրջ» ՓԲԸ-ի «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահ» հանդես եկած Դավիթ Նահապետյանը, ով չի կարող վերստուգիչ Գևորգ Կարապետյանի հետ հարաբերություններում հանդես գալ որպես գործատու:

2) Գևորգ Կարապետյանին ուղղված 23.09.2019 թվականի ծանուցման մեջ նշում չկա՝ տվյալ հարցով բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման կամ դիրքորոշման մասին և ոչ էլ այն մասին, որ Դավիթ Նահապետյանը գործում է ընդհանուր ժողովի հիման վրա կամ ժողովի անունից:

3) Հայցվորի աշխատանքային պարտականությունների կատարման համար անհրաժեշտ էլեկտրոնային միջոցներն արգելափակելը կատարվել է Ընկերության տնօրենի 11.11.2019 թվականի թիվ 1108-Ա հրամանի հիման վրա, որում ևս նշում չկա Ընկերության 13.09.2019 թվականի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշման (քաղվածքի) կամ հրամանում նշված գործողությունները Կամուրջի բաժնետերերի ընդհանուր ժողովի անունից կամ նրա հանձնարարությամբ կատարելու մասին:

4) գործի նյութերում չկա ոչ բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու մասին խորհրդի որոշում, ոչ բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու մասով վերստուգողին արված որևէ ծանուցում: Դատարանն առհասարակ չի անդրադարձել Գևորգ Կարապետյանի այն պնդումներին, որ բաժնետերերի ընդհանուր ժողով չի հրավիրվել և չի կայացել:

5) Ընկերության 13.09.2019 թվականի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 03 արձանագրությունից քաղվածքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով ոչ արժանահավատ ապացույց է, որը չի կարող դրվել վիճելի իրավահարաբերության լուծման հիմքում: Գործի նյութերում բացակայում է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված անհատական իրավական ակտը՝ Հայցվորի հետ կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով այն լուծելու մասին:

6) Օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պաշտոնավարման կոնկրետ ժամկետի լրանալը, եթե գործատուի կողմից պատշաճ կերպով չեն կատարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով և 111-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները, չի թողնում այլ ելք, քան աշխատանքային պայմանագիրն անորոշ ժամկետով կնքված համարելը:

Վճռաբեկ դատարանը, սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, գտնում է, որ Ընկերության և Հայցվորի միջև 11.11.2013 թվականին կնքված թիվ A13P030 աշխատանքային պայմանագիրը չի կարող համարվել անորոշ ժամկետով կնքված Օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, և Հայցվորը չի կարող վերականգնվել Ընկերության վերստուգողի աշխատանքում, քանի որ պայմանագիրը լուծվել է:

Հայցվորի՝ որպես վերստուգողի պաշտոնավարման ժամկետը լրանալու հիմքով, որպիսի հանգամանքը, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն, հանգեցրել է կողմերի միջև առկա աշխատանքային հարաբերությունների դադարման:

Նշվածից հետևում է, որ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումները, որոնք վերաբերում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից անհատական իրավական ակտ ընդունված չլինելուն, Ընկերության տնօրենի վերոնշյալ հրամանում և Հայցվորին ուղղված ծանուցման մեջ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման մասին որևէ նշում չլինելուն, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու մասին խորհրդի որոշում կամ ընդհանուր ժողովին մասնակցելու համար Հայցվորին ծանուցելու մասին որևէ ապացույց ներկայացված չլինելուն, չեն բխում սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելի օրենսդրական կարգավորումներից և որևէ իրավական նշանակություն չունեն սույն վեճի լուծման համար:

Ինչ վերաբերում է Ընկերության 13.09.2019 թվականի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 03 արձանագրությունից քաղվածքի ապացուցողական նշանակությանը, ապա Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով չի վիճարկվում Ընդհանուր ժողովի որոշումը, հետևաբար Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն այդ մասով դուրս են գործի քննության շրջանակից:

Անդրադառնալով Ընկերության տնօրենի 11.11.2019 թվականի թիվ 1108-Ա հրամանին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ընկերության գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ նույն օրենքով և կանոնադրությամբ ժողովի և խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի (...), իսկ նույն հոդվածի 3-րդ մասի «թ» կետի համաձայն՝ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը: Վերոգրյալից հետևում է, որ հայցվորի հետ աշխատանքային հարաբերությունները դադարելուց բխող գործողությունների կատարումը Ընկերության ընթացիկ գործունեության կառավարմանը վերաբերող հարց է, որը պատկանում է Ընկերության տնօրենի իրավասությանը: Ուստի, Ընկերության տնօրենի հրամանը՝ Ընկերության սեփականությունը հանդիսացող և իր տիրապետման ու օգտագործման ներքո գտնվող համակարգիչը (...) Ընկերությանն անհապաղ վերադարձնելու մասին Գևորգ Կարապետյանին ծանուցելու, 2019 թվականի նոյեմբերի 12-ից «Աուլթուք» (Outlook) համակարգից «Gevorg.Karapetyan@kamurj.am» օգտագործողի հասցեն արգելափակելու և հեռացնելու, 2019 թվականի նոյեմբերի 12-ից AS-Bank համակարգում «GEVORG.KARAPETYAN» օգտագործողի մուտքը փակելու մասին Տեղեկատվական համակարգի անվտանգության և կառավարման բաժնին հրամայելու վերաբերյալ, ուղղված է վերստուգողի հետ հարաբերությունների դադարման առնչությամբ Ընկերության ընթացիկ գործունեության կառավարմանը և բխում է Օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը գործի փաստերի նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ մասը

կիրառել է սխալ մեկնաբանությամբ՝ հանգելով սխալ հետևության այն մասին, որ որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը լուծելու մասին գրավոր ծանուցելու պահանջը պահպանված չի եղել, ինչպես նաև սխալ է մեկնաբանել Օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ Դատարանը, մերժելով հայցը, իրավաչափ եզրահանգում է կատարել բողոք բերած անձի՝ որպես վերստուգողի և Ընկերության միջև որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը դրա ժամկետը լրանալուց հետո անորոշ ժամկետով կնքված համաբերելու անհնարինություն մասին, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում Վերաքննիչ դատարանին վերագրվող խախտումների վերաբերյալ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները, և վճռաբեկ բողոքի հիմքերը գնահատում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք:

Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Դատարանի 02.11.2020 վճռին օրինական ուժ տալու համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքի վճարումից ազատվում են (...) հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով (...):

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար պետական տուրքի գումարը վճարված է, և վճռաբեկ բողոքը ելթակա է բավարարման, գտնում է, որ Հայցվորի՝ պետական տուրքի վճարումից «Պետական տուրքի մասին» ՀՀ

օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի ուժով ազատված լինելու և այլ դատական ծախսերի մասով պահանջներ ներկայացված չլինելու պայմաններում դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.03.2021 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 02.11.2020 թվականի վճռին:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/42766/02/19 2021թ.
 Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/42766/02/19
 Նախագահող դատավոր՝ Ս. Թորոսյան
 Դատավորներ՝ Ա. Խառատյան
 Դ. Սերոբյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- | | |
|------------------|---------------|
| <i>Նախագահող</i> | Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ |
| <i>զեկուցող</i> | Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ |
| | Ս. ԱՆՏՈՆՅԱՆ |
| | Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ |
| | Մ. ԴՐՄԵՅԱՆ |
| | Գ. ՀԱԿՈԲՅԱՆ |
| | Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ |
| | Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| | Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ |

2021 թվականի փետրվարի 23-ին գրավոր ընթացակարգով քննելով «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Արմինե Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.06.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արմենակ Մարկոսյանի ընդդեմ Ընկերության՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրամանն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Արմենակ Մարկոսյանը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության տնօրենի՝ 31.10.2019 թվականի թիվ 360-Կ հրամանը՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին (այսուհետ՝ Հրաման), և կիրառել դրա անվավերության հետևանքները՝ վերականգնել իրեն նախկին պաշտոնում և Ընկերությունից իր փոխարինմանը պահանջելու միջին աշխատավարձի չափով գումար՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 01.11.2019 թվականից մինչև

աշխատանքում փաստացի վերականգնելու օրը, իսկ վերականգնման անհնարինության դեպքում Ընկերությանը պարտավորեցնել իրեն վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 01.11.2019 թվականից մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը և աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուսապատիկի չափով:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Դ. Մխչյան) (այսուհետ՝ Դատարան) 09.03.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.06.2020 թվականի որոշմամբ Ընկերության բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.03.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմենակ Մարկոսյանի ներկայացուցիչ Գայանե Դեմիրչյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը, 59-րդ, 62-րդ, 66-րդ, 77-րդ հոդվածները և 379-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումները պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Սույն գործով Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս չի գնահատել գործում առկա բոլոր պայացուցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությանը: Մասնավորապես՝ Դատարանի կողմից պատշաճ գնահատական չի տրվել Արմենակ Մարկոսյանի ցուցմունքին, որով վերջինս Դատարանում դատական նիստի ժամանակ պնդել է 31.10.2019 թվականի քննարկման ժամանակ բացատրություն տալուց հրաժարվելու փաստը: Գործատուի կողմից ձեռնարկվել են միջոցներ Արմենակ Մարկոսյանից բացատրություն ստանալու ուղղությամբ. հրավիրվել է քննարկում, որի ընթացքում, սակայն վերջինս ոչ թե խնդրել է իրեն տրամադրել լրացուցիչ ժամկետ բացատրություն տալու կամ դիրքորոշումը համապատասխան ձևակերպմամբ ներկայացնելու համար, այլ պարզապես հրաժարվել է որևէ բացատրություն տալուց, ինչն ամրագրվել է քննարկման արձանագրությամբ: Դրանով Դատարանի կողմից գործատուի վրա դրվել է անհամաչափ պարտականություն՝ տրամադրելու ևս մեկ անտրոշ ժամկետ հայցվորի կողմից լրացուցիչ դիրքորոշում կամ բացատրություն ներկայացնելու համար, այն հիմնավորմամբ, որ Արմենակ Մարկոսյանից չի պահանջվել գրավոր բացատրություն:

Վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել վերոնշյալ փաստարկները, որոնք դրվել են վերաքննիչ բողոքի հիմքում:

Միևնույն փաստական հանգամանքի կապակցությամբ Վերաքննիչ դատարանը ցուցաբերել է երկակի մոտեցում, ինչով խախտվել է իրավական որոշակիության սկզբունքը, և գտել է, որ բողոքարկվող դատական ակտը չի կարող օրինական և հիմնավորված համարվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.06.2020 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Սույն գործով ստորադաս դատարաններն իրավացիորեն որպես հաստատված և էական նշանակություն ունեցող փաստ են դիտարկել այն, որ մինչև արձանագրության և հրամանի կազմումը պատասխանողի կողմից հայցվորին չի ներկայացվել արձանագրությամբ քննարկված փաստական հանգամանքների վերաբերյալ ողջամիտ ժամկետներում գրավոր բացատրություն ներկայացնելու պահանջ, գործով առկա չէ ինչպես գրավոր

բացատրություն պահանջելու վերաբերյալ որևէ ապացույց, այնպես էլ քննարկման պահին աշխատանքից ազատման հրամանի հիմքում ընկած այնպիսի փաստի՝ ինչպիսին է Ընկերությանը 3.000.000 ՀՀ դրամ վնաս պատճառելու վերաբերյալ բացատրություն ներկայացնելու պահանջը հավաստող որևէ ապացույց:

Բացի այդ, արձանագրության կազմման հիմքում ընկած ժողովի ժամանակ բանավոր բացատրության պահանջը չի կարող դիտարկվել որպես պատշաճ և ողջամիտ ժամկետներում բացատրություն տալու պահանջ:

Միաժամանակ հայցվորի կողմից պատասխանողին որևէ նյութական վնաս չի պատճառվել, այլ կերպ՝ Ընկերության կողմից չի հիմնավորվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման համար անհրաժեշտ բոլոր պայմանների միաժամանակյա առկայությունը: Հետևաբար ստորադաս դատարաններն իրավացիորեն բավարարել են հայցվորի նախկին աշխատանքում վերականգնելու պահանջը, քանի որ պատասխանողը հակառակը, այն է՝ վերականգնման անհնարինությունը հաստատող որևէ ապացույց չի ներկայացրել:

Վերոգրյալի հիման վրա Արմենակ Մարկոսյանի ներկայացուցիչը պահանջել է մերժել վճարել բողոքը և Վերաքննիչ դատարանի 19.06.2020 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության և Արմենակ Մարկոսյանի միջև 30.10.2009 թվականին կնքվել է աշխատանքային թիվ 464 պայմանագիր, որի համաձայն՝ Արմենակ Մարկոսյանն ընդունվել է աշխատանքի Ընկերությունում որպես ներքին աուդիտի ծառայության գլխավոր աուդիտոր (**հատոր 1, գ.թ. 17-21**):

2) Ընկերության գլխավոր տնօրենի 04.09.2019 թվականի թիվ 280-Կ հրամանով՝ Արմենակ Մարկոսյանը «Ներքին աուդիտի և վերատուգման ծառայություն/Ղեկավարման ապարատ. Ծառայության պետ» աշխատանքից փոխադրվել է «Ներքին աուդիտի և վերահսկման բաժին/Ղեկավարման ապարատ. Գլխավոր աուդիտոր-բաժնի պետի ժ/պ» աշխատանքի (**հատոր 1, գ.թ. 2**):

3) Ընկերության գլխավոր տնօրենի 31.10.2019 թվականի թիվ 360-Կ հրամանով՝ Արմենակ Մարկոսյանի հետ 30.10.2009 թվականին կնքված թիվ 464 աշխատանքային պայմանագիրը լուծվել է, և Արմենակ Մարկոսյանը 01.11.2019 թվականին ազատվել է աշխատանքից՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 122-րդ հոդվածի 1-ին մասի՝ հիմք ընդունելով Արմենակ Մարկոսյանի գործունեության արդյունքների վերլուծության արձանագրությունը (**հատոր 1, գ.թ. 84**):

4) Ընկերության գլխավոր տնօրենի նախագահությամբ 31.10.2019 թվականին Արմենակ Մարկոսյանի մասնակցությամբ տեղի է ունեցել Արմենակ Մարկոսյանի գործունեության արդյունքների վերաբերյալ քննարկում, որի արդյունքներով կազմվել է թիվ 138 արձանագրությունը:

Արձանագրության համաձայն՝ Ընկերության Ներքին աուդիտի և վերահսկողության ծառայության կողմից կատարված՝ Վանաձորի ուղեմասի ապրանքանյութական արժեքների գույքագրման արդյունքների հիման վրա կատարվել է Կոնցեսիոն հիմնական միջոցների ընդունում-հանձնում առ 01.05.2015 թվականը, և կազմվել է համեմատական տեղեկագիր, որի համաձայն՝ Ընկերության Վանաձորի ուղեմասում հայտնաբերվել է 46.000.000 ՀՀ դրամի չափով պակասորդ, որը հետագայում ճշգրտվել է տվյալ տեղեկատվության հիման վրա հարուցված քրեական գործով նախաքննության և դատաքննության շրջանակներում իրականացված փորձաքննությունների հիման վրա և սահմանվել է 1.808.000 ՀՀ դրամի չափով: Վանաձորի ուղեմասի պետը ազատվել է աշխատանքից, այնուհետև հայց է ներկայացրել Ընկերության դեմ՝ վերջնահաշվարկի գումարը բռնագանձելու պահանջով: 2019 թվականի սեպտեմբերին Դատարանը վճիռ է կայացրել, որով

հաստատվել է ստորագրված հաշտության համաձայնությունը: Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունն արձանագրել է այն փաստը, որ Ներքին առդիտի և վերահսկողության ծառայության անբարեխիղճ և ոչ գրագետ աշխատանքի պատճառով հայցվորի կողմից ներկայացվել է ոչ հավաստի տեղեկատվություն, ինչի հետևանքով Ընկերությունը կրել է 3.000.000 ՀՀ դրամի վնաս: Արդյունքում կայացվել է որոշում՝ հայցվորի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 122-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա լուծելու վերաբերյալ՝ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով, որի գործողությունները պաշտոնեական պարտականությունները կատարելիս հանգեցրել են նրան, որ Ընկերությունը նյութական վնաս է կրել: Արձանագրությամբ նշվել է, որ Ընկերության գլխավոր տնօրեն Ս. Գ. Վակոյի հարցերին Արմենակ Մարկոսյանը հրաժարվել է որևէ բացատրություն տալուց (**հատոր 1, գ.թ. 24-27**):

5) Ըստ Ընկերության Արմենակ Մարկոսյանի հետ կնքած աշխատանքային պայմանագրի լուծումն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով իրականացվել է որպես կարգապահական տույժ (**հատոր 2, գ.թ. 7-12, 26**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սույն բողոքի քննության համար առանցքային հարցադրման վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդադարառնալ այն իրավական հարցին, թե գրավոր բացատրություն ներկայացնելու համար աշխատողին ժամկետ տրամադրված չլինելու դեպքում արդյո՞ք կարգապահական տույժ կիրառելու՝ օրենքով սահմանված կարգը համարվում է պահպանված, եթե գործարտի մոր քննարկման ժամանակ աշխատողը հրաժարվել է բացատրություններ տալուց:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝ դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս (...):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել կարգապահական տույժ՝ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու ձևով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 226-րդ հոդվածի համաձայն՝ **մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն:** Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածին, արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածում նշված նորը կրում է իմպլերատիվ (համապարտադիր) բնույթ, որի համաձայն՝ գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելը պարտադիր է մինչև կարգապահական տույժի կիրառումը (որն Արերյու Ջանիրեկյանն ընդդեմ «ՖԻՆԲԱ» ՈւՎԿ ՓԲԸ թիվ ԵԿԿ/2998/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը), ընդ որում, ՀՀ աշխատանքային օրենսգրքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 226-րդ հոդվածը չի պարտավորեցնում գործատուին աշխատողից խախտման մասին բացատրություն պահանջել բացառապես գրավոր ձևով: Ի լրումն նշված իրավական վերլուծության՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով թույլատրելի ցանկացած, այդ թվում՝ անուղղակի ապացույցով կարող է հաստատվել գործատուի կողմից աշխատողից բացատրություն պահանջված լինելու փաստը:

Սույն բողոքի քննությամբ առաջադրված իրավական հարցադրման համատեքստում վերոնշյալ կարգավորման բովանդակությունը բացահայտելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում տվյալ իրավանորմը ենթարկել տարածական մեկնաբանման՝ բացահայտելով սևն դրա նշանակությունն օրենսդրի նպատակների տեսանկյունից:

Նշված կարգավորմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել բացառելու կարգապահական տույժի կիրառման գործընթացում գործատուի գործողությունների միակողմանիությունը և ապահովելու աշխատողի՝ իր հարցի կապակցությամբ լաված լինելու իրավունքը: Ընդ որում, գրավոր բացատրություն ներկայացնելու համար աշխատողին ողջամիտ ժամկետ տրամադրելու պահանջը նպատակ ունի աշխատողի համար ապահովել բացատրություն ներկայացնելու իրական և լիարժեք հնարավորություն: Մյուս կողմից, քննարկվող իրավանորմը տառացի և տրամաբանական (տրամաբանական փոխակերպման մեթոդ) կանոններով մեկնաբանելու դեպքում ստացվում է, որ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն ցանկացած դեպքում պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ դրա համար տրամադրելով ողջամիտ ժամկետ: Սակայն, նման մեկնաբանությունն ինքնանպատակ է դարձնում գրավոր բացատրություն ներկայացնելու համար աշխատողին ժամկետ տրամադրելու պահանջն այն դեպքում, երբ աշխատողը հայտնում է գործատուին, որ հրաժարվում է բացատրություն տալուց: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկվող իրավադրույթը պետք է մեկնաբանվի այնպես, որ այդ մեկնաբանությամբ չիմաստագրվի իրավական դրույթի նպատակը:

Գործատուի կողմից աշխատողից բացատրություն պահանջված լինելու փաստի առնչությամբ Դատարանը գտել է, որ մինչև արձանագրության և աշխատանքից ազատման հրամանի կազմումը, Ընկերությունն Արմենակ Մարկոսյանից չի պահանջել արձանագրությամբ քննարկված փաստական հանգամանքների վերաբերյալ գրավոր բացատրություն ներկայացնել, չի սահմանել ողջամիտ ժամկետ՝ նշված բացատրությունը ներկայացնելու համար: Հիմք ընդունելով վերոնշյալ փաստերը՝ Վերաքննիչ դատարանը վերահաստատել է Դատարանի եզրահանգումը, ըստ որի՝ Ընկերության տնօրենի հարցերին բացատրություն տալուց հրաժարվելը չի կարող գնահատվել որպես ՀՀ աշխատանքային

օրենսգրքի 226-րդ հոդվածով սահմանված՝ պատասխանողի կողմից գրավոր բացատրություն պահանջելու և դրա համար ողջամիտ ժամկետ տրամադրելու պարտականության պահպանում:

Տվյալ դեպքում ստորադաս ասյաններում հաստատված և վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստի համաձայն՝ Ընկերության գլխավոր տնօրենի նախագահությամբ 31.10.2019 թվականին Արմենակ Մարկոսյանի մասնակցությամբ տեղի է ունեցել քննարկում, որտեղ գործունեության արդյունքների վերաբերյալ Արմենակ Մարկոսյանը **հրաժարվել է Ընկերության գլխավոր տնօրենի հարցերին որևէ բացատրություն տալ**: Վճռաբեկ դատարանը վերոգրյալ իրավական հիմնավորումների լույսի ներքո սույն փաստերի գնահատման արդյունքում հանգում է այն հետևության, որ Ընկերությունն Արմենակ Մարկոսյանի գործունեության արդյունքների վերաբերյալ 31.10.2019 թվականին վերջինիս մասնակցությամբ կայացած քննարկման ժամանակ հնարավորություն է տվել նրան՝ ներկայացնելու բացատրություն կարգապահական տույժի կիրառման հիմքերի վերաբերյալ, և հավաստիացել է, որ Արմենակ Մարկոսյանը հրաժարվում է այդ հարցի կապակցությամբ բացատրություն տալ: Ընդ որում, Արմենակ Մարկոսյանը գրավոր բացատրություն ներկայացնելու համար գործատուից ողջամիտ ժամկետ չի հայցել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի պահանջը խախտված չլինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ Դատարանի կողմից Ընկերության վրա դրվել է անհամաչափ պարտականություն՝ տրամադրել Արմենակ Մարկոսյանին ևս մեկ անորոշ ժամկետ բացատրություն ներկայացնելու համար այն դեպքում, երբ վերջինս հրաժարվել է կարգապահական տույժի հիմքերի վերաբերյալ բացատրություն տալ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն չի իրականացվել, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ոչ բոլոր հանգամանքներն են բացահայտվել, որպիսի պարագայում առկա է գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտություն:

Վերոնշյալ պարզադատարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայրասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարզադատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 401-րդ, 403-րդ, 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.06.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2552/02/17
2021թ.
 Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2552/02/17
 Նախագահող դատավոր՝ Ն. Մարգարյան
 Դատավորներ՝ Ա. Մխիթարյան
Ա. Մկրտչյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի փետրվարի 26-ին գրավոր ընթացակարգով քննելով Ադիս Աբրահամյանի ներկայացուցիչ Անի Հակոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.11.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ադիս Աբրահամյանի ընդդեմ «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ 25.04.2017 թվականի թիվ 024Ա աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրամանն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ադիս Աբրահամյանը պահանջել է անվավեր ճանաչել Հիմնադրամի 25.04.2017 թվականի թիվ 024Ա հրամանը և որպես հետևանք՝ պարտավորեցնել վճարել հարկադիր պարապուրդի համար նախատեսված միջին աշխատավարձը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ափիյան) (այսուհետ՝ Դատարան) 07.06.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.11.2018 թվականի որոշմամբ Ադիս Աբրահամյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 07.06.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ադիս Աբրահամյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հիմնադրամի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, սիսալ է մեկնաբանել ՀՀ աշխարհաքաղաքական օրենսգրքի 109-րդ, 113-րդ, 115-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատարանի օրենսգրքի 66-րդ, 363-րդ, 364-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտեղ է հերկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցվորի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու պահին Հիմնադրամում առկա է եղել **վաճառող-խորհրդակցանի** ազատ հաստիք, որը հայցվորին չի առաջարկվել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ «մասնագիտական պատրաստվածություն» և «որակավորում» **հասկացությունները պետք է առավել լայն մեկնաբանության առարկա դարձվեն՝ հաշվի առնելով նաև այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին է տվյալ աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնը, կատարած աշխատանքը:** Տվյալ դեպքում հայցվորը Հիմնադրամում ծավալել է գործունեություն մոտ 15 տարի և կատարել է տարբեր պարտականություններ՝ սկսած տնօրենի օգնական-համակարգչողից, վերջացրած գործադիր և շինարարության գծով օգնական-գանձապահից և այդ տարիների ընթացքում նաև եղել են օրեր, երբ փոխարինել է ցանցային ադմինիստրատորին, **վաճառող-խորհրդատուներին**, մարդկային ռեսուրսների տնօրենին, գործադիր տնօրենին և այլոց: Մինչև ժամանակ վաճառող-խորհրդատուի աշխատանքը հատուկ պատրաստվածություն չի պահանջում, առավել ևս այն անձի համար, ով աշխատում է տվյալ հիմնարկում մոտ 15 տարի, արդեն ինտեգրվել է այդ հաստատությանը, բարեխղճորեն և պարտաճանաչ կատարել է յուրաքանչյուր աշխատանք, որը վստահվել է վերջինիս:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Հիմնադրամի կողմից Ադիս Աբրահամյանին տրամադրված ծանուցման հիմքում դրվել է մի պայմանագիր, որն արդեն իսկ հրամանի տրաման ժամանակ չէր գործում, այսինքն՝ հայցվորի և պատասխանողի միջև աշխատանքային պայմանագրի լուծման հրամանի համար հիմք հանդիսացած ծանուցմամբ Ադիս Աբրահամյանը ծանուցվել է առ այն, որ Հիմնադրամի հետ 20.06.2002 թվականին կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվելու է, և հատուկ շեշտվել է, որ լուծվելու է հենց այն պայմանագիրը, որն արդեն իսկ լուծված է եղել, քանի որ այն կնքվել էր 3 ամիս ժամկետով: Մինչդեռ պետք է հայցվորին տեղեկացվեր, որ լուծվելու է 04.08.2005 թվականին կնքված աշխատանքային պայմանագիրը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ 22.05.2018 թվականին նշանակված դատական նիստին հայցվորի ներկայացուցիչը հնարավորություն չի ունեցել մասնակցելու, քանի որ գտնվել է ստացիոնար բուժման մեջ, իսկ հայցվորը նույնպես չի կարողացել ներկա գտնվել 22.05.2018 թվականի դատական նիստին, քանի որ Ամերիկայի Միացյալ Նահանգներից վերադարձել էր 21.05.2018 թվականին և, հաշվի առնելով երկրների ժամային տարբերությունը, ի վիճակի չի եղել մասնակցելու դատական նիստին և արդյունավետ պաշտպանություն իրականացնելու:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.11.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցն ամբողջությամբ բավարարել:

2.1. Վճուարեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Ադիս Աբրահամյանի ներկայացուցիչը հայտնել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանի վերջին դատական նիստին հայցվոր կողմը թեև չի մասնակցել, սակայն հայցվորի ներկայացուցիչը դատական նիստերին մասնակցել է և հնարավորություն է ունեցել իր դիրքորոշումը ներկայացնելու: Բացի այդ, դատաքննության ընթացքում բողոք դատավարական գործողությունները կատարելուց հետո ևս մեկ դատական նիստ է հրավիրվել՝ պահանջելով հաստիքացուցակների բնօրինակները և այդ նիստին հայցվոր կողմը չի ներկայացել և չի ներկայացրել միջնորդություն դատական նիստը հետաձգելու մասին:

Ինչ վերաբերում է հաստիքների կրճատման պայմաններում վաճառող-խորհրդատուի աշխատանքը հայցվորին չառաջարկելուն, ապա ակնհայտ է, որ այդ պաշտոնն աշխատանքային գործառնությունների և մասնագիտական պահանջների տեսանկյունից համարժեք չէ հայցվորի զբաղեցրած գործադիր և շինարարության գծով օգնական-գանձապահի պաշտոնին և ունի տարբեր գործառնություններ և որակավորման պահանջներ (անգլերենի իմացություն, վաճառքի կազմակերպման հմտություն, տարբեր հաճախորդների հետ շփման կարողություն, արվեստի վերաբերյալ համապատասխան գիտելիքների առկայություն և այլն):

3. Վճուարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ադիս Աբրահամյանի և Հիմնադրամի միջև 20.06.2002 թվականին կնքվել է աշխատանքային պայմանագիր, որի համաձայն՝ Ադիս Աբրահամյանն ընդունվել է Հիմնադրամի տնօրենի օգնական-համակարգչողի պաշտոնում: Պայմանագրի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գործում է 3 ամսվա փորձական շրջանի ընթացքում (**հատոր 1-ին, գ.թ. 9-14**):

2) Ադիս Աբրահամյանի և Հիմնադրամի միջև 01.09.2002 թվականին կնքվել է աշխատանքային պայմանագիր, որի համաձայն՝ Ադիս Աբրահամյանն ընդունվել է տնօրենի օգնական-համակարգչողի պաշտոնում: Պայմանագրի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գործում է ստորագրման պահից 6 ամսվա ընթացքում: Պայմանագրի 1.4 կետի համաձայն՝ գործառնու համաձայն է, որ աշխատանքի նկարագրությունը ճկուն է այն առումով, որ գործատուի պահանջով գործառնուց կարող է պահանջվել աջակցել իր աշխատանքի նկարագրությունում հստակորեն նշված խնդիրներից բացի այլ խնդիրների կատարմանը (**հատոր 1-ին, գ.թ. 15-20**):

3) 01.11.2002 թվականին, 01.03.2003 թվականին, 01.06.2003 թվականին, 01.01.2004 թվականին և 01.01.2005 թվականին կողմերը կնքել են 01.09.2002 թվականին կնքված աշխատանքային պայմանագրի բարեփոխման համաձայնագրեր, ինչպես նաև 01.04.2005 թվականին կնքվել է աշխատանքային պայմանագրի փոփոխության համաձայնագիր, որոնցով բարձրացվել է Ադիս Աբրահամյանի աշխատավարձը (**հատոր 1-ին, գ.թ. 21-26**):

4) Ադիս Աբրահամյանի և Հիմնադրամի միջև 04.08.2005 թվականին կնքվել է թիվ 0003 աշխատանքային պայմանագիրը, որի համաձայն՝ Ադիս Աբրահամյանն ընդունվել է գործադիր տնօրենի օգնական և Կասկադի գծով տեղակալի պաշտոնում՝ համաձայն պայմանագրին կից աշխատանքի նկարագրություն հավելվածի: Պայմանագրի 5-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գործում է 04.08.2005 թվականից սկսած 1 տարի (**հատոր 1-ին, գ.թ. 27-31**):

5) 01.09.2005 թվականից մինչև 03.10.2011 թվականը Հիմնադրամի և հայցվորի միջև կնքվել են բազմաթիվ աշխատանքային պայմանագրեր և համաձայնություններ, որոնցով վերջինս Հիմնադրամում ստանձնել է տարբեր պաշտոններ (**հատոր 1-ին, գ.թ. 32-50**):

6) Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 16.02.2017 թվականի թիվ 001 որոշման համաձայն՝ հաստատվել է Հիմնադրամի նոր հաստիքացուցակը և կառուցվածքը, իսկ որոշմամբ հաստատված թիվ 2 և թիվ 3 հավելվածի քաղվածքի համաձայն՝ «Աղմինիստ-րացիա» ստորաբաժանման «գործադիր և շինարարության գծով օգնական-գանձապահ» հաստիքի անունը չի ներառվել Հիմնադրամի կառուցվածքում և հաստիքացուցակում **(հատոր 1-ին, գ.թ. 51-55)**:

7) Ադիս Աբրահամյանին ուղղված և 28.02.2017 թվականին նրա կողմից ստացված «Աշխատանքային պայմանագրի լուծման մասին» ծանուցման համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի պահանջներով, գրավոր ծանուցում ենք Ձեզ, որ Ձեր հետ 20.06.2002 թվականին կնքված աշխատանքային պայմանագիրը 02.05.2017 թվականին լուծվելու է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով սահմանված հիմքով և Դուք ազատվելու եք գործադիր և շինարարության գծով օգնական-գանձապահի պաշտոնից: Տեղեկացնում ենք, որ «Գաֆեժեճեան Թանգարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 16.02.2017 թվականի թիվ 001 որոշմամբ հաստատվել է հիմնադրամի կառուցվածքը և հաստիքացուցակը, ինչի հետևանքով աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխմամբ և արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված Ձեր հաստիքը կրճատվել է: Ձեր հետ աշխատանքային պայմանագիրը կլուծվի առանց այլ աշխատանք առաջարկելու, քանի որ հիմնադրամը չունի նման հնարավորություն **(հատոր 1-ին, գ.թ. 56)**:

8) Գործում գտնվող հին և նոր հաստիքացուցակներում առկա է վաճառող-խորհրդատուի պաշտոնը **(հատոր 1-ին, գ.թ. 92-93, 98)**:

9) Հիմնադրամի 25.04.2017 թվականի թիվ 024U հրամանով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ և 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 16.02.2017 թվականի որոշմամբ հաստատված նոր հաստիքացուցակը և կառուցվածքը, հայցվորի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է և նա ազատվել է գործադիր և շինարարության գծով օգնական-գանձապահի պաշտոնից **(հատոր 1-ին, գ.թ. 57)**:

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Դատարանի կողմից կիրառված ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ արդարության ծավալների և (կամ) փոփոխական և (կամ) փոփոխող-գիական և (կամ) աշխարհային կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արդարական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում գործարարի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու առանձնահատկություններին՝ վերահասարակելով և զարգացնելով նախկինում արպահայրած իր իրավական դիրքորոշումները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ

պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրոյթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի պահանջները: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմի մեկնաբանումը չպետք է փոփոխի դրա իմաստը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերը նշված նորմերը մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները, արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների **միաժամանակյա** առկայությունը: Մասնավորապես՝

1. պայմանագիրը պետք է կնքված լինի անորոշ կամ որոշակի ժամկետով.
2. պայմանագրի լուծումը պետք է պայմանավորված լինի արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ.
3. պետք է կրճատված լինեն աշխատողների քանակը և (կամ) հաստիքները.
4. գործատուն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում պետք է աշխատողին առաջարկված լինի նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը պետք է հրաժարված լինի առաջարկված աշխատանքից, կամ
5. գործատուի մոտ պետք է բացակայեն աշխատողին՝ նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու հնարավորությունները:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ գործատուի մոտ միայն արտադրության ծավալների, տնտեսական պայմանների, տեխնոլոգիական պայմանների, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխումը, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությունն **ինքնին բավարար չէ աշխատողի հետ** անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը գործատուի կողմից լուծելու համար, եթե նշված հանգամանքները չեն հանգեցրել աշխատողների թվաքանակի կրճատմանը (*տե՛ս Արքայկ Մուրադյանը, Հովհաննես Դերձակյանը, Միրուհի Հարությունյանը, Սուրեն Թադևոսյանը և Եվգենիա Մանուկյանն ընդդեմ «Գաֆէանան*

թանգարան» հիմնադրամի թիվ ԵԿԳ/3613/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկություններին անդրադառնալիս նշել է, որ գործատուն չի կարող աշխատողին առաջարկել ցանկացած աշխատանք, այլ պարտադիր պայման է համարվում, որ գործատուի մոտ առկա հնարավորությունների սահմաններում առաջարկված աշխատանքը համապատասխանի աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին: Միայն աշխատողի կողմից մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան առաջարկված աշխատանքից հրաժարումը կարող է հանգեցնել գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «մասնագիտական պատրաստվածություն» և «որակավորում» հասկացությունները պետք է առավել լայն մեկնաբանության առարկա դարձվեն՝ հաշվի առնելով նաև այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին է տվյալ աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնը, կատարած աշխատանքը: Նման եզրահանգման համար ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն, որ օրենքի վերոնշյալ հոդվածը նպատակ է հետապնդում պաշտպանության տակ առնելու աշխատողներին այն բոլոր դեպքերում, երբ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությանը պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում համապատասխան աշխատողի կողմից զբաղեցրած պաշտոնի փոխարեն նույն գործատուի մոտ դեռևս առկա է (կամ առաջանում է) նախկինում կատարած աշխատանքին համարժեք որակավորում և մասնագիտական պատրաստվածություն պահանջող այլ աշխատանք (յրեն Գայանե Դանիկովան ընդդեմ «ԱրևեսՏեյ» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԳ/2378/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը):

Զարգացնելով վերը նշված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել հետևյալը: Տվյալ աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնը, կատարած աշխատանքը հաշվի առնելով «մասնագիտական պատրաստվածություն» և «որակավորում» հասկացությունների առավել լայն մեկնաբանության անհրաժեշտությունը նշանակում է, որ գործատուն պարտավոր է աշխատողին առաջարկել ոչ միայն նրա զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին համարժեք պաշտոնը կամ աշխատանքը, այլև իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում տվյալ աշխատողի զբաղեցրած պաշտոնին ստորադաս կամ նվազ վարձատրվող այն բոլոր թափուր պաշտոններն ու ազատ աշխատանքները, որոնք համապատասխանում են նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին: Վճռաբեկ դատարանի նշված հետևությունը բխում է այն իրողությունից, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդիրը գործածել է, ոչ թե «**համարժեք այլ աշխատանք**», այլ «**համապատասխան այլ աշխատանք**» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ առաջարկվող աշխատանքը պարտադիր չէ, որ լիովին համարժեք լինի այն պաշտոնին, որ նախկինում զբաղեցրել է աշխատողը կամ այն աշխատանքին, որ նախկինում աշխատողը կատարել է: Բացի այդ, ըստ նշված հոդվածի տառացի մեկնաբանության՝ գործատուի կողմից առաջարկվող այլ աշխատանքը պետք է համապատասխանի կրճատվող աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին և ոչ թե նրա նախկինում զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին: Հակառակ մեկնաբանության պարագայում կստացվի, որ այլ աշխատանք առաջարկելու օրենսդրի պահանջը գործնականում չի կարող իրականացվել, քանի որ աշխատողի հաստիքը կրճատվելու պարագայում գործատուի մոտ չի կարող պահպանվել մի հաստիք, որն իր գործառնություններով լիովին համապատասխանի աշխատողի զբաղեցրած նախկին հաստիքի գործառնություններին (դա կլինի ոչ թե հաստիքի կրճատում, այլ դրա անվանափոխում), իսկ առկա համարժեք հաստիքներն էլ կարող են իրենց գործառնություններով էապես տարբերվել ազատվող աշխատողի հաստիքից:

Մինչդեռ հաստիքների կրճատման հիմքով աշխատողին աշխատանքից ազատելիս նրան համապատասխան այլ աշխատանք առաջարկելու օրենսդրի պահանջը նպատակ է հետապնդում գործատուի մոտ ազատ կամ նոր առաջացող հաստիքները նախևառաջ համարել տվյալ գործատուի աշխատանքից ազատվող այն աշխատողներով, որոնք իրենց մասնագիտական պատրաստվածությամբ, որակավորմամբ և առողջական վիճակով կարող են զբաղեցնել այդ հաստիքը կամ կատարել այդ աշխատանքը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում ընդգծում է, որ գործատուն կրճատվող աշխատողին այլ աշխատանք առաջարկելու իր պարտականությունը կատարելիս, բացի աշխատողի մասնագիտական պատրաստվածությունց, որակավորումից, առողջական վիճակից, պարտավոր է հաշվի առնել նաև իր մոտ նախկինում կատարած նրա աշխատանքը, այն է՝ եթե աշխատողը նախկինում կատարել է կրճատման պահին գործատուի մոտ առկա աշխատանքը և դա համապատասխանում է կրճատվող աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին, ապա ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին համապատասխան, գործատուն պարտավոր է տվյալ աշխատանքն առաջարկել կրճատվող աշխատողին, թեկուզև այդ աշխատանքը լինի ավելի ցածր պաշտոնում կամ ավելի նվազ վարձատրվող:

Աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում գործատուն ազատվում է առկա կամ նոր առաջացող ավելի ցածր կամ նվազ վարձատրվող պաշտոնները կամ աշխատանքներն ազատվող աշխատողին առաջարկելու պարտականությունից, եթե դրանք չեն համապատասխանում նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ եթե նման բնույթի աշխատանքային վեճերով գործատուի կողմից վկայակոչվում է այն փաստը, որ իր մոտ առկա հաստիքը կամ աշխատանքը չեն համապատասխանել կրճատվող աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին, ապա այդ փաստի ապացուցման պարտականությունը կրում է գործատուն, քանի որ նման համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ ապացույցները գտնվում են նրա մոտ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթ) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի

չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

Վճուրբել դատարանը գտնում է, որ եթե վերն արտահայտված իրավական դիրքորոշմանը համապատասխան գործատուն հաստիքի կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս կրճատվող աշխատողին չի առաջարկում իր մոտ առկա նրա մասնագիտական պատրաստվածությանը, որոկավորմանը և առողջական վիճակին համապատասխան պաշտոնը կամ աշխատանքը, ապա աշխատանքային պայմանագիրը լուծվում է օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ինչը հանգեցնում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված հետևանքներին:

Վճուրբել դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Ադիս Աբրահամյանի և Հիմնադրամի միջև 20.06.2002 թվականին կնքվել է աշխատանքային պայմանագիր, որի համաձայն՝ Ադիս Աբրահամյանն ընդունվել է Հիմնադրամի տնօրենի օգնական-համակարգչողի պաշտոնում: Պայմանագրի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գործում է 3 ամսվա փորձնական շրջանի ընթացքում:

Ադիս Աբրահամյանի և Հիմնադրամի միջև 01.09.2002 թվականին կնքվել է աշխատանքային պայմանագիր, որի համաձայն՝ Ադիս Աբրահամյանն ընդունվել է տնօրենի օգնական-համակարգչողի պաշտոնում: Պայմանագրի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գործում է ստորագրման պահից 6 ամսվա ընթացքում: Պայմանագրի 1.4 կետի համաձայն՝ գործառու համաձայն է, որ աշխատանքի նկարագրությունը ճկուն է այն առումով, որ գործատուի պահանջով գործառուից կարող է պահանջվել աջակցել իր աշխատանքի նկարագրությունում հստակորեն նշված խնդիրներից բացի այլ խնդիրների կատարմանը:

01.11.2002 թվականին, 01.03.2003 թվականին, 01.06.2003 թվականին, 01.01.2004 թվականին և 01.01.2005 թվականին կողմերը կնքել են 01.09.2002 թվականին կնքված աշխատանքային պայմանագրի բարեփոխման համաձայնագրեր, ինչպես նաև 01.04.2005 թվականին կնքվել է աշխատանքային պայմանագրի փոփոխության համաձայնագիր, որով բարձրացվել է Ադիս Աբրահամյանի աշխատավարձը:

Ադիս Աբրահամյանի և Հիմնադրամի միջև 04.08.2005 թվականին կնքվել է թիվ 0003 աշխատանքային պայմանագիրը, որի համաձայն՝ Ադիս Աբրահամյանն ընդունվել է գործադիր տնօրենի օգնական և Կասկադի գծով տեղակալի պաշտոնում՝ համաձայն պայմանագրին կից աշխատանքի նկարագրություն հավելվածի: Պայմանագրի 5-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գործում է 04.08.2005 թվականից սկսած 1 տարի:

01.09.2005 թվականից մինչև 03.10.2011 թվականը Հիմնադրամի և հայցվորի միջև կնքվել են բազմաթիվ աշխատանքային պայմանագրեր և համաձայնություններ, որոնցով վերջինս Հիմնադրամում ստանձնել է տարբեր պաշտոններ:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 16.02.2017 թվականի թիվ 001 որոշման համաձայն՝ հաստատվել է Հիմնադրամի նոր հաստիքացուցակը և կառուցվածքը, իսկ որոշմամբ հաստատված թիվ 2 և թիվ 3 հավելվածի քաղվածքի համաձայն՝ «Ադմինիստրացիա» ստորաբաժանման «գործադիր և շինարարության գծով օգնական-գանձապահ» հաստիքի անունը չի ներառվել Հիմնադրամի կառուցվածքում և հաստիքացուցակում:

Ադիս Աբրահամյանին ուղղված և 28.02.2017 թվականին նրա կողմից ստացված «Աշխատանքային պայմանագրի լուծման մասին» ծանուցման համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի պահանջներով, գրավոր ծանուցում ենք Ձեզ, որ Ձեր հետ 20.06.2002 թվականին կնքված աշխատանքային պայմանագիրը 02.05.2017 թվականին լուծվելու է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով սահմանված հիմքով և Դուք ազատվելու եք գործադիր և շինարարության գծով օգնական - գանձապահի պաշտոնից: Տեղեկացնում ենք, որ «Գաֆեւճեան Թանգարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 16.02.2017 թվականի թիվ 001 որոշմամբ հաստատվել է հիմնադրամի կառուցվածքը և հաստիքացուցակը, ինչի հետևանքով աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխմամբ և արտադրական

անհրաժեշտությանը պայմանավորված Ձեր հաստիքը կրճատվել է: Ձեր հետ աշխատանքային պայմանագիրը կյուծվի առանց այլ աշխատանք առաջարկելու, քանի որ հիմնադրամը չունի նման հնարավորություն:

Գործում գտնվող հին և նոր հաստիքացուցակներում առկա է վաճառող-խորհրդատուի պաշտոնը:

Հիմնադրամի 25.04.2017 թվականի թիվ 024Ա հրամանով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածը և 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 16.02.2017 թվականի որոշմամբ հաստատված նոր հաստիքացուցակը և կառուցվածքը, հայցվորի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է և նա ազատվել է գործադիր և շինարարության գծով օգնական-գանձապահի պաշտոնից:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ պատասխանողը հայցվորի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելիս չի ունեցել նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, որը հայցվորի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու պահին եղել է թափուր:

Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով անփոփոխ, նշել է, որ անհիմն է բողոքաբերի փաստարկն այն մասին, որ Հիմնադրամը գանձապահի գործառույթը հանձնարարել է այլ աշխատակցի, մինչդեռ ինքը կարող էր համապատասխան վճարով կատարել այդ աշխատանքը, քանի որ գործում առկա փաստերով հաստատվում է, որ Հիմնադրամում առկա չի եղել «գանձապահի» առանձին հաստիք: Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ վաճառող-խորհրդակցի հաստիքն իրեն չի առաջարկվել, ապա այդ փաստարկը նույնպես հիմնավոր չէ, քանի որ առաջարկված աշխատանքը պետք է համապատասխանի աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին, որպիսի պայմանը քննարկվող պարագայում բացակայում է:

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են և հայցն ու վերաքննիչ բողոքը մերժելու հիմք չէին կարող հանդիսանալ հետևյալ պատճառներով:

Հայցվորի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելիս պատասխանողի մոտ համապատասխան թափուր պաշտոնի բացակայության մասին եզրահանգման Դատարանը հանգել է՝ անդրադառնալով միայն գանձապահի աշխատանքն իրեն չառաջարկելու և այդ կապակցությամբ աշխատանքից ազատելու պահին նման առանձին հաստիք գոյություն չունենալու մասին հայցվորի փաստարկին, մինչդեռ գործի քննության ընթացքում հայցվորը վկայակոչել է նաև այն փաստը, որ աշխատանքից ազատման պահին Հիմնադրամում եղել են իր մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը համապատասխան այլ թափուր հաստիքներ, մասնավորապես՝ վաճառող-խորհրդատուի աշխատանքը, որն ինքը նախկինում կատարել է և որն իրեն չի առաջարկվել: Հայցվորի վկայակոչած նշված փաստարկի վերաբերյալ դատարանը որևէ եզրահանգում չի կատարել:

Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին հայցվորի այդ փաստարկն անհիմն է համարել, ըստ էության պատճառաբանելով, որ տվյալ աշխատանքը չի համապատասխանել հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին:

Մինչդեռ վերը շարադրված իրավական դիրքորոշումների լուծումը գնահատելով սույն գործի փաստերը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախկինում նույն գործատուի մոտ 15 տարի տարբեր բնույթի աշխատանքներ, այդ թվում և վաճառող-խորհրդատուի աշխատանքը կատարելու և աշխատանքից ազատման պահին իր մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանքի առկայության վերաբերյալ հայցվորի փաստարկը, ինչպես նաև աշխատանքից ազատման պահին համապատասխան այլ աշխատանքի բացակայության և վաճառող-խորհրդատուի աշխատանքը հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխան չլինելու վերաբերյալ

պատասխանողի առարկությունը Դատարանի կողմից ենթակա էին պատշաճ քննության, սակայն Դատարանը և Վերաքննիչ դատարանն իրենց հետևությունները կատարել են առանց գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու՝ հիմք ընդունելով միայն պատասխանողի փաստարկները, որոնք համապատասխան ապացույցներով չեն հաստատվել:

Մասնավորապես, գործատուն, չժխտելով այն փաստը, որ Ադիս Աբրահամյանը նախկինում անհրաժեշտ դեպքերում կատարել է վաճառող-խորհրդատուի աշխատանքը և վկայակոչելով այն հանգամանքը, որ նշված պաշտոնը «համարժեք» չէ հայցվորի զբաղեցրած պաշտոնին, չի հիմնավորել, թե վաճառող-խորհրդատուի պաշտոնը մասնագիտական պատրաստվածության, որակավորման կամ առողջական վիճակի ինչպիսի պահանջներ ունի, որոնց հայցվորը չի բավարարել: Ընդ որում, հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին նշված պաշտոնի անհամապատասխանությունը կարող էր հիմնավորվել այդ պաշտոնի անձնագրով կամ աշխատանքի նկարագրությամբ, ինչպես նաև առողջական վիճակի վերաբերյալ ապացույցներով, որպիսիք գործատուի կողմից ընդհանրապես չեն ներկայացվել:

Նման պայմաններում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի սխալ մեկնաբանության և գործով ապացույցների սխալ գնահատման վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկները հիմնավոր են:

Վճռաբեկ բողոքի պատասխանում պաշտոնների «անհամարժեք» լինելու վերաբերյալ փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին և հիմնավորումներին, ապա Վճռաբեկ դատարանը դրանք հիմնավոր չի համարում հետևյալ պատճառներով:

Աշխատանքից ազատելու ծանուցման մեջ որոշակի թերությունների առկայությունը սույն գործի լուծման համար էական նշանակություն չունի, քանի որ ծանուցումը պարունակել է դրա համար անհրաժեշտ էական պայմանները՝ դրանում նշված են ինչպես հայցվորի զբաղեցրած հաստիքը կրճատվելու հանգամանքը, այնպես էլ աշխատանքային պայմանագիրը հետագայում լուծելու հիմքը և պատճառը, ուստի և հայցվորի համար իրավական անորոշություն չի եղել:

Ինչ վերաբերում է Դատարանի կողմից 22.05.2018 թվականի դատական նիստը չհետաձգելուն, ապա այդ անուշոյամբ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ պատշաճ ծանուցված լինելու պայմաններում հայցվորը և նրա ներկայացուցիչը դատական նիստին չեն ներկայացել, իսկ հայցվորը նաև որևէ միջնորդությամբ հանդես չի եկել, ուստի Դատարանն ու Վերաքննիչ դատարանն այդ կապակցությամբ դատավարական որևէ նորմի խախտում թույլ չեն տվել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ադիս Աբրահամյանին հաստիքների կրճատման հիմքով աշխատանքից ազատելիս գործատուի մոտ նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանքի առկայության, ինչպես նաև վաճառող-խորհրդատուի աշխատանքը նրա նախկինում կատարած աշխատանքին համապատասխան լինելու հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ է գործի նոր քննություն, ուստի սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [«Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Տվյալ դեպքում Ադիս Աբրահամյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, և գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 401-րդ, 403-րդ, 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.11.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի, այդ թվում և պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0834/02/16
2021թ.

Քաղաքացիական գործ թիվ

ԵԿԴ/0834/02/16

Նախագահող դատավոր՝

Ա. Պետրոսյան

Դատավորներ՝

Ա. Մխիթարյան

Ա. Մկրտչյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ

2021 թվականի մարտի 19-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (նախկինում՝ «Արդշինին-վեստբանկ» ՓԲԸ) (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ Հասմիկ Անդրիասյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.01.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հրաչյա Լևոնյանի, Մարի Քոչարյանի և Արարատ Հարությունյանի (այսուհետ՝ Համահայցվորներ) ընդդեմ Բանկի՝ չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի համար գումարի և տուժանքի բռնագանձման պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Համահայցվորները պահանջել են Բանկից հօգուտ Հրաչյա Լևոնյանի բռնագանձել 3.275.070 ՀՀ դրամ՝ որպես չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի համար գումար (ներառյալ՝ հաշվարկված տուժանքի գումարը), հօգուտ Մարի Քոչարյանի բռնագանձել 3.998.018 ՀՀ դրամ՝ որպես չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի համար գումար (ներառյալ՝ հաշվարկված տուժանքի գումարը), հօգուտ Արարատ Հարությունյանի բռնագանձել 17.959.404 ՀՀ դրամ՝ որպես չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի համար գումար (ներառյալ՝ հաշվարկված տուժանքի գումարը):

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Մազմանյան) 28.12.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (սախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան, դատավորներ՝ Մ. Հարթեյան, Գ. Խանդանյան) 28.09.2017 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.12.2016 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Է. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 04.10.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Բանկից հոգուտ Հրաչյա Լևոնյանի բռնագանձվել է որպես աշխատանքային չօգտագործված արձակուրդային գումար 31 օրացուցային (21 աշխատանքային) օրերի դիմաց միջին աշխատավարձը, որը կազմում է 196.504 ՀՀ դրամ, նշված գումարին հաշվեգրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվեգրվող տոկոսներ՝ սկսած 23.05.2011 թվականից մինչև նշված գումարի վճարման օրը, հոգուտ Մարի Քոչարյանի բռնագանձվել է որպես աշխատանքային չօգտագործված արձակուրդային գումար 80 օրացուցային (59 աշխատանքային) օրերի դիմաց միջին աշխատավարձը, որը կազմում է 1.474.170 ՀՀ դրամ, նշված գումարին հաշվեգրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվեգրվող տոկոսներ՝ սկսած 31.04.2011 թվականից մինչև նշված գումարի վճարման օրը, հոգուտ Արարատ Հարությունյանի բռնագանձվել է որպես աշխատանքային չօգտագործված արձակուրդային գումար 130 օրացուցային (89 աշխատանքային) օրերի դիմաց միջին աշխատավարձը, որը կազմում է 5.399.957 ՀՀ դրամ, նշված գումարին հաշվեգրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվեգրվող տոկոսներ՝ սկսած 24.03.2011 թվականից մինչև նշված գումարի վճարման օրը: Մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.01.2019 թվականի որոշմամբ Համահայցվորների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.10.2018 թվականի վճիռը՝ գումարի բռնագանձման մասով, թողնվել է անփոփոխ: Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 04.10.2018 թվականի վճիռը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառելու մասով, բեկանվել է և փոփոխվել՝ այդ մասով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ, 166-րդ, 167-րդ, 169-րդ, 170-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ամենամյա արձակուրդից հետ կանչելու դեպքում չօգտագործված, սակայն վճարված ամենամյա արձակուրդի օրերը հետագայում տրամադրելու դեպքում այդ օրերի համար ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված միջին աշխատավարձ հաշվարկելու և վճարելու գործատուի պարտավորությունն առաջանում է 07.08.2010 թվականից հետո, այսինքն՝ մինչև 07.08.2010 թվականը գործատուն նման պարտավորություն չի ունեցել:

07.08.2010 թվականից հետո գործատուների համար առաջացել են վատթարացնող պայմաններ, քանի որ սկսած 07.08.2010 թվականից գործատուների համար սահմանվել է չօգտագործված արձակուրդային օրերի համար երկու անգամ վճարելու պարտականություն՝ մեկ անգամ արձակուրդ գնալիս՝ անկախ հետագայում արձակուրդից հետ կանչվելու հանգամանքից, իսկ երկրորդ անգամ՝ չօգտագործված արձակուրդը հետագայում

օգտագործելու կամ չօգտագործելու դեպքում՝ պայմանագիրը լուծելիս վերջնահաշվարկի հետ:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակի բեկանել Վերաքննիչ դատարանի 29.01.2019 թվականի որոշումը՝ վճիռը՝ գումարի բռնագանձման մասով, օրինական ուժի մեջ թողնելու մասով, և այն փոփոխել՝ հայցն ամբողջությամբ մերժել:

3. Վճուրբել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուրբել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հրաչյա Լևոնյանի թիվ 0285745 աշխատանքային գրքույկի համաձայն՝ վերջինս 21.04.2003 թվականից մինչև 23.05.2011 թվականն աշխատել է Բանկում, 23.05.2011 թվականին աշխատանքային պայմանագիրը լուծվել է, և Հրաչյա Լևոնյանը թիվ 41-Ա հրամանով ազատվել է աշխատանքից (**հատոր 1-ին, գ.թ. 12-20**):

2) Մարի Քոչարյանի թիվ 1416656 աշխատանքային գրքույկի համաձայն՝ վերջինս 21.04.2003 թվականից մինչև 30.04.2011 թվականն աշխատել է Բանկում, 30.04.2011 թվականին աշխատանքային պայմանագիրը լուծվել է, և Մարի Քոչարյանը թիվ 242-Ա հրամանով ազատվել է աշխատանքից (**հատոր 1-ին, գ.թ. 21-28**):

3) Արարատ Հարությունյանի թիվ 1487910 աշխատանքային գրքույկի համաձայն՝ վերջինս 21.04.2003 թվականից մինչև 24.03.2011 թվականն աշխատել է Բանկում, 24.03.2011 թվականին աշխատանքային պայմանագիրը լուծվել է, և Արարատ Հարությունյանը թիվ 148-Ա հրամանով ազատվել է աշխատանքից (**հատոր 1-ին, գ.թ. 29-38**):

4) Բանկի և Արարատ Հարությունյանի միջև 24.03.2011 թվականին կնքված «Աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» համաձայնագրի համաձայն՝ գործատուն պարտավորվել է մինչև 12.04.2011 թվականն աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ՝ 21.04.2010-23.03.2011 թվականները ներառյալ ընկած ժամանակահատվածի և 21.04.2009-2010 թվականներն ընկած ժամանակահատվածի 19 չօգտագործած օրերի համար (**հատոր 1-ին, գ.թ. 93**):

5) Բանկի և Մարի Քոչարյանի միջև 28.04.2011 թվականին կնքված «Աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» համաձայնագրի համաձայն՝ գործատուն պարտավորվել է պայմանագրի լուծման օրը աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ՝ 20.01.2011-26.04.2011 թվականները ներառյալ ընկած ժամանակահատվածի համար (**հատոր 1-ին, գ.թ. 94**):

6) Բանկի և Հրաչյա Լևոնյանի միջև 23.05.2011 թվականին կնքված «Աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» համաձայնագրի համաձայն՝ գործատուն պարտավորվել է մինչև 23.05.2011 թվականն աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ՝ 21.04.2003-23.05.2011 թվականներն ընկած ժամանակահատվածի համար՝ նրան վճարելով աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (**հատոր 1-ին, գ.թ. 95**):

7) Բանկի կողմից 26.04.2016 թվականին տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Արարատ Հարությունյանի չօգտագործված արձակուրդի օրերն են 41 օր (գումար՝ 2.487.621,1 ՀՀ դրամ): 31.03.2011 թվականին վերջինիս վճարվել է 166.311 ՀՀ դրամ (որպես հավելավճար/աշխատավարձ), իսկ 12.04.2011 թվականին վճարվել է 2.752.904,90 ՀՀ դրամ (որպես պարգևատրում և չօգտագործված արձակուրդ):

Մարի Քոչարյանի չօգտագործված արձակուրդի օրերն են 24 օր (գումար՝ 599.703,1 ՀՀ դրամ): 30.04.2011 թվականին վերջինիս վճարվել է 586.610,20 ՀՀ դրամ (որպես հավելավճար/աշխատավարձ, հիվանդաթերթիկ, չօգտագործված արձակուրդ):

Հրաչյա Լևոնյանի չօգտագործված արձակուրդի օրերն են՝ 26 օր (գումար՝ 243.290,9 ՀՀ դրամ): 23.05.2011 թվականին վերջինիս վճարվել է 214.856,90 ՀՀ դրամ (որպես աշխատավարձ, չօգտագործված արձակուրդ) (**հատոր 1-ին, գ.թ. 96**):

8) Բանկի կողմից 28.11.2016 թվականին տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Հրաչյա Լևոնյանն ունի 31 օրացուցային (21 աշխատանքային) չօգտագործված արձակուրդային օրեր, Մարի Քոչարյանը՝ 80 օրացուցային (59 աշխատանքային) չօգտագործված

արձակուրդային օրեր, Արարատ Հարությունյանը՝ 130 օրացուցային (89 աշխատանքային) չօգտագործված արձակուրդային օրեր **(հատոր 3-րդ, գ.թ. 54):**

9) Համայնացվորներն ամենամյա արձակուրդից հետո են կանչվել մինչև 07.08.2010 թվականը **(չվիճարկվող փաստ):**

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ մինչև 07.08.2010 թվականը և դրանից հետո աշխատողին արձակուրդից հետո կանչելու դեպքում աշխատողին կրկնակի վճարելու իրավական խնդրի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 166-րդ, 167-րդ, 169-րդ, 170-րդ հոդվածների, իրավահարաբերության ծագման պահին գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդարառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

- արդյո՞ք մինչև «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կարարելու մասին» 24.06.2010 թվականի թիվ ՀՕ-117-Ն օրենքի (այսուհետք՝ Օրենք)՝ 07.08.2010 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի կարգավորումների ուժով աշխատանքային պայմանագիրը լուծելիս վերջնահաշվարկ կարարելիս գործարուն պարտավոր էր աշխատողին արձակուրդից հետո կանչելու հերևանքով վճարված, սակայն չօգրագործված ամենամյա արձակուրդի օրերի համար վճարել միջին աշխատավարձ.

- արդյո՞ք Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատողին արձակուրդից հետո կանչելու հերևանքով վճարված, սակայն չօգրագործված ամենամյա արձակուրդի օրերի համար միջին աշխատավարձ վճարելու վերաբերյալ նորմերը կիրառելի են մինչև Օրենքն ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

4.1. 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: (...)

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

Միավորված ազգերի կազմակերպության 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 24-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հանգստի ու ժամանցի իրավունք, ներառյալ՝ աշխատանքային օրվա խելամիտ սահմանափակման և պարբերական վճարովի արձակուրդի իրավունքը:

Միավորված ազգերի կազմակերպության 1966 թվականի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածի համաձայն՝ նույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների՝ յուրաքանչյուրի իրավունքը, մասնավորապես, (...) հանգիստը, ժամանցն ու աշխատանքային ժամանակի խելամիտ սահմանափակումը և վճարվող

պարբերական արձակուրդը, հավասարապես և վարձատրությունը՝ տոնական օրերի դիմաց:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում 03.05.1996 թվականին ընդունված Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքի արդար պայմանների իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝ (...) ապահովել տարեկան նվազագույնը չորսշաբաթյա վճարովի արձակուրդ, (...):

Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովի կողմից 03.06.1970 թվականին ընդունված «Վճարովի արձակուրդների մասին» վերանայված կոնվենցիայի (*Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 03.10.2005 թվականին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 27.01.2006 թվականին*) 3-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, ում նկատմամբ կիրառվում է նույն Կոնվենցիան, ունի ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք՝ սահմանված նվազագույն տևողությամբ:

Նույն կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն՝ այն աշխատող անձը, որը լրացրել է նույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող աշխատանքի նվազագույն ժամանակահատվածը, աշխատանքի դադարեցման դեպքում ստանում է վճարովի արձակուրդ իր աշխատանքի ժամանակահատվածի տևողությանը համապատասխանող մասով, որի համար նա չի ստացել այդպիսի արձակուրդ, կամ՝ դրա փոխարեն տրվող փոխհատուցում, կամ՝ արձակուրդին համարժեք գումար:

Նույն կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ նույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ամենամյա նվազագույն վճարովի արձակուրդի իրավունքից հրաժարվելու կամ նման արձակուրդները չօգտագործելու վերաբերյալ համաձայնությունները՝ փոխհատուցման դիմաց, ազգային պայմաններին համապատասխան ձևերով, համարվում են անվավեր կամ արգելվում են:

Նույն կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երկրի իրավասու մարմնի կողմից կամ համապատասխան ընթացակարգերի միջոցով կարող են սահմանվել հատուկ կանոններ այնպիսի դեպքերի վերաբերյալ, երբ աշխատող անձն արձակուրդի ընթացքում զբաղվում է արձակուրդի նպատակին հակասող եկամուտ ստանալուն ուղղված գործունեությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներն են՝(...)

3) աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից և ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից. (...)

10) կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի կողմերի պատասխանատվությունը՝ ըստ իրենց պարտականությունների:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի պահանջները: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմի մեկնաբանումը չպետք է փոփոխի դրա իմաստը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե նույն օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ,

իսկ եթե այդ պարտավորությունը գործատուից անկախ պատճառներով հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 151-րդ հոդվածի համաձայն՝ հանգստի ժամանակի տեսակներն են՝ (...) (5) ամենամյա հանգիստը (ոչ աշխատանքային՝ տոնական ու հիշատակի օրեր, արձակուրդ):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդն աշխատանքային օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար: Այդ ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը (պաշտոնը) և վճարվում է միջին աշխատավարձը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդից հետ կանչել թույլատրվում է միայն աշխատողի համաձայնությամբ (...): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը տրամադրվում է նույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդի տեղափոխումը թույլատրվում է միայն աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ: (...)

Մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը՝ 07.08.2010 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին մասով սահմանված պատճառները կամ այլ պատճառներ (որոնց հետևանքով ամենամյա արձակուրդը հնարավոր չէ օգտագործել) առաջացել են մինչև ամենամյա արձակուրդն սկսվելը, աշխատողի և գործատուի համաձայնությամբ ամենամյա արձակուրդը տեղափոխվում է այլ ժամանակ: Եթե այդ պատճառներն առաջացել են ամենամյա արձակուրդի ընթացքում, ապա ամենամյա արձակուրդը երկարաձգվում է համապատասխան օրերի քանակով, կամ գործատուի ու աշխատողի համաձայնությամբ ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը տեղափոխվում է այլ ժամանակ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղափոխված ամենամյա արձակուրդը, որպես կանոն, տրամադրվում է նույն աշխատանքային տարում: Աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը կարող է տեղափոխվել և միացվել հաջորդ տարվա ամենամյա արձակուրդին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գործող խմբագրության համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին մասով սահմանված պատճառները կամ այլ պատճառներ (որոնց հետևանքով ամենամյա արձակուրդը հնարավոր չէ օգտագործել) առաջացել են մինչև ամենամյա արձակուրդն սկսվելը, ամենամյա արձակուրդը տեղափոխվում է այլ ժամանակ: Եթե այդ պատճառներն առաջացել են ամենամյա արձակուրդի ընթացքում, ապա ամենամյա արձակուրդը երկարաձգվում է համապատասխան օրերի քանակով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղափոխված ամենամյա արձակուրդը, որպես կանոն, տրամադրվում է նույն աշխատանքային տարում, բայց ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում՝ սկսած այն աշխատանքային տարվա վերջից, որի համար աշխատողին չի հատկացվել կամ մասնակի է հատկացվել ամենամյա արձակուրդը: Աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը կարող է տեղափոխվել և միացվել հաջորդ տարվա ամենամյա արձակուրդին:

Մինչև 07.08.2010 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 168-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքից ազատվելիս (բացառությամբ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով և 123-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերի) չօգտագործված ամենամյա արձակուրդը աշխատողի ցանկությամբ տրամադրվում է ազատման տարին, ամիսը, ամսաթիվը

տեղափոխելու միջոցով: Այդ դեպքում աշխատանքից ազատման օր է համարվում ամենամյա արձակուրդի ժամկետի ավարտին հաջորդող օրը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 168-րդ հոդվածի՝ գործող խմբագրության համաձայն՝ աշխատանքից ազատվելիս (բացառությամբ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով և 109-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ կետերով նախատեսված դեպքերի) չօգտագործված ամենամյա արձակուրդը այդ իրավունքը ձեռք բերած աշխատողի ցանկությամբ տրամադրվում է ազատման տարին, ամիսը, ամսաթիվը տեղափոխելու միջոցով: Այդ դեպքում աշխատանքից ազատման օր է համարվում ամենամյա արձակուրդի ժամկետի ավարտին հաջորդող օրը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդի համար գործատուն աշխատողին վճարում է միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձը տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով: (...)

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի՝ գործող խմբագրությամբ 3-րդ մասի համաձայն՝ (...) վճարված, սակայն չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերը հետագայում օգտագործելու դեպքում այս օրերի համար գործատուն վճարում է նույն օրենսգրքով սահմանված կարգով միջին աշխատավարձ:

Մինչև 07.08.2010 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամենամյա նվազագույն արձակուրդի փոխարինումը դրամական հատուցմամբ չի թույլատրվում: Եթե աշխատանքային պայմանագրի լուծման հետևանքով աշխատողին չի կարող տրամադրվել ամենամյա արձակուրդ, կամ աշխատողը չի ցանկանում դրա տրամադրումը, ապա նրան վճարվում է դրամական հատուցում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս՝ անկախ դրա գործողության ժամկետից: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի՝ գործող խմբագրությամբ 1-ին մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդի փոխարինումը դրամական հատուցմամբ չի թույլատրվում: Եթե աշխատանքային պայմանագրի լուծման հետևանքով ամենամյա արձակուրդի իրավունք ձեռք բերած աշխատողին չի կարող տրամադրվել ամենամյա արձակուրդ, կամ աշխատողը չի ցանկանում դրա տրամադրումը, ապա նրան վճարվում է դրամական հատուցում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.07.2018 թվականի թիվ ՍԴԽ-1424 որոշմամբ արձանագրել է, որ սոցիալական իրավունքների արագրումն ու այդ իրավունքների իրականացման ապահովումը բխում է Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջից, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է: Սահմանադրության 82-րդ հոդվածը, որը նվիրված է աշխատանքային պայմաններին, որպես սոցիալական ոլորտի օրենսդրական երաշխիք՝ յուրաքանչյուր աշխատողի համար նախատեսել է, ի թիվս այլնի, ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ, ամենամյա արձակուրդի սահմանադրական իրավունքն ուղղված է ապահովելու անձի՝ հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու անհրաժեշտությունը, ինչից ելնելով էլ իրավակարգավորումները, որպես ընդհանուր կանոն, արգելում են ամենամյա արձակուրդի փոխարինումը

դրամական հատուցմամբ: Մինևույն ժամանակ, ամենամյա արձակուրդից օգտվելն անձի իրավունքն է, իսկ արձակուրդի տրամադրման կարգի սահմանման պարտականությունը կրում է պետությունը:

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ դիրքորոշումը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության և ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանված կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես սոցիալական պետություն, երաշխավորվում է աշխատողի կարևորագույն իրավունքներից մեկը՝ հանգստի՝ մասնավորապես ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքը: Վերջինս սոցիալական հիմնարար իրավունք է, որն ուղղված է կենսապայմանների բարելավմանը՝ ապահովելով առողջության ու անվտանգության լավագույն պաշտպանությունը:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ հիմք ընդունելով աշխատողների և գործատուների իրավահավասարության, աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքը՝ որևէ նորմատիվ կարգավորում կամ նորմի մեկնաբանում չպետք է հանգեցնի մասնավոր-իրավական բնույթի աշխատանքային հարաբերության կողմերի հավասարակշռության խախտման:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը 02.12.2014 թվականի թիվ ՄԴՌ-1176 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրությունն ստատիկ երևույթ չէ, այն կարող է և պետք է ենթարկվի դինամիկ փոփոխության՝ **մշտապես կատարելագործվելով տնտեսական զարգացմանը, տեղի ունեցող միջազգային ինտեգրման գործընթացներին, հասարակական հարաբերությունների վերափոխմանն ու մի շարք այլ գործոններին համահունչ:** Մինևույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը կարևորել է օրենսդրական փոփոխությունների գործընթացի **կայունությունն ու ներդաշնակությունը**, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին **իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին**՝ թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից ցուցաբերված սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վկայակոչել սահմանադրական մարմին հանդիսացող մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումն այս հարցում՝ նկատի ունենալով, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ նույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից **մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը**, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, **իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:**

Այսպես, ըստ Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշման՝ աշխատանքային իրավունքի կարգավորումների խնդիրներից է փոփոխվող տնտեսական պայմաններում **ապահովել հավասարակշռությունը** գործարարների համար աշխատուժի կառավարման ճկունության և աշխատողների՝ ողջամիտ աշխատաժամանակի իրավունքի պաշտպանության միջոցով առողջության և անվտանգության ապահովելու անհրաժեշտությունների միջև: Այս իմաստով աշխատանքային իրավունքին վերաբերող հարցերը պետք է քննարկվեն գործատուի շահերի և աշխատողների իրավունքների պաշտպանության միջակայքում՝ փորձելով հնարավորինս ներդաշնակեցնել առողջության պահպանության և աշխատաժամանակի կարգավորման կանոնները (*տե՛ս «Եվրոպական Միության իրավունքին ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխանության վերաբերյալ» ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականի արտահերթ հրապարակային զեկույցը*):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ աշխատողին արձակուրդից հետ կանչելու կարգավորումներին մինչև 07.08.2010 թվականը և դրանից հետո:

Ինչպես մինչև 07.08.2010 թվականը, այնպես էլ դրանից հետո գործող կարգավորմամբ աշխատողին ամենամյա արձակուրդից հետ կանչելը թույլատրվում է բացառապես

աշխատողի համաձայնությամբ, ինչը բխում է վերը թվարկված մի շարք միջազգային իրավական ակտերով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ աշխատողի հանգստի իրավունքի լիարժեք իրացման անհրաժեշտությունից: Նույն տրամաբանությամբ ամենամյա արձակուրդի տեղափոխումը նույնպես թույլատրվում է միայն աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ:

Միաժամանակ օրենսդիրը գրեթե նույնական կարգավորում էր նախատեսել այն դեպքերի համար, երբ աշխատանքից ազատվելու դրությամբ աշխատողն ունի դեռևս չօգտագործված արձակուրդ: Ինչպես մինչև 07.08.2010 թվականը, այնպես էլ դրանից հետո աշխատողն իրավունք ունի պահանջել, որ իր ազատման տարին, ամիսը, ամսաթիվը տեղափոխեն (07.08.2010 թվականից հետո գործող կարգավորմամբ այդ իրավունքը պատկանում է ամենամյա արձակուրդի իրավունքը ձեռք բերած աշխատողին): Այսինքն՝ նման դեպքում փաստացի ստացվում է, որ աշխատողը դեռևս գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ մինչև ազատման տարին, ամիսը և ամսաթիվը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով ամրագրված է եղել և ամրագրված է այն կարևորագույն միջազգային սկզբունքը, որ ամենամյա արձակուրդը չի կարող փոխարինվել դրամական հատուցմամբ, որը նպատակ ունի ապահովել յուրաքանչյուր աշխատողի աշխատունակության վերականգնման համար խիստ անհրաժեշտ ամենամյա հանգստի իրավունքի արդյունավետ իրացումը գործնականում: Դրամական հատուցում տրվում է միայն այն դեպքում, երբ աշխատանքային տարվա ընթացքում աշխատողը չի օգտագործել իր արձակուրդը և հետագայում ազատվել է աշխատանքից: Նման դեպքում վերջնահաշվարկ կատարելիս գործատուն վճարում է նաև չօգտագործված արձակուրդային օրերի դիմաց: Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ նման կարգավորումը չի նշանակում «ամենամյա արձակուրդի փոխարինում դրամական հատուցմամբ», քանի որ տվյալ դեպքում աշխատանքային հարաբերությունները դադարում են, ուստի գործատուն պարտավոր է վճարել նաև այն արձակուրդի համար, որի իրավունքն ուներ աշխատողը, սակայն չէր օգտագործել:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինչպես մինչև 07.08.2010 թվականը, այնպես էլ դրանից հետո գործող կարգավորմամբ ամենամյա արձակուրդի համար գործատուն աշխատողին վճարում է միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձը տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով: Սակայն 07.08.2010 թվականից հետո գործատուի համար ծագել է պարտականություն՝ *վճարված, սակայն չօգտագործված* ամենամյա արձակուրդի օրերը հետագայում օգտագործելու դեպքում այս օրերի համար նույնպես վճարել միջին աշխատավարձ: Նման իրավիճակը ծագում է աշխատողին արձակուրդից հետ կանչելու դեպքում: Նկատի ունենալով, որ արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է նախապես (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մաս), արձակուրդից հետ կանչելուց հետո աշխատողը համարվում է աշխատանքում գտնվող:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ 07.08.2010 թվականից հետո գործող կարգավորմամբ օրենսդիրը կարևորել է, որ արձակուրդից հետ կանչված աշխատողին հետագայում արձակուրդ տրամադրելու դեպքում վերջինիս երկրորդ անգամ պետք է վճարվի միջին աշխատավարձ՝ արձակուրդի համար: Այսինքն՝ արձակուրդից հետ կանչված աշխատողը 07.08.2010 թվականից հետո ունի դարձյալ վճարվի արձակուրդի իրավունք՝ իր կողմից չօգտագործված օրերի քանակով: Նկատի ունենալով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծելիս վճարվում է դրամական հատուցում՝ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար, հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 07.08.2010 թվականից հետո արձակուրդից հետ կանչված աշխատողն ունի արձակուրդի դիմաց երկրորդ անգամ վճարվելու իրավունք կամ արձակուրդն օգտագործելու դեպքում, կամ աշխատանքային պայմանագիրը լուծելիս:

Ամփոփելով 4.1 կետում ներկայացված իրավական վերլուծությունները և պատասխանելով սույն որոշմամբ առաջադրված առաջին հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը. *մինչև 07.08.2010 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ*

աշխատանքային օրենսգրքի կարգավորումների ուժով աշխատանքային պայմանագիրը լուծելիս վերջնահաշվարկ կատարելիս գործարտուն պարտավոր չէր աշխատողին արձակուրդից հետո կանչելու հնարաններով վճարված, սակայն չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի համար վճարել միջին աշխատավարձ: Ենան պարտականություն գործարտի համար ծաղել է 07.08.2010 թվականից հետո:

4.2. 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն (...) Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտեր հետադարձ ուժ չունեն: Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 03.04.2002 թվականին ընդունված, 31.05.2002 թվականին ուժի մեջ մտած և 07.04.2018 թվականին ուժը կորցրած «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն նույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում: Հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների, բացառությամբ նրա առանձին մասերը վերացված կամ անվավեր կամ չեղյալ ճանաչելու դեպքերի, գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե նույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, իսկ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն նույն օրենսգրքով, այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ նորմատիվ իրավական ակտով նախատեսված դեպքերում: Հետադարձ ուժ չի կարող տրվել **գործատուների կամ քաղաքացիների** իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը

խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգը սահմանող կամ խստացնող, գործատուների կամ քաղաքացիների գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (ինպերատիվ նորմերին):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո ընդունվել է օրենք կամ այլ նորմատիվ իրավական ակտ, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ, քան պայմանագիրը կնքելիս գործող կանոններն են սահմանում, ապա կնքված պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված է, որ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա: Օրենսդրությամբ ավելի բարենպաստ պայմաններ սահմանվելու դեպքում աշխատանքային պայմանագիրը պետք է համապատասխանեցվի օրենսդրության պահանջներին:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014 թվականի թիվ ՄԴՈ-1142 որոշմամբ գտել է, որ առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանը 26.05.2009 թվականի թիվ ՄԴՈ-804 որոշմամբ կարևորել է, որ օրենքի դրույթի որոշակիության և կանխատեսելիության գնահատականը կարող է տրվել **միայն տվյալ դրույթը ողջ իրավակարգավորման համատեքստում դիտարկելու դեպքում**:

Իր բազմաթիվ որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-731, ՄԴՈ-753, ՄԴՈ-984, ՄԴՈ-1142, ՄԴՈ-1176, ՄԴՈ-1213, ՄԴՈ-1270 և այլն) ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ նշելով, մասնավորապես.

- «(...) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՄԴՈ-630),

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (ՄԴՈ-753),

- «(...) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարբերույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (ՄԴՈ-1176),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի

դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (ՄԴՈ-1213),

- «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրությունների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձակապես ցվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (ՄԴՈ-1270),

- «(...) իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին» (ՄԴՈ-1270):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նույնպես բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես, *Բուսույոկու ընդդեմ Մոլդովայի գործով (Case of Busuioac v. Moldova, գանգառ թիվ 61513/00) 21.12.2004 թվականի վճռում* Եվրոպական դատարանը գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է:

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատողին արձակուրդից հետ կանչելու հետևանքով վճարված, սակայն չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի համար միջին աշխատավարձ վճարելու վերաբերյալ նորմերի՝ մինչև Օրենքն ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելիության հարցին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքով անցումային դրույթներ, այդ թվում՝ Օրենքի կարգավորումներին հետադարձ ուժ տալու մասին կանոններ, սահմանված չեն:

Հետևաբար ընդհանուր կանոնի համաձայն՝ Օրենքի գործողությունը պետք է տարածվի դրանից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ: Այդուհանդերձ, նկատի ունենալով, որ տվյալ գործով վեճը գործատուի և աշխատողների շահերի հավասարակշռման հետ է կապված, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում առավել մանրամասն անդրադառնալ այդ հարցին՝ հիմք ընդունելով նաև Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումները:

Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 12-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում է, որ **գործատուների կամ քաղաքացիների** իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտերին հետադարձ ուժ չի կարող տրվել: Ընդ որում, ի տարբերություն հանրային իրավունքի, որի դեպքում հնարավոր է եզրահանգել, թե իրավական նորմն անհատի համար որքանով է վատթարացնող կամ բարենպաստ, մասնավոր իրավունքի՝ մասնավորապես աշխատանքային իրավունքի դեպքում պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ աշխատանքային հարաբերությունների երկու կողմն էլ **մասնավոր անձինք են՝ գործատու և աշխատող**, որոնց շահերը հակադիր են: Հետևաբար ինքնաբերաբար եզրահանգել, որ օրինակ աշխատողի համար բարենպաստ իրավական նորմին պետք է

տրվի հետադարձ ուժ, գործատուի տեսանկյունից կհակասի աշխատանքային հարաբերություններում կողմերի իրավահավասարության սկզբունքին, ինչպես նաև սույն որոշման 4.1 կետում ներկայացված՝ աշխատողի և գործատուի շահերի հավասարակշռման անհրաժեշտությանը:

Ավելին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84.1-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը պետք է համապատասխանի **այն կնքելու պահին գործող ինպերատիվ նորմերին**: Այսինքն՝ գործատուի և աշխատողի համար պետք է կանխատեսելի լինի ինպերատիվ նորմերի կիրառումը պայմանագրի կնքման պահին: Հետագայում ինպերատիվ նորմերում կատարված ցանկացած փոփոխություն կիրառելի կդառնա աշխատանքային պայմանագրի նկատմամբ, եթե միայն այդ ինպերատիվ նորմերին ուղղակիորեն տրվի հետադարձ ուժ՝ պահպանելով հետադարձ ուժ տալու արգելքների վերաբերյալ կանոնները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ նույն հոդվածով սահմանված այն կանոնը, որ *«օրենսդրությամբ ավելի բարենպաստ պայմաններ սահմանվելու դեպքում աշխատանքային պայմանագիրը պետք է համապատասխանեցվի օրենսդրության պահանջներին»*, վերաբերում է միայն այն դեպքին, երբ սահմանված պայմանները բարենպաստ են և՛ գործատուի, և՛ աշխատողի համար: Վճռաբեկ դատարանը դարձյալ ընդգծում է, որ աշխատանքային հարաբերություններում «բարենպաստ պայմանը» պետք է հավասարապես բարենպաստ լինի և՛ աշխատողի, և՛ գործատուի համար, եթե համապատասխան նորմում հատուկ չի շեշտվում այն կողմը, ում շահերի առավել պաշտպանության համար սահմանվել է այդ նորմը (օրինակ՝ աշխատանքային օրենսդրությամբ կարող են սահմանվել լրացուցիչ երաշխիքներ աշխատողների համար, որի դեպքում այն բարենպաստ կլինի հենց աշխատողի համար):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված կանոնները կիրառելի են նաև աշխատանքային պայմանագրի՝ որպես կողմերի միջև իրավահարաբերության առկայությունը ամրագրող փաստաթղթի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ եթե աշխատանքային պայմանագրով ուղղակիորեն չսահմանված պայմաններն են փոփոխվում (օրինակ՝ աշխատանքային պայմանագրի լուծման կամ կարգապահական պատասխանատվության), ապա դարձյալ պետք է հիմք ընդունել գործատուի և աշխատողի շահերի հավասարակշռությունը համապատասխան նորմին հետադարձ ուժ տալու հարցը որոշելիս:

Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է ինչպես Եվրոպական դատարանի, այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կարևորված «իրավական որոշակիության», «իրավական օրենքի», «օրենքի դրույթի որոշակիության և կանխատեսելիության» սկզբունքների պահպանման անհրաժեշտությունից: Այլ կերպ ասած՝ աշխատանքային հարաբերությունների ընթացքում աշխատողը և գործատուն որևէ վարքագիծ դրսևորելիս պետք է նախքան այդ վարքագիծը լիարժեք կանխատեսեն, թե ինչ իրավական հետևանքների է հանգեցնելու իրենց դրսևորած վարքագիծը:

Սույն՝ 4.2 կետում ներկայացված իրավական դիրքորոշումները կիրառելով արձակուրդից հետ կանչելու կոնկրետ իրավահարաբերության նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործատուն աշխատողին արձակուրդից հետ կանչելիս պետք է լիարժեք կանխատեսի, թե ինչ իրավական հետևանքներ է սահմանել օրենսդիրը: Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո գործատուները կարող են խուսափել աշխատողին արձակուրդից հետ կանչել՝ գիտակցելով, որ իրենց համար ծագում է լրացուցիչ պարտականություն՝ հետագայում արձակուրդից օգտվելիս դարձյալ վճարել աշխատողին կամ աշխատանքից ազատվելիս վճարել հատուցում չօգտագործված արձակուրդային օրերի համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ աշխատանքային օրենսդրության սկզբունքների համարեքսպում Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատողին արձակուրդից հետ կանչելու հետևանքով վճարված, սակայն չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի համար միջին աշխատավարձ վճարելու վերաբերյալ նորմերը կիրառելի չեն մինչև Օրենքն ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Համահայցվորները 2003-2011 թվականներին աշխատել են Բանկում: 2011 թվականին Բանկի և Համահայցվորների միջև կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրերով գործատուն պարտավորվել է վերջիններին հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ:

Բանկի կողմից 26.04.2016 թվականին տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Արարատ Հարությունյանի չօգտագործված արձակուրդի օրերն են 41 օր (գումար՝ 2.487.621,1 ՀՀ դրամ): 31.03.2011 թվականին վերջինիս վճարվել է 166.311 ՀՀ դրամ (որպես հավելավճար/աշխատավարձ), իսկ 12.04.2011 թվականին վճարվել է 2.752.904,90 ՀՀ դրամ (որպես պարգևատրում և չօգտագործված արձակուրդ): Մարի Քոչարյանի չօգտագործված արձակուրդի օրերն են 24 օր (գումար՝ 599.703,1 ՀՀ դրամ): 30.04.2011 թվականին վերջինիս վճարվել է 586.610,20 ՀՀ դրամ (որպես հավելավճար/աշխատավարձ, հիվանդաթերթիկ, չօգտագործված արձակուրդ): Հրաչյա Լևոնյանի չօգտագործված արձակուրդի օրերն են՝ 26 օր (գումար՝ 243.290,9 ՀՀ դրամ): 23.05.2011 թվականին վերջինիս վճարվել է 214.856,90 ՀՀ դրամ (որպես աշխատավարձ, չօգտագործված արձակուրդ): Բանկի կողմից 28.11.2016 թվականին տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Հրաչյա Լևոնյան ունի 31 օրացուցային (21 աշխատանքային) չօգտագործված արձակուրդային օրեր, Մարի Քոչարյանը՝ 80 օրացուցային (59 աշխատանքային) չօգտագործված արձակուրդային օրեր, Արարատ Հարությունյանը՝ 130 օրացուցային (89 աշխատանքային) չօգտագործված արձակուրդային օրեր: Համահայցվորներն ամենամյա արձակուրդից հետո են կանչվել մինչև 07.08.2010 թվականը:

Դատարանը հայցի մասնակիորեն բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ և 170-րդ հոդվածներն ըստ էության փոփոխության չեն ենթարկվել, հետևաբար դրանց հետադարձ ուժ տալու կամ չտալու, ինչպես նաև գործատուի իրավական վիճակը վատթարացնելու հարցադրմանը չի անդրադարձել: Վկայակոչելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 06.09.2010 թվականի թիվ 83-Ա/1 հրամանով տրված պարզաբանումը՝ նշել է, որ այն վերաբերում է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 3-րդ մասին:

Վերաքննիչ դատարանը, Համահայցվորների վերաքննիչ բողոքը մերժելու, Բանկի վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի՝ Օրենքով լրացված 3-րդ մասը հետադարձ ուժ չունի, հետևաբար նաև մինչև 07.08.2010 թվականն ընկած իրավահարաբերությունների նկատմամբ չի կարող կիրառելի համարվել և այդ ժամանակահատվածի համար գործատուի համար առաջացնել համապատասխան պարտականություններ: Այդուհանդերձ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ թեև ՀՀ աշխատանքային օրենսգրքի մինչև 07.08.2010 թվականը գործող խմբագրությամբ սահմանված չէ գործատուի պարտականությունը աշխատողին վճարել միջին աշխատավարձ ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերն օգտագործելու դեպքում, սակայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է գործատուի պարտականությունը աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատողին տրամադրել դրամական հատուցում ամենամյա արձակուրդի չօգտագործված յուրաքանչյուր օրվա համար: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման համար անհրաժեշտ է նույն հոդվածի 1-ին մասի փաստակազմի առկայությունը, այն է՝ արձակուրդի չօգտագործված օրեր, դրանց տրամադրման անհնարինություն կամ աշխատողի համաձայնության բացակայություն: Հետևաբար ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի առկայության պայմաններում աշխատանքային պայմանագիրը լուծելիս՝ գործատուն պարտավոր է նաև փոխհատուցել այդ օրերի համար:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել սույն որոշման 4.1 կետով բացահայտված՝ ինչպես արձակուրդի տրամադրման, այնպես էլ արձակուրդից հետո կանչելու իրավական

հետևանքների իրավակարգավորման էությունը: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ արձակուրդի տրամադրման ժամանակ տրվում է միջին աշխատավարձ, իսկ աշխատանքից ազատվելիս **չօգտագործված** արձակուրդային օրերի համար հատուցում վճարվում է, եթե առկա է համապատասխան խմբագրությամբ օրենսդրությամբ սահմանված հիմքը, այն է՝ մինչև 07.08.2010 թվականը՝ եթե արձակուրդի համար չի վճարվել (այսինքն՝ արձակուրդ տրամադրելու իրավական ակտ ընդհանրապես կայացված չի եղել), իսկ 07.08.2010 թվականից հետո՝ անկախ վճարված լինելու հանգամանքից (այսինքն՝ և՛ այն դեպքերում, երբ արձակուրդ տրամադրելու իրավական ակտ ընդհանրապես կայացված չի եղել, և՛ եթե աշխատողը հետ է կանչվել արձակուրդից): Մինչդեռ Վերաքննիչ դատարանի կողմից տրված նորմի միայն տառացի մեկնաբանությունը հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված՝ նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանման կանոնին (*Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտի ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների փառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համադրությից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, փոխառնելով իրավական ակտում սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ փոխառնելով իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից*): Այսինքն՝ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը կիրառել է նորմը տառացի նշանակությամբ մեկնաբանելու կանոնը՝ անտեսելով սույն դրոշման 4.1 և 4.2 կետերով բացահայտված աշխատանքային օրենսդրության սկզբունքները, գործատուի և աշխատողի շահերի հավասարակշռման անհրաժեշտությունը:

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ սույն գործով իրավահարաբերությունը ծագել է մինչև 07.08.2010 թվականը, քանի որ աշխատողներն արձակուրդից հետ են կանչվել մինչ այդ: Այսինքն՝ աշխատողներին արձակուրդից հետ կանչելիս Բանկն ունեցել է օրենսդրորեն հիմնավորված այն համոզմունքը, որ չի կրելու աշխատողներին կրկնակի վճարելու պարտականություն (անկախ նրանից՝ վերջիններս կցանկանան կրկին օգտվել արձակուրդից, թե աշխատանքային հարաբերությունները կազմալուծվեն): Ընդգծելով մարդու հիմնարար սոցիալական իրավունք հանդիսացող հանգստի իրավունքի մաս կազմող ամենամյա արձակուրդի իրավունքի առանցքային նշանակությունն աշխատանքային հարաբերություններում՝ Վճռաբեկ դատարանը, այնուամենայնիվ, հարկ է համարում կրկին շեշտել, որ աշխատանքային հարաբերությունները մասնավոր-իրավական, կողմերի փոխադարձ հավասարության վրա հիմնված հարաբերություններ են, և աշխատողի շահերի պաշտպանությունը չի կարող իրականացվել գործատուի շահերի հաշվին:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով գործատու Բանկը չի կրում Համահայցվորներին մինչև 07.08.2010 թվականը վճարված արձակուրդի համար կրկին վճարելու պարտականություն, քանի որ Համահայցվորներն արձակուրդից հետ են կանչվել մինչև 07.08.2010 թվականը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովող սահմանադրական մարմին է, ում հայտնած դիրքորոշումները ուղենիշ են իրավահարաբերության մասնակիցների համար: Ավելին, նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը (ՀՀ դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ մաս): Մինչդեռ և՛ իրավահարաբերության ծագման պահին գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, և՛ գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ պաշտոնական պարզաբանումները չունեն պարտադիր բնույթ (համապատասխանաբար 87-րդ հոդվածի 6-րդ մաս և 43-րդ հոդվածի 6-րդ մաս), ինչը նշանակում է, որ պարզաբանումը չի կարող փոխարինել դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանման գործառնության ինքնուրույնությունը:

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 06.09.2010 թվականի «Պաշտոնական պարզաբանումը հաստատելու մասին» N 83-Ա/1 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նորմերի՝ մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած աշխատանքային պայմանագրային հարաբերությունների վրա տարածման վերաբերյալ պաշտոնական պարզաբանմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև դրանով սահմանված չէ, որ մինչև 07.08.2010 թվականն արձակուրդից հետո կանչված աշխատողների համար ծագում է կրկնակի վարձատրման իրավունք, այդուհանդերձ, անգամ նման դրույթ սահմանված լինելու դեպքում դատարանները պարտավոր են առաջնորդվել իրավական նորմի մեկնաբանման օրենսդրական կանոններով՝ այդ թվում հիմք ընդունելով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունները՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության հետ կապված (յովյալ դեպքում նորմը մեկնաբանելիս պետք է հիմք ընդունվեն սույն որոշման 4.1 և 4.2 կետերով բացահայտված սկզբունքները):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցը ենթակա էր մերժման, մինչդեռ և՛ Դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանն անտեսել են աշխատանքային հարաբերություններում կողմերի շահերի հավասարակշռման, իրավական նորմին հետադարձ ուժ տալու հիմնախնդրի առանձնահատկությունները, որի արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը՝ հանգեցնելով աշխատանքային հարաբերության մասնավոր-իրավական բնույթի և կողմերի իրավահավասարության սկզբունքի խախտման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն մասնակիորեն բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը վերանայվում է միայն Բանկի բողոքը մասնակիորեն մերժելու և այդ մասով Դատարանի վճիռն անփոփոխ թողնելու մասով:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման

կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են («Դատական ծախսերը» վերառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ) գլխի կանոնների համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ նույն գլխի կանոնների համաձայն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է մասնակի բեկանման և փոփոխման, իսկ հայցը՝ մերժման, հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետը, և այն հանգամանքը, որ Բանկը նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մասնակիորեն բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.01.2019 թվականի որոշման՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքը մերժելու և հայցի բավարարված մասով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 04.10.2018 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասը, և այն փոփոխել, հայցը՝ չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի համար գումար բռնագանձելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/40356/02/19	2021թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/40356/02/19	
Նախագահող դատավոր՝	Ս. Թորոսյան	
Դատավորներ՝	Ա. Խատատյան	
	Դ. Սերոբյան	

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով «Ինթելիջենթ Դիջիթլ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.11.2020 թվականի որոշման դեմ ըստ հայցի Մանյա Գասպարյանի ընդդեմ Ընկերության թիվ 39 աշխատանքային պայմանագրի 1.5 կետն անվավեր ճանաչելու, փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հիմքով աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին 03.09.2019 թվականի հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի գումարը և տուժանքը բռնագանձելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Մանյա Գասպարյանը պահանջել է անվավեր ճանաչել իր և Ընկերության միջև 11.06.2019 թվականին կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագրի 1.5

կետը փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հիմքով իր հետ կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին Ընկերության տնօրեն Ա. Բաղայանի 03.09.2019 թվականի հրամանը, վերականգնել իրեն նախկին աշխատանքում, Ընկերությունից բռնագանձել հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի միջին աշխատավարձը՝ սկսած 06.09.2019 թվականից մինչև նախկին աշխատանքում փաստացի վերականգնման օրը, ինչպես նաև բռնագանձել 40.384,159 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումը դատարան ներկայացնելու օրվա՝ 21.11.2019 թվականի դրությամբ աշխատավարձի վճարման կետանցված օրերի համար տուժանք, իսկ 22.11.2019 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը չվճարված աշխատավարձի գումարի նկատմամբ կետանցված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկել և բռնագանձել 0,15 տոկոսի չափով տուժանք, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա աշխատավարձի չափը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 22.07.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի՝ վճռվել է անվավեր ճանաչել Մանյա Գասպարյանի և Ընկերության միջև 11.06.2019 թվականին կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագրի 1.5 կետը և 03.09.2019 թվականի «Փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հիմքով աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» հրամանը, Մանյա Գասպարյանի հայցը՝ նախկին աշխատանքում վերականգնելու պահանջի մասին, մերժել, նախկին աշխատանքում չվերականգնելու հիմքով Ընկերությունից հօգուտ Մանյա Գասպարյանի բռնագանձել հատուցում հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ միջին աշխատավարձի չափով՝ սկսած 06.09.2019 թվականից մինչև Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, Մանյա Գասպարյանին իր նախկին աշխատանքում չվերականգնելու հիմքով Ընկերությունից հօգուտ Մանյա Գասպարյանի բռնագանձել հատուցում՝ միջին աշխատավարձի երկպատիկի չափով, Ընկերությունից հօգուտ Մանյա Գասպարյանի բռնագանձել 40.384,159 ՀՀ դրամ՝ որպես աշխատավարձի նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուժանքներ՝ հաշվարկված մինչև 21.11.2019 թվականի դրությամբ, ինչպես նաև հայցադիմումը Դատարան ներկայացնելու հաջորդ օրվանից՝ 22.11.2019 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը չվճարված աշխատավարձի գումարի նկատմամբ յուրաքանչյուր օրվա համար հաշվարկել և բռնագանձել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուժանքները, բայց ոչ ավել, քան վճարման ենթակա աշխատավարձի չափը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.11.2020 թվականի որոշմամբ Ընկերության և Մանյա Գասպարյանի ներկայացրած վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 22.07.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Ընկերությունը (ներկայացուցիչ Ադանիկ Ավետիսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Մանյա Գասպարյանը (ներկայացուցիչներ Սլավիկ Պողոսյան, Արտակ Նավասարդյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը, 9-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, 60-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումները պարզապես չի հերքել փաստարկներով.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պաշտպանության եղանակները չեն կարող կիրառելի լինել աշխատանքային հարաբերությունների նկատմամբ այնքանով, որքանով որ դրանք միաժամանակ նախատեսված չեն ՀՀ աշխատանքային օրենսգրքով,

մասնավորապես՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածում բացակայում է աշխատանքային պայմանագիրը կամ դրա դրույթներն անվավեր ճանաչելու վերաբերյալ իրավունքի պաշտպանության եղանակը: Սա բացատրվում է աշխատանքային հարաբերություններում երկկողմանի ռեստիտուցիայի հնարավորության բացակայությամբ, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների առանձնահատկություններով:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 93-րդ հոդվածը, 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1 կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ պարզելու համար, թե ի վերջո ում ցանկությամբ է կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանվել փորձաշրջան, Դատարանը պարտավոր էր բացահայտել կողմերի՝ պայմանագիրը կնքելու գործընթացում բանակցությունները, գրավոր և բանավոր հաղորդակցությունը և այլն՝ բացահայտելու համար՝ արդյոք կողմերի համաձայնությամբ սահմանված աշխատանքային պայմանագրի 1.5 դրույթում փորձաշրջան սահմանելու մտադրությունը կամ ցանկությունը դուրս է եկել աշխատողից, թե գործատուից: Այս առումով Դատարանը պարտավոր էր գնահատել, թե որ կողմն է ի սկզբանե կազմել նախագիծը, ինչ փոփոխություններ են կատարվել դրանում աշխատողի ցանկությամբ և այլն՝ կապված 1.5 կետի հետ, մինչդեռ Դատարանը, առանց պարզելու վերը թվարկված հանգամանքները, անհիմն հետևության է հանգել պայմանագրի դրույթի անվավեր լինելու վերաբերյալ, որպիսի եզրահանգումը հիմնավոր է համարվել նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ աշխատանքային պայմանագրով փորձաշրջանը սահմանվել է Ընկերության նախաձեռնությամբ: Նման դիրքորոշումը հայտնվել է թե՛ հայցադիմումի պատասխանով, թե՛ բազմիցս դատական նիստերի ընթացքում: Այդուհանդերձ, եթե Դատարանի մոտ չկարատվող կասկածներ են առաջացել, թե ում նախաձեռնությամբ է սահմանվել փորձաշրջանը, օրինակ՝ սույն գործով և՛ հայցվորը, և՛ պատասխանողը պնդել են, որ իրենց նախաձեռնությամբ է սահմանվել փորձաշրջանը, սպա պարզ չէ, թե ինչ հիմնավորմամբ է Վերաքննիչ դատարանը դա հիմք համարել փորձաշրջանի մասին աշխատանքային պայմանագրի դրույթն անվավեր ճանաչելու համար: Ավելին, պայմանագրի 1.5 կետում օգտագործված «կողմերի համաձայնությամբ» արտահայտության տառացի մեկնաբանությունը թույլ է տալիս հստակ արձանագրել, որ փորձաշրջանի սահմանումը եղել է և՛ հայցվորի, և՛ պատասխանողի նախաձեռնությամբ:

Վերաքննիչ դատարանի եզրահանգումը պայմանագրի 1.5 կետն անվավեր ճանաչելու վերաբերյալ փորձաշրջան սահմանելը նախաձեռնողին պարզելու անհնարինության հիմքով ոչ իրավաչափ է, քանի որ թե՛ աշխատողը, թե՛ գործատուն իրավասու էին պայմանագիրը լուծել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասի հիմքերից որևէ մեկով, իսկ Ընկերության հրամանն անվավեր ճանաչելու որևէ հիմք բացակայել է:

3) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ աշխատանքային պայմանագրում փորձաշրջան սահմանված լինելու դեպքում պետք է սահմանվեն նաև փորձաշրջանի պայմանների վերաբերյալ դրույթներ, հիմնավոր չէ, քանի որ տվյալ դեպքում հայցվորի կողմից փորձաշրջանի ընթացքում կատարվող աշխատանքային պարտավորությունների ու պայմանների և փորձաշրջանի ավարտից հետո նախատեսվող աշխատանքային պարտավորությունների ու պայմանների միջև որևէ տարբերություն չէր նախատեսվել, այսինքն՝ հայցվորը կատարելու էր նույն աշխատանքը նույն պայմաններում, ինչ փորձաշրջանի ընթացքում: Հասկանալի չէ, թե պայմանագրում ինչպիսի դրույթների առկայությունը կհամարվեր «փորձաշրջանի պայմանների սահմանում և օրենսդրի ինպերատիվ պահանջի կատարում»: Հետևաբար փորձաշրջանի պայմանները պարտադիր նշելու մասով առկա է իրավական որոշակիության խնդիր, քանի որ օրենսդիրը չի բացահայտում «փորձաշրջանի պայման» հասկացությունը և չի սահմանում, թե որոնք են փորձաշրջանի

այն նվազագույն պայմանները, որոնք պետք է նախատեսվեն աշխատանքային պայմանագրում:

4) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հերկյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հայցվորը միաժամանակ պահանջել է և՛ հարկադիր պարագործ, և՛ խնդրել է դրա նկատմամբ հաշվարկել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածով սահմանված տուժանք՝ սկսած հայց ներկայացնելու օրվանից, մինչդեռ հարկադիր պարագործի դիմաց վճարում ստանալու իրավունքը ծագում է միայն դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից, ուստի մինչ այդ պահն ընկած ժամանակահատվածի համար չի կարող ծագել աշխատավարձն ուղացնելու համար տուժանք ստանալու իրավունք:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվորի կողմից ներկայացվել է աշխատանքում վերականգնվելու պահանջ, մինչդեռ Դատարանը, արձանագրելով հայցվորին աշխատանքում վերականգնելու անհնարինությունը, պարտավորեցրել է գործատուին փոխհատուցում տրամադրել աշխատողին այն դեպքում, երբ փոխհատուցում ստանալու պահանջ չի ներկայացվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.11.2020 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2.1. Վճարելի բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները

Ընկերության կողմից ներկայացված վճարելի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

1) Աշխատանքային պայմանագրի առանձին դրույթն անվավեր ճանաչելը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածով որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության եղանակ նախատեսված չլինելու վերաբերյալ բողոք բերած անձը Դատարանում որևէ առարկություն չի հայտնել, ինչպես նաև Դատարանի վճիռն այդ հիմքով չի բողոքարկել Վերաքննիչ դատարան, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով բողոք բերած անձը չէր կարող Վերաքննիչ դատարանի որոշումն այդ հիմքով բողոքարկել Վճարելի դատարան: Այդուհանդերձ, բողոք բերած անձի այն պնդումը, որ սույն քաղաքացիական գործով աշխատողի և գործատուի միջև կնքված աշխատանքային պայմանագրի 1.5 կետը չէր կարող անվավեր ճանաչվել՝ աշխատանքային օրենսդրությամբ իրավունքի պաշտպանության այդպիսի եղանակ նախատեսված չլինելու պատճառաբանությամբ, անհիմն է, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքը աշխատանքային իրավունքների պաշտպանության եղանակների սպառիչ ցանկ չի նախատեսել՝ ամրագրելով օրենքով նախատեսված այլ եղանակներով աշխատանքային իրավունքների պաշտպանության հնարավորությունը, ինչը վկայում է այն մասին, որ աշխատանքային իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված եղանակներով, այդ թվում՝ վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելով կամ առոչինչ գործարքի անվավերության հետևանքները կիրառելով:

2) Սույն գործով թե՛ Դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը եզրահանգել են, որ աշխատանքային պայմանագրի 1.5 կետը որևէ կերպ չի բացահայտում, թե ում ցանկությամբ է սահմանվել փորձաշրջանը, ըստ այդմ՝ նշված դրույթով հնարավոր չէ հաստատված համարել, որ փորձաշրջանը սահմանվել է գործատուի ցանկությամբ, որպիսի պարագայում գործատուն չի հանդիսացել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածով սահմանված կարգով փորձաշրջանի արդյունքները գնահատելու և նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1 կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավասու սուբյեկտ: Հետևաբար նշված պատճառաբանություններով պայմանավորված՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1 կետը սույն գործով

կիրառման ենթակա նորմ չէր կարող լինել: Փորձաշրջանը առկա օրենսդրական կարգավորումների պայմաններում չի կարող սահմանվել երկու կողմերի միաժամանակյա ցանկությունը, քանի որ նման մեկնաբանման դեպքում կառաջանա օրենսդրական բաց կապված այդ կերպ սահմանված փորձաշրջանի արդյունքների գնահատման և դրա արդյունքում աշխատանքային պայմանագիրը լուծելու սուբյեկտի առումով:

3) Օրենսդրի կողմից հստակ տարանջատվել են «աշխատանքային պայմանագրում փորձաշրջանի մասին պայմանների սահմանման» և «փորձաշրջանի ընթացքում աշխատողի՝ աշխատանքային պայմանագրով սահմանված բոլոր իրավունքներն ունենալու և բոլոր պարտականությունները կրելու» կառուցակարգերը, որոնք միմյանց հետ չեն նույնացվում: Փորձաշրջանի մասին կոնկրետ պայմանների սահմանման հարցում օրենսդիրն աշխատանքային իրավահարաբերությունների կողմերին օժտել է հայեցողությամբ՝ հնարավորություն տալով փոխադարձ համաձայնությամբ սահմանել փորձաշրջանի այն պայմանները, որոնք անհրաժեշտ և բավարար կլինեն աշխատողի մասնագիտական գիտելիքները, հմտությունները, գործարար էթիկայի կանոնների իմացությունը, առաջադրված խնդիրների արդյունավետ լուծման կարողությունը, որակը ստուգելու և հետագայում այն գնահատելու միջոցով պարզելու տվյալ աշխատողի տվյալ պաշտոնին համապատասխանության հարցը:

4) Բողոք բերած անձը դատարանում որևէ դիրքորոշում չի հայտնել հայցի առարկայի պահանջի մեջ մտնող 22.11.2019 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը չվճարված աշխատավարձի գումարի նկատմամբ կետանցված յուրաքանչյուր օրվա համար տուժանք բռնագանձելու պահանջի վերաբերյալ, ինչպես նաև այդ հիմքով Դատարանի վճիռը չի բողոքարկել Վերաքննիչ դատարանում, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով բողոք բերած անձը չի կարող Վերաքննիչ դատարանի որոշումն այդ հիմքով բողոքարկել Վճռաբեկ դատարանում: Նույնը վերաբերում է նաև փոխհատուցման պահանջ ներկայացված չլինելու հարցին, ավելին, օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է աշխատողին աշխատանքում չվերականգնելու գործատուի իրավական հնարավորությունը՝ վերապահելով դատարանին այդ վարքագծի իրավաչափության գնահատման իրավասություն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերության և Մանյա Գասպարյանի միջև 11.06.2019 թվականին կնքվել է թիվ 39 աշխատանքային պայմանագիրը, որով Մանյա Գասպարյանը նշանակվել է տեխնիկական գրողի պաշտոնում: Պայմանագրի 1.5 կետի համաձայն՝ նույն պայմանագրով աշխատողի համար կողմերի համաձայնությամբ սահմանվում է փորձաշրջան՝ երեք ամիս ժամկետով, որի ընթացքում աշխատողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք սահմանված են գործատուի և աշխատողի միջև նույն աշխատանքային հարաբերությունների շրջանակներում: Պայմանագրի 1.2 կետով սահմանվել են աշխատողի աշխատանքային պարտականությունները, պայմանագրի 1.4 կետով՝ աշխատանքի կատարման հիմնական վայրը: Պայմանագրի 2-րդ բաժնով կարգավորվել է աշխատողի աշխատաժամանակը և հանգստի ժամանակը, 3-րդ բաժնում սահմանվել են աշխատանքի վարձատրության պայմաններն ու չափը, 4-րդ բաժնում՝ աշխատողի և գործատուի այլ պարտականությունները (**հատոր 1-ին, գ.թ. 26-31**),

2. Ընկերության 03.09.2019 թվականի թիվ 01 ծանուցման համաձայն. «(...) սույնով ծանուցում եմ, որ Ձեր հետ 11.06.2019թ. կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագիրը ենթակա է լուծման ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի և 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին կետի հիմքերով, այն է՝ փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով նախատեսված աշխատանքում Ձեր անհամապատասխանության հիմքով սույն ծանուցումը ստանալու պահից 3 (երեք) օր անց: Ձեր զբաղեցրած պաշտոնին

անհամապատասխանության վերաբերյալ 02.09.2019 թվականին կազմվել է արձանագրություն, որը կցվում է սույն ծանուցմանը **(հատոր 1-ին, գ.թ. 84),**

3. Ընկերության 03.09.2019 թվականի հրամանի համաձայն՝ «Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասը, 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին կետը, Ընկերության հետ Մանյա Գասպարյանի հետ 11.06.2019 թվականին կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագրի 1.5-րդ, 03.09.2019 թվականի թիվ 01 ծանուցումը և 02.09.2019 թվականին կազմված արձանագրությունը՝ Ընկերության տեխնիկական գրող Մանյա Գասպարյանի հետ 11.06.2019 թվականին կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագիրը լուծվել է՝ փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հիմքով: Աշխատանքային պայմանագիրը համարվել է լուծված 06.09.2019 թվականից» **(հատոր 1-ին, գ.թ. 83),**

4. Ընկերության 02.09.2019 թվականի թիվ 01 Արձանագրության համաձայն՝ Ընկերությունը, քննարկելով օրակարգում դրված՝ աշխատող տեխնիկական գրող Մանյա Գասպարյանի փորձաշրջանի արդյունքներով զբաղեցրած պաշտոնի համապատասխանության հարցը, լսելով Ընկերության գլխավոր տնօրենի ելույթը հարցի կապակցությամբ, ինչպես նաև Ընկերության գործառնական տնօրենի կարծիքը, միաձայն որոշել է Ընկերության տեխնիկական գրող Մանյա Գասպարյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծել՝ փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հիմքով **(հատոր 1-ին, գ.թ. 81-82):**

4. Վճուրքի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճուրքի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճուրքի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1 կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճուրքի դատարանն անհրաժեշտ է համարում անդարձառնապ աշխատանքային պայմանագրով սահմանված փորձաշրջանի արդյունքներով աշխատանքային պայմանագիրը լուծելու առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառնություններ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատունն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ,

որակավորմամբ՝ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում, աշխատանքային պայմանագրում նշվում են՝ (...) փորձաշրջան սահմանելու դեպքում՝ փորձաշրջանի տևողությունը և պայմանները (...):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի կնքման ժամանակ կողմերի համաձայնությամբ կարող է սահմանվել փորձաշրջան: Այն կարող է սահմանվել գործատուի ցանկությամբ՝ նախատեսված աշխատանքին (պաշտոնին) աշխատողի համապատասխանությունը ստուգելու նպատակով, կամ աշխատանքի ընդունողի ցանկությամբ՝ առաջարկվող աշխատանքին (պաշտոնին) իր համապատասխանությունը որոշելու համար: Փորձաշրջանի մասին պայմանները պետք է սահմանվեն աշխատանքային պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փորձաշրջանի ընթացքում աշխատողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք սահմանված են նույն օրենսգրքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե գործատուն գտնում է, որ նախատեսված աշխատանքում (պաշտոնում) աշխատողի համապատասխանության ստուգման նպատակով սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով աշխատողը չի համապատասխանում առաջադրված պահանջներին, ապա կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը աշխատողին ազատել աշխատանքից՝ այդ մասին երեք օր առաջ գրավոր ձևով ծանուցելով նրան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե փորձաշրջանը սահմանվել է աշխատանքի ընդունվողի ցանկությամբ՝ առաջարկվող աշխատանքին (պաշտոնին) իր համապատասխանությունը որոշելու համար, ապա փորձաշրջանի արդյունքները գնահատում է աշխատողը: Փորձաշրջանի ընթացքում աշխատողն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը՝ այդ մասին երեք օր առաջ գրավոր ձևով ծանուցելով գործատուին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե փորձաշրջանն անցնելուց հետո աշխատողը շարունակում է աշխատել, ապա նա համարվում է փորձաշրջան անցած, կնքված աշխատանքային պայմանագրի գործողությունը շարունակվում է, և գործատուն կարող է նրա հետ աշխատանքային պայմանագիրը լուծել միայն նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է՝ աշխատողի և գործատուի համաձայնությամբ սահմանված փորձաշրջանի արդյունքներով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը հարադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը

հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված են աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի բովանդակությանը ներկայացվող որոշակի իմպերատիվ պահանջներ: Մասնավորապես, օրենսդիրն ամրագրել է, որ աշխատանքային պայմանագրում, ի թիվս այլնի, նշվում են՝ փորձաշրջան սահմանելու դեպքում՝ փորձաշրջանի տևողությունը և պայմանները: Վերը նշված նորմի՝ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից ակնհայտ է, որ եթե աշխատանքային պայմանագրով աշխատողի համար սահմանվում է փորձաշրջան, ապա աշխատանքային պայմանագիրը պետք է տվյալներ պարունակի փորձաշրջանի տևողության և պայմանների մասին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ փորձաշրջանի պայմանները կարող են չտարբերվել աշխատանքի ընդհանուր պայմաններից, այսինքն՝ փորձաշրջան սահմանված չլինելու դեպքում, կողմերի միջև սահմանված սովորական աշխատանքային պայմանները կարող են նույնանման լինել, ինչ որ փորձաշրջանի ընթացքում աշխատանքի պայմանները, նկատի ունենալով, որ օրենսդրի կողմից փորձաշրջանի պայմանների վերաբերյալ որևէ որոշակի պահանջներ սահմանված չեն: Հետևաբար տարբերվող պայմաններ սահմանված չլինելը դեռևս չի նշանակում, որ փորձաշրջանի պայմաններ սահմանված չեն: Ընդ որում, օրենսդիրը տարանջատել է փորձաշրջանը գործատուի կամ աշխատողի պահանջով սահմանված լինելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործատուի կողմից փորձաշրջան սահմանված լինելու դեպքում՝ վերջինս է գնահատում աշխատողի համապատասխանությունն աշխատանքին, իսկ փորձաշրջանն աշխատանքի ընդունվողի ցանկությանը սահմանված լինելու դեպքում՝ նա է որոշում առաջարկվող աշխատանքին իր համապատասխանությունը՝ գնահատելով փորձաշրջանի արդյունքները: Այլ կերպ ասած՝ եթե աշխատանքային պայմանագրի կնքման ժամանակ կողմերի փոխադարձ սահմանվել են աշխատանքային այն նույն պայմանները, որոնք պետք է գործեն փորձաշրջանի ավարտից հետո, ապա այդ հանգամանքն արդեն իսկ բավարար է աշխատանքային պայմանագրում փորձաշրջանի պայմանները սահմանելու պահանջը պահանջված դիտարկելու համար:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Մանյա Գասպարյանի միջև 11.06.2019 թվականին կնքվել է թիվ 39 աշխատանքային պայմանագիրը, որով Մանյա Գասպարյանը նշանակվել է տեխնիկական գրողի պաշտոնում: Պայմանագրի 1.5 կետի համաձայն՝ նույն պայմանագրով աշխատողի համար կողմերի համաձայնությամբ սահմանվում է փորձաշրջան՝ երեք ամիս ժամկետով, որի ընթացքում աշխատողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք սահմանված են գործատուի և աշխատողի միջև նույն աշխատանքային հարաբերությունների շրջանակներում: Պայմանագրի 1.2 կետով սահմանվել են աշխատողի աշխատանքային պարտականությունները, պայմանագրի 1.4 կետով՝ աշխատանքի կատարման հիմնական վայրը: Պայմանագրի 2-րդ բաժնով կարգավորվել է աշխատողի աշխատաժամանակը և հանգստի ժամանակը, 3-րդ բաժնում սահմանվել են աշխատանքի վարձատրության պայմաններն ու չափը, 4-րդ բաժնում՝ աշխատողի և գործատուի այլ պարտականությունները:

Ընկերության 02.09.2019 թվականի թիվ 01 Արձանագրության համաձայն՝ Ընկերությունը, քննարկելով օրակարգում դրված՝ աշխատող տեխնիկական գրող Մանյա Գասպարյանի փորձաշրջանի արդյունքներով զբաղեցրած պաշտոնի համապատասխանության հարցը, լսելով Ընկերության գլխավոր տնօրենի ելույթը հարցի կապակցությամբ, ինչպես նաև Ընկերության գործառնական տնօրենի կարծիքը, միաձայն որոշել է Ընկերության տեխնիկական գրող Մանյա Գասպարյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը

լուծել՝ փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հիմքով:

Ընկերությունը 03.09.2019 թվականին ծանուցել է Մանյա Գասպարյանին ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի և 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-րդ կետի հիմքերով, այն է՝ փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով նախատեսված աշխատանքում վերջինիս անհամապատասխանության հիմքով, ծանուցումը ստանալու պահից 3 (երեք) օր անց աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին:

Ընկերության 03.09.2019 թվականի հրամանի համաձայն՝ Ընկերության տեխնիկական գրող Մանյա Գասպարյանի հետ 11.06.2019 թվականին կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագիրը լուծվել է՝ փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հիմքով: Աշխատանքային պայմանագիրը համարվել է լուծված 06.09.2019 թվականից:

Դիմելով դատարան՝ Մանյա Գասպարյանը պահանջել է անվավեր ճանաչել իր և Ընկերության միջև 11.06.2019 թվականին կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագրի 1.5 կետը, փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հիմքով իր հետ կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին Ընկերության տնօրեն Ա. Բաղայանի 03.09.2019 թվականի հրամանը, վերականգնել իրեն նախկին աշխատանքում, Ընկերությունից բռնագանձել հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի միջին աշխատավարձը՝ սկսած 06.09.2019 թվականից մինչև նախկին աշխատանքում փաստացի վերականգնման օրը, ինչպես նաև բռնագանձել 40.384,159 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումը դատարան ներկայացնելու օրվա՝ 21.11.2019 թվականի դրությամբ աշխատավարձի վճարման կետանցված օրերի համար տուժանք, իսկ 22.11.2019 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը չվճարված աշխատավարձի գումարի նկատմամբ կետանցված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկել և բռնագանձել 0,15 տոկոսի չափով տուժանք, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա աշխատավարձի չափը:

Դատարանը հայցվորի պահանջը՝ 11.06.2019 թվականին կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագրի 1.5 կետն անվավեր ճանաչելու մասին, բավարարել է, արձանագրելով, որ պայմանագիրը կնքվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված պահանջների խախտմամբ, այն է՝ պայմանագրով չեն սահմանվել կոնկրետ փորձաշրջանի պայմանները և հստակ չի նշվել, թե ում առաջարկով է սահմանվել փորձաշրջան: Ավելին, Դատարանը գտել է, որ աշխատանքային պայմանագիրն ըստ էության գործարք է կնքված կողմերի միջև, հետևաբար աշխատանքային պայմանագրի մասի անվավերությունը չի կարող հանգեցնել դրա մյուս մասերի անվավերության, հատկապես այն պարագայում, որ աշխատանքային պայմանագիրը կարող էր կնքվել նաև առանց անվավեր մասը աշխատանքային պայմանագրի մեջ ներառելու:

Այսպիսով Դատարանը եզրահանգել է, որ աշխատանքային պայմանագրի 1.5 կետն անվավեր ճանաչելու պարագայում գործում է այն կանխավարկածը, որ կողմերի միջև առկա չէ սահմանված փորձաշրջան, ուստի և նշվածը հանգեցնում է, որ գործատուն իրավասու չէր հայցվորի հետ աշխատանքային պայմանագիրը լուծել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի, 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-րդ կետի հիմքով: Բացի այդ, Դատարանը նշել է, որ պատասխանող կողմը չի ներկայացրել օրենքով սահմանված կարգով որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, որով կհիմնավորվեր աշխատանքային պայմանագրում օրենսդրի ինստիտուտի պահանջի պահպանման կոնկրետ փորձաշրջանի պայմանների սահմանման փաստը և դրա արդյունքում աշխատողի համապատասխանության ստուգման նպատակով սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով առաջադրված պահանջներին աշխատողի չհամապատասխանելու հիմքով պայմանագիրը լուծելու իրավական հիմքերի իրավաչափությունը:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը՝ արձանագրելով, որ աշխատանքային պայմանագիրը, որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը հավաստող ապացույց, չի պարունակում փորձաշրջան սահմանելու նախաձեռնություն իրականացրած անձի վերաբերյալ նշում, որպիսի պայմաններում

գործատուն չի ունեցել իրավասություն գնահատելու աշխատողի փորձաշրջանի արդյունքները: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ աշխատանքային պայմանագիրը չի պարունակում նաև փորձաշրջանի պայմանների վերաբերյալ դրույթ, որպիսի դրույթի նախատեսումը փորձաշրջան սահմանելու պարագայում հանդիսանում է օրենքի իմպլեմենտիվ պահանջը: Այսպիսով Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանի եզրահանգումը՝ աշխատանքային պայմանագրի 1.5 կետը անվավեր ճանաչելու մասով, միանգամայն իրավաչափ է:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստերը, արձանագրում է, որ ստորադաս դատարանների եզրահանգումն առ այն, որ Ընկերության և Մանյա Գասպարյանի միջև 11.06.2019 թվականին կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագիրը չի պարունակում փորձաշրջանի պայմանների վերաբերյալ դրույթներ, հիմնավոր չէ, քանի որ տվյալ դեպքում աշխատանքային պայմանագրի շրջանակներում փորձաշրջանի ընթացքում Մանյա Գասպարյանի կողմից կատարվող աշխատանքի պայմանների և փորձաշրջանի ավարտից հետո կատարվելիք աշխատանքի պայմանների միջև որևէ տարբերություն աշխատանքային պայմանագրով չի նախատեսվել, հետևաբար աշխատանքի ընդունվող աշխատողի համար սահմանված հիմնական աշխատանքային պայմանները սահմանված են եղել նաև փորձաշրջանի ընթացքում: Մասնավորապես՝ Ընկերության և Մանյա Գասպարյանի միջև 11.06.2019 թվականին կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագրի 1.2 կետով սահմանվել են աշխատողի աշխատանքային պարտականությունները, պայմանագրի 1.4 կետով՝ աշխատանքի կատարման հիմնական վայրը: Պայմանագրի 2-րդ բաժնով կարգավորվել են աշխատողի աշխատաժամանակը և հանգստի ժամանակը, 3-րդ բաժնում սահմանվել են աշխատանքի վարձատրության պայմաններն ու չափը, 4-րդ բաժնում՝ աշխատողի և գործատուի այլ պարտականությունները: Այլ կերպ ասած՝ աշխատանքային պայմանագրով մանրամասն կարգավորվել են աշխատանքի բոլոր պայմանները, իսկ փորձաշրջանի համար աշխատանքի ընդհանուր պայմաններից չտարբերվող պայմաններ սահմանելը դեռևս չի նշանակում, որ փորձաշրջանի պայմաններ սահմանված չեն:

Անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգմանն առ այն, որ Ընկերության և Մանյա Գասպարյանի միջև 11.06.2019 թվականին կնքված թիվ 39 աշխատանքային պայմանագիրը չի պարունակում փորձաշրջան սահմանելու նախաձեռնություն իրականացրած անձի վերաբերյալ նշում, որպիսի պայմաններում գործատուն չի ունեցել իրավասություն գնահատելու աշխատողի փորձաշրջանի արդյունքները, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ եթե փորձաշրջանը սահմանվում է աշխատողի ցանկությամբ, ապա փորձաշրջանի արդյունքները գնահատում է աշխատողը, ինչից ուղղակիորեն բխում է, որ գործատուն իրավունք չունի գնահատելու փորձաշրջանի արդյունքները միայն այն դեպքում, երբ փորձաշրջանը սահմանվում է աշխատողի ցանկությամբ՝ առաջարկվող աշխատանքին (պաշտոնին) իր համապատասխանությունը որոշելու համար: Մինչդեռ սույն գործով թեև Մանյա Գասպարյանը պնդել է, որ փորձաշրջանը սահմանվել է իր ցանկությամբ, այդուհանդերձ այդ փաստի հաստատման համար չի ներկայացրել համապատասխան ապացույցներ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունն իրավասու է եղել գնահատելու փորձաշրջանի արդյունքները և գտնելով, որ աշխատողը չի համապատասխանում առաջադրված պահանջներին, իրավունք է ունեցել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի և 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-րդ կետի հիմքով լուծելու Մանյա Գասպարյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվորը հայցի փաստական հիմքում, բացի աշխատանքային պայմանագրի 1.5 կետն օրենքի պահանջներին չհամապատասխանելու և փորձաշրջանն իր նախաձեռնությամբ սահմանված լինելու հանգամանքներից վկայակոչել է նաև որ.

1. Պատասխանողի կողմից խախտվել է աշխատանքային պայմանագրի լուծման կարգը, քանի որ հայցվորը չի ծանուցվել դրա մասին,

2. հայցվորի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է վերջինիս հղիության մասին պատասխանողին տեղեկանք ներկայացնելուց հետո, այսինքն խտրական վերաբերմունք է ցուցաբերվել հայցվորի նկատմամբ,

3. աշխատանային պայմանագիրը լուծելու մասին հրամանը չի պարունակում այն լուծելու փաստական հիմքը, որով խախտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հայցի հիմքում ընկած վերը նշված փաստական հիմքերը ևս անհիմն են, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավորություն չի ունեցել փորձաշրջանում գտնվող աշխատողին աշխատանքային պայմանագիրը լուծելուց առաջ գրավոր ծանուցելու դրա մասին: Ինչ վերաբերում է հղիության կապակությամբ իր նկատմամբ խտրական վերաբերումը ցուցաբերելու մասին հայցվորի փաստարկներին, ապա միայն հղի լինելու և աշխատանքից ազատվելու իրադարձությունների իրար հաջորդելը չեն կարող հաստատել խտրականության առկայությունը, քանզի ինչպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ, այնպես էլ տվյալ պարագայում աշխատողի նկատմամբ խտրականություն դրսևորելը պետք է ապացուցվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, ինչը տվյալ դեպքում չի հիմնավորվել: Սույն գործով հայցվորի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրամանն ընդունվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի, 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին կետի իրավական հիմքերի վկայակոչմամբ, իսկ որպես փաստական հիմք հրամանում նշվել է՝ փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հանգամանքը: Հետևաբար անհիմն է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի խախտման մասին հայցվորի փաստարկները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի լուծման համար առանցքային նշանակություն ունեցող այն փաստը, որ Ընկերությունն իրավասու է եղել գնահատելու փորձաշրջանի արդյունքները և գտնելով, որ աշխատողը չի համապատասխանում առաջադրված պահանջներին, իրավունք է ունեցել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի և 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-րդ կետի հիմքով լուծելու Մանյա Գասպարյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը, արդեն իսկ բավարար էր ստորադաս դատարաններում հայցն անհիմն լինելու մասին եզրահանգման գալու համար, անկախ նրանից թե աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրամանն անվավեր ճանաչելու հայցվորի պահանջի հիմքում էլ ինչ հազամանքներ են դրված եղել:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի վճիռը, եկել է սխալ եզրահանգման, հետևաբար Մանյա Գասպարյանի պահանջը՝ Ընկերության՝ թիվ 39 աշխատանքային պայմանագրի 1.5 կետն անվավեր ճանաչելու, փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հիմքով աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին 03.09.2019 թվականի հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապորդի գումարը և տուժանքը բռնագանձելու պահանջների վերաբերյալ, անհիմն է և ենթակա է մերժման՝ սույն որոշմամբ նշված պատճառարանություններով:

Վերը նշված պարճատարանությանը հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանում նշված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի

3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ նույն գլխի կանոնների համաձայն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործով հայցվոր Մանյա Գասպարյանը, վերոնշյալ իրավանորմի ուժով ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ պատասխանող Ընկերության վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով նաև այն, որ օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտները չեն կարող կրել պետական տուրք վճարելու կամ վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականություն՝

թե՛ ընդհանուր իրավասության դատարանում, թե՛ դատական բողոքարկման փուլերում՝ անկախ գործի ելքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.11.2020 թվականի որոշումը և փոփոխել. Մանյա Գասպարյանի հայցն ընդդեմ «Ինթելիջենթ Դիջիթլ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի՝ թիվ 39 աշխատանքային պայմանագրի 1.5 կետն անվավեր ճանաչելու, փորձաշրջանի արդյունքներով նախատեսված աշխատանքում անհամապատասխանության հիմքով աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին 03.09.2019 թվականի հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի գումարը և տուժանքը բռնագանձելու պահանջների մասին՝ մերժել:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԱՐԳ/3713/02/20 2022թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԱՐԳ/3713/02/20
Նախագահող դատավոր	Ն. Մարգարյան
Դատավորներ	Կ. Համբարձումյան Հ. Ենոքյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի ապրիլի 28-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Աստղիկ Մխիթարյանի հայցի ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի (այսուհետ՝ Մարզպետ) որոշումն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գումար բռնագանձելու, ինչպես նաև հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2021 թվականի որոշման դեմ Մարզպետի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Աստղիկ Մխիթարյանը պահանջել է անվավեր ճանաչել Մարզպետի 13.10.2020 թվականի՝ իրեն «Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Դպրոց) տնօրենի պաշտոնից ազատելու և իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին թիվ ՄՈ/420-2020 որոշումը, իրեն վերականգնել նախկին աշխատանքում, բռնագանձել իր միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, իսկ նախկին աշխատանքում իրեն

վերականգնելու անհնարինության դեպքում Մարզպետին պարտավորեցնել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 12.02.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.07.2021 թվականի որոշմամբ Մարզպետի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.02.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարզպետը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Աստղիկ Մխիթարյանը (ներկայացուցիչ Արամ Օրբելյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 122-րդ հոդվածի 2-րդ կետը և 265-րդ հոդվածը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Աստղիկ Մխիթարյանը, հանդիսանալով դպրոցի տնօրեն՝ իրավաստեղծ մարմին, ունեցել է պարտավորություն իրականացնելու իր կողմից ընդունված հրամանների ներքին հաշվառում և պահպանում՝ իր իսկ կողմից սահմանված կարգով, որպիսի պարտավորությունը չի կատարել, ինչպես նաև այդ կարգը չի սահմանել:

Բացի այդ, Աստղիկ Մխիթարյանն իր պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում արձակված հրամաններում չի պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-22-րդ հոդվածների պահանջները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Աստղիկ Մխիթարյանի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի պահանջը խախտվել է ինչպես Դպրոցի ուսուցիչ Քնարիկ Կարապետյանի, այնպես էլ նույն Դպրոցի մի խումբ աշխատակիցների պարագայում, ում նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր՝ միաժամանակ խախտելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: Աստղիկ Մխիթարյանի կողմից 25.09.2020 թվականին տրված հայտարարության համաձայն՝ վերջինս կարգապահական տույժերի մասին աշխատակիցներին տեղեկացրել է բանավոր:

Քնարիկ Կարապետյանին աշխատանքից ազատելուց հետո «Ազգային երգ ու պար» առարկայի կրճատում չի կատարվել, սակայն Դպրոցի 2020-2021 ուսումնական տարվա պլանը հաստատված է եղել առանց «Ազգային երգ ու պար» առարկան ընդգրկելու:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Հարություն Հովհաննիսյանը, չունենալով բարձրագույն կրթություն, սկզբում որպես ժամանակավոր՝ տնօրենի 10.09.2019 թվականի թիվ 69 հրամանով, ապա որպես ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի մասնակից, հաղթող ճանաչվելով, Աստղիկ Մխիթարյանի տնօրենի 01.10.2019 թվականի թիվ 82 հրամանով նշանակվել է Դպրոցի զինղեկ, որով խախտվել են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 14.10.2010 թվականի թիվ 1391-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված ՀՀ-ում հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրերի 11-րդ բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետի և ՀՀ կրթության և գիտության նախարարի 15.04.2013 թվականի թիվ 396-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 15-րդ կետի պահանջները, ինչպես նաև Աստղիկ Մխիթարյանի՝ որպես Դպրոցի տնօրենի կողմից հայտարարված և «Հայրենական»

հասարակական-քաղաքական, մշակութային թերթով 2019 թվականի սեպտեմբերի 2-11-ին հրատարակված մրցույթի պարտադիր պահանջները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Դպրոցում «Կերպարվեստ» առարկայի ուսուցչին փոխարինել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերպարվեստի ֆակուլտետն ավարտած և «Գրաֆիկա» մասնագիտությամբ մանկավարժի որակավորում չունեցող Մանե Արելյանը, որով Աստղիկ Մխիթարյանը խախտել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Աստղիկ Մխիթարյանի 07.10.2019 թվականի թիվ 85 հրամանով 07.10.2019 թվականից մինչև 05.11.2019 թվականը Դպրոցի 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների «Տեխնոլոգիա» առարկայի դասաժամերը վերապահվել են պարապելու բարձրագույն կրթություն և մանկավարժի որակավորում չունեցող դպրոցի պահակ Սամվել Մկրտչյանին, որով խախտվել են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ չնայած «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, Մարգարեի 25.02.2020 թվականի թիվ ՄՈ/50-2020 որոշմամբ հաստատված Դպրոցի կանոնադրության 76-րդ, 81-րդ և 82-րդ կետերի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 31.08.2020 թվականի թիվ 25-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված օրինակելի ուսումնական պլանի 1-ին կետի պահանջների՝ 25.09.2020 թվականի դրությամբ դեռևս հաստատված չեն եղել Դպրոցի 2020-2021 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի կազմը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անհատական ուսումնական պլանները, դասացուցակն ամբողջությամբ, իսկ 2020-2021 ուսումնական տարվա պլանը հաստատվել է առանց «Ազգային երգ ու պար» առարկան ընդգրկելու:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների գրանցամատյանի ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանում գրանցված վերջին արձանագրությունը 29.06.2020 թվականի թիվ 8 նիստն է: Մինչդեռ Դպրոցի տնօրեն Աստղիկ Մխիթարյանի և 2019-2020 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի քարտուղար Քրիստինե Հովհաննիսյանի կողմից տրված գրավոր հայտարարությունների համաձայն՝ 11.09.2020 թվականին կայացել է մանկավարժական խորհրդի նիստ, որը չի արձանագրվել: Աստղիկ Մխիթարյանը նշել է, որ նիստը չարձանագրելը Քրիստինե Հովհաննիսյանի բացթողումն է, իսկ վերջինս իր գրավոր բացատրագրում նշել է, որ նիստը չի արձանագրել Դպրոցում տիրող լարված իրավիճակի և իր առողջական խնդիրների պատճառով:

Աստղիկ Մխիթարյանի և վերջինիս՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի բանավոր պարզաբանումների համաձայն՝ աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրություններ կատարելու ժամանակ Դպրոցում դասաբաշխումը դեռևս ավարտված չի եղել, քանի որ դեռ անորոշ վիճակում են մնացած եղել «Ազգային երգ ու պար» առարկային հատկացվելիք և սեպտեմբերի 25-ի դրությամբ դեռևս չհատկացված դասաժամերի բաշխման հարցերը:

Վերը նշված խախտումները թույլ տալու արդյունքում Աստղիկ Մխիթարյանը խախտել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, Մարգարեի 25.02.2020 թվականի թիվ ՄՈ/50-2020 որոշմամբ հաստատված Դպրոցի կանոնադրության 76-րդ, 81-րդ և 82-րդ կետերի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 31.08.2020 թիվ 25-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված օրինակելի ուսումնական պլանի 1-ին կետի պահանջները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Դպրոցում շեղումներով և խախտումներով է կատարվել Դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը, որով Աստղիկ Մխիթարյանը խախտել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 31.08.2020 թվականի թիվ 25-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված օրինակելի ուսումնական պլանի 20-րդ կետի 5-րդ ենթակետի,

ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.09.2017 թվականի թիվ 081-Ա/2 հրամանի պահանջները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դպրոցի ուսուցիչների կողմից ներկայացված բողոքների հիման վրա ուսումնասիրվել է 2020 թվականից սկսած «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու» և «Անգլերեն» առարկաների դասաժամերը բաժանելու՝ կիսելու հարցը, որի արդյունքում պարզվել է, որ 2020-2021 ուսումնական տարվա համար կազմված ուսումնական պլանով նախատեսված չեն նշված առարկաների կիսված դասաժամեր, որի արդյունքում Աստղիկ Մխիթարյանը խախտել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 31.08.2020 թվականի թիվ 25-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված օրինակելի ուսումնական պլանի 24-րդ կետի պահանջը:

Վերաքննիչ դատարանը ճիշտ գնահատական չի տվել վերը նշված փաստերը հաստատելու նպատակով Դատարան ներկայացրած ապացույցներին:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ նույնիսկ հրամանն անվավեր ճանաչելու հիմքերի առկայության դեպքում Աստղիկ Մխիթարյանը չէր կարող վերականգնվել նախկին աշխատանքում, քանի որ ակնհայտ բացակայել է դրա հնարավորությունը՝ հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել և Դպրոցի տնօրենի պաշտոնում Մարգարեի 01.02.2021 թվականի որոշմամբ նշանակվել է Լիլիթ Պետրոսյանը:

Վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 122-րդ հոդվածի 2-րդ կետի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր նաև այն առումով, որ «անհամատեղելի արարք»-ի մասով օրենսդիրն ու դատական պրակտիկան չեն տվել որևէ սպառիչ հիմքեր և դեպքեր ու, ըստ էության, այդ հասկացության բացահայտումը թողնված է դատարանների հայեցողությանը: Խնդիրը բարդանում է նաև այս դեպքում նրանով, որ որպես գործատու և աշխատող հանդես է գալիս նույն անձը: Այս դեպքում պետք է իրավունքի զարգացումը տանել այն ուղղությամբ, որ պետք է հաշվի առնել աշխատանքի էությունը, խախտման բնույթը, այդ մասով մասնագիտության բարոյական ընկալումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.07.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Ներկայացված վճռաբեկ բողոքը ենթակա չէ վարույթ ընդունելու, քանի որ վճռաբեկ բողոքում որպես այն վարույթ ընդունելու հիմք վկայակոչվածը՝ օրենքի միատեսակ կիրառության համար բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման էական նշանակություն ունենալը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կապակցությամբ, առկա չէ:

Առկա չէ նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայությունը:

Բացի այդ, Աստղիկ Մխիթարյանը՝ որպես Դպրոցի տնօրեն, ուսումնադաստիարակչական գործառնություններ չի իրականացրել ինչպես աշխատանքային պայմանագրով, այնպես էլ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ: Վերջինս իրականացրել է ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման վերաբերյալ իր լիազորությունները, որը որևէ կերպ չի կարող նույնացվել ուսումնադաստիարակչական գործառնություններ իրականացնելու հետ, քանի որ առաջինը վերաբերում է այդ աշխատանքը համակարգելուն, և ոչ թե դրանք փաստացի իրականացնելուն:

Անգամ Աստղիկ Մխիթարյանին ուսումնադաստիարակչական գործառնություններ իրականացնող դիտարկելու պարագայում վերջինիս հետ աշխատանքային պայմանագիրը չէր կարող լուծվել վերը նշված հիմքերով, քանի որ նրան վերագրված խախտումները չեն հանդիսանում ուսումնադաստիարակչական գործառնությունների իրականացման հետ անհամատեղելի արարքներ:

Ինչ վերաբերում է Մարզպետի այն փաստարկին, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող «աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք» հասկացությունն ընդգրկում է նաև աշխատողի մասնագիտական ունակությունների անհամապատասխանությունը գբադեցրած պաշտոնին կամ կատարվող աշխատանքին, ապա աշխատողի մասնագիտական ունակությունների անհամապատասխանության պարագայում ՀՀ աշխատանքային օրենսգրքը նախատեսել է աշխատանքային պայմանագրի լուծման բոլորովին այլ հիմք, այն է՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Բացի այդ, Աստղիկ Մխիթարյանին նախկին աշխատանքում վերականգնումն անհնարին դարձնող որևէ խոչընդոտող պատճառ առկա չէ, և եթե ազատված աշխատակցի փոխարեն արդեն իսկ նշանակված է նոր աշխատող, ապա գործատուն պարտավոր է լուծել նոր կնքված աշխատանքային պայմանագիրը՝ վերականգնելով նախկին աշխատակցին:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Մարզպետի 24.07.2019 թվականի թիվ ՄՈ/308-2019 որոշմամբ Աստղիկ Մխիթարյանը նշանակվել է Դպրոցի տնօրենի պաշտոնում, ինչպես նաև որոշվել է 24.07.2019 թվականից նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով (**հատոր 1-ին, գ.թ. 59**).

2) վերը նշված որոշման հիման վրա Մարզպետի (այսուհետ՝ նաև Գործատու) և Աստղիկ Մխիթարյանի (այսուհետ՝ նաև Տնօրեն) միջև 24.07.2019 թվականին կնքված աշխատանքային պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Գործատուն կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը հանձնել է Տնօրենին, իսկ վերջինս պարտավորվել է բարեխղճորեն և խելամոռորեն կատարել կազմակերպության գործադիր մարմնի գործառույթները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին, այլ իրավական ակտերին, կազմակերպության կանոնադրությանը, պայմանագրի համապատասխան, ի շահ կազմակերպության: Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտել կնքման պահից և գործում է հինգ տարի ժամկետով՝ մինչև 24.07.2024 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 45-47**).

3) Մարզպետի 23.09.2020 թվականի թիվ ՄՈ/398-2020 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 23.09.2020 թվականից մինչև 25.09.2020 թվականը Դպրոցում իրականացվել է *Դպրոցի մի շարք աշխատակիցների և ծնողների կողմից Մարզպետին հասցեագրված դիմումներում, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Թե՛ժ գի՛ժ» հեռախոսակապով սրացված ու ՀՀ Արևմտյան մարզպետության վերահասցեագրված ահազանգում* բերված փաստարկների իսկության ուսումնասիրություն, որի ընթացքում աշխատանքային խմբի կողմից ստուգվել է Դպրոցի բնականոն գործունեությունը, ուսումնասիրվել են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում դպրոցում գործունեության կազմակերպման ուղեցույցի պահանջների ներդրման ու պահպանման, ինչպես նաև աշխատանքային փոխհարաբերությունները, և կազմվել է Դպրոցում իրականացված ուսումնասիրության արդյունքների մասին արձանագրություն, որում արձանագրվել են Աստղիկ Մխիթարյանի կողմից թույլ տրված որոշակի խախտումներ: Նշված արձանագրությունը ստորագրել են աշխատանքային խմբի անդամները, Դպրոցի տնօրենի՝ մասնագիտական կրթական աջակցությունների գծով տեղակալը, հաշվապահը, Դպրոցի մանկավարժներն ու աշխատակազմի ներկայացուցիչները (**հատոր 1-ին, գ.թ. 97-106**).

4) Մարզպետի կողմից Դպրոցի տնօրեն Աստղիկ Մխիթարյանին ուղղված գրությամբ վերջինից պահանջվել է գրավոր բացատրություն ներկայացնել վերը նշված արձանագրության մեջ նշված խախտումների վերաբերյալ, որի համար տրամադրվել է երեք աշխատանքային օր (**հատոր 1-ին, գ.թ. 85**).

5) Աստղիկ Մխիթարյանը, ի պատասխան Մարգարետի վերը նշված գրության, ներկայացրել է բացատրագիր՝ Դպրոցում ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակիցների կողմից իրականացված ստուգումների հիման վրա կազմված արձանագրության դրույթների և կետերի մասին, որն ամփոփելով՝ նշել է, որ «բնական և տեղին է համարում իրականացված ստուգումները, որոնք եթե ոչ ամեն ինչ, ապա շատ բան հստակեցրին, ցանկացած ստուգում միտված է աշխատանքային գործընթացի բարելավմանը, ինքը պատրաստ է հայտնաբերված թերությունների հետ կապված գրավոր հանձնարարագրերի ամբողջական կատարմանը» (**հասոք 1-ին, գ.թ. 86-96**).

6) Մարգարետը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 122-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 123-րդ հոդվածով և 226-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով իր 07.10.2020 թվականի թիվ 01/13/06194-2020 գրությունն ու Դպրոցի տնօրեն Աստղիկ Մխիթարյանի կողմից 12.09.2020 թվականի թիվ 12 գրությամբ ներկայացված բացատրությունը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի պահանջները չպահպանելու, վերջինիս նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով 13.10.2020 թվականին կայացրել է թիվ ՄՈ/420-2020 որոշումը, որով Աստղիկ Մխիթարյանին ազատել է Դպրոցի տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ կնքված Պայմանագիրը (**հասոք 1-ին, գ.թ. 58**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 122-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական ու կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 122-րդ հոդվածի 2-րդ կետի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի բնության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.

- արդյո՞ք հանրակրթական դպրոցի տնօրենը հանդիսանում է ուսումնասիրաբարակչական գործառույթներ իրականացնող աշխատող,
- արդյո՞ք սույն գործով հայցվորի կողմից թույլ տրված արարքներն իրենց բնույթով համարվում են վերջինիս աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը ուսումնասիրաբարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ գործատուն իրավունք ունի որոշակի ժամկետով աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը վերը նշված հիմքով նախքան դրա գործողության ժամկետի լրանալը լուծելու նաև այն դեպքում, երբ

աշխատողի նկատմամբ կորցնում է վստահությունը: Որպես աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու ինքնուրույն դեպք օրենսդիրը նախատեսել է նաև վերջինիս կողմից ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնելիս թույլ տրված աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարքը:

Այսինքն՝ որպեսզի գործատուի մոտ ծագի վերը նշված հիմքով նախքան աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի լրանալն այն իր նախաձեռնությամբ լուծելու իրավունքը, անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1. աշխատողը հանդիսանա ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող անձ, և

2. թույլ տրված լինի համապատասխան աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք:

Անդրադառնալով սույն որոշմամբ առաջադրված այն հարցերին, թե արդյոք հանրակրթական դպրոցի տնօրենը հանդիսանում է ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատող, և արդյոք սույն գործով հայցվորի կողմից թույլ տրված արարքներն իրենց բնույթով համարվում են վերջինիս աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նախ բացահայտել «ուսումնադաստիարակչական գործառույթներ» տերմինը, այնուհետև՝ սույն որոշմամբ անդրադառնալ հանրակրթական դպրոցի տնօրենի գործառույթներին՝ բացահայտելու համար դրանց ուսումնադաստիարակչական բնույթ ունենալու հանգամանքը, որից հետո պարզել՝ հայցվորի կողմից թույլ տրված արարքների անհամատեղելիության հարցը տվյալ աշխատանքը շարունակելու առումով: Այսպես՝

Ըստ Էդուարդ Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի՝ «ուսումնական» նշանակում է «ուսման համար կատարվող՝ տեղի ունեցող, ուսման բնույթ կրող», «ուսման պրոցեսը կազմակերպելու և ղեկավարելու՝ իրականացնելու հետ կապված», «ուսումնական մեթոդներ», իսկ ըստ Աշոտ Մուքիայանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ի՝ «ուսուցողական (ուսմանը վերաբերող՝ հատկացված)»:

Ըստ Էդուարդ Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի՝ «դաստիարակչական» նշանակում է «դաստիարակության հատուկ», «դաստիարակության՝ դաստիարակելուն ծառայող», իսկ ըստ Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի Ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի՝ «դաստիարակչության վերաբերող՝ հատուկ, դաստիարակիչ, կրթիչ»:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «ուսումնադաստիարակչական գործառույթներ» իրականացնող կարող է համարվել այն անձը, ով վերը նշված բառարանների իմաստով միաժամանակ՝ համալիր կերպով, իրականացնում է ինչպես ուսումնական, այնպես էլ՝ դաստիարակչական գործառույթներ:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը (տնօրեն, նախագահ, ռեկտոր և այլն):

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ տնօրենը, որը ընտրվում (նշանակվում) և ազատվում է (նրա լիազորությունները դադարում են) օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ պետական ուսումնական հաստատության խորհուրդը *չունի անհատական պնդարկում* է ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, տալիս է հավանություն և ներկայացնում պետական լիազորված մարմնի հաստատումն է:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ ուսումնական հաստատության տնօրենը (հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը) պատասխանատու է հանրակրթության պետական

կրթական և առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սովորողների առողջության պահպանման, կադրերի ընտրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար:

Նույն հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ պետական ուսումնական հաստատության տնօրենը՝

1) խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանք, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը:

2) ղեկավարում է ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը, աջակցում է ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքներին:

3) կազմում է ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնում պետական լիազորված մարմին:

4) խորհրդի հավանությանն է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը:

5) իրականացնում է օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սովորողների ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի (այսուհետ՝ ծնող) դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ սույն օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով (...):

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որն ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տնօրենը յուրաքանչյուր տարվա համար կազմում և հաստատում է տվյալ տարվա հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների ցանկը և ներկայացնում ատեստավորման հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգին համապատասխան:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ ատեստավորումից առնվազն մեկ ամիս առաջ տնօրենը ատեստավորման հանձնաժողով է ներկայացնում ուսուցչի աշխատանքային բնութագիրը և սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված ուսուցչի հավաքագրած կրեդիտների մասին տեղեկանք՝ դրանք հիմնավորող փաստաթղթերով: Ուսուցիչը կարող է ներկայացնել նաև տվյալ ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների կողմից տրամադրած այլ գրավոր բնութագրերը: Ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ամբողջական ցանկը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Նույն հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 16-րդ մասի 2-րդ կետի հիման վրա ուսումնական հաստատության տնօրենը որոշումը ստանալուն հաջորդող տասնօրյա ժամկետում պաշտոնից ազատում է գբադեցրած պաշտոնին չհամապատասխանող ուսուցչին, եթե նույն հոդվածի 18-րդ կետով սահմանված ժամկետում ատեստավորման հանձնաժողովի որոշումը չի բողոքարկվել: Ուսուցչի թափուր տեղը համալրվում է նույն օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ներքին գնահատման հաշվետվությունը տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը

ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև ապահովում դրա հրապարակումը:

Շարադրված նորմերից բխում է, որ հանրակրթական դպրոցի տնօրենը, նշված իրավական նորմերով օրենսդրի կողմից վերապահված գործառնություններն իրականացնելիս մի դեպքում հանդես է գալիս որպես ուսումնական հաստատությունը ղեկավարելու, այսինքն՝ դրա բնականոն աշխատանքն ու ընթացիկ գործունեությունը կազմակերպելու, վարչական գործառնություններ իրականացնող անձ, իսկ մյուս դեպքերում՝ ուսումնադաստիարակչական գործառնություններ իրականացնող անձ: Մասնավորապես եթե «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով հանրակրթական դպրոցի տնօրենի, որպես գործառնություններ, վրա դրված են կառավարչական-կազմակերպչական բնույթի որոշ գործառնություններ, ապա այդ նույն օրենքով առկա են այլ լիազորություններ, որոնք կատարվում (տեղի են ունենում) և վերաբերում են ուսմանը, հետապնդում են ուսման պրոցեսը կազմակերպելու և ղեկավարելու նպատակ, առնչվում են ուսումնական մեթոդներին և իրենց բնույթով ծառայում են դաստիարակելուն՝ լինելով դաստիարակչությանը հատուկ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանրակրթական դպրոցի տնօրենի կողմից «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով վերապահված այն լիազորությունները խախտելը, որոնք միտված են ուսման պրոցեսը կազմակերպելուն և ղեկավարելուն, այսինքն՝ առնչվում են ուսումնական մեթոդներին և իրենց բնույթով ուսումնական-դաստիարակչական են, հիմք են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառելու, այսինքն՝ տնօրենի՝ որպես ուսումնադաստիարակչական գործառնություն իրականացնող աշխատողի, հետ կնքված աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցնելու հիմքի կիրառմամբ լուծելու համար, եթե առկա է տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք:

Անդրադառնալով այն հարցին, թե որոնք են այն արարքները, որոնք կարող են անհամատեղելի համարվել ուսումնադաստիարակչական գործառնություններ իրականացնող աշխատողի աշխատանքը շարունակելու հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը հստակ չի սահմանում, թե որոնք են այն արարքները, որ նույն օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ կետի խմատով համարվում են անհամատեղելի: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք թույլ տված աշխատողը, ինչպես արդեն իսկ նշվեց, պետք է հանդիսանա ուսումնադաստիարակչական գործառնություններ իրականացնող անձ: Երկրորդ, թույլ տրված արարքները վերոգրյալ դիրքորոշումների հաշվառմամբ պետք է հանդիսանան այնպիսին, որ խաթարած լինեն հանրակրթական դպրոցի տնօրենի վրա օրենքով դրված վերը նշված պարտականությունների կատարման էությունը և նպատակը՝ արգելք հանդիսանալով դրանց իրագործմանը, կամ հակասեն բարոյականության համընդհանուր նորմերին:

Վերը նշված դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարմանը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մարզպետը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 122-րդ հոդվածի 2-րդ կետով, 123-րդ հոդվածով և 226-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով իր 07.10.2020 թվականի թիվ 01/13/06194-2020 գրությունն ու Դպրոցի տնօրեն Աստղիկ Մխիթարյանի կողմից 12.09.2020 թվականի թիվ 12 գրությամբ ներկայացված բացատրությունը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի պահանջները չպահպանելու, վերջինիս նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով 13.10.2020 թվականին կայացրել է թիվ ՍՈ/420-2020 որոշումը, որով Աստղիկ Մխիթարյանին ազատել է Դպրոցի տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ կնքված Պայմանագիրը:

Վերը նշված որոշման հիմքում, ըստ էության, դրվել են Դպրոցի տնօրեն Աստղիկ Մխիթարյանի կողմից թույլ տրված այն արարքները, որոնք արձանագրվել են Մարզպետի 23.09.2020 թվականի թիվ ՍՈ/398-2020 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 23.09.2020 թվականից մինչև 25.09.2020 թվականը Դպրոցում իրականացված ուսումնասիրության ընթացքում: Աշխատանքային խմբի կողմից կազմված արձանագրությամբ,

որպես Աստղիկ Մխիթարյանի կողմից թույլ տրված արարքներ, առաջին խմբում նշվել են հետևյալը՝

- արձակված բոլոր հրամանների կառուցվածքը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոններին՝ սկսած հրամանների վերնագրերից, դրանց կառուցվածքից, դրանցում հղումների կիրառումից, նորմատիվ իրավական ակտերի անվանումների հիշատակումից, դրանց հերթական համարակալումից մինչև դրանց ստորագրումը,

- Ա. Մխիթարյանի կողմից սահմանված չէ իր կողմից որպես տնօրենի, արձակված հրամանների հաշվառման և պահպանման կարգը, իրականացված չէ դրանց պատշաճ իրազեկումն այն աշխատակիցներին, որոնց ուղղված են այդ հրամանները,

- Դպրոցի տնօրեն Ա. Մխիթարյանի կողմից արձակված հրամանների ձեռագիր վարվող հրամանագրքում ստորագրված և կնքված չեն 08.01.2020 թվականի թիվ 99-100, 02.02.2020 թվականի թիվ 101-102, 21.02.2020 թվականի թիվ 103, 24.02.2020 թվականի թիվ 104, 04.05.2020 թվականի թիվ 106-108, 10.05.2020 թվականի թիվ 109, ինչպես նաև առանց ժամանակագրական տվյալների գրանցման թիվ 105 և թիվ 110-112 հրամանները,

- Դպրոցի կառավարման խորհրդի նիստերի արձանագրությունների գրանցամատյանի ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանում արձանագրված 2020 թվականի հունվարից մինչև հաշվետու ժամանակահատվածը՝ սեպտեմբերի 23-ից 25-ը ներառյալ, փետրվարի 11-ի թիվ 2, հուլիսի 24-ի թիվ 4 և սեպտեմբերի 2-ի թիվ 5 արձանագրություններում նշված են, որ նիստերին մասնակցել են խորհրդի ութ անդամներից յոթը, սակայն բոլոր այդ արձանագրությունները խորհրդի նախագահի կողմից ստորագրված չեն, ինչպես նաև թիվ 4 արձանագրությունը ստորագրված չէ խորհրդի անդամ Լ. Հակոբյանի, իսկ թիվ 5 արձանագրությունը՝ Լ. Գյուլխայանի, Լ. Հակոբյանի և Ս. Ալահվերդյանի կողմից:

Երկրորդ խմբում նշվել են թույլ տրված հետևյալ արարքները՝

- Դպրոցի տնօրեն Ա. Մխիթարյանի կողմից «Ազգային երգ ու պար» առարկայի ուսուցիչ Քնարիկ Կարապետյանին 01.08.2020 թվականին տրվել է աշխատանքից առաջիկա հնարավոր ազատման մասին ծանուցում, որում հղում է կատարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի և 115-րդ հոդվածի պահանջներին, մինչդեռ ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.09.2017 թվականի թիվ 1081-Ա/2 հրամանով Դպրոցում ներդրված է «Ազգային երգ ու պար» առարկան, իսկ Քնարիկ Կարապետյանին աշխատանքից ազատելուց հետո նշված առարկայի կրճատում չի կատարվել,

- Ա. Մխիթարյանի կողմից խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածն ինչպես Քնարիկ Կարապետյանի, այնպես էլ Դպրոցի մի խումբ աշխատակիցների պարագայում, որոնց նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր՝ խախտելով նաև նույն օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, իսկ ըստ Ա. Մխիթարյանի հայտարարության՝ կարգապահական տույժերի մասին աշխատակիցներին տեղեկացրել է բանավոր,

- Հարություն Հովհաննիսյանը, չունենալով բարձրագույն կրթություն, սկզբում որպես ժամանակավոր, ապա որպես ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի մասնակից, հաղթող ճանաչվելով տնօրենի 01.10.2019 թվականի թիվ 82 հրամանով, նշանակվել է Դպրոցի գինղեկ,

- Դպրոցում «Կերպարվեստ» առարկայի ուսուցչին փոխարինել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերպարվեստի ֆակուլտետն ավարտած և «Գրաֆիկա» մասնագիտությամբ, մանկավարժի որակավորում չունեցող Մանն Աբելյանը, իսկ «Տեխնոլոգիա» առարկայի դասաժամերը վերապահվել են պարապելու բարձրագույն կրթություն և մանկավարժի որակավորում չունեցող Դպրոցի պահակ Սամվել Մկրտչյանին:

Երրորդ խմբում նշվել են թույլ տրված հետևյալ արարքները՝

- չնայած համապատասխան իրավակարգավորումների պարտադիր պահանջների՝ 25.09.2020 թվականի դրությամբ դեռ հաստատված չէին Դպրոցի 2020-2021 թվականների ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի կազմը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անհատական ուսումնական պլանները,

դասացուցակն ամբողջությամբ, 2020-2021 թվականների ուսումնական տարվա պլանը հաստատված էր առանց «Ազգային երգ ու պար» առարկան ընդգրկելու, իսկ Դպրոցում տիրում էր բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտ:

Նույն արձանագրության մեջ նշվել է նաև, որ քննարկվել են Դպրոցի ուսուցիչների կողմից 22.09.2020 թվականին Մարզպետին հասցեագրված դիմումներից մեկում նշված՝ «*տնօրեն Ա. Մխիթարյանն ուսուցիչներին ստիպում է Դպրոցի սահմանազույցները սեփական միջոցներով ապահովել հիգիենայի պարագաներով սահմանելով հերթաապահություն և գնահատման աստղակ*», «*կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) կանխարգելիչ միջոցառումների համար պահանջվող ախտահարիչ միջոցները դատելները Դպրոցի տնօրենի ցուցումով պահանջել են երեխաներից*» փաստարկները, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում գործող «*Թեժ գիծ*» հեռախոսակապով դպրոցի ծնող Ալինա Վաղարշակյանի կողմից կատարված ահազանգն այն մասին, որ «*տնօրենը բոլոր դասարանների ծնողներին ստիպում է ավոգելեր գնել և Դպրոց բերել, իսկ ուսուցիչներին էլ ժողովի է կանչել և հրահանգել, որ այդ հարցում խարսպահանջ լինեն և դրակից բացի բոլոր ծնողներին ստիպում է դասասնկյակները մաքրել, իսկ մաքրելուց հետո էլ, եթե չի հավանում, նորից է պարպաղորում մաքրել*» ու դիմումատուները հաստատել են իրենց կողմից նշված փաստարկները:

Չորրորդ խմբում նշվել են թույլ տրված հետևյալ արարքները՝

- ի խախտումն կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) պայմաններում դպրոցում գործունեության կազմակերպման ուղեցույցի պահանջների՝ Դպրոցում թվով 589 աշակերտների համար նախատեսված գծանշումների թիվն ինն էր և դրանք ըստ դասարանների չէին նշված, մեկուսացումն ապահովելու համար դասասնկյակ կամ տարածք չկար առանձնացված, աշխատանքային խմբի եռօրյա այցերի ժամանակ՝ սեպտեմբերի 23-ին և 24-ին Դպրոցի մուտքերի մոտ նախ ջերմաչափեր չեն եղել և աշխատանքային խմբի անդամների ջերմաչափում էլ չի իրականացվել:

Հինգերորդ խմբում նշվել են թույլ տրված հետևյալ արարքները՝

- Ա. Մխիթարյանի կողմից պաշտոնավարման ժամանակահատվածում տնօրենի աշխատասնկյակի վերանորոգման, ինչպես նաև գույքի և տեխնիկայի ձեռքբերման համար ծախսված գումարի արժեքը կազմում է 1.883.850 ՀՀ դրամ՝ առանց մատուցված աշխատանքների կամ ծառայությունների հաշվարկների,

- տնօրեն Ա. Մխիթարյանի 24.01.2020 թվականի թիվ 21 հրամանով պարգևատրվել են Դպրոցի դոնատոր Ա. Ավագյանը, գործավար Վ. Մկրտչյանը, գրադարանավար Ա. Հարթենյանը՝ յուրաքանչյուրին 10.000-ական ՀՀ դրամ՝ առանց հիմնավորման, իսկ 25.03.2020 թվականի թիվ 41 և 25.05.2020 թվականի թիվ 49 հրամաններով՝ պահակ-փականագործ Ս. Մկրտչյանը՝ համապատասխանաբար 30.000 և 40.000 ՀՀ դրամ՝ Դպրոցում վերանորոգման աշխատանքներ կատարելու համար: Արդյունքում Դպրոցում իրականացվել է ֆինանսական ռեսուրսների անարդյունավետ կառավարում:

Աստղիկ Մխիթարյանը հայց է ներկայացրել Դատարան՝ նաև հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին՝ հայցի հիմքում դնելով նաև այն, որ իր՝ որպես Դպրոցի տնօրենի լիազորությունների բովանդակությունից ակնհայտ է, որ իր աշխատանքային գործառույթների կազմում ուսումնադաստիարակչական գործառույթը ներառված չէ, ինքը՝ որպես Դպրոցի տնօրեն կատարել է բացառապես վարչական աշխատանք, իսկ արձանագրության բովանդակությունը վկայում է այն մասին, որ դրանում նշված խախտումներից և ոչ մեկը չի վերաբերում ուսումնադաստիարակչական գործառույթների իրականացմանը, բացի այդ, արձանագրված արարքները չեն կարող որակվել որպես այնպիսի արարքներ, որոնք անհամատեղելի են աշխատանքը շարունակելու հետ:

Դատարանի 12.02.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է նաև վերը նշված պահանջի մասով՝ անվավեր է ճանաչվել Մարզպետի 13.10.2020 թվականի Աստղիկ Մխիթարյանին Դպրոցի տնօրենի պաշտոնից ազատելու և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին թիվ ՄՈ/420-2020 որոշումը: Դատարանը, Աստղիկ Մխիթարյանին, ըստ էության, համարելով ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող անձ, և գտնելով, որ համապատասխան հիմքերի առկայության դեպքում

վերջինս կարող էր ազատվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով, այնուամենայնիվ եզրահանգել է, որ վերջինիս կողմից թույլ տրված արարքները չեն բխում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջից, քանի որ դրանք միմիայն վերաբերում են դպրոցի տնօրենի օրենքով սահմանված պարտականությունների ոչ ճիշտ, թերի կատարմանը, այլ ոչ թե ուսումնադաստիարակչական գործառույթ իրականացնող աշխատողի կողմից թույլ տրված այնպիսի արարքին, որն անհամատեղելի է տվյալ աշխատանքը շարունակելու հետ:

Մինևույն ժամանակ անդրադառնալով գործում առկա՝ Դպրոցի ուսուցիչների բացատրագրերին այն մասին, որ տնօրենը անմարդկային, կոպիտ է, վիրավորում է՝ գտել է, որ դրանք նախ վերացական են, ինչպես նաև դպրոցի մի շարք աշխատակիցների բացատրագրերի հետ հակասական են, բացի այդ, կոնկրետ ապացույցներով գործի դատաքննությամբ չեն հաստատվել, պատասխանողը դրանց վերաբերյալ որևէ վերաբերելի ապացույց չի ներկայացրել, ավելին՝ ուղղված չեն հենց բուն բարոյական նորմերի դեմ, ուստի անհամատեղելի չեն դարձնում Աստղիկ Մխիթարյանի հետագա աշխատանքը:

Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Դատարանի հետևությունների հետ այն մասին, որ Աստղիկ Մխիթարյանը համարվում է ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող անձ, 09.07.2021 թվականի որոշմամբ Մարզպետի վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի 12.02.2021 թվականի վճիռը թողել է անփոփոխ նաև այն պատճառաբանությամբ, որ «Աստղիկ Մխիթարյանի կողմից թույլ տրված խախտումներից ոչ մեկը, այդ թվում նաև՝ «դպրոցում տիրող բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը», չեն բխում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջից, քանի որ դրանք վերաբերում են նրան վերագրվող ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող Ա. Մխիթարյանի՝ տվյալ դեպքում որպես դպրոցի տնօրենի՝ օրենքով սահմանված պարտականությունների ոչ ճիշտ, թերի կատարմանը, այլ ոչ թե ուսումնադաստիարակչական գործառույթ իրականացնող աշխատողի կողմից թույլ տրված այնպիսի արարքների, որոնք անհամատեղելի են տվյալ աշխատանքը շարունակելու հետ»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են և չեն բխում գործի փաստերից, քանի որ գնահատական տալով վերը նշված արարքներից յուրաքանչյուրին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներքոշարադրյալ խախտումները Աստղիկ Մխիթարյանի կողմից կատարվել են ոչ միայն նրա, որպես վարչական գործառույթներ իրականացնող անձի, այլև Դպրոցի տնօրենի՝ որպես ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողի, համար սահմանված լիազորությունների շրջանակում:

- Դպրոցի տնօրենի 01.10.2019 թվականի թիվ 82 հրամանով Դպրոցի զինղեկի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի հաղթող է ճանաչվել Հարություն Հովհաննիսյանը և նշանակվել է այդ պաշտոնում նախ ժամանակավորապես, ապա մշտական հիմքում քննարկելով՝ այն պայմաններում, երբ չի ունեցել բարձրագույն կրթություն, որպիսի պահանջը պարտադիր է ուսուցչի համար: Արդյունքում խախտվել են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 14.10.2010 թվականի թիվ 1391-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված ՀՀ-ում հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրերի 11-րդ բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 15.04.2013 թվականի թիվ 396-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 15-րդ կետը, ինչպես նաև Աստղիկ Մխիթարյանի՝ որպես Դպրոցի տնօրենի կողմից հայտարարված և «Հայրենական» հասարակական-քաղաքական, մշակութային թերթով 2019 թվականի սեպտեմբերի 2-11-ին հրապարակված մրցույթի պարտադիր պահանջները:

- Դպրոցի տնօրենը «Կերպարվեստ» առարկայի ուսուցչին փոխարինել է Մանե Արելյանով, ով ավարտել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերպարվեստի ֆակուլտետը և չի ունեցել «Գրաֆիկա» մասնագիտությամբ մանկավարժի

որակավորում, ինչի հետևանքով խախտել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը:

- Դպրոցի տնօրենի 07.10.2019 թվականի թիվ 85 հրամանով 07.10.2019 թվականից մինչև 05.11.2019 թվականը Դպրոցի 5-7-րդ դասարանների «Տեխնոլոգիա» առարկայի դասաժամերը վերապահվել են պարապելու Դպրոցի պահակ Սամվել Մկրտչյանին՝ այն պայմաններում, երբ նա չի ունեցել բարձրագույն կրթություն և մանկավարժի որակավորում, որպիսի պահանջները «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտադիր են ուսումնական հաստատության ուսուցչի համար,

- Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում դպրոցում գործունեության կազմակերպման ուղեցույցի 6-րդ կետի 1-ին ենթակետով Դպրոցի տնօրենը նշանակվել է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) վարակի հսկողության պատասխանատու: Նույն ուղեցույցի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվել է, որ օրվա ընթացքում Դպրոցի անձնակազմն ու սովորողներն ապահովվում են անհրաժեշտ պարագաներով (դիմակներ, ախտահանիչ միջոցներ և այլն), իսկ 11-րդ կետով սահմանվել է Դպրոցի ախտահանման կարգը:

Դպրոցի ուսուցիչների կողմից 22.09.2020 թվականին Մարգալետին հասցեագրված դիմումներից մեկում նշվել է, որ «*տնօրեն Ա. Մխիթարյանն ուսուցիչներին արհայում է Դպրոցի սահմանափակումները սեփական միջոցներով ապահովել հիգիենայի պարագաներով՝ սահմանելով հերթապահություն և գնահատման սանդղակ*», «*կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) կանխարգելիչ միջոցառումների համար պահանջվող ախտահարիչ միջոցները դասղեկները Դպրոցի տնօրենի ցուցումով պահանջել են երեխաներից*» փաստարկները, իսկ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում գործող «Թեժ գիծ» հեռախոսակապով դպրոցի ծնող Ալինա Վաղարշալյանը ահագանգել է այն մասին, որ «*տնօրենը բոլոր դասարանների ծնողներին արհայում է պնդել, որ Դպրոց բերել, իսկ ուսուցիչներին էլ ժողովի է կանչել և հրահանգել, որ այդ հարցում խաղաղապահանջ լինեն և դրանից բացի բոլոր ծնողներին արհայում է դասասնկյակները մաքրել, իսկ մաքրելուց հետո էլ, եթե չի հավանում, նորից է պարտադրում մաքրել*» ու դիմումատուները հաստատել են իրենց կողմից նշված փաստարկները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շարադրված և Դպրոցի տնօրենի՝ որպես ուսումնադաստիարակչական գործառնություններ իրականացնող աշխատողի, կողմից թույլ տրված արարքներն իրենց համակցության մեջ բավարար են եղել այն հետևությունն անելու համար, որ դրանք իրենց բնույթով անհամատեղելի են եղել Աստղիկ Մխիթարյանի՝ Դպրոցի տնօրենի աշխատանքը շարունակելու հետ, քանզի, ըստ էության, խաթարել են հանրակրթական դպրոցի տնօրենի վրա օրենքով դրված պարտականությունների կատարման էությունը և նպատակը՝ արգելք հանդիսանալով դրանց իրագործմանը:

Վերը նկարագրված խախտումներից երեխաների կրթությունն ու դաստիարակությունը համապատասխան կրթություն և որակավորում չունեցող անձանց վստահելը, հիգիենայի պարագաներով դպրոցն ապահովելու և դպրոցի մաքրության պարտականությունը երեխաներին և նրանց ծնողներին սեփական միջոցներով և ուժերով կատարելուն պարտադրելը հակասում են բարոյականության համընդհանուր նորմերին և բացասաբար են ազդում երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի վրա, ինչպես նաև նսեմացնում են երեխաների և նրանց ծնողների արժանապատվությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով ստորադաս դատարանները սխալ են գնահատել Դպրոցի տնօրենի կողմից թույլ տրված խախտումների բնույթը, քանի որ, ի թիվս այլ խախտումների, վերոգրյալները հանդիսանում են ուսումնադաստիարակչական գործառնություններ իրականացնող աշխատողի կողմից թույլ տրված այնպիսի խախտումներ, որոնք անհամատեղելի են տվյալ աշխատանքը շարունակելու հետ, հետևաբար դրանք բավարար հիմք են աշխատողի հետ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու համար:

Վերը նշված պարճատարանությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը չի անդրադարձնում վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին և դրանց հիմնավորումներին, քանի որ դրանք այլևս նշանակություն չունեն բողոքի քննության համար:

Միաժամանակ, վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոհիշյալ պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորն օրենքով ազատված է պետական տուրքի վճարումից, կամ դատարանը կիրառել է նման արտոնություն, ապա պետական տուրքը դատական ակտով բռնագանձվում է պետական տուրքի վճարումից չազատված գործին մասնակցող մյուս անձից՝ բավարարված պահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով բողոք բերած անձ Մարգալետը վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս վճարել է վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ բերելու համար նախատեսված պետական տուրքի գումարները:

Նկատի ունենալով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ բեկանման և փոփոխման, ինչի արդյունքում Աստղիկ Մխիթարյանի հայցը ենթակա է մերժման, որպիսի պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականությունը պետք է կրի հայցվոր կողմը, սակայն նկատի ունենալով, որ մինչև 31.10.2021 թվականը գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի հիմքով՝ Աստղիկ Մխիթարյանն ազատված է պետական տուրքի վճարումից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Մանկության գործ թիվ **ՍնԴ/0276/04/19**
2021թ.

Մանկության գործ թիվ	ՍնԴ/0276/04/19
Նախագահող դատավոր՝	Ա. Սմբատյան
Դատավորներ՝	Մ. Հարթենյան
	Կ. Զիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի հունվարի 27-ին գրավոր ընթացակարգով քննելով «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.11.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի դիմումի՝ անհատ ձեռնարկատեր Արմենուհի Գրիգորյանին (այսուհետ՝ Ձեռնարկատեր) սնանկ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ձեռնարկատիրոջը ճանաչել սնանկ:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Ա. Բաբայան) (այսուհետ՝ Դատարան) 27.06.2019 թվականի վճռով դիմումը բավարարվել է, և Ձեռնարկատերը ճանաչվել է սնանկ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.11.2019 թվականի որոշմամբ Ձեռնարկատիրոջ վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 27.06.2019 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ դիմումը թողնվել է առանց քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, նույն հոդվածի 4-րդ մասը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել սնանկության վարույթի դերը, նշանակությունը և առանձնահատկությունները՝ այն դիտարկելով որպես կողմերի միջև առաջացած վեճերի լուծմանն ուղղված ընթացակարգ և անտեսել է այն հանգամանքը, որ ո՛չ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ո՛չ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը և ո՛չ էլ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքն արբիտրաժային դատարանի քննությանը սնանկության գործերի լուծման որևէ իրավական կարգավորում չեն նախատեսում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սնանկությունն ըստ էության չի հանդիսանում կողմերի միջև առաջացած վեճ, այլ իրենից ներկայացնում է պարտապանի որոշակի կարգավիճակի, այն է՝ անվճարունակության փաստի հաստատում դատարանի կողմից:

Վերագրյալի հիման վրա Բանկը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.11.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.06.2019 թվականի վճռին, կամ բեկանել Վերաքննիչ դատարանի 22.11.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

1) Բանկի և Ձեռնարկատիրոջ միջև 25.12.2017 թվականին կնքված թիվ СՎԳՊ17/45-01 ֆինանսական գործառնություններ իրականացնելու գլխավոր պայմանագրի 9.6 կետի համաձայն՝ պայմանագրի և ֆինանսական համաձայնագրերի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, դատական կամ արբիտրաժային կարգով: Կողմերը եկել են արբիտրաժային համաձայնության այն մասին, որ սույն պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը, կողմերից յուրաքանչյուրի պահանջով կարող է հանձնվել Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին, որում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, հիմնարկի կանոնադրությանը և ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին համապատասխան (**հատոր 1-ին, գ.թ. 13-18**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պայմանագրի կողմերի միջև ծագող վեճերը արբիտրաժում լուծելու համաձայնության առկայության դեպքում պարտապանին սնանկ ճանաչելու իրավական հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

ինչպես նաև 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը, վերահասարակելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պայմանագրային վեճերը լուծելու արբիտրաժային համաձայնության առկայությունը կարող է սահմանափակել պարտապահին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու պարտապիտոջ իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրով կարող է նախատեսվել կողմերի միջև վեճի կարգավորում՝ մինչև դատարան դիմելը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտապիտոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝

1) հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): (...):

ՀՀ սահմանադրական դատարանը 25.02.2008 թվականի թիվ ՄԴՌ-735 որոշմամբ արձանագրել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանք խարսխվում են այն տրամաբանության վրա, համաձայն որի՝ **սնանկության հիմքն անվճարունակությունն է:** Այդ մասին է, մասնավորապես, վկայում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված դրույթը, որը և՛ կամավոր սնանկության, և՛ հարկադրված սնանկության դեպքում որպես սնանկության հիմք ամրագրում է պարտապանի անվճարունակության փաստը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սնանկության վարույթն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցով էլ տարբերվում է հայցային վարույթից: Ըստ էության, սնանկության վարույթում բացակայում է նյութաիրավական վեճը, որը հայցային վարույթի կարևոր բաղադրիչներից մեկն է: Սնանկության գործի վարման արդյունքում սնանկության հատկանիշների առկայության դեպքում հաստատվում է պարտապանի որոշակի կարգավիճակը՝ սնանկ լինելու (անվճարունակության) փաստը, որի հիման վրա իրականացվում են օրենքով սահմանված համապատասխան գործընթացներ:

Վերոգրյալի հաշվառմամբ անդրադառնալով արբիտրաժային համաձայնության առկայության պայմաններում գումարի բռնագանձման պահանջով արբիտրաժ դիմելու և

պարտապանին սնանկ ճանաչելու դիմումով սնանկության դատարան դիմելու իրավունքների հարաբերակցությանը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է հետևյալը.

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝

1. նույն օրենքի դրույթները հիմնվում են հետևյալ սկզբունքների վրա և պետք է մեկնաբանվեն այդ սկզբունքներին համապատասխան.

(...)

2) կողմերն ազատ են իրենց միջև վեճերի լուծման ընթացակարգի շուրջ համաձայնվելու հարցում, որը ենթակա է միայն օրենքով նախատեսված սահմանափակումների:

(...)

4. Նույն օրենքի գործողությունը չի բացառում Հայաստանի Հանրապետության մեկ այլ օրենքի գործողություն, որի համաձայն՝ որոշակի վեճեր չեն կարող հանձնվել արբիտրաժի լուծմանը կամ կարող են հանձնվել արբիտրաժի լուծմանը միայն այն դրույթներին համապատասխան, որոնք սահմանված չեն նույն օրենքով:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի իմաստով՝

1) «արբիտրաժ» նշանակում է ցանկացած արբիտրաժ, անկախ դրա՝ մշտապես գործող արբիտրաժային հաստատության կողմից կամ առանց նման հաստատության իրականացվելու հանգամանքի.

2) «արբիտրաժային տրիբունալ» նշանակում է միանձնյա արբիտր կամ արբիտրների կազմ.

(...)

4) «առևտրային» հասկացությունը ներառում է քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացող *ստևարային բնույթի բոլոր վեճերը*: Առևտրային բնույթը, առանց սահմանափակման, մասնավորապես ներառում է բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված գործարքներից բխող կամ դրանց հետ կապված *վեճերը*, ապրանքների մատակարարման և փոխանակման ու ծառայությունների մատուցման, առևտրային ներկայացուցչության կամ գործակալության, ֆակտորինգի, վարձակալության, լիզինգի, աշխատանքների կատարման, խորհրդատվության, նախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, սպահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձևերի, ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների հետ կապված իրավահարաբերությունները. (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը «Վահան ԵՀԱ» ՍՊԸ-ն ընդդեմ «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ-ի գործով որոշմամբ արձանագրել է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար օրենսդիրը, ի ապահովումն անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի, նախատեսում է դատարան դիմելու հնարավորություն: Միաժամանակ, պայմանագրային հարաբերությունների դեպքում կողմերը որոշակի ազատություն ունեն ոչ միայն պայմանագիր կնքելու, պայմանագրի տեսակները, պայմանագրի պայմանները որոշելու, այլև պայմանագրի հետ կապված վեճերի լուծման կարգը սահմանելու առումով: Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանները պայմանագրային վեճեր քննելիս պետք է պարզեն նաև հետևյալ հարցը՝ արդյոք տվյալ պայմանագրի հետ կապված վեճի լուծման այլ կարգ է սահմանված և արդյոք այն պահպանվել է: ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ այդ հանգամանքը չի խախտում անձի՝ իր իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը, քանի որ տվյալ դեպքն անձին ընդհանրապես չի զրկում իր՝ պայմանագրից ծագած իրավունքների խախտման համար դատարան դիմելու իրավունքից, այլ ուղղակի նախատեսում է դրա իրականացման որոշակի կարգ, որը, ելնելով պայմանագրային հարաբերությունների իմաստից, լիովին համաչափ է անձի սահմանադրական իրավունքներին համատեքստում:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պայմանագրից բխող վեճերի կարգավորման կարգ սահմանելը գնահատելով որպես սնանկ ճանաչելու պահանջի ներկայացման սահմանափակում՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը սխալ է մեկնաբանել այն: Մասնավորապես, հիմք ընդունելով վերոնշյալ մեկնաբանությունները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով **այդ հնարավորությունն ամենևին չի սահմանափակում պարտապանի՝ սնանկ ճանաչելու պահանջի ներկայացման իրավունքը և այն չի ստորադասում գումարի բռնագանձման պահանջ ներկայացնելու իրավունքին** (յրեն թիվ ԵԿԴ/0060/04/10 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2011 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում իրավունքների պաշտպանության ցանկալի ձևն անձն ընտրում է իր հայեցողությամբ: Այսինքն՝ պարտատերն իր հայեցողությամբ է որոշում՝ ներկայացնել գումարի բռնագանձման պահանջ, թե պարտապանին սնանկ ճանաչելու համար դիմել դատարան:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի համակարգային վերլուծությունից բխում է, որ առևտրային արբիտրաժը քննում է առևտրային բնույթի **նյութաիրավական (քաղաքացիաիրավական) վեճեր**, որը հայցային վարույթին բնորոշ հատկանիշ է (հայցային վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ *յրեն ըստ դիմումի՝ Արարուշ Մասցականյանի թիվ ԱՐԴ/4208/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.09.2018 թվականի որոշումը*): Մինչդեռ անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններիս անվճարունակության հետևանքով չտուհախարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը, այսինքն՝ պարտապանին սնանկ ճանաչելը պարտավորությունը ոչ պատշաճ կատարած պարտապանի նկատմամբ դատական այնպիսի միջամտություն է, որի պայմաններում **սահմանափակվում է պարտապանի գործողությունների շրջանակը մինչև սնանկության վարույթի ավարտը**, որպիսի կարգավորման նպատակը պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովելն է (յրեն «ԱՌԷՎՄԻՄՐԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄՐԱՆԿԻ ԽՈՒՄՐ» ՓԲԸ-ն ընդդեմ Հարություն Վարդանյանի թիվ ԵՄԴ/0049/04/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու գործընթացը բաղկացած է մի շարք փուլերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նպատակներն ու խնդիրները և որպես կանոն եզրափակվում է դատական ակտի կայացմամբ: Մասնկության դատարանի գործառույթները, այդ թվում՝ սնանկության կառավարչի լիազորությունների իրականացման նկատմամբ որոշակի վերահսկողության տեսանկյունից, համադրելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի կարգավորումների հետ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ընդհանուր առմամբ սնանկության գործը չի կարող համարվել նյութաիրավական վեճ, իսկ առևտրային արբիտրաժը (արբիտրաժային տրիբունալը) չի կարող վարել սնանկության գործ:

Ամփոփելով վերոգրյալը և վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու պահանջի ներկայացման իրավունքը չի կարող ստորադասվել գումարի բռնագանձման պահանջ ներկայացնելու իրավունքին: Քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ: Հետևաբար պայմանագրային վեճերի լուծման արբիտրաժային համաձայնության առկայությունն ինքնին չի կարող սահմանափակել պարտատիրոջ՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումով սնանկության դատարան դիմելու իրավունքը: Պարտատերն ազատ է ընտրելու իր իրավունքների պաշտպանության ձևը՝ դիմելով ոչ թե արբիտրաժ՝ գումարի բռնագանձման պահանջով, այլ ՀՀ սնանկության դատարան՝ սնանկության դիմումով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Ձեռնարկատիրոջ միջև 25.12.2017 թվականին կնքված թիվ ՇՎԳՊ17/45-01 ֆինանսական գործառնություններ իրականացնելու գլխավոր պայմանագրի 9.6 կետի համաձայն՝ կողմերը եկել են արբիտրաժային համաձայնության այն մասին, որ պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը կողմերից յուրաքանչյուրի պահանջով կարող է հանձնվել Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին:

Դատարանը, գտնելով, որ առկա են Ձեռնարկատիրոջը սնանկ ճանաչելու հատկապես միջոցները, Բանկի դիմումի հիման վրա, Ձեռնարկատիրոջը ճանաչել է սնանկ: Մինևսույն ժամանակ Դատարանն արձանագրել է հետևյալը. «*կողմերի միջև ծագած վեճերը բացի «արբիտրաժային կարգով» լուծելու հնարավորությունից, ծագած վեճերի դեպքում կողմերը գրկված չեն իրավունքների խախտման համար դատարան դիմելու իրավունքից, հետևաբար պարտապանի կողմից պարտավորությունների կետանցի առկայության պայմաններում բանկն իրավունք ունի ընտրելու իր իրավունքների պաշտպանության ձևը:*»:

Վերաքննիչ դատարանը բեկանել է Դատարանի վճիռը, փոփոխել է այն և Բանկի դիմումը՝ Ձեռնարկատիրոջը սնանկ ճանաչելու պահանջի մասին, թողել է առանց քննության՝ գտնելով, որ առկա է դիմումն առանց քննության թողնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ սույն դեպքում կողմերի միջև առկա է եղել վեճերի լուծման արբիտրաժային համաձայնություն, որին օրենքով սահմանված ժամկետում հղում է կատարել պարտապանը:

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին առյուծի դատարանը դատավարության ցանկացած փուլում հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե (...)

3) պատասխանողը մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը հղում է կատարում տվյալ *վեճն* արբիտրաժի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա արբիտրաժային համաձայնությանը, և այդպիսի համաձայնության հիման վրա արբիտրաժ դիմելու հնարավորությունը չի վերացել, բացառությամբ այն դեպքի, երբ արբիտրաժային համաձայնության առկայությունն օրենքով սահմանված դեպքերում չի սահմանափակում կողմի՝ դատարան դիմելու իրավունքը. (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **պարտապանին սնանկ ճանաչելու պահանջի ներկայացման իրավունքը չի ստորադասվում գումարի բռնագանձման պահանջ ներկայացնելու իրավունքին**, ուստի պայմանագրային վեճերի լուծման արբիտրաժային համաձայնության առկայությունը ոչ մի կերպ չի սահմանափակում պարտատիրոջ՝ սնանկության դիմում ներկայացնելու իրավունքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով, չնայած այն հանգամանքին, որ Բանկի և Ձեռնարկատիրոջ միջև կնքված պայմանագրով նախատեսվել է ծագած վեճերի քննությունն արբիտրաժին հանձնելու պայման, այդուհանդերձ պարտապանի կողմից պարտավորությունների կետանցի առկայության պայմաններում՝ Բանկն իրավունք ունի ընտրելու իր իրավունքների պաշտպանության ձևը: Այսինքն՝ թեպետև կողմերի միջև առկա է պայմանագրային վեճերի լուծման արբիտրաժային համաձայնություն, Բանկն ընտրել է իր իրավունքների պաշտպանության հետևյալ ձևը. Ձեռնարկատիրոջը սնանկ ճանաչելու դիմումով դիմել է ՀՀ սնանկության դատարան՝ ինչն ուղղակիորեն բխում է անձի՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձևն իր հայեցողությամբ ընտրելու իրավունքից:

Սույն որոշման պատճառաբանությունների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում պայմանագրով սահմանված դրույթն առ այն, որ պայմանագրի շուրջ ծագած վեճերը պետք է հանձնվեն Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին, ինքնին արգելք չէ սնանկության հատկանիշների

անկայության պարագայում սնանկության դիմում ներկայացնելու համար, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի անկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ և 365-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար՝ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատական իրավունքների նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը՝ սահմանափակելով Բանկի դատական պաշտպանության իրավունքը և խաթարելով սնանկության վարույթի էությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչ-յուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման և օրինական ուժ է տրվում Դատարանի 27.06.2019 թվականի վճռին, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ Ձեռնարկատիրոջից հօգուտ Բանկի պետք է բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.11.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ սնանկության դատարանի 27.06.2019 թվականի վճռին:

2. Անհատ ձեռնարկատեր Արմենուհի Գրիգորյանից հօգուտ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Մասնկության գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Մասնկության գործ թիվ **ԵԿԴ/0090/04/13**
2021թ.
ԵԿԴ/0090/04/13
Ա. Խառատյան
Մ. Հարթենյան
Կ. Չիլինգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի հուլիսի 13-ին
գրավոր ընթացակարգով քննելով Մանվել Տեր-Առաքելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-
րաքննիչ քաղաքացիական դատարանի 14.03.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի
«Յունիքանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ)՝ «Հին Էրիվան հողդինգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ըն-
կերություն) սնանկ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է սնանկ ճանաչել Ընկերությանը:
Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-
թյան դատարանի 29.01.2014 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ:
Բանկը 10.11.2014 թվականին դատարանին ծանուցել է մորատորիում չտարածելու մա-
սին՝ Բանկի 3.103.867.029,42 ՀՀ դրամ գումարի չափով ապահովված պահանջի մասով:
Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-
թյան դատարանի 14.11.2014 թվականի որոշմամբ հաստատվել է սնանկության գործով
պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.07.2015 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Գագիկ Բարխուդարյանը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.08.2015 թվականի որոշումներով սկսվել է Ընկերության լուծարման վարույթ, և վերջինիս գործունեությունը կասեցվել է:

25.12.2015 թվականին Ընկերության սնանկության գործով կառավարիչ Գագիկ Բարխուդարյանը դատարան է ներկայացրել իր կողմից կազմված վերջնական հաշվետվությունը և միջնորդել է ավարտել սնանկության գործը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 15.10.2018 թվականի վճռով ավարտվել է Ընկերության սնանկության գործը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.03.2019 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն և որոշվել է. «Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/0090/04/13 քաղաքացիական գործով 15.10.2018 թվականի վճիռը բեկանել և գործն ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ սնանկության վարույթն ավարտելու հարցի մասով ամբողջ ծավալով նոր քննության»:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մանվել Տեր-Առաքելյանը (ներկայացուցիչ Անի Աստուխյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը (ներկայացուցիչ Նուրիջան Կիրակոսյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը, 87-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը, 88-րդ, 90-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 435-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում կառավարիչը դատարանին միջնորդել է Ընկերության սնանկության գործն ավարտել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածով և նշել է, որ պարտապանի անվամբ հայտնաբերված ամբողջ գույքը վաճառվել է հրապարակային սակարկություններով, իսկ դրամական միջոցները փոխանցվել են սնանկության հատուկ հաշվին և բաշխվել են պարտատերերի միջև՝ ըստ պահանջների գրանցամատյանում սահմանված հերթականության:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Բանկը, գնահատելով իր հնարավոր ռիսկերը և սպասվող օգուտները, ընտրել է սնանկության վարույթից դուրս բավարարում ստանալու եղանակը: Ավելին՝ Բանկն ընտրել է ոչ թե արտադատական կարգով գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու եղանակը, որի իրավունքն ուներ, այլ դատական եղանակը, ինչն էլ օբյեկտիվորեն հանգեցրել է Բանկի պահանջը բավարարվելու ձգձգմանը, հետևաբար նման ընտրության դեպքում էլ պետք է կրի հնարավոր բոլոր ռիսկերը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված թիվ ԵԿԴ/1674/02/14 և ԵԿԴ/5306/02/14 քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեռևս կատարված չլինելու հանգամանքին, ապա Վերաքննիչ դատարանն առնվազն պետք է արձանագրեր, որ Բանկն օգտվել է դատական պաշտպանության հնարավոր միջոցներից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.03.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 15.10.2018 թվականի վճռին:

2.1. Վճարելի բողոքի պարտախանի հիմնավորումները

Բողոքում նշված այն պատճառաբանությունները, որ Ընկերության սնանկության գործը ենթակա էր ավարտման «Մանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի նեղ մեկնաբանության հիմքով, առանց հաշվի առնելու մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պահանջատիրոջ իրավունքները՝ դատական այլ ակտով պարտապան Ընկերության նկատմամբ իր պահանջի բավարարումը ստանալու իրական հնարավորության վերաբերյալ՝ ամբողջությամբ անհիմն է: Հակառակ դեպքում Բանկը, ունենալով ապահովված պահանջի իրավունք և ընտրելով սնանկության վարույթից դուրս ապահովված առարկայի սահմաններում դատական կարգով իր պահանջի բավարարում ստանալու եղանակ, գործնականում կզրկվի իր պահանջի բավարարում ստանալու հնարավորությունից, եթե սնանկության վերաբերյալ գործը մինչև վերոնշյալ եղանակով բավարարում ստանալն ավարտվի պարտապան իրավաբանական անձի լուծարմամբ:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկը 10.11.2014 թվականին դատարանին ծանուցել է մորատորիում չտարածելու մասին՝ Բանկի 3.103.867.029,42 ՀՀ դրամ գումարի չափով ապահովված պահանջի մասով **(հատոր 9-րդ, գ.թ. 73-84):**

2) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.11.2014 թվականի որոշմամբ հաստատվել է սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը: Վերոգրյալ պահանջի մասով Բանկի պահանջը սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակում չի գրանցվել **(հատոր 9-րդ, գ.թ. 20-33):**

3) 25.12.2015 թվականին Ընկերության սնանկության գործով կառավարիչ Գագիկ Բարխուդարյանը ներկայացրել է միջնորդություն՝ սնանկության գործն ավարտելու վերաբերյալ կից ներկայացնելով պարտապանի գույքի վաճառքը հավաստող փաստաթղթերը, պարտատերերի պահանջների գրանցամատյանը, որտեղ նշված են բավարարված պահանջները, պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը **(հատոր 13-րդ, գ.թ. 11-51):**

4) Թիվ ԵԿԴ/5306/02/14 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Բանկի ընդդեմ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Հրանտ Ղամբարյանի, Մանվել Տեր-Առաքելյանի՝ գումար բռնագանձելու և բռնագանձումը գրավադրված գույքի վրա տարածելու պահանջի մասին, ըստ հայցի Բանկի ընդդեմ Մանվել Տեր-Առաքելյանի, պատասխանողի կողմում երրորդ անձ Ընկերության, սնանկության գործով կառավարիչ Հրանտ Ղամբարյանի՝ գրավի առարկայի վրա գրավով ապահովված պարտավորության չափով բռնագանձում տարածելու պահանջի մասին, ըստ հակընդդեմ հայցի Մանվել Տեր-Առաքելյանի ընդդեմ Բանկի՝ գրավի առարկայի վրա գրավով ապահովված պարտավորության չափով բռնագանձում տարածելու պահանջի մասին հայցի ներկայացման գործողությունը որպես Բանկի կողմից Մանվել Տեր-Առաքելյանի նկատմամբ ունեցած իրավունքների չարաշահում ճանաչելու պահանջի մասին, 17.02.2017 թվականին վճռել է. «1. Հայցապահանջները բավարարել մասնակիորեն: 1.1. «Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊԸ-ից հոգուտ «Յունիբանկ» ԲԲԸ-ի բռնագանձել՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ի և «Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊԸ-ի միջև 09.08.2007 թվականից կնքված թիվ 045 և 13.03.2008 թվականին կնքված թիվ 010 չվերականգնվող վարկային գծի պայմանագրերից բխող 01.08.2016թ. դրությամբ «Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից պարտք 3.836.766.857,20 ՀՀ դրամ գումարը (որից 3.076.112.905,84 ՀՀ դրամ տույժ և 760.653.951 ՀՀ դրամ հիմնական պարտք (վարկի գումար և տոկոս), ինչպես նաև 01.08.2016թ.-ից սկսած համաձայն 09.08.2007թ. կնքված թիվ 045 չվերականգնվող վարկային գծի պայմանագրի ժամկետային վարկի գումարի՝ 149.157.895,40 ՀՀ դրամի (որը նվազում է ըստ

ժամանակացույցի մինչև 25.08.2017թ.) վրա տարեկան 13% տոկոսադրույքով հաշվարկվող տոկոսների գումարը և 01.08.2016թ.-ից սկսած համաձայն 09.08.2007թ. կնքված թիվ 045 և 13.03.2008թ. կնքված թիվ 010 չվերականգնվող վարկային գծի պայմանագրերի ժամկետանց վարկի և տոկոսների ընդհանուրի գումարի՝ 1.652.999.924,13 ՀՀ դրամի (որն ավելանում է ըստ ժամանակացույցի մինչև 25.08.2017թ.) վրա մինչև ժամկետանց պարտքի ամբողջական մարումը օրական 0,2 % դրույքով հաշվարկվող տույժերի գումարը: 1.2. Բռնագանձումը տարածել գրավի առարկա ք. Երևան, Կենտրոն համայնք, Հյուսիսային պողոտա 2 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա: 1.3. Նախապես վճարված 4.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումարը: 2. Հայքը՝ մնացած մասով, մերժել: 3. Մանվել Տեր-Առաքելյանի հակընդդեմ հայցն ընդդեմ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության՝ գրավի առարկայի վրա գրավով ապահովված պարտավորության չափով բռնագանձում տարածելու պահանջի մասին հայցի ներկայացման գործողությունը որպես «Յունիբանկ» ՓԲԸ-ի կողմից Մանվել Տեր-Առաքելյանի նկատմամբ ունեցած իրավունքների չարաշահում ճանաչելու պահանջի մասին, մերժել» (**հատոր 14-րդ գ.թ. 153-217**):

5) Թիվ ԵԿԴ/1674/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Բանկի ընդդեմ Մանվել Տեր-Առաքելյանի, երրորդ անձ՝ Ընկերության սնանկության գործով կատարված հրահանգից հրահանգից հետո Վամբարյան՝ գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Մանվել Տեր-Առաքելյանի ընդդեմ Բանկի, երրորդ անձ՝ Ընկերության՝ անշարժ գույքի հաջորդող գլխավոր հիփոթեքի պայմանագիրը չկնքված ճանաչելու պահանջի մասին, 12.02.2015 թվականի վճռով վճռել է. «Հայքը բավարարել՝ 28.08.2013թ. վճռով «Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊԸ-ից հոգուտ «Յունիբանկ» ՓԲԸ-ի բռնագանձվելիք 1.024.000.000 դրամի (830.280.000 ՀՀ դրամ մայր գումարի մասով, 193.720.000 ՀՀ դրամ՝ տոկոսների մասով)՝ որպես թիվ 045-ի վարկային պայմանագրից բխող «Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊ ընկերության վճարային պարտավորությունների գումարների, բռնագանձումը տարածել ք. Երևան, Կենտրոն համայնքի Հյուսիսային պողոտա 2 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա: Մանվել Տեր-Առաքելյանի հակընդդեմ հայցն ընդդեմ «Յունիբանկ» ՓԲԸ-ի, երրորդ անձ՝ «Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊԸ՝ անշարժ գույքի հաջորդող գլխավոր հիփոթեքի պայմանագիրը չկնքված ճանաչելու պահանջի մասին, մերժել» (**հատոր 14-րդ գ.թ. 136-152**):

6) Թիվ ԵԿԴ/5306/02/14 քաղաքացիական գործով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետի տեղակալ Գագիկ Սախոյանի 06.04.2018 թվականի որոշման համաձայն՝ Ընկերությունից հոգուտ Բանկի պետք է բռնագանձել 3.836.770.857 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ: Բռնագանձումը տարածել գրավի առարկա ք. Երևան Կենտրոն համայնք, Հյուսիսային պողոտա 2 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա:

Թիվ ԵԿԴ/1674/02/14 քաղաքացիական գործով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Սախոյանի 05.10.2017 թվականի որոշման համաձայն՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04.11.2015 թվականին տրված թիվ ԵԿԴ/1674/02/14 կատարողական թերթի համաձայն՝ պետք է 28.08.2013 թվականի վճռով Ընկերությունից հոգուտ Բանկի բռնագանձվելիք 1.024.000.000 ՀՀ դրամի վճարային պարտավորությունների գումարների բռնագանձումը տարածել ք. Երևան Կենտրոն համայնք, Հյուսիսային պողոտա թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա: Վերը նշված կատարողական վարույթները դեռևս ավարտված չեն (չվիճարկվող փաստ) (**հատոր 14-րդ գ.թ. 218-219**):

4. Վճռարեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք գրավի առարկայի նկատմամբ մտարտորիում չբարձեռն մասին դատարանին ծանուցած ապահովված պարտավորյալ կողմից գրավի առարկան դեռևս չիրացված լինելը կարող է խոչընդոտ հանդիսանալ սնանկության գործի վարույթն ավարտելու համար:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց ոչ ուշ, քան 15 օր հետո կառավարիչը դատարան է ներկայացնում վերջնական հաշվետվությունը:

2. Դատարան ներկայացվող վերջնական հաշվետվությանը կցվում են՝

ա) պարտապանի գույքի վաճառքը հավաստող փաստաթղթերը.

բ) պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները.

գ) պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

Կառավարչի վերջնական հաշվետվությունը պետք է պարունակի ամփոփ տեղեկատվություն՝ պարտապանի ակտիվների հավաքման վերաբերյալ, և հիմնավորված միջնորդություն՝ սնանկության գործն ավարտելու վերաբերյալ (...):

5. Դատավորը, քննելով վերջնական հաշվետվությունը, վճիռ է կայացնում պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, կամ մերժում է գործն ավարտելու միջնորդությունը՝ նշելով մերժման պատճառները (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն նորմով օրենսդիրը սահմանել է պարտատերերի պահանջների ամբողջական բավարարման անհնարինության պայմաններում սնանկության գործը պարտապանի լուծարմամբ ավարտելու կարգը: Մասնավորապես, նշված նորմի վերլուծությունից բխում է, որ սնանկության գործով կառավարչի կողմից պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց ոչ ուշ, քան 15 օր հետո վերջինս պարտավոր է դատարան ներկայացնել վերջնական հաշվետվություն, որը պետք է պարունակի ամփոփ տեղեկատվություն՝ պարտապանի ակտիվների հավաքման վերաբերյալ, և հիմնավորված միջնորդություն՝ սնանկության գործն ավարտելու վերաբերյալ: Ընդ որում վերջնական հաշվետվությունն ինքնին բավարար չէ սնանկության գործն ավարտելու համար: Օրենսդիրն ամրագրել է դրույթ առ այն, որ վերջնական հաշվետվությանը կառավարիչը պետք է կցի նաև պարտապանի գույքի վաճառքը հավաստող փաստաթղթերը, պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները, պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

Հարկ է նշել, որ կառավարչի կողմից դատարան ներկայացրած վերջնական հաշվետվությունը վերաբերում է *սնանկության վարույթի շրջանակներում գրանցված պարտավորյալներին և նրանց հետ հաշվարկներ կատարելու և դրանց պահանջների հետ կապված ամբողջ փաստաթղթաշրջանառությանը*, որի մեջ չեն ներառվում սնանկության

վարույթից դուրս իրենց իրավունքներն իրացնող պարտատերերը, ինչի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մանակության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապահովված պահանջների բավարարման առանձնահատկությունները, ինչպես նաև ապահովված պահանջների բավարարման համար պարտապանի գույքի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման առանձնահատկությունները կարգավորվում են նույն օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածներով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մանակության մասին» ՀՀ օրենքի 39-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից՝

ա) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը, բացառությամբ պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունների.

բ) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի գույքի, ինչպես նաև նրա մասնակցի (մասնակիցների) սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայտաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը, բացառությամբ սույն օրենքի 55-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի.

գ) կասեցվում են գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները, արգելվում են կատարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով գանձումները.

դ) արգելվում է պարտատիրոջ՝ մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելը պարտապանի նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորության հաշվանցը՝ պարտապանի նկատմամբ ունեցած իր պահանջի հետ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝

ա) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը.

բ) արգելվում է պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթի սկսումը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վճելի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով.

գ) կարճվում է սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վճելի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով:

Նշված քաղաքացիական գործը կարող է վերսկսվել սնանկության գործի ավարտից հետո պարտապանի ֆինանսապես առողջացման դեպքում: Հակառակ դեպքում դատարանի սնանկության գործն ավարտելու մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը հիմք է քաղաքացիական գործի վարույթի կարճման համար՝ լուծարված պարտապանի մասով.

դ) կասեցվում է դրամական պարտավորությունների և պարտադիր վճարումների, ներառյալ՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ

գանձման ենթակա տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև վճարման ենթակա տոկոսների հաշվարկումը, վճարումը կամ գանձումը.

ե) կարճվում են գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները:

Փաստորեն վերոգրյալ իրավանորմով օրենսդիրը նախատեսել է պարտատերերի պահանջների բավարարման սառեցման կամ այլ կերպ ասած՝ մորատորիումի ինստիտուտը, որը պարտապանի վճարունակության վերականգնման նպատակին հասնելու միջոցներից մեկն է: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ այն առաջնահերթ ուղղված է պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածին և արձանագրել է, որ դրանում սահմանված է սնանկության գործընթացի հիմնական առանձնահատկություններից մեկը, այն է՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սառեցվում է պարտատերերի պահանջների բավարարումը (մորատորիում): Այդ պահից սառեցվում են պարտատերերի բոլոր գործողությունները, որոնք ուղղված են պարտապանի նկատմամբ պահանջների բավարարմանը (*լրենս, օրինակ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն ընդդեմ «Մսիկուսի վերելակաշիսական գործարան» ՓԲԸ-ի թիվ 3-1717(ՏԿ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով կարճման ենթակա են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ ոչ բոլոր քաղաքացիական գործերի վարույթները, այլ միայն այն քաղաքացիաիրավական վեճերով գործերի վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին ներկայացված է նյութաիրավական պահանջ՝ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու տեսքով, և որոնց լուծումը կարող է հանգեցնել վերջինիս գույքային գանգվածի փոփոխության (*լրենս Մարինե Ավերիսյանն ընդդեմ Արարեմ Ավերիսյանի թիվ ԵՄԴ/1140/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը*):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի համաձայն՝ մորատորիումի գործողությունը չի տարածվում գրավով ապահովված պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու կամ նրանց՝ գրավով ապահովված պահանջների բավարարման համար ցանկացած գործարքի կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա, եթե ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասին ծանուցել է դատարանին:

Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում**, և նրա ապահովված պահանջները բավարարվում են **բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման** (այդ թվում՝ գործող օրենսդրությամբ սահմանված՝ առանց դատարանի դիմելու) հաշվին:

Այդ դեպքում պարտատերերն անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չեն կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը «ՎՏԲ-Հայասրան Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Կայաչ» ՍՊԸ-ի և Միլվա Համբարձումյանի թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով 17.07.2015 թվականին կայացրած որոշմամբ՝ վկայակոչված հոդվածների դրույթների վերլուծության արդյունքում արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության կատարման համար գրավադրված գույքը չի ընդգրկվում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը կարող է այդ գույքից իր պահանջների բավարարում ստանալ սնանկության վարույթից դուրս ՀՀ քաղաքացիական

օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, սակայն **միայն այն դեպքում**, երբ տեղեկանալով պարտապանի սնանկ ճանաչվելու վերաբերյալ՝ ապահովված պարտատերը ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին: Այսինքն՝ օրենսդիրը, պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում հնարավորություն ընձեռնելով ապահովված պարտատիրոջը ստանալու իր պահանջների բավարարումը գրավադրված գույքի հաշվին՝ **շրջանցելով սնանկության գործով վարույթը**, միաժամանակ սահմանել է այն պարտադիր պայմանը, որի պահպանման դեպքում միայն «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը կարող է գործել: Նշված պայմանի չպահպանման դեպքում՝ գրավադրված գույքը ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը դրանից բավարարում կարող է ստանալ բացառապես սնանկության վարույթի շրջանակներում՝ ընդգրկվելով պարտատերերի ցանկում:

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ օրենսդիրը պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ համար նախատեսել է իր բավարարումը ստանալու երկու այլընտրանքային եղանակ՝ սնանկության վարույթից դուրս և սնանկության վարույթի շրջանակներում՝ նշված երկու եղանակներից որևէ մեկի ընտրության հնարավորությունը թողնելով պարտատիրոջ հայեցողությանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ թե՛ սնանկության վարույթից դուրս, թե՛ սնանկության վարույթի շրջանակներում բավարարում ստանալու եղանակներն ունեն իրենց առանձնահատկությունները:

Այսպես, եթե գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության գործով վարույթը շրջանցելու միջոցով իր պահանջները բավարարելու եղանակը, ապա վերջինս բավարարում կարող է ստանալ **բացառապես գրավադրված գույքի հաշվին**, և *անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, Կվյալ պարտավորության մասով հերազայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ*: Մինչդեռ այն դեպքում, երբ գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության վարույթի շրջանակներում իր պահանջների բավարարում ստանալու եղանակը, ապա գրավադրված գույքը ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում, և այս դեպքում գրավով ապահովված պարտավորության պարտատերն իր պահանջների բավարարումը կարող է ստանալ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերով սահմանված կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ օրենսդրի կողմից նման տարբերակված կարգավորում սահմանելու նպատակն է սնանկության վարույթի առկայության պայմաններում երաշխավորել գրավով ապահովված պարտատերերի և մյուս պարտատերերի իրավունքների և օրինական շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը: Այդ իսկ նկատառումով օրենսդիրը, գրավով ապահովված պարտատիրոջը հնարավորություն ընձեռնելով կամովին ընտրելու իր պահանջների բավարարման եղանակը՝ շրջանցելով սնանկության վարույթը, կամ այդպիսի բավարարում ստանալ սնանկության վարույթի շրջանակներում, այդուհանդերձ, նախատեսել է որոշակի սահմանափակումներ: Այսպես՝ սնանկության վարույթի շրջանակներից դուրս իր պահանջների բավարարում ստանալու՝ գրավով ապահովված պարտատիրոջ՝ գրավով ապահովված պահանջների բավարարման իրավունքն օրենսդիրը սահմանափակել է գրավի արժեքի սահմաններով, ի տարբերություն քաղաքացիական շրջանառության բնականոն պայմանների, երբ գրավով ապահովված պարտատերն իրավունք ունի գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարն իր պահանջները բավարարելու համար բավարար չլինելու պայմաններում պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ կետ): Միաժամանակ, սնանկության վարույթի շրջանակներում գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջն իրավունք վերապահելով պահանջել իր՝ գրավով ապահովված պարտավորությունն

ստացնահերթ բավարարել գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից, պահանջի բավարարումը գրավից ազատ գույքից օրենսդիրը սահմանափակել է այնքան, քանի դեռ գրավադրված գույքի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին: Ընդ որում, գրավից ազատ գույքի հաշվին գրավով ապահովված պահանջատիրոջ պահանջները կարող են բավարարվել միայն որպես չապահովված պահանջ՝ գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից չբավարարված պահանջի մասով՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով և պայմաններով:

ՀՀ վճռարեկ դատարանը հարկ է համարել նշել նաև, որ օրենսդիրը, պարտապահի սնանկ ճանաչվելու դեպքում հնարավորություն ընձեռնելով գրավով ապահովված պահանջի պարտատիրոջը ստանալու իր պահանջների բավարարում՝ շրջանցելով սնանկության գործով վարույթը, և այդ բավարարման չափը սահմանափակելով բացառապես գրավադրված գույքի արժեքով, որևէ կերպ չի սահմանափակել գրավով ապահովված պարտատիրոջ՝ գրավով ապահովված իր պահանջների բավարարման իրավունքի իրացման՝ օրենսդրությամբ սահմանված եղանակների ընտրության հնարավորությունը: Մասնավորապես՝ սահմանափակված չէ գրավադրված գույքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ դատական կամ արտադատական կարգով իրացնելու հնարավորությունը: Ավելին, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը, սահմանելով, որ գրավով ապահովված պահանջները սնանկության վարույթից դուրս բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման հաշվին, մասնավորեցնելով նշել է՝ «այդ թվում՝ գործող օրենսդրությամբ սահմանված՝ առանց դատարան դիմելու» հաշվին, ինչը նշանակում է, որ դատական կարգով գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հնարավորությունն ինքնին ենթադրվում է:

Նման պայմաններում ՀՀ վճռարեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ գրավով ապահովված պահանջի պարտատերն օգտվում է իր պահանջի բավարարումը սնանկության վարույթի շրջանակներից դուրս ստանալու՝ օրենքով իրեն վերապահված իրավունքից, վերջինս հնարավորություն ունի գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածել և իրացնել այն ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ գրավադրված գույքի իրացման կանոններին համապատասխան:

Միաժամանակ ՀՀ վճռարեկ դատարանը հարկ է համարել նշել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով սահմանված՝ մորատորիումի գործողության տարածման բացառությունը հնարավորություն է տալիս գրավով ապահովված պարտատիրոջը մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում սնանկության վարույթը շրջանցելով գրավով ապահովված պահանջների համար **դրամական** կամ այլ բավարարում ստանալ, կամ գրավով ապահովված պահանջների բավարարման համար կնքել ցանկացած գործարք կամ իրականացնել այդպիսի գործարքի կատարմանն ուղղված ցանկացած գործողություն կամ գործընթաց:

Վերոգրյալի հաշվառմամբ ՀՀ վճռարեկ դատարանը հավելել է, որ պարտատերը, իրացնելով օրենսդրության իրեն վերապահված հայեցողությունը և այլընտրանքային տարբերակներից ընտրելով սնանկության վարույթից դուրս՝ դատական կամ արտադատական կարգով գրավով ապահովված պահանջների համար **դրամական** կամ այլ բավարարում ստանալու միջոցը, միաժամանակ կրում է նաև դրանցից բխող հնարավոր ռիսկերը: Այսինքն՝ պարտատերը ունենալով իր իրավունքների իրացման այլընտրանք՝ կրում է նաև դրանցից բխող հնարավոր վտանգների պատասխանատվությունը, քանի որ վերոնշյալ իրավական վերլուծություններից ուղղակիորեն բխում է, որ պարտատերն իր պահանջների բավարարումը կարող է ստանալ **բացառապես գրավադրված գույքի հաշվին**, և անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապահի այլ գույքի նկատմամբ: Նշվածը վկայում է այն մասին, որ պարտատերը

նշված պարտավորության հետ կապված սնանկության վարույթում այլևս զրկվում է որևէ պահանջ ներկայացնելու իրավունքից (որեն «Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ընդդեմ «ԱՆՏԷ» ՓԲԸ-ի, Սարգիս Աղաբեկյանի, Միմա Ղուկասյանի, Լևիկ Աղաբեկյանի թիվ ԵԿԴ/1873/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը):

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սնանկության վարույթը շրջանցած պարտատերը, ով իր պահանջի բավարարումը կարող է ստանալ սնանկության վարույթից դուրս դատական կամ արտադատական եղանակով, գրավի առարկայի նկատմամբ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելուց հետո այլևս նույն պարտավորության համար սնանկության վարույթում պահանջ ներկայացնելու իրավունք չի կարող ունենալ՝ պարտապանի այլ գույքից բավարարում ստանալու համար, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման հաշվին: Ավելին, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վերջինս նաև չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում: Այսինքն՝ ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու պահից սնանկության վարույթում այլևս չի կարող դիտարկվել որպես պարտատեր: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով սահմանված՝ «պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը» արտահայտությունը վերաբերում է միայն սնանկության վարույթում իրենց պահանջների բավարարումը ստացած պարտատերերին: Այսինքն՝ այդ դեպքում սնանկության գործն ավարտելիս դատարանի համար էական է միայն սնանկության վարույթում գրանցված պարտատերերի (պարտատերերի պահանջների վերջնական ցուցակում և/կամ գրանցամատյանում) և պարտապանի իրավական դրությունը, քանի որ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած պարտատերն այլևս իրականացրել է իր տնօրինչական իրավունքը՝ սնանկության վարույթից դուրս իր պահանջի բավարարումը ստանալու համար, և Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է կրի այդ իրավունքի իրացման հնարավոր բացասական հետևանքների ռիսկը:

Սույն գործով Դատարանը, քննելով Ընկերության սնանկության գործով կառավարչի ներկայացրած հաշվետվությունը պարտապանի սնանկության գործն ավարտելու վերաբերյալ, վճռել է ավարտել Ընկերության սնանկության գործը՝ պատճառաբանելով, որ պարտապանի անվամբ հայտնաբերված ամբողջ գույքը վաճառվել է հրապարակային սակարկություններով, դրամական միջոցները փոխանցվել են սնանկության հատուկ հաշվին և բաշխվել են պարտատերերի միջև՝ ըստ պահանջների գրանցամատյանում սահմանված հերթականության: Դատարանը միաժամանակ արձանագրել է, որ օրենսդրական որևէ կարգավորումից չի բխում, որ որևէ այլ գործով դատական ակտի կատարումը կարող է ապահովվել սնանկության վարույթի անհիմն ձգձգման միջոցով:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Բանկի վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/1674/02/14 և թիվ ԵԿԴ/5306/02/14 քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած վճիռների համաձայն՝ Ընկերությունից հօգուտ Բանկի պետք է բռնագանձել 4.860.766.857,2 ՀՀ դրամ գումար, ինչպես նաև հաշվեգրվող պայմանագրային տոկոսները և տույժերը՝ բռնագանձումը տարածելով գրավի առարկայի վրա: Թիվ ԵԿԴ/1674/02/14 և թիվ ԵԿԴ/5306/02/14 քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած վճիռների հիման վրա դատարանի կողմից տրամադրվել են կատարողական թերթեր և դրանց հիման վրա հարկադիր կատարողի կողմից հարուցվել են համապատասխան բռնագանձման կատարողական վարույթներ /վճիռները գտնվում են հարկադիր կատարման փուլում/: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ սնանկության գործը, մինչև մորատորիում

չտարածելու մասին դատարանին ծանուցած, ապահովված պահանջատիրոջ կողմից գրավի առարկայի արժեքից բավարարում ստանալը, չի կարող ավարտվել Ընկերության լուծարմամբ, իսկ սնանկության գործով կառավարիչը չի կարող ավարտի միջնորդություն ներկայացնել, քանի դեռ գրավի առկայության պայմաններում ապահովված պահանջատիրոջ պահանջի բավարարման իրավական հնարավորությունը պահպանվում է:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սնանկության գործի ավարտն օրենսդիրը չի սահմանափակել այնպիսի նախապայմանով, ըստ որի՝ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած պարտատիրոջ կողմից իր պարտապանի հանդեպ ապահովված պահանջի բավարարումից հետո միայն կարելի է ավարտել սնանկության գործի վարույթը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բանկը, ընտրելով սնանկության վարույթից դուրս իր պահանջի դատական կարգով բավարարում ստանալու եղանակը, ի սկզբանե պետք է հաշվի առներ հնարավոր բոլոր ռիսկերը: Ավելին, տվյալ դեպքում Բանկը, որն իրականացրել է իր ստօրինչական իրավունքը՝ սնանկության վարույթը շրջանցելու համար կատարելով համապատասխան ծանուցումը՝ մորատորիում չտարածելու մասին միջնորդություն ներկայացնելով, այլև չի կարող «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի իմաստով դիտարկվել որպես պարտատեր, քանի որ վերջինս այլևս դուրս է եկել սնանկության վարույթից: Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանություններին, որ սնանկության գործի ավարտով և պարտապանի լուծարմամբ պարտատեր Բանկը կարող է գրկվել օրինական ուժի մեջ ստած վճիռներով իր օգտին բռնագանձվելիք գումարները գրավի իրացման հաշվին ստանալու իրավական հնարավորությունից, որպիսի պարագայում կիրառվող միջոցառումը չի կարող բխել հասարակական (և/կամ մասնավոր անձանց) շահից, ուստի կրել կամ հետապնդել իրավաչափ նպատակ, գտնում է, որ դրանք անհիմն են, քանի որ Բանկը, ընտրելով սնանկության վարույթից դուրս իր պահանջների բավարարումը ստանալու եղանակը, պետք է կրի այդ իրավունքի իրացման հնարավոր բացասական հետևանքների ռիսկը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Բանկը մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցել է դեռևս 10.11.2014 թվականին, իր հերթին Ընկերության սնանկության գործով կառավարիչ Գագիկ Բարխուդարյանը 25.12.2015 թվականին է Դատարան ներկայացրել իր կողմից կազմված վերջնական հաշվետվությունը՝ միջնորդելով ավարտել սնանկության գործը, իսկ Դատարանը սնանկության գործն ավարտել է միայն 15.10.2018 թվականի վճռով: Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մորատորիում չտարածելու մասին դիմումը ներկայացնելուց հետո մինչև սնանկության գործն ավարտելու մասին միջնորդություն ներկայացնելը և Դատարանի վճռով սնանկության գործն ավարտվելը, Բանկն ունեցել է բավականին ժամանակ և ողջամիտ հնարավորություն իր իրավունքներն իրացնելու համար:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերից հետևում է, որ սնանկության գործով կառավարիչ կողմից դատարան է ներկայացվել վերջնական հաշվետվություն և հիմնավորված միջնորդություն՝ սնանկության գործն ավարտելու վերաբերյալ, որի պայմաններում էլ Դատարանը վերջնական հաշվետվությունը քննելուց հետո պարտավոր էր ավարտել սնանկության գործը, հատկապես այն պայմաններում, երբ օրենսդիր կողմից որևէ բացառություն կամ վերապահում սահմանված չէ այն մասին, որ սնանկության վարույթից դուրս այլ քաղաքացիական գործերի առկայությունը, որոնցով դեռևս պարտատերը չի ստացել իր պահանջների բավարարումը, հիմք է սնանկության գործը չավարտելու համար: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ մինչև մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած ապահովված պահանջատիրոջ կողմից գրավի առարկայի արժեքից

բավարարում ստանալը սնանկության գործը չի կարող ավարտվել Ընկերության լուծարմամբ, անհիմն է: Վերոգրյալից հետևում է, որ Դատարանը, վճիռ կայացնելով սնանկության գործի վարույթն ավարտելու մասին, կայացրել է օրինական և հիմնավորված դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ) գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ) գլխի կանոններին համաձայն:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման և օրինական ուժ է տրվում Դատարանի 15.10.2018 թվականի վճռին, Վճռաբեկ դատարանը, հիմք

ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ Բանկից հօգուտ Մանվել Տեր-Առաքելյանի պետք է բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.03.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 15.10.2018 թվականի վճիռ:

2. «Յունիբանկ» ԲԲԸ-ից հօգուտ Մանվել Տեր-Առաքելյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Մասնկության գործ թիվ ԿԴ/0040/04/15
Մասնկության գործ թիվ	ԿԴ/0040/04/15
Նախագահող դատավոր՝	Ն. Մարգարյան
Դատավորներ՝	Կ. Համբարձումյան Հ. Ենոքյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- | | |
|-------------------------------|--|
| <i>Նախագահող
զեկուցող</i> | Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ |
|-------------------------------|--|

2022 թվականի ապրիլի 29-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ Երևան համայնքի դիմումի՝ «Ընդերքաբեր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2021 թվականի որոշման դեմ Երևան համայնքի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դարավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Երևան համայնքը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2015 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Տ. Փոլադյան) (այսուհետ՝ Դատարան) 04.03.2021 թվականի որոշմամբ Երևան համայնքի դիմումը՝ 9.768.616 ՀՀ դրամի չափով լրացված պահանջը գրանցելու մասին, բավարարվել է մասնակիորեն՝ Երևան համայնքի պահանջը՝ 2.471.476 ՀՀ դրամի չափով գրանցվել է Ընկերության սնանկության

գործով պարտատերերի ցուցակում՝ որպես «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթի պահանջ. մնացած մասով պահանջը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.07.2021 թվականի որոշմամբ Երևան համայնքի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.03.2021 թվականի ««Ընդերքաբեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով Երևան համայնքի պահանջի լրացումը մասնակի գրանցելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևան համայնքը (ներկայացուցիչ Տարոն Մարգարյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ, 466-րդ, 469-րդ և 624-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապարհաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալուց հետո Երևան համայնքի կողմից առարկություններ չեն ներկայացվել Ընկերության կողմից գույքի օգտագործումը շարունակելու վերաբերյալ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով Երևան համայնքը երեք ամիս առաջ Ընկերությանը չի տեղեկացրել վարձակալության պայմանագրից հրաժարվելու մասին, որի պայմաններում պայմանագիրը ճանաչվել է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով: Ընկերությունը, 01.01.2016 թվականից հանքավայրն օգտագործելով ընդերքօգտագործման նպատակով, շարունակել է հանդիսանալ վարձակալ, հետևաբար և հողամասի վարձավճար վճարող: Նշված պայմանագիրը կարող է համարվել օրենքի ուժով դադարած դրա լուծման մասին կողմերի միջև համաձայնություն կնքվելու դեպքում, ինչպես նաև այդ իրավունքի դադարումը ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում գրանցելուց հետո:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերության պարտավորությունը Երևան համայնքի հանդեպ հիմնված է գրավոր գործարքի հիման վրա, որից ծագող իրավունքներն օրենքով սահմանված կարգով ենթարկվել են պետական գրանցման: Ընկերությունը խախտել է պայմանագրային պարտավորությունները՝ մասնակիորեն է վճարել հողամասի վարձավճարը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ «Մասնկության մասին» օրենքի 72-րդ հոդվածով սահմանված կարգով Ընկերության գործնետության կասեցումը վերը նշված իրավանդումների ուժով, ըստ էության, իրենից չի ներկայացնում վարձակալության իրավունքի դադարում և չի կարող հիմք հանդիսանալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ մասնակի կատարման համար, որի պայմաններում Երևան համայնքի կողմից 06.11.2020 թվականին ներկայացված 9.768.616 ՀՀ դրամ գումարի չափով ներկայացված պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 09.07.2021 թվականի որոշումը և գրանցել Երևան համայնքի պահանջը 9.768.616 ՀՀ դրամի չափով կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի քաղաքապետի 05.06.2009 թվականի թիվ 5977-Ա որոշման 1-ին կետով Երևանի Սպանդարյանի բազալտի հանքավայրում գտնվող 24,81հա մակերեսով հողամասն առանց մրցույթի վարձակալության իրավունքով մինչև 31.12.2015 թվականը տրամադրվել է Ընկերությանը՝ տարեկան վարձավճար սահմանելով տվյալ հողամասի կադաստրային արժեքի մեկ տոկոսի չափով (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 16, 17**).

2) վերը նշված որոշման հիման վրա 25.11.2009 թվականին Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ նաև Վարձատու), և Ընկերության (այսուհետ՝ նաև Վարձակալ) միջև կնքվել է հողամասի վարձակալության մասին պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1-ին կետով Վարձատուն համապատասխան վարձավճարի դիմաց ընդերքօգտագործման համար Վարձակալի տիրապետմանը և օգտագործմանն է հանձնել Երևանի Սպանդարյանի բազալտի հանքավայրում գտնվող 24,81հա մակերեսով հողամասը:

Պայմանագրի 8-րդ կետով հողամասի տարեկան վարձավճար է սահմանվել այդ հողամասի կադաստրային արժեքի մեկ տոկոսը՝ 7.294.140 ՀՀ դրամ:

Պայմանագրի 15-րդ կետով Պայմանագրի ժամկետը սահմանվել է մինչև 31.12.2015 թվականը:

Պայմանագրի 19-րդ կետում նշվել է, որ Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո վարձակալված հողամասի տիրապետումը և օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը Պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման համար հիմք չի հանդիսանում: Վարձակալի պարտականությունները պահպանվում են նրա կողմից վարձակալված հողամասի ժամկետանց տիրապետման և օգտագործման ամբողջ ընթացքում (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 12-15**).

3) Ընկերությունը պատշաճ չի կատարել Պայմանագրով ստանձնած՝ վարձավճարը վճարելու իր պարտավորությունները, որի հիման վրա Երևան համայնքը դիմում է ներկայացրել դատարան՝ Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 4-7**).

4) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2015 թվականի վճռով Երևան համայնքի դիմումը բավարարվել է, և Ընկերությունը ճանաչվել է սնանկ (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 112-118**).

5) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2016 թվականի որոշմամբ հաստատվել է Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը, որում պարտատեր է ներառվել նաև Երևան համայնքը 7.336.110 ՀՀ դրամի չափով չափահովված պահանջով՝ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթում (**հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 70-73**).

6) Երևան համայնքը 09.11.2020 թվականին Դատարան է ներկայացրել պահանջի փոփոխություն՝ խնդրելով ևս 9.768.616 ՀՀ դրամի չափով լրացնել իր պահանջը՝ նշելով, որ պահանջի գրանցումից հետո վարձակալության գծով առաջացել են դրամական պարտավորություններ (**հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 2, 3**).

7) նշված պահանջի փոփոխության դեմ գրավոր առարկություն է ներկայացրել Ընկերությունը՝ նշելով նաև, որ պահանջի փոփոխության դեմ առարկում է մասնակիորեն՝ 7.294.140 ՀՀ դրամի չափով, քանի որ թեև Պայմանագրի գործողությունը 01.01.2016 թվականին դադարելուց հետո սկսած 01.01.2016 թվականից Ընկերությունը շարունակել է հանքավայրն օգտագործելն ընդերքօգտագործման նպատակով և այդ փաստով Պայմանագրի կողմերի միջև եղած իրավահարաբերությունը փաստացի շարունակվել է՝ առանց նոր պայմանագրի կնքելու, սակայն Դատարանի 04.11.2019 թվականի որոշմամբ Ընկերության ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվել է, և Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ, որի արդյունքում Ընկերության գործունեությունը կասեցվել է: Նման պայմաններում ինքն առարկում է 05.11.2019 թվականից մինչև 05.11.2020 թվականն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված վարձավճարի գումարի մասով ևս պահանջը հաստատելու դեմ (**հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 8**).

8) Դատարանի 04.03.2021 թվականի որոշմամբ Երևան համայնքի դիմումը՝ ևս 9.768.616 ՀՀ դրամի չափով պահանջի փոփոխությունը գրանցելու մասին, բավարարվել է մասնակիորեն՝ 2.471.476 ՀՀ դրամի չափով, և այն կրկին գրանցվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթում. մնացած մասով դիմումը մերժվել է (**հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 44-50**):

4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 624-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ, 466-րդ, 469-րդ և 624-րդ հոդվածների այնպիսի խախտումներ, որոնք խաթարել են արդարադատության բուն էությունը.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանը հարկ է համարում անդրադառնալ անակնկալի դատարանի որոշմամբ վարձակալի գործունեությունը կասեցված լինելու պայմաններում անշարժ գույքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այդ պայմանագիրը վերսկսված համարելու առանձնահատկություններին և դրանցից բխող իրավական հետևանքներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալության պայմանագրով վարձատրուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը կնքվում է պայմանագրով որոշված ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 616-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճարը (վարձավճարը): Վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետները որոշվում են վարձակալության պայմանագրով: Եթե պայմանագրով դրանք որոշված չեն, ապա կիրառվում են նույնանման գույքի վարձակալության ժամանակ համեմատելի հանգամանքներում սովորաբար գործող կարգը, պայմանները և ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատրուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով (հոդված 612):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 625-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը դադարելու դեպքում վարձակալը պարտավոր է վարձատրուին վերադարձնել գույքն իր կողմից ստացված վիճակում՝ բնականոն մաշվածության հաշվառմամբ կամ պայմանագրով նախատեսված վիճակում:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե վարձակալը չի վերադարձրել վարձակալած գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, վարձատրուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամկետի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում վարձատրուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ

իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման: Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև նույն օբեկտներով և այլ օբեկտներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորություն է ստանձնում համապատասխան վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել համապատասխան գույք, իսկ վարձակալը պարտավորվում է ժամանակին մուծել այդ գույքն օգտագործելու համար վճարը (վարձավճարը): Ընդ որում, վարձավճարը մուծելու կարգը, պայմանները և ժամկետները պետք է որոշվեն վարձակալության պայմանագրով, իսկ եթե դրանք պայմանագրով որոշված չեն, ապա կիրառվում են նույնանման գույքի վարձակալության ժամանակ համեմատելի հանգամանքներում սովորաբար գործող կարգը, պայմանները և ժամկետները:

Մինևույն ժամանակ օբեկտները սահմանել է, որ որպես կանոն վարձակալության պայմանագրում պետք է նշվի դրա ժամկետը, այսինքն՝ թե ինչ ժամկետով է կնքվում պայմանագիրը: Դրա հետ մեկտեղ օբեկտները համապատասխան իրավակարգավորում է նախատեսել այն դեպքերի համար, երբ այդ պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, որի դեպքում պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով, սակայն անորոշ ժամկետով:

ՀՀ վճարելի դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով ժամկետով վարձակալության պայմանագրի կնքելու հարցին, գտել է, որ վարձակալության պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո այն նույն պայմաններով անորոշ ժամկետով վերսկսված ճանաչելու համար անհրաժեշտ է երկու պարտադիր պայմանների միաժամանակյա առկայությունը, այն է՝ վարձակալած գույքից վարձակալի կողմից օգտվել շարունակելը վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո և այդ ընթացքում այդ գույքից օգտվելու վերաբերյալ վարձատուի առարկությունների բացակայությունը (*լրես Սերևանի քաղաքացիական ընդդեմ Գոհար Արամյանի թիվ ԵԿԿ/3032/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 11.10.2011 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոհիշյալ դիրքորոշումը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ վկայակոչված իրավանորմերի մեկնաբանությունից բխում է, որ երբ պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը չի շարունակում օգտվել վարձակալված գույքից, ապա վարձակալության պայմանագիրն օբեկտի ուժով՝ այդ պայմանագրում նշված ժամկետը լրանալու կապակցությամբ դադարում է, որի պարագայում վարձակալը պարտավոր է վարձատուին վերադարձնել վարձակալված գույքը: Ընդ որում, վարձակալի կողմից վարձակալված գույքը չվերադարձնելու կամ այն ժամկետի խախտմամբ վերադարձնելու դեպքերում վարձատուն իրավունք ունի նաև վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամկետի համար: Անշարժ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքի դադարումը ևս ենթակա է պետական գրանցման:

ՀՀ վճարելի դատարանը, նախկինում կայացված մեկ այլ որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օբեկտների 135-րդ և 449-րդ հոդվածներին, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օբեկտի 3-րդ և 5-րդ հոդվածներին, արձանագրել է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները պետական գրանցման ենթարկելու վերաբերյալ օբեկտի պահանջն ինքնանպատակ չէ: Այն հետապնդում է մի քանի խնդիրներ, որոնցից են մասնավորապես՝ անշարժ գույքի բնականոն շրջանառության ապահովումը, գործարքների մասնակիցների և երրորդ անձանց իրավունքների ճանաչումը, պաշտպանությունը և երաշխավորումը, անշարժ գույքի շուկայի կայունությունը և զարգացումն ապահովելը և այլն: Վկայակոչված խնդիրներից ՀՀ վճարելի դատարանը հարկ է համարել հատկապես ընդգծել գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության խնդրի

կարևորությունը՝ նշելով, որ պետությունը, սահմանելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքները պետական գրանցման ենթարկելու պահանջ, միաժամանակ ստանձնել է պարտավորություն երաշխավորելու և պաշտպանելու այդ իրավունքները: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն է հենց այն մեխանիզմը, որի միջոցով պետությունը ճանաչում է անձանց այս կամ այն իրավունքն անշարժ գույքի նկատմամբ, ստեղծում է միասնական տեղեկատվական բանկ այդ իրավունքների և դրանք կրող սուբյեկտների վերաբերյալ ու համապատասխանաբար հնարավորություն է ունենում երաշխավորելու և պաշտպանելու այդ իրավունքները: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքը գրանցելու պահից մինչ այդ իրավունքի գրանցումը դադարեցնելու պահը պետությունը ճանաչում, երաշխավորում և պաշտպանում է այդ իրավունքը: Օրենսդիրը, նախատեսելով անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պարտադիր պետական գրանցման ենթակա լինելու պայման, ըստ էության, կողմերի միջև անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը կնքված համարելու պահը դիտել է վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահը: Այսինքն՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում ստանալու պահից կողմերը ձեռք են բերում փոխադարձ իրավունքներ և կրում պայմանագրից բխող պարտականությունները պատշաճ կատարելու պարտավորություն, իսկ պետությունը երաշխավորում և պաշտպանում է վարձակալության պայմանագրից բխող և պետական գրանցում ստացած՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, քանի դեռ այդ իրավունքների պետական գրանցումը չի դադարել (*տե՛ս Աղասի Տեր-Եսայանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ԵԿԴ/3193/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 25.12.2020 թվականի որոշումը*):

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը, բացառությամբ պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունների:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի:

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ 2 ամսվա ընթացքում, կառավարչի միջնորդությամբ, դատարանի որոշմամբ կարող են լուծվել պարտապանի կողմից կնքված և կատարման ժամկետը չլրացած պայմանագրերը, որոնք երկու կողմից էլ ամբողջությամբ դեռ չեն կատարվել: Նշված պայմանագրերը չլուծվելու դեպքում գործում են մինչև պարտապանի գործունեության կասեցումը:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը կայացրել է պարտապանին լուծարելու մասին որոշում, ապա գույքը կառավարելու կամ տնօրինելու՝ պարտապանի բոլոր իրավունքները կասեցվում են դատարանի որոշմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի որոշմամբ պարտապանի՝ գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքները կարող են կասեցվել նաև մինչև պարտապանի լուծարումը, եթե պարտապանի գործունեությունն ակնհայտորեն անշահավետ է, կարող է բերել պարտապանին պատկանող գույքի արժեքի նվազեցմանը,

կամ ակնհայտ է, որ պարտապանը չի կարող ներկայացնել պարտատերերի համար ընդունելի ֆինանսական առողջացման ծրագիր:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը պարտապանին արգելել է սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից առանց դատարանի որոշման պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալն իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով կամ ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը: Նշված կանոնից բացառություն են կազմում պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունները: Նմանատիպ արգելքը նաև գործում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն այս դեպքում բացառություն են կազմում պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերը:

Միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է այն դեպքերը, երբ որպես կանոն կատարվում են պարտապանի՝ իր գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքները՝ նշելով, որ դրանք կատարվում են պարտապանին լուծարելու մասին որոշում կայացնելու պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտապանի գործունեությունն ակնհայտորեն անշահավետ է, կարող է բերել պարտապանին պատկանող գույքի արժեքի նվազեցմանը, կամ ակնհայտ է, որ պարտապանը չի կարող ներկայացնել պարտատերի համար ընդունելի ֆինանսական առողջացման ծրագիր, որի դեպքում պարտապանի նշված իրավունքները դատավորի որոշմամբ կարող են կասեցվել նաև մինչև պարտապանի լուծարումը:

Իրա հետ մեկտեղ օրենսդիրը կարգավորել է նաև պարտապանի կողմից կնքված և կատարման ժամկետը չըրացած պայմանագրերի լուծման ընթացակարգը՝ նախատեսելով, որ դրանք կարող են լուծվել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ 2 ամսվա ընթացքում կառավարչի կողմից միջնորդություն հարուցվելու միջոցով՝ դատարանի որոշմամբ: Ընդ որում, նշված ընթացակարգը գործում է բացառապես այն պայմանագրերի նկատմամբ, որոնք երկու կողմից էլ ամբողջությամբ դեռ չեն կատարվել, և նշված պայմանագրերը չլուծվելու դեպքում դրանք գործում են մինչև պարտապանի գործունեության կասեցումը:

Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետի 05.06.2009 թվականի թիվ 5977-Ա որոշման հիման վրա 25.11.2009 թվականին Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի և Ընկերության միջև կնքվել է հողամասի վարձակալության մասին պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1-ին կետով Վարձատուն համապատասխան վարձավճարի դիմաց ընդերքօգտագործման համար Վարձակալի տիրապետմանը և օգտագործմանն է հանձնել Երևանի Սպանդարյանի բազալտի հանքավայրում գտնվող 24,81հա մակերեսով հողամասը: Պայմանագրի 8-րդ կետով հողամասի տարեկան վարձավճարը սահմանվել է 7.294.140 ՀՀ դրամ, իսկ Պայմանագրի 15-րդ կետով Պայմանագրի ժամկետը սահմանվել է մինչև 31.12.2015 թվականը: Պայմանագրի 19-րդ կետում նշվել է, որ Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո վարձակալված հողամասի տիրապետումը և օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը Պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման համար հիմք չի հանդիսանում: Միևնույն ժամանակ սահմանվել է, որ Վարձակալի պարտականությունները պահպանվում են նրա կողմից վարձակալված հողամասի ժամկետանց տիրապետման և օգտագործման ամբողջ ընթացքում:

Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված վարձավճարը վճարելու իր պարտավորությունները պատշաճ չկատարելու հիմքով Երևան համայնքը դիմում է ներկայացրել դատարան՝ Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին: Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2015 թվականի վճռով Երևան համայնքի դիմումը բավարարվել է, և Ընկերությունը ճանաչվել է սնանկ: Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2016 թվականի որոշմամբ

հաստատվել է Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը, որում պարտատեր է ներառվել նաև Երևան համայնքը 7.336.110 ՀՀ դրամի չափով չապահովված պահանջով՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթում:

Երևան համայնքը 09.11.2020 թվականին Դատարան է ներկայացրել պահանջի փոփոխություն՝ խնդրելով ևս 9.768.616 ՀՀ դրամի չափով լրացնել իր պահանջը՝ նշելով, որ պահանջի գրանցումից հետո վարձակալության գծով առաջացել են դրամական պարտավորություններ: Նշված պահանջի փոփոխության դեմ գրավոր առարկություն է ներկայացրել Ընկերությունը՝ նշելով նաև, որ պահանջի փոփոխության դեմ առարկում է մասնակիորեն՝ 7.294.140 ՀՀ դրամի չափով, *քանի որ թեև Պայմանագրի գործողությունը 01.01.2016 թվականին դադարելուց հետո սկսած 01.01.2016 թվականից Ընկերությունը շարունակել է հանրապարտ օգտագործելն ընդերքօգտագործման նպատակով և այդ փաստով Պայմանագրի կողմերի միջև եղած իրավահարաբերությունը փաստացի շարունակվել է՝ ստանց նոր պայմանագրի կնքելու*, սակայն Դատարանի 04.11.2019 թվականի որոշմամբ Ընկերության ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվել է, և Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ, որի արդյունքում Ընկերության գործունեությունը կասեցվել է: *Նման պայմաններում ինքն առարկում է 05.11.2019 թվականից մինչև 05.11.2020 թվականն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված վարձավճարի գումարի մասով ևս պահանջը հաստատելու դեմ:*

Դատարանը, պատճառաբանելով, որ Ընկերության գործունեությունը կասեցվելու արդյունքում սկսած 05.11.2019 թվականից դատական ակտով կասեցվել է վերը նշված հանքն Ընկերության կողմից Պայմանագրի նպատակային նշանակությանը համաձայն օգտագործելու, օգուտներ ստանալու իրական հնարավորությունը, և նշված օրվանից Ընկերությունը գրկված է հանքավայրն օգտագործելու իրավունքից և հնարավորությունից, գտել է, որ վարձակալության գծով դրամական պարտավորությունները պետք է հաշվարկել մինչև Ընկերության գործունեության կասեցումը՝ 05.11.2019 թվականը, 04.03.2021 թվականին որոշում է կայացրել Երևան համայնքի դիմումը՝ ևս 9.768.616 ՀՀ դրամի չափով պահանջի փոփոխությունը գրանցելու մասին, մասնակիորեն՝ 2.471.476 ՀՀ դրամի չափով, բավարարելու մասին և այն կրկին գրանցվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթում. մնացած մասով դիմումը մերժվել է:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «*«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածով պարտապանի գործունեության կասեցման իրավական հաստատությունը, որը սույն գործով ի կարար է ածվել Դատարանի 04.11.2019 թվականի որոշմամբ, ուղղակիորեն անհնար է դարձրել նաև վարձակալության պայմանագրի առարկայի օգտագործման հնարավորությունը»*, «*2015 թվականին պարտապանի սնանկ ճանաչված լինելու և 01.01.2016 թվականից վարձակալության վարձակալության պայմանագիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, անորոշ ժամկետով կնքված համարվելու պարագայում, Երևան համայնքը դեռևս մինչև պարտապանի նկատմամբ լուծարման գործընթաց սկսելու և վերջինիս գործունեության կասեցումը՝ անկաշկանդ կարող էր միակողմանի ծանուցմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, պահանջել վաղաժամկետ լուծելու վարձակալության պայմանագիրը և գույքը փրամադրել այլ անձի, խուսափելով սնանկ ճանաչված պարտապանի նկատմամբ վարձավճարների գծով պարտավորությունների ծավալն արհեսարականորեն ավելացնելուց, քանի որ դրանց մասով բավարարում սրանալը, ինքնուրուիքյան ռիսկային էր, հաշվի առնելով պարտապանի սնանկ ճանաչված լինելը»*, գտել է, որ «*պարտապանի գործունեության կասեցումից հետո ընկած ժամանակահատվածի համար չի կարող հաշվարկվել որևէ վարձավճար»*:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների և եզրահանգումների իրավաչափությանը՝

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են և չեն կարող հիմք հանդիսանալ Երևան համայնքի վերաքննիչ բողոքը մերժելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերից բխում է, որ Պայմանագրի ժամկետի ավարտից հետո Ընկերությունը Երևան համայնքին Պայմանագրի օբյեկտ հանդիսացող գույքը չի վերադարձրել, այդ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքի դադարում պետական գրանցման չի ենթարկվել: Դրա փոխարեն Ընկերությունը շարունակել է օգտվել գույքից, որին Երևան համայնքը չի առարկել: Ընդ որում, նշված փաստն անվիճելի է, քանի որ Պայմանագրի կողմերն այն չեն վիճարկում: Ավելին՝ Ընկերությունն այդ փաստի մասին ուղղակիորեն է նշում: Այսինքն՝ Պայմանագիրը վերը նշված դիրքորոշումների և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ճանաչվում է վերսկսված նույն պայմաններով, սակայն անորոշ ժամկետով, որի դեպքում նաև պահպանվել է այն պայմանը, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է գույքի դիմաց վճարել համապատասխան վարձավճար: Ինչ վերաբերում է Պայմանագրի 19-րդ կետում նշվածին, որով Պայմանագրի կողմերը պայմանավորվել են Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո վարձակալված հողամասի տիրապետումը և օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը չհամարել Պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման հիմք, սպա այդ առումով Պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իմպերատիվ իրավակարգավորմանը, այսինքն՝ պահպանված չէ նույն օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին այն մասին, որ Ընկերության գործունեությունը կասեցված լինելու հանգամանքն անհնար է դարձրել վարձակալության պայմանագրի առարկայի օգտագործման հնարավորությունը 05.11.2019 թվականից հետո, իսկ Երևան համայնքը դեռևս մինչև Ընկերության նկատմամբ լուծարման գործընթաց սկսելը և վերջինիս գործունեությունը կասեցնելը կարող էր միակողմանի ծանուցմամբ պահանջել վաղաժամկետ լուծելու վարձակալության պայմանագիրը, սպա դրանք չեն կարող բավարար հիմք հանդիսանալ հետևություն անելու համար այն մասին, որ պարտապանի գործունեության կասեցումից հետո ընկած ժամանակահատվածի համար չի կարող հաշվարկվել որևէ վարձավճար, քանի որ, ճիշտ է, օրենսդիրը պարտապանին արգելել է ինչպես սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից, այնպես էլ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից առանց դատարանի որոշման պարտաւերերին դրամական կամ այլ բավարարում տալն իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով կամ ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը, և լուծարելու մասին որոշում կայացնելու պահից նախատեսել է իր գույքը կառավարելու կամ տնօրինելու պարտապանի իրավունքների կասեցում, այնուամենայնիվ կառավարիչը գրկված չէր ինչպես մինչև պարտապանի գործունեությունը կասեցնելու մասին որոշում կայացնելը, այնպես էլ դրանից հետո հնարավորությունից՝ ձեռնամուխ լինելու սկսել այդ Պայմանագրի լուծման գործընթաց և այն հասցնել ավարտին: Ավելին՝ վերը նշված դիրքորոշումների համատեքստում Պայմանագիրը մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի հանդիսանում այնպիսին, որը չլուծվելու դեպքում կարող էր գործել մինչև պարտապանի գործունեության կասեցումը: Այսինքն՝ պարտապանի գործունեության կասեցումից հետո ևս այն շարունակել է գործել. նշված Պայմանագրով նախատեսված վարձակալության իրավունքի դադարում ևս չի ենթարկվել պետական գրանցման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի և 364-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և գործը Երևան համայնքի կողմից 09.11.2020 թվականին Դատարան ներկայացված պահանջի փոփոխության մերժված մասի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը և

ապահովվածությունն ստուգելու նպատակով ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2021 թվականի որոշումը և գործը՝ Երևան համայնքի կողմից 09.11.2020 թվականին դատարան ներկայացված պահանջի փոփոխության մերժված մասի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը և ապահովվածությունն ստուգելու նպատակով ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Թիվ ԿԴ/0040/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի
29.04.2022 թվականի որոշման վերաբերյալ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով **ԿԴ/0040/04/15 սնանկության** գործով Երևան համայնքի (այսուհետ՝ Համայնք) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ Համայնքի դիմումի ընդդեմ «Ընդերքաբեր» ՍՊԸ-ի՝ (այսուհետ՝ Ընկերություն)՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնությամբ 29.04.2022 թվականի որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) որոշվել է վճռաբեկ բողոքը բավարարել. վերանայել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2021 թվականի որոշումը և գործը՝ Համայնքի կողմից 09.11.2020 թվականին դատարան ներկայացված պահանջի փոփոխության մերժված մասի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը և ապահովվածությունը պարզելու նպատակով ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի դատավորներ **Տ. Պետրոսյանս, Էդ. Սեդրակյանս** համաձայն չլինելով Վճռաբեկ դատարանի Որոշման պատճառարանական և եզրափակիչ մասերին, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ կետերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը Որոշման պատճառարանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Երևան համայնքը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ: Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2015 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Տ. Փոլադյան) (այսուհետ՝ Դատարան) 04.03.2021 թվականի որոշմամբ Երևան համայնքի դիմումը՝ 9.768.616 ՀՀ դրամի չափով լրացված պահանջը գրանցելու մասին, բավարարվել է մասնակիորեն՝ Երևան համայնքի պահանջը՝ 2.471.476 ՀՀ դրամի չափով գրանցվել է Ընկերության սնանկության գործով պարտատերերի ցուցակում՝ որպես «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթի պահանջ. մնացած մասով պահանջը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.07.2021 թվականի որոշմամբ Երևան համայնքի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.03.2021 թվականի ««Ընդերքաբեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով Երևան համայնքի պահանջի լրացումը մասնակի գրանցելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Նույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ, 466-րդ, 469-րդ և 624-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալուց հետո Երևան համայնքի կողմից առարկություններ չեն ներկայացվել Ընկերության կողմից գույքի օգտագործումը շարունակելու վերաբերյալ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով Երևան համայնքը երեք ամիս առաջ Ընկերությանը չի տեղեկացրել վարձակալության պայմանագրից հրաժարվելու մասին, որի պայմաններում պայմանագիրը ճանաչվել է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով: Ընկերությունը, 01.01.2016 թվականից հանքավայրն օգտագործելով ընդերքօգտագործման նպատակով, շարունակել է հանդիսանալ վարձակալ, հետևաբար և հողամասի

վարձավճար վճարող: Նշված պայմանագիրը կարող է համարվել օրենքի ուժով դադարած դրա լուծման մասին կողմերի միջև համաձայնություն կնքվելու դեպքում, ինչպես նաև այդ իրավունքի դադարումը ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում գրանցելուց հետո:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերության պարտավորությունը Երևան համայնքի հանդեպ հիմնված է գրավոր գործարքի հիման վրա, որից ծագող իրավունքներն օրենքով սահմանված կարգով ենթարկվել են պետական գրանցման: Ընկերությունը խախտել է պայմանագրային պարտավորությունները՝ մասնակիորեն է վճարել հողամասի վարձավճարը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով սահմանված կարգով Ընկերության գործնության կասեցումը վերը նշված իրավանքների ուժով, ըստ էության, իրենից չի ներկայացնում վարձակալության իրավունքի դադարում և չի կարող հիմք հանդիսանալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ մասնակի կատարման համար, որի պայմաններում Երևան համայնքի կողմից 06.11.2020 թվականին ներկայացված 9.768.616 ՀՀ դրամ գումարի չափով ներկայացված պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 09.07.2021 թվականի որոշումը և գրանցել Երևան համայնքի պահանջը 9.768.616 ՀՀ դրամի չափով կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճուրբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուրբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի քաղաքապետի 05.06.2009 թվականի թիվ 5977-Ա որոշման 1-ին կետով Երևանի Սպանդարյանի բազալտի հանքավայրում գտնվող 24,81հա մակերեսով հողամասն առանց մրցույթի վարձակալության իրավունքով մինչև 31.12.2015 թվականը տրամադրվել է Ընկերությանը՝ տարեկան վարձավճար սահմանելով տվյալ հողամասի կադաստրային արժեքի մեկ տոկոսի չափով (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 16, 17**).

2) վերը նշված որոշման հիման վրա 25.11.2009 թվականին Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ նաև Վարձատու), և Ընկերության (այսուհետ՝ նաև Վարձակալ) միջև կնքվել է հողամասի վարձակալության մասին պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1-ին կետով Վարձատուն համապատասխան վարձավճարի դիմաց ընդերքօգտագործման համար Վարձակալի տիրապետմանը և օգտագործմանն է հանձնել Երևանի Սպանդարյանի բազալտի հանքավայրում գտնվող 24,81հա մակերեսով հողամասը:

Պայմանագրի 8-րդ կետով հողամասի տարեկան վարձավճար է սահմանվել այդ հողամասի կադաստրային արժեքի մեկ տոկոսը 7.294.140 ՀՀ դրամ:

Պայմանագրի 15-րդ կետով Պայմանագրի ժամկետը սահմանվել է մինչև 31.12.2015 թվականը:

Պայմանագրի 19-րդ կետում նշվել է, որ Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո վարձակալված հողամասի տիրապետումը և օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը Պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման համար հիմք չի հանդիսանում: Վարձակալի պարտականությունները պահպանվում են նրա կողմից վարձակալված հողամասի ժամկետանց տիրապետման և օգտագործման ամբողջ ընթացքում (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 12-15**).

3) Ընկերությունը պատշաճ չի կատարել Պայմանագրով ստանձնած՝ վարձավճարը վճարելու իր պարտավորությունները, որի հիման վրա Երևան համայնքը դիմում է ներկայացրել դատարան՝ Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 4-7**).

4) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2015 թվականի վճռով Երևան համայնքի դիմումը բավարարվել է, և Ընկերությունը ճանաչվել է սնանկ (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 112-118**).

5) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2016 թվականի որոշմամբ հաստատվել է Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը, որում պարտատեր է ներառվել նաև Երևան համայնքը 7.336.110 ՀՀ դրամի չափով չապահովված պահանջով՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթում (**հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 70-73**).

6) Երևան համայնքը 09.11.2020 թվականին Դատարան է ներկայացրել պահանջի փոփոխություն՝ խնդրելով ևս 9.768.616 ՀՀ դրամի չափով լրացնել իր պահանջը՝ նշելով, որ պահանջի գրանցումից հետո վարձակալության գծով առաջացել են դրամական պարտավորություններ (**հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 2, 3**).

7) նշված պահանջի փոփոխության դեմ գրավոր առարկություն է ներկայացրել Ընկերությունը՝ նշելով նաև, որ պահանջի փոփոխության դեմ առարկում է մասնակիորեն՝ 7.294.140 ՀՀ դրամի չափով, քանի որ թեև Պայմանագրի գործողությունը 01.01.2016 թվականին դադարելուց հետո սկսած 01.01.2016 թվականից Ընկերությունը շարունակել է հանքավայրն օգտագործել ընդերքօգտագործման նպատակով և այդ փաստով Պայմանագրի կողմերի միջև եղած իրավահարաբերությունը փաստացի շարունակվել է՝ առանց նոր պայմանագիր կնքելու, սակայն Դատարանի 04.11.2019 թվականի որոշմամբ Ընկերության ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվել է, և Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ, որի արդյունքում Ընկերության գործունեությունը կասեցվել է: Նման պայմաններում ինքն առարկում է 05.11.2019 թվականից մինչև 05.11.2020 թվականն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված վարձավճարի գումարի մասով ևս պահանջը հաստատելու դեմ (**հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 8**).

8) Դատարանի 04.03.2021 թվականի որոշմամբ Երևան համայնքի դիմումը՝ ևս 9.768.616 ՀՀ դրամի չափով պահանջի փոփոխությունը գրանցելու մասին, բավարարվել է մասնակիորեն՝ 2.471.476 ՀՀ դրամի չափով, և այն կրկին գրանցվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթում. մնացած մասով դիմումը մերժվել է (**հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 44-50**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 624-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ, 466-րդ, 469-րդ և 624-րդ հոդվածների այնպիսի խախտումներ, որոնք խաթարել են արդարադատության բուն էությունը.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ սնանկության դատարանի որոշմամբ վարձակալի գործունեությունը կասեցված լինելու պայմաններում անչարժ գույքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այդ պայմանագիրը վերականգնել համարելու առանձնահատկություններին և դրանցից բխող իրավական հետևանքներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալության պայմանագրով վարձատրոն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը կնքվում է պայմանագրով որոշված ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 616-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճարը (վարձավճարը): Վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետները որոշվում են վարձակալության պայմանագրով: Եթե պայմանագրով դրանք որոշված չեն, ապա կիրառվում են նույնանման գույքի վարձակալության ժամանակ համեմատելի հանգամանքներում սովորաբար գործող կարգը, պայմանները և ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատրուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով (հոդված 612):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 625-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը դադարելու դեպքում վարձակալը պարտավոր է վարձատրուին վերադարձնել գույքն իր կողմից ստացված վիճակում՝ բնականոն մաշվածության հաշվառմամբ կամ պայմանագրով նախատեսված վիճակում:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե վարձակալը չի վերադարձրել վարձակալած գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, վարձատրոն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամկետի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում վարձատրուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման: Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ վարձակալության պայմանագրով վարձատրոն պարտավորություն է ստանձնում համապատասխան վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել համապատասխան գույք, իսկ վարձակալը պարտավորվում է ժամանակին մուծել այդ գույքն օգտագործելու համար վճարը (վարձավճարը): Ընդ որում, վարձավճարը մուծելու կարգը, պայմանները և ժամկետները պետք է որոշվեն վարձակալության պայմանագրով, իսկ եթե դրանք պայմանագրով որոշված չեն, ապա կիրառվում են նույնանման գույքի վարձակալության ժամանակ համեմատելի հանգամանքներում սովորաբար գործող կարգը, պայմանները և ժամկետները:

Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է, որ որպես կանոն վարձակալության պայմանագրում պետք է նշվի դրա ժամկետը, այսինքն՝ թե ինչ ժամկետով է կնքվում պայմանագիրը: Դրա հետ մեկտեղ օրենսդիրը համապատասխան իրավակարգավորում է նախատեսել այն դեպքերի համար, երբ այդ պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատրուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, որի դեպքում պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով, սակայն անորոշ ժամկետով:

ՀՀ վճարելի դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդադադառնալով ժամկետով վարձակալության պայմանագիր կնքելու հարցին, գտել է, որ վարձակալության պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո այն նույն պայմաններով անորոշ ժամկետով վերսկսված ճանաչելու համար անհրաժեշտ է երկու պարտադիր պայմանների միաժամանակյա առկայությունը, այն է՝ վարձակալած գույքից վարձակալի կողմից օգտվել շարունակելը վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո և այդ ընթացքում այդ

գույքից օգտվելու վերաբերյալ վարձատուի առարկությունների բացակայությունը (տե՛ս Երևանի քաղաքապետին ընդդեմ Գոհար Արամյանի թիվ ԵԿԿ/3032/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.10.2011 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերոհիշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վկայակոչված իրավանորմերի մեկնաբանությունից բխում է, որ երբ պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը չի շարունակում օգտվել վարձակալված գույքից, ապա վարձակալության պայմանագիրն օրենքի ուժով՝ այդ պայմանագրում նշված ժամկետը լրանալու կապակցությամբ դադարում է, որի պարագայում վարձակալը պարտավոր է վարձատուին վերադարձնել վարձակալված գույքը: Ընդ որում, վարձակալի կողմից վարձակալված գույքը չվերադարձնելու կամ այն ժամկետի խախտմամբ վերադարձնելու դեպքերում վարձատուն իրավունք ունի նաև վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամկետի համար: Անշարժ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքի դադարումը ևս ենթակա է պետական գրանցման:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված մեկ այլ որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 449-րդ հոդվածներին, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 5-րդ հոդվածներին, արձանագրել է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները պետական գրանցման ենթարկվելու վերաբերյալ օրենսդրի պահանջն ինքնանպատակ չէ: Այն հետապնդում է մի քանի խնդիրներ, որոնցից են մասնավորապես՝ անշարժ գույքի բնականոն շրջանառության ապահովումը, գործարքների մասնակիցների և երրորդ անձանց իրավունքների ճանաչումը, պաշտպանությունը և երաշխավորումը, անշարժ գույքի շուկայի կայունությունը և զարգացումն ապահովելը և այլն: Վկայակոչված խնդիրներից ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել հատկապես ընդգծել գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության խնդրի կարևորությունը՝ նշելով, որ պետությունը, սահմանելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքները պետական գրանցման ենթարկելու պահանջ, միաժամանակ ստանձնել է պարտավորություն երաշխավորելու և պաշտպանելու այդ իրավունքները: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն է հենց այն մեխանիզմը, որի միջոցով պետությունը ճանաչում է անձանց այս կամ այն իրավունքն անշարժ գույքի նկատմամբ, ստեղծում է միասնական տեղեկատվական բանկ այդ իրավունքների և դրանք կրող սուբյեկտների վերաբերյալ ու համապատասխանաբար հնարավորություն է ունենում երաշխավորել և պաշտպանելու այդ իրավունքները: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքը գրանցելու պահից մինչ այդ իրավունքի գրանցումը դադարեցնելու պահը պետությունը ճանաչում, երաշխավորում և պաշտպանում է այդ իրավունքը: Օրենսդիրը, նախատեսելով անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պարտադիր պետական գրանցման ենթակա լինելու պայման, ըստ էության, կողմերի միջև անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը կնքված համարելու պահը դիտել է վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահը: Այսինքն՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում ստանալու պահից կողմերը ձեռք են բերում փոխադարձ իրավունքներ և կրում պայմանագրից բխող պարտականությունները պատշաճ կատարելու պարտավորություն, իսկ պետությունը երաշխավորում և պաշտպանում է վարձակալության պայմանագրից բխող և պետական գրանցում ստացած՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, քանի դեռ այդ իրավունքների պետական գրանցումը չի դադարել (տե՛ս Աղասի Տեր-Եսայանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ԵԿԿ/3193/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2020 թվականի որոշումը):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը, բացառությամբ պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունների:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի:

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ 2 ամսվա ընթացքում, կառավարչի միջնորդությամբ, դատարանի որոշմամբ կարող են լուծվել պարտապանի կողմից կնքված և կատարման ժամկետը չլրացած պայմանագրերը, որոնք երկու կողմից էլ ամբողջությամբ դեռ չեն կատարվել: Նշված պայմանագրերը չլուծվելու դեպքում գործում են մինչև պարտապանի գործունեության կասեցումը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը կայացրել է պարտապանին լուծարելու մասին որոշում, ապա գույքը կառավարելու կամ տնօրինելու՝ պարտապանի բոլոր իրավունքները կասեցվում են դատարանի որոշմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի որոշմամբ պարտապանի՝ գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքները կարող են կասեցվել նաև մինչև պարտապանի լուծարումը, եթե պարտապանի գործունեությունն ակնհայտորեն անշահավետ է, կարող է բերել պարտապանին պատկանող գույքի արժեքի նվազեցմանը, կամ ակնհայտ է, որ պարտապանը չի կարող ներկայացնել պարտատերերի համար ընդունելի ֆինանսական առողջացման ծրագիր:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը պարտապանին արգելել է սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից առանց դատարանի որոշման պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալն իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով կամ ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը: Նշված կանոնից բացառություն են կազմում պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունները: Նմանատիպ արգելքը նաև գործում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն այս դեպքում բացառություն են կազմում պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերը:

Մինչև նույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է այն դեպքերը, երբ որպես կանոն կասեցվում են պարտապանի իր գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքները՝ նշելով, որ դրանք կասեցվում են պարտապանին լուծարելու մասին որոշում կայացնելու պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտապանի գործունեությունն ակնհայտորեն անշահավետ է, կարող է բերել պարտապանին պատկանող գույքի արժեքի նվազեցմանը, կամ ակնհայտ է, որ պարտապանը չի կարող ներկայացնել պարտատերերի համար ընդունելի ֆինանսական առողջացման ծրագիր, որի դեպքում պարտապանի նշված իրավունքները դատավորի որոշմամբ կարող են կասեցվել նաև մինչև պարտապանի լուծարումը:

Դրա հետ մեկտեղ օրենսդիրը կարգավորել է նաև պարտապանի կողմից կնքված և կատարման ժամկետը չլրացած պայմանագրերի լուծման ընթացակարգը՝ նախատեսելով, որ դրանք կարող են լուծվել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ 2 ամսվա ընթացքում կառավարչի կողմից միջնորդություն հարուցվելու միջոցով՝ դատարանի որոշմամբ: Ընդ որում, նշված ընթացակարգը գործում է բացառապես այն պայմանագրերի նկատմամբ, որոնք երկու կողմից էլ ամբողջությամբ դեռ չեն կատարվել, և նշված պայմանագրերը չլուծվելու դեպքում դրանք գործում են մինչև պարտապանի գործունեության կասեցումը:

Վճռաբեկ դատարանն իր իրավական դիրքորոշումները կիրառելով սույն գործի փաստերի նկարմամբ, եզրակացնել է հետևյալը.

Սույն գործի փաստերից բխում է, որ Պայմանագրի ժամկետի ավարտից հետո Ընկերությունը Երևան համայնքին Պայմանագրի օբյեկտ հանդիսացող գույքը չի վերադարձրել,

այդ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքի դադարում պետական գրանցման չի ենթարկվել: Դրա փոխարեն Ընկերությունը շարունակել է օգտվել գույքից, որին Երևան համայնքը չի առարկել: Ընդ որում, նշված փաստն անվիճելի է, քանի որ Պայմանագրի կողմերն այն չեն վիճարկում: Ավելին՝ Ընկերությունն այդ փաստի մասին ուղղակիորեն է նշում: Այսինքն՝ Պայմանագիրը վերը նշված դիրքորոշումների և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ճանաչվում է վերսկսված նույն պայմաններով, սակայն անորոշ ժամկետով, որի դեպքում նաև պահպանվել է այն պայմանը, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է գույքի դիմաց վճարել համապատասխան վարձավճար: Ինչ վերաբերում է Պայմանագրի 19-րդ կետում նշվածին, որով Պայմանագրի կողմերը պայմանավորվել են Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո վարձակալված հողամասի տիրապետումը և օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը չհամարել Պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման հիմք, ապա այդ առումով Պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իմպերատիվ իրավակարգավորմանը, այսինքն՝ պահպանված չէ նույն օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին այն մասին, որ Ընկերության գործունեությունը կասեցված լինելու հանգամանքն անհնար է դարձրել վարձակալության պայմանագրի առարկայի օգտագործման հնարավորությունը 05.11.2019 թվականից հետո, իսկ Երևան համայնքը դեռևս մինչև Ընկերության նկատմամբ լուծարման գործընթաց սկսելը և վերջինիս գործունեությունը կասեցնելը կարող էր միակողմանի ծանուցմամբ պահանջել վաղաժամկետ լուծելու վարձակալության պայմանագիրը, ապա դրանք չեն կարող բավարար հիմք հանդիսանալ հետևություն անելու համար այն մասին, որ պարտապանի գործունեության կասեցումից հետո ընկած ժամանակահատվածի համար չի կարող հաշվարկվել որևէ վարձավճար, քանի որ, ճիշտ է, օրենսդիրը պարտապանին արգելել է ինչպես սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից, այնպես էլ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից առանց դատարանի որոշման պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալիս իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով կամ ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը, և լուծարելու մասին որոշում կայացնելու պահից նախատեսել է իր գույքը կառավարելու կամ տնօրինելու պարտապանի իրավունքների կասեցում, այնուամենայնիվ կառավարիչը գրկված չէր ինչպես մինչև պարտապանի գործունեությունը կասեցնելու մասին որոշում կայացնելը, այնպես էլ դրանից հետո հնարավորությունից՝ ձեռնամուխ լինելու սկսել այդ Պայմանագրի լուծման գործընթաց և այն հասցնել ավարտին: Ավելին՝ վերը նշված դիրքորոշումների համատեքստում Պայմանագիրը մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի հանդիսանում այնպիսին, որը չլուծվելու դեպքում կարող էր գործել մինչև պարտապանի գործունեության կասեցումը: Այսինքն՝ պարտապանի գործունեության կասեցումից հետո ևս այն շարունակել է գործել. նշված Պայմանագրով նախատեսված վարձակալության իրավունքի դադարում ևս չի ենթարկվել պետական գրանցման:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտել է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի և 364-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և գործը Երևան համայնքի կողմից 09.11.2020 թվականին Դատարան ներկայացված պահանջի փոփոխության մերժված մասի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը և ապահովվածությունն ստուգելու նպատակով ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Հայրուկ կարծիքի պարճառաբանությունները և եզրահանգումը

Վճարել դատարանի դատավորներ **Տ. Պետրոսյանս և Էդ. Սեդրակյանս** գտնում ենք, որ վճարել բողոքի հիմքերը մի մասով հիմնավոր չեն, իսկ մյուս մասով էլ առնչություն

չունեն սույն գործի լուծման հետ, քանի որ սույն գործով առկա չէ ինչպես արդարադատության բուն էությունը խաթարած դատական սխալ, այնպես էլ իրավունքի զարգացման՝ բողոք բերած անձի կողմից բարձրացված խնդիրը:

Ասվածը հիմնավորվում է հետևյալով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 624-րդ հոդվածների վերաբերյալ Որոշման մեջ կատարվել են միայն ՀՀ վճռաբեկ դատարանի նախկին որոշումներից մեջբերումներ, ուստի այդ հոդվածներով սահմանված նորմերի որևէ զարգացում, Որոշմամբ չի տրվել, մինչդեռ բողոքը վարույթ ընդունելը Որոշմամբ պայմանավորվել է այդ հիմքով: Հարկ է նշել, որ սույն գործով վարձակալության պայմանագիրը վերակնքված լինելու վերաբերյալ հարցը ոչ մի առյուծանի դատարանում չի վիճարկվել, իսկ պարտապանի գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքների կասեցումն էլ, որը կարգավորվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով, սույն գործի լուծման հետ կապ ունի միայն այնքանով, որքանով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի կարգավորումներին համապատասխան սույն գործով անհրաժեշտ է որոշել. վարձակալության պայմանագրով սահմանված կողմերի պարտավորությունները կարող են արդյոք դադարել՝ պայմանագիրը լուծված չլինելու պայմաններում: Մեր կարծիքով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխաներ այս հարցին, որից էլ ակնհայտ կդառնար՝ սույն գործով դատական սխալ առկա է, թե ոչ:

Այսպիսով սույն գործի լուծման հետ ուղղակի կապ չունի նաև բողոքաբերի նշած «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի խախտումը, քանի որ նշված հոդվածի 1-ին և 2-րդ մասերը կարգավորում են այն հարցը, թե երբ և ինչ պայմաններում կարող են կասեցվել պարտապանի՝ գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքները, մինչդեռ սույն գործով անվիճելի փաստ է, որ պարտապանի այդ իրավունքները դատարանի 04.11.2019 թվականի որոշմամբ կասեցվել են (այդ հանգամանքն ընդունվել է նաև Որոշմամբ): Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն իրավացիորեն քննարկման առարկա է դարձրել վերաքննիչ բողոք ներկայացրած անձի այն հարցադրումը, թե «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի ուժով պարտապանի գործունեության կասեցումը արդյո՞ք կարող է հանգեցնել վարձակալության իրավունքի դադարման և հինք հանդիսանալ պայմանագրային պարտավորությունների չկատարման համար: Այդ հարցի քննարկման արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Ընկերության նկատմամբ հողամասի վարձակալության գծով դրամական պարտավորությունները պետք է հաշվարկել մինչև Ընկերության գործունեության կասեցումը:

Կարծում են, որ Վերաքննիչ դատարանի սույն եզրահանգումը հիմնավոր է հետևյալ պատճառներով.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով, ինչից բխում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 27-րդ՝ «Պարտավորությունների դադարումը» գլխով սահմանված պարտավորությունների դադարման հիմքերը սպառիչ չեն. պարտավորությունը **կարող է դադարել նաև օրենքով նախատեսված այլ հիմքերով:**

Մեր կարծիքով, օրենքով նախատեսված այդպիսի հիմք է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ 45-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքը: Համաձայն նշված նորմի՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ 2 ամսվա ընթացքում, կառավարչի միջնորդությամբ, դատարանի որոշմամբ կարող են լուծվել պարտապանի կողմից կնքված և ժամկետը չլրացած պայմանագրերը, որոնք երկու կողմից էլ ամբողջությամբ դեռ չեն կատարվել: **Նշված պայմանագրերը չլուծվելու դեպքում գործում են մինչև պարտապանի գործունեության կասեցումը:** Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ չլուծված պայմանագիրը կարող է գործել մինչև պարտապանի գործունեության կասեցումը: Դա նշանակում է, որ պարտապանի գործունեության կասեցումից հետո նման պայմանագրերը չի գործում, իսկ չգործող պայմանագրի հիման վրա էլ պայմանագրի կողմը չի կարող մյուս՝ գործունեությունը կասեցված կողմից պահանջել պարտավորության կատարում:

Ակնհայտ է, որ գործունեությունը կասեցված պարտապանը ոչ միայն չի կարող օգտվել վարձակալած հողն ըստ նպատակային նշանակության օգտագործելու իր իրավունքից, այլև ցանկության դեպքում անգամ չի կարող կատարել վարձակալության պայմանագրով հողի օգտագործման համար վճարելու իր պարտականությունը, հետևաբար «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված այդ դեպքը պետք է համարել պարտավորության դադարման՝ օրենքով նախատեսված հատուկ դեպք: Սույն պարագայում այդ դեպքը չի առնչվում այն բանի հետ, թե ինչ է սահմանված վարձակալության պայմանագրով, այլ կապված է սնանկության վարույթի առանձնահատկությունների, մասնավորապես՝ այն հանգամանքի հետ, որ գործունեության կասեցման հետևանքով պարտապանը չի կարող կատարել իր պայմանագրային պարտավորությունը և այդ պատճառով էլ օրենսդրի կարգավորման համաձայն՝ պայմանագիրն այլևս չի գործում, իսկ չգործող պայմանագրով էլ կողմը չի մյուս կողմից պահանջել, որ գործունեությունը կասեցված անձը ծավալի ինչ-որ գործունեություն, այսինքն՝ կատարի իր պայմանագրային պարտավորությունները: Այդ պատճառով էլ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասը սահմանել է առանձնահատուկ կարգավորում, այն է՝ սնանկ ճանաչված անձի գործունեությունը կասեցնելուց հետո ամբողջությամբ չկատարված պայմանագրերը չեն գործում՝ անկախ դրանք լուծված կամ չլուծված լինելու հանգամանքից: Հակառակ տրամաբանության պարագայում նման պայմանագրերը, եթե առհասարակ չլուծվեն, պետք է գործեն ընդմիջտ, ինչը տրամաբանական չէ:

Նման պայմաններում ստորադաս դատարանները կայացրել են հարցն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ և այն պետք է թողնվեր անփոփոխ՝ վերոհիշյալ լրացուցիչ պատճառաբանություններով, ինչը վկայում է այն մասին, որ սույն գործով քննարկման առարկա դատական ակտով դատական սխալ թույլ չի տրվել, առավել ևս՝ արդարադատության բուն էությունը խաթարած սխալ առկա չէ:

Այսպիսով Որոշմամբ իրավունքի որևէ զարգացում չի տրվել, իսկ դատական սխալ էլ առկա չէ, ուստի Վերաքննիչ դատարանի 09.07.2021 թվականի որոշումը ենթակա չէ բեկանման՝ Որոշման մեջ նշված պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐՆՈՐ՝ Տ. Դեղարայան
Էդ. Սեդրակյան

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԿԴ/0040/04/15 սնանկության գործով 29.04.2022 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

29.04.2022 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 29.04.2022 թվականին գրավոր ընթացակարգով քննելով ըստ Երևան համայնքի դիմումի՝ «Ընդերքաբեր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2021 թվականի որոշման դեմ Երևան համայնքի վճռաբեկ բողոքը՝ ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2021 թվականի որոշումը և գործը՝ Երևան համայնքի կողմից 09.11.2020 թվականին դատարան ներկայացված պահանջի փոփոխության մերժված մասի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը և ապահովվածությունն ստուգելու նպատակով ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի դատավոր Ս. Միքայելյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Երևան համայնքը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ: Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2015 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Տ. Փոլադյան) (այսուհետ՝ Դատարան) 04.03.2021 թվականի որոշմամբ Երևան համայնքի դիմումը՝ 9.768.616 ՀՀ դրամի չափով լրացված պահանջը գրանցելու մասին, բավարարվել է մասնակիորեն՝ Երևան համայնքի պահանջը՝ 2.471.476 ՀՀ դրամի չափով գրանցվել է Ընկերության սնանկության գործով պարտատերերի ցուցակում՝ որպես «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթի պահանջ, մնացած մասով պահանջը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.07.2021 թվականի որոշմամբ Երևան համայնքի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.03.2021 թվականի ««Ընդերքաբեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով Երևան համայնքի պահանջի լրացումը մասնակի գրանցելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևան համայնքը (ներկայացուցիչ Տարոն Մարգարյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ, 466-րդ, 469-րդ և 624-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալուց հետո Երևան համայնքի կողմից առարկություններ չեն ներկայացվել

Ընկերության կողմից գույքի օգտագործումը շարունակելու վերաբերյալ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով Երևան համայնքը երեք ամիս առաջ Ընկերությանը չի տեղեկացրել վարձակալության պայմանագրից հրաժարվելու մասին, որի պայմաններում պայմանագիրը ճանաչվել է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով: Ընկերությունը, 01.01.2016 թվականից հանքավայրն օգտագործելով ընդերքօգտագործման նպատակով, շարունակել է հանդիսանալ վարձակալ, հետևաբար և հողամասի վարձավճար վճարող: Նշված պայմանագիրը կարող է համարվել օրենքի ուժով դադարած դրա լուծման մասին կողմերի միջև համաձայնություն կնքվելու դեպքում, ինչպես նաև այդ իրավունքի դադարումը ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում գրանցելուց հետո:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերության պարտավորությունը Երևան համայնքի հանդեպ հիմնված է գրավոր գործարքի հիման վրա, որից ծագող իրավունքներն օրենքով սահմանված կարգով ենթարկվել են պետական գրանցման: Ընկերությունը խախտել է պայմանագրային պարտավորությունները՝ մասնակիորեն է վճարել հողամասի վարձավճարը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ «Մասնկության մասին» օրենքի 72-րդ հոդվածով սահմանված կարգով Ընկերության գործունեության կասեցումը վերը նշված իրավանորմերի ուժով, ըստ էության, իրենից չի ներկայացնում վարձակալության իրավունքի դադարում և չի կարող հիմք հանդիսանալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ մասնակի կատարման համար, որի պայմաններում Երևան համայնքի կողմից 06.11.2020 թվականին ներկայացված 9.768.616 ՀՀ դրամ գումարի չափով ներկայացված պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 09.07.2021 թվականի որոշումը և գրանցել Երևան համայնքի պահանջը 9.768.616 ՀՀ դրամի չափով կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի քաղաքապետի 05.06.2009 թվականի թիվ 5977-Ա որոշման 1-ին կետով Երևանի Սպանդարյանի բազալտի հանքավայրում գտնվող 24,81հա մակերեսով հողամասն առանց մրցույթի վարձակալության իրավունքով մինչև 31.12.2015 թվականը տրամադրվել է Ընկերությանը՝ տարեկան վարձավճար սահմանելով տվյալ հողամասի կադաստրային արժեքի մեկ տոկոսի չափով (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 16, 17**).

2) վերը նշված որոշման հիման վրա 25.11.2009 թվականին Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ նաև Վարձատու), և Ընկերության (այսուհետ՝ նաև Վարձակալ) միջև կնքվել է հողամասի վարձակալության մասին պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1-ին կետով Վարձատուն համապատասխան վարձավճարի դիմաց ընդերքօգտագործման համար Վարձակալի տիրապետմանը և օգտագործմանն է հանձնել Երևանի Սպանդարյանի բազալտի հանքավայրում գտնվող 24,81հա մակերեսով հողամասը:

Պայմանագրի 8-րդ կետով հողամասի տարեկան վարձավճար է սահմանվել այդ հողամասի կադաստրային արժեքի մեկ տոկոսը՝ 7.294.140 ՀՀ դրամ:

Պայմանագրի 15-րդ կետով Պայմանագրի ժամկետը սահմանվել է մինչև 31.12.2015 թվականը:

Պայմանագրի 19-րդ կետում նշվել է, որ Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո վարձակալված հողամասի տիրապետումը և օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը Պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման համար հիմք չի հանդիսանում: Վարձակալի պարտականությունները

պահպանվում են նրա կողմից վարձակալված հողամասի ժամկետանց տիրապետման և օգտագործման ամբողջ ընթացքում (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 12-15**).

3) Ընկերությունը պատշաճ չի կատարել Պայմանագրով ստանձնած՝ վարձավճարը վճարելու իր պարտավորությունները, որի հիման վրա Երևան համայնքը դիմում է ներկայացրել դատարան՝ Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 4-7**).

4) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2015 թվականի վճռով Երևան համայնքի դիմումը բավարարվել է, և Ընկերությունը ճանաչվել է սնանկ (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 112-118**).

5) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2016 թվականի որոշմամբ հաստատվել է Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը, որում պարտատեր է ներառվել նաև Երևան համայնքը 7.336.110 ՀՀ դրամի չափով չապահովված պահանջով՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթում (**հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 70-73**).

6) Երևան համայնքը 09.11.2020 թվականին Դատարան է ներկայացրել պահանջի փոփոխություն՝ խնդրելով ևս 9.768.616 ՀՀ դրամի չափով լրացնել իր պահանջը՝ նշելով, որ պահանջի գրանցումից հետո վարձակալության գծով առաջացել են դրամական պարտավորություններ (**հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 2, 3**).

7) նշված պահանջի փոփոխության դեմ գրավոր առարկություն է ներկայացրել Ընկերությունը՝ նշելով նաև, որ պահանջի փոփոխության դեմ առարկում է մասնակիորեն՝ 7.294.140 ՀՀ դրամի չափով, քանի որ թեև Պայմանագրի գործողությունը 01.01.2016 թվականին դադարելուց հետո սկսած 01.01.2016 թվականից Ընկերությունը շարունակել է հանքավայրն օգտագործելն ընդերքօգտագործման նպատակով և այդ փաստով Պայմանագրի կողմերի միջև եղած իրավահարաբերությունը փաստացի շարունակվել է՝ առանց նոր պայմանագիր կնքելու, սակայն Դատարանի 04.11.2019 թվականի որոշմամբ Ընկերության ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվել է, և Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ, որի արդյունքում Ընկերության գործունեությունը կասեցվել է: Նման պայմաններում ինքն առարկում է 05.11.2019 թվականից մինչև 05.11.2020 թվականն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված վարձավճարի գումարի մասով ևս պահանջը հաստատելու դեմ (**հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 8**).

8) Դատարանի 04.03.2021 թվականի որոշմամբ Երևան համայնքի դիմումը՝ ևս 9.768.616 ՀՀ դրամի չափով պահանջի փոփոխությունը գրանցելու մասին, բավարարվել է մասնակիորեն՝ 2.471.476 ՀՀ դրամի չափով, և այն կրկին գրանցվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթում. մնացած մասով դիմումը մերժվել է (**հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 44-50**):

4. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Վճռաբեկ դատարանի դարավոր Ս. Միքայելյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պարճատարանական և եզրափակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դարավորների մեծամասնության արդահայրած կարծիքի հետ, շարադրում եմ իմ հարուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտել է, որ տվյալ դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 624-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել «Մանկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ, 466-րդ, 469-րդ և 624-րդ հոդվածների այնպիսի խախտումներ, որոնք խաթարել են արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ սնանկության դատարանի որոշմանը վարձակալի գործունեությունը կասեցված լինելու պայմաններում անշարժ գույքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այդ պայմանագիրը վերակալված համարելու ստանձնահարկություններին և դրանցից բխող իրավական հետևանքներին:

Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով և վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի, 612-րդ հոդվածի 1-ին կետի, 616-րդ հոդվածի 1-ին կետի, 624-րդ հոդվածի 2-րդ կետի, 625-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 135-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները, արձանագրել է, որնշված նորմերի վերլուծությունից բխում է, որ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորություն է ստանձնում համապատասխան վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել համապատասխան գույք, իսկ վարձակալը պարտավորվում է ժամանակին մուծել այդ գույքն օգտագործելու համար վճարը (վարձավճարը): Ընդ որում, վարձավճարը մուծելու կարգը, պայմանները և ժամկետները պետք է որոշվեն վարձակալության պայմանագրով, իսկ եթե դրանք պայմանագրով որոշված չեն, ապա կիրառվում են նույնանման գույքի վարձակալության ժամանակ համեմատելի հանգամանքներում սովորաբար գործող կարգը, պայմանները և ժամկետները:

Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է, որ որպես կանոն վարձակալության պայմանագրում պետք է նշվի դրա ժամկետը, այսինքն՝ թե ինչ ժամկետով է կնքվում պայմանագիրը: Դրա հետ մեկտեղ օրենսդիրը համապատասխան իրավակարգավորում է նախատեսել այն դեպքերի համար, երբ այդ պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, որի դեպքում պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով, սակայն անորոշ ժամկետով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով ժամկետով վարձակալության պայմանագիր կնքելու հարցին, գտել է, որ վարձակալության պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո այն նույն պայմաններով անորոշ ժամկետով վերսկսված ճանաչելու համար անհրաժեշտ է երկու պարտադիր պայմանների միաժամանակյա առկայությունը, այն է՝ վարձակալված գույքից վարձակալի կողմից օգտվել շարունակելը վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո և այդ ընթացքում այդ գույքից օգտվելու վերաբերյալ վարձատուի առարկությունների բացակայությունը (տե՛ս, *Երևանի քաղաքապետին ընդդեմ Գոհար Արամյանի թիվ ԵԿԴ/3032/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.10.2011 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոհիշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վկայակոչված իրավանորմերի մեկնաբանությունից բխում է, որ երբ պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը չի շարունակում օգտվել վարձակալված գույքից, ապա վարձակալության պայմանագիրն օրենքի ուժով՝ այդ պայմանագրում նշված ժամկետը լրանալու կապակցությամբ դադարում է, որի պարագայում վարձակալը պարտավոր է վարձատուին վերադարձնել վարձակալված գույքը: Ընդ որում, վարձակալի կողմից վարձակալված գույքը չվերադարձնելու կամ այն ժամկետի խախտմամբ վերադարձնելու դեպքերում վարձատուն իրավունք ունի նաև վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամկետի համար: Անշարժ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքի դադարումը ևս ենթակա է պետական գրանցման:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված մեկ այլ որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 449-րդ հոդվածներին, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 5-րդ հոդվածներին, արձանագրել է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները

պետական գրանցման ենթարկելու վերաբերյալ օրենսդրի պահանջն ինքնանպատակ չէ: Այն հետապնդում է մի քանի խնդիրներ, որոնցից են մասնավորապես՝ անշարժ գույքի բնականոն շրջանառության ապահովումը, գործարքների մասնակիցների և երրորդ անձանց իրավունքների ճանաչումը, պաշտպանությունը և երաշխավորումը, անշարժ գույքի շուկայի կայունությունը և զարգացումն ապահովելը և այլն: Վկայակոչված խնդիրներից ՀՀ վճարելի դատարանը հարկ է համարել հատկապես ընդգծել գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության խնդրի կարևորությունը՝ նշելով, որ պետությունը, սահմանելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքները պետական գրանցման ենթարկելու պահանջ, միաժամանակ ստանձնել է պարտավորություն երաշխավորելու և պաշտպանելու այդ իրավունքները: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն է հենց այն մեխանիզմը, որի միջոցով պետությունը ճանաչում է անձանց այս կամ այն իրավունքն անշարժ գույքի նկատմամբ, ստեղծում է միասնական տեղեկատվական բանկ այդ իրավունքների և դրանք կրող սուբյեկտների վերաբերյալ ու համապատասխանաբար հնարավորություն է ունենում երաշխավորելու և պաշտպանելու այդ իրավունքները: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքը գրանցելու պահից մինչ այդ իրավունքի գրանցումը դադարեցնելու պահը պետությունը ճանաչում, երաշխավորում և պաշտպանում է այդ իրավունքը: Օրենսդիրը, նախատեսելով անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պարտադիր պետական գրանցման ենթակա լինելու պայման, ըստ էության, կողմերի միջև անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը կնքված համարելու պահը դիտել է վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահը: Այսինքն՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում ստանալու պահից կողմերը ձեռք են բերում փոխադարձ իրավունքներ և կրում պայմանագրից բխող պարտականությունները պատշաճ կատարելու պարտավորություն, իսկ պետությունը երաշխավորում և պաշտպանում է վարձակալության պայմանագրից բխող և պետական գրանցում ստացած՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, քանի դեռ այդ իրավունքների պետական գրանցումը չի դադարել (*լրե՛ս, Ադասի Տեր-Յասյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ԵԿԴ/3193/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 25.12.2020 թվականի որոշումը*):

Վճարելի դատարանը, վկայակոչելով և վերլուծելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, նույն հոդվածի 2-րդ մասի դրույթները, արձանագրել է նաև, որ նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը պարտապանին արգելել է սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից առանց դատարանի որոշման պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալն իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով կամ ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը: Նշված կանոնից բացառություն են կազմում պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունները: Նմանատիպ արգելքը նաև գործում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն այս դեպքում բացառություն են կազմում պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերը:

Միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է այն դեպքերը, երբ որպես կանոն կասեցվում են պարտապանի՝ իր գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքները՝ նշելով, որ դրանք կասեցվում են պարտապանին լուծարելու մասին որոշում կայացնելու պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտապանի գործունեությունն ակնհայտորեն անշահավետ է, կարող է բերել պարտապանին պատկանող գույքի արժեքի նվազեցմանը, կամ ակնհայտ է, որ պարտապանը չի կարող ներկայացնել պարտատերերի համար ընդունելի ֆինանսական առողջացման ծրագիր, որի դեպքում պարտապանի նշված իրավունքները դատավորի որոշմամբ կարող են կասեցվել նաև մինչև պարտապանի լուծարումը:

Դրա հետ մեկտեղ օրենսդիրը կարգավորել է նաև պարտապանի կողմից կնքված և կատարման ժամկետը չլրացած պայմանագրերի լուծման ընթացակարգը՝ նախատեսելով, որ դրանք կարող են լուծվել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ 2 ամսվա ընթացքում կառավարչի կողմից միջնորդություն հարուցվելու միջոցով՝ դատարանի որոշմամբ: Ընդ որում, նշված ընթացակարգը գործում է բացառապես այն պայմանագրերի նկատմամբ, որոնք երկու կողմից էլ ամբողջությամբ դեռ չեն կատարվել, և նշված պայմանագրերը չլուծվելու դեպքում դրանք գործում են մինչև պարտապանի գործունեության կասեցումը:

Վճարելի դատարանը, իր իրավական դիրքորոշումները կիրառելով սույն գործի փաստերի նկատմամբ, արձանագրել է հետևյալը.

Սույն գործի փաստերից բխում է, որ Պայմանագրի ժամկետի ավարտից հետո Ընկերությունը Երևան համայնքին Պայմանագրի օբյեկտ հանդիսացող գույքը չի վերադարձրել, այդ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքի դադարում պետական գրանցման չի ենթարկվել: Դրա փոխարեն Ընկերությունը շարունակել է օգտվել գույքից, որին Երևան համայնքը չի առարկել: Ընդ որում, նշված փաստն անվիճելի է, քանի որ Պայմանագրի կողմերն այն չեն վիճարկում: Ավելին՝ Ընկերությունն այդ փաստի մասին ուղղակիորեն է նշում: Այսինքն՝ Պայմանագիրը վերը նշված դիրքորոշումների և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ճանաչվում է վերսկսված նույն պայմաններով, սակայն անորոշ ժամկետով, որի դեպքում նաև պահպանվել է այն պայմանը, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է գույքի դիմաց վճարել համապատասխան վարձավճար: Ինչ վերաբերում է Պայմանագրի 19-րդ կետում նշվածին, որով Պայմանագրի կողմերը պայմանավորվել են Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո վարձակալված հողամասի տիրապետումը և օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը չհամարել Պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման հիմք, ապա այդ առումով Պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ինպերատիվ իրավակարգավորմանը, այսինքն՝ պահպանված չէ նույն օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին այն մասին, որ Ընկերության գործունեությունը կասեցված լինելու հանգամանքն անհնար է դարձրել վարձակալության պայմանագրի առարկայի օգտագործման հնարավորությունը 05.11.2019 թվականից հետո, իսկ Երևան համայնքը դեռևս մինչև Ընկերության նկատմամբ լուծարման գործընթաց սկսելը և վերջինիս գործունեությունը կասեցնելը կարող էր միակողմանի ծանուցմամբ պահանջել վաղաժամկետ լուծելու վարձակալության պայմանագիրը, ապա դրանք չեն կարող բավարար հիմք հանդիսանալ հետևություն անելու համար այն մասին, որ պարտապանի գործունեության կասեցումից հետո ընկած ժամանակահատվածի համար չի կարող հաշվարկվել որևէ վարձավճար, քանի որ, ճիշտ է, օրենսդիրը պարտապանին արգելել է ինչպես սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից, այնպես էլ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից առանց դատարանի որոշման պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալն իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով կամ ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը, և լուծարելու մասին որոշում կայացնելու պահից նախատեսել է իր գույքը կառավարելու կամ տնօրինելու պարտապանի իրավունքների կասեցում, այնուամենայնիվ կառավարիչը զրկված չէր ինչպես մինչև պարտապանի գործունեությունը կասեցնելու մասին որոշում կայացնելը, այնպես էլ դրանից հետո հնարավորությունից՝ ձեռնամուխ լինելու սկսել այդ Պայմանագրի լուծման գործընթաց և այն հասցնել ավարտին: Ավելին՝ վերը նշված դիրքորոշումների համատեքստում Պայմանագիրը մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի հանդիսանում այնպիսին, որը չլուծվելու դեպքում կարող էր գործել մինչև պարտապանի գործունեության կասեցումը: Այսինքն՝ պարտապանի գործունեության կասեցումից հետո ևս այն շարունակել է գործել: Նշված Պայմանագրով նախատեսված վարձակալության իրավունքի դադարում ևս չի ենթարկվել պետական գրանցման:

Այսպիսով, վճարեկ բողոքի հիմքի առկայությունը Վճարեկ դատարանը դիտել է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի և 364-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և գործը՝ Երևան համայնքի կողմից 09.11.2020 թվականին Դատարան ներկայացված պահանջի փոփոխության մերժված մասի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը և ապահովվածությունն ստուգելու նպատակով ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Հայրուկ կարծիքի պարճառարանությունները և եզրահանգումը.

Հայտնելով իմ անհամաձայնությունը Վճարեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքին՝ գտնում եմ, որ վճարեկ բողոքի հիմքերը բավարար չեն սույն գործով բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ իրավունքի զարգացման, ինչպես նաև արդարադատության բուն էությունը խաթարող՝ Վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ տված նյութական իրավունքի նորմերի խախտման փաստն արձանագրելու և այդ հիմքով բողոքը բավարարելու համար: Այսպես.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ:

ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հողամասի վարձակալության իրավունքը վարձակալության պայմանագրի պայմաններով վճարի դիմաց հողամասի ժամկետային օգտագործման իրավունքն է: Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ պետության և համայնքների սեփականության հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարուց ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերինը, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, (...):

Նշված իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ի տարբերություն քաղաքացիական շրջանառության այլ գույքի, հողի վարձակալության պայմանագիրը կարող է կնքվել բացառապես որոշակի ժամկետով: Ընդ որում, պետության և համայնքների պատկանող հողի վարձակալության համար օրենսդիրը սահմանել է առավելագույն ժամկետներ, որոնցից ավելի երկար ժամկետով կնքված հողի վարձակալության ժամկետները ենթակա են որակման որպես առավելագույն ժամկետներով կնքված վարձակալության պայմանագրեր:

Հիշատակվածը թույլ է տալիս եզրակացնել նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթն այն մասին, որ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով (հոդված 612), նույն օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի պահանջի հաշվառմամբ, հողային վարձակալական իրավահարաբերություններին չի կարող վերաբերել: Այդ կապակցությամբ որոշման պատճառաբանական մասում ներկայացված փաստարկն այն մասին, որ կողմերի միջև կնքված հողի վարձակալության պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով ենթակա է որակման որպես անորոշ ժամկետով կնքված հողի վարձակալության պայմանագիր, չի բխում ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավակարգավորումից:

Նման պայմաններում կողմերի միջև կնքված հողի վարձակալության պայմանագրի 19-րդ կետում ամրագրված պայմանն այն մասին, որ «Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո վարձակալված հողամասի տիրապետումն ու օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը Պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման համար հիմք չի հանդիսանում», իրավաչափ և վավեր է: Ուստի, այդ պայմանը որոշման պատճառաբանական մասում անվավեր որակելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ կետի վկայակոչմամբ, հակասում է ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ և ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածների պահանջներին:

Տվյալ դեպքում, կողմերի միջև կնքված հողի վարձակալության պայմանագրի ժամկետը գործել է մինչև պայմանագրով սահմանված 31.12.2015 թվականը, որից հետո կողմերի միջև վարձակալական իրավահարաբերությունները դադարել են: Արդյունքում՝ կողմերի միջև պայմանագրային պարտավորությունների ավարտից հետո, վարձակալի մոտ ծագել է վարձակալած գույքը վերադարձնելու պարտականություն: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 625-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը դադարելու դեպքում վարձակալը պարտավոր է վարձատուին վերադարձնել գույքն իր կողմից ստացված վիճակում՝ բնականոն մաշվածության հաշվառմամբ կամ պայմանագրով նախատեսված վիճակում: Ընդ որում, նշված հոդվածի 2-րդ կետով սահմանվել է, որ եթե վարձակալը չի վերադարձրել վարձակալած գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամկետի համար:

Քննարկվող պարագայում, վեճին իրավաչափ լուծում տալու համար հարկ է պարզել՝ սնանկ ճանաչված պարտապանին դատարանի կողմից լուծարելու մասին որոշում կայացնելու դեպքում, արդյոք վերջինս իրավասու է իր տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված գույքը, տվյալ դեպքում՝ հողը, վերադարձնել վարձատուին:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն՝ եթե դատարանը կայացրել է պարտապանին լուծարելու մասին որոշում, ապա գույքը կառավարելու կամ տնօրինելու՝ պարտապանի բոլոր իրավունքները կասեցվում են դատարանի որոշմամբ: Նույն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին պատկանող գույքի տնօրինումը նրա լուծարման մասին որոշում կայացնելուց հետո իրականացնում է կառավարիչը՝ նույն օրենքով սահմանված կարգով: Պարտապանի ղեկավարը լուծարումից հետո գրկվում է գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքներից:

Վերոգրյալ իրավանդությունների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պարտապանին լուծարելու մասին դատարանի որոշումը կայացվելուց հետո, պարտապան իրավաբանական անձը գրկվում է ինչպես իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու իրավունքից, այնպես էլ՝ իր տիրապետման տակ գտնող գույքը կառավարելու իրավական հնարավորությունից: Ընդ որում, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում իր լիազորություններն իրականացնելիս կառավարիչը գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ: Ավելին՝ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ կառավարիչը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում պարտապանին և պարտատիրոջն իր մեղքով պատճառված վնասի համար:

Տվյալ դեպքում, նշված իրավակարգավորումներից կարելի է բխեցնել, որ պարտապանի կողմից իրեն տրված գույքի կառավարման, ներառյալ՝ այն վարձատուին վերադարձնելու գործողության արգելքի պայմաններում, վարձակալված գույքի կառավարման իրավունքն օրենքի ուժով վերապահվել է կառավարչին, որն էլ իր լիազորությունների շրջանակում պարտավորություն է ձեռք բերել պարտապանին վարձակալության հանձնված գույքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 625-րդ հոդվածի համաձայն, վերադարձնել վարձատուին: Միաժամանակ, օրենսդիրը սահմանել է, որ կառավարիչը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում պարտապանին և պարտատիրոջն իր մեղքով պատճառված վնասի համար: Այսինքն՝ այն բոլոր դեպքերում, երբ կառավարիչն օրենքով վերապահված իր լիազորությունները չի կատարում կամ ոչ պատշաճ կարգով է կատարում, որի արդյունքում պարտապանին կամ պարտատիրոջը պատճառվում է գույքային կամ ոչ գույքային վնաս, ապա վերջինս լիարժեք պատասխանատվություն է կրում իր գույքով: Ընդ որում, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը կարգավորում է նաև այն իրավական մեխանիզմը, որի կիրառմամբ կառավարչի վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն:

Քննարկվող պարագայում, ակնհայտ է, որ սույն վեճի շրջանակներում առկա է արտապայմանագրային պարտավորություն, որի կատարման իրավունքը վերապահված է եղել

կառավարչին: Գործում առկա նյութերից պարզվել է նաև, որ սույն վեճի շրջանակներում պարտատիրոջ պահանջը վերաբերել է պարտապանին լուծարելու որոշում կայացնելուց հետո ընկած ժամանակահատվածում վարձակալված գույքը չվերադարձնելու հետևանքով առաջ եկած վնասի, այն է՝ պարտավորության կետանցման հետևանքով առաջ եկած վարձավճարին համարժեք դրամի բռնագանձմանը:

Սույն պարագայում, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կառավարչի մեղքով շահառուներին, տվյալ դեպքում՝ պարտատիրոջը, պատճառված վնասի փոխհատուցումն իրականացվում է կառավարչի ապահովագրական հատուցման հաշվին, իսկ դրա անբավարարության դեպքում՝ կառավարչի գույքից:

Հարկ է նշել, որ սույն վեճի լուծման համար որոշիչ նշանակություն է ձեռք բերում այն իրավական հարցադրումը, թե ում լիազորությունների մեջ էր մտնում վարձակալված գույքը վերադարձնելու պարտականությունը, դրանով իսկ մեղքի առկայությունը: Ինչպես վերը նշվեց, պարտապանին լուծարելու վերաբերյալ դատական ակտ կայացնելու արդյունքում պարտապանն օրենքի ուժով գրկվել է իր տիրապետմանը հանձնված գույքը կառավարելու իրավական հնարավորությունից, ուստի՝ վերջինիս մոտ բացակայել է իր մեղքով վարձակալված գույքը չվերադարձնելու հետևանքով վնասի առաջացումը:

Միաժամանակ, կառավարիչը, ում վերապահված է վարձակալված գույքի կառավարման իրավասությունը, կարող էր և պարտավոր էր ղեկավարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 625-րդ հոդվածի դրույթներով ու պարտատիրոջը վերադարձնել վարձակալության պայմանագրի դադարման արդյունքում իր կառավարմանը հանձնված գույքը: Տվյալ դեպքում, նրա մեղավորությունը դրսևորվել է անիրավաչափ անգործությամբ, ինչը և հիմք է տալիս եզրակացնելու, որ իր մեղքով պատճառված վնասի համար նա կրում է լիարժեք գույքային պատասխանատվություն:

Վերը շարադրված իրավական և փաստական վերլուծության արդյունքում գտնում են, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում են, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2021 թվականի որոշումը վերացնելու համար, որպիսի պայմաններում այն պետք է թողնել օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. Միքայելյան

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ ԵԱԲԴ/0112/04/14 2022թ.

Մասնկության գործ թիվ

ԵԱԲԴ/0112/04/14

Նախագահող դատավոր՝

Ն. Կարապետյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի փետրվարի 25-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Արթուր Շահինյանի դիմումի՝ «ԴԵԼՏԱ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.05.2021 թվականի որոշման դեմ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Արմենակ Ադամյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Արթուր Շահինյանը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.11.2014 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Ս. Թադևոսյան) (այսուհետ՝ Դատարան) 05.06.2020 թվականի որոշմամբ «Հայրիզնետրանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ բողոք-միջնորդությունը՝ Ընկերության սնանկության գործով կառավարչի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.05.2021 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 05.06.2020 թվականի որոշումը վերացվել է, և կայացվել է նոր որոշում՝ Բանկի անունից ներկայացված միջնորդությունը՝ սնանկության գործով կառավարչի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, բավարարվել է մասնակիորեն՝ Ընկերության սնանկության գործով կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են. մնացած մասով միջնորդությունը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության սնանկության գործով կառավարչի Արմենակ Ադամյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 81-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված հիմքի առկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանի կողմից սնանկության գործով կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշման կայացման հիմքում ընկած է նաև դատարանի գնահատողական գործառույթը, և ցանկացած պարագայում նմանատիպ որոշման հիմքում պետք է ընկած լինեն բացառապես ծանրակշիռ և առավել քան բավարար հիմնավորումներ՝ պարտադիր կերպով հաշվի առնելով նման որոշման կայացման հետևանքները սնանկության գործի բնական ընթացքն ապահովելու տեսանկյունից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ինքը 2014 թվականից սույն գործով հանդիսանում է սնանկության գործով կառավարիչ, և այս փուլում իր լիազորությունների դադարեցումը կարող է բացասական ազդեցություն ունենալ սնանկության գործընթացի վրա, քանի որ շուրջ վեց տարի սպասարկելով սույն սնանկության գործը՝ խորապես տիրապետում է դրա բոլոր առանձնահատկություններին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ սույն սնանկության գործի շրջանակներում «Հայրիզնետրանկ» ՓԲԸ-ից բացի նաև այլ պարտատերերի շահեր են ապաստարկվում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ աճուրդով վաճառվող գույքի գնորդը հանդիսացել է «Հայրիզնետրանկ» ՓԲԸ-ն, որը տեղեկացված է եղել ֆինանսական մուտքերին, գույքի վաճառքից գոյացած գումարների չափին: Ավելին՝ իր կողմից ներկայացված բաշխման ծրագրերում հստակ արտացոլվել են սնանկության հատուկ հաշվին եղած գումարները, դրանց բաշխման առաջնահերթությունները, և առկա է եղել ամբողջական տեղեկատվություն, որը նույնաբովանդակ կերպով կնեղակայացվեր հաշվետվություն ներկայացվելու պարագայում:

Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել այն հարցը, թե արդյոք իր գործողությունների արդյունքում որևէ պարտատեր կրել է վնաս:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 370-րդ և 372-րդ հոդվածները:*

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու պահանջի վերաբերյալ արդեն իսկ մեկ անգամ կայացվել է որոշում, որում նույն հիմնավորումներն ու փաստարկները ենթարկվել են գնահատման: Դրանից ելնելով՝ վերաքննիչ բողոքի ընդունումը պետք է մերժվեր:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել» Վերաքննիչ դատարանի 27.05.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ վերաքննիչ բողոքը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դատարանի 04.11.2014 վճռով Արթուր Շահինյանի դիմումը բավարարվել է, և Ընկերությունը ճանաչվել է սնանկ (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 7-9**).

2) Դատարանի 26.11.2014 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Արմենակ Ադամյանը (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 10, 11**).

3) Դատարանի 03.03.2015 թվականի որոշմամբ մերժվել է Ընկերության կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումը, և սնանկ ճանաչված Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 14-16**).

4) սնանկության գործով կառավարիչ Արմենակ Ադամյանն Ընկերության լուծարման մասին որոշման ընդունման պահից Դատարան չի ներկայացրել հաշվետվություն՝ պարտապանի գույքի վաճառքի, դրանից առաջացած միջոցների բաշխման, պարտատերերի պահանջների բավարարման, պարտապանի գույքի և ակտիվների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) հավաքման ուղղությամբ իր իրականացրած միջոցառումների մասին.

5) Բանկը 22.05.2020 թվականին Դատարան է ներկայացրել կառավարչի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին բողոք-միջնորդություն՝ դրա հիմքում դնելով այն, որ Դատարանը 15.01.2020 թվականին որոշում է կայացրել միջանկյալ բաշխման ծրագիրը փոփոխելու մասին, որն օրինական ուժի մեջ է մտել կայացման պահից, մինչդեռ կառավարիչ Արմենակ Ադամյանն այդ որոշումն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև այժմ բաշխում չի կատարել:

Դատարանի 11.06.2020 թվականի որոշմամբ մերժվել է Բանկի կողմից 22.05.2020 թվականին ներկայացված՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Արմենակ Ադամյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին բողոք-միջնորդությունը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.09.2020 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.06.2020 թվականի «Միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 01.09.2021 թվականի որոշմամբ Բանկի բերած վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.09.2020 թվականի որոշման դեմ, թողնվել է առանց քննության (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 18-20, գ.թ. 26-28, հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 134-137**).

6) Դատարանի 12.06.2020 թվականի որոշմամբ Բանկի բողոք-միջնորդությունը՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Արմենակ Ադամյանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.11.2020 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.06.2020 թվականի «Բողոք-միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ՝ նաև այն պատճառաբանությամբ, որ Բանկի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիմնական հիմքն Ընկերության սնանկության գործով կառավարիչ Արմենակ Ադամյանի կողմից 15.01.2020 թվականի որոշմամբ սահմանված բաշխումները չիրականացնելն է, իսկ պահանջը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.05.2020 թվականի որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կառավարիչ Արմենակ Ադամյանի կողմից այդ որոշմամբ սահմանված բաշխումները չիրականացնելու ոչ իրավաչափ լինելը և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը, մինչդեռ Վերաքննիչ դատարանն արդեն

իսկ սովել է կառավարչի կողմից միջանյալ բաշխման ծրագրով սահմանված միջոցների բաշխումը սահմանված ժամկետներում չիրականացնելու, այդ գործողությունը ոչ իրավաչափ գնահատելու և դրա հիման վրա վերջինիս լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ սպառիչ իրավական գնահատական, ուստիև Դատարանի կողմից 12.06.2020 թվականին կայացված որոշումն այլևս ենթակա չէ վերանայման վերաքննության կարգով (**հիմք՝ «www.court.am»** պաշտոնական կայքը)։

7) Բանկը 02.06.2020 թվականին Դատարան է ներկայացրել կառավարչի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին մեկ այլ բողոք-միջնորդություն՝ այս անգամ դրա հիմքում դնելով այն, որ 02.06.2020 թվականին ծանոթացել է գործի կյուրերին և պարզել, որ գործի կյուրերից բացակայում են սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվելիք ամենամսյա հաշվետվությունները, ուստի պարզ չէ, թե ինչպես են կառավարվել հատուկ հաշվին մուտք եղած դրամական միջոցները, որոնց ծավալը գերազանցում է 300.000.000 ՀՀ դրամը, արդյոք դրանք մշտապես եղել են հատուկ հաշվի վրա, թե՛ ոչ, արդյոք շուրջ մեկ տարի հատուկ հաշվին ավելի քան 120.000.000 ՀՀ դրամ պահելու արդյունքում գոյացել են տոկոսներ, թե՛ ոչ, ինչ է տեղի ունեցել աճուրդների մասնակցության վճարների և նախավճարների հետ։

Դատարանի 05.06.2020 թվականի որոշմամբ մերժվել է Բանկի կողմից 02.06.2020 թվականին ներկայացված՝ Ընկերության սնանկության գործով կառավարչի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին բողոք-միջնորդությունը (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 21-25**)։

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 81-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով։

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածում նշված հաշվետվությունը կառավարչի կողմից չներկայացվելու հիմքով վերջինիս լիազորությունները նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով վաղաժամկետ դադարեցնելու ստանձնահարկություններին։

1) Բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հերկյալ պարճատարանությամբ.

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառավարիչը պարտավոր է պարտապանի լուծարման մասին որոշման ընդունման պահից դատարան ներկայացնել հաշվետվություն՝ պարտապանի գույքի վաճառքի, դրանից առաջացած միջոցների բաշխման, պարտատերերի պահանջների բավարարման, պարտապանի գույքի և ակտիվների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) հավաքման ուղղությամբ իր իրականացրած միջոցառումների մասին։

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա համար հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաջորդ ամսվա 10-ը ներառյալ։

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ կառավարչի՝ պարտապանի գույքի վաճառքի, դրանից առաջացած միջոցների բաշխման, պարտատերերի պահանջների բավարարման, պարտապանի գույքի և ակտիվների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) հավաքման ուղղությամբ իր իրականացրած միջոցառումների մասին հաշվետվությունը ներկայացնելու պարտականությունն օրենսդիրը պայմանավորել է պարտապանի

լուծարման մասին որոշումն ընդունելու հետ՝ սահմանելով, որ այն ներկայացվում է նման որոշում կայացնելու պահից: Ընդ որում, յուրաքանչյուր ամսվա համար հաշվետվությունը կառավարիչը պարտավոր է ներկայացնել մինչև հաջորդ ամսվա 10-ը ներառյալ:

Նույն խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորն իր նախաձեռնությամբ, պարտատերերի խորհրդի կամ ժողովի կամ պարտատիրոջ կամ պարտապանի միջնորդությամբ պետք է վաղաժամկետ դադարեցնի կառավարչի լիազորությունները, եթե վերջինս չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում նույն օրենքով սահմանված իր լիազորությունները կամ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում ժամկետում չի կատարում իր քաղաքացիական պատասխանատվության ապահովագրումը: (...)

Նույն հոդվածի 1.1 կետի համաձայն՝ կառավարչի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մասին դատարանի որոշումը կամ սնանկության գործը վարելուց անհիմն հրաժարվելը կամ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում քաղաքացիական պատասխանատվության ապահովագրումը չկատարելը հիմք է լիազոր մարմնի կողմից կառավարչի որակավորման վկայականը հետ վերցնելու համար:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարչի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մասին դատարանի որոշումը կամ սնանկության գործը վարելուց անհիմն հրաժարվելու կամ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում քաղաքացիական պատասխանատվության ապահովագրումը չկատարելու, հիմք է հանդիսանում նրան կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունից հեռացնելու համար:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է նաև, որ դատավորը պարտատիրոջ միջնորդությամբ վաղաժամկետ դադարեցնում է կառավարչի լիազորությունները, եթե վերջինս չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում նույն օրենքով սահմանված իր լիազորությունները. նշված կարգավորումը, ըստ էության, կրում է իմպերատիվ բնույթ: Ավելին՝ այդ որոշումն առաջացնում է որոշակի իրավական հետևանքներ այն առումով, որ կառավարչի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մասին դատարանի որոշումը հիմք է ինչպես լիազոր մարմնի կողմից կառավարչի որակավորման վկայականը հետ վերցնելու, այնպես էլ նրան կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունից հեռացնելու համար:

Վերը նշված նորմերի համադրված վերլուծությունից ուղղակիորեն բխում է նաև, որ կառավարչի կողմից համապատասխան հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելն առաջին հայացքից ևս կարող է հիմք հանդիսանալ վերջինիս լիազորություններն անվերապահորեն վաղաժամկետ դադարեցնելու համար: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ լիազորությունը կառավարչի կողմից չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը ոչ բոլոր դեպքերում կարող է հիմք հանդիսանալ նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու համար. յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է պարզի, թե որքանով է համապատասխան լիազորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով խախտվել սնանկության վարույթի որևէ կողմի իրավունքը կամ օրինական շահը, կամ այդ խախտումը հանգեցրել կամ կարող էր հանգեցնել այնպիսի վնասի, որը պատճառվել է սնանկության վարույթի որևէ կողմին:

Ավելին՝ ՀՀ կառավարությունը դեռևս 2019 թվականին հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ և ՀՀ Ազգային ժողով է ներկայացրել ««Մասնկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով առաջարկել է փոփոխություններ և լրացումներ կատարել «Մասնկության մասին» ՀՀ օրենքում, այդ թվում՝ նաև սնանկության կառավարչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերի և կարգի առումով՝ առաջարկելով նշված օրենքի 32-րդ հոդվածը, որը վերնագրել է «*Կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը*», շարադրել նաև այնպիսի խմբագրությամբ, որի համաձայն՝ նոր իրավակարգավորումներ են նախատեսվել այն մասին, որ կառավարչին հնարավորություն է տրվել մինչ իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով իր լիազորությունները

վաղաժամկետ դադարեցնելու հարցի մասին դատարանի կողմից որոշում կայացնելն ինչպես դիրքորոշում ներկայացնել դրա վերաբերյալ, որի նպատակով դատարանի վրա պարտականություն է դրվել այդ մասին ծանուցելու կառավարչին, այնպես էլ՝ կառավարչին հնարավորություն է տրվել վերացնելու այդ խախտումները, իսկ դատարանի վրա պարտականություն է դրվել այդ նպատակով պարտադիր սահմանելու ողջամիտ ժամկետ, եթե, իհարկե, այդ խախտումները ենթակա են վերացման: Եվ եթե սահմանված ժամկետում կառավարչի կողմից խախտումները վերացվում են, և դրա վերաբերյալ դատարան համապատասխան ապացույցներ են ներկայացվում, ապա նման պայմաններում, թեկուզև ժամանակին կառավարիչը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել իր լիազորությունները, կառավարչի լիազորություններն այլևս վաղաժամկետ դադարեցման ենթակա չեն:

Դրանից հետո ՀՀ Ազգային ժողովը 12.12.2019 թվականին ընդունել է «Մասնկույթյան մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի 41-րդ հոդվածով «Մասնկույթյան մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 32. Կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը

1. Դատարանն իր նախաձեռնությանը պարտավորված չէ խորհրդի, պարտավորված չէ ժողովի, պարտավորված չէ կամ պարտավորված չէ միջնորդությանը վաղաժամկետ դադարեցնում է կառավարչի լիազորությունները, եթե վերջինս չի կատարում կամ ոչ պարզաճ է կատարում սույն օրենքով սահմանված իր լիազորությունները, նրա որակավորումն օրենքով սահմանված կարգով դադարեցվել է, կամ նրա գործունեությունը կասեցվել է, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Կառավարչի կողմից իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցի մասին որոշում կայացնելուց առաջ դատարանն այդ մասին ծանուցում է կառավարչին՝ առաջարկելով ծանուցումն արանապուրջ հետը՝ ետօրյա ժամկետում, ներկայացնել իր դիրքորոշումը և միաժամանակ այդ հասկարումները վերացնելու համար որոշմամբ սահմանված ողջամիտ ժամկետ արանապուրջելով, եթե հնարավոր է վերացնել այդ հասկարումները: Սահմանված ժամկետում կառավարչի կողմից հասկարումները վերացվելու և դրա վերաբերյալ դատարան համապատասխան ապացույցներ ներկայացնելու դեպքում նրա լիազորությունները վաղաժամկետ չեն դադարեցվում:

3. Դատարանի կողմից կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում համապատասխան որոշումն անհապաղ ուղարկվում է րվյալ կառավարչին, պարտապահին և պարտավորվածին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության»:

Նշված օրենքն ուժի մեջ է մտել 15.04.2020 թվականին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ի տարբերություն մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկույթյան մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի, որն ուղղակիորեն էր սահմանում կառավարչի կողմից իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքը՝ որպես այդպիպի նախատեսելով կառավարչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, փոփոխության արդյունքում օրենսդիրն այլ մոտեցում է որդեգրել նման իրավիճակներում կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու համար՝ այն այլևս չնախատեսելով որպես անխուսափելիորեն վրա հասնող հետևանք:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 04.11.2014 վճռով Արթուր Շահինյանի դիմումը բավարարվել է, և Ընկերությունը ճանաչվել է սնանկ: Դատարանի 26.11.2014 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Արմենակ Ադամյանը: Դատարանի 03.03.2015 թվականի որոշմամբ մերժվել է Ընկերության կողմից ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումը, և սնանկ ճանաչված Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ: Ընկերության լուծարման մասին որոշման ընդունման պահից կառավարիչ Արմենակ Ադամյանը Դատարան չի ներկայացրել հաշվետվություն՝ պարտապահի գույքի վաճառքի, դրանից առաջացած

միջոցների բաշխման, պարտատերերի պահանջների բավարարման, պարտապանի գույքի և ակտիվների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) հավաքման ուղղությամբ իր իրականացրած միջոցառումների մասին:

Բանկը 02.06.2020 թվականին Դատարան է ներկայացրել կառավարչի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին բողոք-միջնորդություն՝ դրա հիմքում դնելով այն, որ 02.06.2020 թվականին ծանոթացել է գործի նյութերին և պարզել, որ գործի նյութերից բացակայում են սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվելիք ամենամսյա հաշվետվությունները, ուստի պարզ չէ, թե ինչպես են կառավարվել հատուկ հաշվին մուտք եղած դրամական միջոցները, որոնց ծավալը գերազանցում է 300.000.000 ՀՀ դրամը, արդյոք դրանք մշտապես եղել են հատուկ հաշվի վրա, թե՛ ոչ, արդյոք շուրջ մեկ տարի հատուկ հաշվին ավելի քան 120.000.000 ՀՀ դրամ պահելու արդյունքում գոյացել են տոկոսներ, թե՛ ոչ, ինչ է տեղի ունեցել աճուրդների մասնակցության վճարների և նախավճարների հետ:

Դատարանը 05.06.2020 թվականի որոշմամբ Բանկի կողմից ներկայացված վերը նշված բողոք-միջնորդությունը մերժել է այն պատճառաբանությամբ, որ մինչև 15.04.2020 թվականը գործող խնդրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի կարգավորումից բխում է, որ դատարան հաշվետվություն չի ներկայացվում, եթե տվյալ ամսին նույն հոդվածում նշված չորս ուղղություններով միջոցառումներ չեն կատարվել կամ ներկայացվում է միայն այն միջոցառման վերաբերյալ, որն իրականացվել է:

Վերաքննիչ դատարանը 27.05.2021 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ Դատարանի 05.06.2020 թվականի որոշումը վերացրել է և կայացրել է նոր որոշում՝ Բանկի անունից ներկայացված միջնորդությունը՝ սնանկության գործով կառավարչի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, բավարարել է մասնակիորեն ու Ընկերության սնանկության գործով կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցրել է այն պատճառաբանություններով, որ «Ամենամսյա հաշվետվությունը, որպես սնանկության գործով թափանցիկության ապահովման երաշխիք, պետք է ներկայացվի յուրաքանչյուր ամիս. «Սնանկության մասին» ՀՀ օրենքը որևէ բացառություն հաշվետվությունը չներկայացնելու իրավունքի վերաբերյալ չի սահմանում: Ուստի, հաշվետվությունները ենթակա են ներկայացման նույնիսկ այն դեպքում, երբ գույքի վաճառք, դրանից առաջացած միջոցների բաշխում, պարտատերերի պահանջների բավարարում, գույքի կամ ակտիվների հավաքման ուղղությամբ միջոցառումներ չեն իրականացվում: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս սնանկության գործով կառավարիչը պարտադիր պետք է հաշվետվություն ներկայացնի, ինչի միջոցով Դատարանը և պարտատերերը հնարավորություն են ունենում իմանալու, թե սնանկության վարույթն ինչ փուլում է, արդյո՞ք առկա չեն այնպիսի միջոցներ, որոնք կարող են ուղղվել պարտատերերի պահանջների բավարարմանը և այլն: Այլ է խնդիրը, որ եթե «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածով սահմանված գործողությունները չեն կատարվել, ապա հաշվետվություն չներկայացնելը կարող է չդիտվել որպես այնպիսի խախտում, որը կարող է հանգեցնել սնանկության գործով կառավարչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման: Սակայն, երբ նման գործընթացներ տեղի են ունենում, և սնանկության գործով կառավարիչն ամենամսյա հաշվետվությունների միջոցով այդ մասին չի հայտնում Դատարանին և պարտատերերին, ապա Դատարանը զրկվում է սնանկության գործով կառավարչի գործողությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, իսկ պարտատերը՝ սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, արդյունքում նաև՝ իրենց իրավունքներն արդյունավետ իրականացնելու, կառավարչի գործողությունները կամ անգործությունը բողոքարկելու հնարավորությունից», «Սույն սնանկության գործով դեռևս 15.01.2020 թվականի որոշմամբ Դատարանը հաստատել է այն փաստը, որ «Սնանկության գործով կառավարիչ Արմենակ Ադամյանը 12.11.2019 թվականին Դատարան է ներկայացրել իր կողմից կազմված, պարտապանի գույքի վաճառքից և ակտիվների հավաքագրումից առաջացած միջոցների բաշխման միջանկյալ ծրագիր», ինչն անհերքելիորեն ենթադրում է, որ տեղի է ունեցել գույքի վաճառք, դրանից ստացվել են միջոցներ,

իսկ միջանկյալ բաշխման ծրագրով այդ միջոցները պետք է բաշխվեն պարտատերերի միջև: Այնուամենայնիվ, պարտապանին լուծարելու մասին որոշում կայացնելուց հետո թե՛ վերոնշյալ, թե՛ կատարված այլ գործողությունների մասին որևէ հաշվետվություն առկա չէ: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ ամենամյա հաշվետվություններ ներկայացնելու իր լիազորությունը չկատարելու արդյունքում սնանկության գործով կառավարիչը թույլ է տվել այնպիսի խախտում՝ անգործություն, որը կարող է հանգեցնել նրա լիազորությունների դադարեցման»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սնանկության գործով կառավարիչ Արմենակ Աղամյանի լիազորությունները պարտատեր Բանկի միջնորդությամբ վաղաժամկետ դադարեցրել է բացառապես այն հիմքով, որ վերջինս չի կատարել մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունը, այն է՝ սահմանված ժամկետներում Դատարան չի ներկայացրել համապատասխան հաշվետվություններ: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայտնված դիրքորոշումների համաձայն՝ միայն վերը նշված փաստի առկայությունը դեռևս բավարար չէր սնանկության գործով կառավարիչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու համար՝ առանց պարզելու, թե որքանով է համապատասխան լիազորությունը չկատարելու հետևանքով խախտվել սնանկության վարույթի որևէ կողմի իրավունքը կամ օրինական շահը, կամ այդ խախտումը հանգեցրել կամ կարող էր հանգեցնել այնպիսի վնասի, որը պատճառվել է սնանկության վարույթի որևէ կողմին: Այսինքն՝ սույն քաղաքացիական գործով չի իրականացվել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ոչ բոլոր հանգամանքներն են բացահայտվել, որպիսի պարագայում առկա է գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտություն: Մինչդեռ՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) գործողության ժամանակ ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանա-հավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա (որն «Շենքերի կառավարում» համապիրությունն ընդդեմ Մասիս Դազանյանի թիվ

ԵԱԳԴ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս Ռազմիկ Մարությունն ընդդեմ Սյրեփան և Անահիտ Մարությանների թիվ 3-54(ՎԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ **Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը սահմանել է համանման ու հավասարազոր իրավական կարգավորումներ, որի պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված վերը նշված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև ներկայումս գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի նկատմամբ** (տե՛ս «Շանթ Պլյուս» սահմանափակ պարասիստապովությունը ընկերությունն ընդդեմ Վարշամ Ղարիբյանի թիվ ԵԱԳԴ/1438/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.06.2021 թվականի որոշումը):

Գործի նոր քննության ընթացքում դատարանը, դատական ակտ կայացնելու նպատակով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա ներքին համոզմամբ գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, պետք է որոշի Բանկի միջնորդության մերժման կամ բավարարման հարցը՝ ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, մասնավորապես՝ պարզելով, թե կառավարչի կողմից համապատասխան լիազորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որքանով է խախտվել սնանկության վարույթի որևէ կողմի իրավունքը կամ օրինական շահը, կամ այդ խախտումը հանգեցրել կամ կարող էր հանգեցնել այնպիսի վնասի, որը պատճառվել է սնանկության վարույթի որևէ կողմին:

2) Բողոքը երկրորդ հիմքով անհիմն է՝ հեղույակ պարճատարանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որոշման կամ վճարման կարգադրության դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում գործն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ որոշման կամ վճարման կարգադրության դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը կարող է վարույթ ընդունվել այն դեպքում, երբ բացակայում են վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերը: Որպես վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու առանձին հիմք օրենսդիրը նախատեսել է նաև այն դեպքը, երբ բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել: Այսինքն՝ եթե առկա է բողոքի ընդունումը մերժելու մասին նման հիմք, ապա վերաքննիչ բողոքը չի կարող ընդունվել վարույթ, և դրա ընդունումը բոլոր դեպքերում ենթակա է մերժման:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկը 22.05.2020 թվականին Դատարան է ներկայացրել կառավարչի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին բողոք-միջնորդություն՝ դրա հիմքում դնելով այն, որ Դատարանը 15.01.2020 թվականին որոշում է կայացրել միջանկյալ բաշխման ծրագիրը փոփոխելու մասին, որն օրինական ուժի մեջ է մտել կայացման պահից, մինչդեռ կառավարիչ Արմենակ Ադամյանն այդ որոշումն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև այժմ բաշխում չի կատարել, կառավարիչ Արմենակ Ադամյանի կողմից

անգործության դրսևորումը և իր պարտականությունների ոչ պատշաճ կատարումը խախտում է Բանկի սեփականության իրավունքը: Դատարանի 11.06.2020 թվականի որոշմամբ մերժվել է Բանկի կողմից 22.05.2020 թվականին ներկայացված՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Արմենակ Ադամյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին բողոք-միջնորդությունը, իսկ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.09.2020 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.06.2020 թվականի «Միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 01.09.2021 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.09.2020 թվականի որոշման դեմ Բանկի բերած վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

Բանկը կրկին բողոք-միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Արմենակ Ադամյանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, որը Դատարանի 12.06.2020 թվականի որոշմամբ մերժվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.11.2020 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.06.2020 թվականի «Բողոք-միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ նաև այն պատճառաբանությամբ, որ Բանկի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիմնական հիմքն Ընկերության սնանկության գործով կառավարիչ Արմենակ Ադամյանի կողմից 15.01.2020 թվականի որոշմամբ սահմանված բաշխումները չիրականացնելն է, իսկ պահանջը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.05.2020 թվականի որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կառավարիչ Արմենակ Ադամյանի կողմից այդ որոշմամբ սահմանված բաշխումները չիրականացնելու ոչ իրավաչափ լինելը և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը, մինչդեռ Վերաքննիչ դատարանն արդեն իսկ տվել է կառավարչի կողմից միջանյալ բաշխման ծրագրով սահմանված միջոցների բաշխումը սահմանված ժամկետներում չիրականացնելու, այդ գործողությունը ոչ իրավաչափ գնահատելու և դրա հիման վրա վերջինիս լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ սպառիչ իրավական գնահատական, ուստի Դատարանի կողմից կայացված 12.06.2020 թվականի որոշումը այլևս ենթակա չէ վերանայման վերաքննության կարգով:

Բանկը 02.06.2020 թվականին Դատարան է ներկայացրել կառավարչի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին մեկ այլ բողոք-միջնորդություն՝ այս անգամ դրա հիմքում դնելով այն, որ 02.06.2020 թվականին ծանոթացել է գործի նյութերին և պարզել, որ գործի նյութերից բացակայում են սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվելիք ամենամսյա հաշվետվությունները, ուստի պարզ չէ, թե ինչպես են կառավարվել հատուկ հաշվին մուտք եղած դրամական միջոցները, որոնց ծավալը գերազանցում է 300.000.000 ՀՀ դրամը, արդյոք դրանք մշտապես եղել են հատուկ հաշվի վրա, թե՛ ոչ, արդյոք շուրջ մեկ տարի հատուկ հաշվին ավելի քան 120.000.000 ՀՀ դրամ պահելու արդյունքում գոյացել են տոկոսներ, թե՛ ոչ, ինչ է տեղի ունեցել աճուրդների մասնակցության վճարների և նախավճարների հետ: Դատարանը 05.06.2020 թվականի որոշմամբ մերժել է Բանկի կողմից ներկայացված վերը նշված բողոք-միջնորդությունը, իսկ Վերաքննիչ դատարանը 27.05.2021 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ Դատարանի 05.06.2020 թվականի որոշումը վերացրել է և կայացրել է նոր որոշում՝ Բանկի անունից ներկայացված միջնորդությունը՝ սնանկության գործով կառավարչի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, բավարարել է մասնակիորեն, ու Ընկերության սնանկության գործով կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են:

Վերը նշված փաստերի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքը, քանի որ չսպառնում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.09.2020 թվականի և 17.11.2020 թվականի որոշումները կայացվել են սույն՝ թիվ ԵԱԲԳ/0112/04/14

սնանկության գործով, սակայն դրանց կայացման առիթ հանդիսացած վերաքննիչ բողոքները չեն բերվել այն նույն հիմքով, որով բերվել է Վերաքննիչ դատարանի կողմից 27.05.2021 թվականին կայացված որոշման համար առիթ հանդիսացած վերաքննիչ բողոքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի և 364-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու ու ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից՝ Բանկի կողմից 02.06.2020 թվականին ներկայացված միջնորդության մերժման կամ բավարարման հարցը պարզելու նպատակով գործը ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.05.2021 թվականի որոշումը և գործը Բանկի կողմից 02.06.2020 թվականին ներկայացված միջնորդության մերժման կամ բավարարման հարցը պարզելու նպատակով ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ ԱՐԴ/0070/04/15
2021թ.

Մասնկության գործ թիվ
Նախագահող դատավոր՝

ԱՐԴ/0070/04/15
Գ. Խանդանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի հուլիսի 21-ին
գրավոր ընթացակարգով քննելով ըստ ՀՀ կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) դիմումի ընդդեմ անհատ ձեռնարկատեր
Ջոյա Մկրտչյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքն-
նիչ քաղաքացիական դատարանի 20.01.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը
մերժելու մասին» որոշման դեմ անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի վճռաբեկ բո-
ղոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյա-
նին ճանաչել սնանկ:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.06.2016 թվականի
վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018 թվականի
որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Ա. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան)
28.11.2019 թվականի «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտա-
վորեցնելու մասին» որոշմամբ անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի սնանկության

գործով կառավարիչ Մամվել Մանուկյանի միջնորդությունը բավարարվել է, և անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանը պարտավորեցվել է իրեն պատկանող գույքը ներկայացնել սնանկության գործով կառավարչին ու չխոչընդոտել իր գույքի գույքագրման աշխատանքների կատարմանը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.01.2020 թվականի որոշմամբ անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությանը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենք) 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ և 372-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ սնանկության դատարանները կարող են սնանկության գործով կառավարչի ներկայացրած ցանկացած միջնորդություն քննարկել առանց պարտապանի մասնակցության և դրա արդյունքում դատական ակտի հիման վրա նրան առաջադրել որոշակի պարտականություններ՝ առանց դատական ակտը նրան ուղարկելու ու այն բողոքարկելու հնարավորություն տալու, հակասում է ՀՀ Սահմանադրությանը և այլ օրենքներով պաշտպանվող անձի դատական պաշտպանության, արդար դատաքննության, իրավահավասարության ու մրցակցության հիմնարար իրավունքներին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ եթե օրենսդիրը նախատեսել և այդ կապակցությամբ գործին մասնակցող անձանց հնարավորություն է տվել բողոքարկելու սնանկության գործի ընթացքում կայացված որոշումները, ուստի սնանկության գործը քննող դատարանը պարտավոր է սնանկության վարույթի ընթացքում կայացված դատական ակտերն ուղարկելու կողմերին: Դրանից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը մերժելով բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը, իսկ դրա արդյունքում՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը, թույլ է տվել արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և իրավահավասարության հիմնարար իրավունքների ու ազատությունների էական խախտում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ այն դեպքերում, երբ սնանկության գործերի վարույթը չի կարգավորվում «Սնանկության մասին» ՀՀ օրենքով, ապա սնանկության վարույթի նկատմամբ կիրառելի են դառնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 20.01.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արճանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ

հողվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ նույն հողվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ և 372-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը կրկին հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պարզապես հարգելի համարելն ու բաց թողնված ժամկետը վերականգնելը կարող է մերժվել, եթե բողոքարկման ժամկետի բացթողումը պայմանավորված է դատարանի կողմից իր պարտականության ոչ պարզաճ կատարման հետ:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կանոնակնիցայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին ատյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան): Այն է՝ երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առնվազն երկու ատյանում լաված լինելու իրավունք: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի՝ օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը (*լրե՛ս, ի թիվս այլնի, Ժաննա Տերյանն ընդդեմ Վահան Տերյանի և Վահան Տերյանն ընդդեմ Ժաննա Տերյանի թիվ ԵԱԵԿ/0563/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.12.2018 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը: Ուղղված լինելով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների երաշխավորմանը՝ այդուհանդերձ, օրենսդրի կողմից սահմանված են բողոքարկման իրավունքի իրացման որոշակի պայմաններ, որոնցից են ժամկետային սահմանափակումները (*լրե՛ս «ՀՄԹ Ֆարինա»*)

ՄՊԸ-ի սանսկոթյան գործով կառավարիչ Տիգրան Մահակյանն ընդդեմ Գագիկ Դավթյանի թիվ ԿԴ1/0764/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2019 թվականի որոշումը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով բողոքարկման իրավունքի և դրա իրացման պայմաններին, արձանագրել է, որ (...) կամ բողոք ներկայացնելու իրավունքը պետք է իրացվի այն պահից սկսած, երբ համապատասխան անձը ձեռք է բերել իրական հնարավորություն ծանոթանալու դատարանի որոշման հետ, որը շոշափում է նրա իրավունքները կամ օրինական շահերը, կամ նրա համար առաջացնում է որոշակի հետևանքներ: (...) Դատական ծանուցումները համարվում են միջոց դատարանի և դատավարության մասնակիցների միջև փոխազդեցություն ստեղծելու համար և **ուղղված են դատավարության մասնակիցներին կայացված ակտերի մասին տեղեկացնելուն, ինչպես նաև նրանց՝ այդ ակտերը բողոքարկելու հնարավորություն տալուն:** Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի սահմանում դատական ակտերի հանձնման կոնկրետ եղանակ, ինչպես, օրինակ, պատվիրված նամակով ուղարկելն է: Սակայն միաժամանակ դատարանի որոշումն անձին պետք է հանձնված լինի այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա ստուգել ինչպես դատական ակտը փոխանցված լինելու հանգամանքը, այնպես էլ այն հանձնելու ստույգ օրը (*յրեն Ivanova and Ivashova v. Russia գործով Եվրոպական դատարանի 26.04.2017 թվականի վճիռը, կետեր 41, 45-46*):

Դատարանի մատչելիության իրավունքի դրսևորումներից է համարվում կայացված որոշումների մասին պատշաճ ծանուցում ստանալու իրավունքը, մասնավորապես այն դեպքերում, երբ բողոք բերելու իրավունքը սահմանափակված է որոշակի ժամկետներով (*յրեն Zavodnik v. Sloveńie գործով Եվրոպական դատարանի 21.08.2015 թվականի վճիռը, կետ 71*): Վերոշարադրյալ դիրքորոշումների լույսի ներքո ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ անձի բողոքարկման իրավունքը, հանդիսանալով դատարանի մատչելիության իրավունքի բաղկացուցիչ տարր, կարող է իրացվել այն դեպքում, երբ անձն իրական հնարավորություն է ձեռք բերել ծանոթանալու դատարանի որոշման հետ: Ներպետական օրենսդրությամբ դատական ակտը հրապարակելու, գործին մասնակցող անձանց հանձնելու և նրանց ուղարկելու ընթացակարգեր սահմանելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդում այդ միջոցներով ստեղծել բավարար հիմքեր և երաշխիքներ, որպեսզի անձինք կարողանան անխաթար կերպով օգտվելու իրենց դատական պաշտպանության իրավունքից: Ուստի ելնելով այդ նպատակներից՝ դատավարական նորմերով սահմանված՝ դատական ակտը հրապարակելու և գործին մասնակցող անձանց հանձնելու կամ նրանց ուղարկելու ընթացակարգերը պետք է ուղղված լինեն պաշտպանության միջոցներն ավելի հասանելի դարձնելուն, այլ ոչ դրանք ոչ իրավաչափորեն սահմանափակելուն: ՀՀ վճռաբեկ դատարանը, ամփոփելով Եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումները, եզրահանգել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածը հստակ չի սահմանում, թե դատարանի կայացրած ակտն ինչ կերպով պետք է հանձնվի անձին, սակայն միանշանակ է այն, որ դատական ակտը պետք է հանձնվի այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա իրապես պարզելու ինչպես դատական ակտի՝ փոխանցված լինելու հանգամանքը, այնպես էլ այն հանձնելու ստույգ օրը: Դատական ակտի հանձնման կոնկրետ եղանակ չսահմանելով հանդերձ՝ Կոնվենցիան և դրա կիրառումը պահանջում են, որպեսզի անձի բողոքարկման իրավունքի իրացումը սերտորեն փոխկապակցված լինի դատարանի կայացրած ակտին ծանոթանալու իրական հնարավորության հետ: Այսինքն՝ դատավարական նորմերը պետք է սահմանվեն այնպես, որպեսզի գործին մասնակցող անձանց համար իրական հնարավորություն ապահովեն տիրապետելու դատական ակտի բովանդակությանը, և չարդարացված կերպով չսահմանափակվի նրանց բողոք բերելու իրավունքը: Դրա հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ հանդիսանալով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների բաղադրատարրերից մեկը՝ բողոքարկման իրավունքը կարող է սահմանափակվել պետության կողմից, սակայն այդ սահմանափակումները՝ ներառյալ ժամկետայինները, չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը (*յրեն «Եղիցի Լույս-ԲՀ»*)

ՄՊԸ-ն ընդդեմ «Արմինե» ԱԿ-ի թիվ ԿԴ/0412/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.05.2019 թվականի որոշումը):

Պարտապան անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու վերաբերյալ վերջինիս սնանկության գործով կառավարիչ Սամվել Մանուկյանի կողմից միջնորդություն հարուցելու ժամանակ գործած խմբագրությամբ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ քան նախատեսված չէ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Անդրադառնալով վերոգրյալ իրավանորմերի վերլուծությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ մինչև 15.04.2020 թվականը գործող իրավակարգավորման համաձայն՝ դատարաններում սնանկության գործերի վարումն իրականացվում էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՀՀ դատական օրենսգրքով և «Մանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սնանկության վարույթի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը կիրառվում են այնպեսով, որքանով «Մանկության մասին» ՀՀ օրենքի նորմերով այլ կանոններ նախատեսված չեն: Այսինքն՝ այն պարագայում, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով նախատեսված է այլ կանոն, սակայն «Մանկության մասին» ՀՀ օրենքի նորմերը նշված հանգամանքի նկատմամբ սահմանել են այլ մոտեցումներ, ապա պետք է կիրառվի մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մանկության մասին» ՀՀ օրենքի դրույթը (յրեն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ընդդեմ Անալյա Բեզարյանի թիվ ՄՆԿ/0104/04/19 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.05.2020 թվականի որոշումը):

Վերը նշվածը հաշվի առնելով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումների բողոքարկման ժամկետներին: Միաժամանակ նկատի ունենալով, որ սնանկության գործի քննության ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մանկության մասին» ՀՀ օրենքով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դատավարական ժամկետները բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և դրանք վերականգնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումներին: Այսպես.

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, վերաքննության կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով: Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձինք

գրկվում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը, պարզելով, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, որոշում է կայացնում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանն առանձին ակտի ձևով կայացնում է այն որոշումները, որոնք ենթակա են բողոքարկման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի առանձին ակտի ձևով կայացված որոշումը գործին մասնակցող անձանց հանձնվում է առձեռն, իսկ դրա անհնարինության դեպքում նրանց է ուղարկվում կայացման պահից ետոյա ժամկետում, եթե նույն օրենսգրքով այլ ժամկետ սահմանված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով, այն կայացվելու օրվանից 15 օրյա ժամկետում, բացառություն է այն դեպքը, երբ դատարանը հարգելի է համարում նշված ժամկետի բաց թողումը: Ընդ որում օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանելով, որ առանձին ակտի տեսքով կայացվող որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե այլ բան սահմանված չէ օրենքով, միաժամանակ դատարանի համար սահմանել է պարտականություն այդ որոշումները կայացման պահից ետոյա ժամկետում ուղարկել **գործին մասնակցող անձանց**, եթե մինչ այդ առձեռն նրանց չի հանձնվել: Այսինքն՝ օրենսդիրը կարևորել է **դատական ակտի օրինակը գործին մասնակցող անձանց կողմից ստանալու հանգամանքը**, ինչն ուղղված է վերջիններիս բողոքարկման իրավունքի իրացման իրական հնարավորության երաշխավորմանը:

Վճռաբեկ դատարանի նշված հետևությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ անձի բողոքարկման իրավունքը պետք է ուղեկցվի բավարար երաշխիքներով, որոնք հնարավորություն կտան դատական ակտը բողոքարկող անձանց արդյունավետ օգտվելու վերադաս ատյանի մատչելիությունից, ներառյալ նրանց կողմից հիմնավոր բողոքներ ներկայացնելու հնարավորության տրամադրումը:

Վճռաբեկ դատարանը նաև փաստում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանվել է դատավարական ժամկետների բաց թողման և դրանք վերականգնելու կարգը: Մասնավորապես բոլոր այն դեպքերում, երբ դատավարական ժամկետները գործին մասնակցող անձանց կողմից բաց են թողնվել հարգելի պատճառներով, ապա դատարանն իրավասու է բավարարել այդ ժամկետը վերականգնելու վերաբերյալ գործին մասնակցող անձի միջնորդությունը: Հարկ է նաև նկատել, որ օրենսդրի կողմից դատավարական ժամկետի բաց թողման պատճառի հարգելի լինելու հիմքերն արդարացիորեն չեն նշվել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական ֆունկցիան թողնելով դատարանների հայեցողությանը: Դա պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր դեպքում դատավարական ժամկետի բաց թողման պատճառը կարող է լինել տարբեր, ինչն էլ ենթակա է գնահատման ելնելով յուրաքանչյուր գործի հանգամանքներից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արձանագրել է, որ ժամկետը բաց թողնելու պատճառի հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները, ինչպիսիք են օրինակ՝ ֆորսմաժորային դեպքերը (*լրարեկային աղեկները, արտակարգ իրավիճակը*) (...), իսկ սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը (*լրեն «Հայրիզնեսարանկ» ՓԲԸ-ին ընդդեմ «ՄԻԼԼԱՐ» ՄԳԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանը իր 02.02.2021 թվականի թիվ ՄԴՈ-1575 որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, ինչպես նաև 391-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցին, արձանագրել է, որ «(...) Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթների վերլուծությունից բխում է, որ դատարանը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդության քննության արդյունքում հայեցողական լիազորություն չունի: Այն բոլոր դեպքերում, երբ դատարանը պարզի, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, իրավական հետևանքը մեկն է՝ պետք է որոշում կայացվի բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին: Օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասում տեղ գտած «որոշում է կայացնում» ձևակերպումը ենթադրում է դատարանի ոչ թե հայեցողությունը, այլ կոնկրետ որոշում կայացնելու պարտականությունը: Բացի դրանից, հաշվի առնելով նաև Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներով (ՄԴՈ-1052, ՄԴՈ-1249) արտահայտված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ այն բոլոր դեպքերում, երբ բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից (նրա կամքից) անկախ պատճառներով, իրավունքի ուժով (*ex jure*) բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը, ձևավորված այդպիսի իրավալիքառ պրակտիկայի պայմաններում բացառվում է նաև դատարանների կողմից «հարգելի պատճառի» գնահատման այնպիսի ազատությունը, ինչը կհանգեցնի բողոք բերող անձի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետը հարգելի չհամարելուն»:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ Մամվել Մանուկյանը, նպատակ ունենալով կազմակերպելու պարտապանի գույքի գույքագրում, դատական նիստից դուրս միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ պահանջելով պարտապանին պարտավորեցնել չխոչընդոտել գույքի գույքագրմանը և գույքագրման համար իրեն ներկայացնել նրան սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ միջնորդության հիմքում դնելով այն հանգամանքները, որ պարտապանը նշանակված օրը գույքագրմանը չի ներկայացել և չի ներկայացրել իրեն պատկանող գույքը:

Դատարանը 28.11.2019 թվականի «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին» որոշմամբ կառավարչի միջնորդությունը բավարարել է, և պարտապան անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանին պարտավորեցրել է իրեն պատկանող գույքը ներկայացնել սնանկության գործով կառավարչին ու չխոչընդոտել իր գույքի գույքագրման աշխատանքների կատարմանը: Սույն գործում առկա չէ որևէ ապացույց վերը նշված որոշումը անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանին ուղարկելու վերաբերյալ, ինչպես նաև այդ որոշումը վերջինիս կողմից ստանալու վերաբերյալ:

Նշված որոշման դեմ 27.12.2019 թվականին փոստային եղանակով պարտապան անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, միաժամանակ միջնորդելով՝ բողոք բերելու համար բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի

համարելու և այն վերականգնելու մասին՝ պատճառաբանելով, որ ինքը միջնորդության քննարկմանը չի մասնակցել, դրա արդյունքում կայացված որոշումն իրեն չի ուղարկվել, որի հետևանքով ինքը գրկվել է սահմանված ժամկետում բողոք բերելու հնարավորությունից, և միայն հարկադիր կատարողի որոշումը 19.12.2019 թվականին ստանալուց հետո է տեղեկացվել Դատարանի որոշման մասին:

Վերաքննիչ դատարանը 20.01.2020 թվականին որոշում է կայացրել անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին՝ պատճառաբանելով, որ «ՀՀ օրենսդրությանը որևէ իրավանորմ, որը պարտավորեցնում է սնանկության կառավարչին պարտապահին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին միջնորդություն ներկայացնելիս, իսկ սնանկության դատարանին՝ ներկայացված միջնորդությունը քննարկելիս այդ մասին ծանուցել նաև պարտապահին, ավելին՝ նման միջնորդությունը քննարկման առարկա դարձնել դատական նիստում և պարտապահի պարտադիր մասնակցությամբ, որից հետո միջնորդության քննության արդյունքում կայացված դատական ակտը պարտադիր կարգով առաքել նաև պարտապահին, առկա չէ: Հետևաբար՝ արդեն իսկ ասվածի հիմքով ներկայացված պատճառաբանությամբ 28.11.2019 թվականի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքը 27.12.2019 թվականին ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը հարգելի համարելու բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն և չեն կարող բողոք բերելու համար սահմանված ժամկետը բացթողնելու պատճառը հարգելի համարելու և այն վերականգնելու հիմք հանդիսանալ», «նման պայմաններում, հիշատակված փաստական հանգամանքների և վկայակոչված իրավանորմների լույսի ներքո Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմքերն օբյեկտիվորեն բացակայում են, ուստի միջնորդությունը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքի ընդունումը ևս պետք է մերժել»:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են և չէին կարող հիմք հանդիսանալ ինչպես հարուցված միջնորդությունը մերժելու, այնպես էլ դրա արդյունքում վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու համար, քանի որ տվյալ դեպքում Դատարանն անտեսելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 4-րդ մասը, իր կողմից կայացված որոշման օրինակը չի ուղարկել գործին մասնակցող անձ պարտապահին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ երբ գործում բացակայում է Դատարանի 28.11.2019 թվականի որոշումը անհատ ձեռնարկատեր պարտապահ Ջոյա Մկրտչյանին ուղարկած լինելու և այն նրա կողմից ստացված լինելու փաստը հաստատող որևէ ապացույց, ապա Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու փուլում պետք է հիմք ընդուներ ու հավաստի համարեր իրեն հայտնի միակ տեղեկությունը, այն է՝ բողոք ներկայացրած անձի փաստարկն այն մասին, որ Ջոյա Մկրտչյանը Դատարանի 28.11.2019 թվականի որոշման մասին տեղեկացել է միայն հարկադիր կատարողի որոշումը 19.12.2019 թվականին ստանալուց հետո:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոք բերած անձը Դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու օրենքով սահմանված ժամկետը բաց է թողել իր կամքից անկախ հանգամանքով՝ դատարանի կողմից իր պարտականությունը ոչ պատշաճ կատարելու, այն է՝ դատական ակտը գործին մասնակցող անձին հասու չդարձնելու հետևանքով, որպիսի պայմաններում բողոքաբերը չի կարող կրել դրա բացասական հետևանքը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով բողոքաբերը Դատարանի 28.11.2019 թվականի որոշմանը ծանոթացել է 19.12.2019 թվականին, և դատական ակտը նրան ուշ հասու լինելու օրվանից, օրենքով սահմանված 15-օրյա ժամկետում, այն է՝ 27.12.2019 թվականին՝ փոստային ծառայության միջոցով ներկայացրել է վերաքննիչ բողոք, միաժամանակ միջնորդելով հարգելի համարել բաց թողնված ժամկետը:

Մինչդեռ վերը նշված հանգամանքները Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ հետազոտման և համարժեք գնահատման չեն արժանացել:

Վերոշարադրյալը հաշվի առնելով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհատ ձեռնարկատեր Զոյա Մկրտչյանի կողմից ներկայացված միջնորդությունը ենթակա էր բավարարման, և բաց թողնված ժամկետը Վերաքննիչ դատարանի կողմից պետք է վերականգնվեր իրավունքի ուժով (ex jure):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասի և 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ ոչ իրավաչափորեն մերժելով վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողման պատճառները հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը, սահմանափակել է Զոյա Մկրտչյանի՝ բողոքարկման իրավունքի իրականացման հնարավորությունը՝ արդյունքում զրկելով նրան վերադաս դատարանի մատչելիության իրավունքից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 20.01.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.01.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ԱՐԴ/0070/04/15 սնանկության գործով 21.07.2021
թվականին կայացված որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ

21.07.2021 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2021 թվականի հուլիսի 21-ին գրավոր ընթացակարգով քննելով անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.01.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) դիմումի ընդդեմ անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.01.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական մասի մի մասի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքն այդ մասի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապարմություն նշել է հերկյալը

«Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանին ճանաչել սնանկ:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.06.2016 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018 թվականի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Ա. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 28.11.2019 թվականի «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին» որոշմամբ անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ Մամվել Մանուկյանի միջնորդությունը բավարարվել է, և անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանը պարտավորեցվել է իրեն պատկանող գույքը ներկայացնել սնանկության գործով կառավարչին ու չխոչընդոտել իր գույքի գույքագրման աշխատանքների կատարմանը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.01.2020 թվականի որոշմամբ անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել»:

2. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հերկյալը

«Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»

եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենք) 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ և 372-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ սնանկության դատարանները կարող են սնանկության գործով կառավարչի ներկայացրած ցանկացած միջնորդություն քննարկել առանց պարտապանի մասնակցության և դրա արդյունքում դատական ակտի հիման վրա նրան առաջադրել որոշակի պարտականություններ՝ առանց դատական ակտը նրան ուղարկելու ու այն բողոքարկելու հնարավորություն տալու, հակասում է ՀՀ Սահմանադրությամբ և այլ օրենքներով պաշտպանվող անձի դատական պաշտպանության, արդար դատաքննության, իրավահավասարության ու մրցակցության հիմնարար իրավունքներին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ եթե օրենսդիրը նախատեսել և այդ կապակցությամբ գործին մասնակցող անձանց հնարավորություն է տվել բողոքարկելու սնանկության գործի ընթացքում կայացված որոշումները, ուստի սնանկության գործը քննող դատարանը պարտավոր է սնանկության վարույթի ընթացքում կայացված դատական ակտերն ուղարկելու կողմերին: Դրանից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը մերժելով բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը, իսկ դրա արդյունքում՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը, թույլ է տվել արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և իրավահավասարության հիմնարար իրավունքների ու ազատությունների էական խախտում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ այն դեպքերում, երբ սնանկության գործերի վարույթը չի կարգավորվում «Մասնկության մասին» ՀՀ օրենքով, ապա սնանկության վարույթի նկատմամբ կիրառելի են դառնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 20.01.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը»:

3. Վճռաբեկ դատարանը որպես Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններ և եզրահանգումներ նշել է հետևյալը

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ և 372-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը կրկին հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելն ու բաց թողնված ժամկետը վերականգնելը կարող է մերժվել, եթե բողոքարկման ժամկետի բացթողումը պայմանավորված է դատարանի կողմից իր պարտականության ոչ պարզաճ կարարման հետ:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կանովենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին ատյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան): Այն է՝ երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առավելագույնը երկու ատյանում լաված լինելու իրավունք: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի՝ օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը (*լրե՛ս, ի թիվս այլնի, Ֆաննա Տերյանն ընդդեմ Վահան Տերյանի և Վահան Տերյանն ընդդեմ Ֆաննա Տերյանի թիվ ԵԱՆԿ/0563/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.12.2018 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական ակտերի բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը: Ուղղված լինելով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների երաշխավորմանը՝ այդուհանդերձ, օրենսդրի կողմից սահմանված են բողոքարկման իրավունքի իրացման որոշակի պայմաններ, որոնցից են ժամկետային սահմանափակումները (*լրե՛ս «ՀՄԻ Ֆարինա» ՄԳԸ-ի սնանկության գործով կատարիչ Տիգրան Սահակյանն ընդդեմ Գագիկ Դավթյանի թիվ ԿԴԼ/0764/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2019 թվականի որոշումը*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով բողոքարկման իրավունքի և դրա իրացման պայմաններին, արձանագրել է, որ (...) կամ բողոք ներկայացնելու իրավունքը պետք է իրացվի այն պահից սկսած, երբ համապատասխան անձը ձեռք է բերել իրական հնարավորություն ծանոթանալու դատարանի որոշման հետ, որը շոշափում է նրա իրավունքները կամ օրինական շահերը, կամ նրա համար առաջացնում է որոշակի հետևանքներ: (...) Դատական ծանուցումները համարվում են միջոց դատարանի և դատավարության մասնակիցների միջև փոխազդեցություն ստեղծելու համար և ուղղված են դատավարության մասնակիցներին կայացված ակտերի մասին տեղեկացնելուն, ինչպես նաև նրանց՝ այդ ակտերը բողոքարկելու հնարավորություն տալուն: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի սահմանում դատական ակտերի հանձնման կոնկրետ եղանակ, ինչպես, օրինակ, պատվիրված

նամակով ուղարկելն է: Սակայն միաժամանակ դատարանի որոշումն անձին պետք է հանձնված լինի այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա ստուգել ինչպես դատական ակտը փոխանցված լինելու հանգամանքը, այնպես էլ այն հանձնելու ստույգ օրը (*լրեն՝ Ivanova and Ivashova v. Russia գործով Եվրոպական դատարանի 26.04.2017 թվականի վճիռը, կետեր 41, 45-46*):

Դատարանի մատչելիության իրավունքի դրսևորումներից է համարվում կայացված որոշումների մասին պատշաճ ծանուցում ստանալու իրավունքը, մասնավորապես այն դեպքերում, երբ բողոք բերելու իրավունքը սահմանափակված է որոշակի ժամկետներով (*լրեն՝ Zavodnik v. Sloveńie գործով Եվրոպական դատարանի 21.08.2015 թվականի վճիռը, կետ 71*): Վերջարարողյալ դիրքորոշումների լույսի ներքո ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ անձի բողոքարկման իրավունքը, հանդիսանալով դատարանի մատչելիության իրավունքի բաղկացուցիչ տարր, կարող է իրացվել այն դեպքում, երբ անձն իրական հնարավորություն է ձեռք բերել ծանոթանալու դատարանի որոշման հետ: Ներպետական օրենսդրությամբ դատական ակտը հրապարակելու, գործին մասնակցող անձանց հանձնելու և նրանց ուղարկելու ընթացակարգեր սահմանելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդում այդ միջոցներով ստեղծել բավարար հիմքեր և երաշխիքներ, որպեսզի անձինք կարողանան անխաթար կերպով օգտվելու իրենց դատական պաշտպանության իրավունքից: Ուստի ելնելով այդ նպատակներից՝ դատավարական նորմերով սահմանված՝ դատական ակտը հրապարակելու և գործին մասնակցող անձանց հանձնելու կամ նրանց ուղարկելու ընթացակարգերը պետք է ուղղված լինեն պաշտպանության միջոցներն ավելի հասանելի դարձնելուն, այլ ոչ դրանք ոչ իրավաչափորեն սահմանափակելուն: ՀՀ վճռաբեկ դատարանը, ամփոփելով Եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումները, եզրահանգել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածը հստակ չի սահմանում, թե դատարանի կայացրած ակտն ինչ կերպով պետք է հանձնվի անձին, սակայն միանշանակ է այն, որ դատական ակտը պետք է հանձնվի այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա իրապես պարզելու ինչպես դատական ակտի՝ փոխանցված լինելու հանգամանքը, այնպես էլ այն հանձնելու ստույգ օրը: Դատական ակտի հանձնման կոնկրետ եղանակ չսահմանելով հանդերձ՝ Կոնվենցիան և դրա կիրառումը պահանջում են, որպեսզի անձի բողոքարկման իրավունքի իրացումը սերտորեն փոխկապակցված լինի դատարանի կայացրած ակտին ծանոթանալու իրական հնարավորության հետ: Այսինքն՝ դատավարական նորմերը պետք է սահմանվեն այնպես, որպեսզի գործին մասնակցող անձանց համար իրական հնարավորություն ապահովեն տիրապետելու դատական ակտի բովանդակությանը, և չարդարացված կերպով չսահմանափակվի նրանց բողոք բերելու իրավունքը: Դրա հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ հանդիսանալով դատական պաշտպանության և արդար դատաքնության հիմնական իրավունքների բաղադրատարրերից մեկը՝ բողոքարկման իրավունքը կարող է սահմանափակվել պետության կողմից, սակայն այդ սահմանափակումները՝ ներառյալ ժամկետայինները, չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը (*լրեն՝ «Եղիցի Լույս-ԲՀ» ՄՊԸ-ն ընդդեմ «Արմինե» ԱԿ-ի թիվ ԿԴ/0412/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.05.2019 թվականի որոշումը*):

Պարտապան անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու վերաբերյալ վերջինիս սնանկության գործով կառավարիչ Սամվել Մանուկյանի կողմից միջնորդություն հարուցելու ժամանակ գործած խմբագրությամբ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Անդրադառնալով վերոգրյալ իրավանորմերի վերլուծությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ մինչև 15.04.2020 թվականը գործող իրավակարգավորման համաձայն՝ դատարաններում սնանկության գործերի վարումն իրականացվում էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՀՀ դատական օրենսգրքով և «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սնանկության վարույթի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը կիրառվում են այնքանով, որքանով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերով այլ կանոններ նախատեսված չեն: Այսինքն՝ այն պարագայում, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով նախատեսված է այլ կանոն, սակայն «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերը նշված հանգամանքի նկատմամբ սահմանել են այլ մոտեցումներ, ապա պետք է կիրառվի մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի դրույթը (*տե՛ս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ընդդեմ Անայյա Բեգարյանի թիվ ՄԵԿ/0104/04/19 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.05.2020 թվականի որոշումը*):

Վերը նշվածը հաշվի առնելով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումների բողոքարկման ժամկետներին: Միաժամանակ նկատի ունենալով, որ սնանկության գործի քննության ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դատավարական ժամկետները բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և դրանք վերականգնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումներին: Այսպես.

Մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, վերաքննության կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով: Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձինք զրկվում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը, պարզելով, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, որոշում է կայացնում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանն առանձին ակտի ձևով կայացնում է այն որոշումները, որոնք ենթակա են բողոքարկման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի առանձին ակտի ձևով կայացված որոշումը գործին մասնակցող անձանց հանձնվում է առձեռն, իսկ դրա անհնարինության դեպքում նրանց է ուղարկվում կայացման պահից ետոյա ժամկետում, եթե նույն օրենսգրքով այլ ժամկետ սահմանված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով, այն կայացվելու օրվանից՝ 15 օրյա ժամկետում, բացառություն է այն դեպքը, երբ դատարանը հարգելի է համարում նշված ժամկետի բաց թողումը: Ընդ որում օրենդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանելով, որ առանձին ակտի տեսքով կայացվող որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե այլ բան սահմանված չէ օրենքով, միաժամանակ դատարանի համար սահմանել է պարտականություն այդ որոշումները կայացման պահից ետոյա ժամկետում ուղարկել **գործին մասնակցող անձանց**, եթե մինչ այդ առձեռն նրանց չի հանձնվել: Այսինքն՝ օրենսդիրը կարևորել է **դատական ակտի օրինակը գործին մասնակցող անձանց կողմից ստանալու հանգամանքը**, ինչն ուղղված է վերջիններիս բողոքարկման իրավունքի իրացման իրական հնարավորության երաշխավորմանը:

Վճռաբեկ դատարանի նշված հետևությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ անձի բողոքարկման իրավունքը պետք է ուղեկցվի բավարար երաշխիքներով, որոնք հնարավորություն կտան դատական ակտը բողոքարկող անձանց արդյունավետ օգտվելու վերադաս ատյանի մատչելիությունից, ներառյալ նրանց կողմից հիմնավոր բողոքներ ներկայացնելու հնարավորության տրամադրումը:

Վճռաբեկ դատարանը նաև փաստում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանվել է դատավարական ժամկետների բաց թողման և դրանք վերականգնելու կարգը: Մասնավորապես բոլոր այն դեպքերում, երբ դատավարական ժամկետները գործին մասնակցող անձանց կողմից բաց են թողնվել հարգելի պատճառներով, ապա դատարանն իրավասու է բավարարել այդ ժամկետը վերականգնելու վերաբերյալ գործին մասնակցող անձի միջնորդությունը: Հարկ է նաև նկատել, որ օրենսդրի կողմից դատավարական ժամկետի բաց թողման պատճառի հարգելի լինելու հիմքերն արդարացիորեն չեն նշվել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական ֆունկցիան թողնելով դատարանների հայեցողությանը: Դա պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր դեպքում դատավարական ժամկետի բաց թողման պատճառը կարող է լինել տարբեր, ինչն էլ ենթակա է գնահատման ելնելով յուրաքանչյուր գործի հանգամանքներից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արձանագրել է, որ ժամկետը բաց թողնելու պատճառի հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները, ինչպիսիք են օրինակ՝ ֆորսմաժորային դեպքերը (*լարերային աղեկները, արտակարգ իրավիճակը*) (...), իսկ սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը (*լրեն «Հայրիզնեսարանկ» ՓԲԸ-ին ընդդեմ «ՄԻԼԼԱՐ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԿ/2628/02/13 ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանը իր 02.02.2021 թվականի թիվ ՍԴՈ-1575 որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, ինչպես նաև 391-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցին, արձանագրել է, որ «(...) Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի

դրույթների վերլուծությունից բխում է, որ դատարանը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդության քննության արդյունքում հայեցողական լիազորություն չունի: Այն բոլոր դեպքերում, երբ դատարանը պարզի, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, իրավական հետևանքը մեկն է՝ պետք է որոշում կայացվի բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին: Օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասում տեղ գտած «որոշում է կայացնում» ձևակերպումը ենթադրում է դատարանի ոչ թե հայեցողությունը, այլ կոնկրետ որոշում կայացնելու պարտականությունը: Բացի դրանից, հաշվի առնելով նաև Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներով (ՄԴՌ-1052, ՄԴՌ-1249) արտահայտված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ այն բոլոր դեպքերում, երբ բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից (սրա կամքից) անկախ պատճառներով, իրավունքի ուժով (ex jure) բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը, ձևավորված այդպիսի իրավակիրառ պրակտիկայի պայմաններում բացառվում է նաև դատարանների կողմից «հարգելի պատճառի» գնահատման այնպիսի ազատությունը, ինչը կհանգեցնի բողոք բերող անձի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետը հարգելի չհամարելուն»:

Վճուրբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ Սամվել Մանուկյանը, նպատակ ունենալով կազմակերպելու պարտապանի գույքի գույքագրում, դատական նիստից դուրս միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ պահանջելով պարտապանին պարտավորեցնել չխոչընդոտել գույքի գույքագրմանը և գույքագրման համար իրեն ներկայացնել նրան սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ միջնորդության հիմքում դնելով այն հանգամանքները, որ պարտապանը նշանակված օրը գույքագրմանը չի ներկայացել և չի ներկայացրել իրեն պատկանող գույքը:

Դատարանը 28.11.2019 թվականի «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին» որոշմամբ կառավարչի միջնորդությունը բավարարել է, և պարտապան անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանին պարտավորեցրել է իրեն պատկանող գույքը ներկայացնել սնանկության գործով կառավարչին ու չխոչընդոտել իր գույքի գույքագրման աշխատանքների կատարմանը: Սույն գործում առկա չէ որևէ ապացույց վերը նշված որոշումը անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանին ուղարկելու վերաբերյալ, ինչպես նաև այդ որոշումը վերջինիս կողմից ստանալու վերաբերյալ:

Նշված որոշման դեմ 27.12.2019 թվականին փոստային եղանակով պարտապան անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, միաժամանակ միջնորդելով՝ բողոք բերելու համար բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին՝ պատճառաբանելով, որ ինքը միջնորդության քննարկմանը չի մասնակցել, դրա արդյունքում կայացված որոշումն իրեն չի ուղարկվել, որի հետևանքով ինքը գրկվել է սահմանված ժամկետում բողոք բերելու հնարավորությունից, և միայն հարկադիր կատարողի որոշումը 19.12.2019 թվականին ստանալուց հետո է տեղեկացվել Դատարանի որոշման մասին:

Վերաքննիչ դատարանը 20.01.2020 թվականին որոշում է կայացրել անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին՝ պատճառաբանելով, որ «ՀՀ օրենսդրությամբ որևէ իրավանորմ, որը պարտավորեցնում է սնանկության կառավարչին պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին միջնորդություն ներկայացնելիս, իսկ սնանկության դատարանին՝ ներկայացված միջնորդությունը քննարկելիս այդ մասին ծանուցել նաև պարտապանին, ավելին՝ նման միջնորդությունը քննարկման առարկա դարձնել դատական նիստում և պարտապանի պարտադիր մասնակցությամբ, որից հետո միջնորդության քննության արդյունքում կայացված դատական ակտը պարտադիր կարգով առաքել

նաև պարտապանին, առկա չէ: Հետևաբար՝ արդեն իսկ ասվածի հիմքով ներկայացված պատճառաբանությանը 28.11.2019 թվականի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքը 27.12.2019 թվականին ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը հարգելի համարելու բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն և չեն կարող բողոք բերելու համար սահմանված ժամկետը բացթողնելու պատճառը հարգելի համարելու և այն վերականգնելու հիմք հանդիսանալ», «նման պայմաններում, հիշատակված փաստական հանգամանքների և վկայակոչված իրավանորմերի յույսի ներքո Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմքերն օբյեկտիվորեն բացակայում են, ուստի միջնորդությունը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքի ընդունումը ևս պետք է մերժել»:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են և չէին կարող հիմք հանդիսանալ ինչպես հարուցված միջնորդությունը մերժելու, այնպես էլ դրա արդյունքում վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու համար, քանի որ տվյալ դեպքում Դատարանն անտեսելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 4-րդ մասը, իր կողմից կայացված որոշման օրինակը չի ուղարկել գործին մասնակցող անձ պարտապանին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ երբ գործում բացակայում է Դատարանի 28.11.2019 թվականի որոշումը անհատ ձեռնարկատեր պարտապան Ջոյա Մկրտչյանին ուղարկված լինելու և այն նրա կողմից ստացված լինելու փաստը հաստատող որևէ ապացույց, ապա Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու փուլում պետք է հիմք ընդուներ ու հավաստի համարեր իրեն հայտնի միակ տեղեկությունը, այն է՝ բողոք ներկայացրած անձի փաստարկն այն մասին, որ Ջոյա Մկրտչյանը Դատարանի 28.11.2019 թվականի որոշման մասին տեղեկացել է միայն հարկադիր կատարողի որոշումը 19.12.2019 թվականին ստանալուց հետո:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոք բերած անձը Դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու օրենքով սահմանված ժամկետը բաց է թողել իր կամքից անկախ հանգամանքով՝ դատարանի կողմից իր պարտականությունը ոչ պատշաճ կատարելու, այն է՝ դատական ակտը գործին մասնակցող անձին հասու չդարձնելու հետևանքով, որպիսի պայմաններում բողոքաբերը չի կարող կրել դրա բացասական հետևանքը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով բողոքաբերը Դատարանի 28.11.2019 թվականի որոշմանը ծանոթացել է 19.12.2019 թվականին, և դատական ակտը նրան ուշ հասու լինելու օրվանից, օրենքով սահմանված 15-օրյա ժամկետում, այն է՝ 27.12.2019 թվականին՝ փոստային ծառայության միջոցով ներկայացրել է վերաքննիչ բողոք, միաժամանակ միջնորդելով հարգելի համարել բաց թողնված ժամկետը:

Մինչդեռ վերը նշված հանգամանքները Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ հետազոտման և համարժեք գնահատման չեն արժանացել:

Վերոշարադրյալը հաշվի առնելով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի կողմից ներկայացված միջնորդությունը ենթակա էր բավարարման, և բաց թողնված ժամկետը Վերաքննիչ դատարանի կողմից պետք է վերականգնվեր իրավունքի ուժով (ex jure):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասի և 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ ոչ իրավաչափորեն մերժելով վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողնման պատճառները հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը, սահմանափակել է Ջոյա Մկրտչյանի՝ բողոքարկման իրավունքի իրականացման հնարավորությունը՝ արդյունքում գրկելով նրան վերադաս դատարանի անաչելիության իրավունքից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով վերաքննիչ դատարանի 20.01.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար»:

Վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանու, համաձայն զինելով վերը նշված որոշման պատճառաբանական մասի մի մասում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արքայահայրված կարծիքի հետ, շարադրում եմ իմ հարուկ կարծիքը դրա վերաբերյալ:

Այսպես՝

Կարծում եմ, որ սույն բողոքի քննության շրջանակներում վճռաբեկ դատարանը պետք է անդրադառնար *սնանկության գործի վարումը (սնանկության գործի քննությունը) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով իրականացնելու ինդիքին այն պարագայում, երբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված չեն սնանկության գործի վարման (սնանկության գործի քննության) համապարաստիսան կանոններ:*

Նշված հարցադրմանը պատասխանելու նպատակից ելնելով՝ որոշման պատճառաբանական մասը պետք է ունենար հետևյալ բովանդակությունը.

Պարտապան անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու վերաբերյալ վերջինիս սնանկության գործով կառավարիչ Սամվել Մանուկյանի կողմից միջնորդություն հարուցելու ժամանակ գործած խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Անդրադառնալով վերոգրյալ իրավանդությունների վերլուծությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ մինչև 15.04.2020 թվականը գործող իրավակարգավորման համաձայն՝ դատարաններում սնանկության գործերի վարումն իրականացվում էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՀՀ դատական օրենսգրքով և «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սնանկության վարույթի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը կիրառվում են այնքանով, որքանով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերով այլ կանոններ նախատեսված չեն: Այսինքն՝ այն պարագայում, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով նախատեսված է այլ կանոն, սակայն «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերը նշված հանգամանքի նկատմամբ սահմանել են այլ մոտեցումներ, ապա պետք է կիրառվի մինչև 15.04.2020 թվականը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի դրույթը (յրեն ՀՀ պետական եկամուտների կուիրիբի ընդուն Անայա Բեգարյանի թիվ ՄՆԿ/0104/04/19 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.05.2020 թվականի որոշումը):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը կազմակերպում է գույքագրում (...):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, կառավարիչն իրականացնում է պարտապանի գույքի գույքագրում: (...)

Պարտապանի գույքի գույքագրման մասին կառավարիչը ծանուցում է խորհրդին, իսկ այն ձևավորված չլինելու դեպքում՝ առավել մեծ պահանջներ ունեցող 5 հայտնի պարտատերերին: (...)

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գույքագրման արդյունքներն ամփոփվում են գույքագրման ակտում, որը ստորագրում են կառավարիչը և գույքագրմանը մասնակցած պարտապանի ներկայացուցիչը: Պարտապանի ներկայացուցչի ստորագրությունը վկայում է, որ նա ներկա է եղել գույքագրմանը և երաշխավորում է, որ պարտապանին պատկանող ամբողջ գույքը գույքագրվել է: Գույքագրման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում պարտապանի ներկայացուցիչն ստորագրում է գույքագրման ակտը՝ կցելով դրան իր գրավոր առարկությունը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարչին իրավունք է վերապահել կազմակերպելու պարտապանի գույքի գույքագրում: Ընդ որում, այդ կապակցությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով ընդամենը սահմանված են այն կանոնները, որոնք վերաբերում են պարտապանի գույքի գույքագրում իրականացնելու ժամկետին, այդ գույքագրման մասին որոշակի անձանց ծանուցելու՝ կառավարչի պարտականությանը, գույքագրման արդյունքներն ամփոփելուն, գույքագրման ակտն ստորագրող անձանց շրջանակին, այն ստորագրելու արդյունքում առաջացող հետևանքներին և այդ ակտի վերաբերյալ առարկություն ներկայացնելուն: Մինչդեռ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը, այդ թվում՝ նույն օրենքի 56-րդ հոդվածը, որևէ կանոն չեն սահմանում պարտապանի գույքի գույքագրում իրականացնելու ընթացքում համապատասխան միջնորդություն հարուցելու, դատարանի կողմից այն լուծելու վերաբերյալ: Նման պայմաններում գտնում են, որ այդ առումով ենթակա են կիրառման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ներքոնշյալ նորմերը: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի, որը ներառված է «Դատական նիստի ընդհանուր կանոնները» վերնագիրը կրող 15-րդ գլխում, 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց միջնորդությունները գործի քննության հետ կապված բոլոր հարցերով դատարանը լուծում է դատական նիստին ներկա գործին մասնակցող մյուս անձանց դիրքորոշումը լսելուց հետո, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական նիստից դուրս ներկայացված միջնորդությունն ստորագրում է այն ներկայացնող գործին մասնակցող անձը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած միջնորդությանը կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը, եթե այն գործում բացակայում է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական նիստից դուրս միջնորդություն ներկայացրած անձը պարտավոր է միջնորդությանը կցել տվյալ միջնորդությունը և դրան կից փաստաթղթերը գործին մասնակցող անձանց ուղարկելու փաստը հավաստող ապացույցներ կամ միջնորդության մեջ ներկայացնել այդ փաստաթղթերը գործին մասնակցող անձանց ուղարկելու անհնարինության վերաբերյալ հիմնավորումներ, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի և այն միջնորդությունների, որոնց միջոցով գործին մասնակցող անձն իրականացնում է իր իրավունքները, և որոնք չեն ազդում գործին մասնակցող այլ անձանց իրավունքների, պարտականությունների, շահերի, կարգավիճակի կամ դատավարության ընթացքի վրա:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 2-4-րդ մասերի պահանջները չպահպանելու դեպքում ներկայացված միջնորդությունը չի քննարկվում:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ միջնորդությունը քննարկելու արդյունքով դատարանը կայացնում է որոշում:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը կողմից սահմանված դատական նիստի ընդհանուր կանոնի համաձայն՝ դատարանը, որպես կանոն, պարտավոր է

գործին մասնակցող բոլոր անձանց հնարավորություն տալ դիրքորոշում հայտնելու գործի քննության հետ կապված բոլոր հարցերով գործին մասնակցող անձանց հարուցած միջորդությունների վերաբերյալ: Ավելին՝ օրենսդիրն այդ միջնորդությունների ներկայացման և լուծման առանձին կարգ է սահմանել ինչպես դատական նիստում, այնպես էլ՝ դատական նիստից դուրս ներկայացվածների համար: Մասնավորապես՝ դատական նիստից դուրս ներկայացված միջնորդությունների համար սահմանված կարգի համաձայն՝ այն պետք է ստորագրված լինի ներկայացրած գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից, իսկ միջնորդությանը պետք է կցվեն այդ միջնորդությունը և դրան կից փաստաթղթերը գործին մասնակցող մյուս անձանց ուղարկելու փաստը հավաստող ապացույցներ կամ միջնորդության մեջ ներկայացվեն այդ փաստաթղթերը գործին մասնակցող մյուս անձանց ուղարկելու անհնարինության վերաբերյալ հիմնավորումներ, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի և այն միջնորդությունների, որոնց միջոցով գործին մասնակցող անձն իրականացնում է իր իրավունքները, և որոնք չեն ազդում գործին մասնակցող այլ անձանց իրավունքների, պարտականությունների, շահերի, կարգավիճակի կամ դատավարության ընթացքի վրա: Ընդ որում, այդ պահանջները չպահպանելու դեպքում օրենսդիրը դատարանին իրավունք է վերապահել չքննարկելու ներկայացված միջնորդությունը: Միջնորդությունը քննարկելու արդյունքով դատարանը կայացնում է որոշում:

Նույն գործի փաստերի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ Սամվել Մանուկյանը, նպատակ ունենալով կազմակերպելու պարտապանի գույքի գույքագրում, դատական նիստից դուրս միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ պահանջելով պարտապանին պարտավորեցնել չխոչընդոտել գույքի գույքագրմանը և գույքագրման համար իրեն ներկայացնել նրան սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ միջնորդության հիմքում դնելով այն հանգամանքները, որ պարտապանը նշանակված օրը գույքագրմանը չի ներկայացել և չի ներկայացրել իրեն պատկանող գույքը:

Դատարանը 28.11.2019 թվականին կառավարչի միջնորդությունը բավարարել է, և պարտապան անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանին պարտավորեցրել է իրեն պատկանող գույքը ներկայացնել սնանկության գործով կառավարչին ու չխոչընդոտել իր գույքի գույքագրման աշխատանքների կատարմանը:

Նշված որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել պարտապան անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանը՝ վերաքննիչ բողոքում որպես վերաքննիչ բողոքի հիմնավորում նշելով այն, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում միջնորդության քննարկման կարգը, ուստի սնանկության վարույթի մասնակիցների կողմից միջնորդություններ ներկայացվելու դեպքում դրանք ենթակա են քննարկման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կարգավորվող դրույթներով, որի պայմաններում միջնորդության օրինակը պետք է ուղարկվեր իրեն, որը չի ուղարկվել, Դատարանը պարտավոր էր ներկայացված միջնորդության վերաբերյալ լսել իր կարծիքը, իսկ ինքն իրավունք ունեւոր իր փաստարկները ներկայացնելու և առարկելու այդ միջնորդության վերաբերյալ, որպիսի հնարավորությունից ինքը զրկված է եղել: Միաժամանակ հարուցել է միջնորդություն՝ բողոք բերելու համար բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին՝ պատճառաբանելով, որ ինքը միջնորդության քննարկմանը չի մասնակցել, դրա արդյունքում կայացված որոշումն իրեն չի ուղարկվել, որի հետևանքով ինքը զրկվել է սահմանված ժամկետում բողոք բերելու հնարավորությունից, և միայն հարկադիր կատարողի որոշումը 19.12.2019 թվականին ստանալուց հետո է տեղեկացվել Դատարանի որոշման մասին:

Վերաքննիչ դատարանը 20.01.2020 թվականին որոշում է կայացրել անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին՝ պատճառաբանելով, որ «ՀՀ օրենսդրությամբ որևէ իրավանդում, որը պարտավորեցնում է սնանկության կառավարչին պարտապանին որոշակի գործողություններ կատարելու պարտավորեցնելու մասին միջնորդություն ներկայացնելիս, իսկ սնանկության դատարանին՝ ներկայացված միջնորդությունը քննարկելիս այդ մասին ծանուցել նաև պարտապանին, ավելին՝

նման միջնորդությունը քննարկման առարկա դարձնել դատական նիստում և պարտապանի պարտադիր մասնակցությամբ, որից հետո միջնորդության քննության արդյունքում կայացված դատական ակտը պարտադիր կարգով առաքել նաև պարտապանին, առկա չէ: Հետևաբար՝ արդեն իսկ ասվածի հիմքով ներկայացված պատճառաբանությամբ 28.11.2019 թվականի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքը 27.12.2019 թվականին ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը հարգելի համարելու բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն և չեն կարող բողոք բերելու համար սահմանված ժամկետը բացթողնելու պատճառը հարգելի համարելու և այն վերականգնելու հիմք հանդիսանալ», «նման պայմաններում, հիշատակված փաստական հանգամանքների և վկայակոչված իրավանորմերի լույսի ներքո Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմքերն օբյեկտիվորեն բացակայում են, ուստի միջնորդությունը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքի ընդունումը ևս պետք է մերժել»:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ գտնում եմ, որ դրանք անհիմն են և չէին կարող հիմք հանդիսանալ ինչպես հարուցված միջնորդությունը մերժելու, այնպես էլ դրա արդյունքում վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու համար, քանի որ այս դեպքում սնանկության կառավարիչը պարտավոր էր դատական նիստից դուրս ներկայացվելիք միջնորդության օրինակն ուղարկել նաև գործին մասնակցող անձ՝ պարտապան անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանին, նրան ուղղարկելու փաստը հավաստող ապացույցը կցել ներկայացվելիք միջնորդությանը և նոր միայն միջնորդություն ներկայացնելու Դատարանին, իսկ եթե դա անհնարին էր՝ այդ մասին համապատասխան հիմնավորումներ նշել միջնորդության մեջ՝ նկատի ունենալով, որ սույն գործով բացակայում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 3-րդ մասում նշված այն դեպքերը, որոնց առկայության պայմաններում կառավարիչը կարող էր ազատվել այդ պարտականությունից: Իր հերթին Դատարանը պարտավոր էր օրենսդրի կողմից որպես պարտադիր սահմանված այդ պահանջները չպահպանելու դեպքում չքննարկել ներկայացված միջնորդությունը՝ նպատակ ունենալով պարտապանին հնարավորություն տալ դիրքորոշում հայտնելու միջնորդության քննության հետ կապված բոլոր հարցերով: Ուստի ցանկացած պարագայում դատարանը պարտականություն է կրում ստուգելու՝ արդյոք միջնորդություն ներկայացրած անձը դրա օրինակն ուղարկել է գործին մասնակցող այլ անձանց, և արդյոք այն ուղարկվել է ճիշտ հասցեով, քանի որ դրա հիման վրա է դատարանն ապահովում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների պատշաճ իրականացումը: Մինչդեռ այս դեպքում Դատարանն անգամ ներկայացված միջնորդության վերաբերյալ իր կողմից կայացված որոշման օրինակը չի ուղարկել գործին մասնակցող անձ պարտապանին:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերով այլ կանոններ նախատեսված չեն նաև քաղաքացիական դատավարության սկզբունքների և առաջին ատյանի դատարանի առանձին ակտի ձևով կայացված որոշումները գործին մասնակցող անձանց հանձնելու և ուղարկելու ժամկետների վերաբերյալ, որի կապակցությամբ անհրաժեշտ են համարում վկայակոչել դրանց վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումները:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև գործին մասնակցող բոլոր անձանց հավասարության սկզբունքի հիման վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանն ապահովում է, որ գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձինք ունենան յուրաքանչյուր հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու հավասար հնարավորություն, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի առանձին ակտի ձևով կայացված որոշումը գործին

մասնակցող անձանց հանձնվում է առձեռն, իսկ դրա անհնարինության դեպքում նրանց է ուղարկվում կայացման պահից ետոյա ժամկետում, եթե նույն օրենսգրքով այլ ժամկետ սահմանված չէ:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ քաղաքացիական դատավարության սկզբունքներից է քաղաքացիական գործերով դատավարությունն օրենքի և դատարանի առջև գործին մասնակցող բոլոր անձանց հավասարության սկզբունքի հիման վրա իրականացնելը: Այդ նպատակով օրենսդիրը դատարանի վրա պարտականություն է դրել ապահովելու, որ գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձինք ունենան յուրաքանչյուր հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու հավասար հնարավորություն: Վերը նշված օրենսդրական կարգավորումը բխում է քաղաքացիական դատավարությունում գործող մեկ այլ՝ մրցակցության սկզբունքի էությունից և նպատակ է հետապնդում ապահովելու մյուս կողմի՝ իր գործը հավասար պայմաններում ներկայացնելու դատավարական ընթացակարգը: Այդպիսի հնարավորության ապահովման եղանակներից է առաջին ատյանի դատարանի առանձին ակտի ձևով կայացված որոշումը գործին մասնակցող անձանց առձեռն հանձնելը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նրանց ուղարկելը, որի համար օրենսդիրը սահմանել է կայացման պահից ետոյա ժամկետ, եթե նույն օրենսգրքով այլ ժամկետ սահմանված չէ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունն այն է, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով (*տես Լիլիթ Գևորգյան ընդդեմ Սվետլանա Միքայելյանի թիվ ԵԷԴ/1730/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերը նշված հանգամանքներն անտեսվել են Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննարկելիս, որն ազդել է բերված վերաքննիչ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու վրա այն առումով, որ որոշում է կայացվել վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին, որի հետևանքով խախտվել են ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածը, այնպես էլ՝ նույն օրենսգրքի 372-րդ հոդվածը:

Այսպիսով հիմք ընդունելով վերոնշարտը պարտական վերլուծությունները և ելնելով սույն գործի փաստական հանգամանքներից՝ կարծում են, որ Վերաքննիչ դատարանը պարտապան անհատ ձեռնարկատեր Ջոյա Մկրտչյանին գրկել է վերաքննիչ բողոք ներկայացնելու հնարավորությունից՝ անտեսելով, որ Դատարանը թույլ է տվել դատավարության մրցակցության և դատավարության մասնակիցների հավասարության սկզբունքների խախտում, և չպարզելով՝ միջնորդությունը ներկայացնելիս սնանկության կառավարչի կողմից օրենսդրի վերը նշված պահանջները պահպանվել են, թե՛ ոչ: Հետևաբար գտնում են, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ բողոք բերած անձը գրկվել է ինչպես ներկայացված միջնորդության, այնպես էլ դրա քննության արդյունքում կայացված որոշման վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու իրավական հնարավորությունից, ինչը հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող մրցակցային վարույթի սահմանափակման:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ գտնում են, որ սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ Վերաքննիչ դատարանի որոշումն ամբողջությամբ բեկանելու լիազորությունը՝ սույն հատուկ կարծիքում նշված պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. Հակոբյան

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/21389/02/18
2022թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/21389/02/18

Նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան

Դատավորներ՝ Տ. Նազարյան
Ա. Մկրտչյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 19-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ Երվանդ Վարդյանի հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.12.2020 թվականի որոշման դեմ Երվանդ Վարդյանի և Պալատի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Երվանդ Վարդյանը պահանջել է անվավեր ճանաչել Պալատի նախագահի առաջին տեղակալի 20.03.2018 թվականի թիվ 163-Ա/ԿԳ-18093 և Պալատի խորհրդի 07.07.2018 թվականի թիվ ԿԳ/117-Ա որոշումները:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 07.08.2020 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.12.2020 թվականի որոշմամբ Երվանդ Վարդյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 07.08.2020 թվականի վճիռը բեկանվել է, և քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Երվանդ Վարոյանը (ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյան) և Պալատը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Երվանդ Վարոյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 39-րդ, 39.2-րդ և 39.7-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 5-րդ, 10-րդ, 28-րդ և 83-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 182-րդ և 380-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի ստկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը, սխալ կիրառելով և սխալ մեկնաբանելով վերը նշված իրավական նորմերը, գտել է, որ սույն վեճը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով: Արդյունքում Վերաքննիչ դատարանը, չիրականացնելով վերաքննիչ բողոքի ըստ էության քննությունը դրանում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, կարճել է գործի վարույթը՝ խախտելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները, ինչի հետևանքով իր իրավունքներն առ այսօր շարունակում են մնալ խախտված և չվերականգնված:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.12.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Պալատի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 7-րդ և 29-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին և 3-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի ստկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Պալատը չի հանդիսանում պետական (վարչական) մարմին: Ավելին՝ ունենալով պարտադիր անկախության հատկանիշ, չի կարող մտնել պետական կամ տեղական ինքնակառավարման համակարգի մեջ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական և վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացված հայցադիմումների սահմաններում երբեք չի կարող պատասխանողի դերում հանդես գալ Պալատը: Ավելին՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև «Փաստաբանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված անկախության հատկանիշից, Պալատին չի կարելի արհեստականորեն ներառել պետական մարմինների համակարգում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.12.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Պալատի նախագահի առաջին տեղակալը, քննարկելով փաստաբան Երվանդ Վարոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը, 20.03.2018 թվականին կայացրել է թիվ 163Ա/ԿԳ-18093 որոշումը՝ փաստաբան Երվանդ Վարոսյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4.1-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012 թվականի թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագրք) 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով կարգապահական վարույթ հարուցելու և կարգապահական գործը Պալատի խորհրդին հանձնելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 41-43**).

2) Պալատի խորհուրդը, քննելով փաստաբան Երվանդ Վարոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, 07.07.2018 թվականին կայացրել է թիվ ԿԳ/117-Ա որոշումը՝ փաստաբան Երվանդ Վարոսյանին «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2-րդ ենթակետի խախտման հատկանիշներով մեղավոր ճանաչելու ու նրա նկատմամբ որպես կարգապահական տույժ 50.000 ՀՀ դրամի չափով տուգանք կիրառելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 13-19**).

3) Երվանդ Վարոսյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Պալատի նախագահի առաջին տեղակալի 20.03.2018 թվականի թիվ 163-Ա/ԿԳ-18093 և Պալատի խորհրդի 07.07.2018 թվականի թիվ ԿԳ/117-Ա որոշումները:

Նշված հայցադիմումը Դատարանն ընդունել է վարույթ, և 07.08.2020 թվականին վճիռ է կայացրել հայցը մերժելու մասին:

Վերաքննիչ դատարանի 10.12.2020 թվականի որոշմամբ նշված վճռի դեմ Երվանդ Վարոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 07.08.2020 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել է, և քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 1, 5-8, հատոր 2-րդ, գ.թ. 77-82, հատոր 3-րդ, գ.թ. 54- 60**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Երվանդ Վարոսյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է եղել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, ինչը սակայն Երվանդ Վարոսյանի բողոքի քննության արդյունքում չհաստատվեց ստորև ներկայացվող հիմնավորումներով, իսկ Պալատի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ այլ գործերով ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը կիրառվել է հակասող մեկնաբանությամբ:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ Երվանդ Վարոսյանի և Պալատի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքներում դրանք բերելու հիմքերը և հիմնավորումները, ըստ էության, նույնական են, ուստի դրանց հիմնավորվածությանն անդրադառնում է ստորև շարադրված ընդհանուր պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատարան պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատության օրենքով հանձնված է տվյալ գործը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է անձի՝ վարչական դատարան դիմելու իրավունքին և հանրային իրավահարաբերությունների հասկացությանն ու արձանագրել, որ անձը ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունք է ձեռք բերում այն դեպքում, երբ համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել իր իրավունքները և ազատությունները, կամ երբ նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, կամ երբ նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից անձի իրավունքների և ազատությունների խախտման փաստը միայն դեռևս բավարար չէ ՀՀ վարչական դատարան դիմելու համար, քանի դեռ այդպիսի խախտման հետևանքով առաջացող դատական գործը չի ծագում հանրային իրավահարաբերությունից: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ հանրային իրավահարաբերություններն այն իրավահարաբերություններն են, որոնք ծագում են պետական մարմինների իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում: Այսինքն՝ այդպիսի իրավահարաբերությունները և դրանց արդյունքները պետք է ունենան հանրային՝ համընդհանուր բնույթ, ի տարբերություն մասնավոր՝ կոնկրետ անձին վերաբերող, իրավահարաբերության (յե՛ս Արևիկ Արուսյանն ընդդեմ «ՀԷԳ-90» ՍՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի թիվ ԵԱԲԳ/0433/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2011 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, ամփոփելով նախկին դիրքորոշումները, մեկ այլ որոշմամբ հավելել է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը (*տե՛ս Գոռիշյան Իշիկյանն ընդդեմ* «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԿԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոփիսիմե Իշիկյանի թիվ ԵՄԳ/1029/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի գործով* կայացված որոշմամբ ՀՀ փաստաբանների պալատի բողոքի քննության շրջանակներում անհրաժեշտ համարելով պարզել՝

1) արդյո՞ք այդ գործով վեճը ծագել է հանրային, թե մասնավոր իրավահարաբերությունից,

2) արդյո՞ք այդ գործը ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, թե վարչական դատարանում,

3) արդյո՞ք ՀՀ վճռաբեկ դատարանն իրավասու է իրականացնել այդ գործով վճռաբեկ բողոքի քննություն, արձանագրել է, որ իրավահարաբերության բնույթը պարզելու համար հարկավոր է այն դիտարկել շահերի տեսության, ենթակարգության տեսության և հատուկ իրավունքի տեսության համատեքստում: Ըստ շահերի տեսության՝ հանրային իրավունքը մասնավորից տարբերվում է այն շահի տեսակով, որոնք պաշտպանվում են առանձին իրավանորմով: Այն իրավանորմերը, որոնք ծառայում են հանրային կամ ընդհանուր շահին, պատկանում են հանրային իրավունքին: Մինչդեռ, մասնավոր իրավանորմերը ծառայում են մասնավոր կամ անհատական շահերին: Ենթակարգության տեսությունը ելնում է մասնակիցների հարաբերությունների բնույթից և կիրառվում է միայն այն դեպքում, երբ հարաբերության մասնակիցներն են մի կողմից պետությունը, իսկ մյուս կողմից քաղաքացին: Ըստ այս տեսության՝ այն իրավանորմերը, որոնք կարգավորում են հանրային իշխանությունը կրողների գործողությունները, համարվում են հանրային-իրավական, երբ դրանք վերաբերում են վերադատության-ենթակայության հարաբերությանը: Եթե մասնակիցների միջև առկա է վերադատության-ենթակայության հարաբերություն, ապա իրավահարաբերությունը հանրային է, իսկ եթե իրավունքի երկու սուբյեկտները միմյանց առջև հանդես են գալիս իրավահավասար կերպով, ապա առկա են մասնավոր-իրավական հարաբերություններ: Հատուկ իրավունքի տեսությունն իր հերթին նույնպես կոչված է պարզելու վեճի հանրային-իրավական բնույթը: Այն ելնում է վեճը լուծող իրավանորմերի իրավական բնույթից: Ըստ այս տեսության՝ եթե վեճը լուծվում է հանրային-իրավական նորմերի միջոցով, ապա առկա է հանրային-իրավական վեճ, իսկ եթե վեճը լուծում են մասնավոր-իրավական նորմերը, ապա կունենանք մասնավոր-իրավական վեճ:

Միննույն ժամանակ վերոնշյալ տեսությունների հիմքում դրված չափանիշներից ելնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, գտնելով, որ անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- որ նորմերն են լուծում վեճը,
- արդյո՞ք դրանք հանրային-իրավական նորմեր են (ինչ շահերի պաշտպանությանն են ուղղված այդ նորմերը),

- արդյո՞ք իրավահարաբերության մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն,

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000 թվականի թիվ Rec (2000) 21 հանձնարարականի, որով ընդգծվել է իրավաբանների և իրավաբանական միությունների հիմնարար դերը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ապահովելու գործում, Միավորված ազգերի կազմակերպության կողմից 07.09.1990 թվականին ընդունված «Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ» վերառությամբ փաստաթղթի, որով կառավարությունները և իրավաբանների արհեստակցական միավորումները օժանդակում են օրենքին համապատասխան մարդկանց իրավունքների ու պարտականությունների մասին և նրանց հիմնարար ազատությունները պաշտպանելու գործում իրավաբանների ունեցած կարևոր դերի մասին նրանց իրազեկելուն ուղղված ծրագրերի իրականացմանը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 4-րդ կետի, 10-րդ հոդվածի 1-ին մասի, 39.9-րդ հոդվածի վկայակոչմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետությունը ՀՀ սահմանադրությամբ ստանձնած գործառույթների իրականացումը կարող է պատվիրակել նաև մասնավոր անձանց: Պետությունը որակյալ իրավաբանական օգնությամբ ապահովելու ոլորտում իր՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված գործառույթների իրականացումն օրենքով վերապահել է Պալատին՝ վերջինիս, ի թիվս այլ լիազորությունների, վերալիազորելով նաև փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելը:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ինքնին Պալատը հիմնադրվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի ուժով, և ստեղծված լինելով օրենքի հիման վրա՝ իրականացնում է հանրային նշանակության կարևոր գործառույթներ, այն է՝ կոչված է ապահովելու Հայաստանի Հանրապետությունում փաստաբանների վերապատրաստման, ուսուցման և արտոնագրման գործընթացները: Պալատը քննարկվող հարաբերություններում հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող:

Արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը, վերոգրյալի հիման վրա անդրադառնալով վեճը կարգավորող իրավական նորմերի բնույթը պարզելու հարցին, արձանագրել է, որ հանրային իրավունքին են պատկանում այն նորմերը, որոնք իրենց ցանկացած հնարավոր կիրառման դեպքում միակողմանիորեն լիազորում կամ պարտավորեցնում են բացառապես հանրային իշխանության կրողին՝ որպես այդպիսին, իսկ այն նորմերը, որոնք լիազորում կամ պարտավորեցնում են յուրաքանչյուրին, պատկանում են մասնավոր իրավունքին: Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը պատկանում են հանրային իրավունքին, քանի որ դրանք փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելը լիազորում են բացառապես Պալատին: Փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը կարգավորվում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև փաստաբանական պալատի խորհրդի կողմից ընդունված Փաստաբանի վարքագծի կանոնադրքով, որն իր հերթին միտված է սահմանելու թույլատրելի վարքագծի այն կանոնները, որոնցով պետք է առաջնորդվեն փաստաբաններն իրենց փաստաբանական գործունեության ողջ ընթացքում: Խորհուրդը Պալատի ներքին կառուցվածքային համակարգում հանդիսանում է և՛ դրա գործադիր մարմինը, և՛ կարգապահական վարույթ իրականացնող մարմինը: Յուրաքանչյուրի՝ սահմանադրորեն երաշխավորված որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումն ուղղված է հանրային շահի սպասարկմանը, ուստի նշված գործառույթի իրականացման առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերն ունեն հանրային բնույթ (լրեն Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.05.2022 թվականի որոշումը):

Նույն որոշմամբ անդրադառնալով իրավահարաբերության մասնակիցների միջև ենթակարգության-վերադասության առկայությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ

է համարել նշել, որ Պալատ-փաստաբան հարաբերությունները բնորոշվում են նաև ցանկացած մասնավոր, այդ թվում՝ աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք հանդիսացող գործարքի (պայմանագրի) բացակայությամբ: Պալատի խորհրդի կողմից փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը կայացվում է Պալատի հանրային իշխանական լիազորությունների գործադրման արդյունքում և միակողմանի ազդեցություն է ունենում հասցեատեր հանդիսացող փաստաբանի համար: Հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառնություն իրականացնող մասնավոր անձինք: Ավելին, պետության օրենսդրական քաղաքականությունն ընթանում է այն հունով, որ հանրային շահի առնչությամբ ծագող բոլոր իրավական վեճերի քննությունը վերապահվել է ՀՀ վարչական դատարանին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին 18.05.2015 թվականի օրենքի համաձայն՝ նշված օրենսգրքի 5-րդ բաժինը լրացվել է «Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 29.2-րդ գլխով, որով սահմանվել են վարչական դատարանին ընդդատյա՝ անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ գործերը (անձնական տվյալների պաշտպանության ոլորտում որպես ծագող հարաբերությունների կողմ են հանդիսանում ոչ միայն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական կամ համայնքային հիմնարկները կամ կազմակերպությունները, այլև ֆիզիկական և իրավաբանական անձինք): Նշված լրացումով օրենսդիրը նախատեսել է, որ դրանց վրա տարածվում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վիճարկման կամ պարտավորեցման կամ գործողության կատարման կամ ճանաչման հայցի կանոնները: Այսպիսով, փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը վիճարկելու հայցերի նկատմամբ ևս կիրառելի են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ վիճարկման հայցերին վերաբերող իրավական նորմերը:

Սույն գործով ևս Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր կողմից արտահայտված վերը նշված դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Պալատի նախագահի առաջին տեղակալը 20.03.2018 թվականին կայացրել է թիվ 163Ա/ԿԳ-18093 որոշումը, որով փաստաբան Երվանդ Վարդյանի նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4.1-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով: Պալատի խորհուրդը 07.07.2018 թվականին կայացրել է թիվ ԿԳ/117-Ա որոշումը, որի 1-ին կետով փաստաբան Երվանդ Վարդյանին ճանաչել է մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2-րդ ենթակետի խախտման հատկանիշներով, իսկ նույն որոշման 2-րդ կետով վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ տուգանք 50.000 ՀՀ դրամի չափով:

Այժմ, Երվանդ Վարդյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Պալատի նախագահի առաջին տեղակալի 20.03.2018 թվականի թիվ 163-Ա/ԿԳ-18093 և Պալատի խորհրդի 07.07.2018 թվականի թիվ ԿԳ/117-Ա որոշումները:

Դատարանի 07.08.2020 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ դատարանը 10.12.2020 թվականի որոշմամբ Երվանդ Վարդյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ Դատարանի 07.08.2020 թվականի վճիռը բեկանել է, և քաղաքացիական գործի վարույթը կարճել է՝ պատճառաբանելով, որ «վեճը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով չէր կարող քննվել քաղաքացիական դատավարության կանոններով, քանի որ դրա արդյունքում վտանգվում է անձի սահմանադրական ամրագրում ստացած դատական պաշտպանության իրավունքը, որն արտահայտվելու է նրա համար ակնհայտորեն

անհավասար դատավարական պայմաններ առաջադրելով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն, դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե ստորադաս դատարանում եղել է գործի վարույթը կարճելու հիմք, որպիսի հանգամանքն իր հերթին նույն հոդվածի 3-րդ մասի հիմքով ուղղակիորեն առարկայագուրկ է դարձնում բողոքի հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալով: (...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով պետք է ամբողջությամբ բեկանել Դատարանի վճիռը և կարճել գործի վարույթը»:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով, որ Երվանդ Վարոյանի նկատմամբ Պալատի նախագահի առաջին տեղակալի կողմից 20.03.2018 թվականին ընդունված թիվ 163-Ա/ԿԳ-18093 և Պալատի խորհրդի կողմից 07.07.2018 թվականին ընդունված թիվ ԿԳ/117-Ա որոշումների արդյունքում կողմերի միջև ծագել են վարչական իրավահարաբերություններ, որոնց կապակցությամբ նրանց միջև ծագած այդ վեճը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ընդդադյա է ՀՀ վարչական դատարանին, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը հիմնավոր է և բխում է վերը նշված նորմատիվ ակտերի վերլուծության արդյունքում տրված մեկնաբանություններից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը բավարար չեն Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ սույն գործի փաստերի և հայտնած իրավական դիրքորոշումների համատեքստում Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ է: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճռաբեկ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Միննույն ժամանակ Վճռաբեկ դատարանը, սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից 10.12.2020 թվականին կայացված որոշման մեջ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի մեկնաբանությունը համեմատական վերլուծության ենթարկելով թիվ ԵԳ/2398/0218 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.03.2020 թվականի որոշման, ինչպես նաև թիվ ՎԴ/1073/0519 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 22.02.2019 թվականի «Հայցադիմումը վերահասցեագրելու մասին» որոշման մեջ նույն նորմին տրված մեկնաբանության հետ, արձանագրում է, որ Պալատի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի քննությամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքը հիմնավոր է, սակայն վերջինիս կողմից ներկայացված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման վերը նշված պարճատարանությամբ:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Երվանդ Վարոյանի և Պալատի կողմից վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական

տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջիններիս վճռաբեկ բողոքները ենթակա են մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Երվանդ Վարդյանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքները մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.12.2020 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԵԴ/21389/02/18 քաղաքացիական գործով 19.09.2022 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

19.09.2022 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետև՝ Վճռաբեկ դատարան), 2022 թվականի սեպտեմբերի 19-ին գրավոր ընթացակարգով քննելով Երվանդ Վարոյանի և Պալատի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.12.2020 թվականի որոշման դեմ ըստ հայցի Երվանդ Վարոյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետև՝ Պալատ) որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է Երվանդ Վարոյանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքները մերժել, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.12.2020 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, դեկլարավելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապարունություն նշել է հետևյալը

«Դիմելով դատարան՝ Երվանդ Վարոյանը պահանջել է անվավեր ճանաչել Պալատի նախագահի առաջին տեղակալի 20.03.2018 թվականի թիվ 163-Ա/ԿԳ-18093 և Պալատի խորհրդի 07.07.2018 թվականի թիվ ԿԳ/117-Ա որոշումները:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետև՝ Դատարան) 07.08.2020 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետև՝ Վերաքննիչ դատարան) 10.12.2020 թվականի որոշմամբ Երվանդ Վարոյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 07.08.2020 թվականի վճիռը բեկանվել է, և քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Երվանդ Վարոյանը (ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյան) և Պալատը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել»:

2. Վճռաբեկ դատարանը որպես Երվանդ Վարոյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը

«Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 39-րդ, 39.2-րդ և 39.7-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 5-րդ, 10-րդ, 28-րդ և 83-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 182-րդ և 380-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես և՛ է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը, սխալ կիրառելով և սխալ մեկնաբանելով վերը նշված իրավական նորմերը, գտել է, որ սույն վեճը ենթակա չէ քննության քաղաքացիական

դատավարության կարգով: Արդյունքում Վերաքննիչ դատարանը, չիրականացնելով վերաքննիչ բողոքի ըստ էության քննություն դրանում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, կարճել է գործի վարույթը խախտելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները, ինչի հետևանքով իր իրավունքներն առ այսօր շարունակում են մնալ խախտված և չվերականգնված:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.12.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության»:

2.1. Վճռաբեկ դատարանը որպես Պալատի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը

«Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 7-րդ և 29-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին և 3-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես անվավեր է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Պալատը չի հանդիսանում պետական (վարչական) մարմին: Ավելին՝ ունենալով պարտադիր անկախության հատկանիշ, չի կարող մտնել պետական կամ տեղական ինքնակառավարման համակարգի մեջ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական և վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացված հայցադիմումների սահմաններում երբեք չի կարող պատասխանողի դերում հանդես գալ Պալատը: Ավելին՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև «Փաստաբանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված անկախության հատկանիշից, Պալատին չի կարելի արհեստականորեն ներառել պետական մարմինների համակարգում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.12.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության»:

3. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը

«Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Պալատի նախագահի առաջին տեղակալը, քննարկելով փաստաբան Երվանդ Վարոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը, 20.03.2018 թվականին կայացրել է թիվ 163Ա/ԿԳ-18093 որոշումը՝ փաստաբան Երվանդ Վարոյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4.1-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012 թվականի թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնադրի (այսուհետ՝ Կանոնագիրք) 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով կարգապահական վարույթ հարուցելու և կարգապահական գործը Պալատի խորհրդին հանձնելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 41-43**).

2) Պալատի խորհուրդը, քննելով փաստաբան Երվանդ Վարոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, 07.07.2018 թվականին կայացրել է թիվ ԿԳ/117-Ա որոշումը՝ փաստաբան Երվանդ Վարոյանին «Փաստաբանության

մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2-րդ ենթակետի խախտման հատկանիշներով մեղավոր ճանաչելու ու նրա նկատմամբ որպես կարգապահական տույժ 50.000 ՀՀ դրամի չափով տուգանք կիրառելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 13-19**).

3) Երվանդ Վարոյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Պալատի սախագահի առաջին տեղակալի 20.03.2018 թվականի թիվ 163-Ա/ԿԳ-18093 և Պալատի խորհրդի 07.07.2018 թվականի թիվ ԿԳ/117-Ա որոշումները:

Նշված հայցադիմումը Դատարանն ընդունել է վարույթ, և 07.08.2020 թվականին վճիռ է կայացրել հայցը մերժելու մասին:

Վերաքննիչ դատարանի 10.12.2020 թվականի որոշմամբ նշված վճիռն ընդհատելով Երվանդ Վարոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 07.08.2020 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել է, և քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 1, 5-8, հատոր 2-րդ, գ.թ. 77-82, հատոր 3-րդ, գ.թ. 54- 60**)»:

4. Վճռաբեկ դատարանը որպես պարճատարանություններ և եզրահանգումներ նշել է հետևյալը

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Երվանդ Վարոյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է եղել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, ինչը սակայն Երվանդ Վարոյանի բողոքի քննության արդյունքում չհաստատվեց ստորև ներկայացվող հիմնավորումներով, իսկ Պալատի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ այլ գործերով ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը կիրառվել է հակասող մեկնաբանությամբ:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ Երվանդ Վարոյանի և Պալատի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքներում դրանք բերելու հիմքերը և հիմնավորումները, ըստ էության, նույնական են, ուստի դրանց հիմնավորվածությանն անդրադառնում է ստորև շարադրված ընդհանուր պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեն Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՄԴՌ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատության օրենքով հանձնված է տվյալ գործը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է անձի՝ վարչական դատարան դիմելու իրավունքին և հանրային իրավահարաբերությունների հասկացությանն ու արձանագրել, որ անձը ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունք է ձեռք բերում այն դեպքում, երբ համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել իր իրավունքները և ազատությունները, կամ երբ նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, կամ երբ նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից անձի իրավունքների և ազատությունների խախտման փաստը միայն դեռևս բավարար չէ ՀՀ վարչական դատարան դիմելու համար, քանի դեռ այդպիսի խախտման հետևանքով առաջացող դատական գործը չի ծագում հանրային իրավահարաբերությունից: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ հանրային իրավահարաբերություններն այն իրավահարաբերություններն են, որոնք ծագում են պետական մարմինների իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում: Այսինքն՝ այդպիսի իրավահարաբերությունները և դրանց արդյունքները պետք է ունենան հանրային՝ համընդհանուր բնույթ, ի տարբերություն մասնավոր՝ կոնկրետ անձին վերաբերող, իրավահարաբերության *(տե՛ս Արևիկ Արուսյանն ըստրեմ «ՀԷԳ-90» ՄՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի թիվ ԵԱԲԴ/0433/02/11 քաղաքացիական գործով «ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2011 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը, ամփոփելով նախկին դիրքորոշումները, մեկ այլ որոշմամբ հավելել է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության

սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը (*յրեն Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ* «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՑՄԵՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոփիսիմե Իշիկյանի թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, *Լուսինե Սահակյանն ընդդեմ* ՀՀ փաստաբանների պալատի գործով կայացված որոշմամբ ՀՀ փաստաբանների պալատի բողոքի քննության շրջանակներում անհրաժեշտ համարելով պարզել՝

1) արդյո՞ք այդ գործով վեճը ծագել է հանրային, թե մասնավոր իրավահարաբերությունից,

2) արդյո՞ք այդ գործը ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, թե վարչական դատարանում,

3) արդյո՞ք ՀՀ վճռաբեկ դատարանն իրավասու է իրականացնել այդ գործով վճռաբեկ բողոքի քննություն,

արձանագրել է, որ իրավահարաբերության բնույթը պարզելու համար հարկավոր է այն դիտարկել շահերի տեսության, ենթակարգության տեսության և հատուկ իրավունքի տեսության համատեքստում: Ըստ շահերի տեսության՝ հանրային իրավունքը մասնավորից տարբերվում է այն շահի տեսակով, որոնք պաշտպանվում են առանձին իրավանորմով: Այն իրավանորմերը, որոնք ծառայում են հանրային կամ ընդհանուր շահին, պատկանում են հանրային իրավունքին: Մինչդեռ, մասնավոր իրավանորմերը ծառայում են մասնավոր կամ անհատական շահերին: Ենթակարգության տեսությունը ելնում է մասնակիցների հարաբերությունների բնույթից և կիրառվում է միայն այն դեպքում, երբ հարաբերության մասնակիցներն են մի կողմից պետությունը, իսկ մյուս կողմից քաղաքացին: Ըստ այս տեսության՝ այն իրավանորմերը, որոնք կարգավորում են հանրային իշխանությունը կրողների գործողությունները, համարվում են հանրային-իրավական, երբ դրանք վերաբերում են վերադասության-ենթակայության հարաբերությանը: Եթե մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն, ապա իրավահարաբերությունը հանրային է, իսկ եթե իրավունքի երկու սուբյեկտները միմյանց առջև հանդես են գալիս իրավահավասար կերպով, ապա առկա են մասնավոր-իրավական հարաբերություններ: Հատուկ իրավունքի տեսությունն իր հերթին նույնպես կոչված է պարզելու վեճի հանրային-իրավական բնույթը: Այն ելնում է վեճը լուծող իրավանորմերի իրավական բնույթից: Ըստ այս տեսության՝ եթե վեճը լուծվում է հանրային-իրավական նորմերի միջոցով, ապա առկա է հանրային-իրավական վեճ, իսկ եթե վեճը լուծում են մասնավոր-իրավական նորմերը, ապա կունենանք մասնավոր-իրավական վեճ:

Մինևույն ժամանակ վերոնշյալ տեսությունների հիմքում դրված չափանիշներից ելնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, գտնելով, որ անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- որ նորմերն են լուծում վեճը,

- արդյո՞ք դրանք հանրային-իրավական նորմեր են (ինչ շահերի պաշտպանությանն են ուղղված այդ նորմերը),

- արդյո՞ք իրավահարաբերության մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն,

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000 թվականի թիվ Rec (2000) 21 հանձնարարականի, որով ընդգծվել է իրավաբանների և իրավաբանական միությունների հիմնարար դերը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ապահովելու գործում, Միավորված ազգերի կազմակերպության կողմից 07.09.1990 թվականին ընդունված «Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ» վերառույթյամբ փաստաթղթի, որով կառավարությունները և իրավաբանների արհեստակցական

միավորումները օժանդակում են օրենքին համապատասխան մարդկանց իրավունքների ու պարտականությունների մասին և նրանց հիմնարար ազատությունները պաշտպանելու գործում իրավաբանների ունեցած կարևոր դերի մասին նրանց իրագեկելուն ուղղված ծրագրերի իրականացմանը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 4-րդ կետի, 10-րդ հոդվածի 1-ին մասի, 39.9-րդ հոդվածի վկայակոչմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետությունը ՀՀ սահմանադրությամբ ստանձնած գործառույթների իրականացումը կարող է պատվիրակել նաև մասնավոր անձանց: Պետությունը որակյալ իրավաբանական օգնությամբ ապահովելու ոլորտում իր՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված գործառույթների իրականացումն օրենքով վերապահել է Պալատին՝ վերջինիս, ի թիվս այլ լիազորությունների, վերալիազորելով նաև փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելը:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ինքնին Պալատը հիմնադրվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի ուժով, և ստեղծված լինելով օրենքի հիման վրա՝ իրականացնում է հանրային նշանակության կարևոր գործառույթներ, այն է՝ կոչված է ապահովելու Հայաստանի Հանրապետությունում փաստաբանների վերապատրաստման, ուսուցման և արտոնագրման գործընթացները: Պալատը քննարկվող հարաբերություններում հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող:

Արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը, վերոգրյալի հիման վրա անդրադառնալով վեճը կարգավորող իրավական նորմերի բնույթը պարզելու հարցին, արձանագրել է, որ հանրային իրավունքին են պատկանում այն նորմերը, որոնք իրենց ցանկացած հնարավոր կիրառման դեպքում միակողմանիորեն լիազորում կամ պարտավորեցնում են բացառապես հանրային իշխանության կրողին՝ որպես այդպիսին, իսկ այն նորմերը, որոնք լիազորում կամ պարտավորեցնում են յուրաքանչյուրին, պատկանում են մասնավոր իրավունքին: Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը պատկանում են հանրային իրավունքին, քանի որ դրանք փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելը լիազորում են բացառապես Պալատին: Փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը կարգավորվում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև փաստաբանական պալատի խորհրդի կողմից ընդունված Փաստաբանի վարքագծի կանոնագրքով, որն իր հերթին միտված է սահմանելու թույլատրելի վարքագծի այն կանոնները, որոնցով պետք է առջնորդվեն փաստաբաններն իրենց փաստաբանական գործունեության ողջ ընթացքում: Խորհուրդը Պալատի ներքին կառուցվածքային համակարգում հանդիսանում է և՛ դրա գործադիր մարմինը, և՛ կարգապահական վարույթ իրականացնող մարմինը: Յուրաքանչյուրի՝ սահմանադրորեն երաշխավորված որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումն ուղղված է հանրային շահի սպասարկմանը, ուստի նշված գործառույթի իրականացման առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերն ունեն հանրային բնույթ (իրեն *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի թիվ ԵԿ/38635/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.05.2022 թվականի որոշումը*):

Նույն որոշմամբ անդրադառնալով իրավահարաբերության մասնակիցների միջև ենթակարգության-վերադասության առկայությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ Պալատ-փաստաբան հարաբերությունները բնորոշվում են նաև ցանկացած մասնավոր, այդ թվում՝ աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք հանդիսացող գործարքի (պայմանագրի) բացակայությամբ: Պալատի խորհրդի կողմից փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը կայացվում է Պալատի հանրային իշխանական լիազորությունների գործադրման արդյունքում և միակողմանի ազդեցություն է ունենում հասցեատեր հանդիսացող փաստաբանի համար: Հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձինք: Ավելին, պետության օրենսդրական

քաղաքականությունն ընթանում է այն հունով, որ հանրային շահի առնչությամբ ծագող բոլոր իրավական վեճերի քննությունը վերապահվել է ՀՀ վարչական դատարանին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին 18.05.2015 թվականի օրենքի համաձայն՝ նշված օրենսգրքի 5-րդ բաժինը լրացվել է «Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 29.2-րդ գլխով, որով սահմանվել են վարչական դատարանին ընդդատյալ անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ գործերը (անձնական տվյալների պաշտպանության ոլորտում որպես ծագող հարաբերությունների կողմ են հանդիսանում ոչ միայն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական կամ համայնքային հիմնարկները կամ կազմակերպությունները, այլև ֆիզիկական և իրավաբանական անձինք): Նշված լրացումով օրենսդիրը նախատեսել է, որ դրանց վրա տարածվում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վիճարկման կամ պարտավորեցման կամ գործողության կատարման կամ ճանաչման հայցի կանոնները: Այսպիսով, փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը վիճարկելու հայցերի նկատմամբ ևս կիրառելի են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ վիճարկման հայցերին վերաբերող իրավական նորմերը:

Սույն գործով ևս Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր կողմից արտահայտված վերը նշված դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Պալատի նախագահի առաջին տեղակալը 20.03.2018 թվականին կայացրել է թիվ 163Ա/ԿԳ-18093 որոշումը, որով փաստաբան Երվանդ Վարոսյանի նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4.1-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով: Պալատի խորհուրդը 07.07.2018 թվականին կայացրել է թիվ ԿԳ/117-Ա որոշումը, որի 1-ին կետով փաստաբան Երվանդ Վարոսյանին ճանաչել է մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2-րդ ենթակետի խախտման հատկանիշներով, իսկ նույն որոշման 2-րդ կետով վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ տուգանք 50.000 ՀՀ դրամի չափով:

Այժմ, Երվանդ Վարոսյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Պալատի նախագահի առաջին տեղակալի 20.03.2018 թվականի թիվ 163-Ա/ԿԳ-18093 և Պալատի խորհրդի 07.07.2018 թվականի թիվ ԿԳ/117-Ա որոշումները:

Դատարանի 07.08.2020 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ դատարանը 10.12.2020 թվականի որոշմամբ Երվանդ Վարոսյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ Դատարանի 07.08.2020 թվականի վճիռը բեկանել է, և քաղաքացիական գործի վարույթը կարճել է՝ պատճառաբանելով, որ «վեճը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով չէր կարող քննվել քաղաքացիական դատավարության կանոններով, քանի որ դրա արդյունքում վտանգվում է անձի՝ սահմանադրական ամրագրում ստացած դատական պաշտպանության իրավունքը, որն արտահայտվելու է նրա համար ակնհայտորեն անհավասար դատավարական պայմաններ առաջադրելով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն, դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե ստորադաս դատարանում եղել է գործի վարույթը կարճելու հիմք, որպիսի հանգամանքն իր հերթին նույն հոդվածի 3-րդ մասի հիմքով ուղղակիորեն առարկայագուրկ է դարձնում բողոքի հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալով: (...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով պետք է ամբողջությամբ բեկանել Դատարանի վճիռը և կարճել գործի վարույթը»:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով, որ Երվանդ Վարոսյանի նկատմամբ Պալատի նախագահի առաջին տեղակալի կողմից 20.03.2018 թվականին

ընդունված թիվ 163-Ա/ԿԳ-18093 և Պալատի խորհրդի կողմից 07.07.2018 թվականին ընդունված թիվ ԿԳ/117-Ա որոշումների արդյունքում կողմերի միջև ծագել են վարչական իրավահարաբերություններ, որոնց կապակցությամբ նրանց միջև ծագած այդ վեճը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը հիմնավոր է և բխում է վերը նշված նորմատիվ ակտերի վերլուծության արդյունքում տրված մեկնաբանություններից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը բավարար չեն Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ սույն գործի փաստերի և հայտնած իրավական դիրքորոշումների համատեքստում Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ է: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճռաբեկ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը, սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից 10.12.2020 թվականին կայացված որոշման մեջ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի մեկնաբանությունը համեմատական վերլուծության ենթարկելով թիվ ԵԿՆ2398/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.03.2020 թվականի որոշման, ինչպես նաև թիվ ՎԿ/1073/05/19 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 22.02.2019 թվականի «Հայցադիմումը վերահասցեագրելու մասին» որոշման մեջ նույն նորմին փրված մեկնաբանության հետ, արձանագրում է, որ Պալատի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի քննությամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքը հիմնավոր է, սակայն վերջինիս կողմից ներկայացված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման վերը նշված պարճառաբանությամբ»:

Վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյան, համաձայն ջինելով վերը նշված որոշման պարճառաբանական և եզրահանկիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արքահայրված կարծիքի հետ, շարադրում եմ իմ հարուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Այսպես՝

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (այսուհետ՝ վարչական դատարան) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի:

ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՄԴՈ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը: Ինչպես ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերը, այնպես էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը սահմանում են գործերի առարկայական ընդդատության իրենց կանոնները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է անձի՝ վարչական դատարան դիմելու իրավունքին և հանրային իրավահարաբերությունների հասկացությանն ու արձանագրել, որ անձը ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունք է ձեռք բերում այն դեպքում, երբ համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել իր իրավունքները և ազատությունները, կամ երբ նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, կամ երբ նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից անձի իրավունքների և ազատությունների խախտման փաստը միայն դեռևս բավարար չէ ՀՀ վարչական դատարան դիմելու համար, քանի դեռ այդպիսի խախտման հետևանքով առաջացող դատական գործը չի ծագում հանրային իրավահարաբերությունից: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է՝ նաև, որ հանրային իրավահարաբերություններն այն իրավահարաբերություններն են, որոնք ծագում են պետական մարմինների իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում: Այսինքն՝ այդպիսի իրավահարաբերությունները և դրանց արդյունքները պետք է ունենան հանրային՝ համընդհանուր բնույթ, ի տարբերություն մասնավոր՝ կոնկրետ անձին վերաբերող, իրավահարաբերության (թե՛ս Արևիկի Արուսյանն ընդդեմ «ՀԷԳ-90» ՄՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի թիվ ԵԱԲԳ/0433/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2011 թվականի որոշումը):

Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մասնաճանաչ անդրադարձ է կատարվել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «Վետ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության թիվ ՎԳ/0830/05/14 վարչական գործով 22.04.2016 թվականի որոշմամբ:

Այդ որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ ինչպես ցանկացած հարաբերություն, այնպես էլ իրավական նորմերի միջոցով կարգավորվող հասարակական հարաբերությունը՝ իրավահարաբերությունը, որոշակի փոխկապակցված տարրերի (սուբյեկտ, օբյեկտ և բովանդակություն) ամբողջություն (համակարգ) է, որոնց բովանդակային-որակական տարբերությունը հնարավորություն է տալիս իրավահարաբերությունները տարանջատելու միմյանցից: Մասնավորապես՝ հանրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային ինտելու հանգամանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձինք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ:

Իրավահարաբերության բովանդակությունը տվյալ հարաբերության սուբյեկտների փոխադարձ իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որը հանրային

բնույթի իրավահարաբերության պարագայում հանգում է հետևյալին. այդ հարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանության սուբյեկտն ունի օրենքով սահմանված իր իշխանական լիազորություններն իրականացնելու պարտականություն, ինչն էլ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների իրացման անհրաժեշտ և բավարար պայմանն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ հանրային իրավահարաբերության սուբյեկտ հանդիսացող իշխանության մարմինը հանրային իրավահարաբերության շրջանակներում կարող է օժտված լինել ոչ թե իրավունքներով, այլ մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկն ընտրելու, այսինքն՝ օրենքով սահմանված որոշակի դեպքերում և բավարար փաստական հիմքերի առկայության պայմաններում վարչական հայեցողություն դրսևորելու հնարավորությամբ: Մինևույն ժամանակ հանրային իրավահարաբերության իշխանական լիազորություններով չօժտված կողմը, բացի իր հանրային սուբյեկտիվ իրավունքներից, կարող է կրել նաև այդ հարաբերության բովանդակության մեջ ներառված պարտականություններ, քանի որ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց հանրային սուբյեկտիվ իրավունքներն իրացնելիս պետք է պահպանեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված ընթացակարգային իրավական կարգավորումներն ու օրենսդրական բոլոր պահանջները:

Իրավահարաբերության օբյեկտն այն նյութական և (կամ) հոգևոր արժեքն է, ինչի կապակցությամբ որոշակի իրավաբանական փաստի (փաստական կազմի) հիման վրա կողմերի միջև ծագում է իրավահարաբերությունը: Հանրային իրավահարաբերությունները ծագում են հանրային շահը սպասարկող սուբյեկտների՝ պետության և համայնքի կողմից այն իրացնելու և կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու կապակցությամբ, քանի որ հանրային իրավունքով կարգավորվող հարաբերության շրջանակներում սուբյեկտը գործում է ոչ թե իր, այլ հանրային շահերի վերհանման և ապահովման նպատակով:

ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ իրավունքում «շահ» հասկացության դասակարգումը հանրայինի և մասնավորի խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս փոխկապակցվածությամբ մեջ և գրեթե միշտ փոխլրացնում են միմյանց: Այսպես, իրավական շահը դասակարգվում է հանրայինի և ոչ հանրայինի՝ դասակարգման հիմքում դնելով այդ շահը կողմ սուբյեկտին. հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը: Մակայն հանրային շահը տարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկտային չափանիշով, այլ նաև իր առարկայով, քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ հստակ է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանն է հանձնել դատական կարգով քննության ենթակա այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարանների, այդ թվում՝ վարչական դատարանին: Մինևույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերը: Փաստորեն, որևէ դատական գործը վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Ակնհայտ է նաև, որ իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը:

Սույն գործով հայցվոր Լուսինե Սահակյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 06.09.2019 թվականի թիվ ԿԳ/135-Ա որոշման եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Նախ, անհրաժեշտ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով վարչական մարմինները բնորոշվում են որպես ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ ՀՀ նախարարություններ, ինչպես նաև Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ. տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ, տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար, իսկ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված են պետական կառավարման համակարգի բոլոր մարմինները (այն է՝ նախարարություններ, Կառավարությանը, վարչապետին ու նախարարություններին ենթակա մարմիններ):

Միաժամանակ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը սույն օրենքի հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: Փաստաբանների պալատն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք է բերում օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000 թվականի թիվ Rec (2000) 21 հանձնարարականով ընդգծվել է իրավաբանների և իրավաբանական միությունների հիմնարար դերը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ապահովելու գործում:

Միավորված ազգերի կազմակերպության կողմից 07.09.1990 թվականին ընդունված «Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ» վերտառությամբ փաստաթղթի համաձայն՝ կառավարությունները և իրավաբանների արհեստակցական միավորումները օժանդակում են օրենքին համապատասխան մարդկանց իրավունքների ու պարտականությունների մասին և նրանց հիմնարար ազատությունները պաշտպանելու գործում իրավաբանների ունեցած կարևոր դերի մասին նրանց իրազեկելուն ուղղված ծրագրերի իրականացմանը (...):

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ թեև հանրային և մասնավոր շահերի առկայությունը և փոխկապակցվածությունն առկա է, սակայն ՀՀ փաստաբանների պալատը փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է և այն չի հանդիսանում պետական և տեղական ինքնակառավարման մարմին, այսինքն՝ **հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ:**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով անձն իրավունք ունի դիմելու ՀՀ վարչական դատարան այն դեպքում, երբ նրա իրավունքները կամ ազատությունները խախտվել կամ դրա վտանգն է ստեղծվել պետական, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից, որպիսի սուբյեկտն էլ

սույն գործով հայցվորի կողմից ներկայացված հայցի շրջանակներում բացակայում է, ինչն էլ բացառում է վերջինիս հարուցած վեճի՝ հանրային իրավահարաբերություններից բխելու հանգամանքը:

Տվյալ դեպքում սույն վեճի կողմերից որևէ մեկը չի հանդիսանում հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, ուստի վեճով իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, և այդ իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ, որպիսի տարրերի բացակայությունը բացառում է վեճի՝ հանրային իրավահարաբերություններից բխելու և ՀՀ վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի այն պնդումը, որ «(...) փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը վիճարկելու հայցերի նկատմամբ ևս կիրառելի են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ վիճարկման հայցերին վերաբերող իրավական նորմերը», հիմնազուրկ է այն պատճառաբանությամբ, որ ՀՀ փաստաբանների պալատը վարչական մարմին չի հանդիսանում, հետևաբար, դրա գործունեության արդյունքում կայացված ակտերը, ներառյալ՝ հայցադիմումով վիճարկվող որոշումը, չեն կարող բնորոշվել որպես վարչական ակտ և այդպիսով դառնալ վարչական արդարադատության վերահսկողության օբյեկտ:

Ավելին, վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքի իրացման նպատակով օրենսդրի կողմից սահմանված կանոններին համապատասխան անձը վարչական դատարան կարող է վիճարկման հայց ներկայացնել միայն պետական մարմնի (դրա պաշտոնատար անձի կողմից) ընդունված միջամտող վարչական ակտերի դեմ:

Վարչական ակտի, այդ թվում՝ նաև՝ միջամտող վարչական ակտի հասկացությունները սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով, որի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն, իսկ միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարությունը դա վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ փաստաբանների պալատը նույն օրենքի հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են նույն օրենքով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ փաստաբանների պալատը չի հանդիսանում վարչական մարմին և վերջինիս կողմից որոշումը չի ընդունվում հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով:

Այսպես, անձի իրավունքների և ազատությունների խախտման պնդումը միայն դեռևս բավարար չէ վեճը ՀՀ վարչական դատարանում քննության ենթակա դարձնելու

վերաբերյալ եզրահանգում կատարելու համար, քանի դեռ այդպիսի խախտման հետևանքով առաջացող դատական գործը չի ծագում հանրային իրավահարաբերությունից:

Հիմք ընդունելով վերը նշված նորմերն ու ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները և դրանք համադրելով հայցապահանջի հետ՝ գտնում են, որ տվյալ դեպքում հայցն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, քանի որ հայցվորի պահանջն ուղղված է ՀՀ փաստաբանների պալատի դեմ, որը չի հանդիսանում հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, իսկ իր կողմից ընդունված որոշումը չի կարող համարվել վարչական ակտ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. Հակոբյան

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Բաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/4336/02/15 2021թ.
 Բաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/4336/02/15
 Նախագահող դատավոր՝ Գ. Խանդանյան
 Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
 Հ. Եսոբյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՎՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի մարտի 24-ին գրավոր ընթացակարգով քննելով Նարեկ Ասատրյանի ներկայացուցիչ Լևոն Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.01.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Սիմարքրիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Նարեկ Ասատրյանի, երրորդ անձինք Աշոտ Հովհաննիսյանի, «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի՝ պատճառով և նյութական վնասի հատուցման պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Նարեկ Ասատրյանից հոգուտ իրեն բռնագանձել 240.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառով և նյութական վնասի գումար, 30.12.2012 թվականից սկսած 240.000 ՀՀ դրամ պարտքի գումարի վրա հաշվարկվող տոկոսները ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափով՝ մինչ պարտքի լրիվ մարումը, 120.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի ծախս, 12.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Թորոսյան) (այսուհետ՝ Դատարան) 13.06.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Վճովել է՝ «Նարեկ Ասատրյանից հոգուտ «Սիմարքրիս» ՍՊԸ-ի բռնագանձել 240.000 ՀՀ դրամ: Պատասխանող Նարեկ Ասատրյանից հոգուտ «Սիմարքրիս» ՍՊԸ-ի բռնագանձել 240.000 ՀՀ դրամի նկատմամբ սույն գործով վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պարտավորության կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով հաշվարկման ենթակա տոկոսների գումարի 2 տոկոսը: «Սիմարքրիս» ՍՊԸ-ն հայցն ընդդեմ Նարեկ Ասատրյանի, մասնակցությամբ՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք Աշոտ Հովհաննիսյանի, «Նաիրի ինչուրանս» ԱՍՊԸ-ի՝ 30.12.2012 թվականից մինչև սույն գործով վճիռն օրինական ուժի մեջ մտնելը 240.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով հաշվարկման ենթակա տոկոսները բռնագանձելու պահանջի մասին, մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.01.2019 թվականի որոշմամբ Ընկերության և Նարեկ Ասատրյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 13.06.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նարեկ Ասատրյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ, 9831-րդ, 1066-րդ հոդվածները, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարասպասարկության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 10-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ հոդվածները, 17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործով ներկայացված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի չեն վնասի հատուցման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի ընդհանուր դրույթները, այլ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 54-րդ գլխի դրույթները, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից հաստատված կանոնները, որպիսի պայմաններում հայցը ենթակա էր մերժման:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ եթե նույնիսկ պայմանականորեն դիտարկվի, որ պատահարում մեղավոր է համարվել Նարեկ Ասատրյանը, ապա վերջինս չի կրում ապահովագրված օբյեկտին պատճառված վնասի հատուցման պարտականությունը, քանի որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի ուժով ապահովագրական հատուցում տրամադրելու նման պարտականությունը կրում է ապահովագրական ընկերությունը:

Բացի այդ, նույնիսկ վարչական ակտի անվավեր ճանաչումը, որով մեղավոր էր ճանաչվել Ընկերության աշխատակից Աշոտ Հովհաննիսյանը, դեռևս չի հանգեցնում այն կանխավարկածին, որ մեղավոր է Նարեկ Ասատրյանը: Այդուհանդերձ, մինչև գործի քննությունն սկսվելը, «Նաիրի Ինչուրանս» ԱՍՊԸ-ն պարտավոր էր 5 աշխատանքային օրվա ընթացքում որոշում ընդունել կրկին փորձաքննություն նշանակելու մասին՝ պարզելու վթարի պատճառները: Վերջինս, սակայն, նման անգործություն դրսևորելով և նպատակ հետապնդելով ապահովագրական հատուցում չտրամադրելու, մերժել է ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ Ընկերության պահանջը:

Քննարկվող պարագայում, թե՛ Դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը հաշվի չեն առել, որ ներկայացված հայցի նկատմամբ կիրառելի իրավունքը սխալ է ընտրված,

որի հիմքով որպես պատասխանող Նարեկ Ասատրյանի հանդես գալն անթույլատրելի է: Արդյունքում, Դատարանը խախտել է 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը: Միաժամանակ գործի քննության ընթացքում ձեռք բերված ապացույցներով, ինչպես նաև կիրառելի իրավունքի սահմանման ժամանակ Դատարանը պետք է պարզեր՝ արդյոք պատասխանող Նարեկ Ասատրյանը պատշաճ պատասխանող է հանդիսանում, այնուհետև՝ վերլուծել վնաս պատճառելու տարրերի առկայությունը: Նման իրավական վերլուծությունը հիմնավորված կլիներ, եթե հայցը ներկայացվեր ընդդեմ «Նաիրի Ինչուրանս» ԱՄՊԸ-ի, որի քննության արդյունքում պետք է պարզվեր, թե կա արդյոք Նարեկ Ասատրյանի մեղավորությունը սույն գործի փաստերի առնչությամբ և եթե կա, ապա ապահովագրական ընկերությանը պարտավորեցներ վճարել փորձաքննությամբ սահմանված 240.000 ՀՀ դրամը: Ուստի, Վերաքննիչ դատարանը, պատշաճ չզննահատելով վերը նշված հանգամանքները, սխալ եզրահանգման է եկել կիրառելի իրավունքի պատշաճության վերաբերյալ, որի արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական, լիարժեք հիմնավորված և պատճառաբանված չէ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Նարեկ Ասատրյանն ապահովագրական պատահարի առնչությամբ կարող է դառնալ որպես պատշաճ պատասխանող միայն այն դեպքում, երբ հայցը կներկայացվի «Նաիրի Ինչուրանս» ԱՄՊԸ-ի կողմից «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի՝ հետադարձ պահանջի որևէ հիմքի առկայության դեպքում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/1184/05/13 վարչական գործի վճռի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ վերջինիս դիրքորոշման մեջ առկա չէ որևէ նշում, որ տվյալ պատահարում մեղավոր հանդիսանում է Նարեկ Ասատրյանը: ՀՀ վարչական դատարանի վճռով ընդամենն անվավեր է ճանաչվել Աշոտ Հովհաննիսյանին վարչական տույժի ենթարկելու որոշումը, ինչը չի վերացնում վերջինիս մեղավորության փաստը կատարված վթարի մեջ, հատկապես, որ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 30.01.2013 թվականի եզրակացությունը մնացել է անփոփոխ, իսկ այդ եզրակացության համաձայն՝ տեղի ունեցած վթարի մեջ մեղավոր է ճանաչվել սույն քաղաքացիական գործով երրորդ անձ Աշոտ Հովհաննիսյանը: Այսինքն՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 30.01.2013 թվականի եզրակացության համաձայն՝ տեղի ունեցած վթարի մեջ Նարեկ Ասատրյանի անմեղությունն ապացուցված է: Հետևաբար՝ Դատարանը հիմնվել է այնպիսի ապացույցի վրա, որը թույլատրելի և վերաբերելի չէ՝ խախտելով 17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը, որը կրկին Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.01.2019 թվականի որոշումը և հայցն ամբողջությամբ մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ըստ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ավագ հետաքննիչ Ս. Պողոսյանի 30.01.2013 թվականի թիվ 2-10645 եզրակացության՝ պարզվել է, որ 30.12.2012 թվականին, ժամը 2100-ի սահմաններում քաղաքացի Աշոտ Ալեքսանդրի Հովհաննիսյանն իրեն վստահված «ՇԿՌԴԱ» մակնիշի L 3809 h/h-ով ավտոմեքենան վարել է Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցով՝ Մազմանյան փողոցի կողմից դեպի Մարգարյան փողոցի ուղղությամբ, և մոտենալով թիվ 188 շենքին՝ կանգառ է կատարել ճանապարհի աջ մասում մայթեզրի մոտ: Որոշ ժամանակ կանգնելուց հետո ավտովարորդ Ա. Հովհաննիսյանը վերսկսել է երթևեկությունը, որի ընթացքում թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին»

ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև Ճանապարհային երթևեկության կանոնների 36-րդ և 39-րդ կետերի պահանջների խախտումներ, այն է՝ վերսկսելով երթևեկությունը ճանապարհի աջ մասից, կատարել է դեպի ձախ վերադասավորում, որի ընթացքում ճանապարհը չի զիջել իր հարևան՝ ձախ գոտիով առանց ուղղությունը փոխելու իրեն համընթաց երթևեկող քաղաքացի Նարեկ Հենգելի Ասատրյանի կողմից վարած «ՕՊԵԼ» մակնիշի 33 OV 377 հ/հ-ով ավտոմեքենային, որի հետևանքով վերջինս բախումից խուսափելու նպատակով դեպի աջ է մանևրել և իր վարած ավտոմեքենան մասամբ դուրս է բերել հանդիպակաց ուղեմաս՝ ցանկանալով շրջանցել վերջինիս, որի ընթացքում իր ավտոմեքենան առջևի աջ կողային մասով ընդհարվել է իր վարած ավտոմեքենայի առջևի ձախ անկյունային մասին և պատճառել գույքի վնասում:

Վերոգրյալը հիմնավորվել է վթարի վայրում կազմված դեպքի վայրի և տրանսպորտային միջոցների զննության արձանագրություններով, վարորդների բացատրություններով, ինչպես նաև գործի ողջ նյութերով:

Աշոտ Ալեքսանդրի Հովհաննիսյանը թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև Ճանապարհային երթևեկության կանոնների 36-րդ և 39-րդ կետերի պահանջների խախտումներ, ինչով պայմանավորել է տվյալ ընդհարումը և գույքի վնասի առաջացումը, և ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.6-րդ հոդվածի 2-րդ մասով (...) **(հատոր 1-ին, գ.թ. 46-47):**

2) Թիվ ՎԴ/1184/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 22.10.2014 թվականի վճռի համաձայն՝ դատարանը գործում առկա փաստական հանգամանքների, ՀՀ ոստիկանության ՃՈ հետաքննիչ Ս. Պողոսյանի 30.01.2013 թվականի թիվ 2-10645 եզրակացության, վարչական վարույթի մասնակիցների բացատրության, վարչական վարույթի ժամանակ կազմված 30.12.2012 թվականի ժամը 22:37 իրադրության սխեմայի և իրավական հիմնավորումների հիման վրա եզրակացրել է, որ տվյալ դեպքում «ՇԿՈՂԱ» մակնիշի L3809 համարանիշի վարորդ Աշոտ Հովհաննիսյանը, վերսկսելով երթևեկությունը, ճանապարհի աջ մասից կատարել է դեպի ձախ վերադասավորում, որի ընթացքում իրեն համընթաց երթևեկող Նարեկ Հենգելի Ասատրյանը, որը վարել է «ՕՊԵԼ» մակնիշի 33 OV 377 հ/հ-ով ավտոմեքենան, ճանապարհը չի զիջել Աշոտ Հովհաննիսյանին և վազանց կատարելով դուրս է եկել հանդիպակաց գոտի և առանց համոզված լինելու, որ վազանցվող տրանսպորտային միջոցի համար խոչընդոտ չի ստեղծի, փորձել է վերադառնալ նախկինում զբաղեցրած գոտի: Արդյունքում Նարեկ Ասատրյանն իր կողմից վարած «ՕՊԵԼ» մակնիշի 33 OV 377 հ/հ-ով ավտոմեքենայի առջևի աջ կողային մասով ընդհարվել է Ա. Հովհաննիսյանի վարած «Շկոդա» մակնիշի L3809 հ/հ ավտոմեքենայի առջևի ձախ անկյունային մասին և պատճառել գույքի վնասում: Նշվածից դատարանը եզրակացրել է, որ Ա. Հովհաննիսյանի կողմից թույլ չի տրվել ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 39-րդ կետի պահանջների խախտում: Ինչ վերաբերում է վարչական մարմնի կողմից արձանագրված այն հանգամանքին, որ Ա. Հովհաննիսյանի կողմից խախտվել է նաև նույն կանոնների 36-րդ կետի պահանջը, ապա դատարանը գտել է, որ հայցվորի կողմից երթևեկությունը վերսկսելուց և ճանապարհի աջ մասից դեպի ձախ վերադասավորվելուց առաջ երթևեկության այլ մասնակիցներին, այդ թվում՝ համընթաց երթևեկող Ն. Ասատրյանին նախազգուշացնելու համար համապատասխան ազդանշան տալու հանգամանքը հաստատվել է վարչական վարույթի նյութերում առկա ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցների կողմից տրված բացատրություններով: Նարեկ Ասատրյանը տեսել է համընթաց երթևեկության գոտի վերադարձող «Շկոդա» մակնիշի ավտոմեքենան, նկատել է համապատասխան ազդանշանը: Նման պայմաններում դատարանը եզրակացրել է, որ հայցվոր Ա. Հովհաննիսյանի կողմից թույլ չի տրվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի, ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 36-րդ և 39-րդ կետերի պահանջների խախտում, որի հիման վրա վարչական մարմնի կողմից հայցվորը ենթարկվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ

ՀՀ օրենսգրքի 124.6-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության: Դատարանը վճռել է Աշոտ Հովհաննիսյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, Երրորդ անձ Նարեկ Ասատրյան՝ «ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 01.02.2013թ. թիվ ԱԷ 124536 որոշումն ամբողջությամբ վերացնելու» պահանջի մասին, բավարարել: Անվավեր ճանաչել ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 01.02.2013 թվականի թիվ ԱԷ 124536 որոշումը՝ Աշոտ Հովհաննիսյանին 30.000 դրամի չափով վարչական տույժի ենթարկելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 13-18**):

3) Ընկերությունը 28.11.2014 թվականին ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում է ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ-ին (**հատոր 1-ին, գ.թ. 43-45**):

4) «Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ-ի 02.02.2015 թվականի «ԱՊՊԱ պայմանագրի գծով ապահովագրական հատուցումը մերժելու վերաբերյալ» թիվ 0343 որոշման համաձայն՝ վնասի չափը կազմել է 240.000 ՀՀ դրամ: Միաժամանակ որոշմամբ նշվել է, որ ըստ ՀՀ վարչական դատարանի կողմից 22.10.2014 թվականին թիվ ՎԴ/1184/05/13 վարչական գործով կայացված վճռի, որն օրինական ուժի մեջ է մտել 24.11.2014 թվականին, հայցվոր Աշոտ Հովհաննիսյանը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության՝ «ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 01.02.2013 թվականի թիվ ԱԷ 124536 որոշումն ամբողջությամբ վերացնելու» պահանջի մասին, որը դատարանը բավարարել է, սակայն վճռով չի հաստատվել OPEL VECTRA 2.0 L մակնիշի 33 OV 377 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդի՝ տվյալ ճՏՊ-ի առաջացման մեջ մեղքի առկայությունը, ուստի «Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ-ն հատուցում տրամադրելու պարտականություն չի կրել և որոշել է մերժել Սամվել Միմոնյանի կողմից ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ 28.11.2014 թվականին Ընկերության ներկայացրած դիմումը (**հատոր 1-ին, գ.թ. 42**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերևյալ իրավական հարցադրմանը. հանդիսանում է արդյոք ապահովադիրը պարզաձև պարասխանող այն դեպքում, երբ ապահովագրական պարահարի հերևանքով առաջացած վնասի հարուցման պահանջն օրենքի ուժով դրված է ապահովագրական ընկերության վրա, սակայն հայցը ներկայացվել է ընդդեմ ապահովադրի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 996-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ *ապահովագրողը*, որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց պարտավորվում է մյուս կողմին՝ *ապահովադրին* կամ նրա մատնանշած անձին (շահառուին), որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել որոշակի իրադարձության (իրադարձությունների) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում), եթե այդ իրադարձությունների տեղի

ունենալը կրում է հավանական և (կամ) պատահական բնույթ և կախված չէ կողմերի կամ ապահովագրված անձի կամ շահառուի կամքից (բացառությամբ կյանքի ապահովագրության այն դեպքերի, երբ հատուցվում է որոշակի հավաստի և ակնկալվող իրադարձության տեղի ունենալը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9831-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովադիրն ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած անձն է:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից ապահովագրական պայմանագրի հիման վրա ապահովադիրին կամ շահառուին վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ապահովագրական պատահարն ապահովագրական պայմանագրով նախատեսված դեպքն է կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու ուժով ապահովագրողը պարտավորվում է ապահովադիրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, նույն օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) իրավական ակտերով, Բյուրոյի կանոններով և իրավական այլ ակտերով:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրով նույն օրենքով սահմանված պայմաններով ապահովագրվում է տուժած անձանց պատճառված վնասների հատուցման համար ապահովագրված անձանց պատասխանատվությունը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տուժողի փաստացի կրած վնասները հատուցելու համար ապահովագրական հատուցումն անբավարար լինելու դեպքում ապահովագրական հատուցման և վնասի փաստացի չափի միջև եղած տարբերությունը **հասրուցում է վնասս պատճառողը**՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1066-րդ հոդվածի համաձայն: Տուժողի փաստացի կրած այն վնասները, որոնք հատուցման ենթակա չեն ԱՊՊԱ պայմանագրով (Բյուրոյի կողմից), **հասրուցում է վնասս պատճառողը**՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 25-րդ հոդվածով սահմանված դեպքերի՝ ԱՊՊԱ պայմանագրով պարտադիր ապահովագրման ենթակա է այն քաղաքացիական պատասխանատվությունը, որը բխում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործմամբ տուժողին պատճառված հետևյալ վնասներից.

1) անձնական վնասներ՝ տուժողի առողջությանը պատճառված վնասներ և դրանց հետևանքով կորցրած աշխատավարձ (եկամուտներ), ինչպես նաև տուժողի մահ.

2) գույքին պատճառված վնասներ:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) ապահովագրական հատուցումը վճարում է ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումն ընդունելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ապահովագրական հատուցումը

պարբերական վճարումների ձևով իրականացվելու դեպքում՝ Բյուրոյի կանոններով սահմանված ժամկետներում: (...):

ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ սեփականատերը, իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրելով, *փաստացի հնարավորություն է սպասում ապահովագրավճարի դիմաց ապահովագրողին փոխանցելու վնասը (որը կարող է պատճառված լինել ինչպես սեփականատերի, այնպես էլ ավտոմեքենայի լիազորված փոխապետողի կողմից) հատուցելու իր պարտավանությունը*: Ապահովագրողն էլ օրենքով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում հնարավորություն ունի հետադարձ պահանջի միջոցով հետ ստանալու իր կողմից կատարված հատուցումը (...) (լրեն «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ն ընդդեմ «ՄՄԱՐՏՍՈՎԹ» ՍՊԸ-ի և Մարգիս Գրիգորյանի թիվ ԿԳ/2015/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ սեփականատերը, իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրելով, փաստացի հնարավորություն է ստանում ապահովագրավճարի դիմաց ապահովագրողին փոխանցելու վնասը հատուցելու իր պարտականությունը: Ընդ որում, վերը վկայակոչված նորմերի վերլուծության արդյունքում Վճարեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը, ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը և նշված օրենքով հանգամանալից կերպով կարգավորելով ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի, ինչպես նաև օրինական հիմքերով դրանք տիրապետող այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց պատճառված վնասներից բխող պատասխանատվության ապահովագրությունը, որոշակիություն է հաղորդել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով պատճառված վնասների կապակցությամբ իրավակիրառ պրակտիկայում հաճախ ծագող հարաբերություններին՝ լուծելով մի շարք խնդիրներ:

Վճարեկ դատարանը գտնում է, որ ամրագրելով ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության *պարտադիր* ապահովագրությունը՝ օրենսդիրը նախ և առաջ կարևորել է տուժողի շահերը՝ մասնավորապես նախատեսելով այնպիսի կարգավորումներ, որոնց հիման վրա տուժողն իրեն պատճառված վնասի հատուցումը պահանջում և ստանում է ոչ թե անմիջապես վնասը պատճառող անձից, այլ մասնագիտացված սուբյեկտից՝ ապահովագրողից, որը, իր գործունեությունն իրականացնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա, ապահովում է տուժողի կրած վնասների հատուցումը՝ այդ իսկ կարգավորումներով նախատեսված հիմքերով և կարգով: Մինևս ժամանակ օրենսդիրը որոշակիություն է մտցրել վնաս պատճառողի հետ հարաբերություններում՝ վերջինիս հնարավորություն ընձեռելով նախապես կնքված ԱՊՊԱ պայմանագրով որոշակի ապահովագրավճարի դիմաց ապահովագրողին փոխանցել իր ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով պատճառված վնասի հատուցման պարտականությունը և այդպիսով՝ տուժողի հետ անմիջապես չմտնել պատճառված վնասի հատուցման կապակցությամբ առաջացող հարաբերությունների մեջ:

Վճարեկ դատարանն արձանագրում է, որ չնայած վերոշարադրյալ ընդհանուր մտեցմանը՝ օրենսդիրը, այնուամենայնիվ, նախատեսել է որոշակի իրավիճակներ, երբ տուժողն իր պահանջը ներկայացնում է անմիջապես վնաս պատճառողին և նրանից է ստանում հատուցում: Այդպիսի իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ օրինակ՝ տուժողի փաստացի կրած վնասները հատուցելու համար ապահովագրական հատուցումն անբավարար է: Նման իրավիճակում վնաս պատճառողն ապահովագրական հատուցման և վնասի փաստացի չափի միջև եղած տարբերությունը հատուցում է տուժողին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոշարադրյալ դիրքորոշումները բխում են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն նախատեսելու նպատակներից: Մասնավորապես, նման կերպով նպատակ է հետապնդվել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով պատճառվող վնասների հատուցման հարաբերություններում մասնագիտացված սուբյեկտներ ներդնելով, նրանց գործունեությունը հստակ կարգավորելով և նրանց կողմից իրականացվող գործողությունների շրջանակը կանխորոշելով պաշտպանել թե՛ տուժողների, և թե՛ վնաս պատճառողների շահերը:

Այսպիսով, սահմանելով ավտոտրանսպորտային միջոցների օգտագործմամբ տուժողին պատճառված վնասից ծագած քաղաքացիական պատասխանատվության արդյունքում առաջացած ապահովագրական հատուցման բնույթը՝ օրենսդիրն ամրագրել է, որ այն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից ապահովագրական պայմանագրի հիման վրա ապահովագրին կամ շահառուին վճարման ենթակա գումարն է: Հստակեցնելով նշված կանոնը՝ օրենսդիրը հավելել է նաև, որ տուժողը (կամ նրա իրավահաջորդը) ապահովագրական հատուցում ստանալու համար իրավունք ունի դիմելու վնաս պատճառած անձի պատասխանատվությունն ապահովագրած ապահովագրական ընկերությանը կամ որոշ դեպքերում՝ «Հայաստանի ավտոապահովագրողների քյուրո» իրավաբանական անձանց միությանը (այսուհետ՝ Բյուրո): Վերը նշված իրավանքումների բովանդակությունից հետևում է, որ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով առաջացած վնասից ծագած **հապրուցումը վճարման է ենթակա ոչ թե ապահովագրի, այլ՝ վնաս պատճառած անձի պարասխանատվությունն ապահովագրած ապահովագրական ընկերության (ապահովագրող) կողմից:** Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ ապացուցվում է, որ վնաս պատճառած անձը թույլ է տվել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթներից որևէ մեկի խախտում՝ ապահովագրական ընկերությունը վնաս պատճառած անձի նկատմամբ ձեռք է բերում հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք:

Ամփոփելով վերոշարադրյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր և ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով տուժողին և (կամ) նրա գույքին պատճառվել է վնաս, ապա վնասի հատուցման պահանջ պետք է ներկայացվի ապահովագրական ընկերությանը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը դատարանի կողմից պարզելու և անհրաժեշտության առկայության դեպքում ոչ պատշաճ կողմի փոխարինման հարցին:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.8-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում մասնավորապես պարզում է գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը:

Համանման կարգավորում է ամրագրված նաև սույն վճռաբեկ բողոքի քննության պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, որի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է դատավարության մասնակիցների կազմը, լուծում է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու հարցը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝

1. դատարանը, գործի նախապատրաստման կամ քննության ժամանակ, պարզելով, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի կողմից, որին պատկանում է պահանջի իրավունքը կամ ոչ այն անձի դեմ, ով պետք է պատասխանի այդ հայցով, կարող է հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ նա կամ պատասխանողը փոխարինվեն պատշաճ հայցվորով կամ պատասխանողով:

2. Եթե հայցվորը համաձայն չէ իրեն ուրիշ անձով փոխարինելուն, ապա այդ անձը կարող է գործին մասնակցել որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ:

3. Եթե հայցվորը համաձայն չէ պատասխանողին ուրիշ անձով փոխարինելուն, դատարանը կարող է այդ անձին մասնակից դարձնել որպես երկրորդ պատասխանող:

4. Անպատշաճ կողմին փոխարինելուց հետո գործի քննությունն սկսվում է սկզբից: Համանման կարգավորում է ամրագրված նաև վճռաբեկ բողոքի քննության պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածով, որի համաձայն՝

1. դատարանը, մինչև նախնական դատական նիստի ավարտը պարզելով, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի դեմ, որը պետք է պատասխանի այդ հայցով, կարող է հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ պատասխանողը փոխարինվի պատշաճ պատասխանողով:

2. Ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու մասին դատարանը կայացնում է որոշում՝ այն երեք օրվա ընթացքում ուղարկելով գործին մասնակցող անձանց, այդ թվում նաև ոչ պատշաճ և պատշաճ պատասխանողներին:

3. Ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելուց հետո դատարանն իրականացնում է սույն օրենսգրքի 167-րդ հոդվածով նախատեսված դատավարական գործողությունները:

4. Պատշաճ պատասխանողով փոխարինված ոչ պատշաճ պատասխանողի կրած դատական ծախսերը, անկախ գործի ելքից, ենթակա են հատուցման հայցվորի կողմից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է գործը դատաքննության նախապատրաստելու՝ որպես առանձին դատավարության փուլի առանձնահատկությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները: Այսինքն՝ դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար, և գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ **դատարանի գործողությունները պետք է ուղղված լինեն** իրավահարաբերության ծագման պահին գործող] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանորմերի կիրառմանը: [Իրավահարաբերության ծագման պահին գործող] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 49-րդ և 149.8-րդ հոդվածների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ ապացույցներ ներկայացնում են գործին մասնակցող անձինք, սակայն դատարանը գործի նախապատրաստական փուլում ապացուցման առարկան և բեռը բաշխելուց հետո կողմերին հնարավորություն է ընձեռում ներկայացնելու այն ապացույցները, որոնցով վերջիններս կարող են հիմնավորել իրենց պահանջները և առարկությունները: Հետևաբար գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական ինստիտուտի ամրագրումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ, և դատարանն այդ փուլով դատավարությունը պետք է անցկացնի իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար (*տե՛ս, Երևանի քաղաքապետարանի «Երևանի Էլեկտրապրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի թիվ ԵԷԴ/1637/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործը դատաքննության նախապատրաստելը՝ որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ, արդարադատության արդյունավետության, անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման համար պայմաններ ապահովող դատավարական գործողությունների և դրանց հիման վրա առաջացող իրավահարաբերությունների ամբողջություն (համակարգ) է: ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նշված նպատակի իրականացումը պայմանավորված է դատավարության այս փուլի խնդիրների ճիշտ իրականացմամբ: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ [իրավահարաբերության ծագման պահին գործող] քաղաքացիադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հետևյալ հիմնական խնդիրները՝ *վիճելի իրավահարաբերության քնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելը, դատավարության մասնակիցների կազմը ճշտելը և նրանց մասնակցությունն ապահովելը, գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (սպացուցման առարկան) որոշելը, սպացույցների բավարար համակցության ձևավորումը (սպացույցների կենտրոնացումը) ապահովելը (տե՛ս ըստ Արեգնազ Կարապետյանի դիմումի՝ թիվ ԳԴ4/0504/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):*

Նախկինում կայացված որոշումներից մեկով անդրադառնալով ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մրցակցային դատավարությունում պատշաճ պատասխանող ներգրավվելը պետք է լինի միմիայն հայցվորի պարտականությունը, կամ նման ներգրավում պիտի կատարվի հայցվորի միջնորդության հիման վրա: Ոչ պատշաճ պատասխանողի դեմ ներկայացված հայցը ենթակա է մերժման: Այս հարցում դատարանի ակտիվ դերակատարությունը կարող է վտանգել դատավարության մրցակցությունը և խաթարել դրա էությունը: Բոլոր դեպքերում այս տրամաբանությունից ելնելով դատարանները պետք է մեկնաբանեն և կիրառեն իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածը: **Միաժամանակ, (...) ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ առանձնահատուկ դեպքերում, իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի հիման վրա, այնուամենայնիվ դատարանը պետք է կրի գործի քննությանը պատշաճ պատասխանողին ներգրավելու պարտականություն (տե՛ս ՀՀ ԿԱ ՀՊԾ Էրեբրնու ՀՏ-ն ընդդեմ Ա/2 Վլաչեսլավ Պետրոսյանի թիվ 3-436(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը):**

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե՛ իրավահարաբերության ծագման պահին գործող և թե՛ վճռաբեկ բողոքի քննության ընթացքում գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերը դատաքննությանը նախապատրաստելու փուլի կարևորագույն խնդիրներից մեկն են համարել և համարում դատարանի կողմից դատավարության մասնակիցների կազմը պարզելը և գործի քննությանն այլ անձանց ներգրավելու հարցը լուծելը, որը ենթադրում է նաև անհրաժեշտության դեպքում ոչ պատշաճ պատասխանողի փոխարինում:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Նարեկ Ասատրյանի և գործով երրորդ անձ Աշոտ Հովհաննիսյանի մասնակցությամբ տեղի է ունեցել ավտոտրանսպորտային պատահար: Պատահարի վերաբերյալ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայության ավագ հետաքննիչ Ս. Պողոսյանի կողմից 30.01.2013 թվականին կազմվել է թիվ 2-10645 եզրակացությունը, որի հիման վրա Աշոտ Հովհաննիսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.6-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նշված եզրակացությունն Աշոտ Հովհաննիսյանի կողմից վիճարկվել է ՀՀ վարչական դատարանում: Արդյունքում, ՀՀ վարչական դատարանը, թիվ ՎԳ/1184/05/13 վարչական գործի շրջանակներում 22.10.2014 թվականին կայացված վճռով, Աշոտ Հովհաննիսյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայության բավարարել է, և անվավեր է ճանաչել ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 01.02.2013 թվականի թիվ ԱԷ 124536 որոշումը՝ Աշոտ Հովհաննիսյանին 30.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժի ենթարկելու վերաբերյալ:

Գործի նյութերով հիմնավորվել է նաև, որ Նարեկ Ասատրյանի վարած «ՕՊԵԼ» մակնիշի 33 ՕՎ 377 հ/հ-ով ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրվել է «Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ-ում: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ Աշոտ Հովհաննիսյանի վարած «Շկոդա» մակնիշի L3809 համարանիշի ավտոմեքենայի սեփականատեր Ընկերությունն ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում է ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ-ին, որն ապահովագրական ընկերության կողմից մերժվել է: Մերժման հիմքում դրվել է ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԳ/1184/05/13 վարչական գործի շրջանակներում 22.10.2014 թվականին կայացված վճիռը:

Ընկերությունը, նկատի ունենալով, որ իրեն պատճառված 240.000 ՀՀ դրամի չափով վնասը «Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ-ի կողմից չի հատուցվել, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ և 1072-րդ հոդվածների դրույթները, դիմել է դատարան՝ պահանջելով Նարեկ Ասատրյանից հօգուտ իրեն բռնագանձել 240.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված նյութական վնասի գումար, 30.12.2012 թվականից սկսած 240.000 ՀՀ դրամ պարտքի գումարի վրա հաշվարկվող տոկոսները ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափով՝ մինչ պարտքի լրիվ մարումը, 120.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի ծախս, 12.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատարանի 13.06.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է Նարեկ Ասատրյանից հօգուտ Ընկերության բռնագանձել 240.000 ՀՀ դրամ, ինչպես նաև՝ բռնագանձել 240.000 ՀՀ դրամի նկատմամբ վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պարտավորության կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով հաշվարկման ենթակա տոկոսների գումարի 2 տոկոսը: Հայցը՝ 30.12.2012 թվականից մինչև վճիռն օրինական ուժի մեջ մտնելը 240.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով հաշվարկման ենթակա տոկոսները բռնագանձելու պահանջի մասով, մերժվել է: Դատարանը, անդրադարձ կատարելով հետևյալ հանգամանքներին՝ պարտապանի ոչ օրինաչափ վարքագիծ, վնասներ, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայություն և պարտապանի մեղք, գտել է, որ սույն գործով առկա են պատասխանողից 240.000 ՀՀ դրամի չափով պատճառված վնասը բռնագանձելու բոլոր հիմքերը:

Վերաքննիչ դատարանի 11.01.2019 թվականի որոշմամբ Ընկերության և Նարեկ Ասատրյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 13.06.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Նարեկ Ասատրյանի վերաքննիչ բողոքի այն փաստարկին, թե Դատարանն անտեսել է, որ գործով որպես պատասխանող ներգրավված Նարեկ Ասատրյանը ոչ միայն պատշաճ պատասխանող չի հանդիսանում, այլ նաև գործով որպես պատասխանող պետք է ներգրավվեր «Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ-ն, արձանագրել է, որ գործով ի սկզբանե որպես պատասխանող ներգրավված է եղել Նարեկ Ասատրյանը, իսկ պատասխանողի պատշաճության մասով որևէ հարց չի բարձրացվել կողմերից և ոչ մեկի կողմից, այդ կապակցությամբ որևէ դիրքորոշում ևս գործով կողմերից որևէ մեկի կողմից չի հայտնվել: Ուստի, հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությամբ տրված կարգավիճակով Վերաքննիչ դատարանը համարվում է առաջին ատյանի դատարանի դատական ակտերը բացառապես վերանայող դատական ատյան, այսինքն՝ օժտված է սահմանափակ լիազորություններով, Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ նման պայմաններում

հնարավորություն չունի ցուցաբերել հայեցողական մոտեցում և «վերանայել» բողոքով առաջադրված մի հարց, որն առհասարակ քննարկման առարկա չի դարձվել առաջին ատյանի դատարանում: Անդրադառնալով բողոքի այն հիմքին, որ գործով ներկայացված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի չեն վնաս պատճառելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի դրույթները, այլ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 54-րդ գլխի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի դրույթները և Բյուրոյի կանոնները՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ սույն գործի առանձնահատկություններով պայմանավորված՝ առկա է վնաս, որը պատճառվել է առավել վտանգի աղբյուրով, ընդ որում՝ մեկ այլ առավել վտանգի աղբյուրին, ուստի նման իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածում ամրագրված իրավանորմի դրույթները: Միաժամանակ, վերլուծելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 1-ին մասի 1-ին կետի դրույթները, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ այդ նորմի բովանդակությունից հետևում է, որ բողոքաբերի կողմից վկայակոչած վերը նշված օրենքի դրույթներն ուղղակիորեն չեն կարող կիրառելի լինել քննարկվող՝ վնասի հատուցմանն ուղղված իրավահարաբերության նկատմամբ: Հետևաբար՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի կիրառման մասով, հիմնավոր չէ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը պատշաճ կերպով չի պարզել գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը և քննարկման առարկա չի դարձրել սույն գործով ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման հարցը, իսկ Վերաքննիչ դատարանը տվյալ հարցի վերաբերյալ հանգել է սխալ եզրահանգման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ, 9831-րդ, 996-րդ հոդվածների, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի մի շարք հոդվածների համալիր վերլուծությունից բխում է, որ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության դեպքում ապահովագրական պատահարի հետևանքով գույքին պատճառված վնասի հատուցման պահանջ օրենքի ուժով ներկայացվում է ապահովագրական ընկերությանը, բացառությամբ որոշ դեպքերի: Այսինքն, ապահովագրական պատահարից տուժող անձը վնասի հատուցման պահանջ ներկայացնելու իրավունք ունի ապահովագրական ընկերությանը, այլ ոչ թե՛ վնաս պատճառած անձին: Որպես բացառություն օրենսդիրը նախատեսել է որոշ դեպքեր, երբ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմաններում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործմամբ տուժողին պատճառված օրենքով սահմանված անձնական կամ գույքային վնասները ենթակա են հատուցման անմիջապես հենց վնաս պատճառողի կողմից (օրինակ՝ տուժողի կրած այն վնասները, որոնք հատուցման ենթակա չեն ԱՊՊԱ պայմանագրով (Բյուրոյի կողմից), կամ տուժողի փաստացի կրած վնասների և ապահովագրական հատուցման տարբերությունը՝ ապահովագրական հատուցումն անբավարար լինելու դեպքում):

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաշվի առնելով քննարկվող իրավահարաբերության բնույթը և գործը դատաքննության նախապատրաստելու՝ որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլի հիմնական խնդիրները, Դատարանը, անկախ գործին մասնակցող անձանց կողմից ցուցաբերած նախաձեռնության, պետք է պատշաճ կերպով պարզեր գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը, գործի քննությանն այլ անձանց ներգրավելու և ոչ պատշաճ պատասխանողին (տվյալ դեպքում՝ Նարեկ Ասատրյանին) պատշաճ պատասխանողով փոխարինելու հարցերը, որպիսի գործողությունները Դատարանի կողմից

պատշաճ չեն իրականացվել, և որպիսի հանգամանքն էլ անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այլ կերպ, տվյալ իրավիճակում Դատարանը, առանց պատշաճ կերպով գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը պարզելու և ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու հարցը քննարկելու, գործը քննել և լուծել է՝ գործի քննության ընթացքում և վճռով որպես պատասխանող դիտելով Նարեկ Ասատրյանին այն պայմաններում, երբ ապահովագրական պատահարի հետևանքով վնասի հատուցման պահանջ պետք է ներկայացվի ապահովագրողի՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՄՊԸ-ի դեմ, որպիսի հանգամանքն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն՝ գործով պատշաճ պատասխանողի ներգրավման հարցը լուծելու և ըստ այդմ՝ գործի նյութերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն իրականացնելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը՝ Նարեկ Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասով, բեկանելու և գործը՝ Նարեկ Ասատրյանից հոգուտ Ընկերության 240.000 ՀՀ դրամ, ինչպես նաև՝ 240.000 ՀՀ դրամի նկատմամբ վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պարտավորության կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով հաշվարկման ենթակա տոկոսները բռնագանձելու պահանջի մասով, նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համաձայն:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.01.2019 թվականի որոշումը՝ Նարեկ Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասով, և գործը՝ Նարեկ Ասատրյանից հոգուտ «Միմարքրիս» ՍՊԸ-ի 240.000 ՀՀ դրամ, ինչպես նաև՝ 240.000 ՀՀ դրամի նկատմամբ վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պարտավորության կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով հաշվարկման ենթակա տոկոսները բռնագանձելու պահանջի մասով, ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Բեկանված մասով դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2357/02/17**
2021թ.

Քաղաքացիական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ԵԿԴ/2357/02/17
Մ. Հարթենյան
Կ. Չիլինգարյան
Ա. Խառատյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի մարտի 19-ին

գրավոր ընթացակարգով քննելով Օվսաննա Մեսրոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-
րաքննիչ քաղաքացիական դատարանի 03.07.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի
«Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Քրիստինե Տոնոյանի և Օվսաննա
Մեսրոբյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Քրիստինե Տոնոյանից և Օվսաննա Մես-
րոբյանից համապարտության կարգով հոգուտ իրեն բռնագանձել 85.784 ԱՄՆ դոլար՝ որ-
պես պարտքի գումար, և 68.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուր-
քի գումար, ինչպես նաև՝ սկսած 01.06.2017 թվականից մինչև պայմանագրով վարկի մնա-
ցորդի գումարը՝ 41.601,10 ԱՄՆ դոլարը, վերադարձնելու օրը հաշվարկել և վերջիններից
համապարտության կարգով հոգուտ իրեն բռնագանձել պայմանագրի 1.1.2 կետով նախա-
տեսված տարեկան տոկոսադրույքը՝ ԿԲՀՏ+5.5% տոկոսի չափով, իսկ սկսած 01.06.2017
թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը հաշվարկել և Քրիս-
տինե Տոնոյանից ու Օվսաննա Մեսրոբյանից համապարտության կարգով հոգուտ իրեն

բռնագանձել պայմանագրի 1.1.12.1. և 1.1.12.2. կետերով նախատեսված տույժերի գումարը՝ հաշվարկված վարկի մնացորդի՝ 41.601,10 ԱՄՆ դոլարի ժամկետանց մասի և 41.601,10 ԱՄՆ դոլարի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի ժամկետանց մասի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար համապատասխանաբար ժամկետանց վարկի 0.15 տոկոսի չափով և ժամկետանց տոկոսագումարի 0.4 տոկոսի չափով:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.05.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է՝ Քրիստինե Տոնոյանից և Օվսաննա Մեսրոբյանից համապարտության կարգով հօգուտ Բանկի բռնագանձել՝ 85.784 ԱՄՆ դոլարին՝ բռնագանձման պահին համարժեք, ՀՀ դրամ՝ որպես պարտքի գումար, սկսած 01.06.2017 թվականից մինչև պայմանագրով վարկի մնացորդի գումարը՝ 41.601,10 ԱՄՆ դոլարին բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամը, Բանկին վերադարձնելու օրը, պայմանագրի 1.1.2 կետով նախատեսված հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքը՝ $4R \leq S + 5.5\%$ տոկոսի չափով, սկսած 01.06.2017 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը պայմանագրի 1.1.12.1. և 1.1.12.2. կետերով նախատեսված հաշվեգրվող տույժերի գումարը՝ հաշվարկված վարկի մնացորդի՝ 41.601,10 ԱՄՆ դոլարի ժամկետանց մասի և 41.601,10 ԱՄՆ դոլարին՝ բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի ժամկետանց մասի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար համապատասխանաբար ժամկետանց վարկի 0.15 տոկոսի չափով և ժամկետանց տոկոսագումարի 0.4 տոկոսի չափով, ինչպես նաև՝ 68.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատարանի 30.07.2018 թվականի լրացուցիչ վճռով լրացվել է 17.05.2018 թվականին կայացված վճիռը: Վճռվել է Քրիստինե Տոնոյանից և Օվսաննա Մեսրոբյանից համապարտության կարգով հօգուտ Բանկի բռնագանձել նաև 68.000 ՀՀ դրամ՝ որպես պարտքի գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահությամբ՝ Մ. Հարթենյան, դատավորներ՝ Կ. Զիլինգարյան, Ա. Խառատյան) 02.08.2018 թվականի որոշմամբ Քրիստինե Տոնոյանի և Օվսաննա Մեսրոբյանի անունից ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 14.03.2019 թվականի որոշմամբ Քրիստինե Տոնոյանի և Օվսաննա Մեսրոբյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ վերացվել է Վերաքննիչ դատարանի 02.08.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.07.2019 թվականի որոշմամբ Քրիստինե Տոնոյանի և Օվսաննա Մեսրոբյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.05.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վերաքննիչ դատարանի դատավոր Կ. Զիլինգարյանը ներկայացրել է հատուկ կարծիք:

Մույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Օվսաննա Մեսրոբյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը և 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը «Պետական րտորդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, իրավաստարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանն էլ հետևյալ փաստարկներով.

Դատարանը գործի քննության ընթացքում Օվսաննա Մեսրոբյանին պատշաճ չի ծանուցել դատական նիստի տեղի, ժամանակի և վայրի մասին, որպիսի պայմաններում վերջինս հնարավորություն չի ունեցել հայցապահանջի դեմ ներկայացնել առարկություն:

Օվսաննա Մետրոքյանը դատական նիստերին ներկա չի գտնվել, պատշաճ ծանուցված չի եղել, չի ունեցել հնարավորություն Բանկի հետ իր ունեցած բանակցությունների մասին հայտնելու, հայցապահանջի դեմ մասամբ առարկելու: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Օվսաննա Մետրոքյանը Դատարանի վճռի դեմ օրենքով սահմանված կարգով վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով ամբողջությամբ բեկանել 17.05.2018 թվականի վճիռը և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Վերաքննիչ դատարանը, սակայն 03.07.2019 թվականի որոշմամբ մերժել է բողոքը:

Վերաքննիչ դատարանը յուրովի է մեկնաբանել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը, անտեսել է օրենքի այն դրույթը, որ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար վճարվում է գույքային պահանջի գործերով վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափը: Մինչդեռ՝ բողոքարկվող որոշմամբ Վերաքննիչ դատարանը նախատեսված և հետաձգված պետական տուրքի գումարի վճարման չափը սահմանել է ոչ թե վիճարկվող գումարի 3 տոկոսի, այլ վիճարկվող գումարի 6 տոկոսի չափը: Նույն՝ մեկ բողոքի շրջանակում բողոքաբերներից յուրաքանչյուրից Վերաքննիչ դատարանը բռնագանձել է վիճարկվող գումարի 3 տոկոսը, այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է երկու պատասխանողի կողմից, սակայն ըստ էության հանդիսանում է մեկ վերաքննիչ բողոք: Հետևաբար՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր պետական տուրքի հարցին անդրադառնալիս ոչ թե յուրաքանչյուրից առանձին-առանձին պետական բյուջե բռնագանձել պետական տուրքի գումարը, այլ պարտավոր էր որոշում կայացնել պետական տուրքի համար նախատեսված վիճարկվող գումարի 3 տոկոսի բռնագանձման պարտականությունը բողոքաբերների նկատմամբ կիրառել համապարտության կարգով:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.07.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- 1) Բանկը, որպես Օվսաննա Մետրոքյանի հասցե, հայցադիմումով Դատարանին հայտնել է «ք. Երևան, Պրահայի փ., տուն 40» հասցեն (**հատոր 1-ին, գ.թ. 04-07**):
- 2) Համաձայն 19.06.2017 թվականի թիվ Ե-31979 գրության՝ Դատարանը 25.10.2017 թվականին, ժամը 11:40-ին նշանակված դատական նիստի վայրի և ժամանակի վերաբերյալ ծանուցումը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, ուղարկել է Օվսաննա Մետրոքյանին «ք. Երևան, Պրահայի փող., տուն 40» հասցեով (**հատոր 1-ին, գ.թ. 48-56**):
- 3) Թիվ RL004168284AM փոստային ծրարի համաձայն՝ Օվսաննա Մետրոքյանին ուղարկված ծրարը վերադարձվել է «Չպահանջված» նշումով (**հատոր 1-ին, գ.թ. 55-56**):
- 4) Օվսաննա Մետրոքյանը 24.10.2017 թվականին Դատարան մուտքագրված դիմումով միջնորդել է հետաձգել 25.10.2017 թվականին նշանակված դատական նիստը: Դիմումում, որպես իր հասցե, նշել է հայցադիմումում նշված՝ «ք. Երևան, Պրահայի փ., տուն 40» հասցեն (**հատոր 1-ին, գ.թ. 57**):
- 5) Դատարանը 25.10.2017 թվականի դատական ծանուցագրով 13.02.2018 թվականին, ժամը 14:30-ի նշանակված դատական նիստի վայրի և ժամանակի վերաբերյալ ծանուցումը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, ուղարկել է Օվսաննա Մետրոքյանին «ք. Երևան, Պրահայի փող., տուն 40» հասցեով (**հատոր 1-ին, գ.թ. 63-66**):
- 6) Թիվ RL08705332AM փոստային ծրարի համաձայն՝ Օվսաննա Մետրոքյանին ուղարկված ծրարը վերադարձվել է «Տեղափոխված» նշումով (**հատոր 1-ին, գ.թ. 65-66**):
- 7) Դատարանն Օվսաննա Մետրոքյանի՝ 13.02.2018 թվականին, ժամը 14:30-ին կայացվելիք դատական նիստի մասին ծանուցումն ապահովել է իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ և 78-րդ

հողվածներին համապատասխան՝ վարչական շրջանի ղեկավարին գրություն ուղարկելու ու հրապարակային ծանուցման միջոցով (**հատոր 1-ին, գ.թ. 67-71**):

8) Դատարանը 13.02.2018 թվականի դատական ծանուցագրով 08.05.2018 թվականին, ժամը 14:30-ին նշանակված դատական նիստի վայրի և ժամանակի վերաբերյալ ծանուցումը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, ուղարկել է Օվսաննա Մետրոբյանին «ք. Երևան, Պրահայի փող., տուն 40» հասցեով (**հատոր 1-ին, գ.թ. 77-80**):

9) Թիվ RL013292571M փոստային ծրարի համաձայն՝ Օվսաննա Մետրոբյանին ուղարկված ծրարը վերադարձվել է «Տեղափոխված» նշումով (**հատոր 1-ին, գ.թ. 79-80**):

10) Դատարանն Օվսաննա Մետրոբյանի՝ 08.05.2018 թվականին, ժամը 14:30-ին կայացվելիք դատական նիստի մասին ծանուցումն ապահովել է իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխան՝ վարչական շրջանի ղեկավարին գրություն ուղարկելու ու հրապարակային ծանուցման միջոցով (**հատոր 1-ին, գ.թ. 81-85**):

11) Օվսաննա Մետրոբյանի և Քրիստինե Տոնոյանի ներկայացուցչի կողմից 18.06.2018 թվականին և 24.07.2018 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքներում, կից միջնորդություններում, ինչպես նաև 29.08.2018 թվականին ներկայացված վճարեկ բողոքում որպես Օվսաննա Մետրոբյանի հասցե նշվել է «ք. Երևան, Պրահայի փող., տուն 40» հասցեն (**հատոր 1-ին, գ.թ. 117-121, 135-139, 159-164**):

12) Վերաքննիչ դատարանը 06.07.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ բավարարել է Օվսաննա Մետրոբյանի և Քրիստինե Տոնոյանի ներկայացուցչի կողմից ներկայացված պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու մասին միջնորդությունը, իսկ վերաքննիչ բողոքը վերադարձրել (**հատոր 1-ին, գ.թ. 128-130**):

13) Վերաքննիչ դատարանը 02.08.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ Օվսաննա Մետրոբյանի և Քրիստինե Տոնոյանի ներկայացուցչի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է (**հատոր 1-ին, գ.թ. 147-148**):

14) ՀՀ վճարեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 14.03.2019 թվականի որոշմամբ Օվսաննա Մետրոբյանի և Քրիստինե Տոնոյանի ներկայացուցչի բերած վճարեկ բողոքը բավարարվել է՝ վերացվել է Վերաքննիչ դատարանի 02.08.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը (**հատոր 1-ին, գ.թ. 188-194**):

15) Վերաքննիչ դատարանը, 03.07.2019 թվականի որոշմամբ մերժելով Օվսաննա Մետրոբյանի և Քրիստինե Տոնոյանի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը և անդրադառնալով դատական ծախսերի հարցին, արձանագրել է, որ «նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքի համար պետական տուրքի գումար չի վճարվել, պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգվել է Վերաքննիչ դատարանի 06.07.2018 թվականի որոշմամբ, վերաքննիչ բողոքը մերժվել է, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Քրիստինե Տոնոյանից և Օվսաննա Մետրոբյանից յուրաքանչյուրից առանձին ՀՀ պետական բյուջե պետք է բռնագանձել 1.241.955,02 ՀՀ դրամ (85.784 ԱՄՆ դոլար * 482,59 ՀՀ դրամ՝ 18.06.2018 թվականին (վերաքննիչ բողոքը ներկայացնելու օր) ՀՀ ԿԲ փոխարժեքը * 3%), ինչպես նաև 01.06.2017 թվականից մինչև 08.06.2017 թվականը (հայցադիմումը փոստային կապի ծառայությանը հանձնելու օր) վարկի մնացորդի 41.601,10 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ անշարժ գույքի ձեռքբերման 16.08.2013 թվականի թիվ 408618 վարկային պայմանագրի 1.1.12.1 և 1.1.12.2 կետերով նախատեսված համապատասխանաբար ժամկետանց վարկի 0.15 տոկոսի չափով և ժամկետանց տոկոսագումարի 0.4 տոկոսի չափով հաշվեգրվող տույժերի գումարի

3%-ը՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար (**հատոր 2-րդ, գ.թ. 33-41**):

4. Վճռաբեկ դատարանի պայրճատարանությունները և կզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում համապարտություն ենթադրող վիճելի իրավահարաբերության պարագայում պետական տուրքի բաշխման առանձնահատկությունների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի խախտում, որի առկայությունը հերքվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդադարձապես հեղուկալ իրավական հարցադրումներին.

- *արդյոք հասցեն փոփոխելու վերաբերյալ հաղորդման բացակայության դեպքում ծանուցումը համարվում է հանձնված հասցեարկի ոչ չլինելու անկասկածաբար հասցեարկի ոչ չլինելու քննարկում քննարկելու հանգամանքից,*

- *գործով մի քանի անձանց կողմից մեկ բողոք ներկայացնելու դեպքում, երբ վիճելի իրավահարաբերությունը ենթադրում է համապարտություն, արդյոք նրանցից յուրաքանչյուրից պետք է գանձվի պետական տուրքի ամբողջ գումարը:*

4.1. Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

Նախկին օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

Նախկին օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին տեղեկացվում են դատական ծանուցագրերի միջոցով:

Նախկին օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պարտավոր են դատարանին և գործին մասնակցող այլ անձանց հայտնել գործի վարույթի ժամանակ իրենց հասցեն փոխելու մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում դատավարական փաստաթղթերն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված, թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի բնակվում կամ չի գտնվում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում իրավահավասարության և մրցակցության սկզբունքների, անձի լաված լինելու իրավունքի համատեքստում բազմիցս անդրադարձել է վկայակոչված հոդվածների վերլուծությանը:

Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով մինչև 03.07.2014 թվականը գործող խմբագրությանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի բովանդակությանը, նշել է, որ դրանով նախատեսված նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն

միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը (*լրեն Վերգուշ Վարդանյանն ընդդեմ Եղիշ Թորոսյանի և մյուսների թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը*):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադառնալով Նախկին օրենսգրքի 6-րդ, 28-րդ և 80-րդ հոդվածներին, գտել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով: Նշված սկզբունքը դրսևորվում է նաև դատարանին և գործին մասնակցող մյուս անձանց հասցեի փոփոխության վերաբերյալ գործին մասնակցող անձի կողմից ծանուցելով: Նման կերպ պաշտպանվում է ոչ միայն հասցեն փոխած անձի իրավունքը, այլև դատավարության մյուս մասնակիցների իրավունքները, քանի որ դատարանը, ծանուցագրերն ուղարկելով փոխված հասցեով, ըստ էության ապահովում է գործի ողջամիտ ժամկետում քննությունը մի կողմից և դատավարության մասնակիցների՝ դատական նիստին ներկա գտնվելու հնարավորությունը մյուս կողմից: Դրանով է պայմանավորված նաև այն, որ օրենսդիրն իր դատավարական իրավունքներից ոչ բարեխիղճ օգտվող կողմի վրա է թողնում հետևանքները կրելու ռիսկը, այն է՝ հասցեն փոփոխելու վերաբերյալ հաղորդման բացակայության դեպքում ծանուցումը համարվում է հանձնված՝ անկախ հասցեատիրոջ՝ այդ հասցեում բնակվելու հանգամանքից (*լրեն Արամ Մակարյանն ընդդեմ Խաչիկ Մանուկյանի թիվ ԵԱՆԴ/0326/02/12 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հասցեն փոփոխելու վերաբերյալ հաղորդման բացակայության դեպքում ծանուցումը համարվում է հանձնված՝ անկախ հասցեատիրոջ՝ այդ հասցեում բնակվելու հանգամանքից:

Անդրադառնալով Օվսաննա Մեարոբյանի պատշաճ ծանուցված չլինելու հանգամանքին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքն այդ հիմքով ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով Բանկը, որպես Օվսաննա Մեարոբյանի հասցե, հայցադիմումով Դատարանին հայտնել է «ք. Երևան, Պրահայի փ., տուն 40» հասցեն:

Համաձայն 19.06.2017 թվականի թիվ Ե-31979 գրության՝ Դատարանը 25.10.2017 թվականին, ժամը 11:40-ին նշանակված դատական նիստի վայրի և ժամանակի վերաբերյալ ծանուցումը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, ուղարկել է Օվսաննա Մեարոբյանին «ք. Երևան, Պրահայի փող., տուն 40» հասցեով: Թիվ RL004168284AM փոստային ծրարի համաձայն՝ Օվսաննա Մեարոբյանին ուղարկված ծրարը վերադարձվել է «Չպահանջված» նշումով:

Օվսաննա Մեարոբյանը 24.10.2017 թվականին Դատարան մուտքագրված դիմումով միջնորդել է հետաձգել 25.10.2017 թվականին նշանակված դատական նիստը: Դիմումում, որպես իր հասցե, նշել է հայցադիմումում նշված՝ «ք. Երևան, Պրահայի փ., տուն 40» հասցեն:

Դատարանը 25.10.2017 թվականի դատական ծանուցագրով 13.02.2018 թվականին, ժամը 14:30-ին նշանակված դատական նիստի վայրի և ժամանակի վերաբերյալ ծանուցումը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, ուղարկել է Օվսաննա Մեարոբյանին «ք. Երևան, Պրահայի փող., տուն 40» հասցեով: Թիվ RL08705332AM փոստային ծրարի համաձայն՝ Օվսաննա Մեարոբյանին ուղարկված ծրարը վերադարձվել է «Տեղափոխված» նշումով:

Դատարանն Օվսաննա Մեարոբյանի՝ 13.02.2018 թվականին, ժամը 14:30-ին կայացվելիք դատական նիստի մասին ծանուցումն ապահովել է իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ և 78-րդ

հողվածներին համապատասխան՝ վարչական շրջանի ղեկավարին գրություն ուղարկելու ու հրապարակային ծանուցման միջոցով:

Դատարանը 13.02.2018 թվականի դատական ծանուցագրով 08.05.2018 թվականին, ժամը 14:30-ին նշանակված դատական նիստի վայրի և ժամանակի վերաբերյալ ծանուցույնը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, ուղարկել է Օվսաննա Մեսրոբյանին «ք. Երևան, Պրահայի փող., տուն 40» հասցեով: Թիվ RL013292571M փոստային ծրարի համաձայն՝ Օվսաննա Մեսրոբյանին ուղարկված ծրարը վերադարձվել է «Տեղափոխված» նշումով:

Դատարանն Օվսաննա Մեսրոբյանի՝ 08.05.2018 թվականին, ժամը 14:30-ին կայացվելիք դատական նիստի մասին ծանուցումն ապահովել է իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխան՝ վարչական շրջանի ղեկավարին գրություն ուղարկելու ու հրապարակային ծանուցման միջոցով:

Օվսաննա Մեսրոբյանի և Քրիստինե Տոնոյանի ներկայացուցչի կողմից 18.06.2018 թվականին և 24.07.2018 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքներում, կից միջնորդություններում, ինչպես նաև 29.08.2018 թվականին ներկայացված վճռաբեկ բողոքում որպես Օվսաննա Մեսրոբյանի հասցե նշվել է «ք. Երևան, Պրահայի փող., տուն 40» հասցեն:

Վերաքննիչ դատարանը, 03.07.2019 թվականին մերժելով վերաքննիչ բողոքը, արձանագրել է, որ «(...) Օվսաննա Մեսրոբյանին հասցեագրված բոլոր ծանուցումներն իրականացվել են հայցադիմումում նշված հասցեով, որպիսին իր բնակության վայրի կամ հաշվառման վայրի հասցեն հանդիսանալու հանգամանքը բողոք ներկայացրած անձի կողմից չի վիճարկվում: (...): Այլ կերպ ասած՝ Դատարանը կատարել է պատասխանող Օվսաննա Մեսրոբյանին դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելուն ուղղված ակտիվ գործողություններ և ձեռնարկել է օրենսդրությամբ նախատեսված ծանուցման հնարավոր բոլոր միջոցներն ու եղանակները»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Օվսաննա Մեսրոբյանի պատշաճ ծանուցման հարցը պարզելիս նախ պետք է գնահատման առարկա դարձնել վերջինիս կողմից իր դատավարական իրավունքներից օգտվելու և դատավարական պարտականությունները բարելիստորեն կատարելու փաստը:

Տվյալ դեպքում, հիմնավորվում է, որ Դատարանն Օվսաննա Մեսրոբյանին հասցեագրված բոլոր ծանուցումներն իրականացրել է հայցադիմումում նշված հասցեով: Թեև, գործի նյութերից երևում է, որ փոստային ծրարները հետ են վերադարձել դատարան, այդուհանդերձ՝ հիմնավորվում է նաև, որ Օվսաննա Մեսրոբյանը տեղեկացված է եղել իր դեմ ներկայացված հայցի մասին: Ավելին՝ Օվսաննա Մեսրոբյանը 24.10.2017 թվականին Դատարան մուտքագրված դիմումով միջնորդել է հետաձգել 25.10.2017 թվականին նշանակված դատական նիստը: Ընդ որում, դիմումում, որպես իր հասցե, ևս նշել է հայցադիմումում նշված՝ «ք. Երևան, Պրահայի փ., տուն 40» հասցեն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օվսաննա Մեսրոբյանը, խախտելով Նախկին օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները, չի օգտվել իր դատավարական իրավունքներից և բարելիստորեն չի կատարել իր դատավարական պարտականությունները, արդյունքում կիրառելի են դարձել Նախկին օրենսգրքի 80-րդ հոդվածի դրույթներն այն մասին, որ հասցեն փոփոխելու վերաբերյալ հաղորդման բացակայության դեպքում ծանուցումը համարվում է հանձնված՝ անկախ հասցեատիրոջ՝ այդ հասցեում բնակվելու հանգամանքից:

Նման պայմաններում Օվսաննա Մեսրոբյանի բողոքն այս հիմքով անհիմն է և ենթակա է մերժման:

4.2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝ դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ նույն օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ: Նույն օրենքի 9-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործով մի քանի հայցվորների կամ բողոք բերողների առկայության դեպքում նրանցից յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, իսկ մի քանի պատասխանողների առկայության դեպքում նրանցից յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, բացառությամբ այն դեպքի, երբ վիճելի իրավահարաբերությունը ենթադրում է համապարտություն: Այդ դեպքում պատասխանողները կրում են դատական ծախսերի փոխհատուցման համապարտ պարտականություն: Մասնաբաժինները որոշելու անհնարինության դեպքում դատական ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարման պարտականությանը, արձանագրել է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է դատարան դիմելու իրավունքի ֆինանսական սահմանափակման՝ օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու պարտականության հետ: ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ պետական տուրքն ընդգրկված է դատական ծախսերի կազմում, որի հասկացությունը, տեսակները, դրույքաչափերը, պետական տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից հետևում է, որ պետական տուրքը պետական բյուջե մուծվող պարտադիր վճար է, որը գանձվում է պետական մարմինների մատուցած ծառայությունների կամ կատարած գործողությունների համար: Հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի վճարումն անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման նախապայմաններից մեկն է, քանի որ օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարելու հանգամանքով է պայմանավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ արդարադատությունից օգտվելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ որպեսզի անձը խախտված իրավունքների պաշտպանության համար կարողանա իրացնել դատարան դիմելու հնարավորությունը, նա պետք է նախևառաջ վճարի օրենքով սահմանված համապատասխան

դրույքաչափով պետական տուրք (տե՛ս, Հայկ Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/1115/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանել է պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը: Մասնավորապես՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սպառիչ ամրագրվել են ինչպես դատարան դիմելու համար պետական տուրքի գանձման օբյեկտները, այնպես էլ՝ գանձվող պետական տուրքի դրույքաչափերը: Ընդ որում օրենսդիրը վերը նշվածը սահմանելիս որոշակի տարբերակված մոտեցում է ցուցաբերել դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են՝ ներկայացված հայցապահանջի տեսակը, քննվող գործով վարույթի տեսակը, բողոքարկման ենթակա ակտը և դրա բողոքարկման ծավալը (տե՛ս, ըստ «ԱրմենՏեյ» ՓԲԸ-ի դիմումի թիվ ԱՎԴ2/1116/03/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.07.2019 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերոգրյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձն իր իրավունքների դատական պաշտպանության համար պետք է կատարի օրենքով սահմանված դատական ծախսեր, որոնք իրենց մեջ ներառում են նաև հայցադիմումի, դիմումի, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոք ներկայացնելու համար պետական բյուջե վճարվող պետական տուրքի գումարները: Ընդ որում, պետական տուրքի գանձման օբյեկտների ցանկը և դրույքաչափերը՝ ըստ պահանջների ու գործը քննող առյանների, ամրագրված են ու կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

Դատական ծախսերի բաշխման հարցը լուծելիս՝ դատարանը պարտավոր է պարզել, թե գործին մասնակցող անձանցից ով և ինչ ծավալով է կատարելու դատական ծախսերը փոխհատուցելու պարտականությունը: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածով: Ընդ որում, որպես ընդհանուր կանոն, դատական ծախսերն ամբողջ ծավալով դրվում են դրանց փոխհատուցման համար պատասխանատու անձի վրա: Առանձին իրավիճակների համար օրենսդիրը նախատեսել է դատական ծախսերի բաշխման հատուկ կանոններ: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործով մի քանի հայցվորների կամ մի քանի բողոք բերողների առկայության դեպքում նրանցից յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, իսկ մի քանի պատասխանողների առկայության դեպքում նրանցից յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, բացառությամբ այն դեպքի, երբ վիճելի իրավահարաբերությունը ենթադրում է համապարտություն: Այդ դեպքում պատասխանողները կրում են դատական ծախսերի փոխհատուցման համապարտ պարտականություն: Մասնաբաժինները որոշելու անհնարինության դեպքում դատական ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ՝

- նորմը վերաբերում է դատակիցներին, այսինքն՝ միևնույն կողմում հանդես եկող այն անձանց, որոնց շահերն իրար չեն հակասում, նրանց պահանջները միշտ համադրելի են և միմյանց չեն բացառում,
- դատակիցները կրում են իրենց գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, իսկ դրա չափերի (բաժինների) որոշման անհնարինության դեպքում՝ դատական ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ,
- դատակիցները կրում են դատական ծախսերի փոխհատուցման համապարտ պարտականություն, եթե վիճելի իրավահարաբերությունը ենթադրում է համապարտություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համապարտ պարտականությունը (պատասխանատվությունը) կամ համիրավ պահանջը ծագում է, եթե պարտականության համապարտությունը կամ պահանջի համիրավությունը

նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես, եթե անբաժանելի է պարտավորության առարկան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: Համապարտ պարտապաններից մեկից լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապաններից: Համապարտ պարտապանները պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտավորությունների համապարտությունն առաջացնում է համապարտ պատասխանատվություն, որպիսի պարագայում դատական ծախսերը փոխհատուցելու պահանջ կարող է ներկայացվել ինչպես բոլոր դատակիցներին համատեղ, այնպես էլ՝ նրանցից յուրաքանչյուրին՝ ինչպես ամբողջ ծավալով, այնպես էլ՝ մի մասով: Դատական ծախսերի փոխհատուցման համապարտ պատասխանատվությունը նաև հնարավորություն է ընձեռում պահանջ ներկայացնել այն պատասխանողին, ով ի վիճակի է փոխհատուցել դատական ծախսերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Քրիստինե Տոնոյանից և Օվսաննա Մեարոբյանից համապարտության կարգով հոգուտ իրեն բռնագանձել 85.784 ԱՄՆ դոլար և 68.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, բռնագանձել նաև սկսած 01.06.2017 թվականից մինչև պայմանագրով վարկի մնացորդի գումարը՝ 41.601,10 ԱՄՆ դոլարը, վերադարձնելու օրը հաշվարկել և վերջիններից համապարտության կարգով հոգուտ իրեն բռնագանձել պայմանագրի 1.1.2 կետով նախատեսված տարեկան տոկոսադրույքը՝ ԿԲՀՏ+5.5% տոկոսի չափով, իսկ սկսած 01.06.2017 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը հաշվարկել և Քրիստինե Տոնոյանից ու Օվսաննա Մեարոբյանից համապարտության կարգով հոգուտ իրեն բռնագանձել պայմանագրի 1.1.12.1. և 1.1.12.2. կետերով նախատեսված տույժերի գումարը՝ հաշվարկված վարկի մնացորդի՝ 41.601,10 ԱՄՆ դոլարի ժամկետանց մասի և 41.601,10 ԱՄՆ դոլարի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի ժամկետանց մասի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար համապատասխանաբար ժամկետանց վարկի 0.15 տոկոսի չափով և ժամկետանց տոկոսագումարի 0.4 տոկոսի չափով:

Դատարանը 17.05.2018 թվականի վճռով հայցը բավարարել է:

Վերաքննիչ դատարանը 03.07.2019 թվականի որոշմամբ Քրիստինե Տոնոյանի և Օվսաննա Մեարոբյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի 17.05.2018 թվականի վճիռը թողել է անփոփոխ: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը, նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքի համար պետական տուրքի գումարը չի վճարվել, պետական տուրքի վճարման ժամկետը 06.07.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ հետաձգվել է, միաժամանակ նշել է, որ «(...) Քրիստինե Տոնոյանից և Օվսաննա Մեարոբյանից յուրաքանչյուրից առանձին ՀՀ պետական բյուջե պետք է բռնագանձել 1241955.02 ՀՀ դրամ (85784 ԱՄՆ դոլար * 482.59 ՀՀ դրամ՝ 18.06.2018 թվականին (վերաքննիչ բողոքը ներկայացնելու օր) ՀՀ ԿԲ փոխարժեքը * 3%), ինչպես նաև 01.06.2017 թվականից մինչև 08.06.2017 թվականը (հայցադիմումը փոստային կապի ծառայությանը հանձնելու օր) վարկի մնացորդի 41601.10 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ անշարժ գույքի ձեռքբերման 16.08.2013 թվականի թիվ 408618 վարկային պայմանագրի 1.1.2 կետով նախատեսված ԿԲՀՏ+5.5% տոկոսի չափով հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքի 3%-ը, վարկի մնացորդի՝ 41601.10 ԱՄՆ դոլարի ժամկետանց մասի և 41601.10 ԱՄՆ դոլարի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի ժամկետանց մասի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար անշարժ գույքի ձեռքբերման 16.08.2013 թվականի թիվ 408618 վարկային պայմանագրի 1.1.12.1. և 1.1.12.2. կետերով նախատեսված համապատասխանաբար ժամկետանց վարկի 0.15 տոկոսի չափով և

ժամկետանց տոկոսագումարի 0.4 տոկոսի չափով հաշվեզրվող տույժերի գումարի 3%-ը՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Քրիստինե Տոնոյանը և Օվսաննա Մեսրոբյանը, որպես համապարտ պատասխանողներ, Դատարանի 17.05.2018 թվականի վճռի դեմ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով ներկայացրել են վերաքննիչ բողոք՝ պահանջելով ամբողջությամբ բեկանել Դատարանի 17.05.2018 թվականի վճիռը՝ գործն ուղարկելով ստորադաս դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության: Քրիստինե Տոնոյանը և Օվսաննա Մեսրոբյանը հանդիսացել են համապարտ պատասխանողներ, նրանց շահերն իրար չեն հակասել և վերջիններս կրում են դատական ծախսերի փոխհատուցման համապարտ պարտականություն: Հետևաբար՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պետական տուրքի գումարը վերջիններից պետք է գանձվեր վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով՝ համապարտության կարգով, այլ ոչ թե յուրաքանչյուրից 3 տոկոսի չափով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները՝ արդյունքում թույլ տալով այնպիսի դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտի մասնակիորեն բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից Վերաքննիչ դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելը և փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում բողոք բերող անձից պետական տուրք չի գանձվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցագնի մեջ մտնում են նաև պահանջվող տուժանքի (տուգանքի, տույժի) և տոկոսների գումարները՝ հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցագնի մեջ չի ներառվում դատական ծախսերի գումարը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործով մի քանի հայցվորների կամ բողոք բերողների առկայության դեպքում նրանցից յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, իսկ մի քանի պատասխանողների առկայության դեպքում նրանցից յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, բացառությամբ այն դեպքի, երբ վիճելի իրավահարաբերությունը ենթադրում է համապարտություն: Այդ դեպքում պատասխանողները կրում են դատական ծախսերի փոխհատուցման համապարտ պարտականություն: Մասնաբաժինները որոշելու անհնարինության դեպքում դատական ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ (...) պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով (...) դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝ դրամական պահանջի գործերով՝ հայցագնի երեք տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից (...):

Նկատի ունենալով, որ դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում բողոք բերող անձից պետական տուրք չի գանձվում և սույն դեպքում վճռաբեկ բողոքը բավարարվում է միայն դատական ծախսերի՝ պետական տուրքի մասով, իսկ մնացած մասով բողոքը մերժվում է, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Օվսաննա Մերոբյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 85.784 ԱՄՆ դոլարի 3 տոկոսին՝ 2.573,52 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև 01.06.2017 թվականից մինչև 08.06.2017 թվականը վարկի մնացորդի՝ 41.601,10 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ անշարժ գույքի ձեռքբերման 16.08.2013 թվականի թիվ 408618 վարկային պայմանագրի 1.1.2 կետով նախատեսված ԿԲՀՏ+5.5% տոկոսի չափով հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքի 3 տոկոսի չափով գումար, վարկի մնացորդի՝ 41.601,10 ԱՄՆ դոլարի ժամկետանց մասի և 41.601,10 ԱՄՆ դոլարի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի ժամկետանց մասի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար մինչև 08.06.2017 թվականը (հայցադիմումը ներկայացնելու օրը) անշարժ գույքի ձեռքբերման 16.08.2013 թվականի թիվ 408618 վարկային պայմանագրի 1.1.12.1. և 1.1.12.2. կետերով նախատեսված համապատասխանաբար ժամկետանց վարկի 0.15 տոկոսի չափով և ժամկետանց տոկոսագումարի 0.4 տոկոսի չափով հաշվեգրվող տույժերի գումարի 3 տոկոսի չափով գումար, բայց ոչ ավելի, քան 1.000.000 ՀՀ դրամ (նշված պետական տուրքերի հանրագումարը)՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և Վճռաբեկ դատարանի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.07.2019 թվականի որոշումը՝ պետական տուրքի բաշխման մասով, և այն փոփոխել հետևյալ կերպ.

«Քրիստինե Տոնոյանից և Օվսաննա Մերտրեյանից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե բռնագանձել 1.241.955,02 ՀՀ դրամ, ինչպես նաև 01.06.2017 թվականից մինչև 08.06.2017 թվականը վարկի մնացորդի՝ 41.601,10 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ անշարժ գույքի ձեռքբերման 16.08.2013 թվականի թիվ 408618 վարկային պայմանագրի 1.1.2 կետով նախատեսված ԿԲՀՏ+5.5% տոկոսի չափով հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքի 3 տոկոսի չափով գումար, վարկի մնացորդի՝ 41.601,10 ԱՄՆ դոլարի ժամկետանց մասի և 41.601,10 ԱՄՆ դոլարի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի ժամկետանց մասի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար անշարժ գույքի ձեռքբերման 16.08.2013 թվականի թիվ 408618 վարկային պայմանագրի 1.1.12.1. և 1.1.12.2. կետերով նախատեսված համապատասխանաբար ժամկետանց վարկի 0.15 տոկոսի չափով և ժամկետանց տոկոսագումարի 0.4 տոկոսի չափով հաշվեգրվող տույժերի գումարի 3 տոկոսի չափով գումար՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.07.2019 թվականի որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Օվսաննա Մերտրեյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.11.2019 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/6604/02/19
2022թ.

Քաղաքացիական գործ թիվ

ԵԴ/6604/02/19

Նախագահող դատավոր՝

Տ. Նազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի փետրվարի 24-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Դոնարա Նազարյանի և Ռուբեն Բաբակեյսյանի (այսուհետ՝ Համահայցվորներ) հայցի ընդդեմ Արտակ Գալստյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2019 թվականի որոշման դեմ Արտակ Գալստյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Համահայցվորները պահանջել են Արտակ Գալստյանից բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործով դատական ծախս:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Վարդանյան) (այսուհետ՝ Դատարան) 21.06.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Արտակ Գալստյանից հոգուտ Համահայցվորների բռնագանձել 250.000 ՀՀ դրամ՝ որպես թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործով կատարված փաստաբանի վարձատրության գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.11.2019 թվականի որոշմամբ Արտակ Գալստյանի և նրա ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, ու Դատարանի 21.06.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արտակ Գալստյանը (ներկայացուցիչ Սուսաննա Սարգսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ և 108-րդ հոդվածները:*

Բողոք բերած անձը նշված հիմքի ստկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները ու գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Ռուբեն Բաբակեխյանի անունով հարկային հաշիվը դուրս է գրվել 29.01.2019 թվականին, այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 08.01.2019 թվականին որոշում կայացնելուց հետո. նաև այդ օրն է ստորագրվել պատվիրատուի և կատարողի միջև հանձնման-ընդունման ակտը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ փաստաբանական ծառայության ողջամիտ վարձավճարն օրենսդիրը ներառել է դատական ծախսերի մեջ և պարտավորեցրել է դատարաններին, որպեսզի եզրափակիչ դատական ակտ կայացնելիս պարտադիր անդրադառնան նաև այդ դատական ծախսի հիմնավորվածությանը և ողջամտությանը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ներկայումս գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածն արգելում է սույն գործով Համահայցվորների կողմից ներկայացված հայցը վարույթ ընդունելը, հետևաբար սույն հայցը ենթակա չի եղել դատարանում քննության:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 70-րդ հոդվածի 1-ին մասը, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը, 71-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի 1-ին կետը:*

Վերաքննիչ դատարանի դատավոր Տարոն Նազարյանը պարտավոր էր սույն գործով հայտնել ինքնաբացարկ, որպեսզի բացառեր Արտակ Գալստյանի և նրա ներկայացուցչի Սուսաննա Սարգսյանի նկատմամբ կանխակալ վերաբերմունք ունենալու կանխավարկածը, որն ակնհայտ առաջանում է ցանկացած անաչառ դիտորդի մտ: Մասնավորապես, նախագահող դատավորը հանդես է եկել Վերաքննիչ դատարանի այն դատական կազմում, որը քննել է Արտակ Գալստյանի որդու մասնակցությամբ մեկ այլ գործ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.11.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ փոփոխել այն՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2017 թվականի վճռով քաղաքացիական գործի վարույթը՝ ըստ Արտակ Գալստյանի հայցի ընդդեմ Արթուր Անդրեասյանի, Համահայցվորների, երրորդ անձ Կարեն Թումիկյանի, «Յունիքանկ» փակ բաժնետիրական ընկերության, «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման, Վեներա Գալստյանի և Երևանի Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Էդվարդ Մակարյանի՝ պայմանագիրն ու դրա

հիման վրա կատարված գրանցումն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, կարճվել է (**հատոր 1-ին, գ.թ. 28-46**).

2) թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.11.2017 թվականի որոշմամբ Արտակ Գալստյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2017 թվականի վճիռը բեկանվել է, ու գործն ուղարկվել է նոր քննության (**հատոր 1-ին, գ.թ. 21-25**).

3) թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 08.01.2019 թվականի որոշմամբ Համահայցվորների (ներկայացուցիչ Կարեն Հակոբյան) վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.11.2017 թվականի որոշումը բեկանվել է ու օրինական ուժ է տրվել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2017 թվականի վճիռին: Միաժամանակ Արտակ Գալստյանից հօգուտ Համահայցվորների բռնագանձվել է 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար (**հատոր 1-ին, գ.թ. 49-54**).

4) «Լեքս Ֆակտոր» ՍՊԸ-ի՝ ի դեմս տնօրեն Կարեն Հակոբյանի (այսուհետ՝ Կատարող) (մի կողմից) և Համահայցվորների (այսուհետ՝ Պատվիրատուներ) (մյուս կողմից) միջև 25.01.2017 թվականին կնքված փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է Պատվիրատուների հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի 2.1 կետով սահմանված փաստաբանական ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուները պարտավորվել են վճարել ծառայության դիմաց Պայմանագրի 3-րդ կետով նախատեսված պայմանագրի գինը:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Կողմերի համաձայնությամբ նույն Պայմանագրի շրջանակներում Ծառայությունները համարվում են մատուցված համապատասխան Ծառայությունների վերաբերյալ ներկայացված հանձնման-ընդունման ակտը Պատվիրատուի կողմից ստորագրելու պահից:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ Պայմանագրի շրջանակներում Կատարողը կազմակերպում է Համահայցվորների՝ որպես պատասխանողների դատական ներկայացուցչությունը Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործով հայցի քննության ժամանակ, իսկ հետագայում հարկ եղած դեպքում՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում կամ ՀՀ վճռաբեկ դատարանում:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ Պայմանագրի 2.1 կետով սահմանված ծառայությունների գինը կազմում է 300.000 ՀՀ դրամ, իսկ Պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ ծառայությունների դիմաց Պայմանագրի 3.1 կետում նշված գումարը ենթակա է վճարման մինչև 25.11.2017 թվականը՝ Կատարողի բանկային հաշվին փոխանցում կատարելու եղանակով (**հատոր 1-ին, գ.թ. 11-14**).

5) 13.11.2017 թվականին Պայմանագրում նշված բանկային հաշվին «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության տերմինալի միջոցով կատարվել է 300.000 ՀՀ դրամի չափով վճարում (**հատոր 1-ին, գ.թ. 16**).

6) Կատարողի և Պատվիրատուների միջև 29.01.2019 թվականին կազմվել է արձանագրություն, որով կողմերը հաստատել են, որ 25.01.2017 թվականին կնքված Պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարվել են ամբողջությամբ և միայնաց նկատմամբ որևէ պահանջ չունեն (**հատոր 1-ին, գ.թ. 15**).

7) «Լեքս Ֆակտոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով դուրս է գրվել Ռուբեն Բաբակեխյանին 300.000 ՀՀ դրամ արժեքով ծառայություններ մատուցելու վերաբերյալ թիվ Բ2799101311 էլեկտրոնային հարկաշին հաշիվը (**հատոր 1-ին, գ.թ. 17**).

8) 07.03.2019 թվականին Համահայցվորները, սույն գործով դիմելով Դատարան, պահանջել են Արտակ Գալստյանից բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես թիվ

ԵԱԲԳ/1107/02/16 քաղաքացիական գործով վճարված փաստաբանի վարձատրության գումար (**հատոր 1-ին, գ.թ. 3-54**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և կզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի գործողության ժամանակ հարուցված քաղաքացիական գործով կողմի կրած փաստաբանի վարձատրության գումարը կարող է արդյոք որպես դատական ծախս պահանջվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում:

Բողոքն առաջին հիմքով մասնակիորեն է հիմնավոր՝ հետևյալ պարճատարանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Դատական ծախսերի հետ կապված պահանջներ ներկայացնելը» վերառությամբ 108-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում օրենսդիրը հստակեցրել է գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի հետ կապված պահանջ ներկայացնելու կարգը՝ ըստ այդմ նշելով, որ դատական ծախսերի հետ կապված ցանկացած պահանջ գործին մասնակցող անձինք պետք է ներկայացնեն բացառապես տվյալ գործի շրջանակներում: Օրենսդրական այս սահմանափակման նպատակը բխում է գործերի քննության արդյունավետության ապահովման սկզբունքից և ուղղված է դատավարական խնայողության ու ռոջամիտ ժամկետում գործի քննության ապահովմանը: Միաժամանակ այս սահմանափակումը բխում է դատական ծախսերի էությունից, յուրաքանչյուր գործով առաջացած դատական ծախս անմիջականորեն ածանցվում է տվյալ գործով ներկայացված նյութաիրավական պահանջից և (կամ) ուղղված է անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման ապահովմանը: Հետևաբար՝ ածանցյալ բնույթն էլ պայմանավորում է նույն վարույթի շրջանակներում դատական ծախսերի վերաբերյալ պահանջների ներկայացման և դրանց բաշխման անհրաժեշտությունը:

Անդրառանալով սույն բողոքի հիմքում բարձրացված այն հարցադրմանը, թե արդյոք վերը նշված սահմանափակումը կարող է կիրառելի համարվել ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) գործողության ժամանակ հարուցված քաղաքացիական գործով առաջացած ծախսերի, մասնավորապես՝ փաստաբանի խելամիտ վարձատրության նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Նախկին օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Նախկին օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասում լուծվում է գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցը: (...):

Նույն հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի եզրահանգումներ՝ գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ:

Ի տարբերություն գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Նախկին օրենսգրքը դատական ծախսերի հետ կապված պահանջները բացառապես նույն գործի շրջանակներում ներկայացնելու սահմանափակում չէր նախատեսում, ինչը չէր բացառում մեկ այլ գործի շրջանակներում նման պահանջ ներկայացնելու շահագրգիռ անձի իրավական հնարավորությունը, որի իրացման կապացույթամբ նախկինում կայացրած որոշումներում իրավական դիրքորոշումներ է արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանը:

Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քաղաքացիական գործով կողմի կրած դատական ծախսերը մեկ այլ գործի շրջանակներում հատուցելու հնարավորության հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ որպես դատական ծախս թե՛ հայցվորը և թե՛ պատասխանողը դատական ընդունված ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Ընդ որում, **անկախ վճարված գումարի բռնագանձման մասին պահանջի առկայությունից, վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը՝ որպես դատական ծախս, վճռով անդրադառնալու համար:**

Եթե դատարանը, համապատասխան ապացույցի առկայության դեպքում վճռով չի անդրադառնում փաստաբանի խելամիտ վարձատրության՝ կողմերի միջև բաշխման հարցին, ապա գործին մասնակցող անձինք զրկված չեն կատարված ծախսերի բաշխման հարցը լուծելու համար սահմանված կարգով դիմել վճիռը կայացրած դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, հնարավոր համարելով նաև այն իրավիճակը, երբ կողմերը չեն ներկայացնում փաստաբանի վարձատրության վերաբերյալ որևէ ապացույց (և դրա բռնագանձման մասին պահանջ), արձանագրել է նաև, որ նման պայմաններում նրանք զրկված չեն փաստաբանի ծառայությունների համար կատարված վճարումներն առանձին հայցով բռնագանձելու իրավունքից, որպիսի եզրահանգման համար հիմք է ընդունել այն, որ Նախկին օրենսգրքով չէր արգելվում դատական ծախսերն այլ՝ առանձին վարույթի շրջանակներում բռնագանձելը (*լրեն Անհար ձեռնարկայեր Նարինե Ռոստոմյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/1401/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Փաստորեն, Նախկին օրենսգրքը թեև դատական ծախսերի բաշխումը բացառապես կոնկրետ գործի շրջանակներում իրականացնելու կապակցությամբ համարժեք կարգավորում չէր նախատեսել՝ ի տարբերություն գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, այնուամենայնիվ, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերոնշյալ հարցի կապակցությամբ վկայակոչված դիրքորոշումներից հետևում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի եզրահանգումները միանշանակ են այն հարցում, որ Նախկին օրենսգրքի գործողության պայմաններում գործի ընդունված հետ կապված դատական ծախսերը կարող են առանձին հայցի առարկա դառնալ բացառապես այն դեպքում, երբ դատավարության մասնակիցը նման պահանջ չի ներկայացրել դատարան. ընդ որում, **դատական ծախսերի հետ կապված պահանջի ներկայացում պետք է որակել նաև այն դեպքերը, երբ դատավարության մասնակցի կողմից դատարան են ներկայացվում դատական ծախսերը հիմնավորող համապատասխան ապացույցներ:** Մինչդեռ բոլոր այն դեպքերում, երբ կողմերը տվյալ գործի ընդունված շրջանակներում դատարան են ներկայացնում փաստաբանի խելամիտ վարձատրության վերաբերյալ որևէ ապացույց և(կամ) դրա բռնագանձման

վերաբերյալ որևէ պահանջ և դրա առկայության պայմաններում դատարանը, այնուամենայնիվ, վճռով չի անդրադառնում փաստաբանի խելամիտ վարձատրության՝ կողմերի միջև բաշխման հարցին, ապա, նման պայմաններում օրենսդիրը գործին մասնակցող անձանց ընձեռել է ոչ թե փաստաբանի ծառայությունների համար կատարված վճարումներն առանձին վարույթի շրջանակներում բռնագանձելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու իրավունք, այլ կատարված ծախսերի բաշխման հարցը լուծելու համար օրենքով սահմանված կարգով վճիռ կայացրած դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով դիմելու կամ տվյալ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն: Այլ կերպ ասած՝ եթե համապատասխան ապացույցների առկայության պայմաններում դատարանը դատական ծախսերի մասով չի լուծել դատական ծախսերի բաշխման հարցը, ապա գործի է դրվում դատական ծախսերի բաշխման մասով լրացուցիչ վճիռ կայացնելու կամ դատական ակտը բողոքարկելու օրենսդրական կարգավորումները, որը հավասարապես կիրառելի է թե՛ Նախկին և թե՛ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված սահմանափակումը բացառապես կիրառելի է նույն օրենսգրքի գործողության շրջանակներում հարուցված քաղաքացիական գործերով առաջացած դատական ծախսերի նկատմամբ և որևէ կերպ չի կարող բացառել այլ գործի շրջանակներում դատական ծախսի բռնագանձման պահանջ ներկայացնելու շահագրիգո անձի իրավունքը, եթե՝

ա) դատական ծախսերի ծագման հիմք հանդիսացող քաղաքացիական գործը հարուցվել և քննվել է Նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության շրջանակներում,

բ) Նախկին գործով դատական ծախսերի գանձման պահանջ կամ դրանց առաջացումը հիմնավորող ապացույց չի ներկայացվել, ըստ այդմ էլ՝ դատական ակտով այդ հարցին որևէ անդրադարձ չի կատարվել:

Վճռաբեկ դատարանի այսպիսի հետևությունը բխում է ինչպես իրավական որոշակիության սկզբունքից, այնպես էլ անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի ապահովման անհրաժեշտությունից:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014 թվականի թիվ ՄԴՈ-1142 որոշմամբ նշել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:

Իրավական որոշակիության սկզբունքից բխում է, որ դատավարական օրենքը ևս պետք է ձևակերպվի բավարար աստիճանի հստակությամբ, որպեսզի դատավարության մասնակիցն ի վիճակի լինի դրսևորելու համապատասխան վարքագիծ: Դատավարության մասնակիցը պետք է հնարավորություն ունենա կանխատեսելու տվյալ նորմից բխող հետևանքները: Այլ կերպ ասած՝ որևէ նորմում ամրագրված իրավակարգավորումը պետք է անձի համար կանխատեսելի դարձնի իր իրավաչափ սպասելիքը: Հետևաբար Նախկին օրենսգրքում դատական ծախսի բռնագանձման պահանջը բացառապես տվյալ գործի շրջանակներում ներկայացնելու սահմանափակման բացակայության, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/1401/02/11 քաղաքացիական գործով 29.06.2012 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման պայմաններում Նախկին օրենսգրքի գործողության շրջանակներում հարուցված և քննված գործերով կողմերի համար իրավաչափորեն կանխատեսելի վարքագիծը տվյալ գործով առաջացած և նույն գործով չներկայացված ծախսերը մեկ այլ գործի շրջանակներում ներկայացնելու *իրավական հնարավորության առկայությունն է*, անգամ եթե այդ հնարավորությունն իրացվել է նոր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության շրջանակներում:

Սույն գործով Դոնարա Նազարյանը և Ռուբեն Բաբակեղյանը Դատարան ներկայացրած հայցադիմումով պահանջել են Արտակ Գալստյանից բռնագանձել թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում կատարված փաստաբանի վարձատրության գումարը:

Դատարանը, հիմնավոր համարելով հայցապահանջը, 21.06.2019 թվականի վճռով Դոնարա Նազարյանի և Ռուբեն Բաբակեղյանի հայցը բավարարել է մասնակի:

Վերաքննիչ դատարանն Արտակ Գալստյանի վերաքննիչ բողոքը մերժելիս և Դատարանի վճիռն անփոփոխ թողնելիս եկել է այն եզրահանգման, որ թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործը քննվել և դրանով վճիռը կայացվել է նախկին՝ 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթների կիրառմամբ, իսկ այդ ժամանակ գործած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը հայցվորին դատական ծախսերի առանձին պահանջով դատարան դիմելու արգելք չէր նախատեսում՝ ի տարբերություն ներկայիս՝ 09.04.2018 թվականի ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, որի 108-րդ հոդվածով առկա է դատական ծախսերի առանձին պահանջով դատարան դիմելու արգելք:

Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, ընդգծում է, որ թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործով կատարված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը՝ 300.000 ՀՀ դրամը, պատասխանողից բռնագանձելու պահանջի հիմքում հայցվորները դրել են թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում իրենց կողմից 25.01.2017 թվականին կնքված Պայմանագրով սահմանված 300.000 ՀՀ դրամի վճարման պարտավորությունը դեռևս 13.11.2017 թվականին կատարած լինելու հանգամանքը, իսկ Նախկին օրենսգրքը թեև ուղղակիորեն չէր նախատեսում դատական ծախսերի՝ առանձին պահանջով դատարան դիմելու արգելք, այդուհանդերձ, ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավակիրառ պրակտիայի համաձայն՝ Նախկին օրենսգրքի գործողության շրջանակներում հարուցված և քննված գործերից բխող դատական ծախսերի նկատմամբ այդպիսի՝ **առանձին պահանջով դատարան դիմելու արգելքն օրենսդիրը պայմանավորել է բացառապես կողմերի՝ տվյալ գործի քննության շրջանակներում փաստաբանի խելամիտ վարձատրության վերաբերյալ որևէ ապացույց և(կամ) դրա բռնագանձման վերաբերյալ որևէ պահանջ դատարան ներկայացված լինելու, սակայն դատարանի կողմից փաստաբանի խելամիտ վարձատրության՝ կողմերի միջև բաշխման հարցին, վճռով անդրադարձ չկատարելու փաստի ուժով**, քանի որ, ինչպես արդեն արձանագրվեց, նման պայմաններում կողմերն օբյեկտիվորեն զրկված չեն լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով վճիռ կայացրած դատարան դիմելու կամ տվյալ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու իրական հնարավորությունից:

Մինչդեռ սույն գործով չի պարզվել, թե ի վերջո թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործով Դոնարա Նազարյանը և Ռուբեն Բաբակեղյանը փաստաբանի խելամիտ վարձատրության վերաբերյալ որևէ ապացույց **(վճարումը հավաստող ապացույց** կամ փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագիր) ներկայացրել են, թե ոչ: Չնայած սույն գործով պատասխանողը հայցադիմումի պատասխանով ընդունել է թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործով փաստաբանի խելամիտ վարձատրության հետ կապված գումարը որպես դատական ծախս բռնագանձելու վերաբերյալ պահանջ ներկայացված չլինելու փաստը՝ այն որակելով որպես *«փաստաբանի կողմից բացթողում»*, և պատասխանողի նշված դիրքորոշումն արձանագրվել է նաև Դատարանի վճռում՝ դատական ակտի պատճառաբանական մասում, ինչպես նաև այդ մասով որևէ բողոք վերաքննության փուլում պատասխանողի կողմից չի ներկայացվել, այնուամենայնիվ, միայն նշված հանգամանքները դեռևս բավարար չէին արձանագրելու համար այն փաստը, որ թիվ ԵԱԲԴ/1107/02/16 քաղաքացիական գործով Դոնարա Նազարյանը և Ռուբեն Բաբակեղյանը փաստաբանի խելամիտ վարձատրության վերաբերյալ որևէ ապացույց առհասարակ չեն ներկայացրել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Նախկին օրենսգրքի գործողության ժամանակ ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոշվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա (լրեն «Շենքերի կառավարում» համադրիչությունն ընդդեմ Մասիս Դազանյանի թիվ ԵԱԲԴ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (լրեն Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սյրեփան և Անահիտ Մարությանների թիվ 3-54(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը սահմանել է համանման ու հավասարազոր իրավական կարգավորումներ, որի պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված վերը նշված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև ներկայումս գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի նկատմամբ (լրեն «Շանթ Պլուս» սահմանափակ պարասիանսարվության ընկերության ընդդեմ Վարշամ Դարիբյանի թիվ ԵԱԴԴ/1438/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.06.2021 թվականի որոշումը):

Տվյալ դեպքում վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն չի իրականացվել, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ոչ բոլոր հանգամանքներն են բացահայտվել, որպիսի պարագայում առկա է գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտություն:

Գործի նոր քննության ընթացքում դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա ներքին համոզմամբ գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, պետք է որոշի հայցի մերժման կամ բավարարման հարցը՝ ելնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, մասնավորապես՝ հաշվի առնելով, որ թիվ

ԵԱԲԳ/1107/02/16 քաղաքացիական գործով Դոնարա Նազարյանի և Ռուբեն Բաբակեխյանի կողմից փաստաբանի խելամիտ վարձատրության վերաբերյալ որևէ ապացույց ներկայացված լինել-չլինելու հարցը պարզելուց հետո նոր միայն արձանագրված իրավական դիրքորոշումների համատեքստում հնարավոր կլինի գնահատել հայցվորներ Դոնարա Նազարյանի և Ռուբեն Բաբակեխյանի կողմից թիվ ԵԱԲԳ/1107/02/16 քաղաքացիական գործի ավարտից հետո այլ գործի շրջանակներում փաստաբանի վարձատրության գումարի որպես դատական ծախսի հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորության առկայությունը կամ բացակայությունը:

2) Բողոքը երկրորդ հիմքով անհիմն է՝ հեղուկալ պարճատարանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝ դատավորին կարող է բացարկ հայտնվել, կամ դատավորը սեփական նախաձեռնությամբ պարտավոր է ինքնաբացարկ հայտնել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված հիմքերով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիրքորոշի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլնի, այն դեպքերը, երբ դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, փաստաբանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր բազմաթիվ որոշումներում բացահայտել է դատարանի **անկողմնակալության գնահատման չափանիշները**: Այսպես՝ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ դատարանի անաչառությունը ենթադրում է գործը քննող դատավորի մոտ կանխակալ կարծիքի բացակայություն, իսկ ցանկացած դատավոր, որի անաչառության վերաբերյալ ողջամիտ կասկածներ կան, պետք է դուրս գա դատարանի կազմից: Նշված կասկածները պետք է ստուգվեն տարբեր ճանապարհներով: Առաջինը սուբյեկտիվ չափանիշն է, որը վերաբերում է քննվող գործի կապակցությամբ տվյալ դատավորի անձնական համոզմունքներին և վարքագծին, իսկ երկրորդը՝ օբյեկտիվ չափանիշը, վերաբերում է առաջարկվող այն երաշխիքներին, որոնք պետք է բավարար լինեն դատավորի անաչառության կապակցությամբ առաջացած ցանկացած ողջամիտ կասկած բացառելու համար: **Սուբյեկտիվ չափանիշի համաձայն՝ դատարանի կամ դատավորի անկողմնակալությունը հանդես է գալիս որպես կանխավարկած, հետևաբար, քանի դեռ հակառակն ապացուցված չէ, դատավորը համարվում է սուբյեկտիվորեն անկողմնակալ**: Հակառակ դրան՝ օբյեկտիվ անկողմնակալությունը կախված է արտաքին գործոններից, և այս դեպքում դատավորի վարքագիծը երկրորդական նշանակություն է ստանում: Մասնավորեցնելով օբյեկտիվ չափանիշը՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ այն հիմնականում վերաբերում է դատավորի և վարույթի մյուս մասնակիցների միջև աստիճանակարգային կամ մյուս կապերին կամ դատական գործընթացի շրջանակներում միևնույն անձի կողմից տարբեր գործառնությունների իրականացմանը: Հետևաբար յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշել՝ արդյոք տվյալ հարաբերությունների բնույթը և սերտության աստիճանը վկայում են այն մասին, որ դատարանն անկողմնակալ չէ (*յրենս, օրինակ, Piersack v. Belgium գործով Եվրոպական դատարանի 01.10.1982 թվականի վճիռը, կետ 30, Grieves v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 16.12.2003 թվականի վճիռը, կետ 69, Kyprianou v. Cyprus գործով Եվրոպական դատարանի 15.12.2005 թվականի վճիռը, կետեր 118, 121, Nicholas v. Cyprus գործով Եվրոպական դատարանի 09.01.2018 թվականի վճիռը, կետեր 49, 53, Դուլյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 24.01.2019 թվականի վճիռը, կետ 45*):

Օբյեկտիվ չափանիշի տեսանկյունից Եվրոպական դատարանը կարևորել է նաև կոնկրետ գործի քննությանը դատավորի ունեցած դերը, դատավորի կողմից իրականացված գործողությունների շրջանակն ու բնույթը և գտել է, որ դատավորի կողմից գործի

նյութերին պարզապես ծանոթ լինելը չի հանգեցնում վերջինիս անաչառության վերաբերյալ ծագած կասկածների ողջամտությանը (*յրեն Morel v. France գործով Եվրոպական դատարանի 18.10.2000 թվականի վճիռը, կետ 45, Fazli Fazli Aslaner v. Turkey գործով Եվրոպական դատարանի 07.07.2014 թվականի վճիռը, կետ 31*): Վերադաս դատարաններում նույնիսկ երկու այլ դատավորների հետ գործի քննությունն իրականացնող և գործի քննությունը նախագահող դատավորը չպետք է քննի իր իսկ որոշման դեմ ներկայացված բողոքները (*յրեն De Haan v. the Netherlands գործով Եվրոպական դատարանի 26.08.1997 թվականի վճիռը, կետ 51*):

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ նույնիսկ արտաքին հատկանիշները կարող են որոշակի նշանակություն ունենալ, կամ, այլ կերպ ասած, «պետք է ոչ միայն արդարությունը հաստատվի, այլև տեսանելի լինի դրա հաստատումը»: Նժարին դրված է այն վստահությունը, որը ժողովրդավարական հասարակությունում դատարանները պետք է ներշնչեն հանրությանը: Այսպիսով, ցանկացած դատավոր, որի **անկողմնակալության մասով կա մտահոգվելու հիմնավոր պատճառ**, պետք է գործի քննությունից հեռացվի (*յրեն Micallef v. Malta գործով Եվրոպական դատարանի 15.10.2009 թվականի վճիռը, կետ 98*):

Անկողմնակալության ապահովման մասով ազգային ընթացակարգերի, մասնավորապես՝ դատավորներին գործի քննությունից հեռացնելը կարգավորող կանոնների առկայությունն էական գործոն է: Այդպիսի կանոնները վկայում են այն մասին, որ ազգային օրենսդիրները հատուկ ուշադրություն են դարձնում տվյալ դատավորի կամ դատարանի անկողմնակալության հետ կապված հիմնավոր բոլոր կասկածները վերացնելուն և այդպիսի կասկածների պատճառները վերացնելու միջոցով փորձում են անկողմնակալություն ապահովել:

Որպես այդպիսին կողմնակալության բացակայությունն ապահովելուց բացի՝ դրանք ուղղված են կողմնակալության ցանկացած արտաքին հատկանիշ վերացնելուն և այդպիսով նպաստում են, որ ժողովրդավարական հասարակությունում դատարանները հանրությանը վստահություն ներշնչեն: Իրավիճակից կամ կապից է կախված դատավորի անկողմնակալության վերաբերյալ կասկածների առաջացումը: Այդ կասկածների օբյեկտիվորեն հիմնավորված լինելը կամ չլինելը առավելապես կախված է կոնկրետ գործի հանգամանքներից և այն գործոններից, որոնք այդ իմաստով պետք է հաշվի առնվեն (*յրեն Ղուլյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 24.01.2019 թվականի վճիռը, կետեր 47, 51*):

Սույն գործով բողոք բերած անձը, ի հիմնավորումն նախագահող դատավորի կողմնակալության, վկայակոչել է փաստ առ այն, որ վերջինս հանդես է եկել Վերաքննիչ դատարանի այն դատական կազմում, որը քննել է իր որդու մասնակցությամբ մեկ այլ գործ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, սակայն, բողոքաբերը չի հիմնավորել, թե վկայակոչված գործով կոնկրետ ինչ հանգամանքի մասին է դատավոր Տարոն Նազարյանը տեղյակ եղել, որը կարող էր հիմք հանդիսանալ վերջինիս կողմից իր նախաձեռնությամբ սույն գործով ինքնաբացարկ հայտնելու համար, ինչը չանելու պատճառով կարող էր ողջամիտ կասկած հարուցվել սույն գործով իր անկողմնակալության մեջ: Միայն այն հանգամանքը, որ նախագահող դատավորը մասնակցել է թիվ ԵԱԲԴ/4345/02/15 քաղաքացիական գործով կայացված վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննությանը, չի կարող կասկածի տակ դնել բողոքովին այլ, կոնկրետ դեպքում սույն գործով Դատարանի վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության հարցում նրա անկողմնակալությունը: Այսինքն, առանց բավարար հիմնավոր ապացույցների, լոկ նշված հանգամանքի վկայակոչումը դեռևս բավարար չէ՝ արձանագրելու այն, որ դատավոր Տարոն Նազարյանը սույն գործով ունեցել է կամ կարող էր ունենալ անձնական կանխակալ կամ կողմնակալ վերաբերմունք, հետևաբար վերադաս աստիանում նախագահող դատավորի՝ տվյալ գործով աչառու լինելու հանգամանքն օբյեկտիվորեն հիմնավորված չէ:

Անփոփելով վերոգրյալը՝ վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը բավարար է դիտում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և

գործը ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան վերը նշված ծավալով նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/4708/02/17
2022թ.
 Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/4708/02/17
 Նախագահող դատավոր՝ Ն. Մարգարյան
 Դատավորներ՝ Ա. Սմբատյան
 Հ. Ենոքյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
 Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
 Մ. ԴՐՄԵՅԱՆ
 Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
 Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
 Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
 Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
 Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի մարտի 04-ին գրավոր ընթացակարգով քննելով Վիկտոր Տեր-Հովսեփյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.12.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ինվեսթմյո Լո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Վիկտոր Տեր-Հովսեփյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Վիկտոր Տեր-Հովսեփյանից բռնագանձել 93.192 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 09.09.2011 թվականին կայացված որոշման համաձայն՝ 900.000 ԱՄՆ դոլար փոխառության գումարի նկատմամբ 29.11.2017 թվականից հետո հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի

411-րդ հոդվածով սահմանված տոկոսների 5 տոկոսը՝ հաշվարկված մինչև Ընկերության նկատմամբ Վ.Խլտոր Տեր-Հովսեփյանի վճարային պարտականության ամբողջական կատարման օրը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Մազմանյան) (այսուհետ՝ Դատարան) 04.06.2019 թվականի վճռով Ընկերության հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.12.2019 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Դատարանի 04.06.2019 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Ընկերության հայցը բավարարվել մասնակի. որոշվել է Վ.Խլտոր Տեր-Հովսեփյանից հօգուտ Ընկերության բռնագանձել 93.192 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ հայցը՝ մնացած մասով, մերժել:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Վ.Խլտոր Տեր-Հովսեփյանը (ներկայացուցիչներ՝ Հակոբ Մաֆայան և Արթուր Գրիգորյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Մայրա Բաղայան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պարտքը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հետաձգող պայմանով գործարքի կնքումն ինքնին իրավունքներ և պարտականություններ չի առաջացնում, այլ այդ իրավունքներն ու պարտականություններն առաջանում են մեկ այլ իրավաբանական փաստի՝ գործարքով հետաձգված պայմանի ի հայտ գալու հետ: Հետևաբար եթե հետաձգված պայմանով նշված իրավիճակը չի առաջանում, ապա այդ հետաձգված պայմանի շրջանակներում նախատեսված իրավունքները և պարտականությունները նույնպես չեն կարող առաջանալ: Սույն գործով Ընկերությունը պետք է ապացուցեր, որ Պատասխանողը կատարել է անբարեխիղճ գործողություններ, Պայմանագրի պայմանը չկատարելը պայմանավորված էր այդ անբարեխիղճ գործողություններով և որ դատական ակտով հաստատված գումարի բռնագանձումը ձեռնտու չէ պատասխանողին, մինչդեռ նշված փաստերն Ընկերության կողմից չեն ապացուցվել:

Ավելին, Վերաքննիչ դատարանի պատճառաբանության արդյունքում ստացվում է, որ փաստաբանը կատարողական վարույթի ցանկացած փուլում կարող է դադարեցնել իր ծառայությունների մատուցումը և պահանջել նախատեսված պարզևավճարի վճարում:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը սույն գործի նկատմամբ կիրառել է թիվ ԵԱՆԳ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2014 թվականի որոշումն այն դեպքում, երբ գործերի փաստական հանգամանքները տարբեր են:

Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննության սահմաններից, քանի որ դատական ակտում արժարժել է այնպիսի հիմքեր և հիմնավորումներ, որոնք առկա չեն եղել վերաքննիչ բողոքում: Մասնավորապես, Ընկերությունն իր վերաքննիչ բողոքում չի մատնանշել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետը և որպես բողոքի հիմնավորում՝ չի վկայակոչել դրանում գործածվող «գույք» հասկացության ինքնավար նշանակության և «օրինաչափ սպասելիքի» վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.12.2019 թվականի որոշումը և ուժ տալ Դատարանի 04.06.2019 թվականի վճռին:

2.1. Ընկերության կողմից ներկայացված վճարելի բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս չի եկել, քանի որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի իմաստով «գույք» հասկացությանն անդրադարձել է թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 28.12.2014 թվականի որոշման քննարկման շրջանակներում, այլ ոչ թե որպես բողոքի առանձին հիմք կամ հիմնավորում:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ ըստ Վերաքննիչ դատարանի պատճառաբանության՝ փաստաբանը կատարողական վարույթի ցանկացած փուլում կարող է դադարեցնել իր ծառայությունների մատուցումը և պահանջել նախատեսված պարգևավճարի վճարում, ապա բողոքաբերն անտեսել է, որ ՀՀ վճարելի դատարանի կողմից վերը նշված որոշմամբ արդեն իսկ տրվել է նմանատիպ գործերի լուծման ուղենիշը: Ընդ որում, նշված որոշումը կիրառելի է սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ, քանի որ գործերի տարբերվող հանգամանքները տվյալ դեպքում էական նշանակություն չունեն: ՀՀ վճարելի դատարանի կողմից կարևորվել է այն հանգամանքը, որ կողմերից մեկն իր վարքագծով պետք է նպաստի պայմանի չիրականացմանը, և սույն գործում առկա է հենց այդ իրավիճակը՝ պատասխանողն իր գործողություններով խոչընդոտում է պայմանի իրականացմանը:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության (Կատարող) և Վիկտոր Տեր-Հովսեփյանի (Վստահորդ) միջև 27.09.2010 թվականին կնքվել է իրավաբանական օգնություն տրամադրելու մասին պայմանագիր, որով Վիկտոր Տեր-Հովսեփյանը հանձնարարել է, իսկ Ընկերությունը պարտավորվել է հատուցման դիմաց տրամադրել իրավաբանական օգնություն՝ Պայմանագրով որոշված ծավալով և պայմաններով:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է ներկայացնել Վստահորդի շահերը, ինչպես նաև Լյուբով Փիլոյանի շահերը, իրականացնել նրանց պաշտպանությունը ՀՀ դատական ատյաններում, ի թիվս այլնի, հետևյալ գործով՝ Վիկտոր Տեր-Հովսեփյանի ընդդեմ «Անսուր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ պատասխանողից 900.000 ԱՄՆ դոլար և այդ գումարի վրա հաշվարկված տոկոսները բռնագանձելու պահանջի մասին:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ Վստահորդը, անկախ մատուցված ծառայությունների արդյունքից, մատուցված ծառայությունների և կատարված ծախսերի համար վճարում է հիմնական վարձատրություն ժամավճարի ձևով՝ մեկ ժամը 30.000 ՀՀ դրամի չափով (ներառյալ ԱԱՀ):

Պայմանագրի 3.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Կատարողի միջոցով Վստահորդը հասնում է անհրաժեշտ վերջնական արդյունքի, Վստահորդը Կատարողին վճարում է լրացուցիչ վարձատրություն Հաջողության հոնորարի ձևով:

Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը կախվածության մեջ է դրվում վերջնական արդյունքից, որին փորձում է հասնել Վստահորդը Կատարողի միջոցով:

Պայմանագրի 3.4.2 կետի համաձայն՝ Վստահորդին անհրաժեշտ վերջնական արդյունքն է Վստահորդի կողմից դրամական միջոցների և/կամ այլ գույքի փաստացի ստանալը հաշտության համաձայնության կնքման և/կամ հակառակ կողմի հետ ունեցած բոլոր դատական գործերով և վեճերով առանց հաշտության համաձայնության դատական որոշումների կայացման արդյունքում:

Պայմանագրի 3.4.3 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը սահմանվում է 5 տոկոս՝ Կատարողի միջոցով Վստահորդի փաստացի ստացած դրամական միջոցներից և/կամ այլ գույքի շուկայական արժեքից:

Պայմանագրի 4.2 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը վճարվում է մեկ ամսվա ընթացքում Կատարողի միջոցով Վստահողի կողմից Վերջնական արդյունքի հասնելուց և Վստահողի կողմից դրամական միջոցները և/կամ այլ գույքը ստանալուց հետո **(հատոր 1-ին, գ.թ. 13-15):**

2) Թիվ ԵԿԳ/2705/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2011 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ որոշվել է Վիկտոր Տեր-Հովսեփյանի վերաքննիչ բողոքը բավարարել. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.06.2011 թվականի վճիռը բեկանել և փոփոխել, այն է՝ «Անսուր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը՝ մերժել, Վիկտոր Տեր-Հովսեփյանի հայցը բավարարել՝ «Անսուր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հոգուտ Վիկտոր Տեր-Հովսեփյանի բռնագանձել 900.000 ԱՄՆ դոլարին՝ բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, և 142.446,58 ԱՄՆ դոլարին՝ բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ՝ որպես տոկոսներ հաշվարկված 01.01.2009 թվականից մինչև 20.04.2010 թվականը, ինչպես նաև բռնագանձել տոկոսներ՝ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով՝ սկսած 20.04.2010 թվականից մինչև փոխառության գումարի բռնագանձման օրը **(հատոր 3-րդ, գ.թ. 19-32, դատական տեղեկատվական համակարգ):**

3) «Կատարողական վարույթը կասեցնելու մասին» 10.03.2016 թվականի որոշման համաձայն՝ ի կատարումն թիվ ԵԿԳ/2705/02/09 քաղաքացիական գործով 13.09.2012 թվականին տրված կատարողական թերթի՝ կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ «Անսուր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող անշարժ գույքը չի բավարարում կատարողական թերթի պահանջները կատարելու համար: Պահանջատիրոջը և պարտապանին առաջարկվել է 60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան: Ոստի 02.12.2012 թվականին հարուցված թիվ 01/02/-5975/12 կատարողական վարույթը 60-օրյա ժամկետով կասեցվել է **(հատոր 1-ին, գ.թ. 74):**

4) «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» 10.05.2016 թվականի որոշման համաձայն՝ 02.12.2012 թվականին հարուցված թիվ 01/02/-5975/12 կատարողական վարույթը կասեցվել է, և առաջարկվել է պահանջատիրոջը և պարտապանին 60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան, սակայն օրենքով սահմանված ժամկետում կողմերը չեն դիմել դատարան՝ սնանկության դիմումով: Ոստի 10.03.2016 թվականին կասեցված թիվ 01/02/-5975/12 կատարողական վարույթը վերսկսվել է **(հատոր 1-ին, գ.թ. 37):**

5) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Գ. Սախոյանի 23.03.2017 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման համաձայն՝ ի կատարումն թիվ ԵԿԳ/2705/02/09 քաղաքացիական գործով 13.09.2012 թվականին տրված կատարողական թերթի՝ «Անսուր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող՝ ք. Երևան, Անտառային փողոցի 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեի շինությունը և հողամասը ներկայացվել են հարկադիր էլեկտրոնային աճուրդի **(հատոր 1-ին, գ.թ. 71):**

6) Թիվ ՎԳ/3113/05/17 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 17.04.2017 թվականի որոշմամբ վարույթ է ընդունվել Վիկտոր Տեր-Հովսեփյանի հայցադիմումն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Գ. Սախոյանի՝ 23.03.2017 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին **(հատոր 1-ին, գ.թ. 38):**

7) Գործում առկա են Ընկերության փաստաբանների և Վիկտոր Տեր-Հովսեփյանի էլեկտրոնային նամակագրությունները, որոնց համաձայն՝ Ընկերության փաստաբանները

Վիկտոր Տեր-Հովսեփյանին դատական ակտի կատարման տարբեր հնարավորություններ են առաջարկել (մասնավորապես՝ սնանկության դիմում ներկայացնելու կամ արտադատական կարգով գույքի իրացման միջոցով), սակայն Վիկտոր Տեր-Հովսեփյանը չի համաձայնվել (**հատոր 1-ին, գ.թ. 101, 104-150**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ դատարանի կիրառած նյութական իրավունքի նորմի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի այնպիսի խախտում, որով խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. փաստաբանի և վարահորդի միջև կնքված պայմանագրով հաջողության հոնորար սահմանված լինելու դեպքում արդյո՞ք ծագում է հոնորարի վճարման պարտականությունը, եթե վերջինս կախվածության մեջ է դրվել վարահորդի կողմից դրամական գումարներ կամ այլ գույք փաստացի արանալու հանգամանքից, որը, սակայն, չի արացվել, իսկ վարահորդն առաջնորդվել է իրավունքների պաշտպանության այլ եղանակով, քան առաջարկել է իր փաստաբանը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

ՀՀ սահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի թիվ ՍԴՌ-115 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ: Հետևաբար դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ:

ՀՀ վճարելի դատարանը «Յունիքանկ» ԲԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՄՊԸ-ի քաղաքացիական գործով փաստել է, որ նշված մոտեցումը համահունչ է Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի հետ, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնա երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնան անկատար: Ըստ Եվրոպական դատարանի՝ դժվար կլինի պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցնեք իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով (*յրեն՝ HORNBY v. GREECE գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, 40-րդ կետ, MOSTACCIUOLO v. ITALY (No. 2) գործով Եվրոպական դատարանի 29.03.2006 թվականի վճիռը, 85-րդ կետ, RAYLYAN v. RUSSIA գործով Եվրոպական դատարանի 15.02.2007 թվականի վճիռը, 27-րդ կետ, KHACHATRYAN v. ARMENIA գործով Եվրոպական դատարանի 01.12.2009 թվականի վճիռը, 66-րդ կետ*):

Այսպիսով, դատական ակտերի հարկադիր կատարման վերաբերյալ Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերվող հայեցակարգային մոտեցման համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է. այն չի կարող առանձնացվել արդարադատությունից: Առանց դատական ակտերի պատշաճ կատարման դատավարությունն արդյունավետ չի լինի և չի հասնի իր նպատակներին, քանի որ իրավունքի խախտումները կարելի է վերացնել միայն սուբյեկտիվ իրավունքներն իրապես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ չսպառնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ուղղակիորեն չի ամրագրում դատական ակտի կատարման իրավունքը, այնուամենայնիվ, այն համարվում է արդար դատաքննության իրավունքի անօտարելի տարրը (*յրեն՝ «Յունիքանկ» ԲԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՄՊԸ-ի թիվ 17/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի և վստահորդի միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս (...): Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքը համարվում է հետաձգող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների ծագումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հայտնի չէ՝ կիրականանա՞, թե՛ ոչ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե պայմանի իրականացման անբարեխղճորեն արգելք է հանդիսացել այն կողմը, ում ձեռնտու չէ պայմանի իրականացումը, ապա պայմանը ճանաչվում է իրականացված: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանի իրականացման անբարեխղճորեն նպաստել է այն կողմը, ում ձեռնտու է պայմանի իրականացումը, ապա պայմանը ճանաչվում է չիրականացված:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 782-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանձնարարության պայմանագրով մի կողմը (հանձնակատարը) պարտավորվում է մյուս կողմի (հանձնարարողի) անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ...: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հանձնարարության պայմանագիրը

կնքվում է այն ժամկետի նշումով, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից կամ առանց դրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 783-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանձնարարողը պարտավոր է հանձնակատարին վարձատրել, եթե դա նախատեսված է օրենքով, այլ իրավական ակտերով կամ հանձնարարության պայմանագրով ...:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հանձնարարության պայմանագրի ուժով հանձնակատարը հանձնարարողի անունից և նրա հաշվին պարտավոր է կատարել որոշակի իրավաբանական գործողություններ, պայմանագրում կարող է նշվել նաև այն ժամկետը, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից: Միաժամանակ, ինչպես ցանկացած պայմանագիր, այնպես էլ հանձնարարության պայմանագիր կնքելիս կողմերը՝ **հանձնակատարը և հանձնարարողը, չփոխելով օրենսգրքի իմպերատիվ դրույթներով ամրագրված պայմանները, ազատ են որոշելու պայմանագրի պայմաններն իրենց հայեցողությամբ, այդ թվում նաև՝ հանձնարարողի կողմից հանձնակատարին վարձատրելու չափը և վճարման ժամկետը** (յրեն «Բրենդ Լիդեր» ՀՀ ՄՊԸ-ն ընդդեմ «Օլիսկուրյոլ» ՄՊԸ-ի թիվ ԵԿԴ/2043/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ ՀՀ վճարելի դատարանը հարկ է համարել հավելել, որ փաստաբանը և վստահորդը սեփական հայեցողությամբ ոչ միայն կարող են սահմանել փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը, այլև վճարման պարտավորության ծագման պահը կարող են պայմանավորել որոշակի պայմանի իրականացման փաստով (օրինակ՝ գործի բարենպաստ ելքով, գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքով կամ այդ դատական ակտի կատարմամբ): ՀՀ վճարելի դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ փաստաբանի և վստահորդի հարաբերությունների պայմանագրային կարգավորումը կրում է համանման բնույթ, և կողմերի միջև ծագել է վեճ փաստաբանական գործունեության վճարի չվճարման կապակցությամբ, դատարանները պարտավոր են նախ և առաջ պարզել.

- 1) պայմանագրով նախատեսված համապատասխան պայմանն իրականում ինչ է ենթադրում.
- 2) արդյո՞ք այդ պայմանի իրականացումը որևէ կերպ պայմանավորված է պայմանագրի կողմի կամ կողմերի վարքագծով.
- 3) պայմանը փաստացի իրականացել է, թե՛ ոչ.
- 4) եթե ոչ, արդյո՞ք կողմերից որևէ մեկն իր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) նպաստել է պայմանի չիրականացմանը:

ՀՀ վճարելի դատարանը հարկ է համարել ընդգծել, որ վերը նշված հարցադրումների անդրադառնալիս դատարանները պետք է ղեկավարվեն պայմանագրերի մեկնաբանման կանոններով՝ նույն որոշմամբ անդրադառնալով նաև այդ կանոններին (յրեն՝ Սամել Մարտիրոսյանն ընդդեմ Գեղամ Մելիքսեթյանի թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):

Ջարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ փաստաբանի և վստահորդի միջև հարաբերությունները, այդ թվում՝ փաստաբանի վարձատրության հետ կապված հարցերը կարգավորվում են պայմանագրով, և կողմերն ազատ են պայմանագրի ազատության սկզբունքի շրջանակներում որոշելու պայմանագրի պայմանները: Կողմերն ազատ են պայմանագրում սահմանել նաև հետաձգող կամ վերացնող պայման, որի դեպքում կիրառման են ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանով կնքված գործարքի վերաբերյալ կարգավորումները:

Այդուհանդերձ, Վճարելի դատարանը կարևորում է, որ մասնավորապես փաստաբանի և վստահորդի միջև հարաբերություններում «արդյո՞ք կողմերից որևէ մեկն իր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) նպաստել է պայմանի չիրականացմանը» հարցադրման պարզաբանումը պետք է իրականացվի ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորումների, այլ նաև դատական պաշտպանության իրավունքի համատեքստում: Այսպես, եթե փաստաբանին վարձատրության վճարումը կախվածության մեջ

է դրվել դատական ակտի կատարումից, ապա առանցքային նշանակություն ունի այն, որ դատական ակտի կատարումը դատական պաշտպանության իրավունքի տարր է, ուստի՝ գնահատելու համար, թե արդյոք վստահորդը խոչընդոտում է պայմանի առաջացմանը (դատական ակտի կատարմանը), պետք է գնահատել նաև այն հանգամանքը, թե որքանով է դատական պաշտպանության տեսանկյունից վստահորդի համար ձեռնադրված դատական ակտի չկատարումը: Այլ կերպ ասած՝ եթե վստահորդն իր օգտին կայացված դատական ակտի փաստացի կատարումը տեսնում է այլ եղանակով, քան իր փաստաբանը, ապա դա ինքնին չի կարող մեկնաբանվել որպես դատական ակտի կատարման խոչընդոտում՝ հաշվի առնելով, որ դատական պաշտպանության տարր կազմող դատական ակտի կատարման իրավունքի իրավատերը վստահորդն է, ոչ թե փաստաբանը:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ հետաձգող պայմանով փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը մեկնաբանելիս պետք է հաշվի առնվեն պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնները՝ կողմերի իրական կամքը բացահայտելով վստահորդի դատական պաշտպանության իրավունքի համատեքստում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Վիկտոր Տեր-Հովսեփյանի միջև 27.09.2010 թվականին կնքվել է իրավաբանական օգնություն տրամադրելու մասին պայմանագիր, որով Վիկտոր Տեր-Հովսեփյանը հանձնարարել է, իսկ Ընկերությունը պարտավորվել է հատուցման դիմաց տրամադրել իրավաբանական օգնություն՝ Պայմանագրով որոշված ծավալով և պայմաններով: Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ Վստահորդը՝ անկախ մատուցված ծառայությունների արդյունքից, մատուցված ծառայությունների և կատարված ծախսերի համար վճարում է հիմնական վարձատրություն ժամավճարի ձևով՝ մեկ ժամը 30.000 ՀՀ դրամի չափով (սերառյալ ԱԱՀ): Պայմանագրի 3.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Կատարողի միջոցով Վստահորդը հասնում է անհրաժեշտ **վերջնական արդյունքի**, Վստահորդը Կատարողին վճարում է լրացուցիչ վարձատրություն Հաջողության հոնորարի ձևով: Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը **կախվածության մեջ է դրվում վերջնական արդյունքից**, որին փորձում է հասնել Վստահորդը Կատարողի միջոցով: Պայմանագրի 3.4.2 կետի համաձայն՝ Վստահորդին անհրաժեշտ վերջնական արդյունքն է Վստահորդի կողմից դրամական միջոցների և/կամ այլ գույքի **փաստացի ստանալը** հաշտության համաձայնության կնքման և/կամ հակառակ կողմի հետ ունեցած բոլոր դատական գործերով և վեճերով առանց հաշտության համաձայնության դատական որոշումների կայացման արդյունքում: Պայմանագրի 3.4.3 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը սահմանվում է 5 տոկոս՝ Կատարողի միջոցով Վստահորդի **փաստացի ստացած** դրամական միջոցներից և/կամ այլ գույքի շուկայական արժեքից: Պայմանագրի 4.2 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը վճարվում է մեկ ամսվա ընթացքում Կատարողի միջոցով Վստահորդի կողմից վերջնական արդյունքի հասնելուց և Վստահորդի կողմից **դրամական միջոցները և/կամ այլ գույքը ստանալուց հետո**:

Թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ որոշվել է Վիկտոր Տեր-Հովսեփյանի վերաքննիչ բողոքը բավարարել. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.06.2011 թվականի վճիռը բեկանել և փոփոխել, այն է՝ «Անսուր Իսվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը՝ մերժել, Վիկտոր Տեր-Հովսեփյանի հայցը բավարարել՝ «Անսուր Իսվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ Վիկտոր Տեր-Հովսեփյանի բռնագանձել 900.000 ԱՄՆ դոլարին՝ բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, և 142.446,58 ԱՄՆ դոլարին՝ բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ՝ որպես տոկոսներ՝ հաշվարկված 01.01.2009 թվականից մինչև 20.04.2010 թվականը, ինչպես նաև բռնագանձել տոկոսներ՝ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով՝ սկսած 20.04.2010 թվականից մինչև փոխառության գումարի բռնագանձման օրը:

Վիկտոր Տեր-Հովսեփյանն ընտրել է դատական ակտի հարկադիր կատարման միջոցով գումարը բռնագանձելու տարբերակն այն դեպքում, երբ Ընկերության փաստաբանները Վիկտոր Տեր-Հովսեփյանին դատական ակտի կատարման այլ հնարավորություններ են առաջարկել (մասնավորապես՝ սնանկության դիմում ներկայացնելու կամ արտադատական կարգով գույքի իրացման միջոցով), սակայն Վիկտոր Տեր-Հովսեփյանն այդ տարբերակներին չի համաձայնվել:

Սույն գործով Դատարանը գտել է, որ ըստ կողմերի միջև կնքված պայմանագրի Ընկերության հաջողության հոնորար ստանալու իրավունքը և Վիկտոր Տեր-Հովսեփյանի հաջողության հոնորար վճարելու պարտականությունն առաջանում է այն դեպքում, երբ Վիկտոր Տեր-Հովսեփյանը փաստացի ստացել է դրամական միջոցներ և/կամ այլ գույք: Դատարանն արձանագրել է, որ սույն գործով տվյալ հանգամանքը բացակայում է, ուստի հաջողության հոնորար վճարելու պարտականությունը նույնպես բացակայում է: Նկատի ունենալով, որ կողմերի միջև կնքվել է հետաձգող պայմանով գործարք, Դատարանը եզրահանգել է, որ Ընկերությունը պետք է ապացուցեր, որ պատասխանողը կատարել է անբարեխիղճ գործողություններ, պայմանը չկատարելը պայմանավորված է եղել պատասխանողի անբարեխիղճ գործողություններով և պայմանի կատարումը գումարների ստացումը, ձեռնտու չէ պատասխանողին: Դատարանը գնահատել է Ընկերության կողմից պատասխանողին առաջարկված տարբերակները («Անսուր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սնանկ ճանաչելը և «Անսուր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելը) և եզրահանգել, որ դրանք չեն բխում պատասխանողի շահերից: Ուստի Դատարանը եզրահանգել է, որ Ընկերությունը չի հիմնավորել պատասխանողի անբարեխիղճ գործողությունների, անբարեխիղճ գործողությունների և Պայմանագրի պայմանն իրագործելու անհնարինության պատճառահետևանքային կապի, ինչպես նաև պայմանի կատարումը պատասխանողին ձեռնտու չլինելու հանգամանքների միաժամանակյա առկայությունը, որպիսի պայմաններում Դատարանը գտել է, որ հայցը անհիմն է և ենթակա է մերժման:

Անդրադառնալով Ընկերության կողմից վկայակոչված թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշմանը՝ Դատարանը գտել է, որ այդ որոշումը տվյալ գործով կիրառելի չէ, քանի որ այդ որոշման հիմքում ընկած քաղաքացիական գործի փաստական հանգամանքներն էականորեն տարբերվում են տվյալ գործի փաստական հանգամանքներից:

Վերաքննիչ դատարանը նախ արձանագրել է, որ Դատարանն անհիմն կերպով շեղվել է թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշմամբ արտահայտված դիրքորոշումից: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Վիկտոր Տեր-Հովսեփյանն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա ձեռք է բերել սեփականության իրավունք, քանի որ թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով վճռը լուծվել է Վիկտոր Տեր-Հովսեփյանի օգտին, դրամական պահանջի իրավունքը հաստատվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2011 թվականի որոշմամբ, որի հիման վրա տրվել են կատարողական թերթեր, որոնք ներկայացվել են հարկադիր կատարման: Արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Վիկտոր Տեր-Հովսեփյանի օգտին օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված պահանջի իրավունքի առկայության, ինչպես նաև պահանջի իրավունքի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրված լինելու պայմաններում արդեն իսկ վրա է հասել պայմանագրով սահմանված հաջողության հոնորար վճարելու համար անհրաժեշտ պայմանը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով Դատարանը գտել է, որ թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշմամբ հայտնած իրավական դիրքորոշումները կիրառելի չեն սույն գործի նկատմամբ, սակայն Վճռաբեկ դատարանի

գնահատմամբ Դատարանն առաջնորդվել է հենց այդ որոշմամբ տրված իրավական վերլուծություններով, քանի որ գնահատել է, թե պայմանագրով նախատեսված համապատասխան պայմանն իրականում ինչ է ենթադրել, գնահատել է, թե որքանով էր այդ պայմանի իրականացումը պայմանավորված պայմանագրի կողմի կամ կողմերի վարքագծով, պարզել է, որ այդ պայմանը փաստացի չի իրականացվել, և իրականում պատասխանողն անբարեխիղճ վարքագիծ չի դրսևորել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանին, սպա վերջինս թեև առաջնորդվել է սույն որոշմամբ հայտնած իրավական դիրքորոշումներով, սակայն սխալ է բացահայտել Պայմանագրի պայմանը:

Այսպես, նախ և առաջ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ինչպես Դատարանի և Վերաքննիչ դատարանի, այնպես էլ հայցվորի և պատասխանողի միջև ծագած թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշման կիրառելիության հետ կապված խնդրին:

ՀՀ դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

21.02.2007 թվականին ընդունված, 18.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը 21.02.2007 թվականին ընդունված, 18.05.2007 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մեկնաբանության շրջանակներում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և ՀՀ վճռաբեկ դատարանի և [Եվրոպական] դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս, դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն՝ դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ **առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար** և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը (յրեն «Արաբկիր Ալկո Լիկյոր-Օդո գործարան» ՍՊ ընկերություն ընդդեմ Սոս Բաղդասարյանի թիվ 3-480(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2008 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ նախորդ և գործող դատական օրենսգրքերի կարգավորումների միջև առկա են որոշակի տարբերություններ, սակայն նկատի ունենալով, որ գործող դատական օրենսգիրքը նույնպես կարևորում է համադրվող գործերի՝ նույնանման փաստական հանգամանքներ ունենալը, գտնում է, որ վերոգրյալ թիվ 3-480(ՎԴ) գործով որոշմամբ հայտնած դիրքորոշումը կիրառելի է նաև գործող դատական օրենսգրքի պայմաններում: Ուստի, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ համադրվող դատական գործերի էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներին:

Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Փաստարանի և վստահորդի միջև կնքվել է «Փաստարանական ծառայություններ մատուցելու մասին» պայմանագիր, որի համաձայն՝ վստահորդը պարտավորվել է

կատարված փաստաբանական ծառայության դիմաց վճարել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացված գումարի 3 տոկոսը:

2) Առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ և դրան հիման վրա տրված կատարողական թերթ՝ գումարի բռնագանձման վերաբերյալ: Կատարողական թերթը ներկայացվել է հարկադիր կատարման:

3) Հետագայում դատական ակտի հարկադիր կատարման փուլում կողմերի միջև կնքվել է հաշտության համաձայնություն, որով ներվել է պարտապանի պարտքը:

4) Վստահորդը հրաժարվել է փաստաբանի ծառայությունների դիմաց գումար վճարել այն հիմնավորմամբ, որ գումար չի ստացել, հետևաբար վճարման պարտականություն չունի (այսինքն՝ վեճը ոչ թե հաջողության հոնորարի, այլ փաստաբանի մատուցած անբողջ ծառայությունների համար վճարի վերաբերյալ է եղել):

Նշված գործով ՀՀ վճարել դատարանն արձանագրել է, որ քանի որ քաղաքացիական գործով վեճը լուծվել է հաշտության համաձայնության կնքմամբ, անհրաժեշտ էր գնահատել, թե արդյոք այդ հաշտության համաձայնությունը հաստատող դատական ակտը գործին մասնակցող անձանց համար բարենպաստ դատական ակտ էր: Նշված դատական ակտը կատարվել է կանովին, ուստի դատական ակտի հարկադիր կատարման անհրաժեշտությունը բացակայել է: Ընդ որում, կնքված հաշտության համաձայնությունը վերացրել է նաև կատարողական թերթի պահանջների կատարման անհրաժեշտությունը: Ուստի ՀՀ վճարել դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն գումար մուտքագրվելու վերաբերյալ պայմանը ենթակա էր գնահատման կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Միաժամանակ պետք է պարզվեր նաև սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստն այն մասին, թե արդյոք պայմանագրի կողմերից որևէ մեկն իր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) օժանդակել է նշված պայմանի չիրականացմանը: ՀՀ վճարել դատարանը նշված գործով բեկանել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Վերոգրյալ դատական գործի փաստական հանգամանքները համեմատելով սույն գործի փաստական հանգամանքների հետ՝ Վճարել դատարանը գտնում է, որ թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով առանցքային տարբերակիչ նշանակություն ունի այն հանգամանքը, որ վստահորդը վեճը լուծել է հաշտությամբ՝ փաստաբանին որևէ գումար չվճարելով և գտնելով, որ վճարման պարտականություն ընդհանրապես չունի:

Մինչդեռ սույն գործով էական տարբերակիչ նշանակություն ունի այն հանգամանքը, որ վստահորդը չի հրաժարվում իր պայմանագրային պարտականությունների կատարումից ընդհանրապես, այլ պարզապես գտնում է, որ դեռ չի ծագել այդ պայմանը, քանի որ դեռ փաստացի որևէ գումար չի ստացել:

Հետևաբար, Վճարել դատարանի գնահատմամբ սույն դատական գործերը չեն կարող համարվել **նույնանման փաստական հանգամանքներ ունեցող**:

Այդուհանդերձ, Վճարել դատարանը կարևորում է իր սահմանադրական առաքելությունը՝ ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, և դրա իրացման դատավարական եղանակներից մեկը՝ իրավունքի զարգացումն ապահովելը: Ուստի, հենց նշված գործերի փաստական հանգամանքների որոշակի նմանության և փաստաբանի ու վստահորդի միջև ծագած հանձնարարության հարաբերություններից վճարման պարտականության ծագման պահի ճիշտ որոշման հարցով պայմանավորված՝ Դատարանի ու Վերաքննիչ դատարանի միջև ծագած՝ ՀՀ վճարել դատարանի որոշման կիրառելիության հետ կապված խնդիրը լուծելու անհրաժեշտությունը հաշվի առնելով՝ Վճարել դատարանը սույն որոշմամբ զարգացնում է թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով հայտնած իր իրավական դիրքորոշումները:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունները համադրելով սույն գործի փաստական հանգամանքների հետ՝ Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Վիկտոր Տեր-Հովսեփյանը չի

խուսափել իր պարտավորության կատարումից, այլ ընտրել է իրավունքի պաշտպանության այլ եղանակ, քան առաջարկել են իր փաստաբանները: Ընդ որում, ընտրված միջոցը՝ դատական ակտի հարկադիր կատարումը, իրավունքի պաշտպանության ոչ արտասովոր, ընդհակառակը՝ առավել տարածված միջոց է: Այսինքն՝ չի կարելի եզրահանգել, որ, օրինակ, Վիկտոր Տեր-Հովսեփյանն ընտրել է իրավունքի իրացման այնպիսի մեխանիզմ, որն ուղղված էր Պայմանագրով սահմանված պայմանի ծագմանը խոչընդոտելուն: Ավելին, բավարար իրավական հիմնավորվածությունից զուրկ է նաև այն եզրահանգումը, որ դատական ակտի կատարումը՝ որպես դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարր, ձեռնառու չէ Վիկտոր Տեր-Հովսեփյանին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վիկտոր Տեր-Հովսեփյանի գործողությունները չեն կարող որակվել որպես Պայմանագրի պայմանի կատարմանը խոչընդոտող գործողություններ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի հետևությանն այն մասին, որ օրինական ուժի մեջ մտած կատարելի դատական ակտի գոյության, ինչպես նաև այդպիսի դատական ակտի հիման վրա հարուցված կատարողական վարույթի առկայության պայմաններում Վիկտոր Տեր-Հովսեփյանն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա ձեռք է բերել սեփականության իրավունք, ապա Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ հետաձգող պայմանով գործարքի դեպքում էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք պայմանը փաստացի իրականացվել է, թե՛ ոչ: Սույն գործով պայմանը ձևակերպված է եղել հետևյալ կերպ.

- Պայմանագրի 3.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Կատարողի միջոցով Վստահորդը հասնում է անհրաժեշտ **վերջնական արդյունքի**, Վստահորդը Կատարողին վճարում է լրացուցիչ վարձատրություն Հաջողության հոնորարի ձևով:

- Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը **կախվածության մեջ է դրվում վերջնական արդյունքից**, որին փորձում է հասնել Վստահորդը Կատարողի միջոցով:

- Պայմանագրի 3.4.2 կետի համաձայն՝ Վստահորդին անհրաժեշտ վերջնական արդյունքն է Վստահորդի կողմից դրամական միջոցների և/կամ այլ գույքի **փաստացի ստանալը** հաշտության համաձայնության կնքման և/կամ հակառակ կողմի հետ ունեցած բոլոր դատական գործերով և վեճերով առանց հաշտության համաձայնության դատական որոշումների կայացման արդյունքում:

- Պայմանագրի 3.4.3 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը սահմանվում է 5 տոկոս՝ Կատարողի միջոցով Վստահորդի **փաստացի ստացած** դրամական միջոցներից և/կամ այլ գույքի շուկայական արժեքից:

- Պայմանագրի 4.2 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը վճարվում է **մեկ ամսվա ընթացքում Կատարողի միջոցով Վստահորդի կողմից վերջնական արդյունքի հասնելուց և Վստահորդի կողմից դրամական միջոցները և/կամ այլ գույքը ստանալուց հետո**:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վեճի առարկան ոչ թե փաստաբանին տրվող վարձատրությունն է իր մատուցած ծառայությունների համար (ինչպես եղել է թիվ ԵԱՆԳ/0976/02/13 քաղաքացիական գործով), այլ **հաջողության հոնորարը**, այսինքն՝ վերջնական արդյունքի հասնելիս (գործը վերջնականապես ավարտվելիս) փաստաբանի լրացուցիչ վարձատրությունը: Հետևաբար նման պարագայում անհիմն է Վերաքննիչ դատարանի եզրահանգումը, որ Վիկտոր Տեր-Հովսեփյանի սեփականության ծագման հիմքով ծագել է նաև հաջողության հոնորարի վճարման պարտավորությունը, քանի որ հոնորարի վճարման պարտականությունը կախվածության մեջ է դրվել ոչ թե պահանջի իրավունքի ծագման պահից, այլ դրամական միջոցները կամ այլ գույքը **փաստացի ստանալու** պահից:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով առանցքային նշանակություն ունեն այն հանգամանքները, որ Վիկտոր Տեր-Հովսեփյանի իրավունքի պաշտպանության գործընթացը դեռևս չի ավարտվել, այլ գտնվում է հարկադիր կատարման փուլում, Պայմանագրի պայմանը փաստացի չի ծագել, իսկ Վիկտոր Տեր-Հովսեփյանը որևէ անբարեխիղճ գործողություն չի կատարել՝ ընտրելով իրավունքի իրացման այլ

օրինական ճանապարհ, քան առաջարկել են իր փաստաբանները: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է նշված հանգամանքները՝ արդյունքում թույլ տալով նյութական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և ազդել է գործի ելքի վրա:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկների մի մասը հերքվում են վերոհիշյալ պատճառաբանություններով:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննության սահմաններից, քանի որ Ընկերությունն իր վերաքննիչ բողոքում չի մատնանշել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետը և որպես բողոքի հիմնավորում՝ չի վկայակոչել դրանում գործածվող «գույք» հասկացության ինքնավար նշանակության և «օրինաչափ սպասելիքի» վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, ապա Վճռաբեկ դատարանն այս մասով հիմնավոր է համարում վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացված այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս չի եկել, քանի որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի իմաստով «գույք» հասկացությանն անդրադարձել է թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2014 թվականի որոշման քննարկման շրջանակներում, այլ ոչ թե որպես բողոքի առանձին հիմք կամ հիմնավորում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում փորձել է իրավական գնահատական տալ Պայմանագիր կնքելիս կողմերի իրական կամքին, որը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ չի կարող որակվել որպես վերաքննության սահմաններից դուրս գալու գործողություն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար՝ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, մասնավորապես՝ Պայմանագրի պայմանը մեկնաբանելիս Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածն այնպիսի մեկնաբանությամբ, որի արդյունքում խաթարվել է պայմանագրի պայմանը սահմանելիս կողմերի իրական կամքը և պայմանագրի պայմանն ազատորեն սահմանելու՝ կողմերի իրավունքը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [«Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման, և օրինական ուժ է տրվում Դատարանի 04.06.2019 թվականի վճռին, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ Ընկերությունից հոգուտ Վիկտոր Տեր-Հովսեփյանի պետք է բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.12.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 04.06.2019 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. «Ինվեսթմյոս Լո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հոգուտ Վիկտոր Տեր-Հովսեփյանի բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵԿԴ/4708/02/17 վարչական գործով 04.03.2022 թվականին կայացված որոշման որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

04.03.2022 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 04.03.2022 թվականին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «Ինվեսթմնթ Լո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Վիկտոր Տեր-Հովսեփյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.12.2019 թվականի որոշման դեմ Վիկտոր Տեր-Հովսեփյանի վճռաբեկ բողոքը՝ ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.12.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 04.06.2019 թվականի վճռին՝ նույն որոշման պատճառաբանություններով:

Վճռաբեկ դատարանի դատավոր Ս. Միքայելյանս համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում են իմ հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Վիկտոր Տեր-Հովսեփյանից բռնագանձել 93.192 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 09.09.2011 թվականին կայացված որոշման համաձայն՝ 900.000 ԱՄՆ դոլար փոխառության գումարի նկատմամբ 29.11.2017 թվականից հետո հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների 5 տոկոսը՝ հաշվարկված մինչև Ընկերության նկատմամբ Վիկտոր Տեր-Հովսեփյանի վճարային պարտականության ամբողջական կատարման օրը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Մազմանյան) (այսուհետ՝ Դատարան) 04.06.2019 թվականի վճռով Ընկերության հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.12.2019 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Դատարանի 04.06.2019 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Ընկերության հայցը բավարարվել մասնակի. որոշվել է Վիկտոր Տեր-Հովսեփյանից հօգուտ Ընկերության բռնագանձել 93.192 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ հայցը՝ մնացած մասով, մերժել:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Վիկտոր Տեր-Հովսեփյանը (ներկայացուցիչներ՝ Հակոբ Սաֆարյան և Արթուր Գրիգորյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խստիպել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հետաձգող պայմանով գործարքի կնքումն ինքնին իրավունքներ և պարտականություններ չի առաջացնում, այլ այդ իրավունքներն ու պարտականություններն առաջանում են մեկ այլ իրավաբանական փաստի՝ գործարքով հետաձգված պայմանի ի հայտ գալու հետ: Հետևաբար, եթե հետաձգված պայմանով նշված իրավիճակը չի առաջանում, ապա այդ հետաձգված պայմանի շրջանակներում նախատեսված իրավունքները և պարտականությունները նույնպես չեն կարող առաջանալ: Սույն գործով Ընկերությունը պետք է ապացուցեր, որ պատասխանողը կատարել է անբարեխիղճ գործողություններ, Պայմանագրի պայմանը չկատարելը պայմանավորված էր այդ անբարեխիղճ գործողություններով և որ դատական ակտով հաստատված գումարի բռնագանձումը ձեռնադրել է պատասխանողին, մինչդեռ նշված փաստերն Ընկերության կողմից չեն ապացուցվել:

Ավելին, Վերաքննիչ դատարանի պատճառաբանության արդյունքում ստացվում է, որ փաստաբանը կատարողական վարույթի ցանկացած փուլում կարող է դադարեցնել իր ծառայությունների մատուցումը և պահանջել նախատեսված պարգևավճարի վճարում:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը սույն գործի նկատմամբ կիրառել է թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 28.12.2014 թվականի որոշումն այն դեպքում, երբ գործերի փաստական հանգամանքները տարբեր են:

Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննության սահմաններից, քանի որ դատական ակտում արժարժել է այնպիսի հիմքեր և հիմնավորումներ, որոնք առկա չեն եղել վերաքննիչ բողոքում: Մասնավորապես, Ընկերությունն իր վերաքննիչ բողոքում չի մատնանշել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետը և որպես բողոքի հիմնավորում՝ չի վկայակոչել դրանում գործածվող «գույք» հասկացության ինքնավար նշանակության և «օրինաչափ ապաստիլքի» վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.12.2019 թվականի որոշումը և ուժ տալ Դատարանի 04.06.2019 թվականի վճիռը:

2.1. Ընկերության կողմից ներկայացված վճարելի բողոքի պարասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս չի եկել, քանի որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի իմաստով «գույք» հասկացությանն անդրադարձել է թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 28.12.2014 թվականի որոշման քննարկման շրջանակներում, այլ ոչ թե որպես բողոքի առանձին հիմք կամ հիմնավորում:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ ըստ Վերաքննիչ դատարանի պատճառաբանության՝ փաստաբանը կատարողական վարույթի ցանկացած փուլում կարող է դադարեցնել իր ծառայությունների մատուցումը և պահանջել նախատեսված պարգևավճարի վճարում, ապա բողոքաբերն անտեսել է, որ ՀՀ վճարելի դատարանի կողմից վերը նշված որոշմամբ արդեն իսկ տրվել է նմանատիպ գործերի լուծման ուղենիշը: Ընդ որում, նշված որոշումը կիրառելի է սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ, քանի որ գործերի տարբերվող հանգամանքները տվյալ դեպքում էական նշանակություն չունեն: ՀՀ վճարելի դատարանի կողմից կարևորվել է այն հանգամանքը, որ կողմերից մեկն իր վարքագծով պետք է նպաստի պայմանի չիրականացմանը, և սույն գործում առկա է հենց այդ իրավիճակը՝ պատասխանողն իր գործողություններով խոչընդոտում է պայմանի իրականացմանը:

3. Որպես վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր վճարելի դատարանն արձանագրել է հետևյալը

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության (Կատարող) և Վիկտոր Տեր-Հովսեփյանի (Վստահորդ) միջև 27.09.2010 թվականին կնքվել է իրավաբանական օգնություն տրամադրելու մասին պայմանագիր, որով Վիկտոր Տեր-Հովսեփյանը հանձնարարել է, իսկ Ընկերությունը պարտավորվել է հատուցման դիմաց տրամադրել իրավաբանական օգնություն՝ Պայմանագրով որոշված ծավալով և պայմաններով:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է ներկայացնել Վստահորդի շահերը, ինչպես նաև Լյուրով Փիլոյանի շահերը, իրականացնել նրանց պաշտպանությունը ՀՀ դատական ատյաններում, ի թիվս այլնի, հետևյալ գործով՝ Վիկտոր Տեր-Հովսեփյանի ընդդեմ «Անսուր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ պատասխանողից 900.000 ԱՄՆ դոլար և այդ գումարի վրա հաշվարկված տոկոսները բռնագանձելու պահանջի մասին:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ Վստահորդը, անկախ մատուցված ծառայությունների արդյունքից, մատուցված ծառայությունների և կատարված ծախսերի համար վճարում է հիմնական վարձատրություն ժամավճարի ձևով՝ մեկ ժամը 30.000 ՀՀ դրամի չափով (ներառյալ ԱԱՀ):

Պայմանագրի 3.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Կատարողի միջոցով Վստահորդը հասնում է անհրաժեշտ վերջնական արդյունքի, Վստահորդը Կատարողին վճարում է լրացուցիչ վարձատրության Հաջողության հոնորարի ձևով:

Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը կախվածության մեջ է դրվում վերջնական արդյունքից, որին փորձում է հասնել Վստահորդը Կատարողի միջոցով:

Պայմանագրի 3.4.2 կետի համաձայն՝ Վստահորդին անհրաժեշտ վերջնական արդյունքն է Վստահորդի կողմից դրամական միջոցների և/կամ այլ գույքի փաստացի ստանալը հաշտության համաձայնության կնքման և/կամ հակառակ կողմի հետ ունեցած բոլոր դատական գործերով և վեճերով առանց հաշտության համաձայնության դատական որոշումների կայացման արդյունքում:

Պայմանագրի 3.4.3 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը սահմանվում է 5 տոկոս Կատարողի միջոցով Վստահորդի փաստացի ստացած դրամական միջոցներից և/կամ այլ գույքի շուկայական արժեքից:

Պայմանագրի 4.2 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը վճարվում է մեկ ամսվա ընթացքում Կատարողի միջոցով Վստահորդի կողմից վերջնական արդյունքի հասնելուց և Վստահորդի կողմից դրամական միջոցները և/կամ այլ գույքը ստանալուց հետո **(հատոր 1-ին, գ.թ. 13-15):**

2) Թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2011 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ որոշվել է Վիկտոր Տեր-Հովսեփյանի վերաքննիչ բողոքը բավարարել. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.06.2011 թվականի վճիռը բեկանել և փոփոխել, այն է՝ «Անսուր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը՝ մերժել, Վիկտոր Տեր-Հովսեփյանի հայցը բավարարել՝ «Անսուր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ Վիկտոր Տեր-Հովսեփյանի բռնագանձել 900.000 ԱՄՆ դոլարին՝ բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, և 142.446,58 ԱՄՆ դոլարին՝ բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ՝ որպես տոկոսներ՝ հաշվարկված 01.01.2009 թվականից մինչև 20.04.2010 թվականը, ինչպես նաև բռնագանձել տոկոսներ՝ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով՝ սկսած 20.04.2010 թվականից մինչև փոխառության գումարի բռնագանձման օրը **(հատոր 3-րդ, գ.թ. 19-32, դատական տեղեկատվական համակարգ):**

3) «Կատարողական վարույթը կասեցնելու մասին» 10.03.2016 թվականի որոշման համաձայն՝ ի կատարումն թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով 13.09.2012 թվականին տրված կատարողական թերթի՝ կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ «Անսուր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող անշարժ գույքը չի բավարարում կատարողական թերթի պահանջները

կատարելու համար: Պահանջատիրոջը և պարտապանին առաջարկվել է 60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան: Ոստի 02.12.2012 թվականին հարուցված թիվ 01/02/-5975/12 կատարողական վարույթը 60-օրյա ժամկետով կասեցվել է **(հատոր 1-ին, գ.թ. 74):**

4) «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» 10.05.2016 թվականի որոշման համաձայն՝ 02.12.2012 թվականին հարուցված թիվ 01/02/-5975/12 կատարողական վարույթը կասեցվել է, և առաջարկվել է պահանջատիրոջը և պարտապանին 60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան, սակայն օրենքով սահմանված ժամկետում կողմերը չեն դիմել դատարան՝ սնանկության դիմումով: Ոստի 10.03.2016 թվականին կասեցված թիվ 01/02/-5975/12 կատարողական վարույթը վերսկսվել է **(հատոր 1-ին, գ.թ. 37):**

5) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Գ. Սախյանի 23.03.2017 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման համաձայն՝ ի կատարումն թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով 13.09.2012 թվականին տրված կատարողական թերթի՝ «Անտոր Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող՝ ք. Երևան, Անտառային փողոցի 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեի շինությունը և հողամասը ներկայացվել են հարկադիր էլեկտրոնային աճուրդի **(հատոր 1-ին, գ.թ. 71):**

6) Թիվ ՎԴ/3113/05/17 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 17.04.2017 թվականի որոշմամբ վարույթ է ընդունվել Վիկտոր Տեր-Հովսեփյանի հայցադիմումն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Գ. Սախյանի՝ 23.03.2017 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին **(հատոր 1-ին, գ.թ. 38):**

7) Գործում առկա են Ընկերության փաստաբանների և Վիկտոր Տեր-Հովսեփյանի էլեկտրոնային նամակագրությունները, որոնց համաձայն՝ Ընկերության փաստաբանները Վիկտոր Տեր-Հովսեփյանին դատական ակտի կատարման տարբեր հնարավորություններ են առաջարկել (մասնավորապես՝ սնանկության դիմում ներկայացնելու կամ արտադատական կարգով գույքի իրացման միջոցով), սակայն Վիկտոր Տեր-Հովսեփյանը չի համաձայնվել **(հատոր 1-ին, գ.թ. 101, 104-150):**

4. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Վճարելի դատարանի դատավոր Ս. Միրայելյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պարճատարանական և եզրափակիչ մասերում Վճարելի դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, շարադրում եմ իմ հարուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Վերոգրյալով պայմանավորված՝ անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ այն գործարքներին, որոնց իրավական հետևանքները կախված են որոշակի կոնկրետ իրավաբանական փաստի ապագայում առաջանալուց կամ չառաջանալուց:

Նշվածի համարեքարում հարկ է պարտասխանել հետևյալ իրավական հարցադրմանը.

այն դեպքում, երբ պայմանագրով սահմանված հաջողության հոնորարը փաստաբանին վճարելու վարահորդի պարտականությունը կախվածության մեջ է դրվել դատական ակտով որոշված գումարի բուսագանձումից, որը պարտապանի դրամական միջոցների անբավարարության պարճատով ի կատար չի անվել, սպա այդ գումարի բուսագանձումը պարտավորության կատարման ապահովման միջոցի վրա տարածելու վարահորդի հրաժարումը կարող է արդյոք որակվել պայմանի իրականացմանը վարահորդի անբարեխղճորեն արգելք հանդիսացող հանգամանք և դրա նկատմամբ կիրառվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի 3-րդ կետի իրավակարգավորումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքը համարվում է հետաձգող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների ծագումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հայտնի չէ՝ կիրակականա՞նա՞, թե՛ ոչ:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե պայմանի իրականացմանն անբարելից-ճորեն արգելք է հանդիսացել այն կողմը, ում ձեռնտու չէ պայմանի իրականացումը, ապա պայմանը ճանաչվում է իրականացված:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանի իրականացմանն անբարելից-ճորեն նպաստել է այն կողմը, ում ձեռնտու է պայմանի իրականացումը, ապա պայմանը ճանաչվում է չիրականացված:

Վերլուծելով վերոգրյալ իրավանորմի դրույթները՝ հարկ է արձանագրել, որ հետաձգող պայմանով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքում համարվում է այն գործարքը, որի իրավական հետևանքները կախված են որևէ հանգամանքից՝ կողմերից մեկի, կամ երրորդ անձանց գործողություններից և/կամ այնպիսի իրադարձություններից, որոնց առաջացումն ապագայում անհայտ է: Նշված հատկանիշով էլ նմանատիպ գործարքները տարբերվում են գործարքների մյուս տեսակներից: Այլ կերպ՝ գործարքները համարվում են պայմանով կնքված, երբ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը կողմը կամ կողմերը կախման մեջ են դնում որոշակի իրավաբանական փաստի վրա հասնելու հանգամանքից: Նման գործարքների կնքման պահին կողմերի միջև ըստ էության իրավունքներ և պարտականություններ չեն առաջանում: Գործարքի կողմերի համար համապատասխան իրավունքները և պարտականություններն առաջանում են մեկ այլ իրավաբանական փաստի՝ գործարքով կնքված պայմանի ի հայտ գալու պահից: Ընդ որում, եթե հետաձգված պայմանով սահմանված իրադարձությունը չի առաջանում, ապա այդ հետաձգված պայմանով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները ևս չեն կարող առաջանալ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ իրավական հետևանքների պարտադիրը լինելը բնորոշ չէ այս տեսակի գործարքների համար, որոնք սովորաբար կնքվում են առանց դրանց մեջ այդպիսի պայմանների ներառման: Միաժամանակ, եթե հանգամանքը, որը կարող է առաջ գալ կամ չլինել ապագայում, արտահայտում է գործարքի բուն էությունը և առանց դրա գործարքն ընդհանրապես չէր կարող կնքվել, ապա գործարքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պայմանական չի կարող համարվել:

Անդրադառնալով «պայման» բառի մեկնաբանությանը, ապա օրենսդիրն այդ հասկացության վերաբերյալ մի շարք պահանջներ է ներկայացնում: Մասնավորապես՝

ա. ինչպես արդեն վերը նշվեց «պայման»-ը պետք է վերաբերի ապագա ժամանակին: Եթե այն հանգամանքը, որի հետ կողմերը կապում են իրավական հետևանքների սկիզբը, արդեն տեղի է ունեցել գործարքի կնքման պահին (սույնիսկ, եթե կողմերը դրա մասին տեղեկացված չեն եղել), ապա գործարքը, կախված որոշակի կոնկրետ հանգամանքներից, կարող է ճանաչվել անվավեր կամ այն չի դիտվի պայմանով կնքված գործարք:

բ. Բացի այդ, որպես «պայման» կարող է հանդես գալ միայն այնպիսի հանգամանքը, որի վերաբերյալ հայտնի չէ այն տեղի կունենա, թե ոչ: Եվ հակառակը, գործարքը չի կարող կնքված համարվել պայմանով, որի իրավական հետևանքները կապված են մի իրադարձության հետ, որն անխուսափելիորեն պետք է տեղի ունենա: Նշվածը պայմանավորված է նրանով, որ տվյալ դեպքում կա ոչ թե պայման, այլ որոշակի ժամկետի կամ իրադարձությունների վրա հասնելու վերաբերյալ կողմերի համաձայնություն:

գ. «Պայման»-ը բնութագրվում է նաև նրանով, որ դրա առաջացումը սկզբունքորեն հնարավոր է: Եթե հետագայում կպարզվի, որ համապատասխան հանգամանքն ընդհանրապես չէր կարող առաջանալ, ապա կախված կոնկրետ իրադարձություններից, այս դեպքում ևս գործարքը կհամարվի անվավեր:

դ. «Պայման»-ը չպետք է հակասի օրենքին:

Պայման է համարվում գործարքում նշված այն հանգամանքը, որի վրա հասնելը նախապես կանխորոշված չէ, և որից կախված է գործարքում համաձայնեցված քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առաջացումը, փոփոխումը կամ

դադարումը: Տվյալ դեպքում, պայմանն այն իրողությունն է, որը ծագում է գործարքի կնքումից հետո: Այդ իսկ պատճառով այն գործարքը, որում ամրագրված պայմանը տեղի է ունեցել նախքան գործարքի կնքումը կամ կնքման պահին, չի կարող հանդես գալ որպես պայմանով գործարք:

Գործարքում որպես պայման նշված հանգամանքն այնպիսի իրավաբանական փաստն է, որը պայմանավորում է որոշակի իրավական հետևանքների առաջացումը: Իրավական հետևանքների առաջացման այս պայմանականությունը ենթադրում է կողմերի միջև գործարքի կնքմամբ պայմանավորված կապի և պայմանի վրա հասնելու դեպքում իրավական հետևանքների անխուսափելի առաջացում: Այսպիսով, եթե գործարքի վավերության բոլոր պայմանները պահպանվել են (օրինակ՝ պայմանագրի դեպքում առկա են փոխադարձ կամարտահայտությունը կամ պայմանագիրը վավերացված է նոտարական կարգով, եթե դա պահանջում է օրենքը և այլն), ապա կողմերի միջև իրավական կապն արդեն որակվում է ծագած և իր հետագա իրավական հետևանքը պայմանավորում է պայմանների վրա հասնելու սպասման վիճակով:

Նման մոտեցման շրջանակներում հետաձգող պայմանի վրա հասնելը հանդիսանում է ոչ թե պայմանով կնքված գործարքի փաստացի կազմի, այլ այն իրավունքների և պարտականությունների փաստացի կազմի կարևոր տարր, որոնք դրվել են հետաձգող պայմանի տակ: Ցանկացած դեպքում գործարքի կատարման իրավական գոյությունը պետք է որոշվի ոչ թե նշված հետաձգող պայմանի առաջացման, այլ գործարքի կնքման պահին: Նույնը վերաբերում է նաև պայմանագրի նկատմամբ կիրառելի իմպերատիվ և դիսպոզիտիվ նորմերին (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ և 438-րդ հոդվածներ), կողմերի գործունակությանը և այլն:

Քանի որ պայմանով կնքված պայմանագիրը, անկախ այդ պայմանի առաջացումից, հանգեցնում է մի շարք իրավական հետևանքների և հանդիսանում է գործարք հենց կնքման պահից, ապա այդ գործարքը կարելի է վիճարկել անվավերության հիմքերով նույնիսկ մինչև պայմանի առաջացումը, այն կարող է լուծվել կամ փոփոխվել, իսկ պայմանի տակ դրված իրավունքներն ու պարտականությունները կարող են դադարել նորացմամբ (նովացիայի միջոցով) կամ պարտավորության դադարման այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածում ամրագրված իրավանքումը թույլ է տալիս եզրակացնել, որ պայմանի տակ դրվում է ոչ թե գործարքի կնքված լինելը՝ իբրև իրավաբանական փաստ, այլ դրա իրավական հետևանքը (իրավունքները և պարտականությունները), և պայմանը չի ներառվում գործարքի փաստական կազմի մեջ: Դրանից անխուսափելիորեն հետևում է, որ պայմանի տակ կարող են դրվել ինչպես ամբողջական գործարքը, այնպես էլ դրա մաս կազմող առանձին դրույթներ: Առաջին դեպքում ստացվում է լրիվ պայմանական գործարք, երկրորդում՝ մասամբ պայմանական:

Հարկ է նշել նաև, որ պայմանով գործարքն էապես տարբերվում է այն գործարքներից, որոնցով սահմանված իրավական հետևանքը կախման մեջ է դրվում կոնկրետ որոշակի ժամանակահատվածի կամ իրադարձության վրա հասնելու փաստական հանգամանքից: Տվյալ դեպքում, դրանց միջև հիմնարար տարբերությունն այն է, որ պայմանի դեպքում գործարքի համապատասխան իրավական հետևանքը կախված է այնպիսի հանգամանքից, որի առաջացումը երաշխավորված չէ և պարզ չէ կիրականանա, թե ոչ: Մինչդեռ, ժամկետի կամ իրադարձության անխուսափելի վրա հասնելու հանգամանքը, նման դրույթ պարունակող գործարքին, բացառում է ներառել պայմանով գործարքի թվին: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ պայմանով գործարքի պայմանի հավանական վրա հասնելու փաստը կարող է սահմանափակվել որոշակի ամրագրված ժամանակահատվածի մեջ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ պայմանները կարող են լինել հետաձգող (suspensive) (պայմանի վրա հասնելու հանգամանքով է պայմանավորված գործարքով սահմանաված իրավունքների և պարտականությունների ծագումը) և վերացնող (resolutive) (պայմանի վրա հասնելու հանգամանքով է պայմանավորված գործարքով սահմանված իրավունքների և պարտականությունների դադարումը): Պայմանն իր բովանդակությամբ կարող է լինել դրական հետևանք առաջ

բերող, երբ գործարքով սահմանված իրավական հետևանքի վրա հասնելը պայմանավորվում է գործարքով նախատեսված իրադարձության կամ գործողության վրա հասնելու հանգամանքով, կամ բացասական, երբ գործարքով սահմանված իրավական հետևանքի վրա հասնելը պայմանավորվում է գործարքով նախատեսված իրադարձության կամ գործողության վրա չհասնելու հանգամանքով: Պայմանը կարող է լինել պարզ (մեկ հանգամանք), բարդ (մի քանի հանգամանքների հաջորդական առաջացում) կամ այլընտրանքային (մի քանի հանգամանքներից մեկի առաջացում): Պայմանը կարող է լինել պատահական, երբ դրա վրա հասնելը կախված է արտաքին հանգամանքներից, ներառյալ՝ երրորդ անձանց գործողություններից, պետական մարմինների որոշումներից, բնական երևույթներից և այլն, պոտեստատիվ (potestatif), երբ դրա վրա հասնելը պայմանավորված է գործարքի կողմերից մեկի կամքից և վարքից, կամ խառը, երբ պայմանի վրա հասնելը պայմանավորված է ինչպես գործարքի կողմերից մեկի վարքից, նույնպես և արտաքին հանգամանքներից կամ կամ երրորդ անձանց գործողություններից:

Պոտեստատիվ պայմաններն իրենց հերթին բաժանվում են՝

1. ուղղակի պոտեստատիվ, երբ պայմանի վրա հասնելը կախվածության մեջ է դրվում գործարքով նախատեսված գործողության կատարմամբ, և զուտ պոտեստատիվ, երբ պայմանի վրա հասնելը կախվածության մեջ է դրվում կողմերից մեկի կամահայտնության ներկայացմամբ: Ուղղակի պոտեստատիվ պայմանը գործարքի կողմերից մեկի այս կամ այն գործողությունն (անգործությունը) է, որը, որպես պայման նշված լինելու հանգամանքով, հանդիսանում է պայմանով գործարքի իրավական հետևանքի առաջացման փաստական հիմք (օրինակ՝ կոնտրագենտի տեղափոխումն այլ քաղաք, վերակազմավորման անցկացումը, բանկի պարտքի մարումը, կառուցված օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը, ազգանվան փոփոխությունը, բաժնետոմսերի լրացուցիչ ընդունումը): Զուտ պոտեստատիվ պայմանը գործարքի կողմի բացահայտ կամարտահայտությունն է, որի ներկայացմամբ անմիջականորեն վրա է հասնում գործարքով սահմանված իրավունքների և պարտականությունների ծագումը կամ փոփոխումը կամ դադարումը: Տվյալ դեպքում, որոշիչ նշանակություն է ձեռք բերում գործարքի կողմերից մեկի զուտ կամարտահայտությունը, որն ուղղված է հենց այդ պայմանի իրավական հետևանքների առաջացմանը (օրինակ՝ պարտատերն իր պահանջն է ներկայացնում ցպահանջ պայմանագրով): Հարկ է նշել, որ զուտ պոտեստատիվ պայմանով նախատեսված իրավական հետևանքների առաջացումը կարող է վրա հասնել բացառապես այն դեպքում, երբ այն ներկայացնում է պարտատեր կողմը:

Պայմանը կարող է ներառվել ինչպես գործարքի մեջ պայմանագրի կողմերի կամքով, այնպես էլ նախատեսվել պոզիտիվ իրավունքով՝ որպես համապատասխան ինստիտուտի իրավական ռեժիմի տարր (օրինակ՝ պայմանագրի խախտումը՝ որպես տուժանքի վճարման պարտավորության առաջացման պայման, պատահարի առաջացումը՝ որպես սպահովագրական հատուցում վճարելու պայման (conditio iuris) և այլն): Պայման կարող է լինել ինչպես գործարքի կողմի կամ երրորդ անձանց իրավաչափ, այնպես էլ ոչ իրավաչափ վարքագիծը: Միակ սահմանափակումը նման դեպքում այն է, որ պայմանը չի կարող իրավախախտողի համար բարենպաստ հետևանք նախատեսել:

Պայման կարող է լինել միայն այն հանգամանքը, որի առաջացումն իրապես հնարավոր է որոշակի հավանական ողջամտության սահմաններում: Եթե ակնհայտ է, որ որպես պայման ընտրված հանգամանքի վրա հասնելը բացարձակապես անհնար է՝ հաշվի առնելով տեխնիկական և այլ սոցիալական, քաղաքական, տնտեսական պայմանները, և այդ անհնարինության մասին հայտնի էր կամ պետք է հայտնի լիներ գործարքի բոլոր կողմերին, ապա նման պայմանը չի կարող իրավաչափ որակվել, առաջ բերել իրավական հետևանք, ուստի գործարքը չի կարող որակվել պայմանով գործարք: Նման գործարքի նկատմամբ ամբողջությամբ կիրառելի կլինեն գործարքի վավերության ընդհանուր պայմաններին վերաբերող իրավական նորմերը:

Գործնական կարևոր նշանակություն ունի նաև պայմանի վրա հասնելու փաստի արձանագրումը: Մի շարք դեպքերում այդ հանգամանքն այնպիսի բնույթի է, որ դրա վրա հասնելու մասին գործարքի կողմերն անմիջապես չեն կարող տեղեկանալ: Ընդհանուր

կանոնի համաձայն՝ պայմանը համարվում է վրա հասած, եթե առկա հանգամանքները համապատասխանում են պայմանագրում սահմանված պայմանների նկարագրին:

Գործարքի մեջ պայմանների ներառումն առաջացնում է մշտական իրավական կախվածության վտանգ, այսինքն՝ մի իրավիճակ, երբ պայմանը կարող է վրա հասնել գործարքը կնքելուց շատ տարիներ անց: Նման կախվածությունը բացատրելու համար օրենսդիրը պայմանադիր կողմի համար նախատեսել է պայմանագրի միակողմանի լուծման իրավական հնարավորություն, ինչպես օրինակ՝ անհատույց օգտագործման, գործակալության պայմանագրերի դադարման և այլն: Բոլոր այդ նորմերում օրենսդիրն արտացոլում է այն դիրքորոշումը, որ պարտավորական իրավահարաբերություններում չեն կարող առաջ գալ հավերժական իրավական կապեր և յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է իրավահարաբերության գործողության համար նախատեսել գոյության որոշակի ողջամիտ ժամանակահատվածներ: Այդ առումով հատկապես հատուցելի պայմանագրերի համար փոխադարձ պարտավորության ծավալն այս կամ այն պայմանի հետ կապելը չպետք է առաջ բերի հանդիպական կատարման անորոշության այնպիսի սահման, որը «հավերժ» իրավական կապի մեջ կպահի հակընդդեմ պահանջի բավարարում ակընկալողին: Նման պայմանը կարող է կախված լինել՝

ա) պարտատիրոջից լրիվ կամ մասնակի կամքից,

բ) բացառապես պարտապանի վարքագծից (օրինակ՝ վերակազմակերպման իրականացում, ֆինանսական վիճակի բարելավում և այլն) կամ երրորդ անձանց հետ պարտապանի փոխգործակցությունից,

գ) արտաքին հանգամանքներից (օրինակ՝ բանկի կողմից վարկավորում իրականացնելուց, գույքը հրապարակային աճուրդով իրացնելուց և այլն):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 367-րդ հոդվածը հադիպական կատարումը, որպես կանոն, կախման մեջ է դնում սկզբնական պարտավորության կատարումից: Հանդիպական կատարման պայմանը, տվյալ դեպքում, հանդիսանում է առաջին պարտավորության կատարումից առաջացած որոշակի արդյունքը և դրա ձեռք բերումն արողությանը կախման մեջ է գտնվում կատարողից: Նման պայմաններում, եթե պայմանն ամբողջովին կամ մասամբ կախված է պարտապանի կամքից (վարքագծից) կամ արտաքին հանգամանքներից, ապա ստեղծվում է տեսականորեն վերջ չունեցող անորոշություն, այսինքն՝ մշտական կախվածության և անորոշության մեջ է հայտնվում պարտատերը, ով արդեն կատարել է իր պարտավորությունը և ստիպված է ենթարկվել հանդիպական կատարողի վարքագիծը պայմանավորող կամքի դրսևորմանը:

Եթե կողմերը հստակ արտահայտել են իրենց կամքը կնքել երկկողմանի պայմանագիր՝ իրականացնելով որոշակի հանդիպական կատարումներ, ապա նրանք նպատակ են հետապնդել ինչ-որ պահի իրականացնել այդ կատարումը: Իրավունքի համար անընդունելի է այն իրավճակը, երբ երկկողմանի պայմանագրի (օրինակ՝ ծառայությունների մատուցում) կողմերը ցանկացել են ստեղծել մշտական պայմանագրային կապ և մշտական անորոշություն, ինչի հետևանքով կատարված աշխատանքի համար հնարավոր է երբևէ տեղի չունենա վճարում: Ուստի, եթե պայմանագրի կողմերն ուղղակիորեն այլ բան չեն նախատեսել, ապա ողջամիտ ժամկետից հետո, այդ անորոշ վիճակը պետք է դադարի և կողմը պետք է անցնի հանդիպական պարտավորության կատարմանը, ինչը կողմերը, որպես իրենց կամքի դրսևորում, ներկայացրել են երկկողմ պայմանագիր կնքելու կամահայտնությամբ: Նման իրավիճակներում, երբ հանդիպական պարտավորության կատարումն ուղղակիորեն նախատեսում է պարտապանի՝ պայմանի առաջացմանը նպաստելու պարտավորություն, կամ պայմանագիրը և բարելիզմության սկզբունքը ենթադրում են այդպիսի պարտականություն, և եթե պարտապանը խախտում է բարելիզմության սկզբունքը, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի 3-րդ կետն իրավական հնարավորություն է ընձեռում կողմին դուրս գալու իրավական կախվածության անորոշ վիճակից և իր իրավունքի պաշտպանության համար օգտվելու իրավական ֆիկցիայի ինստիտուտից (այսինքն՝ պայմանագրով սահմանված պայմանը համարվում է վրա հասած առանց դրա փաստացի գոյության): Տվյալ դեպքում, իրավական ֆիկցիայի ինստիտուտից օգտվելը հատկապես ակնհայտ է այն իրավիճակում, երբ պարտապանը ոչ միայն

չի նպաստում պայմանի առաջացմանը, այլ անբարեխղճորեն խոչընդոտում է դրա վրա հասնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով սահմանված ֆիկցիաները հանդես են գալիս որպես բարեխղճության սկզբունքի պաշտպանության և անբարեխղճ վարքագծից օգուտ քաղելու իրավական արգելքի մասնավոր դրսևորումներ: Տվյալ դեպքում, օրենսդիրը պաշտպանության տակ է առնում գործարքի կողմերից մեկին, որի իրավաչափ ակնկալիքը՝ գործարքով նախատեսված պայմանի վրա հասնելու և իրավական ցանկալի հետևանքներ առաջանալու վերաբերյալ, մյուս կողմի անբարեխղճ վարքագծի հետևանքով տեղի չի ունենում: Մասնավորապես, երբ այն դրսևորվում է պայմանի վրա հասնելու իրադարձությունների բնականոն ընթացքին խոչընդոտելու կամ դրա վրա հասնելուն խաթարող այլ միջամտությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները կիրառելի են այնպիսի պայմանների վերաբերյալ, որոնց վրա հասնելն ամբողջովին կամ մասամբ զանվում են կողմերից մեկի վերահսկողության տակ: Անբարեխղճության գործոնը բավարար չէ ֆիկցիայի կանոնի կիրառման համար: Այն գործողության մեջ կարող է դրվել միայն այն դեպքում, երբ անբարեխղճ վարքագիծ դրսևորողին ձեռնառու է գործարքով սահմանված պայմանի առաջ չգալը: Քանի որ ֆիկցիայի ինստիտուտը հանդիսանում է իրավունքի պաշտպանության ինքնուրույն մեխանիզմ, ապա դրա կիրառումը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ այն համապատասխանում է տուժած կողմի շահերին:

Ինչպես արդեն նշվել է, հետաձգող պայմանով գործարքի կատարման ստեղծում է հատուկ իրավահարաբերություն մինչև պայմանի առաջանալն ընկած ժամանակահատվածի համար, որի շրջանակներում, ի թիվս այլևի, առաջանում է կողմերի պարտավորություն՝ ձեռնպահ մնալ անբարեխղճ խոչընդոտումից կամ պայմանի առաջացմանն այլ կերպ արգելք հանդիսանալուց: Ուստի, բոլոր այն դեպքերում, երբ առկա է պայմանադիր կողմի վարքագծի՝

1. անբարեխղճություն,

2. անբարեխղճության և պայմանի վրա հասնելուն արգելք հանդիսանալու ուղղակի կապ,

3. պայմանի վրա հասնելը ձեռնառու չէ անբարեխղճ կողմի համար,

ապա օրենսդիրը տուժող կողմին թույլ է տալիս օգտվելու ֆիկցիայի իրավական պաշտպանության միջոցից և դատական կարգով պահանջելու հաստատված համարել հետաձգվող պայմանի վրա հասնելը, ինչպես նաև ձեռք բերել պայմանագրով նախատեսված ակնկալիքը:

Հարկ է նշել, որ անբարեխղճությունը չի նույնացվում անիրավաչափ գործողության հետ և կարող է առերևույթ չհակասել օրենքին: Դրանով հանդերձ՝ անբարեխղճությունն անձի այնպիսի վարքագիծն է, որում ակնհայտորեն պարզ է դառնում, որ անձը բավարար հոգածությամբ և շրջահայացությամբ չի օգտվել իր՝ օրենքով նախատեսված իրավունքներից և ազատությունից: Միաժամանակ, անբարեխղճությունն իրավական հետևանք է առաջ բերում բոլոր այն դեպքերում, երբ դրանով խաթարվում կամ վնաս է հասցվում այլոց իրավունքներին և օրինական շահերին:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի մեկնաբանության արդյունքում կարելի է կատարել որոշակի եզրահանգումներ, այն է՝

1. որպես պայման կարող են հանդես գալ ոչ միայն իրադարձությունները, այլ նաև կամային գործողությունները,

2. օրենսդիրը չի արգելում բարեխղճորեն նպաստել գործարքով նախատեսված պայմանի առաջացմանը, նույնիսկ, եթե նշվածը նպաստավոր է այն կողմի համար, ով կատարել է այդպիսի միջամտություն,

3. «անբարեխղճ գործողություն» ասելով ենթադրվում են վարքագծի այնպիսի դրսևորում, որում սեփական իրավունքները չեն օգտագործվում բարեխղճորեն, այսինքն՝ բավարար հոգածությամբ և շրջահայացությամբ, և այն իրավական հետևանք է առաջ բերում, երբ անբարեխղճությամբ վնաս է հասցվում այլոց իրավունքներին ու օրինական շահերին:

Նկատի ունենալով, որ սույն գործով կողմերի միջև ծագած իրավահարաբերությունը պայմանավորված է եղել հայցվոր Ընկերության կողմից Վիկտոր Տեր-Հովսեփյանի օգտին և նրա միջոցների հաշվին որոշակի իրավաբանական գործողություններ իրականացնելու հետ, հարկ է արձանագրել է նաև հետևյալը.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի և վստահորդի միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս (...): Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 782-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանձնարարության պայմանագրով մի կողմը (հանձնակատարը) պարտավորվում է մյուս կողմի (հանձնարարողի) անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ (...):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հանձնարարության պայմանագիրը կնքվում է այն ժամկետի նշումով, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից կամ առանց դրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 783-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանձնարարողը պարտավոր է հանձնակատարին վարձատրել, եթե դա նախատեսված է օրենքով, այլ իրավական ակտերով կամ հանձնարարության պայմանագրով:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հանձնարարության պայմանագրի ուժով հանձնակատարը հանձնարարողի անունից և նրա հաշվին պարտավոր է կատարել որոշակի իրավաբանական գործողություններ, պայմանագրում կարող է նշվել նաև այն ժամկետը, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից: Միաժամանակ, ինչպես ցանկացած պայմանագիր, այնպես էլ հանձնարարության պայմանագիր կնքելիս կողմերը՝ **հանձնակատարը և հանձնարարողը, չիղիսելով օրենսգրքի իմպերատիվ դրույթներով ամրագրված պայմանները, ազատ են որոշելու պայմանագրի պայմաններն իրենց հայեցողությամբ, այդ թվում նաև՝ հանձնարարողի կողմից հանձնակատարին վարձատրելու չափը և վճարման ժամկետը** (յրենս «Բրենդ Լիդեր» ՀՀ ՍՊԸ-ն ընդդեմ «Օլիմպուորդ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԻ/2043/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):

Վերոգրյալ դիրքորոշման լույսի ներքո՝ հարկ են համարում նշել նաև, որ իրավաբանական գործողություններ իրականացնելու վերաբերյալ պայմանագիր կնքելիս կողմերը, օգտվելով պայմանագրի ազատության սկզբունքից, իրենք են որոշում պայմանագրի էական պայմանները: Այդ համատեքստում կողմերն ազատ են իրենց ցանկությամբ և հայեցողությամբ սահմանել նաև փաստաբանի վարձատրության հետ կապված հարցերը, այդ թվում նաև՝ վճարման կարգը: Միաժամանակ, կողմերն իրավունք ունեն փաստաբանի վարձատրության վճարումը կախվածության մեջ դնել որոշակի կոնկրետ իրավաբանական փաստի առաջ գալուց: Նման պայմաններում, կիրառման են ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանով կնքված գործարքի վերաբերյալ կարգավորումները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Վիկտոր Տեր-Հովսեփյանի միջև 27.09.2010 թվականին կնքված Պայմանագրի 3.1 կետով սահմանվել է, որ Վստահորդը՝ անկախ մատուցված ծառայությունների արդյունքից, մատուցված ծառայությունների և կատարված ծախսերի համար վճարում է հիմնական վարձատրություն ժամավճարի ձևով՝ մեկ ժամը 30.000 ՀՀ դրամի չափով (ներառյալ ԱԱՀ): Ըստ Պայմանագրի 3.4 կետի՝ այն դեպքում, երբ Կատարողի միջոցով Վստահորդը հասնում է անհրաժեշտ **վերջնական արդյունքի**, Վստահորդը Կատարողին վճարում է լրացուցիչ վարձատրություն Հաջողության հոնորարի ձևով: Պայմանագրի 3.4.1 կետով սահմանվել է, որ Հաջողության հոնորարը **կախվածության մեջ է դրվում վերջնական արդյունքից**, որին փորձում է հասնել Վստահորդը Կատարողի միջոցով: Պայմանագրի 3.4.2 կետով ամրագրվել է,

որ Վստահորդին անհրաժեշտ Վերջնական արդյունքն է Վստահորդի կողմից դրամական միջոցների և/կամ այլ գույքի **փաստացի ստանալը** հաշտության համաձայնության կնքման և/կամ հակառակ կողմի հետ ունեցած բոլոր դատական գործերով և վեճերով առանց հաշտության համաձայնության դատական որոշումների կայացման արդյունքում: Պայմանագրի 3.4.3 կետի համաձայն՝ Հաջողության հոնորարը սահմանվում է 5 տոկոս՝ Կատարողի միջոցով Վստահորդի **փաստացի ստացած** դրամական միջոցներից **և/կամ այլ գույքի շուկայական արժեքից**: Ըստ Պայմանագրի 4.2 կետի՝ Հաջողության հոնորարը վճարվում է մեկ ամսվա ընթացքում Կատարողի միջոցով Վստահորդի կողմից Վերջնական արդյունքի հասնելուց և Վստահորդի կողմից **դրամական միջոցները և/կամ այլ գույքը ստանալուց հետո**:

Թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ Վիկտոր Տեր-Հովսեփյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.06.2011 թվականի վճիռը և փոփոխվել, այն է՝ «Անսուր Ինվեստ» ՍՊԸ-ի հայցը մերժվել է, իսկ Վիկտոր Տեր-Հովսեփյանի հայցը՝ բավարարվել՝ «Անսուր Ինվեստ» ՍՊԸ-ից հոգուտ Վիկտոր Տեր-Հովսեփյանի բռնագանձվել է 900.000 ԱՄՆ դոլարին՝ բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, և 142.446,58 ԱՄՆ դոլարին՝ բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ՝ որպես տոկոսներ՝ հաշվարկված 01.01.2009 թվականից մինչև 20.04.2010 թվականը, ինչպես նաև բռնագանձվել են տոկոսներ՝ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով՝ սկսած 20.04.2010 թվականից մինչև փոխառության գումարի բռնագանձման օրը:

Թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով կայացված և օրինական ուժ ստացած դատական ակտի արդյունքում 13.09.2012 թվականին տրված թիվ ԵԿԴ/2705/02/09 կատարողական թերթի պահանջները կատարելու վերաբերյալ «Կատարողական վարույթ հարուցելու մասին» **02.11.2012 թվականի որոշման** համաձայն հարուցվել է թիվ 01/02-5975/12 կատարողական վարույթը:

Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Արման Հարությունյանի «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» 03.11.2012 թվականի թիվ Ռ00141-77679/12 որոշմամբ արգելանք է դրվել պարտապան «Անսուր Ինվեստ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա:

Գործի նյութերով հիմնավորվել է նաև, որ ի կատարումն թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով 13.09.2012 թվականին տրված կատարողական թերթի՝ կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ «Անսուր Ինվեստ» ՍՊԸ-ին պատկանող անշարժ գույքը չի բավարարում կատարողական թերթի պահանջները կատարելու համար: Հարկադիր կատարողի կողմից պահանջատիրոջը և պարտապանին առաջարկվել է 60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան: Ուստի, «Կատարողական վարույթը կասեցնելու մասին» **10.03.2016 թվականի որոշմամբ 02.12.2012 թվականին հարուցված թիվ 01/02-5975/12 կատարողական վարույթը 60-օրյա ժամկետով կասեցվել է**:

Հարկադիր կատարողի վերը նշված որոշման և սնանկության դիմելու առաջարկի մասին Ընկերության փաստաբան Սայադ Բադալյանի կողմից **17.03.2016 թվականի** էլեկտրոնային նամակով տեղեկացվել է **Վիկտոր Տեր-Հովսեփյանին**: Միաժամանակ վերջինիս առաջարկվել է առաջիկայում Հայաստան գալու դեպքում հանդիպել և քննարկել:

Վիկտոր Տեր-Հովսեփյանը **11.04.2016 թվականին** Ընկերության փաստաբան Սայադ Բադալյանին հացեագրված էլեկտրոնային նամակով հայտնել է, որ **դեմ է սնանկության հայցին**:

Այնուհետ, հարկադիր կատարողի «Կատարողական վարույթը վերսկսելու մասին» **10.05.2016 թվականի որոշմամբ** 10.03.2016 թվականին կասեցված թիվ 01/02-5975/12 կատարողական վարույթը վերսկսվել է՝ նկատի ունենալով, որ **օրենքով սահմանված ժամկետում կողմերը չեն դիմել դատարան սնանկության դիմումով**:

Հետագայում, Ընկերության փաստաբան Վահե Մովսիսյանի կողմից 20.01.2017 թվականին, 09.02.2017 թվականին, 16.02.2017 թվականին, 21.02.2017 թվականին, 23.02.2017 թվականին Վիկտոր Տեր-Հովսեփյանին հասցեագրված էլեկտրոնային նամակներով վերջինիս տեղեկացվել է, որ աշխատում են սակարկության փաստաթղթերի վրա, ուղարկվել է հովանդական աճուրդի կանոնակարգի նախագիծը, այնուհետ նաև՝ գրավի առարկան հրապարակային աճուրդով վաճառելու հիմնական փուլերը, բռնագանձման ծանուցագրի նախագծերը:

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Գ. Սախոյանի 23.03.2017 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ, ի կատարումն թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով 13.09.2012 թվականին տրված կատարողական թերթի՝ «Անսուր Ինվեստ» ՍՊԸ-ին պատկանող՝ ք. Երևան, Անտառային փողոցի 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեի շինությունը և հողամասը ներկայացվել են հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Գույքի գնահատման գինը կազմել է 1.046.000.000 ՀՀ դրամ, մեկնարկային գինը՝ 784.500.000 ՀՀ դրամ:

Վիկտոր Տեր-Հովսեփյանը, չհամաձայնելով ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Գ. Սախոյանի 23.03.2017 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Ընկերության փաստաբան Սայադ Բաղայանի կողմից 28.09.2017 թվականին Վիկտոր Տեր-Հովսեփյանին հասցեագրված էլեկտրոնային նամակով հայտնվել է, որ իրենց հաշվարկվով 28.09.2017 թվականի դրությամբ վերջինիս պահանջը կազմում է 1.843.446 ԱՄՆ դոլար, որի 5 տոկոսը կազմում է 92.172 ԱՄՆ դոլար կամ 44.242.704 ՀՀ դրամ:

Ընկերության փաստաբան Արտաշես Կակոյանի կողմից 07.10.2017 թվականին Վիկտոր Տեր-Հովսեփյանին հասցեագրված էլեկտրոնային նամակի համաձայն՝ վերջինս առաջարկել է Ընկերության փաստաբաններին որպես հաջողության հոնորար ստանալ 45.000 ԱՄՆ դոլար: Նշված փաստն ընդունվել է նաև Վիկտոր Տեր-Հովսեփյանի կողմից դատարան մուտքագրված փաստաթղթերով:

Դատարանը, 04.06.2019 թվականի վճռով եզրահանգելով, որ Ընկերությունը չի հիմնավորել պատասխանողի անբարեխիղճ գործողությունների, անբարեխիղճ գործողությունների և Պայմանագրի պայմանն իրագործելու անհնարինության պատճառահետևանքային կապի, ինչպես նաև պայմանի կատարումը պատասխանողին ձեռնտու չլինելու հանգամանքների միաժամանակյա առկայությունը, գտել է, որ հայրը անհիմն է և ենթակա է մերժման: Միաժամանակ, Դատարանը, անդրադառնալով Ընկերության կողմից վկայակոչված թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշմանը, գտել է, որ այն տվյալ գործով կիրառելի չէ, քանի որ այդ որոշման հիմքում ընկած քաղաքացիական գործի փաստական հանգամանքներն էականորեն տարբերվում են սույն գործի փաստական հանգամանքներից:

Վերաքննիչ դատարանը մասնակիորեն բավարարել է Ընկերության բողոքը՝ արձանագրելով, որ Դատարանն անհիմն կերպով շեղվել է թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշմամբ արտահայտված դիրքորոշումից: Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի են ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով փաստաբանի և վստահորդի միջև կնքված հանձնարարության պայմանագրի պայմանների մեկնաբանման վերաբերյալ արտահայտած մեկնաբանությունները: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Վիկտոր

Տեր-Հովսեփյանն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա ձեռք է բերել սեփականության իրավունք, քանի որ թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով վեճը լուծվել է Վ.Խկտոր Տեր-Հովսեփյանի օգտին, դրամական պահանջի իրավունքը հաստատվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.09.2011 թվականի որոշմամբ, որի հիման վրա տրվել են կատարողական թերթեր, որոնք ներկայացվել են հարկադիր կատարման: Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Վ.Խկտոր Տեր-Հովսեփյանի օգտին օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված պահանջի իրավունքի առկայության, ինչպես նաև պահանջի իրավունքի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրված լինելու պայմաններում արդեն իսկ վրա է հասել պայմանագրով սահմանված հաջողության հոնորար վճարելու համար անհրաժեշտ պայմանը:

Վերը նշված իրավական վերլուծությունները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ հարկ է արձանագրել հետևյալը.

Սույն քաղաքացիական գործով հայցվորի և պատասխանողի միջև ըստ էության կնքվել է պոտենտատիվ պայմանով պայմանագրի խառը տեսակը, երբ պայմանի վրա հասնելը պայմանավորված է եղել ոչ միայն արտաքին գործոնից՝ երրորդ անձից վճարում կամ համարժեք գույք ստանալու փաստական հանգամանքից, այլև պատասխանողի վարքագծից: Այսինքն՝ պատասխանող կողմի կամքն անհրաժեշտ է եղել տվյալ իրավահարաբերությունում իր նկատմամբ պարտապան հանդիսացած երրորդ անձից դատական ակտով սահմանված գումարը բռնագանձելու համար: Այդ կամքը կարող էր դրսևորվել բացառապես օրենքով նախատեսված այն բոլոր միջոցներով, որոնք իրավական հնարավորություն կարող էին ստեղծել գումարի բռնագանձման համար: Այդ միջոցները պայմանականորեն կարող են բաժանվել երկու մասի.

1. սույն գործով պատասխանողի՝ պարտապանի կողմից դատական ակտով սահմանված գումարը կամավորությամբ վճարելու եղանակով,

2. հարկադիր կարգով:

Ընդ որում, նկատի ունենալով, որ պարտապանի կողմից դրամի վճարման պարտավորությունն ապահովված է եղել անշարժ գույքի գրավով, և հիփոթեքի պայմանագրով նախատեսված է եղել գրավի առարկայի արտադատական կարգով իրացման պայմանը, ապա հարկադիր կարգով գումարի բռնագանձումը կարող էր տեղի ունենալ՝

1. գրավի առարկան արտադատական կարգով իրացնելու եղանակով,

2. պատասխանողին սնանկ ճանաչելու պահանջ ներկայացնելով ու գրավի առարկայի վրա մորատորիում տարածելու, այն հրապարակային աճուրդի միջոցով իրացնելու եղանակով,

3. հարկադիր կատարման ծառայության միջոցով:

Օրենսդիրն այլ իրավական մեխանիզմ քննարկվող փաստական հանգամանքների շրջանակում չի նախատեսել:

Նման պայմաններում, սույն քաղաքացիական գործով հայցվորի կողմից ֆիկցիայի ինստիտուտից օգտվելու իրավական պաշտպանության իրավաչափությունը որոշելու համար, անհրաժեշտ է բացահայտել՝ պատասխանողն իրեն ընձեռնած վերը թվարկված եղանակներց օգտվել է, թե ոչ, կարող էր արդյոք օգտվել, եթե չի օգտվել, ապա արդյոք նշվածը պայմանավորված չի եղել իր համար նպաստավոր իրավիճակ առաջ բերելու դիտավորությամբ:

Այդ առումով վեճին իրավաչափ լուծում տալու նպատակով անհրաժեշտ է պարզել, թե.

1. երբ կարող էր գործով վրա հասնել Պայմանագարով նախատեսված «պայման»-ը,

2. Վ.Խկտոր Տեր-Հովսեփյանն իր գործողություններում/անգործությունում արդյոք պահպանել է բարեխղճության սկզբունքը,

3. Պայմանագրի 3.4, 3.4.1. և 3.4.2 կետերով սահմանված պայմանը՝ վերջնական արդյունքի հասնելը, չկատարելը պայմանավորված է արդյոք Վ.Խկտոր Տեր-Հովսեփյանի անբարեխիղճ գործողություններով,

4. Պայմանագրի 3.4, 3.4.1. և 3.4.2 կետերով սահմանված պայմանի կատարումն արդյոք ձեռնադրել է Վ.Խկտոր Տեր-Հովսեփյանի համար:

Քննարկվող պարագայում, գործի նյութերով հիմնավորվել է, որ հայցվոր Ընկերությունը Պայմանագրի հիման վրա ստանձնել է ներկայացնել Վիկտոր Տեր-Հովսեփյանի, ինչպես նաև Լյուբով Փիլոյանի շահերը, իրականացնել նրանց պաշտպանությունը ՀՀ դատական ատյաններում՝ Պայմանագրով որոշված ծավալով և պայմաններով:

Պայմանագրի 3.4 կետով սահմանվել է Վիկտոր Տեր-Հովսեփյանի կողմից Ընկերությանը Հաջողության հոնորար վճարելու պարտավորությունն այն դեպքում, երբ վերջինս կհասնի անհրաժեշտ **վերջնական արդյունքի**: Այսինքն, սույն գործով կողմերի միջև, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի դրույթների համաձայն, կնքվել է հետաձգող պայմանով գործարք, և Ընկերության փաստաբաններին հաջողության հոնորար վճարելու Վիկտոր Տեր-Հովսեփյանի պարտականությունը կախվածության մեջ է դրվել վերջինիս կողմից անհրաժեշտ վերջնական արդյունքի հասնելու, մասնավորապես՝ դրամական միջոցների և/կամ **այլ գույքի փաստացի ստանալու հետ**: Ընդ որում, համաձայն Պայմանագրի 3.4.2 կետի, նշված դրամական միջոցների և/կամ այլ գույքի փաստացի ստանալը կարող է լինել ինչպես կողմերի միջև կնքված հաշտության համաձայնության, այնպես էլ բոլոր դատական գործերով և վեճերով առանց հաշտության համաձայնության դատական որոշումների կայացման արդյունքում:

Տվյալ դեպքում, գործի փաստերով հիմնավորվել է նաև, որ վերջնական արդյունքի հասնելու համար Վիկտոր Տեր-Հովսեփյանը, ըստ էության, ունեցել է երեք հնարավոր տարբերակ.

1. դատական ակտի հարկադիր կատարման միջոցով,
2. սնանկության դիմում ներկայացնելու միջոցով,
3. արտադատական կարգով գույքի իրացման միջոցով:

Քննարկելով Վիկտոր Տեր-Հովսեփյանի կողմից վերջնական արդյունքի հասնելու վերջը նշված հնարավոր տարբերակներից յուրաքանչյուրը՝ պետք է նշել հետևյալը.

Թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 09.09.2011 թվականին կայացված և օրինական ուժ ստացած որոշման հիման վրա տրված կատարողական թերթով 02.11.2012 թվականին հարուցվել է 01/02-5975/12 կատարողական վարույթը: Հարկադիր կատարողի 10.03.2016 թվականի որոշմամբ, նկատի ունենալով, որ «Անսուր Իսվեստ» ՍՊԸ-ին պատկանող անշարժ գույքը չի բավարարում կատարողական թերթի պահանջները կատարելու համար, առաջարկվել է 60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան, իսկ 02.12.2012 թվականին հարուցված թիվ 01/02/-5975/12 կատարողական վարույթը 60-օրյա ժամկետով կասեցվել է:

Նշված որոշման կայացումից հետո Ընկերության փաստաբանները Վիկտոր Տեր-Հովսեփյանին առաջարկել են դատական ակտի կատարման հետևյալ հնարավոր տարբերակները.

- ա. սնանկության դիմում ներկայացնելու միջոցով,
- բ. արտադատական կարգով գույքի իրացման միջոցով:

Վիկտոր Տեր-Հովսեփյանը հրաժարվել է նշված տարբերակներից, սակայն որևէ հիմնավոր պատճառաբանություն չի ներկայացրել:

Ինչ վերաբերում է երրորդ՝ դատական ակտի հարկադիր կատարման միջոցով գումարը բռնագանձելու տարբերակին, ապա գործի նյութերով հիմնավորվել է, որ հարկադիր կատարողի 23.03.2017 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ, ի կատարումն թիվ ԵԿԴ/2705/02/09 քաղաքացիական գործով 13.09.2012 թվականին տրված կատարողական թերթի՝ «Անսուր Իսվեստ» ՍՊԸ-ին պատկանող՝ ք. Երևան, Աստառային փողոցի 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեի շինությունը և հողամասը ներկայացվել են հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Գույքի գնահատման գինը կազմել է 1.046.000.000 ՀՀ դրամ, մեկնարկային գինը՝ 784.500.000 ՀՀ դրամ:

Վիկտոր Տեր-Հովսեփյանը, չհամաձայնելով 23.03.2017 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմանը, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն

սպահովող ծառայության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Գ. Սախոյանի 23.03.2017 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան:

Փաստորեն, Վիկտոր Տեր-Հովսեփյանը, առանց հիմնավոր պատճառաբանության, չի ցանկացել նախաձեռնել սնանկության վարույթ, չի ցանկացել սկսել նաև հրապարակային սակարկությունների միջոցով գրավադրված գույքի իրացման գործընթաց: Միաժամանակ, թեև, ըստ Վիկտոր Տեր-Հովսեփյանի փաստարկների, վերջնական արդյունքի հասնելու համար վերջինս նախընտրել է դատական ակտի հարկադիր կատարման եղանակով վերջնական արդյունքի հասնելը, այդուհանդերձ, գործի նյութերից հետևում է, որ վերջինս իր գործողություններով խաչընդոտել է դատական ակտի կատարման այդ եղանակին ևս: Մասնավորապես, ինչպես վերը նշվեց, թիվ ՎԴ-3113/05/17 վարչական գործի շրջանակներում, վիճարկելով հարկադիր կատարողի գործողությունները:

Վերագրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ Վիկտոր Տեր-Հովսեփյանն իր գործողություններով (անգործությամբ) ոչ միայն հրաժարվել է Ընկերության առաջարկած դատական ակտի կատարման միջոցներից որևէ մեկն ընտրելուց, այլ նաև խաչընդոտել է պահանջի կատարմանն ուղղված հարկադիր կատարման մարմնի գործողություններին:

Նման պայմաններում, գտնում են, որ վերագրյալ փաստերը բավարար են ապացուցված համարելու, որ Վիկտոր Տեր-Հովսեփյանը ցուցաբերել է անբարեխիղճ վարքագիծ՝ իր գործողություններով և անգործությամբ խաչընդոտել է, անհարկի պարբերաբար հետաձգել է Պայմանագրով սահմանված պայմանի՝ վերջնական արդյունքի վրա հասնելուն: Հետևաբար նաև, ըստ էության, խուսափել է հաջողության հոնորարն Ընկերության փաստաբաններին վճարելու իր պարտականության կատարումից:

Համադրելով գործի փաստերը՝ գտնում են նաև, որ Վիկտոր Տեր-Հովսեփյանի գործողությունները (անգործությունը) վկայում են այն մասին, որ Պայմանագրով նախատեսված պայմանի իրականացումը նպաստավոր չի եղել վերջինիս համար: Նշված փաստը հաստատվում է այն իրողությամբ, որ խուսափելով թե՛ հարկադիր կատարման ծառայության միջոցով, թե՛ սնանկության, թե՛ արտադատական կարգով գրավի առարկան իրացնելու եղանակով վերջնական արդյունքի հասնելու իրավական հնարավորությունից, Ընկերության փաստաբաններին առաջարկել է որպես հաջողության հոնորար ստանալ միայն 45.000 ԱՄՆ դոլար և լուծել Պայմանագիրը՝ առանց հետագա լրացուցիչ դրամական պահանջների:

Նման պայմաններում, եզրակացնում են, որ որ տվյալ դեպքում կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 293-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթն այն մասին, որ պայմանը ճանաչվում է իրականացված, եթե պայմանի իրականացմանն անբարեխիղճորեն արգելք է հանդիսացել այն կողմը, ում ձեռնտու չէ պայմանի իրականացումը:

Ինչ վերաբերում է վճարել բողոքի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննության սահմաններից, քանի որ Ընկերությունն իր վերաքննիչ բողոքում չի մատնանշել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետը և որպես բողոքի հիմնավորում՝ չի վկայակոչել դրանում գործածվող «գույք» հասկացության ինքնավար նշանակության և «օրինաչափ սպասելիքի» վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, սպա Վճարել դատարանն այս մասով հիմնավոր է համարում վճարել բողոքի պատասխանում ներկայացված այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս չի եկել, քանի որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի իմաստով «գույք» հասկացությանն անդրադարձել է թիվ ԵԱՆԴ/0976/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 28.12.2014 թվականի որոշման քննարկման շրջանակներում, այլ ոչ թե որպես բողոքի առանձին հիմք կամ հիմնավորում: Վճարել դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում իրավական գնահատական է տվել Պայմանագիր կնքելիս կողմերի իրական

կամքին, որը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ չի կարող որակվել որպես վերաքննության սահմաններից դուրս գալու գործողություն:

Վերոգրյալի հիման վրա գտնում եմ, որ բողոք բերած անձի հիմնավորումներն ու փաստարկները բավարար չեն բողոքարկվող դատական ակտը բեկանելու և Դատարանի վճռին ուժ տալու համար:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում եմ, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.12.2019 թվականի որոշումը բեկանելու համար, որպիսի պայմաններում այն պետք է թողնել օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. Միքայելյան

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/3061/02/19
2021թ.

Քաղաքացիական գործ թիվ

ԵԴ/3061/02/19

Նախագահող դատավոր՝

Ա. Պետրոսյան

Դատավորներ՝

Լ. Գրիգորյան

Դ. Սերոբյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով,

*Նախագահող
գեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ

2021 թվականի փետրվարի 23-ին

գրավոր ընթացակարգով քննելով Սեյրան Խաչատրյանի ներկայացուցիչ Գա-
րիկ Հախնազարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի
21.10.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Սեյրան Խաչատրյանի, երրորդ անձ ՀՀ
աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության
ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) իրավաբանական նշանակություն ունեցող փաս-
տը հաստատելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Սեյրան Խաչատրյանը պահանջել է հաստատել իրավաբանա-
կան նշանակություն ունեցող այն փաստերը, որ 05.02.1996-28.02.2000 թվականներին,
02.05.2000-31.01.2005 թվականներին, 02.04.2005-31.05.2005 թվականներին, 02.09.2005-
26.06.2006 թվականներին գործունեություն է ծավալել որպես անհատ ձեռնարկատեր,
իսկ 01.01.1992-14.07.1994 թվականներին աշխատել է «Մարգահովիտ» կոոպերատիվում:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիս-
յան) (այսուհետ՝ Դատարան) 19.06.2019 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.10.2019 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 19.06.2019 թվականի վճիռը բեկանվել է և Սեյրան Խաչատրյանի դիմումը թողնվել է առանց քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սեյրան Խաչատրյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 83-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 198-րդ, 362-րդ, 370-րդ և 371-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Օրենքով նախատեսված հատուկ վարույթի գործերով դիմումի քննության ելքով շահագրգռված անձանց, մասնավորապես՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ դիմումի քննության ընթացքում Ծառայության ներգրավման նախատեսմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովելու դիմումի պահանջի հիմնավորվածության և իրավաչափության վերաբերյալ վերջինիս դիրքորոշման արտահայտումը, այլ ոչ թե ձևական նկատառումներով, կամ առանց որևէ հիմնավոր փաստարկի իրավունքի մասին արհեստական վեճի ստեղծումը, ինչը կարող է հանգեցնել դիմումն առանց քննության թողնելուն: Հակառակ տրամաբանությամբ Ծառայությունը կարող է որևէ կերպ չփաստարկված պնդմամբ կաշկանդել դատարանին իրավունքի մասին ենթադրյալ վեճի առկայությամբ և դիմումն առանց քննության թողնելու անհրաժեշտությամբ, ինչը կարող է ընդհանրապես իմաստագրելել դատական (քաղաքացիական դատավարության) կարգով աշխատանքային ստաժի վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման ինստիտուտը՝ դիմողներին զրկելով նշված կարգով իրենց սուբյեկտիվ իրավունքների իրականացման խոչընդոտները վերացնելու հնարավորությունից:

Աշխատանքային ստաժի հաստատման մասին դատական ակտի առկայությունն ու դրա հիման վրա կենսաթոշակ նշանակելու Ծառայության պարտականությունն ինքնին չի կարող վկայել հատուկ վարույթում դատարանի լուծմանը ենթակա իրավունքի մասին վեճի առկայության, ուստիև դիմումն առանց քննության թողնելու անհրաժեշտության մասին:

Վերաքննիչ դատարանը պարտավոր էր պարզել, թե արդյոք գործի փաստերից ելնելով՝ առերևույթ առկա է փոխադարձ կապ քննարկվող փաստի և այլ անձի իրավունքների միջև և արդյոք նման փաստի հաստատումը կարող է որևէ կերպ ազդել այլ անձի իրավունքների ծավալի վրա, ինչպես նաև արդյոք առկա է իրավունքի մասին վեճ, ինչը չի արել: Նման կապի, ինչպես նաև այդ փաստի և այլ անձի իրավունքների ծավալի փոփոխության միջև պատճառահետևանքային կապի բացակայության դեպքում իրավունքի մասին վեճի վերաբերյալ հայտարարությունն ինքնին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով հայցն առանց քննության թողնելու հիմք չէ: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման՝ դիմումն առանց քննության թողնելով:

Բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.10.2019 թվականի որոշումը և ամբողջությամբ օրինական ուժ տալ Դատարանի 19.06.2019 թվականի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 17.04.2006 թվականի թիվ 2-3485 վճռի համաձայն՝ ՀՀ կառավարության առընթեր հարկային պետական ծառայության հտորհորդային հարկային տեսչությունը հայց է ներկայացրել ընդդեմ Սեյրան Խաչատրյանի՝ չվճարված հարկը բռնագանձելու պահանջի մասին: Քաղաքացիական գործի վարույթը կարճվել է պարտավորությունը փաստացի կատարված լինելու և հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով (**գ.թ. 45**):

2) Ավան համայնքի անշարժ գույքի, հողի հաշվառման, առևտրի և սպասարկումների բաժնի պետ Ա. Լազգյանի կողմից 06.05.2009 թվականին Ավան-Առինջ թիվ 2/14 շենքի 22-րդ բնակարանի բնակիչ անհատ ձեռներեց Սեյրան Խաչատրյանին (պետտեզիստր 019889, 08.02.1996 թվական) տրված տեղեկանքի համաձայն՝ Սեյրան Խաչատրյանն Ավան համայնքում 1997 թվականից Ավան-Առինջ թաղամասի թիվ 2/13 շենքի դիմաց գտնվող, իր սեփականությունը համարվող առևտրի օբյեկտում իրականացնում է առևտրային գործունեություն (**գ.թ. 47**):

3. Ծառայության պետի առաջին տեղակալ Ա. Պարոնյանի 20.07.2018 թվականի թիվ ԱՊ/ԱԼԼ-1/18751-18 գրությամբ Սեյրան Խաչատրյանին հայտնվել է, որ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում տեղեկատվության համաձայն՝ Սեյրան Խաչատրյանին 05.07.1989 թվականին նշանակվել և Ավան և Նոր Նորքի տարածքային բաժնում 19 տարի 8 ամիս 10 օր ստաժի հաշվառմամբ վճարվում է 2-րդ խմբով հաշմանդանության աշխատանքային կենսաթոշակ: Միաժամանակ տեղեկացվել է, որ Սեյրան Խաչատրյանի աշխատանքային ստաժում որպես «Սեյրան Խորենի Խաչատրյան» անհատ ձեռնարկատեր լինելու ժամանակահատվածից հաշվառված են 01.03.2000-01.05.2000 թվականներ, 01.02.2005-01.04.2005 թվականներ և 01.06.2005-01.09.2005 թվականներ ժամանակահատվածները՝ Ծառայությունում առկա սոցիալական վճարների վերաբերյալ տեղեկատվության համաձայն (այլ ժամանակահատվածների համար բացակայում է տեղեկատվությունը): Նշվել է նաև, որ ըստ աշխատանքային գրքույկի գրառումների՝ Սեյրան Խաչատրյանը 21.05.1990 թվականին ընդունվել է աշխատանքի «Մարգահովիտ» կոոպերատիվ և ազատվել աշխատանքից 14.07.1994 թվականին: Ծառայության ապահովադիրների շտեմարանում «Մարգահովիտ» կոոպերատիվ անվանումով ապահովադիր չի հայտնաբերվել, իսկ տարածքային բաժնի հարցմանն ի պատասխան ՀՀ ազգային արխիվի 16.03.2018 թվականի թիվ Ս-3337 պատասխան գրության համաձայն՝ «Մարգահովիտ» կոոպերատիվի անձնակազմին վերաբերվող փաստաթղթերն արխիվ չեն հանձնվել և չի հաջողվել պարզել փաստաթղթերի գտնվելու վայրը: Արդյունքում, «Մարգահովիտ» կոոպերատիվում աշխատած ժամանակահատվածը հաշվառվել է մինչև 01.01.1992 թվականը: Սոցիալական վճարների, ինչպես նաև աշխատավարձի բացակայության պատճառով, որպես անհատ ձեռնարկատեր լինելու 01.01.1992 թվականից մինչև 14.07.1994 թվականը, ինչպես նաև մինչև 01.01.2013 թվականն այլ ժամանակահատվածը Սեյրան Խաչատրյանի աշխատանքային ստաժում հաշվառվելու հիմքեր չկան (**գ.թ. 52-53**):

4) ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետ Ա. Առաքելյանի 09.01.2019 թվականի թիվ 13/66-19 գրությանը կից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ պետական միասնական գրանցամատյանի 08.01.2019 թվականի դրությամբ առկա տեղեկությունների համաձայն՝ Սեյրան Խաչատրյանը հաշվառված է եղել որպես անհատ ձեռնարկատեր (հաշվառման համար՝ 282.01542, հաշվառման ամսաթիվ՝ 05.02.1996 թվական ՀՎՀՀ՝ 25204575), ում հաշվառումից հանվելու վերաբերյալ գրառումը պետական միասնական գրանցամատյանում կատարվել է 26.06.2006 թվականին: Այլ գրառում Սեյրան Խաչատրյանի վերաբերյալ առկա չէ (**գ.թ. 6-7**):

5) Աշխատանքային գրքույկում առկա գրառումների համաձայն՝ Սեյրան Խաչատրյանը 21.05.1990 թվականին ընդունվել է աշխատանքի «Մարգահովիտ» կոոպերատիվ՝

որպես գյուղմթերքների ապրանքագետ-առաքիչ և ազատվել աշխատանքից 14.07.1994 թվականին (**գ.թ. 49**):

4. Վճուարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճուարել դատարանն արճանագրում է, որ սույն գործով վճուարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարճրացված հարցի վերաբերյալ Վճուարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն բողոքի քննության շրճանակներում Վճուարել դատարանը, հայտնի և հայցային վարույթների առանճահատկությունների լույսի ներքո, հարկ է համարում անդրադատնալ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու վերաբերյալ գործերով աշխատողի և կենսաթոշակային ապահովության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի միջև իրավունքի մասին վեճի ծագման իրավական հաստատություն խնդրին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի համաճայն՝ դատարանը հատուկ վարույթներն իրականացնում է նույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաճայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են նույն ենթաբաճնի դրույթներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաճայն՝ դատարանը հատուկ վարույթի կարգով քննում է հետևյալ գործերը. իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը. (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասի համաճայն՝ առաջին ատյանի դատարանը, գործերի տարածքային ընդդատությանը համապատասխան, հաստատում է այն փաստերը, որոնցից կախված է քաղաքացիների կամ իրավաբանական անճանց անճնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասի համաճայն՝ դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են՝

- 1) անճանց ազակցական հարաբերություններին.
- 2) անճի՝ ուրիշի խնամքի տակ գտնվելուն.
- 3) ճննդյան, որդեգրման, ամուսնության, ամուսնալուծության և մահվան գրանցմանը.
- 4) անճի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահվանը, եթե քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները մերճում են մահվան գրանցումը.
- 5) ժառանգությունն ընդունելուն և ժառանգության բացման վայրին.
- 6) դճբախտ պատահարին.
- 7) իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելությանը, բացառությամբ անճնագրի և զինվորական փաստաթղթերի.
- 8) սեփականության իրավունքով գույքի տիրապետմանը.
- 9) անհատականության ուճի առկայությանը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաճայն՝ դատարանն օրենքով նախատեսված դեպքերում քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաճայն՝ դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում

է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման վերաբերյալ դիմումում պետք է նշվի, թե ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը, ինչպես նաև բերվեն դիմողի կողմից պատշաճ փաստաթղթեր ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը հաստատող ապացույցներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե՝ հատուկ վարույթի գործերի քննության ընթացքում վեճ է ծագել իրավունքի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական դատավարության մասնակիցներն են (այսուհետ՝ դատավարության մասնակիցներ)՝ *իրավասու անձինք և մարմինները՝ օրենքով նախատեսված դեպքերում:*

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Նախկին օրենսգրք) նախատեսված կարգավորումների շրջանակում ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է հատուկ վարույթի կարգով քննող դիմումների առանձնահատկությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր քաղաքացիական գործի հարուցման հիմքը հայցի կամ դիմումի առկայությունն է, հետևաբար շահագրգիռ անձը քաղաքացիական դատավարության կարգով իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունն իրականացնում է դատարան կամ հայց, կամ դիմում ներկայացնելով: Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե քաղաքացիական գործի հարուցման հիմքում ընկած է դիմումը, թե հայցադիմումը, օրենսդիրն առանձնացրել է հատուկ և հայցային վարույթները, որոնք միմյանցից էականորեն տարբերվում են և ունեն գործերի քննության իրենց բնորոշ առանձնահատկություններ: Ըստ այդմ էլ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ դրանցից յուրաքանչյուրին: Այսպես, հայցային վարույթը քաղաքացիական դատավարության հիմնական տեսակն է, քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, հողային, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ իրավահարաբերություններից ծագող սուբյեկտիվ իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին վերաբերող վեճերի քննությանն ու լուծմանն ուղղված դատավարական կարգը: Իրավունքի պաշտպանության հայցային վարույթում առկա են՝

1) կողմի՝ խախտված կամ վիճարկվող իրավունքից ծագող և օրենքով սահմանված որոշակի կարգով քննության ենթակա **նյութաիրավական պահանջ**, այսինքն՝ հայց,

2) **սուբյեկտիվ իրավունքի մասին վեճ**,

3) հակադիր շահերով օժտված երկու կողմեր, որոնք օժտված են նաև իրենց իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանելու որոշակի լիազորություններով: Մինչդեռ հատուկ վարույթի կարգով դատարանը հաստատում է քաղաքացիների կամ կազմակերպությունների գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը, քաղաքացու որոշակի իրավական վիճակը կամ նրան պատկանող իրավունքը: Հատուկ վարույթը բնորոշվում է հետևյալ հատկանիշներով՝

1) այստեղ **իրավունքի մասին վեճ չկա**, քանի որ դիմողն այլ անձանց որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացնում,

2) հատուկ վարույթին բնորոշ է ոչ թե վեճի բացակայությունն ընդհանրապես, այլ դատական մարմինների քննության օրենքով հանձնված **իրավունքի մասին վեճի բացակայությունը**,

3) հատուկ վարույթում դատարանի լուծմանը ենթակա իրավունքի մասին վեճ չկա, ուստի այստեղ չկան նաև **հայցվոր ու պատասխանող**, այստեղ կան միայն դիմողներ և շահագրգիռ այլ անձինք,

4) **հատուկ վարույթում չկա նաև հայց**: Այսպիսով հատուկ վարույթի գործերով բացակայում է իրավունքի մասին վեճը, իսկ շահագրգիռ անձն էլ որևէ մեկի դեմ որևէ պահանջ չի ներկայացնում: Այսինքն՝ հատուկ վարույթի գործերով **բացակայում է դատարանի քննությանը ենթակա (նրա լուծմանը հանձնված) իրավունքի մասին վեճը** (*տե՛ս ըստ դիմումի Ասարուր Հարությունյանի թիվ ԵՄԴ/3384/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.08.2016 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում **իրավունքի վերաբերյալ վեճի առկայությունն ստուգելիս** դատարանը պարտավոր է պարզել, թե արդյոք գործի փաստերից ելնելով առերևույթ առկա է փոխադարձ կապ քննարկվող փաստի և այլ անձի իրավունքների միջև, և արդյոք նման փաստի հաստատումը կարող է որևէ կերպ ազդել այլ անձի իրավունքների ծավալի վրա: Նման կապի, ինչպես նաև այդ փաստի և այլ անձի իրավունքների ծավալի փոփոխության միջև պատճառահետևանքային կապի բացակայության դեպքում իրավունքի մասին վեճի վերաբերյալ հայտարարությունն ինքնին իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով հայցն առանց քննության թողնելու հիմք չէ (*տե՛ս ըստ դիմումի Աշուր Միմոնյանի թիվ ԵԷԴ/0543/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ կենսաթոշակ նշանակելու և դրանից բխող այլ գործողություններ կատարելու համար էական նշանակություն ունի դիմողի աշխատանքային ստաժը, որը ենթակա է հաստատման օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված կարգով: Ըստ այդմ էլ՝ օրենսդրի կողմից ամրագրվել է այն ընդհանուր կանոնը, ըստ որի՝ օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած անձի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն է՝

✓ մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար՝ աշխատանքային գրքույկը կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ փաստաթուղթ,

✓ 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը:

Միաժամանակ օրենսդիրը Ծառայությանը՝ որպես կենսաթոշակային ապահովության ոլորտում ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի, օրենսդրորեն վերապահել է, ի թիվս այլնի, պահանջել կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու) և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, նշանակել կենսաթոշակներ, ապահովել կենսաթոշակների վճարումը կամ մերժել կենսաթոշակ նշանակելու դիմումները: Ընդ որում, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթով նախատեսվել է աշխատանքային ստաժը որպես իրավաբանական նշանակություն ունեցող փաստ, դատական կարգով հաստատելու հնարավորություն, եթե բացակայում են՝

✓ աշխատանքային գրքույկը կամ,
 ✓ աշխատանքային գրքույկում համապատասխան գրառումները կամ,
 ✓ ստաժը հաստատող համապատասխան փաստաթղթերը (օր.՝ սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը) և
 ✓ եթե միևնույն ժամանակ առկա չէ աշխատանքային ստաժը հաստատող արխիվային տեղեկանքը:

Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ առկա չեն վերը թվարկված բոլոր պայմանները և դիմողը հնարավորություն չունի արտադատական կարգով ստանալու իր աշխատանքային ստաժը հավաստող օրենքով սահմանված համապատասխան փաստաթղթերը (օրինակ՝ աշխատանքային գրքույկ, համապատասխան արխիվային տեղեկանք, պարտադիր սոցիալական ապահովության վճարների վերաբերյալ կատարված վճարումները

հավաստող փաստաթուղթ և այլն), ապա օրենսդիրն իրավունք է վերապահել տվյալ անձին իր աշխատած աշխատանքային տարիները հաստատելու փաստով դիմելու դատական պաշտպանության: Ընդ որում, տվյալ գործի քննության ընթացքում դիմումատուի և շահագրգիռ անձի միջև նյութաիրավական վեճ ծագելու դեպքում, դիմումը պետք է թողնվի առանց քննության (*Կրե՛ս րաբ դիմումի Արարուշ Մասցականյանի թիվ ԱՐԴ/4208/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.09.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում գործող քաղաքացիադատավարական կարգավորումների շրջանակում *րաբ դիմումի Արարուշ Մասցականյանի թիվ ԱՐԴ/4208/02/16 քաղաքացիական գործով 17.09.2018 թվականի որոշմամբ* եզրահանգել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը դիմումի ելքով շահագրգիռ անձ է և դիմողի ու ծառայության միջև իրավունքի մասին վեճ է ծագել, ուստիև գտել է, որ Արարուշ Մասցականյանի դիմումը պետք է թողնել առանց քննության:

Վճռաբեկ դատարանը, գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների շրջանակում անդարադառնալով հատուկ վարույթի կարգով քննվող դիմումների առանձնահատկությանն ընդհանրապես և սույն գործի փաստերի հաշվառմամբ մասնավորապես, արձանագրում է հետևյալը.

Ի տարբերություն Նախկին օրենսգրքի, գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով օրենսդիրը դատավարության մասնակիցների շրջանակում ներառել է նաև **իրավասու անձանց և մարմիններին՝ օրենքով նախատեսված դեպքերում**: Այսինքն՝ օրենսդիրը դատավարության մասնակից դիտարկում է նաև իրավասու անձանց և մարմիններին, որոնք թեև գործի ելքում չունեն նյութաիրավական շահ, սակայն վերջիններիս մասնակցությունը կոչված է ապահովելու արդարադատության արդյունավետ իրականացումը, մի դեպքում նպաստելով խոցելի անձանց շարքում գտնվող անձանց իրավունքների լիարժեք պաշտպանությանը (օրինակ՝ երեխաների շահերին առնչվող գործերով խնամակության և հոգաբարձության մարմնի մասնակցությունը), մեկ այլ դեպքում՝ գործի բազմակողմանի և լրիվ քննությանը:

Հատուկ վարույթների գործերով իրավասու անձանց և մարմինների մասնակցությունը ևս պայմանավորված է այս վարույթների առանձնահատկություններով: Այսպես, հատուկ վարույթի կարգով քննվող գործերով, բացի դիմողներից, կարող են ներգրավվել նաև այն իրավասու անձինք և մարմինները, որոնց օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստով հաստատված իրավունքի իրականացումը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *«օրենքով նախատեսված դեպքում»* ձևակերպումը պետք է ընկալել լայն իմաստով: Այն ներառում է ինչպես այն դեպքերը, երբ օրենքում ուղղակի նախատեսվում է իրավասու անձանց և մարմինների մասնակցությունը որևէ գործի քննությանը, այնպես էլ՝ այն դեպքերը, երբ իրավասու անձանց և մարմինների լիազորություններից ուղղակի կամ անուղղակի բխում է համապատասխան իրավունքի իրականացումը, որը հաստատվել է տվյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստով:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ հատուկ վարույթի, այդ թվում նաև՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի քննության գործերի հիմնական նպատակն այնպիսի փաստերի վեր հանումը և հստակեցումն է, որոնց հետ օրենսդիրը կապում է դիմումատուի որոշակի իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը և դադարումը: Այլ կերպ ասած՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի քննության գործերի (հատուկ վարույթ) վարույթը կոչված է վերացնել այն փաստական հանգամանքների անորոշությունը, որոնք անմիջականորեն կապված են դիմողի՝ օրենքով պաշտպանվող շահերի հետ: Ըստ այդմ էլ՝ այդ վարույթում ենթակա չէ քննության որևէ նյութաիրավական պահանջ, այլ՝ տվյալ վարույթում հաստատման են ենթակա այնպիսի փաստեր, որոնք անհրաժեշտ են դիմումատուին՝ օրենքով իրեն վերապահված իրավունքը լիարժեք իրականացնելու համար: Հատուկ վարույթի վերջնական նպատակը նույնպես նյութական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, բայց այդ նպատակն այս վարույթում իրականացվում է ոչ թե խախտված կամ

վիճարկվող իրավունքը վերականգնելու միջոցով, ինչպես դա կատարվում է հայցային վարույթում, այլ՝ իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը, քաղաքացիների որոշակի իրավական վիճակը, քաղաքացիների կամ իրավաբանական անձանց այս կամ այն իրավունքը հաստատելու միջոցով, որի հիման վրա դիմողը հնարավորություն է ստանում իրավասու մարմիններում (ոչ դատական) իրացնել իր իրավունքները և օրինական շահերը: Հատուկ վարույթին բնորոշ է ոչ թե վեճի բացակայությունն ընդհանրապես, այլ՝ իրավունքի մասին վեճի բացակայությունը: Դատարանը հետևություններ չի անում դիմողի խնդրանքով հաստատված փաստերից բխող իրավունքների և պարտականությունների մասին: Այդ փաստերի հիման վրա ծագող իրավունքների իրականացման հարցը լուծում են իրավասու անձինք և մարմինները՝ սոցիալական ապահովության, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և այլ մարմինները: Հատուկ վարույթի կարգով քննվող գործերով հնարավոր է ծագի համապատասխան փաստի հաստատման վերաբերյալ վեճ, նկատի ունենալով, որ յուրաքանչյուր փաստի հաստատումն իր հերթին պահանջում է համապատասխան ապացույցների կազմ:

Նշվածի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրության շրջանակներում հատուկ վարույթի կարգով քննվող՝ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու վերաբերյալ գործերով բացի դիմողներից կարող են ներգրավվել նաև այն իրավասու անձինք և մարմինները, որոնց օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում է համապատասխան իրավունքի իրականացումը, որը հաստատվել է տվյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստով: Իրավասու անձի կամ մարմնի ներգրավմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել ըստ էության ապահովել դիմումի պահանջի հիմնավորվածության և իրավաչափության, փաստի վերաբերյալ վերջինիս դիրքորոշման արտահայտումը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից բխում է, որ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը պետք է հաստատվի որոշակի նպատակի համար, այսինքն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատմամբ դիմողը պետք է հնարավորություն ստանա իրացնել իր իրավունքները և օրինական շահերն այն մարմիններում, որոնց վրա օրենքով սահմանված կարգով դրված է համապատասխան իրավունքի իրականացումը, սույն դեպքում՝ Ծառայությունում: Հետևաբար փաստի հաստատմամբ պայմանավորված՝ ապագայում Ծառայության կողմից որոշակի գործողություններ կատարելու պարտականությունն ինքնին չի ենթադրում իրավունքի մասին վեճի առկայության մասին, քանի որ սույն դեպքում դիմողը Ծառայությանը որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացնում: Ձևական նկատառումներով կամ առանց որևէ հիմնավոր փաստարկի իրավունքի մասին արհեստական վեճի ստեղծումը կարող է հանգեցնել դիմումն առանց քննության թողնելուն, ինչը կարող է ընդհանրապես իմաստագրելի դատական կարգով աշխատանքային ստաժի վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման ինստիտուտը՝ դիմողներին գրկելով նշված կարգով իրենց սուբյեկտիվ իրավունքների իրականացման խոչընդոտները վերացնելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունը ենթադրում է ոչ միայն միասնական դիրքորոշման ձևավորում՝ իրավական նորմի մեկնաբանության արդյունքում, այլև՝ ձևավորված դիրքորոշման հետագա զարգացում: Նման իրավիճակներում իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված նոր դիրքորոշումը պետք է գերակայի նախորդ դիրքորոշման նկատմամբ և հիմք ընդունվի Վճռաբեկ դատարանի նոր դիրքորոշումը՝ ձևավորած որոշման կայացման պահին դատարանների վարույթներում գտնվող գործերի լուծման համար:

Մասնավորապես, գործող քաղաքացիադատավարական նորմերի կարգավորումների լույսի ներքո անդրադառնալով սույն բողոքի հիմքում բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

ա) աշխատանքային ստաժը որպես իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու պահանջի մասին գործերով որպես իրավասու մարմին գործի քննությանը

պետք է մասնակից դարձվի Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը,

բ) նշված գործերով բացառվում է իրավունքի մասին վեճի ծագման իրավական հնարավորությունը, այդուհանդերձ, չբացառելով փաստի մասին վեճի ծագման իրավական հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառության շրջանակներում դիմելով Դատարան՝ Սեյրան Խաչատրյանը պահանջել է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստերը, որ դիմումում նշված ժամանակաշրջանում գործունեություն է ծավալել որպես անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև 01.01.1992 թվականից մինչև 14.07.1994 թվականն աշխատել է «Մարգահովիտ» կոոպերատիվում: Ծառայությունը սույն գործով ներգրավված լինելով որպես երրորդ անձ՝ Դատարան ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է, որ Դատարանը վճիռ կայացնելիս պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ տվյալ վճիռը հանդիսանալու է Ծառայության իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ակտ, քանի որ նման փաստի հաստատումն ինքնին ենթադրում է հետագայում Ծառայության կողմից որոշակի գործողությունների կատարում, մասնավորապես՝ կենսաթոշակի վերահաշվարկում:

Սույն գործով Դատարանը, Սեյրան Խաչատրյանի դիմումը բավարարելով, պատճառաբանել է, որ դիմող կողմի բացատրության և գործում առկա փաստերի համադրությունը Դատարանի մոտ համոզմունք է ձևավորում այդ ապացույցների արժանահավատության վերաբերյալ և նշված փաստերը բավարար հիմք են իրավաբանական նշանակություն ունեցող աշխատանքային ստաժի փաստը հաստատելու համար, հետևաբար դիմողի պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Ծառայության վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը և դիմումը թողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ սույն գործով իրավաբանական նշանակություն ունեցող փաստն անդրադառնում է դիմողին հասանելիք կենսաթոշակի հաշվարկման և նշանակման առնչությամբ Ծառայության՝ որպես կենսաթոշակային ապահովության ոլորտում վերապահված պետական կենսաթոշակային ապահովության օրենսդրության կիրառման օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությանը, ուստի Ծառայության կողմից վերաքննիչ բողոք բերվելու պայմաններում, ինչպես նաև որոշմամբ նշված փաստերի առկայությունը բավարար է իրավունքի մասին վեճ ծագելու հանգամանքը հաստատված համարելու համար: Սեյրան Խաչատրյանի կողմից ներկայացված փաստի հաստատումը կապված է դատարանի ենթակայությանը վերապահված իրավունքի մասին վեճի լուծման հետ, քանի որ հաստատման ենթակա փաստի և սույն գործով երրորդ անձ հանդիսացող Ծառայության լիազորությունների միջև առկա է փոխադարձ կապ: Սույն գործով նյութաիրավական վեճի առկայության պարագայում Սեյրան Խաչատրյանի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին դիմումը պետք է թողնել առանց քննության:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Տվյալ դեպքում Դատարանը սույն գործով Ծառայությանը ներգրավել է որպես երրորդ անձ, վերջինս Դատարան է ներկայացրել դիրքորոշում, որում ուղղակի հայտնել է, որ Դատարանի վճիռը հանդիսանալու է Ծառայության իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ակտ, քանի որ պահանջում նշված փաստի հաստատումն ինքնին

ենթադրում է հետագայում Ծառայության կողմից որոշակի գործողությունների կատարում, մասնավորապես՝ կենսաթոշակի վերահաշվարկում:

Սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումների յուսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարույթի շրջանակներում քննարկման է ենթակա դիմողի կողմից որոշակի ժամանակահատվածում աշխատանքային գործունեություն ծավալած լինելու հանգամանքը, այլ ոչ թե Ծառայության կողմից ոչ ճիշտ գործողությունները վերացնելու կամ դիմողի՝ որոշակի ժամանակահատվածի համար կենսաթոշակ ստանալու իրավունքի հարցը: Դիմողի կողմից ներկայացված պահանջի պայմաններում իրավունքի մասին վեճ կարող էր առաջանալ գործատուի կողմից այդ պահանջի դեմ առարկելու պարագայում: Իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պարագայում ասպագայում Ծառայության կողմից որոշակի գործողություններ կատարելու պարտականությունն ինքնին չի կարող վկայել հատուկ վարույթում իրավունքի մասին վեճի առկայության մասին, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից բխում է, որ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը պետք է հաստատվի որոշակի նպատակի համար, այսինքն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատմամբ դիմողը պետք է հնարավորություն ստանա իրացնել իր իրավունքները և օրինական շահերն այն մարմիններում, որոնց վրա օրենքով սահմանված կարգով դրված է համապատասխան իրավունքի իրականացումը, սույն դեպքում՝ Ծառայությունում: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն դեպքում դիմողը Ծառայությանը որևէ կոթաբախի իրավական պահանջ չի ներկայացնում և առկա չէ իրավունքի մասին վեճ, հետևաբար հիմնավոր չէ այդ հիմքով դիմումն առանց քննության թողնելու Վերաքննիչ դատարանի որոշումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտը բեկանում է նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածում թվարկվում են դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը, որոնց առկայության դեպքում դատական ակտը ենթակա է բեկանման՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին կարող է չանդրադառնալ այն դեպքում, երբ առկա է դատական ակտի անվերապահ բեկանման օրենքով սահմանված հիմք:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը բացառապես վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու, վերաքննիչ բողոքի **բոլոր** հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալու և յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ իր եզրահանգումն արտահայտելու անհրաժեշտության հարցին (*յո՛ւն Տիգրան Կիրակոսյանն ընդդեմ Վիկտոր Խողոզիսի թիվ ԵԷԿ/0871/02/09 քաղաքացիական գործով 27.05.2010 թվականի, Համեսակ Ոսկանյանն ընդդեմ Վրոյրյա Հակոբյանի թիվ ԵԷԿ/1643/02/09 քաղաքացիական գործով 08.05.2014 թվականի որոշումները*):

Վերոգրյալ հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ սույն գործով առկա է իրավունքի մասին վեճ և դիմումը թողնելով առանց քննության, չի անդրադարձել վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին: Մինչդեռ, հաշվի առնելով վերոգրյալ վերլուծությունները և այն

հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանը սույն վեճի լուծման համար եկել է սխալ եզրահանգման, անհրաժեշտ է սույն գործն ուղարկել Վերաքննիչ դատարան նոր քննության՝ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալու, յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ իր եզրահանգումն արտահայտելու և դրա հիման վրա Ծառայության վերաքննիչ բողոքը մերժելու կամ բավարարելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ) գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.10.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/23320/02/20
2022թ.

Քաղաքացիական գործ թիվ

ԵԴ/23320/02/20

Նախագահող դատավոր՝

Ս. Թորոսյան

Դատավորներ՝

Ն. Մարգարյան

Լ. Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Մ. ԴՐՄԵՅԱՆ

Գ. ՀԱԿՈՒՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Է. ՍԵՂՈՒՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Յունիքումի» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2022 թվականի որոշման դեմ ըստ Ընկերության հայցի ընդդեմ «Դիեքս փորձագիտական կենտրոն» ՍՊԸ-ի, երրորդ անձինք «Արմենիա Ինչուրանս» ԱՓԲԸ-ի և «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի՝ փորձագիտական եզրակացությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարամությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել փորձագիտական եզրակացությունը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Սահակյան) (այսուհետ՝ Դատարան) 24.09.2021 թվականի որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 31.01.2022 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.09.2021 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Ա. Ստեփանյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 93-րդ, 94-րդ հոդվածները, 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 365-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցվորի ներկայացուցիչը ծանուցվել է միայն 04.06.2021 թվականի դատական նիստի մասին, իսկ 24.09.2021 թվականի դատական նիստի մասին պատշաճ ձևով չի ծանուցվել ինչպես հայցվորը (նրան ծանուցագիր չի ուղարկվել ծանուցման կամ գտնվելու վայրի հասցեով), այնպես էլ վերջինիս ներկայացուցիչը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվորի ներկայացուցիչը լիազորված չի եղել հայցվորի փոխարեն ստանալու նաև դատական ծանուցագրեր, և հայցվորը Դատարանին չի միջնորդել կիրառել ծանուցման այլ կարգ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.01.2022 թվականի որոշումը և փոփոխել այն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 29.03.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստին, որում Դատարանը որոշում է կայացրել այն հետաձգելու և 04.06.2021 թվականին կրկին նախնական դատական նիստ նշանակելու մասին, ներկա է եղել Ընկերության ներկայացուցիչ Արման Ստեփանյանը և պատասխանողի ներկայացուցիչը. Ընկերության ի պաշտոն ներկայացուցիչը դատական նիստին ներկա չի եղել (**հատոր 1-ին, գ.թ. 100, 101**).

2) Ընկերությունը 04.06.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստի մասին պատշաճ ձևով չի ծանուցվել.

3) 04.06.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստին ներկա չեն եղել ինչպես Ընկերության ի պաշտոն ներկայացուցիչը, այնպես էլ Ընկերության ներկայացուցիչներից որևէ մեկը. դատական նիստը հետաձգվել է և նշանակվել 24.09.2021 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 17-19**).

4) 24.09.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստի մասին ծանուցվել է միայն Ընկերության ներկայացուցիչ Արման Ստեփանյանը. Ընկերությունն այդ օրը նշանակված նախնական դատական նիստի մասին չի ծանուցվել (**հատոր 2-րդ, գ.թ. 25, 26**).

5) 24.09.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստին չեն ներկայացել ինչպես Ընկերությունը՝ ի դեմս նրա ի պաշտոն ներկայացուցչի, այնպես էլ Ընկերության ներկայացուցիչներից որևէ մեկը (**հատոր 2-րդ, գ.թ. 35-36**).

6) Դատարանը 24.09.2021 թվականին որոշում է կայացրել հայցն առանց քննության թողնելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ հայցվորը չի ներկայացել իրար հաջորդող երկու՝ 04.06.2021 թվականի և 24.09.2021 թվականի դատական նիստերին (**հատոր 2-րդ, գ.թ. 37, 38**).

7) Ընկերությունը՝ ի դեմս ի պաշտոն ներկայացուցիչ-գործադիր տնօրեն Արմեն Բաղդրյանի, փաստաբաններ Արման Ստեփանյանին և Տիգրան Ղազարյանին չի լիազորել իր անունից կատարելու հետևյալ դատավարական գործողությունները՝ ստանալու դատական ծանուցումները և դատավարական փաստաթղթերը (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի խնաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի և 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համարեքսպում կրկին անդրադառնալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով հայցն առանց քննության թողնելու իրավական հնարավորության հարցին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե ծանուցված հայցվորը (դիմողը) կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել երկու հաջորդական դատական նիստերին և չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու կամ գործն իր բացակայությամբ լուծելու վերաբերյալ միջնորդություն, և պատասխանողը չի միջնորդել գործի քննությունը շարունակելու վերաբերյալ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի բովանդակությանը, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ օրենսդրի կողմից հստակ սահմանվել է այն պայմանների միաժամանակյա առկայությունը, որոնց դեպքում դատարանը հայցը կարող է թողնել առանց քննության: Այդ պայմաններն են՝

- պատշաճ ծանուցված հայցվորը (դիմողը) կամ նրա ներկայացուցիչը չեն ներկայացել երկու հաջորդական դատական նիստերին,

- պատշաճ ծանուցված հայցվորը (դիմողը) կամ նրա ներկայացուցիչը չեն ներկայացրել գործի քննությունը հետաձգելու կամ գործն իրենց բացակայությամբ լուծելու վերաբերյալ միջնորդություն, և

- պատասխանողը միջնորդություն չի ներկայացրել գործի քննությունը շարունակելու վերաբերյալ:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն վերոնշյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է դատարանն իրավասու ներկայացված հայցը կամ դիմումը թողնել առանց քննության: Պատշաճ ծանուցված հայցվորի կամ նրա ներկայացուցչի կողմից երկու հաջորդական դատական նիստերին մասնակցությունն ապահովված չլինելու և գործի քննությունը հետաձգելու կամ իր բացակայությամբ այն իրականացնելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացված չլինելու պայմանների, ինչպես նաև պատասխանողի կողմից գործի քննությունը շարունակելու վերաբերյալ միջնորդության բացակայության միաժամանակյա առկայությունը բավարար է դատարանի կողմից հայցն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելու համար: Նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում դատարանն իրավասու չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով հայցը կամ դիմումը թողնել առանց քննության (որև՛ն Ալվարո Սահակյանն ընդդեմ Հենրիկ Մարտիկյանի թիվ ԱՎԳՆ/0452/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.09.2020 թվականի որոշումը):

ՀՀ Մահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարության մասնակիցները, բացառությամբ գործին մասնակցող անձանց ներկայացուցիչների, նույն օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում են դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարության մասնակիցները դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցվում են ծանուցագրի միջոցով, եթե նույն օրենսգրքով ծանուցման այլ կարգ նախատեսված չէ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատական ծանուցագիրը՝

- 1) ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ.
- 2) հանձնվում է առձեռն.
- 3) ուղարկվում է էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ նույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է նաև, որ օրենսդիրը դատարանի համար պարտականություն է սահմանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատավարության մասնակիցներին ծանուցելու դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին: Ընդ որում, այդ ծանուցումն իրականացվում է ծանուցագրի միջոցով, եթե նույն օրենսգրքով ծանուցման այլ կարգ նախատեսված չէ: Տվյալ դեպքում դատական ծանուցագիրը կամ ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, կամ հանձնվում է առձեռն, կամ ուղարկվում է էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ նույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի գործողության ժամանակ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է դատական նիստի վայրի և ժամանակի մասին գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցելու իրավական խնդրին՝ նշելով, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով (մինչև 10.06.2014 թվականը գործող խմբագրությամբ) նախատեսված՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկանալու իրավունքն ու դատարանի՝ նրանց տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Մրցակցային դատավարության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն (*լրես՝ Վերգուշ Վարդանյանսն ընդդեմ Եղիշ Թորոպյանսի թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այդ սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն,

քանի որ այդպիսի հնարավորությունն է կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայմանը: Մինևույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցումը վերջիններիս նյութական իրավունքների իրացման կարևոր նախապայման է (յրեն «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Վահե Բարսեղյանի և Ռուսրոմ Բարսեղյանի թիվ ԼԴ/0221/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը *Խոսչիկ Պողոսյանն ընդդեմ Ֆենյա և Հարություն Պողոսյանների գործով* կայացված որոշմամբ ընդգծել է, որ ցանկացած դեպքում դատարանը պետք է կատարի դատավարության մասնակիցներին դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելուն ուղղված ակտիվ գործողություններ և պետք է ձեռնարկի օրենսդրությամբ նախատեսված՝ կոնկրետ իրավիճակում հնարավոր բոլոր ծանուցման միջոցները և եղանակները: (...) անկախ ծանուցման ընտրված եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել դատավարության համապատասխան մասնակիցների՝ դատական նիստի մասին պատշաճ տեղեկացված լինելու փաստը (յրեն *Խոսչիկ Պողոսյանն ընդդեմ Ֆենյա և Հարություն Պողոսյանների թիվ ԵԿԿ/2767/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վերահաստատելով դատական ծանուցումների դատավարական ինստիտուտի վերաբերյալ նախկինում արտահայտած վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ գտել է, որ դրանք կիրառելի են նաև 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների նկատմամբ: Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված՝ դատավարության մասնակիցներին դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցման հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործող օրենսդրությամբ ևս դատարանների վրա դրվել է պարտականություն իրականացնելու համապատասխան ակտիվ գործողություններ դատավարության մասնակիցներին դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու համար: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված կարգավորումներով ևս, ըստ էության սահմանվել է, որ **անկախ ծանուցման եղանակից՝ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել դատավարության մասնակիցների՝ դատական նիստի մասին պատշաճ տեղեկացված լինելու փաստը** (յրեն «Գարանյու Ըբստուրթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի ընդդեմ «Մանցիարե» ՍՊԸ-ի և Ֆելիքս Թովմայանի թիվ ԵԿԿ/4088/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.10.2020 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 29.03.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստին, որում Դատարանը որոշում է կայացրել այն հետաձգելու և 04.06.2021 թվականին կրկին նախնական դատական նիստ նշանակելու մասին, ներկա են եղել Ընկերության ներկայացուցիչ Արման Ստեփանյանը և պատասխանողի ներկայացուցիչը. Ընկերության ի պաշտոնե ներկայացուցիչը դատական նիստին ներկա չի եղել:

Դատարանը, 29.03.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստում որոշում կայացնելով այն հետաձգելու և 04.06.2021 թվականին կրկին նախնական դատական նիստ նշանակելու մասին, Ընկերությանն այդ մասին որևէ եղանակով չի ծանուցել:

04.06.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստին ներկա չեն եղել ինչպես Ընկերության ի պաշտոնե ներկայացուցիչը, այնպես էլ՝ Ընկերության ներկայացուցիչներից որևէ մեկը. դատական նիստը հետաձգվել է և նշանակվել 24.09.2021 թվականին: Տվյալ դատարանն նիստի մասին ծանուցվել է միայն Ընկերության ներկայացուցիչ Արման Ստեփանյանը, ով Ընկերության կողմից իրեն 23.07.2020 թվականին տրված լիազորագրում նման լիազորություն չի ունեցել, իսկ Ընկերությունն իր հերթին դիմում չի ներկայացրել Դատարան՝ իր ներկայացուցչին ծանուցելու վերաբերյալ:

24.09.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստին չեն ներկայացել ինչպես Ընկերությունը՝ ի դեմս նրա ի պաշտոնե ներկայացուցչի, այնպես էլ Ընկերության ներկայացուցիչներից որևէ մեկը: Արդյունքում Դատարանը 24.09.2021 թվականին որոշում է կայացրել հայցն առանց քննության թողնելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ հայցվորը չի ներկայացել իրար հաջորդող երկու՝ 04.06.2021 թվականի և 24.09.2021 թվականի դատական նիստերին:

Վերաքննիչ դատարանը, քննելով Դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոքը, 31.01.2022 թվականին որոշում է կայացրել այն մերժելու մասին՝ պատճառաբանելով, որ «24.09.2021 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի մասին հայցվորի ներկայացուցչին սահմանված կարգով ուղարկվել է դատական ծանուցագիր, որը վերջինս ստորագրությամբ ստացել է: (...) Դատարանը սահմանված կարգով հայցվորին ծանուցել է 24.09.2021 թվականին կայանալիք դատական նիստի ժամանակի և վայրի մասին, հետևաբար հակառակի մասին բողոքաբերի փաստարկներն անհիմն են և գործի փաստական հանգամանքներից չբխող: Նշվածն էլ իր հերթին վկայում է այն մասին, որ ծանուցված հայցվորի երկու հաջորդական դատական նիստերին չհասնակցելու, գործի քննությունը հետաձգելու կամ գործն իր բացակայությամբ լուծելու վերաբերյալ միջնորդություն ներկայացված չլինելու պայմաններում, առկա են եղել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված բոլոր պայմանները, հետևաբար Դատարանը չէր կարող կայացնել այլ որոշում, քան կայացվածը, ուստի բացակայում են Դատարանին դատական սխալներ վերագրելու հիմքերը»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են և չեն բխում սույն գործի փաստերից, քանի որ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բացակայել է հայցը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ 1-ին մասի 11-րդ կետի հիմքով առանց քննության թողնելու վերը նշված պարտադիր վավերապայմաններից մեկը՝ հայցվոր Ընկերությունը պատշաճ ծանուցված չի եղել երկու հաջորդական դատական նիստերին, որպիսի հանգամանքը Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում այդ մասին գործում որևէ սպացույց չլինելու հիմքով:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն այն մասին, որ դատական ծանուցագիրը սահմանված կարգով ուղարկվել է հայցվորի ներկայացուցչին, որպիսի փաստի առկայությունը բավարար է համարել այդ հիմքով նաև Ընկերությանը ծանուցված համարելու համար, ապա այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարության մասնակիցները, բացառությամբ գործին մասնակցող անձանց ներկայացուցիչների, նույն օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում են դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձի կողմից իր ներկայացուցչին ծանուցելու վերաբերյալ դիմում ներկայացվելու կամ լիազորագրում նման լիազորության առկայության դեպքում ծանուցվում է միայն ներկայացուցիչը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ դատարանում գործը վարելու լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարելու ցանկացած դատավարական գործողություն, բացառությամբ՝ դատական ծանուցումները և դատավարական փաստաթղթերն ստանալու:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում թվարկված գործողություններից յուրաքանչյուրի կատարման համար ներկայացվողի տված լիազորագրում պետք է ուղղակիորեն նախատեսված լինի ներկայացուցչի այդ լիազորությունը:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորմանը,

արձանագրել է, որ վերոհիշյալ հոդվածի 2-րդ մասի բովանդակությամբ հստակ կարգավորում է նախատեսված այն մասին, որ գործին մասնակցող անձի կողմից իր ներկայացուցչին ծանուցելու վերաբերյալ լիազորագրում լիազորություն սահմանելու դեպքում դատական նիստերի վերաբերյալ ծանուցվում է միայն ներկայացուցիչը: Հետևաբար լիազորագրում՝ ներկայացուցչի կողմից դատական ծանուցումներն ստանալու (ներկայացուցչին ծանուցելու) վերաբերյալ լիազորության առկայության պայմաններում դատարանի կողմից դատական ծանուցումները ներկայացուցչին ուղարկելը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն, համարվում է դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձին ծանուցելու՝ դատարանի պարտականության պատշաճ կատարում: Ընդ որում՝ լիազորագրում՝ ներկայացուցչի կողմից դատական ծանուցումներն ստանալու վերաբերյալ լիազորության առկայությունը բավարար է դատարանի կողմից դատական ծանուցումները միայն ներկայացուցչին ուղարկելու համար (*տե՛ս Ավարդ Սահակյանն ընդդեմ Հենրիկ Մարտիրոսյանի, երրորդ անձ «Յունիքանկ» ԲԲԸ-ի թիվ ԱՎԴՆ/0452/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.09.2020 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ էլ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձի կողմից դիմում է ներկայացվում իր ներկայացուցչին ծանուցելու վերաբերյալ կամ համապատասխան լիազորություն է առկա լինում գործին մասնակցող անձի ներկայացուցչին տրված լիազորագրում, ապա նման իրավիճակում դատարանի կողմից դատական ծանուցումները միայն ներկայացուցչին ուղարկելը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն, համարվում է դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձին ծանուցելու՝ դատարանի պարտականության պատշաճ կատարում, մինչդեռ այն դեպքում, երբ գործին մասնակցող անձի կողմից նման դիմում չի ներկայացվում, ինչպես նաև լիազորագրում բացակայում է համապատասխան լիազորությունը, ապա նման պայմաններում դատարանի կողմից դատական ծանուցումները միայն ներկայացուցչին ուղարկելու դեպքում գործին մասնակցող անձը չի համարվում ծանուցված դատական նիստի ժամանակի և վայրի մասին (*տե՛ս Լուսինե Մինասյանն ընդդեմ Բվան Մարինոյի, երրորդ անձ Էրեբունի վարչական շրջանի ինստիտուցիայի և հոգաբարձության հանձնաժողովի՝ թիվ ԵԴ/21099/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.05.2022 թվականի որոշումը*):

Տվյալ դեպքում Ընկերության կողմից իր ներկայացուցիչներին 23.07.2020 թվականին տրված լիազորագրի բովանդակությունից բխում է, որ դրանում ուղղակիորեն նախատեսված չեն ներկայացուցիչների՝ դատավարական փաստաթղթեր կամ դատական ծանուցագրեր ստանալու լիազորությունները: Ավելին՝ Ընկերությունն իր հեթին դիմում չի ներկայացրել Դատարան՝ իր ներկայացուցիչներին ծանուցելու վերաբերյալ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Ընկերությունը չի կարող համարվել պատշաճ ծանուցված 24.09.2021 թվականին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին, հետևաբար Դատարանն իրավասու չէր հայցը թողնելու առանց քննության, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Նման պայմաններում Դատարանը, որոշում կայացնելով հայցն առանց քննության թողնելու մասին, խախտել է հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հայցադիմումը դատարան ներկայացնելու պահի դրությամբ գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպություններ և ֆիզիկական անձինք՝ գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, վճիռների կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, վճիռների կատարման եղանակը և կարգը փոփոխելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով:

Նույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Նկատի ունենալով, որ սույն գործով բողոքարկվել է Դատարանի 24.09.2021 թվականի «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշումը վերանայելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի կայացված դատական ակտը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

- 1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
- 2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի հարցը համարել լուծված:
- 3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ	ԼԳ2/1719/02/20 2022թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԼԳ2/1719/02/20	
Նախագահող դատավոր՝	Լ. Գրիգորյան	
Դատավորներ՝	Ա. Պետրոսյան Կ. Չիլինգարյան	

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2022 թվականի փետրվարի 24-ին գրավոր ընթացակարգով քննելով Նաիրա Աբգարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ Նաիրա Աբգարյանի դիմումի՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Նաիրա Աբգարյանը պահանջել է Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից 21.08.2019 թվականին կայացված և 05.09.2019 թվականին կողմերի համար պարտադիր դարձած թիվ 15-4891/19 որոշման հարկադիր կատարման համար տալ կատարողական թերթ:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Գ. Զաքարյան) (այսուհետ՝ Դատարան) 09.10.2020 թվականի որոշմամբ դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.12.2020 թվականի որոշմամբ «Յունիքանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 09.10.2020 թվականի որոշումը վերացվել է, և կայացվել է նոր որոշում՝ դիմումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նաիրա Աբգարյանը (ներկայացուցիչ Ալեքսանդր Ծատիկյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը, «Դատական ակտերի հարկադիր կարարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ, 336-րդ, 343-րդ և 345-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարզ է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ մեկ տարվա ընթացքում կատարողական թերթ ստանալու համար դիմում ներկայացնելու օրենսդրական պահանջը գործում է միայն այն դեպքում, երբ օրենքով այլ բան նախատեսված չէ: Այսինքն՝ օրենսդիրը նախատեսել է դիպուկահույժ նորմ՝ հաշվի առնելով, որ առանձին դեպքերում, պայմանավորված օրենսդրական կարգավորումներով, անձը կարող է զրկված լինել կատարողական թերթ ստանալու համար մեկ տարվա ընթացքում դատարանի դիմելու իրավական հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ քանի դեռ դատարանի վարչություն քննվում է հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու պահանջ, չի կարող դատարան ներկայացվել հաշտարարի միևնույն որոշման համար կատարողական թերթ տրամադրելու դիմում, իսկ այդպիսի դիմում ներկայացվելու դեպքում դատարանն օրենքի ուժով այն թողնում է առանց քննության:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ սույն քաղաքացիական գործում առկա է եղել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԼԴ2/1465/02/19 քաղաքացիական գործով 12.08.2020 թվականին կայացված «Վճռաբեկ բողոքը վարչությ ընդունելը մերժելու մասին» որոշման քաղվածքը, որպիսի ապացույցով հաստատվում է, որ սույն գործի հիմքում ընկած հաշտարարի որոշումը բանկի կողմից վիճարկվել է դատական կարգով, և 12.08.2020 թվականին գործն ավարտվել է: Նշվածից հետևում է, որ մինչև 12.08.2020 թվականը Նաիրա Աբգարյանն օբյեկտիվորեն հնարավորություն չունեց դատարան ներկայացնելու հաշտարարի որոշման կատարման համար կատարողական թերթ տրամադրելու դիմում, քանի որ այն դատարանի կողմից կթողնվեր առանց քննության:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը կարող է մերժվել այն դեպքում, երբ առկա է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու՝ օրենքով նախատեսված հիմք: Կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը դատարան ներկայացնելու ժամկետը ենթադրաբար բաց թողնելու հանգամանքը չի հանդիսանում ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու հիմք, ուստի Վերաքննիչ դատարանը չէր կարող այդ հիմքով մերժել որոշման կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը:

Բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասի

կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր՝ պայմանավորված է նրանով, որ անհրաժեշտ է ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում արտահայտի ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմում ներկայացնելու ժամկետների հաշվարկման առանձնահատկությունների մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.12.2020 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 09.10.2020 թվականի որոշմանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 21.08.2019 թվականին Ֆինանսական համակարգի հաշտարարը կայացրել է թիվ 15-4891/19 որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում)՝ 300.000 ՀՀ դրամ գումարի չափով Բանկի դեմ ուղղված Նաիրա Աբգարյանի պահանջը բավարարելու մասին (**գ.թ. 13-22**).

2) Որոշումը կողմերի համար պարտադիր է դարձել 05.09.2019 թվականին (**գ.թ. 9**).

3) 19.09.2019 թվականին ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Բանկի դիմումն ընդդեմ Նաիրա Աբգարյանի՝ Որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին (քաղաքացիական գործ՝ թիվ ԼԴ2/1465/02/19).

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.11.2019 թվականի որոշմամբ Բանկի դիմումը մերժվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.05.2020 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.11.2019 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 12.08.2020 թվականի որոշմամբ Բանկի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է (**հիմք՝ «www.court.am»** պաշտոնական կայքը).

4) Նաիրա Աբգարյանը Որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը Դատարան է ներկայացրել 24.09.2020 թվականին՝ միջնորդություն չներկայացնելով՝ նշված դիմումը դատարան ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին (**գ.թ.6-29**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերկյալ իրավական հարցերին.

1. *Ի՞նչ որոշում է ելթակա կայացման այն պարագայում, երբ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, և բացակայում է բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը,*

2. *Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացված լինելու պայմաններում արդյո՞ք առկա է սույն որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ հաճախորդի կողմից դիմում ներկայացվելու հնարավորություն:*

1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի, ինչպես նաև արքիտրաժային տրիբունալների վճիռների և Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ կատարողական թերթ ստանալու համար դիմումը ներկայացվում է մեկ տարվա ընթացքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ՝ սկսած այն օրվանից, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր է դարձել կողմերի համար:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը առաքելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնվում է որոշման հետ, վերջինս կողմերի համար դառնում է պարտադիր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմերի համար պարտադիր դարձած որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմում կարող է ներկայացնել հաճախորդը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն դեպքում, երբ հաճախորդը նույն օրենքով սահմանված կարգով համաձայնում է որոշման հետ, իսկ Կազմակերպությունը սահմանված կարգով և ժամկետում չի կատարում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը, հաճախորդն իրավունք է ստանում կատարողական թերթ ստանալու նպատակով դիմելու իրավասու դատարան, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ճանաչելու և կատարողական թերթ տալու մասին.

2) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և կատարողական թերթ տալը մերժելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի քննության արդյունքով դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) դիմումը բավարարելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ճանաչելու և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին.

2) դիմումը մերժելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու մասին:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ այն դեպքում, երբ հաճախորդը «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համաձայնվում է որոշման հետ, իսկ Կազմակերպությունը սահմանված կարգով և ժամկետում չի կատարում ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը, հաճախորդն իրավունք է ձեռք բերում կատարողական թերթ ստանալու նպատակով դիմելու իրավասու դատարան: Մինևնույն ժամանակ, օրենսդիրը որոշակի ժամկետ է սահմանել ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման նպատակով կատարողական թերթ ստանալու վերաբերյալ դիմումը դատարան ներկայացնելու համար՝ նախատեսելով, որ հաճախորդն այդ դիմումը ներկայացնում է **ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը կողմերի համար պարտադիր դառնալու պահից սկսած մեկ օրվա ընթացքում**: Ընդ որում, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը կողմերի համար դառնում է պարտադիր, երբ այն առաքելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնվում է որոշման հետ:

Օրենսդիրը դատարանին իրավունք է վերապահել ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու

վերաբերյալ *դիմումի քննության արդյունքում* ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացնելու հետևյալ որոշումներից մեկը.

1) դիմումը բավարարելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ճանաչելու և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին.

2) դիմումը մերժելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (հոդված 345-րդ, մաս 2-րդ) որպես ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը մերժելու հիմք բացառապես նախատեսել է այն դեպքը, երբ դիմումի քննության արդյունքում պարզվում է, որ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ենթակա է չեղյալ ճանաչման: Նշված դիմումը մերժելու այլ հիմք, այդ թվում, երբ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը ներկայացվել է օրենքի պահանջի խախտմամբ, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով չի նախատեսել: Մինևույն ժամանակ նշված դեպքը նույն օրենսգրքով չի նախատեսվել նաև որպես այդ դիմումն առանց քննության թողնելու հիմք: Նշված դեպքը որպես դիմումը մերժելու ինքնուրույն հիմք օրենսդիրը նախատեսել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով՝ սահմանելով, որ *դապարսնը մերժում է կապարդական թերթ տալու դիմումը, եթե լրացել է կապարդական թերթ արանալու համար դիմում ներկայացնելու ժամկետը, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է:* Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացվում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը կողմերի համար պարտադիր դառնալու պահից սկսած մեկամյա ժամկետը լրանալուց հետո, և այդ ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվում է, դատարանը պետք է կայացնի այդ դիմումը մերժելու մասին որոշում՝ ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ վերը նշված իրավակարգավորումը՝ կապված ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթի հետ, իր էությանը տարբերվում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթի համապատասխան իրավակարգավորումներից: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը դատարան կարող է ներկայացվել «ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ծանուցումն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իսկ նույն օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) վերադարձնում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը, եթե այն ներկայացվել է նույն օրենսգրքի 337-րդ հոդվածի, ինչպես նաև նույն հոդվածի պահանջների խախտմամբ: Նշված իրավանքների բովանդակությունից բխում է, որ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը սահմանված ժամկետի խախտմամբ դատարան ներկայացված լինելը օրենսդիրը դիտել է ոչ թե որպես տվյալ դիմումը մերժելու, այլ՝ այդ դիմումը վերադարձնելու հիմք՝ հնարավորություն ընձեռելով դիմողին ներկայացնելու բաց թողած ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ նաև, թե ինչպիսի դատական ակտ պետք է կայացնի դատարանը, երբ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը ներկայացվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված

մեկամյա ժամկետի խախտմամբ, և առկա չէ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն: Տվյալ դեպքում ևս նշված կարգավորումը, ըստ էության, նախատեսված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով, որի համաձայն՝ կատարողական թերթ տալու դիմումն օրենքի պահանջների խախտմամբ ներկայացվելու դեպքում դատարանն այն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, որոշում է կայացնում դիմումն առանց քննության թողնելու մասին, եթե առկա չեն կատարողական թերթ տալու դիմումը մերժելու հիմքերը: Այսինքն՝ այն դեպքերում, երբ կատարողական թերթ տալու դիմումը ներկայացվել է օրենքի պահանջի այնպիսի խախտմամբ, որը կատարողական թերթ տալու դիմումը մերժելու հիմք չէ, սակայն արգելք է դիմումը քննության առնելու համար, դատարանը պետք է կայացնի նման դիմումն առանց քննության թողնելու մասին որոշում: Ընդ որում, նման որոշում կայացվելու դեպքում դիմումատուն օրենքով գրկված չէ դիմումի թերությունները վերացնելու և այն կրկին դատարան ներկայացնելու հնարավորությունից:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ *այն դեպքում, երբ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, և բացակայում է բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, դատարանը կայացնում է դիմումն առանց քննության թողնելու մասին որոշում՝ ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով:*

2. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումն առանց քննության թողնելու՝ օրենսդրի կողմից նախատեսված մեկ այլ դեպքին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը քննելիս պարզվում է, որ դատարանի վարույթում առկա է ֆինանսական համակարգի հաշտարարի նույն որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում, ապա դատարանն առանց քննության է թողնում ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումի քննությունը:

Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը քննելիս պարզվում է, որ դատարանի վարույթում առկա է ֆինանսական համակարգի հաշտարարի նույն որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում, ապա դատարանը պետք է ներկայացված դիմումը թողնի առանց քննության:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջն անմիջակա՛նորեն ուղղված է դատարանին, և հաճախորդին չի ազատում ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումն օրենքով սահմանված ժամկետում ներկայացնելու պարտականությունից, քանի որ գործող կարգավորումների պայմաններում ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելը չի կասեցնում նույն որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը դատարան ներկայացնելու՝ օրենքով սահմանված ժամկետի հոսքը: Հետևաբար, հաճախորդը պարտավոր է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացնել օրենքով սահմանված վերը նշված ժամկետում անգամ այն ժամանակ, երբ առկա է ֆինանսական համակարգի հաշտարարի նույն որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում, քանի որ նույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով նա ունի *օրենքով սահմանված կարգով* սեփական հայեցողությամբ իր դատավարական իրավունքներն

իրականացնելու, դատական պաշտպանության միջոցները և եղանակները տնօրինելու իրավունք: Ուստի, Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացնելու դեպքում դիմողը պետք է բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնի, որպիսի պահանջը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ընդհանուր կանոնից (դատարանը, պարզելով, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, որոշում է կայացնում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին) և հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ հնարավորություն տալ դատարանին դիմումի քննության հարցը պարզելիս քննության առարկա դարձնել միջնորդությամբ ներկայացված հանգամանքները: Պարզելով, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով՝ դատարանը պետք է որոշում կայացնի միջնորդությունը բավարարելու և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն բողոքի քննությանը վճռաբեկ բողոքի հիմքը հաստատվեց, որի պայմաններում նմանատիպ փաստական հանգամանքներով գործերի քննության դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասն անհրաժեշտ է կիրառել սույն որոշմամբ տրված մեկնաբանություններով:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 21.08.2019 թվականին Ֆինանսական համակարգի հաշտարարը կայացրել է թիվ 15-4891/19 որոշումը՝ 300.000 ՀՀ դրամ գումարի չափով Բանկի դեմ ուղղված Նաիրա Աբգարյանի պահանջը բավարարելու մասին: Որոշումը կողմերի համար պարտադիր է դարձել 05.09.2019 թվականին: 19.09.2019 թվականին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Բանկի դիմումն ընդդեմ Նաիրա Աբգարյանի՝ Որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին: Լոռու մարզի առաջին ատյանի ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.11.2019 թվականի որոշմամբ Բանկի դիմումը մերժվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.05.2020 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.11.2019 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 12.08.2020 թվականի որոշմամբ Բանկի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է: Ֆինանսական համակարգի հաշտարարի 21.08.2019 թվականի թիվ 15-4891/19 որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը Նաիրա Աբգարյանը Դատարան է ներկայացրել 24.09.2020 թվականին՝ միջնորդություն չներկայացնելով նշված դիմումը դատարան ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին:

Դատարանը, պատճառաբանելով, որ «օրենսդիրը իմպերատիվ ձևով սահմանել է այն հատուկ պայմանը, որի պարագայում Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմերի համար պարտադիր դարձած որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը մերժվում է: Այսինքն, կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը կարող է մերժվել, եթե դրա քննության արդյունքով դատարանը պարզում է, որ առկա են ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու հիմքերը», «Բանկը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու պահանջով դիմել է Դատարան (քաղաքացիական գործ թիվ ԼԴ2/1465/02/19), 2019 թվականի նոյեմբերի 05-ի որոշմամբ դիմումը մերժվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2020 թվականի մայիսի 27-ի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի 2020 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է», «առկա են ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կատարողական թերթ տալու հիմքերը, մասնավորապես դիմումին կից ներկայացվել է ապացույց առ այն, որ Բանկը հրաժարվել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից և առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշում, որով տվյալ գործով ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումն անբողջությամբ մերժվել է», «բացակայում են «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով հաշտարարի կողմերի համար պարտադիր դարձած որոշման հիման վրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու պահանջի մասին հիմնավոր է և ենթակա է բավարարման», 09.10.2020 թվականի որոշում է կայացրել Նաիրա Աբգարյանի դիմումը բավարարելու, Որոշումը ճանաչելու և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին:

Վերաքննիչ դատարանը 18.12.2020 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Դատարանի 09.10.2020 թվականի որոշումը վերացրել է, և դիմումը մերժել է՝ պատճառաբանելով. «Դատարանը, քննարկելով դիմումը, անտեսել է այն հանգամանքը, որ դիմումը ներկայացվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջների խախտմամբ, այն է՝ կատարողական թերթ ստանալու համար դիմումը պետք է ներկայացվեր մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր է դարձել կողմերի համար: Այսինքն՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 05.09.2019 թվականին Հաշտարարի որոշումը պարտադիր էր դարձել կողմերի համար, ապա դիմում կատարողական թերթ տալու վերաբերյալ պետք է Դատարան ներկայացվեր 05.09.2020 թվականից ոչ ուշ, մինչդեռ այն ներկայացվել է 24.09.2020 թվականին և նույն օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Դատարանը պարտավոր էր մերժել կատարողական թերթ տալու դիմումը, քանի որ լրացել էր կատարողական թերթ ստանալու համար դիմում ներկայացնելու ժամկետը, իսկ բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն Իմոռը չի ներկայացրել»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը քննության առարկա չի դարձրել դիմումը Նաիրա Աբգարյանի կողմից օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու հարցը, իսկ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննության առնելով նշված հարցը, դիմումի քննության նկատմամբ կիրառելի է համարել Օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետն այն դեպքում, երբ Նաիրա Աբգարյանը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացրել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, և չի ներկայացրել կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացնելու բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, որպիսի պայմաններում վերոնշյալ դիմումը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն պետք է թողնվեր առանց քննության:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը սխալ են որոշել դիմումի քննության նկատմամբ կիրառելի իրավունքի նորմը, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում նշված այն հիմքին, որ «Որոշումը Բանկի կողմից վիճարկվել է դատական կարգով և դատական կարգով վիճարկման վարույթն ավարտվել է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 12.08.2020 թվականին որոշում կայացնելուց հետո, որի պայմաններում մինչև նշված ժամկետը Նաիրա Աբգարյանն օբյեկտիվորեն հնարավորություն չունեի դատարան ներկայացնելու հաշտարարի որոշման համար կատարողական թերթ տրամադրելու դիմում, քանի որ այն դատարանի կողմից կյոռնվել էր առանց քննության», ապա նշված հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Նաիրա Աբգարյանը վերը նշված դիրքորոշումների համաձայն՝

ամեն դեպքում պարտավոր էր ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացնել օրենքով սահմանված ժամկետում: Ավելին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դատավարական ժամկետը բաց թողնելու հարգելիության վերաբերյալ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները վերաբերում են միայն թիվ ԼԳ2/1465/02/19 քաղաքացիական գործի հարուցումից մինչև 12.08.2020 թվականն ընկած ժամանակահատվածում դիմումը դատարան ներկայացնելու անհնարինությանը, մինչդեռ Նաիրա Աբգարյանը Որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը դատարան է ներկայացրել 24.09.2020 թվականին:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, և պայմանավորված է ստորադաս դատարանների կողմից հաստատված հանգամանքներով տրված հնարավորությամբ:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հատուկ վարույթներով, ինչպես նաև սույն օրենսգրքի 44-52-րդ գլուխներով նախատեսված դիմումների քննության հետ կապված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է դիմողների վրա:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման և փոփոխման՝ դիմումը պետք է թողնվի առանց քննության, և հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար պետական տուրքը դիմողի կողմից վճարվել է, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումը, գտնում է, որ պետական տուրքի հատուցման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2020 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Նաիրա Աբգարյանի դիմումը՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու պահանջի մասին, թողնել առանց քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/1083/02/11
Քաղաքացիական գործ թիվ	ԵՄԴ/1083/02/11
Նախագահող դատավոր՝	Լ. Գրիգորյան
Դատավորներ՝	Ա. Պետրոսյան Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի մարտի 26-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Վեներա Մկրտչյանի (Ալբերտ Մկրտչյանի իրավահաջորդն է) հայցի ընդդեմ Լիաննա և Արման Մկրտչյանների, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակիորեն անվավեր ճանաչելու ու փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.07.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Լիաննա Մկրտչյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ալբերտ Մկրտչյանի իրավահաջորդ Վեներա Մկրտչյանը պահանջել է անվավեր ճանաչել 19.03.1992 թվականին Արման Մկրտչյանին տրված ըստ

կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա Երևանի Հաղթանակ 5-րդ փողոցի թիվ 24 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/2 բաժնի նկատմամբ 20.03.2001 թվականին Կադաստրի կողմից Արման Մկրտչյանի անվամբ կատարված պետական գրանցումը, մասնակիորեն անվավեր ճանաչել 01.06.1992 թվականին Վանիկ Մկրտչյանին տրված՝ վերը նշված հասցեում գտնվող անշարժ գույքի 1/4 բաժնի և 05.02.2001 թվականին վերը նշված հասցեի տան և հողի ժառանգության բաց թողնված 1/4 բաժինների նկատմամբ տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, ինչպես նաև փաստացի տիրապետման հիմքով իրեն ճանաչել ծնողների մատուլ ժառանգական գույքի՝ վերը նշված հասցեում գտնվող տան 1/2 բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 10.03.2020 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.07.2020 թվականի որոշմամբ Լիաննա Մկրտչյանի բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.07.2020 թվականի որոշմամբ Լիաննա Մկրտչյանի բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լիաննա Մկրտչյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վճռի դեմ կրկին անգամ վերաքննիչ բողոք ներկայացնելիս բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացրել, քանի որ վստահել է Վերաքննիչ դատարանի 01.07.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմանը: Մասնավորապես, նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքն առաջին անգամ վերադարձվել է բացառապես այն ստորագրված չլինելու հիմքով և դրանում չի նշվել բողոքը սահմանված ժամկետում լրանալուց հետո ներկայացված լինելու մասին, ուստի ինքը Վերաքննիչ դատարանի նման վարքագիծը գնահատել է այն իմաստով, որ վերջինս հարգելի է համարել վերաքննիչ բողոքն այն ներկայացրած անձի մեղքից անկախ պատճառով ուշացված լինելու հանգամանքը: Հակառակ պարագայում Վերաքննիչ դատարանը, բացի բողոքն ստորագրված չլինելու հիմքից, որոշման մեջ որպես խախտում կնշեր նաև այն սահմանված ժամկետը լրանալուց հետո ներկայացված լինելու և այդ ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացված չլինելու մասին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Վերաքննիչ բողոքին կից ներկայացված գրությունից ակնհայտ է, որ ՀՀ պետական բյուջեում գոյություն ունի թիվ Ա57-26844 անդորրագրով Լիաննա Մկրտչյանի կողմից 10.000 ՀՀ դրամ պետական տուրքի նախապես վճարված, սակայն չօգտագործված գումար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 31.07.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի

1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին ատյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան): Այն է՝ երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առնվազն երկու ատյանում լավձ լինելու իրավունք: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի՝ օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը (*լրե՛ս, ի թիվս այլնի, Ժաննա Տերյանն ընդդեմ Վահան Տերյանի և Վահան Տերյանն ընդդեմ Ժաննա Տերյանի թիվ ԵՄԵԿ/0563/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.12.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*լրե՛ս, ի թիվս այլնի, Սուսաննա Արարարի Միրզոյանն ընդդեմ Սուսաննա Միրանի Միրզոյանի թիվ ԱՐԱԿ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը, «Ճաստ Սիլյա» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը, Վարդան Արրահամյանն ընդդեմ «Արդշինքանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքին, բազմիցս փաստել է, որ Հայաստանի

Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է (*լրես՝ «Կոնվերս քանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Քրիստիան Տոնոյանի, Օլասանաս Մեսարոբյանի թիվ ԵԿԿ/2357/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2019 թվականի որոշումը*):

Եվրոպական դատարանը նշել է նաև, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*լրես՝ Dumitru Gheorghe v. Romania գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անհրաժեշտ է համակցության մեջ մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուն վերաբերող իրավական կարգավորումները:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

- 1) չեն պահպանվել նույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները.
- 2) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին.
- 3) մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու մասին.
- 4) բողոք բերող անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է.
- 5) վերաքննիչ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված խախտումները:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով եռօրյա ժամկետում սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը որպես վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքեր է նախատեսել այն դեպքերը, երբ չեն պահպանվել նույն օրենսգրքով վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանն առաջադրված պահանջները, որոնցից է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասում նշված պահանջը, այն է՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու (...) մասին ապացույցները, կամ վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, կամ մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու մասին,

կամ բողոք բերող անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է, կամ վերաքննիչ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդադարձել է նաև վերը նշված դատավարական նորմերի իրավական վերլուծությանը՝ նշելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերով օրենսդիրն ամրագրել է այն բացասական հետևանքները, որոնք կարող են վրա հասնել այն պարագայում, երբ բողոք բերած անձը չի պահպանել վերաքննիչ բողոքի ներկայացման կարգին կամ ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Մինչև նույն ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը բողոք բերող անձին հնարավորություն է տվել օրենքով սահմանված ժամկետում վերացնել վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված խախտումները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել վերաքննիչ դատարան (*Կրեն Ազար և Լևոն Հակոբյաններն ընդդեմ Գուրգեն Բերակչյանի, Կառլեն Մանուկյանի և Ռոբերտ Ավետյանի թիվ ԵԱԲԴ/1414/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.02.2020 թվականի որոշումը*):

Հավելելով վերը նշվածին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու օրենսդրական կարգավորումը նպատակ ունի հնարավորություն տալ վերաքննիչ բողոք բերած անձին օրենքով սահմանված ժամկետում վերացնելու ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման մեջ նշված խախտումները և բողոքը կրկին ներկայացնելու նաև առանց այդ խախտումների:

Նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև կարևորելով իրավական որոշակիության սկզբունքի պահպանումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթով սահմանելով, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված խախտումները, ըստ էության վերաքննիչ դատարանի համար պարտականություն է նախատեսել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելիս դրանում **նշելու բողոքում թույլ տրված բոլոր խախտումները**: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նման պարտականության առկայությունը բացառում է վերաքննիչ դատարանի կողմից առաջին անգամ վերաքննիչ բողոքը վերադարձնել՝ նշելով այն ներկայացրած անձի կողմից ընդամենը մեկ խախտում թույլ տված լինելու մասին՝ այն պարագայում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացնելիս թույլ են տրվել մեկից ավելի խախտումներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման պարտականություն նախատեսելն ինքնանպատակ չէ. տվյալ կարգավորումը նպատակ է հետապնդում խուսափելու դատարանի մատչելիության իրավունքը և իրավական որոշակիության սկզբունքը խաթարելուց, որպիսի վտանգը կարող է առաջանալ այն դեպքում, երբ արդարադատությունը պատշաճ իրականացվելու փոխարեն անձի համար խոչընդոտներ ստեղծվեն իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը հասնելու համար:

Ընդ որում, օրենսդիրը ոչ բոլոր դեպքերում է վերաքննիչ բողոք ներկայացրած անձին հնարավորություն տալիս վերացնելու բողոքում թույլ տված խախտումները և այն կրկին ներկայացնելու՝ սահմանելով, որ միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելու պայմաններում է հնարավոր բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշման ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով եռօրյա ժամկետում սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելը:

Վճռաբեկ դատարանի վերը նշված մոտեցումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքը պահպանված է համարվում այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի (*Կրեն Գայանե*

Վարդանյանն ընդդեմ Վարդան և Միշա Վարդանյանների ու մյուսների թիվ ԱՐԴ/0062/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքն անհրաժեշտ է մեկնաբանել Կոնվենցիայի նախաբանի յուրի ներքո, որն ի թիվս այնի, իրավունքի գերակայությունն ամրագրում է որպես Պայմանավորվող պետությունների ընդհանուր ժառանգության մաս: Իրավունքի գերակայության հիմնարար հայեցակետերից է **իրավական որոշակիության սկզբունքը**, որը inter alia պահանջում է, որպեսզի դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի (տե՛ս Բրունսդենկոն ընդդեմ Ռումինիայի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը, գանձար թիվ 28342/95, կետ 61):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը 10.03.2020 թվականին վճիռ է կայացրել Ալբերտ Մկրտչյանի իրավահաջորդ Վեներա Մկրտչյանի հայցը մերժելու մասին: Նշված վճիռն ղեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Լիաննա Մկրտչյանը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.07.2020 թվականի որոշմամբ Լիաննա Մկրտչյանի բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է բացառապես այն պատճառաբանությամբ, որ վերաքննիչ բողոքն ստորագրված չէ, և տրվել է 15-օրյա ժամկետ նշված խախտումը վերացնելու ու վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Լիաննա Մկրտչյանը, շտկելով այդ խախտումը, կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի 31.07.2020 թվականի որոշմամբ առանց նոր ժամկետ սահմանելու վերադարձվել է արդեն այն պատճառաբանությամբ, որ բողոքը բերվել է դրա համար սահմանված ժամկետը լրանալուց հետո և չի պարունակում այդ ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, ու վերաքննիչ բողոքին կցված չէ պետական տուրքը վճարելու վերաբերյալ ապացույց:

Ինչպես արդեն իսկ վերը նշվեց, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով որպես վերաքննիչ բողոքը վերադարձնելու ինքնուրույն հիմք է նախատեսել պետական տուրքը վճարելու մասին ապացույցը վերաքննիչ բողոքին չկցելը, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ վերաքննիչ բողոքը սահմանված ժամկետը լրանալուց հետո բերված լինելը, երբ բողոքը չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն:

Տվյալ դեպքում Լիաննա Մկրտչյանի կողմից առաջին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքը ներկայացված է եղել ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասում նշված պահանջի խախտմամբ, այնպես էլ առկա է եղել նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու ինքնուրույն հիմքը՝ վերաքննիչ բողոքը բերված է եղել սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բողոքը չի պարունակել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործով Լիաննա Մկրտչյանը, ստանալով Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 01.07.2020 թվականի որոշումը, որով **առաջին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է** բացառապես **այն ստորագրված չլինելու հիմքով**, ըստ էության, համոզված է եղել, որ ստացել է որոշակի, հաստատուն և կասկած չհարուցող որոշում՝ կապված իր իրավունքների ու պարտականությունների հետ, և հետագայում իր վարքագիծը համապատասխանեցնելով այդ որոշմանը՝ վերացրել է Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 01.07.2020 թվականի որոշմամբ արձանագրված միակ խախտումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ Վերաքննիչ դատարանի կողմից 31.07.2020 թվականին կայացված որոշման մեջ նշված խախտումները, իրոք, առկա են եղել որոշում կայացնելիս, որպիսի փաստը Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում գործում առկա փաստաթղթերի հետազոտմամբ, սակայն այդ խախտումներն առկա են եղել նաև առաջին անգամ վերաքննիչ բողոք ներկայացնելիս, որոնց մասին, Վերաքննիչ դատարանն իր 01.07.2020 թվականի որոշման մեջ չի նշել՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ մասը, ոչ իրավաչափորեն է կրկին վերադարձրել Լիաննա Մկրտչյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը՝ վերջինիս զրկելով Դատարանի վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից, միաժամանակ սահմանափակելով նրա՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը: Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել այնպիսի դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 31.07.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.07.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ	ՎԴ/7104/05/15 2021թ.
Քաղաքացիական գործ թիվ	ՎԴ/7104/05/15	
Նախագահող դատավոր՝	Ն. Կարապետյան	
Դատավորներ՝	Ա. Մխիթարյան Ն. Մարգարյան	

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի փետրվարի 26-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ Նելլի Միքայելյանի հայցի ընդդեմ ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի (այսուհետ՝ Նոտար)՝ գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.07.2019 թվականի որոշման դեմ Նելլի Միքայելյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարամոթյունը

Դիմելով դատարան՝ Նելլի Միքայելյանը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Նոտարի կողմից կատարված նոտարական գործողությունները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) 29.12.2015 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի հայցադիմումը վերահասցեագրվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.01.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2017 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.01.2017 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Գործի նոր քննության ընթացքում դիմելով դատարան՝ Նելլի Միքայելյանը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Նոտարի կողմից կատարված նոտարական գործողությունները և անվավեր ճանաչել Նոտարի կողմից կեղծ փաստաթղթերով, խաբեությամբ 26.07.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և նույն օրը տրված սեփականության իրավունքի վկայականը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքունյան) (այսուհետ՝ Դատարան) 07.02.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.07.2019 թվականի որոշմամբ Նոտարի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 07.02.2019 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նելլի Միքայելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը հասխարել է ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրք) 130.1-րդ հոդվածը և 132-րդ հոդվածի 4-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի սակայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Դատարանի 07.02.2019 թվականի վճիռը պատճառաբանված չէ՝ իրականությանը չի համապատասխանում և անհիմն է, քանի որ տվյալ վճռի պատճառաբանական մասը համապատասխանում է Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետով ներկայացվող պահանջներին, իսկ վճիռը կայացվել է ՀՀ Սահմանադրության և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.07.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 07.02.2019 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դատարանը 07.02.2019 թվականին վճիռ է կայացրել Նելլի Միքայելյանի հայցը բավարարելու մասին: Նշված վճռի պատճառաբանական մասը պարունակում է՝

- գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

- եզրահանգում կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք Դատարանը վերաբերելի է համարել.

- ապացուցման ենթակա փաստերը՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի շարադրմամբ, և նշելով, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը և որ իրավական նորմի հիման վրա.

- Դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ.

- եզրահանգում՝ Նելլի Միքայելյանի պահանջի հիմնավորվածության վերաբերյալ.

- գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ պատճառաբանությունը (**հատոր 4-րդ, գ.թ. 45-57**).

2) Դատարանի 07.02.2019 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Նոտարը՝ իր բողոքում որպես Դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի

խախտման հիմք չնշելով Դատարանի վճռի պատճառաբանական մաս չունենալը (**հատոր 5-րդ, գ.թ. 6-15**).

3) Վերաքննիչ դատարանը 31.07.2019 թվականին որոշում է կայացրել Նոտարի վերաքննիչ բողոքը բավարարելու, Դատարանի 07.02.2019 թվականի վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ Դատարանի 07.02.2019 թվականի վճիռը չունի պատճառաբանական մաս (**հատոր 7-րդ, գ.թ. 165-171**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի խմատով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել Նախկին օրենսգրքի 130.1-րդ հոդվածի և 132-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դատական ակտի պարզաբանական մաս չունենալու հիմքով անվերապահ բեկանելու պայմաններին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտը բեկանում է նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատական ակտը չունի պատճառաբանական մաս:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե առկա են նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ վերաքննիչ բողոքի յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննելը մրցակցության սկզբունքի դրսևորում է քաղաքացիական դատավարությունում: Վերաքննիչ դատարանը կաշկանդված է բողոքաբերի կողմից մատնանշված բողոքի հիմքերով և հիմնավորումներով և չի կարող քննության առարկա դարձնել դատարանի թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք չեն ներկայացվել վերաքննիչ բողոքում: Ընդ որում, վերաքննության սահմանները նաև ենթադրում են, որ վերաքննիչ դատարանն անդրադառնում է միայն բողոքի այն հիմքերին և հիմնավորումներին, որոնց վերաբերյալ փաստարկները ներկայացվել են առաջին ատյանի դատարանում, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքաբերը գրկված է եղել դրանք

ներկայացնելու հնարավորությունից (տե՛ս «Հ.Վ.Մ. Միլի Ֆուր» ՄՊԸ-ն ընդդեմ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0219/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2018 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ բողոքարկման ինստիտուտի միջոցով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը կկրի գուտ ձևական բնույթ, եթե վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում կայացնի բողոքը մերժելու մասին՝ առանց գնահատման արժանացնելու բողոքում ներկայացված յուրաքանչյուր հիմք և, ըստ այդմ, անձին գրկելով բողոքում բարձրացված յուրաքանչյուր հիմքի կապակցությամբ վերադաս դատարանի եզրահանգումը ստանալու իրավունքից (տե՛ս Վարդան Աթայանն ընդդեմ Մանվել Տեր-Առաքելյանի, երրորդ անձ «Ռեզոնանս» լրատվական գործակալության թիվ ԵԿԴ/1320/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը Վարդանուշ Բեմանյանը, Շալիկո, Նստու և Նոնա Պարսնյաններն ընդդեմ Վաչագան Հակոբյանի գործով կայացված որոշմամբ գտել է, որ սահմանափակ վերաքննության պայմաններում վերաքննության փուլում՝

1. վերանայման օբյեկտը պետք է լինի ստորադաս դատարանի կողմից կայացված և բողոքարկվող դատական ակտը, այլ ոչ գործն ընդհանրապես:

2. բողոքարկվող դատական ակտը պետք է վերանայվի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

3. վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և դրանց հիմնավորումներին՝ քննարկման առարկա դարձնելով դրանցից յուրաքանչյուրը և կատարելով եզրահանգում դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև հավելել, որ վերաքննության սահմանների վերաբերյալ վերը նշված ընդհանուր կանոններին զուգահեռ օրենսդիրը նախատեսել է նաև որոշ բացառություններ: Այսպես.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի և 365-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները հիմք ընդունելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում առկա է 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, որի հիման վրա վերաքննիչ դատարանը բեկանում է բողոքարկվող դատական ակտը (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերի), վերաքննիչ դատարանը չի առաջնորդվում ընդհանուր կանոնով և վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերը չի քննում, այլ անդրադառնում է միայն վերաքննիչ բողոքում տեղ գտած՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված համապատասխան հիմքին, որի հիման վրա բեկանել է դատական ակտը: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման դեպքերում վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին անդրադառնալու ընդհանուր կանոնն այլևս չի գործում:

2. ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդրի կողմից նախատեսվել է մեկ այլ բացառություն ևս, որը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ և 379-րդ հոդվածի 1-ին մասերի կարգավորումներից: Մասնավորապես՝ եթե առկա են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը, ապա վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով: Այսինքն՝ անդրադառնալով միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքին, որի հիման վրա բեկանում է դատական ակտը, վերաքննիչ դատարանը մյուս հիմքերին այլևս չի անդրադառնում: Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վկայակոչված կարգավորման ուժով վերաքննիչ դատարանը ոչ միայն չի անդրադառնում վերաքննիչ բողոքի մյուս հիմքերին և հիմնավորումներին, այլև չի սահմանափակվում բողոքի հիմքերով և հիմնավորումներով, և անկախ այն բանից՝ բողոքում տեղ է գտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, թե՛ ոչ, վերաքննիչ դատարանը բեկանում է բողոքարկվող դատական ակտը:

3. ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ վերաքննիչ դատարանի կողմից բողոքի բոլոր հիմքերին անդրադառնալու կանոնից բացառություն է նաև այն դեպքը, երբ բողոք բերած անձը բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը չի հայտնել առաջին ատյանի դատարանում՝ միաժամանակ գրկված չլինելով նման դիրքորոշում հայտնելու հնարավորությունից: Ուստի, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ նման իրավիճակում վերաքննիչ դատարանը ոչ թե իրավասու է չանդրադառնալու, այլ պարտավոր է չանդրադառնալ վերաքննիչ բողոքի այնպիսի հիմքերի, ի հիմնավորումն որոնց բողոք բերած անձը հայտնում է այնպիսի դիրքորոշում, որը կարող էր հայտնել, սակայն չի հայտնել առաջին ատյանի դատարանում (*լրեն՝ Վարդանուշ Բեժանյանը, Շալիկո, Նստու և Նոնա Պարանյաններն ընդդեմ՝ Վաչագան Հակոբյանի թիվ ԼՊ/0188/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.05.2020 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վերոշարադրյալ իրավանորմերը և իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված՝ դատական ակտի պատճառաբանական մաս չունենալու հանգամանքը նույն հոդվածի 3-րդ մասով օրենսդիրը դասել է դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի շարքին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն իրավիճակում, երբ դատական ակտը չունի պատճառաբանական մաս, վերաքննիչ դատարանը ոչ միայն չի անդրադառնում վերաքննիչ բողոքի մյուս հիմքերին և հիմնավորումներին, այլև չի սահմանափակվում բողոքի հիմքերով և հիմնավորումներով, և անկախ այն բանից՝ բողոքում տեղ է գտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, թե՛ ոչ, վերաքննիչ դատարանը բեկանում է բողոքարկվող դատական ակտը:

Անդրադառնալով դատարանի վճիռը որպես պատճառաբանական մաս չունեցող գնահատելու պայմաններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախկին օրենսգրքի 130.1-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի՝

- 1) գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.
- 2) եզրահանգում կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը վերաբերելի է համարում.
- 3) ապացուցման կարիք չունեցող փաստերը՝ նշելով, թե նույն օրենսգրքի 52-րդ հոդվածի որ մասի հիման վրա և ինչ հիմքով է գործին մասնակցող անձն ազատվում տվյալ փաստի ապացուցման պարտականությունից.
- 4) ապացուցման ենթակա փաստերը՝
 - ա. շարադրելով ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստը,
 - բ. նշելով, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը և որ իրավական նորմի հիման վրա,
 - գ. առաջին ատյանի դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ՝ գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար գործին մասնակցող անձանց ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը՝ նույն օրենսգրքի 51 և 53 հոդվածներին համապատասխան.
 - 5) եզրահանգում՝ գործին մասնակցող անձի ներկայացրած ապացույցն անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող համարելու դեպքում՝

ա. հղում կատարելով այն իրավանորմերին, որոնց հիման վրա ապացույցը ճանաչվել է անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող,

բ. շարադրելով այն փաստերը, որոնց հիման վրա դատարանը հանգել է նման եզրահանգման.

6) եզրահանգում՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմնավորվածության վերաբերյալ.

7) գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր մի շարք վճիռներում ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտելով որպես անձի արդար դատական քննության իրավունքի խախտում, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանների կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ դատական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած պատճառաբանություններ կողմերի լաված լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հրապարակային հսկողություն ապահովելու նպատակով, սակայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի ներկայացրած բոլոր փաստարկներին: Ըստ այդմ, այն հարցը, թե դատարանը պատշաճորեն կատարել է, արդյոք, դատական ակտը պատճառաբանելու իր պարտականությունը, կարող է պարզվել միայն յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո (*տե՛ս, օրինակ, Մայրոն ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի 06.09.2005 թվականի վճիռը, 89-րդ կետ, Գարսիա Ռուիզոն ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 21.01.1999 թվականի վճիռը, 26-րդ կետ*):

ՀՀ սահմանադրական դատարանը 09.04.2007 թվականի թիվ ՄՂՈ-690 որոշմամբ իրավական դիրքորոշումն է արտահայտել՝ նշելով, որ պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար:

Վերը վկայակոչված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանի վճիռը պետք է պարտադիր կազմված լինի նաև պատճառաբանական մասից: Ընդ որում, օրենսդիրը նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետում բովանդակային առումով սահմանել է այն պարտադիր պահանջները, որոնց պետք է համապատասխանի վճռի պատճառաբանական մասը: Այսինքն՝ միայն այդ պահանջները պահպանված լինելու պայմաններում կարող է առաջին ատյանի դատարանի վճիռը համարվել պատճառաբանված, քանի որ միայն այդ դեպքում կարող են վճռից երևալ փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե որևէ վճիռ ամբողջությամբ չի համապատասխանում վերը նշված պարտադիր պայմաններին, այդ թվում նաև՝ դատարանն ընդհանրապես չի կատարել վճռի պատճառաբանական մասը կազմելիս օրենսդրի կողմից իր վրա դրված պարտականությունները, ապա միայն նման վճիռը կարող է գնահատվել որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով չպատճառաբանված՝ պատճառաբանական մաս չունեցող:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը 07.02.2019 թվականին վճիռ է կայացրել Նելլի Միքայելյանի հայցը բավարարելու մասին: Նշված վճռի պատճառաբանական մասը պարունակում է՝

- գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

- եզրահանգում կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի և Եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք Դատարանը վերաբերելի է համարել.

- ապացուցման ենթակա փաստերը՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի շարադրմամբ, և նշելով, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը և որ իրավական նորմի հիման վրա.

- Դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ.

- եզրահանգում՝ Նեյլի Միքայելյանի պահանջի հիմնավորվածության վերաբերյալ.

- գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ պատճառաբանությունը:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Նոտարը՝ իր բողոքում որպես Դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտման հիմք չնշելով Դատարանի վճիռը պատճառաբանական մաս չունենալը:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «դատական ակտի իրավական վերլուծությունների մասը բովանդակում է միայն հղումներ իրավական նորմերին՝ առանց մատնանշելու, թե հատկապես որ ապացույցներն են ընկել Դատավորի ներքին համոզմունքի ձևավորման, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը որոշելու հիմքում: Այսինքն՝ դատական ակտի պատճառաբանական մասը կազմված է միայն իրավական նորմերից, չկան Դատարանի ինքնուրույն վերլուծությունները, ուստի դատական ակտը չի կարող գնահատվել որպես պատճառաբանված», 31.07.2019 թվականին որոշում է կայացրել Նոտարի վերաքննիչ բողոքը բավարարելու, և Դատարանի 07.02.2019 թվականի վճիռը բեկանելու ու գործը նոր քննության ուղարկելու մասին՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի կարգավորումը: Դրանից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում նշված հիմքերին և հիմնավորումներին:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների և եզրահանգումների իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք չեն բխում Դատարանի 07.02.2019 թվականի վճռի բովանդակությունից, քանի որ վկայակոչված վճռի պատճառաբանական մասը պարունակում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, եզրահանգում կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի և Եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք Դատարանը վերաբերելի է համարել, ապացուցման ենթակա փաստերը՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի շարադրմամբ, և նշմամբ այն մասին, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը և որ իրավական նորմի հիման վրա, Դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ, եզրահանգում՝ Նեյլի Միքայելյանի պահանջի հիմնավորվածության վերաբերյալ և գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ պատճառաբանությունը, որի պայմաններում վճիռը չի կարող գնահատվել որպես չպատճառաբանված՝ պատճառաբանական մաս չունեցող:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն ամբողջությամբ

բեկանելու և գործը վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ Դատարանի 07.02.2019 թվականի որոշման դեմ Նունե Սարգսյանի վերաքննիչ բողոքը քննելու նպատակով:

5. Վճռաբեկ դատարանի պարունատաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.07.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/7104/05/15 քաղաքացիական գործով 26.02.2021
թվականին կայացված որոշման պատճառաբանական մասի մի մասի վերաբերյալ

26.02.2021 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչա-
կան պալատը (այսուհետ՝ նաև Վճռաբեկ դատարան), 2021 թվականի փետրվարի 26-ին
գրավոր ընթացակարգով քննելով Նելլի Միքայելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ
քաղաքացիական դատարանի 31.07.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ Նելլի Միքայել-
յանի հայցի ընդդեմ ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Մարգարյանի
(այսուհետ՝ Նոտար) գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, ըստ օրենքի ժառան-
գության իրավունքի վկայագիրը և սեփականության վկայականն անվավեր ճանաչելու
պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամաս-
նությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-
կան դատարանի 31.07.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղա-
քացիական դատարան՝ նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս,
համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական մասի մի մասի վերաբեր-
յալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավար-
վելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ
մասերով, շարադրում են իմ հատուկ կարծիքն այդ մասի վերաբերյալ:

Թիվ ՎԴ/7104/05/15 քաղաքացիական գործով հայցվոր Նելլի Միքայելյանի բերած
վճռաբեկ բողոքի կապակցությամբ Վճռաբեկ դատարան է ստացվել թիվ ՎԴ/7104/05/15
քաղաքացիական գործը և հատուկ համակարգչային ծրագրի միջոցով բաշխվել է Հայաս-
տանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի
դատավոր Գոռ Հակոբյանիս:

Վճռաբեկ դատարանի 22.01.2020 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի բերած
վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ, և որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը գրավոր
ընթացակարգով քննելու ու դրա վերաբերյալ որոշում կայացնելու մասին:

Իմ՝ որպես զեկուցող դատավորի կողմից կազմվել է Վճռաբեկ դատարանի որոշման
նախագիծ, որը տրամադրվել է Վճռաբեկ դատարանի մյուս դատավորներին: Որոշման
նախագիծն ունեցել է հետևյալ բովանդակությունը՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ՎԴ/7104/05/15
2020թ.

Քաղաքացիական գործ թիվ

ՎԴ/7104/05/15

Նախագահող դատավոր՝

Ն. Կարապետյան

Դատավորներ՝

Ա. Մխիթարյան

Ն. Մարգարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի փետրվարի 26-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Նելլի Միքայելյանի հայցի ընդդեմ ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի (այսուհետ՝ Նոտար)՝ գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.07.2019 թվականի որոշման դեմ Նելլի Միքայելյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Նելլի Միքայելյանը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Նոտարի կողմից կատարված նոտարական գործողությունները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) 29.12.2015 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի հայցադիմումը վերահասցեագրվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.01.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2017 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.01.2017 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Գործի նոր քննության ընթացքում դիմելով դատարան՝ Նելլի Միքայելյանը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Նոտարի կողմից կատարված նոտարական գործողությունները և անվավեր ճանաչել Նոտարի կողմից կեղծ փաստաթղթերով, խաբեությամբ 26.07.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և նույն օրը տրված սեփականության իրավունքի վկայականը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 07.02.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.07.2019 թվականի որոշմամբ Նոտարի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 07.02.2019 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նելլի Միքայելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 130.1-րդ հոդվածը և 132-րդ հոդվածի 4-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Դատարանի 07.02.2019 թվականի վճիռը պատճառաբանված չէ՝ իրականությանը չի համապատասխանում և անհիմն է, քանի որ տվյալ վճռի պատճառաբանական մասը համապատասխանում է Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետով ներկայացվող պահանջներին, իսկ վճիռը կայացվել է ՀՀ Սահմանադրության և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.07.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 07.02.2019 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դատարանը 07.02.2019 թվականին վճիռ է կայացրել Նելլի Միքայելյանի հայրը բավարարելու մասին: Նշված վճռի պատճառաբանական մասը պարունակում է՝

- գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

- եզրահանգում կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք Դատարանը վերաբերելի է համարել.

- ապացուցման ենթակա փաստերը՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի շարադրմամբ, և նշելով, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը և որ իրավական նորմի հիման վրա.

- Դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ.

- եզրահանգում՝ Նելլի Միքայելյանի պահանջի հիմնավորվածության վերաբերյալ.

- գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ պատճառաբանությունը (**հատոր 4-րդ, գ.թ. 45-57**).

2) Դատարանի 07.02.2019 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Նոտարը՝ իր բողոքում որպես Դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտման հիմք չնշելով Դատարանի վճռի պատճառաբանական մաս չունենալը (**հատոր 5-րդ, գ.թ. 6-15**).

3) Վերաքննիչ դատարանը 31.07.2019 թվականին որոշում է կայացրել Նոտարի վերաքննիչ բողոքը բավարարելու, Դատարանի 07.02.2019 թվականի վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ Դատարանի 07.02.2019 թվականի վճիռը չունի պատճառաբանական մաս (**հատոր 7-րդ, գ.թ. 165-171**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել

Նախկին օրենսգրքի 130.1-րդ հոդվածի և 132-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Նույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդարառնալ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դատական ակտի պարճատարանական մաս չունենալու հիմքով անվերապահ բեկանելու պայմաններին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը պարտավոր է անդարառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտը բեկանում է նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատական ակտը չունի պատճառաբանական մաս:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե առկա են նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, **9-րդ** և 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ վերաքննիչ բողոքի յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննելը մրցակցության սկզբունքի դրսևորում է քաղաքացիական դատավարությունում: Վերաքննիչ դատարանը կաշկանդված է բողոքաբերի կողմից մատնանշված բողոքի հիմքերով և հիմնավորումներով և չի կարող քննության առարկա դարձնել դատարանի թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք չեն ներկայացվել վերաքննիչ բողոքում: Ընդ որում, վերաքննության սահմանները նաև ենթադրում են, որ վերաքննիչ դատարանն անդարառնում է միայն բողոքի այն հիմքերին և հիմնավորումներին, որոնց վերաբերյալ փաստարկները ներկայացվել են առաջին ատյանի դատարանում, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքաբերը գրկված է եղել դրանք ներկայացնելու հնարավորությունից (յրեն «Հ.Մ. Միլի Ֆուր» ՄՊԸ-ն ընդդեմ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0219/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2018 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ բողոքարկման ինստիտուտի միջոցով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը կկրի զուտ ձևական բնույթ, եթե վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում կայացնի բողոքը մերժելու մասին՝ առանց գնահատման արժանացնելու բողոքում ներկայացված յուրաքանչյուր հիմք և, ըստ այդմ, անձին գրկելով բողոքում բարձրացված յուրաքանչյուր հիմքի կապակցությամբ վերադաս դատարանի եզրահանգումը ստանալու իրավունքից (յրեն Վարդան Աթայանն ընդդեմ Մանվել Տեր-Առաքելյանի, երրորդ անձ «Ռեզոնանս» լրատվական գործակալության թիվ ԵԿԴ/1320/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը *Վարդանուշ Բեժանյանը, Շալիկո, Նստու և Նոնա Պարանյաններն ընդդեմ Վաչագան Հակոբյանի* գործով կայացված որոշմամբ գտել է, որ որ սահմանափակ վերաքննության պայմաններում վերաքննության փուլում՝

1. վերանայման օբյեկտը պետք է լինի ստորադաս դատարանի կողմից կայացված և բողոքարկվող դատական ակտը, այլ ոչ գործն ընդհանրապես:

2. բողոքարկվող դատական ակտը պետք է վերանայվի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

3. վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և դրանց հիմնավորումներին՝ քննարկման առարկա դարձնելով դրանցից յուրաքանչյուրը և կատարելով եզրահանգում դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև հավելել, որ վերաքննության սահմանների վերաբերյալ վերը նշված ընդհանուր կանոններին զուգահեռ օրենսդիրը նախատեսել է նաև որոշ բացառություններ: Այսպես.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի և 365-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները հիմք ընդունելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում առկա է 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, որի հիման վրա վերաքննիչ դատարանը բեկանում է բողոքարկվող դատական ակտը (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերի), վերաքննիչ դատարանը չի առաջնորդվում ընդհանուր կանոնով և վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերը չի քննում, այլ անդրադառնում է միայն վերաքննիչ բողոքում տեղ գտած՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված համապատասխան հիմքին, որի հիման վրա բեկանել է դատական ակտը: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման դեպքերում վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին անդրադառնալու ընդհանուր կանոնն այլևս չի գործում:

2. ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդրի կողմից նախատեսվել է մեկ այլ բացառություն ևս, որը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ և 379-րդ հոդվածի 1-ին մասերի կարգավորումներից: Մասնավորապես՝ եթե առկա են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը, ապա վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով: Այսինքն՝ անդրադառնալով միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքին, որի հիման վրա բեկանում է դատական ակտը, վերաքննիչ դատարանը մյուս հիմքերին այլևս չի անդրադառնում: Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վկայակոչված կարգավորման ուժով վերաքննիչ դատարանը ոչ միայն չի անդրադառնում վերաքննիչ բողոքի մյուս հիմքերին և հիմնավորումներին, այլև չի սահմանափակվում բողոքի հիմքերով և հիմնավորումներով, և անկախ այն բանից՝ բողոքում տեղ է գտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, թե ոչ, վերաքննիչ դատարանը բեկանում է բողոքարկվող դատական ակտը:

3. ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ վերաքննիչ դատարանի կողմից բողոքի բոլոր հիմքերին անդրադառնալու կանոնից բացառություն է նաև այն դեպքը, երբ բողոք բերած անձը բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը չի հայտնել առաջին աստիճանի դատարանում՝ միաժամանակ գրկված չլինելով նման դիրքորոշում հայտնելու հնարավորությունից: Ուստի, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ նման իրավիճակում վերաքննիչ դատարանը ոչ թե իրավասու է չանդրադառնալու, այլ պարտավոր է չանդրադառնալ վերաքննիչ բողոքի այնպիսի հիմքերի, ի հիմնավորումն որոնց բողոք բերած անձը հայտնում է այնպիսի դիրքորոշում, որը կարող էր հայտնել, սակայն չի հայտնել առաջին աստիճանի դատարանում (յրենս *Վարդանուշ Բեժանյանը, Շալիկո, Նստու և Նոնա Պարանյաններն ընդդեմ Վաչագան Հակոբյանի* թիվ ԼԴ/0188/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.05.2020 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոշարադրյալ իրավանորմերը և իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված՝ դատական ակտի պատճառաբանական մաս չունենալու հանգամանքը նույն հոդվածի 3-րդ մասով օրենսդիրը դասել է դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի շարքին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն իրավիճակում, երբ դատական ակտը չունի պատճառաբանական մաս, վերաքննիչ դատարանը ոչ միայն չի անդրադարձնում վերաքննիչ բողոքի մյուս հիմքերին և հիմնավորումներին, այլև չի սահմանափակվում բողոքի հիմքերով և հիմնավորումներով, և անկախ այն բանից՝ բողոքում տեղ է գտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, թե՛ ոչ, վերաքննիչ դատարանը բեկանում է բողոքարկվող դատական ակտը:

Անդրադառնալով դատարանի վճիռը որպես պատճառաբանական մաս չունեցող գնահատելու պայմաններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախկին օրենսգրքի 130.1-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի՝

1) գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

2) եզրահանգում կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը վերաբերելի է համարում.

3) ապացուցման կարիք չունեցող փաստերը՝ նշելով, թե նույն օրենսգրքի 52-րդ հոդվածի որ մասի հիման վրա և ինչ հիմքով է գործին մասնակցող անձն ազատվում տվյալ փաստի ապացուցման պարտականությունից.

4) ապացուցման ենթակա փաստերը՝

ա. շարադրելով ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստը,

բ. նշելով, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը և որ իրավական նորմի հիման վրա,

գ. առաջին ատյանի դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ՝ գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար գործին մասնակցող անձանց ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը՝ նույն օրենսգրքի 51 և 53 հոդվածներին համապատասխան.

5) եզրահանգում՝ գործին մասնակցող անձի ներկայացրած ապացույցն անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող համարելու դեպքում՝

ա. հղում կատարելով այն իրավանորմերին, որոնց հիման վրա ապացույցը ճանաչվել է անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող,

բ. շարադրելով այն փաստերը, որոնց հիման վրա դատարանը հանգել է նման եզրահանգման.

6) եզրահանգում՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմնավորվածության վերաբերյալ.

7) գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր մի շարք վճիռներում ներպետական դատարանների կողմից կայացված

որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտելով որպես անձի արդար դատական քննության իրավունքի խախտում, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանների կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ դատական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած պատճառաբանությունները կողմերի լաված լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հրապարակային հսկողություն ապահովելու նպատակով, սակայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի ներկայացրած բոլոր փաստարկներին: Ըստ այդմ, այն հարցը, թե դատարանը պատշաճորեն կատարել է, արդյոք, դատական ակտը պատճառաբանելու իր պարտականությունը, կարող է պարզվել միայն յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո (*լոնս, օրինակ, Մայրվն ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի 06.09.2005 թվականի վճիռը, 89-րդ կետ, Գարսիա Իռուիզն ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 21.01.1999 թվականի վճիռը, 26-րդ կետ*):

ՀՀ սահմանադրական դատարանը 09.04.2007 թվականի թիվ ՍԴՈ-690 որոշմամբ իրավական դիրքորոշումն է արտահայտել՝ նշելով, որ պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար:

Վերը վկայակոչված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանի վճիռը պետք է պարտադիր կազմված լինի նաև պատճառաբանական մասից: Ընդ որում, օրենսդիրը բովանդակային առումով սահմանել է այն պարտադիր պահանջները, որոնց պետք է համապատասխանի վճռի պատճառաբանական մասը, այն է՝ ունենա նշում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի, կիրառելի իրավունքի վերաբերյալ եզրահանգման, ապացուցման կարիք չունեցող և ապացուցման ենթակա փաստերի մասին, նշում գործին մասնակցող անձի ներկայացրած ապացույցն անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող համարելու դեպքում՝ դրա վերաբերյալ եզրահանգման, նշում գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմնավորվածության վերաբերյալ եզրահանգման մասին և պատճառաբանություն գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին:

Միևնույն ժամանակ օրենսդիրը Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետով վճռի պատճառաբանական մասը կազմելիս դատարանի վրա լրացուցիչ պարտականություններ է դրել՝

- կիրառելի իրավունքի վերաբերյալ եզրահանգում կատարելիս վճռի այդ մասում վկայակոչել միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերը, Հայաստանի անընդհատության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք դատարանը համարում է վերաբերելի.

- ապացուցման կարիք չունեցող փաստերը նշելիս նշել նաև, թե նույն օրենսգրքի 52-րդ հոդվածի որ մասի հիման վրա և ինչ հիմքով է գործին մասնակցող անձն ազատվում տվյալ փաստի ապացուցման պարտականությունից.

- ապացուցման ենթակա փաստերը նշելիս շարադրել ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստը, նշել, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը և որ իրավական նորմի հիման վրա, դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ՝ գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար գործին մասնակցող անձանց ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը՝ նույն օրենսգրքի 51 և 53 հոդվածներին համապատասխան.

- գործին մասնակցող անձի ներկայացրած ապացույցն անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող համարելու վերաբերյալ եզրահանգումը նշելիս

հղում կատարել այն իրավանորմերին, որոնց հիման վրա ապացույցը ճանաչվել է անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող, շարադրել այն փաստերը, որոնց հիման վրա դատարանը հանգել է նման եզրահանգման:

Այսինքն՝ միայն Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը պահպանված լինելու պայմաններում կարող է առաջին ատյանի դատարանի վճիռը համարվել պատճառաբանված, քանի որ միայն նման կառուցվածք ունենալու դեպքում կարող են այդ վճիռից երևալ փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե որևէ վճիռ գործի հանգամանքներից ելնելով չի համապատասխանում վերը նշված պարտադիր պայմաններին կամ մասնակիորեն է համապատասխանում, այդ թվում նաև՝ որոշակի դեպքերում դատարանը չի կատարել վճիռի պատճառաբանական մասը կազմելիս օրենսդրի կողմից իր վրա դրված լրացուցիչ պարտականությունները կամ մասնակիորեն է կատարել, ապա նման վճիռը ենթակա է գնահատման որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով չպատճառաբանված՝ պատճառաբանական մաս չունեցող, և ոչ թե՛ որպես թերի պատճառաբանված, քանի որ միայն այդ պարտադիր պայմանների նշումը և լրացուցիչ պարտականությունների ամբողջական կատարումը կարող է վկայել վճիռը պատճառաբանված (պատճառաբանական մասը կազմված) լինելու մասին:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը 07.02.2019 թվականին վճիռ է կայացրել Նելլի Միքայելյանի հայցը բավարարելու մասին: Նշված վճիռի պատճառաբանական մասը պարունակում է՝

- գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

- եզրահանգում կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք Դատարանը վերաբերելի է համարել.

- ապացուցման ենթակա փաստերը՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի շարադրմամբ, և նշելով, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը և որ իրավական նորմի հիման վրա.

- Դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ.

- եզրահանգում՝ Նելլի Միքայելյանի պահանջի հիմնավորվածության վերաբերյալ.

- գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ պատճառաբանությունը:

Նշված վճիռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Նոտարը՝ իր բողոքում որպես Դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտման հիմք չնշելով Դատարանի վճիռը պատճառաբանական մաս չունենալը:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «դատական ակտի իրավական վերլուծությունների մասը բովանդակում է միայն հղումներ իրավական նորմերին՝ առանց մատնանշելու, թե հատկապես որ ապացույցներն են ընկել Դատավորի ներքին համոզմունքի ձևավորման, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը որոշելու հիմքում: Այսինքն՝ դատական ակտի պատճառաբանական մասը կազմված է միայն իրավական նորմերից, չկան Դատարանի ինքնուրույն վերլուծությունները, ուստի դատական ակտը չի կարող գնահատվել որպես պատճառաբանված», 31.07.2019 թվականին որոշում է կայացրել Նոտարի վերաքննիչ բողոքը բավարարելու, և Դատարանի 07.02.2019 թվականի վճիռը քնկանելու ու գործը նոր քննության ուղարկելու մասին՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի կարգավորումը: Դրանից ելնելով՝

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում նշված հիմքերին և հիմնավորումներին:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների և եզրահանգումների իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք չեն բխում Դատարանի 07.02.2019 թվականի վճռի բովանդակությունից, քանի որ վկայակոչված վճռի պատճառաբանական մասը պարունակում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, եզրահանգում կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք Դատարանը վերաբերելի է համարել, ապացուցման ենթակա փաստերը՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի շարադրմամբ, և նշմամբ այն մասին, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը և որ իրավական նորմի հիման վրա, Դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ, եզրահանգում՝ Նելլի Միքայելյանի պահանջի հիմնավորվածության վերաբերյալ և գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ պատճառաբանությունը, որի պայմաններում այն չի կարող գնահատվել որպես չպատճառաբանված՝ պատճառաբանական մաս չունեցող:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ Դատարանի 07.02.2019 թվականի որոշման դեմ Նունե Սարգսյանի վերաքննիչ բողոքը քննելու նպատակով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.07.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող Ռ. ՀԱԿՈՐՅԱՆ

Զեկուցող Գ. ՀԱԿՈՐՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆ

Մ. ԿՐՄԵՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Է. ՍԵՂՐԱԿՅԱՆ

Ե. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ»:

Ինչպես արդեն իսկ նշեցի վերը, իմ կողմից կազմված Վճռաբեկ դատարանի որոշման նախագիծը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի համաձայն, տրամադրվել է Վճռաբեկ դատարանի մյուս դատավորներին: Վերջիններս, ծանոթանալով որոշման նախագծին, օգտվել են նույն հոդվածով իրենց վերապահված իրավունքից ու այդ նախագծի վերաբերյալ ներկայացրել են դիտողություններ և առաջարկություններ, որոնք իմ կողմից չեն ընդունվել, ու որոշման նախագիծն իմ կողմից չի լրամշակվել:

Իմ կողմից կազմված որոշման նախագիծը, կրկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածով սահմանված կարգի համաձայն, ներկայացրել եմ քվեարկության, որի արդյունքում այն չի ընդունվել: Նույն հոդվածով սահմանված հերթական պահանջի պահպանմամբ որոշման նոր նախագիծ է կազմվել դեմ քվեարկած դատավորների կազմում ընդգրկված՝ դեմ քվեարկած դատավորների կողմից որոշված դատավորի կողմից, ում կազմած որոշման նախագիծը քվեարկության արդյունքով Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից ընդունվել է. դեմ եմ քվեարկել միայն ես:

Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից ընդունված նոր որոշման բովանդակությունը, բացառությամբ իմ կողմից կազմված որոշման նախագծի պատճառաբանական մասի ստորև նշվելիք մասերի, ամբողջությամբ նույնական է իմ կողմից կազմված որոշման նախագծի բովանդակությանը: Տարբերությունը կայանում է միայն նրանում, որ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից ընդունված նոր որոշման պատճառաբանական մասում, մի դեպքում, ընդհանրապես տեղ չեն գտել, իսկ մյուս դեպքում, որոշակի խմբագրական փոփոխության են ենթարկվել իմ կողմից կազմված որոշման նախագծի պատճառաբանական մասի հետևյալ մասերը՝

«Ընդ որում, օրենսդիրը բովանդակային առումով սահմանել է այն պարպրադիր պահանջները, որոնց պետք է համապատասխանի վճռի պարճառաբանական մասը, այն է՝ ոճնեա նշում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի, կիրառելի իրավունքի վերաբերյալ եզրահանգման, սպացուցման կարիք չունեցող և սպացուցման ենթակա փաստերի մասին, նշում գործին մասնակցող անձի ներկայացրած սպացույցն անթոյլարելի, ոչ վերաբերելի կամ սպացուցողական ուժ չունեցող համարելու դեպքում՝ դրա

վերաբերյալ եզրահանգման, նշում գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմնավորվածության վերաբերյալ եզրահանգման մասին և պարճատարանություն գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին:

Միևնույն ժամանակ օրենսդիրը Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետով վճռի պարճատարանական մասը կազմելիս դատարանի վրա լրացուցիչ պարզականություններ է դրել՝

- կիրառելի իրավունքի վերաբերյալ եզրահանգում կատարելիս վճռի այդ մասում վկայակոչել միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք դատարանը համարում է վերաբերելի:

- ապացուցման կարիք չունեցող փաստերը նշելիս նշել նաև, թե նույն օրենսգրքի 52-րդ հոդվածի որ մասի հիման վրա և ինչ հիմքով է գործին մասնակցող անձն ազարվում տվյալ փաստի ապացուցման պարզականությունից:

- ապացուցման ենթակա փաստերը նշելիս շարադրել ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստը, նշել, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարզականությունը և որ իրավական նորմի հիման վրա, դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար գործին մասնակցող անձանց ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը՝ նույն օրենսգրքի 51 և 53 հոդվածներին համապարասխանաբար:

- գործին մասնակցող անձի ներկայացրած ապացույցն անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող համարելու վերաբերյալ եզրահանգումը նշելիս հղում կատարել այն իրավանորմերին, որոնց հիման վրա ապացույցը ճանաչվել է անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող, շարադրել այն փաստերը, որոնց հիման վրա դատարանը հանգել է նման եզրահանգման:

Այսինքն՝ միայն Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը պահպանված լինելու պայմաններում կարող է առաջին արյանի դատարանի վճիռը համարվել պարճատարանակա, քանի որ միայն նման կառուցվածք ունենալու դեպքում կարող են այդ վճռից երևալ փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ եթե որևէ վճիռ գործի հանգամանքներից ելնելով չի համապարասխանում վերը նշված պարզադիր պայմաններին կամ մասնակիորեն է համապարասխանում, այդ թվում նաև՝ որոշակի դեպքերում դատարանը չի կատարել վճռի պարճատարանական մասը կազմելիս օրենսդրի կողմից իր վրա դրված լրացուցիչ պարզականությունները կամ մասնակիորեն է կատարել, ապա նման վճիռը ենթակա է գնահատման որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով չպարճատարանակա՝ պարճատարանական մաս չունեցող, և ոչ թե՛ որպես թերի պարճատարանակա, քանի որ միայն այդ պարզադիր պայմանների նշումը և լրացուցիչ պարզականությունների ամբողջական կատարումը կարող է վկայել վճիռը պարճատարանակա (պարճատարանական մասը կազմված) լինելու մասին»:

Դրա փոխարեն Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից ընդունված նոր որոշման այդ մասն ունի հետևյալ բովանդակությունը՝

«Ընդ որում, օրենսդիրը նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետում բովանդակային առումով սահմանել է այն պարզադիր պահանջները, որոնց պետք է համապարասխանի վճռի պարճատարանական մասը: Այսինքն՝ միայն այդ պահանջները պահպանված լինելու պայմաններում կարող է առաջին արյանի դատարանի վճիռը համարվել պարճատարանակա, քանի որ միայն այդ դեպքում կարող են վճռից երևալ փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ եթե որևէ վճիռ ամբողջությամբ չի համապարասխանում վերը նշված պարզադիր պայմաններին, այդ թվում նաև՝ դատարանն

ընդհանրապես չի կատարել վճռի պարճառաբանական մասը կազմելիս օրենսդրի կողմից իր վրա դրված պարտականությունները, սպա միայն նման վճիռը կարող է գնահատվել որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով չպարճառաբանված պարճառաբանական մաս չունեցող»:

Նշված մասերի համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնությունը, համաձայն լինելով իմ կողմից կազմված որոշման նախագծում արտահայտված այն դիրքորոշումների հետ, որ «*օրենսդիրը նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ կետում բովանդակային առումով սահմանել է այն պարտադիր պահանջները, որոնց պետք է համապատասխանի վճռի պարճառաբանական մասը, և միայն այդ պահանջները պահպանված լինելու պայմաններում կարող է առաջին արյանի դատարանի վճիռը համարվել պարճառաբանված, քանի որ միայն այդ դեպքում կարող են վճռից երևալ փաստերի հաստատման, սպացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները*», այնուամենայնիվ եզրահանգել է, որ «*եթե որևէ վճիռ առէրողությամբ չի համապատասխանում վերը նշված պարտադիր պայմաններին, այդ թվում նաև դատարանն ընդհանրապես չի կատարել վճռի պարճառաբանական մասը կազմելիս օրենսդրի կողմից իր վրա դրված պարտականությունները, սպա միայն նման վճիռը կարող է գնահատվել որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով չպարճառաբանված պարճառաբանական մաս չունեցող*»:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնությունը, ըստ էության, չի համաձայնվել իմ կողմից կազմված որոշման նախագծում արտահայտված այն դիրքորոշման հետ, որ վճիռը ենթակա է գնահատման որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով չպատճառաբանված՝ պատճառաբանական մաս չունեցող նաև այն դեպքերում, երբ վճիռը ոչ թե ամբողջությամբ, այլ նաև մասնակիորեն է համապատասխանում վերը նշված պարտադիր պայմաններին, սակայն գործի հանգամանքներից ելնելով՝ պետք է ամբողջությամբ համապատասխաներ, կամ դատարանը ոչ թե ընդհանրապես, այլ մասնակիորեն է կատարել վճռի պատճառաբանական մասը կազմելիս օրենսդրի կողմից իր վրա դրված լրացուցիչ պարտականությունները, սակայն գործի հանգամանքներից ելնելով՝ պետք է ամբողջությամբ կատարեր, որի դեպքում *հայրնում են իմ հայրուկ կարծիքն այն մասին, որ նման պայմաններում վճիռը ենթակա է գնահատման ոչ թե որպես թերի պարճառաբանված, այլ՝ չպարճառաբանված, քանի որ գործի հանգամանքներից ելնելով՝ միայն այդ պարտադիր պայմանների նշումը և գործի հանգամանքներից ելնելով՝ որոշ դեպքերում լրացուցիչ պարտականությունների ամբողջական կատարումը կարող է վկայել վճիռը պարճառաբանված (պարճառաբանական մասը կազմված) լինելու մասին:*

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. Հակոբյան

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1535/02/11	2021թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԱՆԴ/1535/02/11	
Նախագահող դատավոր	Ն. Կարապետյան	
Դատավորներ	Ա. Մխիթարյան Գ. Խանդանյան	

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
Ջեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 24-ին գրավոր ընթացակարգով քննելով Հայկ, Վարդուհի և Մելսիդա Դավթյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.03.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արմեն Եղիազարյանի ընդդեմ Հայրապետ Դավթյանի իրավահաջորդներ Հայկ, Վարդուհի և Մելսիդա Դավթյանների՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Արմեն Եղիազարյանը պահանջել է Հայրապետ Դավթյանի իրավահաջորդներից բռնագանձել 12.650.000 ՀՀ դրամ և նշված գումարի վրա հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ս. Երիցյան) (այսուհետ՝ Դատարան) 22.09.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.03.2021 թվականի որոշմամբ Հայրապետ Դավթյանի իրավահաջորդներ Հայկ, Վարդուհի և Մելսիդա Դավթյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 22.09.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք են ներկայացրել Հայկ, Վարդուհի և Մելսիդա Դավթյանները (ներկայացուցիչ Տիգրան Աթանեսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Եղիազարյանը (ներկայացուցիչ Սյուզաննա Սարգսյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականին ընդունված օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասը, որը չպետք է կիրառել, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Բողոք բերած անձինք նշված պնդումները պատճառարանել են հետևյալ փաստարկներով.

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների պահանջները՝ Դատարանը սույն գործի լուծման համար պետք է պարզեր հետևյալ հարցը՝ արդյո՞ք հայցվոր Արմեն Եղիազարյանը Հայրապետ Դավթյանի մահից հետո վեցամսյա ժամկետում ներկայացրել է իր պահանջը նրա ժառանգներին կամ ժառանգության բացման վայրի նոտարին: Դատարանի վճռի եզրափակիչ մասում պետք է հստակ նշեր, թե բողոք բերող անձանց ժառանգությունը ստացած որ գույքի վրա է տարածվում հայցապահանջը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածները կրում են հրամայական-համապարտադիր բնույթ և ենթակա են կիրառման՝ անկախ կողմերի դիրքորոշումից:

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականին ընդունված օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասը, որը սույն գործով կիրառելի չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության 2018 թվականի օրենսգիրքը չի նախատեսում ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականին ընդունված օրենսգրքի դրույթների կիրառում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում գործի քննության ընթացքում: Եթե անգամ այն ենթակա լիներ կիրառման, ապա կիրառելի կլիներ միայն այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում հայցվոր կողմը հայտներ դիրքորոշում առ այն, որ պահանջներ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների պահանջները, իսկ պատասխանող կողմը որևէ կերպ չարձագանքեր դրան:

Տվյալ դեպքում հայցվորն առաջին ատյանի դատարանում դիրքորոշում չի հայտնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների առնչությամբ, գործի փաստերում բացակայում է որևէ տվյալ այն մասին, թե արդյո՞ք վիճելի իրավահարաբերության շրջանակներում առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների պահանջների կատարում, թե ոչ: Հետևաբար, առաջին ատյանի դատարանը պարտավոր էր կիրառել նշված հոդվածների պահանջները, իսկ պատասխանողի կողմից դիրքորոշում արտահայտելը որևէ նշանակություն չպետք է ունենար դատարանի համար: Նույն մոտեցումը պետք է գործի նաև վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանների վրա:

Սույն գործով ներկայացված վերաքննիչ բողոքը չի կարող դիտարկվել որպես դիրքորոշում, որը չի հայտնվել առաջին ատյանի դատարանում: Հակառակ մոտեցման դեպքում կատարվի, որ կողմը փաստացի զրկվում է իր շահերին վերաբերող դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքից: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականին ընդունված օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի կամ ՀՀ քաղաքացիական դատավարության 2018 թվականի օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառման համար պետք է գործի նախապայման, այն է՝ նշված նորմը կիրառելի չէ այն դեպքերում, երբ գործի փաստերի նկատմամբ կիրառելի է համապարտադիր հրամայական իրավական նորմ, և այն չի կիրառվել՝ անկախ առաջին ատյանի դատարանում այդ հարցի վերաբերյալ դիրքորոշում արտահայտված լինել-չլինելուց:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 19.03.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ ամբողջությամբ մերժել Արմեն Եղիազարյանի հայցը կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատրասխանի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում կիրառման ենթակա էր ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականին ընդունված օրենսգրքը, հետևաբար այն ենթակա էր կիրառման նաև Վերաքննիչ դատարանում:

Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ1/0188/02/16 քաղաքացիական գործով 05.05.2020 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ վերաքննիչ դատարանը ոչ թե իրավասու է չանդրադառնալու, այլ պարտավոր է չանդրադառնալ վերաքննիչ բողոքի այնպիսի հիմքերի, ի հիմնավորումն որոնց բողոք բերած անձը հայտնում է այնպիսի դիրքորոշում, որը կարող էր հայտնել, սակայն չի հայտնել առաջին ատյանի դատարանում:

Համապատասխանող Հայկ Դավթյանը, ներկա լինելով դատական նիստին, չի առարկել հայցապահանջի դեմ: Բողոքաբերներն առաջին ատյանի դատարանում չեն հայտնել այն դիրքորոշումը, որը ներկայացրել են վերաքննիչ բողոքում, ինչպես նաև վճռաբեկ բողոքում բացակայում է որևէ փաստարկ այն մասին, որ բողոքաբերները զրկված են եղել իրենց դիրքորոշումն առաջին ատյանի դատարանում հայտնելու հնարավորությունից:

Եթե որևէ կողմ դատարանում չի հայտնում իր դիրքորոշումը որևէ հարցի վերաբերյալ, ապա դատարանը չի կարող այդ դիրքորոշման նկատմամբ կիրառելի օրենսդրությունն ինքնուրույն կիրառել:

Եթե նույնիսկ վերաքննիչ բողոքի փաստարկները քննարկման առարկա լինեին, չէին կարող հիմք հանդիսանալ դատական ակտի բեկանման և հայցի մերժման համար, քանի որ վճռաբեկ բողոքում նշված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածները կիրառելի չեն սույն գործի փաստերի նկատմամբ: Այսպես, վերոնշյալ իրավանորմերը վերաբերում են այնպիսի պահանջներին, որոնք մինչ ժառանգատուի մահը ներկայացված չեն եղել նրան և ներկայացվում են անմիջապես ժառանգներին:

Վերաքննիչ բողոքում վկայակոչված թիվ ԵԱԲԴ/2190/02/15 քաղաքացիական գործի և սույն գործի փաստական կազմն էականորեն տարբերվում են, քանի որ այդ գործով հայցվորը ժառանգատուին մինչ վերջինիս մահը պահանջ չի ներկայացրել:

Վճռաբեկ դատարանը, թիվ ԱԲԱԴ/0416/02/13 քաղաքացիական գործով անդրադառնալով այն դեպքին, երբ ժառանգատուի մահից հետո պահանջ է ներկայացվում նրա ժառանգին, նշել է, որ պահանջը կարող է ներկայացվել ժառանգին ինչպես անմիջակա՝ նորեն, այնպես էլ նրա դեմ հայց հարուցելով, մինչդեռ ժառանգի դեմ սույն պահանջի վերաբերյալ առանձին հայց չի կարող հարուցվել, եթե ժառանգատուի դեմ արդեն իսկ հայց է հարուցվել, այլ պետք է կատարվի դատավարական իրավահաջորդություն:

Տվյալ դեպքում հայցվորն իր պահանջը ներկայացրել է ժառանգատու Հայրապետ Դավթյանին 09.11.2011 թվականին՝ դատական կարգով հայց հարուցելու միջոցով:

Պատասխանողը մահացել է 15.11.2011 թվականին, այնուհետև սույն գործով տեղի է ունեցել դատավարական իրավահաջորդություն, որի նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականին ընդունված օրենսգրքի 36-րդ հոդվածի դրույթները, այլ ոչ թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածները: Միաժամանակ, բողոքաբերները դատական նիստերի ընթացքում հայտնել են, որ տեղեկացված են եղել հայցվորի նկատմամբ ժառանգատուի ունեցած պարտքի մասին ու ընդունում են, որ այն պետք է կատարվի, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքն անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոքի պատասխան ներկայացրած անձը պահանջել է մերժել վճռաբեկ բողոքն ամբողջությամբ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արմեն Եղիազարյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Հայրապետ Դավթյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, որը Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.11.2011 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ **(հատոր 1, գ.թ. 1-51)**:

2) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 21.01.2019 թվականին որոշում է կայացրել քաղաքացիական գործը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին **(հատոր 1, գ.թ. 54-55)**:

3) Հայրապետ Դավթյանի իրավահաջորդներ Հայկ, Վարդուհի և Մելսիդա Դավթյանները Դատարանի 22.09.2020 թվականի վճռի դեմ 21.10.2020 թվականին վերաքննիչ բողոք են ներկայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան այն հիմքով, որ Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, և որպես հիմնավորումներ նշել են. Դատարանը սույն գործի լուծման համար պետք է պարզեր հետևյալ հարցը՝ արդյո՞ք հայցվորը Հայրապետ Դավթյանի մահից հետո վեցամսյա ժամկետում ներկայացրել է իր պահանջը նրա ժառանգներին կամ ժառանգության բացման վայրի նոտարին: Դատարանի վճռի եզրակալիչ մասում պետք է հստակ նշեր, թե բողոք բերող անձանց ժառանգություն ստացած որ գույքի վրա է տարածվում գումարի բռնագանձման պահանջը: Հայցվորը օրենքով սահմանված ժամկետում որևէ պահանջ Հայրապետ Դավթյանի ժառանգներին չի ներկայացրել, որի պայմաններում կորցրել է իր պահանջի իրավունքը, հետևաբար ներկայացված հայցադիմումը ենթակա էր մերժման **(հատոր 2, գ.թ. 116-122)**:

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված հիմքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր: Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը, հարկ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե արդյո՞ք վերաքննիչ բողոքը չի կարող քննվել վերաքննիչ դատարանում այն հիմնավորմամբ, որ կողմը բողոքում շոշափվող հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը չի հայտնել առաջին արյանի դատարանում, եթե բողոքը ներկայացվել է առաջին արյանի դատարանի կողմից գործի փաստերի նկարմամբ կիրառելի իրավական կարգավորումները սխալ որոշված լինելու հիմքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքում վիճարկվում է նաև սույն գործի քննության շրջանակներում ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականին ընդունված օրենսգրքի կարգավորումների կիրառության իրավաչափությունն ընդհանրապես՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում առաջնահերթորեն անդրադառնալ կիրառելի դատավարական օրենսդրությունը որոշելու հարցին:

1. ՀՀ քաղաքացիական դատավարության 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած օրենսգրքի 439-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ մասի համաձայն՝ մինչև սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների, դիմումների և բողոքների վարույթ ընդունելու հարցը լուծելիս կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով կիրառելի դատավարական օրենսդրությունը որոշելու հարցին, նշել է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով ամրագրված են նորմատիվ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության կանոնները: Ըստ այդմ, ընդհանուր կանոնի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա: Այսինքն՝ նորմատիվ իրավական ակտը փաստացի իրավական հետևանքներ է առաջացնում դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած կամ գործող հարաբերությունների համար: Այս ընդհանուր կանոնից կարող է նախատեսվել բացառություն միայն Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով: Օրենսդիրը միաժամանակ սահմանել է, որ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մասի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը գործող հարաբերությունների վրա, եթե օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Այսինքն՝ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտը չի կարող իրավական ազդեցություն ունենալ ուժը կորցնելուց հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Նման իրավակարգավորումը նպատակ ունի պաշտպանելու հասարակական հարաբերությունների այն մասնակիցներին, ովքեր արդեն իսկ մտել են որոշակի իրավահարաբերությունների մեջ մինչև նոր իրավական ակտի ընդունումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններս իրենց վարքագիծն արդեն իսկ համապատասխանեցրել են ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իմպերատիվ պահանջներին:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը որդեգրել է այն սկզբունքը, որ իրավական ակտերը կարգավորում են հասարակական հարաբերություններն այնքան ժամանակ, քանի դեռ չեն կորցրել իրենց իրավաբանական ուժը: Իրավաբանական ուժի մեջ գտնվելու հանգամանքով է պայմանավորված իրավական ակտի՝ հասարակական հարաբերությունների վրա ներազդելու հնարավորությունը: Այն ժամանակ, երբ նման ակտը կորցնում է իր իրավաբանական ուժը, դադարում է կարգավորել հասարակական հարաբերություններ, և այդ հարաբերությունների հնարավոր մասնակիցները դադարում են ունենալ իմպերատիվ պարտականություն՝ իրենց վարքագիծը համապատասխանեցնելու արդեն իսկ ուժը կորցրած իրավական ակտի պահանջներին: Միաժամանակ, օրենսդիրը թույլատրել է ընդհանուր կանոնից շեղում միայն այն դեպքում, երբ օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով անմիջականորեն այլ բան է նախատեսվել: Նման պայմաններում ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտը կամ դրա մի մասը կարող է իրավական ազդեցություն ունենալ դրա՝ ուժը կորցնելուց հետո գործող իրավահարաբերությունների նկատմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ուժը կորցրած է ճանաչվել 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի: Միևնույն ժամանակ, 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Անցումային և եզրափակիչ դրույթներ»

վերտառությանը 439-րդ հոդվածով սահմանվել են ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի կիրառության երկու դեպքեր՝

- 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերի քննությունը,

- և մինչև նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների, դիմումների և բողոքների վարույթ ընդունելու հարցը քննելը:

Վերագրյալի հաշվառմամբ, համադրելով նորմատիվ ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնները 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի անցումային և եզրափակիչ դրույթների հետ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 09.04.2018 թվականի դրությամբ առաջին ատյանի դատարանում քննվող գործերի նկատմամբ ենթակա են կիրառման 17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը, սակայն այդ գործերով 09.04.2018 թվականից հետո վերաքննիչ բողոքարկում իրականացված լինելու պայմաններում վերաքննիչ վարույթի նկատմամբ պետք է կիրառվեն 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը (*տե՛ս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կումիրեն ընդդեմ «Ամիգո Արմեն» ՍՊԸ-ի թիվ ՄԿՁ/0037/04/16 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.02.2019 թվականի որոշումը*):

Տվյալ դեպքում բողոքաբերները վերաքննիչ բողոքը ներկայացրել են 21.10.2020 թվականին, հետևաբար վերաքննիչ վարույթի նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության 09.02.2018 թվականի օրենսգրքի կարգավորումները:

Մինչնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանի կողմից 17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածը վկայակոչվել է, որպես առաջին ատյանի դատարանում գործի քննության պահին գործող նորմ, սակայն վերաքննիչ վարույթի նկատմամբ կիրառվել են գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կանոնները: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ այն դեպքերում, երբ վերաքննիչ վարույթը կարգավորող նորմը պահանջում է համապատասխան վարքագծի (դատավարական գործողության) դրսևորում առաջին ատյանի դատարանում, և առաջին ատյանի դատարանում գործի քննության նկատմամբ կիրառելի են նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության կանոնները, Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշակիությունը պահանջում է, որ վերաքննիչ դատարանը հաշվի առնի, թե արդյոք վերաքննիչ վարույթում կիրառվող նորմի պահանջը հասանելի է եղել դատավարության մասնակիցներին, և արդյոք նրանք կարող էին կանխատեսելի վարքագիծ դրսևորել: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով 17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածը և նշելով գործի քննության պահին դրա գործողության հանգամանքը, ըստ էության արտացոլել է տվյալ նորմի պահանջի կանխատեսելիությունը բողոքաբերի համար:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքում բարձրացված իրավական հարցի վերաբերյալ կարգավորում նախատեսված է ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականին ընդունված օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասում, այնպես էլ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասում՝ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի նշված հիմքը գնահատում է գործի ելքի վրա ազդեցություն չունեցող և ստորև անդրադառնում է գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառության հարցին՝ հաշվի առնելով նաև ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականին ընդունված օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները:

2. Անդրադառնալով վճռաբեկ բողոքի քննության համար առաջադրված իրավական հարցին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի աննշտամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ աստիճանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին աստիճանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր քաղաքացիներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը: Ուղղված լինելով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների երաշխավորմանը՝ այդուհանդերձ, օրենսդրի կողմից սահմանված են բողոքարկման իրավունքի իրացման որոշակի պայմաններ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, սակայն այդ սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չհետապնդի իրավաչափ նպատակ, և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն (տե՛ս Իսպիտոլին ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ի 14.03.2000 թվականի վճիռը, կեր 36):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **վերաքննիչ դատարանն անդրադառնում է վերաքննիչ բողոքի հիմքին և դրա հիմնավորումներին, եթե բողոք բերած անձը տվյալ հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնել է առաջին աստիճանի դատարանում գործի քննության ժամանակ:** Բացառություն է այն դեպքը, երբ բողոք բերող անձը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին աստիճանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

Սահմանադրական դատարանը 06.12.2011 թվականի թիվ ՄԴՌ-1004 որոշմամբ անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականի օրենսգրքի

208-րդ հոդվածի 3-րդ մասի³ սահմանադրականության գնահատմանը սահմանափակ վերաքննության ինստիտուտի առանձնահատկությունների տեսանկյունից և արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը պետք է դիտարկել նույն օրենսգրքով սահմանված՝ կողմերի դատավարական պարտականությունների, ինչպես նաև վերաքննիչ բողոքի հիմքերի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման հասկացության համատեքստում: Սահմանադրական դատարանը մասնավորապես նշել է, որ վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող նորմատիվ պահանջները համահունչ են բողոք ներկայացնող կողմի դատավարական իրավունքներին ու պարտականություններին:

Սույն գործի՝ առաջին ատյանի դատարանում քննության նկատմամբ կիրառելի ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականի օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցվորը պարտավոր է, ի թիվս այլնի, հայցադիմումում նշել իր պահանջները, այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները, ինչպես նաև հայցապահանջները հաստատող ապացույցները:

Նույն օրենսգրքի 95-րդ հոդվածը սահմանում է հայցադիմումի պատասխանին ներկայացվող պահանջները, այն է՝ հայցադիմումի պատասխանը, ի թիվս այլնի, պետք է պարունակի հայցում ներկայացված յուրաքանչյուր պահանջն ընդունելու կամ դրա դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին պատասխանողի դիրքորոշումը: Ընդ որում, առարկելու դեպքում պատասխանում, մասնավորապես, պետք է անդրադարձ կատարվի հայցի հիմքում ընկած փաստերին, որոնք նա չի ընդունում, այն փաստերին, որոնք ընկած են առարկությունների հիմքում, և այն ապացույցներին, որոնք հաստատում են այդ փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված, ինչպես նաև պետք է անդրադարձ կատարվի այն հարցին, թե արդյոք հայցվորի ներկայացրած փաստերն էական նշանակություն ունեն գործի լուծման համար:

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունում մրցակցության սկզբունքին համապատասխան հայցվորն ու պատասխանողը կրում են իրենց վկայակոչած փաստերն ապացուցելու պարտականություն:

Վերոնշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ կողմերը կրում են հայցի առարկայի և դրա փաստական հիմքերի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու պարտականություն: Ինչ վերաբերում է հայցի իրավական հիմքին, վիճելի իրավահարաբերությունը որակելուն և դրա նկատմամբ կիրառելի նորմերի ընտրությանը, ապա դատավարության կողմերի համար հայցի իրավական հիմքը մատնանշելու և այդ կապակցությամբ դիրքորոշում արտահայտելու պարտականություն օրենսգրքով սահմանված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականի օրենսգրքի 1498-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս դատավորը (...) դատական քննությունը արդյունավետ իրականացնելու համար կարող է հրավիրել նախնական դատական նիստ (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում մասնավորապես պարզում է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը:

³ Թիվ ՄԴՌ-1004 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականի օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի («Վերաքննիչ բողոքը (կամ դրա մասը) ենթակա է քննության, եթե բողոք բերող անձը զվայս հարցի վերաբերյալ բողոքում արտահայտած իր դիրքորոշումը հայտնել է առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ: Բացառություն է այն դեպքը, երբ բողոք բերող անձը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից») սահմանադրաիրավական բովանդակությունը վերաբերելի է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության 09.02.2018 թվականի 379-րդ հոդվածի 5-րդ մասին, քանի որ նշված իրավանորմերն ունեն համանման բովանդակություն:

Նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս, ի թիվս այլնի, որոշում է նաև տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը:

Նույն օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված՝ գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս (...):

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արձանագրել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու՝ որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլի բովանդակությունը կազմում են գործի հարուցման փուլի ավարտից հետո գործի քննության արդյունավետությունն ապահովելու նպատակով դատարանի և գործին մասնակցող անձանց կողմից իրականացվող նախապատրաստական բնույթի գործողությունները (տե՛ս, օրինակ, *Գագիկ Խաչատրյանն ընդդեմ Բասկ Դիլանչյանի, Անահիտ Բարսայանի, Հռիփսիմե Ավետիսյանի, Հասմիկ Մելիքյանի և Վիկտորյա Հովսեփյանի թիվ ԵԿԿ/4715/02/14 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*): Մասնավորապես, գործը դատաքննության նախապատրաստելու փուլում դատարանի կարևորագույն խնդիրներից մեկն է որոշել վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը, որոնց վերաբերյալ վերջնական եզրահանգումները պետք է արտացոլվեն կայացվող դատական ակտում: Ըստ այդմ, դատարանը կրում է պարտականություն՝ ճիշտ ընտրելու կիրառելի իրավունքը՝ անկախ դրա վերաբերյալ կողմերի դիրքորոշումից: Դատարանը կաշկանդված չէ կողմերի՝ վիճելի իրավահարաբերության որակման և դրա նկատմամբ կիրառելի նորմերի վերաբերյալ դիրքորոշումներով: **Դատարանի խնդիրն է, ի թիվս այլնի, գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա որոշել վիճելի իրավահարաբերության բնույթը և դրա նկատմամբ կիրառելի իրավանորմ(եր):**

Անդրադառնալով վերաքննիչ բողոքի հիմք հանդիսացող դատական սխալի հասկացությանը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը նախատեսում է դատական սխալի՝ որպես վերաքննիչ բողոքի հիմքի հետևյալ դրևստորումները՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում կամ սխալ կիրառում, այն է՝ դատարանը չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր, կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

Վերոգրյալից բխում է, որ կիրառելի իրավունքի սխալ ընտրության վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկներն ուղղված են տվյալ դատական սխալի՝ որպես վերաքննիչ բողոքի հիմքի առկայությունը հիմնավորելուն: Ուստի, դրանք չեն հանդիսանում ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով «դիրքորոշում», որը կարող է արտահայտվել առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ և կանխորոշված է դատավարության կողմերի իրավունքների և պարտականությունների ծավալով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի նկատմամբ.

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ մերժել է պատասխանողի իրավահաջորդների կողմից ներկայացված վերաքննիչ բողոքն այն հիմնավորմամբ, որ բողոքաբերները՝ վերաքննիչ բողոքում բարձրացված հարցերը չեն կարող քննարկման առարկա դառնալ Վերաքննիչ դատարանում, քանի որ բողոքաբերները՝ որպես գործին մասնակցող անձինք, պատշաճ ծանուցված լինելով գործի քննության մասին, որևէ առարկություն չեն ներկայացրել և չեն հայտնել դիրքորոշում՝ վերաքննիչ բողոքում

նշված հարցերի վերաբերյալ, և չեն ներկայացրել որևէ փաստարկ՝ առաջին ատյանի դատարանում նման դիրքորոշում հայտնելու հնարավորությունից զրկված լինելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը, սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, անհրաժեշտ է համարում նշել, որ Դատարանի 22.09.2020 թվականի վճռի դեմ բողոքաբերների ներկայացրած վերաքննիչ բողոքով վիճարկվել է Դատարանի կողմից վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմը չկիրառելու հանգամանքը: Մասնավորապես, վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկները վերաբերում են սույն գործի փաստերի նկատմամբ Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների չկիրառմանը, որի վերաբերյալ բողոքաբերները կարող էին դիրքորոշում արտահայտել բացառապես վճռի կայացումից հետո՝ վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու շրջանակներում:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը՝ դրանում ներկայացված հարցի վերաբերյալ Դատարանում դիրքորոշում արտահայտած չլինելու պատճառաբանությամբ, հաշվի չի առել այն հանգամանքը, որ նշված օրենսդրական սահմանափակումը կիրառելի չէ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքի հիմնավորումները վերաբերում են վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավունքը որոշելու հետ կապված ենթադրյալ դատական սխալին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սխալ կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականի ընդունված օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասը, չի ապահովել ստորադաս դատարանի դատական ակտի վերանայման հնարավորությունը՝ դրանով իսկ խախտելով բողոքաբերների դատական պաշտպանության իրավունքը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքի որևէ հիմքի և հիմնավորման՝ այդ կերպ զրկելով վերաքննիչ բողոք ներկայացրած անձին բողոքում բարձրացված յուրաքանչյուր հիմքի կապակցությամբ վերադաս դատարանի եզրահանգումը ստանալու իրավունքից՝ խախտելով բողոքաբերի՝ իր վերաբերյալ կայացված դատական ակտը վերանայելու իրավունքը:

Վերոգրյալ պատճառաբանությամբ միաժամանակ հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները: Ինչ վերաբերում է պատասխանում վկայակոչված Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԼԴ1/0188/02/16 քաղաքացիական գործով 05.05.2020 թվականի որոշմամբ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետին տրված մեկնաբանությանը, ապա այն կիրառելի չէ սույն գործով, քանի որ երկու գործերի փաստական կազմերը նույնանման չեն⁴:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում Վերաքննիչ դատարանին վերագրվող դատավարական խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները, և վճռաբեկ բողոքի հիմքերը գնահատում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ, նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը ըստ էության չի քննել վերաքննիչ բողոքը, և առկա է վերաքննիչ բողոքի նոր քննության անհրաժեշտություն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն անհրաժեշտ է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

⁴ Թիվ ԼԴ1/0188/02/16 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների շրջանակից՝ վերաքննության օբյեկտ դարձնելով ոչ թե Դատարանի 31.08.2018 թվականի վճիռը բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակում, այլ՝ գործն ընդհանրապես:

5. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.03.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ԵԱՆԴ/1535/02/11 քաղաքացիական
գործով 24.12.2021 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով Հայկ, Վարդուհի և Մելսիդա Դավթյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.03.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արմեն Եղիազարյանի ընդդեմ Հայրապետ Դավթյանի իրավահաջորդներ Հայկ, Վարդուհի և Մելսիդա Դավթյանների՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, 24.12.2021 թվականին որոշել է «Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.03.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր Ս. Անտոնյանս համաձայն չլինելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 24.12.2021 թվականին թիվ ԵԱՆԴ/1535/02/11 քաղաքացիական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը նույն որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Արմեն Եղիազարյանը պահանջել է Հայրապետ Դավթյանի իրավահաջորդներից բռնագանձել 12.650.000 ՀՀ դրամ և նշված գումարի վրա հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ս. Երիցյան) (այսուհետ՝ Դատարան) 22.09.2020 թվականի վճռով հայրը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.03.2021 թվականի որոշմամբ Հայրապետ Դավթյանի իրավահաջորդներ Հայկ, Վարդուհի և Մելսիդա Դավթյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 22.09.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք են ներկայացրել Հայկ, Վարդուհի և Մելսիդա Դավթյանները (ներկայացուցիչ Տիգրան Աթանեսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Եղիազարյանը (ներկայացուցիչ Սյուզաննա Սարգսյան):

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականին ընդունված օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Բողոք բերած անձինք նշված պնդումները պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Հինք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների պահանջները Դատարանը սույն գործի լուծման համար պետք է պարզեր հետևյալ հարցը՝ արդյո՞ք հայցվոր Արմեն Եղիազարյանը Հայրապետ Դավթյանի մահից հետո վեցամսյա ժամկետում ներկայացրել է իր պահանջը նրա ժառանգներին կամ ժառանգության բացման վայրի նոտարին: Դատարանի վճռի եզրակակիչ մասում պետք է հստակ նշեր, թե բողոք բերող անձանց ժառանգություն ստացած որ գույքի վրա է տարածվում հայցապահանջը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածները կրում են հրամայական-համապարտադիր բնույթ և ենթակա են կիրառման՝ անկախ կողմերի դիրքորոշումից:

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականին ընդունված օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասը, որը սույն գործով կիրառելի չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության 2018 թվականի օրենսգիրքը չի նախատեսում ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականին ընդունված օրենսգրքի դրույթների կիրառում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում գործի քննության ընթացքում: Եթե անգամ այն ենթակա լիներ կիրառման, ապա կիրառելի կլիներ միայն այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում հայցվոր կողմը հայտներ դիրքորոշում առ այն, որ պահպանել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների պահանջները, իսկ պատասխանող կողմը որևէ կերպ չարձագանքեր դրան:

Տվյալ դեպքում հայցվորն առաջին ատյանի դատարանում դիրքորոշում չի հայտնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների առնչությամբ, գործի փաստերում բացակայում է որևէ տվյալ այն մասին, թե արդյոք վիճելի իրավահարաբերության շրջանակներում առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների պահանջների կատարում, թե ոչ: Հետևաբար, առաջին ատյանի դատարանը պարտավոր էր կիրառել նշված հոդվածների պահանջները, իսկ պատասխանողի կողմից դիրքորոշում արտահայտելը որևէ նշանակություն չպետք է ունենար դատարանի համար: Նույն մոտեցումը պետք է գործի սակ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանների վրա:

Սույն գործով ներկայացված վերաքննիչ բողոքը չի կարող դիտարկվել որպես դիրքորոշում, որը չի հայտնվել առաջին ատյանի դատարանում: Հակառակ մոտեցման դեպքում կատացվի, որ կողմը փաստացի գրկվում է իր շահերին վերաբերող դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքից: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականին ընդունված օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի կամ ՀՀ քաղաքացիական դատավարության 2018 թվականի օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառման համար պետք է գործի նախապայման, այն է՝ նշված նորմը կիրառելի չէ այն դեպքերում, երբ գործի փաստերի նկատմամբ կիրառելի է համապարտադիր-հրամայական իրավական նորմ, և այն չի կիրառվել՝ անկախ առաջին ատյանի դատարանում այդ հարցի վերաբերյալ դիրքորոշում արտահայտված լինել-չլինելուց:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 19.03.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ ամբողջությամբ մերժել Արմեն Եղիազարյանի հայցը կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ ամբողջ ծավալով՝ նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում կիրառման ենթակա էր ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականին ընդունված օրենսգիրքը, հետևաբար այն ենթակա էր կիրառման նաև Վերաքննիչ դատարանում:

Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ1/0188/02/16 քաղաքացիական գործով 05.05.2020 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ վերաքննիչ դատարանը ոչ թե իրավասու է չանդրադառնալու, այլ պարտավոր է չանդրադառնալ վերաքննիչ

բողոքի այնպիսի հիմքերի, ի հիմնավորումն որոնց բողոք բերած անձը հայտնում է այնպիսի դիրքորոշում, որը կարող էր հայտնել, սակայն չի հայտնել առաջին ատյանի դատարանում:

Համապատասխանող Հայկ Դավթյանը, ներկա լինելով դատական նիստին, չի առարկել հայցապահանջի դեմ: Բողոքաբերներն առաջին ատյանի դատարանում չեն հայտնել այն դիրքորոշումը, որը ներկայացրել են վերաքննիչ բողոքում, ինչպես նաև վճռաբեկ բողոքում բացակայում է որևէ փաստարկ այն մասին, որ բողոքաբերները գրկված են եղել իրենց դիրքորոշումն առաջին ատյանի դատարանում հայտնելու հնարավորությունից:

Եթե որևէ կողմ դատարանում չի հայտնում իր դիրքորոշումը որևէ հարցի վերաբերյալ, ապա դատարանը չի կարող այդ դիրքորոշման նկատմամբ կիրառելի օրենսդրությունն ինքնուրույն կիրառել:

Եթե նույնիսկ վերաքննիչ բողոքի փաստարկները քննարկման առարկա լինեին, չէին կարող հիմք հանդիսանալ դատական ակտի բեկանման և հայցի մերժման համար, քանի որ վճռաբեկ բողոքում նշված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածները կիրառելի չեն սույն գործի փաստերի նկատմամբ: Այսպես, վերոնշյալ իրավանորմերը վերաբերում են այնպիսի պահանջներին, որոնք մինչ ժառանգատուի մահը ներկայացված չեն եղել նրան և ներկայացվում են անմիջապես ժառանգներին:

Վերաքննիչ բողոքում վկայակոչված թիվ ԵԱԲԴ/2190/02/15 քաղաքացիական գործի և սույն գործի փաստական կազմն էականորեն տարբերվում են, քանի որ այդ գործով հայցվորը ժառանգատուին մինչ վերջինիս մահը պահանջ չի ներկայացրել:

Վճռաբեկ դատարանը, թիվ ԱՐԱԴ/0416/02/13 քաղաքացիական գործով անդրադառնալով այն դեպքին, երբ ժառանգատուի մահից հետո պահանջ է ներկայացվում նրա ժառանգին, նշել է, որ պահանջը կարող է ներկայացվել ժառանգին ինչպես անմիջակա-նորեն, այնպես էլ նրա դեմ հայց հարուցելով, մինչդեռ ժառանգի դեմ նույն պահանջի վերաբերյալ առանձին հայց չի կարող հարուցվել, եթե ժառանգատուի դեմ արդեն իսկ հայց է հարուցվել, այլ պետք է կատարվի դատավարական իրավահաջորդություն:

Տվյալ դեպքում հայցվորն իր պահանջը ներկայացրել է ժառանգատու Հայրապետ Դավթյանին 09.11.2011 թվականին՝ դատական կարգով հայց հարուցելու միջոցով:

Պատասխանողը մահացել է 15.11.2011 թվականին, այնուհետև սույն գործով տեղի է ունեցել դատավարական իրավահաջորդություն, որի նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականին ընդունված օրենսգրքի 36-րդ հոդվածի դրույթները, այլ ոչ թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածները: Միաժամանակ, բողոքաբերները դատական նիստերի ընթացքում հայտնել են, որ տեղեկացված են եղել հայցվորի նկատմամբ ժառանգատուի ունեցած պարտքի մասին ու ընդունում են, որ այն պետք է կատարվի, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքն անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոքի պատասխան ներկայացրած անձը պահանջել է մերժել վճռաբեկ բողոքն ամբողջությամբ:

3. Որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճռաբեկ դատարանն սրճանագրել է հետևյալը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արմեն Եղիազարյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Հայրապետ Դավթյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, որը Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.11.2011 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ (հատոր 1, գ.թ. 1-51):

2) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 21.01.2019 թվականին որոշում է կայացրել քաղաքացիական գործը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին (հատոր 1, գ.թ. 54-55):

3) Հայրապետ Դավթյանի իրավահաջորդներ Հայկ, Վարդուհի և Մելսիդա Դավթյանները Դատարանի 22.09.2020 թվականի վճռի դեմ 21.10.2020 թվականին վերաքննիչ

բողոք են ներկայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան այն հիմքով, որ Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, և որպես հիմնավորումներ նշել են. Դատարանը սույն գործի լուծման համար պետք է պարզեր հետևյալ հարցը՝ արդյո՞ք հայցվորը Հայրապետ Դավթյանի մահից հետո վեցամսյա ժամկետում ներկայացրել է իր պահանջը նրա ժառանգներին կամ ժառանգության բացման վայրի նոտարին: Դատարանի վճռի եզրափակիչ մասում պետք է հստակ նշեր, թե բողոք բերող անձանց ժառանգությունը ստացած որ գույքի վրա է տարածվում գումարի բռնագանձման պահանջը: Հայցվորը օրենքով սահմանված ժամկետում որևէ պահանջ Հայրապետ Դավթյանի ժառանգներին չի ներկայացրել, որի պայմաններում կորցրել է իր պահանջի իրավունքը, հետևաբար ներկայացված հայցադիմումը ենթակա էր մերժման (հատոր 2, գ.թ. 116-122):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված հիմքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր: Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը, հարկ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե արդյոք վերաքննիչ բողոքը չի կարող քննվել վերաքննիչ դատարանում այն հիմնավորումներ, որ կողմը բողոքում շոշափվող հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը չի հայտնել առաջին աստիճանի դատարանում, եթե բողոքը ներկայացվել է առաջին աստիճանի դատարանի կողմից գործի փաստերի նկատմամբ կիրառելի իրավական կարգավորումները սխալ որոշված լինելու հիմքով:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ մերժել է պատասխանողի իրավահաջորդների կողմից ներկայացված վերաքննիչ բողոքն այն հիմնավորմամբ, որ բողոքաբերների՝ վերաքննիչ բողոքում բարձրացված հարցերը չեն կարող քննարկման առարկա դառնալ Վերաքննիչ դատարանում, քանի որ բողոքաբերները որպես գործին մասնակցող անձինք, պատշաճ ծանուցված լինելով գործի քննության մասին, որևէ առարկություն չեն ներկայացրել և չեն հայտնել դիրքորոշում՝ վերաքննիչ բողոքում նշված հարցերի վերաբերյալ, և չեն ներկայացրել որևէ փաստարկ՝ առաջին աստիճանի դատարանում նման դիրքորոշում հայտնելու հնարավորությունից զրկված լինելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը, սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, անհրաժեշտ է համարել նշել, որ Դատարանի 22.09.2020 թվականի վճռի դեմ բողոքաբերների ներկայացրած վերաքննիչ բողոքով վիճարկվել է Դատարանի կողմից վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմը չկիրառելու հանգամանքը: Մասնավորապես, վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկները վերաբերում են սույն գործի փաստերի նկատմամբ Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների չկիրառմանը, որի վերաբերյալ բողոքաբերները կարող էին դիրքորոշում արտահայտել բացառապես վճռի կայացումից հետո՝ վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու շրջանակներում:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը՝ դրանում ներկայացված հարցի վերաբերյալ Դատարանում դիրքորոշում արտահայտած չլինելու պատճառաբանությամբ, հաշվի չի առել այն հանգամանքը, որ նշված օրենսդրական սահմանափակումը կիրառելի չէ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքի հիմնավորումները վերաբերում են վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավունքը որոշելու հետ կապված ենթադրյալ դատական սխալին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

Վերաքննիչ դատարանը, սխալ կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականի ընդունված օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասը, չի ապահովել ստորադաս դատարանի դատական ակտի վերանայման հնարավորությունը՝ դրանով իսկ խախտելով բողոքաբերների դատական պաշտպանության իրավունքը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքի որևէ հիմքի և հիմնավորման՝ այդ կերպ գրկելով վերաքննիչ բողոք ներկայացրած անձին բողոքում բարձրացված յուրաքանչյուր հիմքի կապակցությամբ վերադաս դատարանի եզրահանգումը ստանալու իրավունքից՝ խախտելով բողոքաբերի իր վերաբերյալ կայացված դատական ակտը վերանայելու իրավունքը:

Վերոգրյալ պատճառաբանությամբ միաժամանակ հերքվել է վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները: Ինչ վերաբերում է պատասխանում վկայակոչված Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԼԴ-1/0188/02/16 քաղաքացիական գործով 05.05.2020 թվականի որոշմամբ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետին տրված մեկնաբանությանը, ապա այն կիրառելի չէ սույն գործով, քանի որ երկու գործերի փաստական կազմերը նույնանման չեն :

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարել Վերաքննիչ դատարանին վերագրվող դատավարական խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները, և վճռաբեկ բողոքի հիմքերը գնահատել է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ, նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը ըստ էության չի քննել վերաքննիչ բողոքը, և առկա է վերաքննիչ բողոքի նոր քննության անհրաժեշտություն՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործն անհրաժեշտ է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

5. Հարուկ կարծիքը հիմնավորող պատճառաբանությունները

Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ համաձայն չեն, գտնում են, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժվեր հետևյալ պատճառաբանությամբ.

Ընդհանուր առմամբ ընդունելով այն դիրքորոշումը, որ դատարանի կիրառած իրավանորմերի առնչությամբ դատական ակտի բողոքարկումը չի կարող պայմանավորվել այդ հարցի կապակցությամբ դիրքորոշում արտահայտված լինելու հանգամանքով, սակայն յուրաքանչյուր դեպքում վերադաս դատարանը պարտավոր է հաշվի առնել իրավահարաբերության փաստական կազմի վերաբերյալ կողմերի արտահայտած դիրքորոշումներով:

Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները չեն կարող Վերաքննիչ դատարանի թիվ ԵԱՆԴ/1535/02/11 որոշումը բեկանելու հիմք հանդիսանալ, քանի որ գործի նյութերից հետևում է, որ հայցի հարուցման պահին առկա չի եղել ունիվերսալ, համապարփակ իրավահաջորդության իրավական հարց, քանի որ պատասխանողը մահացել է հայցադիմումը դատարանի կողմից վարույթ ընդունելուց հետո: Այսինքն պատասխանողի իրավահաջորդները գործին մասնակից են դարձվել դատավարական իրավահաջորդության հիմքով, որպես պատասխանողի իրավահաջորդներ: Վերաքննիչ բողոքում դրված նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքով բողոք բերելու համար պատասխանողներն առնվազն պետք է կասկածի տակ դնեին դատավարական իրավահաջորդության հարցը և ներկայացնեյին գործի վարույթը կարճելու մասին միջնորդություն քանի որ վերաքննիչ բողոքի հիմքում ընկած իրավանորմերը թույլ են տալիս եզրահանգելու, որ ըստ վերաքննիչ բողոք բերողների հայց հարուցելու պահին պատասխանողը մահացած է եղել:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ վերաքննիչ բողոքի հիմքում դրվել են այնպիսի հանգամանքներ, որոնց վերաբերյալ պատասխանողի իրավահաջորդները մասնակցելով գործի քննությանը և ապացուցման բեռի շրջանակներում չվիճարկելով դատավարական իրավահաջորդության փաստը չէին կարող

վերաքննիչ բողոք ներկայացնել ունիվերսալ իրավահաջորդությունից բխող իրավանորմերի խախտման հիմքով: Ավելին՝ այդ հանգամանքների վերաբերյալ դիրքորոշման ներկայացումը կարող էր բացառել գործի քննությունը ընդհանուր իրավասության դատարանում: Հետևաբար վստահաբար պնդում եմ, որ բողոք ենթակա է մերժման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. Անտոնյան

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0006/16/19 2021թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԱՐԱԴ/0006/16/19
Նախագահող դատավոր՝	Հ. Ենոքյան
Դատավորներ՝	Տ. Նազարյան Գ. Խանդանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող զեկուցող</i>	Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ Ս. ԱՆՏՈՆՅԱՆ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ Մ. ԴՐՄԵՅԱՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ
-------------------------------	---

2021 թվականի մայիսի 14-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ «Ավիակոմպանիա «Պորեդա»» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) դիմումի՝ Ստավրոպոլի շրջանի Միներալնիե Վոդիի քաղաքային դատարանի 12.09.2018 թվականի դատական ակտը ճանաչելու և Հայաստանի Հանրապետությունում կատարման թույլատրելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.02.2020 թվականի որոշման դեմ Լիպարիտ Գրիգորյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է ճանաչել Ստավրոպոլի շրջանի Միներալնիե Վոդիի քաղաքային դատարանի 12.09.2018 թվականի դատական ակտը և թույլատրել դրա կատարումը Հայաստանի Հանրապետությունում:

Արագաճող մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.11.2019 թվականի որոշմամբ դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.02.2020 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը

բավարարվել է՝ Դատարանի 14.11.2019 թվականի որոշումը վերացվել է, և կայացվել է նոր որոշում՝ դիմումը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լիպարիտ Գրիգորյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետը՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 53-րդ և 59-րդ հոդվածները, ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 113-115-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-9-րդ, 66-րդ, 200-րդ, 346-րդ, 353-355-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես և հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՌԴ դատական ակտը չի համապատասխանում 2002 թվականի հոկտեմբերի 7-ին Քիշնևում ընդունված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավահարաբերությունների մասին» կոնվենցիայի 59-րդ հոդվածի «գ» կետով սահմանված և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխում տեղ գտած 354-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին, քանի որ ՌԴ դատարանը դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրեն պատշաճ չի ծանուցել, որի հետևանքով ինքը գրկվել է դատավարությանը մասնակցելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՌԴ դատարանի կողմից տրված տեղեկանքը և դատական ակտում կատարված գրառումը չեն կարող հանդիսանալ վերաբերելի պաշտոնական փաստաթուղթ այն մասին, որ ինքը պատշաճ ծանուցվել է դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ ՌԴ դատական ակտի ճանաչումը և դրա կատարման թույլատվությունը Հայաստանի Հանրապետությունում ենթակա է մերժման, քանի որ ինքը չի մասնակցել դատավարությանն այն պատճառաբանությամբ, որ իրեն կամ իր լիազորված անձին պատշաճ կարգով և ժամանակին չեն հանձնել դատարան ներկայանալու ծանուցագիր:

Վերաքննիչ դատարանի դատական ակտը պատճառաբանված չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.02.2020 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 14.11.2019 թվականի «ՌԴ Ստավրոպոլի տարածաշրջանի Միներալնիե Վոդիի քաղաքային դատարանի դատական ակտը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և հարկադիր կատարումը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վերաքննիչ դատարանը 21.02.2020 թվականին որոշում է կայացրել Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարելու՝ Դատարանի 14.11.2019 թվականի որոշումը վերացնելու և նոր որոշում կայացնելու՝ դիմումը բավարարելու մասին (**հատոր 2-րդ, գ.թ. 105-108**).

2) նշված որոշումը կայացնելուց հետո գործը զեկուցող դատավոր Հարություն Ենոքյանն իր կնիքով չի կնքել որոշման յուրաքանչյուր էջը. միայն որոշման եզրափակիչ մասն է

կնքված բողոքը քննած դատավորներ Հարություն Ենոքյանի, Տարոն Նազարյանի և Գագիկ Խանդանյանի կողմից ու ստորագրված (**հաստք 2-րդ, գ.թ. 105-108**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված դատական ակտի անվերապահ բեկանման հիմք՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից, որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դարական ակտի յուրաքանչյուր էջը կնքված չլինելու պարճատարանությամբ դարական ակտի անվերապահ բեկանման հիմքին՝ անկախ այդ մասին վճռաբեկ բողոքում նշված լինելու հանգամանքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի: Հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: (...)

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածը վերնագրված է հետևյալ կերպ՝ «Առաջին ատյանի դատարանի *եզրափակիչ դարական ակտի դեմ* բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումը»:

Տվյալ դեպքում սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի և 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով հանդիսանում է եզրափակիչ դատական ակտ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման յուրաքանչյուր էջը կնքվում է գործը զեկուցող դատավորի կնիքով, իսկ որոշման եզրափակիչ մասն ստորագրում և կնքում են բողոքը քննած դատավորները:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում գործը զեկուցող դատավորը պարտավոր է վերաքննիչ դատարանի կողմից կայացված եզրափակիչ դատական ակտի յուրաքանչյուր էջը կնքել իր կնիքով, իսկ բողոքը քննած դատավորները, այդ թվում նաև՝ գործը զեկուցող դատավորը, պարտավոր են ստորագրել և կնքել այդ դատական ակտի եզրափակիչ մասը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկության կարգով բողոքի քննության ժամանակ Վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե առկա են նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ **դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատական ակտն ստորագրված կամ կնքված չէ:**

Նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատական ակտն ստորագրված կամ կնքված չէ այն կայացրած դատավորի կողմից, դատական ակտը կայացրել է այն դատավորը, որը տվյալ գործը քննող դատարանի կազմում ընդգրկված չէ, դատական նիստի արձանագրումը կատարվել է այնպիսի թերություններով, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը, դատական ակտը չունի պատճառաբանական մաս, ստորադաս դատարանում առկա է եղել գործի վարույթը կարճելու հիմք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի ցանկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը քննարկվող հոդվածում առանձնացրել է այնպիսի դատավարական սխալներ, որոնք անմիջականորեն կապված են արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նման խախտումների առկայության պայմաններում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, և այն բողոքարկող անձը պարտավոր չէ ապացուցել, որ այդ դատավարական խախտումները հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման: Այդպիսի խախտումների առանձնահատկությունը մյուս դատավարական խախտումների համեմատ կայանում է նրանում, որ դրանք այնքան էական են, որ խաթարում են դատարանի՝ իբրև իրավունքների համապարփակ և արդյունավետ պաշտպանությանը կոչված պետական մարմնի դերն ու նշանակությունը: Նման խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ ու հեղինակավոր և պետք է գնահատվի որպես թույլ տրված խախտման հետևանք:

Գործի քննության ժամանակ կարող են տեղի ունենալ տարբեր բնույթի դատավարական իրավունքի նորմի խախտումներ: Ընդ որում, նման խախտումները հնարավոր է լինեն ինչպես դատավարության մասնակիցների, այնպես էլ դատարանի ոչ իրավաչափ վարքագծի հետևանք, որոնք գործի ելքի վրա ունենում են տարբեր ազդեցություն:

Օրենսդիրը, ՀՀ վճռաբեկ դատարանի համար սահմանելով պարտականություն բողոքարկվող դատական ակտը որպես կանոն վերանայելու միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, միևնույն ժամանակ ընդհանուր կանոնից նախատեսել է ուղղակի բացառություն այն դեպքերի համար, երբ բողոքի քննությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հայտնաբերում է, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասում նշված՝ դատական ակտի անվերապահ բեկանման համապատասխան հիմքը: Այս դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանը, անկախ այդ հիմքի (հիմքերի) և դրա վերաբերյալ հիմնավորումների մասին վճռաբեկ բողոքում նշված լինելու հանգամանքից, պարտավոր է, դուրս գալով վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, անվերապահորեն բեկանել բողոքարկվող դատական ակտը՝ այդ խախտումը համարելով դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որի դեպքում այլևս էական չէ՝ այն հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծմանը, թե՛ ոչ: Ընդ որում, այդպիսի խախտումն օրենսդիրը չի համարել ձևական:

Այդպիսի խախտում է, օրինակ, դատական ակտն ստորագրված կամ կնքված չլինելը, որի դեպքում օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով այն դիտել է որպես դատական ակտի անվերապահ բեկանման հիմք՝ անկախ այդ հիմքի և դրա վերաբերյալ հիմնավորումների մասին վճռաբեկ բողոքում նշված լինելու հանգամանքից:

Այսինքն՝ եթե ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի քննությամբ հայտնաբերում է, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված՝ դատական ակտի անվերապահ բեկանման համապատասխան հիմքը, քանի որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտն ստորագրված կամ կնքված չէ, ապա անկախ այդ հիմքի և դրա վերաբերյալ հիմնավորումների մասին վճռաբեկ բողոքում նշված լինելու հանգամանքից, ՀՀ վճռաբեկ դատարանը

պարտավոր է, դուրս գալով վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, անվերապահորեն բեկանել բողոքարկվող դատական ակտը այդ խախտումը համարելով դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որի դեպքում այլևս էական չէ՝ այն հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծմանը, թե՛ ոչ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 14.11.2019 թվականի որոշմամբ՝ «Ավիակումպանիա «Պոբեդա»» ՍՊԸ-ի դիմումը՝ Ստավրոպոլի շրջանի Միներալնիե Վոդիի քաղաքային դատարանի 12.09.2018 թվականի դատական ակտը ճանաչելու և դրա կատարումը Հայաստանի Հանրապետությունում թույլատրելու մասին, մերժվել է:

Վերաքննիչ դատարանը 21.02.2020 թվականին եզրափակիչ դատական ակտ՝ որոշում է կայացրել Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարելու՝ Դատարանի 14.11.2019 թվականի որոշումը վերացնելու և նոր որոշում կայացնելու՝ դիմումը բավարարելու մասին: Նշված որոշումը կայացնելուց հետո գործը զեկուցող դատավոր Հարություն Ենոքյանի իր կնիքով չի կնքել որոշման յուրաքանչյուր էջը. միայն որոշման եզրափակիչ մասն է կնքված բողոքը քննած դատավորներ Հարություն Ենոքյանի, Տարոն Նազարյանի և Գագիկ Խանդանյանի կողմից ու ստորագրված:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լիպարիտ Գրիգորյանը՝ դրանում որպես բողոք բերելու հիմքեր նշելով Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 53-րդ և 59-րդ հոդվածները, ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 113-115-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-9-րդ, 66-րդ, 200-րդ, 346-րդ և 353-355-րդ հոդվածները խախտված լինելը, ինչպես նաև պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.02.2020 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 14.11.2019 թվականի «ՌԴ Ստավրոպոլի տարածաշրջանի Միներալնիե Վոդիի քաղաքային դատարանի դատական ակտը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և հարկադիր կատարումը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանը:

Այսինքն՝ Լիպարիտ Գրիգորյանը վճռաբեկ բողոքում չի նշել Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված վերը նշված դատավարական իրավունքի նորմի խախտման և Վերաքննիչ դատարանի դատական ակտի անվերապահ բեկանման հիմքի մասին:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առկա է Վերաքննիչ դատարանի դատական ակտի անվերապահ բեկանման հիմք, որը տվյալ դեպքում պայմանավորված է նրանով, որ Վերաքննիչ դատարանի 21.02.2020 թվականի որոշման յուրաքանչյուր էջը գործը զեկուցող դատավոր Հարություն Ենոքյանի իր կնիքով չի կնքել՝ թույլ տալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 7-րդ մասի խախտում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վերը նշված հանգամանքը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը՝ Դատարանի 14.11.2019 թվականի որոշման դեմ Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը քննելու նպատակով:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.02.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ	ԵԱԲԴ/2543/02/16 2021թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԱԲԴ/2543/02/16	
Նախագահող դատավոր՝	Ն. Մարգարյան	
Դատավորներ՝	Ա. Մխիթարյան Ն. Կարապետյան	

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Է. ՄԵԴԻԱԿՅԱՆ

2021 թվականի մայիսի 13-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Երևան համայնքի (այսուհետ՝ Համայնք) ընդդեմ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) գումարի բռնագանձման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Համայնքի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Համայնքը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 1.378.164 ՀՀ դրամ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները մինչև պարտավորության դադարման օրը, ինչպես նաև 28.600 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրք:

Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Շահնազարյան) (այսուհետ՝ Դատարան) 27.04.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.10.2017 թվականի որոշմամբ (նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան, դատավորներ՝ Ա. Հունանյան, Ա. Սկրտչյան) Համայնքի

վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 27.04.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 20.12.2017 թվականի որոշմամբ Համայնքի միջնորդությունը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.10.2017 թվականի որոշման դեմ վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, բավարարվել է, իսկ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.02.2019 թվականի որոշմամբ Դատարանի 27.04.2017 թվականի վճռի դեմ Համայնքի անունից նոր երևան եկած հանգամանքի հիմքով բերված վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.03.2019 թվականի որոշմամբ Դատարանի 27.04.2017 թվականի վճռի դեմ Համայնքի անունից նոր երևան եկած հանգամանքի հիմքով բերված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համայնքը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացել Ընկերության ներկայացուցիչ Ժենյա Ասատրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմք, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Պետական ցուրթի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատարվարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատարվարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ կետը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նոր երևան եկած հանգամանքի հիմքով բողոք ներկայացնելու համար օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատարվարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասով չի նախատեսել բողոքաբերի կողմից պետական տուրք վճարելու պարտավորություն՝ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատարվարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի, որով սահմանված է պետական տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը բողոքին կցելու պահանջ: Այսինքն՝ նոր երևան եկած հանգամանքի հիմքով բողոք ներկայացնելիս պետական տուրքը վճարելու վերաբերյալ ապացույց կցելու պահանջ օրենսդիրը չի նախատեսել, ինչից հետևում է, որ նշված դեպքերում դատական ակտերը բողոքարկելիս պետական տուրքի վճարման պարտավորություն բողոքաբերը չի կրում:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը նոր երևան եկած հանգամանքի հիմքով ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունելության հարցը պետք է լուծեր ՀՀ քաղաքացիական դատարվարության օրենսգրքի 415-427-րդ հոդվածների սահմաններում, ինչը սակայն չի կատարել և արդյունքում կայացրել է սխալ դատական ակտ՝ Համայնքին զրկելով իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքից՝ խախտելով արդարադատության մատչելիության սկզբունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 20.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Տվյալ դեպքում նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտը չի կարող վերանայվել, քանի որ Դատարանն ուսումնասիրել է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը: Հետևաբար Դատարանի 27.04.2017 թվականի վճռի հիմքում ընկած են դատաքննության ընթացքում ներկայացված և բազմակողմանի

հետազոտված բոլոր ապացույցները, իսկ վճռաբեկ բողոքի շրջանակներում հիմնավորված չէ նոր երևան եկած հանգամանքի առկայությունը:

3. *Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները Համայնքի կողմից նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի բողոքարկման ժամանակ պետական տուրքի վճարման գծով արտոնություն չկիրառելու վերաբերյալ կարող են էական նշանակություն ունենալ տվյալ նորմի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետ խախտում, որի առկայությունը հերքվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտը բողոքարկելիս վարչական մարմնին կարող է դրամատորվել պետական տուրքից ազատման ձևով արտոնություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն **օրենքը**, ի թիվս այլնի, **սահմանում է նաև արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները:**

Պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները սահմանվել են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-ին հոդվածով, որոնցից է նաև պետական տուրքի վճարումից ազատումը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում օրենսդիրը սպառիչ թվարկել է այն սուբյեկտների ցանկը, որոնք կոնկրետ հայցերով կամ դիմումներով ազատվում են դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունից:

Այսպես, ի թիվս այլնի, նշված իրավանորմի «թ» կետի համաձայն՝ ոչ առևտրային **կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք** դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հետևյալ դեպքերում.

- գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, վճիռների կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, վճիռների կատարման եղանակը և կարգը փոփոխելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով.

- **երևան եկած նոր հանգամանքների հետևանքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ բողոքներով.**

- դատարանների վճիռներով նշանակված տուգանքների գիշման կամ նվազեցման վերաբերյալ հայցերով.

- դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով, բաց թողնված ժամկետները վերականգնելու, ինչպես նաև հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով.

- տուգանքների գիշումը կամ նվազեցումը մերժելու մասին դատարանների որոշումների դեմ բողոքներով, դատարանների որոշումների դեմ մյուս գանգատներով.

- վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով, բացառությամբ ճանապարհային ոստիկանության կողմից ընդունվածների.

- մշակութային արժեքները ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելիս.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերոգրյալ իրավանորմով սահմանված կարգով մեկնաբանելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետը՝ Վճռաբեկ դատարանն անձանագրում է, որ տվյալ դեպքում օրենսդիրը, նշված իրավանորմում թվարկված դեպքերում, դատարաններում պետական տուրքի վճարումից ազատման ձևով արտոնությունն է սահմանել միայն **ոչ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց** համար: Բացի վերջիններից՝ վկայակոչված իրավանորմում թվարկված դեպքերում որևէ այլ սուբյեկտի արտոնություն չի տրամադրվել: Ընդ որում, **ոչ առևտրային կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից** բացի, այլ սուբյեկտների համար ևս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետում թվարկված դեպքերում արտոնություն սահմանելու նպատակ ունենալու պարագայում օրենսդիրը որևէ կաշկանդվածություն չունի և կարող էր օրենքով ամրագրել այդ կարգավորումը: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետում **ոչ առևտրային կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից** բացի, այլ սուբյեկտների, այդ թվում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների համար, արտոնություն չի սահմանվել: Ավելին, օրենսդրական զարգացումն ընթացել է այն ուղղությամբ, որ պետական մարմինների համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «գ», «ը», «ժա» կետերով նախհնում սահմանված արտոնությունները դեռևս 13.12.2000 թվականի թիվ ՀՕ-123 օրենքով վերացվել են: Այսինքն՝ օրենսդիրը բնավ չի հետապնդել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պետական տուրքից ազատման ձևով արտոնություն տրամադրելու նպատակ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում թվարկված են կոնկրետ սուբյեկտների համար նախատեսված պետական տուրքից ազատման ձևով արտոնություններ, միաժամանակ օրենսդիրը նշված հոդվածում չնշված սուբյեկտների համար նույն օրենքի 31-րդ հոդվածում ամրագրել է առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ սահմանելու հնարավորություն: Մասնավորապես «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված պետական տուրքից ազատման ձևով արտոնությունը կիրառելի է միայն նշված հոդվածում թվարկված սուբյեկտների համար, այսինքն՝ ոչ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց համար, իսկ այդ

հողվածում չթվարկված սուբյեկտները պետական տուրքի գծով արտոնությունից կարող են օգտվել միայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածում նշված մարմինների կողմից համապատասխան որոշումների հիման վրա:

Սույն գործով Դատարանի 27.04.2017 թվականի վճռով հայցը մերժվել է (**հատոր 1-ին, գ.թ. 161-169**):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.10.2017 թվականի որոշմամբ Համայնքի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 27.04.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ (**հատոր 2-րդ, գ.թ. 46-51**):

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 20.12.2017 թվականի որոշմամբ Համայնքի միջնորդությունը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.10.2017 թվականի որոշման դեմ վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, բավարարվել է, իսկ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 75-78**):

Համայնքը Դատարանի 27.04.2017 թվականի վճռի դեմ նոր երևան եկած հանգամանքի հիմքով՝ փոստային ծառայության միջոցով 07.02.2019 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք (**հատոր 3-րդ, գ.թ. 3-13**):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 20.02.2019 թվականի որոշմամբ Համայնքի անունից նոր երևան եկած հանգամանքի հիմքով բերված վերաքննիչ բողոքը վերադարձրել է, և ի թիվս այլ խախտման, նշել է, որ վերաքննիչ բողոքին կից չի ներկայացվել պետական տուրքը վճարելու փաստը հավաստող ապացույցը, չի ներկայացվել միջնորդություն՝ պետական տուրքի վճարման գծով արտոնություն սահմանելու մասին (**հատոր 3-րդ, գ.թ. 15-16**):

Համայնքը Դատարանի 27.04.2017 թվականի վճռի դեմ նոր երևան եկած հանգամանքի հիմքով՝ փոստային ծառայության միջոցով 12.03.2019 թվականին կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք (**հատոր 3-րդ, գ.թ. 41-55**):

Վերաքննիչ դատարանի 20.03.2019 թվականի որոշմամբ Համայնքի անունից նոր երևան եկած հանգամանքի հիմքով բերված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում ոչ ամբողջությամբ են վերացվել 20.02.2019 թվականի որոշմամբ արձանագրված խախտումները, մասնավորապես՝ բողոքին կից չի ներկայացվել պետական տուրքը վճարելու փաստը հավաստող ապացույցը, չի ներկայացվել միջնորդություն՝ պետական տուրքի վճարման գծով արտոնություն սահմանելու մասին:

Անդրադառնալով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետին, Վերաքննիչ դատարանը նշել է, որ երևան եկած նոր հանգամանքների հետևանքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ բողոքներով դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են միայն ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք (**հատոր 3-րդ, գ.թ. 56**):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք հիմնավոր են, քանի որ օրենսդիրը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով սպառիչ սահմանել է նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու բողոքներով օրենքի ուժով դատարաններում պետական տուրքից ազատված սուբյեկտների շրջանակը, մինչդեռ տվյալ դեպքում Համայնքը չի հանդիսանում ոչ առևտրային կազմակերպություն և ոչ էլ ֆիզիկական անձ, հետևաբար նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու բողոքներով օրենքի ուժով դատարաններում պետական տուրքի վճարումից ազատված չէ:

Անդրադառնալով բողոքի այն հիմքին, որ նոր երևան եկած հանգամանքի հիմքով բողոք ներկայացնելու համար օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասով չի նախատեսել բողոքաբերի կողմից պետական տուրք վճարելու պարտավորություն, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ բաժնի 58-րդ գլխով օրենսդիրը սահմանել է «Դատական ակտերը նոր երևան եկած կամ նոր հանգամանքով վերանայելու վարույթը» որպես առանձնահատուկ վարույթի տեսակ՝ միաժամանակ կարգավորելով այդ վարույթի շրջանակներում վերանայման ենթակա հնարավոր դատական ակտերը, բողոք բերելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը, բողոքը ներկայացնելու ձևն և բովանդակությունը, բողոքի քննության կարգը և այլ վերաբերելի հարցեր: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքը կազմվում է գրավոր՝ նույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պահանջների պահպանմամբ: Բողոքը պետք է լինի ընթեռնելի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքում պետք է նշվեն՝

- 1) այն դատարանի անվանումը, որին բողոքը հասցեագրվում է,
- 2) բողոք բերող անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները,
- 3) դատարանի անվանումը, որի կայացրած դատական ակտի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը,
- 4) դատական ակտի վերանայման համար հիմք հանդիսացող նոր երևան եկած կամ նոր հանգամանքի շարադրանքը և հիմնավորումը, թե ինչու է այն հիմք դատական ակտի վերանայման համար,

- 5) բողոք բերող անձի պահանջը,
 - 6) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:
- Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում են՝

- 1) ներկայացուցչի լիազորությունները հավաստող փաստաթուղթ, եթե այն առկա չէ դատական գործում, և բողոքը ստորագրել է ներկայացուցիչը.
- 2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքը հաստատող ապացույցներ.
- 3) իրավահաջորդության փաստը հավաստող փաստաթուղթ, եթե բողոքը ներկայացվում է գործին մասնակցող անձի իրավահաջորդի կողմից.
- 4) բողոք ներկայացնելու ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, եթե բողոքը ներկայացվել է նույն օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետի խախտմամբ.

5) բողոքը դատական ակտ կայացրած դատարանին ուղարկելու մասին ապացույց, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքը բերվում է Վճռաբեկ դատարանի դատական ակտի դեմ.

6) բողոքը և կից փաստաթղթերը գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու կամ նրանց հանձնելու մասին ապացույցներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 422-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը բողոքն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, որոշում է կայացնում նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 421-րդ հոդվածի պահանջները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտի վերանայման բողոքը վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից ենթակա է վերադարձման նաև համապատասխանաբար նույն օրենսգրքի 371-րդ և 395-րդ հոդվածներով սահմանված հիմքերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝ չեն պահպանվել նույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, (...) ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: (...)

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածով սպառիչ սահմանել է այն փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է կցվեն դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու մասին վերաքննիչ բողոքին: Ընդ որում, օրենսդիրը թեև նշված ցանկում չի ներառել պետական տուրքի վճարումը հավաստող ապացույց կցելու պայման, սակայն միաժամանակ նախատեսել է, որ դատական ակտի վերանայման վերաքննիչ բողոքը կարող է վերադարձվել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածով սահմանված հիմքով, որն էլ հղում անելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասին, նախատեսում է բողոք բերած անձի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող ապացույց կցելու կամ պետական տուրքի վճարման գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն կցելու կամ ներառելու պայման:

Ելնելով վերոգրյալից, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես վերը նշվեց օրենսդիրը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով սպառիչ սահմանել է նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու բողոքներով օրենքի ուժով դատարաններում պետական տուրքից ազատված սուբյեկտների շրջանակը (ոչ առևտրային կազմակերպություններ և ֆիզիկական անձինք), իսկ այն սուբյեկտները, որոնք չեն մտնում նշված շրջանակի մեջ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը նախատեսել է բողոք բերած անձի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող ապացույց կցելու կամ պետական տուրքի վճարման գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն կցելու կամ ներառելու պայման:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի պատասխանում բերված այն փաստարկին, որ Դատարանի 27.04.2017 թվականի վճիռի հիմքում ընկած են դատաքննության ընթացքում ներկայացված և բազմակողմանի հետազոտված բոլոր ապացույցները և ներկայացված վճռաբեկ բողոքով հիմնավորված չէ՝ նոր երևան եկած հանգամանքի առկայությունը, ապա Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ սույն վճռաբեկ բողոքը բերվել է վերաքննիչ բողոքի ընդունելության փուլի խախտումների դեմ, իսկ վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները վերաբերում են բողոքի ըստ էության քննությանը, հնարավոր չի համարում անդադարառնալու վճռաբեկ բողոքի պատասխանում բերված վերը նշված փաստարկներին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոք բերած անձի հիմնավորումներն ու փաստարկները բավարար չեն Վերաքննիչ դատարանի 20.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքի ընդունումը, կայացրել է իրավաչափ դատական ակտ:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով չի հիմնավորվում այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը կայացնելիս թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, որպիսի պայմաններում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածով նախատեսված Վճռաբեկ դատարանի՝

վճռաբեկ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0992/02/14	2022թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵՄԴ/0992/02/14	
Նախագահող դատավոր՝	Ս. Միքայելյան	
Դատավորներ՝	Ն. Բարսեղյան Մ. Հարթենյան	

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴԻՄԵՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թվականի հունիսի 06-ին

գրավոր ընթացակարգով քննելով Նելլի Միքայելյանի վճռաբեկ բողոքը՝ ըստ հայցի Նելլի Միքայելյանի ընդդեմ Անահիտ Եղիազարյանի, Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի, երրորդ անձ Վաղինակ Վերմիշյանի՝ 26.07.2013 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4249 և 26.07.2013 թվականին տրված թիվ 4248 սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, Նելլի Միքայելյանի կողմից ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ժառանգման հիմքով՝ Նելլի Միքայելյանին ժառանգ ճանաչելու ու Վալերի Միքայելյանին պատկանող ողջ անշարժ և շարժական գույքի նկատմամբ Նելլի Միքայելյանի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշումը և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.11.2015 թվականի որոշումը՝ նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Նելլի Միքայելյանը պահանջել է անվավեր ճանաչել 26.07.2013 թվականի սեփականության իրավունքի թիվ 4248 և 26.07.2013 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4249 վկայագրերը, հարգելի համարել ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը և ժառանգման հիմքով ճանաչել ժառանգ, ինչպես նաև ճանաչել իր սեփականության իրավունքը Վալերի Միքայելյանին պատկանող ողջ անշարժ և շարժական գույքի նկատմամբ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 22.07.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.11.2015 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 22.07.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.02.2016 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի բերած վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության: Սույն գործով նոր հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նելլի Միքայելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործով առկա է նոր հանգամանք:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարանել է հետևյալ հիմնավորումներով.

Սույն գործով բողոք բերած անձը որպես նոր հանգամանք վկայակոչել է թիվ ԵԿԴ/1176/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 12.12.2019 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը: Տվյալ վճռով անվավեր է ճանաչվել 25.06.2013 թվականին Համբուրգ քաղաքում Անահիտ Եղիազարյանի կողմից Աննման Միքայելյանին տրված լիազորագիրը: Նշված լիազորագրի հիման վրա Աննման Միքայելյանը, որպես Անահիտ Եղիազարյանի ներկայացուցիչ, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակին 23.07.2013 թվականին դիմում է ներկայացրել Վալերի Միքայելյանի մահից հետո մնացած անշարժ գույքի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր տալու մասին: ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 26.07.2013 թվականին տրված թիվ 4248 սեփականության իրավունքի վկայագրով Անահիտ Եղիազարյանը ճանաչվել է Երևան քաղաքի Սեբաստիա 30-րդ շենքի թիվ 76 բնակարանի 1/2 մասի սեփականատեր, իսկ թիվ 4249 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով՝ Վալերի Միքայելյանի ժառանգական գույքի՝ նույն բնակարանի 1/2 բաժնեմասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ: Նույն՝ անվավեր ճանաչված լիազորագրով 16.01.2014 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրով Աննման Միքայելյանը Երևանի Սեբաստիա 30-րդ շենքի թիվ 76 բնակարանը վաճառել է Վաղինակ Վերմիշյանին, Լուսինե Մկրտչյանին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «նոր հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշումը, բեկանել Վերաքննիչ դատարանի 06.11.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Վալերի Վաղարշակի Միքայելյանը (ծնված՝ 24.01.1939 թվականին) մահացել է 05.02.2002 թվականին Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության Համբուրգ քաղաքում (**հատոր 1-ին, գ.թ. 23**),

2) Համաձայն թիվ 0980553 ծննդյան վկայականի՝ Նելլի Վալերիի Միքայելյանը ծնվել է 13.11.1968 թվականին Երևան քաղաքում, հայրը՝ Միքայելյան Վալերի Վաղարշակի, մայրը՝ Միքայելյան Մուսան Դավիթի (**հատոր 1-ին, գ.թ. 24**),

3. Համաձայն թիվ 289087 ամուսնության վկայականի՝ Վալերի Միքայելյանի և Անահիտ Եղիազարյանի ամուսնությունը գրանցվել է 18.02.1969 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 87**),

4) ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի տարածքային ստարաբաժանման կողմից 08.08.2003 թվականին տրված անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի թիվ 1589470 վկայականի համաձայն՝ Երևան քաղաքի Սեբաստիա 30-րդ շենքի թիվ 76 հասցեում գտնվող բնակարանի նկատմամբ գրանցվել է Վալերի Միքայելյանի սեփականության իրավունքը, հիմք՝ Երբաղխորի գործկոմի 04.09.1991 թվականի որոշում (**հատոր 1-ին, գ.թ. 19-21**),

5) Համաձայն «Լիազորագիր» վերտառությամբ փաստաթղթի՝ «ք. Համբուրգ, 25.06.2013 թվականին, (ամսաթիվը ձեռագրի ուղղումով), Անահիտ Եղիազարյանը (լիազորագրում նշվել է ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթուղթը, բնակության վայրը՝ Մուրենկամա 40, 22335 ք. Համբուրգ), լիազորել է Աննան Միքսելյանին Երևան քաղաքի Սեբաստիա 30, բնակարան 76 հասցեում գտնվող բնակարանի նկատմամբ իր հանգուցյալ ամուսնու՝ 2002 թվականին Գերմանիայում մահացած Վալերի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող ժառանգական բաժնետնասի նկատմամբ իր կողմից ժառանգության ընունման հետ կապված բոլոր հարցերը կարգավորելու նպատակով իր անունից հանդես գալու և իր ներկայացուցիչը լինելու ՀՀ նոտարական գրասենյակներում, ներկայացնելու դիմումներ, անելու հայտարարություններ, ձևակերպելու ժառանգությունը, ստանալու ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, իր անունից նոտարական գրասենյակում կնքելու նշված բնակարանի հետ կապված ցանկացած գործարքներ, ստանալու վաճառքի գումարը, իր անունից հանդես գալու և իր ներկայացուցիչը լինելու ՀՀ կառավարության անընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում, իր անունից ներկայացնելու դիմումներ, սեփականության իրավունքի պետական գրանցման համար ստանալու Երևանի Սեբաստիա 30-րդ շենքի թիվ 76 բնակարանի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք, դիմել պետական գրանցում կատարելու համար և ստանալ սեփականության իրավունքի գրանցման վկայական, իր անունից հանդես գալու և իր ներկայացուցիչը լինելու ՀՀ դատական բոլոր ատյաններում, ներկայացնելու դիմումներ, հայցադիմումներ, ստանալու դատական ակտեր, բողոքարկելու դատական ակտերը վերադաս դատական ատյաններում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածում թվարկված բոլոր լիազորություններով կատարելու անհրաժեշտ բոլոր գործողությունները կապված սույն հանձնարարության հետ, իր անունից հանդես գալու և իր ներկայացուցիչը լինելու ՀՀ ռստիկանության անձնագրային բաժնիներում, բնակչության հաշվառման ռեգիստրի մարմիններում, Երևանի քաղաքապետարանում, քաղաքի վարչական շրջանների աշխատակազմերում, համատիրություններում՝ այդ մարմիններում իր անունից դիմումներ ներկայացնելու, անհրաժեշտ տեղեկանքներ ստանալու, անհրաժեշտության դեպքում բողոքարկելու վարչական մարմինների՝ օրենքին հակասող գործողությունները կամ անգործությունը ՀՀ վարչական դատավարության կարգով: Իր անունից կատարել վճարումներ, ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, ստորագրել իր փոխարեն, կատարել բոլոր գործողությունները կապված սույն հանձնարարության հետ: Վկայում է, որ գործունակության մեջ սահմանափակված չէ, իր նկատմամբ չկա սահմանված խնամակալություն և հոգաբարձություն: Լիազորագիրը տրված է իր կողմից կամավոր: Լիազորագիրը տրված է երեք տարի ժամկետով» (**հատոր 1-ին գ.թ. 28**),

6) ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակին 23.07.2013 թվականին դիմում է ներկայացվել Անահիտ Եղիազարյանի անունից լիազորագրով հանդես եկող Աննան Միքսելյանի

կողմից՝ Անահիտ Եղիազարյանի հանգուցյալ ամուսնու՝ Վալերի Միքայելյանի մահից հետո մնացած անշարժ գույքի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր տալու մասին **(հատոր 1-ին, գ.թ. 27),**

7) ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 26.07.2013 թվականին տրված թիվ 4248 սեփականության իրավունքի վկայագրի համաձայն՝ Անահիտ Եղիազարյանը հանդիսանում է Երևան քաղաքի, Սեբաստիա 30-րդ շենքի թիվ 76 բնակարանի 1/2 մասի սեփականատեր **(հատոր 1-ին, գ.թ. 16),**

8) ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 26.07.2013 թվականին տրված թիվ 4249 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Վալերի Վաղարշակի Միքայելյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում կինը՝ Անահիտ Եղիազարյանը: Ժառանգական գույքը բաղկացած է Երևան քաղաքի, Սեբաստիա փողոց 30-րդ շենքի թիվ 76 բնակարանի 1/2 բաժնեմասից **(հատոր 1-ին, գ.թ. 17),**

9) ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի 15.01.2014 թվականի գրությամբ Նելլի Միքայելյանին հայտնվել է, որ Երևան քաղաքի, Սեբաստիա 30 շենքի թիվ 76 բնակարանի նկատմամբ 31.07.2013 թվականին գրանցվել է Անահիտ Եղիազարյանի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 18),**

10) Անշարժ գույքի առուվաճառքի 16.01.2014 թվականին կնքված պայմանագրի համաձայն՝ Աննան Միքայելյանը, հանդես գալով նույն՝ 25.06.2013 թվականի լիազորագրով, Երևան քաղաքի, Սեբաստիա 30-րդ շենքի թիվ 76 բնակարանը վաճառել է Վաղինակ Վերմիշյանին, Լուսինե Մկրտչյանին **(հատոր 1-ին, գ.թ. 48),**

11) Համաձայն 21.01.2014 թվականին տրված՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21012014-01-0080 վկայականի՝ Երևան քաղաքի, Սեբաստիա փողոց 30-րդ շենքի թիվ 76 բնակարանը սեփականության իրավունքով գրանցվել է Վաղինակ Վերմիշյանի, Լուսինե Մկրտչյանի անվամբ **(հատոր 1-ին, գ.թ. 49),**

12) Դիմելով դատարան՝ Նելլի Միքայելյանը պահանջել է անվավեր ճանաչել 26.07.2013 թվականի սեփականության իրավունքի թիվ 4248 և 26.07.2013 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4249 վկայագրերը, հարգելի համարել ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը և ժառանգման հիմքով ճանաչել ժառանգ, ինչպես նաև ճանաչել իր սեփականության իրավունքը Վալերի Միքայելյանին պատկանող ողջ անշարժ և շարժական գույքի նկատմամբ **(հատոր 1-ին, գ.թ. 2-11),**

13) Դատարանի 22.07.2015 թվականի վճռով հայցը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ հայցվորը որևէ ապացույց չի ներկայացրել, որևէ կերպ չի հիմնավորել իր պահանջների հիմքում ընկած հանգամանքները, մասնավորապես՝ չի հիմնավորել այն, որ չի իմացել Վալերի Միքայելյանի ինչպես մահվան, այնպես էլ ժառանգության գոյության մասին և պարտավոր չէր իմանալ **(հատոր 2-րդ, գ.թ. 124-140),**

14) Դատարանի 22.07.2015 թվականի վճռի դեմ Նելլի Միքայելյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ կից ներկայացնելով միջնորդություն՝ դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու մասին՝ Անահիտ Եղիազարյանի կողմից **25.06.2013 թվականին (ամսաթիվը ձեռագիր ուղղումով) Աննան Միքայելյանին տրված լիազորագրի իսկությունը ճշտելու նպատակով (հատոր 3-րդ, գ.թ. 8-21),**

15) Վերաքննիչ դատարանը 06.11.2015 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի 22.07.2015 թվականի վճիռը թողել է անփոփոխ, արձանագրելով, որ «հայցվորը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, չի ապացուցել իր կողմից վկայակոչված փաստն այն մասին, որ չգիտեր և պարտավոր էլ չէր իմանալու հոր ժառանգության բացման մասին, որի ապացուցման պարտականությունը կրել է վերջինս»: Անդրադառնալով դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությանը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հստակ ամրագրված են Վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակները, որից ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանն օժտված չէ փորձաքննություն նշանակելու իրավասությամբ **(հատոր 3-րդ գ.թ. 129-134),**

16) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.02.2016 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի բերած վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության (**հատոր 4-րդ գ.թ. 89-92**),

17) Թիվ ԵԿԴ/1176/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 12.12.2019 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով՝ անվավեր է ճանաչվել Անահիտ Եղիազարյանի կողմից 25.06.2013 թվականին Համբուրգ քաղաքում կազմված և Աննան Միքայելյանին տրված լիազորագիրն՝ իր անունից հանդես գալու, իր ներկայացուցիչը լինելու մասին: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.05.2020 թվականի որոշմամբ նշված վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է: Նելլի Միքայելյանը որոշումը ստացել է 21.10.2020 թվականին (**վճռաբեկ բողոքին կից ներկայացված փաստաթղթեր**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ պայմանավորված նոր հանգամանքի առկայությամբ, որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքով կարող են վերանայվել առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման, վճարման կարգադրությունները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու, այն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին և վճռաբեկ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանը 15.07.2011 թվականի թիվ ՍԴՌ-984 որոշմամբ արձանագրել է, որ դատական ակտերի վերանայման արդյունավետ ինստիտուտի գոյությունը պետք է հիմնվի այն տրամաբանության վրա, որ պետությունը պետք է ապահովի խախտված իրավունքների վերականգնումը, քանզի քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության պարտավորությունը ենթադրում է, որ պետությունն ինքն է պատասխանատու դատական ակտերով խախտված իրավունքների վերականգնման համար: Պետության նման պարտավորության կատարումն ապահովելու բավականին արդյունավետ միջոց է դատական ակտերի վերանայումն իրավունքի ուժով:

ՀՀ սահմանադրական դատարանը, 31.05.2013 թվականի թիվ ՍԴՌ-1099 և 18.09.2013 թվականի թիվ ՍԴՌ-1114 որոշումներում անդրադառնալով նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ տվյալ ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ դրա միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական և (կամ)

կոնվենցիոն իրավունքների վերականգնումը: Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, **ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum):** Այն դեպքում, երբ անձի սահմանադրական և (կամ) կոնվենցիոն իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է տվյալ անձի համար այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն՝ խնդրո առարկա դեպքում խախտված իրավունքի վերականգնումը հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու պարագայում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքով վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայում է Վճռաբեկ դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անվավեր է ճանաչվել ժառանգության վկայագիրը կամ այն գործարքը, որը հիմք է ծառայել տվյալ դատական ակտը կայացնելու համար, (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք կարող է բերվել երեք ամսվա ընթացքում, որի հաշվարկը սկսվում է՝ նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ դատարանի համապատասխան դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

Վերոգրյալ իրավանքների վերլուծությունից հետևում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, նոր հանգամանքի հիմքով բողոք ներկայացվելու դեպքում, ենթակա է վերանայման, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անվավեր է ճանաչվել ժառանգության վկայագիրը կամ այն գործարքը, որը հիմք է ծառայել տվյալ դատական ակտը կայացնելու համար: Ընդ որում, օրենսդիրը նշված դեպքում նոր հանգամանքի հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բողոքարկելու համար սահմանել է եռամսյա ժամկետ, որի հաշվարկը սկսվում է դատարանի համապատասխան դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

Այսպիսով, վերոգրյալ իրավադրոյթների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործին մասնակցող անձինք տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- գործին մասնակցող անձի նկատմամբ կայացված դատական ակտը մտնել է օրինական ուժի մեջ,
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անվավեր է ճանաչվել ժառանգության վկայագիրը կամ այն գործարքը, որը հիմք է ծառայել տվյալ դատական ակտը կայացնելու համար,
- համապատասխան հիմքն ի հայտ գալուց (դատարանի համապատասխան վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից) հետո նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու դրությամբ եռամսյա ժամկետը չի լրացել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոքի հիման վրա հարուցված վարույթի քննության առանձնահատկություններին: Այսպես.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 426-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտի վերանայման բողոքի քննության ընթացքում դատարանը հետազոտում է գործում առկա ապացույցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **դատական ակտի վերանայման բողոքի հիմքի առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով** դատարանը գնահատում է հետազոտված ապացույցները և կարող է հաստատված համարել նոր փաստ, եթե հետազոտված ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի վերանայման բողոքի քննության ընթացքում դատարանը հետազոտում և գնահատում է գործում առկա ապացույցները՝ պարզելու համար դատական ակտի վերանայման բողոքի հիմքի առկայությունը կամ բացակայությունը: Նշվածից հետևում է, որ դատարանը պարզում է, թե արդյոք դատական ակտի վերանայման բողոքի հիմք առկա է, թե՛ ոչ: Այսինքն՝ բողոքում առկա նոր հանգամանքով դատական ակտը բողոքարկելու հիմքից բացի, բողոքում այլ հիմքերի առկայության դեպքում դատարանը չպետք է անդրադառնա բողոքի այդ հիմքերին, քանի որ օրենսդիրը, նոր հանգամանքի վարույթի բացառիկությունից ելնելով, համապատասխան դատարանին օժտել է միայն նոր հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը պարզելու իրավազորությամբ:

Նման մոտեցումը հիմնավորվում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներով հայտնած այն դիրքորոշմամբ, որ նոր հանգամանքի ինստիտուտի նպատակն է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*), ինչը ենթադրում է բողոքարկվող դատական ակտի բացակայության պայմաններում առկա իրավիճակի վերականգնում, իսկ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի բեկանման դեպքում բողոքի այլ հիմքերին անդրադառնալու անհրաժեշտությունը վերանում է՝ նկատի ունենալով, որ բողոքաբերի իրավունքները վերականգնվում են նոր հանգամանքի ինստիտուտի միջոցով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործը հարուցվել է Նելլի Միքայելյանի հայցադիմումի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել 26.07.2013 թվականի սեփականության իրավունքի թիվ 4248 և 26.07.2013 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4249 վկայագրերը, հարգելի համարել ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը և ժառանգման հիմքով ճանաչել ժառանգ, ինչպես նաև ճանաչել իր սեփականության իրավունքը Վալերի Միքայելյանին պատկանող ողջ անշարժ և շարժական գույքի նկատմամբ:

Դատարանի 22.07.2015 թվականի վճռով հայցը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ հայցվորը որևէ ապացույց չի ներկայացրել, որևէ կերպ չի հիմնավորել իր պահանջների հիմքում ընկած հանգամանքները, մասնավորապես՝ չի հիմնավորել այն, որ չի իմացել Վալերի Միքայելյանի ինչպես մահվան, այնպես էլ ժառանգության գոյության մասին և պարտավոր չէր իմանալ:

Դատարանի 22.07.2015 թվականի վճռի դեմ Նելլի Միքայելյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ կից ներկայացնելով միջնորդություն՝ դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու մասին՝ Անահիտ Եղիազարյանի կողմից 25.06.2013 թվականին (ամսաթիվը ձեռագիր ուղղումով) Աննման Միքայելյանին տրված լիազորագրի իսկությունը ճշտելու նպատակով:

Վերաքննիչ դատարանը 06.11.2015 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի 22.07.2015 թվականի վճիռը թողել է անփոփոխ, արձանագրելով, որ «հայցվորը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, չի ապացուցել իր կողմից վկայակոչված փաստն այն մասին, որ չգիտեր և պարտավոր էլ չէր իմանալու հոր ժառանգության բացման մասին, որի ապացուցման պարտականությունը կրել է վերջինս»: Անդրադառնալով դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակու մասին միջնորդությանը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հստակ ամրագրված են Վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակները, որից ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանն օժտված չէ փորձաքննություն նշանակելու իրավասությամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.02.2016 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի բերած վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

Թիվ ԵԿԴ/1176/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 12.12.2019 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով՝ անվավեր է ճանաչվել Անահիտ Եղիազարյանի կողմից 25.06.2013 թվականին Համբուրգ քաղաքում կազմված և Աննան Միքայելյանին տրված լիազորագիրը՝ իր անունից հանդես գալու, իր ներկայացուցիչը լինելու մասին:

Վերը նշված վճռով դատարանը հաստատված է համարել, որ *«(...) լիազորագիրը կազմված է ջնջումներով, վավերացված չէ օրենքով սահմանված կարգով, սահմանված կարգով չի վավերացվել Հայաստանի Հանրապետության հյուպարտական մարմինների կողմից, հեղուկաբար այն հակասում է «Նույրարիարի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ուստի և ենթակա է անվավեր ճանաչման (...):*

Սույն գործով ներկայացված՝ դատական ակտի վերանայման վճռաբեկ բողոքում որպես նոր հանգամանք վկայակոչված՝ թիվ ԵԿԴ/1176/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 12.12.2019 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

Նախկին որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ըստ էության հանդիսանալով միակողմանի գործարք՝ լիազորագիրը լիազորվողի (պարտապանի) մոտ առաջացնում է միայն որոշակի պարտավորություններ, նախ՝ լիազորագրողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև, երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված հանձնարարությունը, իսկ լիազորագրողի (պարտատիրոջ) համար սահմանում է միայն որոշակի իրավունք՝ լիազորվողից պահանջել կատարելու լիազորագրով ստանձնած հանձնարարությունը (պարտավորությունը) *(տե՛ս Վարդուշ Դազարյանն ընդդեմ Վորգ Դազարյանի թիվ ԼԴ/0423/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ լիազորվողն օգտվում է լիազորագրի շրջանակներում լիազորագրողի կողմից իրեն վերապահված գործողություններ կատարելու իրավունքից, որը հստակ ձևակերպվում է լիազորագրի բովանդակությունում և երրորդ անձանց հնարավորություն է տալիս հստակ եզրակացնել, թե լիազոր ներկայացուցիչն ինչպիսի իրավազորությամբ է օժտված *(տե՛ս «Վարդարշ և որդիներ Կոնցետն» ՄՊԸ-ն ընդդեմ Մարինա Հայրապետյանի, Կարեն, Վարդգես, Ինա Եղիազարյանների և Աննայա Բազարյանու թիվ ԵԿԴ/1769/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **լիազորագիրը** միակողմանի **գործարք է**, որով սահմանվում են ներկայացուցչի իրավունքները, լիազորությունների շրջանակը, ինչպես նաև լիազորագրողի անունից երրորդ անձանց հետ հարաբերությունների մեջ մտնելու այլ պայմանները:

Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԿԴ/1176/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 12.12.2019 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով՝ անվավեր է ճանաչվել Անահիտ Եղիազարյանի կողմից 25.06.2013 թվականին Համբուրգ քաղաքում կազմված և Աննան Միքայելյանին տրված լիազորագիրը՝ իր անունից հանդես գալու, իր ներկայացուցիչը լինելու մասին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոհիշյալ վճռով անվավեր ճանաչված լիազորագրով ժառանգություն ընդունելու մասին նոտարին դիմում է

ներկայացրել սույն գործով պատասխանող Անահիտ Եղիազարյանի ներկայացուցիչ Աննաման Միքայելյանը, ում միջոցով էլ Անահիտ Եղիազարյանն ընդունել էր իր ամուսնու՝ Վալերի Միքայելյանի ժառանգությունը, որին հավակնում է սույն գործով հայցվոր Նելլի Միքայելյանը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող՝ 26.07.2013 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4249 վկայագիրը տրվել է թիվ ԵԿԴ/1176/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 12.12.2019 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անվավեր ճանաչված լիազորագրով ներկայացված դիմումի հիման վրա, ինչից բխում է, որ լիազորագիրն անվավեր ճանաչված լինելու պայմաններում Աննաման Միքայելյանը Անահիտ Եղիազարյանի անունից նոտարին ժառանգություն ընդունելու մասին դիմում ներկայացնելու իրավասություն չի ունեցել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով պատասխանող Անահիտ Եղիազարյանը, ըստ էության, չի ընդունել իր ամուսնու՝ Վալերի Միքայելյանի ժառանգությունը, ինչից էլ հետևում է, որ Անահիտ Եղիազարյանը սույն գործով չէր կարող հանդիսանալ պատշաճ պատասխանող և իրավունք չունեի առարկելու հայցի դեմ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն՝ դատավարության կողմերն են հայցվորը և պատասխանողը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը գործին մասնակցող այն անձն է, որն իր կամ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձի իրավունքների պաշտպանության նպատակով հայցադիմում է ներկայացրել առաջին ատյանի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողը գործին մասնակցող այն անձն է, որի դեմ հայց է ներկայացվել առաջին ատյանի դատարան:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ հայցվորը և պատասխանողը քաղաքացիական գործը հարուցելու պահից վիճելի իրավահարաբերության կողմեր են, ովքեր օժտված են հակադիր շահերով: Այլ կերպ ասած՝ հայցվորը դատարան է դիմում իր (օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձի) իրավունքների պաշտպանության նպատակով, իսկ պատասխանողը հանդիսանում է հայցվորի՝ խախտված կամ վիճարկվող իրավունքից ծագող և օրենքով սահմանված կարգով քննության ենթակա նյութաիրավական պահանջով՝ հակադիր շահերով օժտված կողմ: Հայցվորի դատարան ներկայացրած նյութաիրավական պահանջն ուղղված է պատասխանողին, ինչից ակնհայտ է, որ պատասխանողը պետք է հայցի դեմ առարկելու իրավունք ունենա՝ պայմանավորված նյութաիրավական վեճի հակառակ կողմ հանդիսանալու հանգամանքով: Մինչդեռ այն դեպքում, երբ հայցվորի դատարան ներկայացված պահանջով պատասխանողը չի հանդիսանում հակադիր շահով օժտված անձ, ապա առաջանում է ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու հարցը քննարկելու անհրաժեշտություն:

Տվյալ դեպքում Նելլի Միքայելյանը դատարան է դիմել իր ժառանգական իրավունքների պաշտպանության նպատակով՝ պահանջն ուղղելով Անահիտ Եղիազարյանին՝ որպես Վալերի Միքայելյանի ժառանգությունն ընդունած ժառանգի: Մինչդեռ թիվ ԵԿԴ/1176/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 12.12.2019 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով՝ Անահիտ Եղիազարյանի կողմից Աննաման Միքայելյանին տրված լիազորագիրն անվավեր ճանաչվելու հանգամանքը թույլ է տալիս գալու այն եզրահանգման, որ Անահիտ Եղիազարյանը չի հանդիսանում Վալերի Միքայելյանի ժառանգությունն ընդունած ժառանգ, ինչից էլ բխում է, որ Անահիտ Եղիազարյանը Նելլի Միքայելյանի նյութաիրավական պահանջով չի հանդիսանում հակադիր շահերով օժտված կողմ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԵԿԴ/1176/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 12.12.2019 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը սույն գործով հանդիսանում է նոր

հանգամանք, որի ուժով Նելլի Միքայելյանի՝ Անահիտ Եղիազարյանի դեմ ուղղված հայցը մերժելու մասին սույն գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ենթակա է վերանայման:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա չէ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով նախատեսված նոր հանգամանք՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.02.2016 թվականի «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշումը վերանայելու համար:

Միաժամանակ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով Վերաքննիչ դատարանի 06.11.2015 թվականի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու և Վերաքննիչ դատարանի 06.11.2015 թվականի որոշումը բեկանելու ու գործը նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ և 427-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Նոր հանգամանքի հիմքով վերանայել և բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.11.2015 թվականի որոշումը, գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԱՐԳ/3612/02/16	
Քաղաքացիական գործ թիվ	ԱՐԳ/3612/02/16	2021թ.
Նախագահող դատավոր՝	Հ. Ենոքյան	
Դատավորներ՝	Տ. Նազարյան	
	Գ. Խանդանյան	

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող զեկուցող</i>	Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
	Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
	Մ. ԴՐՄԵՅԱՆ
	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
	Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի մայիսի 14-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) հայցի ընդդեմ Թամարա Մարգարյանի, Դիանա և Շողիկ Աղաջանյանների, Ռոման Առաքելյանի, Քյարամ Գուսեյանի, Վալյա Ավետիսյանի ու Հայկ Սահակյանի (այսուհետ՝ նաև Համապատասխանողներ), երրորդ անձինք Հասմիկ Մադաթյանի, Նելլի և Էդգար Առաքելյանների՝ գումար բռնագանձելու ու բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.05.2019 թվականի որոշման դեմ Բանկի ներկայացուցիչ Վահագն Մնացականյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը
Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Համապատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել 3.009,22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 11.06.2016 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը,

վարկի գումարի մնացորդի և հաշվարկված տոկոսագումարի՝ 2.050,99 ԱՄՆ դոլարի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկել ու բռնագանձել տուժանք 0,2 տոկոսի չափով՝ բռնագանձումը տարածելով հիփոթեքի պայմանագրով գրավադրված անշարժ գույքի վրա:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է տարածամկետել ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռի կատարումը:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.01.2019 թվականի «Դատական ակտի կատարումը տարածամկետելու և կատարման կարգը փոխելու դիմումը մերժելու մասին» որոշմամբ Բանկի ներկայացուցչի դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.05.2019 թվականի որոշմամբ Բանկի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.01.2019 թվականի «Դատական ակտի կատարումը տարածամկետելու և կատարման կարգը փոխելու դիմումը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարճատաքանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը վերաբերում է այն դեպքերին, երբ դատական ակտի տարածամկետման դիմումը ներկայացրել է ոչ թե պահանջատերը, այլ՝ պարտապանը, որպիսի նախապայմանի ապահովումը նպատակ է հետապնդում պաշտպանելու պահանջատիրոջ՝ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված իրավունքները և օրինական շահերը: Իսկ պահանջատիրոջ կողմից դատական ակտի տարածամկետման դիմում ներկայացվելու դեպքում պարտապանի կողմից պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելուն պատրաստ լինելու և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտության վերաբերյալ պայմանների պարտադիր առկայության անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ պահանջատերը՝ որպես սեփականատեր, իրականացնում է իր տնօրինչական իրավունքները և կրում այդ իրավունքի իրացման կամ չիրացման ռիսկն ու բոլոր բացասական հետևանքները:

Վերաքննիչ դատարանը, կայացնելով նման որոշում, ոչ իրավաչափ կերպով սահմանափակել է Բանկի՝ որպես սեփականատիրոջ իրավունքների իրացումը, քանի որ Դատարանի վճռով հաստատված Բանկի պահանջի իրավունքը (գույքը) իր սեփականությունն է, և Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը, այդ գույքի նկատմամբ կատարելու օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.05.2019 թվականի որոշումը:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դատարանը 02.12.2016 թվականի վճռով Բանկի հայցը բավարարել է՝ Համապատասխանողներից **համապարտության** կարգով բռնագանձել է 3.009,22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 11.06.2016 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը վարկի գումարի մնացորդի և հաշվարկված տոկոսագումարի՝ 2.050,99 ԱՄՆ դոլարի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկել ու բռնագանձել է 0,2 տոկոսի չափով տուժանք՝ բռնագանձումը տարածելով հիփոթեքի պայմանագրով գրավադրված անշարժ գույքի վրա (**հատոր 1-ին, գ.թ. 82-85**).

2) Դատարանի 02.12.2016 թվականի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 10.01.2017 թվականին, որի կապակցությամբ Բանկի դիմումով 10.02.2017 թվականին տրվել են կատարողական թերթեր (**հատոր 1-ին, գ.թ. 132-141**).

3) 27.12.2018 թվականին պահանջատեր Բանկը դիմում է ներկայացրել Դատարան 02.12.2016 թվականի վճռի կատարումը տարածամկետելու մասին՝ դրան կցելով պարտապան Թամարա Մարգարյանի դիմում-պարտավորագիրը, որով վերջինս պատրաստականություն է հայտնել վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան, ինչպես նաև խնդրել է՝ կատարողական թերթը կատարման չներկայացնել, իսկ կատարման ներկայացված լինելու դեպքում՝ դիմում ներկայացնել Դատարանի դատական ակտի կատարումը տարածամկետելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 147-151**):

4. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին.

- արդյո՞ք դատարանը կարող է մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիմքով տարածամկետել դատական ակտի կատարումը, եթե դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին դիմումը ներկայացվել է այդ դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

Նախևառաջ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Համանման կանոն է նախատեսվել նաև 09.04.2018 թվականից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, համաձայն որի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Ընդ որում, ինչպես նախկին, այնպես էլ գործող իրավակարգավորումների համաձայն՝ կատարում ենթադրող դատական ակտ կայացնելու դեպքում դրանում նշվում է, որ դատական ակտը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով (տե՛ս Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 5-րդ մաս, կետ 6, 220-րդ հոդվածի 6-րդ մաս, կետ 5, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 5-րդ մաս, կետ 4, 381-րդ հոդվածի 6-րդ մաս, կետ 5): Այսինքն՝ օրենսդրական կարգավորումներից բխում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կարող է կատարվել ինչպես կամովին, այնպես էլ՝ հարկադիր կարգով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1ին հոդվածի համաձայն, սահմանված է նույն օրենքով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով կարգավորել է Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի միայն **հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը**, իսկ դատական ակտերի կամավոր կատարման համար առանձին կարգավորում չի նախատեսել՝ այն թողնելով պահանջատիրոջ և պարտապանի հայեցողությանը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (...):

Մինչև 04.08.2019 թվականը գործած խնթագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կատարողական թերթը ստաջին անգամ կարող է կատարման ներկայացվել մեկ փարսիս ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը:

Մինչև 04.08.2019 թվականը գործած խնթագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե արացված կատարողական թերթը չի համապարասխանում նույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված պահանջներին, կամ եթե լրացել է այն կատարման ներկայացնելու ժամկետը և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ չոված դատարանի որոշումը, (...) հարկադիր կատարողը կատարողական թերթը վերադարձնում է պահանջատիրոջը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապարասխան, իսկ հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը: Դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը (տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժինն ընդդեմ Անուշ Իսախյանի թիվ ՎԴ-6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանի մեկ այլ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված

կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմանը ընդունված, ինչն էլ հիմք է այն անվավեր ճանաչելու համար (տե՛ս ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատարանի ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի թիվ ՎԴ4/0104/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):

Վերահասարակելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն ամրագրել է կատարողական թերթի առաջին անգամ կատարման ներկայացնելու մեկ փարվա ժամկետ՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատարանի ակտը: Ըստ որում, օրենքով սահմանվել է նաև կատարողական թերթի պահանջարկի դիրք վերադարձնելու հարկադիր կատարողի պարտականությունն այն դեպքում, եթե լրացել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ փակած դատարանի որոշումը: Մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24րդ հոդվածով օրենսդիրը նախատեսել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնելու իրավական հնարավորություն, ըստ որի՝ քաղաքացի-պահանջարկի ոչ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պարճատներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարողական թերթն առաջին անգամ կարող է հարկադիր կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը, իսկ այդ ժամկետը բաց թողնելու պարագայում նաև պետք է ներկայացվի կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանվել է նաև դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոփոխելու իրավական հնարավորություն:

Այսպես, մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարածամկետելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը:

Դատարանը կարող է հեղաձգել կամ փարվաժամկետել դատարանի ակտի կատարումը, եթե պարտապանը պահանջարկի դիրք պարտապար է փրամսդրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, քանի որ ողջամիտ ժամկետում դատարանի ակտը կկատարվի կամովին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի կողմից դատարանի ակտի կատարումը հեղաձգելու կամ փարվաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու մասին դիմումի ըստ էության քննությունը չի կատարում կատարողական վարույթը, այդ թվում՝ որպես հայցի ապահովման միջոց:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում բացահայտել վերոնշյալ իրավական նորմի բովանդակությունը՝ ելնելով օրենսդրի կամքից և նորմի ընդունման նպատակից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանել են կատարողական գործողությունների իրականացման ժամկետները: Մասնավորապես, նշված իրավանորմի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունների իրականացման համար սահմանվում է երկամսյա ժամկետ, (...): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարողական գործողությունների կատարման համար սահմանված երկամսյա ժամկետը Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր

կատարողի կողմից կարող է երկարաձգել մինչև 2 ամիս ժամկետով՝ հարկադիր կատարման ծառայության մարզային (Երևանի քաղաքային) բաժնի պետի միջնորդությամբ: Այսինքն, որպես ընդհանուր կանոն, օրենսդիրն ամրագրել է կատարողական գործողությունների կատարման երկամսյա ժամկետ, հետևաբար հարկադիր կատարողը պարտավոր է հարուցված կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարման միջոցների կիրառմամբ ապահովել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը: Մինևույն ժամանակ, դատական ակտերի կատարման տարածակետում օրենսդրի կողմից պարտապանին տրված հնարավորություն է՝ ուղղված դատական ակտի հիման վրա առաջացած պարտավորությունը կատարողական գործողությունների իրականացման ժամկետներից տարբերվող ժամկետներում կատարելուն: Այլ կերպ ասած, եթե կատարողական գործողությունների կատարման ընթացքում պարտապանը պատրաստակամություն է հայտնում կամովին կատարել դատական ակտի հիման վրա առաջացած պարտավորությունը, սակայն կատարողական գործողությունների իրականացման համար սահմանված ժամկետները, ըստ էության, խոչընդոտում են այդ պարտավորությունը կատարողական գործողությունների իրականացման ժամկետներից տարբերվող ժամկետներում կատարելուն, ապա պահանջատերը կամ պարտապանը կարող են դիմում ներկայացնել կատարողական թերթ տված դատարան, ի թիվս այնի, խնդրելով նաև տարածակետելու դատական ակտի կատարումը: Ընդ որում, դատարանը կարող է տարածակետել դատական ակտի կատարումը, եթե պարտապանը պահանջատիրոջը պատրաստ է տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, քանի որ ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, որպես դատական ակտի կատարումը տարածակետելու պայման նախատեսելով պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պարտապանի պատրաստակամության դրսևորումը՝ օրենսդիրը միաժամանակ նախատեսել է հարկադիր կատարման անհրաժեշտությունը բացակայելու պայմանը: Ըստ այդմ, դատարանը կարող է տարածակետել դատական ակտի կատարումը, եթե պարտապանը պատրաստակամություն է հայտնել պահանջատիրոջը տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին, այսինքն՝ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, կամ որ նույնն է՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման անհրաժեշտությունը:

Ընդ որում, պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պարտապանի պատրաստակամությունը կարող է դրսևորվել ինչպես մինչև կատարողական թերթ տալը, այնպես էլ կատարողական վարույթի ընթացքում, ինչով պայմանավորված էլ օրենսդիրն ամրագրել է համապատասխան կարգավորումներ:

Այսպես, մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի 3-րդ պարբերության համաձայն՝ եթե դատարանը մինչև կատարողական թերթ տալը հետաձգել է կամ տարածակետել է դատական ակտի կատարումը, ապա կատարողական թերթում նշվում է դրա գործողության ժամկետի սկիզբը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մինչև կատարողական թերթ տալը դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածակետելու մասին դատարանի որոշման իրավական հետևանքների առումով օրենսդիրը ցուցաբերել է տարբերակված մոտեցում:

Այսպես, եթե մինչև կատարողական թերթ տալը պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պարտապանի պատրաստակամության առկայության հիմքով դատական ակտի կատարումը *դարածակետելու* մասին դատարանի որոշումը պահանջատիրոջը չի ազատում այդ կատարողական թերթն օրենքով սահմանված ժամկետում կատարման ներկայացնելու պարտականության կատարումից, ապա մինչև կատարողական թերթ տալը դատական ակտի կատարումը *հետաձգելու* մասին դատարանի որոշման պարագայում, մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ուժով, պահանջատերը կատարողական թերթը կարող է կատարման ներկայացնել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ լրացել է դատական ակտի կատարումը հետաձգելու սահմանված ժամկետը:

ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (յրեն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 09.06.2015 թվականի թիվ ՄԴՈ-1213 որոշումը): Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (յրեն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 02.12.2014 թվականի թիվ ՄԴՈ-1176 որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով (յրեն ՀՀ սահմանադրական դատարանի 03.05.2016 թվականի թիվ ՄԴՈ-1270 որոշումը):

Վերոգրյալ իրավական վերլուծությունների լոյսի ներքո անդրադառնալով մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ և 23-րդ հոդվածների 1-ին մասերի 1-ին կետերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու հարցը կարող է քննարկման առարկա դառնալ և համապատասխան դատական ակտ կայացվել միայն դատական ակտը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետի ընթացքում՝ անկախ այն հանգամանքից, թե դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դիմումը ներկայացվել է մինչև կատարողական թերթ տալը, թե՛ կատարողական վարույթի ընթացքում: Իրավական որոշակիության սկզբունքի համատեքստում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում ամրագրված վերոգրյալ իրավակարգավորումներն անձի համար կանխատեսելի են դարձնում այն իրավաչափ ակնկալիքները, որ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հարկադիր կարգով կարող է կատարվել միայն օրենքով սահմանված ժամկետում կատարողական թերթը կատարման ներկայացվելու դեպքում, հետևաբար դատական ակտի հարկադիր կատարման առնչությամբ բոլոր, այդ թվում՝ նաև դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու հարցին ուղղված գործողությունները, պետք է կատարվեն նշված ժամկետի ընթացքում, իսկ այդ ժամկետը բաց թողնված լինելու դեպքում նաև պետք է ներկայացվի կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին

կատարողական թերթ տված դատարանի որոշում առկա չլինելու պարագայում կատարողական թերթը չի կարող հիմք հանդիսանալ կատարողական վարույթ հարուցելու համար, իսկ հարկադիր կատարողը պարտավոր է պահանջատիրոջը վերադարձնել կատարողական թերթը: Այլ կերպ ասած՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշման բացակայության փաստերն ինքնին բացառում են դատական ակտի հարկադիր կատարման իրավական հնարավորությունը, իսկ կատարման ոչ ենթակա դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու պարագայում բողոքված ձևով կվերականգնվի կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը, ինչը չի բխում իրավական որոշակիության սկզբունքից:

Միևնույն ժամանակ, սակայն, կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշման բացակայության փաստերը չեն բացառում դատական ակտը կանոլին կատարելու հնարավորությունը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով կարգավորել է Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի միայն **հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը**, իսկ դատական ակտերի կամավոր կատարման համար առանձին կարգավորում չի նախատեսել այն թողնելով պահանջատիրոջ և պարտապանի հայեցողությանը, հետևաբար պահանջատերն ու պարտապանն ազատ են ինքնուրույն, իրենց կամքով և համաձայնությամբ սահմանել դատական ակտը կամավոր կատարելու օրենքին չհակասող ցանկացած պայման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիմքով դատական ակտի կատարումը չի կարող տարաժամկետվել, եթե դատական ակտի կատարումը տարաժամկետելու մասին դիմումը ներկայացվել է այդ դատական ակտի կատարման օրենքով սահմանված ժամկետը լրացալուց հետո:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 02.12.2016 թվականի վճռով բավարարել է Բանկի հայցն ընդդեմ Համապատասխանողների և վերջիններից **համապարտության** կարգով բռնագանձել է 3.009,22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 11.06.2016 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը վարկի գումարի մնացորդի և հաշվարկված տուկոսագումարի՝ 2.050,99 ԱՄՆ դոլարի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկել ու բռնագանձել է 0,2 տոկոսի չափով տուժանք՝ բռնագանձումը տարածելով հիփոթեքի պայմանագրով գրավադրված անշարժ գույքի վրա (**հատոր 1-ին, գ.թ. 82-85**):

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 10.01.2017 թվականին, որի կապակցությամբ Բանկի դիմումով 10.02.2017 թվականին տրվել են կատարողական թերթեր (**հատոր 1-ին, գ.թ. 132-141**):

Պահանջատեր Բանկը 27.12.2018 թվականին դիմում է ներկայացրել Դատարան 02.12.2016 թվականի վճռի կատարումը տարաժամկետելու մասին՝ դրան կցելով պարտապան Թամարա Մարգարյանի դիմում-պարտավորագիրը, որով վերջինս պատրաստականություն է հայտնել վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան, ինչպես նաև խնդրել է՝ կատարողական թերթը կատարման ներկայացնել, իսկ կատարման ներկայացված լինելու դեպքում՝ դիմում ներկայացնել Դատարան՝ դատական ակտի կատարումը տարաժամկետելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 147-151**):

Դատարանը մերժել է Բանկի դիմումը՝ պատճառաբանելով, որ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու մասին դիմումը դատարանի կողմից կարող է քննության առարկա դառնալ միայն

կատարողական վարույթ հարուցված լինելու պարագայում, մինչդեռ տվյալ դեպքում չի ներկայացվել դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա կատարողական վարույթ հարուցված լինելու վերաբերյալ ապացույց, ինչն ինքնին (առանց դիմումի ըստ էության հիմնավորվածությունը և իրավաչափությունը ստուգելու) դիմումը մերժելու հիմք է:

Վերաքննիչ դատարանը Բանկի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժել է՝ պատճառաբանելով, որ Բանկը դիմումին կից ներկայացրել է միայն պարտապան Թամարա Մարգարյանի դիմում-պարտավորագիրը, մինչդեռ Դատարանի 02.12.2016 թվականի վճռի հիման վրա Բանկին կատարողական թերթեր են տրամադրվել ոչ միայն պարտապան Թամարա Մարգարյանի, այլև Դիանա Աղաջանյանի, Ռոման Առաքելյանի, Քյարամ Գուսեյանի, Վալյա Ավետիսյանի, Շողիկ Աղաջանյանի, Հայկ Սահակյանի, Հասմիկ Մաղաթյանի, Նելլի Առաքելյանի և Էդգար Առաքելյանի համար: Դրա արդյունքում Վերաքննիչ դատարանը հետևություն է արել այն մասին, որ «սույն գործի նյութերում առկա չէ ապացույց բոլոր պարտապանների՝ պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պատրաստակամության վերաբերյալ, ինչի արդյունքում ակնհայտ չէ նաև հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայությունը, այսինքն՝ առկա չէ որևէ տեղեկություն բոլոր պարտապանների կողմից դատական ակտը ողջամիտ ժամկետում կամովին կատարելու մտադրության մասին», և գտել է, որ Դատարանը գործի ելքի վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության, ուստիև վերաքննիչ բողոքը ենթակա է մերժման, իսկ դատական ակտը՝ անփոփոխ թողնման՝ հիմք ընդունելով որոշմամբ արձանագրված պատճառաբանությունները:

Վճռաբեկ դատարանը, վերոգրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանություններին և եզրահանգումներին, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականին կայացրած և 10.01.2017 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռի կատարման նպատակով Բանկի դիմումի հիման վրա 10.02.2017 թվականին տրվել են կատարողական թերթեր (**հատոր 1-ին, գ.թ. 130-141**):

Գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ նշված կատարողական թերթերն օրենքով սահմանված ժամկետում, այսինքն՝ 10.01.2018 թվականը ներառյալ ներկայացվել են ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն և դրանց հիման վրա հարուցվել են կատարողական վարույթներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բանկը 27.12.2018 թվականին, այսինքն՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռի կատարման օրենքով սահմանված ժամկետը 10.01.2018 թվականին լրանալուց հետո 11 ամիս անց դիմում է ներկայացրել Դատարան 02.12.2016 թվականի վճռի կատարումը տարածակետելու մասին՝ դրան կցելով պարտապան Թամարա Մարգարյանի դիմում-պարտավորագիրը, որով վերջինս պատրաստակամություն է հայտնել վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված դիմում-պարտավորագիրը պարտապան Թամարա Մարգարյանի կողմից տրվել է 06.11.2018 թվականին, այսինքն՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռի կատարման օրենքով սահմանված ժամկետը 10.01.2018 թվականին լրանալուց հետո:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռի կատարման նպատակով տրված կատարողական թերթերը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու և կատարողական թերթերը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշման առկայության մասին սույն գործում ապացույցների բացակայության փաստերն ինքնին բացառում են կատարման ոչ ենթակա դատական ակտի հարկադիր կատարման, ուստիև այդ դատական ակտի կատարումը տարածակետելու իրավական հնարավորությունը: Ինչ

վերաբերում է հարկադիր կարգով կատարման ոչ ենթակա դատական ակտի կամավոր կատարմանը, ինչի մասին է վկայում Թամարա Մարգարյանի կողմից Բանկին տրված դիմում-պարտավորագիրը, ապա վերջիններս գրկված չեն ինքնուրույն, իրենց կամքով և համաձայնությամբ սահմանել դատական ակտը կամովին կատարելու օրենքին չհակասող ցանկացած, այդ թվում նաև վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան վճարելու պայման:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռի կատարման նպատակով տրված կատարողական թերթերը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացած չլինելու և կատարողական թերթերը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթեր տված դատարանի որոշման բացակայության պայմաններում, մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիմքով դատական ակտի կատարումը չի կարող տարաժամկետվել, քանի որ դատական ակտի կատարումը տարաժամկետելու մասին դիմումը ներկայացվել է այդ դատական ակտի կատարման օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո: Նման պայմաններում գործի լուծման համար որևէ նշանակություն չունի բողոքաբերի կողմից վճռաբեկ բողոքում վկայակոչված այն հանգամանքը, թե ում (պահանջատիրոջ, թե պարտապանի) կողմից է ներկայացվել դատական ակտի տարաժամկետման դիմումը, քանի որ կատարման ոչ ենթակա դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու իրավական հնարավորության բացակայությունն ինքնին բացառում է նաև դատական ակտի կատարումը տարաժամկետելու իրավական հնարավորությունը՝ անկախ նրանից, թե ով է ներկայացրել դատական ակտի տարաժամկետման դիմումը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը մերժելով դատական ակտի կատարումը տարաժամկետելու մասին Բանկի դիմումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի որոշումը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող եզրափակիչ դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը սխալ է պատճառաբանված՝ Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ պատճառաբանում է Վերաքննիչ դատարանի դատական ակտը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.05.2019 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ԱՐԴ/3612/02/16 քաղաքացիական գործով 14.05.2021
թվականին կայացված որոշման պատճառաբանական
և եզրափակիչ մասերի վերաբերյալ

14.05.2021 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2021 թվականի մայիսի 14-ին գրավոր ընթացակարգով քննելով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ Վահագն Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.05.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի հայցի ընդդեմ Թամար Մարգարյանի, Դիանա և Շողիկ Աղաջանյանների, Ռոման Առաքելյանի, Քյարամ Գուսեյանի, Վալյա Ավետիսյանի ու Հայկ Մահակյանի (այսուհետ՝ նաև Համապատասխանողներ), երրորդ անձինք Հասմիկ Մաղաթյանի, Նելլի և Էդգար Առաքելյանների՝ գումար բռնագանձելու ու բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը մերժել, և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.05.2019 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ նույն որոշման պատճառաբանություններով:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Գ. Հակոբյանս և Ս. Դրմեյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատաւարական նախապարունություն նշել է հետևյալը

«Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Համապատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել 3.009,22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 11.06.2016 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը, վարկի գումարի մնացորդի և հաշվարկված տոկոսագումարի՝ 2.050,99 ԱՄՆ դոլարի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկել ու բռնագանձել տուժանք 0,2 տոկոսի չափով՝ բռնագանձումը տարածելով հիփոթեքի պայմանագրով գրավադրված անշարժ գույքի վրա:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է տարածանկետել ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռի կատարումը:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.01.2019 թվականի «Դատարանի ակտի կատարումը տարածանկետելու և կատարման կարգը փոխելու դիմումը մերժելու մասին» որոշմամբ Բանկի ներկայացուցչի դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.05.2019 թվականի որոշմամբ Բանկի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.01.2019 թվականի «Դատական ակտի կատարումը տարածանկետելու և կատարման կարգը փոխելու դիմումը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել»:

2. Վճուարեկ դատարանը որպես վճուարեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը

«Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես անհերքելի է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը վերաբերում է այն դեպքերին, երբ դատական ակտի տարածամեկտեղում դիմումը ներկայացրել է ոչ թե պահանջատերը, այլ պարտապանը, որպիսի նախապայմանի ապահովումը նպատակ է հետապնդում պաշտպանելու պահանջատիրոջ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված իրավունքները և օրինական շահերը: Իսկ պահանջատիրոջ կողմից դատական ակտի տարածամեկտեղում դիմում ներկայացվելու դեպքում պարտապանի կողմից պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելուն պատրաստ լինելու և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտության վերաբերյալ պայմանների պարտադիր առկայության անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ պահանջատերը՝ որպես սեփականատեր, իրականացնում է իր տնօրինչական իրավունքները և կրում այդ իրավունքի իրացման կամ չիրացման ռիսկն ու բոլոր բացասական հետևանքները:

Վերաքննիչ դատարանը, կայացնելով նման որոշում, ոչ իրավաչափ կերպով սահմանափակել է Բանկի՝ որպես սեփականատիրոջ իրավունքների իրացումը, քանի որ Դատարանի վճռով հաստատված Բանկի պահանջի իրավունքը (գույքը) իր սեփականությունն է, և Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը, այդ գույքի նկատմամբ կատարելու օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.05.2019 թվականի որոշումը»:

3. Վճուարեկ դատարանը որպես վճուարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը

«1) Դատարանը 02.12.2016 թվականի վճռով Բանկի հայցը բավարարել է՝ Համապատասխանողներին **համապարտության** կարգով բռնագանձել է 3.009,22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 11.06.2016 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը վարկի գումարի մնացորդի և հաշվարկված տոկոսագումարի՝ 2.050,99 ԱՄՆ դոլարի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկել ու բռնագանձել է 0,2 տոկոսի չափով տուժանք՝ բռնագանձումը տարածելով հիփոթեքի պայմանագրով գրավադրված անշարժ գույքի վրա (**հատոր 1-ին, գ.թ. 82-85**).

2) Դատարանի 02.12.2016 թվականի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 10.01.2017 թվականին, որի կապակցությամբ Բանկի դիմումով 10.02.2017 թվականին տրվել են կատարողական թերթեր (**հատոր 1-ին, գ.թ. 132-141**).

3) 27.12.2018 թվականին պահանջատեր Բանկը դիմում է ներկայացրել Դատարան 02.12.2016 թվականի վճիռի կատարումը տարածամեկտեղելու մասին՝ դրան կցելով պարտապան Թամարա Մարգարյանի դիմում-պարտավորագիրը, որով վերջինս պատրաստակամություն է հայտնել վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան, ինչպես նաև խնդրել է՝ կատարողական թերթը կատարման չներկայացնել, իսկ կատարման ներկայացված լինելու դեպքում՝ դիմում ներկայացնել Դատարան դատական ակտի կատարումը տարածամեկտեղելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 147-151**)»:

4. Վճռաբեկ դատարանը որպես Վճռաբեկ դատարանի պարճատարանություններ և եզրահանգումներ նշել է հետևյալը

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին.

- արդյո՞ք դատարանը կարող է մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիմքով փարաժամկետել դատական ակտի կատարումը, եթե դատական ակտի կատարումը փարաժամկետելու մասին դիմումը ներկայացվել է այդ դատական ակտի հարկադիր կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

Նախևառաջ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրք) 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Համանման կանոն է նախատեսվել նաև 09.04.2018 թվականից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, համաձայն որի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Ընդ որում, ինչպես նախկին, այնպես էլ գործող իրավակարգավորումների համաձայն՝ կատարում ենթադրող դատական ակտ կայացնելու դեպքում դրանում նշվում է, որ դատական ակտը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով (տե՛ս Նախկին օրենսգրքի 132-րդ հոդվածի 5-րդ մաս, կետ 6, 220-րդ հոդվածի 6-րդ մաս, կետ 5, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 5-րդ մաս, կետ 4, 381-րդ հոդվածի 6-րդ մաս, կետ 5): Այսինքն՝ օրենսդրական կարգավորումներից բխում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կարող է կատարվել ինչպես կամովին, այնպես էլ՝ հարկադիր կարգով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, սահմանված է նույն օրենքով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով կարգավորել է Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի միայն **հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը**, իսկ դատական ակտերի կամավոր կատարման համար առանձին կարգավորում չի նախատեսել՝ այն թողնելով պահանջատիրոջ և պարտապանի հայեցողությանը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (...):

Մինչև 04.08.2019 թվականը գործած խնրագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կատարողական թերթը ստացին անգամ կարող է կատարման ներկայացվել մեկ փաթեթով և անգամ այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը:

Մինչև 04.08.2019 թվականը գործած խնրագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պահանջված կատարողական թերթը չի համապատասխանում նույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված պահանջներին, կամ եթե լրացել է այն կատարման ներկայացնելու ժամկետը և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթը տրված դատարանի որոշումը, (...) հարկադիր կատարողը կատարողական թերթը վերադարձնում է պահանջարկիչին:

ՀՀ վճարելի դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան, իսկ հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը: Դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը (տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժինն ընդդեմ Անուշ Իսախյանի թիվ ՎԴ-6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

ՀՀ վճարելի դատարանի մեկ այլ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: ՀՀ վճարելի դատարանը գտել է, որ նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված, ինչն էլ հիմք է այն անվավեր ճանաչելու համար (տե՛ս ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի թիվ ՎԴ-4/0104/05/09 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):

Վերահասարակելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ վճարելի դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն ամրագրել է կատարողական թերթն ստացին անգամ կատարման ներկայացնելու մեկ փաթեթով և անգամ այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը: Ընդ որում, օրենքով սահմանվել է նաև կատարողական թերթը պահանջարկիչին վերադարձնելու հարկադիր կատարողի պարտականությունն այն դեպքում, եթե լրացել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տրված դատարանի որոշումը: Միևնույն ժամանակ, մինչև 04.08.2019 թվականը գործած խնրագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24րդ հոդվածով օրենսդիրը նախատեսել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնելու իրավական հնարավորություն, ըստ որի՝ քաղաքացի-պահանջարկիչը կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու

Ժամկետը հարգելի ճանաչված պարճատներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարողական թերթն առաջին անգամ կարող է հարկադիր կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը, իսկ այդ ժամկետը բաց թողնելու պարագայում նաև պետք է ներկայացվի կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանվել է նաև դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոփոխելու իրավական հնարավորություն:

Այսպես, մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարաժամկետելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը:

Դատարանը կարող է հեղաձգել կամ տարաժամկետել դատական ակտի կատարումը, եթե պարտապանը պահանջատիրոջը պարտասար է տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, քանի որ ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի կողմից դատական ակտի կատարումը հեղաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու մասին դիմումի ըստ էության քննությունը չի կասեցնում կատարողական վարույթը, այդ թվում՝ որպես հայցի ապահովման միջոց:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում բացահայտել վերոնշյալ իրավական նորմի բովանդակությունը՝ ելնելով օրենսդրի կամքից և նորմի ընդունման նպատակից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանել են կատարողական գործողությունների իրականացման ժամկետները: Մասնավորապես, նշված իրավանորմի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունների իրականացման համար սահմանվում է երկամսյա ժամկետ, (...): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարողական գործողությունների կատարման համար սահմանված երկամսյա ժամկետը Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարողի կողմից կարող է երկարաձգել մինչև 2 ամիս ժամկետով՝ հարկադիր կատարման ծառայության մարզային (Երևանի քաղաքային) բաժնի պետի միջնորդությամբ: Այսինքն, որպես ընդհանուր կանոն, օրենսդիրն ամրագրել է կատարողական գործողությունների կատարման երկամսյա ժամկետ, հետևաբար հարկադիր կատարողը պարտավոր է հարուցված կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարման միջոցների կիրառմամբ ապահովել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը: Մինչև նույն ժամանակ, դատական ակտերի կատարման տարաժամկետում օրենսդրի կողմից պարտապանին տրված հնարավորություն է՝ ուղղված դատական ակտի հիման վրա առաջացած պարտավորությունը կատարողական գործողությունների իրականացման ժամկետներից տարբերվող ժամկետներում կատարելուն: Այլ կերպ ասած, եթե կատարողական գործողությունների կատարման ընթացքում պարտապանը պատրաստակամություն է հայտնում կամովին կատարել դատական ակտի հիման վրա առաջացած պարտավորությունը, սակայն կատարողական գործողությունների իրականացման համար սահմանված ժամկետները, ըստ էության, խոչընդոտում են այդ պարտավորությունը կատարողական գործողությունների իրականացման ժամկետներից տարբերվող ժամկետներում կատարելուն, ապա պահանջատերը կամ պարտապանը կարող են դիմում ներկայացնել կատարողական թերթ տված դատարան, ի թիվս այնի, խնդրելով նաև տարաժամկետելու դատական ակտի կատարումը: Ընդ որում, դատարանը կարող

է տարածամկետով դատական ակտի կատարումը, եթե պարտապանը պահանջատիրոջը պատրաստ է տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, քանի որ ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, որպես դատական ակտի կատարումը տարածամկետով պայման նախատեսելով պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պարտապանի պատրաստակամության դրսևորումը՝ օրենսդիրը միաժամանակ նախատեսել է հարկադիր կատարման անհրաժեշտությունը բացակայելու պայմանը: Ըստ այդմ, դատարանը կարող է տարածամկետով դատական ակտի կատարումը, եթե պարտապանը պատրաստակամություն է հայտնել պահանջատիրոջը տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին, այսինքն՝ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, կամ որ նույնն է՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման անհրաժեշտությունը:

Ընդ որում, պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պարտապանի պատրաստակամությունը կարող է դրսևորվել ինչպես մինչև կատարողական թերթ տալը, այնպես էլ կատարողական վարույթի ընթացքում, ինչով պայմանավորված էլ օրենսդիրն ամրագրել է համապատասխան կարգավորումներ:

Այսպես. մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի 3-րդ պարբերության համաձայն՝ եթե դատարանը մինչև կատարողական թերթ տալը հետաձգել կամ տարածամկետով է դատական ակտի կատարումը, ապա կատարողական թերթում նշվում է դրա գործողության ժամկետի սկիզբը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մինչև կատարողական թերթ տալը դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետով մասին դատարանի որոշման իրավական հետևանքների առումով օրենսդիրը ցուցաբերել է տարբերակված մոտեցում:

Այսպես. եթե մինչև կատարողական թերթ տալը պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պարտապանի պատրաստակամության առկայության հիմքով դատական ակտի կատարումը *տարածամկետով* մասին դատարանի որոշումը պահանջատիրոջը չի ազատում այդ կատարողական թերթն օրենքով սահմանված ժամկետում կատարման ներկայացնելու պարտականության կատարումից, ապա մինչև կատարողական թերթ տալը դատական ակտի կատարումը *հետաձգելու* մասին դատարանի որոշման պարագայում, մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ուժով, պահանջատերը կատարողական թերթը կարող է կատարման ներկայացնել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ լրացել է դատական ակտի կատարումը հետաձգելու սահմանված ժամկետը:

ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (*իրեն ՀՀ սահմանադրական դատարանի 09.06.2015 թվականի թիվ ՄԴՈ-1213 որոշումը*): Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն

տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 02.12.2014 թվականի թիվ ՄԴՌ-1176 որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 03.05.2016 թվականի թիվ ՄԴՌ-1270 որոշումը):

Վերոգրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ և 23-րդ հոդվածների 1-ին մասերի 1-ին կետերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու հարցը կարող է քննարկման առարկա դառնալ և համապատասխան դատական ակտ կայացվել միայն դատական ակտը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետի ընթացքում՝ անկախ այն հանգամանքից, թե դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դիմումը ներկայացվել է մինչև կատարողական թերթ տալը, թե՛ կատարողական վարույթի ընթացքում: Իրավական որոշակիության սկզբունքի համատեքստում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում ամրագրված վերոգրյալ իրավակարգավորումներն անձի համար կանխատեսելի են դարձնում այն իրավաչափ ակնկալիքները, որ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հարկադիր կարգով կարող է կատարվել միայն օրենքով սահմանված ժամկետում կատարողական թերթը կատարման ներկայացվելու դեպքում, հետևաբար դատական ակտի հարկադիր կատարման առնչությամբ բոլոր, այդ թվում նաև դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու հարցին ուղղված գործողությունները, պետք է կատարվեն նշված ժամկետի ընթացքում, իսկ այդ ժամկետը բաց թողնված լինելու դեպքում նաև պետք է ներկայացվի կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշում առկա չլինելու պարագայում կատարողական թերթը չի կարող հիմք հանդիսանալ կատարողական վարույթ հարուցելու համար, իսկ հարկադիր կատարողը պարտավոր է պահանջատիրոջը վերադարձնել կատարողական թերթը: Այլ կերպ ասած՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշման բացակայության փաստերն ինքնին բացառում են դատական ակտի հարկադիր կատարման իրավական հնարավորությունը, իսկ կատարման ոչ ենթակա դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու պարագայում քողարկված ձևով կվերականգնվի կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը, ինչը չի բխում իրավական որոշակիության սկզբունքից:

Մինևույն ժամանակ, սակայն, կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշման բացակայության փաստերը չեն բացառում դատական ակտը կամովին կատարելու հնարավորությունը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ևս

մեկ անգամ ընդգծել, որ օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով կարգավորել է Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի միայն **հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը**, իսկ դատական ակտերի կամավոր կատարման համար առանձին կարգավորում չի նախատեսել՝ այն թողնելով պահանջատիրոջ և պարտապանի հայեցողությանը, հետևաբար պահանջատերն ու պարտապանն ազատ են ինքնուրույն, իրենց կամքով և համաձայնությամբ սահմանել դատական ակտը կամավոր կատարելու օրենքին չհակասող ցանկացած պայման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիմքով դատական ակտի կատարումը չի կարող տարածամկետով, եթե դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին դիմումը ներկայացվել է այդ դատական ակտի կատարման օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 02.12.2016 թվականի վճռով բավարարել է Բանկի հայցն ընդդեմ Համապատասխանողների և վերջիններից **համապարտության** կարգով բռնագանձել է 3.009,22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 11.06.2016 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը վարկի գումարի մնացորդի և հաշվարկված տոկոսագումարի՝ 2.050,99 ԱՄՆ դոլարի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկել ու բռնագանձել է 0,2 տոկոսի չափով տուժանք՝ բռնագանձումը տարածելով հիփոթեքի պայմանագրով գրավադրված անշարժ գույքի վրա (**հատոր 1-ին, գ.թ. 82-85**):

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 10.01.2017 թվականին, որի կապակցությամբ Բանկի դիմումով 10.02.2017 թվականին տրվել են կատարողական թերթեր (**հատոր 1-ին, գ.թ. 132-141**):

Պահանջատեր Բանկը 27.12.2018 թվականին դիմում է ներկայացրել Դատարան 02.12.2016 թվականի վճռի կատարումը տարածամկետելու մասին՝ դրան կցելով պարտապան Թամարա Մարգարյանի դիմում-պարտավորագիրը, որով վերջինս պատրաստականություն է հայտնել վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան, ինչպես նաև խնդրել է՝ կատարողական թերթը կատարման ներկայացնել, իսկ կատարման ներկայացված լինելու դեպքում՝ դիմում ներկայացնել Դատարան՝ դատական ակտի կատարումը տարածամկետելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 147-151**):

Դատարանը մերժել է Բանկի դիմումը՝ պատճառաբանելով, որ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու մասին դիմումը դատարանի կողմից կարող է քննության առարկա դառնալ միայն կատարողական վարույթ հարուցված լինելու պարագայում, մինչդեռ տվյալ դեպքում չի ներկայացվել դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա կատարողական վարույթ հարուցված լինելու վերաբերյալ ապացույց, ինչն ինքնին (առանց դիմումի ըստ էության հիմնավորվածությունը և իրավաչափությունը ստուգելու) դիմումը մերժելու հիմք է:

Վերաքննիչ դատարանը Բանկի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժել է՝ պատճառաբանելով, որ Բանկը դիմումին կից ներկայացրել է միայն պարտապան Թամարա Մարգարյանի դիմում-պարտավորագիրը, մինչդեռ Դատարանի 02.12.2016 թվականի վճռի հիման վրա Բանկին կատարողական թերթեր են տրամադրվել ոչ միայն պարտապան Թամարա Մարգարյանի, այլև Դիանա Աղաջանյանի, Ռոման Առաքելյանի, Քյարամ Գուսեյանի, Վալյա Ավետիսյանի, Շողիկ Աղաջանյանի, Հայկ Սահակյանի, Հասմիկ Մադաթյանի, Նելլի Առաքելյանի և Էդգար Առաքելյանի համար: Դրա արդյունքում Վերաքննիչ դատարանը հետևություն է արել այն մասին, որ «սույն գործի նյութերում առկա չէ ապացույց բոլոր պարտապանների՝ պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում

տրամադրելու պատրաստակամության վերաբերյալ, ինչի արդյունքում ակնհայտ չէ նաև հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայությունը, այսինքն՝ առկա չէ որևէ տեղեկություն բոլոր պարտապանների կողմից դատական ակտը ողջամիտ ժամկետում կամովին կատարելու մտադրության մասին», և գտել է, որ Դատարանը գործի ելքի վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության, ուստիև վերաքննիչ բողոքը ենթակա է մերժման, իսկ դատական ակտը՝ անփոփոխ թողնման՝ հիմք ընդունելով որոշմամբ արձանագրված պատճառաբանությունները:

Վճռաբեկ դատարանը, վերոգրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանություններին և եզրահանգումներին, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականին կայացրած և 10.01.2017 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռի կատարման նպատակով Բանկի դիմումի հիման վրա 10.02.2017 թվականին տրվել են կատարողական թերթեր (**հատոր 1-ին, գ.թ. 130-141**):

Գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ նշված կատարողական թերթերն օրենքով սահմանված ժամկետում, այսինքն՝ 10.01.2018 թվականը ներառյալ ներկայացվել են ՀՀ ԱԿ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն և դրանց հիման վրա հարուցվել են կատարողական վարույթներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բանկը 27.12.2018 թվականին, այսինքն՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռի կատարման օրենքով սահմանված ժամկետը 10.01.2018 թվականին լրանալուց հետո 11 ամիս անց դիմում է ներկայացրել Դատարան 02.12.2016 թվականի վճռի կատարումը տարածամկետելու մասին՝ դրան կցելով պարտապան Թամարա Մարգարյանի դիմում-պարտավորագիրը, որով վերջինս պատրաստակամություն է հայտնել վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված դիմում-պարտավորագիրը պարտապան Թամարա Մարգարյանի կողմից տրվել է 06.11.2018 թվականին, այսինքն՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռի կատարման օրենքով սահմանված ժամկետը 10.01.2018 թվականին լրանալուց հետո:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռի կատարման նպատակով տրված կատարողական թերթերը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու և կատարողական թերթերը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշման առկայության մասին սույն գործում ապացույցների բացակայության փաստերն ինքնին բացառում են կատարման ոչ ենթակա դատական ակտի հարկադիր կատարման, ուստիև այդ դատական ակտի կատարումը տարածամկետելու իրավական հնարավորությունը: Ինչ վերաբերում է հարկադիր կարգով կատարման ոչ ենթակա դատական ակտի կամավոր կատարմանը, ինչի մասին է վկայում Թամարա Մարգարյանի կողմից Բանկին տրված դիմում-պարտավորագիրը, ապա վերջիններս զրկված չեն ինքնուրույն, իրենց կամքով և համաձայնությամբ սահմանել դատական ակտը կամովին կատարելու օրենքին չհակասող ցանկացած, այդ թվում՝ նաև վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան վճարելու պայման:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2016 թվականի վճռի կատարման նպատակով տրված կատարողական թերթերը կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու և կատարողական թերթերը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթեր տված դատարանի որոշման բացակայության պայմաններում, մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիմքով դատական

ակտի կատարումը չի կարող տարածամկետվել, քանի որ դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին դիմումը ներկայացվել է այդ դատական ակտի կատարման օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո: Նման պայմաններում գործի լուծման համար որևէ նշանակություն չունի բողոքաբերի կողմից վճռաբեկ բողոքում վկայակոչված այն հանգամանքը, թե ում (պահանջատիրոջ, թե պարտապանի) կողմից է ներկայացվել դատական ակտի տարածամկետման դիմումը, քանի որ կատարման ոչ ենթակա դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու իրավական հնարավորության բացակայությունն ինքնին բացառում է նաև դատական ակտի կատարումը տարածամկետելու իրավական հնարավորությունը՝ անկախ նրանից, թե ով է ներկայացրել դատական ակտի տարածամկետման դիմումը:

Անփոփոխ վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը մերժելով դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին Բանկի դիմումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի որոշումը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող եզրակիսիչ դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը սխալ է պատճառաբանված՝ Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ պատճառաբանում է Վերաքննիչ դատարանի դատական ակտը»:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Գ. Հակոբյան և Մ. Դրամեյան, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական ու եզրահիսիչ մասերում՝ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արքահայտված կարծիքի հետ, շարադրում ենք մեր հայրուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Այսպես՝

Մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարածամկետելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը: Դատարանը կարող է հետաձգել կամ տարածամկետել դատական ակտի կատարումը, եթե պարտապանը պահանջատիրոջը պատրաստ է տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, քանի որ ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին:

Նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը պահանջատիրոջը և պարտապանին իրավունք է վերապահել ներկայացնելու ինչպես դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու, այնպես էլ՝ դրա կատարման կարգն ու եղանակը փոփոխելու մասին դիմում: Մինևսույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է, որ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու դիմումը բավարարելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը՝ պահանջատիրոջը՝ նրա պահանջին համարժեք ապահովում տրամադրելու վերաբերյալ պարտապանի (պարտապանների) պատրաստակամությունը, և դատական ակտի հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայությունը՝ պայմանավորված այն ողջամիտ ժամկետում կատարվելու ակնհայտությամբ:

Կարծում ենք, որ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության տառացի մեկնաբանությունից հետևում է, որ պահանջատիրոջը՝ նրա պահանջին համարժեք ապահովում տրամադրելու վերաբերյալ պարտապանի պատրաստակամությունը և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտ լինելը հանդիսանում են պարտադիր վավերապայմաններ և՛ պարտապանի, և՛ պահանջատիրոջ կողմից

դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դիմում ներկայացնելու դեպքերում:

Միաժամանակ հարկ ենք համարում բացահայտել վերոնշյալ իրավական նորմի բովանդակությունը՝ ելնելով օրենսդրի կամքից և նորմի ընդունման նպատակից: Այսպես, մեր գնահատմամբ՝ դատական ակտերի հարկադիր կատարման տարաժամկետումը պարտապանին տրվող հնարավորությունն է՝ ուղղված դատական ակտի հիման վրա առաջացած պարտավորությունը կատարողական թերթում նշված ժամկետից տարբերվող ժամկետներում կատարելուն: Նման հնարավորություն տալու նպատակներից է, օրինակ, պահանջատերերի և պարտապանների իրավունքների ու օրինական շահերի հավասարակշռությունն ապահովելն այնպես, որ դատարանի վճռի կատարման այդ կարգը համապատասխանի համաչափության պահանջին: Գտնում ենք, որ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված պայմանները հանդիսանում են պահանջատիրոջ պահանջների բավարարման լրացուցիչ երաշխիքներ այն դեպքում, երբ դատական ակտի կատարումը տարաժամկետելու դիմումը ներկայացրել է պարտապանը: Մինչդեռ ցանկանում ենք արձանագրել, որ այդ երաշխիքների տրման անհրաժեշտությունը բացակայում է բոլոր այն դեպքերում, երբ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում նշված դիմումը ներկայացնում է պահանջատերը հետևյալ պատճառաբանությամբ.

ԸՆ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականության իրավունքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք:

ԸՇ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ԸԸ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) տվել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքը ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*ipso Prespos Compania Naviera S.A. and others v. Belgium գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, 31-րդ կետ*): «Օրինական սպասելիք» առկա է բոլոր այն դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերում են սեփականության իրավունքին (*ipso Kopecký v. Slovakia գործով Եվրոպական դատարանի 28.09.2004 թվականի վճիռը, կետեր 53-61*):

Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*ipso Burdov v. Russia գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետ*):

ԸՉ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձին հնարավորություն է տալիս սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքներն

ու դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը (*լրեն ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն ընդդեմ «Գորիս-Ասպակի» ՍՊԸ-ի թիվ ՄԴ3/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո ցանկանում ենք արձանագրել, որ դատական ակտի հիման վրա ծագած պահանջի իրավունքը ևս Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով դիտվում է որպես սեփականություն՝ «օրինական սպասելիք», ուստի պահանջատիրոջ կողմից դատական ակտի տարածամկետման դիմում ներկայացվելու դեպքում դատարանը պետք է առաջնորդվի բացառապես պահանջատիրոջ դիրքորոշմամբ, քանի որ պահանջատերը որպես սեփականատեր, իրականացնում է իր տնօրինչական իրավունքները և կրում այդ իրավունքի իրացման կամ չիրացման բացասական հետևանքները, այդ թվում՝ տարածամկետման ժամանակացույցով դատական ակտի կատարման հնարավոր բացասական հետևանքների ռիսկը:

Մինչև նույն ժամանակ պետք է փաստել, որ օրենսդրի կողմից ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 09.07.2019 թվականի թիվ ՀՕ-126-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 04.08.2019 թվականին) լրացվել է Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասն այլևս ունի հետևյալ շարադրանքը. «Կատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարածամկետելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը: Դատարանը կարող է *պարտապանի դիմումով* հետաձգել կամ տարածամկետել դատական ակտի կատարումը, եթե պարտապանը պահանջատիրոջը պատրաստ է տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, քանի որ ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ, փաստորեն, օրենսդիրն Օրենքի վերագրյալ փոփոխությունից հետո դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու դիմումը ներկայացնելիս վերը նշված երկու պարտադիր պայմանների միաժամանակյա առկայության անհրաժեշտությունը նախատեսել է միայն պարտապանի կողմից համապատասխան դիմում ներկայացնելու դեպքի համար, որի պայմաններում պահանջատիրոջ կողմից նման դիմում ներկայացվելու դեպքում դիմումի հետ միաժամանակ պարտապանների՝ պահանջին համարժեք ապահովում տրամադրելու մասին պատրաստականությունը և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտ լինելը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու մասին պարտադիր կանոնը կիրառելի չէ:

Տվյալ դեպքում Բանկը, Դատարանի 02.12.2016 թվականի վճռի հիման վրա՝ յուրաքանչյուր պարտապանի մասով տրված կատարողական թերթերի հիմքով հանդիսանալով պահանջատեր, դիմում է ներկայացրել Դատարան 02.12.2016 թվականի վճռի կատարումը տարածամկետելու մասին՝ նշելով, որ պարտապան Թամարա Մարգարյանը դիմում-պարտավորագիր է ներկայացրել Բանկին պարտավորության կատարումը տարածամկետելու համար, որի հիման վրա Բանկը դադարեցրել է վարկի մայր գումարի և տոկոսագումարի վրա հաշվեգրվող տուժանքի հետագա հաշվարկը (այդ մասով պահանջը ներվել է): Միաժամանակ Բանկը կցել է պարտապան Թամարա Մարգարյանի դիմում-պարտավորագիրը:

Պարտապան Թամարա Մարգարյանի՝ Բանկին հասցեագրված դիմում-պարտավորագրի հետազոտումից հետևում է, որ վերջինս խնդրել է նաև հնարավորություն տալ վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան, ինչպես նաև՝ կատարողական թերթը կատարման չներկայացնել, իսկ կատարման ներկայացված

լինելու դեպքում՝ դիմում ներկայացնել Դատարան դատական ակտի կատարումը տարածամկետելու նպատակով:

Դատարանը, պատճառաբանելով, որ «Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից ակնհայտ է, որ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու մասին դիմումը դատարանի կողմից կարող է քննության առարկա դառնալ միայն կատարողական վարույթ հարուցված լինելու պարագայում: Մինչդեռ տվյալ դեպքում չի ներկայացվել դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա կատարողական վարույթ հարուցված լինելու վերաբերյալ ապացույց, ինչն ինքնին (առանց դիմումի ըստ էության հիմնավորվածությունը և իրավաչափությունը ստուգելու) դիմումը մերժելու հիմք է», որոշում է կայացրել Բանկի դիմումը մերժելու մասին:

Վերաքննիչ դատարանը Բանկի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժել է՝ պատճառաբանելով, որ Բանկը դիմումին կից ներկայացրել է միայն պարտապան Թամարա Մարգարյանի դիմում-պարտավորագիրը, մինչդեռ Դատարանի 02.12.2016 թվականի վճռի հիման վրա Բանկին կատարողական թերթեր են տրամադրվել ոչ միայն պարտապան Թամարա Մարգարյանի, այլև Դիանա Աղաջանյանի, Ռոման Առաքելյանի, Քյարամ Գուսեյանի, Վալյա Ավետիսյանի, Շողիկ Աղաջանյանի, Հայկ Սահակյանի, Հասմիկ Մաղաթյանի, Նելլի Առաքելյանի և Էդգար Առաքելյանի համար: Դրա արդյունքում Վերաքննիչ դատարանը հետևություն է արել այն մասին, որ «սույն գործի նյութերում առկա չէ ապացույց բոլոր պարտապանների՝ պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պատրաստակամության վերաբերյալ, ինչի արդյունքում ակնհայտ չէ նաև հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայությունը, այսինքն՝ առկա չէ որևէ տեղեկություն բոլոր պարտապանների կողմից դատական ակտը ողջամիտ ժամկետում կամովին կատարելու մտադրության մասին», և գտել է, որ Դատարանը գործի ելքի վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության, ուստիև վերաքննիչ բողոքը եկթակա է մերժման, իսկ դատական ակտը՝ անփոփոխ թողնման՝ հիմք ընդունելով որոշմամբ արձանագրված պատճառաբանությունները:

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի վերը նշված պատճառաբանությունը՝ գտնում ենք, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, այն չէր կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը մերժելու և այդ պատճառաբանությամբ դատական ակտն անփոփոխ թողնելու համար, քանի որ Բանկը, հանդիսանալով կատարողական թերթում նշված պահանջատեր, դիմում է ներկայացրել կատարողական թերթ տված դատարան՝ դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին՝ դրան կցելով համապարտ պարտապաններից Թամարա Մարգարյանի դիմումը, որով վերջինս պատրաստակամություն է հայտնել վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան, և պահանջատիրոջ դիմումը, որով վերջինս հայտնել է վարկի մայր գումարի և տոկոսագումարի վրա հաշվեգրվող տուժանքի հետագա հաշվարկը դադարեցնելու, այդ մասով պահանջը ներված լինելու մասին: Մինևսույն ժամանակ, Բանկի վրա չպետք է դրվեր պարտականություն ներկայացնելու ապացույցներ առ այն, որ սույն գործով համապարտ պարտապանների (Համապատասխանողներ) մոտ առկա է դատական ակտը ողջամիտ ժամկետում կամովին կատարելու մտադրություն, քանի որ Բանկը, տվյալ իրավահարաբերությունում պահանջատեր լինելու հանգամանքով պայմանավորված, իրականացրել է իր տնօրինչական իրավունքը՝ հնարավորություն տալով Համապատասխանողներին պարտավորությունը կատարել տարածամկետ կարգով՝ առանց պարտավորության բարեխիղճ կատարումը ապահովող լրացուցիչ իրավական միջոցներ նախատեսելու:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Բանկը դիմումին կից ներկայացրել է միայն պարտապան Թամարա Մարգարյանի դիմում-պարտավորագիրը, մինչդեռ Դատարանի 02.12.2016 թվականի վճռի հիման վրա Բանկին կատարողական թերթեր են տրամադրվել ոչ միայն պարտապան Թամարա Մարգարյանի, այլև Դիանա Աղաջանյանի, Ռոման Առաքելյանի, Քյարամ Գուսեյանի, Վալյա Ավետիսյանի, Շողիկ Աղաջանյանի, Հայկ Սահակյանի, Հասմիկ Մաղաթյանի, Նելլի Առաքելյանի

և Էդգար Առաքելյանի համար, որի պայմաններում հետևություն է արել այն մասին, որ «սույն գործի նյութերում առկա չէ ապացույց բոլոր պարտապանների՝ պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պատրաստակամության վերաբերյալ, ինչի արդյունքում ակնհայտ չէ նաև հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայությունը, այսինքն՝ առկա չէ որևէ տեղեկություն բոլոր պարտապանների կողմից դատական ակտը ողջամիտ ժամկետում կամովին կատարելու մտադրության մասին», ապա այդ մասով հարկ ենք համարում փաստել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 360-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ պարտավորությանը մասնակցում են մի քանի պարտատեր կամ մի քանի պարտապան, պարտատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել կատարելու պարտավորությունը, իսկ պարտապաններից յուրաքանչյուրը պարտավոր է այն կատարել մյուսների հետ հավասար բաժնով, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ պարտավորության պայմաններից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համապարտ պարտականությունը (պատասխանատվությունը) կամ համիրավ պահանջը ծագում է, եթե պարտականության համապարտությունը կամ պահանջի համիրավությունը նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես, եթե անբաժանելի է պարտավորության առարկան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: Համապարտ պարտապաններից մեկից լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապաններից: Համապարտ պարտապանները պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:

Տվյալ դեպքում, ինչպես արդեն իսկ վերը նշեցինք, Դատարանը վճռով որոշված գումարը Համապատասխանողներից բռնագանձել է *համապարտության կարգով*, որպիսի հանգամանքն ինձ համար հիմք է արձանագրելու, որ սույն գործով կողմերի միջև կնքված պայմանագրերի ուժով պարտավորությանը մասնակցել են մի քանի համապարտ պարտապաններ, ուստի տվյալ իրավահարաբերությունում որպես պարտատեր հանդես եկող Բանկն իրավունք ուներ, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: Սույն գործով Համապատասխանողների պարտավորությունն այնուամենայնիվ միանձնյա կատարելու պատրաստակամություն է հայտնել միայն Թամարա Մարգարյանը: Վերջինիս կողմից պարտավորությունը լրիվ կատարվելու դեպքում մյուս համապարտ պարտապանների (Համապատասխանողների) համար պարտավորությունը կդադարի:

Վերոգրյալից, ինչպես նաև վերոշարադրյալ իրավական դիրքորոշումներից ելնելով՝ գտնում ենք, որ Բանկը, օգտվելով Օրենքի 22-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 360-362-րդ հոդվածներով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված տնօրինչականության սկզբունքից, ներկայացրել է իրավաչափ դիմում, որը ենթակա էր բավարարման, ինչն անտեսվել է և՛ Դատարանի, և՛ Վերաքննիչ դատարանի կողմից:

Դրանցի ելնելով գտնում ենք, որ վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար՝ միաժամանակ կիրառելով Վճռաբեկ դատարանի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Գործը ողջամիտ ժամկետում

քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը կրիսեր արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Գ. Հակոբյան
Մ. Դրմեյան

**35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ	ՏԴ/0956/02/17 2021թ.
Քաղաքացիական գործ թիվ	ՏԴ/0956/02/17	
Նախագահող դատավոր՝	Մ. Հարթենյան	
Դատավորներ՝	Կ. Չիլինգարյան Ա. Սմբատյան	

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 25-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) հայցի ընդդեմ Արթուր Լալայանի, Արտակ Ավալյանի, Կարեն Գրիգորյանի և Վարդան Գրիգորյանի (այսուհետ՝ Համապատասխանողներ)՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.06.2019 թվականի որոշման դեմ Բանկի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Համապատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել 614.231,9 ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 16.11.2017 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը վարկի գումարի մնացորդի և կուտակված տոկոսագումարի հանրագումարի՝ 606.919,7 ՀՀ դրամի նկատմամբ

յուրաքանչյուր ուղացված օրվա համար հաշվարկել ու բռնագանձել սպառողական վարկի պայմանագրի 5.6 կետով նախատեսված օրական 0,2 տոկոսի չափով տուժանքը:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Իսկանդարյան) 07.02.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է տարածամկետել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.02.2018 թվականի վճռի կատարումը:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Օհանյան) (այսուհետև՝ Դատարան) 08.02.2019 թվականի «Դատարանի ակտի կատարումը տարածամկետելու մասին» որոշումը Բանկի դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետև՝ Վերաքննիչ դատարան) 04.06.2019 թվականի որոշումը Բանկի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 08.02.2019 թվականի «Դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը (ներկայացուցիչ Վահագն Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ և 163-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել մինչև 04.08.2019 թվականը գործած խնդրությանը «Դատարանի ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես անհաստատել է հետևյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել մինչև 04.08.2019 թվականը գործած խնդրությանը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ անտեսելով, որ նշված մասի երկրորդ սախադասությունը վերաբերում է այն դեպքերին, երբ դատական ակտի տարածամկետման դիմումը ներկայացրել է ոչ թե պահանջատերը, այլ՝ պարտապանը: Նշված նորմով սահմանված նախապայմանների ապահովումը նպատակ ունի ապահովելու պահանջատիրոջ՝ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Պահանջատիրոջ կողմից դատական ակտի տարածամկետման դիմում ներկայացվելու դեպքում պարտապանի կողմից պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պատրաստ լինելու և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտության վերաբերյալ պայմանների պարտադիր առկայության անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ պահանջատերը, որպես սեփականատեր, իրականացնում է իր տնօրինչական իրավունքները և վերջինս է կրում այդ իրավունքի իրացման կամ չիրացման ռիսկն ու բոլոր բացասական հետևանքները:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ Դատարանի վճռով հաստատված Բանկի պահանջի իրավունքը իր սեփականությունն է, և Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը, այդ գույքի նկատմամբ կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, կայացրել է վերը նշված որոշումը՝ խախտելով ՀՀ Սահմանադրության, Կոնվենցիայի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները, և ոչ իրավաչափ կերպով սահմանափակելով Բանկի, որպես սեփականատիրոջ, իրավունքների իրացումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.06.2019 թվականի որոշումը:

3. Վճուարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դատարանը 07.02.2018 թվականի վճռով Բանկի հայցը բավարարել է՝ Համապատասխանողներից **համապարտության** կարգով բռնագանձել է 614.231,9 ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 16.11.2017 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը վարկի գումարի մնացորդի և կուտակված տոկոսագումարի հանրագումարի՝ 606.919,7 ՀՀ դրամի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկել ու բռնագանձել է սպառողական վարկի պայմանագրով նախատեսված օրական 0,2 տոկոսի չափով տուժանքը: Դատարանի 07.02.2018 թվականի վճիռը չի բողոքարկվել և 12.03.2018 թվականին մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 62-66**).

2) նշված վճռի հիման վրա 13.03.2018 թվականին Համապատասխանողներից յուրաքանչյուրի մասով տրվել են կատարողական թերթեր (**հատոր 1-ին, գ.թ. 84-87**).

3) պահանջատեր Բանկը դիմում է ներկայացրել Դատարան 07.02.2018 թվականի վճռի կատարումը տարածամեկտեղու մասին՝ դրան կցելով պարտապաններից Արտակ Ավայանի դիմում-պարտավորագիրը, որով վերջինս, ըստ էության, պատրաստակամություն է հայտնել վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան, ինչպես նաև խնդրել է կատարողական թերթը կատարման ներկայացված լինելու դեպքում դիմում ներկայացնել Դատարան՝ դատական ակտի կատարումը տարածամեկտեղու համար: Միաժամանակ դիմումով Բանկը խնդրել է՝ դիմումը բավարարել, այն է՝ թիվ ՏԴ/0956/02/17 քաղաքացիական գործով 07.02.2018 թվականին կայացված դատական ակտի չկատարված մասը՝ 376.793 (երեք հարյուր յոթանասուներեք հազար յոթ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ գումարը (վարկի մայր գումար) պատասխանողներ Արթուր Սամվելի Լալայանից, Արտակ Միրզաչի Ավայանից, Կարեն Հրաչիկի Գրիգորյանից և Վարդան Հրաչիկի Գրիգորյանից համապարտության կարգով հոգուտ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բռնագանձել հետևյալ ժամանակացույցի համաձայն՝

- 03/12/2018-14/01/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 15/01/2019-04/02/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 05/02/2019-04/03/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 05/03/2019-03/04/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 04/04/2019-06/05/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 07/05/2019-04/06/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 05/06/2019-02/07/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 03/07/2019-05/08/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 06/08/2019-04/09/2019թ.-ը՝ պարտքի մնացած ողջ գումարը (**հատոր 1-ին, գ.թ. 105,**

106):

4. Վճուարեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճուարեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճուարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճուարեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյո՞ք անհրաժեշտ է Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին դիմումի հետ միաժամանակ ներկայացնել պարտապանների՝ պահանջին համարժեք ապահովում տրամադրելու մասին պարտապարկամոթյունը և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտ լինելը հիմնավորող ապացույցներն այն դեպքում, երբ դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին դիմումը ներկայացրել է պահանջարեղ:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարածամկետելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը:

Դատարանը կարող է հետաձգել կամ տարածամկետել դատական ակտի կատարումը, եթե պարտապանը պահանջատիրոջը պատրաստ է տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, քանի որ ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին:

Նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը պահանջատիրոջը և պարտապանին իրավունք է վերապահել ներկայացնելու ինչպես դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու, այնպես էլ՝ դրա կատարման կարգն ու եղանակը փոփոխելու մասին դիմում: Միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է, որ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու դիմումը բավարարելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը՝ պահանջատիրոջը՝ նրա պահանջին համարժեք ապահովում տրամադրելու վերաբերյալ պարտապանի (պարտապանների) պատրաստակամությունը, և դատական ակտի հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայությունը՝ պայմանավորված այն ողջամիտ ժամկետում կատարվելու ակնհայտությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության տառացի մեկնաբանությունից հետևում է, որ պահանջատիրոջը՝ նրա պահանջին համարժեք ապահովում տրամադրելու վերաբերյալ պարտապանի պատրաստակամությունը և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտ լինելը հանդիսանում են պարտադիր վավերապայմաններ և՛ պարտապանի, և՛ պահանջատիրոջ կողմից դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու դիմում ներկայացնելու դեպքերում:

Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում բացահայտել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի իրավական նորմի բովանդակությունը՝ ելնելով օրենսդրի կամքից և նորմի ընդունման նպատակից: Այսպես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ դատական ակտերի հարկադիր կատարման տարածամկետում պարտապանին տրվող հնարավորությունն է՝ ուղղված դատական ակտի հիման վրա առաջացած պարտավորությունը կատարողական թերթում նշված ժամկետից տարբերվող ժամկետներում կատարելուն: Նման հնարավորություն տալու նպատակներից է, օրինակ, պահանջատերերի և պարտապանների իրավունքների ու օրինական շահերի հավասարակշռությունն ապահովելն այնպես, որ դատարանի վճռի կատարման այդ կարգը համապատասխանի համաչափության պահանջին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված պայմանները հանդիսանում են պահանջատիրոջ պահանջների բավարարման լրացուցիչ երաշխիքներ այն դեպքում, երբ դատական ակտի կատարումը տարածանկետելու դիմումը ներկայացրել է պարտապանը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ երաշխիքների տրման անհրաժեշտությունը բացակայում է բոլոր այն դեպքերում, երբ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում նշված դիմումը ներկայացնում է **պահանջատերը** հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականության իրավունքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) տվել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքը ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*ipso Pres-sos Compania Naviera S.A. and others v. Belgium գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, 31-րդ կետ*): «Օրինական սպասելիք» առկա է բոլոր այն դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերում են սեփականության իրավունքին (*ipso Kopecký v. Slovakia գործով Եվրոպական դատարանի 28.09.2004 թվականի վճիռը, կետեր 53-61*):

Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*ipso Burdov v. Russia գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետ*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձին հնարավորություն է տալիս սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքներն ու դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը (*ipso ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն ընդդեմ «Գորիս-Ապակի» ՍՊԸ-ի թիվ ՄԴ3/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի հիման վրա ծագած պահանջի իրավունքը ևս Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով դիտվում է որպես սեփականություն՝ «օրինական

սպասելիք», ուստի պահանջատիրոջ կողմից դատական ակտի տարածամկետման դիմում ներկայացվելու դեպքում դատարանը պետք է առաջնորդվի բացառապես պահանջատիրոջ դիրքորոշմամբ, քանի որ պահանջատերը՝ որպես սեփականատեր, իրականացնում է իր տնօրինչական իրավունքները և կրում այդ իրավունքի իրացման կամ չիրացման բացասական հետևանքները, այդ թվում՝ տարածամկետման ժամանակացույցով դատական ակտի կատարման հնարավոր բացասական հետևանքների ռիսկը:

Մինչույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 09.07.2019 թվականի թիվ ՀՕ-126-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 04.08.2019 թվականին) Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը փոփոխվել է: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասն այլևս ունի հետևյալ շարադրանքը. «Դատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարածամկետելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը: Դատարանը կարող է *պարտապանի դիմումով* հետաձգել կամ տարածամկետել դատական ակտի կատարումը, եթե պարտապանը պահանջատիրոջը պատրաստ է տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, քանի որ ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստորեն, օրենսդիրը, հաշվի առնելով Օրենքի 22-րդ հոդվածի նպատակը, Օրենքի վերոգրյալ փոփոխությունից հետո այլևս չի նախատեսել պարտապանի՝ պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պատրաստականությունը և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտ լինելը համարելու մասին պահանջները՝ *պարտապիրոջ կողմից համապարասխան դիմում ներկայացնելու համար*:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ *պարտատիրոջ կողմից* ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված տնօրինչականության սկզբունքից ելնելով միայն դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին դիմումը ինքնին բավարար է՝ այն բավարարելու համար, եթե դատական ակտը ներկայացվել է հարկադիր կատարման:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու մասին դիմումը պահանջատիրոջ կողմից ներկայացվելու դեպքում դիմումի հետ միաժամանակ պարտապանների՝ պահանջին համարժեք ապահովում տրամադրելու մասին պատրաստականությունը և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտ լինելը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու մասին պարտադիր կանոնը կիրառելի չէ:

Վճռաբեկ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Տվյալ դեպքում Բանկը, Դատարանի 07.02.2018 թվականի վճռի հիման վրա՝ յուրաքանչյուր պարտապանի մասով տրված կատարողական թերթերի հիմքով հանդիսանալով պահանջատեր, դիմում է ներկայացրել Դատարան 07.02.2018 թվականի վճռի կատարումը տարածամկետելու մասին՝ նշելով, որ պարտապան Արտակ Ավայանը դիմում-պարտավորագիր է ներկայացրել Բանկին՝ պարտավորության կատարումը տարածամկետելու համար, որի հիման վրա Բանկը դադարեցրել է վարկի մայր գումարի և տոկոսագումարի վրա հաշվեգրվող տուժանքի հետագա հաշվարկը (այդ մասով պահանջը ներվել է): Միաժամանակ Բանկը կցել է պարտապան Արտակ Ավայանի դիմում-պարտավորագիրը:

Պարտապան Արտակ Ավայանի Բանկին հասցեագրված դիմում-պարտավորագրի հետագառումից հետևում է, որ վերջինս խնդրել է նաև հնարավորություն տալ վճարելու վճռում նշված վարկի գումարը դիմումում ներկայացված ժամանակացույցին

համապատասխան, ինչպես նաև՝ կատարողական թերթը կատարման ներկայացված լինելու դեպքում դիմում ներկայացնել Դատարան դատական ակտի կատարումը տարածամկետերում նպատակով:

Դատարանը, պատճառաբանելով, որ Դատարան է ներկայացվել միայն Արտակ Ավալյանի ստորագրած դիմում-պարտավորագրի պատճենը և չի ներկայացվել որևէ այլ ապացույց, որով կհիմնավորվի պարտապանի (պարտապանների) կողմից պահանջին համարժեք ապահովում տրամադրելու փաստը, ինչպես նաև՝ դատական ակտը կամովին կատարվելու ակնհայտությունն ու հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայությունը, գտել է, որ միայն այդ հիմքերի առկայության պարագայում է, որ Դատարանը կարող է հետաձգել կամ տարածամկետել դատական ակտի կատարումը, ու որոշում է կայացրել դիմումը մերժելու մասին:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի դատական ակտն թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ Բանկը դիմումին կից ներկայացրել է միայն պարտապան Արտակ Ավալյանի դիմում-պարտավորագիրը, մինչդեռ Դատարանի 07.02.2018 թվականի վճռով պարտապաններ են նաև Արթուր Լալայանը, Կարեն Գրիգորյանը և Վարդան Գրիգորյանը, այսինքն՝ տվյալ դեպքում բացակայել են դատական ակտի կատարումը տարածամկետելու օրենքով սահմանված հիմքերը, հետևաբար դատական ակտի կատարումը տարածամկետելու դիմումը մերժելու վերաբերյալ Դատարանի եզրահանգումը իրավաչափ է: Մինևույն ժամանակ Վերաքննիչ դատարանը նաև պատճառաբանել է, որ Բանկի կողմից ներկայացվել է Արտակ Ավալյանի դիմում-պարտավորագրի պատճենը, որը բովանդակում է «իսկականի հետ ճիշտ է» նշում և անհայտ անձի կողմից կատարված ստորագրություն, մինչդեռ դիմում-պարտավորագրի պատճենը չի կարող ծառայել որպես դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին դիմումը բավարարելու համար օրենսդրորեն սահմանված պայմանների միաժամանակյա առկայության հիմնավորմանը, քանի որ պատճեն է, իսկ «իսկականի հետ ճիշտ է» գրառումը հաստատող ստորագրությունը կատարվել է անհայտ անձի կողմից, դիմում-պարտավորագրի պատճենի բովանդակությունից հնարավոր չէ հետևություն անել ինչպես պարտապանի կողմից պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պատրաստակամության, այնպես էլ ողջամիտ ժամկետում դատական ակտը կամովին կատարվելու ողջամիտ հնարավորությամբ պայմանավորված հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտության մասին:

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի վերը նշված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը և ոչ իրավաչափորեն է մերժել Բանկի վերաքննիչ բողոքը, անտեսելով, որ վերջինս, որպես կատարողական թերթում նշված **պահանջատեր** դիմում է ներկայացրել կատարողական թերթ տված դատարան՝ դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին: Ընդ որում պահանջատեր Բանկն իր դիմումին կցել է նաև համապարտ պարտապաններից Արտակ Ավալյանի դիմումը, որով Արտակ Ավալյանը պարտապանություն է հայտնել վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան, ինչպես նաև պահանջատիրոջ դիմումը, որով վերջինս հայտնել է վարկի մայր գումարի և տոկոսագումարի վրա հաշվեգրվող տուժանքի հետագա հաշվարկը դադարեցնելու, այդ մասով պահանջը ներկայացնելու մասին:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Բանկի վրա չպետք է դրվեր պարտականություն ներկայացնելու Արտակ Ավալյանի դիմում-պարտավորագրի բնօրինակը, ինչպես նաև ապացույցներ առ այն, որ սույն գործով համապարտ պարտապանների (Համապատասխանողներ) մոտ առկա է դատական ակտը ողջամիտ ժամկետում կամովին կատարելու մտադրություն, քանի որ Բանկը, տվյալ իրավահարաբերությունում պահանջատեր լինելու հանգամանքով պայմանավորված, իրականացրել է իր տնօրինչական իրավունքը՝ հնարավորություն տալով Համապատասխանողներին պարտավորությունը կատարել տարածամկետ կարգով՝ առանց պարտավորության բարեխիղճ կատարումը ապահովող լրացուցիչ իրավական միջոցներ նախատեսելու:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Բանկը դիմումին կից ներկայացրել է միայն պարտապան Արտակ Ավալյանի դիմում-պարտավորագիրը, մինչդեռ Դատարանի 07.02.2018 թվականի վճռով պարտապաններ են նաև Արթուր Լալայանը, Կարեն Գրիգորյանը և Վարդան Գրիգորյանը, ուստի տվյալ դեպքում բացակայել են դատական ակտի կատարումը տարաժամկետելու օրենքով սահմանված հիմքերը, ապա այդ մասով Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 360-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ պարտավորությանը մասնակցում են մի քանի պարտատեր կամ մի քանի պարտապան, պարտատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել կատարելու պարտավորությունը, իսկ պարտապաններից յուրաքանչյուրը պարտավոր է այն կատարել մյուսների հետ հավասար բաժնով, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ պարտավորության պայմաններից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համապարտ պարտականությունը (պատասխանատվությունը) կամ համիրավ պահանջը ծագում է, եթե պարտականության համապարտությունը կամ պահանջի համիրավությունը նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես, եթե անբաժանելի է պարտավորության առարկան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համապարտ պարտապաններից մեկից լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապաններից, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ համապարտ պարտապանները պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապաններից մեկի կողմից համապարտ պարտականությունը լրիվ կատարելը մնացած պարտապաններին ազատում է պարտատիրոջ հանդեպ պարտականությունը կատարելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:

Տվյալ դեպքում, ինչպես արդեն վերը նշվեց, Դատարանը վճռով որոշված գումարը Համապատասխանողներից բռնագանձել է *համապարտության կարգով*, որպիսի հանգամանքը Վճռաբեկ դատարանի համար հիմք է արձանագրելու, որ սույն գործով կողմերի միջև կնքված պայմանագրերի ուժով պարտավորությանը մասնակցել են մի քանի համապարտ պարտապաններ, ուստի տվյալ իրավահարաբերությունում որպես պարտատեր հանդես եկող Բանկն իրավունք ուներ, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Համապատասխանողների պարտավորությունն այնուամենայնիվ միանձնյա կատարելու պատրաստակամություն է հայտնել միայն Արտակ Ավալյանը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերջինիս կողմից պարտավորությունը լրիվ կատարվելու դեպքում մյուս համապարտ պարտապանների (Համապատասխանողների) համար Բանկի հանդեպ պարտավորությունը կղաղարի:

Հաշվի առնելով վերոգրյալը և դրանք համադրելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Բանկը, օգտվելով Օրենքի 22-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 360-362-րդ հոդվածներով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված տնօրինականության սկզբունքից, ներկայացրել է իրավաչափ դիմում, որը ենթակա էր բավարարման, ինչն անտեսվել է և՛ Դատարանի, և՛ Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքերի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճարել դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարել դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճարել դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճարել դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճարել դատարանի պարզապահանջությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: (...)

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճարել դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի առաջին պարբերության համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձինք՝ գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, վճիռների կատարումը հետաձգելու կամ տարածվելու, վճիռների կատարման եղանակը և կարգը փոփոխելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով:

Նկատի ունենալով, որ սույն գործով վճարել բողոքը ենթակա է բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ բեկանման և փոփոխման, ինչի արդյունքում

Բանկի դիմումը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականությունը պետք է կրեն Համապատասխանողները (պարտապանները), միաժամանակ, նկատի ունենալով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի առաջին պարբերության հիմքով՝ Համապատասխանողները (պարտապանները) ազատված են պետական տուրքի վճարումից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում վերջիններս չեն կարող կրել պետական տուրքի փոխհատուցման պարտականություն, որի պայմաններում այդ հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.06.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԲԱՆԿ» ՓԲԸ-ի դիմումը բավարարել, այն է՝ թիվ ՏԴ/0956/02/17 քաղաքացիական գործով 07.02.2018 թվականին կայացված դատական ակտի չկատարված մասը՝ 376.793 (երեք հարյուր յոթանասուսուկեց հազար յոթ հարյուր ինսսուներեք) ՀՀ դրամ գումարը (վարկի մայր գումար) պատասխանողներ Արթուր Սամվելի Լալայանից, Արտակ Սիրազի Ավալյանից, Կարեն Հրաչիկի Գրիգորյանից և Վարդան Հրաչիկի Գրիգորյանից համապարտության կարգով հոգուտ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԲԱՆԿ» ՓԲԸ-ի բռնագանձել հետևյալ ժամանակացույցի համաձայն՝

03/12/2018-14/01/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
 15/01/2019-04/02/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
 05/02/2019-04/03/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
 05/03/2019-03/04/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
 04/04/2019-06/05/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
 07/05/2019-04/06/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
 05/06/2019-02/07/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
 03/07/2019-05/08/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
 06/08/2019-04/09/2019թ.-ը՝ պարտքի մնացած ողջ գումարը:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
 ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՏԴ/0956/02/17 քաղաքացիական
գործով 25.11.2021 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.06.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի հայցի ընդդեմ Արթուր Լալայանի, Արտակ Ավայանի, Կարեն Գրիգորյանի և Վարդան Գրիգորյանի (այսուհետ՝ Համապատասխանողներ)՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, 2021 թվականի նոյեմբերի 25-ին որոշել է «Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.06.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի դիմումը բավարարել, այն է՝ թիվ ՏԴ/0956/02/17 քաղաքացիական գործով 07.02.2018 թվականին կայացված դատական ակտի չկատարված մասը՝ 376.793 (երեք հարյուր յոթանասուներեք հազար յոթ հարյուր ինսուներեք) ՀՀ դրամ գումարը (վարկի մայր գումար) պատասխանողներ Արթուր Սամվելի Լալայանից, Արտակ Սիրազի Ավայանից, Կարեն Հրաչիկի Գրիգորյանից և Վարդան Հրաչիկի Գրիգորյանից համապարտության կարգով հոգուտ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բռնագանձել հետևյալ ժամանակացույցի համաձայն՝

- 03/12/2018-14/01/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 15/01/2019-04/02/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 05/02/2019-04/03/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 05/03/2019-03/04/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 04/04/2019-06/05/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 07/05/2019-04/06/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 05/06/2019-02/07/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 03/07/2019-05/08/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 06/08/2019-04/09/2019թ.-ը՝ պարտքի մնացած ողջ գումարը»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորներ Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս, Տ. Պետրոսյանս համաձայն չլինելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 25.11.2021 թվականին թիվ ՏԴ/0956/02/17 քաղաքացիական գործով կայացված սորոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նույն որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Համապատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել 614.231,9 ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 16.11.2017 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը վարկի գումարի մնացորդի և կուտակված տոկոսագումարի հանրագումարի՝ 606.919,7 ՀՀ դրամի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկել ու բռնագանձել սպառողական վարկի պայմանագրի 5.6 կետով նախատեսված օրական 0,2 տոկոսի չափով տուժանքը:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Բականդարյան) 07.02.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է տարածավելտել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.02.2018 թվականի վճռի կատարումը:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Օհանյան) (այսուհետ՝ Դատարան) 08.02.2019 թվականի «Դատական ակտի կատարումը տարածավելտելու մասին» որոշմամբ Բանկի դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

04.06.2019 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 08.02.2019 թվականի «Դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը (ներկայացուցիչ Վահագն Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Սույն վճռաբեկ բողոքը քննվել է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետև Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ և 163-րդ հոդվածները, սիսալ է մեկնաբանել մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սիսալ է մեկնաբանել և կիրառել մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ անտեսելով, որ նշված մասի երկրորդ նախադասությունը վերաբերում է այն դեպքերին, երբ դատական ակտի տարածամկետման դիմումը ներկայացրել է ոչ թե պահանջատերը, այլ՝ պարտապանը: Նշված նորմով սահմանված նախապայմանների ապահովումը նպատակ ունի ապահովելու պահանջատիրոջ՝ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Պահանջատիրոջ կողմից դատական ակտի տարածամկետման դիմում ներկայացվելու դեպքում պարտապանի կողմից պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելուն պատրաստ լինելու և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտության վերաբերյալ պայմանների պարտադիր առկայության անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ պահանջատերը, որպես սեփականատեր, իրականացնում է իր տնօրինչական իրավունքները և վերջինս է կրում այդ իրավունքի իրացման կամ չիրացման ռիսկն ու բոլոր բացասական հետևանքները:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ Դատարանի վճռով հաստատված Բանկի պահանջի իրավունքը իր սեփականությունն է, և Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը, այդ գույքի նկատմամբ կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, կայացրել է վերը նշված որոշումը՝ խախտելով ՀՀ Սահմանադրության, Կոնվենցիայի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները, և ոչ իրավաչափ կերպով սահմանափակելով Բանկի, որպես սեփականատիրոջ, իրավունքների իրացումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.06.2019 թվականի որոշումը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական են համարվել հետևյալ փաստերը՝

1) Դատարանը 07.02.2018 թվականի վճռով Բանկի հայցը բավարարել է՝ Համապատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել է 614.231,9 ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 16.11.2017 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը վարկի գումարի մնացորդի և կուտակված տոկոսագումարի հանրագումարի՝ 606.919,7 ՀՀ դրամի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկել ու բռնագանձել է սպառողական վարկի պայմանագրով նախատեսված օրական 0,2 տոկոսի չափով տուժանքը: Դատարանի 07.02.2018 թվականի վճիռը չի բողոքարկվել և 12.03.2018 թվականին մտել է օրինական ուժի մեջ (հատոր 1-ին, գ.թ. 62-66):

2) նշված վճռի հիման վրա 13.03.2018 թվականին Համապատասխանողներից յուրաքանչյուրի մասով տրվել են կատարողական թերթեր (հատոր 1-ին, գ.թ. 84-87):

3) պահանջատեր Բանկը դիմում է ներկայացրել Դատարան 07.02.2018 թվականի վճռի կատարումը տարածամկետելու մասին՝ դրան կցելով պարտապաններից Արտակ Ավալյանի դիմում-պարտավորագիրը, որով վերջինս, ըստ էության, պատրաստակամություն է հայտնել վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան, ինչպես նաև խնդրել է կատարողական թերթը կատարման ներկայացված լինելու դեպքում դիմում ներկայացնել Դատարան՝ դատական ակտի կատարումը տարածամկետելու համար: Միաժամանակ դիմումով Բանկը խնդրել է՝ դիմումը բավարարել, այն է՝ թիվ ՏԴ/0956/02/17 քաղաքացիական գործով 07.02.2018 թվականին կայացված դատական ակտի չկատարված մասը՝ 376.793 (երեք հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր ինսուներեք) ՀՀ դրամ գումարը (վարկի մայր գումար) պատասխանողներ Արթուր Սամվելի Լալայանից, Արտակ Սիրազի Ավալյանից, Կարեն Հրաչիկի Գրիգորյանից և Վարդան Հրաչիկի Գրիգորյանից համապարտության կարգով հոգուտ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բռնագանձել հետևյալ ժամանակացույցի համաձայն՝

- 03/12/2018-14/01/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 15/01/2019-04/02/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 05/02/2019-04/03/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 05/03/2019-03/04/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 04/04/2019-06/05/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 07/05/2019-04/06/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 05/06/2019-02/07/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 03/07/2019-05/08/2019թ.-ը՝ 30.000 (երեսուն հազար)ՀՀ դրամ,
- 06/08/2019-04/09/2019թ.-ը՝ պարտքի մնացած ողջ գումարը (հատոր 1-ին, գ.թ. 105,

106):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է ելակն նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտել է, որ տվյալ դեպքում մինչև 04.08.2019 թվականը գործած խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության տառացի մեկնաբանությունից հետևում է, որ պահանջատիրոջը՝ նրա պահանջին համարժեք ապահովում տրամադրելու վերաբերյալ պարտապանի պատրաստակամությունը և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտ լինելը հանդիսանում են պարտադիր վավերապայմաններ և՛ պարտապանի, և՛ պահանջատիրոջ կողմից դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու դիմում ներկայացնելու դեպքերում:

Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել բացահայտել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի իրավական նորմի բովանդակությունը՝ ելնելով օրենսդրի կամքից և նորմի ընդունման նպատակից: Այսպես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ դատական ակտերի հարկադիր կատարման տարաժամկետումը պարտապանին տրվող հնարավորությունն է՝ ուղղված դատական ակտի հիման վրա առաջացած պարտավորությունը կատարողական թերթում նշված ժամկետից տարբերվող ժամկետներում կատարելուն: Նման հնարավորություն տալու նպատակներից է, օրինակ, պահանջատերերի և պարտապանների իրավունքների ու օրինական շահերի հավասարակշռությունն ապահովելն այնպես, որ դատարանի վճռի կատարման այդ կարգը համապատասխանի համաչափության պահանջին:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված պայմանները հանդիսանում են պահանջատիրոջ պահանջների բավարարման լրացուցիչ երաշխիքներ այն դեպքում, երբ դատական ակտի կատարումը տարաժամկետելու դիմումը ներկայացրել է պարտապանը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այդ երաշխիքների տրման անհրաժեշտությունը բացակայում է բոլոր այն դեպքերում, երբ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում նշված դիմումը ներկայացնում է պահանջատերը հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականության իրավունքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) տվել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքը ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*լեւն Քրեսոս Կոմպանիա Նավերա Տ.Ա. and others v. Belgium գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, 31-րդ կետ*): «Օրինական սպասելիք» առկա է բոլոր այն դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերում են սեփականության իրավունքին (*լեւն Կոպեցկի v. Slovakia գործով Եվրոպական դատարանի 28.09.2004 թվականի վճիռը, կետեր 53-61*):

Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*լեւն Բուրդով v. Russia գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետ*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձին հնարավորություն է տալիս սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքներն ու դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության)

սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը (լրեն ՀՀ Կոնստիտուցիայի նախադրությունն ընդդեմ «Գորիս-Ապակի» ՍՊԸ-ի թիվ ՍԴՅ/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը)։

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտի հիման վրա ծագած պահանջի իրավունքը ևս Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով դիտվում է որպես սեփականություն՝ «օրինական սպասելիք», ուստի պահանջատիրոջ կողմից դատական ակտի տարածամեկտման դիմում ներկայացվելու դեպքում դատարանը պետք է առաջնորդվի բացառապես պահանջատիրոջ դիրքորոշմամբ, քանի որ պահանջատերը որպես սեփականատեր, իրականացնում է իր տնօրինական իրավունքները և կրում այդ իրավունքի իրացման կամ չիրացման բացասական հետևանքները, այդ թվում՝ տարածամեկտման ժամանակացույցով դատական ակտի կատարման հնարավոր բացասական հետևանքների ռիսկը։

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրի կողմից ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 09.07.2019 թվականի թիվ ՀՕ-126-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 04.08.2019 թվականին) Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը փոփոխվել է։ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասն այլևս ունի հետևյալ շարադրանքը. «Կատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարածամեկտմելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը։ Դատարանը կարող է պարտապանի դիմումով հետաձգել կամ տարածամեկտմել դատական ակտի կատարումը, եթե պարտապանը պահանջատիրոջը պատրաստ է տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, քանի որ ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին»։

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փաստորեն, օրենսդիրը, հաշվի առնելով Օրենքի 22-րդ հոդվածի նպատակը, Օրենքի վերոգրյալ փոփոխությունից հետո այլևս չի նախատեսել պարտապանի՝ պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պատրաստակամությունը և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտ լինելը համարելու մասին պահանջները՝ պարտատիրոջ կողմից համապատասխան դիմում ներկայացնելու համար։

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ պարտատիրոջ կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված տնօրինականության սկզբունքից ելնելով միայն դատական ակտի կատարումը տարածամեկտմելու մասին դիմումը ինքնին բավարար է՝ այն բավարարելու համար, եթե դատական ակտը ներկայացվել է հարկադիր կատարման։

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարածամեկտմելու մասին դիմումը պահանջատիրոջ կողմից ներկայացվելու դեպքում դիմումի հետ միաժամանակ պարտապանների՝ պահանջին համարժեք ապահովում տրամադրելու մասին պատրաստակամությունը և հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտ լինելը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու մասին պարտադիր կանոնը կիրառելի չէ։

Սույն գործով Բանկը, Դատարանի 07.02.2018 թվականի վճռի հիման վրա՝ յուրաքանչյուր պարտապանի մասով տրված կատարողական թերթերի հիմքով հանդիսանալով պահանջատեր, դիմում է ներկայացրել Դատարան 07.02.2018 թվականի վճռի կատարումը տարածամեկտմելու մասին՝ նշելով, որ պարտապան Արտակ Ավայանը դիմում-պարտավորագիր է ներկայացրել Բանկին՝ պարտավորության կատարումը տարածամեկտմելու համար, որի հիման վրա Բանկը դադարեցրել է վարկի մայր գումարի և տոկոսագումարի

վրա հաշվեգրվող տուժանքի հետագա հաշվարկը (այդ մասով պահանջը ներվել է): Միաժամանակ Բանկը կցել է պարտապան Արտակ Ավայանի դիմում-պարտավորագիրը:

Պարտապան Արտակ Ավայանի՝ Բանկին հասցեագրված դիմում-պարտավորագրի հետագոտումից հետևում է, որ վերջինս խնդրել է նաև հնարավորություն տալ վճարելու վճռում նշված վարկի գումարը դիմումում ներկայացված ժամանակացույցին համապատասխան, ինչպես նաև՝ կատարողական թերթը կատարման ներկայացված լինելու դեպքում դիմում ներկայացնել Դատարան դատական ակտի կատարումը տարածամկետելու նպատակով:

Դատարանը, պատճառաբանելով, որ Դատարան է ներկայացվել միայն Արտակ Ավայանի ստորագրած դիմում-պարտավորագրի պատճենը և չի ներկայացվել որևէ այլ ապացույց, որով կհիմնավորվի պարտապանի (պարտապանների) կողմից պահանջին համարժեք ապահովում տրամադրելու փաստը, ինչպես նաև՝ դատական ակտը կամովին կատարվելու ակնհայտությունն ու հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայությունը, գտել է, որ միայն այդ հիմքերի առկայության պարագայում է, որ Դատարանը կարող է հետաձգել կամ տարածամկետել դատական ակտի կատարումը, ու որոշում է կայացրել դիմումը մերժելու մասին:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ Բանկը դիմումին կից ներկայացրել է միայն պարտապան Արտակ Ավայանի դիմում-պարտավորագիրը, մինչդեռ Դատարանի 07.02.2018 թվականի վճռով պարտապաններ են նաև Արթուր Լալայանը, Կարեն Գրիգորյանը և Վարդան Գրիգորյանը, այսինքն՝ տվյալ դեպքում բացակայել են դատական ակտի կատարումը տարածամկետելու օրենքով սահմանված հիմքերը, հետևաբար դատական ակտի կատարումը տարածամկետելու դիմումը մերժելու վերաբերյալ Դատարանի եզրահանգումը իրավաչափ է: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը նաև պատճառաբանել է, որ Բանկի կողմից ներկայացվել է Արտակ Ավայանի դիմում-պարտավորագրի պատճենը, որը բովանդակում է «իսկականի հետ ճիշտ է» նշում և անհայտ անձի կողմից կատարված ստորագրություն, մինչդեռ դիմում-պարտավորագրի պատճենը չի կարող ծառայել որպես դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին դիմումը բավարարելու համար օրենսդրորեն սահմանված պայմանների միաժամանակյա առկայության հիմնավորմանը, քանի որ պատճեն է, իսկ «իսկականի հետ ճիշտ է» գրառումը հաստատող ստորագրությունը կատարվել է անհայտ անձի կողմից, դիմում-պարտավորագրի պատճենի բովանդակությունից հնարավոր չէ հետևություն անել ինչպես պարտապանի կողմից պահանջատիրոջը պահանջին համարժեք ապահովում տրամադրելու պատրաստակամության, այնպես էլ ողջամիտ ժամկետում դատական ակտը կամովին կատարվելու ողջամիտ հնարավորությամբ պայմանավորված հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայության ակնհայտության մասին:

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի վերը նշված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը և ոչ իրավաչափորեն է մերժել Բանկի վերաքննիչ բողոքը, անտեսելով, որ վերջինս, որպես կատարողական թերթում նշված պահանջատեր դիմում է ներկայացրել կատարողական թերթ տված դատարան՝ դատական ակտի կատարումը տարածամկետելու մասին: Ընդ որում պահանջատեր Բանկն իր դիմումին կցել է նաև համապարտ պարտապաններից Արտակ Ավայանի դիմումը, որով Արտակ Ավայանը պատրաստակամություն է հայտնել վճարելու վճռում նշված վարկի գումարը ժամանակացույցին համապատասխան, ինչպես նաև պահանջատիրոջ դիմումը, որով վերջինս հայտնել է վարկի մայր գումարի և տոկոսագումարի վրա հաշվեգրվող տուժանքի հետագա հաշվարկը դադարեցնելու, այդ մասով պահանջը ներված լինելու մասին:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Բանկի վրա չպետք է դրվեր պարտականություն ներկայացնելու Արտակ Ավայանի դիմում-պարտավորագրի բնօրինակը, ինչպես նաև ապացույցներ առ այն, որ սույն գործով համապարտ պարտապանների (Համապատասխանողներ) մոտ առկա է դատական ակտը ողջամիտ ժամկետում

կանովին կատարելու մտադրություն, քանի որ Բանկը, տվյալ իրավահարաբերությունում պահանջատեր լինելու հանգամանքով պայմանավորված, իրականացրել է իր տնօրինչական իրավունքը՝ հնարավորություն տալով Համապատասխանողներին պարտավորությունը կատարել տարածամեկտ կարգով՝ առանց պարտավորության բարեխիղճ կատարումը ապահովող լրացուցիչ իրավական միջոցներ նախատեսելու:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Բանկը դիմումին կից ներկայացրել է միայն պարտապան Արտակ Ավայանի դիմում-պարտավորագիրը, մինչդեռ Դատարանի 07.02.2018 թվականի վճռով պարտապաններ են նաև Արթուր Լալայանը, Կարեն Գրիգորյանը և Վարդան Գրիգորյանը, ուստի տվյալ դեպքում բացակայել են դատական ակտի կատարումը տարածամեկտելու օրենքով սահմանված հիմքերը, ապա այդ մասով Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 360-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ պարտավորությանը մասնակցում են մի քանի պարտատեր կամ մի քանի պարտապան, պարտատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել կատարելու պարտավորությունը, իսկ պարտապաններից յուրաքանչյուրը պարտավոր է այն կատարել մյուսների հետ հավասար բաժնով, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ պարտավորության պայմաններից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համապարտ պարտականությունը (պատասխանատվությունը) կամ համիրավ պահանջը ծագում է, եթե պարտականության համապարտությունը կամ պահանջի համիրավությունը նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես, եթե անբաժանելի է պարտավորության առարկան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համապարտ պարտապաններից մեկից լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապաններից, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ համապարտ պարտապանները պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապաններից մեկի կողմից համապարտ պարտականությունը լրիվ կատարելը մնացած պարտապաններին ազատում է պարտատիրոջ հանդեպ պարտականությունը կատարելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:

Տվյալ դեպքում, ինչպես արդեն վերը նշվեց, Դատարանը վճռով որոշված գումարը Համապատասխանողներից բռնագանձել է համապարտության կարգով, որպիսի հանգամանքը Վճռաբեկ դատարանի համար հիմք է արձանագրելու, որ սույն գործով կողմերի միջև կնքված պայմանագրերի ուժով պարտավորությանը մասնակցել են մի քանի համապարտ պարտապաններ, ուստի տվյալ իրավահարաբերությունում որպես պարտատեր հանդես եկող Բանկն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով Համապատասխանողների պարտավորությունն այնուամենայնիվ միանձնյա կատարելու պատրաստակամություն է հայտնել միայն Արտակ Ավայանը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերջինիս կողմից պարտավորությունը լրիվ կատարվելու դեպքում մյուս համապարտ պարտապանների (Համապատասխանողների) համար Բանկի հանդեպ պարտավորությունը կդադարի:

Հաշվի առնելով վերոգրյալը և դրանք համադրելով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Բանկը, օգտվելով Օրենքի 22-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 360-362-րդ հոդվածներով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված տնօրինչականության սկզբունքից, ներկայացրել է իրավաչափ դիմում, որը ենթակա էր բավարարման, ինչն անտեսվել է և՛ Դատարանի, և՛ Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտել է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Հայրուկ կարծիքի պարունաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ համաձայն չենք հետևյալ պատճառաբանությամբ.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքն ուղված լինելով Հայաստանի Հանրապետության իրավակարգի առանցքային ինստիտուտի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությանը և կատարման ապահովմանը, կատարողական վարույթում պարտատեր և պարտապան հանդիսացող անձանց համար հնարավորություն է տվել դիմել դատարան՝ հետաձգելու, տարաժամկետելու, փոփոխելու կատարման ենթակա դատական ակտի կատարման կարգն ու եղանակը: Ընդ որում, այդպիսի դիմումի քննարկումը օրենսդիրը վերապահել է յուրաքանչյուր դեպքում հարկադիր կատարման ենթակա դատական ակտի վերաբերյալ կատարողական թերթ լուծված դատարանին, քանի որ կախված այդ հանգամանքից է որոշվում է համապատասխան (քաղաքացիական, վարչական, քրեական) դատավարության օրենսգրքով սահմանված դիմումի քննության կարգը և ծավալը: Այսինքն՝ դատական ակտի հետաձգման կամ տարաժամկետման դեպքում դատարանի կողմից առաջնահերթ ենթակա է պարզման հետևյալ հարցը՝ արդյո՞ք դատական ակտի կատարման հետաձգումը հնարավոր է մինչև կատարողական թերթը կատարման ներկայացնելը և կատարողական վարույթ հարուցելը: Նման իրավակարգավորումն ինքնանպատակ չէ, քանի որ ի տարբերություն քրեադատավարական օրենքով նախատեսված դատական ակտի կայացման փուլում դրա կատարման հետաձգման, քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերը նման հնարավորություն չեն նախատեսել դատական ակտի կատարման փուլում, սակայն թույլ են տվել կատարողական վարույթում՝ կատարողական վարույթում կնքված հաշտության

քննարկման վարույթ, որի արդյունքնում կարող է փոփոխվել հարկադիր կատարման ենթակա դատական ակտը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ մինչև օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա կատարողական թերթը կատարման ներկայացնելը քաղաքացիական գործով հայցվորը և համապարտ պարտապաններից մեկը՝ համաձայնության են եկել դատական ակտի կատարման՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պայմաններից տարբերվող պայմանով: Ստացված կատարողական թերթը դատարան ներկայացված չլինելու և ի սկզբանե դատական ակտի կատարումը հետաձգված չլինելու պայմաններում ի վերջո բաց է մնում ստացված կատարողական թերթը կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետի հարցը, քանի որ դատական ակտի կատարման տարածամկետումն ինքնաբերաբար չի երկարացնում կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը: Հետևաբար քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ դատական ակտին վերաբերող իրավակարգավորումներից և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներից եզրակացնում ենք, որ քաղաքացիական գործով կայացված դատական ակտի կատարման հետաձգում՝ դատական ակտի կայացման փուլում, ինչպես նաև մինչև կատարման ներկայացնելն օրենքով նախատեսված չէ, հետևաբար կատարողական թերթի կատարման ներկայացնելու մեկ տարվա սահմանված ժամկետը գործելու պայմաններում ակնհայտ է դառնում, որ քաղաքացիական դատավարության կարգով կայացված դատական ակտի կատարման հետաձգումը, տարածամկետում կամ կատարման կարգի ու եղանակի փոփոխումը կարող է քննարկվել բացառապես հարուցված կատարողական վարույթի պայմաններում: Ինչ վերաբերվում է քաղաքացիական իրավունքների իրականացման և պաշտպանության տնօրինչականության սկզբունքին, ապա պետք է նկատենք, որ ստորադաս դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված սկզբունքի խախտում չի կատարվել, քանի որ առկա չէ դատական ակտով որոշված պարտավորության կատարման փոփոխություն ի վնաս պահանջատիրոջ կամ վերջինիս կողմից հրաժարված պահանջի իրավունքի պայմաններում այդ ծավալով պարտավորության հարկադիր կատարում:

Վճռաբեկ դատարանը, որոշման եզրափակիչ մասում, բեկանելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը և դիմումը բավարարելով, սահմանել է պատրավորության տարածամկետ կատարման ժամանակացույց 2019 թվականի ժամանակահատվածի համար, չունենալով որևէ հիմնավորում կամ ապացույց այն մասին թե ի վերջո տվյալ դատական ակտը կամավոր կամ հարկադիր կատարվել է, թե ոչ, կամ արդյոք դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում ի վերջո կատարողական թերթը ներկայացվել է կատարման թե ոչ: Նման պայմաններում բացառված չէ նաև, որ տարածամկետով էլ է արդեն իսկ կատարված դատական ակտը:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է անփոփոխ թողնել՝ փոփոխելով դատական ակտի պատճառաբանությունները:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Տ. Պետրոսյան

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/28353/02/19
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/28353/02/19
Նախագահող դատավոր՝	Ն. Գաբրիելյան
Դատավորներ՝	Լ. Գրիգորյան
	Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՂՈՒՅԱՆ

2022 թվականի հունիսի 24-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Արմեն Գևորգյանի հայցի ընդդեմ Մուշեղ Շուշանյանի և Արուսյակ Ջուլիակյանի (այսուհետ՝ Համապատասխանողներ) պատվին և արժանապատվությանը պատճառված վնասը հատուցելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.08.2021 թվականի

«Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Մուշեղ Շուշանյանի վճռաքնել բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատարանական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Արմեն Գևորգյանը պահանջել է Համապատասխանողներին պարտավորեցնել հրապարակային ներողություն խնդրել «aravot.am» ինտերնետային կայքում 07.08.2019 թվականին հրապարակված համապատասխանաբար՝ «...Հստակ տեղեկություններ կան, որ հենց Ռոբերտ Քոչարյանի աշխատակազմի ղեկավարն է ներգրավված եղել, մասնակցել կոռուպցիոն գործընթացներին...» և «...ներկայացված անօրինականությունները իրականացվել է նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի կողողինացիայի ներքո...» արտահայտությունների հնչեցման համար, ներողության տեքստի հրապարակման տառատեսակը և ձևավորումը պետք է լինի նույնը, ինչ 07.08.2019 թվականին հրապարակված հոդվածինը, Համապատասխանողներից յուրաքանչյուրից բռնագանձել նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով գումար՝ որպես փոխհատուցում, գրպարտության մատով Համապատասխանողներին պարտավորեցնել հրապարակայնորեն հերքել «aravot.am» ինտերնետային կայքում 07.08.2019 թվականին հրապարակված համապատասխանաբար՝ «...Հստակ տեղեկություններ կան, որ հենց Ռոբերտ Քոչարյանի աշխատակազմի ղեկավարն է ներգրավված եղել, մասնակցել կոռուպցիոն գործընթացներին...» և «...ներկայացված անօրինականությունները իրականացվել է նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի կողողինացիայի ներքո...» արտահայտությունների հնչեցման համար, հերքման տեքստի հրապարակման տառատեսակը և ձևավորումը պետք է լինի նույնը, ինչ 07.08.2019 թվականին հրապարակված հոդվածինը, Համապատասխանողներից յուրաքանչյուրից բռնագանձել նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով գումար՝ որպես փոխհատուցում, անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման մատով արձանագրել անմեղության կանխավարկածի իրավունքի խախտումը, Համապատասխանողներին պարտավորեցնել հրապարակայնորեն ներողություն խնդրել «aravot.am» ինտերնետային կայքում 07.08.2019 թվականին հրապարակված համապատասխանաբար՝ «...Հստակ տեղեկություններ կան, որ հենց Ռոբերտ Քոչարյանի աշխատակազմի ղեկավարն է ներգրավված եղել, մասնակցել կոռուպցիոն գործընթացներին...» և «...ներկայացված անօրինականությունները իրականացվել է նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի կողողինացիայի ներքո...» արտահայտությունների միջոցով անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման համար, ներողության տեքստի հրապարակման տառատեսակը և ձևավորումը պետք է լինի նույնը, ինչ 07.08.2019 թվականին հրապարակված հոդվածինը, Համապատասխանողներից յուրաքանչյուրից բռնագանձել նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով գումար՝ որպես փոխհատուցում:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Ստեփանյան) (այսուհետ՝ Դատարան) 06.04.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Մուշեղ Շուշանյանին պարտավորեցնել Արմեն Գևորգյանի վերաբերյալ գրպարտչական փաստացի տվյալներ ներկայացնելու համար վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում «aravot.am» համացանցային կայքում, իսկ անհնարինության դեպքում համանման դիտողականություն ունեցող հայկական լրատվության այլ միջոցում, հրապարակել հայցվոր Արմեն Գևորգյանի վերաբերյալ ներկայացված գրպարտություն համարվող փաստացի տվյալների հերքում այն մասին, որ պատասխանող Մուշեղ Շուշանյանը հերքում է իր կողմից «Մեդիա կենտրոնում» 07.08.2019 թվականին կազմակերպված քննարկման ընթացքում ներկայացված և «aravot.am» համացանցային կայքում 07.08.2019 թվականին տեղադրված ««Հստակ տեղեկություններ կան, որ հենց Ռոբերտ Քոչարյանի աշխատակազմի ղեկավարն է ներգրավված եղել,

մասնակցել կոռուպցիոն գործընթացներին»։ Մուշեղ Շուշանյան» վերնագրով հրապարակման մեջ տեղ գտած հայցվոր Արմեն Գևորգյանի վերաբերյալ ներկայացված գրապարտություն համարվող հետևյալ փաստացի տվյալները, որ «Հստակ տեղեկություններ կան, որ հենց Ռոբերտ Քոչարյանի աշխատակազմի ղեկավարն է ներգրավված եղել, մասնակցել կոռուպցիոն գործընթացներին», Արուսյակ Ջուլիակյանին պարտավորեցնել Արմեն Գևորգյանի վերաբերյալ գրապարտչական փաստացի տվյալներ ներկայացնելու համար սույն վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում «aravot.am» համացանցային կայքում, իսկ անհնարինության դեպքում համանման դիտողականություն ունեցող հայկական լրատվության այլ միջոցում, հրապարակել հայցվոր Արմեն Գևորգյանի վերաբերյալ ներկայացված գրապարտություն համարվող փաստացի տվյալների հերքում այն մասին, որ պատասխանող Արուսյակ Ջուլիակյանը հերքում է իր կողմից «Մեդիա կենտրոնում» 07.08.2019 թվականին կազմակերպված քննարկման ընթացքում ներկայացված և «aravot.am» համացանցային կայքում 07.08.2019 թվականին տեղադրված ««Հիմա տեսեք, թե քանի ֆիզուր է մասնակցում այս ամեն ինչին»։ Արուսյակ Ջուլիակյանը անուններ է հրապարակում» վերնագրով հրապարակման մեջ տեղ գտած Արմեն Գևորգյանի վերաբերյալ ներկայացված գրապարտություն համարվող հետևյալ փաստացի տվյալները, որ «...ներկայացվածն իրականացվել է նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի կողողինացիայի ներքո», հերքման ձևը հաստատել հետևյալ կերպ՝ հերքումը պետք է իրականացնել «Հերքում» խորագրի ներքո, իսկ տեղակայման, ձևավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հրապարակման ժամի առումով չպետք է գիջի այն տեղեկատվությանը, որին վերաբերում է, այսինքն՝ Մուշեղ Շուշանյանի մասով՝ «aravot.am» համացանցային կայքում 07.08.2019 թվականին տեղադրված ««Հստակ տեղեկություններ կան, որ հենց Ռոբերտ Քոչարյանի աշխատակազմի ղեկավարն է ներգրավված եղել, մասնակցել կոռուպցիոն գործընթացներին»։ Մուշեղ Շուշանյան» վերնագրով հրապարակմանը, իսկ Արուսյակ Ջուլիակյանի մասով՝ «aravot.am» համացանցային կայքում 07.08.2019 թվականին տեղադրված ««Հիմա տեսեք թե քանի ֆիզուր է մասնակցում այս ամեն ինչին»։ Արուսյակ Ջուլիակյանը անուններ է հրապարակում» վերնագրով հրապարակմանը, Մուշեղ Շուշանյանից հօգուտ Արմեն Գևորգյանի բռնագանձել 1.400.000 ՀՀ դրամ՝ որպես գրապարտության արդյունքում հայցվորի պատվին և արժանապատվությանը պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցում, Արուսյակ Ջուլիակյանից հօգուտ Արմեն Գևորգյանի բռնագանձել 1.400.000 ՀՀ դրամ՝ որպես գրապարտության արդյունքում հայցվորի պատվին և արժանապատվությանը պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցում. մնացած մասով հայցը մերժվել է։

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2021 թվականի որոշմամբ Մուշեղ Շուշանյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է։

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.08.2021 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ Մուշեղ Շուշանյանի միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են։

Սույն գործով վճարարական բողոք է ներկայացրել Մուշեղ Շուշանյանը (ներկայացուցիչ՝ Արթուր Գրիգորյան)։

Վճարարական բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Գևորգյանը (ներկայացուցիչ՝ Ալեքսանդր Կոչուբան)։

2. Վճարարական բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարարական բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 5-րդ, 42-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածները, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ և 10-րդ հոդվածները, մինչև 30.10.2021 թվականը գործող խմբագրությամբ «Պետական փորձի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ և 372-րդ հոդվածները։

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վերաքննիչ բողոքին կից ներկայացված հարկային էլեկտրոնային հաշվետվությունների համաձայն՝ Մուշեղ Շուշանյանը 2020 թվականի չորրորդ և 2021 թվականի առաջին ու երկրորդ եռամսյակներում եկամուտ չի ունեցել: Նշվածը պայմանավորված է եղել նրանով, որ վերջինս Արցախում պատերազմի ընթացքում ստացել է վիրավորում և ձախ ոտքի սրունքի գույգ ոսկորների բազմաբեկոր կոտրվածքների հետևանքով մինչև օրս գրկված է ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից, այդ թվում՝ ժամանակավորապես չի իրականացնում փաստաբանական գործունեություն, իսկ այլ զբաղվածություն և եկամտի աղբյուր չունի:

Վերոգրյալի վերաբերյալ վերաքննիչ բողոքին կից ներկայացված բժշկական փաստաթղթերի և հարկային էլեկտրոնային հաշվետվությունների համադրումից ակնհայտ է, որ Մուշեղ Շուշանյանի գույքային դրությունը թույլ չի տվել վճարել վերաքննիչ բողոքի համար պետական տուրքը, որպիսի հանգամանքը նրան պետական տուրքի գծով արտոնություն տրամադրելու հիմք էր:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել վերը նշված փաստերը հաստատող ապացույցները բժշկական փաստաթղթերը և հարկային էլեկտրոնային հաշվետվությունները:

Վերաքննիչ դատարանը, կայացնելով վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշում, Մուշեղ Շուշանյանին գրկել է արտահայտվելու ազատության պաշտպանության արդյունավետ միջոցից և ոտնահարել վերջինիս արդար դատաքննության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 06.08.2021 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2.1. Վճռաբեկ բողոքի պարասիանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Վերաքննիչ դատարանի որոշումը պատճառաբանված և հիմնավորված է, ինչպես նաև կայացվել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա:

Մուշեղ Շուշանյանի ներկայացրած փաստաթղթերը բացառապես առնչվում են նրա առողջական վիճակին և հարկային իրավահարաբերություններին, ու ոչ թե նրա գույքային դրությամբ:

3. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և կզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել մինչև 30.10.2021 թվականը գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները

մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յրե՛ս, Էշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ-ի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

ՄԻԵԴ-ը մեկ այլ վճռում նշել է, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, սակայն այդ սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չհետապնդի իրավաչափ նպատակ, և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*յրե՛ս, Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ի 14.03.2000 թվականի վճիռը, կետ 36*):

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում արձանագրել է, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի ինպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման (*յրե՛ս թիվ ՄԴՈ-652, թիվ ՄԴՈ-690, թիվ ՄԴՈ-719, թիվ ՄԴՈ-765, թիվ ՄԴՈ-844, թիվ ՄԴՈ-873, թիվ ՄԴՈ-890, թիվ ՄԴՈ-932, թիվ ՄԴՈ-942, թիվ ՄԴՈ-1037, թիվ ՄԴՈ-1052, թիվ ՄԴՈ-1115, թիվ ՄԴՈ-1127, թիվ ՄԴՈ-1190, թիվ ՄԴՈ-1192, թիվ ՄԴՈ-1196, թիվ ՄԴՈ-1197, թիվ ՄԴՈ-1220, թիվ ՄԴՈ-1222, թիվ ՄԴՈ-1257, թիվ ՄԴՈ-1289 որոշումները*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու (...) մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով

արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Վերոգրյալ նորմերի մեկնաբանությունից բխում է, որ վերաքննիչ բողոք ներկայացնելիս դրան կցվում են նաև պետական տուրքը վճարելու մասին ապացույցները, իսկ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: Ընդ որում, քաղաքացիական դատավարությունում ևս պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Վերաքննիչ բողոքը ներկայացնելու պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք) 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն իրավունք ունեն (...) դիմել համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում, պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9 հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրույթությունից:

Վերոգրյալ նորմերի մեկնաբանությունից բխում է, որ պետական տուրք վճարողներն իրավունք ունեն դիմելու համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար: Նման արտոնություն է նաև պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգումը, որպիսի արտոնությունը դատարանները կամ դատավորները կարող են սահմանել առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար՝ ելնելով նրանց գույքային դրույթությունից:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու՝ դատարանների և դատավորների լիազորության իրականացման պայմաններին՝ արձանագրելով, որ «(...) յուրաքանչյուր դեպքում պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդության առկայության պայմաններում դատարանները պետք է նշված միջնորդությունները քննության առնեն և լուծեն՝ հաշվի առնելով նաև գործի հանգամանքները: Այսպես, օրինակ, օրենսդիրը, ամրագրելով հայցադիմումների, վերաքննիչ և վճարելի բողոքների համար պետական տուրք վճարելու պարտականություն, տարբերակված իրտեցում է դրսևորել պետական տուրքի չափի հարցում՝ հիմք ընդունելով վիճելի մտավահարաբերության բնույթը՝ գույքային կամ ոչ գույքային: Դատարանները միջնորդություն ներկայացրած անձի գույքային դրույթունը գնահատելիս որպես ուղղորդող չափանիշ հիմք են ընդունում

նաև վճարման ենթակա պետական տուրքի չափը, հետևաբար վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելը յուրաքանչյուր դեպքում օբյեկտիվորեն անհրաժեշտ է կամ միջնորդություն հարուցած անձի գույքային դրության վերաբերյալ փաստարկները կարող են հիմնավորվել քննվող գործի շրջանակներում ձեռնարկված դատավարական միջոցներով (օրինակ՝ որպես հայցի ապահովման միջոց՝ արգելանք է դրվել անձի դրամական միջոցների վրա): Վերոգրյալից հետևում է, որ միջնորդություն ներկայացրած անձի գույքային դրության գնահատումը չի կարող իրականացվել՝ անտեսելով գործի հանգամանքները, հետևաբար դատարանները նման միջնորդություններ քննության առնելիս պետք է ուսումնասիրեն նաև համապատասխանաբար հայցադիմումները, վերաքննիչ և վճռաբեկ բողոքները» (*յրեն «Ռեքվիզիտ» սահմանափակ պարասիանսարվությանը ընկերությունն ընդդեմ «Մեզարոն» սահմանափակ պարասիանսարվությանը ընկերության թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը*):

Նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տարիքային կենսաթոշակ նշանակված լինելու հանգամանքը վկայում է անձի՝ որոշակի սոցիալական աջակցության անհրաժեշտությունը, որպիսի փաստական հանգամանքի առկայությունը, գործում հակառակը հավաստող ապացույցների բացակայության պայմաններում, ևս կարող է վկայել պետական տուրքի գծով արտոնություն հայցող անձի՝ գույքային ծանր դրության վերաբերյալ» (*յրեն Միշա և Յաշա Գրիգորյանների ընդդեմ ՀՀ Տավուշի մարզի Գոշի գյուղապետարանի և մյուսների թիվ ՏԴՄ/0171/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, վկայակոչելով Սահմանադրության 1-ին հոդվածը, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ սոցիալական պետության հիմնական բնութագրիչներից են կենսանվագագույնի երաշխավորումը, մարդու իրավունքների և ազատությունների արդարադատական ապահովումը: Դատարանները կենսանվագագույնի երաշխավորումը ու մարդու իրավունքների և ազատությունների արդարադատական ապահովումը կարող են իրականացնել, ի թիվս այլ հանգամանքների, հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրատարակված և հանրահայտ փաստ հանդիսացող Հայաստանի Հանրապետությունում առկա նվագագույն սպառողական զանբյուրի չափը: Դատարանները պետական տուրքի մասով արտոնություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացրած անձի գույքային դրությունը գնահատելիս որպես ուղղորդող չափանիշներ պետք է հիմք ընդունեն վիճելի իրավահարաբերության բնույթը, վճարման ենթակա պետական տուրքի չափը, գույքային դրության վերաբերյալ քաղաքացիական գործի հանգամանքները, կենսաապահովման համար անհրաժեշտ միջոցների չափը (*յրեն Միանո Խաչիկյանը և Մելսինա Խաչիկյանն ընդդեմ «Ազարակի Պրնձամոլիթոնային կոմբինատ» ՓԲԸ թիվ ՄԴ/0393/02/20 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.03.2022 թվականի որոշումը*):

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ դատարանները պետական տուրքի գծով արտոնություն կարող են կիրառել, եթե միջնորդություն ներկայացրած անձն ապացուցում է իր անբարենպաստ գույքային դրությունը, որի համար, ի տարբերություն ապացուցման ընդհանուր կանոնի, գործնականում դատարանը պետք է կիրառի ավելի մեղմ չափանիշ՝ բավարար համարելով անուղղակի ապացույցների առկայությունը:

ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ պետական տուրքը վճարելու պարտավորությունը չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, որն ինքնին չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին: Այնուամենայնիվ, այդ տուրքերի գումարը գնահատելը որոշակի գործի հատուկ հանգամանքների տեսանկյունից, ներառյալ դրանք վճարելու դիմումատուի ունակությունը և դատավարության այն փուլը, որում նման սահմանափակումը կիրառվել է, հանգամանքներ են, որոնք էական են որոշելու համար անձն օժտված է եղել դատարանի մատչելիության իրավունքով թե ոչ (*յրեն Քրոյցն ընդդեմ Լեհաստանի ((Kreuz v. Poland), թիվ 28249/95, պարբերություն 60)*):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները և դրանք համադրելով ՄԻԵԴ-ի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ պետական տուրքի մասով արտոնություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացրած անձի գույքային դրույթունը գնահատելիս որպես ուղղորդող չափանիշ պետք է հիմք ընդունել նաև նրա **առողջական այնպիսի վիճակը**, որը որոշակի դեպքերում նրան գրկում է իր կենսաապահովման համար անհրաժեշտ միջոցներ կամ ընդհանրապես եկամուտ ունենալու իրական հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարագրում.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը 06.04.2021 թվականին վճիռ է կայացրել Արմեն Գևորգյանի հայցը մասնակիորեն բավարարելու մասին:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Մուշեղ Շուշանյանը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2021 թվականի որոշմամբ Մուշեղ Շուշանյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է նաև այն պատճառաբանությամբ, որ բողոքին կցված չէ պետական տուրքը վճարելու մասին ապացույցը, և չի ներկայացվել պետական տուրքի վճարման գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդություն: Միաժամանակ սահմանվել է ժամկետ նաև այդ խախտումը վերացնելու և վերաքննիչ բողոք կրկին ներկայացնելու համար:

Մուշեղ Շուշանյանը կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ դրան կցելով նաև պետական տուրքի գծով արտոնություն տրամադրելու՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն՝ պատճառաբանելով, որ Արցախում պատերազմի ընթացքում ստացել է վիրավորում և ձախ ոտքի սրունքի զույգ ոսկորների բազմաբեկոր կտրվածքի հետևանքով գրկված է ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից, ոտքի շրջանում ախտորոշվել է ֆլեբոթոմբոզ ու, քանի որ ոտքի վիրավոր հատվածը չափազանց այտուցված է, ապա բժիշկների ցուցումով օրվա մեծ մասը պետք է լինի հորիզոնական դիրքում՝ ոտքը պահելով բարձրադիր, ուստի նման առողջական վիճակի պատճառով չի աշխատում, ժամանակավորապես չի զբաղվում նաև փաստաբանական գործունեությամբ, այլ զբաղվածություն և եկամտի աղբյուր չունի: Ի հաստատումն միջնորդության մեջ վկայակոչված փաստերի՝ դրան կից ներկայացրել է նաև ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 17.02.2021 թվականի թիվ 1570 և թիվ 3158 եզրակացությունները, Էրեբունի բժշկական կենտրոնի կողմից տրված տեղեկանքը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե համապատասխան ժամանակահատվածների համար ներկայացված շրջանառության հարկի հաշվարկները:

Վերաքննիչ դատարանի 06.08.2021 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են այն պատճառաբանությամբ, որ «*միջնորդության մեջ նշված հանգամանքների և կից փաստաթղթերի բովանդակությունից հետևում է, որ Մուշեղ Շուշանյանն ունի առողջական խնդիրներ և որպես շրջանառության հարկ վճարող 2020 թվականի չորրորդ, 2021 թվականի առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում հարկային վճարումներ չի կատարել: (...) դատարանների կողմից պետական տուրքի գծով որևէ արտոնություն սահմանելու հիմքում պետք է ընկած լինի նման միջնորդությամբ հանդես եկած գործին մասնակցող անձի գույքային դրույթունը: (...)*

Բողոքաբերի կողմից ներկայացված միջնորդությունը ենթակա է մերժման, քանի որ կրկին բերված վերաքննիչ բողոքում ներկայացված՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդության մեջ նշված հանգամանքները և դրանց վերաբերյալ կրկին բերված վերաքննիչ բողոքին կից ներկայացված փաստաթղթերն իրենց բովանդակությամբ հնարավորություն չեն տալիս Վերաքննիչ դատարանին Մուշեղ Շուշանյանի գույքային դրույթունը գնահատել որպես ծանր և այդ հիմքով սահմանել «Պետական տուրքի մասին» ՀՀ

օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված արտոնություններից՝ պետական փողոցի վճարումը հետաձգելը»:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը 06.08.2021 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ ոչ իրավաչափորեն գնահատման առարկա է դարձրել Մուշեղ Շուշանյանի **ծանր** գույքային դրությունը՝ սահմանելով օրենքի պահանջից ավելի բարձր շեմ, այն դեպքում, երբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ «գ» կետի հիմքով պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու միջնորդության քննության շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձներ վերջինիս գույքային դրությունը: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը բողոք բերած անձին անհարկի ծանրաբեռնել է օրենքով չնախատեսված լրացուցիչ պարտականության: Դրա փոխարեն, տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանը պետք է պատշաճ քննարկման առարկա դարձներ Մուշեղ Շուշանյանի բացառապես գույքային դրությունը, և այդ նպատակով վերջինիս կողմից վերաքննիչ բողոքին կից ներկայացված փաստաթղթերին գնահատական տար բացառապես հենց այդ չափանիշը հաշվի առնելով:

Վերաքննիչ դատարանի թույլ տված դատական սխալի հետևանքով Մուշեղ Շուշանյանը զրկվել է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից, որը հանգեցրել է նրա՝ դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակման և այդ իրավունքի բուն էության խաթարման:

Վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացված փաստարկները հերքվում են վերը նշված պարճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ հոդվածի և 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 06.08.2021 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու և գործը՝ Մուշեղ Շուշանյանի ներկայացրած միջնորդությունը կրկին քննության առնելու նպատակով, համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.08.2021 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱՆԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/5859/05/16**
2021թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/5859/05/16**
Նախագահող դատավոր՝ **Ա. Առաքելյան**
Դատավորներ՝ **Ա. Բարսյան**
Ա. Թովմասյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի հունիսի 11-ին
գրավոր ընթացակարգով քննելով Անահիտ Մխիթարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-
րաքննիչ վարչական դատարանի 06.12.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Անա-
հիտ Մխիթարյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի (իրավահաջորդ՝ ՀՀ կադաստրի կոմիտե) (այսուհետ՝ Կադաստր),
երրորդ անձ Վարդան Մխիթարյանի՝ Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1
հասցեի բնակարանի նկատմամբ 01.08.2016 թվականին Վարդան Մխիթարյանի անվամբ
կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու
պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դարավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Անահիտ Մխիթարյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի նկատմամբ 01.08.2016 թվականին Վարդան Մխիթարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 19.05.2017 թվականի վճռով հայրը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.12.2018 թվականի որոշմամբ Վարդան Մխիթարյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 19.05.2017 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայրը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անահիտ Մխիթարյանը (ներկայացուցիչ Ռուզաննա Մարգարյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դարավարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 50-րդ, 60-րդ հոդվածները, չի կիրառել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 34-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածը, 191-րդ և 198-րդ հոդվածների 1-ին կետերը, ՀՀ վարչական դարավարության օրենսգրքի 26-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարսպ է, հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Անահիտ Մխիթարյանը 23.02.2016 թվականի առուվաճառքի պայմանագրով գնել է Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23ա բնակարանը՝ 12,43քմ մակերեսով, այնուհետև Երևանի քաղաքապետի 04.03.2016 թվականի թիվ 726-Ա որոշմամբ նույն բնակարանին տրամադրվել է 23/1 հասցե, իսկ 14.03.2016 թվականին վերոգրյալ բնակարանի նկատմամբ գրանցվել է Անահիտ Մխիթարյանի սեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը չի գնահատել Անահիտ Մխիթարյանի կողմից 23.02.2016 թվականի առուվաճառքի պայմանագրով Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23ա բնակարանը գնած լինելու և այդ բնակարանի նկատմամբ Անահիտ Մխիթարյանի սեփականության իրավունքը պետական գրանցում ստացած լինելու վերաբերյալ ապացույցները և անդրադարձել է միայն Վարդան Մխիթարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման իրավաչափությանը, որպիսի պարագայում ակներև է, որ Վերաքննիչ դատարանն ապացույցները չի գնահատել համակցության մեջ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Կադաստրի կողմից Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի նկատմամբ 01.08.2016 թվականին Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը հանգեցրել է նույն բնակարանի 3,13քմ մակերեսով հատվածի նկատմամբ Անահիտ Մխիթարյանի՝ ավելի վաղ գրանցված սեփականության իրավունքի անվավերության, ինչը կարող էր իրականացվել միայն Անահիտ Մխիթարյանի գիտությամբ, համաձայնությամբ կամ դատական ակտի հիման վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.12.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 19.05.2017 թվականի վճռին:

3. Վճուարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14032016-01-0044 վկայականի համաձայն՝ 14.03.2016 թվականին Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի նկատմամբ 23.02.2016 թվականի առուվաճառքի թիվ 488 պայմանագրի, Երևանի քաղաքապետի 04.03.2016 թվականի թիվ 726-Ա որոշման հիման վրա գրանցվել է Անահիտ Մխիթարյանի սեփականության իրավունքը, մասնավորապես՝ 12,43քմ մակերեսի նկատմամբ՝ սեփականության, իսկ 35քմ մակերեսի նկատմամբ՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 7**):

2) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01082016-01-0200 վկայականի համաձայն՝ 01.08.2016 թվականին Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի նկատմամբ Երևանի քաղաքապետի 23.09.1997 թվականի թիվ 1115 որոշման, Շահումյանի շրջանի ժողդատարանի 04.09.1998 թվականի թիվ 2-719 վճռի հիման վրա գրանցվել է Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքը, մասնավորապես՝ 12,43քմ մակերեսի նկատմամբ՝ սեփականության, իսկ 35քմ մակերեսի նկատմամբ՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը: Նույն վկայականի «Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ» բաժնում գրառում է կատարված այն մասին, որ Շահումյանի շրջանի ժողդատարանի 04.09.1998 թվականի թիվ 2-719 վճռով 12,43քմ մակերեսից Վարդան Մխիթարյանի սեփականությունն է հանդիսանում 3,13քմ մակերեսը (**հատոր 1-ին, գ.թ. 8**):

3) Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի կադաստրային գործի նյութերով հաստատվում է, որ Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքը գրանցված է այն նույն տարածքի նկատմամբ, որի նկատմամբ գրանցված է եղել Անահիտ Մխիթարյանի սեփականության իրավունքը (**կադաստրային գործի նյութեր**):

4. Վճուարել դատարանի պայրճատարանությունները և եզրահանգումները

Վճուարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճուարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճուարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք իրավաչափ է վարչական մարմնի կողմից անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելն այն դեպքում, երբ այդ նույն անշարժ գույքի նկատմամբ արդեն իսկ առկա է այլ անձի սեփականության իրավունքի գրանցում:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է սեփականության իրավունքի պաշտպանության իրավական խնդրին:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Սահմանադրությունը, հռչակելով սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, երաշխավորում է յուրաքանչյուրի՝ սեփականություն ունենալու բացարձակ իրավունքը՝ միաժամանակ անբարեբախտ օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքից զրկելու հնարավորությունը միայն դատական կարգով (*լրեն՝ Գևորգ Գևորգյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/2434/05/08 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2009 թվականի որոշումը):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով (...):

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, եթե հաստատվի հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը.

վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնասպառակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են: Ընդ որում, չի կարող անվավեր ճանաչվել այն ոչ իրավաչափ

վարչական ակտը, որը չի կարող խախտել որևէ անձի, Հայաստանի Հանրապետության կամ որևէ համայնքի իրավունք (որեն Սվեդլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական գրանցման հիմնական սկզբունքներն ու խնդիրներն են՝ պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների (...) ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը (...):

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր է մերժել իրավունքի պետական գրանցումը, եթե՝ անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ առկա է գրանցված իրավունք կամ սահմանափակում կամ նախնական նշում, որը բացառում է ներկայացված իրավունքի կամ սահմանափակման գրանցումը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի կամ դրա որևէ մասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը համարվում է չեղարկված՝ այդ գույքի կամ դրա համապատասխան մասի նկատմամբ որևէ հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցում իրականացվելու պահից:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից բխում է, որ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը, այդ թվում՝ նաև՝ անձի սեփականության հիմնարար իրավունքի պաշտպանության ու երաշխավորման բնագավառում:

Այսպես՝ հաշվի առնելով վարչական վարույթի ընթացքում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու վարչական մարմնի պարտականությունը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը իրավունքի, այդ թվում՝ սեփականության իրավունքի գրանցումն իրականացնող լիազոր մարմնի վրա պարտականություն է դրել մերժելու գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելը, եթե տվյալ գույքի կամ նրա միավորի կամ մասի նկատմամբ արդեն առկա է այլ անձի գրանցված իրավունք, որը բացառում է ներկայացված իրավունքի գրանցումը: Այսինքն՝ վկայակոչված՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով իմպերատիվ կերպով սահմանված է արգելք՝ նույն գույքի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքը գրանցելու հարցում, որի նպատակն է երաշխավորել և պաշտպանել անձի գրանցված սեփականության իրավունքը և բացառել անշարժ գույքի նկատմամբ արդեն իսկ գրանցված իրավունքի դեպքում այլ անձի կողմից ներկայացված իրավունքի գրանցումը: Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ եզրահանգումը բխում է այն հանգամանքից, որ գույքի նկատմամբ որևէ հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցում իրականացվելու պահից այդ գույքի նկատմամբ նախկին սեփականության իրավունքի պետական գրանցումը համարվում է չեղարկված (ուժը կորցրած), այսինքն՝ գույքի նկատմամբ նոր սեփականության իրավունքի գրանցումը հանգեցնում է այդ գույքի նկատմամբ ավելի վաղ գրանցված սեփականության իրավունքի դադարման, հետևաբար բոլոր դեպքերում, վարչական մարմինը գույքի նկատմամբ սեփականության իրավունքի նոր գրանցում իրականացնելիս պարտավոր է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման ենթարկել անձի սեփականության իրավունքի ծագման հիմքերը՝ պարզելու համար, թե արդյոք գույքի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքի արդեն իսկ առկա գրանցումը չի բացառում այդ նույն գույքի նկատմամբ մեկ այլ անձի սեփականության իրավունքի նոր գրանցում կատարելը: Հակառակ պարագայում՝ երբ գրանցում իրականացնող մարմինը գույքի նկատմամբ այլ անձի արդեն իսկ գրանցված սեփականության իրավունքի առկայության պայմաններում այդ նույն գույքի նկատմամբ կատարում է սեփականության իրավունքի նոր գրանցում, ընդ որում՝ որպես նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքի ծագման հիմք ընդունելով այնպիսի իրավաբանական փաստեր և դրանք

հիմնավորող գրավոր փաստաթղթեր, որոնք չեն բխում արդեն իսկ գրանցված սեփականատիրոջ կամքից և գործողություններից (օրինակ՝ երբ գրանցված սեփականատերն իր գույքն օտարել է առուվաճառքի կամ նվիրատվության ձևով կամ կտակել է այլ անձի կամ հրաժարվել իր սեփականությունից) Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման պայմաններում սեփականության իրավունքի նոր գրանցումն անվավեր վարչական ակտ է, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, և որը խախտում է արդեն իսկ գրանցված սեփականատիրոջ իրավունքները:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ 14.03.2016 թվականին Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի նկատմամբ 23.02.2016 թվականի առուվաճառքի թիվ 488 պայմանագրի, Երևանի քաղաքապետի 04.03.2016 թվականի թիվ 726-Ա որոշման հիման վրա գրանցվել է Անահիտ Մխիթարյանի սեփականության իրավունքը, մասնավորապես՝ 12,43քմ մակերեսի նկատմամբ՝ սեփականության, իսկ 35քմ մակերեսի նկատմամբ՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

01.08.2016 թվականին նույն հասցեի նկատմամբ Երևանի քաղաքապետի 23.09.1997 թվականի թիվ 1115 որոշման, Շահումյանի շրջանի ժողդատարանի 04.09.1998 թվականի թիվ 2-719 վճռի հիման վրա գրանցվել է Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքը, մասնավորապես՝ 12,43քմ մակերեսի նկատմամբ՝ սեփականության, իսկ 35քմ մակերեսի նկատմամբ՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը: Նույն վկայականի «Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ» բաժնում գրառում է կատարված այն մասին, որ Շահումյանի շրջանի ժողդատարանի 04.09.1998 թվականի թիվ 2-719 վճռով 12,43քմ մակերեսից Վարդան Մխիթարյանի սեփականությունն է հանդիսանում 3,13քմ մակերեսը:

Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի կադաստրային գործի նյութերով հաստատվում է, որ Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքը գրանցված է այն նույն տարածքի նկատմամբ, որի նկատմամբ գրանցված է եղել Անահիտ Մխիթարյանի սեփականության իրավունքը:

Իմնելով դատարան՝ Անահիտ Մխիթարյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի նկատմամբ 01.08.2016 թվականին Վարդան Մխիթարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանը բավարարել է հայցը՝ պատճառաբանելով, որ գրանցում իրականացնող մարմինը վիճարկվող գրանցմամբ Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքը գրանցել է այն նույն գույքի նկատմամբ, որի նկատմամբ արդեն գրանցված է եղել Անահիտ Մխիթարյանի սեփականության իրավունքը՝ այդ գրանցումը կատարելով արտադատական (վարչարարական) կարգով, այն դեպքում, երբ սահմանադրական նորմով ոչ ոք չի կարող գրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Վերաքննիչ դատարանը, բավարարել է Վարդան Մխիթարյանի վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ Երևանի քաղաքապետի 23.09.1997 թվականի թիվ 1115 որոշման համաձայն՝ Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23ա (ներկայումս 23/1) հասցեի բնակարանի 3 սենյակներից մեկը՝ 12,43քմ բնակելի մակերեսով, սեփականաշնորհվել է որպես 4 անձի՝ Վարդան, Հասմիկ, Ավետիք Մխիթարյանների և Ալմաստ Ստեփանյանի ընդհանուր սեփականություն, իսկ 35քմ օժանդակ և այլ մակերեսները՝ սեփականաշնորհվել և թողնվել են համատեղ օգտագործման: Նշված որոշման հիմքով 12.12.1997 թվականին տրվել է թիվ ԱՕ17708 սեփականության վկայագիրը, որում որպես 12,43քմ մակերեսով սենյակի սեփականատեր ևս նշվել են Վարդան Մխիթարյանը, Ալմաստ Ստեփանյանը, Հասմիկ և Ավետիք Մխիթարյանները, իսկ 35քմ օժանդակ մակերեսը նշվել է որպես ընդհանուր համատեղ սեփականություն: Այսինքն՝ դեռևս 1997 թվականին կատարվել

է Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքի գրանցում 12,43 քմ մակերեսով բնակելի և 35քմ մակերեսով օժանդակ տարածքների նկատմամբ:

Այսպիսով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Երևանի Շահումյանի շրջանի ժողդատարանի 24.08.1998 թվականի վճռով Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքը չի դադարեցվել, այլ, ըստ էության, տեղի է ունեցել ընդհանուր սեփականության բաժանում, ըստ որի՝ 9,3քմ մակերեսը հատկացվել է Ալմաստ Ստեփանյանին, Հասմիկ և Ավետիք Մխիթարյաններին, 3,13քմ մակերեսը թողնվել է Վարդան Մխիթարյանին, իսկ 35 քմ մակերեսը՝ ընդհանուր օգտագործման:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ 1997 թվականից ի վեր առկա չէ Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքի՝ օրենքով սահմանված որևէ հիմքով դադարման կամ այդ իրավունքից Վարդան Մխիթարյանի հրաժարվելու մասին վկայող որևէ փաստ: Մասնավորապես՝ Վարդան Մխիթարյանը չի հրաժարվել 3,13քմ մակերեսով բնակելի և 35քմ մակերեսով ընդհանուր սեփականության իրավունքից, չի կատարել որևէ գործողություն, որը վկայեր սեփականության իրավունքից հրաժարվելու մասին:

Վերոգրյալ հիմնավորումներով Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանի այն պնդումը, որ Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքը ծագել է 01.08.2016 թվականի գրանցմամբ, անհիմն է:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործը հարուցվել է Անահիտ Մխիթարյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի նկատմամբ 01.08.2016 թվականին Վարդան Մխիթարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Սույն գործի փաստերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ տվյալ դեպքում սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք իրավաչափ է Կադաստրի կողմից 01.08.2016 թվականին Վարդան Մխիթարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Այսպես՝ գործի փաստերով հաստատվում է, որ Անահիտ Մխիթարյանը 23.02.2016 թվականի առուվաճառքի թիվ 488 պայմանագրի հիման վրա ձեռք է բերել Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 բնակարանը և 14.03.2016 թվականին նշված անշարժ գույքի նկատմամբ գրանցել է իր սեփականության իրավունքը, մասնավորապես՝ 12,43քմ մակերեսի նկատմամբ՝ սեփականության, իսկ 35քմ մակերեսի նկատմամբ՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը: Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքը վերոնշյալ անշարժ գույքի նույն մասերով մակերեսների նկատմամբ գրանցվել է 01.08.2016 թվականին: Հետևաբար Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վարչական մարմինը վեճի առարկա անշարժ գույքի նկատմամբ արդեն իսկ Անահիտ Մխիթարյանի սեփականության գրանցված իրավունքի առկայության պայմաններում նույն գույքի նկատմամբ գրանցել է նաև Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքը, ընդ որում՝ որպես Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքի ծագման հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 23.09.1997 թվականի թիվ 1115 որոշումը և Շահումյանի շրջանի ժողդատարանի 04.09.1998 թվականի թիվ 2-719 վճիռը:

Ելնելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծություններից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կադաստրը, 01.08.2016 թվականին Վարդան Մխիթարյանի անվամբ Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի 12,43քմ մակերեսի նկատմամբ՝ սեփականության, իսկ 35քմ մակերեսի նկատմամբ՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի գրանցում կատարելով, խախտել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ինսպերտիվ պահանջը, այն է՝ մերժել սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելը, եթե անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ առկա է գրանցված իրավունք, որը բացառում է ներկայացված իրավունքի

գրանցումը, քանի որ սույն գործի փաստերի հետազոտությունից ակնհայտ է, որ Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի նկատմամբ Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքը գրանցելու պահին Անահիտ Մխիթարյանի սեփականության իրավունքն անշարժ գույքի նույն միավորի նույն մասի նկատմամբ արդեն իսկ գրանցված է եղել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կադաստրի կողմից 01.08.2016 թվականին Վարդան Մխիթարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր վարչական ակտ է, քանի որ այն ընդունվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտմամբ, ինչպես նաև Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի նկատմամբ 01.08.2016 թվականին Վարդան Մխիթարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի գրանցմամբ խախտվել է այդ նույն հասցեի նկատմամբ արդեն իսկ գրանցված իրավունքի սուբյեկտի՝ Անահիտ Մխիթարյանի սեփականության իրավունքը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանություններին, որ Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքի գրանցումը անշարժ գույքի 12,43քմ մակերեսով բնակելի և 35քմ մակերեսով օժանդակ տարածքների նկատմամբ կատարվել է դեռևս 1997 թվականին, քանի որ Երևանի Շահումյանի շրջանի ժողդատարանի 24.08.1998 թվականի վճռով ընդհանուր սեփականության բաժանման արդյունքում տվյալ անշարժ գույքից 9,3քմ մակերեսը հատկացվել է Հասմիկ, Ավետիք Մխիթարյաններին և Ալմաստ Ստեփանյանին, իսկ 3,13քմ մակերեսը թողնվել է Վարդան Մխիթարյանին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Անահիտ Մխիթարյանը Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանը ձեռք է բերել 23.02.2016 թվականի առավաճառքի թիվ 488 պայմանագրով, իսկ նշված առուվաճառքի պայմանագրով վեճի առարկա գույքի սեփականատերեր են հանդիսացել Ալմաստ Ստեփանյանը, Հասմիկ և Ավետիք Մխիթարյանները (հիմք՝ սեփականության իրավունքի 08.08.2003 թվականի թիվ 1367803 վկայական), որի հիման վրա էլ կատարվել է իրավունքի պետական գրանցումը: Մինչդեռ Վարդան Մխիթարյանի կողմից դատական կարգով չեն վիճարկվել ոչ անշարժ գույքի առուվաճառքի վերոնշյալ պայմանագիրը, ոչ էլ դրա հիման վրա Անահիտ Մխիթարյանի անվամբ 14.03.2016 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, հետևաբար նման պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ պատճառաբանություններն անհիմն են և չեն բխում սույն գործի փաստերից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարող լիազոր մարմինը, գրանցելով Վարդան Մխիթարյանի սեփականության իրավունքը, չի ապահովել վարչական վարույթի փաստական հանգամանքների օբյեկտիվ, բազմակողմանի և լիարժեք քննարկում, որի արդյունքում օրենքի խախտմամբ ընդունել է վարչական ակտ, որով խախտել է Անահիտ Մխիթարյանի ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով երաշխավորված և պաշտպանվող սեփականության իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանը հանգել էր իրավաչափ եզրահանգման առ այն, որ վիճարկվող վարչական ակտը՝ Երևանի Շերամի փողոցի 95-րդ շենքի թիվ 23/1 հասցեի բնակարանի նկատմամբ 01.08.2016 թվականին Վարդան Մխիթարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր վարչական ակտ է, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով վիճարկվող վարչական ակտի անվավերության հիմքում ընկած հանգամանքները, ոչ իրավաչափորեն գտել է, որ հայրը ենթակա է մերժման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 06.12.2018 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ Դատարանի 19.05.2017 թվականի վճիռը թերի է պատճառաբանված, գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններով վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից Դատարանի 19.05.2017 թվականի վճիռն օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի 19.05.2017 թվականի վճիռն օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Անահիտ Մխիթարյանը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անահիտ Մխիթարյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Կադաստրի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 06.12.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 19.05.2017 թվականի վճիռն՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. ՀՀ կադաստրի կոմիտեից հոգուտ Անահիտ Մխիթարյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԳ/1626/05/16
Ա. Թովմայան
Կ. Բաղդասարյան
Կ. Ավետիսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/1626/05/16
2021թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 26-ին
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.07.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սամվել Հովհաննիսյանի ընդդեմ Կոմիտեի և երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու և վնասը հատուցելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Սամվել Հովհաննիսյանը պահանջել է անվավեր ճանաչել իր դիմումը մերժելու մասին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) 25.03.2016 թվականի վարչական ակտը և Կադաստրին պարտավորեցնել ընդունել վարչական ակտ՝ Կադաստրի ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով 9.200.000 ՀՀ դրամի չափով իրեն պատճառված վնասը հատուցելու մասին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 13.12.2018 թվականի վճռով հայրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.07.2020 թվականի որոշմամբ Սամվել Հովհաննիսյանի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 13.12.2018 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ որոշվել է հայրը բավարարել մասնակիորեն՝ անվավեր ճանաչել Սամվել Հովհաննիսյանի դիմումը մերժելու մասին Կադաստրի 25.03.2016 թվականի վարչական ակտը, Կադաստրին պարտավորեցնել Սամվել Հովհաննիսյանին հատուցելու ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասը՝ 4.500.000 ՀՀ դրամի չափով, մնացած՝ 4.700.000 ՀՀ դրամի չափով, վնասը հատուցելուն պարտավորեցնելու պահանջի մասով, հայրը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Ն. Ավագյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սամվել Հովհաննիսյանը (ներկայացուցիչ՝ Հ. Հովհաննիսյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-99-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես անտեսել է հետևյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կոմիտեն վնասը պարտավոր է հատուցել դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր չէ: Մինչդեռ տվյալ դեպքում առկա չէ անշարժ գույքի կորուստ, քանի որ առկա է Սամվել Հովհաննիսյանի անվամբ 25.02.2004 թվականին գրանցված և տրամադրված թիվ 1802239 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական ու տվյալ վկայականի հիման վրա տրամադրված դատաշինարարական փորձաքննության եզրակացություն, որը Վերաքննիչ դատարանն ընդունել է որպես ապացույց:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Կոմիտեի կողմից ոչ իրավաչափ վարչարարության հետևանքը վերացվել է կադաստրային գործում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով: Տվյալ դեպքում սույն գործով իրավունքի զարգացման խնդրի առկայությունը պայմանավորված է նրանով, որ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքը վերացված լինելու պայմաններում հայցի բավարարումը կառաջացնի կրկնակի փոխհատուցման հարց:

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել սույն գործի համար էական նշանակություն ունեցող ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ինչի արդյունքում թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը՝ հանգեցնելով կրկնակի փոխհատուցման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.07.2020 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 13.12.2018 թվականի վճռին կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքում ներկայացված որոշումը հակասության մեջ է մտնում ինչպես ՀՀ օրենսդրության, այնպես էլ օրենքի միատեսակ մեկնաբանության հետ, որի պայմաններում վճռաբեկ բողոքն անհիմն է:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1) Կադաստրի կողմից ՀՀ Կոտայքի մարզի Պոտլի գյուղում գտնվող թիվ 07-054-014-018 կադաստրային համարով հողամասի նկատմամբ Սամվել Հովհաննիսյանին

25.02.2004 թվականին տրվել է թիվ 1802239 սեփականության վկայականը (**հատոր 1-ին, գ.թ. 118-120**).

2) ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած վճռով Սամվել Հովհաննիսյանի հայցը բավարարվել է, ոչ իրավաչափ են ճանաչվել Կադաստրի գործողությունները՝ ուղղված կադաստրային գործում առկա անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 25.02.2004 թվականի թիվ 1802239 վկայականի օրինակի «Հողամասի տվյալները» բաժնում կադաստրային համարի գրառման դիմաց նշված «07-054-014-018» թվային գրառման վերջին «8» թվանշանը մեխանիկական ջնջման և հավելագրման եղանակով կատարելուն (**հատոր 1-ին, գ. թ. 8-20**).

3) Կադաստրի նախագահի տեղակալը 03.11.2015 թվականի թիվ ԱՄ/7.5/6845-15 գրույթամբ, ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի 30.10.2015 թվականի դիմումի, հայտնել է նաև, որ ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վճռի պահանջը կատարելու համար անհրաժեշտ է, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջների համաձայն, դիմել Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից) և ներկայացնել օրինական ուժի մեջ մտած վճիռ (երկրորդ կնիքի առկայությամբ) (**հատոր 1-ին, գ. թ. 96**).

4) Կադաստրը, ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի կողմից ներկայացված թիվ 06/11/2015-2-0126 դիմումի, 09.11.2015 թվականին կազմել է թիվ ԱՏ-06/11/2015-2-0126 տեղեկանքն այն մասին, որ հողամասի կադաստրային ծածկագրում ուղղում չի կարող կատարվել, քանի որ 07-054-0014-0019 ծածկագրով առկա է գրանցված իրավունք (**հատոր 1-ին, գ. թ. 21**).

5) Կադաստրի նախագահի տեղակալը 20.01.2016 և 21.01.2016 թվականների նույնաբովանդակ գրություններով Սամվել Հովհաննիսյանին հայտնել է, որ Կոմիտեի 16.12.2015 թվականի «ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի (գործ թիվ ՎԴ/4795/05/12) վճիռը պարզաբանելու մասին» թիվ ԱՄ/7.1/7666-15 դիմումին ի պատասխան ստացվել է ՀՀ վարչական դատարանի 24.12.2015 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշումը: Ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջներով անհրաժեշտ է դիմել Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ (**հատոր 1-ին, գ. թ. 23, 97**).

6) Կադաստրի նախագահի տեղակալը 25.03.2016 թվականի գրությամբ ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի ներկայացուցիչ Գարիկ Գալիկյանի 02.02.2015 թվականի դիմումի հայտնել է, որ ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/4795/05/12 վարչական գործով 18.09.2015 թվականին վճռել է ոչ իրավաչափ ճանաչել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 1802239 վկայականի «Հողամասի տվյալները» բաժնում կադաստրային համարի վերջին «8» թվանշանի գրառումը՝ թողնելով նախկինում գրառված «9» թվանշանը: Նշված վճռի կատարումն ապահովվելու համար կադաստրի պետական կոմիտեի կողմից 16.12.2015 թվականին դիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ վճիռը պարզաբանելու համար, սակայն ՀՀ վարչական դատարանի 24.12.2015 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշմամբ այն մերժվել է: Քննարկման արդյունքում եկել են եզրակացության, որ օրինական ուժի մեջ մտած վճռի պայմաններում այն ենթակա է կատարման, ուստի կադաստրային գործում առկա անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման, 25.02.2004 թվականի թիվ 1802239 վկայականի «Հողամասի տվյալները» բաժնում նշված «07-054-014-018» գրառման վերջին «8» թվանշանը «9»-ով փոփոխելու (ուղղելու) վերաբերյալ կրկին կարող է դիմել անշարժ գույքի պետական ռեգիստրի որևէ սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից) (**հատոր 1-ին, գ. թ. 99, 100**).

7) Կադաստրի աշխատակազմի Մարգերի միավորված ստորաբաժանման ղեկավարը 11.01.2017 թվականի թիվ ՀՄ-0024 գրությամբ ՀՀ վարչական դատարանի դատավոր Ս. Հովակիմյանին, ինչպես նաև Սամվել Հովհաննիսյանին հայտնել է, որ ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վճռի և նույն դատարանի 24.12.2015

թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշման հիման վրա 17.01.2017 թվականին Կադաստրի աշխատակազմի Մարզերի միավորված ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր Արմինե Վարդանյանի կողմից իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1802239 վկայականում և կադաստրային քարտեզում կատարվել է հողամասի կադաստրային ծածկագրի սխալի ուղղում՝ 07-054-0014-0018 ծածկագիրը փոխարինվել է 07-054-0014-0019 ծածկագրով: Սամվել Հովհաննիսյանին առաջարկվել է ներկայացնել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը՝ համապատասխան ուղղում կատարելու համար (**հատոր 2-րդ, գ. թ. 82**).

8) Կադաստրը, ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի կողմից ներկայացված թիվ 16/01/2017-1-0166 դիմումի, 17.01.2017 թվականին կազմել է թիվ ԱՏ-16/01/2017-1-0166 տեղեկանքն այն մասին, որ ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վճռի և նույն դատարանի 24.12.2015 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշման հիման վրա համայնքի հերթապահ կադաստրային էլեկտրոնային քարտեզում, իրավունքի պետական գրանցման միասնական մատյանում, ինչպես նաև թիվ 1802239 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի «Հողամասի տվյալները» բաժնում կատարվել է կադաստրային համարի (ծածկագրի) ուղղում, ճիշտ ծածկագիրն է 07-054-0014-0019: Վկայականի «Լրացուցիչ նշումներ» բաժնում կատարվել է գրառում՝ թիվ 1 ուղղումը կատարվել է Մարզերի միավորված ստորաբաժանման ռեգիստր Ա. Վարդանյանի կողմից 17.01.2017 թվականին ժամը 11:50-ին (**հատոր 2-րդ, գ. թ. 114**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական ակտի անվերապահ բեկանման հիմք հանդիսացող դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցին՝

- արդյո՞ք պարզավորեցման հայցը կարող է համարվել թույլատրելի և ենթակա լինել դատարանի քննությանն այն պարագայում, երբ առկա չէ հայցվող բարենպաստ վարչական ակտը մերժելու մասին վարչական մարմնի կողմից ընդունված միջամտող վարչական ակտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ նույն բաժնի դրույթներին համապատասխան:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ նույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցումն իրականացվում է **վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են նույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ **վարչական ակտը**, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Վերոգրյալ իրավանքների վերլուծությունից հետևում է, որ վարչական մարմինների կողմից իրականացված վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցումն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով: Այսպես, որպես վնասի հատուցման պարտադիր նախապայման նախատեսվել է, որ վնասի հատուցում չի կարող իրականացվել, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ այն դեպքի, երբ վնասը պատճառվել է իրավաչափ վարչարարությամբ:

Օրենսդիրը սահմանել է նաև, որ վնասի հատուցման պահանջը դիմումի միջոցով ներկայացվում է այն վարչական մարմնին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է վնասը: Ընդ որում, վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան, ինչը նշանակում է, որ քննարկման արդյունքում վարչական մարմին ընդունում է վնասի հատուցման մասին դիմողի պահանջը բավարարելու կամ մերժելու որոշում, որով էլ, ըստ էության, պայմանավորվում է դատական պաշտպանության դիմելու անհրաժեշտությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի, ինչպես նաև հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման

դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված պարտավորեցման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում փաստել է, որ **պարտավորեցման հայց ներկայացնելու համար օրենսդրի կողմից սահմանվել է պարտադիր պահանջ, համաձայն որի՝ դատարան դիմելու համար անհրաժեշտ է վեճի առկայություն, որը կարող է լինել այն դեպքում, երբ անձը համապատասխան պահանջով դիմել է վարչական մարմնին:** Այսինքն՝ պարտավորեցման հայցը ՀՀ վարչական դատարան ներկայացնելուց առաջ անհրաժեշտ է, որ անձը համապատասխան ակնկալվող բարենպաստ վարչական ակտն ընդունելու պահանջով դիմած լինի համապատասխան վարչական մարմնին (*յունե Նագելի Նահապուսկյանը և Գրիշա Չառսյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԿ/4571/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.08.2019 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով պարտավորեցման հայցի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ **պարտավորեցման հայց ներկայացնելու համար նախապայման է հանդիսանում բարենպաստ վարչական ակտի ընդունումը վարչական մարմնի կողմից մերժելու հանգամանքը:** Ընդ որում, պարտավորեցման հայցը, բարենպաստ վարչական ակտն ընդունելու պահանջից բացի, օրենքի ուժով իր մեջ ներառում է նաև վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջը՝ անկախ հայցվորի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու հանգամանքից: Օրենսդրի կողմից նման պայմանի սահմանումը բխում է վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից այնքանով, որքանով անձը չի կարող հայցել իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունում, քանի դեռ այդպիսի ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտն օրենքով սահմանված կարգով վերացված չէ: Ըստ այդմ, օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորեցման հայցի քննության արդյունքներով գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս հայցը բավարարելու դեպքում վարչական դատարանը վարչական մարմնին բարենպաստ վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու հետ մեկտեղ պետք է անվավեր ճանաչի վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ պարտավորեցման հայցի բուն նպատակը անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է: Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե վարչական դատարանը ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հաստատված է համարում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, վերջինս պետք է կայացնի հայցը բավարարելու վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ անվավեր ճանաչելով վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը և պարտավորեցնելով վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը: Այլ կերպ՝ վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի իրավաչափությունը պարտավորեցման հայցի շրջանակներում չի քննվում վիճարկման հայցի քննության համար սահմանված կարգով, և ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը հաստատվելու

ինքնին հանգեցնում է վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի անվավերության (յրեն Կարեն Սարգսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտավորեցման հայց ներկայացնելու համար օրենսդրի կողմից սահմանված պարտադիր պահանջը հանգում է նրան, որ դատարան դիմելու համար անհրաժեշտ է վեճի առկայություն, որը կարող է լինել այն դեպքում, երբ անձը համապատասխան պահանջով դիմել է վարչական մարմնին և վերջինս մերժել է բարենպաստ վարչական ակտի ընդունումը: Ընդ որում, պարտավորեցման հայցը ներառում է նաև հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջը: Այլ կերպ ասած, անձի մոտ կարող է ծագել պարտավորեցման հայց ներկայացնելու իրավունքը միայն այն դեպքում, երբ նա դիմել է վարչական մարմնին՝ հայցելով բարենպաստ վարչական ակտի ընդունում, սակայն վարչական մարմինը մերժել է դրա ընդունումը: Հակառակ պարագայում, այն է՝ վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին որոշում, այսինքն՝ միջամտող վարչական ակտ կայացված չլինելու դեպքում անձի մոտ չի ծագում պարտավորեցման հայց ներկայացնելու իրավունքը, իսկ գոյություն չունեցող «վեճը» ենթակա չէ դատարանի քննությանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝

1) վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության.

(...)

9) եթե բացահայտվել են նույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը.

(...):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կադաստրի կողմից ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի գյուղում գտնվող հողամասի նկատմամբ Սամվել Հովհաննիսյանին 25.02.2004 թվականին տրվել է թիվ 1802239 սեփականության վկայականը, որում որպես տվյալ հողամասի կադաստրային համար նշվել է 07-054-014-018 թիվը:

Թիվ ՎԴ/4795/05/12 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը 18.09.2015 թվականին բավարարել է Սամվել Հովհաննիսյանի հայցը և ոչ իրավաչափ է ճանաչել Կադաստրի գործողությունները՝ ուղղված կադաստրային գործում առկա անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 25.02.2004 թվականի թիվ 1802239 վկայականի օրինակի «Հողամասի տվյալները» բաժնում կադաստրային համարի գրառման դիմաց նշված «07-054-014-018» թվային գրառման վերջին «8» թվանշանը մեխանիկական ջնջման և հավելագրման եղանակով կատարելուն: Նշված վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Այսինքն՝ տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի իմաստով առկա է եղել վնասի հատուցման պարտադիր նախապայմանը՝ վարչական մարմնի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Նպատակ ունենալով վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու եղանակով ստանալու իրեն ենթադրյալ պատճառված վնասի հատուցում՝ հայցվոր Սամվել Հովհաննիսյանը դիմում է ներկայացրել վարչական մարմնին՝ Կադաստրին՝ խնդրելով կատարել վերը նշված վճռի պահանջը, որին ի պատասխան Կադաստրը հայտնել է, որ հողամասի կադաստրային ծածկագրում ուղղում չի կարող կատարվել, քանի որ 07-054-0014-0019 ծածկագրով առկա է գրանցված իրավունք:

Այնուհետև Սամվել Հովհաննիսյանը կրկին դիմումներ է ներկայացրել Կադաստրին, որին ի պատասխան վերջինս նաև 25.03.2016 թվականի գրությամբ հայտնել է, որ Կադաստրը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ վճիռը պարզաբանելու դիմումով, որը մերժվել է, և քննարկման արդյունքում եկել են եզրակացության, որ օրինական ուժի մեջ մտած վճռի պայմաններում այն ենթակա է կատարման, ու առաջարկվել է դիմել Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ՝ վճռում նշված գրառումը փոփոխելու (ուղղելու) համար:

Փաստորեն, տվյալ դեպքում **Կադաստրը չի մերժել վնասի հատուցում տալը: Ճիշտ հակառակը, հայտնել է իր պատրաստակամությունը վնասը հատուցելու հարցում՝ առաջարկելով դիմել** Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ՝ վճռում նշված գրառումը փոփոխելու (ուղղելու) համար:

Վերոգրյալ փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա չէ պարտավորեցման հայց ներկայացնելու փաստական հիմք, այն է՝ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտ: Մինչդեռ դատական կարգով վնասի հատուման պահանջ ներկայացնելու փաստական և իրավական հիմքերի բացակայության պայմաններում հայցվորը դիմել ՀՀ վարչական դատարան պահանջելով անվավեր ճանաչել իր դիմումը մերժելու մասին Կադաստրի 25.03.2016 թվականի վարչական ակտը և Կադաստրին պարտավորեցնել ընդունել վարչական ակտ՝ Կադաստրի ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով 9.200.000 ՀՀ դրամի չափով իրեն պատճառված վնասը հատուցելու մասին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ հայցադիմումը ենթակա չի եղել վարույթ ընդունման, իսկ վարույթ ընդունելու պարագայում սույն գործի վարույթը ենթակա է եղել կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Տվյալ դեպքում ներկայացված հայցապահանջն իր բնույթով համապատասխանում է պարտավորեցման հայցատեսակին, քանի որ հայցվորի պահանջն ուղղված է Կադաստրի ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով 9.200.000 ՀՀ դրամի չափով իրեն պատճառված վնասը հատուցելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելուն, որի ընդունումը հայցվորի պնդմամբ մերժվել է Կադաստրի 25.03.2016 թվականի գրությամբ: Ընդ որում, 25.03.2016 թվականի գրությունը որակվել է որպես վարչական ակտ, որի վիճարկումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պետք է ներառվեր պարտավորեցման հայցում: Այնինչ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կադաստրի 25.03.2016 թվականի գրությունը վարչական ակտ չի հանդիսանում, քանի որ այն չի համապատասխանում վարչական ակտի բնորոշմանը, ուստի ոչ միայն չէր կարող պարտավորեցման հայց ներկայացնելու հիմք հանդիսանալ, այլ նաև ներառվեր պարտավորեցման հայցում՝ որպես միջամտող վարչական ակտի վիճարկում:

Այսպես. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհրատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ **միջամտող վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները **մերժում**, միջամտում, ընդհուպ սահմանափակում են **անձանց իրավունքների իրականացումը**, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կադաստրի 25.03.2016 թվականի գրության միջոցով Կադաստրը ոչ միայն չի մերժել հայցվորի իրավունքների իրականացումը, այլև անգամ չի սահմանափակել այդ իրավունքների իրականացումը: Ավելին՝ Կադաստրն առաջարկել է հայցվորին դիմել Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ՝ վճռում նշված գրառումը փոփոխելու (ուղղելու) համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու վերաբերյալ Կադաստրի կողմից վարչական ակտ ընդունված չլինելու հանգամանքն ինքնին բացառում է պարտավորեցման հայց ներկայացնելու իրավական հնարավորությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Դատական ակտը **բոլոր դեպքերում ենթակա է բեկանման**, եթե՝

1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, ներառյալ՝ այնպիսի դատավորի կողմից, որը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել:

2) դատարանը գործը քննել է դատավարության մասնակիցներից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ չի ծանուցվել նիստի ժամանակի և վայրի մասին:

3) դատական ակտը ստորագրված և կնքված չէ:

4) դատական ակտը ստորագրված և կնքված չէ այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից:

5) դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ:

6) գործից բացակայում է դատական նիստի կամ առանձին դատավարական գործողության կատարման արձանագրությունը:

7) գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ:

8) դատական ակտը շոշափում է դատավարության մասնակից չդարձված անձանց իրավունքները և պարտականությունները:

9) առկա են նույն օրենսգրքի 96-րդ հոդվածով սահմանված՝ գործի վարույթը կարճելու հիմքերը:

Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով կարճել գործի վարույթը:

Մինչնույն ժամանակ անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածով նախատեսված՝ բողոքարկվող դատական ակտը վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջների սահմաններում վերանայելու կանոնին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ այն չի կարող մեկնաբանվել այնպես, որ ՀՀ վճռաբեկ դատարանը պետք է կաշկանդված լինի վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջների սահմաններով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված բոլոր դեպքերում: Նման մեկնաբանության պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանը ստիպված կլինի ըստ էության անդրադառնալ և գնահատական տալ բողոքարկված դատական ակտում նյութական իրավունքի նորմերի կիրառելիության հիմնավորվածությանը նույնիսկ այն դեպքում, երբ օրինակ բողոքարկված դատական ակտը ստորագրված և կնքված չի լինի կամ ստորագրված և կնքված չի լինի այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից կամ դատական ակտը կայացրած չի լինի այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ, կամ գործը քննված լինի ընդդատության կանոնների խախտմամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը համանման մոտեցում է ցուցաբերել 09.04.2018 թվականից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասում, որպիսի իրավակարգավորմամբ օրենսդրի արտահայտած տրամաբանության համատեքստում պետք է մեկնաբանվի նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասը:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Դատական ակտը **բողոք դեպքերում ենթակա է բեկանման**» եզրույթը պետք է մեկնաբանվի այնպես, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը (...):

Վերոգրյալ իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ դատական ակտը բեկանելու և գործի վարույթը կարճելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորության կիրառումն օրենսդիրը բնավ չի պայմանավորել վճռաբեկ բողոքը բավարարելու հանգամանքով, ինչը ևս խոսում է այն մեկնաբանման օգտին, որ գործի վարույթը կարճման ենթակա լինելու հիմքի առկայությունը հաստատվելու պարագայում՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով անվիճելիորեն առկա է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ գործի վարույթը կարճելու հիմք, այն է՝ բացահայտվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք, մասնավորապես՝ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու վերաբերյալ Կադաստրի կողմից վարչական ակտ ընդունված չլինելու պայմաններում խոսք չի կարող լինել վարչական մարմնի հետ վեճի առկայության մասին, ուստի պարտավորեցման հայց ներկայացնելու փաստական և իրավական հիմքերը բացակայել են, հետևաբար **գոյություն չունեցող «վեճը» ենթակա չէ դատարանի քննությանը:**

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից կիրառման է ենթակա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և սույն գործի վարույթը կարճելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը, քանի որ բացահայտվել է՝ սույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք, այն է՝ միջամտող վարչական ակտի բացակայության պարագայում գոյություն չունի դատարանի քննությանը ենթակա վեճ:

Վերը նշված պարճատարանությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի պարտախանում բերված փաստարկներին, քանի որ դրանք այլևս որևէ նշանակություն չունեն բողոքի քննության համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է, բացառությամբ սույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 10-րդ կետերում նշված դեպքերի:

Նկատի ունենալով, որ տվյալ դեպքում սույն գործի վարույթը ենթակա է կարճման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված հիմքով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետական տուրքի հատուցման պարտականությունը պետք է դրվի հայցվորի վրա: Ըստ այդմ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով հայցադիմումը դատարան ներկայացնելու համար Սամվել Հովհաննիսյանն արդեն իսկ վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, վերաքննիչ բողոքի համար Սամվել Հովհաննիսյանը պետական տուրք չի վճարել և Վերաքննիչ դատարանը պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգել է՝ այդ հարցին կայացվելիք դատական ակտով անդրադառնալու պայմանով, իսկ վճռաբեկ բողոքի համար Կոմիտեն 20.000 ՀՀ դրամը վճարել է, ուստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով հայցադիմումը Դատարան ներկայացնելու համար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված, Սամվել Հովհաննիսյանից ՀՀ պետական բյուջե պետք է բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.02.2019 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, իսկ հոգուտ Կոմիտեի՝ 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերջինիս կողմից վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.07.2020 թվականի որոշումը և սույն գործի վարույթը կարճել:
2. Սամվել Հովհաննիսյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.02.2019 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:
Սամվել Հովհաննիսյանից հոգուտ ՀՀ կադաստրի կոմիտեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/1626/05/16 վարչական գործով
26.11.2021 թվականին կայացված որոշման պատճառաբանական
և եզրափակիչ մասերի վերաբերյալ

26.11.2021 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2021 թվականի նոյեմբերի 26-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.07.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ Սամվել Հովհաննիսյանի հայցի ընդդեմ Կոմիտեի և երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վարչական ակտն անվավեր ճանաչելու և վնասը հատուցելու պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.07.2020 թվականի որոշումը և գործի վարույթը կարճել:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապարունություն նշել է հերկյալը

«Դիմելով դատարան՝ Սամվել Հովհաննիսյանը պահանջել է անվավեր ճանաչել իր դիմումը մերժելու մասին ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) 25.03.2016 թվականի վարչական ակտը և Կադաստրին պարտավորեցնել ընդունել վարչական ակտ՝ Կադաստրի ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով 9.200.000 ՀՀ դրամի չափով իրեն պատճառված վնասը հատուցելու մասին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 13.12.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.07.2020 թվականի որոշմամբ Սամվել Հովհաննիսյանի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 13.12.2018 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ որոշվել է հայցը բավարարել մասնակիորեն՝ անվավեր ճանաչել Սամվել Հովհաննիսյանի դիմումը մերժելու մասին Կադաստրի 25.03.2016 թվականի վարչական ակտը, Կադաստրին պարտավորեցնել Սամվել Հովհաննիսյանին հատուցելու ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասը՝ 4.500.000 ՀՀ դրամի չափով, մնացած՝ 4.700.000 ՀՀ դրամի չափով, վնասը հատուցելուն պարտավորեցնելու պահանջի մասով, հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Ն.Ավագյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սամվել Հովհաննիսյանը (ներկայացուցիչ՝ Հ. Հովհաննիսյան):

2. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի հիմք, հիմնավորումներ և պահանջ նշել է հերկյալը

«Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարչության մասին» ՀՀ օրենքի 96-99-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածները:

Քողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապարհաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կոմիտեն վնասը պարտավոր է հատուցել դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր չէ: Մինչդեռ տվյալ դեպքում առկա չէ անշարժ գույքի կորուստ, քանի որ առկա է Սամվել Հովհաննիսյանի անվամբ 25.02.2004 թվականին գրանցված և տրամադրված թիվ 1802239 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական ու տվյալ վկայականի հիման վրա տրամադրված դատաշինարարական փորձաքննության եզրակացություն, որը Վերաքննիչ դատարանն ընդունել է որպես ապացույց:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Կոմիտեի կողմից ոչ իրավաչափ վարչարարության հետևանքը վերացվել է կադաստրային գործում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով: Տվյալ դեպքում սույն գործով իրավունքի զարգացման խնդրի առկայությունը պայմանավորված է նրանով, որ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքը վերացված լինելու պայմաններում հայցի բավարարումը կառաջացնի կրկնակի փոխհատուցման հարց:

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել սույն գործի համար էական նշանակություն ունեցող ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ինչի արդյունքում թույլ է տվել դատական սխալ, որը խախտել է արդարադատության բուն էությունը՝ հանգեցնելով կրկնակի փոխհատուցման:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.07.2020 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 13.12.2018 թվականի վճռին կամ գործն ուղարկել նոր քննության»:

2.1 Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի վերաբերյալ Սամվել Հովհաննիսյանի պարտախանի հիմնավորումներ նշել է հետևյալը

«Վճռաբեկ բողոքում ներկայացված որոշումը հակասության մեջ է մտնում ինչպես ՀՀ օրենսդրության, այնպես էլ օրենքի միատեսակ մեկնաբանության հետ, որի պայմաններում վճռաբեկ բողոքն անհիմն է»:

3. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը

«1) Կադաստրի կողմից ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի գյուղում գտնվող թիվ 07-054-014-018 կադաստրային համարով հողամասի նկատմամբ Սամվել Հովհաննիսյանին 25.02.2004 թվականին տրվել է թիվ 1802239 սեփականության վկայականը (**հատոր 1-ին, գ.թ. 118-120**).

2) ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած վճռով Սամվել Հովհաննիսյանի հայցը բավարարվել է, ոչ իրավաչափ են ճանաչվել Կադաստրի գործողությունները՝ ուղղված կադաստրային գործում առկա անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 25.02.2004 թվականի թիվ 1802239 վկայականի օրինակի «Հողամասի տվյալները» բաժնում կադաստրային համարի գրառման դիմաց նշված «07-054-014-018» թվային գրառման վերջին «8» թվանշանը մեխանիկական ջնջման և հավելագրման եղանակով կատարելուն (**հատոր 1-ին, գ. թ. 8-20**).

3) Կադաստրի նախագահի տեղակալը 03.11.2015 թվականի թիվ ԱՄ/7.5/6845-15 գրությամբ, ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի 30.10.2015 թվականի դիմումի, հայտնել է նաև, որ ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վճռի պահանջը կատարելու համար անհրաժեշտ է, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջների համաձայն, դիմել

Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից) և ներկայացնել օրինական ուժի մեջ մտած վճիռ (երկրորդ կնիքի անկայությունը) **(հատոր 1-ին, գ. թ. 96)**.

4) Կադաստրը, ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի կողմից ներկայացված թիվ 06/11/2015-2-0126 դիմումի, 09.11.2015 թվականին կազմել է թիվ ԱՏ-06/11/2015-2-0126 տեղեկանքն այն մասին, որ հողամասի կադաստրային ծածկագրում ուղղում չի կարող կատարվել, քանի որ 07-054-0014-0019 ծածկագրով առկա է գրանցված իրավունք **(հատոր 1-ին, գ. թ. 21)**.

5) Կադաստրի նախագահի տեղակալը 20.01.2016 և 21.01.2016 թվականների նույնաբովանդակ գրություններով Սամվել Հովհաննիսյանին հայտնել է, որ Կոմիտեի 16.12.2015 թվականի «ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի (գործ թիվ ՎԴ/4795/05/12) վճիռը պարզաբանելու մասին» թիվ ԱՄ/7.1/7666-15 դիմումին ի պատասխան ստացվել է ՀՀ վարչական դատարանի 24.12.2015 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշումը: Ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջներով անհրաժեշտ է դիմել Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ **(հատոր 1-ին, գ. թ. 23, 97)**.

6) Կադաստրի նախագահի տեղակալը 25.03.2016 թվականի գրությամբ ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի ներկայացուցիչ Գարիկ Գալիկյանի 02.02.2015 թվականի դիմումի հայտնել է, որ ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/4795/05/12 վարչական գործով 18.09.2015 թվականին վճռել է ոչ իրավաչափ ճանաչել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 1802239 վկայականի «Հողամասի տվյալները» բաժնում կադաստրային համարի վերջին «8» թվանշանի գրառումը՝ թողնելով նախկինում գրառված «9» թվանշանը: Նշված վճռի կատարումն ապահովվելու համար կադաստրի պետական կոմիտեի կողմից 16.12.2015 թվականին դիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ վճիռը պարզաբանելու համար, սակայն ՀՀ վարչական դատարանի 24.12.2015 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշումը այն մերժվել է: Քննարկման արդյունքում եկել են եզրակացության, որ օրինական ուժի մեջ մտած վճռի պայմաններում այն ենթակա է կատարման, ուստի կադաստրային գործում առկա անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման, 25.02.2004 թվականի թիվ 1802239 վկայականի «Հողամասի տվյալները» բաժնում նշված «07-054-014-018» գրառման վերջին «8» թվանշանը «9»-ով փոփոխելու (ուղղելու) վերաբերյալ կրկին կարող է դիմել անշարժ գույքի պետական ռեգիստրի որևէ սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից) **(հատոր 1-ին, գ. թ. 99, 100)**.

7) Կադաստրի աշխատակազմի Մարգերի միավորված ստորաբաժանման ղեկավարը 11.01.2017 թվականի թիվ ՀՄ-0024 գրությամբ ՀՀ վարչական դատարանի դատավոր Ս. Հովակիմյանին, ինչպես նաև Սամվել Հովհաննիսյանին հայտնել է, որ ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վճռի և նույն դատարանի 24.12.2015 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշման հիման վրա 17.01.2017 թվականին Կադաստրի աշխատակազմի Մարգերի միավորված ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր Արմինե Վարդանյանի կողմից իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1802239 վկայականում և կադաստրային քարտեզում կատարվել է հողամասի կադաստրային ծածկագրի սխալի ուղղում՝ 07-054-0014-0018 ծածկագիրը փոխարինվել է 07-054-0014-0019 ծածկագրով: Սամվել Հովհաննիսյանին առաջարկվել է ներկայացնել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը՝ համապատասխան ուղղում կատարելու համար **(հատոր 2-րդ, գ. թ. 82)**.

8) Կադաստրը, ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի կողմից ներկայացված թիվ 16/01/2017-1-0166 դիմումի, 17.01.2017 թվականին կազմել է թիվ ԱՏ-16/01/2017-1-0166 տեղեկանքն այն մասին, որ ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վճռի և նույն դատարանի 24.12.2015 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշման հիման վրա համայնքի հերթապահ կադաստրային էլեկտրոնային քարտեզում, իրավունքի պետական գրանցման միասնական մատյանում, ինչպես նաև

թիվ 1802239 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի «Հո- դամասի տվյալները» բաժնում կատարվել է կադաստրային համարի (ծածկագրի) ուղ- դում, ճիշտ ծածկագիրն է 07-054-0014-0019: Վկայականի «Լրացուցիչ նշումներ» բաժնում կատարվել է գրառում՝ թիվ 1 ուղղումը կատարվել է Մարզերի միավորված ստորաբա- ժանման ռեգիստր Ա. Վարդանյանի կողմից 17.01.2017 թվականին ժամը 11:50-ին (**հատր 2-րդ, գ. թ. 114**)»:

4. Վճռաբեկ դատարանը որպես Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններ և եզրահանգումներ նշել է հետևյալը

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդ- վածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատու- թյունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ բողոքարկվող դատական ակ- տը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական ակտի անվերապահ բե- կանման հիմք հանդիսացող դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է հա- մարում անդրադառնալ հետևյալ հարցին՝

- արդյո՞ք պարտավորեցման հայցը կարող է համարվել թույլատրելի և ենթակա լինել դատարանի քննությանն այն պարագայում, երբ առկա չէ հայցվող բարենպաստ վարչա- կան ակտը մերժելու մասին վարչական մարմնի կողմից ընդունված միջամտող վարչա- կան ակտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչա- րարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ նույն բաժ- նի դրույթներին համապատասխան:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ նույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցումն իրականացվում է վարչարարությամբ առաջա- ցած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փո- փոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունա- վետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատ- ճառված գույքային վնասը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմնին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են նույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական մարմինների կողմից իրականացված վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցումն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով: Այսպես, որպես վնասի հատուցման պարտադիր նախապայման նախատեսվել է, որ վնասի հատուցում չի կարող իրականացվել, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ այն դեպքի, երբ վնասը պատճառվել է իրավաչափ վարչարարությամբ:

Օրենսդիրը սահմանել է նաև, որ վնասի հատուցման պահանջը դիմումի միջոցով ներկայացվում է այն վարչական մարմնին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է վնասը: Ընդ որում, վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան, ինչը նշանակում է, որ քննարկման արդյունքում վարչական մարմինն ընդունում է վնասի հատուցման մասին դիմողի պահանջը բավարարելու կամ մերժելու որոշում, որով էլ, ըստ էության, պայմանավորվում է դատական պաշտպանության դիմելու անհրաժեշտությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի, ինչպես նաև հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված պարտավորեցման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում փաստել է, որ պարտավորեցման հայց ներկայացնելու համար օրենսդրի կողմից սահմանվել է պարտադիր պահանջ, համաձայն որի՝ դատարան դիմելու համար անհրաժեշտ է վեճի առկայություն, որը կարող է լինել այն դեպքում, երբ անձը համապատասխան պահանջով դիմել է վարչական մարմնին: Այսինքն՝ պարտավորեցման հայցը ՀՀ վարչական դատարան ներկայացնելուց

առաջ անհրաժեշտ է, որ անձը համապատասխան ակնկալվող բարենպաստ վարչական ակտն ընդունելու պահանջով դիմած լինի համապատասխան վարչական մարմնին (տե՛ս Նազելի Նահատակյանը և Գրիշա Չաումյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/4571/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.08.2019 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով պարտավորեցման հայցի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պարտավորեցման հայց ներկայացնելու համար նախապայման է հանդիսանում բարենպաստ վարչական ակտի ընդունումը վարչական մարմնի կողմից մերժելու հանգամանքը: Ընդ որում, պարտավորեցման հայցը, բարենպաստ վարչական ակտն ընդունելու պահանջից բացի, օրենքի ուժով իր մեջ ներառում է նաև վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջը՝ անկախ հայցվորի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու հանգամանքից: Օրենսդրի կողմից նման պայմանի սահմանումը բխում է վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից այնքանով, որքանով անձը չի կարող հայցել իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունում, քանի դեռ այդպիսի ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտն օրենքով սահմանված կարգով վերացված չէ: Ըստ այդմ, օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորեցման հայցի քննության արդյունքներով գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս հայցը բավարարելու դեպքում վարչական դատարանը վարչական մարմնին բարենպաստ վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու հետ մեկտեղ պետք է անվավեր ճանաչի վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ պարտավորեցման հայցի բուն նպատակը անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է: Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե վարչական դատարանը ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հաստատված է համարում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, վերջինս պետք է կայացնի հայցը բավարարելու վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ անվավեր ճանաչելով վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը և պարտավորեցնելով վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը: Այլ կերպ՝ վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի իրավաչափությունը պարտավորեցման հայցի շրջանակներում չի քննվում վիճարկման հայցի քննության համար սահմանված կարգով, և ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը հաստատվելն ինքնին հանգեցնում է վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի անվավերության (տե՛ս Կարեն Սարգսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտավորեցման հայց ներկայացնելու համար օրենսդրի կողմից սահմանված պարտադիր պահանջը հանգում է նրան, որ դատարան դիմելու համար անհրաժեշտ է վեճի առկայություն, որը կարող է լինել այն դեպքում, երբ անձը համապատասխան պահանջով դիմել է վարչական մարմնին և վերջինս մերժել է բարենպաստ վարչական ակտի ընդունումը: Ընդ որում, պարտավորեցման հայցը ներառում է նաև հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջը: Այլ կերպ ասած, անձի մոտ կարող է ծագել պարտավորեցման հայց ներկայացնելու իրավունքը միայն այն դեպքում, երբ նա դիմել է վարչական մարմնին՝ հայցելով բարենպաստ վարչական ակտի ընդունում, սակայն վարչական մարմինը մերժել է դրա ընդունումը: Հակառակ պարագայում, այն է՝ վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտի

ընդունումը մերժելու մասին որոշում, այսինքն՝ միջամտող վարչական ակտ կայացված չլինելու դեպքում անձի մոտ չի ծագում պարտավորեցման հայց ներկայացնելու իրավունքը, իսկ գոյություն չունեցող «վեճը» ենթակա չէ դատարանի քննությանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝

1) վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության.

(...)

9) եթե բացահայտվել են նույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը.

(...):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կադաստրի կողմից ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի գյուղում գտնվող հողամասի նկատմամբ Սամվել Հովհաննիսյանին 25.02.2004 թվականին տրվել է թիվ 1802239 սեփականության վկայականը, որում որպես տվյալ հողամասի կադաստրային համար նշվել է 07-054-014-018 թիվը:

Թիվ ՎԴ/4795/05/12 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը 18.09.2015 թվականին բավարարել է Սամվել Հովհաննիսյանի հայցը և ոչ իրավաչափ է ճանաչել Կադաստրի գործողությունները՝ ուղղված կադաստրային գործում առկա անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 25.02.2004 թվականի թիվ 1802239 վկայականի օրինակի «Հողամասի տվյալները» բաժնում կադաստրային համարի գրառման դիմաց նշված «07-054-014-018» թվային գրառման վերջին «8» թվանշանը մեխանիկական ջնջման և հավելագրման եղանակով կատարելուն: Նշված վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Այսինքն՝ տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի իմաստով առկա է եղել վնասի հատուցման պարտադիր նախապայմանը՝ վարչական մարմնի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Նպատակ ունենալով վարչարարությանը առաջացած հետևանքները վերացնելու եղանակով ստանալու իրեն ենթադրյալ պատճառված վնասի հատուցում՝ հայցվոր Սամվել Հովհաննիսյանը դիմում է ներկայացրել վարչական մարմնին՝ Կադաստրին՝ խնդրելով կատարել վերը նշված վճռի պահանջը, որին ի պատասխան Կադաստրը հայտնել է, որ հողամասի կադաստրային ծածկագրում ուղղում չի կարող կատարվել, քանի որ 07-054-0014-0019 ծածկագրով առկա է գրանցված իրավունք:

Այնուհետև Սամվել Հովհաննիսյանը կրկին դիմումներ է ներկայացրել Կադաստրին, որին ի պատասխան վերջինս նաև 25.03.2016 թվականի գրությամբ հայտնել է, որ Կադաստրը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ վճիռը պարզաբանելու դիմումով, որը մերժվել է, և քննարկման արդյունքում եկել են եզրակացության, որ օրինական ուժի մեջ մտած վճռի պայմաններում այն ենթակա է կատարման, ու առաջարկվել է դիմել Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ՝ վճռում նշված գրառումը փոփոխելու (ուղղելու) համար:

Փաստորեն, տվյալ դեպքում Կադաստրը չի մերժել վնասի հատուցում տալը: Հիշտ հակառակը, հայտնել է իր պատրաստակամությունը վնասը հատուցելու հարցում՝ առաջարկելով դիմել Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ՝ վճռում նշված գրառումը փոփոխելու (ուղղելու) համար:

Վերոգրյալ փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա չէ պարտավորեցման հայց ներկայացնելու փաստական հիմք, այն է՝ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտ: Մինչդեռ դատական կարգով վնասի հատուցման պահանջ ներկայացնելու փաստական և իրավական հիմքերի բացակայության պայմաններում հայցվորը դիմել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել իր դիմումը մերժելու մասին Կադաստրի 25.03.2016 թվականի վարչական ակտը և Կադաստրին

պարտավորեցնել ընդունել վարչական ակտ՝ Կադաստրի ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով 9.200.000 ՀՀ դրամի չափով իրեն պատճառված վնասը հատուցելու մասին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերագրյալ հայցադիմումը ենթակա չի եղել վարույթ ընդունման, իսկ վարույթ ընդունելու պարագայում սույն գործի վարույթը ենթակա է եղել կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Տվյալ դեպքում ներկայացված հայցապահանջն իր բնույթով համապատասխանում է պարտավորեցման հայցատեսակին, քանի որ հայցվորի պահանջն ուղղված է Կադաստրի ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով 9.200.000 ՀՀ դրամի չափով իրեն պատճառված վնասը հատուցելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելուն, որի ընդունումը հայցվորի պնդմամբ մերժվել է Կադաստրի 25.03.2016 թվականի գրությամբ: Ընդ որում, 25.03.2016 թվականի գրությունը որակվել է որպես վարչական ակտ, որի վիճարկումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պետք է ներառվեր պարտավորեցման հայցում: Այնինչ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կադաստրի 25.03.2016 թվականի գրությունը վարչական ակտ չի հանդիսանում, քանի որ այն չի համապատասխանում վարչական ակտի բնորոշմանը, ուստի ոչ միայն չէր կարող պարտավորեցման հայց ներկայացնելու հիմք հանդիսանալ, այլ նաև ներառվեր պարտավորեցման հայցում՝ որպես միջամտող վարչական ակտի վիճարկում:

Այսպես. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կադաստրի 25.03.2016 թվականի գրության միջոցով Կադաստրը ոչ միայն չի մերժել հայցվորի իրավունքների իրականացումը, այլև անգամ չի սահմանափակել այդ իրավունքների իրականացումը: Ավելին՝ Կադաստրն առաջարկել է հայցվորին դիմել Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ՝ վճռում նշված գրառումը փոփոխելու (ուղղելու) համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու վերաբերյալ Կադաստրի կողմից վարչական ակտ ընդունված չլինելու հանգամանքն ինքնին բացառում է պարտավորեցման հայց ներկայացնելու իրավական հնարավորությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

- 1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, ներառյալ՝ այնպիսի դատավորի կողմից, որը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել.
- 2) դատարանը գործը քննել է դատավարության մասնակիցներից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ չի ծանուցվել նիստի ժամանակի և վայրի մասին.
- 3) դատական ակտը ստորագրված և կնքված չէ.

4) դատական ակտը ստորագրված և կնքված չէ այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից.

5) դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ.

6) գործից բացակայում է դատական նիստի կամ առանձին դատավարական գործողության կատարման արձանագրությունը.

7) գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ.

8) դատական ակտը շոշափում է դատավարության մասնակից չդարձված անձանց իրավունքները և պարտականությունները.

9) առկա են նույն օրենսգրքի 96-րդ հոդվածով սահմանված՝ գործի վարույթը կարճելու հիմքերը:

Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով կարճել գործի վարույթը:

Մինչույն ժամանակ անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածով նախատեսված՝ բողոքարկվող դատական ակտը վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջների սահմաններում վերանայելու կանոնին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ այն չի կարող մեկնաբանվել այնպես, որ ՀՀ վճռաբեկ դատարանը պետք է կաշկանդված լինի վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջների սահմաններով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված բոլոր դեպքերում: Նման մեկնաբանության պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանը ստիպված կլինի ըստ էության անդրադառնալ և գնահատական տալ բողոքարկված դատական ակտում նյութական իրավունքի նորմերի կիրառելիության հիմնավորվածությանը նույնիսկ այն դեպքում, երբ օրինակ բողոքարկված դատական ակտը ստորագրված և կնքված չի լինի կամ ստորագրված և կնքված չի լինի այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից կամ դատական ակտը կայացրած չի լինի այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ, կամ գործը քննված լինի ընդդատության կանոնների խախտմամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը համանման մոտեցում է ցուցաբերել 09.04.2018 թվականից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասում, որպիսի իրավակարգավորմամբ օրենսդրի արտահայտած տրամաբանության համատեքստում պետք է մեկնաբանվի նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասը:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման» եզրույթը պետք է մեկնաբանվի այնպես, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը (...):

Վերոգրյալ իրավանդումի բովանդակությունից հետևում է, որ դատական ակտը բեկանելու և գործի վարույթը կարճելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորության կիրառումն օրենսդիրը բնավ չի պայմանավորել վճռաբեկ բողոքը բավարարելու հանգամանքով, ինչը ևս խոսում է այն մեկնաբանման օգտին, որ գործի վարույթը կարճման ենթակա լինելու հիմքի առկայությունը հաստատվելու պարագայում՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով անվիճելիորեն առկա է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին

մասի 9-րդ կետով նախատեսված՝ գործի վարույթը կարճելու հիմք, այն է՝ բացահայտվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք, մասնավորապես՝ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու վերաբերյալ Կադաստրի կողմից վարչական ակտ ընդունված չլինելու պայմաններում խոսք չի կարող լինել վարչական մարմնի հետ վեճի առկայության մասին, ուստի պարտավորեցման հայց ներկայացնելու փաստական և իրավական հիմքերը բացակայել են, հետևաբար գոյություն չունեցող «վեճը» ենթակա չէ դատարանի քննությանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից կիրառման է ենթակա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և սույն գործի վարույթը կարճելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը, քանի որ բացահայտվել է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք, այն է՝ միջամտող վարչական ակտի բացակայության պարագայում գոյություն չունի դատարանի քննությանը ենթակա վեճ:

Վերը նշված պատճառարանությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկներին, քանի որ դրանք այլևս որևէ նշանակություն չունեն բողոքի քննության համար»:

Վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյան, համաձայն չլինելով վերը նշված որոշման պարճառարանական և եզրափակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արտահայտված կարծիքի հետ, շարադրում եմ իմ հարուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Այսպես

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ նույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության հիմնավորումը:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ նշելով, որ «առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական ակտի անվերապահ բեկանման հիմք հանդիսացող դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում են դատական ակտը բեկանելիս այն շարժառիթները, որոնցով վճռաբեկ դատարանը չի համաձայնել այդ ակտը կայացրած դատարանի հիմնավորումներին կամ եզրահանգումներին:

Նույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում են վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով վճռաբեկ դատարանի եզրահանգումները:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը, որպես Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու շարժառիթներ նշելով, որ

1) «տվյալ դեպքում առկա չէ պարտավորեցման հայց ներկայացնելու փաստական հիմք, այն է՝ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտ (...),»

2) «վերոգրյալ հայցադիմումը ենթակա չի եղել վարույթ ընդունման, իսկ վարույթ ընդունելու պարագայում սույն գործի վարույթը ենթակա է եղել կարճման (...),»

եզրահանգել է, որ «տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով կարճել գործի վարույթը»:

Նշված լիազորությունը կիրառելու կապակցությամբ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ՝

1) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ ՀՀ վճռաբեկ դատարանը պետք է կաշկանդված լինի վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջների սահմաններով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված բոլոր դեպքերում,

2) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման» եզրույթը պետք է մեկնաբանվի այնպես, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից,

3) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ դատական ակտը բեկանելու և գործի վարույթը կարճելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորության կիրառումն օրենսդիրը բնավ չի պայմանավորել վճռաբեկ բողոքը բավարարելու հանգամանքով, ինչը ևս խոսում է այն մեկնաբանման օգտին, որ գործի վարույթը կարճման ենթակա լինելու հիմքի առկայությունը հաստատվելու պարագայում՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ «տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից կիրառման է ենթակա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և սույն գործի վարույթը կարճելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը, քանի որ բացահայտվել է սույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք, այն է՝ միջամտող վարչական ակտի բացակայության պարագայում գոյություն չունի դատարանի քննությանը ենթակա վեճ»:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը բեկանել է Վերաքննիչ դատարանի 15.07.2020 թվականի որոշումը և սույն գործի վարույթը կարճել:

Համաձայն չլինելով վերը նշված դիրքորոշումների հետ՝ հայտնում են դրանց վերաբերյալ իմ կարծիքը:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով վերանայում է վերաքննիչ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը:

Սույն օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքարկվող դատական ակտը վերանայում է վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջների սահմաններում:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ Վճռաբեկ դատարանը ևս իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով: Տվյալ դեպքում օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով Վճռաբեկ դատարանի համար ուղղակիորեն սահմանել է վերաքննիչ դատարանի դատական ակտերը վերանայելու որոշակի կարգ, որի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի դատական ակտն իրավասու է բոլոր դեպքերում վերանայել բացառապես վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջների սահմաններում. օրենսդիրն այդ առումով որևէ բացառություն չի նախատեսել՝ անկախ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտման բնույթից և լիազորությունների շրջանակից: Նման իրավակարգավորումից բխում է, որ Վճռաբեկ դատարանը լիազորված չէ այդ սահմաններից դուրս վերանայելու բողոքարկվող դատական ակտը, և այդ առումով ունի օրենքով սահմանված որոշակի կաշկանդվածություն:

Ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածով օրենսդիրը ցուցաբերել է այլ մոտեցում՝ Վճռաբեկ դատարանի համար նախատեսելով, որ Վճռաբեկ դատարանը կաշկանդված չէ բողոք բերած անձի պահանջով: Ավելին՝ օրենսդիրը Վճռաբեկ դատարանին անգամ լիազորել է քաղաքացիական դատավարության կարգով վճռաբեկ բողոքներ քննելիս և վերաքննիչ դատարանի դատական ակտերը վերանայելիս դուրս գալ վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, եթե առկա են նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերը: Նման իրավակարգավորումներ, ինչպես արդեն իսկ նշեցի վերը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը չի նախատեսում:

Տվյալ դեպքում վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.07.2020 թվականի որոշումը և ոչ թե կարճել գործի վարույթը, այլ՝ բեկանելու արդյունքում օրինական ուժ տալ Դատարանի 13.12.2018 թվականի վճռին, որով հայցը մերժվել է, կամ բեկանելուց հետո գործն ուղարկել նոր քննության, իսկ վճռաբեկ բողոքում որպես դրա հիմքեր և հիմնավորումներ չի վկայակոչել Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի ու նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի խախտում թույլ տրված լինելը:

Դրանից ելնելով՝ գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանը, Վերաքննիչ դատարանի դատական ակտը վերանայելով վճռաբեկ բողոքում չնշված պահանջի, հիմքերի և հիմնավորումների սահմաններում, դուրս է եկել իր լիազորությունների սահմաններից՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասը և 168-րդ հոդվածի 1-ին մասը:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. Հակոբյան

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/1626/05/16 վարչական գործով
26.11.2021 թվականին կայացված որոշման պատճառաբանական
և եզրափակիչ մասերի վերաբերյալ

26.11.2021 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.07.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ Սամվել Հովհաննիսյանի հայցի ընդդեմ Կոմիտեի և երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վարչական ակտն անվավեր ճանաչելու և վնասը հատուցելու պահանջների մասին, որոշել է. «Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.07.2020 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 13.12.2018 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորներ Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս, Էդ. Մեդրակյանս համաձայն չլինելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 26.11.2021 թվականին թիվ ՎԴ/1626/05/16 վարչական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում կատարված եզրահանգումների հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դարավարական նախապայմանությունը

«Դիմելով դատարան՝ Սամվել Հովհաննիսյանը պահանջել է անվավեր ճանաչել իր դիմումը մերժելու մասին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) 25.03.2016 թվականի վարչական ակտը և Կադաստրին պարտավորեցնել ընդունել վարչական ակտ՝ Կադաստրի ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով 9.200.000 ՀՀ դրամի չափով իրեն պատճառված վնասը հատուցելու մասին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 13.12.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.07.2020 թվականի որոշմամբ Սամվել Հովհաննիսյանի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 13.12.2018 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ որոշվել է հայցը բավարարել մասնակիորեն՝ անվավեր ճանաչել Սամվել Հովհաննիսյանի դիմումը մերժելու մասին Կադաստրի 25.03.2016 թվականի վարչական ակտը, Կադաստրին պարտավորեցնել Սամվել Հովհաննիսյանին հատուցելու ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասը՝ 4.500.000 ՀՀ դրամի չափով, մնացած՝ 4.700.000 ՀՀ դրամի չափով, վնասը հատուցելուն պարտավորեցնելու պահանջի մասով, հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Ն. Ավագյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սամվել Հովհաննիսյանը (ներկայացուցիչ՝ Հ. Հովհաննիսյան):»:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

«Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-99-րդ հոդվածները, ՀՀ վարչական դարավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կոմիտեն վնասը պարտավոր է հատուցել դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր չէ: Մինչդեռ տվյալ դեպքում առկա չէ անշարժ գույքի կորուստ, քանի որ առկա է Սամվել Հովհաննիսյանի անվամբ 25.02.2004 թվականին գրանցված և տրամադրված թիվ 1802239 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական ու տվյալ վկայականի հիման վրա տրամադրված դատաշինարարական փորձաքննության եզրակացություն, որը Վերաքննիչ դատարանն ընդունել է որպես ապացույց:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Կոմիտեի կողմից ոչ իրավաչափ վարչարարության հետևանքը վերացվել է կադաստրային գործում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով: Տվյալ դեպքում սույն գործով իրավունքի զարգացման խնդրի առկայությունը պայմանավորված է նրանով, որ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքը վերացված լինելու պայմաններում հայցի բավարարումը կառաջացնի կրկնակի փոխհատուցման հարց:

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել սույն գործի համար էական նշանակություն ունեցող ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ինչի արդյունքում թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը՝ հանգեցնելով կրկնակի փոխհատուցման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.07.2020 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 13.12.2018 թվականի վճռին կամ գործն ուղարկել նոր քննության»:

2.1 Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Սամվել Հովհաննիսյանի ներկայացուցչի պարասխանի հիմնավորումները

«Վճռաբեկ բողոքում ներկայացված որոշումը հակասության մեջ է մտնում ինչպես ՀՀ օրենսդրության, այնպես էլ օրենքի միատեսակ մեկնաբանության հետ, որի պայմաններում վճռաբեկ բողոքն անհիմն է»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

«1) Կադաստրի կողմից ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի գյուղում գտնվող թիվ 07-054-014-018 կադաստրային համարով հողամասի նկատմամբ Սամվել Հովհաննիսյանին 25.02.2004 թվականին տրվել է թիվ 1802239 սեփականության վկայականը **(հատոր 1-ին, գ.թ. 118-120)**.

2) ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած վճռով Սամվել Հովհաննիսյանի հայցը բավարարվել է, ոչ իրավաչափ են ճանաչվել Կադաստրի գործողությունները՝ ուղղված կադաստրային գործում առկա անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 25.02.2004 թվականի թիվ 1802239 վկայականի օրինակի «Հողամասի տվյալները» բաժնում կադաստրային համարի գրառման դիմաց նշված «07-054-014-018» թվային գրառման վերջին «8» թվանշանը մեխանիկական շնջման և հավելագրման եղանակով կատարելուն **(հատոր 1-ին, գ. թ. 8-20)**.

3) Կադաստրի նախագահի տեղակալը 03.11.2015 թվականի թիվ ԱՄ/7.5/6845-15 գրությամբ, ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի 30.10.2015 թվականի դիմումի, հայտնել է նաև, որ ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վճռի պահանջը կատարելու համար անհրաժեշտ է, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջների համաձայն, դիմել Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից) և ներկայացնել օրինական ուժի մեջ մտած վճիռ (երկրորդ կնիքի առկայությամբ) **(հատոր 1-ին, գ. թ. 96)**.

4) Կադաստրը, ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի կողմից ներկայացված թիվ 06/11/2015-2-0126 դիմումի, 09.11.2015 թվականին կազմել է թիվ ԱՏ-06/11/2015-2-0126

տեղեկանքն այն մասին, որ հողամասի կադաստրային ծածկագրում ուղղում չի կարող կատարվել, քանի որ 07-054-0014-0019 ծածկագրով առկա է գրանցված իրավունք (**հատոր 1-ին, գ. թ. 21**).

5) Կադաստրի նախագահի տեղակալը 20.01.2016 և 21.01.2016 թվականների նույնաբովանդակ գրություններով Սամվել Հովհաննիսյանին հայտնել է, որ Կոմիտեի 16.12.2015 թվականի «ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի (գործ թիվ ՎԴ/4795/05/12) վճիռը պարզաբանելու մասին» թիվ ԱՄ/7.1/7666-15 դիմումին ի պատասխան ստացվել է ՀՀ վարչական դատարանի 24.12.2015 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշումը: Ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջներով անհրաժեշտ է դիմել Կադաստրի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ (**հատոր 1-ին, գ. թ. 23, 97**).

6) Կադաստրի նախագահի տեղակալը 25.03.2016 թվականի գրությամբ ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի ներկայացուցիչ Գարիկ Գալիկյանի 02.02.2015 թվականի դիմումի հայտնել է, որ ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/4795/05/12 վարչական գործով 18.09.2015 թվականին վճռել է ոչ իրավաչափ ճանաչել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 1802239 վկայականի «Հողամասի տվյալները» բաժնում կադաստրային համարի վերջին «8» թվանշանի գրառումը՝ թողնելով նախկինում գրառված «9» թվանշանը: Նշված վճռի կատարումն ապահովվելու համար կադաստրի պետական կոմիտեի կողմից 16.12.2015 թվականին դիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ վճիռը պարզաբանելու համար, սակայն ՀՀ վարչական դատարանի 24.12.2015 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշումը այն մերժվել է: Քննարկման արդյունքում եկել են եզրակացության, որ օրինական ուժի մեջ մտած վճռի պայմաններում այն ենթակա է կատարման, ուստի կադաստրային գործում առկա անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման, 25.02.2004 թվականի թիվ 1802239 վկայականի «Հողամասի տվյալները» բաժնում նշված «07-054-014-018» գրառման վերջին «8» թվանշանը «9»-ով փոփոխելու (ուղղելու) վերաբերյալ կրկին կարող է դիմել անշարժ գույքի պետական ռեգիստրի որևէ սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից) (**հատոր 1-ին, գ. թ. 99, 100**).

7) Կադաստրի աշխատակազմի Մարգերի միավորված ստորաբաժանման ղեկավարը 11.01.2017 թվականի թիվ ՀՄ-0024 գրությամբ ՀՀ վարչական դատարանի դատավոր Ս. Հովակիմյանին, ինչպես նաև Սամվել Հովհաննիսյանին հայտնել է, որ ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վճռի և նույն դատարանի 24.12.2015 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշման հիման վրա 17.01.2017 թվականին Կադաստրի աշխատակազմի Մարգերի միավորված ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր Արմինե Վարդանյանի կողմից իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1802239 վկայականում և կադաստրային քարտեզում կատարվել է հողամասի կադաստրային ծածկագրի սխալի ուղղում՝ 07-054-0014-0018 ծածկագիրը փոխարինվել է 07-054-0014-0019 ծածկագրով: Սամվել Հովհաննիսյանին առաջարկվել է ներկայացնել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը՝ համապատասխան ուղղում կատարելու համար (**հատոր 2-րդ, գ. թ. 82**).

8) Կադաստրը, ի պատասխան Սամվել Հովհաննիսյանի կողմից ներկայացված թիվ 16/01/2017-1-0166 դիմումի, 17.01.2017 թվականին կազմել է թիվ ԱՏ-16/01/2017-1-0166 տեղեկանքն այն մասին, որ ՀՀ վարչական դատարանի 18.09.2015 թվականի թիվ ՎԴ/4795/05/12 վճռի և նույն դատարանի 24.12.2015 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը մերժելու մասին» որոշման հիման վրա համայնքի հերթապահ կադաստրային էլեկտրոնային քարտեզում, իրավունքի պետական գրանցման միասնական մատյանում, ինչպես նաև թիվ 1802239 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի «Հողամասի տվյալները» բաժնում կատարվել է կադաստրային համարի (ծածկագրի) ուղղում, ճիշտ ծածկագրին է 07-054-0014-0019: Վկայականի «Լրացուցիչ նշումներ» բաժնում կատարվել է գրառում՝ թիվ 1 ուղղումը կատարվել է Մարգերի միավորված ստորաբաժանման ռեգիստր Ա. Վարդանյանի կողմից 17.01.2017 թվականին ժամը 11:50-ին (**հատոր 2-րդ, գ. թ. 114**):»

4. Հարուկ կարծիքի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանի պատճառաբանական և եզրափակիչ մասերի միջև առկա է անհամապատասխանություն հետևյալ նկատառումով.

Այն դեպքում, երբ ըստ Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշման՝ ոչ իրավաչափ ճանաչված վարչարարությամբ պատճառված վնասի առաջացրած հետևանքների վերաբերյալ, այն է՝ կադաստրային համարի (ծածկագրի) ուղղում կատարելու պայմաններում այլևս չի կարող դրամական միջոցներով հատուցում տրվել, ապա պետք է ընդունել, որ ենթակա են կիրառման վարչական դատավարության ընթացքում վեճը սպառված լինելու կապակցությամբ կիրառելի կանոնը, որի հետ կապված իրավական դիրքորոշում է ներկայացրել Վճռաբեկ դատարանի դատավոր Ռ. Հակոբյանը:

Մինչդեռ հարցը կայանում է նրանում, որ հայցվորի կողմից ներկայացված վնասի հատուցման պահանջն իր մեջ ներառելով նյութական վնասին բնորոշ տարրեր, պետք է քննության առնվեր նաև գույքի կորստի փաստը որոշելու առումով, քանի որ դատական ակտում խոսք չկա գույքային վնաս բռնագանձելու հայցապահանջը Դատարանին ենթակա չլինելու հարցի մասին:

Նման պայմաններում վճռաբեկ բողոքի քննության ընթացքում պետք է իրավական գնահատական տրվի գույքային վնասի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին, քանի որ սույն գործով ներկայացված պարտավորեցման հայցի բուն նպատակը ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է, ինչը ենթադրում է, որ գործով ձեռք բերված ապացույցների շրջանակում առաջին հերթին ենթակա է գնահատման ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի առկայությունը, որի հաստատման պարագայում արդեն առանձին գնահատման է ենթակա ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի իրական չափը, մասնավորապես, հաշվի առնելով օրենսդրությամբ սահմանված այն իրավակարգավորումը, ըստ որի՝ վնասի հատուցումը բոլոր դեպքերում կապված է վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու հետ, ինչը միանշանակորեն ենթադրում է, որ պետք է առկա լինի ուղիղ և անմիջական կապ վարչարարության ընթացում վարչական մարմնի կողմից իրականացված ոչ իրավաչափ գործողության և առաջացած հետևանքների միջև:

Վերաքննիչ դատարանը հայցը մասնակի բավարարելու հիմքում դրել է գույքային վնասի չափի վերաբերյալ գործում առկա ապացույցները և որոշակի վերլուծություն է կատարել ոչ իրավաչափ վարչարարության և հնարավոր վնասի պատճառահետևանքային կապի վերաբերյալ:

Վճռաբեկ բողոքի վնասի հատուցման կրկնակի լինելու փաստարկը Վճռաբեկ դատարանի որոշմամբ գնահատվել է այն տեսանկյունից, որ վարչական ակտում արդեն իսկ կատարվել է համապատասխան ուղղում:

Հատուցման կրկնակիությունը նշանակում է նույն օբյեկտի դիմաց ստանալ մեկից ավելի անգամ հատուցում, մինչդեռ այդ փաստարկը հիմնավոր համարելու համար պետք է հաստատված լիներ արդեն իսկ նյութական վնասի դիմաց դրամական հատուցում ստացված լինելու փաստը, իսկ գույքային վնասի բացակայության դեպքում խոսքը կարող է վերաբերվել հայցապահանջի անհիմն լինելուն և ոչ թե կրկնակի հատուցում ստանալուն:

Գույքային վնասի պահանջ ներկայացված լինելու պայմաններում վարչական ակտում կատարված փոփոխությունները չէին կարող խոչընդոտել հայցապահանջի ըստ էության քննությանը և բողոքը բավարարվելու դեպքում գործը պետք է ուղարկվեր նոր քննության կամ հայցը մերժվեր գույքային վնասի բացակայության հիմքով:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Է. Սեդրակյան

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/1945/05/18
2021թ.

Վարչական գործ թիվ

ՎԳ/1945/05/18

Նախագահող դատավոր՝

Կ. Բաղդասարյան

Դատավորներ՝

Ա. Թովմասյան

Կ. Ավետիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Է. ՄԵԴՐԱԿՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա.ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 26-ին

գրավոր ընթացակարգով քննելով Հայաստանի Հանրապետության պետական եկա-
մուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի 03.06.2020 թվականի որոշման դեմ, ըստ հայցի «Արմոյլ» փակ բաժնետիրա-
կան ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ 18.12.2017 թվականի թիվ
1013235 վարչական ակտը մասնակի վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է մասնակի վերացնել Կոմիտեի
18.12.2017 թվականի թիվ 1013235 վարչական ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան)
16.05.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.06.2020
թվականի որոշմամբ Դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի, 25-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածները, չի կիրառել նույն օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ օրենսդիրը սահմանել է իմպերատիվ պարտավորություն գրավառուի համար՝ գրավի առարկան իրացնելու հետ կապված հարկերի գումարների վճարում՝ որպես գրավատուի հարկային գործակալ՝ իրացումից ստացված գումարներում ներառելով նաև նշված վճարումը: Որպես օրենքով նախատեսված լիազորության իրականացում է համարվում նաև գրավով ապահովված իրավունքի առարկան իրացնելը՝ այդ թվում նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գրավի առարկայի պարագայում (հաշվի առնելով, որ օրենսդիրը սահմանել է որոշակի իրավունքներ երրորդ անձանց համար՝ խուսափելու սեփական գույքի իրացումից): Մինչև արտադատական կարգով ֆիզիկական անձի գույքի վրա բռնագանձում տարածելը նշված գույքը հանդիսանում է գրավատու ֆիզիկական անձի սեփականությունը, և, ըստ էության, նոր սեփականատերը գույքը ձեռք է բերում վերջինիցս, ուստի բանկ կամ վարկային կազմակերպություն չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտը հանդիսանում է հարկային գործակալ և ֆիզիկական անձին պատկանող գույքի արժեքից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան պարտավոր է հաշվարկել և բյուջե վճարել 10% դրույքաչափով եկամտային հարկ:

Վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել գրավատու ֆիզիկական անձանց կողմից գրավադրված թվով 8 հողամասերի սեփականության իրավունքի օտարման և «Արմոյ» ՓԲԸ-ի կողմից այդ նույն թվով 8 հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման հանգամանքները:

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածներով նախատեսված՝ գործում եղած բոլոր ապացույցների և դրանք համակցության մեջ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ինչպես նաև չի ապահովել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված՝ փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզելու պահանջը:

Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է առանց վարչական վարույթի նյութերի բազմակողմանի ուսումնասիրության, լրիվ և օբյեկտիվ հետազոտման:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.06.2020 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և «Մաս Դավ» ՍՊԸ-ի միջև 23.02.2016 թվականին կնքվել է ապրանքների մատակարարման թիվ ԴՄՊ 0032 հիմնական պայմանագիր:

Ի ապահովումն հիմնական պայմանագրի պարտավորությունների՝ Ընկերության, Գրիշա Գալստյանի, Ստյոպա Պողոսյանի, Էդուարդ Մելքոնյանի և «Մաս Դավ» ՍՊԸ-ի միջև կնքվել են անշարժ գույքի գրավի (հիպոթեքի) լրացուցիչ պայմանագրեր (**հատոր 1-ին, գ.թ 98-137**):

«Մաս Դ-ավ» ՍՊԸ-ի կողմից խախտվել են մատակարարման պայմանագրի պահանջները, ինչի հետևանքով ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ Ընկերության կողմից տարածվել է բռնագանձում: Արդյունքում ապահովված պարտավորությունների չափի նկատմամբ, տվյալ դեպքում 93.693.475 դրամի չափով, սեփականության իրավունքը ֆիզիկական անձանցից անցել է Ընկերությանը:

2) Կոմիտեի ստուգումների արդյունքում 18.12.2017 թվականին կազմված թիվ 1013235 ակտի համաձայն Ընկերությանը եկամտային հարկի գծով առաջադրվել է 20.074.767 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն, ստուգման ակտի 21-րդ կետում նշվել է. «Ընկերությունը համաձայն 23.02.2016 թվականին կնքված ապրանքների մատակարարման թիվ ԴՄՊ 0032 պայմանագրի «Մաս Դ-ավ» ՍՊԸ-ին 2016 թվականի ընթացքում իրացրել է ապրանքներ ընդհանուր գումարով 93.693.475 դրամի չափով, որի համար որպես վճարման երաշխիք գրավ է վերցրել ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներ կնքելով անշարժ գույքի գրավի պայմանագրեր: 2016 թվականի հուլիս ամսին համաձայն ՀՀ Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների թվով 8 հողատարածքներ 93.693.475 դրամ գումարով սեփականության իրավունքով անցել է «Արմոյլ» ՓԲԸ-ին: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հարկային գործակալը ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու դիմաց վճարված եկամտներից եկամտային հարկը հաշվարկում է 10% դրույքաչափով՝ հաշվի առնելով նաև նշված օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածների դրույքները: Հիմք ընդունելով վերոգրյալը, մինչև արտադատական կարգով ֆիզիկական անձի գույքի վրա բռնագանձում կատարելը նշված գույքը հանդիսանում է գրավատու ֆիզիկական անձի սեփականությունը և ըստ էության, նոր սեփականատերը գույքը ձեռք է բերում վերջինիցս, ուստի բանկ կամ վարկային կազմակերպություն չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտը հանդիսանում է հարկային գործակալ և ֆիզիկական անձին պատկանող գույքի արժեքից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ պարտավոր է հաշվարկել և բյուջե վճարել 10% դրույքաչափով եկամտային հարկ գումարով 9.369.347 դրամ» (**հատոր 1-ին, գ.թ 7-12**):

3) Ի պատասխան Ընկերության 10.11.2016 թվականի պաշտոնական պարզաբանում ստանալու դիմումի՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամտունների կոմիտեի նախագահի տեղակալը հայտնել է հետևյալը. «Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.07.2010 թվականի թիվ 1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույքների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 4-րդ կետով՝ իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հարկային գործակալը ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու դիմաց վճարված եկամտուններից եկամտային հարկը հաշվարկում է 10 % դրույքաչափով՝ հաշվի առնելով նաև նշված օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածների դրույքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը, մինչև արտադատական կարգով ֆիզիկական անձի գույքի վրա բռնագանձում կատարելը նշված գույքը հանդիսանում է գրավատու ֆիզիկական անձի սեփականությունը, և ըստ էության, նոր սեփականատերը գույքը ձեռք է բերում վերջինիցս, ուստի բանկ կամ վարկային կազմակերպություն չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտը հանդիսանում է հարկային գործակալ և ֆիզիկական անձին պատկանող գույքի արժեքից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի համապատասխան՝ պարտավոր է բյուջե վճարել 10% դրույքաչափով եկամտային հարկ» (**հատոր 1-ին, գ.թ 32**):

4. Վճռարեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում

քարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կիրառման իմաստով առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եկամտային հարկի հաշվարկման և վճարման իրավական հարցին այլ անձի պարտավորությունների կատարման նպատակով ֆիզիկական անձի կողմից գրավադրված գույքի իրացման դեպքում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) հարկվող եկամուտը:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եկամուտ է համարվում աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կամ ցանկացած այլ հիմքով հարկ վճարողի ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) գույքը, ինչպես նաև բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հարկային գործակալը ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու դիմաց վճարված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է 10 տոկոս դրույքաչափով՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածների դրույթները:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերի, հարկ վճարողներին եկամուտներ հաշվարկելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը:

Համաձայն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի դրույթների՝ հարկային գործակալը հարկ վճարողին եկամուտ(ներ) վճարողն է, ով ֆիզիկական անձից գույք ձեռք բերելիս պարտավոր է վճարված եկամուտներից հարկ հաշվարկել և գանձել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավը լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

Վերը նշված հոդվածների բովանդակությունից հետևում է, որ գրավի իրավունքը գույքային իրավունք է, որն ուղղված է դրամական կամ այլ պարտավորության կատարմանը, ընդ որում՝ գրավատուի պարտապան լինելը կամ գրավով ապահովված պարտավորությանը չմասնակցելն արգելք չէ գրավի իրավունքի ծագման կամ դադարման համար: Այսինքն՝ գրավի իրավունքը պայմանավորված է իրական պարտավորության և գույքի սեփականատիրոջ՝ այդ պարտավորության կատարումը սեփական գույքով ապահովելու կամքի և կամահայտնության առկայությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 248-րդ հոդվածի համաձայն՝ գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերը նշված հոդվածի իրավական վերլուծությանը և նշել, որ գրավի իրավունքը կամ գրավը պարտավորությունների՝ իրային-իրավական ապահովման միջոց է, որը գրավառուին իրավունք է վերապահում հիմնական պարտավորության չկատարման դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով բավարարում ստանալու գրավի առարկայի արժեքից: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավի իրավունքն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրային իրավունքների շարքում: Ի տարբերություն այլ իրային իրավունքների՝ գրավն առաջանում և իրավական արժևորում է ստանում այնքանով, որքանով այն անհրաժեշտ է օգտագործել հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով գրավը, որպես այդպիսին, ունի երկակի բնույթ. այն բնութագրվում է որպես պարտավորաիրավական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց (*տե՛ս «Մեյկր» ՄՊԸ-ն ընդդեմ Նշան Ալեքսանյանի թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գույքի գրավատու կարող է լինել միայն դրա սեփականատերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե՛ դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ՝ առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 281-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ, որի վրա բռնագանձում է տարածվել, սեփականատիրոջ իրավունքը դադարում է այդ գույքի նկատմամբ այն անձի սեփականության իրավունքի ծագման պահից, ում անցնում է տվյալ գույքը:

Նշված բոլոր իրավական կարգավորումներից հետևում է, որ անկախ այն հանգամանքից՝ ով է ֆիզիկապես կազմակերպում կամ իրականացնում գույքի օտարումը (անմիջականորեն սեփականատերը, նրա լիազորված անձը, գրավառուն և այլն), այնուամենայնիվ դրա արդյունքում տեղի է ունենում սեփականության իրավունքի ձեռքբերում գնորդի և համապատասխանաբար սեփականության իրավունքի դադարում գույքի

սեփականատիրոջ մոտ: Ավելին, սեփականատերը գույքի գրավադրման պարագայում սեփական կամքով և հայեցողությամբ արդեն իսկ նախատեսում և թույլատրում է գույքի իրացումը՝ դրանով ապահովված պարտավորության չկատարման դեպքում, որպիսի պարագայում ևս բացակայում են հիմնավորումներ առ այն, որ գույքը տնօրինվում է այլ անձի կողմից: Այս դեպքում ուշադրության է արժանի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ կետի ձևակերպումը, որ գրավը սահմանում է որպես գույքի տնօրինման եղանակ, ինչը տրամաբանական է՝ հաշվի առնելով դրա իրացման դեպքում գույքի օտարման անխուսափելիությունը:

Փաստորեն, անկախ այն հանգամանքից՝ ով է ֆիզիկապես կազմակերպում կամ իրականացնում գույքի օտարումը (անմիջականորեն սեփականատերը, նրա լիազորված անձը, գրավատուն և այլն), այնուամենայնիվ դրա արդյունքում տեղի է ունենում սեփականության իրավունքի ձեռքբերում գնորդի և համապատասխանաբար սեփականության իրավունքի դադարում գույքի սեփականատիրոջ մոտ: Ավելին, սեփականատերը գույքի գրավադրման պարագայում սեփական կամքով և հայեցողությամբ արդեն իսկ նախատեսում և թույլատրում է գույքի իրացումը՝ դրանով ապահովված պարտավորության չկատարման դեպքում, որպիսի պարագայում ևս բացակայում են հիմնավորումներ առ այն, որ գույքը տնօրինվում է այլ անձի կողմից:

Այսպիսով, գրավի ինստիտուտը կայանում է նրանում, որ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պարտավորությունը կատարվում է գրավատուի սեփականությունը հանդիսացող գույքի հաշվին: Այսինքն՝ գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցները ուղղվում են գրավով ապահովված պարտավորությանը:

Իսողիբը կայանում է նրանում, որ գրավադրված գույքի իրացումից ստացված դրամական միջոցների նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը դադարում է գրավով ապահովված պարտավորության կատարմանը ուղղվելուց հետո միայն, մինչ այդ դիմվելով որպես գույքի իրացումից ստացված դրամական միջոցներ և եկամուտ «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան:

Վկայակոչված իրավանորմերի համակարգային հաշվառման և վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալ ելակետային դրույթները:

Հարկային գործակալը ֆիզիկական անձին վճարված եկամուտներից պարտավոր է եկամտային հարկ հաշվարկել և վճարել:

Պետության և հարկային գործակալների միջև իրավահարաբերությունները չեն առաջանում ինքնուրույն կամ պետության և հարկային գործակալի փոխադարձ համաձայնությամբ: Դրանց ի հայտ գալը հիմնված է բացառապես պետության շահագրգռվածության մեջ հարկատուների կողմից իրենց հարկային պարտավորությունների պատշաճ կատարելու նպատակով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող իրավական ակտերով սահմանված նորմերի վերլուծության արդյունքում պետք է արձանագրել, որ հարկային գործակալը կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար է, ով ֆիզիկական անձ հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս պարտավոր է օրենքով սահմանված կարգով ֆիզիկական անձանց եկամուտներից հաշվարկել, պահել, գանձել և վճարել եկամտային հարկ (իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված):

Եկամուտ հասկացությունը Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով բնորոշվում է որպես աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կամ ցանկացած այլ հիմքով հարկ վճարողի ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) գույքը, ինչպես նաև բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտները:

Հարկային գործակալը պարտավոր է նաև ֆիզիկական անձից գույք ձեռք բերելիս վճարված եկամուտներից հարկ հաշվարկել և գանձել:

Փաստորեն, որպես հարկային գործակալ ֆիզիկական անձից գույք ձեռք բերելիս վճարված եկամուտներից հարկ հաշվարկելու, պահելու, գանձելու և վճարելու պարտավորության ծագման նախապայման է նաև հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու հանգամանքը:

Վճուարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և «Սաս Դավ» ՄՊԸ-ի միջև 23.02.2016 թվականին կնքվել է ապրանքների մատակարարման թիվ ԴՄՊ 0032 հիմնական պայմանագիրը:

Ի ապահովումն հիմնական պայմանագրի պարտավորությունների՝ Ընկերության, Գրիշա Գալստյանի, Սյուրպա Պողոսյանի, Էդուարդ Մելքոնյանի և «Սաս Դավ» ՄՊԸ-ի միջև կնքվել են անշարժ գույքի գրավի (հիպոթեքի) լրացուցիչ պայմանագրեր: «Սաս Դավ» ՄՊԸ-ի կողմից խախտվել են մատակարարման պայմանագրի պահանջները, ինչի հետևանքով ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ տարածվել է բռնագանձում: Արդյունքում ապահովված պարտավորությունների չափի նկատմամբ, տվյալ դեպքում 93.693.475 դրամի չափով, սեփականության իրավունքը ֆիզիկական անձանցից անցել է Ընկերությանը:

Ստուգումների արդյունքում 18.12.2017 թվականին կազմված թիվ 1013235 ակտի համաձայն՝ Ընկերությանը եկամտային հարկի գծով առաջադրվել է 20.074.767 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն, ստուգման ակտի 21-րդ կետում նշվել է, որ 2016 թվականի հուլիս ամսին, համաձայն ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների, թվով 8 հողատարածքներ 93.693.475 դրամ գումարով սեփականության իրավունքով անցել է Ընկերությանը, ուստի տնտեսվարող սուբյեկտը հանդիսանում է հարկային գործակալ և ֆիզիկական անձին պատկանող գույքի արժեքից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ պարտավոր է հաշվարկել և բյուջե վճարել 10% դրույքաչափով եկամտային հարկ՝ գումարով 9.369.347 դրամ: Ի պատասխան Ընկերության 10.11.2016 թվականի պաշտոնական պարզաբանում ստանալու դիմումի՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալը հայտնել է, որ մինչև արտադատական կարգով ֆիզիկական անձի գույքի վրա բռնագանձում կատարելը նշված գույքը հանդիսանում է գրավատու ֆիզիկական անձի սեփականությունը, և ըստ էության, նոր սեփականատերը գույքը ձեռք է բերում վերջինիցս, ուստի հանդիսանում է հարկային գործակալ և պարտավոր է բյուջե վճարել 10% դրույքաչափով եկամտային հարկ

Դատարանը, հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ. «(...) հայցը հիմնավոր է և ենթակա բավարարման, քանզի «Արմոյլ» փակ բաժնետիրական ընկերությունը, ֆիզիկական անձի (անձանց) հետ «Սաս Դավ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորության կատարման ապահովման նպատակով կնքելով գրավի պայմանագիր, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով չի համարվում հարկային գործակալ, և ֆիզիկական անձանց համար, «Սաս Դավ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորության կատարման ապահովման նպատակով «Արմոյլ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքելով գրավի պայմանագիր, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի առաջացել հարկվող օբյեկտ»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի դիրքորոշումները:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների վերլուծությունների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 23.02.2016 թվականին կնքված անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրերի համաձայն՝ ի ապահովումն Ընկերության հանդեպ «Սաս Դավ» ՄՊ ընկերության ունեցած պարտավորության, Գրիշա Գալստյանի, Ստյոպա Պողոսյանի, Էդուարդ Մելքոնյանի կողմից գրավադրվել են իրենց սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերը: Գրավադրված գույքերի նկատմամբ Ընկերության կողմից տարածված բռնագանձման արդյունքում Գրիշա Գալստյանի, Ստյոպա Պողոսյանի, Էդուարդ Մելքոնյանի սեփականության իրավունքը նշված գույքերի նկատմամբ անցել է Ընկերությանը:

Այսպիսով, ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանը ևս հարկային գործակալ հանդիսանալու հիմքով հարկը հաշվարկելու և վճարելու պարտավորությունը կրելու հիմնավորումներն իրականացրել է Ընկերության և գրավատու ֆիզիկական անձանց լրացուցիչ պայմանագրի կողմեր հանդիսանալու և այդ պայմանագրերի կնքման նպատակների շրջանակներում և հանգել սխալ եզրահանգման, որ Ընկերությունը ֆիզիկական անձանց հետ գույքի ձեռքբերման պայմանագիր չի կնքել: Տվյալ դեպքում, Ընկերության և ֆիզիկական անձանց միջև կնքվել են գրավի պայմանագրեր, քանի որ անշարժ գույքի գրավի պայմանագրերում հստակ մատնանշված է, որ գրավառուն հանդիսանում է Ընկերությունը, իսկ գրավատուն՝ ֆիզիկական անձինք, որոնք էլ սեփական ցանկությամբ գրավ են դրել սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը (*լրե'ս, Ջաջուրի գյուղապետարանն*

ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը հատակորեն կանխորոշել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության դատական վերահսկողության սահմանները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Դատարանի կողմից վարչական ակտի իրավաչափության գնահատումը պետք է կատարվի տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերով սահմանված պահանջների պահպանման հարցը պարզելու միջոցով (*տես Հասարակ Մեքրոնյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/8975/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը, սույն գործի շրջանակներում ձեռնամուխ լինելով գնահատելու վիճարկվող վարչական ակտերի իրավաչափությունը ստուգելով դրանց համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները չէին կարող հիմք հանդիսանալ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 16.04.2019 թվականի վճիռն անփոփոխ թողնելու համար, քանի որ սույն գործով վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ պայման էր, որ գործի քննությամբ հաստատված համարվեր, որ վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ ու դրանով խախտվել են Ընկերության՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները, որպիսի փաստերը վերը նշված դիրքորոշումների պարագայում Վճռաբեկ դատարանը հաստատված չհամարեց:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելևելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 03.06.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/1945/05/18 վարչական գործով 26.11.2021 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

26.11.2021 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 26.11.2021 թվականին գրավոր ընթացակարգով քննելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.06.2020 թվականի որոշման դեմ, ըստ հայցի «Արմոյլ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ 18.12.2017 թվականի թիվ 1013235 վարչական ակտը մասնակի վերացնելու պահանջի մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել Վերաքննիչ դատարանի 03.06.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս, Հովսեփ Բեղլեյանս, Գոռ Հակոբյանս և Արսեն Մկրտչյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

Սույն գործը հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է մասնակի վերացնել Կոմիտեի 18.12.2017 թվականի թիվ 1013235 վարչական ակտը:

ՀՀ վարչական դատարանը (այսուհետ՝ Դատարան) հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ. «(...) հայցը հիմնավոր է և ենթակա բավարարման, քանզի «Արմոյլ» փակ բաժնետիրական ընկերությունը, ֆիզիկական անձի (անձանց) հետ «Մաս Դավ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորության կատարման ապահովման նպատակով կնքելով գրավի պայմանագիր, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով չի համարվում հարկային գործակալ, և ֆիզիկական անձանց համար, «Մաս Դավ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորության կատարման ապահովման նպատակով «Արմոյլ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքելով գրավի պայմանագիր, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի առաջացել հարկվող օբյեկտ»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել Վերաքննիչ դատարանի 03.06.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության, իր այդ եզրահանգումը հիմնավորելով հետևյալով.

Այսպես. անդրադառնալով այլ անձի պարտավորությունների կատարման նպատակով ֆիզիկական անձի կողմից գրավադրված գույքի իրացման դեպքում իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եկամտային հարկի հաշվարկման և վճարման իրավական հարցին և վկայակոչելով ու վերլուծության ենթարկելով իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, 5-րդ հոդվածի

2-րդ մասը, 10-րդ հոդվածի 6-րդ մասը, 12-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետը, 172-րդ հոդվածի 2-րդ կետը, 226-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերը, 228-րդ հոդվածի 1-ին կետը, 248-րդ հոդվածը, 249-րդ հոդվածի 1-ին կետը, 281-րդ հոդվածի 2-րդ կետը, թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) անկախ այն հանգամանքից՝ ով է ֆիզիկապես կազմակերպում կամ իրականացնում գույքի օտարումը (անմիջականորեն սեփականատերեր, նրա լիազորված անձը, գրավառուն և այլն), այնուամենայնիվ դրա արդյունքում փետրի է ունենում սեփականության իրավունքի ձեռքբերում գնորդի և համապարասխանաբար սեփականության իրավունքի դադարում գույքի սեփականատիրոջ մոտ: Այլեյին, սեփականատերեր գույքի գրավադրման պարագայում սեփական կամքով և հայեցողությամբ արդեն իսկ նախատեսում և թույլատրում է գույքի իրացումը՝ դրանով ասպահովված պարտավորության չկատարման դեպքում, որպես պարագայում ևս բացակայում են հիմնավորումներ առ այն, որ գույքը փնտրվում է այլ անձի կողմից: Այս դեպքում ուշադրության է արժանի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ կետի ձևակերպումը, որ գրավը սահմանում է որպես գույքի փնտրմանն եղանակ, ինչը փրամարանական է՝ հաշվի առնելով դրա իրացման դեպքում գույքի օտարման անխտասահելիությունը:

Փաստորեն, անկախ այն հանգամանքից՝ ով է ֆիզիկապես կազմակերպում կամ իրականացնում գույքի օտարումը (անմիջականորեն սեփականատերեր, նրա լիազորված անձը, գրավառուն և այլն), այնուամենայնիվ դրա արդյունքում փետրի է ունենում սեփականության իրավունքի ձեռքբերում գնորդի և համապարասխանաբար սեփականության իրավունքի դադարում գույքի սեփականատիրոջ մոտ: Այլեյին, սեփականատերեր գույքի գրավադրման պարագայում սեփական կամքով և հայեցողությամբ արդեն իսկ նախատեսում և թույլատրում է գույքի իրացումը՝ դրանով ասպահովված պարտավորության չկատարման դեպքում, որպես պարագայում ևս բացակայում են հիմնավորումներ առ այն, որ գույքը փնտրվում է այլ անձի կողմից:

Այսպիսով, գրավի ինստիտուտը կայանում է նրանում, որ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պարտավորությունը կատարվում է գրավարտի սեփականությունը հանդիսացող գույքի հաշվին: Այսինքն՝ գրավադրված գույքի իրացումից սրացված միջոցները ուղղվում են գրավով ասպահովված պարտավորությանը:

Փետրի կայանում է նրանում, որ գրավադրված գույքի իրացումից սրացված դրամական միջոցների նկատմամբ գրավարտի սեփականության իրավունքը դադարում է գրավով ասպահովված պարտավորության կատարմանը ուղղվելուց հետո միայն, մինչ այդ դիրքվելով որպես գույքի իրացումից սրացված դրամական միջոցներ և եկամուտ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասին համապարասխան:

(...)

Հարկային գործակալը պարտավոր է նաև ֆիզիկական անձից գույք ձեռք բերելիս վճարված եկամտորենից հարկ հաշվարկել և գանձել:

Փաստորեն, որպես հարկային գործակալ ֆիզիկական անձից գույք ձեռք բերելիս վճարված եկամտորենից հարկ հաշվարկելու, պահելու, գանձելու և վճարելու պարտավորության ծագման նախապայման է նաև հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու հանգամանքը»:

Հարկ ենք համարում արձանագրել, որ ի կատարումն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Վճռաբեկ դատարանն իր որոշման մեջ նշել է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կիրառման իմաստով առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Թեև 01.01.2018 թվականից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքին ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած են ճանաչվել «Եկամտային հարկի մասին» ՀՀ 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-246-Ն օրենքը, բացառությամբ այդ օրենքի 10-րդ հոդվածի 1.1-ին մասով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկային գործակալներին վերաբերող դրույթների, որոնք գործում են հավաստագրի տրամադրման օրվանից մինչև 31.12.2022 թվականը, ինչպես նաև բացառությամբ այդ օրենքի 8.2-րդ հոդվածով նախատեսված դրույթների, որոնք շարունակում են գործել 01.11.2014 թվականից մինչև 31.12.2017 թվականը ներառյալ ընկած ժամանակահատվածում ստացված հիպոտեկային վարկերի մասով, այդուհանդերձ Վճռաբեկ դատարանը գտել է, որ անհրաժեշտ է զարգացնել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, ինչի արդյունքում անդրադառնալով այլ անձի պարտավորությունների կատարման նպատակով ֆիզիկական անձի կողմից գրավադրված գույքի իրացման դեպքում եկամտային հարկի հաշվարկման և վճարման իրավական հարցին՝ եզրահանգել է, որ անկախ այն հանգամանքից՝ ով է ֆիզիկապես կազմակերպում կամ իրականացնում գույքի օտարումը (անմիջականորեն սեփականատերը, նրա լիազորված անձը, գրավատուն և այլն), այնուամենայնիվ դրա արդյունքում տեղի է ունենում սեփականության իրավունքի ձեռքբերում գնորդի և համապատասխանաբար սեփականության իրավունքի դադարում գույքի սեփականատիրոջ մոտ:

Համակարծիք չենք «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը վերագրյալ մեկնաբանմամբ զարգացնելու Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման և այդ դիրքորոշումը սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելու հետ հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես. Ընկերությունը Կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության պետին հասցեագրված «Պաշտոնական պարզաբանում ստանալու մասին» 10.11.2016 թվականի դիմումով շարադրել է իր դիրքորոշումը եկամտահարկի կիրառման բնագավառում ծագած խնդիրների և դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ և նշված գրության մեջ վկայակոչված իրավանդությունների համակարգային վերլուծության արդյունքում եզրահանգելով, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ կետն առաջացրել է տարբերակում «ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու» և «եկամտատների» մասով առաջարկել է խնդրի լուծման տարբերակ, ըստ որի՝ պարտատեր իրավաբանական անձի (Ընկերություն) և պարտապան իրավաբանական անձի («Սաս Դավ» ՍՊԸ) միջև կնքված ապրանքի մատակարարման պայմանագրով պարտապանի պարտավորությունների համար ռեզիդենտ ֆիզիկական անձանց (գրավատուների) կողմից գրավ դրված գույքի՝ պարտքի գումարին հավասար (կամ ավելի պակաս) արժեքի չափի դիմաց պարտատիրոջն ի սեփականություն անցնելու դեպքում՝ գրավատու ֆիզիկական անձը ՀՀ օրենսդրության տեսանկյունից որևէ եկամուտ չի ստանում պարտատեր իրավաբանական անձից, հետևաբար եկամտային հարկ չի առաջանում (...): Վերոգրյալ դիմումով Ընկերությունը խնդրել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված տասնհինգօրյա ժամկետում տալ իրավական ակտի պարզաբանում՝ եկամտահարկի կիրառման բնագավառում ծագած հարցի ճշման նպատակով (**հատոր 1-ին, գ.թ. 33-36**):

Ի պատասխան Ընկերության 10.11.2016 թվականի վերոգրյալ դիմումի՝ Կոմիտեի նախագահի տեղակալը 10.06.2017 թվականի գրությամբ, ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.07.2010 թվականի թիվ 1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 4-րդ կետով, իրազեկման կարգով հայտնել է, որ մինչև արտադատական կարգով ֆիզիկական անձի գույքի վրա բռնագանձում կատարելը նշված գույքը հանդիսանում է գրավատու ֆիզիկական անձի սեփականությունը, և ըստ էության, նոր սեփականատերը գույքը ձեռք է բերում վերջինիցս, ուստի բանկ կամ վարկային կազմակերպություն չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտը հանդիսանում է հարկային գործակալ և ֆիզիկական անձին պատկանող գույքի արժեքից «Եկամտային

հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան պարտավոր է հաշվարկել և բյուջե վճարել 10% դրույքաչափով եկամտային հարկ (**հատոր 1-ին, գ.թ. 32**):

Ստուգումների արդյունքում 18.12.2017 թվականին կազմվել է թիվ 1013235 ակտը, որի 21-րդ կետով արձանագրվել է, որ «Ընկերությունը համաձայն 23.02.2016թ-ին կնքված սպրանքների մատակարարման թիվ ԴՄՊ 0032 պայմանագրի «Մաս Դավ» ՄՊԸ-ին 2016 թվականի ընթացքում իրացրել է սպրանքներ ընդհանուր գումարով 93.693.475 դրամի չափով, որի համար որպես վճարման երաշխիք գրավ է վերցրել ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պարկանոց հողարարածքներ կնքելով անշարժ գույքի գրավի պայմանագրեր: 2016թ-ի հուլիս ամսին համաձայն ՀՀ Անշարժ գույքի նկարումային իրավունքների պետական գրանցման վկայականների թվով 8 հողարարածքներ 93.693.475 դրամ գումարով սեփականության իրավունքով անցել է «Արմոյ» ՓԲԸ-ին: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հարկային գործակալը ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու դիմաց վճարված եկամտային եկամտային հարկը հաշվարկում է 10% դրույքաչափով՝ հաշվի առնելով նաև նշված օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածների դրույքները: Հիմք ընդունելով վերոգրյալը, մինչև արտարարական կարգով ֆիզիկական անձի գույքի վրա բռնագանձում կատարելը նշված գույքը հանդիսանում է գրավարու ֆիզիկական անձի սեփականությունը և ըստ էության, նոր սեփականատերը գույքը ձեռք է բերում վերջինից, ուստի բանկ կամ վարկային կազմակերպություն չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտը հանդիսանում է հարկային գործակալ և ֆիզիկական անձին պարկանոց գույքի արժեքից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան պարտավոր է հաշվարկել և բյուջե վճարել 10% դրույքաչափով եկամտային հարկ՝ գումարով 9.369.347 դրամ (...):»

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել գրավով (գլուխ 15), տուժանքով, պարտապանի գույքի պահումով, երաշխավորությամբ, երաշխիքով, նախավճարով և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ եղանակներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բաների և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մատով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) հարկվող եկամուտը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկվող եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի համախառն եկամտի և սույն օրենքով սահմանված նվազեցվող եկամուտների ու ծախսերի դրական տարբերությունն է, եթե սույն օրենքով հարկվող օբյեկտի որոշման առումով այլ բան սահմանված չէ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի կողմից ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող

ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) բոլոր եկամուտների հանրագումարն է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եկամուտ է համարվում աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կամ ցանկացած այլ հիմքով հարկ վճարողի ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) գույքը, ինչպես նաև բնաթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտները: Նույն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հարկային գործակալը ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու դիմաց վճարված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է 10 տոկոս դրույքաչափով՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածների դրույթները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերի, հարկ վճարողներին եկամուտներ հաշվարկելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Եթե Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում կազմակերպություններն ազատվում են ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից աղբյուրի մոտ եկամտային հարկի պահումից, ապա այդ կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կարող են հարկային մարմին ներկայացվող՝ վերադաս հարկային մարմնի հաստատած ձևով գրավոր հայտարարության հիման վրա հանդես գալ որպես հարկային գործակալ և իրականացնել ֆիզիկական անձանց հաշվարկվող եկամուտներից հարկի պահում: Այս դեպքում հարկային գործակալը հարկի պահումը կատարում է հայտարարությունը ներկայացնելու ամսվանից սկսած:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային գործակալը հարկի պահում (գանձում) չի իրականացնում, եթե՝

1) վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության (ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) արդյունք են, և հարկային գործակալի հետ կնքվում է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), անձնագրի տվյալները, Հայաստանի Հանրապետությունում բնակության հասցեն և ձեռնարկատիրական գործունեության իրականացման պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը, կամ

2) եկամուտները վճարման ենթակա են նոտարին,

3) ֆիզիկական անձին վճարվում են մրցույթների և մրցությունների իրային շահումներ (մրցանակներ), ինչպես նաև խաղատներում կամ շահումներով խաղերում ստացած շահումներ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենքները կարող են ընդունվել օրենսգրքերի տեսքով: Օրենսգիրքն իրավունքի համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր կամ հիմնական նորմերը համակարգված և կանոնակարգված ձևով շարադրված օրենքն է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության հիման վրա գտնում ենք, որ ստորադաս դատարաններն իրավաչափի հետևության են հանգել այն մասով, որ տվյալ դեպքում վեճի լուծման համար էական նշանակություն ունի այն հարցերի պարզումը, թե Ընկերությունը ֆիզիկական անձի (անձանց) հետ «Մաս Դավ» ՍՊ ընկերության պարտավորության կատարման ապահովման նպատակով կնքելով գրավի պայմանագիր արդյո՞ք իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով համարվում է հարկային գործակալ և արդյո՞ք ֆիզիկական անձանց համար, «Մաս Դավ» ՍՊ ընկերության պարտավորության կատարման ապահովման նպատակով Ընկերության հետ կնքելով գրավի պայմանագիր,

իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով առաջացել է հարկվող օբյեկտ:

Մինևույն ժամանակ ստորադաս դատարաններն իրավաչափորեն անդրադարձել են այն հարցին, թե արդյոք Ընկերությունը կարող էր առաջնորդվել եկամտային հարկի իմաստով հարկային գործակալ չհամարվելու 10.11.2016 թվականի պաշտոնական պարզաբանում ստանալու մասին դիմումով իր ներկայացրած պարզաբանման տարբերակով:

Գտնում ենք, որ առաջադրված հարցերի առնչությամբ Վերաքննիչ դատարանի վերլուծությունները հիմնավոր են, ըստ այդմ ամբողջությամբ կիսում ենք այդ վերլուծություններն ու դրա արդյունքում ձևավորված եզրահանգումները, որպիսիք ներկայացնում ենք ստորև.

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի իրավակարգավորումներից բխում է, որ հարկային գործակալը հարկ վճարողին եկամուտ(ներ) վճարողն է, ով ֆիզիկական անձից գույք ձեռք բերելիս պարտավոր է վճարված եկամուտներից հարկ հաշվարկել և գանձել: Այսինքն իրավանորմից հետևում է, որ հարկային գործակալ համարվելու պարտադիր նախապայմաններից է գույքը ֆիզիկական անձից ձեռք բերելու փաստի առկայությունը:

Տվյալ դեպքում Ընկերության և «Մաս Դավ» ՍՊԸ-ի միջև 23.02.2016 թվականին կնքվել է սպրանքների մատակարարման թիվ ԴՄՊ 0032 հիմնական պայմանագիրը:

Ի սպառնալուսին հիմնական պայմանագրի պարտավորությունների՝ Ընկերության, Գրիշա Գալստյանի, Ստյոպա Պողոսյանի, Էդուարդ Մելքոնյանի և «Մաս Դավ» ՍՊԸ-ի միջև կնքվել են անշարժ գույքի գրավի (հիպոթեքի) լրացուցիչ պայմանագրեր: Ընդ որում, գրավի պայմանագրով նախատեսված պարտավորությունը կարող էր իրացվել, եթե «Մաս Դավ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որպես մատակարարման պայմանագրով պարտավորություն կրող, պատշաճ չկատարեր պայմանագրով նախատեսված պարտավորությունը: Այսինքն՝ կողմերի միջև կնքված գրավի պայմանագրի նպատակը մատակարարման պայմանագրի կատարման սպառնալուսին է հանդիսացել, հետևաբար՝ Ընկերությունը ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու նպատակ չի ունեցել, այլ ձեռքբերված գույքերը բացառապես նպատակահղված են եղել մատակարարման պայմանագրով սահմանված պարտավորության կատարմանը:

«Մաս Դավ» ՍՊԸ-ի կողմից խախտվել են մատակարարման պայմանագրի պահանջները, ինչի հետևանքով ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ տարածվել է բռնագանձում: Արդյունքում ապահովված պարտավորությունների չափի նկատմամբ, տվյալ դեպքում 93.693.475 ՀՀ դրամի չափով, սեփականության իրավունքը ֆիզիկական անձանցից անցել է Ընկերությանը: Փաստորեն տվյալ դեպքում Ընկերությունը գրավադրված գույքն իրացնելիս ստացել է մատակարարման պայմանագրով նախատեսված պարտավորության կատարումը, այլ ոչ թե ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու նպատակ է ունեցել:

Նման պայմաններում հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի այն եզրահանգումը, որ Ընկերության և ֆիզիկական անձանց միջև կնքվել են գրավի պայմանագրեր, քանի որ անշարժ գույքի գրավի պայմանագրերում հստակ մատնանշված է, որ գրավառուն հանդիսանում է Ընկերությունը, իսկ գրավատուն՝ ֆիզիկական անձինք, որոնք էլ սեփական ցանկությամբ գրավ են դրել սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքերը, անհասկանալի է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի եզրահանգումը, քանի որ վերոգրյալ հիմնավորումներով Վճռաբեկ դատարանը, ըստ էության, հաստատված է համարել սույն գործով վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ պայմանի, այն է՝ վարչական ակտն իրենց մեկնաբանությամբ օրենքին համապատասխան ընդունված լինելու ու դրանով Ընկերության՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտված չլինելու հանգամանքները:

Մինչդեռ, ի հակադրումն Վճռաբեկ դատարանի վերոգրյալ եզրահանգման, գտնում ենք, որ ստորադաս դատարանները, ձեռնամուխ լինելով գնահատելու վիճարկվող

վարչական ակտերի իրավաչափությունը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կանոնների պահպանմամբ ստուգել են վարչական ակտի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին և բավարար պատճառաբանություններով հաստատված համարել, որ վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ ու դրանով խախտվել են Ընկերության՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները, ինչի հիման վրա Դատարանն իրավացիորեն բավարարել են Ընկերության հայցը և վիճարկվող վարչական ակտը ճանաչել է անվավեր, որպիսի եզրահագումը Վերաքննիչ դատարանն իրավացիորեն գնահատել է իրավաչափ:

Մասնավորապես, անդրադառնալով Կոմիտեի այն փաստարկին, որ Ընկերության և ֆիզիկական անձանց միջև կնքվել են գրավի պայմանագրեր, քանի որ անշարժ գույքի գրավի պայմանագրերում հստակ մատնանշված է, որ գրավառուն հանդիսանում է Ընկերությունը, իսկ գրավատուն ֆիզիկական անձը, որն էլ սեփական ցանկությամբ գրավ է դրել սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքը (հողատարածք) և լրացուցիչ պարտավորությունների կատարման արդյունքում գրավատու ֆիզիկական անձանց մոտ առաջացել է անուղղակի եղանակով եկամուտ ստանալու հնարավորություն՝ պահանջի իրավունք, իսկ հաշվեգրման եղանակով հարկերը հաշվարկելու հիմքով Ընկերությունը՝ որպես հարկային գործակալ, կրում է օրենքով սահմանված կարգով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորություն, հարկ ենք համարում արձանագրել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի դրույթներից հետևում է, որ հարկման օբյեկտի առկայության որոշման համար էական նշանակություն ունի վերջինների պարտադիր պայմանների համակցությունը, մասնավորապես՝ ռեզիդենտների համար ստացման ենթակա՝ հաշվեգրված հարկվող եկամուտը, ընդ որում օրենսդիրը, մասնավորեցնելով հաշվեգրված հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը, օրենքի տրամաբանությամբ, հարկ վճարողի ստացման ենթակա՝ հաշվեգրված գույքն է, մինչդեռ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում արդեն իսկ ստացված հարկվող եկամուտն է:

Փաստորեն օրենսդիրն որջանորոշել է անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով հարկվող օբյեկտի այլ սահմանում, այսինքն՝ ի տարբերություն հարկ վճարող այլ ռեզիդենտների՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում արդեն իսկ ստացված եկամուտը, իսկ եկամուտը արդեն իսկ ստացված գույքն է: Հետևաբար՝ հարկվող օբյեկտի որոշման պայմաններում հարկային մարմինը պարտավոր է պարզել ցանկացած դեպքում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից կնքված պայմանագրի շրջանակներում գույքն արդեն իսկ ձեռքբերած լինելու փաստը:

Կոմիտեի իրավական դիրքորոշման համաձայն՝ Ընկերության կողմից ֆիզիկական անձանց պատկանող գույքի ձեռքբերման պահին այդ ֆիզիկական անձինք ձեռք են բերել պահանջի իրավունք «Մաս Դավ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից, մինչդեռ հարկ ենք համարում ընդգծել, որ ֆիզիկական անձինք Ընկերության հետ իրավահարաբերության մեջ են մտել բացառապես «Մաս Դավ» ՍՊ ընկերության պարտավորությունները կատարելու նպատակով: Այսինքն՝ ֆիզիկական անձանց կողմից հնարավոր եկամուտ ստանալու իրավահարաբերության մյուս կողմը ոչ թե Ընկերությունն է, այլ «Մաս Դավ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և ցանկացած պարագայում ֆիզիկական անձից գույքի ձեռքբերման կամահայտությունն ու հնարավոր իրավահարաբերության սուբյեկտ հանդիսանում են ֆիզիկական անձինք և «Մաս Դավ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Հետևաբար հարկային հաշվառման առումով վերը նշված պայմանագրերը չեն կարող դիտվել որպես առանձին գործարքներ:

Մինևույն ժամանակ հարկ ենք համարում արձանագրել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման խնդրի

ատկայության, մասնավորապես՝ որոշակի իրավիճակում նորմի կիրառման առնչությամբ տվյալ իրավահարաբերության նկատմամբ նորմի կիրառումն ու մեկնաբանությունը անձի համար հստակ չլինելու պատճառով պաշտոնական պարզաբանում հայցելու մասին ԸՆ-կերության 10.11.2016 թվականի դիմումին օրենքով սահմանված տասնհինգօրյա ժամկետում պատասխան չներկայացնելու պարագայում Ընկերությունը կարող էր առաջնորդվել եկամտային հարկի իմաստով հարկային գործակալ չհամարվելու նույն դիմումով իր ներկայացրած պարզաբանման տարբերակով:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ Ընկերությունը ֆիզիկական անձի (անձանց) հետ «Մաս Դ-ով» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորության կատարման ապահովման նպատակով կնքելով գրավի պայմանագիր, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով չի հանդիսացել հարկային գործակալ և ֆիզիկական անձանց համար, «Մաս Դ-ով» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորության կատարման ապահովման նպատակով Ընկերության հետ կնքելով գրավի պայմանագիր, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի առաջացել հարկվող օբյեկտ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գրավառուին հավասարեցրել է գնորդին՝ դրանից բխեցնելով իր այն եզրահանգումը, որ Ընկերությունը, որպես հարկային գործակալ, պարտավոր էր գրավի առարկայի նկատմամբ իրավունք ձեռք բերելու փաստով ֆիզիկական անձանց վճարված եկամուտներից հարկ հաշվարկել և գանձել:

Գտնում ենք, որ նախ՝ գրավատուն չի կարող նույնացվել գնորդի հետ, քանի որ դրանք տարբեր կարգավիճակներ են, որոնց հասկացությունը տրված է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, երկրորդ՝ Ընկերությունը որևէ կերպ չի կարող հանդիսանալ հարկային գործակալ, քանի որ ֆիզիկական անձանցից գույք ձեռք չի բերել և դրա դիմաց էլ նրանց եկամուտ չի վճարել, որպեսզի այդ եկամտի 10%-ը պահեր և վճարեր որպես եկամտային հարկ:

Ավելին, անգամ եթե «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասը «ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու» և «եկամուտների» մասով առաջացրել է տարբերակում, ապա այդ տարբերակումը իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի ուժով պետք է մեկնաբանվի և կիրառվի հարկ վճարողի օգտին:

Այսպիսով, գտնում ենք, որ Դատարանը, մասնակի՝ 21-րդ կետի մասով անվավեր ճանաչելով Կոմիտեի 18.12.2017 թվականի թիվ 1013235 ակտը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են օրինական և հիմնավորված դատական ակտեր, հետևաբար գտնում ենք, որ վճռաբեկ բողոքով ներկայացված փաստարկները բավարար չեն Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, որպիսի պարագայում տվյալ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված վճռաբեկ բողոքը մերժելու և դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

ԳԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Հ. Բեդկյան
Գ. Հակոբյան
Ա. Մկրտչյան

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Վարչական գործ թիվ **ՎԴ/10676/05/18**
2021թ.
ՎԴ/10676/05/18
Ա. Առաքելյան
Ք. Մկոյան
Կ. Մաթևոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 30-ին
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայու-
թյան (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի
27.05.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հայաստանում գյուղական տարածքների
տնտեսական զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ընդդեմ Ծառայության՝
Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Ստեփան
Բաղդասարյանի 18.09.2018 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատ-
մամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին» որոշման կատարողական
վարույթ հարուցելու մասով՝ Հիմնադրամի և Ծառայության միջև Երևան քաղաքի ընդհա-
նուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԱԲԴ/5664/02/15 քաղաքացիական գործով
13.09.2018 թվականին տրված կատարողական թերթի հարկադիր պահանջի կատարման
իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դարավարական նախապարմությունը
Դիմելով դատարան՝ Հիմնադրամը պահանջել է Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-
Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Ստեփան Բաղդասարյանի՝ 18.09.2018 թվականի

«Կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին» որոշման կատարողական վարույթ հարուցելու մասով՝ ճանաչել Հիմնադրամի և Ծառայության միջև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԱԲԴ/5664/02/15 քաղաքացիական գործով 13.09.2018 թվականին տրված կատարողական թերթի հարկադիր պահանջի կատարման իրավահարաբերության բացակայությունը և որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ՝ թիվ 04545851 կատարողական վարույթով հարկադիր կատարողի՝ «Գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին» 18.09.2018 թվականի որոշումը, «Պարտապանի գույքերի նկատմամբ արգելանք կիրառելու մասին» 18.09.2018 թվականի թիվ Ո00822-33078/18 որոշումը և «Պարտապանի դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու մասին» 26.09.2018 թվականի թիվ Ո00822-96609/18 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Ագրոյան) (այսուհետ՝ Դատարան) 12.02.2019 թվականի որոշմամբ թիվ ՎԴ/10676/05/18 վարչական գործի վարույթը՝ թիվ 04545851 կատարողական վարույթով հարկադիր կատարողի «Գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին» 18.09.2018 թվականի որոշումը, «Պարտապանի գույքերի նկատմամբ արգելանք կիրառելու մասին» 18.09.2018 թվականի թիվ Ո00822-33078/18 որոշումը և «Պարտապանի դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու մասին» 26.09.2018 թվականի թիվ Ո00822-96609/18 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասով, կարճվել է:

Դատարանի 08.04.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է. ճանաչվել է Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Ստեփան Բաղդասարյանի 18.09.2018 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին» որոշման կատարողական վարույթ հարուցելու մասով՝ Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի և ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության միջև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԱԲԴ/5664/02/15 քաղաքացիական գործով 13.09.2018 թվականին տրված կատարողական թերթի հարկադիր պահանջի կատարման իրավահարաբերության բացակայությունը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.05.2020 թվականի որոշմամբ Ծառայության կողմից ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 08.04.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը (ներկայացուցիչ Էլմիրա Մեջլումյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հիմնադրամը (ներկայացուցիչ Վարդան Ալոյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Խարսկան սկյուրի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 30-րդ, 31-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել, խախտել է ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ, 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ կատարողական թերթը հարկադիր կատարման ներկայացնելու դեպքում հարկադիր կատարողը պետք է կատարողական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնի, եթե առկա չէ կատարողական թերթը վերադարձնելու որևէ հիմք, ընդ որում, օրենսդիրը հստակ սահմանել է այն սպառնիչ պայմանները, որոնց առկայության պայմաններում հարկադիր կատարողը պարտավոր է չհարուցել կատարողական վարույթ և կատարողական թերթը վերադարձնել այն տրամադրած դատարան, մյուս դեպքերում հարկադիր կատարողը պարտավոր է հարուցել կատարողական

վարույթ և հետագա ընթացքը լուծել՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին համաձայն:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ թիվ ԵԱՔԳ/5664/02/15 կատարողական թերթի պահանջները կատարելու համար Ծառայությունը՝ որպես վարչական մարմին, պարտավոր էր հարուցել կատարողական վարույթ, քանի որ սշված կատարողական թերթը լիովին համապատասխանում էր գործող օրենսդրությանը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի համակարգային վերլուծություննից, այդ թվում նույն օրենքի 4-րդ, 30-րդ, 31-րդ հոդվածների տառացի մեկնաբանություննից ակնհայտ է, որ կատարողական թերթ ստանալուց հետո եռօրյա ժամկետում հարկադիր կատարողը պարտավոր է իրականացնել հետևյալ երկու գործողություններից մեկը՝ հարուցել կատարողական վարույթ, ետ վերադարձնել կատարողական թերթը անկատար վիճակում, եթե ներկայացված կատարողական թերթը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հարկադիր կատարողը օրենքով նման պարտականություն չունի՝ պարզելու կատարողական վարույթի կողմերի ֆիզիկական առկայությունը, ավելին՝ ուսումնասիրելու այդ կողմից իրավասուբյեկտության հարցը, ֆիզիկական գոյությունը և անձի իրավասուբյեկտությունը կատարողական վարույթ հարուցելիս հարկադիր կատարողի պարտականությունը չէ, առավել ևս օրենքով նախատեսված չէ որպես կատարողական թերթը ետ վերադարձնելու հիմք: Ավելին՝ նման իրավիճակների ի հայտ գալու պայմաններում, օրենսդիրը նախատեսել է հնարավորություն՝ որոշելու հարուցված կատարողական վարույթի հետագա ընթացքը, մասնավորապես՝ պարտականություն է նախատեսել հարկադիր կատարողի համար կասեցնել կատարողական վարույթը, եթե մահացել է պահանջատեր կամ պարտապան ֆիզիկական անձը, և դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտավորությունները կարող են փոխանցվել նրա իրավահաջորդին:

Վերաքննիչ դատարանը չի ուսումնասիրել կատարողական թերթը, չի պարզել, թե արդյոք այն համապատասխանում էր «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին, արդյոք առկա են եղել կատարողական թերթը վերադարձնելու հիմքերը և այլն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.05.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ հայցը մերժել:

2.1. Վճարել բողոքի պարասխանի հիմնավորումները

Այն բոլոր դեպքերում, երբ պարտատեր քաղաքացին մինչև կատարողական վարույթի հարուցման փուլը մահացած է եղել, չի կարող հարուցվել կատարողական վարույթ: Դատական ակտի հարկադիր կատարման կատարողական վարույթի կողմ կարող է լինել այն քաղաքացին, ով ֆիզիկապես գոյություն ունի:

Կատարողական վարույթի հարուցման փուլում Ծառայության և միայն պարտապանի միջև չի կարող ծագել իրավահարաբերություն՝ առանց փոխհարաբերության մյուս սուբյեկտի՝ պարտատիրոջ, քանի որ իրավահարաբերությունը ծագում է պարտապանի, պարտատիրոջ և հարկադիր կատարողի միջև միաժամանակ: Իսկ այն բոլոր դեպքերում, երբ չկա պարտատեր, հոգուտ որի պետք է կատարվեն որոշակի գործողություններ, ապա Ծառայությունը չունի որևէ իրավասություն որևէ իրավահարաբերության մեջ մտնելու պարտապանի հետ: Առանց պարտատիրոջ հարկադիր կատարողի և հայցվորի միջև կատարողական վարույթի հարուցման փուլում չէր կարող ծագել որևէ իրավահարաբերություն:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ սույն դեպքում կատարողական վարույթ հարուցելու ժամանակ չէր կարող գոյություն ունենալ որևէ իրավահարաբերություն հայցվորի և Ծառայության միջև, ուստի անհրաժեշտ էր ներկայացնել իրավահարաբերության բացակայության ճանաչման հայց: Օրենսդրի կողմից իրավահարաբերության բացակայության հայցատեսակի նախատեսումը պայմանավորված նմանատիպ դեպքերի համար,

որտեղ հայցվորը գրկված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-68-րդ հոդվածներով սահմանված հայցատեսակներ ներկայացնելու հնարավորությունից, և խնդիրը դատական կարգով քննության առարկա կարող է դարձվել բացառապես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ճանաչման հայցի շրջանակներում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱԲԴ/5664/02/15 քաղաքացիական գործով 13.09.2018 թվականին տրված կատարողական թերթի համաձայն՝ 20.06.2018 թվականի վճռի հիման վրա Հիմնադրամից պետք է հօգուտ Արկադի Գևորգյանի բռնագանձել 500.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար (**հատոր 1-ին, գ.թ. 69**).

2) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱԲԴ/5664/02/15 քաղաքացիական գործով 13.09.2018 թվականին տրված կատարողական թերթը Ծառայությունում մուտքագրվել է 14.09.2018 թվականին՝ մուտքի համար՝ թիվ Կ/թ 15884 (**հատոր 1-ին, գ.թ. 69**).

3) «Մահվան մասին պետական վկայական»-ի համաձայն՝ Արկադի Ֆեոդորի Գևորգյանը մահացել է 14.09.2018 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 83**).

4) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի 18.09.2018 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին» որոշման համաձայն՝ Արկադի Ֆեոդորի Գևորգյանի կողմից 17.09.2018 թվականին ստացված թիվ Կ/թ 15884 դիմումի հիման վրա որոշվել է հարուցել կատարողական վարույթ թիվ 04545851՝ Հիմնադրամից հօգուտ Արկադի Ֆեոդորի Գևորգյանի բռնագանձել 500.000 ՀՀ դրամ, (...) (**հատոր 1-ին, գ.թ. 70**).

5) Աշխատանքային ստուգիչ տեղեկանքի և «Վարույթի բռնագանձված գումարների բաշխման մասին» տեղեկանքի համաձայն՝ 03.10.2018 թվականին Հիմնադրամից հօգուտ Արկադի Ֆեոդորի Գևորգյանի բռնագանձվել է 500.000 ՀՀ դրամ, ինչպես նաև 25.000 ՀՀ դրամ՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս: Գումարը ղեպնացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայությունում (**հատոր 1-ին, գ.թ. 89-90**).

6) Ծառայությունում 02.10.2018 թվականին ստացվել է Հիմնադրամի ներկայացուցիչ Վարդան Արյանի դիմումը, որով վերջինս խնդրել է կասեցնել թիվ 04545851 կատարողական վարույթը՝ նկատի ունենալով, որ Արկադի Գևորգյանը 14.09.2018 թվականին մահացել է՝ կից ներկայացնելով վերջինիս մահվան վկայականը (**հատոր 1-ին, գ.թ. 80-85**).

7) Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Ստեփան Բաղդասարյանի 04.10.2018 թվականի «Կատարողական վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ կասեցվել է 18.09.2018 թվականին հարուցված թիվ 04545851 կատարողական վարույթը (**հատոր 1-ին, գ.թ. 86**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը այայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի և 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալով այայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք կատարողական թերթի

առկայության և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հիմքերի բացակայության պայմաններում հարկադիր կատարողն իրավասու է կատարողական թերթով պարտապան կամ պահանջարկեր հանդիսացող ֆիզիկական անձի մահացած լինելու դեպքում չհարուցել կատարողական վարույթ և վերադարձնել կատարողական թերթն այն սրահատրուած դատարան:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (...) դատական ակտերի (...) հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է և կատարողական մակագրության թերթը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողը կայացնում է որոշում: Հարկադիր կատարողը որոշումը կայացնում է դրա համար հիմք հանդիսացող հանգամանքները հայտնի դառնալու օրվանից եռօրյա ժամկետում, եթե օրենքով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում՝ դատարանից կատարողական թերթը էլեկտրոնային եղանակով ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում: Կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում կատարողական մակագրության թերթ ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ստացված կատարողական թերթը չի համապատասխանում նույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված պահանջներին, կամ եթե բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը, ապա հարկադիր կատարողը կատարողական թերթը վերադարձնում է կատարողական թերթ տված դատարան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարողական թերթը վերադարձնելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում՝ այն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթում պետք է նշվեն՝

- 1) կատարողական թերթ տված դատարանի անվանումը.
- 2) գործը, որի հիման վրա տրվել է կատարողական թերթը և դրա համարը.
- 3) կատարման ենթակա դատական ակտի կայացման տարին, ամիսը և ամսաթիվը.
- 4) կողմերի (պարտապանի և պահանջատիրոջ) անունը, ազգանունը, հայրանունը,

իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, քաղաքացու անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը՝ դրա առկայության դեպքում, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Պարտապանի անձնագրային տվյալները, ինչպես նաև պարտապան-իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական

գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը կարող են չնշվել, եթե գործի քննության ընթացքում դատարանը չի կարողացել ստանալ այդ տվյալները.

- 5) դատական ակտի եզրափակիչ մասը.
- 6) դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու տարին, ամիսը և ամսաթիվը.
- 7) կատարողական թերթ տալու տարին, ամիսը, ամսաթիվը:

Այն դեպքերում, երբ արդարադատության արդյունավետության, այլոց իրավունքների պաշտպանության կամ դատական ակտի կատարման շահերից ելնելով՝ հիմնավորված է կատարողական գործողությունների կատարումը ոչ աշխատանքային օրերին, ինչպես նաև գիշերային ժամերին, դատարանը այդ մասին նշում է կատարում կատարողական թերթում:

Վերոգրյալ իրավանքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքը սահմանում է, որ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքերից մեկը՝ նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որի հիման վրա հարուցված կատարողական վարույթի շրջանակներում իրականացվում են կատարողական գործողություններ:

Միաժամանակ նշված իրավանքներից հետևում է նաև, որ կատարողական թերթ ստանալուց հետո եռօրյա ժամկետում հարկադիր կատարողը պարտավոր է իրականացնել հետևյալ երկու գործողություններից մեկը՝ հարուցել կատարողական վարույթ կամ հետ վերադարձնել կատարողական թերթը, եթե ներկայացված կատարողական թերթը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին կամ եթե բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը:

Այսինքն՝ կատարողական թերթը ստանալուց հետո հարկադիր կատարողը սահմանափակված է վերոնշյալ երկու լիազորություններով, այն է՝ կան հարուցել կատարողական վարույթ, կան վերադարձնել կատարողական թերթն այն տրամադրած դատարան: Ընդ որում, օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանել է այն պահանջների սպառիչ ցանկը, որոնց առկայության դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է չհարուցել կատարողական վարույթ և կատարողական թերթը վերադարձնել այն տրամադրած դատարան, որպիսի հիմքերի բացակայության պայմաններում վերջինս պարտավորված է հարուցել կատարողական վարույթ և դրա հետագա ընթացքը լուծել օրենքով սահմանված կարգով:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական վարույթի կողմերից մեկի դուրս գալու դեպքում (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում) հարկադիր կատարողը պարտավոր է կատարել նրա փոխարինում՝ օրենքով, դատարանի վճռով կամ պայմանագրով որոշված իրավահաջորդով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև իրավահաջորդի գործի մեջ մտնելը կատարողական վարույթի ընթացքում կատարված գործողությունները պարտադիր են իրավահաջորդի համար այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեին իրավահաջորդի կողմից փոխարինված անձի համար:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերության համաձայն՝ այն կատարողական վարույթին, որին պետք է մասնակցեր մահացած կամ սահմանված կարգով մահացած ճանաչված անձի ժառանգը, եթե ժառանգությունը ոչ ոքի կողմից դեռևս չի ընդունվել, որպես ժառանգի ներկայացուցիչ հանդես է գալիս ժառանգական գույքի պահպանման և կառավարման համար նշանակված անձը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողը պարտավոր է կանցնել կատարողական

վարույթը, եթե՝ մահացել է պահանջատեր կամ պարտապան ֆիզիկական անձը, և դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտավորությունները կարող են փոխանցվել նրա իրավահաջորդին:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե մահացել է պահանջատեր կամ պարտապան քաղաքացին, և դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտականությունները չեն կարող փոխանցվել նրա իրավահաջորդին:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ կատարողական վարույթի կողմի՝ պահանջատեր կամ պարտապան ֆիզիկական անձի մահվան դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է կատարել հետևյալ գործողությունները.

կասեցնել կատարողական վարույթը, եթե դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտավորությունները կարող են փոխանցվել մահացած պահանջատեր կամ պարտապան ֆիզիկական անձի իրավահաջորդին,

կարճել կատարողական վարույթը, եթե դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտականությունները չեն կարող փոխանցվել վերջինիս իրավահաջորդին:

Այսինքն՝ կատարողական վարույթի կողմի մահացած լինելու փաստը դեռևս բավարար հիմք չէ հարկադիր կատարողի կողմից կատարողական գործողություններ չկատարելու, այդ թվում՝ կատարողական վարույթ չհարուցելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդրի կողմից նման դեպքերում սահմանվել է կատարողական վարույթի կողմի իրավահաջորդության հնարավորությունը: Միաժամանակ, օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ կատարողական թերթով պահանջատեր կամ պարտապան ֆիզիկական անձի մահվան դեպքում հարկադիր կատարողն իրավասու է այդ փաստով պայմանավորված կատարելու որոշակի գործողություններ միայն արդեն իսկ հարուցված կատարողական վարույթի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ նման պայմաններում հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթ չհարուցելու հնարավորություն օրենսդրությամբ նախատեսված չէ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման իրավակարգավորման նպատակը կատարողական թերթով պահանջատեր կամ պարտապան ֆիզիկական անձի մահվան դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթի պահանջն անկատար թողնելու հնարավորության բացառումն է:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ կատարողական թերթ ստանալուց հետո եռօրյա ժամկետում հարկադիր կատարողը պարտավոր է իրականացնել հետևյալ երկու գործողություններից մեկը՝ հարուցել կատարողական վարույթ կամ վերադարձնել կատարողական թերթը, եթե ներկայացված կատարողական թերթը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, իսկ այն դեպքում, երբ արդեն իսկ հարուցված վարույթի շրջանակներում մահացել է պահանջատեր կամ պարտապան ֆիզիկական անձը, և դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտավորությունները կարող են փոխանցվել նրա իրավահաջորդին, հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան, իսկ հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը: Դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը (*յրե՛ս*, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող

ծառայության Լոռու մարզային բաժինն ընդդեմ Անուշ Բասիրյանի թիվ ՎԴ6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ թեև ՀՀ Սահմանադրությունը և Կոնվենցիան ուղղակիորեն չեն ամրագրում դատական ակտերի կատարման իրավունքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ, սակայն դատական ակտերի կատարումը դիտարկվում է որպես արդար դատաքննության բաղկացուցիչ տարր. այն ունի բացառիկ նշանակություն արդարադատության արդյունավետ կենսագործման համար, քանի որ մարդու խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքը չի կարող երաշխավորված իրացվել, եթե վերջինիս խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վերջնական դատական ակտը մնում է անկատար (*յուե՛ս, «Յունիբանկ» ԲԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի թիվ ՍԴՈ-1115 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ: Հետևաբար դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և «իր գործի հրապարակային քննության» որպես դատավարական գործընթացի փուլ:

Նշված մոտեցումը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) ձևավորած նախադեպային իրավունքի հետ, որի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնա երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնան անկատար: Ըստ Եվրոպական դատարանի՝ դժվար կլինի պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կոդներին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցնեք իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով (*յուե՛ս, Hornsby v. Greece գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, 40-րդ կետ, Mostacciolo v. Italy (No. 2) գործով Եվրոպական դատարանի 29.03.2006 թվականի վճիռը, 85-րդ կետ, Raylyan v. Russia գործով Եվրոպական դատարանի 15.02.2007 թվականի վճիռը, 27-րդ կետ, Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 01.12.2009 թվականի վճիռը, 66-րդ կետ*):

«Յունիբանկ» ԲԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ վկայակոչված մոտեցումը համահունչ է նաև Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի հետ, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնա երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնան անկատար: Ըստ Եվրոպական դատարանի՝ դժվար կլինի պատկերացնել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կոդներին տրամադրվող դատավարական

երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպանել դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցնի իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարումը պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով (*յրեն HORNBY v. GREECE գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, 40-րդ կետը, MOSTACCIUOLO v. ITALY (No. 2) գործով Եվրոպական դատարանի 29.03.2006 թվականի վճիռը, 85-րդ կետը, RAYLYAN v. RUSSIA գործով Եվրոպական դատարանի 15.02.2007 թվականի վճիռը, 27-րդ կետը, Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 01.12.2009 թվականի վճիռը, 66-րդ կետը*):

Անդրադառնալով դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարման ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան (*յրեն՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնին ընդդեմ Անուշ Իսախրյանի թիվ ՎՊ6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Հիմնադրամի հայցի հիման վրա, որով վերջինս խնդրել է ճանաչել Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Ստեփան Բաղդասարյանի 18.09.2018 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախույզում հայտարարելու և արգելանք դնելու մասին» որոշման կատարողական վարույթ հարուցելու մասով՝ Հիմնադրամի և Ծառայության միջև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԱԲԴ/5664/02/15 քաղաքացիական գործով 13.09.2018 թվականին տրված կատարողական թերթի հարկադիր պահանջի կատարման իրավահարաբերության բացակայությունը:

Դատարանը բավարարել է Հիմնադրամի հայցը՝ վճռի հիմքում դնելով այն հանգամանքը, որ Ծառայությունը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԱԲԴ/5664/02/15 գործով 13.09.2018 թվականին տրված կատարողական թերթի հիման վրա կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը կայացրել է միայն 18.09.2018 թվականին, երբ պարտատեր Արկադի Գևորգյանն արդեն իսկ մահացել էր (14.09.2018 թվականին): Դատարանը գտել է, որ կատարողական վարույթ հարուցելու պահին՝ 18.09.2018 թվականին՝ Ծառայության և Արկադի Ֆեոդորի Գևորգյանի միջև չէին կարող առաջանալ իրավահարաբերություններ, քանզի իրավահարաբերության սուբյեկտներից մեկի՝ պարտատիրոջ իրավունակությունը վերջինիս մահվան հիմքով դադարել էր, և կատարողական թերթի հիման վրա գումարի բռնագանձման կապակցությամբ չէր կարող կապ առաջանալ Ծառայության և Արկադի Գևորգյանի միջև: Եվ նման դեպքերում, երբ առկա չէ պարտատեր, հանուն ում և ի շահ ում պետք է կատարվեն որոշակի գործողություններ, նման պայմաններում Ծառայության գործողությունները դառնում են ինքնանպատակ, քանզի վերջինս պարտապանի հետ մտնում է այնպիսի իրավահարաբերությունների մեջ, որի իրավասությունը, պարտատիրոջ բացակայությամբ պարագայում, նա չունի:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ծառայության կողմից ներկայացրած վերաքննիչ բողոքը և Դատարանի 08.04.2019 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով,

որ կատարողական վարույթ հարուցելու պահին՝ 18.09.2018 թվականին, Ծառայության և Արկադի Գևորգյանի միջև չէին կարող առաջանալ իրավահարաբերություններ, քանզի իրավահարաբերության սուբյեկտներից մեկի՝ պարտատիրոջ իրավունակությունը վերջինիս մահվան հիմքով դադարել էր, և կատարողական թերթի հիման վրա գումարի բռնագանձման կապակցությամբ չէր կարող կապ առաջանալ Ծառայության և Արկադի Գևորգյանի միջև: Իսկ այն դեպքում, երբ առկա չէ պարտատեր, հանուն ում և ի շահ որի՝ պետք է կատարվեն որոշակի գործողություններ, ապա նման պայմաններում, ինչպես իրավացիորեն արձանագրել է Դատարանը, Ծառայության գործողությունները դառնում են ինքնանպատակ, քանզի վերջինս պարտապանի հետ մտնում է այնպիսի իրավահարաբերությունների մեջ, որի իրավասությունը, պարտատիրոջ բացակայության պարագայում, նա չունի:

Ելնելով վերը շարադրված վերլուծություններից, համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՔԴ/5664/02/15 քաղաքացիական գործով 13.09.2018 թվականին տրված կատարողական թերթի հիման վրա՝ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Ստեփան Բաղդասարյանը 18.09.2018 թվականին որոշել է հարուցել թիվ 04545851 կատարողական վարույթը՝ Հիմնադրամից հոգուտ Արկադի Գևորգյանի բռնագանձել 500.000 ՀՀ դրամ, ինչպես նաև կատարողական գործողությունների կատարման ծախս՝ 25.000 ՀՀ դրամ, որից հետո Ծառայությունում 02.10.2018 թվականին ստացվել է Հիմնադրամի ներկայացուցիչ Վարդան Ալոյանի դիմումը, որով վերջինս խնդրել է կասեցնել թիվ 04545851 կատարողական վարույթը՝ նկատի ունենալով, որ Արկադի Գևորգյանը 14.09.2018 թվականին մահացել է՝ կից ներկայացնելով վերջինիս մահվան վկայականը, որից հետո Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Ստեփան Բաղդասարյանի 04.10.2018 թվականի «Կատարողական վարույթի կասեցնելու մասին» որոշմամբ կասեցվել է 18.09.2018 թվականին հարուցված թիվ 04545851 կատարողական վարույթը:

Վճռաբեկ դատարանը, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման հիման վրա, եզրահանգում է, որ Ծառայության գործողություններն իրավաչափ են, քանի որ վերջինս կատարողական թերթ ստանալուց հետո հարուցել է կատարողական վարույթ՝ նկատի ունենալով, որ ներկայացված կատարողական թերթը համապատասխանել է օրենքով սահմանված պահանջներին, որից հետո, տեղեկանալով պահանջատեր Արկադի Գևորգյանի մահվան մասին և նկատի ունենալով, որ դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտավորությունները կարող են փոխանցվել վերջինիս իրավահաջորդին, կատարել է օրենքով սահմանված իր պարտականությունը և կասեցրել է 18.09.2018 թվականին հարուցված թիվ 04545851 կատարողական վարույթը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով, իսկ օրենսդրությամբ պարտապան կամ պահանջատեր ֆիզիկական անձի մահվան դեպքում կատարողական վարույթ չհարուցելու հնարավորություն հարկադիր կատարողի համար նախատեսված չէ, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայությունը գործել է իրավաչափորեն, որպիսի հանգամանքն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից, ուստի Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Ստեփան Բաղդասարյանի 18.09.2018 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին» որոշման կատարողական վարույթ հարուցելու մասով՝ Հիմնադրամի և Ծառայության միջև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԱՔԴ/5664/02/15 քաղաքացիական գործով 13.09.2018 թվականին տրված

կատարողական թերթի հարկադիր պահանջի կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու վերաբերյալ Հիմնադրամի հայցը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Նշված պայրճատարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարսախասնում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պայրճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկավարամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ Ծառայությունը վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարել է համապատասխանաբար՝ 10.000 ՀՀ դրամ և 20.000 ՀՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Հիմնադրամի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 27.05.2020 թվականի որոշումը և այն փոփոխել: Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի հայցն ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Ստեփան Բաղդասարյանի 18.09.2018 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին» որոշման կատարողական վարույթ հարուցելու մասով՝ Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի և ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԱԲԴ/5664/02/15 քաղաքացիական գործով 13.09.2018 թվականին տրված կատարողական թերթի հարկադիր պահանջի կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամից հօգուտ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՐ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԴ/0376/05/17
Ա. Թովմայան
Ա. Առաքելյան
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ ՎԴ/0376/05/17
2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի փետրվարի 23-ին
գրավոր ընթացակարգով քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղա-
քապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.10.2018 թվա-
կանի որոշման դեմ՝ ըստ հայցի Քաղաքապետարանի ընդդեմ Էրիկա Չիլինգարյանի
1.776.600 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի Էրիկա Չի-
լինգարյանի ընդդեմ Քաղաքապետարանի՝ 05.10.2016 թվականի «Վարչական տույժ նշա-
նակելու մասին» թիվ Վ-39/1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է Էրիկա Չիլինգարյանից
հոգուտ Երևան համայնքի բռնագանձել Քաղաքապետարանի աշխատակազմի հասարա-
կական կարգի պահպանության ծառայության պետ Ա. Մարտիրոսյանի 05.10.2016 թվա-
կանի թիվ Վ-39/1 որոշմամբ նշանակված 1.776.600 ՀՀ դրամ վարչական տուգանքի գու-
մարը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան Էրիկա Չիլինգարյանը խնդրել է անվավեր ճանաչել 05.10.2016 թվականի թիվ Վ-39/1 վարչական տույժ նշանակելու մասին որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) (դատավոր՝ Գ. Առաքելյան) 18.05.2017 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.10.2018 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 18.05.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Դատավոր Ա. Բաբայանը հայտնել է հատուկ կարծիք:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Էրիկա Չիլինգարյանը (ներկայացուցիչ Էռնեստ Աբելյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասը, չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, որը պետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

1) Այսպես՝ Վերաքննիչ դատարանը, որոշմամբ բողոքը մերժելու հիմքում նշել է այն հանգամանքը, որ կառուցապատող Էրիկա և Արտակ Չիլինգարյանների կողմից թույլ տրված վարչական իրավախախտման հիմքով տարբեր վարչական վարույթներով վերջիններիս վարչական պատասխանատվության ենթարկելով՝ Քաղաքապետարանի կողմից խախտվել է վարչարարության համաչափության սկզբունքը, քանզի տվյալ դեպքում, միևնույն իրավախախտումը կատարելու դեպքում միայն մեկ վարույթի շրջանակներում էր հնարավոր պատասխանատվության ենթարկել իրավախախտումը կատարած մեկից ավելի անձանց: Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի իրականացրել գործի քննությունը, որի արդյունքում կայացրել է անհիմն և սխալ դատական ակտ:

Վարչական իրավախախտման համար կոլեկտիվ և/կամ համապարտ պատասխանատվություն սահմանված չէ, ուստի վարչական պատասխանատվությունը կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ, քանի որ անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախտման համար և մեղավոր անձին վարչական պատասխանատվության ենթարկելիս պետք է գործի պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Իսկ այն պարագայում, երբ զանցանքը թույլ է տրվել մեկից ավելի անձանց կողմից, ապա յուրաքանչյուր անձի նկատմամբ սահմանված կարգով պետք է իրականացվի առանձին վարչական վարույթ՝ անհատական կրելով իր կողմից կատարված արարքի պատասխանատվությունը, հակառակ դեպքում ակտը չի պարունակի որոշակիություն՝ թե այն ում է հասցեագրված, այսինքն՝ պետք է տարբերկված լինի դրա հասցեատերը, ինչպես նաև հասցեավորվածության որոշակիության բացակայության պայմաններում, ակտից պարզ չի լինի, թե ում վրա է դրված նշված որոշմամբ նշանակված տուգանքի գումարի վճարման պարտականությունը:

2) Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ դեպքում, Դատարանը չպետք է հակընդդեմ հայցով հայցվորի կողմից Դատարանին ներկայացված «Սուֆետ» ՍՊԸ-ի կողմից կազմված ամփոփ նախահաշիվը համադրել վիճարկվող որոշման կայացման հիմքում ընկած վարչական վարույթի նյութերում առկա «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված հիշյալ օբյեկտի կառուցման վերաբերյալ կազմված նախահաշվի հետ և արդյունքում կասկածի տակ դներ տվյալ նախահաշվով ամրագրված արժեքով պայմանավորված՝ որպես տույժի կիրառման համար նախատեսված մեկ տոկոսի չափով սահմանված արժեքի գոյացման չափը և արդյունքում գերակայություն տար ամփոփ նախահաշվին:

Այնուամենայնիվ, եթե «Սուֆետ» ՍՊԸ-ի կողմից կազմված ամփոփ նախահաշվի առկայությունը որոշակի անորոշություն էր առաջացրել Դատարանի մոտ, ապա Դատարանը

գործի քննությունը պետք է իրականացնեն ի պաշտոնե, մասնավորապես՝ Դատարանը պետք է ղեկավարվեր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասով և որոշում կայացնեն սույն գործով դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին, ստանար փորձագետի եզրակացությունը և այն համադրելով գործով հավաքված մնացած ապացույցների հետ՝ կայացնեն գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.10.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժել, կամ բեկանել որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Նույն իրավախախտման համար մի քանի անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը պետք է իրականացվի իրավախախտման փաստի հիման վրա հարուցված մեկ վարչական վարույթի շրջանակներում՝ հաշվի առնելով ըստ մեղքի և անձնական պատասխանատվության սկզբունքները: Այնինչ, մեկ իրավախախտման փաստի առթիվ երկու առանձին վարչական վարույթների հարուցումը թույլ չի տվել Քաղաքապետարանին ընտրել իր լիազորությունների իրականացման այն պիտանի միջոցը, որը կապահովեր վարչարարության արդյունավետությունը, հնարավորություն կտար բացահայտել ենթադրյալ իրավախախտում կատարած անձանցից յուրաքանչյուրի մեղքի առկայությունը, ինչի արդյունքում կերաշխավորվեր նաև վարչական պատասխանատվության կիրառմամբ հետապնդվող նպատակների իրականացումը: Ինչ վերաբերում է Քաղաքապետարանի այն փաստարկին, որ Դատարանը ղեկավարվելով գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքով, պարտավոր էր նշանակել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, ապա նման փաստարկը կլիներ հիմնավոր, եթե «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից տրված նախահաշվում առկա չլինեին Դատարանի կողմից մատնանշված թերությունները, այսինքն՝ եթե նախահաշիվը պարունակեր բոլոր պարտադիր պայմանները և հակասեր «Մուֆետ» ՄՊԸ-ի կողմից կազմված ամփոփ նախահաշվին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքապետի կողմից 22.05.2015 թվականին Արտակ Չիլինգարյանին և Էրիկա Չիլինգարյանին տվել է թիվ 01/18-2-175-395 շինարարության թույլտվությունը՝ Էրեբունի վարչական շրջանի Այվագովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման աշխատանքների կատարման համար: Շինարարության թույլտվությամբ նշվել է, որ շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն 15 ամսվա ընթացքում (**հատոր 1-ին գ.թ. 20**):

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից պատվիրվել է «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին՝ քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջանի Այվագովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման նախագծի վերաբերյալ նախահաշվարկ ներկայացնելու: ՇԷԲ-ի ղեկավար Ա.Պետրոսյանի կողմից կազմվել է համաշինարարական աշխատանքների արժեքի որոշման նախահաշվարկ՝ խոշորացված ցուցանիշներով: Պահեստային շինության համաշինարարական աշխատանքների ծավալն ըստ ներկայացված նախահաշվի կազմել է 1316 մ2, միավորի արժեքը սահմանվել է 135.000 դրամ, ընդհանուր արժեքը՝ 177.660.000 դրամ (**հատոր 1-ին գ.թ. 21-23**):

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Մելիքի Սիմոնյանի կողմից 07.09.2016 թվականին կազմվել է թիվ 023981 արձանագրությունը, որով արձանագրվել է, որ հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կառուցապատումը

համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու իրավախախտում: Արձանագրության «իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը» տողում նշվել է. «Էրեբունի վարչական շրջանի Այվագովսկու փողոցի հ.6/5 և հ.6/6 հասցեներում կառուցապատող Էրիկա Չիլինգարյանին պահեստային մասնաշենքի կառուցման համար Երևանի քաղաքապետարանի կողմից 22.05.2016թ. տրված հ. 01/18-Չ-175-395 շինարարության թույլտվությամբ սահմանվել է 15 ամիս ժամկետ, սակայն սույն թվականի օգոստոսի վերջում հայտնաբերվել է, որ շինարարական օբյեկտը շահագործումն ընդունող հանձնաժողովի ակտը ձևակերպված չէ: Իրավախախտումը հայտնաբերվել է 07.09.2016թ.-ին»: Արձանագրության «տեղեկություններ խախտում կատարած ֆիզիկական անձի մասին» տողում նշվել է. «իրավախախտումը կատարվել է կառուցապատող Էրիկա Չիլինգարյանի կողմից, հասցե՝ Կոմիտասի պողոտա, 40 շենք, բնակարան 35»: Արձանագրության «կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը» տողում նշվել է. «վարույթի շրջանակում կազմակերպված քննարկմանը չներկայանալու և սույն արձանագրությունը չստորագրելու վերաբերյալ կազմված արձանագրությունը, շինարարության համապատասխան թույլտվության պատճենը և օբյեկտի լուսանկարը կցվում է» (**հատոր 1-ին գ.թ. 11-12**):

4) Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի 03.10.2016 թվականի թիվ 19/44-21099 գրության համաձայն՝ Էրիկա Չիլինգարյանին առձեռն հանձնվել է վարչական իրավախախտումների հանձնաժողովի 05.10.2016 թվականին ժամը 15:00-ին կայանալիք նիստին վերջինիս մասնակցությունն ապահովելու մասին ծանուցումը (**հատոր 1-ին գ.թ. 26**):

5) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 05.10.2016 թվականի թիվ Վ-39/1 որոշմամբ կառուցապատող Էրիկա Չիլինգարյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ նշանակվել է վարչական տույժ՝ 1.776.600 դրամի չափով՝ Այվագովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքները համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետում չավարտելու համար (**հատոր 1-ին գ.թ. 8-9**):

6) «Սուֆետ» ՄՊ ընկերության կողմից կազմվել է ամփոփ նախահաշիվ՝ ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի, Այվագովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման նախագծի վերաբերյալ, որի նախահաշվային արժեքը կազմել է 89.550.440 դրամ (**հատոր 1-ին գ.թ. 103-109**):

7) «Ա.Ռ.Մ.ՇԻՆ» ՄՊ ընկերության գլխավոր մասնագետ Ռ.Իշխանյանի կողմից 13.04.2017 թվականին տրված փորձաքննության եզրակացության համաձայն՝ ուսումնասիրելով ներկայացված պահեստային մասնաշենքի կառուցման նախագիծը և «Սուֆետ» ՄՊԸ-ի կողմից ներկայացված պահեստային մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների նախահաշիվը եզրակացրել է, որ Էրեբունի վարչական շրջանի Այվագովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում գտնվող պահեստային մասնաշենքի կառուցման նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարումը երաշխավորվում է համաձայնեցման (**հատոր 1-ին գ.թ. 110-112**):

8) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 22.09.2016 թվականի թիվ Վ-37/2 որոշմամբ կառուցապատող Արտակ Չիլինգարյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ նշանակվել է վարչական տույժ՝ 1.776.600 դրամի չափով՝ Այվագովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքները համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետում չավարտելու համար (**հատոր 1-րդ գ.թ. 77-78**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ մեկից ավելի անձանց կողմից շինարարության ժամկետները խախտելու դեպքում վերջիններիս պատասխանատվության ենթարկելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը չկիրառելու հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ պարզավոր է արդյո՞ք վարչական մարմինն իրականացնել մեկ վարչական վարույթ՝ նույն շինարարության թույլտվության ժամկետները խախտած մեկից ավելի կառուցապարտողների նկատմամբ՝ տուգանք կիրառելու համար:

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ շինարարության նախահաշվային արժեքի մեկ տոկոսի չափով:

Նշված իրավական նորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասում իրավախախտումը (զանցանքը) դրսևորվում է՝ կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, (...), սույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյո՞ք, վարչական իրավախախտում արդյո՞ք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյո՞ք, նա ենթակա է վարչական պատասխանատվության. կան, արդյո՞ք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ. պատճառով է, արդյո՞ք, գույքային վնաս, հիմքեր կան, արդյո՞ք, վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության, աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու համար,

ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Վկայակոչված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական պատասխանատվության ոլորտում գործում են «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» կարևորագույն սկզբունքները: Անձնական պատասխանատվության սկզբունքը նշանակում է, որ անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության միայն անձամբ իր կողմից կատարված զանցանքի համար: Իսկ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին:

Նմանատիպ իրավական դիրքորոշում արտահայտել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 12.10.2010 թվականի թիվ ՄԴՈ-920 որոշմամբ՝ նշելով, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Հետևաբար մեղքը՝ որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն՝ անձը ենթակա է պատասխանատվության՝ միայն անձամբ կատարած իրավախախտման համար (*լրե՛ս, Օուլինար Զարարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/5879/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը*):

Դատարանը 15.05.2017 թվականին կայացրած վճռով արձանագրել է, որ մեկից ավելի անձանց կողմից կատարված ենթադրյալ իրավախախտման հիմքով տարբեր վարչական վարույթներով Արտակ Չիլինգարյանին և Էրիկա Չիլինգարյանին վարչական պատասխանատվության ենթարկելով՝ Քաղաքապետարանի կողմից խախտվել է վարչարարության համաչափության սկզբունքը, քանզի տվյալ դեպքում, միևնույն իրավախախտումը կատարելու դեպքում միայն մեկ վարույթի շրջանակներում էր հնարավոր պատասխանատվության ենթարկել իրավախախտումը կատարած մեկից ավելի անձանց՝ տվյալ վարույթի շրջանակներում բացահայտելով յուրաքանչյուրի մեղքի առկայությունը կատարված իրավախախտման մեջ, որպիսի վարույթը կհամարվեր պիտանի և տվյալ վարույթով վարչական մարմինը կարող էր հասնել հետապնդվող նպատակին:

Նշվածի վերաբերյալ Վերաքննիչ դատարանը հավելել է, որ բացառված է մեկ իրավախախտման վերաբերյալ տարբեր վարչական վարույթների հարուցման իրավական հնարավորությունը և դրանց արդյունքում տարբեր սուբյեկտների նույն իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելը: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, նույն իրավախախտման համար մի քանի անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը պետք է իրականացվի իրավախախտման փաստի հիման վրա հարուցված մեկ վարչական վարույթի շրջանակներում՝ հաշվի առնելով ըստ մեղքի և անձնական պատասխանատվության սկզբունքները:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Դատարանի և Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսդրի կողմից սահմանված նորմերով չի բացառվում միևնույն իրավախախտումը կատարելու դեպքում իրավախախտումը կատարած մեկից ավելի անձանց առանձին վարույթների շրջանակներում

պատասխանատվության ենթարկելը: Այլ հարց է, որ պատասխանատվության ենթարկելիս վարչական մարմինը պարտավոր է յուրաքանչյուր իրավախախտի նկատմամբ ճիշտ կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջները, այդ թվում՝ ըստ մեղքի պատասխանատվության, անձնական պատասխանատվության, պատասխանատվության անհատականացման սկզբունքները:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ եթե օրենքը չի բացառում, ապա մինևնույն իրավախախտումը կատարած անձանց վարչական վարույթն իրականացնող մարմինը կարող է վարչական պատասխանատվության ենթարկել ինչպես մեկ վարույթի, այնպես էլ՝ առանձին վարույթների շրջանակներում: Սույն պարագայում վարչական մարմինն օրենքով ծանրաբեռնված է միայն պարզելու՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում, արդյոք վարչական իրավախախտում կատարած անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյոք նա ենթակա է վարչական պատասխանատվության, կան արդյոք վարչական պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ, ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Սույն գործի փաստերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Երևանի քաղաքապետի կողմից Էրիկա Չիլինգարյանին և Արտակ Չիլինգարյանին 22.05.2015 թվականին տրվել է շինարարության թույլտվություն՝ Էրեբունի վարչական շրջանի Այվազովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման աշխատանքների կատարման համար: Շինարարության թույլտվությամբ նշվել է, որ շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն 15 ամսվա ընթացքում: Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Սիմոնյանի 07.09.2016 թվականի թիվ 023981 արձանագրության համաձայն՝ Էրիկա Չիլինգարյանին պահեստային մասնաշենքի կառուցման համար Քաղաքապետարանի կողմից 22.05.2015 թվականին տրված թիվ 01/18-Չ-175-395 շինարարության թույլտվությամբ սահմանված 15 ամիս ժամկետը խախտել է և 2016 թվականի օգոստոսի վերջին շինարարական օբյեկտի շահագործումն ընդունող հանձնաժողովի ակտը ձևակերպված չէ:

Քաղաքապետարանի կողմից իրականացվող վարչական վարույթի մասին Էրիկա Չիլինգարյանը պատշաճ ձևով ծանուցվել է:

Վերոգրյալից ելնելով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմինը վարչական վարույթ իրականացնելիս պահպանել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջները, այդ թվում՝ ըստ մեղքի պատասխանատվության, անձնական պատասխանատվության, պատասխանատվության անհատականացման սկզբունքները: Ինչ վերաբերում է Արտակ Չիլինգարյանին և Էրիկա Չիլինգարյանին մեկ վարույթի շրջանակներում վարչական պատասխանատվության ենթարկելու հարցին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշվածը վարչական մարմնի հայեցողական լիազորությունն է, և եթե վարչական մարմինը վարչական վարույթն իրականացրել է՝ պահպանելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջները, ապա վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել այն հիմքով, որ վարչական պատասխանատվությունը վարչական իրավախախտում կատարած անձանց նկատմամբ կիրառվել է առանձին վարույթների շրջանակներում:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնն („ex officio“): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) առաջարկում է (...) համարել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց հանակցության մեջ բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների հանակցության բավարարության մասին (որեն *Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ5/0029/05/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել, որը կարող է հանձնարարվել կամ մասնագիտացված փորձագիտական հաստատությանը, կամ փորձագետին:

Անդրադառնալով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի գնահատման առանձնահատկություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ փորձագետի եզրակացությունը գնահատվում է ընդհանուր հիմունքներով և, ինչպես գործով ձեռք բերված ցանկացած այլ ապացույց, այն ենթակա է գնահատման գործում առկա մյուս ապացույցների հետ հանակցության մեջ, ինչը հնարավորություն է տալիս ստուգելու ոչ միայն փորձագետի

եզրակացության տրամաբանությունը, այլ նաև կատարված հետազոտության գիտական հիմնավորվածության աստիճանն ու կատարված հետևությունների լրիվությունն ու հավաստիությունը: Ընդ որում, օրենքով սահմանված ապացույցներից որևէ մեկը, այդ թվում նաև՝ փորձագետի եզրակացությունը որևէ առավելություն չունի գործում առկա մյուս ապացույցների նկատմամբ և ենթակա է գնահատման ընդհանուր կարգով՝ վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության տեսանկյունից: Այդուհանդերձ, ապացույցի յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները, ինչը կարող է պայմանավորված լինել ապացույցի կազմավորման բնույթով, աղբյուրով, արտահայտման ձևով և այլ գործոններով: Հետևաբար, անգամ ընդհանուր կարգով գնահատման անհրաժեշտ է իրականացնել այդ առանձնահատկությունների հաշվառմամբ (*տե՛ս Սաակի Ֆրանգոյանն ընդդեմ Հենրիկ Ֆրանգոյանի թիվ ԵԷԴ/1089/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

Թեև նշված իրավական դիրքորոշումն արտահայտվել է քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում, սակայն Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հավասարապես կիրառելի է նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական գործով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի գնահատման առանձնահատկությունները նույնական են:

Սույն գործով ստորադաս դատարանները փաստել են նաև, որ Քաղաքապետարանի վարչական իրավախախտումների գործերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ իրականացնող հանձնաժողովի կողմից վարչական վարույթի ընթացքում՝ շինարարության առկա նախահաշվային արժեքը բացահայտելու և ըստ դրա՝ նշանակվող տույժի չափը որոշելու նպատակով չի պարզվել կառուցապատող Էրիկա Չիլինգարյանին տրամադրված շինարարության թույլտվության հիման վրա այն կապալառու կազմակերպությունը, որը պայմանագրի հիման վրա իրականացրել է շինարարական աշխատանքները (ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կապիտալ շինարարական աշխատանքների իրականացումը /կառուցապատման աշխատանքները/ կարող է իրականացվել բացառապես լիցենզավորված անձի կողմից), դրա հետ կնքված կապալի պայմանագրի և դրանում արտացոլված պայմանագրային՝ կողմերի կողմից փոխադարձ հաստատված աշխատանքների կատարման գինը, որը կարող էր որոշված լինել նաև նախահաշիվ կազմելու միջոցով:

Մինչդեռ, Դատարանում գործի քննության ընթացքում հայցվորի կողմից ներկայացվել է «Սուֆետ» ՍՊԸ-ի կողմից կազմված ամփոփ նախահաշիվ՝ քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջանի, Այվազովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման նախագծի վերաբերյալ, որի նախահաշվային արժեքը կազմել է 89.550.440 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանը վերլուծելով ստորադաս դատարանների եզրահանգումները, նախ հարկ է համարում արձանագրել, որ Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից պատվիրվել է «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին՝ քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջանի Այվազովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման նախագծի վերաբերյալ ներկայացնել նախահաշվարկ: ՇԷԲ-ի ղեկավար Ա.Պետրոսյանի կողմից կազմված նախահաշիվ ընդհանուր արժեքը կազմել է 177.660.000 ՀՀ դրամ:

Շինարարության թույլտվություն ստացած անձ՝ Էրիկա Չիլինգարյանը որևէ կերպ 2016 թվականին «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված նախահաշիվի դեմ չի առարկել: Հետևաբար ստորադաս դատարանները որպես 22.05.2015 թվականի թիվ 01/18-Չ-175 շինարարության թույլտվության նախահաշիվ ընդունելով հակընդդեմ հայցով հայցվորի կողմից ներկայացված փորձաքննության եզրակացությունը, բավարար կերպով չեն հիմնավորել այն հանգամանքը, որ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից կազմված նախահաշիվն իրականացվել է օրենսդրական նորմերի խախտմամբ և նշված նախահաշիվը կառուցապատողի կողմից չի ընդունվել որպես շինարարության թույլտվության

նախահաշիվ: Եթե անգամ ընդունենք այն հանգամանքը, որ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից կազմված նախահաշիվի հիմքում դրվել են շուկայական գներով խոշորացված ցուցանիշներ, ապա Դատարանը պարտավոր էր գործում առկա երկու իրարից տարբերվող փաստական հանգամանքները ճշտելու նպատակով նշանակել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն: Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների արտահայտած փաստարկին առ այն, որ Քաղաքապետարանը վարչական վարույթի շրջանակներում՝ շինարարության առկա նախահաշիվային արժեքը բացահայտելու նպատակով, չի պարզել կառուցապատող Էրիկա Չիլինգարյանին տրամադրված շինարարության թույլտվության հիման վրա այն կապալառու կազմակերպությունը, որը պայմանագրի հիման վրա իրականացրել է շինարարական աշխատանքները, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախ վարչական վարույթի նյութերում արդեն իսկ առկա էր «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված նախահաշիվը, հետևաբար Քաղաքապետարանը տույժի չափը սահմանելիս հիմք է ընդունել վերոնշյալ նախահաշիվը և երկրորդ Քաղաքապետարանի կողմից շինարարության թույլտվություն տրվել է կառուցապատող Էրիկա Չիլինգարյանին և Քաղաքապետարանի լիազորության մեջ չի մտնում պարզելու, թե կառուցապատողը որ կապալառու կազմակերպության հետ կկնքի կապալի պայմանագիր՝ շինարարական աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Նշված պարճատարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասիսանում բերված փաստարկները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն դրոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերը պարզելու նպատակով, ինչպես նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.10.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/0376/05/17 վարչական գործով
23.02.2022 թվականին կայացված որոշման պատճառաբանական
և եզրակիսիչ մասերի վերաբերյալ

23.02.2022 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 23.02.2022 թվականին գրավոր ընթացակարգով քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.10.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Քաղաքապետարանի ընդդեմ Էրիկա Չիլինգարյանի 1.776.600 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի Էրիկա Չիլինգարյանի ընդդեմ Քաղաքապետարանի՝ 05.10.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-39/1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն, բեկանել Վերաքննիչ դատարանի 01.10.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյան, Ստեփան Միրայեյան և Արսեն Մկրտչյան, համաձայն գիներով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

Սույն գործը հարուցվել է Քաղաքապետարանի կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է Էրիկա Չիլինգարյանից հօգուտ Երևան համայնքի բռնագանձել Քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետ Ա. Մարտիրոսյանի 05.10.2016 թվականի թիվ Վ-39/1 որոշմամբ նշանակված 1.776.600 ՀՀ դրամ վարչական տուգանքի գումարը:

Էրիկա Չիլինգարյանը ներկայացրել է հակընդդեմ հայց՝ պահանջելով անվավեր ճանաչել 05.10.2016 թվականի թիվ Վ-39/1 վարչական տույժ նշանակելու մասին որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 18.05.2017 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Դատարանն արձանագրել է, որ մեկից ավելի անձանց կողմից կատարված ենթադրյալ իրավախախտման հիմքով տարբեր վարչական վարույթներով Արտակ Չիլինգարյանին և Էրիկա Չիլինգարյանին վարչական պատասխանատվության ենթարկելով՝ Քաղաքապետարանի կողմից խախտվել է վարչարարության համաչափության սկզբունքը, քանզի տվյալ դեպքում, մինևնույն իրավախախտումը կատարելու դեպքում միայն մեկ վարույթի շրջանակներում էր հնարավոր պատասխանատվության ենթարկել իրավախախտումը կատարած մեկից ավելի անձանց՝ տվյալ վարույթի շրջանակներում բացահայտելով յուրաքանչյուրի մեղքի առկայությունը կատարված իրավախախտման մեջ, որպիսի վարույթը կհամարվեր պիտանի և տվյալ վարույթով վարչական մարմինը կարող էր հասնել հետապնդվող նպատակին:

Վերաքննիչ դատարանի 01.10.2018 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 18.05.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ բացառված է մեկ իրավախախտման վերաբերյալ տարբեր վարչական վարույթների հարուցման իրավական հնարավորությունը և դրանց արդյունքում տարբեր սուբյեկտների նույն իրավախախտման համար

պատասխանատվության ենթարկելը: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, նույն իրավախախտման համար մի քանի անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը պետք է իրականացվի իրավախախտման փաստի հիման վրա հարուցված մեկ վարչական վարույթի շրջանակներում՝ հաշվի առնելով ըստ մեղքի և անձնական պատասխանատվության սկզբունքները:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:

Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն, բեկանել Վերաքննիչ դատարանի 01.10.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե *արդյո՞ք պարտավոր է վարչական մարմինն իրականացնել մեկ վարչական վարույթ նույն շինարարության թույլտվության ժամկետը խախտած մեկից ավելի կառուցապարտողների նկատմամբ տուգանք կիրառելու համար*, Վճռաբեկ դատարանը մասնավորապես արձանագրել է հետևյալը.

«(...) Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական պարասխանատվության ոլորտում գործում են «անձնական պարասխանատվության» և «ըստ մեղքի պարասխանատվության» կարևորագույն սկզբունքները: Անձնական պարասխանատվության սկզբունքը նշանակում է, որ անձը կարող է ենթարկվել վարչական պարասխանատվության միայն անձամբ իր կողմից կատարված զանցանքի համար: Իսկ ըստ մեղքի պարասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պարասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիմավորություն կամ անզգուշություն) հասարակված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին:

(...) օրենսդրի կողմից սահմանված նորմերով չի բացատվում միևնույն իրավախախտումը կատարելու դեպքում իրավախախտումը կատարած մեկից ավելի անձանց առանձին վարույթների շրջանակներում պարասխանատվության ենթարկելը: Այլ հարց է, որ պարասխանատվության ենթարկելիս վարչական մարմինը պարտավոր է յուրաքանչյուր իրավախախտի նկատմամբ ճիշտ կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջները, այդ թվում՝ ըստ մեղքի պարասխանատվության, անձնական պարասխանատվության, պարասխանատվության անհարականսցման սկզբունքները:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ եթե օրենքը չի բացատրում, սակայն միևնույն իրավախախտումը կատարած անձանց վարչական վարույթն իրականացնող մարմինը կարող է վարչական պարասխանատվության ենթարկել ինչպես մեկ վարույթի, այնպես էլ առանձին վարույթների շրջանակներում: Սույն պարագայում վարչական մարմինն օրենքով ծանրաբեռնված է միայն պարզելու՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում, արդյոք վարչական իրավախախտում կատարած անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյոք նա ենթակա է վարչական պարասխանատվության, կան արդյոք վարչական պարասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ, ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

(...) վարչական մարմինը վարչական վարույթ իրականացնելիս պահպանել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջները, այդ թվում՝ ըստ մեղքի պարասխանատվության, անձնական պարասխանատվության, պարասխանատվության անհարականսցման սկզբունքները: Ինչ վերաբերում է Արտակ Չիլինգարյանին և Էրիկա Չիլինգարյանին մեկ վարույթի շրջանակներում վարչական պարասխանատվության ենթարկելու հարցին, սակայն (...) նշվածը վարչական մարմնի հայեցողական լիազորությունն է, և եթե վարչական մարմինը վարչական վարույթն իրականացրել է՝ պահպանելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջները, սակայն վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել այն հիմքով, որ վարչական պարասխանատվությունը վարչական իրավախախտում կատարած անձանց նկատմամբ կիրառվել է առանձին վարույթների շրջանակներում:

(...) Սույն գործով արտոթաս դատարանները փաստել են նաև, որ Քաղաքապետարանի վարչական իրավախախտումների գործերով հարուցված վարչական վարույթի

շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ իրականացնող հանձնաժողովի կողմից վարչական վարույթի ընթացքում շինարարության առկա նախահաշվային արժեքը բացահայտելու և ըստ դրա՝ նշանակվող րոյտի չափը որոշելու նպատակով չի պարզվել կառուցապարտող Էրիկա Չիլինգարյանին տրամադրված շինարարության թույլտվության հիման վրա այն կապալառու կազմակերպությունը, որը պայմանագրի հիման վրա իրականացրել է շինարարական աշխատանքները (ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կապիտալ շինարարական աշխատանքների իրականացումը /կառուցապարման աշխատանքները/ կարող է իրականացվել բացառապես լիցենզավորված անձի կողմից), դրա հետ կնքված կապալի պայմանագրի և դրանում ար-
 ւացողված պայմանագրային կողմերի կողմից փոխադարձ հասարակված աշխատանքների կատարման գինը, որը կարող էր որոշված լինել նաև նախահաշիվ կազմելու միջոցով:

Մինչդեռ, Դատարանում գործի քննության ընթացքում հայցվորի կողմից ներկայաց-
 վել է «Սուֆեռ» ՍՊԸ-ի կողմից կազմված ամփոփ նախահաշիվ՝ քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջանի, Այվազովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման նախագծի վերաբերյալ, որի նախահաշվային արժեքը կազմել է 89.550.440 ՀՀ դրամ:

(...) Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից պարվորվել է «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջանի Այվազովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մաս-
 նաշենքի կառուցման նախագծի վերաբերյալ ներկայացնել նախահաշվարկ: ՇԷԲ-ի ղեկավար Ա.Պետրոսյանի կողմից կազմված նախահաշվի ընդհանուր արժեքը կազմել է 177.660.000 ՀՀ դրամ:

Շինարարության թույլտվություն ստացած անձ՝ Էրիկա Չիլինգարյանը որևէ կերպ 2016 թվականին «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված նախահաշվի դեմ չի առարկել: Հետևաբար արդարապես դատարանները որպես 22.05.2015 թվականի թիվ 01/18-Չ-175 շինարարության թույլտվության նախահաշիվ ընդունելով հակընդդեմ հայցով հայցվորի կողմից ներկայացված փորձաքննության եզրակացությունը, բավարար կերպով չեն հիմնավորել այն հանգամանքը, որ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից կազմված նախահաշիվ իրականաց-
 վել է օրենսդրական նորմերի խախտմամբ և նշված նախահաշիվը կառուցապարտողի կողմից չի ընդունվել որպես շինարարության թույլտվության նախահաշիվ: Եթե անգամ ընդունենք այն հանգամանքը, որ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից կազմված նախահաշիվ հիմքում դրվել են շուկայական գներով խոշորացված ցուցանիշներ, սպա Դատարանը պարտավոր էր գործում առկա երկու իրարից տարբերվող փաստական հանգամանքները ճշտելու նպատակով նշանակել դատաշինարարաբեհմիկական փորձաքննություն: Ինչ վերաբերում է արդարապես դատարանների արդարապես փաստարկին առ այն, որ Քաղաքապետարանը վարչական վարույթի շրջանակներում՝ շինարարության առկա նախահաշվային արժեքը բացահայտելու նպատակով, չի պարզել կառուցապարտող Էրիկա Չիլինգարյանին տրամադրված շինարարության թույլտվության հիման վրա այն կապալառու կազմակերպությունը, որը պայմանագրի հիման վրա իրականացրել է շինարարական աշխատանքները, սպա (...)
 նախ վարչական վարույթի նյութերում արդեն իսկ առկա էր «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կող-
 մից տրամադրված նախահաշիվը, հետևաբար Քաղաքապետարանը րոյտի չափը սահմանելիս հիմք է ընդունել վերոնշյալ նախահաշիվը և երկրորդ Քաղաքապետարանի կողմից շինարարության թույլտվություն տրվել է կառուցապարտող Էրիկա Չիլինգարյանին և Քաղաքապետարանի լիազորության մեջ չի մերժում պարզելու, թե կառուցապարտողը որ կապալա-
 ռու կազմակերպության հետ կկնքի կապալի պայմանագիր՝ շինարարական աշխատանքներն իրականացնելու նպատակով»:

Համակարծիք չենք Վճռաբեկ դատարանի այն իրավական դիրքորոշման հետ, ըստ որի՝ օրենսդրի կողմից սահմանված նորմերով չի բացատրվում միևնույն իրավախախտումը կատարելու դեպքում իրավախախտումը կատարած մեկից ավելի անձանց առանձին վարույթների շրջանակներում պարտականաբարության ենթարկելը:

Գտնում ենք, որ միևնույն իրավախախտումը կատարելու դեպքում իրավախախ-
 տումը կատարած մեկից ավելի անձանց առանձին վարույթների շրջանակներում

պատասխանատվության ենթարկելն օրենսդրի կողմից սահմանված նորմերով բացառված չլինելը դեռևս չի նշանակում, որ օրենսդիրը թույլատրելի է համարել միևնույն իրավախախտումը կատարելու դեպքում իրավախախտումը կատարած մեկից ավելի անձանց առանձին վարույթների շրջանակներում պատասխանատվության ենթարկելը: Վարչական մարմինների կողմից կատարման ենթակա գործողությունները ոչ թե չպետք է բացառված լինեն օրենսդրությամբ, այլ ուղղակի սահմանված լինեն օրենքով: Ըստ այդմ, գտնում ենք, որ միևնույն իրավախախտումը կատարելու դեպքում իրավախախտումը կատարած մեկից ավելի անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության նպատակով պետք է հարուցվեր մեկ վարչական վարույթ և այդ վարույթի շրջանակներում որոշվեր վարչական պատասխանատվություն կիրառելու համար բավարար հիմքերի առկայության կամ բացակայության հարցը:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումն հիմնավորվում է հետևյալով.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, (...), նույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ **կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում**. արդյոք, **ավյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ**. արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության. կան, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ. պատճավել է, արդյոք, գույքային վնաս, հիմքեր կան, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության, աշխատավորական կոնկրետի քննությանը հանձնելու համար, ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Համակարծիք ենք Վճռաբեկ դատարանի այն իրավական դիրքորոշման հետ, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական պատասխանատվության ոլորտում գործում են «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» կարևորագույն սկզբունքները: Անձնական պատասխանատվության սկզբունքը նշանակում է, որ անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության միայն անձամբ իր կողմից կատարված զանցանքի համար: Բսկ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգույշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին:

Միևնույն ժամանակ, սակայն, գտնում ենք, որ որոշ իրավախախտումների պարագայում վարչական պատասխանատվության հարցի լուծման համար էական նշանակություն ունեն ոչ միայն «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» կարևորագույն սկզբունքները, այլ նաև իրավախախտման բնույթն ու դրա համար պատասխանատվություն նախատեսող կոնկրետ իրավանորմի դիսպոզիցիան ու սանկցիան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական

գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ շինարարության նախահաշվային արժեքի մեկ տոկոսի չափով:

Փաստորեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում իրավախախտումը (գանցանքը) դրսևորվում է՝ կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում **չավարտելով**, որի համար նույն հոդվածի սանկցիայով սահմանված է վարչական պատասխանատվություն՝ տուգանքի նշանակում շինարարության նախահաշվային արժեքի **մեկ տոկոսի չափով**:

Այսպիսով, քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում կառուցապատումը չավարտելու համար վերոնշյալ իրավանորմով օրենսդիրը սահմանել է տուգանքի հստակ չափ՝ շինարարության նախահաշվային արժեքի **մեկ տոկոսը, ուստի նշված իրավանորմի դիսպոզիցիայի և սանկցիայի սահմաններում էլ պետք է լուծվի վարչական պատասխանատվություն կիրառելու հարցը՝ անձնական պատասխանատվության և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքների հաշվառմամբ**: Այլ կերպ ասած Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման համար վարչական պատասխանատվություն նախատեսելու առումով օրենսդրի կամքը դրսևորվել է շինարարության նախահաշվային արժեքի մեկ տոկոսի չափով տուգանք նշանակելու իրավակարգավորմամբ՝ անկախ նրանից, թե քանի անձի կողմից է կատարվել տվյալ իրավախախտումը:

Գտնում ենք, որ մեկից ավելի կառուցապատողների կողմից կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու դեպքում առանձին վարչական վարույթների միջոցով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայի շրջանակներում նախատեսված տուգանքը կառուցապատողներից յուրաքանչյուրի նկատմամբ առանձին-առանձին կիրառելը հակասում է ոչ միայն օրենսդրի կամքին, այլ նաև համաչափության սկզբունքին:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է համաչափության սկզբունքին՝ արձանագրելով, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունների և պատասխանատվության տեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանման (...) իր լիազորությունն իրականացնելիս օրենսդիրն ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը, սահմանում է վարչական պատասխանատվության միջոցներն ու չափերը: Նշված հարցերում օրենսդրի հայեցողությունը, սակայն, ունի իր սահմանադրական շրջանակները, և օրենսդիրն իր նշված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է առանձին սահմանադրական սկզբունքներով: (...) հանրային իշխանության իրականացումը նախնառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է ընդհանրապես իրավաբանական պատասխանատվության և, մասնավորապես՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը (...) (յրեն՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-920 որոշումը), համաչափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև (...) (յրեն՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-924 որոշումը), անձի սեփականության իրավունքին միջամտությունը պետք է բխի տվյալ անձի կողմից տուգանքի և (...) վճարի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից, պետք է լինի բավարար և անհրաժեշտ այդ նպատակին հասնելու համար, (...) (յրեն՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-1153 որոշումը), (...) օրենսդրի կողմից ընտրված միջոցը պետք է նաև անհրաժեշտ լինի: Միջոցն անհրաժեշտ է, եթե չկա մեկ այլ՝ ավելի մեղմ միջամտող միջոց, որով նույն

արդյունավետությամբ կարելի է հասնել նպատակին (*տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՌ-1448 որոշումը*):

Համաչափության սկզբունքին անդրադարձել է նաև Եվրոպական դատարանը՝ այն մեկնաբանելով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման թույլատրելիության սահմանների որոշման նպատակով: Համաչափության սկզբունքն իրենից ներկայացնում է «արդարացի հավասարակշռության որոնում հասարակության շահերով թելադրված պահանջների և անձի հիմնական իրավունքների պաշտպանության պահանջների միջև (*CASE OF SOERING V. THE UNITED KINGDOM, գանգառ թիվ 14038/88, 07.07.1989 թ. վճիռ, կետ 89*): « (...) դատարանը պետք է որոշի, թե արդյո՞ք պահպանված է հասարակության շահերի և անհատի հիմնական իրավունքների պաշտպանության միջև համաչափությունը (*CASE OF THE FORMER KING OF GREECE & OTHERS V. GREECE, գանգառ թիվ 25701/94, 23.11.2000 թ. վճիռ, կետ 89*):

Եվրոպական դատարանը կարևորել է նաև հետապնդվող նպատակի և կիրառվող միջոցի միջև համաչափության պահպանման հարցը (*CASE OF PRESSOS COMPANIA NAVIERA S.A. AND OTHERS V. BELGIUM, գանգառ թիվ 17849/91, 20.11.1995 թ. վճիռ, կետ 38*): Միաժամանակ, Եվրոպական դատարանը արտահայտել է դիրքորոշում առ այն, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է համաչափ լինեն հանգամանքներին, որպեսզի չտուճահարվեն սահմանադրական արժեքները (*CASE OF GRIGORIADES V. GREECE, գանգառ թիվ 121/1996/740/939, 25.11.1997 թ. վճիռ*):

Դատարանը միջամտությունը պետք է դիտարկի գործի ողջ հանգամանքների լույսի ներքո: Մասնավորապես, պետք է որոշվի արդյո՞ք կատարված միջամտությունը համաչափ է հետապնդվող իրավազգափ նպատակին (*CASE BARFOD V. DENMARK, գանգառ թիվ 11508/85, 22.02.1989 թ. վճիռ, § 28*):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը համարվում է պատասխանատվության միջոց և կիրառվում է, նպատակ ունենալով վարչական իրավախախտում կատարած անձին դատախարակել (...) օրենքները պահպանելու, (...) համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել ինչպես իր իսկ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը:

Գտնում ենք, որ վերոգրյալ իրավանորմով սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև արդարացի հավասարակշռությունն ապահովելու տեսանկյունից մեկից ավելի կառուցապատողների կողմից կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու դեպքում առանձին վարչական վարույթներ հարուցելու և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայի շրջանակներում նախատեսված տուգանքը կառուցապատողներից յուրաքանչյուրի նկատմամբ առանձին-առանձին կիրառելն ընդունելի չի կարող լինել, քանի որ **տուգանքի չափը փաստացի կարող է գերազանցել նշված իրավանորմով սահմանված չափը՝ խաթարելով այդ չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև արդարացի հավասարակշռությունը, քանի որ որոշ դեպքերում, կառուցապատողների թվով պայմանավորված (օրինակ կառուցապատողների թիվը 10 կամ ավելին լինելու դեպքում) տուգանքի չափը կարող է գերազանցել նույնիսկ շինարարության նախահաշվային արժեքի չափը**:

Հարկ ենք համարում հատուկ արձանագրել նաև, որ մեկից ավելի կառուցապատողների կողմից կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու դեպքն արձանագրելու հիմքով պետք է հարուցվեն ոչ թե մեկից ավելի, մասնավորապես կառուցապատողների թվին համապատասխան վարչական վարույթներ, այլ մեկ, մասնավորապես կատարված իրավախախտման թվին համապատասխան վարչական վարույթ, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման բնույթն ու դրա համար

պատասխանատվություն նախատեսող իրավանորմի դիսպոզիցիան ու սանկցիան հաշվի առնելով միայն կարող է ապահովվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելու, գործը օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելու, ընդունված որոշման կատարումն ապահովելու, ինչպես նաև վարչական իրավախախտումների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելու, իրավախախտումները կանխելու, քաղաքացիներին օրենքները պահպանելու ոգով դաստիարակելու, օրինականությունն ամրապնդելու վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրների լուծումը: Հակառակ պարագայում, այն է՝ կառուցապատողների թվին համապատասխան թվով հարուցված վարչական վարույթներով չեն կարող ապահովվել ոչ միայն վերոգրյալ խնդիրների լուծումները, այլ նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության նկատմամբ այլ իրավակարգավորումների պահանջները: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման քնույթն ու դրա համար պատասխանատվություն նախատեսող իրավանորմի դիսպոզիցիան ու սանկցիան հաշվի առնելով կառուցապատողների թվին համապատասխան թվով հարուցված վարչական վարույթներով հնարավոր չէ ամբողջական պարզել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը բացառող հանգամանքները (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդված), վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնել քաղաքացիների հավասարության սկզբունքներով (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 248-րդ հոդված), վարչական վարույթում ապացույցները գնահատել գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդված), քանի որ հնարավոր չէ նախապես կանխորոշել տարբեր վարույթներում կատարվող վերոհիշյալ գործողությունների ընթացքը ու ապահովել միևնույն փաստական հանգամանքներին վերաբերող ապացույցների համանման գնահատումն ու դրա հիման վրա կատարվող եզրահանգումը: Բացի այդ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարչական վարույթը հարուցվում է վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմմամբ, հետևաբար չի կարող կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու դեպքի վերաբերյալ կազմվել մեկից ավելի արձանագրություններ և դրանց հիման վրա հարուցվել մեկից ավելի վարչական վարույթներ ու համապատասխանաբար ընդունվել մեկից ավելի վարչական ակտեր: Նշվածը կհակասի նաև վարչարարության տնտեսվարության սկզբունքին, քանի որ մեկ վարույթի փոխարեն մի քանի վարույթներ իրականացնելու պատճառով չի կարող ապահովվել վարչական մարմնի տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետի կողմից 22.05.2015 թվականին Արտակ Զիլինգարյանին և Էրիկա Զիլինգարյանին տրվել է թիվ 01/18-Չ-175-395 շինարարության թույլտվությունը՝ Էրեբունի վարչական շրջանի Այվազովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման աշխատանքների կատարման համար: Շինարարության թույլտվությամբ նշվել է, որ շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն **15 ամսվա ընթացքում (հատոր 1-ին գ.թ. 20):**

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին պատվիրվել է ներկայացնել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Այվազովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման նախագծի վերաբերյալ նախահաշիվ: ՇԷԲ-ի պետ Ա.Պետրոսյանի կողմից կազմվել է համաշինարարական աշխատանքների արժեքի որոշման նախահաշիվարկ խոշորացված ցուցանիշներով: Պահեստային շինության համաշինարարական աշխատանքների ծավալն ըստ ներկայացված նախահաշիվի

կազմել է 1316 մ2, միավորի արժեքը սահմանվել է 135.000 դրամ, ընդհանուր արժեքը՝ 177.660.000 դրամ (**հատոր 1-ին գ.թ. 21-23**):

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Մելիքի Սիմոնյանի կողմից 07.09.2016 թվականին կազմվել է թիվ 023981 արձանագրությունը, որով արձանագրվել է, որ հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու իրավախախտում: Արձանագրության «իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը» տողում նշվել է. «Էրեբունի վարչական շրջանի Այվազովսկու փողոցի հ.6/5 և հ.6/6 հասցեներում կառուցապատող Էրիկա Չիլինգարյանին պահեստային մասնաշենքի կառուցման համար Երևանի քաղաքապետարանի կողմից 22.05.2016թ. տրված հ. 01/18-Չ-175-395 շինարարության թույլտվությամբ սահմանվել է 15 ամիս ժամկետ, սակայն սույն թվականի օգոստոսի վերջում հայտնաբերվել է, որ շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը ձևակերպված չէ: Իրավախախտումը հայտնաբերվել է 07.09.2016թ.-ին»: Արձանագրության «տեղեկություններ խախտում կատարած ֆիզիկական անձի մասին» տողում նշվել է. «իրավախախտումը կատարվել է կառուցապատող Էրիկա Չիլինգարյանի կողմից, հասցե՝ Կոմիտասի պողոտա, 40 շենք, բնակարան 35»: Արձանագրության «կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը» տողում նշվել է. «վարույթի շրջանակում կազմակերպված քննարկմանը չներկայանալու և սույն արձանագրությունը չստորագրելու վերաբերյալ կազմված արձանագրությունը, շինարարության համապատասխան թույլտվության պատճենը և օբյեկտի լուսանկարը կցվում է» (**հատոր 1-ին գ.թ. 11-12**):

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 05.10.2016 թվականի թիվ Վ-39/1 որոշմամբ կառուցապատող Էրիկա Չիլինգարյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ նշանակվել է վարչական տույժ՝ 1.776.600 դրամի չափով՝ Այվազովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքները համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետում չավարտելու համար (**հատոր 1-ին գ.թ. 8-9**):

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 22.09.2016 թվականի թիվ Վ-37/2 որոշմամբ կառուցապատող Արտակ Չիլինգարյանը ևս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ նշանակվել է վարչական տույժ՝ 1.776.600 դրամի չափով՝ Այվազովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքները համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետում չավարտելու համար (**հատոր 1-րդ գ.թ. 77-78**):

Համադրելով վերոգրյալ փաստերը՝ հանգում ենք այն հետևության, որ Երևանի քաղաքապետի կողմից 22.05.2015 թվականին տրված թիվ 01/18-Չ-175-395 շինարարության թույլտվության համաձայն՝ Էրեբունի վարչական շրջանի Այվազովսկու փողոցի թիվ 6/5 և թիվ 6/6 հասցեներում պահեստային մասնաշենքի կառուցապատողներ են հանդիսացել Արտակ Չիլինգարյանը և Էրիկա Չիլինգարյանը: Վերջիններս համատեղ ստանձնել են շինարարական աշխատանքները **15 ամսվա ընթացքում** իրականացնելու պարտականություն: Նշված պարտականությունը չկատարելու հետևանքով Արտակ Չիլինգարյանն ու Էրիկա Չիլինգարյանը թույլ են տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիացիայում նախատեսված իրավախախտում, որի համար նույն հոդվածի սանկցիայով սահմանված է վարչական պատասխանատվություն՝ տուգանքի նշանակում՝ շինարարության նախահաշվային արժեքի մեկ տոկոսի չափով:

Վերոգրյալ իրավախախտման դեպքի առթիվ Երևանի քաղաքապետարանի կողմից հարուցվել են երկու առանձին վարույթներ, դրանցից յուրաքանչյուրով Արտակ Չիլինգարյանի և Էրիկա Չիլինգարյանի նկատմամբ կիրառելով վարչական պատասխանատվություն՝ նշանակելով տուգանք՝ 1.776.600-ական ՀՀ դրամի չափով՝ հիմք ընդունելով վարչական վարույթում ձեռք բերված ապացույցներով որոշված շինարարության նախահաշվային արժեքը, որը կազմել է 177.660.000 դրամ:

Գտնում ենք, որ նշանակված տուգանքը չի համապատասխանում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում նշված չափին և խախտում է վարչական պատասխանատվության համաչափության սկզբունքը, քանի որ նույն իրավախախտման համար երկու առանձին վարույթներով նշանակված **տուգանքի չափն իրականում, փաստացի կազմում է ոչ թե շինարարության նախահաշվային արժեքի մեկ տոկոսը, այլ դրա կրկնապատիկը:** Ընդ որում, վարչական մարմնի և ՎՃՈաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ տուգանքի չափը իրականում, փաստացի կարող էր կազմել նույնիսկ 10 տոկոսից ավելին, եթե հանկարծ կառուցապատողները երկուսի փոխարեն լինեին տասներկուսը:

Վերոգրյալի հաշվառմամբ իրավաչափ ենք համարում ստորադաս դատարանների այն իրավական դիրքորոշումները, որ մեկից ավելի անձանց կողմից կատարված ենթադրյալ իրավախախտման հիմքով տարբեր վարչական վարույթներով Արտակ Չիլինգարյանին և Էրիկա Չիլինգարյանին վարչական պատասխանատվության ենթարկելով՝ Քաղաքապետարանի կողմից խախտվել է վարչարարության համաչափության սկզբունքը, քանզի տվյալ դեպքում, նույն իրավախախտումը կատարելու դեպքում միայն մեկ վարույթի շրջանակներում էր հնարավոր պատասխանատվության ենթարկել իրավախախտումը կատարած մեկից ավելի անձանց՝ տվյալ վարույթի շրջանակներում բացահայտելով յուրաքանչյուրի մեղքի առկայությունը կատարված իրավախախտման մեջ, որպիսի վարույթը կհամարվեր պիտանի և տվյալ վարույթով վարչական մարմինը կարող էր հասնել հետապնդվող նպատակին: Բացառված է մեկ իրավախախտման վերաբերյալ տարբեր վարչական վարույթների հարուցման իրավական հնարավորությունը և դրանց արդյունքում տարբեր սուբյեկտների մեկ իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելը: Նույն իրավախախտման համար մի քանի անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը պետք է իրականացվի իրավախախտման փաստի հիման վրա հարուցված մեկ վարչական վարույթի շրջանակներում՝ հաշվի առնելով ըստ մեղքի և անձնական պատասխանատվության սկզբունքները: Ըստ այդմ համակարծիք չենք ՎՃՈաբեկ դատարանի այն իրավական դիրքորոշման հետ, համաձայն որի՝ Արտակ Չիլինգարյանին և Էրիկա Չիլինգարյանին մեկ վարույթի շրջանակներում վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը վարչական մարմնի հայեցողական լիազորությունն է, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով վարչական մարմնին վերապահված չէ նույն օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը մեկից ավելի վարչական վարույթներով իրականացնելու լիազորություն, որպիսի պարագայում միայն վարչական մարմինը կարող էր իրացնել իր հայեցողական լիազորությունը և ընտրել մեկ կամ մեկից ավելի վարչական վարույթ հարուցելու օրենքով նախատեսված իրավաչափ լուծումներից մեկը:

Թեև սույն հատուկ կարծիքում շարադրել ենք մեր իրավական դիրքորոշումն առ այն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման համար վարչական պատասխանատվություն նախատեսելու առումով օրենսդրի կամքը հստակ է, որ դրսևորվել է շինարարության նախահաշվային արժեքի մեկ տոկոսի չափով տուգանք նշանակելու իրավակարգավորմամբ՝ անկախ նրանից, թե քանի անձի կողմից է կատարվել տվյալ իրավախախտումը, ինչպես նաև այն, որ նշված իրավախախտումն արձանագրելու հիմքով կարող է իրականացվել մեկ վարչական վարույթ (մեկ իրավախախտում, մեկ վարչական վարույթ), այդուհանդերձ, եթե անգամ վերոգրյալ իրավանորմում սահմանված

կարգավորումները հստակության առումով կասկած են հարուցել, ապա Վճռաբեկ դատարանը պետք է առաջնորդվեր Եվրոպական դատարանի այն իրավական դիրքորոշումներով, ըստ որի՝ օրենսդրական կարգավորման ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով:

Այսպես. ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (...) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (յրեն ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2006 թվականի թիվ ՄՌՈ-630 որոշումը), իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը (յրեն ՀՀ սահմանադրական դատարանի 13.05.2008 թվականի թիվ ՄՌՈ-753 որոշումը), իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրատ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը (յրեն ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2014 թվականի թիվ ՄՌՈ-1148 որոշումը), իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարբերակի մեկնաբանությունների կամ շփոթության (յրեն ՀՀ սահմանադրական դատարանի 02.12.2014 թվականի թիվ ՄՌՈ-1176 որոշումը), առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (յրեն ՀՀ սահմանադրական դատարանի 09.06.2015 թվականի թիվ ՄՌՈ-1213 որոշումը), նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրոյիսների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձակապես անցվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով (յրեն ՀՀ սահմանադրական դատարանի 03.05.2016 թվականի թիվ ՄՌՈ-1270 որոշումը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նույնպես իր վճիռներում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի գործով (*Case of Busuioac v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004*) վճռում Եվրոպական դատարանը գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն

տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում որջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները:

Եվրոպական դատարանը բազմիցս դիրքորոշում է արտահայտել նաև առ այն, որ՝ «չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ, անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց. իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով հաճախ օրենքներում առկա են եզրույթներ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է» (*The Sunday Times v. the United Kingdom, application no. 6538/74, 26/04/79, § 49; Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004*):

Եվրոպական դատարանը բազմիցս դիրքորոշում է արտահայտել առ այն, որ՝ «չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ, անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց. իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով հաճախ օրենքներում առկա են եզրույթներ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է» (*The Sunday Times v. the United Kingdom, application no. 6538/74, 26/04/79, § 49; Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումներից բխում է, որ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ **ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ և ճշգրտությամբ**, ինչի հետևանքով քաղաքացին չի կարողանում դրա հետ համատեղել և դրան համապատասխանեցնել իր վարքագիծն ու կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել կոնկրետ գործողությունը, **բավականաչափ մատչելի չէ**, ինչի հետևանքով քաղաքացին հնարավորություն չունի համապատասխան հանգամանքներում կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Այսինքն՝ օրենքը պետք է լինի հստակ, որոշակի և չհանգեցնի տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության, իսկ եթե այդուհանդերձ օրենքի ձևակերպումները տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության տեղիք են տալիս, ապա այդ խնդիրը պետք է լուծվի կայուն դատական պրակտիկա ձևավորելու միջոցով:

Ըստ այդմ գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանը պետք է առաջնորդվեր վերոգրյալ իրավական դիրքորոշումներով և համապատասխան մեկնաբանությամբ լրացներ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1541-րդ հոդվածի 1-ին մասի ոչ բավարար հստակությունը՝ նշված իրավանորմի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտումը մեկից ավելի սուբյեկտների կողմից կատարված լինելու պարագայում նրանց նկատմամբ նույն իրավանորմի սանկցիայով նախատեսված պատասխանատվությունը համապարտությամբ կիրառելի լինելու մասին:

Այսպիսով, գտնում ենք, որ Դատարանը, մերժելով Քաղաքապետարանի հայցն ընդդեմ Էրիկա Չիլինգարյանի թիվ Վ-39/1 որոշմամբ նշանակված 1.776.600 ՀՀ դրամ վարչական տուգանքի գումարը բռնագանձելու պահանջի մասին ու բավարարելով Էրիկա Չիլինգարյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Քաղաքապետարանի՝ 05.10.2016 թվականի թիվ Վ-39/1 վարչական տույժ նշանակելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են օրինական և հիմնավորված դատական ակտեր, հետևաբար գտնում ենք, որ վճռաբեկ բողոքով ներկայացված փաստարկները բավարար չեն Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, որպիսի պարագայում տվյալ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված վճռաբեկ բողոքը մերժելու և դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Ս. Միքայելյան
Ա. Մկրտչյան

**6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/2664/05/15**
2022թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/2664/05/15**
Նախագահող դատավոր՝ **Ա. Բաբայան**
Դատավորներ՝ **Ա. Առաքելյան**
Ա. Թովմասյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2022 թվականի ապրիլի 04-ին

գրավոր ընթացակարգով քննելով Ադասի Ավետիսյանի և Մկրտիչ Ավետիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.06.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ադասի Ավետիսյանի և Մկրտիչ Ավետիսյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), երրորդ անձինք Հունան Ավետիսյանի, Հեղինե Ավետիսյանի, Լուսինե Ավետիսյանի, Ջեմմա Ավետիսյանի, Սուրեն Ավետիսյանի, Հրայր Խաչատրյանի և «Եվրովերելակ» ՍՊԸ-ի՝ Ծառայության Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի 03.02.2015 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ աճուրդի արդյունքում 04.05.2015 թվականին կնքված թիվ 971 առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Հրայր Խաչատրյանի անվամբ 25.05.2015 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Աղասի Ավետիսյանը և Մկրտիչ Ավետիսյանը պահանջել են ոչ իրավաչափ ճանաչել Ծառայության Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի 03.02.2015 թվականի արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու գործողությունները և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 03.02.2015 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը, աճուրդի արդյունքում 04.05.2015 թվականին կնքված թիվ 971 առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Հրայր Խաչատրյանի անվամբ 25.05.2015 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը կամ անվավեր ճանաչել Ծառայության Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի 03.02.2015 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել աճուրդի արդյունքում 04.05.2015 թվականին կնքված թիվ 971 առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Հրայր Խաչատրյանի անվամբ 25.05.2015 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 19.12.2016 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը Ծառայության Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի 03.02.2015 թվականի արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք՝ 03.02.2015 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը, աճուրդի արդյունքում 04.05.2015 թվականին կնքված թիվ 971 առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Հրայր Խաչատրյանի անվամբ 25.05.2015 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասով, կարճվել է:

Դատարանի նույն թվականի վճռով հայցը՝ Ծառայության Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի 03.02.2015 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ աճուրդի արդյունքում 04.05.2015 թվականին կնքված թիվ 971 առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Հրայր Խաչատրյանի անվամբ 25.05.2015 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.06.2018 թվականի որոշմամբ Աղասի Ավետիսյանի և Մկրտիչ Ավետիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.12.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Աղասի Ավետիսյանը և Մկրտիչ Ավետիսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ծառայությունը (ներկայացուցիչ՝ Ժաննա Մկրտչյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 6-րդ, 10-րդ, 28-րդ, 75-րդ, հոդվածները, «Դատարանի ակտիվի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ, 28-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Թիվ ԿԴԼ/0020/02/14 քաղաքացիական գործով «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի պահանջն ուղղված է եղել «Եվրովերելակ» ՍՊԸ-ի, Հունան Սուրենի Ավետիսյանի, Հեղինե Արամայիսի Ավետիսյանի, Զեմնա Գևորգի Ավետիսյանի, Մկրտիչ Ավետիսյանի, Աղասի

Ավերիսյանի, Սուրեն Հովակի Ավետիսյանի, Լուսինե Ավետիսյանի, Հեղինե Ավետիսյանի դեմ, որն էլ ամբողջությամբ բավարարվել է, հետևաբար սույն գործով հայցվորները հանդիսացել են քաղաքացիական գործով պատասխանողներ, իսկ կատարողական վարույթով՝ պարտապաններ: Ուստի հարկադիր կատարողը պարտավոր էր կատարողական գործողությունների ընթացքում իր կողմից կայացված որոշումների պատճենները դրանց կայացումից հետո՝ ետօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկել վերջիններին, ինչը, սակայն, չի կատարել: Օրենքով սահմանված կարգով ծանուցված չլինելու պարագայում հայցվորները գրկված են եղել կատարողական գործողությունների շրջանակներում օգտվելու «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ և այլ հոդվածներով սահմանված կատարողական վարույթի կողմի իրավունքներից:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ «հարկադիր կատարողի որոշման պատճենը, ոչ ուշ, քան որոշումը կայացնելուց հետո՝ ետօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկվում է պահանջատիրոջը և պարտապանին, ինչպես նաև սույն **օրենքով նախատեսված այլ անձանց** և մարմիններ» հոդվածը իրավակիրառ պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության մասով, հակասում է ՀՀ Սահմանադրության 10-րդ, 60-րդ և 61-րդ հոդվածներին՝ այնքանով, որքանով չի համապատասխանում սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման և պաշտպանության սահմանադրական մոտեցումներին, մասնավորապես՝ չի ապահովում կատարողական թերթով պարտապան չհանդիսացող, սակայն գրավի առարկայի վրա բռնագանձում տարածվող գույքի սեփականատեր հանդիսացող անձանց ծանուցման իրական հնարավորությունը իրավակիրառ պրակտիկայում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ պարտապանին պատշաճ ձևով ծանուցելու օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ և հետապնդում է պարտապանի նաև այլ իրավունքների իրականացման ապահովման նպատակ: Սույն վարչական գործով Ծառայությունը հրապարակային սակարկության կարգով բռնագանձել է հայցվորների գույքը, ինչի մասին վերջիններս չեն ծանուցվել, չեն ուղարկվել բռնագանձման ծանուցագրեր, որի արդյունքում հայցվորները, որպես տան՝ գրավի առարկայի համասեփականատերեր, գրկվել են հարկադիր կատարողի գործողությունները վիճարկելու իրական հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.06.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ փոփոխել՝ հայցն ամբողջությամբ բավարարել:

2.1. Վճարակ բողոքի պարտասխանի հիմնավորումները

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը ունի հստակ կարգավորում առ այն, որ կատարողական վարույթում ընդգրկվում և մասնակից են դարձվում կատարողական թերթով որպես պահանջատեր և պարտապան նշված անձինք, իսկ անհրաժեշտության դեպքերում նաև խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչներ: Հարկադիր կատարողն իրավունք չունի ինքնիրավչություն դրսևորել և կատարողական վարույթին ներգրավել պարտապան կամ պահանջատեր չհանդիսացող կամ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով չնախատեսված անձանց: Հետևաբար Վերաքննիչ դատարանը, իրավացիորեն գնահատելով գործում առկա բոլոր ապացույցները և իրականացնելով գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, եկել է ճիշտ եզրահանգման:

3. Վճարակ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԿԴԿ/0020/02/14 քաղաքացիական գործով 14.01.2014 թվականին տրված կատարողական թերթերի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, ուսումնասիրելով իր վարույթում քննվող քաղաքացիական գործով (ըստ հայցի «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի ընդդեմ «Եվրովերելակ» ՍՊԸ-ի, Հունան Սուրենի Ավետիսյանի, Հեղինե Արամայիսի Ավետիսյանի, Ջեմմա Գևորգի Ավետիսյանի, Մկրտիչ Ավետիսյանի, Աղասի

Ավետիսյանի, Սուրեն Հովակի Ավետիսյանի, Լուսինե Ավետիսյանի և Հեղինե Ավետիսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին) հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը, որոշվել է՝ որպես հայցի ապահովման միջոց հայցագնի՝ 4.329.376,70 ՀՀ դրամի չափով արգելանք դնել պատասխանողներ «Եվրովերելակ» ՍՊԸ-ին, Հունան Ավետիսյանին և Հեղինե Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող ամբողջ գույքի, դրամական միջոցների վրա, բացառությամբ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ում առկա հաշիվների, ինչպես նաև գրավադրված՝ ՀՀ, Կոտայքի մարզ, քաղաք Արովյան, Ռոսիայի փողոց, 4 շենք, թիվ 142 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի վրա (**հատոր 1-ին, գ.թ. 66, 72**):

2) Նշված կատարողական թերթերի հիման վրա Ծառայության Կոտայքի մարզային բաժանմունքի հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի կողմից 10.02.2014 թվականին հարուցվել են համապատասխանաբար թիվ 07/01-505/14 և թիվ 07/01-506/14 կատարողական վարույթները (**հատոր 1-ին, գ.թ. 67, 73**):

3) Ծառայության Կոտայքի մարզային բաժանմունքի հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի կողմից 29.04.2014 թվականին ընդունված «Կատարողական վարույթը ավարտելու մասին» որոշումներով որոշվել է ավարտել 10.02.2014 թվականին հարուցված թիվ 07/01-505/14 և թիվ 07/01-506/14 կատարողական վարույթները՝ կատարողական թերթի պահանջների կատարման ուղղված կատարողական գործողություններն ավարտված լինելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 68, 74**):

4) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԿԴԿ/0020/02/14 քաղաքացիական գործով 20.06.2014 թվականին տրված կատարողական թերթերի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով գործն ըստ հայցի «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի ընդդեմ «Եվրովերելակ» ՍՊԸ-ի, Հունան Սուրենի Ավետիսյանի, Հեղինե Արամյանի Ավետիսյանի, Ջեմմա Գևորգի Ավետիսյանի, Մկրտիչ Ավետիսյանի, Աղասի Ավետիսյանի, Սուրեն Հովակի Ավետիսյանի, Լուսինե Ավետիսյանի և Հեղինե Ավետիսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, վճռել է հայցը բավարարել՝ «Եվրովերելակ» ՍՊԸ-ից, Հունան Ավետիսյանից և Հեղինե Ավետիսյանից համապարտությամբ հոգուտ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 4.244.487,10 ՀՀ դրամ և վճարված պետական տուրքի գումարը, սկսած 25.12.2013 թվականից մինչև վարկի մնացորդի գումարը՝ 3.874.308,70 ՀՀ դրամը, բանկին վերադարձնելու օրը հաշվարկել համաձայնագրի 1.2 կետով նախատեսված տարեկան 15 տոկոս տոկոսադրույքը, սկսած 25.12.2013 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը հաշվարկել վարկային պայմանագրի 6.6 և 6.7 կետերով նախատեսված տույժերի գումարը՝ բռնագանձումը տարածելով բանկում գրավադրված՝ ՀՀ, Կոտայքի մարզ, քաղաք Արովյան, Ռոսիայի փողոց, 4 շենք, թիվ 142 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի վրա, միաժամանակ հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել բռնագանձված գումարի երկու տոկոսը՝ որպես պետական տուրք. ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.01.2014 թվականի որոշմամբ որպես հայցի ապահովման միջոց հայցագնի՝ 4.329.376,70 ՀՀ դրամի չափով պատասխանողներ «Եվրովերելակ» ՍՊԸ-ին, Հունան Ավետիսյանին և Հեղինե Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող ամբողջ գույքի, դրամական միջոցների վրա, բացառությամբ «Կոնվերս բանկ» ՓԲԸ ընկերությունում առկա հաշիվների, ինչպես նաև գրավադրված՝ ՀՀ, Կոտայքի մարզ, քաղաք Արովյան, Ռոսիայի փողոց, 4 շենք, թիվ 142 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված արգելանքը պահպանել մինչև վճռի կատարումը: Նույն կատարողական թերթերի համաձայն՝ պահանջատերն է «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն, պարտապանները՝ Հեղինե Ավետիսյանը և Հունան Ավետիսյանը (**հատոր 1-ին, գ.թ. 69, 75**):

5) Ծառայության Կոտայքի մարզային բաժանմունքի հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի կողմից 04.09.2014 թվականին կայացված որոշումներով որոշվել է վերսկսել 29.04.2014 թվականին ավարտված թիվ 07/01-505/14 կատարողական վարույթը որպես նոր՝ թիվ 07/01-8270/14 կատարողական վարույթ, իսկ 29.04.2014 թվականին ավարտված թիվ 07/01-506/14 կատարողական վարույթը որպես նոր՝ թիվ 07/01-8271/14 կատարողական վարույթ (**հատոր 1-ին, գ.թ. 70, 76**):

6) Ծառայության Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի 03.02.2015 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ որոշվել է Հունան, Հեղինե, Ջենմա, Սուրեն, Մկրտիչ, Աղասի և Լուսինե Ավետիսյաններին համատեղ սեփականության իրավունքով պատկանող, «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ում գրավադրված՝ քաղաք Արովյան, Ռոսիայի փողոց, 4-րդ շենք, թիվ 142 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի (գնահատման գինը՝ 18.232.000 ՀՀ դրամ, մեկնարկային գինը՝ 13.674.000 ՀՀ դրամ) **(հատոր 1-ին, գ.թ. 11):**

7) «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին» 27.04.2015 թվականի թիվ 8270/14-15/01 արձանագրության համաձայն՝ գրավի առարկա հանդիսացող Կոտայքի մարզ, քաղաք Արովյան, Ռոսիայի փողոց, 4 շենք, թիվ 142 բնակարանի՝ 16.04.2015 թվականին՝ ժամը 13.00-ին, սկսված և 27.04.2015 թվականին՝ ժամը 13.00-ին, ավարտված աճուրդի հաղթող մասնակիցը Հրայր Խաչատրյանն է, լոտի մեկնարկային գինը՝ 8.971.511,4 ՀՀ դրամ, լոտի վաճառքի գինը՝ 9.021.511,4 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 81):**

8) Կենտրոն նոտարական գրասենյակի սեղանամատյանում 971 համարով գրանցված 04.05.2015 թվականի «Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի» համաձայն՝ մի կողմից Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Ծառայության Կոտայքի մարզային բաժնի Արովյանի տարածաշրջանի բաժանմունքի ավագ հարկադիր կատարող Սերժիկ Խաչատրյանը՝ որպես վաճառող, և մյուս կողմից Հրայր Խաչատրյանը՝ որպես գնորդ, կնքել են պայմանագիր, որով Ծառայության հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին 27.04.2015 թվականի թիվ 0700fbq008270/14-15/01 արձանագրության հիման վրա վաճառողը վաճառել է, իսկ գնորդը գնել է համատեղ սեփականության իրավունքով Ջենմա Գևորգի Ավետիսյանին, Սուրեն Հովակի Ավետիսյանին, Մկրտիչ Սուրենի Ավետիսյանին, Աղասի Սուրենի Ավետիսյանին, Հունան Սուրենի Ավետիսյանին, Լուսինե Սերյոժայի Ավետիսյանին, և Հեղինե Արամայիսի Ավետիսյանին պատկանող 86 քմ մակերեսով՝ Կոտայքի մարզ, քաղաք Արովյան, Ռոսիայի փողոց, 4 շենք, թիվ 142 հասցեում գտնվող բնակարանը 9.021.511.4 ՀՀ դրամ գումարով: Նշված անշարժ գույքը վաճառվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 20.06.2014 թվականին տրված թիվ ԿԿ1/0020/02/14 կատարողական թերթի համաձայն 27.04.2015 թվականին կայացած գույքի հարկադիր էլեկտրոնային աճուրդով **(հատոր 1-ին, գ.թ. 82):**

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, ու գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կատարողական վարույթի կողմ չհանդիսացող անձի լավամ լինելու իրավունքի իրացման ապահովման վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող, սակայն կատարողական վարույթում պարտասպան չհանդիսացող անձը պետք է ներգրավվի կատարողական վարույթում, և ինչ կարգով պետք է ապահովվի վերջինիս լավամ լինելու իրավունքը:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք, այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով, ոչ ոք չի կարող գրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Սեփականության իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունում, որի 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասն արտոնում է օրենքով նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք պայմանավորված են հանրային շահերով կամ անհրաժեշտ են հարկերի, տուրքերի կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՀՀ սահմանադրական դատարանը 30.10.2018 թվականի թիվ ՍԴՈ-1432 որոշմամբ արձանագրել է, որ սեփականության իրավունքը որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև՝ որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն առանձնացրել է սեփականությունից գրկելու հետևյալ հիմնական տարրերը.

- սեփականությունից գրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությամբ հակառակ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում.

- սեփականությունից գրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց.

- սեփականությունից գրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործությունների

միաժամանակյա դադարեցում՝ առանց շարունակության երաշխավորման (*լրեն ՀՀ սահմանադրական դատարանի 13.07.2010 թվականի թիվ ՄԴՈ-903 որոշումը*):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ կատարողական վարույթի մասնակիցներն են կոդները և (կամ) նրանց ներկայացուցիչները:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ կատարողական վարույթի կոդներն են՝ պահանջատերը և պարտապանը:

Նույն հոդվածի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 2-րդ պարբերության համաձայն՝ պահանջատերն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը, որի օգտին կամ ի շահ որի տրվել է կատարողական թերթը: Նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պարտապանն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը, որը, կատարողական թերթի համաձայն, պարտավոր է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ կատարողական վարույթի ընթացքում կոդներն իրավունք ունեն մասնակցել կատարողական գործողություններին:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման պատճենը, ոչ ուշ, քան որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկվում է պահանջատիրոջը և պարտապանին, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված այլ անձանց և մարմիններ:

Հարկադիր կատարողի որոշումը կոդներին է ուղարկվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պատշաճ ծանուցմամբ՝ կատարողական թերթում կամ յուրաքանչյուր կողմի նշված հասցեով:

Նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված իրավանորմերի մեկնաբանությանը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը դատարանի կողմից տրված կատարողական թերթն է, որի հիման վրա հարուցված կատարողական վարույթի մասնակիցները կոդներն են՝ պահանջատերը և պարտապանը, և (կամ) նրանց ներկայացուցիչները, որոնց վերաբերյալ էլ նշումը կատարվում է հենց կատարողական թերթում: Միաժամանակ, հարկադիր կատարողը պարտավոր է կատարողական գործողությունների ընթացքում իր կողմից կայացված որոշումների պատճենները դրանց կայացումից հետո՝ եռօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկել պահանջատիրոջը և պարտապանին: Հետևաբար, հարկադիր կատարողը կատարողական թերթում որպես պահանջատեր և պարտապան նշված անձին այդ որոշումներն ուղարկելու որևէ պարտավորություն չունի, և դա չի կարող դիտվել որպես վերջինիս կողմից թույլ տրված օրենքի խախտում: Այսինքն՝ կատարողական վարույթում ներգրավվում և կատարողական վարույթի ընթացքում կայացված որոշումներն ուղարկվում են բացառապես կատարողական վարույթի կոդներին՝ կատարողական թերթում որպես պահանջատեր և պարտապան նշված անձանց (*լրեն Սուսաննա և Հասմիկ Փոթոյաններն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ԵԷԴ/130/02/10 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթը ենթադրում է ոչ միայն միասնական դիրքորոշման ձևավորում՝ իրավական սորմի մեկնաբանության արդյունքում, այլև՝ ձևավորված դիրքորոշման հետագա զարգացում: Նման իրավիճակներում իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված նոր դիրքորոշումը պետք է գերակայի նախորդ դիրքորոշման նկատմամբ և հիմք ընդունվի Վճռաբեկ դատարանի նոր դիրքորոշումը:

ձևավորած որոշման կայացման պահին դատարանների վարույթներում գտնվող գործերի լուծման համար:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թեև թիվ ԵԷԴ/1130/02/10 վարչական գործով 05.04.2013 թվականի որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտվել առ այն, որ *կապարողական վարույթում ներգրավվում և կապարողական վարույթի ընթացքում կայացված որոշումներն ուղարկվում են բացառապես կապարողական վարույթի կողմերին՝ կապարողական թերթում որպես պահանջարկեր և պարտապան նշված անձանց*, այդուհանդերձ, գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայի առանձնահատկություններով պայմանավորված՝ օբյեկտիվորեն առկա է նշված դիրքորոշումը վերանայելու և զարգացնելու անհրաժեշտություն ներքոշարադրյալ հիմնավորումներով: Այսպես՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու (...) հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ սահմանադրական դատարանը 12.05.2020 թվականի թիվ ՍԴՈ-1529 որոշմամբ արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի իրավակարգավորումների տրամաբանությունից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ իրականացվելու է որևէ վարչական վարույթ, այն իրականացնող վարչական մարմինը պետք է պարզի, թե արդյո՞ք գոյություն ունեն իրեն վերապահված լիազորությունների շրջանակի մեջ մտնող հարցերով իրակա-նացվող վարչական վարույթը կարգավորող հատուկ օրենքներ, և, եթե այդպիսիք գոյություն ունեն, ապա պետք է որոշի, թե որքանո՞վ են հատուկ օրենքով կարգավորված իր կողմից իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները (յրեն ՀՀ սահմանադրական դատարանի 12.05.2020 թվականի թիվ ՍԴՈ-1529 որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով վերոգրյալ իրավանորմի մեկնաբանությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դրանում ամրագրված իրավակարգավորումը ընսով չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, հատկապես այն հարաբերությունների մասով, որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում (յրեն Սարգիս Խարիկյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/12466/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կատարողական վարույթն իրենից ներկայացնում է առանձին տեսակի վարչական վարույթ, որի նկատմամբ ևս կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները այնքանով, որքանով հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթի շրջանակներում իրականացվող կատարողական գործողությունները կարգավորող հատուկ օրենքով սահմանված չեն վարչական վարույթի առանձնահատկություններ, որոնց շրջանակներում կարգավորվում են շահագրգիռ անձանց կատարողական գործողությունների մասին ծանուցելու, ինչպես նաև կատարողական վարույթին վերջիններիս ներգրավելու վերաբերյալ դրույթներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարողական վարույթը, հանդիսանալով առանձին տեսակի վարչական վարույթ, հարուցվում է հարկադիր կատարողի որոշման հիման վրա և ավարտվում վարչական ակտի ընդունմամբ: Իսկ հարուցված կատարողական վարույթի ընթացքում իրականացվող կատարողական գործողությունների վրա, բացի «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքից, ընդհանուր

կարգով տարածվում է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը:

Ընդ որում, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը, հանդիսանալով առանձին տեսակի վարչական վարույթի՝ մասնավորապես կատարողական վարույթի կարգավորմանն ուղղված օրենք, սահմանել է կատարողական վարույթի մասնակիցների շրջանակը, որում ընդգրկվում են կատարողական վարույթի կողմերը՝ պահանջատերը և պարտապանը, ինչպես նաև վերջիններիս ներկայացուցիչները: Այսինքն՝ ստացվում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը, ըստ էության, բացառում է բացի վերոնշյալ անձանցից կատարողական վարույթին այլ մասնակիցների ներգրավվածությունը: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավակարգավորումը հնարավորություն չի ընձեռում այն անձանց, ում իրավունքներին և օրինական շահերին առնչվում է կամ կարող է առնչվել կատարողական վարույթը եզրափակող ակտը, գործնականում իրացնելու իրենց իրավունքների պաշտպանությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՄԴՌ-630, ՄԴՌ-1142) անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով (*իրեն ՀՀ սահմանադրական դատարանի 03.06.2016 թվականի թիվ ՄԴՌ-1270 որոշումը*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս դիրքորոշում է արտահայտել առ այն, որ՝ «Չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով, հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է» (**The Sunday Times v. the United Kingdom** (Application no. 6538/74, 26/04/79, § 49):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ վերը նշված վարչական վարույթում երրորդ անձանց վերաբերյալ որևէ առանձնահատկություն, ինչը նշանակում է, որ այդ վարչական վարույթում երրորդ անձանց կարգավիճակին առնչվող հարցերի վերաբերյալ կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառնությունները (ընթացիկ փուլ): Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ): Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներ են՝ (ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ, (բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց (...) վարչական մարմինը ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պետք է վարչական վարույթն իրականացնի առանց դա բարդացնելու՝ լրացուցիչ լուումներ անցկացնելու, լրացուցիչ փորձաքննություն նշանակելու կամ գնում կատարելու, եթե առկա չեն գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ պատճառներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լուումներ կարող են չանցկացվել, եթե՝ (ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուումներ անցկացվեն, (բ) դիմումն ակնհայտ անհիմն է, (գ) ընդունվում է բանավոր վարչական ակտ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լուումներ չեն անցկացվում, եթե՝ (ա) անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման, (բ) ընդունվում է այլ ձևի վարչական ակտ: Նույն հոդվածի 4-րդ

մասի համաձայն՝ լսումներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցները, վարչական մարմնի գործունեության հրապարակայնությունը և վարչական վարույթի իրականացման ժամանակ այդ մարմնի անաչառությունն ապահովելու նպատակով, իրավունք ունեն վարույթն իրականացնող մարմնում ծանոթանալու վարչական վարույթի նյութերին:

ՀՀ սահմանադրական դատարանը 12.05.2020 թվականի թիվ ՍԴՈ-1529 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի վերլուծության արդյունքում արձանագրել է հետևյալը.

1) անձի լաված լինելու իրավունքը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքի՝ պատշաճ վարչարարության իրավունքի բաղկացուցիչ տարր է,

2) լաված լինելը վարչական մարմինների կողմից գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության ընթացքում մարդու և քաղաքացու իրավական պաշտպանության միջոց է, որը հնարավորություն է ընձեռում, որ յուրաքանչյուր ոք առարկություն ներկայացնի կամ այլ կերպ իր կարծիքն արտահայտի իր նկատմամբ կայացվելիք և իր իրավունքներին կամ ազատություններին միջամտող ցանկացած վարչական ակտի առնչությամբ,

3) անձի լաված լինելը պատշաճ վարչարարության հիմնարար բաղադրիչ է,

4) անձի լաված լինելու իրավունքի իրականացումն ունի հետևյալ գործառնության շնչանակությունը. մի կողմից՝ անձի համար երաշխավորվում է վարչական մարմնի միջամտող անհատական ակտի դեմ արդյունավետ պաշտպանության ապահովման հնարավորություն, իսկ մյուս կողմից՝ վարչական մարմինը վարչական վարույթի շրջանակներում պարտավոր է քննարկել գործի փաստական հանգամանքներն ամբողջությամբ և պարզել դրանց օբյեկտիվությունը և լիարժեքությունը՝ վարույթի մասնակիցների ներկայացրած փաստարկներն ու դիրքորոշումները քննարկման առարկա դարձնելու միջոցով,

5) անձն օժտված է վարչական վարույթում լաված լինելու իրավունքով այն դեպքերում, երբ նրա նկատմամբ պետք է ընդունվի միջամտող անհատական ակտ,

6) վարչական վարույթում լաված լինելու իրավունքով օժտված է վարչական ակտի հասցեատեր և վարչական վարույթի մասնակից չհանդիսացող յուրաքանչյուր անձ, եթե տվյալ վարույթի արդյունքում ընդունվելիք միջամտող անհատական ակտը կարող է անմիջական ազդեցություն ունենալ վերջինիս իրավունքների և օրինական շահերի վրա,

7) լաված լինելու իրավունքը սահմանադրորեն երաշխավորվում է միայն այն վարչական ընթացակարգերում, որոնք ուղղված են անձանց նկատմամբ միջամտող անհատական ակտ ընդունելուն,

8) «(...) բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» դրույթի բովանդակությունից հետևում է, որ վարչական մարմնի կողմից լսումներ կարող են չանցկացվել օրենքով սահմանված բացառիկ դեպքերում:

ՀՀ սահմանադրական դատարանը փաստել է, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության տարր հանդիսացող՝ անձի լաված լինելու իրավունքի կոնկրետացումն օրենսդրությունում ենթադրում է այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի սահմանում (յո՛ւնս ՀՀ սահմանադրական դատարանի 12.05.2020 թվականի թիվ ՍԴՈ-1529 որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ վարչական վարույթի մասնակիցների՝ ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջ և երրորդ անձանց, լաված լինելու իրավունքի իրացման միջոցով վերջիններս հնարավորություն են ստանում արդյունավետ կերպով պաշտպանելու և իրականացնելու իրենց այն իրավունքներն ու շահերը, որոնց վերաբերում է տվյալ վարչական վարույթը: Այդ իրավունքի պատշաճ կենսագործման շտրքիվ վարչական վարույթի մասնակիցներն իրազեկվում են իրենց իրավական և փաստական վիճակի վրա ազդող վարչական վարույթի հարուցման և դրա արդյունքում արձակվելիք վարչական ակտի հիմքում դրվող փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ՝

հնարավորություն ունենալով վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդելու վարչական մարմնի վերջնական որոշման վրա: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ վարչական մարմինը լսի և գնահատի վարույթի մասնակիցների դիրքորոշումները: Վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների ներկայությունն ապահովելու վարչական մարմնի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում վարույթի մասնակցի՝ իրեն ընձեռված իրավունքներն իրացնելու և պաշտպանության միջոցներից օգտվելու համար: Ընդ որում, այդ իրավունքի իրացմանը խոչընդոտելը, այդ իրավունքի իրացման համար լիարժեք հնարավորություն չապահովելը կամ անհիմն ոչ ողջամիտ սահմանափակումներ ստեղծելն անյոթյատրելի է:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նաև գտել է, որ վարչական վարույթի մասին ծանուցելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգը անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում վարչական վարույթի ընթացքում մարդու լաված լինելու իրավունքի կենսագործման համար, քանի որ առանց վարչական վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման կամ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների (օրինակ՝ լուսնների) անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին ծանուցելու հնարավոր չէ ապահովել վարչական վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքի գործնական իրացումը (*լրեն՝ Սարգիս Խաչատրյանն ընդդեմ ՀՀ կառավարության ատրնյեր պետական եկամուտների կոմիտեի Շենգավիթի հարկային տեսչության թիվ ՎԳ/7107/05/14 վարչական գործով 20.07.2017 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Ավելին, վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի սահմանափակման համար իրավաչափ հիմք չի կարող հանդիսանալ նույնիսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածում ամրագրված վարչական մարմնի արագ գործելու պարտականության կատարման անհրաժեշտությունը, քանի որ վարչական վարույթը հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու օրենսդրական պահանջի կատարումը չի կարող տեղի ունենալ ի վնաս վարչական վարույթի ընթացքում անձի լաված լինելու իրավունքի պատշաճ իրացման (*լրեն՝ Տիգրան Արադյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի թիվ ՎԳ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

Այդ նպատակին հասնելու համար օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում սահմանել է վարչական վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ՎԳ/6067/05/16 որոշմամբ գտել է, որ վարչական վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը. այս փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես՝ վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումը և գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Բացի այդ, վարույթի ընթացիկ փուլում լուսնները պետք է իրականացվեն այն հաշվառմամբ, որ վարույթի մասնակիցները դեռ հնարավորություն ունենան իրենց դիրքորոշմամբ ազդելու վարչական մարմնի որոշման վրա (*լրեն՝, Տիգրան Սահակյանն ընդդեմ ՀՀ*

կառավարությանն ստորնթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/6067/05/16 վարչական գործով 25.12.2019 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ վարչական վարույթի հարուցման մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու կարգավորումը հատկապես կարևորվում է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարույթ հարուցելու դեպքերում, քանի որ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցված լինելու մասին վարույթի մասնակիցը որևէ կերպ տեղեկացված չի կարող լինել: Ընդ որում, դիմումի հիման վրա հարուցված և վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների հարուցման մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու վարչական մարմնի պարտականությունների բովանդակային տարբերությունն այն է, որ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցումը պարտադիր է առանց որևէ բացառության, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցումը պարտադիր է միայն այն դեպքում, երբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է (յրեն, Մարգիս Խաչատրյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն ստորնթեր պետական եկամուտների կոմիտեի Շենգալիթի հարկային տեսչության թիվ ՎԴ/7107/05/14 վարչական գործով 20.07.2017 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում արձանագրել է, որ վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին (յրեն ՀՀ աշխատանքի պետական տեսչությունն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյանիկովի թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև վարչական վարույթի մասնակիցներին վարույթի մասին ծանուցելը և քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու հնարավորություն տալը լսելը, կատարվում են վարչական վարույթի երկու տարբեր փուլերում և նախատեսված են վարչական վարույթի հարուցման ու ընթացիկ փուլերը կարգավորող իրավական նորմերով, սակայն նշված ընթացակարգային գործողությունները հետապնդում են մեկ միասնական նպատակ, որը հանգում է մարդու՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքներն իրացնելու երաշխավորմանը: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թեև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում լսումների մասին ծանուցումն իրականացնելու ժամկետները, եղանակը, այնուամենայնիվ, վարչական մարմինը վարույթի մասնակիցներին լսումների իրականացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին ծանուցման ժամկետն ու միջոցները պետք է ընտրի այն հաշվառմամբ, որպեսզի վերջիններս ունենան ողջամիտ ժամկետ լսումներին պատշաճ կերպով ներկայանալու և դիրքորոշում հայտնելու համար (յրեն «Անի» ԲԲԸ-ն ընդդեմ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, երրորդ անձինք «Էքսպերտ» ՍՊԸ-ի, «ԼայթԷկո» ՍՊԸ-ի և «Ֆենիսպ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ5/0108/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.01.2021 թվականի որոշումը):

Ամբողջ վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ կատարողական թերթի համաձայն բռնագանձում է տարածվում պարտապանին սեփականության իրավունքով պատկանող, վերջինիս կողմից սեփական պարտավորությունների կատարումն ապահովելու համար գրավադրված գույքի վրա, հարկադիր կատարողի որոշումներն ուղարկելու՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգը խնդրահարույց չէ: Նշված եզրահանգումը պայմանավորված է այն իրողությամբ, որ այդ դեպքում գրավատուն կատարողական վարույթի ընթացքում հանդես է գալիս որպես պարտապան: Դա նշանակում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով հարկադիր կատարողն իր կողմից կայացվող որոշումները

պետք է ուղարկի նաև գրավատու-պարտապանին: Արդյունքում վերջինս, տեղյակ լինելով իր գույքի բռնագանձման կապակցությամբ հարկադիր կատարողի կողմից կայացվող որոշումների մասին, հնարավորություն է ստանում օրենքով սահմանված միջոցներով իրականացնել իր սեփականության իրավունքի պաշտպանությունը:

Մինչույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հաճախ անձանց պարտավորություններն ապահովվում են երրորդ անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի գրավով: Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ գրավատու հանդիսացող երրորդ անձը դատարանի կողմից տրվող կատարողական թերթում որպես պարտապան չի նշվում: Դրա արդյունքում գրավատուն, չհանդիսանալով այդ կատարողական թերթի հիման վրա հարուցվող կատարողական վարույթի մասնակից, չի կարող հավակնել հարկադիր կատարողի որոշումները ստանալուն, թեև այդ կատարողական վարույթի ընթացքում ենթակա է բռնագանձման նրան պատկանող գույքը: Այլ կերպ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողը չունի իր կողմից կայացվող որոշումները նաև կատարողական վարույթում պարտապան չհանդիսացող գրավատուին ուղարկելու պարտականություն: Նման պայմաններում ստացվում է, որ պարտապան չհանդիսացող, բռնագանձվող գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք պարտապան հանդիսացող և բռնագանձվող գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց համեմատ չեն օգտվում իրենց սեփականության պաշտպանության հավասար պայմաններից և հնարավորություններից, այդ թվում՝ նաև՝ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կատարողական վարույթի կողմերին վերապահված իրավունքներից: Այսինքն՝ գույքի համասեփականատերերը, ունենալով նույնաբնույթ իրավագործություններ իրենց սեփականության ներքո գտնվող գույքի նկատմամբ, իրենց գույքի բռնագանձմանն ուղղված կատարողական վարույթի շրջանակներում ունեն տարբեր իրավագործություններ և կրում են տարբեր պարտավորություններ՝ պայմանավորված կատարողական վարույթի կողմ հանդիսանալու հանգամանքով:

Արդյունքում ստացվում է, որ գրավով ապահովված պարտավորությունը չկատարող կամ ոչ պատշաճ կատարող պարտապանը որպես կատարողական վարույթի մասնակից, պարտադիր կերպով ծանուցվում է կատարողական գործողությունների ընթացքում կայացվող որոշումների մասին, իսկ պարտապան չհանդիսացող գրավատուին նման հնարավորություն չի տրվում, քանի որ վերջինս կատարողական վարույթի մասնակից չէ: Փաստորեն, պարտապան չհանդիսացող գրավատուն կարող է անտեղյակ լինել իր գույքի բռնագանձմանը վերաբերող կատարողական վարույթի հարուցման և դրա ընթացքում կայացվող որոշումների մասին, որպիսի պայմաններում վերջինս գրկված է իր սեփականության իրավունքը հնարավոր խախտումներից պաշտպանելուն ուղղված միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից:

Արդյունքում անձը, ունենալով սեփականության իրավունք, չի կարողանում այն գործնականում արդյունավետորեն պաշտպանել: Մինչդեռ իրավական պետության պայմաններում պետք է երաշխավորվեն ոչ թե տեսական, երևակայական իրավունքներ, այլ գործնականում հնարավոր և արդյունավետ իրավունքներ: Իսկ որևէ իրավունք պաշտպանելու հնարավորության բացակայության պայմաններում այդ իրավունքը դառնում է տեսական իրավունք: Այդ իսկ պատճառով Վճռաբեկ դատարանը կարևորում է հարկադիր կատարողի որոշումների մասին կատարողական վարույթում պարտապան չհանդիսացող գրավատուի ծանուցումը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բռնագանձվող գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող, սակայն կատարողական վարույթում պարտապան չհանդիսացող անձը պետք է ներգրավվի կատարողական վարույթին որպես կատարողական վարույթի մասնակից ոչ թե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, այլ «Կարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կատարողական վարույթի շրջանակներում բոլոր շահագրգիռ անձինք պետք է օբյեկտիվ հնարավորություն ունենան

իրացնելու իրենց իրավունքները և պաշտպանելու իրենց օրինական շահերը, որը հնարավոր է կատարողական վարույթում որպես երրորդ անձ ներգրավվելու դեպքում միայն: Հետևաբար կատարողական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու նպատակով պետք է հավասար հնարավորություն ընձեռվի կատարողական վարույթին բոլոր շահագրգիռ անձանց ներգրավվածությունն ապահովելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բռնագանձվող գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող, սակայն կատարողական վարույթում պարտապան չհանդիսացող գրավատուն պետք է հնարավորություն ունենա կատարողական վարույթում ներգրավվել որպես երրորդ անձ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա, իսկ կատարողական գործողությունների վերաբերյալ վերջինիս ծանուցումները պետք է կատարվեն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ ապահովելով վերջինիս լավամ լինելու իրավունքը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով հայցվոր Ադասի Ավետիսյանը և Մկրտիչ Ավետիսյանը պահանջել են ոչ իրավաչափ ճանաչել Ծառայության Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի 03.02.2015 թվականի արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու գործողությունները և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 03.02.2015 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը, աճուրդի արդյունքում 04.05.2015 թվականին կնքված թիվ 971 առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Հրայր Խաչատրյանի անվամբ 25.05.2015 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը կամ անվավեր ճանաչել Ծառայության Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի 03.02.2015 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել աճուրդի արդյունքում 04.05.2015 թվականին կնքված թիվ 971 առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Հրայր Խաչատրյանի անվամբ 25.05.2015 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանը 19.12.2016 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը՝ Ծառայության Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Ս. Խաչատրյանի 03.02.2015 թվականի արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք՝ 03.02.2015 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը, աճուրդի արդյունքում 04.05.2015 թվականին կնքված թիվ 971 առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Հրայր Խաչատրյանի անվամբ 25.05.2015 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասով, կարճել է:

Դատարանը նույն թվականի վճռով հայցը մերժել է այն հիմնավորմամբ, որ հայցվորներ Ադասի և Մկրտիչ Ավետիսյանները թիվ ԿԴՆ/0020/02/14 քաղաքացիական գործով հանդիսացել են պատասխանողներ, սակայն նույն գործով տրված կատարողական թերթերի հիման վրա հարուցված կատարողական վարույթների ընթացքում չեն հանդիսացել կատարողական վարույթի մասնակիցներ՝ կողմեր՝ պարտապաններ: Մասնավորապես՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴՆ/0020/02/14 գործով 13.05.2014 թվականի կատարողական թերթերի համաձայն՝ պահանջատեր է հանդիսացել «Կոնվերթ բանկ» ՓԲԸ-ն, իսկ պարտապաններ՝ Հեղինե Ավետիսյանը, Հունան Ավետիսյանը: Կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողը 03.02.2015 թվականին կայացրել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշում, որպիսի որոշումն օրենքով սահմանված կարգով

եռօրյա ժամկետում առձեռն հանձնվել է կատարողական վարույթում պարտապաններ հանդիսացող Հեղինե Ավետիսյանին և Հունան Ավետիսյանին:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը եզրակացրել է, որ հարկադիր կատարողը որևէ պարտավորություն չի ունեցել կատարողական վարույթի ընթացքում կայացված որևէ որոշում ուղարկելու հայցվորներ Աղասի և Մկրտիչ Ավետիսյաններին, քանի որ վերջիններս չեն հանդիսացել կատարողական վարույթի կողմեր:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Աղասի և Մկրտիչ Ավետիսյանների վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ1/0020/02/14 գործով 13.05.2014 թվականին տրված կատարողական թերթերի համաձայն՝ սույն գործով հայցվորներ Աղասի Ավետիսյանը և Մկրտիչ Ավետիսյանը չեն նշվել որպես կատարողական թերթով պարտապաններ, հետևաբար նաև չեն հանդիսացել կատարողական վարույթի կողմեր, սակայն վերջիններս ունեցել են էական շահագրգռվածություն կատարողական վարույթը եզրափակող վարչական ակտի ընդունման հարցում, քանի որ վերջիններս, հանդիսանալով բռնագանձվող գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք, շահագրգռված են եղել իրենց պատկանող գույքի իրացման հարցում: Հետևաբար հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աղասի Ավետիսյանի և Մկրտիչ Ավետիսյանի իրավունքները կամ օրինական շահերը ակնհայտորեն կարող էին շոշափվել կատարողական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով, հարկադիր կատարողը պարտավոր էր վերջիններիս ներգրավել կատարողական վարույթում որպես երրորդ անձինք՝ հիմնվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի վրա և ապահովել նրանց լավամիտ լինելու իրավունքը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոշարադրյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործն ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական

ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.06.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԴ/0424/05/18
Կ. Մաթևոսյան
Ք. Մկոյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0424/05/18
2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի ապրիլի 14-ին
գրավոր ընթացակարգով քննելով Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.06.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի
Մարետա Խուրշուդյանի և Նահրա Ավետիսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝
Երևանի քաղաքապետի 30.11.2017 թվականի թիվ 4301-Ա որոշումն անվավեր ճանաչելու և
բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ հայցվորները պահանջել են անվավեր ճանաչել Երևանի քաղա-
քապետի 30.11.2017 թվականի թիվ 4301-Ա որոշումը և պարտավորեցնել Երևանի քաղաքա-
պետին ընդունելու բարենպաստ վարչական ակտ՝ ուղղակի վաճառքի միջոցով կադաստ-
րային արժեքով «Էրեբունի» և «Նուբարաշեն» թաղամասեր տանող ճանապարհի խաչմե-
րուկի ձախակողմյան մասին հարող բլրի 2,0հա և 4,0հա մակերեսներով հողամասերում
առկա անշարժ գույքերով ծանրաբեռնված և դրանց սպասարկման համար անհրաժեշտ
հողամասերը, ինչպես նաև նույն հողամասերում առկա ինքնակամ շինությունները ՀՀ

կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով հայցվորներին օտարելու, իսկ մնացած հողամասերն օգտագործման իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 22.11.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.06.2020 թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 22.11.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի քաղաքապետարանը (ներկայացուցիչ Անդրանիկ Մուրադյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նաիրա Ավետիսյանը (ներկայացուցիչ Արմեն Օհանյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերը, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 2-րդ կետը, նույն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 33.1-րդ, 34-րդ, 44-րդ, 45-րդ կետերը, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշումը, ՀՀ կառավարության 29.06.2017 թվականի թիվ 757-Ն որոշումը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 37-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 29-րդ, 37-րդ և 144-րդ հոդվածները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվորները Երևանի քաղաքապետին ուղղված դիմումով չեն ապացուցել դիմումի առարկա կառուցվածքների կառուցապատողը լինելու հանգամանքը, վարչական վարույթի շրջանակներում չի ապացուցվել գնման նախապատվության իրավունքը հայցվորների համար ծագելու նախադրյալների առկայությունը, ինչից հետևում է, որ վարչական մարմնի համար չի առաջացել գնման առաջարկ կատարելու պարտավորություն: Ավելին՝ նման պարտավորությունն ուղղակիորեն հաջորդում է ինքնակամ կառույցն օրինական ճանաչելու իրավական փաստին, ինչը տվյալ դեպքում չի ծագել և այն որպես իրողություն բացակայում է:

Բացի այդ, ստորադաս դատարանները պատշաճ գնահատական չեն տվել այն հանգամանքին, որ հայցվորները ներկայացրել են օտարման պահանջ, որպիսին չի կարող ներկայացվել, քանի դեռ տվյալ գույքն օրինականացված չէ: Քննարկվող պարագայում ոչ վարչական վարույթի շրջանակներում, ոչ էլ դատական քննության ընթացքում չի ապացուցվել խնդրո առարկա կառույցներն օրինական ճանաչման ենթակա լինելու հանգամանքը, իսկ վարչական դատավարության միջոցով արդարադատություն իրականացնող դատարաններն ինքնակամ կառույցն օրինական ճանաչելու լիազորություն չունեն:

Այսպիսով՝ ինքնակամ կառույցը վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության իրավունքը չի հանդիսանում ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշմամբ նախատեսված և անմիջականորեն գործող իրավունք, այլ այն ծագում է ինքնակամ կառույցին օրինական ճանաչելու փաստի ուժով, հետևաբար քանի դեռ ինքնակամ կառույցն օրինական ճանաչված չէ, այն իրականացնող անձի համար չի ծագում ինքնակամ կառույցի գնման նախապատվության իրավունք:

Ավելին՝ կառույցն անօրինական իրականացրած անձը չի կարող պահանջել կառույցի օրինականացում, քանի որ համայնքի ղեկավարն իր իրավասության սահմաններում, օրենքով նախատեսված պահանջներից ելնելով, այդ թվում՝ հաշվի առնելով համայնքի շահերը և կառավարման արդյունավետությունը, իր նախաձեռնությամբ է հարուցում վարույթ և որոշում ինքնակամ կառույցի ճակատագիրը: Ընդ որում՝ համայնքի ղեկավարի կողմից կայացվելիք որոշումն ուղղակի չի վերաբերում կառույցն իրականացրած անձին և ինքնին չի հանդիսանում նրա համար բարենպաստ վարչական ակտ, այլ լուծում է

համայնքին սեփականության իրավունքով պատկանող ինքնակամ կառույցի կարգավիճակը:

Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով արձանագրել է, որ պարտավորեցման հայցի առարկայի շրջանակով պայմանավորված որևէ էական նշանակություն չի կարող ունենալ, թե վարչական վարույթի ժամանակ ինչ փաստեր են առկա եղել վարչական մարմնի մոտ: Ըստ այդմ՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վարչական մարմինը վարչական ակտը կայացնում է վարչական վարույթով ձեռք բերված և ստացված ապացույցների գնահատման շրջանակում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ փորձագետի եզրակացությունն արժանափաստ վատ չէ, քանի որ փորձագետը նշում է, որ հողամասերում առկա ճանապարհը հանդիսանում է բակային կառույց, սակայն դրա համար անհրաժեշտ հողամասի չափը որոշելիս ղեկավարվում է նոր նախագծվող քաղաքային ճանապարհների և փողոցների հաշվարկային չափերը կանոնակարգող քաղաքաշինական նորմերով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ սովյալ դեպքում փորձագետը դուրս է եկել նաև իրեն առաջադրված հարցերի շրջանակից, քանի որ նշել է հողամասերում առկա կառույցների մոտեցումներ ապահովող հողամասի մակերեսը: Նման հարցադրում կատարված չի եղել, ավելին՝ ինչից է փորձագետը վերցրել, որ 60.000քմ. հողամասում առկա կառույցները պետք է ունենան ընդհանուր մոտեցման հնարավորություն և ինչով է դա պատճառաբանվում, եթե ըստ փորձագետի՝ այդ կառուցվածքներից յուրաքանչյուրն ինքնուրույն վերցրած հանդիսանում է ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգավորման առարկա:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է բողոքարկի փաստարկն առ այն, որ եզրակացության թերի լինելու հանգամանքով պայմանավորված, Դատարանն ի պաշտոնե պարտավոր էր միջոցներ ձեռնարկել լիարժեք եզրակացություն ստանալու համար, իսկ թերի եզրակացության պայմաններում պարտավոր էր նշանակել կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն, ինչը չի իրականացրել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.06.2020 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճուրակ բողոքի պարասխանի հիմնավորումները

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը՝ դիմումատուների դիմումով ներկայացված այն պնդումը, որ իրենք են համարվում խնդրարկվող անշարժ գույքի կառուցապատողները համարվում է հավաստի այնքան ժամանակ, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Ինչ վերաբերում է կառույցները քաղաքաշինական նորմերին համապատասխան կառուցված լինելու հանգամանքին, ապա այդ փաստը հաստատվում է ինչպես արտադրական եղանակով իրականացված, այնպես էլ Դատարանի կողմից նշանակված փորձաքննություններով, իսկ եզրակացությանը կից տարածքի հատակագծի առկա չլինելու վերաբերյալ Դատարանն իրավաչափորեն նշել է, որ այդպիսի պահանջ ներկայացված չէ որևէ իրավական ակտով:

3. Վճուրակ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուրակ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 26.09.1994 թվականին Նաիրա Ավետիսյանի և Ջրաշենի գյուղխորհրդի գործադիր կոմիտեի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր, որով 2,0հա մակերեսով հողամասը 16 տարի ժամկետով վարձակալության է հանձնվել Նաիրա Ավետիսյանին: Նշված պայմանագրի հիման վրա կազմվել է հողի հանձնման ակտ (**հատոր 4-րդ, գ.թ. 112**):

2) 22.04.1996 թվականին Մարետա Ավետիսյանի (այժմ՝ Խորշուդյան) և Ջրաշենի գյուղխորհրդի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր, որով 4,0հա մակերեսով

հողամասը 16 տարի ժամկետով վարձակալության է հանձնվել Մարետա Ավետիսյանին: Նշված պայմանագրի հիման վրա կազմվել է հողի հանձնման ակտ (**հիմք վարչական գործի նյութեր, հատոր 4-րդ, գ.թ. 19**):

3) Թիվ 2-354 գործով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 04.06.2002 թվականի վճռով որոշվել է Երևանի քաղաքապետարանի հայցն ընդդեմ Նաիրա Ավետիսյանի, Մարիետա Խուրշուդյանի և Արամայիս Ավետիսյանի ապօրինի զբաղեցրած պետության սեփականությունը հանդիսացող 10,0հա ընդհանուր մակերեսով հողամասերից վտարելու պահանջի մասին, մերժել: Հակընդդեմ հայցը բավարարել: Ճանաչել Երևանի Նոր-Արեշի 45-րդ փողոցից դեպի «Էրեբունի» և «Նուբարաշեն» թաղամասեր տանող ճանապարհի ձախակողմյան մասում գտնվող 2,0հա, 4,0հա և 4,0հա մակերեսներով բլրի, հողամասերի նկատմամբ համապատասխանաբար Նաիրա Ավետիսյանի (2,0հա), Մարիետա Խուրշուդյանի (4,0հա) և Արամայիս Ավետիսյանի (4,0հա) օգտագործման իրավունքը և պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին վերակնքելու նշված հողամասերի նկատմամբ վարձակալության պայմանագրերը՝ դրանք համապատասխանեցնելով գործող օրենսդրության պահանջներին (**հատոր 2-րդ, գ.թ. 99-100**):

4) «Արամայիս, Նաիրա Ավետիսյանների և Մարիետա Խուրշուդյանի հողօգտագործման իրավունքի մասին» Երևանի քաղաքապետի 04.12.2002 թվականի թիվ 2478-Ա որոշմամբ վարձակալության իրավունքով 10 տարի ժամկետով Նաիրա Ավետիսյանին է թողնվել 4,0հա, Մարիետա Խուրշուդյանին՝ 2,0հա հողամասերը: Ըստ այդմ, 24.12.2002 թվականին Երևանի քաղաքապետի և Մարետա Խուրշուդյանի միջև կնքվել է հողի վարձակալության թիվ 2008/ԳԱ պայմանագիրը, որով Մարետա Խուրշուդյանին է հատկացվել «Էրեբունի» և «Նուբարաշեն» թաղամասեր տանող ճանապարհի ձախակողմյան մասում գտնվող 4,0հա մակերեսով հողամասը՝ շինությունների շահագործման և պահպանման նպատակով, իսկ Երևանի քաղաքապետի և Նաիրա Ավետիսյանի միջև կնքվել է հողի վարձակալության թիվ 2007/ԳԱ պայմանագիրը, որով Նաիրա Ավետիսյանին է հատկացվել «Էրեբունի» և «Նուբարաշեն» թաղամասեր տանող ճանապարհի ձախակողմյան մասում գտնվող 2,0հա մակերեսով հողամասը՝ շինության շահագործման և պահպանման նպատակով (**հատոր 4-րդ, գ.թ. 30-34, 36-39**):

5) Թիվ ԵԿԳ/2102/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 20.09.2016 թվականի վճռով որոշվել է Մարետա Երեմի Խուրշուդյանի, Նաիրա Արամայիսի Ավետիսյանի հայցապահանջներն ընդդեմ Երևան համայնքի՝ պայմանագրերը նույն պայմաններով վերսկսված ճանաչելու և հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասարեցված տարեկան վարձավճարով վարձակալության պայմանագրեր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին՝ մերժել: Հակընդդեմ հայցը բավարարել՝ լուծել Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետի և Մարետա Խուրշուդյանի միջև 24.12.2002 թվականին կնքված, Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետի և Նաիրա Ավետիսյանի միջև 24.12.2002 թվականին կնքված հողամասերի վարձակալության պայմանագրերը, որպես հետևանք՝ դադարեցնել Մարետա Խուրշուդյանի անվամբ 22.01.2003 թվականին և Նաիրա Ավետիսյանի անվամբ 22.01.2003 թվականին կատարված իրավունքների պետական գրանցումները, պարտավորեցնել Մարետա Խուրշուդյանին և Նաիրա Ավետիսյանին Երևան համայնքին վերադարձնել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն տանող ճանապարհի ձախակողմյան մասում գտնվող 4,0հա և 2,0հա մակերեսներով հողամասերը (**հատոր 4-րդ, գ.թ. 84-108**):

6) Երևանի քաղաքապետին հասցեագրված 28.09.2017 թվականի դիմումով Մարետա Խուրշուդյանը և Նաիրա Ավետիսյանը խնդրել են ուղղակի վաճառքի միջոցով՝ կադաստրային արժեքով իրենց օտարել «Էրեբունի» և «Նուբարաշեն» թաղամասեր տանող ճանապարհի ձախակողմյան ձախակողմյան մասին հարող բլրի 4,0հա, 2,0հա և 4,0հա մակերեսներով հողամասերի անկա անշարժ գույքով ծանրաբեռնված և դրանց սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, իսկ մնացած հողամասերը տրամադրել օգտագործման իրավունքով (**հատոր 1-ին, գ.թ 8-9**):

7) Երևանի քաղաքապետի 30.11.2017 թվականի թիվ 4301-Ա որոշմամբ Մարետա Խուրշուդյանի և Նաիրա Ավետիսյանի դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԿԴ/2102/02/15 քաղաքացիական գործով 20.09.2016 թվականին կայացված վճռի հիմքով դադարեցվել է Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն թաղամասեր տանող ճանապարհի ձախակողմյան մասում գտնվող 4,0 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ Մարետա Խուրշուդյանի վարձակալության իրավունքը և նույն տարածքում գտնվող 2,0 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ Նաիրա Ավետիսյանի վարձակալության իրավունքը, իսկ Մարետա Խուրշուդյանը և Նաիրա Ավետիսյանը չեն ներկայացրել Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն թաղամասեր տանող ճանապարհի ձախակողմյան մասում գտնվող ընդհանուր 10 հեկտար մակերեսով, թվով երեք միավոր հողամասերում առկա ինքնակամ շինություններն իրենց կողմից կառուցված լինելու վերաբերյալ ապացույցներ, հետևաբար չեն ապացուցել ինքնակամ կառույցներով զբաղեցված հողամասերն կադաստրային արժեքով ձեռք բերելու իրավունք ունեցող սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ որևէ շինությամբ չձանրաբեռնված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ենթակա է օտարման աճուրդային կարգով, ինչպես նաև նկատի ունենալով, որ 12.04.2004 թվականին կնքված թիվ 161/ԱԳ պայմանագրից ծագող 4,0 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ Մարետա Խուրշուդյանի վարձակալության իրավունքի գրանցումը դեռևս դադարեցված չէ և վերջինս հանդիսանում է այդ հողամասի վարձակալ: Հետևաբար բացակայում է այդ նույն հողամասը կամ դրա մասը օգտագործման իրավունքով դիմումատուներին տրամադրելու իրավական հիմք (**հատոր 1-ին, գ.թ 122-127**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությանը՝ 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի դրույթների կիրառման վերաբերյալ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցադրմանը, թե արդյո՞ք պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների օրարման պահանջն ինքնին ներառում է նաև այդ կառույցի օրինականացման պահանջ:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ պարտավորեցման հայցի շրջանակներում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափության պարզման համար ձեռք բերված անհրաժեշտ ապացույցների գնահատման:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի, ինչպես նաև հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը հայցը բավարարելու դեպքում կայացնում է գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը պարտավորեցնելու մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանը հայցը մերժելու դեպքում վճիռ է կայացնում այդ մասին:

Նախկինում կայացված որոշումներից մեկում համակարգային վերլուծության ենթարկելով վերը նշված իրավանորմերը ՀՀ վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ պարտավորեցման հայցով անձը կարող է պահանջել պարտավորեցնել վարչական մարմնին ընդունելու իր համար այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը վարչական մարմնին մերժել է: Այսինքն՝ պարտավորեցման հայց ներկայացնելու համար նախապայման է հանդիսանում բարենպաստ վարչական ակտի ընդունումը վարչական մարմնի կողմից մերժելու հանգամանքը: Ընդ որում, պարտավորեցման հայցը բարենպաստ վարչական ակտն ընդունելու պահանջից բացի օրենքի ուժով իր մեջ ներառում է նաև վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջը՝ անկախ հայցվորի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու հանգամանքից: Օրենսդրի կողմից նման պայմանի սահմանումը բխում է վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից այնքանով, որքանով անձը չի կարող հայցել իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունում, քանի դեռ այդպիսի ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտն օրենքով սահմանված կարգով վերացված չէ: Ըստ այդմ, օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորեցման հայցի քննության արդյունքներով գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս հայցը բավարարելու դեպքում վարչական դատարանը վարչական մարմնին բարենպաստ վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու հետ մեկտեղ պետք է անվավեր ճանաչի վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ պարտավորեցման հայցի բուն նպատակը անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է, և հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե վարչական դատարանը ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հաստատված է համարում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, վերջինս պետք է կայացնի հայցը բավարարելու վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ անվավեր ճանաչելով վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը և պարտավորեցնելով վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը: Այլ կերպ ասած՝ վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի իրավաչափությունը պարտավորեցման հայցի շրջանակներում չի քննվում վիճարկման հայցի քննության համար սահմանված կարգով, և ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը հաստատվելն ինքնին հանգեցնում է վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի անվավերության:

ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգման համար հիմք են հանդիսացել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի և 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի կարգավորումները:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանելով պարտավորեցման հայցով հայցը բավարարելու դեպքում վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը պարտավորեցնելու մասին ինպերատիվ պահանջը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսել է պարտավորեցման հայցը բավարարելու

նախապայմանը, այն է՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը: Այսինքն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությամբ է պայմանավորված վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշման իրավաչափությունը և ոչ թե՛ հակառակը:

Մյուս կողմից, պարտավորեցման հայցի դեպքում օրենսդիրը, կարևորելով հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափության պարզումը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսել է, որ վարչական դատարանը հայցը մերժելու դեպքում վճիռ է կայացնում այդ մասին: Դա նշանակում է, որ պարտավորեցման հայցի մերժումը ևս պայմանավորված է հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությամբ: Այսինքն, եթե ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա չի հաստատվում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, պարտավորեցման հայցը ենթակա է մերժման, և այս դեպքում վարչական դատարանը չի անդրադառնում վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշմանը (*տե՛ս, Կարեն Սարգսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «ձանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ պարտավորեցման հայցի բուն նպատակը անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է, այլ կերպ ասած՝ պարտավորեցման հայց ներկայացնելու միջոցով անձը ցանկանում է, որ վարչական մարմինը ևս մեկ անգամ որոշում կայացնի իր դիմումի վերաբերյալ: Ընդ որում՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունման իրավաչափությունը պետք է պարզվի ապացույցների և գործի հանգամանքների ճիշտ գնահատման և հայեցողության ճիշտ կիրառման հիման վրա: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը հստակ տարբերակել է վիճարկման հայցի և պարտավորեցման հայցի շրջանակներում գործն ըստ էության լուծող դատական ակտով լուծման ենթակա հարցերը: Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա: Հաշվի առնելով պարտավորեցման հայցի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունման իրավաչափությունը պետք է գնահատվի ոչ թե՛ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա, այլ դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

Վերոգրյալ համատեքստում անդրադառնալով ինքնակամ կառույցով ծանրաբեռնված և դրանց սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը օտարելու պահանջին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել: Ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը:

Նույն հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ ինքնակամ կառույցները կարող են ճանաչվել օրինական՝ համայնքների ղեկավարների, համայնքի վարչական տարածքներից դուրս՝ մարզպետների կողմից, կառավարության սահմանած կարգով: (...) Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀՀ կառավարությունը 18.05.2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածին համապատասխան որոշել է հաստատել ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը (այսուհետ՝ Կարգ)՝ համաձայն հավելածի:

Նույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Հարկ է նշել, որ նույնարվանդակ իրավակարգավորում է ամրագրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով:

Կարգի 1-ին կետի համաձայն՝ նույն Կարգով սահմանվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների, բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերում, այդ թվում՝ շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքում քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման, ինչպես նաև պետությանը կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը:

Կարգի 33-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին (...):

Կարգի 34-րդ կետի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինական ճանաչված կառույցների նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում օրինականացման լիազոր մարմնի կողմից տվյալ կառույցը՝ նույն կարգի 35-րդ կետով սահմանված գներով (վարձավճարով), իսկ դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասը՝ կադաստրային արժեքով, իսկ նույն կարգի 33.1-ին կետով սահմանված հողամասի առավելագույն մակերեսի չափից ավելի հողամասի տրամադրման դեպքերում՝ կադաստրային արժեքի եռապատիկի չափով (վարձակալության իրավունքով) ձեռք բերելու համար գրավոր առաջարկություն է արվում կառույցն իրականացրած անձին: Առաջարկության մեջ պարտադիր նշվում են անշարժ գույքի տվյալ միավորի հասցեն, կառույցների և հողամասի մակերեսները, առաջարկության ընդունման համար նույն կարգի 36-րդ կետով նախատեսված ժամկետը, հողամասի կադաստրային արժեքը (վարձավճարի չափը), ինչպես նաև կառույցի վաճառքի՝ նույն կարգի 35-րդ կետով սահմանված գները (վարձավճարները):

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ նույն Կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե՝

ա) դրանք չեն բավարարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և նույն կարգով սահմանված օրինականացման պայմանները:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ արգելվում է ինքնակամ կառույցների օրինականացման՝ այլ պատճառներով մերժումը, այդ թվում՝ աննպատակահարմարության պատճառաբանությամբ:

Վկայակոչված իրավադրույթների վերլուծության հիման վրա նախկին որոշումներից մեկով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կառուցապատման նպատակով չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ նախատեսված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի խախտումներով իրականացված կառույցը համարվում է ինքնակամ կառույց, որի նկատմամբ կարող է ճանաչվել միայն այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է հողամասը: Ընդ որում, Երևան քաղաքում ինքնակամ կառույցն օրինական կարող է ճանաչվել Երևանի քաղաքապետի որոշմամբ (*յրե՛ս, օրինակ, Խաչատրյուր Սյուխանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և մյուսների թիվ ՎԴ/1624/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.02.2010 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ինքնակամ կառույցի օրինականացման որոշման մեջ կառույցն իրականացրած անձի մասին տվյալների նշումն ինքնանպատակ չէ, այլ այն վարչական մարմնի համար սահմանում է պարտավորություն, հստակորեն պարզելու, թե ում կողմից է իրականացված ինքնակամ կառույցը, ինչն էլ իր հերթին ենթադրում է ինքնակամ կառույցն իրականացրած անձի իրավունքների լիարժեք պաշտպանություն (*յրե՛ս, օրինակ, Արսիկնե Կիրակոսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4860/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Վկայակոչված իրավադրույթների վերծրությունից հետևում է, որ Կարգով կանոնակարգված են պետական և համայնքային սեփականությունն հանդիսացող հողամասերում իրականացված ինքնակամ կառույցների օրինականացման և դրանց օտարման իրավահարաբերությունները: Ըստ այդմ, Կարգով սահմանված բացայտման սկզբունքի հիմքով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինքնակամ կառույցի օրինականացման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

-տվյալ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,

-վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

-ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

-ինքնակամ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է նաև, որ նշված պայմաններին բավարարող ինքնակամ կառույցի օրինականացման փուլին անմիջապես հաջորդում է դրա օտարման գործընթացը, որի իրականացման ուղեգծում առանցքային նշանակություն ունի տվյալ կառույցն իրականացրած անձի հատկորոշումը, քանի որ հենց այդ անձին է Կարգով վերապահված կառույցը գնելու նախապատվությունը:

Ջարգացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստորեն, ինքնակամ կառույցի՝ քաղաքացիական շրջանառության օբյեկտ որակվելու գործընթացը երկփուլ գործառույթների համակցություն է, որը ներառում է ինքնակամ կառույցի օրինականացման և օրինականացված կառույցի օտարման միջոցառումների կազմակերպման փուլերը: Ընդ որում, առաջին փուլում (ինքնակամ կառույցի օրինականացում) համայնքի ղեկավարը ստուգում է այն պայմանների միաժամանակյա առկայության փաստը, որոնք անհրաժեշտ են ինքնակամ կառույցն օրինական ճանաչելու համար, իսկ

երկրորդ փուլում համայնքի ղեկավարը նախաձեռնում է արդեն օրինական ճանաչված կառույցի օտարման գործընթացը, որտեղ, հաշվի առնելով, որ կառույցն իրականացրած անձն ունի այդ կառույցը գնելու նախաապատվության իրավունք, համայնքի ղեկավարը կրում է կառույցն իրականացրած անձին բացահայտելու, և ըստ այդմ՝ հենց այդ անձին կառույցը գնելու առաջարկ ներկայացնելու ուղիղ պարտականություն:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված փուլերն իրար հաջորդող և միմյանց հետ փոխկապակցված գործընթացներ են, որտեղ օրինականացման վավերապայմանների ստուգումը, ապա՝ Կարգով ամրագրված պայմաններին ինքնակամ կառույցի համապատասխանելու պայմաններում, կառույց օրինական ճանաչվելու պարագայում գնման գործընթաց նախաձեռնելը համայնքի պարտականությունն է: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի համոզմամբ ամենևին պարտադիր չէ, որպեսզի շահագրգիռ անձը նախ՝ դիմի օրինականացման խնդրանքով, ապա՝ բավարարման պարագայում, գնման խնդրանքով:

Ամփոփելով վկայակոչված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձն այդ կառույցն օրինական ճանաչելու և հետագայում ձեռք բերելու հարցում ունի օրինական շահ, կառույցն իրականացրած անձի կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների օտարման պահանջն անխուսափելիորեն ինքնավար ներառում է նաև օրինականացման պահանջը, հետևապես շահագրգիռ անձը չի կրում պարտավորություն նախ դիմելու օրինականացման, ապա օրինական ճանաչված գույքը ձեռք բերելու պահանջով, քանի որ Կարգով ամրագրված իրավադրույթների համակարգված դիտարկումը հուշում է, որ օտարման գործընթացի նախաձեռնումը վարչական մարմնի պարտավորությունն է, որն անմիջապես հաջորդում է ինքնակամ կառույցի օրինականացման գործընթացին՝ դրանով փաստացի եզրափակելով ինքնակամ կառույցի՝ քաղաքացիական շրջանառության հնարավոր օբյեկտ ճանաչվելու գործընթացը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետին հասցեագրված 28.09.2017 թվականի դիմումով Մարետա Խուրշուդյանը և Նաիրա Ավետիսյանը խնդրել են ուղղակի վաճառքի միջոցով՝ կադաստրային արժեքով իրենց օտարել «Էրեբունի» և «Նուբարաշեն» թաղամասեր տանող ճանապարհի խաչմերուկի ձախակողմյան մասին հարող բլրի 4,0հա, 2.0հա և 4,0հա մակերեսներով հողամասերում առկա անշարժ գույքով ծանրաբեռնված և դրանց սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, իսկ մնացած հողամասերը տրամադրել օգտագործման իրավունքով:

Երևանի քաղաքապետի 30.11.2017 թվականի թիվ 4301-Ա որոշմամբ Մարետա Խուրշուդյանի և Նաիրա Ավետիսյանի դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ հայցվորները չեն ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն թաղամասեր տանող ճանապարհի ձախակողմյան մասում գտնվող ընդհանուր 10 հա մակերեսով, թվով երեք միավոր հողամասերում առկա ինքնակամ շինություններն իրենց կողմից կառուցված լինելու վերաբերյալ ապացույցներ:

Դիմելով դատարան՝ Մարետա Խուրշուդյանը և Նաիրա Ավետիսյանը պահանջել են անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 30.11.2017 թվականի թիվ 4301-Ա որոշումը և պարտավորեցնել Երևանի քաղաքապետին ընդունելու բարենպաստ վարչական ակտ՝ ուղղակի վաճառքի միջոցով կադաստրային արժեքով «Էրեբունի» և «Նուբարաշեն» թաղամասեր տանող ճանապարհի խաչմերուկի ձախակողմյան մասին հարող բլրի 2,0հա և 4,0հա մակերեսներով հողամասերում առկա անշարժ գույքերով ծանրաբեռնված և դրանց սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, ինչպես նաև նույն հողամասերում առկա ինքնակամ շինությունները ՀՀ կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով հայցվորներին օտարելու, իսկ մնացած հողամասերն օգտագործման իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

Դատարանը 22.11.2019 թվականի վճռով հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացը երկվիուլ գործընթաց է՝ բաղկացած օրինականացման և օրինականացված կառույցի օտարման փուլերից (բացառությամբ այն դեպքերի, երբ հայտնի չէ կառույցն իրականացրած անձը): Հետևաբար, կառույցն իրականացրած անձի կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների օտարման պահանջն անխտապիելիորեն և ինքնին ներառում է նաև օրինականացման պահանջը, քանզի առանց գործընթացի առաջին փուլի՝ օրինականացման փուլի, հնարավոր չէ տվյալ ինքնակամ կառույցի օտարումն այդ կառույցն իրականացնողին:

Դատարանը գտել է, որ խնդրո առարկա անշարժ գույքը ենթակա է օրինականացման, եթե առկա չեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով և ՀՀ կառավարության Թիվ 912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված՝ օրինականացումն արգելող հանգամանքները: Բացի այդ, Դատարանը հաստատված է համարել հայցվորների կողմից խնդրո առարկա ինքնակամ շինությունների կառուցված լինելու հանգամանքը՝ հիմք ընդունելով վկաների ցուցմունքները և հայցվորների կողմից ներկայացված 1994 թվականին կնքված՝ խնդրո առարկա հողամասերի վարձակալության պայմանագրերը, որոնց համաձայն՝ այդ ինքնակամ կառույցներով ծանրաբեռնված հողամասերը վարձակալությամբ են հանձնվել հայցվորներին:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Տեսչական մարմնի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի հետևությունները:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործի փաստերի համաձայն՝ վիճահարույց ինքնակամ կառույցները և դրանց շահագործման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասերն ամբողջությամբ ընդգրկված են նախկինում Մարետա Խուրշուդյանին և Նաիրա Ավետիսյանին տրամադրված համապատասխանաբար 4,0հա և 2,0հա մակերեսներով հողամասերում:

Սույն գործով դատաքննության ընթացքում որպես վկա հարցաքննված Սերգեյ Մելքոնյանն իր ցուցմունքով նշել է, որ 1995 թվականից աշխատել է ավտոշուկայում: Թեև «Բրիտանիան-1» ՍՊԸ-ում գրանցված է եղել՝ որպես հսկիչ, սակայն ակտիվ մասնակցություն է ունեցել 1995-1996 թվականներին ավտոշուկայում ծավալված շինարարական աշխատանքներին (պանելային պարսպի կառուցում, պանելային սալիկների տեղադրում, գողում): Իր կատարած շինարարական աշխատանքների համար վարձատրություն ստացել է Մարետա Խուրշուդյանից և Նաիրա Ավետիսյանից, վերջիններից է ստացել կոնկրետ շինարարական աշխատանքներ կատարելու հանձնարարությունը, նրանց կողմից է ձեռք բերվել անհրաժեշտ շինանյութը: Արամայիս Ավետիսյանին ճանաչել է, սակայն շփում չի ունեցել:

Որպես վկա հարցաքննված Նարինե Սահակյանն իր ցուցմունքով հայտնել է, որ ավտոշուկայում շինարարական աշխատանքները սկսվել են 1995 թվականից: Մտերիմ հարաբերությունների մեջ գտնվելով Ավետիսյանների ընտանիքի հետ՝ Մարետա Խուրշուդյանին ու Նաիրա Ավետիսյանին հանդիպելու և նրանց օգնելու համար հաճախակի այցելել է շինհրապարակ: Շինարարական աշխատանքները ղեկավարել են Նաիրա Ավետիսյանը և Մարետա Խուրշուդյանը, իսկ Արամայիս Ավետիսյանը հիվանդության պատճառով շինարարական աշխատանքներին չի մասնակցել:

Որպես վկա հարցաքննված Հայրապետ Խուրշուդյանը, ով Մարետա Խուրշուդյանի եղբոր տղան է, ցուցմունքով հայտնել է, որ 1995 թվականից մասնակցել է ավտոշուկայում ծավալվող շինարարական աշխատանքներին (պարսպապատում և այլն): Աշխատանքների կազմակերպմանը ներգրավված են եղել Նաիրա Ավետիսյանը և Մարետա Խուրշուդյանը: Արամայիս Սահակյանը գրեթե այդ աշխատանքներին չի մասնակցել: Շինանյութ ձեռք բերելու գումարները ստացել է Նաիրա Ավետիսյանից և Մարետա Խուրշուդյանից:

Նման պայմաններում՝ հաշվի առնելով որպես վկա հարցաքննված անձանց կողմից տրված ցուցմունքները հերքող որևէ պատշաճ ապացույցի բացակայությունը, ինչպես նաև այն իրողությունը, որ վիճահարույց հողամասերը նախկինում վարձակալության

իրավունքով հայցվորին տրամադրվել են շինությունների շահագործման և պահպանման նպատակով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճահարույց հողամասերում ինքնակամ կառույցները հայցվորների կողմից իրականացված լինելու փաստն այլևս անհերքելի է:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ ինքնակամ կառույց իրականացրած անձը պահպանում է այդ կառույցի նկատմամբ ՀՀ կառավարության թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով սեփականության իրավունք ձեռք բերելու իր ակնկալիքը՝ այդ կառույցի օրինականցումը բացառող հիմքերի բացակայության պայմաններում, որպիսի ակնկալիքի վրա տարածվում է սեփականության իրավունքին համարժեք պաշտպանության ռեժիմ՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի: Մասնավորապես, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող կյուրական միջոցը, այլ նաև կյուրական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (*յու'ս, օրինակ Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով 11.06.2009 եվրոպական դատարանի 11.06.2009 թվականի վճիռը, կեր 44*):

Փաստենք նաև, որ թիվ ՄԴՌ-741 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ [2005 թվականի փոփոխություններով] ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանություն տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Մինչդեռ, Երևանի քաղաքապետը ոչ հիմնավոր պատճառաբանությամբ մերժել է ուղղակի վաճառքի միջոցով կադաստրային արժեքով «Էրեբունի» և «Նուբարաշեն» թաղամասեր տանող ճանապարհի խաչմերուկի ձախակողմյան մասին հարող բլրի 2,0հա և 4,0հա մակերեսներով հողամասերում առկա անշարժ գույքերով ծանրաբեռնված և դրանց սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, ինչպես նաև նույն հողամասերում առկա ինքնակամ շինությունները ՀՀ կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով հայցվորներին օտարելու վերաբերյալ հայցվորների դիմումը, ինչը ռոտահարել է հայցվորների սեփականության իրավունքի օրինական ակնկալիքը, հետևաբար նաև սեփականության իրավունքը:

Միաժամանակ վիճահարույց հողամասերում կառուցված ինքնակամ շինությունների օրինական ճանաչման հնարավորությունը բացառող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով և ՀՀ կառավարության թիվ 912-Ն որոշմամբ սահմանված, հիմքերի բացակայությունը (այդ հիմքերի՝ օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունենալու փաստի ապացուցման պարտականությունը կրում է պատասխանող կողմը), իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցի շրջանակներում այդ կառույցների օրինականացման և ձեռք բերման ուղեգծում հայցվորների օգտին գործում առկա փաստական տվյալները՝ դրանք ապահովող ապացույցների առկայության պայմաններում (ապացույցների թվում նաև Երևանի քաղաքապետի կողմից 2002 թվականին հաստատված գլխավոր հատակագիծը, որում առանձին շինություններ արդեն իսկ առկա են եղել 2002 թվականին: Հետևապես գլխավոր հատակագծի հաստատումը՝ խնդրո առարկա շինությունների ամրագրմամբ, ողջամտորեն բավարար է արձանագրելու, որ բացակայում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով և ՀՀ կառավարության թիվ 912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված՝ այդ կառույցների օրինականացումն արգելող հանգամանքները), վկայում են ուղղակի վաճառքի միջոցով կադաստրային արժեքով «Էրեբունի» և «Նուբարաշեն» թաղամասեր տանող ճանապարհի խաչմերուկի ձախակողմյան մասին հարող բլրի 2,0հա և 4,0հա մակերեսներով հողամասերում առկա անշարժ գույքերով ծանրաբեռնված և դրանց սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, ինչպես նաև նույն հողամասերում առկա ինքնակամ շինությունները ՀՀ կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով հայցվորներին օտարելու վերաբերյալ հայցվորների

պահանջի իրավաչափ լինելու մասին, որպիսի եզրահանգմանն էլ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, իրավացիորեն եկել են ստորադաս դատարանները:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հողամասերը վարձակալությամբ տրամադրելու պահանջին, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Պետության ու համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են հողերի օգտագործման սխեմաներին ու գլխավոր հատակագծերին համապատասխան՝ ժամանակավոր օգտագործման համար:

2. Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները:

3. Պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցույթով:

4. Հողամասը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին.

2) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձանց.

3) օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց:

5. Հողամասն առանց մրցույթի վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման դեպքերը սահմանում է կառավարությունը:

ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման (ուժի մեջ է մտել 08.05.2001 թվականին) 1-ին կետով հաստատվել է պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը, որով ամրագրված կանոնակարգումներից հետևում է, որ որոշակի բացառություններով հանդերձ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության են հանձնվում մրցույթով: Ընդ որում, նշված որոշման բովանդակությունից ուղղակիորեն հետևում է նաև, որ ի թիվս որոշմամբ հաստատված կարգով հատկորոշված այլ դեպքերի, որպես բացառություն՝ առանց մրցույթի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից կարող են վարձակալությամբ տրամադրվել այն հողամասերը, որոնք վարձակալության են տրամադրված եղել մինչև ՀՀ կառավարության վկայակոչված 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման ուժի մեջ մտնելը: Մասնավորապես, որոշման 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելը վարձակալության տրամադրված հողատարածքների վարձակալության ժամկետն ավարտվելուց հետո հողօգտագործման պայմանագրերը կարող են վերակնքվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե օրենքով, այլ իրավական ակտերով կամ այդ պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Փաստորեն, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը, որպես կանոն, վարձակալությամբ տրամադրվում են մրցույթով, բացառությամբ նախորդիվ մատնանշված կարգով նախատեսված դեպքերի (կարգի 44-րդ կետ), ինչպես նաև այն դեպքերում, երբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրվել են մինչև ՀՀ կառավարության թիվ 286 որոշման ուժի մեջ մտնելը՝ 08.05.2001 թվականը: Այլ կերպ ասած՝ 08.05.2001 թվականին նախորդած ժամանակային տիրույթում վարձակալության իրավունքով տրամադրված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո, որպես բացառություն, կարող են տրամադրվել նախկին վարձակալներին՝ առանց մրցույթի: Մա նշանակում է, որ նման դեպքում համայնքային սեփականություն հանդիսացող համայնքի ղեկավարը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով իրեն

տրված հայեցողական լիազորության գործադրմամբ, կարող է մինչև ՀՀ կառավարության թիվ 286 որոշման ուժի մեջ մտնելը վարձակալությամբ տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո տրամադրել նախկին վարձակալներին՝ առանց մրցույթի:

Այսպես՝ 22.12.2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ռոջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(ընդհանուր, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Եննգամիլիի հարկային րեսուրսները*

ընդդեմ անհար ձեռնարկարեր Գորգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՃԳ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը:

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված վարչական մարմնի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է վարչական մարմնին վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ վարչական մարմնի հնարավորությանը,

3) վարչական մարմնի կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վարչական մարմինը չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ իրավական պետությունում պետաիշխանական լիազորություններով օժտված բոլոր սուբյեկտներին վերապահված հայեցողական լիազորությունները կարող են գործադրվել միայն իրավունքի սահմաններում: Հետևաբար հայեցողական վարչարարությունը ևս կաշկանդված, սահմանափակված է իրավունքով: Այդ իսկ պատճառով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն ամրագրել է, որ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել՝

- մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ,
- իրավահավասարության սկզբունքով,
- վարչարարության իրականացման համաչափության սկզբունքով,
- կամայականության արգելքի սկզբունքով:

Միաժամանակ վկայակոչված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է նաև, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ՝ ընդգծելով, որ նշված իրավադրույթից հետևում է, որ վարչական մարմինները հայեցողական լիազորություններ իրականացնելիս կաշկանդված են նաև հայեցողության այն նպատակով, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ամրագրված է հայեցողություն վերապահող օրենքում: Այսինքն՝ վարչական մարմինը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պարտավոր է պարզել իրեն հայեցողություն վերապահող օրենքի նպատակը և իր հայեցողությունն իրականացնել օրենքի սահմաններում՝ այդ նպատակին հասնելուն ուղղված միջոցների օգտագործմամբ:

Ըստ այդմ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական մարմինների կողմից օրենքով ամրագրված սահմանների խախտմամբ կամ օրենքով կանխորոշված նպատակին ոչ համահունչ կերպով հայեցողական լիազորությունների իրականացումը հանգեցնում է հայեցողական հետևյալ սխալների.

- 1) սխալ ենթադրություն հայեցողության բացակայության մասին (հայեցողության չօգտագործում),
- 2) տվյալ փաստակազմի համար օրենքով չսախատեսված իրավական հետևանքի կիրառում կամ հայեցողության չարաշահում (վերազանցում),
- 3) հայեցողության կիրառման ժամանակ փաստական հանգամանքների ոչ ամբողջական պարզում:

Անփոփելով վկայակոչված դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական մարմինների վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը պետք է ստուգի հայեցողության կիրառման ժամանակ այնպիսի սխալների

առաջացման հարցը, որոնք պայմանավորված են հայեցողության՝ օրենքով ուրվագծված սահմանների կամ օրենքով նախանշված նպատակի անտեսմամբ: Այլ կերպ ասած՝ հայեցողական լիազորությունների իրավաչափության գնահատման համար դատարանը, մասնավորապես, պետք է պարզի արդյոք վարչական հայեցողությունը հետևողականորեն է կիրառվել, թե՛ ոչ, և արդյոք վարչական մարմինը թույլ է տվել վերը նշված հայեցողական սխալներից որևէ մեկը, թե՛ ոչ (*լրե՛ս, օրինակ, «Նարայի Ֆարս» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ Կրնրեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի թիվ ՎԳ/6329/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Ջարգացնելով վկայակոչված դիրքորոշումները և ընդգծելով, որ 22.12.2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանդրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմններն իրենց հայեցողական լիազորությունների իրականացման ուղեգծում կաշկանդված են անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով պահպանվող իրավունքներով: Ըստ այդմ, վարչական մարմնի կողմից նախկինում անձանց որևէ իրավունք տրամադրված լինելու պայմաններում, վարչական մարմինը չի կարող հայեցողական լիազորությունների մատնանշմամբ հրաժարվել այդ անձանց վերստին նույնարվանդակ իրավունքների տրամադրումից, եթե չի վկայակոչում իրավունքի տրամադրման մերժում ենթադրող ծանրակշիռ փաստարկներ՝ *ապահովված պարշաճ ապացույցներով*, քանի որ վարչական մարմինը պարտավոր է հաշվի նստել նաև այդ անձանց տնտեսական գնահատելի շահի և դրանից բխեցված օրինական ակնկալիքի հետ, որն անձը ձեռք է բերել իրեն տրամադրված իրավունքն իրացնելով: Մասնավորապես, իրացնելով իրեն տրամադրված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող որևէ գույքից որոշակի ժամանակահատվածում օգտվելու իր իրավունքը, այդ անձը պահպանում է նույն գույքից հետագայում ևս օգտվելով տնտեսական գնահատելի շահ ստանալու իր իրավունքը, որպիսի իրավունքը կաշկանդում է այդ նույն գույքն այլևս նույն անձին չտրամադրելու վարչական մարմնի հայեցողական լիազորությանը: Այլ կերպ ասած՝ եթե անձը շարունակում է պահպանել որոշակի ժամկետով օգտագործման իրավունքով իրեն տրամադրված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող գույքից օգտվելու տնտեսական գնահատելի շահը (օրինակ՝ վարձակալության իրավունքով որոշակի ժամկետով տրամադրված գույքի շահագործումից ստացել կամ ժամկետի տիրույթում ստանում է եկամուտներ՝ պահպանելով այդ նույն գույքի հետագա օգտագործումից եկամուտներ ստանալու օրինական ակնկալիքը՝ որպես տնտեսական գնահատելի շահ), ապա այդ գույքը վերստին նույն անձին տրամադրելու վարչական մարմնի հայեցողական լիազորությունը կարող է կիրառվել ոչ հօգուտ այդ անձի միայն այն դեպքում, երբ վարչական մարմինը կարողանում է պատշաճ ապացույցներով ապահովված ծանրակշիռ փաստարկերով ապացուցել, որ հայեցողական լիազորությունը ոչ հօգուտ անձի կիրառելն արդարացված է՝ պայմանավորված հասարակական շահով և պիտանի է ժողովրդական հասարակությունում՝ պայմանով, որ այդպիսի հասարակական շահն առավել կարևոր է տվյալ անձի տնտեսական գնահատելի շահից:

Քննարկվող դեպքում հողամասերը վարձակալությամբ հանձնելուն Երևանի քաղաքապետարանին պարտավորեցնելու պահանջի մասով ընդգծելով, որ. «(...) *ինդրոտ առարկա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը հայցվորներին վարձակալության են փոխանցվել մինչև ՀՀ կառավարության թիվ 286 որոշման ուժի մեջ մտնելը, և սուկա չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով սահմանված այլ կարգավորում, քան ՀՀ կառավարության թիվ 286 որոշման 3-րդ կետի «բ» ենթակետով նախատեսվածն է (...)*»՝ Դատարանը եզրահանգել է, որ «(...) *յովյալ դեպքում սուկա է մինչև 08.05.2001 թվականի վարձակալության փոխանցված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը, վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո ստանց մրցույթի նախկին վարձակալներին՝ հայցվորներին, վարձակալության փոխանցվելու*»

Երևանի քաղաքապետի հայցողական լիազորության իրացման անհրաժեշտ փաստական հիմքը»:

Միաժամանակ նույն պահանջի մասով գործով ձեռք բերված ապացույցների լույսի ներքո արձանագրելով, որ «(․․) մինչև 2001 թվականը՝ դեռևս 26.09.1994 և 22.04.1996 թվականներին, խնդրո առարկա հողամասերը վարձակալության պայմանագրով վարձակալության են հանձնված եղել հայցվորների»՝ Վերաքննիչ դատարանը ևս եզրակացրել է, որ վիճելի իրավահարաբերությունը համապատասխանում է ՀՀ կառավարության թիվ 286 որոշման 3-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված՝ մինչև նույն որոշման ուժի մեջ մտնելը վարձակալության տրամադրված հողատարածքների վարձակալության ժամկետն ավարտվելուց հետո հողօգտագործման պայմանագրերը կարող են վերակնքվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, դեպքին:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր է որակում գործի փաստերից բխեցված ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ ընդգծելով, որ ստորադաս դատարանների վկայակոչած փաստական և իրավական հիմքերը համապատասխանում են իրերի իրական դրությանը:

Մասնավորապես, մատնանշելով, որ թիվ ԵԿԴ/2102/02/15 քաղաքացիական գործով 20.09.2016 թվականին կայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի վճռով (օրինական ուժի մեջ է մտել 25.05.2017 թվականին) լուծվել է Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի և Մարետա Խորշոդյանի միջև, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի և Նաիրա Ավետիսյանի միջև 24.12.2002 թվականին կնքված՝ սույն գործով վարձակալության իրավունքով պահանջվող (այսուհետ՝ Վիճահարույց), հողամասերի վարձակալության պայմանագրերը՝ Վճռաբեկ դատարանը հատկապես շեշտադրում է, որ Վիճահարույց հողամասերի նկատմամբ առանց մրցույթի վարձակալության իրավունք ձեռք բերելու հայցվոր կողմի՝ ՀՀ կառավարության 12.04. 2001 թվականի թիվ 286 որոշումից բխող իրավունքը ծագել է Վիճահարույց հողամասերի նկատմամբ 26.09.1994 և 22.04.1996 թվականներին՝ մինչև ՀՀ կառավարության թիվ 286 որոշումն ուժի մեջ մտնելու պահը (08.05.2001 թվականը), կնքված վարձակալության իրավունք ստացած լինելու փաստի ուժով: Այլ կերպ ասած՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտով լուծվել են Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի և հայցվոր կողմի միջև 24.12.2002 թվականին կնքված վարձակալության պայմանագրերը, իսկ սույն գործով Վիճահարույց հողամասերն առանց մրցույթի վարձակալության իրավունքով ձեռք բերելու հայցվոր կողմի իրավունքի իրացման հնարավորությունը պայմանավորված է դրանք մինչև ՀՀ կառավարության թիվ 286 որոշման ուժի մեջ մտնել կնքված 26.09.1994 և 22.04.1996 թվականների պայմանագրերով հայցվոր կողմին վարձակալությամբ հանձնված լինելու իրողությամբ: Այլ կերպ ասած, թիվ ԵԿԴ/2102/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում կարգավորված հարցը տարբերվում է քննարկվող դեպքում կարգավորման ենթակա հարցից, քանի որ սույն դեպքը վերաբերում է մինչև ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման ուժի մեջ մտնելը Վիճահարույց հողամասերը հայցվոր կողմին վարձակալությամբ տրամադրված լինելու պայմաններում նույն հողամասերն առանց մրցույթի վարձակալության իրավունքով ձեռք բերելու հայցվոր կողմի իրավունքների առկայությանն ու դատարանի կողմից վճռի կայացման պահին դրանց պահպանված լինելուն, և ըստ այդմ՝ այդ իրավունքներն իրացվելու հարցի լուծմանը, մինչդեռ, թիվ ԵԿԴ/2102/02/15 քաղաքացիական գործը վերաբերել է Երևանի քաղաքապետի 04.12.2002 թվականի թիվ 2478-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի և հայցվոր կողմի միջև 24.12.2002 թվականին կնքված վարձակալության պայմանագրերից ծագած հայցվոր կողմի վարձակալության իրավունքների հետագա շարունակելիությանը, որպիսի քաղաքացիական գործի քննության արդյունքում կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտով որոշվել է Երևանի քաղաքապետի 04.12.2002 թվականի թիվ 2478-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի և հայցվոր կողմի

միջև 24.12.2002 թվականին կնքված վարձակալության պայմանագրերի լուծմամբ այլևս չշարունակել բացառապես այդ պայմանագրերի հիման վրա կողմերի միջև 24.12.2002 թվականին հաջորդող ժամանակային տիրույթում ձևավորված վարձակալական իրավահարաբերությունները: Փաստորեն, բովանդակային առումով թիվ ԵԿԴ/2102/02/15 քաղաքացիական գործով դատավարության մասնակիցների միջև վեճի շրջանակը ներառել և եզրագծել է այն իրավահարաբերությունները, որոնք վերաբերում են Երևանի քաղաքապետի 04.12.2002 թվականի որոշման հիմքով Հայաստանի Հանրապետության ի դեմս Երևանի քաղաքապետարանի և Մարետա Խուրշուդյանի, ինչպես նաև նույն որոշման հիմքով Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի և Նաիրա Ավետիսյանի միջև ձևավորված վարձակալական իրավահարաբերությունների չեղարկմանը, իսկ սույն դեպքում բովանդակային առումով կողմերի միջև վեճը վերաբերում է մինչև ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման ուժի մեջ մտնելը Վիճահարույց հողամասերը հայցվոր կողմին վարձակալությամբ տրամադրված լինելու պայմաններում նույն հողամասերն առանց մրցույթի վարձակալության իրավունքով ձեռք բերելու հայցվոր կողմի իրավունքների առկայության կամ բացակայության հարցի պարզմանը, ինչը նշանակում է, որ սույն գործով վեճի շրջանակը եզրագծվում է լիովին այլ հիմքերով հայցվորների կողմից Վիճահարույց հողամասերի նկատմամբ վարձակալության իրավունք ձեռք բերելու հարցի պարզմամբ: Ըստ այդմ, պետք է փաստել, որ թիվ ԵԿԴ/2102/02/15 քաղաքացիական գործի քննության արդյունքում կայացված վճիռը սույն գործով գնահատման ենթակա փաստական հանգամանքների, ուստի և գործի օբյեկտիվ հանգուցալուծման տեսանկյունից՝ դրա իրավական գնահատման նկատմամբ որևէ նշանակություն չունի: Հետևապես Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վիճահարույց հողամասերն առանց մրցույթի հայցվոր կողմին տրամադրելու հարցի լուծման ուղեգծում թիվ ԵԿԴ/2102/02/15 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը որևէ իրավաբանական նշանակություն չունի:

Շարունակելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործով հավաքված փաստերի պայմաններում այլևս անհերքելի է, որ թիվ 2-354 գործով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 04.06.2002 թվականի վճռով Վիճահարույց հողամասերի նկատմամբ, փաստորեն, ճանաչվել է սույն գործով հայցվոր կողմի օգտագործման իրավունքը: Ընդ որում, վճռով ճանաչված իրավունքների ժամանակային սահմանափակում չի նախատեսվել: Այսինքն, նշված գործով Վիճահարույց հողամասերի նկատմամբ ճանաչված հայցվոր կողմի օգտագործման իրավունքը չի եզրագծվել որևէ ժամանակային տիրույթով:

Մասնավորապես, վկայակոչված վճռով դատարանը որոշել է ճանաչել Երևանի Նոր Արեշի 45-րդ փողոցից դեպի «Էրեբունի» և «Նուբարաշեն» թաղամասեր տանող ճանապարհի ձախակողմյան մասում գտնվող 2,0հա, 4,0հա և 4,0հա մակերեսներով բլրի, հողամասերի նկատմամբ համապատասխանաբար Նաիրա Ավետիսյանի (2,0հա), Մարիետա Խուրշուդյանի (4,0հա) և Արամայիս Ավետիսյանի (4,0հա) օգտագործման իրավունքը և պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին վերակնքելու նշված հողամասերի նկատմամբ վարձակալության պայմանագրերը՝ դրանք համապատասխանեցնելով գործող օրենսդրության պահանջներին:

Փաստորեն, նշված վճռով նախ՝ ճանաչվել է Վիճահարույց հողամասերի նկատմամբ Մարետա Խուրշուդյանի և Նաիրա Ավետիսյանի օգտագործման իրավունքը, հետո՝ որոշվել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին վերակնքելու հողամասերի նկատմամբ վարձակալության պայմանագրերը՝ դրանք համապատասխանեցնելով գործող օրենսդրության պահանջներին: Մտացվում է, որ նշված վճիռը, իրավական բնույթի տեսանկյունից, ունի ճանաչողական և կատարողական բնույթ: Մասնավորապես, Վիճահարույց հողամասերի նկատմամբ Մարետա Խուրշուդյանի և Նաիրա Ավետիսյանի օգտագործման իրավունքը ճանաչելու մասով նշված վճիռը ճանաչողական բնույթ ունի, ինչը նշանակում է, որ բացակայում է այդ մասով դրա կատարման իրավական անհրաժեշտությունը և ճանաչված իրավունքների գոյությունն անվիճելի է վճռի ուղղակի գոյությունը: Իսկ վճիռն այն մասով, որով Երևանի քաղաքապետարանը պարտավորեցվել է

կատարելու որոշակի գործողություններ, կատարողական քննյթի է, ինչն էլ կատարվել է Երևանի քաղաքապետարանի կողմից՝ 04.12.2002 թվականի թիվ 2478-Ա որոշման ընդունման միջոցով Վիճահարույց հողամասերի նկատմամբ Մարետա Խուրշուդյանի և Նաիրա Ավետիսյանի հետ վարձակալության պայմանագրերի կնքմամբ:

Փաստորեն, նշված վճռի կատարում պահանջող մասով, որով Երևանի քաղաքապետարանը պարտավորեցվել է վերակնքելու, փաստորեն, Վիճահարույց հողամասերի վարձակալության պայմանագրերը՝ դրանք համապատասխանեցնելով գործող օրենսդրության պահանջներին, Երևանի քաղաքապետն ընդունել է 04.12.2002 թվականի թիվ 2478-Ա որոշումը՝ Վիճահարույց հողամասերը վարձակալության իրավունքով, տասը տարի ժամկետով հայցվոր կողմին տրամադրելու մասին, որպիսի որոշման հիման վրա կնքված վարձակալության պայմանագրերը լուծվել են թիվ ԵԿԴ/2102/02/15 քաղաքացիական գործով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտով: Բայցևայնպես սա չի նշանակում, որ թիվ ԵԿԴ/2102/02/15 քաղաքացիական գործի քննության արդյունքում կայացված վճռով չեղարկվել է նաև Վիճահարույց հողամասերի նկատմամբ թիվ 2-354 գործով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 04.06.2002 թվականի վճռով ճանաչված հայցվոր կողմի օգտագործման իրավունքը: Այսինքն, թիվ ԵԿԴ/2102/05/15 քաղաքացիական գործով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտը, իրավական հետևանքների իմաստով, ազդեցություն ունի բացառապես թիվ 2-354 գործով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի վճռի այն մասի նկատմամբ, որով Երևանի քաղաքապետարանը պարտավորեցվել է հայցվոր կողմի հետ վերակնքել Վիճահարույց հողամասերի վարձակալության պայմանագրերը, իսկ նույն վճռով Վիճահարույց հողամասերի նկատմամբ հայցվոր կողմի օգտագործման իրավունքը ճանաչված լինելու մասի նկատմամբ՝ հաշվի առնելով, որ Վիճահարույց հողամասերի նկատմամբ հայցվոր կողմի օգտագործման իրավունքը ճանաչելու մասին դատարանի որոշումը չի եզրագծել որևէ ժամանակային սահմանափակում, որևէ իրավական նշանակություն կամ ազդեցություն չունի: Այլ կերպ ասած՝ թիվ 2-354 գործով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 04.06.2002 թվականի վճռի հիմքով օբյեկտիվ իրականության մեջ անընդհատությամբ իրավաբանորեն գոյություն ունի Վիճահարույց հողամասերի նկատմամբ հայցվոր կողմի օգտագործման իրավունքը: Իսկ այդ իրավունքի գոյությունը, թիվ 2-354 գործով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 04.06.2002 թվականի վճռի օրինական ուժի մեջ գտնվելու պայմաններում, կաշկանդում է Երևան համայնքին Վիճահարույց հողամասերը հայցվոր կողմին վարձակալության իրավունքով վերստին չտրամադրելու հարցում:

Հաջորդիվ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Մարետա Խուրշուդյանի, Նաիրա Ավետիսյանի և Երևանի քաղաքապետարանի մասնակցությամբ քննված թիվ ՎԴ/11711/05/17 վարչական գործով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերով ՀՀ վարչական դատարանը և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը հաստատված են համարել, որ թիվ ԵԿԴ/2102/02/15 քաղաքացիական գործով կայացված օրինական ուժի մեջ մտած դատական ակտով լուծված՝ 12.04.2004 թվականին Հայաստանի Հանրապետության ի դեմս Երևանի քաղաքապետարանի և Մարետա Խուրշուդյանի միջև կնքված թիվ 161/ԱԳ վարձակալության պայմանագրից ծագած Մարետա Խուրշուդյանի անվամբ իրականացված վարձակալության իրավունքի պետական գրանցումը դադարեցված չէ՝ անվավեր ճանաչելով վիճահույց հողամասից Մարետա Խուրշուդյանին և Նաիրա Ավետիսյանին վտարելու ուղղությամբ նշված գործով պատասխանող ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կայացրած «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու մասին» 18.10.2017 թվականի որոշումը (նշված մասով հիշատակված դատական ակտերը մտել են օրինական ուժի մեջ) [հիմք՝ court.am տեղեկատվական կայքի տվյալները]: Սա նշանակում է, որ թիվ ԵԿԴ/2102/02/15 քաղաքացիական գործով կայացված՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չի հանգեցրել իրավական հետևանքների՝ հաշվի առնելով, որ վիճահարույց հողամասի նկատմամբ

Մարեռա հուրշուղյանի անվամբ իրականացված իրավունքի պետական գրանցումը՝ վարչական ակտը, պահպանում է իր իրավաբանական ուժը, հետևապես նշված գործն ըստ էության լուծող դատական ակտը նաև այս հիմքով որևէ առանցքային նշանակություն չունի սույն գործի նկատմամբ:

Ըստ այդմ, Վիճահարույց հողամասերն առանց մրցույթի վարձակալության իրավունքով ձեռք բերելու՝ ՀՀ կառավարության թիվ 286 որոշումից, ինչպես նաև թիվ 2-354 գործով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին արյանի դատարանի օրինական ուժի մեջ մտնող 04.06.2002 թվականի վճռից բխող հայցվոր կողմի իրավունքների իրավաչափության առկայությանը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վիճահարույց հողամասերն առանց մրցույթի հայցվոր կողմին տրամադրելու պահանջը հիմնավոր որակելու ուղեգծում ստորադաս դատարանները եկել են ճիշտ եզրահանգման՝ միաժամանակ հավելելով, որ նախկինում վարձակալված Վիճահարույց հողամասերում տարիներ շարունակ կատարվելով մեծածավալ ներդրումներ և շինարարական աշխատանքներ (գործում առկա Երևանի քաղաքապետարանի «Երևաննախագիծ» ընկերության կողմից 25.12.2017 թվականին թողարկված աշխատանքային նախագծի մաս կազմող նախահաշվի համաձայն՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն թաղամասեր տանող ճանապարհի խաչմերուկի և ձախակողմյան մասին հարող բլրի 4,0հա և 2,0հա մակերեսներով հողամասերում փաստացի կատարված շինարարական աշխատանքների նախահաշվային ընդհանուր արժեքը մոտավորապես կազմում է 720.000.000 ՀՀ դրամ), միաժամանակ ծավալելով ձեռնարկատիրական գործունեություն, ուրվագծելով նաև նոր ներդրումային ծրագրեր՝ հայցվորներն ունեն Վիճահարույց հողամասերն առանց մրցույթի վարձակալության իրավունքով տիրապետելու արդարացված տնտեսական գնահատելի շահ, հետևապես վարչական մարմինը կաշկանդված է Վիճահարույց հողամասերը հայցվոր կողմին վարձակալությամբ տրամադրելու հայեցողությամբ՝ հաշվի առնելով նաև, որ պատասխանող կողմը որևէ ծանրակշիռ հակափաստակ չի մատնանշել Վիճահարույց հողամասերը հայցվորին տրամադրելը մերժելու իր դիրքորոշումն արդարացնելու ուղեգծում: Մասնավորապես, Երևան համայնքը հայցվորների ներդրումային ծրագրերին չի հակադրել Վիճահարույց հողամասերի վրա հասարակական շահով պայմանավորված ծավալվելիք որևէ գործունեություն, որևէ ծրագիր կամ նախաձեռնություն, որը կարողարացներ Վիճահարույց հողամասերը վարձակալությամբ հայցվորներին տրամադրելու մերժումը, որպիսի իրողությունն ուղղակիորեն վկայում է խնդրո առարկա հողամասերը հայցվորներին տրամադրելու հայեցողական լիազորությունն իրացնելիս պատասխանողի որդեգրած վարքագծի ոչ իրավաչափ նպատակ հետապնդելու մասին: Ըստ այդմ, հաշվի առնելով այնպիսի իրավաչափ նպատակի բացակայությունը, որի պաշտպանությունը պահանջում է մերժել հայցվորներին խնդրո առարկա հողամասերի վարձակալության տրամադրումը պետք է փաստել, որ հայցվորներին Վիճահարույց հողամասերը վարձակալության չտրամադրելով՝ պատասխանող վարչական մարմինն իր հայեցողական լիազորությունն իրացրել է՝ խախտելով վարչարարության համաչափության սկզբունքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով այլևս առանցքային որևէ նշանակություն չունի Վիճահարույց հողամասերի վարձակալության պայմանագրերը լուծվել են, թե ոչ, դրանցով ամրագրված ժամկետներն ավարտված են, թե ոչ՝ հաշվի առնելով, որ առկա փաստերի պայմաններում ՀՀ կառավարության թիվ 286 որոշման 3-րդ կետի «բ» ենթակետի, *ինչպես նաև թիվ 2-354 գործով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին արյանի դատարանի օրինական ուժի մեջ մտնող 04.06.2002 թվականի վճռի* ուժով հայցվորներն այլևս ունեն խնդրո առարկա հողամասերը ձեռք բերելու իրական հնարավորություն, որպիսի հնարավորությունը, այլ շահերի բախման բացակայության պայմաններում, հայցվորները պահպանում են նաև այժմ:

Վճռաբեկ բողոքի պատրաստմանում նշված փաստարկները հիմնավորվում են սույն պարզառարարություններով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Դատարանը, բավարարելով

Մարեոս Խորշուղյանի և Նաիրա Ավետիսյանի հայքը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփութիոյ թողնելով Դատարանի նշված վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփութիոյ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Քաղաքապետարանը վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարել է 40.000 ՀՀ դրամ պետական տուրք, ուստի պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը եկթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.06.2020 թվականի որոշումը թողնել անփութիոյ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/8932/05/18 2022թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/8932/05/18
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Ա. Պողոսյան
Ա. Բաբայան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Է. ՄԵԴԻԱԿՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի մայիսի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Գոհար Հակոբյանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, Կոմիտեի բերած վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.02.2020 թվականի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարամոթյունը

Ի հիմելով դատարանի Գոհար Հակոբյանը պահանջել է Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումն անվավեր ճանաչել:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 26.03.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 07.02.2020 թվականի որոշմամբ Գոհար Հակոբյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Դատարանի 26.03.2019 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Ա.Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 27-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «բ» կետը, 29.1-րդ հոդվածը, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասը վերաբերում է այն վարչական ակտին, որով առաջադրվել է հարկային պարտավորություն, մինչդեռ պարտավորությունների գանձման որոշմամբ հարկային պարտավորություն չի առաջադրվում, այլ կայացվում է արդեն իսկ առկա և օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չվճարված պարտավորությունների գանձման վերաբերյալ որոշում: Ուստի, քանի դեռ հարկային պարտավորությունը չի դադարել, այդ թվում՝ դատական ակտով, գանձման որոշումն ընթացակարգային խախտման հիմքով անվավեր ճանաչված լինելու դեպքում անձնական հաշվի քարտում փոփոխություն չի կարող կատարվել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից բարձրացված այն հարցին, որ նույն պարտավորության վերաբերյալ իրականացվել է կրկնակի վարչարարություն, այսինքն՝ կայացվել է երկրորդ գանձման որոշում, ապա բողոք բերած անձը նշել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ինստրատիվ նորմ, որով արգելվում է իրականացնել կրկնակի վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի տառացի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ այն վերաբերում է միայն դիմումով հարուցված վարչական վարույթներին: Մինչդեռ քննարկվող դեպքում վիճարկվող վարչական ակտի վարույթը հարուցվել է ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգով՝ հարկային մարմնի նախաձեռնությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.02.2020 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ կամ գործն ուղարկել համապատասխան դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի իրավաբանական վարչության պետը 19.04.2017 թվականին կայացրել է թիվ 509/01 որոշումը՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին, որով սահմանվել է, որ ժամանակին չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 20.808.744 ՀՀ դրամ (**հիմք՝ ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 12.07.2017 թվականի որոշում, հատոր 1-ին, գ.թ. 58-67**).

2) Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017 թվականի թիվ 29/1 որոշմամբ Գոհար Հակոբյանի գանգատը մերժվել է՝ Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 19.04.2017 թվականի թիվ 509/01 որոշումը

թողնվել է անվտույտ (հիմք՝ ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 12.07.2017 թվականի որոշում, հատոր 1-ին, գ.թ. 58-67)։

3) ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 12.07.2017 թվականի որոշմամբ Գոհար Հակոբյանի վարչական բողոքը բավարարվել է, անվավեր է ճանաչվել Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017 թվականի թիվ 29/1 որոշումը և կայացվել է նոր վարչական ակտ. անվավեր է ճանաչվել Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 19.04.2017 թվականի թիվ 509/01 որոշումը։

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 12.07.2017 թվականի որոշմամբ Գոհար Հակոբյանի վարչական բողոքը բավարարվել է այն հիմնավորմամբ, որ Կոմիտեի կողմից կայացված ակտով չի հիմնավորվել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «բ» ենթակետի կիրառելիությունը, քանի որ վարչական գործի նյութերում առկա չէ ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր Մամիկոնյանց փողոցի 38/3 շենքի թիվ 54 բնակարանի և ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն, Լեփսիուսի 5-րդ փողոցի 8/4 շենքի 11 բնակարանի մասով կնքված պայմանագրերից իրավունքների պետական գրանցումը հավաստող որևէ ապացույց (**հատոր 1-ին, գ.թ. 58-67**)։

4) Կոմիտեի իրավաբանական վարչության պետը 10.07.2018 թվականին կայացրել է թիվ 981-Ա-1 որոշումը, որով որոշել է Գոհար Հակոբյանից գանձել 20.808.744 ՀՀ դրամ։ Նշված որոշման հիմքում դրվել են այն նույն իրավական և փաստական հիմքերը, որոնց հիման վրա ընդունվել էր Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 19.04.2017 թվականի թիվ 509/01 որոշումը (իրավահարաբերության ծագման պահին գործող) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը (մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու անգամ նույն տեսակի գույքի օտարման փաստը) (**հատոր 1-ին, գ.թ. 56-57**)։

4. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ինչը հերքվում է ստորև ներկայացվող պատճառաբանություններով։

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- արդյո՞ք վարչական մարմինն իրավասու է սեփական նախաձեռնությամբ հարուցել վարչական վարույթ և միջանրող վարչական ակտ ընդունել այն անձի վերաբերյալ, որի նկատմամբ միևնույն ստարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով նախկինում ընդունված վարչական ակտը ճանաչվել է անվավեր օրենքի խախտմամբ ընդունված լինելու հիմքով։

Ա) ՀՀ Սահմանադրության «Պատշաճ վարչարարության իրավունքը» վերտառությամբ 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք։

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք։

Վճարել դատարանի գնահատմամբ վարչական մարմինների հիմնական գործառույթային նպատակը Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված պատվիրանների կատարումն է՝ իրավական պետության սկզբունքներին և կանոններին համապատասխան։

Վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից 18.02.2004 թվականին ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածում ամրագրվել է, որ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:

Վարչարարության հիմնարար սկզբունքները, որոնք իրենց ամրագրում են ստացել վերոգրյալ օրենքի 2-րդ գլխում, վարչական իրավունքի ոլորտում որոշակիացնում են սահմանադրական սկզբունքները՝ հանդիսանալով վարչարարության նորմատիվ ուղենիշեր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչարարության հիմնարար սկզբունքները վարչական իրավունքի առանցքային հիմնադրություններն են, որոնք, ընդհանուր առմամբ, ուղղորդում են վարչական մարմինների ցանկացած գործունեություն: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչարարության հիմնարար սկզբունքների կարգավորիչ դերը կայանում է նրանում, որ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարությունը պետք է համապատասխանի նշված սկզբունքներին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում ամրագրվել են վարչարարության հետևյալ հիմնարար սկզբունքները.

- վարչարարության օրինականության սկզբունքը (հոդված 4-րդ),
- ձևական պահանջները չարաշահելու արգելքի սկզբունքը (հոդված 5-րդ),
- հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը (հոդված 6-րդ),
- կամայականության արգելքի սկզբունքը (հոդված 7-րդ),
- վարչարարության համաչափության սկզբունքը (հոդված 8-րդ),
- առավելագույնի սկզբունքը (հոդված 9-րդ),
- հավաստիության կանխավարկածի սկզբունքը (հոդված 10-րդ),
- տնտեսվարության սկզբունքը (հոդված 11-րդ):

Վերոգրյալ սկզբունքներից առանձնանում է վարչարարության օրինականության սկզբունքը, որը վարչական մարմիններին պարտադրում է հետևել օրենքների պահպանմանը: Նշված սկզբունքն ունի առանցքային նշանակություն և ընկած է մյուս բոլոր սկզբունքների հիմքում, քանի որ առանց այդ սկզբունքի մյուսներն իմաստազրկվում են:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հատուկ ընդգծել, որ օրինականության սահմանադրական սկզբունքն ուղղակիորեն պահանջում է, որպեսզի գործադիր իշխանության մարմինների գործունեությունը հիմնված լինի Սահմանադրության և օրենքի վրա: Օրենքի գերակայությունը նշանակում է, որ որևէ վարչարարություն չի կարող հակասել օրենքին կամ օրենքի ուժով վարչական մարմնի համար պարտադիր այլ իրավական ակտերին: Օրենքը գերակայում է վարչարարության հանդեպ, հետևաբար, ցանկացած վարչարարություն ենթարկվում, ստորադասվում է օրենքին թե՛ ըստ ձևի, թե՛ ըստ բովանդակության, հետևաբար ակներև է, որ վարչարարությունը եզրափակող իրավական ակտերը (նորմատիվ և վարչական) կամ ռեալ ակտերը (գործողությունները և անգործությունը) նույնպես պետք է համապատասխանեն օրենքին: Դրանք պետք է ընդունվեն կամ ձեռնարկվեն օրենքով սահմանված կարգով:

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ վարչական մարմինների կողմից իրականացվող ցանկացած գործողություն պետք է համապատասխանի Սահմանադրությանն ու օրենքներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վարչարարությունը բնորոշվում է որպես վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ,

ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող վարչարարությունը՝ վարչական վարույթի ընդհանուր դրույթները, հարուցման և ընթացիկ փուլերի առանձնահատկությունները սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ բաժնում (հոդվածներ 19-52):

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ սույն օրենքով նախատեսված գործառույթները (ընթացիկ փուլ):

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, այն է՝ գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու վարչական մարմնի պարտականությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշմամբ արձանագրել է, որ թեև իրավական պետության պայմաններում մասնավոր անձանց առնչվող վարչական մարմինների կողմից իրականացվող գործունեության իրավաչափության միակ չափանիշը նյութական իրավունքը չէ և վարչական մարմնի գործունեությունը նաև պետք է համապատասխանի օրենսդրի կողմից սահմանված ընթացակարգային պահանջներին, սակայն միաժամանակ ընթացակարգային պահանջները ՀՀ իրավական համակարգում ունեն օժանդակ գործառույթ: Ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթի իրավական բնույթը կայանում է նրանում, որ ընթացակարգային պահանջներին հետևելու նպատակն իրավաչափ որոշում կայացնելն ու շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է, և այն իրավահարաբերություններում որտեղ ընթացակարգային պահանջների պահպանման և իրավաչափ որոշում կայացնելու և շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանելու միջև անմիջական կապը բացակայում է, ընթացակարգային պահանջները և դրանց խախտման իրավական հետևանքները հարաբերական բնույթ են կրում: Այսինքն՝ նյութական իրավունքի համեմատությամբ ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթն արտահայտվում է նրանում, որ ընթացակարգային սխալները որոշիչ չեն, եթե չեն ազդում որոշման նյութական իրավաչափության վրա և չեն խախտում շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները (*յրես, Գիրթա Հեղափոխության քննարկումները* ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ ՎԳ/6781/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

Վերը նշված իրավանքումների և իրավական դիրքորոշման հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավական պետությունում, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, վարչական մարմինների կողմից իրականացվող արտաքին ներգործություն ունեցող ոչ մի գործողություն չի կարող հակասել օրենսդրությանը: Ընդ որում, նշված պահանջը վերաբերում է ինչպես նյութաիրավական, այնպես էլ ընթացակարգային իրավանքումների, քանի որ վարչական մարմինների գործունեության իրավաչափության միակ չափանիշը նյութական իրավունքը չէ և վարչական մարմնի գործունեությունը պետք է համապատասխանի նաև օրենսդրի կողմից սահմանված ընթացակարգային

պահանջներին: Ընթացակարգային պահանջներին հետևելու նպատակն իրավաչափ որոշում կայացնելն ու շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է: Հետևապես, եթե վարույթն իրականացրած մարմնի կողմից թույլ տրված ընթացակարգային խախտումը գնահատվել է էական (որոշիչ), որն ազդեցություն է ունեցել ակտի նյութական իրավաչափության վրա՝ այդպիսով հանգեցնելով դրա անվավերությանը, ապա չի կարող հետագայում այդ խախտումը վերացվելու միջոցով նույն անձի նկատմամբ վերջինիս դրսևորած վարքագծի հիման վրա վարչական մարմնի կողմից իրականացվել կրկնակի վարչարարություն և ընդունվել նոր վարչական ակտ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված վարչական մարմնի լիազորությունների իրավաչափ իրականացման հարցին անդրադառնալով ՀՀ վճռաբեկ դատարանը 07.04.2018 թվականի ՎԴ2/0090/05/16 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «(...) Այլ կերպ ասած՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված իրավական նորմերը պետք է մեկնաբանել այնպես, որ հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշում կայացնելու հարկային մարմնի լիազորությունը կիրառելի է միայն այն հարկային պարտավորությունների մասով, որոնք **դեռևս հաստատված չեն որևէ վարչական ակտով, այսինքն՝ դեռևս որևէ վարչական ակտով առաջադրված չեն համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ:** Քննարկվող իրավադրույթների հակառակ մեկնաբանման դեպքում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ իրավական համակարգում միաժամանակ գոյություն են ունենում և գործում են միևնույն հանրային իրավական դրամական պահանջին վերաբերող երկու տարբեր վարչական ակտեր, ինչը խաթարում է հանրային իրավահարաբերությունների կայունությունն ու այդ բնագավառում իրավական անվտանգությունը»:

ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած վերոնշյալ դիրքորոշման հիման վրա, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վճռաբեկ բողոքի այն հիմքին, ըստ որի՝ օրենքը չի նախատեսում վարչական մարմնի կողմից կրկնակի վարչական վարույթ հարուցելու լիազորությունների մասով իմպերատիվ արգելք, հետևաբար ըստ բողոքաբերի վարչական մարմինը նման պայմաններում իրավասու է հարուցելու կրկնակի վարչական վարույթ:

Բողոքի նշված հիմքի շրջանակում անհրաժեշտ է գնահատման առարկա դարձնել *նույն հիմքով, նույն անձանց և նույն առարկայի վերաբերյալ նախկինում վարչական վարույթ իրականացված լինելու պայմաններում նոր վարչական վարույթ հարուցելու և նոր վարչական ակտ ընդունելու վարչական մարմնի օրենքով սահմանված լիազորությունը:*

Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով՝ վարչական ակտի առկայության պայմաններում կրկին անգամ գանձման որոշում կայացնելու լիազորությամբ վարչական մարմինը ի դեմս ՀՀ ՊԵԿ-ի օժտված չէ:

Հետևաբար՝ ելնելով Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված սահմանադրական կարգավորումներից, կարող ենք եզրահանգել, որ ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 12.07.2017 թվականի որոշմամբ անվավեր ճանաչված վարչական ակտի պայմաններում, ՀՀ ՊԵԿ-ն որևէ նորմատիվ իրավական

ակտով լիազորված չէր հարուցելու կրկնակի վարչական վարույթ: Նման լիազորության բացակայությունն ինքնին հիմք է տալիս վեր հանելու Օրենսդրի մտադրությունը և հանգելու հետևության, որ վարչական մարմինը վերը հիշատակված լիազորությամբ օժտված չէ:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014 թվականի թիվ ՄԴՈ-1142 որոշմամբ նշել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Մինևույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը 04.02.2014 թվականի թիվ ՄԴՈ-1137 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավական պետության կարևորագույն տարրերից է օրինականության սկզբունքը, որը ենթադրում է նաև, որ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության պահանջներին:

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավունքի սուբյեկտների, մասնավորապես՝ միջամտող վարչական ակտի հասցեատերերի համար պետք է կանխատեսելի և որոշակի լինի, որ այն դեպքում, երբ վարչական կամ դատական կարգով հաստատվել է վարչական մարմնի կողմից օրենքի խախտմամբ իրականացված վարչարարության փաստը, ապա տվյալ դեպքում նույն վարչարարության արդյունքում կայացված վարչական ակտը վերացնելուց հետո անձն ունենում է ողջամիտ ակնկալիք, որ իր նկատմամբ ընդունված միջամտող վարչական ակտն այլևս չի կարող «վերակենդանանալ» այլ վարչական ակտի տեսքով՝ որպես կրկնակի իրականացված վարչական վարույթի հետևանք, իսկ վարչական մարմինների համար պետք է կանխատեսելի լինի, որ իրենց գործողություններում թերանալու և վարչական ակտը, օրենքի խախտմամբ (այդ թվում ընթացակարգային) ընդունված լինելու հիմքով, վարչական կամ դատական կարգով վերացվելու պարագայում իրենք այլևս զրկված են լինելու նույն անձի նկատմամբ նույնաբովանդակ ակտ ընդունելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հարկային պարտավորությունների առաջադրման վերաբերյալ վարչական ակտն անվավեր ճանաչված լինելու պայմաններում այդ նույն հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով նոր վարչական ակտի ընդունումը (անգամ եթե նոր ակտի ընդունման ժամանակ վերացվել են անվավեր ճանաչված վարչական ակտի ընդունման ժամանակ թույլ տրված խախտումները) կհանդիսանա նույն խախտման համար վարչական մարմնի կողմից կրկնակի վարչարարության իրականացում, որպիսի հնարավորության ընձեռումը վարչական մարմնի կողմից իրավունքի չարաշահման ռիսկեր կարող է պարունակել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ վարչական մարմինը անթիվ անգամներ նույն արարքի վերաբերյալ կայացնի վարչական ակտեր այնքան ժամանակ, մինչև վերջնականապես ընդունվի օրենսդրությանը համապատասխան վարչական ակտ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ օրենսդրության նման մեկնաբանությունը խաթարում է հանրային իրավահարաբերությունների կայունությունն ու այդ բնագավառում իրավական անվտանգությունը, ինչպես նաև այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են իրավական որոշակիությունը և կամայականության արգելքը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վերոգրյալ իրավիճակներից անհրաժեշտ է տարբերակել այն դեպքերը, երբ վարչական ակտն ընդունելուն ուղղված վարչական վարույթն իրականացվել է օրենքով սահմանված պահանջների, այդ թվում ընթացակարգային նորմերի պահպանմամբ, սակայն հետագայում այդ նորմերից որևէ մեկը ՀՀ սահմանադրական դատարանը ճանաչել է ՀՀ

Սահմանադրությանը հակասող և անվավեր: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա վարչական ակտն անվավեր ճանաչվելու պարագայում վարչական մարմինը պետք է ունենա նոր վարչական վարույթ հարուցելու և այդ դիրքորոշումների հաշվառմամբ նոր վարչարարություն իրականացնելու ու վարչական ակտ ընդունելու հնարավորություն, քանի որ տվյալ իրավիճակում վարչական ակտի անվավերության հիմքում դատարանի կողմից դրվում է ոչ թե վարչական մարմնի անփութության հետևանքով օրենքի խախտման հիմքը, այլ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման հիման վրա վարչական մարմնի կիրառած իրավանորմի իրավաչափության հարցը՝ դրա՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից:

Անփոփոխվել վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենքով սահմանված կարգով իրականացված վարչարարության արդյունքում վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտով (որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ) հանրային իրավունքի բնագավառում կարգավորվում է կոնկրետ գործ, իսկ իրավական որոշակիության սկզբունքն իրենից ենթադրում է, որ վարչական մարմինը չպետք է ունենա վերջնական և պարտադիր վարչական ակտի վերանայման հնարավորություն՝ զուտ գործի կրկնակի քննության և գործով նոր վարչական ակտ կայացնելու նպատակով: Ընդ որում, այն դեպքերում, երբ վարչական ակտն անվավեր է ճանաչվում վարչական մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված ընթացակարգային նորմերի պահանջների խախտմամբ լինելու հիմքով, որոնք ազդեցություն են ունեցել որոշման նյութական իրավաչափության վրա և խախտել շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները, ապա տվյալ դեպքում վարչական մարմինը չի կարող իրականացնել գործի կրկնակի քննություն և վերացնելով գործի քննության նախորդ վարույթի շրջանակներում թույլ տրված խախտումները՝ կայացնել նույնաբովանդակ վարչական ակտ: Հակառակ դեպքում, **ընթացակարգային իրավանորմերի խախտումներով ընդունված վարչական ակտերը վերացվելուց հետո մինևնույն հարցի վերաբերյալ երկրորդ և ավելի անգամներ վարչական վարույթ հարուցելու և նոր վարչական ակտ ընդունելու հնարավորությունը ոչ միայն չի համապատասխանի սույն որոշմամբ վկայակոչված իրավավարգավորումներին և դրանց վերաբերյալ արված վերլուծություններին, այլ նաև ուղղակիորեն կնպաստի վարչական մարմնի կողմից ընթացակարգային իրավանորմերի պարբերական անտեսմանը՝ ստեղծելով իրավական որոշակիությունն ու անվտանգությունը խաթարող պարարտ միջավայր: Ավելին, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման գործելաոճը նաև էական չափով հարկատուների միջոցների հաշվին գոյացող պետական բյուջեի միջոցների վատնում կլինի, քանի որ վարչական մարմնի անբարեխիղճ գործելաոճի հետևանքով մինևնույն հարցի վերաբերյալ կհարուցվեն և կիրականացվեն մեկից ավելի վարույթներ՝ կատարելով լրացուցիչ, չարդարացված ծախսեր: Ընդ որում, որոշ դեպքերում այդ ծախսերը կարող են գերազանցել նույնիսկ գանձման առաջադրվող հարկային պարտավորությունների չափը: Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անվավեր ճանաչված միջանոց վարչական ակտով (անկախ այն հանգամանքից, թե ինչ հիմքով է այն ճանաչվել անվավեր) առաջադրված պարտավորությունները չեն կարող կրկին առաջադրվել նոր վարչական ակտի տեսքով:**

Բ) Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Գոհար Հակոբյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումը:

Գատարանը մերժել է Գոհար Հակոբյանի հայցը պատճառաբանելով, որ վիճարկվող Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումն իրավաչափ է և քիտում է իրավական նորմերի պահանջներից, քանի որ գործով հաստատվում է, որ տվյալ դեպքում առկա են եղել այն ընդունելու բավարար իրավական և փաստական հիմքեր, ինչից հետևում է, որ վիճարկվող որոշումն ընդունելիս՝ պատասխանողն ապահովել է գործի փաստական

հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով բոլոր հանգամանքները, ուստիև վիճարկվող որոշումն իրավաչափ վարչական ակտ է:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Գոհար Հակոբյանի վերաքննիչ բողոքը և անվավեր է ճանաչել Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումը՝ պատճառաբանելով, որ անվավեր ճանաչված միջամտող վարչական ակտով (անկախ այն հանգամանքից, թե ինչ հիմքով է այն ճանաչվել անվավեր) առաջադրված պարտավորությունները չեն կարող կրկին առաջադրվել նոր վարչական ակտի տեսքով: Մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է, որ անվավեր ճանաչված միջամտող վարչական ակտ ընդունած վարչական մարմնի հետագա վարքագիծը պետք է կանխատեսելի լինի այդ ակտի հասցեատիրոջ համար, քանի որ այդ վարչական ակտի հասցեատիրոջ մոտ առաջանում է լեզիտիմ ակնկալիք առ այն, որ անվավեր ճանաչված վարչական ակտով առաջադրված հարկային պարտավորությունները կատարելու պահանջն այլևս չի կարող ներկայացվել կատարման: Հետևապես, անվավեր ճանաչված (անկախ հիմքից) վարչական ակտով արձանագրված հարկային պարտավորությունները ևս մեկ վարչարարություն իրականացնելու միջոցով միևնույն անձին առաջադրելու վարչական մարմնի վարքագիծը հակասում է ոչ միայն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, այլև վարչարարության համաչափության և օրինականության սկզբունքներին:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 19.04.2017 թվականի թիվ 509/01 որոշմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի հիման վրա (մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու անգամ նույն տեսակի գույքի օտարման համար) Գոհար Հակոբյանից որոշվել է գանձել 20.808.744 ՀՀ դրամ:

Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը 23.05.2017 թվականի թիվ 29/1 որոշմամբ Գոհար Հակոբյանի գանգատը մերժել է՝ Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 19.04.2017 թվականի թիվ 509/01 որոշումը թողնելով անփոփոխ:

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը, սակայն, 12.07.2017 թվականի որոշմամբ Գոհար Հակոբյանի վարչական բողոքը բավարարել է և որոշել է անվավեր ճանաչել Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017 թվականի թիվ 29/1 որոշումը և կայացրել է նոր վարչական ակտ՝ հետևյալ բովանդակությամբ. անվավեր ճանաչել Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 19.04.2017 թվականի թիվ 509/01 որոշումը:

Այնուհետև Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշմամբ Գոհար Հակոբյանից որոշվել է գանձել 20.808.744 ՀՀ դրամ, որպիսի որոշման հիմքում դրվել են այն նույն իրավական և փաստական հիմքերը, որոնց հիման վրա ընդունվել էր Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 19.04.2017 թվականի թիվ 509/01 որոշումը («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը (մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու անգամ նույն տեսակի գույքի օտարման փաստը)):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անորոշ ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով կամ սույն օրենքով սահմանված կարգով անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել, կամ օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով դրա գործողությունը չի դադարեցվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

Նույն օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ անվավեր ճանաչված ոչ իրավաչափ վարչական ակտը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների:

ՀՀ հարկային օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկման հանձնաժողովի կամ դատարանի որոշմամբ ստուգման (վերստուգման) ակտը, ուսումնասիրության արձանագրությունը կամ վարչական ակտը չեղյալ համարվելու դեպքում, ինչպես նաև Օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերով պայմանավորված, անձնական հաշվի քարտերում (հատուկ անձնական հաշվի քարտերում) կատարված գրանցումները ենթակա են փոփոխման, իսկ մասնակի փոփոխման դեպքում գրանցվում են տվյալ և նախորդ որոշման և ստուգման (վերստուգման, ուսումնասիրության, օպերատիվ-հետախուզական միջոցառումների) արդյունքների գումարային տարբերությունները՝ օրենսգրքի 320-րդ հոդվածին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անվավեր ճանաչված վարչական ակտով արձանագրված հարկային պարտավորությունները վարչական մարմնի կողմից կրկնակի վարչարարության արդյունքում նոր վարչական ակտի տեսքով կրկին առաջադրելու հնարավորությունը կհանգեցնի նրան, որ վերջինս այլևս կաշկանդված չի լինի օրենքով և վարչարարությունը կիրականացնի կամայականորեն՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ նույնիսկ իր կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտն անվավեր ճանաչվելու պարագայում վերջինիս ընձեռված է գործի կրկնակի քննության ընթացքում իր կողմից նախորդ քննության ժամանակ թույլ տրված թերությունները շտկելու հնարավորություն: Մինչդեռ օրենսդիրը բողոքարկման հանձնաժողովի որոշմամբ վարչական ակտի իրավաբանական ուժը կորցնելու դեպքում նախատեսել է անձնական հաշվի քարտերում կատարված գրանցումները վերջինիս կողմից փոփոխելու պարտականություն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ թեև հարկային պարտավորությունների առաջացման հիմքն օրենքն է և հենց օրենքի ուժով առաջացած հարկային պարտավորությունների առկայությամբ են տնտեսավարող սուբյեկտները լիազոր մարմին ներկայացնում համապատասխան հաշվարկ-հաշվետվություններ, այդուհանդերձ միշտ չէ, որ օրենքի ուժով առաջացած և հաշվարկ-հաշվետվություններում արտացոլված հարկային պարտավորությունները կատարվում են կամովին: Նման դեպքերի համար օրենսդիրը նախատեսել է հատուկ կարգավորում, որի համաձայն՝ օրենքի ուժով առաջացած հարկային պարտավորությունները կամովին չկատարելու դեպքում այդ պարտավորությունների հարկադիր կատարման ապահովման նպատակով ընդունվում է դրանք զանձնման առաջադրելու մասին վարչական ակտ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական ակտի ընդունումը պայմանավորված է հանրային իրավունքի բնագավառում որոշակի հասարակական հարաբերություններ կարգավորող իրավական նորմի առկայությամբ, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտին (վարչական մարմնին) լիազորում է արձակել միակողմանի կարգադրություն՝ ուղղված կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը: Փաստորեն վարչական վարույթի հարուցման և վարչական ակտի ընդունման անհրաժեշտություն է առաջանում բոլոր այն դեպքերում, երբ հարկավոր է կարգավորել հանրային իրավունքի բնագավառում որևէ կոնկրետ հարց, որն առնչվում է վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքներին և պարտականություններին: Այսինքն՝ վարչական ակտի միջոցով համապատասխան իրավաբանական փաստերի առկայության դեպքում իրավական նորմերով սահմանված վերացական հանրային սուբյեկտիվ իրավունքները կամ պարտականությունները ստանում են անհատականացված ուղղվածություն՝ վերագրվում են կոնկրետ հասցեատերերի՝ ձեռք բերելով պարտադիր կատարման ենթակա լինելու հատկանիշ (յրենս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական նկատման նկատման կոմիտեն ընդդեմ Երվանդ Ալեյանի թիվ ՎԴ2/0016/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի կարգավորմանը՝ ՀՀ վճարել դատարանն արձանագրել է, որ այդ իրավանորմով նախատեսված վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկ վճարողի կողմից իր հարկային պարտավորությունները կամովին չկատարվելու դեպքում այդ պարտավորության հարկադիր կատարումը գործող օրենսդրության պայմաններում հնարավոր է իրականացնել միայն համապատասխան անբողոքարկելի վարչական ակտի առկայության դեպքում: Այլ կերպ ասած՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված որոշման հարկադիր կատարման միջոցով իրավասու վարչական մարմինը հնարավորություն է ստանում փաստացի ապահովել հարկ վճարողի կողմից ժամանակին չկատարված հարկային պարտավորության գումարների մուտքը պետական կամ համայնքային բյուջե, իսկ նման որոշման բացակայության պայմաններում հարկ վճարողի կողմից ժամանակին չկատարված հարկային պարտավորության գումարները գործնականում չեն կարող բռնագանձվել հօգուտ պետության կամ համայնքի: (...)

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշում (հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ վարչական ակտ) կայացնելու կառուցակարգը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ հարկ վճարողի տվյալ հարկային պարտավորությունները դեռևս հաստատված չեն որևէ վարչական ակտով, օրինակ՝ ստուգման ակտով, և առաջացել են, օրինակ՝ հարկային մարմին ներկայացրած հաշվարկների (հայտարարագրերի, հաշվետվությունների) հիման վրա կամ անմիջականորեն օրենքի ուժով (գույքահարկ, հողի հարկ): (...) այն դեպքում, երբ հարկ վճարողների հարկային պարտավորություններն արդեն իսկ առաջադրված են վարչական ակտով, ապա իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշում (հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ վարչական ակտ) կայացնելու կառուցակարգը կիրառելի չէ (տես, ՀՀ կառավարության արհմիջոցառման նկատարների կոմիտեն ընդդեմ Մարինե Թադևոսյանի թիվ ՎԳ/1073/05/16 վարչական գործով ՀՀ վճարել դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):

01.01.2018 թվականից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի» 398-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվել է, որ հարկային մարմնում վարվող հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով չվճարված հարկային պարտավորությունների առաջացման դեպքում, բացառությամբ ստուգման կամ այլ վարչական ակտերով հարկային պարտավորություններ առաջադրված լինելու դեպքերի, հարկային մարմնի նախաձեռնությամբ «Վարչարարության հիմնունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցվում է չվճարված հարկային պարտավորությունների գանձման վարչական վարույթ, եթե չվճարված հարկային պարտավորության չափը գերազանցում է 200 հազար դրամը կամ հարկային պարտավորության առաջացման օրվանից հետո անցել է երկու ամսից ավելի ժամանակ:

Վերոգրյալ իրավակարգավորումներից բխում է, որ վարչական ակտերն ընդունվում են հենց օրենքի ուժով առաջացած հարկային պարտավորությունների գանձման նպատակով, հետևաբար ցանկացած հիմքով այդ վարչական ակտերն անվավեր ճանաչելու պարագայում դրանով առաջացած գումարները չեն կարող վարչական մարմնի կողմից նոր վարչական ակտ կայացնելու միջոցով գանձվել: Բայցևայնպես, անձը չի կարող ազատվել հարկային պարտավորության կատարումից հետևյալ հիմնավորմամբ.

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ: Նշված կանոնից Սահմանադրությունը որևէ բացառություն չի նախատեսում, ավելին՝ բացառում է հարկային պարտավորությունից ազատելու հնարավորությունը: Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտի իմաստային (սպատակային) մեկնաբանության արդյունքում կարող ենք գալ այն եզրահանգման, որ ՀՀ օրենսդրությունը ի դեմս ՀՀ իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրության, սահմանում է յուրաքանչյուրի հարկեր, տուրքեր և այլ վճարներ վճարելուց ազատվելու անհնարինությունը, իսկ ՀՀ «Հարկային» օրենսգրքի 45-րդ հոդվածը սահմանում է միայն հարկային պարտավորության դադարման դեպքերը: Վճարել դատարանը գտնում է, որ օրենքով առաջացած հարկային պարտավորությունից անձը չի կարող ազատվել, այն չի կարող դադարել, քանի դեռ առկա չէ ՀՀ «Հարկային» օրենսգրքի 45-րդ հոդվածով նախատեսված հարկային պարտավորության դադարման հիմքերից որևէ մեկը: Հետևաբար ՀՀ ՊԵԿ-ը իրավասու է կիրառելու իր լիազորություններից բխող բոլոր իրավաչափ ներգործության այլ միջոցները հարկային պարտավորության գծով չվճարված գումարները գանձելու համար, բայց ոչ՝ հարկային պարտավորության գծով ժամանակին չվճարված գումարը գանձելու մասին նոր վարչական ակտ ընդունելով:

(Գ) Ինչ վերաբերում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի տառացի մեկնաբանության վերաբերյալ բողոքների այն պնդմանը, որ այն վերաբերում է միայն դիմումով հարուցված վարչական վարույթներին, ապա համաձայնելով բողոքների մեկնաբանման կանոնի կիրառմամբ կատարված պնդմանը, Վճարել դատարանը անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը բացառում է նույն անձի, միևնույն առարկայի և միևնույն հիմքով վարչական կամ դատական ակտի առկայության պայմաններում երկրորդ վարչական վարույթի հնարավորությունը: Ինչպես իրավացիորեն նկատել է բողոքաբերը այս կանոնը վերաբերում է անձի դիմումով հարուցված վարչական վարույթներին: Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարույթի կարճման հիմքերն այլ են: Օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի կառուցվածքը և վարչական վարույթը կարճելու հիմքերը շարադրել է, հաշվի առնելով վարույթի փուլերը և հիմքերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նախորդող որևէ նորմով վարչական մարմինը լիազորված չէ նույն անձանց մասնակցությամբ, նույն հիմքերով, նույն առարկայի մասին վարչական վարույթ նախաձեռնելու: Սակայն օրենսդիրը չի բացառել, որ վարչական վարույթ նախաձեռնելու դիմող սուբյեկտները կարող են նման վարքագիծ դրսևորել և կրկին դիմեն վարչական մարմնի կրկնակի վարույթ իրականացնելու մասին դիմումով: Այս իրավիճակի կարգավորմանն է ուղղված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված համապատասխան հիմքը, որով օրենսդիրը հստակ արտահայտել է նույն անձի, միևնույն առարկայի և միևնույն հիմքով վարչական կամ դատական ակտի առկայության պայմաններում երկրորդ վարչական վարույթի հնարավորությունը բացառելու նպատակը:

Վճարել դատարանը գտնում է, որ եթե օրենսդիրը անձի դիմումի հիման վրա բացառել է նույն անձի, միևնույն առարկայի և միևնույն հիմքով վարչական կամ դատական ակտի առկայության պայմաններում երկրորդ վարչական վարույթի հնարավորությունը, առավել ևս բացառված է երկրորդ վարչական վարույթ հարուցելու լիազորությամբ չօժտված վարչական մարմնի կողմից նման վարույթ հարուցելու իրավական հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունվել է նույն արարքի համար կրկնակի վարչարարության

իրականացման արդյունքում, որի հետևանքով ոչ իրավաչափ վարչական ակտով անձը ծանրաբեռնվել է հարկային պարտավորությունները հարկադիր կատարելու պարտականությանը, ուստի Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը, անվավեր ճանաչելով Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումը, կայացրել է պատճառաբանված և հիմնավորված դատական ակտ, հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից դատական սխալ թույլ տալու մասին վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Դատարանի վճռին օրինական ուժ տալու համար: Նշվածը բավարար հիմք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.02.2020 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱՄԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/8932/05/18 վարչական գործով 10.05.2022 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

10.05.2022 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.02.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գոհար Հակոբյանի ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որոշել է. «Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.02.2020 թվականի որոշումը թողնել անփոփոխ»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորներ Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս համաձայն չլինելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 10.05.2022 թվականին թիվ ՎԴ/8932/05/18 վարչական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում կատարված եզրահանգումների հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով շարադրում ենք հատուկ կարծիքս նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Գոհար Հակոբյանը պահանջել է Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումն անվավեր ճանաչել:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 26.03.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.02.2020 թվականի որոշմամբ Գոհար Հակոբյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Դատարանի 26.03.2019 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Ա.Մ՛սացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Սույն վճռաբեկ բողոքը քննվել է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 27-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «բ» կետը, 29.1-րդ հոդվածը, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասը վերաբերում է այն վարչական ակտին, որով առաջադրվել է հարկային պարտավորություն, մինչդեռ պարտավորությունների գանձման որոշմամբ հարկային պարտավորություն չի առաջադրվում, այլ կայացվում է արդեն իսկ առկա և օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չվճարված պարտավորությունների գանձման վերաբերյալ որոշում: Ուստի, քանի դեռ հարկային պարտավորությունը չի դադարել, այդ թվում՝

դատական ակտով, գանձման որոշումն ընթացակարգային խախտման հիմքով անվավեր ճանաչված լինելու դեպքում անձնական հաշվի քարտում փոփոխություն չի կարող կատարվել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից բարձրացված այն հարցին, որ նույն պարտավորության վերաբերյալ իրականացվել է կրկնակի վարչարարություն, այսինքն՝ կայացվել է երկրորդ գանձման որոշում, ապա բողոք բերած անձը նշել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ինպե՞րատիվ նորմ, որով արգելվում է իրականացնել կրկնակի վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի տառացի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ այն վերաբերում է միայն դիմումով հարուցված վարչական վարույթներին: Մինչդեռ քննարկվող դեպքում վիճարկվող վարչական ակտի վարույթը հարուցվել է ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգով՝ հարկային մարմնի նախաձեռնությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.02.2020 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ կամ գործն ուղարկել համապատասխան դատարան՝ նոր քննության:

3. Հարուկ կարծիքի պարունաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ համաձայն չենք, հետևյալ պատճառաբանությամբ.

Վերաքննիչ դատարանը բավարարել է վարչական գործով հայցվոր Գոհար Հակոբյանի վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի 26.03.2019 թվականի վճիռը և փոփոխել է այն՝ Գոհար Հակոբյանի հայցը բավարարել է՝ անվավեր է ճանաչել Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումը չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին:

Վերաքննիչ դատարանի դատավոր Ա. Պողոսյանը Վերաքննիչ դատարանի 07.02.2020 թվականի որոշման վերաբերյալ ներկայացրել է հատուկ կարծիք:

Վերաքննիչ դատարանը դատական ակտի հիմքում դրել է «կրկնակի պատասխանատվությունը» բացառելու սահմանադրական և կոնվենցիոն սկզբունքի կիրառելիության կանոնները վարչական վարույթի շրջանակներում այն դեպքում, երբ հարկային իրավահարաբերություններն առավել կարգավորված են ճյուղային հատուկ օրենքներով՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և առանձին հարկատեսակների վերաբերյալ այդ ժամանակահատվածում գործող օրենքները:

Վերաքննիչ դատարանը ըստ էության նույնացրել է «հարկային պարտավորության առաջադրում» և «չվճարված հարկային պարտավորությունների գանձում» եզրույթները, որի վերաբերյալ դատական կազմի դատավորի կողմից ներկայացվել է հատուկ կարծիք:

Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ չի անդրադարձել վերաքննիչ դատարանի կողմից օգտագործված «կրկնակի պատասխանատվություն» եզրույթին և բողոքարկված դատական ակտն անփոփոխ թողնելու հիմքում դրել է «կրկնակի վարչարարության» արգելքի մասին իրավական դիրքորոշումը, որն արտահայտվել էր բոլորովին այլ փաստական և իրավական հիմքեր ունեցող այլ վարչական գործով: Մասնավորապես տվյալ գործով առկա է եղել ուժի մեջ մտած ստուգման ակտով հարկատուին առաջադրված հարկային պարտավորություն և ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման այն ենթակա է եղել հարկադիր կատարման՝ առանց երկրորդ վարչական ակտ կայացնելու: Մինչդեռ սույն գործով առկա չէ հարկային պարտավորություն առաջադրելու վերաբերյալ ուժ մեջ մտած ստուգման ակտ և/կամ չկատարված հարկային պարտավորությունը գանձելու մասին վարչական ակտ:

Այսինքն՝ նախկինում այլ գործով արտահայտված իրավական դիրքորոշումը սույն գործով կիրառելի չէ և նույնական փաստական հանգամանքների բացակայության պայմաններում դառնում է խիստ խնդրահարույց և չհիմնավորված:

Կրկնակի վարչարարությանը վերաբերվող իրավական կարգավորումները նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածում:

Վերը նշված հոդվածը բաղկացած է երկու մասից. հոդվածի 1-ին մասը վերաբերվում է դիմումներով հարուցված վարչական վարույթներին, իսկ 2-րդ մասը կարգավորում է վարչական մարմինների նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթներին:

Օրենսդրի կողմից վարույթների նախաձեռնողների կապակցությամբ տարբերված մոտեցում ցուցաբերելը պատահական չէ, և պայմանավորված է վարչական վարույթ նախաձեռնող սուբյեկտների կողմից ակնկալվող վարչական ակտի տեսակներով: Օրինակ՝ դիմողի նախաձեռնությամբ հարուցված վարույթի դեպքում վարչական վարույթի կարճման համար հիմք է նույն հարցով վարչական ակտի կամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը:

Նշված հոդվածի երկրորդ մասը վերաբերվում վարչական մարմինների նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթներին, ունի բոլորովին այլ կարգավորում և վճռաբեկ դատարանի որոշման մեջ հիշատակված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կիրառման հիմքերի նույնացումը ոչ միայն հակասում է կիրառված հոդվածի տրամաբանությանը, այլև վտանգում է հատուկ օրենքներով կարգավորված իրավահարաբերություններում դրա մասնակիցների իրավունքների և պարտականությունների իրականացումը:

Կրկնակի հարկման բացառումը նախատեսված է եղել ինչպես սույն գործով իրավահարաբերության ծագման պահին գործող հարկերի մասին օրենքով, այնպես էլ ներկայումս գործող Հարկային օրենսգրքով և այս դեպքում վարչական ակտի անվավերության հիմքում կարող է լինել նույն հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ մեկից ավելի վարչական ակտի առկայության հանգամանքը, իսկ ցանկացած հիմքով առոչինչ կամ անվավեր ճանաչված վարչական ակտի դեպքում չի կարող խոսք լինել կրկնակի վարչարարության կամ գանձման մասին, ուստի վճռաբեկ դատարանի որոշմամբ ներմուծված «կրկնակի վարչարարություն» եզրույթը, չունենալով որևէ նորմատիվ իրավական ակտով ամրագրված բովանդակություն, չէր կարող հիմք հանդիսանալ չկատարված հարկային պարտավորության գումարի բռնագանձման որոշման անվավեր ճանաչման համար, հատկապես երբ հաստատված էր չկատարված հարկային պարտավորության առկայության փաստը:

Սույն գործով վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցման առիթը եղել է հայցվոր Գոհար Հակոբյանի կողմից հարկային պարտավորությունները չկատարելը և գործում չկա որևէ ապացույց այն մասին, որ առկա է նույն առարկայի վերաբերյալ ուժի մեջ մտած վարչական ակտ, կամ վարչական ակտը կատարվել է կամ հարկային պարտավորությունը դադարել է օրենքով նախատեսված որևէ հիմքով:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ վճռաբեկ բողոքի հիմքերը և հիմնավորումները բավարար են վճռաբեկ բողոքը բավարարելու համար: Բողոքարկված դատական ակտի բեկանման արդյունքում պետք է օրինական ուժ տրվեր հայցը մերժելու մասին ՀՀ վարչական դատարանի վճռին:

ԳՐԱՏՎՈՐՆԵՐ՝ Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/8932/05/18 վարչական գործով 10.05.2022 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

10.05.2022 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2022 թվականի մայիսի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.02.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գոհար Հակոբյանի ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, նույն պալատի ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը մերժել, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.02.2020 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Էդ. Սեդրակյանս և Տ. Պետրոսյանս համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նսիսապարմությունը

Դիմելով դատարան՝ Գոհար Հակոբյանը պահանջել է Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումն անվավեր ճանաչել:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 26.03.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.02.2020 թվականի որոշմամբ Գոհար Հակոբյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Դատարանի 26.03.2019 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Ա. Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 27-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «բ» կետը, 29.1-րդ հոդվածը, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարսկել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասը վերաբերում է այն վարչական ակտին, որով առաջադրվել է հարկային պարտավորություն, մինչդեռ պարտավորությունների գանձման որոշմամբ հարկային պարտավորություն չի առաջադրվում, այլ կայացվում է արդեն իսկ առկա և օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չվճարված պարտավորությունների գանձման վերաբերյալ որոշում: Ուստի, քանի դեռ հարկային պարտավորությունը չի դադարել, այդ թվում՝ դատական ակտով, գանձման որոշումն ընթացակարգային խախտման հիմքով անվավեր

ճանաչված լինելու դեպքում անձնական հաշվի քարտում փոփոխություն չի կարող կատարվել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից բարձրացված այն հարցին, որ նույն պարտավորության վերաբերյալ իրականացվել է կրկնակի վարչարարություն, այսինքն՝ կայացվել է երկրորդ գանձման որոշում, ապա բողոք բերած անձը նշել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ինստրուկտիվ նորմ, որով արգելվում է իրականացնել կրկնակի վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի տառացի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ այն վերաբերում է միայն դիմումով հարուցված վարչական վարույթներին: Միևնույն քննարկվող դեպքում վիճարկվող վարչական ակտի վարույթը հարուցվել է ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգով՝ հարկային մարմնի նախաձեռնությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.02.2020 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ կամ գործն ուղարկել համապատասխան դատարան՝ նոր քննության:

3. Որպես վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճարելի դատարանը նշել է, որ՝

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի իրավաբանական վարչության պետը 19.04.2017 թվականին կայացրել է թիվ 509/01 որոշումը՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին, որով սահմանվել է, որ ժամանակին չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 20.808.744 ՀՀ դրամ (**հիմք՝ ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 12.07.2017 թվականի որոշում, հատոր 1-ին, գ.թ. 58-67**).

2) Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017 թվականի թիվ 29/1 որոշմամբ Գոհար Հակոբյանի գանգատը մերժվել է՝ Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 19.04.2017 թվականի թիվ 509/01 որոշումը թողնվել է անփոփոխ (**հիմք՝ ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 12.07.2017 թվականի որոշում, հատոր 1-ին, գ.թ. 58-67**).

3) ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 12.07.2017 թվականի որոշմամբ Գոհար Հակոբյանի վարչական բողոքը բավարարվել է. անվավեր է ճանաչվել Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017 թվականի թիվ 29/1 որոշումը և կայացվել է նոր վարչական ակտ. անվավեր է ճանաչվել Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 19.04.2017 թվականի թիվ 509/01 որոշումը:

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 12.07.2017 թվականի որոշմամբ Գոհար Հակոբյանի վարչական բողոքը բավարարվել է այն հիմնավորմամբ, որ Կոմիտեի կողմից կայացված ակտով չի հիմնավորվել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «բ» ենթակետի կիրառելիությունը, քանի որ վարչական գործի նյութերում առկա չէ ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր Մամիկոնյանց փողոցի 38/3 շենքի թիվ 54 բնակարանի և ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն, Լեվոնիսի 5-րդ փողոցի 8/4 շենքի 11 բնակարանի մասով կնքված պայմանագրերից իրավունքների պետական գրանցումը հավաստող որևէ ապացույց (**հատոր 1-ին, գ.թ. 58-67**).

4) Կոմիտեի իրավաբանական վարչության պետը 10.07.2018 թվականին կայացրել է թիվ 981-Ա-1 որոշումը, որով որոշել է Գոհար Հակոբյանից գանձել 20.808.744 ՀՀ դրամ: Նշված որոշման հիմքում դրվել են այն նույն իրավական և փաստական հիմքերը, որոնց հիման վրա ընդունվել էր Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 19.04.2017

թվականի թիվ 509/01 որոշումը ([իրավահարաբերության ծագման պահին գործող] «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը (մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու անգամ նույն տեսակի գույքի օտարման փաստը)) **(հատոր 1-ին, գ.թ. 56-57):**

4. Հարուկ կարծիքի հիմնավորումները

Գատարանը մերժել է Գոհար Հակոբյանի հայցը պատճառաբանելով, որ վիճարկվող Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումն իրավաչափ է և բխում է իրավական նորմերի պահանջներից, քանի որ գործով հաստատվում է, որ տվյալ դեպքում առկա են եղել այն ընդունելու բավարար իրավական և փաստական հիմքեր, ինչից հետևում է, որ վիճարկվող որոշումն ընդունելիս՝ պատասխանողն ապահովել է գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով բոլոր հանգամանքները, ուստի և վիճարկվող որոշումն իրավաչափ վարչական ակտ է:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Գոհար Հակոբյանի վերաքննիչ բողոքը և անվավեր է ճանաչել Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումը՝ պատճառաբանելով, որ անվավեր ճանաչված միջամտող վարչական ակտով (անկախ այն հանգամանքից, թե ինչ հիմքով է այն ճանաչվել անվավեր) առաջադրված պարտավորությունները չեն կարող կրկին առաջադրվել նոր վարչական ակտի տեսքով: Մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է, որ անվավեր ճանաչված միջամտող վարչական ակտ ընդունած վարչական մարմնի հետագա վարքագիծը պետք է կանխատեսելի լինի այդ ակտի հասցեատիրոջ համար, քանի որ այդ վարչական ակտի հասցեատիրոջ մոտ առաջանում է լեգիտիմ ակնկալիք առ այն, որ անվավեր ճանաչված վարչական ակտով առաջադրված հարկային պարտավորությունները կատարելու պահանջն այլևս չի կարող ներկայացվել կատարման: Հետևապես, անվավեր ճանաչված (անկախ հիմքից) վարչական ակտով արձանագրված հարկային պարտավորությունները ևս մեկ վարչարարություն իրականացնելու միջոցով միևնույն անձին առաջադրելու վարչական մարմնի վարքագիծը հակասում է ոչ միայն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, այլև վարչարարության համաչափության և օրինականության սկզբունքներին:

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը մերժել է և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.02.2020 թվականի որոշումը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ «... սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունվել է նույն արարքի համար կրկնակի վարչարարության իրականացման արդյունքում, որի հետևանքով ոչ իրավաչափ վարչական ակտով անձը ծանրաբեռնվել է հարկային պարտավորությունները հարկադիր կատարելու պարտականությամբ, ուստի Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը, անվավեր ճանաչելով Կոմիտեի 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշումը, կայացրել է պարճատարանված և հիմնավորված դատական ակտ, հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից դատական սխալ թույլ տալու մասին վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Դատարանի վճռին օրինական ուժ տալու համար:»:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Էդ. Սեդրակյանս և Տ. Պետրոսյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը դրա վերաբերյալ:

Այսպես՝

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 14.05.1997 թվականին ընդունված, 01.07.1997 թվականին ուժի մեջ մտած և 01.01.2018 թվականին ուժը կորցրած «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (...) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարում են ԱԱՀ վճարող համարվող և (կամ) ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (...) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով: (...) Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝ (...) մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացրած մի շարք որոշումներով փաստել է, որ ավելացված արժեքի հարկի՝ որպես անուղղակի հարկի հարկվող օբյեկտն ավելացված արժեքի հարկ վճարողների կամ ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություն կրող անձանց կողմից իրականացվող օրենքով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքն է (շրջանառությունը): Ընդ որում, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով ավելացված արժեքի հարկով հարկվում են, *inter alia*, ապրանքների մատակարարման գործարքները (գործառնությունները), այսինքն՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելուն ուղղված գործարքները: Որպես կանոն՝ ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտը ձեռնարկատիրական գործունեություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերի) իրականացրած գործարքներն են: Սակայն, բացի վերը նշված անձանց կողմից իրականացրած գործարքների, օրենսդիրը որդեգրել է այն մոտեցումը, որ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող մի շարք գործարքներ որոշակի պայմանների առկայության դեպքում ևս իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով դիտարկվում են որպես ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ (*տե՛ս, օրինակ, ՀՀ կառավարությանն առնված պետական եկամտային կոմիտեն ընդդեմ Ռազմիկ Սեդրակյանի թիվ ՎԿ/0560/05/15 վարչական գործով 20.07.2017 թվականի որոշումը*): Նշված գործարքներից են, մասնավորապես, իրավահարաբերության ծագման պահին գործող Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետով սահմանված գործարքները, որոնք վերաբերում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացված որոշակի կատեգորիայի գույքի երկրորդ և ավելի թվով օտարմանը:

ՀՀ վճարեկ դատարանն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացված նույն տեսակի գույքի երկրորդ և ավելի թվով օտարման գործարքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ապրանքի մատակարարում որակելու իրավական հիմքերի և առանձնահատկությունների վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել *Միեր Կուկոյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության թիվ*

ՎԳ/0811/05/15 վարչական գործով 26.12.2016 թվականի որոշմամբ: Նշված որոշման շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ընդհանրացված տեսքով հանգում են հետևյալին.

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք, հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկից ավելի անգամ օտարել է որոշակի կատեգորիայի գույք՝ բնակարան, առանձնատուն, անձնական օգտագործման ավտոմեքենա, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողեր, ավտոտնակ,

թե՛ առաջին, թե՛ հաջորդող գործարքներով տեղի է ունեցել անձի սեփականությունը հանդիսացող գույքի օտարում,

թե՛ առաջին, թե՛ հաջորդող օտարումները կատարվել են որևէ ձևով հատուցման դիմաց, այսինքն՝ օտարողը ստացել է կամ պետք է ստանա վճար կամ այլ հանդիպական կատարում գույքի օտարման դիմաց,

գործարքով օտարվել է այնպիսի տեսակի գույք, որպիսի տեսակի գույք նախկինում մեկ օրացուցային տարվա ընթացքում արդեն օտարվել է նույն անձի կողմից (այսուհետև՝ նույն տեսակի գույք),

նույն տեսակի գույքի օտարման թե՛ առաջին, թե՛ երկրորդ և հաջորդող գործարքներն իրականացվել են մինևնույն թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում,

երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարման գործարքով օտարվել է գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե գործարքը բավարարում է վերը նշված բոլոր պայմաններին, ապա այն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք, իսկ եթե նշված պայմաններից որևէ մեկը բացակայում է, ապա գործարքը չի կարող համարվել ապրանքի մատակարարում:

Վկայակոչված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետով նախատեսված գույքի օտարման երկրորդ կամ հաջորդող գործարքն ապրանքի մատակարարում համարելու տեսանկյունից էական է, որ տվյալ գործարքով մեկ օրացուցային տարում թվով երկրորդ կամ հաջորդող անգամ օտարվի այնպիսի գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, իսկ նույն օրացուցային տարվա ընթացքում առաջին գործարքով օտարված գույքը ֆիզիկական անձի կողմից ձեռք բերելու ժամանակահատվածը որևէ նշանակություն չունի նույն օրացուցային տարվա ընթացքում հետագայում նույն տեսակի գույքն օտարելու գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար: Այլ կերպ ասած՝ գործարքն ապրանքի մատակարարում համարելու համար էական է ոչ թե դրան նախորդող գործարքներով օտարված նույն տեսակի գույքի ձեռքբերման, այլ հենց տվյալ գործարքով օտարվող գույքի ձեռքբերման ժամանակահատվածը:

ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է օրենսդրի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետում առկա «եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում» արտահայտության տառացի մեկնաբանությունից, որում օրենսդիրն օգտագործել է «տվյալ գույքի» արտահայտությունը՝ նկատի ունենալով քննարկվող գործարքով օտարվող գույքը, այլ ոչ թե նույն օրացուցային տարվա ընթացքում նախկինում օտարված գույքը: Այսպիսով, մեկ օրացուցային տարվա ընթացքում երկրորդ և հաջորդող նույն տեսակի գույքի օտարման գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար

այդ գույքի ձեռքբերման և օտարման գործարքների միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի մեկ տարին՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է ձեռք բերվել տվյալ օրացուցային տարում առաջինն օտարված գույքը (*տե՛ս, Միեր Կակուպանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային պեայության թիվ ՎԴ/0811/05/15 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային պարտավորությունը ծագում է Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում:

ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնում վարվող՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով չվճարված հարկային պարտավորությունների առաջացման դեպքում, բացառությամբ ստուգման կամ այլ վարչական ակտերով հարկային պարտավորություններ առաջադրված լինելու դեպքերի, հարկային մարմնի նախաձեռնությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցվում է չվճարված հարկային պարտավորությունների գանձման վարչական վարույթ, եթե չվճարված հարկային պարտավորության չափը գերազանցում է 200 հազար դրամը կամ հարկային պարտավորության առաջացման օրվանից հետո անցել է երկու ամսից ավելի ժամանակ:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում հարկ է արձանագրել, որ հարկային պարտավորության գանձման վարչական վարույթը հարուցվում է միայն այն դեպքում, երբ պարտավորությունն առաջացել է օրենքի ուժով, իսկ այդ վարույթի հարուցման նպատակն արդեն առկա պարտավորության գանձման նպատակով վարչական ակտի ընդունումն է: Այսինքն, ՀՀ Սահմանադրությունը որևէ բացառություն չի նախատեսում, ավելին՝ բացառում է հարկային պարտավորությունից ազատելու հնարավորությունը, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ հստակ սահմանվել է յուրաքանչյուրի հարկեր, տուրքեր և այլ վճարներ վճարելուց ազատվելու անհնարինությունը, իսկ ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ հոդվածը սահմանում է միայն հարկային պարտավորության դադարման դեպքերը:

Փաստորեն գոյություն ունեցող պարտավորության գանձման նպատակով ընդունված վարչական ակտի՝ ընթացակարգային խախտումների հետևանքով վերացումն ինքնին չի հանգեցնում պարտավորության վերացմանը, քանի որ այն առաջանում է ոչ թե վարչական ակտի հիմքով, այլ օրենքի ուժով, ինչից էլ հետևում է, որ գանձման որոշումն ընդամենը դրա գանձման՝ օրենքով սահմանված միջոց է: Այսինքն՝ չկատարված հարկային պարտավորությունների գանձման մասին որոշմամբ հարկային պարտավորություններ չեն առաջադրվում, քանի որ հարկային պարտավորություններն արդեն իսկ առաջացել են օրենքի ուժով, հետևաբար, կայացվում է արդեն իսկ առկա և օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չվճարված հարկային պարտավորությունների գանձման վերաբերյալ որոշում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝ (...) գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի:

Նույն օրենքի 2-րդ մասի համաձայն՝ վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ

իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում:

ՀՀ սահմանադրական դատարանը իր ՄԴՈ-1176 և ՄԴՈ-1213 որոշումներում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» և «...իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի յույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է *res judicata* սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը պահանջում է, որպեսզի կողմերից ոչ մեկը չունենա իրավունք պահանջելու վերջնական և պարտադիր դատական ակտի վերանայում՝ ուղղակի գործի կրկնակի քննության և գործով նոր ակտի կայացման նպատակով: Այսինքն, հարցի առնչությամբ երկու կարծիքի առկայության հնարավորությունը չպետք է հիմք հանդիսանա կրկնակի քննության համար: *Նահանջն այդ սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներում:*

Հարկ է արձանագրել, որ վերոնշյալ նորմերը վերաբերում են միայն դիմումով հարուցված վարչական վարույթներին: Փաստորեն, օրենսդիրը կրկնակի վարչական վարույթի իրականացումը հարկային մարմնի նախաձեռնությամբ արգելող դրույթ չի սահմանում, հետևաբար ընթացակարգային նորմերի խախտման հետևանքով վարչական ակտն անվավեր ճանաչելուց հետո վարչական մարմինը չի զրկվում նոր վարչական ակտ կայացնելու հնարավորությունից: Քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը չի սահմանափակում սեփական նախաձեռնությամբ կրկնակի վարույթ հարուցելու հարկային մարմնի իրավունքը, ուստի դա չի կարող հակասել իրավական որոշակիության սկզբունքին:

Նույն գործով վիճարկվող վարչական ակտով՝ Կոմիտեի՝ «Վարչական վարույթը վերսկսելու և չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին» 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշմամբ Գոհար Հակոբյանից գանձվել է 20.808.744 ՀՀ դրամ՝ որպես ավելացված արժեքի հարկի գծով վերջինիս ունեցած հարկային պարտավորության գումար: Այսպես, ըստ Կոմիտեի, Գոհար Հակոբյանը մեկ օրացուցային տարվա ընթացքում՝ 2014 թվականին, օտարել է սեփականության իրավունքով իրեն պատկանող երկու նույն տեսակի գույքային միավորներ (անշարժ գույք)։ 20.01.2014 թվականին՝ օտարվել և սեփականության իրավունքով գրանցվել է Արմինե Ոսկանյանի անվամբ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթունի Լեփսիոսի 5-րդ փողոցի 8/4 շենքի 11 բնակարանը, որի պայմանագրային արժեքը կազմել է 33.374.000 ՀՀ դրամ, կադաստրային արժեքը՝ 5.650.502 ՀՀ դրամ, իսկ 04.08.2014 թվականին օտարվել և ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գրանցվել է Հակոբ Խաչատրյանի և Նայրա Խաչատրյանի անվամբ Երևան քաղաքի Արաբկիրի Մամիկոնյանց փողոցի 38/3 շենքի 54 բնակարանը (ձեռքբերման ամսաթիվը՝ 28.03.2014 թվական), որի պայմանագրային արժեքը կազմել է 49.000.000 ՀՀ դրամ, իսկ կադաստրային արժեքը՝ 8.453.788 ՀՀ դրամ: Հետևաբար Կոմիտեն գտել է, որ Գոհար Հակոբյանի կողմից 2014 թվականի ընթացքում 2 անգամ իրականացվել է սեփականություն հանդիսացող նույն տեսակի գույքի /բնակարան/ օտարման գործարք, որը իրավահարաբերության ծագման պահին գործող Օրենքի 6-րդ հոդվածի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, այսինքն՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք:

Վերոշարադրյալ փաստական հանգամանքները գնահատելով վկայակոչված իրավադրոյթների և արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ անհրաժեշտ է արձանագրել հետևյալը.

Գոհար Հակոբյանի կողմից 2014 թվականի ընթացքում 2 անգամ իրականացվել է սեփականություն հանդիսացող նույն տեսակի գույքի /բնակարան/ օտարման գործարք, որը իրավահարաբերության ծագման պահին գործող Օրենքի 6-րդ հոդվածի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, այսինքն՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք: Գոհար Հակոբյանի հարկային պարտավորություններն առաջացել են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի հիման վրա մեկ օրացուցային տարվա ընթացքում երկրորդ անգամ նույն տեսակի գույքի օտարումից, իսկ Կոմիտեի վիճարկվող՝ 10.07.2018 թվականի թիվ 981-Ա-1 որոշմամբ իրականացվել է արդեն իսկ գոյություն ունեցող հարկային պարտավորությունների գանձում, այսինքն՝ Գոհար Հակոբյանի կողմից չկատարված հարկային պարտավորությունների գանձման մասին որոշմամբ հարկային պարտավորություններ չեն առաջադրվել, քանի որ վերջինիս հարկային պարտավորություններն արդեն իսկ առաջացել են օրենքի ուժով, իսկ օրենքով առաջացած հարկային պարտավորություններից անձը չի կարող ազատվել:

Ինչ վերաբերվում է Կոմիտեի իրավաբանական վարչության պետի սախլինում կայացրած 19.04.2017 թվականի թիվ 509/01 որոշմանը, գտնում ենք, որ վերոհիշյալ վարչական ակտը դադարել է գոյություն ունենալ վերադասության կարգով անվավեր ճանաչելու հետևանքով: Այսինքն՝ մինևնույն իրավահարաբերությունների շրջանակներում գործող թվով երկու վարչական ակտերի մասին, որոնք առաջացրել են մինևնույն հարկային պարտավորությունները, խոսք լինել չի կարող:

Բացի այդ, ակնհայտ է, որ ՀՀ հարկային օրենսգրքում «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում, ՀՀ քրեական օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում պատասխանատվություն սահմանող իրավանորմերի առկայության պայմաններում անհնար է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի շրջանակում հատկորոշել հարկային պատասխանատվության առաջադրման և/կամ դրա գանձման առնչությամբ կրկնակի պատասխանատվությունը բացառելու սահմանադրական և կոնվենցիոն սկզբունքի կիրառելիության կանոնները:

Այսինքն, Վճռաբեկ դատարանի կողմից սույն վարչական գործով կայացված որոշման հիմքում դրված վարչական ակտի նույնիսկ մակերեսային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնույթով լինելով միջամտող հարկային իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի տեսանկյունից տվյալ վարչական ակտը չի կարող համարվել պատասխանատվություն սահմանող:

Հետևաբար եթե ցանկանում ենք վերլուծել «կրկնակի պատասխանատվության բացառման» սահմանադրական և կոնվենցիոն ինտիտուտի կիրառումը վարչական վարույթում, ապա առնվազն պետք է կարողանանք բնորոշել վարչական պատասխանատվության հատկանիշները և ամրագրված ու երկու ամսից ավելի ժամկետով կետանցված հարկային պարտավորությունների գանձմանն ուղղված վարչական ակտը պատասխանատվության միջոց դիտելու համար:

Առանձնակի ուշադրության է արժանի այն հարցը, որ առավել չկանոնակարգված որոշակի պայմանների դեպքում, ֆիզիկական անձանցից գանձվող հարկերի հետ կապված իրավահարաբերությունները պայմանավորված են ընդհանուր եկամտային հայտարարագիր ներկայացնելու պահանջի բացակայությամբ:

Սույն գործով էլ Գոհար Հակոբյանի կողմից անշարժ գույքի հետ կապված գործարքներ են կնքվել և դրանց պետական գրանցման փաստով Կոմիտեում տեղեկացվել են Գոհար Հակոբյանի ունեցած հարկային պարտավորության մասին:

Եվ այստեղ էլ պետք է վերլուծենք ստեղծված իրավիճակը.

- եթե ֆիզիկական անձ հարկատուն օրենսգրքով սահմանված ժամկետում հարկային հաշվարկ-հաշվետվություն չի ներկայացնում, լսումներին չի ծանուցվում, չի մասնակցում,

ապա ո՞ր օրենքն է կիրառվում վերջինիս նկատմամբ չվճարված հարկային պարտավորությունը գանձելու Սահմանադրական պարտականությունը կատարելու համար:

Գտնում ենք, որ Դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, Կոմիտեի 10.07.2018 թվականի կայացրած թիվ 981-Ա-1 որոշումը իրավաչափ է և բխում է նշված իրավական նորմերի պահանջներից, քանի որ առկա են եղել բավարար իրավական և փաստական հիմքեր վերոնշյալ որոշումը կայացնելու համար, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից: Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ բողոք բերած անձի փաստարկները հիմնավոր են:

Շարադրված հիմնավորումներից և պարճատարանություններից ելնելով՝ գտնում ենք, որ վճարել բողոքի հիմքի առկայությունը բավարար է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Դատարանի 26.03.2019 վճիռն օրինական ուժի մեջ թողնելու համար:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Տ. Պետրոսյան
Էդ. Սեդրակյան

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր
Դատավորներ

ՎԳԴ/9457/05/18
Ա. Թովմասյան
Կ. Բաղդասարյան
Կ. Ավետիսյան

Վարչական գործ թիվ ՎԳԴ/9457/05/18
2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով,

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2022 թվականի մայիսի 26-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), Ելիզավետա Սարգսյանի և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.03.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սուսաննա Համբարձումյանի ընդդեմ Ծառայության, երրորդ անձինք Ելիզավետա Սարգսյանի, Աղասի Դանիելյանի, Անդրանիկ Դանիելյանի, Բանկի և «Ունիվերսամ Ավան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք 06.08.2018 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լուտի մասին Ոգ00829046-18/02 արձանագրությունը, 13.08.2018 թվականի թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրը, և դրանց հիման վրա 22.08.2018 թվականին կատարված Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի

նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դարավարական նախապարմությունը

Ի հիմնով դատարան՝ Սուսաննա Համբարձումյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը (այսուհետ՝ նաև Անշարժ գույք) հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը, ոչ իրավաչափ ճանաչել Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը, ոչ իրավաչափ ճանաչել Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը, և որպես հետևանք անվավեր ճանաչել 06.08.2018 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին Nq00829046-18/02 արձանագրությունը (այսուհետ՝ նաև Արձանագրություն), 13.08.2018 թվականի թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր), և դրանց հիման վրա 22.08.2018 թվականին կատարված Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Հ. Այվազյան) (այսուհետ՝ Դատարան) 18.10.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.03.2021 թվականի որոշմամբ Սուսաննա Համբարձումյանի վերաքննիչ բողոքը մասնակի բավարարվել է՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի՝ Անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, 13.08.2018 թվականի Պայմանագիրը և Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի նկատմամբ 22.08.2018 թվականին Ելիզավետա Սարգսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներին վերաբերող մասերով, Դատարանի 18.10.2019 թվականի վճիռը բեկանվել է և հայցն այդ մասերով բավարարվել է, իսկ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա Անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և 06.08.2018 թվականի Արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջներին վերաբերող մասերով, Դատարանի 18.10.2019 թվականի վճիռը բեկանվել է և այդ մասերով վարչական գործի վարույթը կարճվել է:

Վճռաբեկ բողոք են ներկայացրել Ծառայությունը (ներկայացուցիչ Էլմիրա Մեջլումյան), Ելիզավետա Սարգսյանը (ներկայացուցիչ Զոհրակ Ապրեսյան) և Բանկը (ներկայացուցիչ Դավիթ Սարգսյան):

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

2.1. Ծառայության վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարչության մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք չպետք է կիրառել, և չի կիրառել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 35.1-րդ հոդվածի 5-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

ա) ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/12638/05/17 և թիվ ՎԴ/0927/05/19 վարչական գործերով, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը թիվ ՎԴ/0781/05/16 վարչական գործով եզրահանգել են, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ կիրառելի չէ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, մինչդեռ Վերաքննիչ դատարանի կողմից սույն վարչական գործով 23.03.2021 թվականին կայացված որոշմամբ արձանագրվել է, որ նշված դրույթը կիրառելի է հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ: Հետևաբար, ՀՀ վարչական դատարանի և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած վերոհիշյալ դատական ակտերով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվել է սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից այդ նորմին տրված մեկնաբանությանը ակնհայտորեն հակասող մեկնաբանությամբ:

բ) Չնայած որ ներկայացված չի եղել հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջ, այդուհանդերձ հարկ է նշել, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը կարող է անվավեր ճանաչվել բացառապես Օրենքի 35.3-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում: Քանզի առկա չէ նման հիմք, ապա համապատասխանաբար բացակայում է նաև անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու որևէ հիմք:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է մասնակի՝ հայցի բավարարմանը վերաբերող մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը և գործն այդ մասով ուղարկել նոր քննության:

2.2. Ելիզավետա Սարգսյանի վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ, 69-րդ, 72-րդ, 96-րդ և 145-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումները կիրառելի չեն հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ: Օրինական ուժի մեջ մտած մի շարք դատական ակտերով տրվել է իրավական այն դիրքորոշումը, որ մինչև գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշում կայացնելը Ծառայությունը չի կրում առանձին ակտով պարտապահին և պարտատիրոջն աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին ծանուցելու պարտականություն: Ընդ որում, աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին պատշաճ ծանուցում համարվում է գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը վարչության մասնակիցներին հանձնելը՝ այն մասին նշումով, որ նրանք զրկված չեն այդ պահից ի վեր ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու հնարավորությունից: Ավելին, արտահայտվել է նաև իրավական այնպիսի դիրքորոշում, որ եթե անգամ Ծառայությունը կրի աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին պարտապահին և պարտատիրոջը ծանուցելու պարտականություն, ապա նման պայմաններում անգամ աճուրդը չի կարող անվավեր ճանաչվել, քանի որ Օրենքի 35.3-րդ հոդվածը սպառիչ կերպով սահմանում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի անվավերության հիմքերը, և այդ հոդվածով նման հիմք նախատեսված չէ:

Մինչդեռ հակառակ նշված մեկնաբանությունների՝ Վերաքննիչ դատարանը բողոքարկված որոշմամբ ոչ միայն արձանագրել է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի իրականացման ժամանակ Ծառայությունը պարտավոր է մինչև աճուրդի մասին որոշման կայացումն Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ լոտի մեկնարկային գնի մասին պատշաճ ճանուցել պարտապահին և պահանջատիրոջը, այլև այդ խախտման հիմքով էլ անվավեր է ճանաչել կայացված հարկադիր էլեկտրոնային աճուրդը: Ըստ էության Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը կարող է անվավեր ճանաչվել նաև Օրենքի 35.1-րդ և 35.2-րդ հոդվածների պահանջները պահպանված լինելու պարագայում:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է րեկանել Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը և կայացնել գործի վարույթը կարճելու մասին որոշում, կամ հայցի բավարարմանը վերաբերող մասով րեկանել Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 18.10.2019 թվականի վճռին:

2.3. Բանկի վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Օրենքի 35.1-րդ հոդվածը, կիրառել է նույն օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատարության օրենսգրքի 25-27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 35.1-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի վերլուծությունից բխում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի որպես աճուրդի առանձին տեսակի, ընթացքում իրացվող լոտի գնահատման գործընթացի նկատմամբ կիրառելի են նույն Օրենքի 30-րդ հոդվածի միայն 1-ին և 2-րդ մասերը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և իրականացման նկատմամբ կիրառելի է համարել նաև հարկադիր աճուրդի կազմակերպմանն ու իրացմանը վերաբերող ընդհանուր դրույթները: Եթե Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելի լիներ հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ, ապա այդ մասին Օրենքում նշված կլիներ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Սուսաննա Համբարձումյանը տեղյակ է եղել ինչպես դատական ողջ գործընթացի, դրա արդյունքում կայացված վճռի, այնպես էլ այդ վճռի հիման վրա հետագայում տրված կատարողական թերթի հիմքով հարուցված կատարողական վարույթի, դրա ընթացքում կատարված գործողությունների և կայացված որոշումների վերաբերյալ: Ընդ որում, Անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը կայացվել է թիվ ԵԱԲԴ/0070/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններ ընդհանուր իրավասության դատարանի կողմից 28.12.2015 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա և ուղղված է նշված վճռի կատարումն ապահովելուն: Նշված օրինական ուժի մեջ մտած դատական ակտն անտեսելու հետևանքով խախտվել է Բանկին՝ որպես պարտատիրոջ, երաշխավորված իրավունքներն ու օրինական շահերը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է մասնակի՝ հայցի բավարարմանը վերաբերող մասով, րեկանել Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 18.10.2019 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Թիվ ԵԱԲԴ/0070/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.12.2015 թվականին հրապարակված վճռով Բանկի հայցն ընդդեմ Ադասի Դանիելյանի,

«Ունիվերսամ Ավան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, Անդրանիկ Դանիելյանի և Սուսաննա Համբարձումյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է և վճովել է.

«(...) Պատասխանողներ «Ունիվերսամ Ավան» ՍՊ ընկերությունից, Աղասի Շավարշի Դանիելյանից հոգուտ հայցվոր «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 1.146.762 (մեկ միլիոն հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր վաթսուներկու) ԱՄՆ դոլար 80 (ութսուն) ցենտին համարժեք ՀՀ դրամ՝ որպես առ 08.06.2015թ. դրությամբ պարտավորության գումար, որից վարկի մնացորդ՝ 1.100.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (որից ժամկետանց՝ 75.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ), հաշվարկված տոկոս՝ 28.794,52 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (որից ժամկետանց՝ 27.109,6 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ), ժամկետանց գումարի տույժ՝ 12.202,1 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ժամկետանց տոկոսի համար տույժ՝ 5.766,18 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Պատասխանողներ «Ունիվերսամ Ավան» ՍՊ ընկերությունից, Աղասի Շավարշի Դանիելյանից հոգուտ հայցվոր «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել մինչև սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելն «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության և «Ունիվերսամ Ավան» ՍՊ ընկերության միջև 29.10.2013 թվականին կնքված վարկ տրամադրելու մասին լրացուցիչ թիվ VP022302 համաձայնագրի 4.3., 4.4., 4.5. ենթակետերով սահմանված պայմաններով և կարգով հաշվարկվող վճարման ենթակա գումարները, իսկ սկսած սույն վճռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև վճարման ենթակա գումարի փաստացի վճարման պահը, վարկի մնացորդի՝ 1.146.762 (մեկ միլիոն հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր վաթսուներկու) ԱՄՆ դոլար 80 (ութսուն) ցենտին համարժեք ՀՀ դրամ գումարի նկատմամբ նույն համաձայնագրի 4.3 ենթակետով սահմանված 0,1 տոկոս օրական ժամկետանց տոկոսադրույքով հաշվարկվող վճարման ենթակա գումարները (...):

Բռնագանձումը տարածել 29.10.2013 թվականին կնքված շրջանառության մեջ գտնվող դրամական միջոցների գրավի թիվ 281013/3 պայմանագրով գրավի առարկա հանդիսացող՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված թիվ 17563430100 դրամային և 17563430101 դոլարային բանկային հաշիվներում առկա և հետագայում այդ հաշիվների մուտքագրվող դրամական միջոցների, 19.06.2014 թվականին կնքված պարտապան չհանդիսացող անձին պատկանող անշարժ գույքի գրավի թիվ 281013/4 պայմանագրով գրավի առարկա հանդիսացող՝ ՀՀ, Մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր ք. Մուրադյան փողոց թիվ 1 հանգստյան տուն հասցեում գտնվող անշարժ գույքի (հիշյալ պայմանագրի հիման վրա անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 25.06.2014թ. թիվ 25062014-07-0005 վկայականի համաձայն՝ տվյալ անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության գրավի իրավունքը) և 19.02.2015 թվականին կնքված պարտապան չհանդիսացող անձին պատկանող անշարժ գույքի գրավի թիվ 281013/5 պայմանագրով գրավի առարկա հանդիսացող՝ ՀՀ, Մարզ Կոտայք, համայնք Արամուս, Ամստանոցային 2-րդ փողոց, թիվ 14 այգետնակ հասցեում գտնվող անշարժ գույքի (հիշյալ պայմանագրի հիման վրա անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 25.02.2015թ. թիվ 25022015-07-0021 վկայականի համաձայն՝ տվյալ անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության գրավի իրավունքը) վրա, իսկ դրանց իրացումից ստացված գումարը բավարար չլինելու դեպքում նաև պատասխանողներ «Ունիվերսամ Ավան» ՍՊ ընկերությանը և Աղասի Շավարշի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի, այդ թվում՝ բանկային հաշիվների և դրամական միջոցների վրա (...):

Ի կատարումն թիվ ԵԱԲԳ/0070/02/15 քաղաքացիական գործով 28.12.2015 թվականին հրապարակված վճռի՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 17.05.2017 թվականին տրվել է կատարողական թերթ (հատոր 1-ին, գ.թ. 210-211):

2) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանը 31.05.2017 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշմամբ հարուցել է թիվ 03323984 կատարողական վարույթը:

Նույն օրը կայացրած «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» թիվ Ռ00572-62478/17 որոշմամբ պարտապան Սուսաննա Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող և հետագայում ձեռք բերվելիք գույքի վրա արգելանք է դրվել **(հատոր 1-ին, գ.թ. 212-214):**

3) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 02.06.2017 թվականի «Ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին» որոշմամբ թիվ 03323984 կատարողական վարույթով նշանակվել է ապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «Ամինտաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Փորձագետին առաջադրվել է հետևյալ հարցը՝ որքան է կազմում Կոտայքի մարզ, Արամուս համայնք, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 այգետնակ հասցեում գտնվող անշարժ գույքի և Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Մուրադյան փողոց թիվ 1 հանգստյան տուն հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը **(հատոր 1-ին, գ.թ. 141-142):**

4) 08.02.2018 թվականի «Շուկայական արժեքի գնահատման հաշվետվության» համաձայն՝ գնահատման ներկայացված Անշարժ գույքը գնվել է 31.01.2018 թվականին և այդ օրվա դրությամբ դրա շուկայական արժեքը կազմել է 80.200.000 ՀՀ դրամ **(հատոր 3-րդ, գ.թ. 50-71):**

5) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 20.02.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ (այսուհետ՝ նաև՝ Որոշում) Սուսաննա Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Աճուրդի մեկնարկային գին է սահմանվել 60.150.000 ՀՀ դրամը:

Միաժամանակ Որոշումն ուղարկվել է պարտապանի հաշվառման հասցեի վարչական շրջանի ղեկավարին և տեղադրվել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում **(հատոր 2-րդ, գ.թ. 153-154, 171-173):**

6) Սուսաննա Համբարձումյանը 23.02.2018 թվականին հարկադիր կատարողից առձեռն ստացել է արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումները և կից գրությունները, որոնք վերաբերել են Ծաղկաձոր, Մուրադյան փողոց, թիվ 1 հասցեում գտնվող և Արամուս, Ամառանոցային 2 փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքերին **(հատոր 2-րդ, գ.թ. 155, 165):**

7) 06.08.2018 թվականին հարկադիր կատարող Կարեն Մարտիրոսյանի և աճուրդում հաղթած Ելիզավետա Սարգսյանի միջև կազմվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին թիվ q00829046-18/02 արձանագրությունը, ըստ որի՝ թիվ 295950 լոտի վաճառքի գինը կազմել է 23.403.343 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 11):**

8) Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կարեն Մարտիրոսյանի և Ելիզավետա Սարգսյանի միջև 13.08.2018 թվականին կնքվել է Կոտայքի մարզի Արամուս, Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, թիվ 14 այգետնակ հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը **(հատոր 1-ին, գ.թ. 9-10):**

9) 22.08.2018 թվականին տրված թիվ 22082018-07-0032 վկայականի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Արամուս, Ամառանոցային թաղամաս, 2-րդ փողոց, 14 այգետնակի նկատմամբ գրանցվել է Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքը: Գրանցման հիմք են հանդիսացել 13.08.2018 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն ու հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին 06.08.2018 թվականի թիվ q00829046-18/02 արձանագրությունը **(հատոր 1-ին, գ.թ. 7):**

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ ՀՀ վարչական դատարանի և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվել է սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից այդ նորմին տրված մեկնաբանությամբ ակնհայտորեն հակասող մեկնաբանությամբ:

Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. *հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուրի մեկնարկային գնի և ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունն արդյո՞ք գործում է նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ, թե ոչ,*

2. *արդյո՞ք աճուրդ նշանակելու մասին որոշումն անվավեր ճանաչելի հնքին հանգեցնում է աճուրդի արդյունքում այն հաղթած անձի հետ կնքված պայմանագիրն ու սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու իրավական հետևանքի, թե ոչ:*

1. Ծառայության բողոքն առաջին հիմքով, Ելիզավետա Մարգարյանի և Բանկի վճռաբեկ բողոքներն անհիմն են հետևյալ պարճատարանությամբ.

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) օրենքը տարածվում է էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների և հարկադիր աճուրդների վրա, բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների:

Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների իմաստը բացահայտող Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակային սակարկությունները կամ սակարկություններն աճուրդի (մրցույթի) կազմակերպման միջոցով պայմանագրերի կնքման գործընթաց են, որին կարող է մասնակցել նույն օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակ, իսկ աճուրդը սակարկությունների ձև է, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին:

Նշվածից բխում է, որ աճուրդը պայմանագրերի կնքման գործընթաց է, որին կարող է մասնակցել Օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակ, իսկ հաղթող ճանաչվել՝ առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Օրենքի «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը կրող 4-րդ գլխում ներառված են հարկադիր աճուրդի, այդ թվում նաև՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգը սահմանող նորմերը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր է ճանաչվում այն աճուրդը, որն անցկացվում է կատարողական թերթին և նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդի լուտ կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդը կազմակերպում և անցկացնում է հարկադիր կատարողը:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ լուտն աճուրդով վաճառվող կամ մրցույթով առաջարկվող գույքը կամ իրավունքն է, որն ունի համապատասխան նկարագրություն, նույն օրենքով նախատեսված այլ տվյալներ, իսկ աճուրդի դեպքում՝ նաև մեկնարկային գին: Մեկնարկային գինը լուտի վաճառքի համար նախատեսված գինն է, որն աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուծում ընդգրկվող գույքի կազմը և քանակը սահմանում է հարկադիր կատարողը՝ գնահատելով լուրի արժեքը: Անշարժ գույքի, բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայի), մշակութային արժեքների և գնահատման առումով առավել բարդություն ներկայացնող գույքի գնահատումը կատարվում է հարկադիր կատարողի նշանակած գնահատողի միջոցով: Անշարժ գույքի գնահատումն իրականացվում է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով, որոնց ընտրության կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդում վաճառվող լուրի մեկնարկային գինը սահմանվում է գնահատված լուրի գնի 75 տոկոսի չափով:

Նշված հոդվածների մեկնաբանությունից բխում է, որ կատարողական թերթին և նուտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան անցկացվող հարկադիր աճուրդով կարող է վաճառքի հանվել ցանկացած գույք և իրավունք, որը կունենա համապատասխան նկարագրություն, Օրենքով նախատեսված այլ տվյալներ և մեկնարկային, այսինքն՝ աճուրդի սկզբում դրա մասնակիցներին առաջարկվող գին: Ընդ որում, աճուրդի մասնակիցներին առաջարկվող մեկնարկային գինը սահմանում է հարկադիր կատարողը՝ Օրենքով սահմանված կարգով լուրը գնահատելու արդյունքում ստացված արժեքի 75 տոկոսի չափով:

Նախատեսելով լուրի մեկնարկային գինը սահմանելու կարգ և դրա նվազագույն արժեք՝ օրենսդիրը միաժամանակ թույլատրել է լուրի մեկնարկային ավելի բարձր գին առաջարկելու հնարավորություն: Մասնավորապես.

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աճուրդի ներկայացվող լուրի մեկնարկային գնի մասին հարկադիր կատարողը պատշաճ ծանուցում է պարտապանին և պահանջատիրոջը (պահանջատերերին)՝ նշելով լուրի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու վերաբերյալ կողմի իրավունքի իրականացման կարգն ու ժամկետները: Եթե մինևույն պարտապանի գույքի նկատմամբ առկա են բռնագանձման վերաբերյալ երկու և ավելի կատարողական վարույթներ, ապա պատշաճ ծանուցումն ուղարկվում է տվյալ կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջատերերին: Պարտապանը և պահանջատերն (պահանջատերերը) իրավունք ունեն ծանուցումն իրենց ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ներկայացնելու գրավոր առաջարկություն՝ սահմանելով լուրի ավելի բարձր մեկնարկային գին:

Այդ դեպքում վաճառվող լուրի մեկնարկային գին է սահմանվում առաջարկվող ավելի բարձր գինը, եթե առաջարկություն ներկայացնողն իր առաջարկած գնի երեք տոկոսի չափով վճարում է կատարում հարկադիր կատարման բաժնի դեպոզիտ հաշվին կամ դրամարկը: Վճարի կատարման անդորրագիրը ներկայացվում է առաջարկությանը կից:

Եթե սահմանված ժամկետում առաջարկություն են ներկայացնում մեկից ավելի անձինք, ապա լուրի մեկնարկային գին է սահմանվում ավելի բարձր գինը, իսկ ավելի ցածր գին առաջարկած անձի (անձանց) կատարած վճարը վերադարձվում է:

Եթե նույն հոդվածով սահմանված ժամկետում և կարգով լուրի մեկնարկային գնի վերաբերյալ պարտապանը և պահանջատերը (պահանջատերերը) չեն ներկայացնում առաջարկություն, ապա աճուրդի մեկնարկային գին է համարվում նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գինը:

Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով լուրի մեկնարկային գինը որոշելուց հետո հարկադիր կատարողը առաջարկություն ներկայացնելու համար սահմանված երկշաբաթյա ժամկետի ավարտման օրվան հաջորդող օրը, որոշում է ընդունում հարկադիր աճուրդի անցկացման մասին՝ նշելով աճուրդի ժամը, վայրը, ինչպես նաև լուրի մեկնարկային գինը, և նույն օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում կատարում է հրապարակային ծանուցում:

Շարադրված իրավանորմերի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ հարկադիր կատարողը կրում է լուրի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով որոշված մեկնարկային գնի և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և

ժամկետների մասին պարտապանին և վերջինիս գույքի նկատմամբ տարբեր կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջատերերին ծանուցելու պարտականություն: Նշված ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում պարտապանն ու պարտատերերն իրավունք ունեն ներկայացնելու լուսի ավելի բարձր մեկնարկային գնի վերաբերյալ գրավոր առաջարկություն՝ դրան կցելով առաջարկվող այդ գնի երեք տոկոսի չափով վճարը հարկադիր կատարման բաժնի դեպոզիտ հաշվին կամ դրամարկղ վճարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը: Եթե առաջարկ ներկայացրած անձը պահպանել է վերը շարադրված պահանջը, ապա աճուրդի մեկնարկային գին է սահմանվում առաջարկվող ավելի բարձր գինը: Երկշաբաթյա ժամկետում մեկից ավելի անձանց կողմից առաջարկություն ներկայացված լինելու դեպքերում լուսի մեկնարկային գին է սահմանվում ավելի բարձր գինը, իսկ ավելի ցածր գին առաջարկված անձի (անձանց) կատարած վճարը վերադարձվում է: Եթե պարտապանն ու պարտատերերը սահմանված ժամկետում չեն ներկայացնում լուսի ավելի բարձր մեկնարկային գնի մասին գրավոր առաջարկություն, ապա մեկնարկային գինը մնում է անփոփոխ՝ լուսի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով:

Այլ կերպ ասած՝ լուսի արժեքը գնահատելու և դրա 75 տոկոսի չափով մեկնարկային գին որոշելու գործողություններով սահմանվում է հարկադիր աճուրդի հանված լուսի նվազագույն այն արժեքը, որը կողմերի համար ուղենիշային է լուսի ավելի բարձր գին առաջարկելու իրենց իրավունքն իրացնելու նպատակահարմարությունը որոշելու հարցում, և որից ցածր մեկնարկային գին առաջարկվել չի կարող:

Լուսի մեկնարկային գին ներկայացնելու նպատակով սահմանված երկշաբաթյա ժամկետի ավարտի հաջորդ օրը, երբ վերոշարադրյալ գործողությունների արդյունքում աճուրդի հանված լուսի մեկնարկային գինն արդեն սահմանվել է, հարկադիր կատարողը ընդունում է հարկադիր աճուրդի անցկացման մասին որոշում, որը պարունակում է նշում աճուրդի ժամի, վայրի, լուսի մեկնարկային գնի մասին: Նշված գործողությանը զուգահեռ հարկադիր կատարողն Օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում կատարում է նաև հրապարակային ծանուցում:

Օրենքի 35.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային համակարգերի (այսուհետ՝ համակարգ) կիրառմամբ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է ծառայությունը՝ կատարողական թերթին, ինչպես նաև նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի լուս կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Շարադրված իրավանդություն պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից պարզ է, որ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով հատուկ էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ կազմակերպվող և անցկացվող աճուրդների հիմքը նույնպես կատարողական թերթն ու նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթն են: Ընդ որում, սովյալ դեպքում ևս աճուրդի կարող է հանվել ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, օրենքով նախատեսված բացառություններ չպարունակելու դեպքում: Տեխնիկական և էլեկտրոնային հատուկ համակարգերի և միջոցների կիրառումն ու դրանք ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով իրականացվելու հանգամանքը հաշվի անելով՝ այդպիսի աճուրդները կոչվում են հարկադիր էլեկտրոնային աճուրդներ: Մինչդեռ դրանք հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման որոշակի առանձնահատկություններ ունեցող տարատեսակ են:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված են նորմատիվ իրավական ակտի մեկնաբանման կանոնները, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի

կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վճռաբեկ դատարանի իրավական այն դիրքորոշումը, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը հարկադիր աճուրդի տարատեսակ է և ներառվում է դրանում, քիսում է ոչ միայն Օրենքի 35.1-րդ հոդվածում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից, այլև Օրենքի «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը կրող 4-րդ գլխի կարգավորման համատեքստից, որում համապատասխանաբար ներառված է նշված հոդվածը:

Մասնավորապես, Օրենքի 4-րդ գլուխը կրում է «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը և դրանում ներառված իրավանորմերը կարգավորում են հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման հետ կապված իրավանորմերը ևս ներառված են այդ գլխում (տե՛ս Օրենքի 35.1-35.4-րդ հոդվածները): Ունենալով հարկադիր աճուրդների կազմակերպման և անցկացման կարգը սահմանող նորմերը համակարգելու և բովանդակությամբ համասեռ հոդվածները մեկ գլխի ներքո միավորելու նպատակ՝ օրենսդիրը դրանք ներառել է «Հարկադիր աճուրդներ» վերտառությամբ գլխում: Ավելին՝ էլեկտրոնային աճուրդն իր անվան մեջ ինքնին պարունակում է «հարկադիր» եզրույթը, նույնանում են հարկադիր աճուրդի և հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման փաստական հիմքերը, ինչպես նաև լոտի առարկաները:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման որոշակի ստանձնահարկություններով օժտված տեսակ է, և այդ ստանձնահարկությունների հաշվառումն էլ դրա իրականացման կարգն ու պայմանները սահմանված են ստանձին հոդվածով:

Անդրադառնալով հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով լոտի գնահատում իրականացնելու կանոնների հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ կիրառելի լինելու պահանջն ուղղակիորեն ամրագրված է նույն Օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասով:

Վերևում արդեն մանրամասն շարադրվել է հարկադիր աճուրդների անցկացման դեպքում լոտի մեկնարկային գինը որոշելու և սահմանելու ընթացակարգը, որից պարզ է, որ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված գործողությունների կատարումը դեռևս բավարար չէ լոտի մեկնարկային գինը որոշված համարելու համար: Այն ներկայացնում է մեկը մյուսի հետ փոխկապակցված, որոշակի հաջորդականություն պահանջող գործողությունների համալիր: Լոտը գնահատելու և մեկնարկային գինը սահմանելու Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված գործողություններն իրարից անջատ գնահատելու դեպքում խեղաթյուրվում է այդ նորմով օրենսդրի հետապնդած նպատակը: Իրավանորմերի նման նեղ մեկնաբանության դեպքում ստացվում է մի իրավիճակ, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների դեպքում լոտի մեկնարկային գինը սահմանելու հարցում հարկադիր կատարողի պարտականությունները սահմանափակվում են լոտի արժեքը գնահատելու և դրա մեկնարկային գինը գնահատված գնի 75 տոկոսի չափով սահմանելու գործողություններով: Մինչդեռ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված գործողությունների արդյունքում ընդամենը սահմանվում է աճուրդի դրված լոտի մեկնարկային նվազագույն գինը՝ կողմերի համար որոշակի դարձնելով գնային այն շեմը, որից ավելի բարձր գին իրենք կարող են առաջարկել: Օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասը նեղ մեկնաբանելու և հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ Օրենքի 30-րդ հոդվածի միայն 1-ին և 2-րդ մասերը կիրառելի համարելու պայմաններում կատարվի, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ հարկադիր կատարողը չի կրում նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունելու

պարտականություն, քանի որ վերջինիս համար այդպիսի պարտականություն սահմանված է Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով, որոնց Օրենքի 35.1-րդ հոդվածում ուղիղ հղում արված չէ: Սակայն հարկադիր կատարողը պարտավոր է ոչ միայն հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունել՝ Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, այլև Օրենքի 35.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որոշման մասին պատշաճ ծանուցել պարտապանին և պահանջատիրոջը, և սահմանված ժամկետում և կարգով կատարել հրապարակային ծանուցում: Հարկ է նշել, որ վկայակոչված՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման ենթակա լինելու դեպքում գույքի վերաբերյալ որոշումն ընդունելու ժամկետների վերաբերյալ կանոն, այն է՝ պարտապանի գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման ենթակա լինելու դեպքում դրա վերաբերյալ որոշումը կայացվում է գույքի գնահատումից հետո՝ եռօրյա ժամկետում:

Շարադրվածից բխում է, որ Օրենքի 30-րդ հոդվածն ամբողջացնում է 35.1-րդ հոդվածը՝ դրանում սահմանված ընդհանուր կանոններով կարգավորելով նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման կարգը:

Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը, լինելով հարկադիր աճուրդի տեսակ, հատուկ կանոններով չկարգավորվելու կամ ընդհանուր կանոնից բացառություն չնախատեսելու դեպքերում կարգավորվում է հարկադիր աճուրդի իրականացման և կազմակերպման կարգը սահմանող ընդհանուր կանոններով, քանի որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի հանված լուրը գնահատելու և մեկնարկային գին որոշելու հատուկ կանոններ նախատեսված չեն, իսկ այդ հարցերը կարգավորող իրավանքներից որևէ բացառություն նախատեսված չէ հարկադիր էլեկտրոնային աճուրդի համար: Հետևաբար՝ Օրենքի 30-րդ հոդվածով սահմանված գործողությունները՝ տրամաբանական հաջորդականությամբ, կիրառելի են նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հարկադիր էլեկտրոնային աճուրդների դեպքում ևս հարկադիր կատարողը կրում է լուրի մեկնարկային գնի և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին պարտապանին և վերջինիս գույքի նկատմամբ՝ րարբեր կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջարեներին ծանուցելու պարտականություն: Նշված պարտականության կատարմանը հաջորդող որոշակի գործողությունների արդյունքում սահմանվում է լուրի մեկնարկային գինը, որից հետո եռօրյա ժամկետում ընդունվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման մասին որոշումը և ծանուցումը հրապարակվում է հրապարակային ծանուցումների կայքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնում հարուցված թիվ 03323984 կատարողական վարույթի շրջանակներում պարտապան Սուսանա Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող Անշարժ գույքը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Ի կատարումն Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 35.1-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների՝ իրականացվել է Անշարժ գույքի գնահատում՝ հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի նշանակված գնահատողի՝ «Ամինտաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցով: Անշարժ գույքը գնվել է 31.01.2018 թվականին և այդ օրվա դրությամբ դրա շուկայական արժեքը կազմել է 80.200.000 ՀՀ դրամ՝ համաձայն 08.02.2018 թվականի «Շուկայական արժեքի գնահատման հաշվետվության»: Հիմք ընդունելով Անշարժ գույքի՝ 80.200.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունենալու հանգամանքը և առաջնորդվելով լուրի մեկնարկային գինը դրա գնահատված գնի 75 տոկոսի չափով սահմանելու օրենսդրական պահանջով՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանը 20.02.2018 թվականին ընդունել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու

մասին» որոշում և լուտի մեկնարկային գին սահմանել 60.150.000 ՀՀ դրամը, որը կազմում է 80.200.000 ՀՀ դրամի 75 տոկոսը: Անշարժ գույքի հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվել է նաև Ծառայության կայքում: Ծառադրվածով Անշարժ գույքի, որպես լուտի, մեկնարկային գինը սահմանելու հետ կապված գործողություններն ավարտվել են, և 23.02.2018 թվականին Սուսաննա Համբարձումյանը հարկադիր կատարողից առձեռն ստացել է 20.02.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը և կից գրությունները:

Ծառադրվածից բխում է, որ Անշարժ գույքի, որպես հարկադիր էլեկտրոնային աճուրդով վաճառքի ներկայացված լուտի, մեկնարկային գինը որոշելու և սահմանելու՝ Օրենքի 30-րդ և 35.1-րդ հոդվածներով նախատեսված գործողությունները Ծառայության հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի կողմից կատարվել են ոչ ամբողջությամբ: Վերջինս ոչ իրավաչափորեն ձեռնպահ է մնացել լուտի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով որոշված մեկնարկային գնի՝ 60.150.000 ՀՀ դրամի, և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին թիվ 03323984 կատարողական վարույթի պարտապան Սուսաննա Համբարձումյանին և բոլոր պահանջատերերին ծանուցելու, ավելի բարձր գնի մասին գրավոր առաջարկ ստանալու դեպքում սահմանված ընթացակարգն ու ժամկետները պահպանելու պարտականության կատարումից: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուտի մեկնարկային գնի և ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու՝ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունը գործում է նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ:

Արդյունքում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Անշարժ գույքի մեկնարկային գնի և դրանից ավելի բարձր գին սահմանելու ընթացակարգի վերաբերյալ պարտապան Սուսաննա Համբարձումյանին և բոլոր պարտատերերին ծանուցելու պարտականությունը չկատարելու հետևանքով վերջիններս գրկվել են լուտի մեկնարկային գնի մասին իրագեկվելու, ինչպես նաև լուտի մեկնարկային ավելի բարձր գին առաջարկելու՝ Օրենքով երաշխավորված իրավունքն իրացնելու հնարավորությունից: Անշարժ գույքի, որպես աճուրդի հանված լուտի, մեկնարկային գինը հարկադիր կատարողի կողմից սահմանվել է Օրենքով թույլատրված դրա նվազագույն արժեքի չափով, իսկ կատարողական վարույթի կողմերին չի ընձեռվել Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված թույլատրելի գործողությունները կատարելու միջոցով լուտի մեկնարկային գինը որոշելու գործընթացին մասնակից դառնալու հնարավորություն:

Փաստորեն՝ Որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում պարտապան Սուսաննա Համբարձումյանին լուտի մեկնարկային գնի և ավելի բարձր գին առաջարկելու իր իրավունքի մասին չձանուցելու հետևանքով վերջինս ոչ իրավաչափ կերպով գրկվել է աճուրդի կազմակերպման և իրականացման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշում ներկայացնելու և ընթացակարգային այլ գործողությունների միջոցով վարչական մարմնի որոշման վրա ազդելու հնարավորությունից:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի կողմից Որոշումը կայացնելիս ամբողջությամբ չեն պահպանվել Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված պահանջները, հետևաբար Որոշումն ընդունվել է Օրենքի լիախտմամբ, ինչը բավարար էր Որոշումն անվավեր ճանաչելու համար, որպիսի իրավաչափ հետևության և հանգել է Վերաքննիչ դատարանը:

2. Ծառայության վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պարճառաբանությամբ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալների

վճիռների և Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ հարկադիր կատարման ծառայություն):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է և կատարողական մակագրության թերթը, ինչպես նաև «Վարչարարության հիմնունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից տրված հանձնարարություններ պարունակող որոշումը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով նախատեսված կարգով հարկադիր կատարման ուղարկելու մասին դիմումը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցներն են՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով, պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելը, այլ անձանց մոտ գտնվող պարտապանի դրամական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելը, կատարողական թերթում նշված որոշակի առարկաները պարտապանից առգրավելը և պահանջատիրոջը հանձնելը, հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելը և կատարողական թերթի կատարումն ապահովող այլ միջոցներ:

Օրենքի 35.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է ծառայությունը կատարողական թերթին, ինչպես նաև նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան:

ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է Ծառայության կողմից աճուրդի կազմակերպման և անցկացման գործողությունների բնույթին և արձանագրել, որ «(...) Ծառայությունը՝ որպես պետական իշխանություն իրականացնող մարմին, կոչված է ապահովելու դատական ակտերի հարկադիր կատարումը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին, մասնավորապես՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Վճարեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով, իրականացվում է նաև գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացնելու միջոցով, այն է՝ սակարկություններով վաճառելու և այն հետագայում իրացնելու միջոցով: Ընդ որում, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածների հիմքով անցկացվող սակարկությունների, որտեղ որպես սակարկությունների կազմակերպիչ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կան ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից, գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի միջոցով իրացվելու դեպքում սակարկությունները կազմակերպվում և անց են կացվում Ծառայության կողմից՝ դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթին համապատասխան:

(...) քննության ենթակա հիմնական պահանջով վիճելի իրավահարաբերության կողմերից մեկը Ծառայությունն է, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է և «Վարչարարության հիմնունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով վարչական մարմին է» (տե՛ս *Դեզոնմոնս, Էդիկ, Գոհար,*

Սրբեհան, Նունե, Հմայակ և Ալիսա Մանուկյանները և Մասիկը Հարությունյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կարարումն ապահովող ծառայության և Մամիկոն Օհանյանի՝ քնակարանի էլեկտրոնային աճուրդը, դրա հիման վրա կնքված առուվաճառքի պայմանագիրն ու անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ ԿԴՅ/0174/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր կատարման վարույթում հանրային իշխանական լիազորություններ, այդ թվում նաև՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման հետ կապված իրականացնելիս Ծառայությունը հանդես է գալիս վարչական մարմնի կարգավիճակով:

«Հարկադիր էլեկտրոնային աճուրդի հասկացությունը և կազմակերպումը» վերահաստատելով կրող Օրենքի 35.1-րդ հոդվածի կարգավորման համատեքստից բխում է, որ դրանով սահմանված գործողություններն ուղղված են աճուրդի իրականացումը նախաձեռնելուն, ըստ պատշաճի դրա գործընթացը նախապատրաստելուն: Հետևաբար՝ լուրը գնահատելը, դրա մեկնարկային գինը սահմանելը, հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունելը, այդ մասին պարտապանին և պահանջատիրոջը պատշաճ ծանուցելը և մասնակիցների գրանցումն իրականացնելն ընդամենը հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպմանն ուղղված նախապատրաստական գործողություններ են, որին հաջորդում է աճուրդի բուն գործընթացը, որը կարգավորվում է Օրենքի 35.2-րդ հոդվածով:

Օրենքի 35.2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով: Հարկադիր էլեկտրոնային աճուրդում հաղթած մասնակցի կողմից նախօրոք ստեղծված նախավճարը փոխանցվում է ծառայության ղեկավարի հաշվին:

Սակարկությունների միջոցով պայմանագրեր կնքելու պայմանները սահմանող՝ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե սակարկություններով վաճառվելիք լուռն անշարժ կամ շարժական գույք է, որի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, ապա սակարկություններում հաղթողի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան **լուրի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:**

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ լուրի (լուրերի) վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը, և **պիսյակ լուրի վերաբերյալ աճուրդը համապարփում է ավարտված:**

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աճուրդի արդյունքների մասին արձանագրության մեջ նշվում են աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամանակը, լուրի անվանումը, լուրի վերաբերյալ իրավունքներն ու պարտականությունները և այլ սահմանափակումներ, ինչպես նաև լուրի վիճակը (արտադրության տարին, ֆիզիկական մաշվածության աստիճանը և այլն), լուրի մեկնարկային գինը, աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը, հաղթող ճանաչված մասնակցի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը և լուրի գնման գինը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արձանագրությունն ստորագրում են աճուրդն անցկացնելու օրը հաղթող մասնակիցը և աճուրդի կազմակերպիչը:

Օրենքի 35.2-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է աճուրդն անցկացնելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ծառայության ղեկավարի հաշվին կամ դրամարկղ մուծել լուրի գնման գինը՝ հաշվանցելով նախավճարը (...):

Օրենքի 35.2-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հաղթողի կողմից գնման գինը վճարվելուց և այն փաստացի ծառայության ղեկավարի հաշվին մուտքագրվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, հարկադիր կատարողը նրա կամ նրա ներկայացուցչի հետ կնքում է առք ու վաճառքի պայմանագիր: Հաղթողի կողմից նշված ժամկետում

պայմանագիր կնքվելու դեպքում գնման գինը վերադարձվում է նրան, իսկ նախավճարը մնում է ծառայության դեպոզիտ հաշվին:

Օրենքի 35.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը համարվում է կայացած, եթե աճուրդում հաղթած անձը հրաժարվել է առուվաճառքի պայմանագիր կնքելուց կամ սահմանված ժամկետում չի վճարել լոտի գնման գինը կամ չի ներկայացրել եկամտային հարկի վճարումը հավաստող փաստաթուղթ:

Նշված նորմերի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ աճուրդը հաղթած անձի լոտի համար ամենաբարձր հայտ ներկայացրած մասնակցի, հետ աճուրդն անցկացնելու օրը ստորագրվում է դրա արդյունքների մասին արձանագրություն, որով ազդարարվում է լոտի վերաբերյալ աճուրդի ավարտը: Արձանագրությունը ստորագրելու փաստի ուժով մասնակցին անցնում է լոտի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը, որն իրացնելու դեպքում վերջինս երեք աշխատանքային օր ժամկետում Ծառայության դեպոզիտ հաշվին կամ դրամարկղ է մուծում լոտի գնման գնի և նախավճարի տարբերությունը, իսկ դրան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Ծառայության հետ կնքում առուվաճառքի պայմանագիր: Մասնակցի կողմից պայմանագիր կնքելու իրավունքից հրաժարվելու կամ լոտի գնման գինը չլիստանցելու դեպքերում հարկադիր էլեկտրոնային աճուրդը համարվում է կայացած: Շարադրվածի անփոփոխմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աճուրդն ինքնին պայմանագիր կնքելուն ուղղված գործողությունների համալիր է, որը եզրափակվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրմամբ, որպիսի պահից աճուրդը հաղթող մասնակցին, այսինքն՝ արձանագրությունը ստորագրողին, անցնում է լոտի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր կնքելու իրավունքը:

Վերոգրյալից բխում է, որ արձանագրություն ստորագրելու գործողությամբ ավարտվում է Ծառայության, որպես վարչական մարմնի, հանրային իշխանական լիազորությունների իրականացումը, ինչի արդյունքում աճուրդը հաղթած մասնակցի մոտ ծագում է լոտի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր կնքելու իրավունք: Փաստացի՝ արձանագրությունը ստորագրելու իրողությամբ աճուրդն ավարտվում է՝ դադարեցնելով Ծառայության կողմից հանրային իշխանական լիազորությունների իրականացումը ևս: Արդյունքում Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Ծառայության, և աճուրդը հաղթած մասնակցի միջև ծագում են մասնավոր՝ քաղաքացիաիրավական, իրավահարաբերություններ:

Վարչական մարմինը որոշակի իրավահարաբերության մեջ կարող է ներկայանալ ոչ միայն որպես հանրային իշխանական լիազորություններ կրող մարմին, այլ նաև որպես տվյալ իրավահարաբերության մյուս մասնակիցներին հավասար սուբյեկտ: Ասվածից պարզ է, որ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ այդ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ յուրաքանչյուր դեպքում կարևորվում է ոչ միայն իրավահարաբերության սուբյեկտային կազմը, այլ նաև դրա օբյեկտն ու բովանդակությունը:

Այս գործով Դատարան ներկայացրած հայցադիմումով հայցվորը վիճարկել է Ծառայության Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 20.02.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման իրավաչափությունը՝ կատարողական վարույթի շրջանակներում իրականացված գործողությունների մասին իրազեկված չլինելու և Որոշումը ստացած չլինելու փաստերի վկայակոչմամբ (լոտի վերաբերյալ հարկադիր էլեկտրոնային աճուրդը Օրենքով սահմանված հիմքերով չի վիճարկվել): Որպես նշված որոշումն անվավեր ճանաչելու հետևանք՝ հայցվորը պահանջել է անվավեր ճանաչել նաև Պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանը 18.10.2019 թվականի վճռով հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ Ծառայության գործողությունները ուղղված գույքը աճուրդի ներկայացնելուն, իրավաչափ է, քանի որ կատարողական վարույթի նյութերում առկա է գրավոր սպացույց՝ առ այն, որ 23.02.2018 թվականին Մուսաննա Համբարձումյանն առձեռն ստացել է 20.02.2018 թվականին Ծառայության կողմից կայացված արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային

աճուրդով իրացնելու մասին որոշումները և կից գրությունները, որը վերաբերում է Ծաղկաձոր, Մուրադյան փողոց, թիվ 1 հասցեում գտնվող և Արամուս, Ամառանոցային 2 փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքերին, իսկ 20.02.2018 թվականին Ծառայության կողմից կայացվել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշում, որով Սուսաննա Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Տվյալ անշարժ գույքի գնահատման գինը կազմել է 80.200.000 ՀՀ դրամ, աճուրդի մեկնարկային գինը՝ 60.150.000 ՀՀ դրամ, իսկ հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ՝ 20.03.2018 թվականին: Հետևաբար՝ պահպանված է Հարկադիր կատարողի որոշումը եռօրյա ժամկետում պարտապանին հանձնելու վերաբերյալ հարկադիր կատարողի պարտականությունը, Սուսաննա Համբարձումյանը տեղյակ է եղել 20.03.2018 թվականին կայանալիք աճուրդի մասին, քանի որ տվյալ որոշումը վերջինս առձեռն ստացել է 23.02.2018 թվականին: Հետևաբար՝ անհիմն է հայցվորի փաստարկն առ այն, որ հարկադիր կատարողի գործողությունները և գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը ոչ իրավաչափ են:

Վերաքննիչ դատարանը, հանգելով Որոշումն օրենքի խախտմամբ ընդունված լինելու և այդ հիմքով անվավեր ճանաչման ենթակա լինելու իրավաչափ հետևության, Պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը ևս անվավեր է ճանաչել, որպիսի իր հետևությունը պատճառաբանել է հետևյալ կերպ՝ «(...) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը ենթակա է անվավեր ճանաչման, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված ոչ իրավաչափ որոշման հիմքով անցկացված էլեկտրոնային աճուրդի արդյունքում կնքված գույքի օտարման գործարքը (13.08.2018 թվականին Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և Ելիզավետա Արարկիր Սարգսյանի միջև կնքված Մարզ Կոտայք, համայնք Արամուս, Ամառանոցային թաղամաս, 2-րդ փողոց, 14 այգեբնակ հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը) և այդ գույքի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի գրանցումը ևս ենթակա են անվավեր ճանաչման»:

Շարադրված պատճառաբանություններից բխում է, որ Պայմանագիրն ու Անշարժ գույքի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը Վերաքննիչ դատարանն անվավեր է ճանաչել որպես Որոշումն անվավեր ճանաչելու հետևանք: Մինչդեռ տվյալ դեպքում Որոշումն անվավեր ճանաչելն ինքնին չի կարող հանգեցնել Պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը ևս անվավեր ճանաչելուն, այսինքն՝ Որոշումն անվավեր ճանաչելու հարցի լուծումն որևէ կերպ չի կանխորոշում Պայմանագրի ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման իրավաչափության գնահատման հարցի լուծումը, քանի որ Պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը հանդիսանում են աճուրդի ուղղակի հետևանք, այլ ոչ թե՛ Որոշման: Ինչ վերաբերում է Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի՝ լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության, ապա նշված նորմն աճուրդում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության հետևանք նախատեսում է բուն աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքերով (ինչպես նշվեց, այս գործով աճուրդը չի վիճարկվել) և կիրառելի չէ այս՝ *աճուրդ նշանակելու մասին որոշումն* անվավեր ճանաչելու դեպքի նկատմամբ:

Ավելին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Հետևանքների վերացման անամցյալ պահանջը» վերառողության 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող

վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանը դատական ակտ կայացնելիս պարտավոր է լուծել նաև հետևանքների վերացման հարցը՝ նույն օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված պահանջ լինելու դեպքում:

Վերոգրյալ հոդվածների կարգավորումներից հետևում է, որ օրենսդիրը հայցվորին իրավունք է տվել վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ մեկտեղ ներկայացնելու այն հետևանքները վերացնելու մասին պահանջ, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով՝ համապատասխանաբար դատարանին պարտավորեցնելով դատական ակտ կայացնելիս լուծել նաև հետևանքների վերացման հարցը՝ նման պահանջ ներկայացված լինելու պարագայում: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ինչպես հետևում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի վերտառությունից, հայցվորը կարող է ներկայացնել ենթադրյալ հետևանքների վերացման միայն ածանցյալ պահանջ, ինչը ենթադրում է, որ հիմնական և ածանցյալ պահանջների միջև պետք է առկա լինի ուղղակի պատճառահետևանքային կապ, այսինքն՝ հիմնական պահանջի լուծումը պետք է անմիջականորեն և անվերապահորեն կանխորոշի ածանցյալ պահանջի ելքը՝ բացառելով ածանցյալ պահանջով հավելյալ փաստական հանգամանքներ պարզելու անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում ներկայացված պահանջը հարկ է դիտարկել ոչ թե որպես հետևանքների վերացման ածանցյալ, այլ հիմնական պահանջ, որը պահանջում է ամբողջական քննություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անգամ հետևանքների վերացման ածանցյալ պահանջի պարագայում շահագրգիռ անձի խախտված իրավունքը վերականգնելիս դատարանը պետք է ղեկավարվի համաչափության սկզբունքով: Այսպես՝

Միջազգային և ներպետական իրավական ակտերով անձին երաշխավորված հիմնարար իրավունքները սահմանափակելիս անհրաժեշտ և պիտանի միջոցների գործադրմամբ նվազ միջատության կանոնը պահպանելու և սահմանված նպատակի և գործադրվող միջոցի միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու իմպերատիվ պահանջ նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ: Մասնավորապես ըստ ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում անդրադարձել է համաչափության սկզբունքի կիրարկմանն ու փաստել, որ «(...) որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, և տվյալ դեպքում օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջներն են.

- 1) սահմանափակման նպատակի իրավաչափությունը, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.
- 2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝
 - ա) պիտանիությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.
 - բ) անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.
 - գ) համարժեքությունը՝ սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը՝ *(որև՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2021 թվականի թիվ ՄԳՈ-1592 որոշումը):*

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ «(...) Համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների

սահմանափակումների սահմանափակումն է մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատուկ կարևորություն» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 18.06.2020 թվականի թիվ ՄԴՈ- 1546 որոշումը), և «(...) օրենսդրի կողմից ընտրված միջոցը պետք է նաև անհրաժեշտ լինի: Միջոցն **անհրաժեշտ է, եթե չկա մեկ այլ՝ ավելի մեղմ միջամտող միջոց, որով նույն արդյունավետությամբ կարելի է հասնել նպատակին**» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 19.03.2019 թվականի թիվ ՄԴՈ-1448 որոշումը):

Համաչափության սկզբունքն իրավական պետության կարևորագույն տարրերից է: Դրա առանցքային կարևորությունը նրանումն է, որ այն հնարավորություն է տալիս գնահատելու գործողության և/կամ անգործության իրավաչափությունը՝ միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ նպատակին հասնելու հնարավորության և թույլատրելիության տեսանկյունից: Համաչափության սկզբունքը երաշխավորում է, որ այս կամ այն հանգամանքներում համարժեքություն ապահովվի կիրառվող միջոցների և դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակի միջև: Յուրաքանչյուր դեպքում միջամտությունը պետք է բավարարի օրինականության, պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության պահանջներին: Այսինքն՝ հիմնարար իրավունքից անարգել օգտվելու հնարավորության ցանկացած միջամտություն պետք է գերծ լինի կամայականությունից և հնարավորինս մեղմ միջոցների գործադրմամբ ապահովվի առաջադրվող նպատակի արդյունավետ իրագործումը:

Ուստի՝ անձին երաշխավորված որևէ հիմնարար իրավունք սահմանափակելիս պետական մարմինը, այդ թվում՝ Դատարանը կաշկանդված է համաչափության սկզբունքի սահմանադրական հրամայականով և ցանկացած դեպքում պետք է ստուգի ընտրված միջոցի օրինականությունը, ապա գնահատի իր առջև դրված նպատակին հասնելու հարցում դրա պիտանիությունը, անհրաժեշտությունը ու համարժեքությունը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը Պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը որպես հետևանք անվավեր ճանաչման ենթակա լինելու իր եզրակացության հիմքում դրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածը:

Մինչդեռ Որոշման և որպես «հետևանք» ներկայացված՝ Պայմանագրի և Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցման միջև առկա չէ անմիջական և ուղղակի պատճառահետևանքային կապ: Պայմանագիրն աճուրդի ուղղակի հետևանքն է, քանզի աճուրդն ինքնին պայմանագիր կնքելուն ուղղված գործընթաց է, իսկ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն էլ այդ Պայմանագրի ուղղակի հետևանքն է: Այս գործով Որոշումն ընդամենը աճուրդի նախնական փուլում ընդունված և դրա պատշաճ կազմակերպման ուղղված ակտ է: Այսինքն՝ այն աճուրդի նախնական փուլի հետևանք է և Պայմանագրի և Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցման հետ ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ չի գտնվում: Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով որպես «հետևանք» ներկայացված՝ 13.08.2018 թվականի թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրը, և դրանց հիման վրա 22.08.2018 թվականին կատարված Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու մասին պահանջները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի իմաստով չեն հանդիսանում հետևանքների վերացման ածանցյալ պահանջներ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Պայմանագիրն ու Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներին վերաբերող մատերով Սուսաննա Համբարձումյանի հայցը ենթակա է մերժման՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի

20.02.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված հետևանքների վերացման աժանցյալ պահանջներ չլինելու հիմնավորմամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշմամբ Դատարանի 18.10.2019 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 20.02.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը, թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրը և 22.08.2018 թվականին կատարված Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասով բավարարվել է, սակայն սույն որոշման պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը հանգում է որպես հետևանք ներկայացված պահանջների աժանցյալ բնույթ չունենալու մասին հետևության, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքը բավարար է մասնակիորեն՝ 13.08.2018 թվականի թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրը և 22.08.2018 թվականին կատարված Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներին վերաբերող մասերով, Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը բեկանելու և փոփոխելու՝ հայցն այդ մասերով մերժելու համար: Չբեկանված՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջը բավարարելու մասով Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ: Օրինական ուժի մեջ պետք է թողնել նաև Վերաքննիչ դատարանի կողմից Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և 06.08.2018 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին Nq00829046-18/02 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասով Դատարանի 18.10.2019 թվականի վճիռը բեկանելու և քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասը՝ նկատի ունենալով, որ այդ մասը դուրս է վճռաբեկ բողոքների հիմքերի և հիմնավորումների շրջանակից:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան

համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *եթե հայցվորի կամ բողոք բերողի պահանջները բավարարվում են մասամբ*, ապա *հաշվանցման եղանակով* դատարանը կարող է հայցվորին, բողոք բերողին և պատասխանողին փոխադարձաբար ազատել դատական ծախսերի հատուցումից կամ համաչափորեն բաշխել դատական ծախսերը նրանց միջև:

Նկատի ունենալով, որ Բանկի և Ելիզավետա Սարգսյանի ներկայացրած վճարել բողոքները ենթակա են մերժման, վճարել դատարանում դատական ծախսերի բաշխման հարցը նրանց վերաբերող մասով պետք է համարել լուծված:

Ծառայության ներկայացրած վճարել բողոքը մասնակի բավարարելու պայմաններում Սուսաննա Համբարձումյանի հայցը ևս ենթակա է մասնակի բավարարման, ինչի արդյունքում Վճարել դատարանը հնարավոր է համարում հաշվանցման եղանակով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ դատական ծախսերը համաչափորեն բաշխել հայցվորի և պատասխանողի միջև՝ հետևյալ կերպ.

Վերաքննիչ դատարանի 30.03.2020 թվականի որոշմամբ Դատարանի 18.10.2019 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել էր՝ Սուսաննա Համբարձումյանի ներկայացրած հայցը բավարարվել էր մասնակի, և որոշվել էր Ծառայությունից հօգուտ Սուսաննա Համբարձումյանի բռնագանձել 14.000 ՀՀ դրամ, որը կազմում է Դատարանում Սուսաննա Համբարձումյանի կողմից վճարված պետական տուրքի՝ 4.000 ՀՀ դրամի, և Վերաքննիչ դատարանում նույն անձի ներկայարցած վերաքննիչ բողոքի քննության արդյունքում բավարարված պահանջի համար վճարված պետական տուրքի՝ 10.000 ՀՀ դրամի, հանրագումարը:

Սույն որոշմամբ թեև մասնակի 13.08.2018 թվականի թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրը և Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներին վերաբերող մասերով, բեկանվում է Վերաքննիչ դատարանի 30.03.2020 թվականի որոշումը և փոփոխվում, սակայն Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջը բավարարելու, ինչպես նաև Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և 06.08.2018 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին Ոգ00829046-18/02 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասերով վարչական գործի վարույթը կարճելու մասերով, որոշումը թողնվում է օրինական ուժի մեջ:

Այսինքն՝ սույն որոշմամբ Սուսաննա Համբարձումյանի հայցը մնում է բավարարված մասնակի, որպիսի պայմաններում Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Ծառայության, կրում է Դատարանում և Վերաքննիչ դատարանում հայցվորի վճարած պետական տուրքի գումարները բավարարված պահանջին համամասնորեն՝ 14.000 ՀՀ դրամի չափով, հատուցելու պարտականություն:

Ինչ վերաբերում է վճարել բողոք բերելու համար պետական տուրքի բաշխման հարցին, ապա Ծառայությունը նախապես վճարել է վճարել բողոք ներկայացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը՝ 20.000 ՀՀ դրամի չափով, իսկ նրա վճարել բողոքը ենթակա է բավարարման մասնակի, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա Սուսաննա Համբարձումյանը կրում է Ծառայության վճարել բողոքի բավարարված մասին համամասնորեն՝ 10.000 ՀՀ դրամի չափով, Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Ծառայության, հատուցելու պարտականություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս պայմաններում հնարավոր է Հայաստանի Հանրապետության ի դեմս Ծառայության, կողմից Սուսաննա Համբարձումյանին վճարման ենթակա 14.000 ՀՀ դրամը հաշվանցել վճռաբեկ բողոք ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Ծառայության, Սուսաննա Համբարձումյանի կողմից հատուցման ենթակա 10.000 ՀՀ դրամի հետ և Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս Ծառայության, հոգուտ Սուսաննա Համբարձումյանի բռնագանձել մնացորդը՝ 4.000 ՀՀ դրամի չափով (14.000 - 10.000 = 4.000 ՀՀ դրամ):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի սույն գործով դատական այլ ծախսեր առկա չեն:

Ելելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ելիզավետա Սարգսյանի և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքները մերժել:

2. ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.03.2021 թվականի որոշումը մասնակի՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքի 13.08.2018 թվականի թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա 22.08.2018 թվականին կատարված Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասերով, բեկանել և փոփոխել՝ հայցն այդ մասերով մերժել:

3. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.03.2021 թվականի որոշումը մնացած՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջը բավարարելու, ինչպես նաև Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և 06.08.2018 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին Ոգ00829046-18/02 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասերով վարչական գործի վարույթը կարճելու մասերով, թողնել օրինական ուժի մեջ:

4. Հայաստանի Հանրապետությունից հոգուտ Սուսաննա Համբարձումյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ: Դատական ծախսերի բաշխման հարցը մնացած մասով համարել լուծված:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է ստնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/9457/05/18 վարչական գործով
26.05.2022 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

26.05.2022 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2022 թվականի մայիսի 26-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), Ելիզավետա Սարգսյանի և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.03.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սուսաննա Համբարձումյանի ընդդեմ Ծառայության, երրորդ անձինք Ելիզավետա Սարգսյանի, Աղասի Դանիելյանի, Անդրանիկ Դանիելյանի, Բանկի և «Ունիվերսալ Ավան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք 06.08.2018 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին Nq00829046-18/02 արձանագրությունը, 13.08.2018 թվականի թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրը, և դրանց հիման վրա 22.08.2018 թվականին կատարված Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետունակ հասցեի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է Ելիզավետա Սարգսյանի և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքները մերժել, ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.03.2021 թվականի որոշումը մասնակի՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքի 13.08.2018 թվականի թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա 22.08.2018 թվականին կատարված Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասերով, բեկանել և փոփոխել՝ հայցն այդ մասերով մերժել, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.03.2021 թվականի որոշումը մնացած Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջը բավարարելու, ինչպես նաև Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և 06.08.2018 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին Nq00829046-18/02 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասերով վարչական գործի վարույթ կարճելու մասերով, թողնել օրինական ուժի մեջ:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի

մի մասի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում են հատուկ կարծիքս այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապարունություն չէլ է հեղկյալը

«Դիմելով դատարան՝ Սուսաննա Համբարձումյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը (այսուհետ՝ նաև Անշարժ գույք) հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը, ոչ իրավաչափ ճանաչել Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը, ոչ իրավաչափ ճանաչել Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը, և որպես հետևանք անվավեր ճանաչել 06.08.2018 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին Nq00829046-18/02 արձանագրությունը (այսուհետ՝ նաև Արձանագրություն), 13.08.2018 թվականի թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր), և դրանց հիման վրա 22.08.2018 թվականին կատարված Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Հ. Այվազյան) (այսուհետ՝ Դատարան) 18.10.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.03.2021 թվականի որոշմամբ Սուսաննա Համբարձումյանի վերաքննիչ բողոքը մասնակի բավարարվել է՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի՝ Անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, 13.08.2018 թվականի Պայմանագիրը և Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի նկատմամբ 22.08.2018 թվականին Ելիզավետա Սարգսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներին վերաբերող մասերով, Դատարանի 18.10.2019 թվականի վճիռը բեկանվել է և հայցն այդ մասերով բավարարվել է, իսկ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա Անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և 06.08.2018 թվականի Արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջներին վերաբերող մասերով, Դատարանի 18.10.2019 թվականի վճիռը բեկանվել է և այդ մասերով վարչական գործի վարույթը կարճվել է:

Վճռաբեկ բողոք են ներկայացրել Ծառայությունը (ներկայացուցիչ Էլմիրա Մեջլումյան), Ելիզավետա Սարգսյանը (ներկայացուցիչ Զոհրակ Ապրեսյան) և Բանկը (ներկայացուցիչ Դավիթ Սարգսյան):

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել»:

2. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի հիմք, հիմնավորումներ և պահանջ չէլ է հեղկյալը

«2.1. Ծառայության վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարչության մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք չպետք է կիրառեր, և չի կիրառել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 35.1-րդ հոդվածի 5-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

ա) ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԳ/12638/05/17 և թիվ ՎԳ/0927/05/19 վարչական գործերով, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը թիվ ՎԳ/0781/05/16 վարչական գործով եզրահանգել են, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ կիրառելի չէ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, մինչդեռ Վերաքննիչ դատարանի կողմից սույն վարչական գործով 23.03.2021 թվականին կայացված որոշմամբ արձանագրվել է, որ նշված դրույթը կիրառելի է հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ: Հետևաբար, ՀՀ վարչական դատարանի և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած վերոհիշյալ դատական ակտերով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվել է սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից այդ նորմին տրված մեկնաբանությանը ակնհայտորեն հակասող մեկնաբանությամբ:

բ) Չնայած որ ներկայացված չի եղել հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջ, այդուհանդերձ հարկ է նշել, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը կարող է անվավեր ճանաչվել բացառապես Օրենքի 35.3-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում: Քանզի առկա չէ նման հիմք, ապա համապատասխանաբար բացակայում է նաև անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու որևէ հիմք:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է մասնակի՝ հայցի բավարարմանը վերաբերող մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը և գործն այդ մասով ուղարկել նոր քննության:

2.2. Ելիզավետա Մարգարյանի վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ, 69-րդ, 72-րդ, 96-րդ և 145-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումները կիրառելի չեն հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ: Օրինական ուժի մեջ մտած մի շարք դատական ակտերով տրվել է իրավական այն դիրքորոշումը, որ մինչև գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշում կայացնելը Ծառայությունը չի կրում առանձին ակտով պարտապահին և պարտատիրոջն աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին ծանուցելու պարտականություն: Ընդ որում, աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին պատշաճ ծանուցում համարվում է գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը վարույթի մասնակիցներին հանձնելը՝ այն մասին նշումով, որ նրանք գրկված չեն այդ պահից ի վեր ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու հնարավորությունից: Ավելին, արտահայտվել է նաև իրավական այնպիսի դիրքորոշում, որ եթե անգամ Ծառայությունը կրի աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին պարտապահին և պարտատիրոջը ծանուցելու պարտականություն, ապա նման պայմաններում անգամ աճուրդը չի կարող անվավեր ճանաչվել, քանի որ Օրենքի 35.3-րդ հոդվածը սպառիչ կերպով սահմանում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի անվավերության հիմքերը, և այդ հոդվածով նման հիմք նախատեսված չէ:

Մինչդեռ հակառակ նշված մեկնաբանությունների՝ Վերաքննիչ դատարանը բողոքարկված որոշմամբ ոչ միայն արձանագրել է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի իրականացման ժամանակ Ծառայությունը պարտավոր է մինչև աճուրդի մասին որոշման կայացումն Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան լստի մեկնարկային գնի մասին պատշաճ ծանուցել պարտապանին և պահանջատիրոջը, այլև այդ խախտման հիմքով էլ անվավեր է ճանաչել կայացված հարկադիր էլեկտրոնային աճուրդը: Ըստ էության Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը կարող է անվավեր ճանաչվել նաև Օրենքի 35.1-րդ և 35.2-րդ հոդվածների պահանջները պահպանված լինելու պարագայում:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը և կայացնել գործի վարույթը կարճելու մասին որոշում, կամ հայցի բավարարմանը վերաբերող մատով բեկանել Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 18.10.2019 թվականի վճռին:

2.3. Բանկի վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Օրենքի 35.1-րդ հոդվածը, կիրառել է նույն օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 25-27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 35.1-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի վերլուծությունից բխում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի՝ որպես աճուրդի առանձին տեսակի, ընթացքում իրացվող լստի գնահատման գործընթացի նկատմամբ կիրառելի են նույն Օրենքի 30-րդ հոդվածի միայն 1-ին և 2-րդ մասերը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և իրականացման նկատմամբ կիրառելի է համարել նաև հարկադիր աճուրդի կազմակերպմանն ու իրացմանը վերաբերող ընդհանուր դրույթները: Եթե Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելի լիներ հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ, ապա այդ մասին Օրենքում նշված կլիներ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Սուսանա Համբարձումյանը տեղյակ է եղել ինչպես դատական ողջ գործընթացի, դրա արդյունքում կայացված վճռի, այնպես էլ այդ վճռի հիման վրա հետագայում տրված կատարողական թերթի հիմքով հարուցված կատարողական վարույթի, դրա ընթացքում կատարված գործողությունների և կայացված որոշումների վերաբերյալ: Ընդ որում, Անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը կայացվել է թիվ ԵԱԲԴ/0070/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններ ընդհանուր իրավասության դատարանի կողմից 28.12.2015 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա և ուղղված է նշված վճռի կատարումն ապահովելուն: Նշված օրինական ուժի մեջ մտած դատական ակտն անտեսելու հետևանքով խախտվել է Բանկին՝ որպես պարտատիրոջ, երաշխավորված իրավունքներն ու օրինական շահերը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է մասնակի՝ հայցի բավարարմանը վերաբերող մատով, բեկանել Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 18.10.2019 թվականի վճռին»:

3. Վճարեկ դատարանը որպես վճարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը

«Վճարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Թիվ ԵԱՔԴ/0070/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.12.2015 թվականին հրապարակված վճռով Բանկի հայցն ընդդեմ Ադասի Դանիելյանի, «Ունիվերսամ Ավան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, Անդրանիկ Դանիելյանի և Սուսաննա Համբարձումյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է և վճռվել է.

«(...) Պատասխանողներ «Ունիվերսամ Ավան» ՍՊ ընկերությունից, Ադասի Շավարշի Դանիելյանից հոգուտ հայցվոր «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 1.146.762 (մեկ միլիոն հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր վաթսուներկու) ԱՄՆ դոլար 80 (ույթսուն) ցենտին համարժեք ՀՀ դրամ՝ որպես առ 08.06.2015թ. դրությամբ պարտավորության գումար, որից վարկի մնացորդ՝ 1.100.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (որից ժամկետանց՝ 75.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ), հաշվարկված տոկոս՝ 28.794,52 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (որից ժամկետանց՝ 27.109,6 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ), ժամկետանց գումարի տույժ՝ 12.202,1 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ժամկետանց տոկոսի համար տույժ՝ 5.766,18 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Պատասխանողներ «Ունիվերսամ Ավան» ՍՊ ընկերությունից, Ադասի Շավարշի Դանիելյանից հոգուտ հայցվոր «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել մինչև սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելն «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության և «Ունիվերսամ Ավան» ՍՊ ընկերության միջև 29.10.2013 թվականին կնքված վարկ տրամադրելու մասին լրացուցիչ թիվ VP022302 համաձայնագրի 4.3., 4.4., 4.5. ենթակետերով սահմանված պայմաններով և կարգով հաշվարկվող վճարման ենթակա գումարները, իսկ սկսած սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև վճարման ենթակա գումարի փաստացի վճարման պահը, վարկի մնացորդի՝ 1.146.762 (մեկ միլիոն հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր վաթսուներկու) ԱՄՆ դոլար 80 (ույթսուն) ցենտին համարժեք ՀՀ դրամ գումարի նկատմամբ նույն համաձայնագրի 4.3 ենթակետով սահմանված 0,1 տոկոս օրական ժամկետանց տոկոսադրույքով հաշվարկվող վճարման ենթակա գումարները (...):

Բռնագանձումը տարածել 29.10.2013 թվականին կնքված շրջանառության մեջ գտնվող դրամական միջոցների գրավի թիվ 281013/3 պայմանագրով գրավի առարկա հանդիսացող՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված թիվ 17563430100 դրամային և 17563430101 դոլարային բանկային հաշիվներում առկա և հետագայում այդ հաշիվներին մուտքագրվող դրամական միջոցների, 19.06.2014 թվականին կնքված պարտապան չհանդիսացող անձին պատկանող անշարժ գույքի գրավի թիվ 281013/4 պայմանագրով գրավի առարկա հանդիսացող՝ ՀՀ, Մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր ք. Մուրադյան փողոց թիվ 1 հանգստյան տուն հասցեում գտնվող անշարժ գույքի (հիշյալ պայմանագրի հիման վրա անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 25.06.2014թ. թիվ 25062014-07-0005 վկայականի համաձայն՝ տվյալ անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության գրավի իրավունքը) և 19.02.2015 թվականին կնքված պարտապան չհանդիսացող անձին պատկանող անշարժ գույքի գրավի թիվ 281013/5 պայմանագրով գրավի առարկա հանդիսացող՝ ՀՀ, Մարզ Կոտայք, համայնք Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 այգետնակ հասցեում գտնվող անշարժ գույքի (հիշյալ պայմանագրի հիման վրա անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 25.02.2015թ. թիվ 25022015-07-0021 վկայականի համաձայն՝ տվյալ անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության գրավի իրավունքը) վրա, իսկ դրանց իրացումից ստացված գումարը բավարար չլինելու դեպքում նաև պատասխանողներ «Ունիվերսամ Ավան» ՍՊ ընկերությանը և Ադասի Շավարշի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի, այդ թվում՝ բանկային հաշիվների և դրամական միջոցների վրա (...):»:

Ի կատարումն թիվ ԵԱՔԴ/0070/02/15 քաղաքացիական գործով 28.12.2015 թվականին հրապարակված վճռի՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական

շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 17.05.2017 թվականին տրվել է կատարողական թերթ **(հաստր 1-ին, գ.թ. 210-211):**

2) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանը 31.05.2017 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշմամբ հարուցել է թիվ 03323984 կատարողական վարույթը:

Նույն օրը կայացրած «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» թիվ Ո00572-62478/17 որոշմամբ պարտապան Սուսաննա Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող և հետագայում ձեռք բերվելիք գույքի վրա արգելանք է դրվել **(հաստր 1-ին, գ.թ. 212-214):**

3) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 02.06.2017 թվականի «Ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին» որոշմամբ թիվ 03323984 կատարողական վարույթով նշանակվել է ապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «Ամինտաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Փորձագետին առաջադրվել է հետևյալ հարցը՝ որքան է կազմում Կոտայքի մարզ, Արամուս համայնք, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 այգետնակ հասցեում գտնվող անշարժ գույքի և Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Մուրադյան փողոց թիվ 1 հանգստյան տուն հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը **(հաստր 1-ին, գ.թ. 141-142):**

4) 08.02.2018 թվականի «Շուկայական արժեքի գնահատման հաշվետվության» համաձայն՝ գնահատման ներկայացված Անշարժ գույքը գննվել է 31.01.2018 թվականին և այդ օրվա դրությամբ դրա շուկայական արժեքը կազմել է 80.200.000 ՀՀ դրամ **(հաստր 3-րդ, գ.թ. 50-71):**

5) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 20.02.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) Սուսաննա Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Աճուրդի մեկնարկային գին է սահմանվել 60.150.000 ՀՀ դրամը:

Միաժամանակ Որոշումն ուղարկվել է պարտապանի հաշվառման հասցեի վարչական շրջանի ղեկավարին և տեղադրվել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում **(հաստր 2-րդ, գ.թ. 153-154, 171-173):**

6) Սուսաննա Համբարձումյանը 23.02.2018 թվականին հարկադիր կատարողից առձեռն ստացել է արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումները և կից գրությունները, որոնք վերաբերել են Ծաղկաձոր, Մուրադյան փողոց, թիվ 1 հասցեում գտնվող և Արամուս, Ամառանոցային 2 փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքերին **(հաստր 2-րդ, գ.թ. 155, 165):**

7) 06.08.2018 թվականին հարկադիր կատարող Կարեն Մարտիրոսյանի և աճուրդում հաղթած Ելիզավետա Սարգսյանի միջև կազմվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին թիվ գ00829046-18/02 արձանագրությունը, ըստ որի՝ թիվ 295950 լոտի վաճառքի գինը կազմել է 23.403.343 ՀՀ դրամ **(հաստր 1-ին, գ.թ. 11):**

8) Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կարեն Մարտիրոսյանի և Ելիզավետա Սարգսյանի միջև 13.08.2018 թվականին կնքվել է Կոտայքի մարզի Արամուս, Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, թիվ 14 այգետնակ հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը **(հաստր 1-ին, գ.թ. 9-10):**

9) 22.08.2018 թվականին տրված թիվ 22082018-07-0032 վկայականի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Արամուս, Ամառանոցային թաղամաս, 2-րդ փողոց, 14 այգետնակի նկատմամբ գրանցվել է Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքը: Գրանցման հիմք են հանդիսացել 13.08.2018 թվականի անշարժ գույքի առուվաճառքի

պայմանագիրն ու հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լուծի մասին 06.08.2018 թվականի թիվ ԳՕ0829046-18/02 արձանագրությունը (**հատոր 1-ին, գ.թ. 7**)»:

4. Վճուարեկ դատարանը որպես Վճուարեկ դատարանի պարճատարանություններ և եզրահանգումներ նշել է հետևյալը

«Վճուարեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճուարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճուարեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ ՀՀ վարչական դատարանի և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվել է սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից այդ նորմին տրված մեկնաբանությանը ակնհայտորեն հակասող մեկնաբանությամբ:

Վերոգրյալով պայմանավորված Վճուարեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. *հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուծի մեկնարկային գնի և ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունն արդյո՞ք գործում է նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ, թե ոչ,*

2. *արդյո՞ք աճուրդ նշանակելու մասին որոշումն անավարձ ճանաչելի ինքնին հանգեցնում է աճուրդի արդյունքում այն հաղթած անձի հետ կնքված պայմանագիրն ու սեփականության իրավունքի պետական գրանցումն անավարձ ճանաչելու իրավական հետևանքի, թե ոչ:*

1. Ծառայության բողոքն առաջին հիմքով, Ելիզավետա Մարգարյանի և Բանկի վճուարեկ բողոքներն անհիմն են հետևյալ պարճատարանությամբ.

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն (...) օրենքը տարածվում է էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների և հարկադիր աճուրդների վրա, բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների:

Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների իմաստը բացահայտող Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակային սակարկությունները կամ սակարկություններն աճուրդի (մրցույթի) կազմակերպման միջոցով պայմանագրերի կնքման գործընթաց են, որի կարող է մասնակցել նույն օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակից են, որի կարող է մասնակցել, իսկ աճուրդը սակարկությունների ձև է, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին:

Նշվածից բխում է, որ աճուրդը պայմանագրերի կնքման գործընթաց է, որի կարող է մասնակցել Օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակ, իսկ հաղթող ճանաչվել՝ առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Օրենքի «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը կրող 4-րդ գլխում ներառված են հարկադիր աճուրդի, այդ թվում նաև՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգը սահմանող նորմերը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր է ճանաչվում այն աճուրդը, որն անցկացվում է կատարողական թերթին և նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդի լուծ կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդը կազմակերպում և անցկացնում է հարկադիր կատարողը:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ լուսն աճուրդով վաճառվող կամ մրցույթով առաջարկվող գույքը կամ իրավունքն է, որն ունի համապատասխան նկարագրություն, նույն օրենքով նախատեսված այլ տվյալներ, իսկ աճուրդի դեպքում՝ նաև մեկնարկային գին: Մեկնարկային գինը լուսն վաճառքի համար նախատեսված գինն է, որն աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուսնում ընդգրկվող գույքի կազմը և քանակը սահմանում է հարկադիր կատարողը՝ գնահատելով լուսնի արժեքը: Անշարժ գույքի, բաժնեմասերի (բաժնեմասերի, փայի), մշակութային արժեքների և գնահատման առումով առավել բարդություն ներկայացնող գույքի գնահատումը կատարվում է հարկադիր կատարողի նշանակված գնահատողի միջոցով: Անշարժ գույքի գնահատումն իրականացվում է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով, որոնց ընտրության կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդում վաճառվող լուսնի մեկնարկային գինը սահմանվում է գնահատված լուսնի գնի 75 տոկոսի չափով:

Նշված հոդվածների մեկնաբանությունից բխում է, որ կատարողական թերթին և նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան անցկացվող հարկադիր աճուրդով կարող է վաճառքի հանվել ցանկացած գույք և իրավունք, որը կունենա համապատասխան նկարագրություն, Օրենքով նախատեսված այլ տվյալներ և մեկնարկային, այսինքն՝ աճուրդի սկզբում դրա մասնակիցներին առաջարկվող գին: Ընդ որում, աճուրդի մասնակիցներին առաջարկվող մեկնարկային գինը սահմանում է հարկադիր կատարողը՝ Օրենքով սահմանված կարգով լուսն գնահատելու արդյունքում ստացված արժեքի 75 տոկոսի չափով:

Նախատեսելով լուսնի մեկնարկային գինը սահմանելու կարգ և դրա նվազագույն արժեք՝ օրենսդիրը միաժամանակ թույլատրել է լուսնի մեկնարկային ավելի բարձր գին առաջարկելու հնարավորություն: Մասնավորապես.

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աճուրդի ներկայացվող լուսնի մեկնարկային գնի մասին հարկադիր կատարողը պատշաճ ծանուցում է պարտապանին և պահանջատիրոջը (պահանջատերերին)՝ նշելով լուսնի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու վերաբերյալ կողմի իրավունքի իրականացումն սկսելու կարգն ու ժամկետները: Եթե միևնույն պարտապանի գույքի նկատմամբ առկա են բռնագանձման վերաբերյալ երկու և ավելի կատարողական վարոյթներ, ապա պատշաճ ծանուցումն ուղարկվում է տվյալ կատարողական վարոյթներով հանդես եկող բոլոր պահանջատերերին: Պարտապանը և պահանջատերն (պահանջատերերը) իրավունք ունեն ծանուցումն իրենց ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ներկայացնելու գրավոր առաջարկություն՝ սահմանելով լուսնի ավելի բարձր մեկնարկային գին:

Այդ դեպքում վաճառվող լուսնի մեկնարկային գին է սահմանվում առաջարկվող ավելի բարձր գինը, եթե առաջարկություն ներկայացնողն իր առաջարկված գնի երեք տոկոսի չափով վճարում է կատարում հարկադիր կատարման բաժնի դեպոզիտ հաշվին կամ դրամարկը: Վճարի կատարման անդորրագիրը ներկայացվում է առաջարկությանը կից:

Եթե սահմանված ժամկետում առաջարկություն են ներկայացնում մեկից ավելի անձինք, ապա լուսնի մեկնարկային գին է սահմանվում ավելի բարձր գինը, իսկ ավելի ցածր գին առաջարկված անձի (անձանց) կատարած վճարը վերադարձվում է:

Եթե նույն հոդվածով սահմանված ժամկետում և կարգով լուսնի մեկնարկային գնի վերաբերյալ պարտապանը և պահանջատերը (պահանջատերերը) չեն ներկայացնում առաջարկություն, ապա աճուրդի մեկնարկային գին է համարվում նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գինը:

Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով լուսնի մեկնարկային գինը որոշելուց հետո հարկադիր կատարողը առաջարկություն ներկայացնելու համար սահմանված երկշաբաթյա ժամկետի ավարտման օրվան հաջորդող օրը, որոշում է ընդունում հարկադիր աճուրդի անցկացման մասին՝ նշելով աճուրդի ժամը, վայրը, ինչպես նաև լուսնի մեկնարկային գինը, և նույն օրենքի 31-րդ

հողվածով նախատեսված կարգով և ժամկետներում կատարում է հրապարակային ծանուցում:

Շարադրված իրավանորմերի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ հարկադիր կատարողը կրում է լուրի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով որոշված մեկնարկային գնի և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին պարտապանին և վերջինիս գույքի նկատմամբ տարբեր կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջատերերին ծանուցելու պարտականություն: Նշված ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում պարտապանն ու պարտատերերն իրավունք ունեն ներկայացնելու լուրի ավելի բարձր մեկնարկային գնի վերաբերյալ գրավոր առաջարկություն՝ դրան կցելով առաջարկվող այդ գնի երեք տոկոսի չափով վճարը հարկադիր կատարման բաժնի դեպոզիտ հաշվին կամ դրամարկ վճարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը: Եթե առաջարկ ներկայացրած անձը պահպանել է վերը շարադրված պահանջը, ապա աճուրդի մեկնարկային գին է սահմանվում առաջարկվող ավելի բարձր գինը: Երկշաբաթյա ժամկետում մեկից ավելի անձանց կողմից առաջարկություն ներկայացված լինելու դեպքերում լուրի մեկնարկային գին է սահմանվում ավելի բարձր գինը, իսկ ավելի ցածր գին առաջարկված անձի (անձանց) կատարած վճարը վերադարձվում է: Եթե պարտապանն ու պարտատերերը սահմանված ժամկետում չեն ներկայացնում լուրի ավելի բարձր մեկնարկային գնի մասին գրավոր առաջարկություն, ապա մեկնարկային գինը մնում է անփոփոխ՝ լուրի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով:

Այլ կերպ ասած՝ լուրի արժեքը գնահատելու և դրա 75 տոկոսի չափով մեկնարկային գին որոշելու գործողություններով սահմանվում է հարկադիր աճուրդի հանված լուրի նվազագույն այն արժեքը, որը կողմերի համար ուղենիշային է լուրի ավելի բարձր գին առաջարկելու իրենց իրավունքն իրացնելու նպատակահարմարությունը որոշելու հարցում, և որից ցածր մեկնարկային գին առաջարկվել չի կարող:

Լուրի մեկնարկային գին ներկայացնելու նպատակով սահմանված երկշաբաթյա ժամկետի ավարտի հաջորդ օրը, երբ վերոշարադրյալ գործողությունների արդյունքում աճուրդի հանված լուրի մեկնարկային գինն արդեն սահմանվել է, հարկադիր կատարողը ընդունում է հարկադիր աճուրդի անցկացման մասին որոշում, որը պարունակում է նշում աճուրդի ժամի, վայրի, լուրի մեկնարկային գնի մասին: Նշված գործողությանը զուգահեռ հարկադիր կատարողն Օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում կատարում է նաև հրապարակային ծանուցում:

Օրենքի 35.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային համակարգերի (այսուհետ՝ համակարգ) կիրառմամբ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է ծառայությունը՝ կատարողական թերթին, ինչպես նաև նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի լուր կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Շարադրված իրավանորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից պարզ է, որ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով հատուկ էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ կազմակերպվող և անցկացվող աճուրդների հիմքը նույնպես կատարողական թերթն ու նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթն են: Ընդ որում, տվյալ դեպքում ևս աճուրդի կարող է հանվել ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, օրենքով նախատեսված բացառություններ չպարունակելու դեպքում: Տեխնիկական և էլեկտրոնային հատուկ համակարգերի և միջոցների կիրառումն ու դրանք ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով իրականացվելու հանգամանքը հաշվի անելով՝ այդպիսի աճուրդները կոչվում են հարկադիր էլեկտրոնային աճուրդներ: Մինչդեռ դրանք հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման որոշակի առանձնահատկություններ ունեցող տարատեսակ են:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված են նորմատիվ իրավական ակտի մեկնաբանման կանոնները, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վճռաբեկ դատարանի իրավական այն դիրքորոշումը, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը հարկադիր աճուրդի տարատեսակ է և ներառվում է դրանում, բխում է ոչ միայն Օրենքի 35.1-րդ հոդվածում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից, այլև Օրենքի «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը կրող 4-րդ գլխի կարգավորման համատեքստից, որում համապատասխանաբար ներառված է նշված հոդվածը:

Մասնավորապես, Օրենքի 4-րդ գլուխը կրում է «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը և դրանում ներառված իրավանորմերը կարգավորում են հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման հետ կապված իրավանորմերը ևս ներառված են այդ գլխում (տե՛ս Օրենքի 35.1-35.4-րդ հոդվածները): Ունենալով հարկադիր աճուրդների կազմակերպման և անցկացման կարգը սահմանող նորմերը համակարգելու և բովանդակությամբ համասեռ հոդվածները մեկ գլխի ներքո միավորելու նպատակ՝ օրենսդիրը դրանք ներառել է «Հարկադիր աճուրդներ» վերտառությամբ գլխում: Ավելի՛ն՝ էլեկտրոնային աճուրդն իր անվան մեջ ինքնին պարունակում է «հարկադիր» եզրույթը, նույնանում են հարկադիր աճուրդի և հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման փաստական հիմքերը, ինչպես նաև լոտի առարկաները:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման որոշակի ստանձնահատկություններով օժտված տեսակ է, և այդ ստանձնահատկությունների հաշվառմամբ էլ դրա իրականացման կարգն ու պայմանները սահմանված են ստանձնի հոդվածով:

Անդրադառնալով հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով լոտի գնահատում իրականացնելու կանոնների՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ կիրառելի լինելու պահանջն ուղղակիորեն ամրագրված է նույն Օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասով:

Վերևում արդեն մանրամասն շարադրվել է հարկադիր աճուրդների անցկացման դեպքում լոտի մեկնարկային գինը որոշելու և սահմանելու ընթացակարգը, որից պարզ է, որ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված գործողությունների կատարումը դեռևս բավարար չէ լոտի մեկնարկային գինը որոշված համարելու համար: Այն ներկայացնում է մեկը մյուսի հետ փոխկապակցված, որոշակի հաջորդականություն պահանջող գործողությունների համալիր: Լուրը գնահատելու և մեկնարկային գինը սահմանելու՝ Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված գործողություններն իրարից անջատ գնահատելու դեպքում խեղաթյուրվում է այդ նորմով օրենսդրի հետապնդած նպատակը: Իրավանորմերի նման նեղ մեկնաբանության դեպքում ստացվում է մի իրավիճակ, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների դեպքում լոտի մեկնարկային գինը սահմանելու հարցում հարկադիր կատարողի պարտականությունները սահմանափակվում են լոտի արժեքը գնահատելու և դրա մեկնարկային գինը գնահատված գնի 75 տոկոսի չափով սահմանելու գործողություններով: Մինչդեռ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված գործողությունների արդյունքում ընդամենը սահմանվում է աճուրդի դրված լոտի մեկնարկային նվազագույն գինը՝ կողմերի համար որոշակի դարձնելով գնային

այն շեմը, որից ավելի բարձր գին իրենք կարող են առաջարկել: Օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասը նեղ մեկնաբանելու և հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ Օրենքի 30-րդ հոդվածի միայն 1-ին և 2-րդ մասերը կիրառելի համարելու պայմաններում կատարվելի, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ հարկադիր կատարողը չի կրում նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունելու պարտականություն, քանի որ վերջինիս համար այդպիսի պարտականություն սահմանված է Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով, որոնց Օրենքի 35.1-րդ հոդվածում ուղիղ հղում արված չէ: Սակայն հարկադիր կատարողը պարտավոր է ոչ միայն հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունել՝ Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, այլև Օրենքի 35.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որոշման մասին պատշաճ ծանուցել պարտապանին և պահանջատիրոջը, և սահմանված ժամկետում և կարգով կատարել հրապարակային ծանուցում: Հարկ է նշել, որ վկայակոչված՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման ենթակա լինելու դեպքում գույքի վերաբերյալ որոշումն ընդունելու ժամկետների վերաբերյալ կանոն, այն է՝ պարտապանի գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման ենթակա լինելու դեպքում դրա վերաբերյալ որոշումը կայացվում է գույքի գնահատումից հետո՝ եռօրյա ժամկետում:

Շարադրվածից բխում է, որ Օրենքի 30-րդ հոդվածն ամբողջացնում է 35.1-րդ հոդվածը՝ դրանում սահմանված ընդհանուր կանոններով կարգավորելով նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման կարգը:

Ոստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը, լինելով հարկադիր աճուրդի տեսակ, հատուկ կանոններով չկարգավորվելու կամ ընդհանուր կանոնից բացառություն չնախատեսելու դեպքերում կարգավորվում է հարկադիր աճուրդի իրականացման և կազմակերպման կարգը սահմանող ընդհանուր կանոններով, քանի որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի հանված լուրը գնահատելու և մեկնարկային գին որոշելու հատուկ կանոններ նախատեսված չեն, իսկ այդ հարցերը կարգավորող իրավանքներից որևէ բացառություն նախատեսված չէ հարկադիր էլեկտրոնային աճուրդի համար: Հետևաբար՝ Օրենքի 30-րդ հոդվածով սահմանված գործողությունները՝ տրամաբանական հաջորդականությամբ, կիրառելի են նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հարկադիր էլեկտրոնային աճուրդների դեպքում ևս հարկադիր կատարողը կրում է լուրի մեկնարկային գին և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին պարտապանին և վերջինիս գույքի նկատմամբ փարբեր կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջատերերին ծանուցելու պարտականություն: Նշված պարտականության կատարմանը հաջորդող որոշակի գործողությունների արդյունքում սահմանվում է լուրի մեկնարկային գինը, որից հետո եռօրյա ժամկետում ընդունվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման մասին որոշումը և ծանուցումը հրապարակվում է հրապարակային ծանուցումների կայքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնում հարուցված թիվ 03323984 կատարողական վարույթի շրջանակներում պարտապան Սուսաննա Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող Անշարժ գույքը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Ի կատարումն Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 35.1-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների՝ իրականացվել է Անշարժ գույքի գնահատում՝ հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի նշանակած գնահատողի՝ «Ամինտաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցով: Անշարժ գույքը գնվել է 31.01.2018 թվականին և այդ օրվա դրությամբ դրա շուկայական արժեքը կազմել է 80.200.000 ՀՀ դրամ՝ համաձայն 08.02.2018 թվականի «Շուկայական արժեքի գնահատման հաշվետվության»:

Հիմք ընդունելով Անշարժ գույքի՝ 80.200.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունենալու հանգամանքը և առաջնորդվելով լոտի մեկնարկային գինը դրա գնահատված գնի 75 տոկոսի չափով սահմանելու օրենսդրական պահանջով Շառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանը 20.02.2018 թվականին ընդունել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշում և լոտի մեկնարկային գին սահմանել 60.150.000 ՀՀ դրամը, որը կազմում է 80.200.000 ՀՀ դրամի 75 տոկոսը: Անշարժ գույքի հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվել է նաև Շառայության կայքում: Շարադրվածով Անշարժ գույքի, որպես լոտի, մեկնարկային գինը սահմանելու հետ կապված գործողություններն ավարտվել են, և 23.02.2018 թվականին Սուսաննա Համբարձումյանը հարկադիր կատարողից առձեռն ստացել է 20.02.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը և կից գրությունները:

Շարադրվածից բխում է, որ Անշարժ գույքի, որպես հարկադիր էլեկտրոնային աճուրդով վաճառքի ներկայացված լոտի, մեկնարկային գինը որոշելու և սահմանելու՝ Օրենքի 30-րդ և 35.1-րդ հոդվածներով նախատեսված գործողությունները Շառայության հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի կողմից կատարվել են ոչ ամբողջությամբ: Վերջինս ոչ իրավաչափորեն ձեռնպահ է մնացել լոտի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով որոշված մեկնարկային գնի՝ 60.150.000 ՀՀ դրամի, և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին թիվ 03323984 կատարողական վարույթի պարտապան Սուսաննա Համբարձումյանին և բոլոր պահանջատերերին ծանուցելու, ավելի բարձր գնի մասին գրավոր առաջարկ ստանալու դեպքում սահմանված ընթացակարգն ու ժամկետները պահպանելու պարտականության կատարումից: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լոտի մեկնարկային գնի և ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու՝ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունը գործում է նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ:

Արդյունքում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Անշարժ գույքի մեկնարկային գնի և դրանից ավելի բարձր գին սահմանելու ընթացակարգի վերաբերյալ պարտապան Սուսաննա Համբարձումյանին և բոլոր պարտատերերին ծանուցելու պարտականությունը չկատարելու հետևանքով վերջիններս զրկվել են լոտի մեկնարկային գնի մասին իրազեկվելու, ինչպես նաև լոտի մեկնարկային ավելի բարձր գին առաջարկելու՝ Օրենքով երաշխավորված իրավունքն իրացնելու հնարավորությունից: Անշարժ գույքի, որպես աճուրդի հանված լոտի, մեկնարկային գինը հարկադիր կատարողի կողմից սահմանվել է Օրենքով թույլատրված դրա նվազագույն արժեքի չափով, իսկ կատարողական վարույթի կողմերին չի ընձեռվել Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված թույլատրելի գործողությունները կատարելու միջոցով լոտի մեկնարկային գինը որոշելու գործընթացին մասնակից դառնալու հնարավորություն:

Փաստորեն՝ Որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում պարտապան Սուսաննա Համբարձումյանին լոտի մեկնարկային գնի և ավելի բարձր գին առաջարկելու իր իրավունքի մասին չծանուցելու հետևանքով վերջինս ոչ իրավաչափ կերպով զրկվել է աճուրդի կազմակերպման և իրականացման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշում ներկայացնելու և ընթացակարգային այլ գործողությունների միջոցով վարչական մարմնի որոշման վրա ազդելու հնարավորությունից:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Շառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի կողմից Որոշումը կայացնելիս ամբողջությամբ չեն պահպանվել Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված պահանջները, հետևաբար Որոշումն ընդունվել է Օրենքի խախտմամբ, ինչը բավարար էր Որոշումն անվավեր ճանաչելու համար, որպիսի իրավաչափ հետևության և հանգել է Վերաքննիչ դատարանը:

2. Ծառայության վճարելի բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պարունաութային բանություններով

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալների վճիռների և Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ հարկադիր կատարման ծառայություն):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է և կատարողական մակագրության թերթը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից տրված հանձնարարություններ պարունակող որոշումը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով նախատեսված կարգով հարկադիր կատարման ուղարկելու մասին դիմումը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցներն են՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով, պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելը, այլ անձանց մոտ գտնվող պարտապանի դրամական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելը, կատարողական թերթում նշված որոշակի առարկաները պարտապանից առգրավելը և պահանջատիրոջը հանձնելը, հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելը և կատարողական թերթի կատարումն ապահովող այլ միջոցներ:

Օրենքի 35.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է ծառայությունը՝ կատարողական թերթին, ինչպես նաև նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է Ծառայության կողմից աճուրդի կազմակերպման և անցկացման գործողությունների բնույթին և արձանագրել, որ «(...) Ծառայությունը որպես պետական իշխանություն իրականացնող մարմին, կոչված է ապահովելու դատական ակտերի հարկադիր կատարումը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին, մասնավորապես՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Վճարելի դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով, իրականացվում է նաև գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացնելու միջոցով, այն է՝ սակարկություններով վաճառելու և այն հետագայում իրացնելու միջոցով: Ընդ որում, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածների հիմքով անցկացվող սակարկությունների, որտեղ որպես սակարկությունների կազմակերպիչ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից, գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի միջոցով իրացվելու դեպքում սակարկությունները կազմակերպվում և անց են կացվում Ծառայության կողմից՝ դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթին համապատասխան:

(...) քննության ենթակա հիմնական պահանջով վիճելի իրավահարաբերության կողմերից մեկը Ծառայությունն է, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով վարչական մարմին է» (յրեն *Դեզոբնոնա, Էդիկ, Գոհար, Սյուփան, Նունե, Հնայակ և Ալիսա Մանուկյանները և Անահիտ Հարությունյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության և Մամիկոն Օհանյանի՝ քնակարանի էլեկտրոնային աճուրդը, դրա հիման վրա կնքված առուվաճառքի պայմանագիրն ու անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ ԿԴՅ/0174/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):*

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հարկադիր կատարման վարույթում հանրային իշխանական լիազորություններ, այդ թվում նաև՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման հետ կապված իրականացնելիս Ծառայությունը հանդես է գալիս վարչական մարմնի կարգավիճակով:

«Հարկադիր էլեկտրոնային աճուրդի հասկացությունը և կազմակերպումը» վերագրել կրող Օրենքի 35.1-րդ հոդվածի կարգավորման համատեքստից բխում է, որ դրանով սահմանված գործողություններն ուղղված են աճուրդի իրականացումը նախաձեռնելուն, ըստ պատշաճի դրա գործընթացը նախապատրաստելուն: Հետևաբար՝ լուրը գնահատելը, դրա մեկնարկային գինը սահմանելը, հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունելը, այդ մասին պարտապանին և պահանջատիրոջը պատշաճ ծանուցելը և մասնակիցների գրանցումն իրականացնելն ընդամենը հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպմանն ուղղված նախապատրաստական գործողություններ են, որին հաջորդում է աճուրդի բուն գործընթացը, որը կարգավորվում է Օրենքի 35.2-րդ հոդվածով:

Օրենքի 35.2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով: Հարկադիր էլեկտրոնային աճուրդում հաղթած մասնակցի կողմից նախօրոք ստեղծված նախավճարը փոխանցվում է ծառայության ղեկավարի հաշվին:

Սակարկությունների միջոցով պայմանագրեր կնքելու պայմանները սահմանող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե սակարկություններով վաճառվելիք լուսն անշարժ կամ շարժական գույք է, որի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, ապա սակարկություններում հաղթողի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան *լուրի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:*

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ լուրի (լուտերի) վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը, և *զվյալ լուրի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:*

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աճուրդի արդյունքների մասին արձանագրության մեջ նշվում են աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամանակը, լուրի անվանումը, լուրի վերաբերյալ իրավունքներն ու պարտականությունները և այլ սահմանափակումներ, ինչպես նաև լուրի վիճակը (արտադրության տարին, ֆիզիկական մաշվածության աստիճանը և այլն), լուրի մեկնարկային գինը, աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը) և քնակության (գտնվելու) վայրը, հաղթող ճանաչված մասնակցի անունը (անվանումը) և քնակության (գտնվելու) վայրը և լուրի գնման գինը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արձանագրությունն ստորագրում են աճուրդն անցկացնելու օրը հաղթող մասնակիցը և աճուրդի կազմակերպիչը:

Օրենքի 35.2-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է աճուրդն անցկացնելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ծառայության ղեկավարի հաշվին կամ դրամարկղ մուծել լուրի գնման գինը՝ հաշվանցելով նախավճարը (...):

Օրենքի 35.2-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հաղթողի կողմից գնման գինը վճարվելուց և այն փաստացի ծառայության դեպոզիտ հաշվին մուտքագրվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, հարկադիր կատարողը նրա կամ նրա ներկայացուցչի հետ կնքում է առք ու վաճառքի պայմանագիր: Հաղթողի կողմից նշված ժամկետում պայմանագիր չկնքվելու դեպքում գնման գինը վերադարձվում է նրան, իսկ նախավճարը մնում է ծառայության դեպոզիտ հաշվին:

Օրենքի 35.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը համարվում է չկայացած, եթե աճուրդում հաղթած անձը հրաժարվել է առուվաճառքի պայմանագիր կնքելուց կամ սահմանված ժամկետում չի վճարել լոտի գնման գինը կամ չի ներկայացրել եկամտային հարկի վճարումը հավաստող փաստաթուղթ:

Նշված նորմերի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ աճուրդը հաղթած անձի՝ լոտի համար ամենաբարձր հայտ ներկայացրած մասնակցի, հետ աճուրդն անցկացնելու օրը ստորագրվում է դրա արդյունքների մասին արձանագրություն, որով ազդարարվում է լոտի վերաբերյալ աճուրդի ավարտը: Արձանագրությունը ստորագրելու փաստի ուժով մասնակցին անցնում է լոտի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը, որն իրացնելու դեպքում վերջինս երեք աշխատանքային օր ժամկետում Ծառայության դեպոզիտ հաշվին կամ դրամարկղ է մուծում լոտի գնման գնի և նախավճարի տարբերությունը, իսկ դրան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Ծառայության հետ կնքում առուվաճառքի պայմանագիր: Մասնակցի կողմից պայմանագիր կնքելու իրավունքից հրաժարվելու կամ լոտի գնման գինը չփոխանցելու դեպքերում հարկադիր էլեկտրոնային աճուրդը համարվում է չկայացած: Շարադրվածի ամփոփմամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ աճուրդն ինքնին պայմանագիր կնքելուն ուղղված գործողությունների համալիր է, որը եզրափակվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրմամբ, որպիսի պահից աճուրդը հաղթող մասնակցին, այսինքն՝ արձանագրությունը ստորագրողին, անցնում է լոտի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր կնքելու իրավունքը:

Վերոգրյալից բխում է, որ արձանագրություն ստորագրելու գործողությամբ ավարտվում է Ծառայության, որպես վարչական մարմնի, հանրային իշխանական լիազորությունների իրականացումը, ինչի արդյունքում աճուրդը հաղթած մասնակցի մոտ ծագում է լոտի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր կնքելու իրավունք: Փաստացի՝ արձանագրությունը ստորագրելու իրողությամբ աճուրդն ավարտվում է՝ դադարեցնելով Ծառայության կողմից հանրային իշխանական լիազորությունների իրականացումը ևս: Արդյունքում Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Ծառայության, և աճուրդը հաղթած մասնակցի միջև ծագում են մասնավոր՝ քաղաքացիաիրավական, իրավահարաբերություններ:

Վարչական մարմինը որոշակի իրավահարաբերության մեջ կարող է ներկայանալ ոչ միայն որպես հանրային իշխանական լիազորություններ կրող մարմին, այլ նաև որպես տվյալ իրավահարաբերության մյուս մասնակիցներին հավասար սուբյեկտ: Ասվածից պարզ է, որ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ այդ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ յուրաքանչյուր դեպքում կարևորվում է ոչ միայն իրավահարաբերության սուբյեկտային կազմը, այլ նաև դրա օբյեկտն ու բովանդակությունը:

Այս գործով Դատարան ներկայացրած հայցադիմումով հայցվորը վիճարկել է Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 20.02.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման իրավաչափությունը՝ կատարողական վարույթի շրջանակներում իրականացված գործողությունների մասին իրազեկված չլինելու և Որոշումը ստացած չլինելու փաստերի վկայակոչմամբ (լոտի վերաբերյալ հարկադիր էլեկտրոնային աճուրդը՝ Օրենքով սահմանված հիմքերով չի վիճարկվել): Որպես նշված որոշումն անվավեր ճանաչելու հետևանք՝ հայցվորը պահանջել է անվավեր ճանաչել նաև Պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանը 18.10.2019 թվականի վճռով հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ Ծառայության գործողությունները՝ ուղղված գույքը աճուրդի ներկայացնելուն, իրավաչափ է, քանի որ կատարողական վարույթի կյոթերում առկա է գրավոր ապացույց՝ առ այն, որ 23.02.2018 թվականին Սուսաննա Համբարձումյանն առձեռն ստացել է 20.02.2018 թվականին Ծառայության կողմից կայացված արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումները և կից գրությունները, որը վերաբերում է Ծաղկաձոր, Մուրադյան փողոց, թիվ 1 հասցեում գտնվող և Արամուս, Ամառանոցային 2 փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքերին, իսկ 20.02.2018 թվականին Ծառայության կողմից կայացվել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշում, որով Սուսաննա Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Տվյալ անշարժ գույքի գնահատման գինը կազմել է 80.200.000 ՀՀ դրամ, աճուրդի մեկնարկային գինը՝ 60.150.000 ՀՀ դրամ, իսկ հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ՝ 20.03.2018 թվականին: Հետևաբար՝ պահպանված է Հարկադիր կատարողի որոշումը եռօրյա ժամկետում պարտապահին հանձնելու վերաբերյալ հարկադիր կատարողի պարտականությունը, Սուսաննա Համբարձումյանը տեղյակ է եղել 20.03.2018 թվականին կայանալիք աճուրդի մասին, քանի որ տվյալ որոշումը վերջինս առձեռն ստացել է 23.02.2018 թվականին: Հետևաբար՝ անհիմն է հայցվորի փաստարկն առ այն, որ հարկադիր կատարողի գործողությունները և գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը ոչ իրավաչափ են:

Վերաքննիչ դատարանը, հանգելով Որոշումն օրենքի խախտմամբ ընդունված լինելու և այդ հիմքով անվավեր ճանաչման ենթակա լինելու իրավաչափ հետևության, Պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը ևս անվավեր է ճանաչել, որպիսի իր հետևությունը պատճառաբանել է հետևյալ կերպ՝ «(...) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն քաճի հարկադիր կարարողի ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը ենթակա է անվավեր ճանաչման, Վերաքննիչ դատարանը գործում է, որ նշված ոչ իրավաչափ որոշման հիմքով անցկացված էլեկտրոնային աճուրդի արդյունքում կնքված գույքի օտարման գործարքը (13.08.2018 թվականին Հարկադիր կարարումն ապահովող ծառայության և Ելիզավետա Արսյունի Սարգսյանի միջև կնքված Մարզ Կոտայք, համայնք Արամուս, Ամառանոցային թաղամաս, 2-րդ փողոց, 14 այգեպուտակ հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը) և այդ գույքի նկարմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի գրանցումը ևս ենթակա են անվավեր ճանաչման»:

Շարադրված պատճառաբանություններից բխում է, որ Պայմանագիրն ու Անշարժ գույքի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը Վերաքննիչ դատարանն անվավեր է ճանաչել որպես Որոշումն անվավեր ճանաչելու հետևանք: Մինչդեռ տվյալ դեպքում Որոշումն անվավեր ճանաչելն ինքնին չի կարող հանգեցնել Պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը ևս անվավեր ճանաչելուն, այսինքն՝ Որոշումն անվավեր ճանաչելու հարցի լուծումն որևէ կերպ չի կանխորոշում Պայմանագրի ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման իրավաչափության գնահատման հարցի լուծումը, քանի որ Պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը հանդիսանում են աճուրդի ուղղակի հետևանք, այլ ոչ թե՛ Որոշման: Ինչ վերաբերում է Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի՝ լուծի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության, ապա նշված նորմն աճուրդում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության հետևանք նախատեսում է բուն աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքերով (ինչպես նշվեց, այս գործով աճուրդը չի վիճարկվել) և կիրառելի չէ այս՝ **աճուրդ նշանակելու մասին որոշումն** անվավեր ճանաչելու դեպքի նկատմամբ:

Ավելին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Հետևանքների վերացման անանցյալ պահանջը» վերտառությամբ 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանը դատական ակտ կայացնելիս պարտավոր է լուծել նաև հետևանքների վերացման հարցը՝ նույն օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված պահանջ լինելու դեպքում:

Վերոգրյալ հոդվածների կարգավորումներից հետևում է, որ օրենսդիրը հայցվորին իրավունք է տվել վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ մեկտեղ ներկայացնելու այն հետևանքները վերացնելու մասին պահանջ, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով՝ համապատասխանաբար դատարանին պարտավորեցնելով դատական ակտ կայացնելիս լուծել նաև հետևանքների վերացման հարցը՝ նման պահանջ ներկայացված լինելու պարագայում: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ինչպես հետևում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի վերտառությունից, հայցվորը կարող է ներկայացնել ենթադրյալ հետևանքների վերացման միայն անանցյալ պահանջ, ինչը ենթադրում է, որ հիմնական և անանցյալ պահանջների միջև պետք է առկա լինի ուղղակի պատճառահետևանքային կապ, այսինքն՝ հիմնական պահանջի լուծումը պետք է անմիջականորեն և անվերապահորեն կանխորոշի անանցյալ պահանջի ելքը՝ բացառելով անանցյալ պահանջով հավելյալ փաստական հանգամանքներ պարզելու անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում՝ ներկայացված պահանջը հարկ է դիտարկել ոչ թե որպես հետևանքների վերացման անանցյալ, այլ հիմնական պահանջ, որը պահանջում է ամբողջական քննություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անգամ հետևանքների վերացման անանցյալ պահանջի պարագայում շահագրգիռ անձի խախտված իրավունքը վերականգնելիս դատարանը պետք է ղեկավարվի համաչափության սկզբունքով: Այսպես՝

Միջազգային և ներպետական իրավական ակտերով անձին երաշխավորված հիմնարար իրավունքները սահմանափակելիս անհրաժեշտ և պիտանի միջոցների գործադրմամբ նվազ միջանոթության կանոնը պահպանելու և սահմանված նպատակի և գործադրվող միջոցի միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու իմպերատիվ պահանջ նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ: Մասնավորապես ըստ ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում անդրադարձել է համաչափության սկզբունքի կիրարկմանն ու փաստել, որ «(...) որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, և տվյալ դեպքում օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումների վերաբերող պահանջներն են.

- 1) սահմանափակման նպատակի իրավաչափությունը, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.
- 2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝
 - ա) պիտանիությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.
 - բ) անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) համարժեքությունը՝ սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությամբ» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2021 թվականի թիվ ՄԴՈ-1592 որոշումը):

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ «(...) Համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանափակումն է մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատուկ կարևորություն» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 18.06.2020 թվականի թիվ ՄԴՈ-1546 որոշումը), և «(...) օրենսդրի կողմից ընտրված միջոցը պետք է նաև անհրաժեշտ լինի: Միջոցն **անհրաժեշտ է, եթե չկա մեկ այլ ավելի մեղմ միջամտող միջոց, որով նույն արդյունավետությամբ կարելի է հասնել նպատակին**» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 19.03.2019 թվականի թիվ ՄԴՈ-1448 որոշումը):

Համաչափության սկզբունքն իրավական պետության կարևորագույն տարրերից է: Դրա առանցքային կարևորությունը նրանումն է, որ այն հնարավորություն է տալիս գնահատելու գործողության և/կամ անգործության իրավաչափությունը՝ միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ նպատակին հասնելու հնարավորության և թույլատրելիության տեսանկյունից: Համաչափության սկզբունքը երաշխավորում է, որ այս կամ այն հանգամանքներում համարժեքություն ապահովվի կիրառվող միջոցների և դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակի միջև: Յուրաքանչյուր դեպքում միջամտությունը պետք է բավարարի օրինականության, պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության պահանջներին: Այսինքն՝ հիմնարար իրավունքից անարգել օգտվելու հնարավորության ցանկացած միջամտություն պետք է զերծ լինի կամայականությունից և հնարավորինս մեղմ միջոցների գործադրմամբ ապահովվի առաջադրվող նպատակի արդյունավետ իրագործումը:

Ուստի՝ անձին երաշխավորված որևէ հիմնարար իրավունք սահմանափակելիս պետական մարմինը, այդ թվում՝ Դատարանը կաշկանդված է համաչափության սկզբունքի սահմանադրական հրամանականով և ցանկացած դեպքում պետք է ստուգի ընտրված միջոցի օրինականությունը, ապա գնահատի իր առջև դրված նպատակին հասնելու հարցում դրա պիտանիությունը, անհրաժեշտությունը ու համարժեքությունը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը Պայմանագիրն ու դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը որպես հետևանք անվավեր ճանաչման ենթակա լինելու իր եզրակացության հիմքում դրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածը:

Մինչդեռ Որոշման և որպես «հետևանք» ներկայացված՝ Պայմանագրի և Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցման միջև առկա չէ անմիջական և ուղղակի պատճառահետևանքային կապ: Պայմանագիրն աճուրդի ուղղակի հետևանքն է, քանզի աճուրդն ինքնին պայմանագիր կնքելուն ուղղված գործընթաց է, իսկ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն էլ այդ Պայմանագրի ուղղակի հետևանքն է: Այս գործով Որոշումն ընդամենը աճուրդի նախնական փուլում ընդունված և դրա պատշաճ կազմակերպման ուղղված ակտ է: Այսինքն՝ այն աճուրդի նախնական փուլի հետևանք է և Պայմանագրի և Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցման հետ ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ չի գտնվում: Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով որպես «հետևանք» ներկայացված՝ 13.08.2018 թվականի թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրը, և դրանց հիման վրա 22.08.2018 թվականին կատարված Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու մասին պահանջները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի իմաստով չեն հանդիսանում հետևանքների վերացման ամանցյալ պահանջներ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Պայմանագիրն ու Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներին վերաբերող մասերով Մուսանա Համբարձումյանի հայցը ենթակա է մերժման՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 20.02.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված հետևանքների վերացման ածանցյալ պահանջներ չլինելու հիմնավորմամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշմամբ Դատարանի 18.10.2019 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 20.02.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը, թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրը և 22.08.2018 թվականին կատարված Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մատով բավարարվել է, սակայն սույն որոշման պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը հանգում է որպես հետևանք ներկայացված պահանջների ածանցյալ բնույթ չունենալու մասին հետևության, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքը բավարար է մասնակիորեն՝ 13.08.2018 թվականի թիվ 4433 առուվաճառքի պայմանագիրը և 22.08.2018 թվականին կատարված Կոտայքի մարզ, Արամուս Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց, 14 այգետնակ հասցեի նկատմամբ Ելիզավետա Սարգսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներին վերաբերող մասերով, Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը բեկանելու և փոփոխելու՝ հայցն այդ մասերով մերժելու համար: Չբեկանված՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջը բավարարելու մատով Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ: Օրինական ուժի մեջ պետք է թողնել նաև Վերաքննիչ դատարանի կողմից Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարողի կողմից արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման հիման վրա ՀՀ, Կոտայքի մարզ, Արամուս, Ամառանոցային 2-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքն աճուրդների ներկայացնելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և 06.08.2018 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լուտի մասին Nq00829046-18/02 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջների մատով Դատարանի 18.10.2019 թվականի վճիռը բեկանելու և քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասը՝ նկատի ունենալով, որ այդ մասը դուրս է վճռաբեկ բողոքների հիմքերի և հիմնավորումների շրջանակից»:

Վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյան, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի մի մասում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արտահայտված կարծիքի հետ, շարադրում եմ հայտնի կարծիքս դրանց վերաբերյալ:

Այսպես՝

Ինչպես արդեն իսկ նշվեց վերը, Վճռաբեկ դատարանը սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ գտնելով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի միատեսակ կիրառության համար

այն առումով, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտում նշված նորմը ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի համեմատ, կիրառվել է հակասող մեկնաբանությամբ:

Նախ ցանկանում եմ կարծիք հայտնել այն մասին, որ նշված հիմքով բողոքը վարույթ ընդունելու դեպքերում Վճռաբեկ դատարանն իր կողմից կայացվելիք դատական ակտում պարտավոր էր պատճառաբանական մասում վկայակոչել ինչպես համապատասխան ստորադաս դատարանները, վերջիններիս կողմից նույնանման փաստական հանգամանքներով կայացված դատական ակտերի ամսաթվերը և գործի համարները, այնպես էլ համեմատական վերլուծություն կատարել Վերաքննիչ դատարանի դատական ակտի և այդ ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի միջև՝ մեջբերելով դրանց հակասող մասերը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի որոշումը վերը նշվածների վերաբերյալ որևէ նշում չի պարունակում, որը համարում եմ անթույլատրելի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքից չբխող, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը պարտավոր էր իր որոշման մեջ նշել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համապատասխան հիմքի առկայության մասին հիմնավորումը:

Բացի այդ, ցանկանում եմ կարծիք հայտնել նաև Վճռաբեկ դատարանի այն շարժանիթների վերաբերյալ, որոնք հիմք են հանդիսացել Ծառայության բողոքն առաջին հիմքով, Ելիզավետա Սարգսյանի և Բանկի վճռաբեկ բողոքները մերժելու համար: Այսպես՝

Վճռաբեկ դատարանը, դիրքորոշում հայտնելով այն մասին, որ «*հարկադիր կարարողը կրում է լուրի գնահատված արժեքի 75 րոկոսի չափով որոշված մեկնարկային գնի և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի ու ժամկետների մասին պարտասպանին և վերջինիս գույքի նկարումներ տարբեր կարարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջարկերին ծանուցելու պարտականություն*», «*հարկադիր էլեկտրոնային աճուրդը, լինելով հարկադիր աճուրդի տեսակ, հարույլ կանոններով չկարգավորվելու կամ ընդհանուր կանոնից բացառություն չստանալու դեպքերում կարգավորվում է հարկադիր աճուրդի իրականացման և կազմակերպման կարգը սահմանող ընդհանուր կանոններով, քանի որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի հանված լուրը գնահատելու և մեկնարկային գին որոշելու հարույլ կանոններ նախատեսված չեն, իսկ այդ հարցերը կարգավորող իրավաբանության հոդվածից որևէ բացառություն նախատեսված չէ հարկադիր էլեկտրոնային աճուրդի համար: Հելսինկի 30-րդ հոդվածով սահմանված գործողությունները՝ տրամաբանական հաջորդականությամբ, կիրառելի են նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկարմանը», եզրահանգել է, որ «*Անշարժ գույքի, որպես հարկադիր էլեկտրոնային աճուրդով վաճառքի ներկայացված լուրի, մեկնարկային գինը որոշելու և սահմանելու՝ Օրենքի 30-րդ և 35.1-րդ հոդվածներով նախատեսված գործողությունները Ծառայության հարկադիր կարարող Կ. Մարտիրոսյանի կողմից կարարվել են ոչ ամբողջությամբ: Վերջինս ոչ իրավաչափորեն ձեռնպահ է մնացել լուրի գնահատված արժեքի 75 րոկոսի չափով որոշված մեկնարկային գնի՝ 60.150.000 ՀՀ դրամի, և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին թիվ 03323984 կարարողական վարույթի պարտասպան Մուսաննա Համբարձումյանին և բոլոր պահանջարկերին ծանուցելու, ավելի բարձր գնի մասին գրավոր առաջարկ արձանագրելու դեպքում սահմանված ընթացակարգն ու ժամկետները պահպանելու պարտականության կարարումից*», «*Որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում պարտասպան Մուսաննա Համբարձումյանին լուրի մեկնարկային գնի և ավելի բարձր գնի առաջարկելու իր իրավունքի մասին չծանուցելու հեղուկացված վերջինս ոչ իրավաչափ կերպով զրկվել է աճուրդի կազմակերպման և իրականացման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշում ներկայացնելու և ընթացակարգային այլ գործողությունների միջոցով վարչական մարմնի որոշման վրա ազդելու հնարավորությունից*»:*

Կարծում եմ, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդ իրականացնելիս հարկադիր կատարողը չունի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին նրան ծանուցելու պարտականություն հետևյալ պատճառաբանությամբ.

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է այն տեղեկությունների սպառիչ ցանկը, որոնք հարկադիր կատարողը պարտավոր է ներառել կայքում հրապարակվող հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ: Նշված կարգավորման համաձայն՝ հարկադիր կատարողն ունի այդ ծանուցման մեջ վերը նշվածներից միայն նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ լոտի մեկնարկային գնի մասին տեղեկությունը ներառելու պարտականություն: ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին տեղեկություն ներառելու պարտականություն հարկադիր կատարողը, ի տարբերություն հարկադիր աճուրդի դեպքերի, չունի: Նման պայմաններում կարծում եմ, որ այդ առումով հարկադիր կատարողին չի կարող վերագրվել նման խախտում թույլ տալը:

Ավելին՝ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 35.3-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից բխում է, որ օրենսդիրը սահմանել է հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու սպառիչ հիմքեր՝ նշելով, որ դատարանը կարող է շահագրգիռ անձի պահանջով հարկադիր էլեկտրոնային աճուրդը ճանաչել անվավեր միայն այն դեպքում, երբ այն անց է կացվել նույն օրենքի 35.1-րդ և 35.2-րդ հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ: Տվյալ դեպքում «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվող լոտի գնահատումն իրականացվում է նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով. նշված դրույթը որևէ հոդում չի պարունակում «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասին, որից հետևում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը՝ իրացվող լոտի գնահատման առումով, կարող է անվավեր ճանաչվել բացառապես այն հիմքով, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվող լոտի գնահատումն իրականացվել է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի հենց 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգի խախտմամբ. օրենսդիրը հարկադիր էլեկտրոնային աճուրդն «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնների խախտմամբ իրականացված լինելն անգամ չի դիտում որպես աճուրդն անվավեր ճանաչելու ինքնուրույն հիմք:

Վերոգրյալից բխում է, որ եթե, օրինակ, հարկադիր կատարողը պարտապանին և պահանջատիրոջը (պահանջատերերին) պատշաճ չի ծանուցել աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին, կամ չի նշել լոտի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու վերաբերյալ կողմի իրավունքի իրականացման կարգն ու ժամկետները, կամ չի պահպանել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասում նշված մնացած պայմանները, ապա այդ հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու համար, քանի որ, ինչպես արդեն իսկ նշեցի վերը, օրենսդիրը որպես այդպիսի հիմքեր նախատեսել է բացառապես նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջների խախտումը: Մինչև նույն ժամանակ անհրաժեշտ եմ համարում նշել, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի դեպքում պարտապանը և պահանջատերը (պահանջատերերը)՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.2-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ունեն ինչպես նոր գնային հայտ ներկայացնելու, այնպես էլ լոտի մեկնարկային գնի նվազագույն հավելումներ կատարելու իրավունքներ, որոնցից կարող են անմիջականորեն օգտվել հարկադիր էլեկտրոնային աճուրդի դեպքում:

Նման պայմաններում կարծում եմ, որ այդ առումով հարկադիր կատարողին չի կարող վերագրվել վերը նշված խախտումները թույլ տալը:

**10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/3231/05/17**
2021թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/3231/05/17

Նախագահող դատավոր՝

Կ. Բաղդասարյան

Դատավորներ՝

Կ. Մաթևոսյան

Կ. Ավետիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի հուլիսի 23-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական
մարմնի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.03.2019 թվականի
որոշման դեմ՝ ըստ հայցի Գագիկ Բոյախյանի ընդդեմ ՀՀ առողջապահական և աշխա-
տանքի տեսչական մարմնի՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գագիկ Բոյախյանը պահանջել է վերացնել (անվավեր ճանա-
չել) ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչու-
թյան Երևանի քաղաքային կենտրոնի 16.02.2017 թվականի թիվ 025 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 09.11.2017 թվականի որոշմամբ սույն գործով պատասխա-
նող ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահական պետական տեսչու-
թյան Երևանի քաղաքային կենտրոնը փոխարինվել է իրավահաջորդով՝ ՀՀ առողջապա-
հության նախարարության առողջապահական տեսչական մարմնով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Դարբինյան) (այսուհետ՝ Դատարան)
07.02.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.02.2019 թվականի որոշմամբ սույն գործով պատասխանող ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը փոխարինվել է իրավահաջորդով՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնով (այսուհետ՝ Տեսչական մարմին):

Վերաքննիչ դատարանի 14.03.2019 թվականի որոշմամբ Տեսչական մարմնի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 07.02.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչական մարմինը (ներկայացուցիչ՝ Էդգար Խուրշուդյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 6-րդ մասերը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը, 12-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 245-րդ, 251-րդ, 252-րդ և 279-րդ հոդվածները, «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» պարբերությունը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վարչական մարմնի կողմից գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հաստատման միջոցներն օրենսդրի կողմից սպառիչ սահմանված չեն, դրանք կարող են լինել ինչպես վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, վարչական պատասխանատվություն ենթարկվող անձի բացատրությունները, տուժողի, վկաների ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, իրեղեն ապացույցները, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությունը, այնպես էլ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները հաստատող ցանկացած այլ փաստաթղթեր, որոնց ներքին համոզմունքով գնահատման միջոցով վարչական մարմինը հաստատված է համարում իրավախախտման առկայությունը, ինչպես նաև տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է բաց թողնել և իրացնել միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերը: Գրանցման ենթակա է յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող (ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող) գրանցման հավաստագրի իրավատեր: «ԼԻՎԱՖԱՐՄ» ՄՊԸ-ի տնօրեն Գագիկ Բոյախյանը՝ որպես լիցենզավորման ենթակա դեղատնային գործունեություն իրականացնող սուբյեկտ, պարտավոր էր պահպանել իրավական ակտերով տվյալ գործունեության իրականացման համար նախատեսված պարտադիր պահանջները կամ պայմանները, այն է՝ վաճառել և բաց թողնել միայն Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և պիտանիության ժամկետի մեջ գտնվող դեղերը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Հայաստանի Հանրապետությունում դեղի գրացումը ենթադրում է Հայաստանի Հանրապետությունում դեղերի գրանցամատյանում թվարկված բոլոր ցուցանիշների վերաբերյալ տվյալների ամրագրում, իսկ գրանցված դեղ ներմուծելը, պահպանելը կամ իրացնելը՝ դեղերի ռեեստրում ամրագրված բոլոր ցուցանիշների համապատասխանող արդեն իսկ գրանցված դեղերի ներմուծում, պահպանում կամ իրացում: Տվյալ դեպքում «Անտիգրիպին» երիցուկ թիվ 10 դեղի՝ փորձաքննության համար ներկայացված նմուշը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված տարբերակին, առկա է բաղադրության անհամապատասխանություն, օժանդակ նյութերի քանակական և որակական տարբերություն: Փորձանմուշում առկա է «դոկուզատ նատրիում» օժանդակ նյութը, որը բացակայում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի բաղադրության մեջ: «Լիրիկա» 150մգ, թիվ 14 դեղը

գրանցված չէ՝ առկա է գրանցման հավաստագրի իրավատիրոջ անհամապատասխանություն, Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի գրանցման հավաստագրի իրավատերն է ՊՖայգեր Հ.Ս.Պ. Քորփորեյշն, 235, Իստ 42-րդ փող., Նյու-Յորք, 10017 (ԱՄՆ), իսկ ներկայացված դեղինը՝ Пфа́йзер Инк, США:

Վերոգրյալից հետևում է, որ հայցվորը նույնիսկ գրանցամատյանում գրանցված դեղերի հետ չի համեմատել և ստուգել՝ արդյոք վիճարկվող դեղերն իրենց հիմնական հատկանիշներով առկա են գրանցամատյանում, թե՛ ոչ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ դեղատնային գործունեություն իրականացնող սուբյեկտները պարտավոր են հետևել դեղերի շրջանառությունը կարգավորող օրենսդրական բոլոր նորմերին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է քեկանել Վերաքննիչ դատարանի 14.03.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնի պետի 14.12.2016 թվականի թիվ 139 որոշման համաձայն՝ «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Բոյախյանը՝ որպես խախտում թույլ տված անձ, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու և Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղեր պահպանելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 3-րդ մասով ենթարկվել է վարչական տույժի՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի (**հատոր 1-ին, գ.թ. 146-149**):

2) ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2017 թվականի թիվ 125-Ա հրամանի 1-ին կետի համաձայն՝ Երևանի Մամիկոնյանց փողոցի թիվ 2 հասցեում գործող «ԼԻՎԱ» ՍՊԸ-ին պատկանող «ԼԻՎԱՖԱՐՄ» դեղատան գործունեության համապատասխանությունը բժշկական օգնության և սպասարկման ոլորտում լիցենզավորումը կանոնակարգող իրավական ակտերի, սպասարկման կանոնների և նորմերի պահանջներին պարզելու նպատակով, հարուցվել է վարչական վարույթ և Դավիթ Մայանյանին և Աղասի Ֆռանգյանին հանձնարարվել է 2017 թվականի հունվարի 25-ից 27-ը, վերջինիս բժշկական օգնության և սպասարկման լիցենզիայով(ներով) նշված գործունեության հասցեում(ներում) կատարել զննում (**հատոր 1-ին, գ.թ. 72-73**):

3) 26.01.2017 թվականի զննման արձանագրության համաձայն՝ 25.01.2017 թվականից մինչև 26.01.2017 թվականն իրականացվել է զննում՝ ք. Երևան, Մամիկոնյանց փողոց, 2-րդ շենք թիվ 65ա հասցեում գործող «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ում և զննման արդյունքներով պարզվել է, որ դեղատնային կրպակում առկա են եղել, ի թիվս այլնի, նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցման և օրինական ներմուծման տեսանկյունից կասկած հարուցող «Անտիգրիպին» երիցուկի, սերիա՝ 37310415, ժամկետ՝ 04.2018 թվական, դրոշմապիտակով՝ Գ0500689735, N 10, 1 տուփ և «Լիրիկա» 150 մգ., N 14, սերիա՝ M92947, ժամկետ՝ 10.2018 թվական, դրոշմապիտակ՝ Գ0495202354, 7 դեղապատիճ դեղերը, որոնք փորձաքննության նպատակով վերցվել են աշխատանքային խմբի կողմից (**հատոր 1-ին, գ.թ. 141-142**):

4) «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 13.02.2017 թվականին տրված թիվ 0114023317 եզրակացության համաձայն՝ «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ի դեղատնից հայտնաբերված «Անտիգրիպին» երիցուկի N 10 (սերիա՝ 37310415, պիտանելիության ժամկետը՝ 04.2018 թվական) դեղի սերիան բացակայում է ներմուծման փորձաքննության տվյալների բազայում, դեղը գրանցված չէ, փորձաքննության համար ներկայացված նմուշը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված տարբերակին՝ առկա է բաղադրության անհամապատասխանություն, օժանդակ նյութերի քանակական և որակական

տարբերություն: Փորձանմուշում առկա է «դոկուգատ նատրիում» օժանդակ նյութը, որը բացակայում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի քաղաղորդության մեջ, չեն համապատասխանում ստորև ներկայացված օժանդակ նյութերի քանակները: «Լիբիկա» 150մգ., N 14 (սերիա՝ M92947, պիտանելիության ժամկետը՝ 10.2018 թվական) դեղի սերիան բացակայում է ներմուծման փորձաքննության տվյալների բազայում, դեղը գրանցված չէ, գրանցման հավաստագրի իրավատիրոջ անհամապատասխանության կետով, Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի գրանցված հավաստագրի իրավատերն է Պֆայզեր Հ.Ս.Պ. Քորփորեյշըն, 235, Իստ 42-րդ փ., Նյու-Յորք, 10017 (ԱՄՆ), իսկ ներկայացված դեղինը՝ Пфа́йзер Инк, США (**հատոր 1-ին, գ.թ. 106-109**):

5) «Վարչական իրավախախտման վերաբերյալ» 13.02.2017 թվականի թիվ 018 արձանագրության համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնի դեղերի և դեղագործական գործունեության վերահսկողության բաժնի ղեղագետները, ՀՀ առողջապահության նախարարի 26.01.2017 թվականի թիվ 125-Ա հրամանի հիման վրա՝ Երևանի Մամիկոնյանց փողոցի 2-րդ շենքի թիվ 65ա հասցեում գործող «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ին պատկանող դեղատնային կրպակում 26.01.2017 թվականին իրականացված գնման արդյունքում պարզել են, որ դեղատնային կրպակի վաճառքի արահում առկա են եղել Հայաստանի Հանրապետությունում գրանցված և օրինական ներմուծված լինելու տեսակետից կասկած հարուցող 9 անվանում դեղեր, որոնք փորձաքննության նպատակով ուղարկվել են ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ: Փորձաքննության արդյունքում պարզվել է, որ «Անտիգրիպին» երիցուկի N 10 (սերիա՝ 37310415, պիտանելիության ժամկետ՝ 04.2018 թվական), 1 տուփ և «Լիբիկա» 150 մգ, N 14 (սերիա՝ M92947, պիտանելիության ժամկետ՝ 10.2018 թվական), 7 դեղապատիճ դեղերը Հայաստանի Հանրապետությունում գրանցված չեն: Վերը նշվածով խախտվել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, որի համար պատասխանատվություն է նախատեսված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասով: Հաշվի առնելով, որ «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Բոյախյանը 14.12.2016 թվականին ենթարկվել է վարչական տույժի՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու համար, նույն արարքը մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կատարելու դեպքում վարչական տույժի միջոցներ նշանակելուց հետո, կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 22-րդ մասը (**հատոր 1-ին, գ.թ. 112-113**):

6) ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնի պետի 16.02.2017 թվականի թիվ 025 որոշման համաձայն՝ «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Բոյախյանը՝ որպես իրավախախտում թույլ տված անձ, վարչական տույժի միջոցներ նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն արարքը կրկին կատարելու համար, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 23-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները խախտելու և Հայաստանի Հանրապետությունում չգրանցված 2 անվանում դեղեր իրացնելու նպատակով պահպանելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 22-րդ մասով, ենթարկվել է վարչական տույժի՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով՝ 400.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի (**հատոր 1-ին, գ.թ. 153-156**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Դեղերի մասին»

ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝

- արդյո՞ք դեղարանային գործունեության իրականացնող սուբյեկտը կրում է իրացվող դեղերի Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու փաստը ստուգելու պարտականություն:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառության հետ կապված հարաբերությունները՝ բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով և դրանց մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովելու նպատակով, ինչպես նաև սահմանում է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների և դեղերի շրջանառության սուբյեկտների լիազորություններն այդ ոլորտում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) դեղ՝ դեղաբանական և (կամ) իմունաբանական և (կամ) նյութափոխանակային ակտիվությամբ օժտված մարդկային և (կամ) կենդանական և (կամ) բուսական և (կամ) քիմիական և (կամ) կենսատեխնոլոգիական ծագման միջոց՝ համապատասխան դեղաչափով և դեղաձևով, անհրաժեշտ փաթեթավորմամբ և մակնշմամբ, որը նախատեսված է կիրառել մարդկանց և կենդանիների հիվանդությունները բուժելու, կանխարգելելու և (կամ) օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաները փոփոխելու, վերականգնելու, կարգավորելու համար կամ ներմուծվում է մարդու և կենդանու օրգանիզմ հիվանդությունը ավտորոշելու նպատակով.

20) դեղերի շրջանառություն՝ դեղի ստեղծում կամ նախակլինիկական հետազոտություն կամ կլինիկական փորձարկում կամ ստանդարտացում կամ արտադրություն կամ պատրաստում կամ դեղաբուսական հումքի մշակում կամ որակի հսկողություն կամ գրանցում կամ ներմուծում կամ արտահանում կամ փոխադրում, պահպանում կամ իրացում կամ բաշխում կամ կիրառում կամ արդյունավետության, անվտանգության և կողմնակի ազդեցությունների դիտարկում կամ տեղեկատվության կամ գովազդի տարածում կամ ոչնչացում.

21) դեղերի շրջանառության սուբյեկտներ՝ դեղերի շրջանառության որևէ փուլն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր.

39) գրանցամատյան՝ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցում ստացած դեղերի ռեգիստր.

40) գրանցման հավաստագիր՝ Հայաստանի Հանրապետությունում դեղի՝ օրենքով սահմանված կարգով գրանցում ստանալու փաստը հաստատող պաշտոնական փաստաթուղթ:

44) դեղատնային գործունեություն՝ նույն օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝ դեղերի և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ ապրանքատեսակների մեծածախ ձեռքբերում, պահպանում և մանրածախ իրացում կամ բաց թողում, տեղեկատվություն և խորհրդատվություն, առողջ ապրելակերպի քարոզչություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության դեպքում դեղերի պատրաստում կամ առաքում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գրանցման ենթակա են դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող (ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող), գրանցման հավաստագրի իրավատեր:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գրանցման ժամանակ հաստատվում են դեղի առաջնային և (կամ) արտաքին փաթեթը, պիտակը, մակնիշը (այդ թվում՝ գունավոր պատկերների տեսքով), բժշկական կիրառման հրահանգը (դեղի ընդհանուր բնութագիրը), օգտագործման հրահանգը (ներդիր-թերթիկը) և որակի հատկորոշիչները (սպեցիֆիկացիաները):

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է դեղի գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման նպատակով իրականացվող փորձաքննության կարգը՝ սահմանելով նոր, վերարտադրված դեղերի, կենսաանմանակների, դեղերի համակցությունների, հումեռալաթային, կենսաբանական դեղերի, ներառյալ՝ արյունից կամ պլազմայից ստացված, իմունաբանական, ռադիոակտիվ, անասնաբուժական դեղերի (ներառյալ՝ դեղանյութեր պարունակող անասնակերերի), բուսական դեղերի (այդ թվում՝ սպառողական փաթեթներում փաթեթավորված և պիտակավորված դեղաբուսական հումքի), մաշկի, լորձաթաղանթի, մազերի, երունգների համար նախատեսված հիվանդությունների հարուցիչներին, ինչպես նաև դրանց փոխանցող միջատներին, մակաբույծներին ոչնչացնող հակասեպտիկների և հակապարազիտային դեղերի գրանցման, վերագրանցման և հավաստագրի ժամկետի երկարաձգման համար իրականացվող փորձաքննության եզրակացության ձևը, փորձաքննություն իրականացնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած միջազգային մասնագիտական կազմակերպության փաստաթղթի պահանջներին համապատասխան:

Նույն հոդվածի 22-րդ մասի համաձայն՝ դեղի գրանցման հավաստագրի իրավատերը օրենքով նախատեսված պատասխանատվություն է կրում գրանցված արտադրանքի անվտանգության, արդյունավետության, որակի համար և պարտավոր է Լիազոր մարմնին անհապաղ գրավոր հայտնել դրանց վերաբերյալ յուրաքանչյուր նոր տվյալ և (կամ) փոփոխություն, որոնք հայտնաբերվել և (կամ) կատարվել են հետգրանցումային շրջանում, ներառյալ՝ արտադրանքի կիրառման արգելքի կամ սահմանափակման մասին որևէ երկրի իրավասու մարմնի տվյալները: (...)

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է իրացնել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ շրջանառությունը դադարեցված (հետ կանչված), Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերը, կեղծ դեղերը, դեղանյութերը, դեղաբուսական հումքը, հետազոտվող դեղագործական արտադրանքը: Նույն մասում նշված արտադրանքի մասին ահազանգի ծանուցման, շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Շրջանառության դադարեցման և հետկանչի ծախսերը կրում է գրանցման հավաստագրի իրավատերը կամ մատակարարը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ կառավարության 25.04.2001 թվականի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» թիվ 347 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը (այսուհետ նաև՝ Կարգ) (ուժը կորցրել է 30.03.2019 թվականին), որը 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 15.12.2016 թվականին ուժը կորցրած «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան, սահմանում է դեղերի գրանցման, գրանցման մերժման և գրանցումն անվավեր ճանաչելու հիմքերը և կարգը:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում թույլատրվում է արտադրել, ներմուծել, պահպանել, բաշխել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում:

Կարգի 4-րդ կետի համաձայն՝ դեղերի գրանցումը, գրանցման մերժումը և անվավեր ճանաչումը կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետև՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, (...)):

Կարգի 7-րդ կետի համաձայն՝ դեղերի պետական գրանցումը կատարվում է դեղերի որակի, արդյունավետության ու անվտանգության գիտականորեն հիմնավորված չափանիշների, փորձագիտական հետազոտությունների արդյունքների հիման վրա (...):

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ դեղերը գրանցելու կամ գրանցումը մերժելու մասին որոշումն ընդունվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության սահմանած կարգով կատարված փորձաքննության եզրակացության հիման վրա:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից դեղը գրանցվելու մասին որոշման հիման վրա 10 օրացուցային օրվա ընթացքում դիմորդին տրվում է դեղի գրանցման հավաստագիր: Գրանցման հավաստագրի ձևը և նկարագիրը հաստատում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ դեղի պետական գրանցման վերաբերյալ որոշման համաձայն դեղի գրանցման հավաստագրի տրամադրումից հետո 30 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղն ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման ժամկետը 5 տարի է, որի ավարտից հետո դեղը կարող է նորից գրանցվել նույն կարգի համաձայն:

Կարգի 19-րդ կետի համաձայն՝ պետական գրանցում անցած դեղերի բաղադրության, արտադրության տեխնոլոգիայի, միջազգային չափանիշներով անվանումների փոփոխությունների, ինչպես նաև նոր հատկությունների, օգտագործման նոր ցուցումների հայտնաբերման դեպքում կատարվում է դրանց պետական նոր գրանցում:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը հաստատում է գրանցված դեղերի նոր գրանցում չպահանջող փոփոխությունների ցանկը:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն ապահովում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի, ինչպես նաև դրանց գրանցումն անվավեր ճանաչելու մասին տեղեկատվությունը: Գրանցված դեղերի մասին տեղեկությունները ընդգրկվում են դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) և պարբերաբար հրատարակվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վերոշյալ հոդվածների վերլուծությունից բխում է, որ դեղը մարդու և կենդանու հիվանդությունների բուժման, պատրոշման, կանխարգելման, անզգայացման, հղիության կանխման համար նախատեսված կենսաբանական ակտիվությամբ օժտված կշռաչափված միջոց է, որն ստացվել է մեկ կամ մի քանի դեղանյութերի և օժանդակ նյութերի հիման վրա, ունի ստանդարտ բաղադրություն, անփոփոխ անվանում, անհրաժեշտ դեղաչափ, դեղաձև և ձևավորում: Դեղը բնութագրող հիմնական հատկանիշներն են՝ *արդյունավետությունը*՝ դեղի սպասվելիք դրական ազդեցության դրսևորման աստիճանի բնութագիրը, *անվտանգությունը*՝ առողջությանը վնասելու հնարավոր անթույլատրելի ռիսկի բացակայությունը, և *դրակը*՝ համապատասխանությունը դեղագրքային պահանջներին և/կամ որակի հատկորոշիչներին (սպեցիֆիկացիաներին): Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ միայն նշված հատկանիշների միաժամանակյա առկայության պայմաններում դեղը կարող է ծառայել իր նպատակին և պատշաճորեն կիրառվել գործնականում:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի մատչելիության ապահովման կարևորությունը և առանձնահատուկ դերը բնակչության համար՝ օրենսդիրը կարգավորել է Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառությունը, որն ընդգրկում է դրանց արտադրությունը, պատրաստումը, կշռաչափումը, փաթեթավորումը, գրանցումը, որակի հսկողությունը և այլ գործողություններ՝ դեղերի ստացման կամ ոչնչացման նպատակով, դեղերի ձեռքբերումը, պահպանումը, դրանց մասին տեղեկատվությունը, գովազդը, ինչպես նաև սահմանել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների լիազորություններն այդ ոլորտում: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալը բխում է հանրապետության առողջապահության այնպիսի սկզբունքներից, ինչպիսին են՝ պետական պատասխանատվությունը բնակչության առողջության համար և անվտանգ, արդյունավետ և որակյալ առողջապահական համակարգի ապահովումը:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում թույլատրվում է արտադրել, ներմուծել, պահպանել, բաշխել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք **գրանցված են Հայաստանի Հանրապետությունում**: Դեղերի պետական գրանցումը մի քանի փուլերից բաղկացած վարչական գործընթաց է, որը հնարավորություն է տալիս խուսափելու և բնակչությանը զերծ պահելու անորակ, անարդյունավետ կամ թիչ արդյունավետ, վտանգավոր և կեղծ դեղերի կիրառումից: Այլ կերպ ասած՝ դեղերի գրանցումը արտադրանքի արդյունավետության, անվտանգության և որակի ապահովման համակարգի հիմքն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դեղերի գրանցման, գրանցումը մերժելու, գրանցումն անվավեր ճանաչելու հիմքերը և կարգը սահմանված են «Դեղերի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով: Դեղերի գրանցումը (բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի) կատարում է ՀՀ առողջապահության նախարարությունը, որի վերաբերյալ որոշումն ընդունվում է դեղերի որակի, արդյունավետության ու անվտանգության գիտականորեն հիմնավորված չափանիշների, փորձագիտական հետազոտությունների բավարար արդյունքների հիման վրա: Այսինքն՝ դեղերը գրանցելու կամ գրանցումը մերժելու մասին որոշումն ընդունվում է ՀՀ առողջապահության նախարարության սահմանած կարգով կատարված փորձաքննության եզրակացության հիման վրա:

Այսպիսով՝ փորձաքննության արդյունքների, դեղաբանական խորհրդի եզրակացության, ինչպես նաև դիմորդի կողմից պետական տուրքը սահմանված կարգով և չափով վճարվելուց հետո ՀՀ առողջապահության նախարարության կողմից կայացվում է դեղի գրանցման վերաբերյալ որոշում, և հայտատուին տրվում է դեղի պետական գրանցման հավաստագիր, իսկ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղն ընդգրկվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի մասին տեղեկություններ ընդգրկող փաստաթուղթ համարվող Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում): Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեգիստրը) հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով, որում նշվում են դեղի առևտրային անվանումը, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները, դեղաձևը, դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը), արտադրողը, երկիրը, գրանցման ժամկետը, բաց թողնման կարգը, գրանցման հավաստագրի իրավատերը և այլ տեղեկություններ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ գրանցված դեղի անվտանգության, արդյունավետության, որակի համար պատասխանատվություն է կրում դեղի գրանցման հավաստագրի իրավատերը և պարտավոր է ներկայացնել դրանց վերաբերյալ յուրաքանչյուր նոր տվյալ և/կամ փոփոխություն, որոնք հայտնաբերվել և/կամ կատարվել են հետգրանցումային շրջանում: Դեղի պետական գրանցման և գրանցման հավաստագրի իրավատիրոջ հետ մշտական կապի պայմաններում ստեղծվում է տվյալների համակարգ, որն օգտագործվում է դեղերի մասին օբյեկտիվ ու հավաստի

պաշտոնական տեղեկատվության, ներկրման ու գովազդի հսկողության, շրջանառվող դեղերի տեսչական հսկողության ապահովման, ինչպես նաև դեղի անվտանգության մշտադիտարկման համար: Գրանցման ընդունված փաստաթղթերը և նմուշը հիմք են հանրապետությունում դեղերի շրջանառության բոլոր փուլերում դեղերի նույնականացման, որակի հսկողության և/կամ տեղեկատվության համար: Ըստ այդմ, ներկրվող դեղերի նմուշները համեմատվում և ստուգվում են պետական գրանցում ստացած նմուշների հետ, որը հնարավորություն է տալիս երկրի շուկան զերծ պահելու չգրանցված, անորակ և կեղծված դեղերի ներթափանցումից և շրջանառությունից:

Այդ նպատակով ՀՀ առողջապահության նախարարության կողմից կատարվում է դեղերի նմուշների նույնականացում պետական գրանցում ունեցող դեղերի նմուշների հետ, ստուգվում են ապրանքաուղեկից փաստաթղթերը, դրանց և նմուշների համապատասխանությունը: Այնուհետև՝ փաստաթղթային ուսումնասիրության և նույնականացման արդյունքների հիման վրա ընդունվում է որոշում որակի հսկման լաբորատորիայում ընտրված նմուշների լաբորատոր փորձաքննություն կատարելու մասին: Այն դեպքերում, երբ փաստաթղթային փորձաքննությունների, դեղի նմուշների նույնականացման և լաբորատոր փորձաքննության արդյունքները լինում են դրական, ՀՀ առողջապահության նախարարության կողմից տվյալ դեղի համար տրվում է ներմուծման հավաստագիր, իսկ այն դեպքերում, երբ փորձաքննությունների արդյունքները բացասական են (**օրինակ՝ եթե ներմուծվող դեղը Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում չունի**), տվյալ դեղի՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծումը մերժվում է:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ներմուծվող դեղերի Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու փաստը կարող է հաստատվել միայն ներմուծվող դեղերի և Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում) պետական գրանցում ունեցող դեղերի՝ ներառյալ վերջինիս բոլոր վավերապայմանների համապատասխանության պայմաններում: Տեսուբար՝ ներմուծվող դեղը Հայաստանի Հանրապետությունում գրանցում ունենալու փաստը պարզելու համար անհրաժեշտ է համեմատել ներմուծվող դեղի և Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում) գրանցված դեղի՝ գրանցամատյանում նշված տեղեկությունները: Այլ կերպ ասած, եթե ներմուծվող դեղի վերաբերյալ տեղեկությունները չեն համապատասխանում դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում) գրանցված դեղի վերաբերյալ տեղեկություններին, ապա կարելի է փաստել, որ ներմուծվող դեղը Հայաստանի Հանրապետությունում գրանցում չունի, իսկ եթե ներմուծվող դեղի վերաբերյալ տեղեկությունները համապատասխանում են դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում) գրանցված դեղի վերաբերյալ տեղեկություններին, ապա կարելի է փաստել, որ ներմուծվող դեղը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում:

Անփոփոխելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներմուծվող դեղերի Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելը փաստելու համար անհրաժեշտ է ներմուծվող դեղի բոլոր վավերապայմանների համապատասխանությունը դեղերի պետական գրանցամատյանում (ռեգիստրում) գրանցված դեղի վավերապայմաններին, որոնցից մեկն էլ հանդիսանում է դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջ վերաբերյալ վավերապայմանը (այլ տեղեկություններ): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դեղի վերոնշյալ վավերապայմանների գրանցումն ինքնանպատակ չէ, և ինչպես արդեն վերը նշվեց, այն կարևոր նշանակություն ունի դեղի որակի, անվտանգության ու արդյունավետության տեսանկյունից, քանի որ դրանով է նաև պայմանավորված դեղերի որակին ներկայացվող երաշխիքների պահպանության հարցը և դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է դիտարկել դեղերի շրջանառության հետ կապված բոլոր հարաբերությունները, այդ թվում նաև դեղերի իրացման գործընթացը:

Դեղերի շրջանառությունն իրականացնող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը «Դեղերի մասին» ՀՀ օրենքի իմաստով հանդիսանում է դեղերի շրջանառության սուբյեկտ, քանի որ նույն օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին

համապատասխան իրականացնում է դեղերի և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ ապրանքատեսակների մեծածախ ձեռքբերում, պահպանում և մանրածախ իրացում կամ բաց թողնում, տեղեկատվություն և խորհրդատվություն, առողջ պարելակերպի քարոզչություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության դեպքում դեղերի պատրաստում կամ առաքում: Այսինքն՝ օրենսդրի կողմից դեղերի շրջանառություն իրականացնող սուբյեկտների շարքում են դասվել նաև դեղատնային գործունեություն իրականացնող յուրաքանչյուր իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:

Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, **բաց թողնել, իրացնել** և կիրառել միայն այն դեղերը, որոնք **գրանցված են Հայաստանի Հանրապետությունում**, իսկ ինչպես արդեն արձանագրվել է դեղերի գրանցման, գրանցման մերժման և գրանցումն անվավեր ճանաչելու հիմքերը և կարգը սահմանված են «Դեղերի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավակարգավորումներից ուղղակիորեն բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում արգելվում է իրացնել չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ շրջանառությունը դադարեցված (հետ կանչված), Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերը, կեղծ դեղերը, դեղանյութերը, դեղաբուսական հումքը, հետազոտվող դեղագործական արտադրանքը:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է իրացնել միայն օրենքով սահմանված կարգով դեղերի ռեգիստրում գրանցված դեղերը, իսկ գրանցման ենթակա են դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող (ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող), գրանցման հավաստագրի իրավատեր և այլն:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ օրենսդրի կողմից նման խիստ մոտեցումը պետական լիազոր մարմնի կողմից և դեղերի ցանկացած շրջանառություն իրականացնող սուբյեկտների նկատմամբ հսկողության իրականացումն ուղղված է կեղծ և որակի ստանդարտներին չհամապատասխանող (անորակ) դեղերի շրջանառությունը կանխարգելելուն, ինչպես նաև անձանց կյանքն և առողջությունը վնասելու հնարավոր անթույլատրելի ռիսկերից խուսափելուն:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դեղատնային գործունեություն իրականացնելու թույլտվություն (լիցենզիա) ունեցող ցանկացած սուբյեկտ նույն կերպ, ինչպես, որ դեղերի ցանկացած շրջանառություն իրականացնող սուբյեկտ, կրում է պարտականություն ձեռքբերելու, պահպանելու, իրացնելու, բաց թողնելու բացառապես այն դեղերը, որոնք գրանցված են դեղերի ռեգիստրում՝ միաժամանակ հաշվի առնելով և ստուգելով դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող, գրանցման հավաստագրի իրավատեր և այլն:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Գագիկ Բոյախյանի վիճարկման հայցի հիման վրա՝ պահանջելով վերացնել (անվավեր ճանաչել) ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնի 16.02.2017 թվականի թիվ 025 որոշումը:

Դատարանը բավարարել է Գագիկ Բոյախյանի հայցը՝ պատճառաբանելով, որ վիճարկվող որոշման մեջ նշված «Անտիգրիպին» երիցուկի N 10 (սերիա՝ 37310415, պիտանելիության ժամկետ՝ 04.2018 թվական) և «Լիբիկա» 150 մգ, N 14 (սերիա՝ M92947, պիտանելիության ժամկետ՝ 10.2018 թվական) դեղերը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25-Ն հրամանով հաստատված՝ դեղերի պետական ռեեստրում առկա համանուն դեղերի հետ առերևույթ՝ իրենց հիմնական հատկանիշներով համընկնում

են: Դատարանը հաշվի է առել այն, որ «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ն դեղերի շրջանառության մեջ չի հանդիսացել ներմուծում իրականացնող սուբյեկտ, որը զբաղվել է դեղատնից դեղերի իրացմամբ, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետություն դեղերը և (կամ) դեղանյութերը կարող են ներմուծվել ու արտահանվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման կամ արտահանման հավաստագրի հիման վրա, որոնք տրամադրվելու ժամանակ, ի թիվս այլնի, ստուգվում է (այդ թվում՝ փորձաքննությունների միջոցով) նաև դեղերի և դեղանյութերի՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման առկայությունը, իսկ Հայաստանի Հանրապետություն դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման հավաստագիրը տրվում է մինչև համապատասխան մաքսային հայտարարագիրը ներկայացնելը: Դատարանը գտել է, որ հայցվորի՝ որպես դեղատան միջոցով դեղերի առևտրի գործունեություն իրականացնող սուբյեկտի մոտ, կարող էր առկա լինել ողջամիտ համոզմունք առ այն, որ ինքը Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք է բերել և իրացման նպատակով դեղատանը պահպանել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղեր:

Դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հայցվորը՝ դեղը Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու փաստը Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում ստուգելուց բացի, այլ միջոցներ ձեռնարկելու, այդ թվում՝ փորձաքննության ներկայացնելու պարտավորություն չի կրել: Դատարանը ելել է այն եզրահանգման, որ Հայցվորին վերագրվող արարքի կատարման մեջ բացակայում է վերջինիս մեղավորությունը, ինչը պայմանավորված է ինչպես այն հանգամանքով, որ «Անտիգրիպին» երիցուկի N 10 (սերիա՝ 37310415, պիտանելիության ժամկետ՝ 04.2018 թվական) և «Լիրիկա» 150 մգ, N 14 (սերիա՝ M92947, պիտանելիության ժամկետ՝ 10.2018 թվական) դեղերը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25-Ն հրամանով հաստատված՝ դեղերի պետական ռեեստրում առկա համանուն դեղերի հետ առերևույթ՝ իրենց հիմնական հատկանիշներով համընկնման հանգամանքով պայմանավորված՝ կարող էր առկա լինել դրանք Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղեր համարելու առումով ողջամիտ համոզմունք, այնպես էլ այն հանգամանքով, որ դեղերի վրա համապատասխան դրոշմապիտակների առկայությունը փաստում է, որ այդ դեղերը Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել օրինական ճանապարհով, այսինքն՝ առկա են եղել դրանց համապատասխանության ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, քանի որ դրանց բացակայությունը կհանգեցներ այդ դեղերի ներմուծումն արգելելուն, այսինքն՝ անձն օբյեկտիվորեն զրկված է եղել իր գործողությունների հակաիրավական բնույթը գիտակցելու հնարավորությունից, իսկ մեղքի բացակայությունը հանգեցնում է զանցակազմի բացակայության:

Վերաքննիչ դատարանը, մերժելով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Սույն գործի փաստերից հետևում է, որ «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ում զննման արդյունքում հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցման և օրինական ներմուծման տեսանկյունից կասկած հարուցող դեղեր, որոնցից՝ «Անտիգրիպին» երիցուկի N 10 (սերիա՝ 37310415, պիտանելիության ժամկետ՝ 04.2018 թվական) դեղի սերիան բացակայում է ներմուծման փորձաքննության տվյալների բազայում, դեղը գրանցված չէ, փորձաքննության համար ներկայացված նմուշը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված տարբերակին՝ առկա է բաղադրության անհամապատասխանություն, օժանդակ նյութերի քանակական և որակական տարբերություն: Մասնավորապես՝ փորձանմուշում առկա է «Դոկուգատ նատրիում» օժանդակ նյութը, որը բացակայում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի բաղադրության մեջ, ինչպես նաև չեն համապատասխանում օժանդակ նյութերի քանակները: Իսկ «Լիրիկա» 150մգ., N 14 (սերիա՝ M92947, պիտանելիության ժամկետը՝ 10.2018 թվական) դեղի սերիան բացակայում է ներմուծման փորձաքննության տվյալների բազայում, դեղը գրանցված չէ, գրանցման հավաստագրի իրավատիրոջ անհամապատասխանության կետով, Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի գրանցված հավաստագրի իրավատերն է

Պֆայգեր Հ.Ս.Պ. Քորվորեյշըն, 235, Իսկ 42-րդ փ., Նյու-Յորք, 10017 (ԱՄՆ), իսկ ներկայացված դեղինը՝ Пфа́йзер Инк, США:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների յույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպիսով՝ «ԼԻՎԱՖԱՐՄ» ՄՊԸ-ն որպես դեղատնային գործունեություն իրականացնող սուբյեկտ, որը, ի թիվս այնի, իրականացնում է նաև դեղերի իրացում, իրավունք ունի իրացնելու միայն Հայաստանի Հանրապետության դեղերի պետական ռեգիստրում գրանցված դեղերը, իսկ ինչպես արդեն նշվել է գրանցման ենթակա են դեղերի յուրաքանչյուր անվանում, **բաղադրակազմ**, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող (ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող), **գրանցման հավաստագրի իրավատեր**: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դեղերի շրջանառություն իրականացնող յուրաքանչյուր սուբյեկտ կրում է պարտականություն ստուգելու և հավաստիանալու շրջանառվող դեղի՝ օրենքով սահմանված կարգով գրանցված համարվելու բոլոր չափորոշիչների համապատասխանությունը:

Մինչդեռ և՛ Դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը եկել են այն եզրահանգման, որ քանի որ հայցվորը գրառվում է դեղատնային գործունեությամբ և հանդիսանում է դեղեր իրացնող, ապա վերջինս կարող էր ողջամիտ համոզմունք ունենալ, որ վերոնշյալ դեղերը գրանցված են և Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել օրինական ճանապարհով, ուստիև հայցվորը որևէ այլ պարտականություն չի ունեցել: Այսինքն՝ ստորադաս ատյանները գտել են, որ արձանագրված իրավախախտման մեջ բացակայում է հայցվորի մեղքը, քանի որ «Լիվաֆարմ» ՄՊԸ-ն չի հանդիսանում դեղեր ներմուծող և ընդամենը իրացրել է դեղերի պետական ռեեստրում առկա համանուն դեղերի հետ առերևույթ՝ իրենց հիմնական հատկանիշներով համընկնող դեղեր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, ինչպես արդեն վերը նշվեց, Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեգիստրը) հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով, որում նշվում են դեղի առևտրային անվանումը, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները, դեղաձևը, դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը), արտադրողը, երկիրը, գրանցման ժամկետը, բաց թողնման կարգը, գրանցման հավաստագրի իրավատերը և այլ տեղեկություններ: «ԼԻՎԱՖԱՐՄ» ՄՊԸ-ն դեղերի պահպանման և մանրաձախ իրացման կամ բաց թողնման յուրաքանչյուր գործընթացում ոչ թե պետք է բավարարվեր ուղղակի ստուգելով տվյալ դեղերի առկայությունը դեղերի գրանցամատյանում, այլ կրում էր պարտականություն համեմատելու իր մոտ առկա յուրաքանչյուր դեղի չափորոշիչները պետական գրանցամատյանում առկա համանուն դեղի հետ և հավաստիանալու դրանց նույնականության հարցում: Այսինքն՝ պետք է ստուգվեին իրացվող դեղի առևտրային անվանումը, միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները, դեղաձևը, դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը), արտադրողը, երկիրը, գրանցման ժամկետը, բաց թողնման կարգը, գրանցման հավաստագրի իրավատերը, քանի որ վերջինիս թույլատրվում է իրացնել միայն օրենքով սահմանված կարգով դեղերի ռեգիստրում գրանցված դեղերը, իսկ գրանցման ենթակա են դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող (ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող), գրանցման հավաստագրի իրավատեր և այլն:

ՀՀ առողջապահության նախարարի 12.07.2016 թվականի «Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստրը) հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016 թվականի մարտի 09-ի թիվ 09-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 25-Ն հրամանով (ուժի մեջ է մտել 04.08.2016 թվականին և ուժը կորցրել է 27.03.2017 թվականին) հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը

(ռեեստրը՝ համաձայն հավելվածի: Ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստրը) հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի ապրիլի 13-ի N 16-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 09-Ն հրամանը

ՀՀ առողջապահության նախարարի 12.07.2016 թվականի թիվ 25-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանի (ռեեստրի) 310 համարի տակ նշված է՝ առևտրային անվանումը՝ «Անտիգրիպին», միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումը՝ պարացետամոլ, քլորֆենամին, (քլորֆենամին մալեատ), ասկորբինաթթու, (paracetamol, chlorphenamine (chlorphenamine maleate), ascorbic acid), դեղաձևը՝ դեղափոշի ներքին ընդունման լուծույթի երիցուկի համով, դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)՝ 500մգ+10մգ+200մգ 5գ փաթեթիկներ (6,10), արտադրողը՝ Նատուր Պրոդուկտ Ֆարմա Սպ զօ.օ., փ. Պոդսոցցիսկո 30, 07-300 Օստրով Մագովիեցկա, երկիրը՝ Լեհաստան, դեղերի ATC1 ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը՝ N02BE51, գրանցման հավաստագրի համարը՝ 15323, գրանցման ժամկետը՝ 04.02.2016-04.02.2021 թվականը, բացթողման կարգը՝ ԱԴ, գրանցման հավաստագրի իրավատերը՝ ՎԱԼԵԱՆՏ ՍՊԸ, Շաբոլովկա փ. 31, շ. 5, 115162, Մոսկվա, Ռուսաստան:

Թիվ 1783 գրանցման հավաստագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված է հետևյալ դեղը՝ արտադրանքի անվանումը՝ Լիրիկա (Lyrica), դեղաչափը 150 մգ, դեղաձևը՝ դեղապատիճներ կոշտ, միջազգային համընդհանուր անվանումը, ակտիվ բաղադրատարր(եր)-ի քանակը՝ պրեգաբալին (pregabalin), փաթեթավորումը, թողարկման ձևը՝ բլիստերներում (14/1x14/56/4x14/), արտադրողը՝ Պֆայզեր Մանուֆակչըրինգ Դոյչլանդ ԳմբՀ, Բեռլիներշտատե Ֆրայբուրգ, Մուսկալդալե 1, 79090 Ֆրայբուրգ, երկիրը՝ Գերմանիա, դեղերի ATC1 ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը՝ N03AX16, գրանցման հավաստագրի համարը՝ 14633, գրանցման ժամկետը՝ 03.07.2015-03.07.2020 թվականը, բացթողման կարգը՝ Դ, գրանցման հավաստագրի իրավատերը՝ Պֆայզեր Հ.Ս.Պ. Քորփորեյշըն, 235, Իստ 42-րդ փ, Նյու-Յորք, 10017, ԱՄՆ:

«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 13.02.2017 թվականին տրված թիվ 0114023317 եզրակացությամբ արձանագրվել է, որ «ԼԻՎԱՖԱԸՄ» ՍՊԸ-ի դեղատնից հայտնաբերված «Անտիգրիպին» երիցուկի N 10 (սերիա՝ 37310415, պիտանելիության ժամկետը՝ 04.2018 թվական) դեղի սերիան բացակայում է ներմուծման փորձաքննության տվյալների բազայում, դեղը գրանցված չէ, փորձաքննության համար ներկայացված նմուշը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված տարբերակին՝ առկա է բաղադրության անհամապատասխանություն, օժանդակ նյութերի քանակական և որակական տարբերություն: Փորձանմուշում առկա է «Դոկուգատ նատրիում» օժանդակ նյութը, որը բացակայում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի բաղադրության մեջ: Չեն համապատասխանում ստորև ներկայացված օժանդակ նյութերի քանակները: «Լիրիկա» 150մգ., N 14 (սերիա՝ M92947, պիտանելիության ժամկետը՝ 10.2018 թվական) դեղի սերիան բացակայում է ներմուծման փորձաքննության տվյալների բազայում, դեղը գրանցված չէ, գրանցման հավաստագրի իրավատիրոջ անհամապատասխանության կետով, Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի գրանցված հավաստագրի իրավատերն է Պֆայզեր Հ.Ս.Պ. Քորփորեյշըն, 235, Իստ 42-րդ փ., Նյու-Յորք, 10017 (ԱՄՆ), իսկ ներկայացված դեղինը՝ Սթայբեր Պֆայզեր Ռուս, ՈՍԿ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների և փաստական հանգամանքների համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ փորձաքննության արդյունքում պարզվածը, այն, որ իրացվող դեղերը գրանցված չեն Հայաստանի Հանրապետությունում, մի դեպքում («Անտիգրիպին» երիցուկի N 10 (սերիա՝ 37310415, պիտանելիության ժամկետը՝ 04.2018 թվական)) առկա է դեղի բաղադրության անհամապատասխանություն, օժանդակ նյութերի քանակական և որակական տարբերություն, «Դոկուգատ նատրիում»

օժանդակ նյութը բացակայում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի բաղադրության մեջ, մյուս դեպքում՝ («Լիրիկա» 150մգ., N 14 (սերիա՝ M92947, պիտանելիության ժամկետը՝ 10.2018 թվական) առկա է գրանցման հավաստագրի իրավատիրոջ անհամապատասխանություն: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում դեղի գրանցման վավերապայմանների ուսումնասիրությունից պարզ է, որ իսկապես վերոնշյալ դեղերի վավերապայմաններում առկա են անհամապատասխանություններ, որն էլ հիմք է հանդիսացել պետական լիազոր մարմնի կողմից «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ի տնօրենին պատասխանատվության ենթարկելու համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի) կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կանցցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելը կամ արտադրելը կամ պահպանելը կամ բաշխելը կամ իրացնելը կամ կիրառելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի՝ մինչև 10 փաթեթի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրիսնապատիկի չափով:

Նույն հոդվածի 22-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին, 2-րդ, 4-21-րդ մասերով նախատեսված արարքները կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար նույն հոդվածով նախատեսված տուգանքի չափերի կրկնապատիկի չափով:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ն գրադվելով դեղատնային գործունեությամբ՝ իրացրել է Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղեր, որի հիմքով էլ ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնի պետի 14.12.2016 թվականի թիվ 139 որոշմամբ «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Բոյախյանը իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական տույժի: Հետևաբար «ԼԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Բոյախյանին նկատմամբ վարչական տույժի միջոցներ նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն արարքը կրկին կատարելու համար, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 23-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները խախտելու և Հայաստանի Հանրապետությունում չգրանցված 2 անվանում դեղեր իրացնելու նպատակով պահպանելու համար վերջինիս նկատմամբ կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 22-րդ մասը:

Վերոգրյալից հետևում է, որ վարչական մարմնի կողմից վարչական վարույթն իրականացվել է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան, վարչական վարույթի ընթացքում ձեռք են բերվել բոլոր անհրաժեշտ և բավարար ապացույցները՝ ապահովելով գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը և բացահայտումը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճարկվող որոշումը վերացնելու (անվավեր ճանաչելու) հիմքերը բացակայում են:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով, բացառությամբ ճանապարհային ոստիկանության կողմից ընդունվածների:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվոր Գագիկ Բոյախչյանն ազատված է պետական տուրքի վճարելու պարտականությունից, մինչդեռ հայցադիմումի համար Գագիկ Բոյախչյանը վճարել է 4.000 ՀՀ դրամ պետական տուրք, ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը վերաքննիչ բողոքի համար վճարել է 10.000 ՀՀ դրամ պետական տուրք, իսկ վճռաբեկ բողոքի համար՝ 20.000 ՀՀ դրամ պետական տուրք:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գագիկ Բոյախչյանի կողմից հայցադիմումի համար վճարված 4.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի հարցը, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի կողմից վճարված՝ վերաքննիչ բողոքի համար սահմանված 10.000 ՀՀ դրամի չափով և վճռաբեկ բողոքի համար սահմանված 20.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Այս եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության այն մեկնաբանությունը, որի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկման համար օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտները՝ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, չեն կարող կրել պետական տուրք վճարելու կամ վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականություն՝ թե՛ վարչական դատարանում, թե՛ դատական բողոքարկման փուլերում՝ անկախ գործի ելքից (*յրե՛ս, Գագիկ Ավետիսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/1390/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.03.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Գագիկ Բոյախյանի հայցն ընդդեմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնի 16.02.2017 թվականի թիվ 025 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Վարչական գործ թիվ **ՎԴ/8445/05/16**
2021թ.
ՎԴ/8445/05/16
Կ. Բաղդասարյան
Կ. Մաթևոսյան
Կ. Ավետիսյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 27-ին
գրավոր ընթացակարգով քննելով «Յունի Ռենտ» ՍՊԸ-ի տնօրեն Լևոն Աբրահամյա-
նի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 10.04.2019 թվականի որոշման
դեմ՝ ըստ հայցի «Յունի Ռենտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Լևոն Աբրա-
համյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ 22.09.2016 թվականի թիվ Վ-37/15 որո-
շումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանը պահանջել է ան-
վավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի
պահպանության պետի 22.09.2016 թվականի թիվ Վ-37/15 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան)
27.02.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.04.2019
թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է,
Դատարանի 27.02.2017 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամ-
յանը (ներկայացուցիչ՝ Ռոմեն Ահարոնյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավահարաբերումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նախ՝ վարչական շրջանին վերանորոգման համար դիմելու փաստը չի վկայում, որ կատարվել է ապօրինի շինարարություն, և երկրորդ՝ նշված արձանագրությունով որևէ կերպ չի հիմնավորվում, որ իրականացվել են տանիքի վերակառուցման աշխատանքներ:

Ավելին, եթե նույնիսկ հիմնավորվի մի քանի քար տեղադրելը, պետք է ապացուցվի, թե արդյոք այդ քարերի տեղադրումը հանդիսանում է շինարարական աշխատանք, այն էլ՝ տանիքի վերակառուցման ձևով, քանի որ կազմված արձանագրությունը վերաբերում է տանիքի վերակառուցմանը, որպիսի փաստ որևէ ապացույցով չի հաստատվել: Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստի առկայությունը, որ քարեր տեղադրելը պայմանավորված է ջրի հոսքը կանխելու նպատակի հետ և ոչ թե տանիքի վերակառուցման:

Ինչ վերաբերում է լուսանկարին, ապա Վերաքննիչ դատարանը սխալ հետևության է հանգել՝ հերքելով առաջին ատյանի դատարանի հիմնավորումը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ արձանագրության մեջ որպես կից փաստաթուղթ լուսանկարի նշված լինելը հաստատում է այդ լուսանկարի կատարման ամսաթիվը: Մինչդեռ որևէ կերպ չի հիմնավորվել, թե արդյոք արձանագրության կից լուսանկարը հենց այն լուսանկարն է, որը ներկայացվել է դատարանին այն պայմաններում, երբ լուսանկարի կատարման ամսաթիվն անհայտ է:

Ավելին, լուսանկարի կատարման ամսաթիվի հետ կապված առկա է նույն կողմերի միջև մեկ այլ թիվ ՎԴ/5269/05/16 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած Վերաքննիչ դատարանի դատական ակտ, որտեղ Վերաքննիչ դատարանը նույն փաստական հանգամանքների պայմաններում հայտնել է այն դիրքորոշումը, որ լուսանկարի կատարման ժամանակը չի հիմնավորվում:

Վերաքննիչ դատարանը փոփոխել է դատական ակտն այն պարագայում, երբ գործի նյութերից ակնհայտ է, որ նույնիսկ վերաքննիչ բողոքը հիմնավոր համարվելու դեպքում գործը պետք է ուղարկվեր նոր քննության, քանի որ հայցով ներկայացված հիմքերն ամբողջությամբ քննության առարկա չլին դարձել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.04.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.02.2017 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 26.08.2014 թվականի թիվ 26082014-01-0203 վկայականի համաձայն՝ Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի թիվ 8/7 հասցեում գտնվող տարածքը սեփականության իրավունքով պատկանում է «Թայմ Զիրոու» ՍՊԸ-ին (**հատոր 1-ին, գ.թ. 45-46**):

2) Համաձայն իրավաբանական անձի 05.06.2015 թվականի թիվ 03Ա1010308 պետական գրանցման վկայականի թիվ 001 ներդիրի՝ «Թայմ Զիրոու» ՍՊԸ-ն հանդիսանում է Ընկերության իրավասխորհրդը (**հատոր 1-ին, գ.թ. 34**):

3) Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների

կազմակերպման բաժնի աշխատակից Գ. Բաբայանի 05.09.2016 թվականի թիվ 023816 արձանագրության համաձայն՝ «ս/թ սեպտեմբերի 5-ին հերթական շրջայցի ժամանակ հայտնաբերվեց, որ Մաշտոցի պողոտա 8/7 հասցեում գործող «Յունի Ռենտ» ՄՊԸ-ի կողմից գոյություն ունեցող շինության տանիքում, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, կատարվում էր տանիքի վերակառուցման շինարարական աշխատանքներ, մասնավորապես՝ պարապետի քարի շարվածքի իրականացում»։ Արձանագրության մեջ նշում է կատարվել առ այն, որ արձանագրությանը կցվում է նաև իրավախախտումը հայտնաբերելու պահին կատարված ֆոտոդուսանկար (**հատոր 1-ին, գ.թ. 13, 31-33**):

4) Թիվ 023816 արձանագրության մեջ առկա է այն Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանի կողմից 05.09.2016 թվականին ստանալու վերաբերյալ ձեռագիր մակագրություն և ստորագրություն, որի համաձայն՝ «ստացա արձանագրությունը, որի հետ համաձայն չեմ, քանի որ շինությունն իմ սեփականությունն է և գտնվում է վթարային վիճակում, որի վերանորոգման համար դիմել եմ Կենտրոն վարչական շրջան» (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

5) Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 22.09.2016 թվականի թիվ Վ-37/15 որոշման՝ Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական տույժի՝ 200.000 ՀՀ դրամի չափով։ Որոշումը 28.09.2016 թվականին ստորագրությամբ հանձնվել է Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանին, որի վերաբերյալ առկա է թիվ AR192285162AM փոստային հետադարձ ծանուցման անդորրագիրը (**հատոր 1-ին, 27-28, 30**):

6) «Վարչական տույժ նշանակելու մասին» 22.09.2016 թվականի թիվ Վ-37/15 որոշման մեջ նշված է, որ իրավախախտման փաստը հաստատող ապացույց է հանդիսանում իրավախախտման պահին լուսանկարված իրավախախտման վայրը (**հատոր 1-ին, գ.թ. 27-28**):

4. Վճուրբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները

Վճուրբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճուրբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին պարբերության խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճուրբեկ բողոքի քննության շրջանակներում Վճուրբեկ դատարանը կարևորում է հետևյալ իրավական հարցադրման պարզաբանումը. արդյոք վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությանը կից լուսանկարի պարզեցումով հասարակում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման համար անհրաժեշտ ենթադրյալ իրավախախտման փաստը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, (...) առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման

առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝ 1) տվյալ գործի քննությունը վերաբերում է, արդյոք, իր իրավասությանը: 2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը: 3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին: 4) պահանջվել են, արդյոք, անհրաժեշտ լրացուցիչ նյութեր: 5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում: արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ: արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության: կան, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ: պատճառով է, արդյոք, գույքային վնաս, (...), ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրները: Դրանցից են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն,

լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում ապացույցներ են համարվում այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով հաստատում են գործի հանգամանքները, վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Սակայն ցանկացած փաստական տվյալ չէ, որ կարող է համարվել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի ապացույց: Փաստական տվյալները կարող են համարվել ապացույց, եթե առաջին՝ բովանդակում են տվյալներ վարչական իրավախախտման կամ դրա բացակայության մասին, տվյալ անձի մեղավորության կամ անմեղության մասին, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների մասին, և երկրորդ՝ այդ փաստական տվյալների բացահայտման, հավաքագրման և ձևակերպման գործընթացները պետք է համապատասխանեն օրենսդրության պահանջներին: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմնին պարզելու գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ և ղեկավարվելով օրենքով՝ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները: Վերը նշվածն իրականացնելու համար համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս պետք է պատշաճ ձևով լուծի նաև հետևյալ հարցը՝ արդյո՞ք օրենքին համապատասխան են կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը (տե՛ս, Սուրեն Մանուկյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված են շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու գանցակազմի հետևյալ դրսևորումները.

1) սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը (բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան),

2) գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա բնակելի տուն ինքնակամ կառուցելը,

3) հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը:

ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշմամբ՝ թեև վկայակոչված իրավախախտումներից յուրաքանչյուրն ունի միայն իրեն բնորոշ առանձնահատկությունները

(արարքի կատարման վայրը, կառուցվող շինության տեսակը, արարքը կատարող սուբյեկտը, կիրառվող սանկցիան), սակայն դրանց համար ընդհանուրն այն է, որ բոլոր դեպքերում այդ զանցակազմերը կարող են առկա լինել միայն ինքնակամ կառույցի (շենքի, շինության) կառուցման պարագայում: Ըստ այդմ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված բոլոր արարքներն ընդգրկվում են շենքեր ու շինություններ ինքնակամ կառուցելու զանցանքի միասնական հասկացության մեջ, որի ոտնձգության օբյեկտը քաղաքաշինության բնագավառում օրենսդրությամբ սահմանված իրավակարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների ամբողջությունն է (*տես, Մասունիկ Մշեցյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի թիվ ՎԴ/9692/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով վերոգրյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման առկայությունը հաստատելու համար անհրաժեշտ է անձի մոտ սեփականության կամ հոդօգտագործման իրավունքի, վերջինիս կողմից նույն հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու, բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելու փաստերի միաժամանակյա առկայություն: Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ գործով Վարչական իրավախախտման վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է համապատասխան ապացույցներով հիմնավորի նշված փաստերի առկայությունը, քանի որ նշված փաստական հանգամանքների պարզումը հանդիսանում է վարչական վարույթի առարկա, հետևաբար նաև՝ գործի բազմակողմանի քննության տարր, և էական նշանակություն ունի վարչական մարմնի կողմից համապատասխան վարչական ակտն ընդունելու ու անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Այսինքն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում՝ վերջինիս կողմից ընդունված իրավական ակտի վիճարկման ժամանակ, այդ ակտի հիմքում դրված փաստական հանգամանքների ապացուցման բեռը անձի համար անբարենպաստ փաստերի մատով կրում է վարչական մարմինը: Ուստի, այդ փաստերի չսպացուցման դեպքում դրանց բացասական հետևանքները ևս կրում է վարչական մարմինը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ վարչական մարմինը (պաշտոնատար անձը) իրավասու է անձին ենթարկել վարչական պատասխանատվության միայն Վարչական իրավախախտման վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթների պահպանման պայմաններում:

Քննարկվող պարագայում, իրավասու վարչական մարմինը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման առկայության համար պետք է պարզել՝ արդյոք համապատասխան սուբյեկտը կատարել է ինքնակամ կառույց, և միայն այդ փաստի հիմնավորման պայմաններում վարչական մարմինն իրավասու էր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ նախատեսված զանցանքի առկայությունը համարել հաստատված:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի աշխատակից Գ. Բաբայանի 05.09.2016 թվականի թիվ 023816 արձանագրության համաձայն՝ Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանի կողմից Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի թիվ 8/7 հասցեում, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացվել են տանիքի վերակառուցման շինարարական աշխատանքներ, մասնավորապես՝ քարե շարվածքի իրականացում: Արձանագրությանը կից ներկայացված է լուսանկարի պատճենը: Նույն արձանագրության մեջ առկա է Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանի կողմից

արձանագրությունը 05.09.2016 թվականին ստանալու վերաբերյալ ձեռագիր մակագրություն և ստորագրություն, որի համաձայն՝ «ստացա արձանագրությունը, որի հետ համաձայն չեմ, քանի որ շինությունն իմ սեփականությունն է և գտնվում է վթարային վիճակում, որի վերանորոգման համար դիմել եմ Կենտրոն վարչական շրջան»:

Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 22.09.2016 թվականի թիվ Վ-37/15 որոշման՝ Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական տույժի՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

Դատարանը, 27.02.2017 թվականի վճռով բավարարելով հայցը, արձանագրել է, որ «(...) տվյալ դեպքում որոշման մեջ գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը թերի է ներկայացված, քանի որ, ըստ էության, պարզ չէ, թե ինչ է նկատի ունեցել վարչական մարմինը՝ նշելով, որ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ինքնակամ իրականացվել են տանիքի վերակառուցման, մասնավորապես՝ քարե շարվածքի իրականացման շինարարական աշխատանքներ: Այնուամենայնիվ, հիմք ընդունելով թիվ 023816 արձանագրությունը, իրավախախտման լուսանկարը, հաստատված է համարել այն հանգամանքը, որ «Յունի Ռենտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանի կողմից առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ինքնակամ իրականացվել են տանիքի վերակառուցման, մասնավորապես՝ քարե շարվածքի իրականացման շինարարական աշխատանքներ, որոնց արդյունքում Հայցվորին ենթարկել է վարչական պատասխանատվության ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով՝ նշանակելով տույժ 200.000 ՀՀ դրամի չափով: Մինչդեռ, գործի քննությամբ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվել, թե նախկինում ինչպիսի՞ տանիք է եղել, ե՞րբ են իրականացվել դրա վերակառուցման աշխատանքները, արդյո՞ք դրանք ավարտին հասցվել են, թե՞ ոչ: Ավելին՝ վարչական իրավախախտման վերաբերյալ լուսանկարից պարզ չէ, թե երբ է կատարվել լուսանկարահանումն և ըստ այդմ՝ չի հիմնավորվում Հայցվորի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում թույլ տալու փաստը (...) Դատարանը թիվ 023816 արձանագրության, լուսանկարի հետազոտմամբ եզրակացնում է, որ դրանցով չի հաստատվում վիճարկվող որոշման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների առկայությունն, այն է՝ տանիքի վերակառուցման շինարարական աշխատանքներ, մասնավորապես քարե շարվածքի իրականացնելը»:

Վերաքննիչ դատարանը, 10.04.2019 թվականի որոշմամբ բավարարելով Երևանի քաղաքապետարանի բողոքը, բեկանել է Դատարանի 27.02.2017 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել է: Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ պատճառաբանել է, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի աշխատակից Գ. Բաբայանի կողմից 05.09.2016 թվականին կազմված թիվ 023816 արձանագրության մեջ հստակ նշվել է իրավախախտման կատարման ժամանակը՝ 05.09.2016 թվական, իսկ Լևոն Աբրահամյանն արձանագրության մեջ կատարված գրառմամբ «ընդունել է արձանագրված աշխատանքներն իր կողմից կատարված լինելու հանգամանքը և գիտակցելով որ տվյալ աշխատանքներն իրականացրել է առանց համապատասխան շինարարության թույլտվության և հաշվի առնելով, որ բացատրությունը տրվել է իրավախախտումը հայտնաբերելու և արձանագրությունը կազմելու պահին, ապա պարզ է դառնում, որ տվյալ բացատրությունը վերաբերվում է տվյալ պահին կատարված շինարարությանը»: Վերաքննիչ դատարանը գտել է, որ «վիճարկվող որոշման մեջ գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը լիարժեք և հստակ նկարագրված են, նշված է, թե ինչ տեսակի շինարարական աշխատանքներ են իրականացվել «Յունի Ռենտ» ՍՊԸ-ի տնօրեն Լևոն Աբրահամյանի կողմից, որի համար վերջինս ենթարկվել է վարչական պատասխանատվության» (...) վարչական իրավախախտման փաստի վերաբերյալ կազմված թիվ 023816 արձանագրության «Կից

ներկայացվող փաստաթղթերի ցանկը» տողում նշված է, որ մի շարք ապացույցներից բացի, հստակ ամրագրված է թվով 1 հատ լուսանկարի կցված լինելու փաստը, ինչը, բնականաբար, ինքնանպատակ չի եղել (...):

Մասնավորապես՝ «Վարչական տույժ նշանակելու մասին» 22.09.2016 թվականի թիվ Վ-37/15 որոշման մեջ նշված է, որ իրավախախտման փաստը հաստատող ապացույց է հանդիսանում իրավախախտման պահին լուսանկարված իրավախախտման վայրը: Նշված փաստը հիմնավորելու համար Երևանի քաղաքապետարանի կողմից հայցադիմումի պատասխանին կից ներկայացվել են վիճարկվող որոշման կայացման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերի պատճենները, այդ թվում՝ նաև՝ իրավախախտման վայրի լուսանկարի պատճենը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության վերլուծությունից հետևում է, որ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական մարմինը պետք է հիմնավորի, որ սեփականության կամ հոգոգտագործման իրավունք ունեցող անձի կողմից նույն հողամասի վրա կառուցվել են ինքնակամ շենքեր և շինություններ, բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից կատարվել են ինքնակամ կառույցներ: Միայն այս փաստերի առկայության պայմաններում է վարչական մարմինն իրավասու հաստատված համարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ նախատեսված գանցակազմի առկայությունը համապատասխան անձի արարքում: Սույն գործի փաստերի համաձայն, սակայն, վարչական մարմինը չի հիմնավորել այդ փաստերի առկայությունը:

Ինչ վերաբերում է վարչական մարմնի ակտին կից ներկայացված լուսանկարին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում առկա լուսանկարի պատճենն Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանի կողմից առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի շինարարական աշխատանքներ կատարելու փաստը հիմնավորող վերաբերելի ու բավարար ապացույց չի կարող հանդիսանալ, քանի որ նախ՝ այդ լուսանկարից հստակ պարզ չէ, թե այդ լուսանկարը երբ և որտեղ է կատարվել, ինչպիսին է եղել շինության տեսքը նախկինում: Ավելին՝ այդ լուսանկարից հնարավոր չէ պարզել դրա կապի Ընկերության կողմից 05.09.2016 թվականի իրավախախտման կատարման փաստը հաստատելու հետ: Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված լուսանկարը չի կարող հայցվորի կողմից կատարված իրավախախտման փաստը հաստատող թույլատրելի ապացույց հանդիսանալ:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը վեճը լուծելիս իրավացիորեն եզրահանգել է, որ «գործի քննությամբ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվել, թե նախկինում ինչպիսի տանիք է եղել, երբ են իրականացվել դրա վերակառուցման աշխատանքները...: Ավելին՝ վարչական իրավախախտման վերաբերյալ լուսանկարից պարզ չէ, թե երբ է կատարվել լուսանկարահանումն (...):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության տնօրենի կողմից գոյություն ունեցող շինության տանիքի վերակառուցման, մասնավորապես՝ ինքնակամ քարե շինվածքի իրականացման շինարարական աշխատանքներ կատարելը սույն գործով չի հիմնավորվել, ուստի ներկայացված վարչական վարույթի նյութերն ինքնին չեն կարող վարչական պատասխանատվության ենթարկելու համար բավարար հիմք հանդիսանալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը պետք է ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, ղեկավարվելով օրենքով՝ գնահատեր գործով ձեռք բերված ապացույցները և պարզեր ու հաստատված համարեր Հայցվորի կողմից ինքնակամ շինարարություն կատարելու փաստը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ նշված փաստերի առկայությունը հաստատելու և ըստ դրա Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի դիպառ-գիցիայով նախատեսված զանցանքը կատարված լինելու հարցը պարզված համարելու ու վերջինիս նշված իրավախախտման համար վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված թիվ 023816 արձանագրությունը և լուսանկարի պատճենը բավարար հիմք չեն կարող հանդիսանալ: Ուստի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման համար անհրաժեշտ՝ ենթադրյալ իրավախախտումը կատարած լինելու փաստը մնացել է չսպառնացված:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ: Տվյալ դեպքում, վիճարկվող վարչական ակտն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի սխալ կիրառմամբ և ենթակա է անվավեր ճանաչման, հետևաբար հայցի բավարարումը Դատարանի կողմից իրավաչափ է և հիմնավորված:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի

Հանրապետության դատական ղեկավարամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով, (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվոր Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է սույն գործով հայցադիմում ներկայացնելու, ինչպես նաև դատական բողոքարկման բոլոր փուլերում պետական տուրքի վճարման պարտականությունից:

Այս եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության այն մեկնաբանությունը, որի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկման համար օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտները՝ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, չեն կարող կրել պետական տուրք վճարելու կամ վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականություն՝ թե՛ վարչական դատարանում, թե՛ դատական բողոքարկման փուլերում՝ անկախ գործի ելքից (*լրե՛ս, Գագիկ Ավերիսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/1390/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Մյուս կողմից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պատասխանող վարչական մարմինը պարտավոր չէ պետությանը հատուցել հայցադիմումի և հայցվոր Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանի կողմից բերված վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքերի գումարները, որոնց վճարումից Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանն ազատված է օրենքի ուժով, քանի որ սույն գործով այդ պետական տուրքերի գծով ծախսի կատարումն անհրաժեշտ չէր: Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի տեսանկյունից՝ դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք մյուս կողմը կրել է, և որոնք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար (*լրե՛ս, Հայկ Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/1115/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերության տնօրեն Լևոն Աբրահամյանը տվյալ դեպքում հայցադիմումի և վճռաբեկ բողոքի համար պետական տուրք չի վճարել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցադիմումի և վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Միևնույն ժամանակ, սույն գործով վերաքննիչ բողոք ներկայացնելու համար Երևանի քաղաքապետարանը վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրք, հետևաբար՝ ներկայացված հայցը բավարարվելու պայմաններում վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված և Երևանի քաղաքապետարանի կողմից նախապես վճարված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 10.04.2019 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 27.02.2017 թվականի վճռին:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/1979/05/17**
2021թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/1979/05/17

Նախագահող դատավոր՝

Կ. Ավետիսյան

Դատավորներ՝

Կ. Բաղդասարյան

Կ. Մաթևոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ

2021 թվականի փետրվարի 12-ին

գրավոր ընթացակարգով, քննելով Զաքար Զերեջյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.06.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Զաքար Զերեջյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Ծառայության 16.02.2017 թվականի թիվ 1705737118 որոշումը (այսուհետ՝ Որոշում) անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Զաքար Զերեջյանը պահանջել է անվավեր ճանաչել Որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 03.08.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.06.2018 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 03.08.2017 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է, հայցը մերժվել է, Զաքար Զերեջյանից հոգուտ Ծառայության բռնագանձվել է 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված պետական տուրքի փոխհատուցում:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Զաքար Զերեջյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածը, սիսայ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տեսանյութում երևում է, որ Զաքար Զերեջյանին պատկանող «MERCEDES-BENZ» մակնիշի 33 PL 091 պետհամարանիշի ավտոմեքենան հատել է խաչմերուկը, սակայն նշված խաչմերուկը կարգավորող հիմնական (խաչմերուկից առաջ աջ կողմում տեղակայված) լուսացույցը տեսանյութում չի երևում, իսկ կրկնող (կրկնվող) լուսացույցը մեծ դժվարությամբ է երևում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ միայն այն փաստի առկայությունը, որ տեսանյութում չի երևում հիմնական լուսացույցը, որը պետք է տեղադրված լինի խաչմերուկից առաջ աջ մասում, ինքնին բավարար է ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության առումով կասկած հարուցելու համար, հետևաբար ի սկզբանե վարչական մարմինը պետք է գերծ մնար որոշում կայացնելուց:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ամենից առաջ Դատարանը պետք է Ծառայությունից պահանջեր ներկայացնել Որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի նյութերը, ներառյալ իրավախախտման փաստն արձանագրած տեսանյութերը, քանի որ Ծառայության ինտերնետային կայքում ներկայացված տեսանյութերի ուսումնասիրությունը բավարար չէ Որոշմամբ նկարագրված իրավախախտման փաստը հաստատված համարելու համար:

2) *Վերաքննիչ դատարանը սիսայ է մեկնաբանել «Պետական փուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» ենթակետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումները դատական կարգով բողոքարկելիս անձը չի կրում պետական տուրք վճարելու պարտականություն, այդուհանդերձ իր վրա դրել է նման պարտականություն՝ դրանով իսկ խախտելով քաղաքացու դատական պաշտպանության, արդար դատաքննության և դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.06.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել համապատասխան դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը կամ մասնակիորեն բեկանել և փոփոխել դատական ակտը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Որոշմամբ Զաքար Զերեջյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք 20.000 ՀՀ դրամի չափով այն

բանի համար, որ 16.02.2017 թվականին ժամը 15:33-ին Երևան քաղաք Սեբաստիա-Ա.Վեգներ խաչմերուկի հատվածում չի ենթարկվել լուսացույցի արգելող ազդանշանին (**գ.թ. 5**).
 2) Վարչական գործի նյութերում առկա չէ Որոշման հիմքում ընկած տեսանյութը:

4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական իրավախախտման փաստը հաստատող տեսաձայնագրության ձեռք բերմանն ուղղված դատավարական գործողությունների առանձնահատկությունների, ինչպես նաև վարչական տույժ նշանակելու մասին որոշումները վիճարկելիս պետական տուրք վճարելու պարտականություն ունենալու մասին, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

1) Քննելով վճռաբեկ բողոքն առաջին հիմքով՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

արդյո՞ք դատարանն իրավասու է տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով հայտնաբերված ձանձապահային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով վարչական իրավախախտումը հաստատել այն պարագայում, երբ վարչական ակտի հիմքում ընկած տեսանյութը, որպես ապացույց, գործում առկա չէ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են նյութական աշխարհի այն օբյեկտները, որոնք իրենց առկայությամբ, դրությամբ, արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի հաստատման միջոց դառնալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են նաև լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները (...): Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ իրեղեն ապացույցները հետազոտվում են գնման միջոցով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներից մեկում իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ տեսագրությունը և լուսանկարը վարչական դատավարությունում դասվում են օրենքով նախատեսված իրեղեն ապացույցների շարքին (տե՛ս, *Գագիկ Կոչոյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «ձանձապահային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/5059/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները,

որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: (...) ապացույցների հետազոտումը դատական ապացույցների **անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝** դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին *(տե՛ս, Ջաջուտի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ՝ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը)*:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույց իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույց իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանորմների վերլուծությանը, նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում: Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը (*լրե՛ս, Արդա Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/6199/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերը վիճարկելու պահանջի հիման վրա հարուցված դատական գործերի քննության շրջանակներում վիճարկվող որոշման հիմքում ընկած տեսանյութի կամ լուսանկարի ձեռքբերումն ունի էական նշանակություն, քանի որ այդ որոշման իրավաչափությունը պայմանավորված է նաև տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանությամբ:

Համադրելով վերը նշված իրավակարգավորումները կատարված վերլուծությունների հետ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերի հիմքում ընկած տեսանյութը կամ լուսանկարը նյութական աշխարհի այն օբյեկտներն են, որոնք իրենց առկայությամբ կարող են հիմնավորել կատարված իրավախախտման փաստը: Ընդ որում՝ նշված իրեղեն ապացույցները դատարանին ներկայացնելու պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերի իրավաչափությունը գնահատելու, այսինքն՝ գործի լուծման համար առանցքային նշանակություն ունեցող ապացույցն իրավախախտումն արձանագրած տեսանյութն է, որը ներկայացնելու պարտականությունը կրում է այդ տեսանյութի հիման վրա վարչական ակտն ընդունած վարչական մարմինը: Ըստ այդմ դատարանն այդ ապացույցի հետազոտման և գնահատման միջոցով պարզում է իրավախախտման փաստի առկայությունը կամ բացակայությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով վարչական իրավախախտման փաստը կարող է հաստատված համարվել վարչական ակտի հիմքում ընկած տեսանյութի հետազոտման և գնահատման արդյունքում, ինչը գործնականում հնարավոր է միայն այն պարագայում, երբ նշված տեսանյութը, որպես ապացույց, օրենքով սահմանված կարգով ներկայացվել է ապացուցման բեռը կրող վարչական մարմնի կողմից և գտնվում է գործում:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Զաքար Զերեջյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Որոշումը: Նշված վարչական ակտով Զաքար Զերեջյանը ենթարկվել

է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար, այն է՝ չի ենթարկվել լուսացույցի արգելող ազդանշանին **(գ.թ. 5)** :

Դատարանը 02.05.2017 թվականի որոշմամբ գործը նշանակել է դատաքննության և Ծառայությունից պահանջել է դատարան ներկայացնել «Վարչական տույժ նշանակելու մասին» 16.02.2017 թվականի թիվ 1705737118 որոշման համար հիմք հանդիսացած վարչական իրավախախտման փաստն ամրագրած տեսանյութը **(գ.թ. 15)**:

Ծառայության ներկայացուցիչը 20.07.2017 թվականին նշանակված դատաքննությանը չի ներկայացել, ինչպես նաև Դատարան չի ներկայացրել պահանջված իրեղեն ապացույցը:

Դատարանը բավարարել է Զաքար Զերեջյանի հայցը, պատճառաբանելով, որ Ծառայության կողմից չի ներկայացվել տեսանյութը, որով կապացուցվեր լուսացույցի արգելող ազդանշանին չենթարկվելու փաստը, ուստի դրա բացասական հետևանքները կրում է Ծառայությունը:

Վերաքննիչ դատարանը Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարել է, Դատարանի վճիռը բեկանել, փոփոխել և Զաքար Զերեջյանի հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ իրավախախտման փաստի բացահայտված չլինելու մասին Դատարանի հետևությունները հիմնավոր չեն: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի որակել նաև Դատարանի դիրքորոշումն առ այն, որ Ծառայության կողմից տեսանյութը չներկայացնելը հանգեցնում է հայցի բավարարմանը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (“ex officio”), հետևաբար Դատարանն իրավասու էր ինքնուրույն ուսումնասիրել անհատական ծածկագրով տեսանյութի բովանդակությունը և պարզել իրավախախտում կատարված լինելու կամ չլինելու հանգամանքը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ տեսանյութը տվյալ դեպքում հնարավորություն տալիս է հատկորոշել վարորդի արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների միջև ուղիղ համապատասխանությունը, ուստի պետք է փաստել, որ տրանսպորտային միջոցի վարորդի արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների միջև ուղիղ համապատասխանության առկայությունը կակկած չի հարուցում: Բսկ նշվածի արդյունքը, փաստորեն, հայցվորի կողմից իրավախախտում թույլ տրված լինելու անխցելի եզրահանգումն է: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտել է, որ իրավախախտման փաստի բացահայտված չլինելու մասին Վարչական դատարանի հետևությունները հիմնավոր չեն: Մինևույն ժամանակ, լուծելով դատական ծախսերի բաշխման հարցը, Վերաքննիչ դատարանը որոշել է Զաքար Զերեջյանից հոգուտ Ծառայության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Տվյալ դեպքում հայցվորին վերագրված վարչական իրավախախտման փաստն արձանագրած տեսանյութը, որպես գործի լուծման համար առանցքային նշանակություն ունեցող ապացույց, սույն վարչական գործում առկա չէ, հետևաբար գործնականում հնարավոր չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով հետազոտել և գնահատել գոյություն չունեցող ապացույցը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը դատողություններ է կատարել ենթադրյալ իրավախախտումն արձանագրած տեսանյութի մասին մասնավորապես արձանագրելով հետևյալը. «*Այսպես, վիճարկվող որոշման ընդունման համար հիմք ծառայելից վաղ րեեսանյութն ամրագրել է հետևյալ իրողությունը. Ծառայության հարկորոշած ճանապարհահարվածում հայցվորը, իր վարած տրանսպորտային միջոցով մոտենալով խաչմերուկին, րեեսանյարահանող սարքի ցուցիչով ժամը 15:33:39-ին մոտենալով Կանտններով նախարեւված «Կանգ-գիծ» գծանշաննր շարունակում է երթնելությունը հարելով խաչմերուկն իր նախընտրած ուղղությամբ այն պայմաններում, երբ իր ուղղության*

երթևեկությունը կարգավորող լուսացույցի վրա վստոված է կարմիր երթևեկությունն արգելող, ազդանշանը: Փաստորեն, սլոյսկ իրադրությունում հայցվորը, երթևեկությունը շարունակելով իր նախընտրած ուղղությամբ այդ ուղղությամբ երթևեկությունն արգելող կարմիր ազդանշանի պայմաններում, խախտում է Կանոնների 7-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջն առ այն, որ լուսացույցի կարմիր ազդանշանը, այդ թվում նաև թարթող, արգելում է երթևեկությունը: Ընդ որում, հայցվորի մարմանը վարքագիծն ակնհայտ է տեսանյութի ամրագրած սլոյսյաներով: Այսինքն, տեսանյութի ամրագրած սլոյսյաներն ուղղակիորեն ի ցույց են դնում հայցվորի կողմից իրավախախտում թույլ տրված լինելու փաստը»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է ապացույցների թույլատրելիության ընդհանուր և հատուկ կանոններին՝ արձանագրելով, որ ապացույցների թույլատրելիության ընդհանուր կանոնի համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն ապացուցողական ուժ չունեն և չեն կարող դրվել դատական ակտի հիմքում: Ապացույցների թույլատրելիության այս կանոնը վերաբերում է ապացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված ձևական-ընթացակարգային պահանջների պահպանվածությունը և ենթադրում է, (ա) աղբյուրի օրինականություն՝ ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից, (բ) ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները, (գ) պատշաճ ձևակերպում՝ ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն պատշաճ ձևակերպման, (դ) լիազորված սուբյեկտ՝ ապացույցը պետք է ստացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձի կողմից: Բացի վերոգրյալ ընդհանուր կանոնից, գոյություն ունի նաև ապացույցի թույլատրելիության հետևյալ հատուկ կանոնը. եթե օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված է, որ գործի հանգամանքները պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, ապա այդ հանգամանքները չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Այսինքն՝ որոշ դեպքերում ապացույցը կարող է անթույլատրելի համարվել նաև այն պատճառով, որ այն չի հանդիսանում տվյալ փաստական հանգամանքը հաստատելու համար օրենքով կամ այլ իրավական ակտերով կանխորոշված «անհրաժեշտ» ապացույց՝ այն որոշակի ապացույց, որով, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, կարող է հաստատվել տվյալ փաստական հանգամանքը (տե՛ս, Գագիկ Կոչոյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «ձևաապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎՆ/5059/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը):

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, ըստ էության, «հետազոտել է» սույն գործով վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած ենթադրյալ իրավախախտման փաստն արձանագրած տեսանյութը, սակայն որևէ դատողություն չի արել այն մասին, թե այդ ապացույցն ինչ եղանակով է «ձեռք բերվել»: Նման պայմաններում հնարավոր չէ գնահատել «հետազոտված» ապացույցի համապատասխանությունը թույլատրելիության պահանջներին, ինչպես նաև եզրահանգում անել տեսանյութի հիման վրա հայցվորի կողմից իրավախախտում թույլ տրված լինելու փաստը հաստատված համարելու Վերաքննիչ դատարանի դիրքորոշման վերաբերյալ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ Դատարանն իրավասու էր ինքնուրույն ուսումնասիրել անհատական ծածկագրով տեսանյութի բովանդակությունը և պարզել իրավախախտում կատարված լինելու կամ չլինելու հանգամանքը, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է՝ վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ վարչական դատավարությունում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը՝ ապացուցման բեռը, օրենսդրի կողմից դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի դատավարական պարտականություն, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված): Վարչական դատավարությունում ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական կյուրթի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը: Ըստ այդմ՝ գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու հարցը կարգավորող օրենսդրական նորմերը՝ ապացուցման բեռի բաշխման կանոնները, հանդես են գալիս այն կառուցակարգի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտին, ով պարտավոր է ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատող ապացույցները և պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

Միննույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի (վիճարկման հայց) հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի, որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Հետևաբար միջամտող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված բոլոր ապացույցների հետազոտումից հետո տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու դեպքում վարչական դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված) (*յոե՛ս, Ալեքսանդր Կարպովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ լուսացույցի արգելող ազդանշանին չենթարկվելու արարքի համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով վարչական մարմինը կրում է այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի, մասնավորապես՝ պատասխանատվության ենթարկված անձի կողմից լուսացույցի արգելող ազդանշանին չենթարկվելու փաստի,

ապացուցման բեռը: Հետևաբար նշված փաստը հաստատող ապացույցը ներկայացնելու պարտականության կրողն անվիճելիորեն վարչական մարմինն է: Ընդ որում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը վարչական մարմնի վրա է դրել վարչական վարույթի բոլոր նյութերը ներկայացնելու պարտականությունը, ինչը համահունչ է ոչ միայն ապացուցման բեռը սահմանող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջների հետ, այլ նաև վարչական արդարադատության էության և բովանդակության հետ, որի ներդրումը Հայաստանի Հանրապետությունում հետապնդել է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 25-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 28-րդ հոդվածի համակարգված վերլուծության հիման վրա փաստել է, որ գործով օբյեկտիվ եզրահանգման գալու անհրաժեշտությամբ պայմանավորված դատարանը պետք է ձեռնարկի համարժեք միջոցներ անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու համար: Ընդ որում, ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանը կայացնում է որոշում առանձին դատական ակտի ձևով՝ դրանում նշելով նաև ապացույցները դատարան ներկայացնելու համար իր սահմանած ժամկետը: Նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «(...) Վարչական դատարանը սույն դեպքում Ծառայությունից ապացույց պահանջելը պայմանավորել է «Վարչական գործը դատարանության նշանակելու մասին» 2017 թվականի մայիսի 02-ի որոշման ընդունմամբ, որում էլ մարմնանշել է, թե ինչ ապացույց է պահանջել Ծառայությունից միաժամանակ չվկայակոչելով, թե ինչ ժամկետում է պարասահանողը պարտավոր ներկայացնելու համապարասիսան ապացույցը: Սա նշանակում է, որ Վարչական դատարանը թույլ է տվել դատական սիսայ, որը հանգեցրել է գործի սիսայ լուծմանը:

(...) Վարչական դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 27-րդ հոդվածների պահանջներին համապարասիսան բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, և չկիրառելով դրանց նկատմամբ կիրառելի իրավական ակտերը՝ եկել է սույն գործի լուծման վերաբերյալ սիսայ եզրահանգման»:

Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը, Դատարանին վերագրելով գործում եղած բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ գնահատելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի պահանջների խախտում, անտեսել է այն հանգամանքը, որ գործում առկա չէ թույլատրելի ապացույց, մասնավորապես ենթադրյալ իրավախախտման փաստն արձանագրած տեսանյութը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու համար համարժեք միջոցներ ձեռնարկելու դատարանի պարտականությունն սահմանող օրենսդրական իրավակարգավորումները՝ գտնելով, որ Դատարանն իրավասու էր ինքնուրույն ուսումնասիրել անհատական ծածկագրով տեսանյութի բովանդակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած իր որոշումներում անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ նշված իրավակարգավորումից բխում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու („ex officio“) սկզբունքը դատական ապացուցման գործընթացում, մասնավորապես, դրսևորվում է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ ապացույցներ պահանջելու վարչական դատարանի պարտականությամբ (րե՛ս, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքը վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկն է: Քննարկվող վարչադատավարական սկզբունքի էությունն օրենսդիրը բացահայտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածում, որի բովանդակությունը հանգում է հետևյալին.

վարչական դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով, առարկություններով.

վարչական դատարանը պարտավոր է՝

իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար,

պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները,

մատնանշել հայցադիմումներում առկա ձևական սխալները,

առաջարկել ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու՝ վարչական դատարանին ուղղված օրենսդրական պահանջը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը:

Վերոգրյալը, սակայն, չի կարող մեկնաբանվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ և 18-րդ հոդվածներով ամրագրված դատավարական կանոններից անջատ:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, ներառյալ՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կողմերը պետք է բարեխղճորեն օգտվեն իրենց դատավարական իրավունքներից և բարեխղճորեն կատարեն իրենց դատավարական պարտականությունները:

Վերոգրյալ իրավանքների վերլուծությունից հետևում է, որ դատավարության մասնակիցների համար օրենսդիրը երաշխավորվել է քննվող գործի վերաբերյալ իրենց դիրքորոշումները ներկայացնելու լիարժեք հնարավորություն, միաժամանակ վերջիններիս ծանրաբեռնելով իրենց դատավարական իրավունքներից բարեխղճորեն օգտվելու և իրենց դատավարական պարտականությունները բարեխղճորեն կատարելու պարտականությամբ: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է նաև դատավարական պարտականությունները կատարելու ընդհանուր և հատուկ կանոններ՝ վիճարկման հայցերով

վարչական մարմնի վրա դնելով վարչական ակտի հիմքում ընկած հանգամանքների ապացուցման բեռը: Հետևաբար վարչական մարմինը, իրազեկվելով վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի մասին, պարտավոր է կատարել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իր պարտականությունը և դատարան ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, այդ թվում նաև վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած բոլոր ապացույցները: Ընդ որում, այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքներն օրենսդիրը դրել է ապացուցման բեռը կրող կողմի վրա, որը վիճարկման հայցերով վիճարկվող վարչական ակտն ընդունած վարչական մարմինն է, հետևաբար վերջինիս կողմից ապացույցներ ներկայացնելու օրենքով ամրագրված իր պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում միայն դատարանը ստիպված է ձեռնարկել համարժեք միջոցներ վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած բոլոր ապացույցները ձեռք բերելու ուղղությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է ապացույցներ ձեռք բերելու համար համարժեք միջոցներ ձեռնարկելու դատարանի կողմից կիրառման ենթակա գործիքակազմը: Այսպես. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իրավասու է կայացնելու որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով, **դրանք պահանջելով** դատավարության այն մասնակիցներից, պետական և տեղական ինքնակառավարման այն մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև դատավարությունում չներգրավված ֆիզիկական և իրավաբանական այն անձանցից, որոնց ազդեցության ոլորտում են դրանք կամ պետք է լինեն՝ սահմանելով ժամկետ դրանք դատարան ներկայացնելու համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանի պահանջները պարտադիր են կատարման համար նրա սահմանած ժամկետում: Այդ ժամկետում կատարման անհնարինության դեպքում պահանջի հասցեատերը պարտավոր է գրավոր դիմել դատարան՝ հայցելով կատարման նոր ժամկետ կամ հայտնելով որոշման կատարման անհնարինության մասին՝ նշելով անհնարինության պատճառները: Դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել նոր ժամկետ կամ վերացնել նախկինում ընդունված որոշումը:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցները ձեռք բերելու նպատակով դատարանը կայացնում է որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով, **դրանք պահանջելով** դատավարության այն մասնակիցներից որոնց ազդեցության ոլորտում են դրանք կամ պետք է լինեն՝ սահմանելով ժամկետ դրանք դատարան ներկայացնելու համար: Ընդ որում, դատարանի պահանջները պարտադիր են կատարման համար նրա սահմանած ժամկետում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը 02.05.2017 թվականի որոշմամբ գործը նշանակել է դատաքննության: Նույն որոշմամբ Դատարանը Ծառայությունից պահանջել է դատարան ներկայացնել «Վարչական տույժ նշանակելու մասին» 16.02.2017 թվականի թիվ 1705737118 որոշման համար հիմք հանդիսացած վարչական իրավախախտման փաստն ամրագրած տեսանյութը (գ.թ. 15): Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանն առանձին ակտի տեսքով կայացված որոշմամբ չի սահմանել պահանջվող ապացույցը՝ թիվ 1705737118 որոշման համար հիմք հանդիսացած վարչական իրավախախտման փաստն ամրագրած տեսանյութը դատարան ներկայացնելու ժամկետ, սակայն նույն որոշմամբ Ծառայությանը տեղեկացրել է դատական նիստի անցկացման ժամանակի և վայրի մասին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրելով դատավարության մասնակիցների դատական նիստին ներկա գտնվելու իրավունք, պատշաճ երաշխիքներ է նախատեսել նաև այդ իրավունքի իրացման համար: Ըստ այդմ, դատարանը պարտավոր է պատշաճ ձևով ծանուցել դատավարության մասնակիցներին դատական նիստի անցկացման ժամանակի և վայրի մասին: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ դատական նիստին ներկա գտնվելու իրավունքի իրացման սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում

է դատավարության մասնակիցներին և նրանք են որոշում իրենց իրավունքի իրացման եղանակն ու կարգը: Այդուհանդերձ դատական նիստին ներկա լինելու իրավունքի իրացումից հրաժարվելը, դատավարության մասնակցին չի ազատում դատավարական պարտականությունները կատարելու պարտականությունից: Այլ կերպ ասած՝ եթե դատավարության մասնակիցը չի ցանկանում ներկա գտնվել դատական նիստին, ապա վերջինս չի կարող չկատարել կամ ոչ պատշաճ կատարել օրենքով և դատարանի որոշմամբ իր վրա դրված դատավարական պարտականությունները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով 20.07.2017 թվականին նշանակված դատաքննությանը Ծառայության ներկայացուցիչը չի ներկայացրել, ինչպես նաև Դատարան չի ներկայացրել պահանջված իրեղեն ապացույցը: Փաստորեն Ծառայությունը, կրելով սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած փաստերի մասով ապացուցման բեռը, ցուցաբերել է դատավարական անգործություն և չի կատարել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչական գործը դատաքննության նշանակելու մասին» Դատարանի 02.05.2017 թվականի որոշմամբ սահմանված պարտականությունը, այն է՝ դատարան չի ներկայացրել թիվ 1705737118 որոշման համար հիմք հանդիսացած վարչական իրավախախտման փաստն ամրագրած տեսանյութը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև Դատարանն առանձին ակտի տեսքով կայացված որոշմամբ չի սահմանել պահանջվող ապացույցը՝ թիվ 1705737118 որոշման համար հիմք հանդիսացած վարչական իրավախախտման փաստն ամրագրած տեսանյութը դատարան ներկայացնելու ժամկետ, այդուհանդերձ միայն այդ հանգամանքով պայմանավորված իրավաչափ չի կարող գնահատվել այդ ապացույցը չներկայացնելու Ծառայություն գործողությունը, քանի որ վերջինս, կրելով սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած փաստերի մասով ապացուցման բեռը, նշված ապացույցը պարտավոր էր դատարան ներկայացնել առնվազն դատաքննության ժամանակ: **Ընդ որում, ինչպես վերը նշվեց, ապացույցներ ներկայացնելու Ծառայության պարտականությունն ամրագրված է օրենքով, հետևաբար վերջինս իր պարտականությունը պարտավոր էր կատարել բարեխղճորեն՝ չսպասելով նույնիսկ ապացույց պահանջելու մասին Դատարանի կողմից առանձին ակտի ձևով որոշում կայացնելուն:**

Ավելին, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ծառայության կողմից դատավարական անգործությունը դրսևորվել է նաև հայցադիմումի պատասխան ներկայացնելու պարտականությունը չկատարելով: Այսպես.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վարչական դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատասխանի հետ պատասխանողը, ի թիվս այլնի, ներկայացնում է նաև իր տիրապետման ներքո առկա գրավոր կամ իրեղեն ապացույցները:

Վերոգրյալ իրավանդումների վերլուծությունից հետևում է, որ հայցադիմումի պատասխան ներկայացնելն ու դրա հետ մեկտեղ գրավոր կամ իրեղեն ապացույցները ներկայացնելն օրենսդիրը սահմանել է որպես պատասխանող կողմի պարտականություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» Դատարանի 09.03.2017 թվականի որոշումը Ծառայությանն է ուղարկվել թիվ ԴԴ-9-11354 գրությամբ, որով միաժամանակ հայտնվել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու Ծառայության պարտականության և այդ պարտականությունը չկատարելու իրավական հետևանքների մասին: Նշված գրությունը Ծառայությունն ստացել է 20.03.2017 թվականին (գ.թ. 13-14), սակայն օրենքով սահմանված ժամկետում չի կատարել հայցադիմումի պատասխան ներկայացնելու և իր տիրապետման ներքո առկա գրավոր կամ իրեղեն ապացույցները դատարան ներկայացնելու պարտականությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայությունը, կրելով սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած փաստերի մասով ապացուցման բեռը, ցուցաբերել է դատավարական անգործություն և «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» Դատարանի որոշումը ստանալու պահից մինչև գործի դատաքննության ավարտը չի կատարել ինչպես օրենքով, այնպես էլ Դատարանի 02.05.2017 թվականի որոշմամբ սահմանված պարտականությունը, այն է՝ օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել հայցադիմումի պատասխան՝ դրան կցելով իր տիրապետման ներքո առկա գրավոր կամ իրեղեն ապացույցները, այդ թվում նաև թիվ 1705737118 որոշման համար հիմք հանդիսացած վարչական իրավախախտման փաստն ամրագրած տեսանյութը, ինչի հետևանքով վարչական իրավախախտման փաստը մնացել է վիճելի, որի բացասական հետևանքները Դատարանն իրավացիորեն դրել է Ծառայության վրա, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումն այն մասին, որ Դատարանն իրավասու էր ինքնուրույն ուսումնասիրել անհատական ծածկագրով տեսանյութի բովանդակությունը: Անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու համար համարժեք միջոցներ ձեռնարկելու օրենսդրական իրավակարգավորումները Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերաբերում են **ապացույցներ պահանջելու** վարչական դատարանի պարտականությանը, ինչից հետևում է, որ դատարանը դատավարության մասնակիցներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև դատավարությունում չներգրավված ֆիզիկական և իրավաբանական անձանցից, որոնց ազդեցության ոլորտում են կամ պետք է լինեն այդ ապացույցները, առանձին դատական ակտի տեսքով կայացված որոշմամբ պահանջում է ներկայացնել դատարան, այլ ոչ թե այդ անձանց փոխարեն անհատական ծածկագրով տեսանյութի բովանդակությունն ինքնուրույն ուսումնասիրելուն: Ընդ որում, տեսանյութը, որպես իրեղեն ապացույց, հանդիսանալով նյութական աշխարհի օբյեկտ, պետք է ներկայացված լինի օրենքով սահմանված կարգով, առկա լինի գործի նյութերում և գնման միջոցով հետազոտվի դատաքննության ընթացքում: Մինևն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերի միջոցով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերի իրավաչափությունը գնահատելու, այսինքն՝ գործի լուծման համար առանցքային նշանակություն ունեցող ապացույցի, այն է՝ իրավախախտումն արձանագրած տեսանյութի գործում առկա լինելու օրենսդրական պահանջը կարևորվում է նաև նշված վեճերով վարչական դատարանի կայացրած դատական ակտերի բողոքարկման դեպքերում, քանի որ անհատական ծածկագրով տեսանյութի <https://www.police.am/> կայքում պահպանման «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված ժամկետներով պայմանավորված վերադաս դատական ատյաններում դրա ուսումնասիրումը՝ այդ ապացույցը վերացված լինելու կամ տեխնիկական խնդիրների պատճառով կարող է անհնար լինել, ինչի հետևանքով հնարավոր չի լինի նաև եզրահանգում անել վարչական իրավախախտման փաստի առկայության կամ բացակայության մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով վարչական դատավարությունում ապացուցման բեռի բաշխման կանոնների, այդ կանոններին համապատասխան ապացույցներ ներկայացնելու օրենքով սահմանված պարտականությունը Ծառայության կողմից կատարված չլինելու, գործի նյութերում իրեղեն ապացույցի բացակայության փաստերը, եզրահանգել է, որ Դատարանն իրավասու էր ինքնուրույն ուսումնասիրել անհատական ծածկագրով տեսանյութի բովանդակությունը, դատավարության մասնակիցներից մեկին, տվյալ դեպքում վարչական մարմնին, ըստ էության, ազատելով ապացույցներ ներկայացնելու պարտականության կատարումից, այդ թվում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասով

սահմանված դեպքում նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված՝ դատական ծախսերի եռապատիկի չափով դատական ծախսերի հատուցման պարտականությունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավախախտման փաստը սույն գործով ապացուցված չլինելու հիմքով Ծառայության թիվ 1705737118 որոշումն անվավեր ճանաչելով՝ Դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

2) Քննելով վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- արդյո՞ք վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարանն ղեկավարում է համար սահմանված պետական փութից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա կարող է դրվել պարտախախտող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական փութի փոխհատուցման պարտականություն այն դեպքում, երբ այդ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գործի ելքը փոփոխվել է ի վնաս հայցվորի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է (...) մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» ենթակետի 6-րդ պարբերության համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ հանապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը դատարանն ղեկավարում է համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատման ձևով օրենքի ուժով սահմանված արտոնության՝ դատական բողոքարկման փուլերում կիրառման առանձնահատկություններին անդրադարձել է *Գագիկ Ավետիսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎՂ/1390/05/17 վարչական գործով 30.11.2018 թվականի որոշմամբ*: Նշված որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում խնդրահարույց է դատական ծախսերի բաշխման հարցն այն իրավիճակում, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկման պահանջի հիման վրա հարուցված դատական գործը վարչական դատարանում լուծվում է հայցվորի օգտին, վարչական դատարանի դատական ակտը վերադաս դատական

ատյան է բողոքարկվում ոչ թե հայցվորի, այլ պատասխանող վարչական մարմնի կողմից, և այդ բողոքի քննության արդյունքում գործի ելքը փոխվում է ի վնաս հայցվորի: Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել իրավական դիրքորոշումներ ձևավորել հենց այդ խնդրահարույց իրավիճակի վերաբերյալ՝ հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՍԴՌ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանը նշված որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի գծով արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերը, որը չի կարող ներառել այդ արտոնությամբ նախատեսված պետական տուրքի վճարը: Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» ենթակետի 6-րդ պարբերությունը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում:

Նպատակ ունենալով ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 10.07.2018 թվականի թիվ ՍԴՌ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները ներդնել վարչական գործերով իրավակիրառ պրակտիկայի հիմքում՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է հետևյալ եզրակացության. եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վերաքննիչ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը վերաքննիչ վարչական դատարանի կողմից մերժվում է, ապա վերջինս չպետք է կրի պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի հատուցման պարտականություն: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա չի կարող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ այդ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվորի փոխվելու հանգամանքից: Այդ դեպքում վերաքննիչ վարչական դատարանը պարտավոր է վերաքննիչ բողոք բերելու համար պատասխանող վարչական մարմնի կողմից վճարված պետական տուրքի հարցը համարել լուծված (*լրե՛ս, Գազիկ Ավետիսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/1390/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմանը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Զաքար Զերեջյանը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» ենթակետի 6-րդ պարբերության հիմքով ազատված է Որոշման որպես անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի, վիճարկման հայցով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրք վճարելու պարտականությունից:

Դատարանը, ինչպես վերը նշվեց, բավարարել է Զաքար Զերեջյանի հայցը՝ Որոշումը ճանաչելով անվավեր:

Դատարանի վճիռը վերաքննության կարգով բողոքարկել է պատասխանող Ծառայությունը: Ծառայությունն ազատված չէ վերաքննիչ բողոքի համար պետական տուրք

վճարելու պարտականությունից և վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարել է պետական տուրք՝ 10.000 ՀՀ դրամի չափով: Վերաքննիչ դատարանը, բավարարելով Ծառայության վերաքննիչ բողոքը, բեկանել ու փոփոխել է Դատարանի վճիռը և հայցը մերժել է: Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ Վերաքննիչ դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի կիրառմամբ Ջաքար Ջերեջյանից հօգուտ Ծառայության բռնագանձել է 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված պետական տուրքի փոխհատուցում:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը Ծառայության կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի հատուցման պարտականությունը դրել է պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված ֆիզիկական անձի՝ Ջաքար Ջերեջյանի վրա:

Մինչդեռ, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՍԴՌ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում սույն որոշմամբ արված իրավական հետևությունները և նկատի ունենալով, որ սույն գործով վերաքննիչ բողոքը փոստային առաքմամբ Ծառայությունը ներկայացրել է **28.08.2017 թվականին**՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված հայցվոր Ջաքար Ջերեջյանի վրա չի կարող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվոր Ջաքար Ջերեջյանի փոխվելու հանգամանքից, քանի որ վարչական իրավախախտումների վերաբերյալ հանապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշումների դեմ բողոքներով դատարաններում պետական տուրքի վճարումից ֆիզիկական անձինք ազատվում են դատական բողոքարկման բոլոր փուլերում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված հայցվոր Ջաքար Ջերեջյանի վրա պետական տուրք վճարելու (փոխհատուցելու) պարտականություն ղնելու փոխարեն, պարտավոր էր վերաքննիչ բողոք բերելու համար պատասխանող Ծառայության կողմից վճարված պետական տուրքի հարցը համարել լուծված:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության

արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Զաքար Զերեջյանը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» ենթակետի 6-րդ պարբերության ուժով ազատված է վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի վճարման պարտականությունից: Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Զաքար Զերեջյանը տվյալ դեպքում վճռաբեկ բողոքի համար պետական տուրք չի վճարել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.06.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 03.08.2017 վճռին:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱՆԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԳ/10036/05/18
Ա. Թովմասյան
Կ. Ավետիսյան
Կ. Բաղդասարյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/10036/05/18**
2021թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 27-ին
գրավոր ընթացակարգով քննելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության
«Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռա-
բեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.12.2019 թվականի որոշման դեմ՝
ըստ հայցի Գևորգ Բաղդասարյանի ընդդեմ Ծառայության՝ 31.08.2018 թվականի թիվ ԱԴ-
672261 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Բ Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գևորգ Բաղդասարյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծա-
ռայության 31.08.2018 թվականի թիվ ԱԴ 672261 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Այվազյան) (այսուհետ՝ Դատարան)
30.11.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
05.12.2019 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է, և
Դատարանի 30.11.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը (ներկայացուցիչ Ժի-
րայր Կարապետյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերն անհիմն են, չեն համապատասխանում գործում եղած ապացույցներին և հակասում են ՀՀ օրենսդրությանը: Դրանք կայացվել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտումներով, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծմանը:

Սույն գործով ինչպես հայցվորը, այնպես էլ ստորադաս դատարաններն ընդունում են իրավախախտման փաստի առկայությունը, սակայն դա կապում են այլ մարմնի գործողությունների հետ, ինչը վարչական պատասխանատվությունից ազատելու հիմք հանդիսանալ չի կարող:

Տվյալ դեպքում անձը պետք է և կարող էր գիտակցել, որ տրանսպորտային միջոցը վարում է ընդհանուր օգտագործման ճանապարհով և պետք է ունենա գործող ԱՊՊԱ պայմանագիր: Միաժամանակ, եթե արարքը պայմանավորված է եղել այլ անձանց կամ մարմինների գործողություններով, ապա անձը գրկված չէ հետադարձ պահանջի իրավունքով դիմել այդ անձանց կամ մարմինների դեմ՝ իր կրած վնասների հատուցման հայցով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.12.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության I Գումարտակի VII դասակի տեսուչ Հրայր Սիմոնյանի կողմից 31.08.2018 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, որի համաձայն՝ WOLKSVAGEN մակնիշի B007MP21 համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը ժամը 21:50-ին Սայաթ-Նովա պողոտայում երթնելել է առանց գործող ԱՊՊԱ պայմանագրի, որը նախատեսված է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն արձանագրության համաձայն՝ վարորդը հրաժարվել է այն ստորագրելուց, բացատրություն տալուց և որոշման պատճենը ստանալուց **(գ.թ. 22)**.

2) Նշված արձանագրության հիման վրա Ծառայության կողմից կազմվել է թիվ ԱԳ 672261 որոշումը, որով Գևորգ Բաղդասարյանը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամի չափով **(գ.թ. 5)**:

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և կերպահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճատարանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնել հետևյալ իրավական հարցադրմանը.

- արդյո՞ք այլ պետական մարմինների կողմից լիազորությունների ենթադրյալ ոչ պարզաձև իրականացմանը և դրա արդյունքում անձի՝ օրենքով սահմանված իրավական պարտավանության մասին ենթադրաբար չճանաչելը հիմք են արարքի կատարման մեջ անձի մեղքը բացատրելու և վերջինիս վարչական պարասխանատվության չենթարկելու համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտում. արդյո՞ք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանդումների համակցված վերլուծությանը, իր նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ և ղեկավարվելով օրենքով՝ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները (*լրեն, Սուրեն Միտինյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգույշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին (*լրեն, Արսեն Խաչատրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/4936/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Նմանատիպ իրավական դիրքորոշում արտահայտել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 12.10.2010 թվականի թիվ ՄԴՈ-920 որոշմամբ նշելով, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Հետևաբար՝ մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասով վարչական պատասխանատվություն է նախատեսել առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով վարելու համար: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասում նկարագրված զանցանքի ոտնձգության օբյեկտը ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում օրենսդրությամբ սահմանված իրավակարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների ամբողջությունն է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խնդրո առարկա իրավանորմով նախատեսված պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ է զանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող նշված պայմանների միաժամանակյա առկայությունը, այն է՝ տրանսպորտային միջոց վարելը Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով և տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագրի բացակայությունը: Այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ գործող ԱՊՊԱ պայմանագրի ունենալու իրավական պարտականության մասին ծանուցված լինելն օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ չէ, ուստի այն չի կարող հանդիսանալ վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ խնդրո առարկա իրավախախտման սուբյեկտը հակաիրավական, մեղավոր արարքը կատարած անձն է, տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով առանց գործող ԱՊՊԱ պայմանագրի տրանսպորտային միջոցը վարողը:

Անդրադառնալով զանցակազմի սուբյեկտիվ կողմին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն իրավախախտի հոգեբանական վերաբերմունքն է հակաիրավական արարքի և դրա հետևանքների նկատմամբ, որը, որպես ընդհանուր կանոն, կարող է արտահայտվել մեղքի երկու ձևով էլ, ինչպես դիտավորության, այնպես էլ անզգուշության: Վարչական իրավախախտման փաստակազմից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է հենց իրավախախտման փաստի բացակայությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե անձը զիտակցում է, որ տրանսպորտային միջոցը վարում է ՀՀ տարածքում գտնվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհով **առանց** տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության **պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու**, ապա առկա են բոլոր անհրաժեշտ և բավարար պայմաններն անձի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական պատասխանատվությունը կիրառելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում անձի մեղքի առկայությունը կամ բացակայությունը չի կարող պայմանավորված լինել օրենքով սահմանված

իրավական պարտականության մասին այլ պետական մարմինների կողմից ծանուցված լինելու կամ չլինելու հանգամանքով: Վճռաբեկ դատարանը հավելում է, որ այս դեպքում գործում է «*օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից*» («*ignorantia non est argumentum*») հանրահայտ սկզբունքը: Այսինքն՝ այլ պետական մարմինների կողմից լիազորությունների ենթադրյալ ոչ պատշաճ իրականացնելը և դրա արդյունքում անձի օրենքով սահմանված իրավական պարտականության մասին ենթադրաբար չծանուցելը հիմք չեն արարքի կատարման մեջ անձի մեղքը բացառելու և վերջինիս վարչական պատասխանատվության չենթարկելու համար:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարահանմ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Գևորգ Բաղդասարյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 31.08.2018 թվականի թիվ ԱԴ 672261 որոշումը, այն հիմնավորմամբ, որ վարչական իրավախախտման մեջ բացակայել է իր մեղքի առկայությունը, իսկ վարչական ակտը կայացվել է պետական մարմինների կողմից իրենց պաշտոնական լիազորությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում: Նշված վարչական ակտով Գևորգ Բաղդասարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարման համար, այն է՝ տրանսպորտային միջոցը վարել է չունենալով գործող ԱՊՊԱ պայմանագիր:

Դատարանը 30.11.2018 թվականի վճռով հայցը բավարարել է՝ վարչական ակտը ճանաչել է անվավեր՝ այն օրենսդրական պահանջների խախտմամբ կայացված լինելու հիմքով, պատճառաբանելով, որ Գևորգ Բաղդասարյանը մաքսային մարմինների կողմից չի նախազգուշացվել պարտադիր ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պահանջի մասին և անձի կողմից ծանուցված չլինելու կասկածի առկայության պայմաններում, վարչական մարմինները չի ձեռնարկել բավարար միջոցներ պարզելու համար անձի մեղքի առկայությունը: Արդյունքում՝ Դատարանը գտել է, որ վարչական վարույթի նյութերի ուսումնասիրությունից չի բխում անձի մեղավոր լինելու հանգամանքը, ուստի անձը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության:

Վերաքննիչ դատարանը Ծառայության վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ վարչական մարմինը պարտավոր էր պարզել մաքսային մարմնի կողմից հայցվորին ՀՀ տարածքում ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականության մասին ծանուցելու փաստը, քանի որ միայն ծանուցման և դրա վրա հայցվորի ստորագրության առկայությամբ կարող էր հաստատվել հայցվորի մեղքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավախախտում կատարելու մեջ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Տվյալ դեպքում Գևորգ Բաղդասարյանը տրանսպորտային միջոցով մուտք է գործել Հայաստանի Հանրապետություն, և վերջինիս պնդմամբ մաքսային մարմինների կողմից չի նախազգուշացվել պարտադիր ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պահանջի մասին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերջինս տրանսպորտային միջոցը վարել է Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով՝ առանց գործող ԱՊՊԱ պայմանագրի:

Ծառայության 31.08.2018 թվականի թիվ ԱԴ 672261 որոշմամբ Գևորգ Բաղդասարյանը ենթարկվել է վարչական տուգանքի՝ 100.000 ՀՀ դրամի չափով՝ առանց տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալով՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելու համար:

Նշված վարչական ակտը անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջի քննությունն իրականացնելիս՝ Դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը ելակետային են համարել խնդրո առարկա իրավախախտման կատարման մեջ հայցվոր Գևորգ Բաղդասարյանի մեղքի առկայության հարցի պարզումը, որը պայմանավորել են մաքսային մարմնի կողմից իր պարտականության կատարման թերացման հետ: Մասնավորապես՝ ստորադաս դատարանները կարևորել են մաքսային մարմնի՝ տրանսպորտային միջոցը վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելիս ԱՊՊԱ պայմանագրի կնքման վերաբերյալ գրավոր ծանուցման տրամադրման պարտականության ենթադրյալ ոչ պատշաճ կատարումը (ՀՀ կառավարության 12.05.2011 թվականի «Հայաստանի հանրապետության պետական սահմանի ռեժիմ սահմանելու մասին» թիվ 702-Ն որոշում):

Մինչդեռ վերոշարադրյալ իրավական և փաստական հանգամանքների համակարգված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Ստորադաս դատարանները քննարկման առարկա են դարձրել սույն վեճի լուծման համար նշանակություն չունեցող հարց՝ մաքսային մարմնի գործողությունները և թերացումները, և անտեսել են այն հանգամանքը, որ հայցվոր Գևորգ Բաղդասարյանի մեղավորությունն օրենքով իր վրա դրված ԱՊՊԱ պայմանագրի կնքելու պարտականության չկատարման մեջ պայմանավորված չէ այլ վարչական մարմինների կողմից ծանուցման պարտականության կատարման կամ չկատարման հանգամանքով:

Հետևաբար, հիմք ընդունելով մաքսային մարմնի կողմից չծանուցելու արդյունքում թույլ տված թերացումը, և այն անուղղակիորեն կապելով վարչական ակտն օրենքի խախտմամբ կայացված լինելու հետ, ստորադաս դատարանները կայացրել են չհիմնավորված դատական ակտեր: Փաստորեն ստորադաս դատարանները գործի համար ոչ էական հանգամանքները դարձնելով ելակետ և դնելով գործի լուծման հիմքում՝ եկել են ոչ իրավաչափ եզրահանգման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավախախտումը կատարելու մեջ Գևորգ Բաղդասարյանի մեղավորությունը առկա չլինելու հիմքով Ծառայության որոշումն անվավեր ճանաչելով՝ Դատարանը եկել է ոչ իրավաչափ եզրահանգման, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշում, որ եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վերաքննիչ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը վերաքննիչ վարչական դատարանի կողմից մերժվում է, ապա վերջինս չպետք է կրի պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի հատուցման պարտականություն (յրեն, *Գազիկ Ավերիսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/1390/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով, որ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով օրենքի ուժով ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերը նշված իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև այն դեպքում, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վճռաբեկ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը ստորադաս դատարանի դատական ակտի բեկանման և փոփոխման արդյունքում մերժվում է վճռաբեկ դատարանի կողմից: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա չի կարող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ այդ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվորի փոխվելու հանգամանքից (յրեն, *Քրիստինա Գևորկյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6661/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2020 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով, որ Գևորգ Բաղդասարյանը իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է եղել սույն գործով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից, և նրա կողմից ներկայացված հայցը ենթակա է

մերժման, իսկ սույն գործով վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար Ծանայության կողմից վճարված օրենքով սահմանված չափով պետական տուրքի փոխհատուցման պարտականությունը չի կարող դրվել Գևորգ Բաղդասարյանի վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմում, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.12.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Գևորգ Բաղդասարյանի հայցը մերժել:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԳ/6527/05/18
Կ. Ավետիսյան
Կ. Բաղդասարյան
Ա. Թովմասյան

Վարչական գործ թիվ ՎԳ/6527/05/18
2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 19-ին
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստի-
կանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ
վարչական դատարանի 18.03.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արծրուն Խաչա-
տրյանի ընդդեմ Ծառայության Ծառայության 11.04.2018 թվականի թիվ ԱԴ-550128 որո-
շումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Արծրուն Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառա-
յության 11.04.2018 թվականի թիվ ԱԴ-550128 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 13.12.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.03.2020 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.12.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ 11.04.2018 թվականին ժամը 13:20-ին Ծառայության տեսուչի կողմից կազմված «Վարչական իրավախախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ Արծրուն Խաչատրյանը թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների խախտում և Ձորափի փողոցում ժամը 13:15-ին չի կատարել «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը: Նվաճ արձանագրության «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» հատվածում հայցվորը ստորագրել է՝ առանց որևէ առարկության:

Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, չի համապատասխանում գործում եղած ապացույցներին և հակասում է ՀՀ օրենսդրությանը, քանի որ այն կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտումներով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.03.2020 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության 1-ին գումարտակի 2-րդ դասակի տեսուչ Գ. Սարգսյանի 11.04.2018 թվականի ժամը 13:20-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության համաձայն՝ Արծրուն Խաչատրյանը Ձորափի փողոցում ժամը 13:15-ին չի կատարել «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը: Նույն արձանագրության «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» հատվածում առկա է Արծրուն Խաչատրյանի ստորագրությունը (**գ.թ. 31**):

2) Ծառայության 11.04.2018 թվականի վարչական իրավախախտման գործով թիվ ԱԴ-550128 որոշմամբ Արծրուն Խաչատրյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամ գումարի չափով այն բանի համար, որ վերջինս չի կատարել «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը (**գ.թ. 9**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված արձանագրության՝ որպես վարչական իրավախախտման առկայության փաստը հաստատող բավարար ապացույց որակելու հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերևյալ իրավական հարցադրմանը. վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտում կատարած անձի ներկայությամբ կազմելու և այն վերջինիս կողմից առանց որևէ առարկության սրտագրելու դեպքում կարող է արդյոք համարվել վարչական իրավախախտման առկայության փաստը հաստատող բավարար ապացույց:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում (...) մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործը օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ **վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ (...):**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը (...) (2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում, արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ փաստել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրները: Դրանցից են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանկիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում ապացույցներ են համարվում այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով հաստատում են գործի հանգամանքները, վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Սակայն ցանկացած փաստական տվյալ չէ, որ կարող է համարվել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի ապացույց: Փաստական տվյալները կարող են համարվել ապացույց, եթե առաջին բովանդակում են տվյալներ վարչական իրավախախտման կամ դրա բացակայության մասին, տվյալ անձի մեղավորության կամ անմեղության մասին, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների մասին, և երկրորդ՝ այդ փաստական տվյալների բացահայտման, հավաքագրման և ձևակերպման գործընթացները պետք է համապատասխանեն օրենսդրության պահանջներին: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմինն պարզելու գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանորմների համակցված վերլուծությանը, գտել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ և ղեկավարվելով օրենքով գնահատի գործով ձեռք բերված ապացույցները: Վերը նշվածն իրականացնելու համար համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս պետք է պատշաճ ձևով լուծի նաև հետևյալ հարցը՝ արդյո՞ք օրենքին համապատասխան են կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը (*տե՛ս, Սուրեն Միմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարույթի ժամանակ օրենսդրի կողմից առաջադրված խնդիրների լուծման համար վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննող համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ յուրաքանչյուր գործ քննության նախապատրաստելիս պարտավոր է պարզել, ի թիվս այլնի, նաև այն հարցը, թե արդյո՞ք ճիշտ է կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը:

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու ընդհանուր կանոնները, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները նախատեսված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ և 255-րդ հոդվածներով:

Այսպես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում է՝ դրա կազմելու ամսաթիվն ու տեղը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը, տեղեկություններ խախտողի անձի մասին. վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը, այն նորմատիվ ակտը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ իրավախախտման համար. վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան. խախտողի բացատրությունը. գործի լուծման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ: Արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը. վկաների և տուժողների առկայության դեպքում արձանագրությունը կարող են ստորագրել նաև այդ անձինք: Եթե իրավախախտում կատարած անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, դրանում այդ մասին նշում է կատարվում: Իրավախախտում կատարած անձն իրավունք ունի ներկայացնելու արձանագրությանը կցվող բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, ինչպես նաև շարադրելու այն ստորագրելուց իր հրաժարվելու շարժառիթները: Արձանագրություն կազմելիս խախտողին բացատրվում է նույն օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, որի մասին արձանագրության մեջ նշվում է արվում:

Վերոգրյալ իրավադրույթներից բխում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը պետք է կազմեն ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ, և վերջինս պետք է ստորագրի այն, իսկ եթե նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու իրավասություն ունեցող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) դրա մասին համապատասխան նշում է կատարում արձանագրության մեջ: Անձը, որին վերագրվում է ենթադրյալ վարչական իրավախախտումը, իրավունք ունի ներկայացնել բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, որոնք կցվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը, իսկ այն դեպքերում, երբ նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա կարող է արձանագրությունում շարադրել այն շարժառիթները, որոնք իր կարծիքով հիմք են հանդիսացել արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու համար: Բացի այդ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն կազմելիս անձին պետք է բացատրեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված՝ նրա իրավունքներն ու պարտականությունները, և դրա մասին նույնպես համապատասխան նշում կատարեն արձանագրության մեջ:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանն եզրահանգել է, որ վարչական մարմինը (պաշտոնատար անձը) իրավասու է իրավախախտին ենթարկել վարչական պատասխանատվության միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու վերոգրյալ ընդհանուր կանոնների, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջների պահպանման պայմաններում (*լրեն, Գառնիկի Վերմիշյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0150/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.03.2019 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հավելում է, որ թեև վարչական իրավախախտման վերաբերյալ

արձանագրությունը հանդիսանում է ապացույցի ինքնուրույն տեսակ, այդուհանդերձ այն ենթակա է գնահատման վարչական իրավախախտման առկայության փաստը հաստատված համարելու համար անհրաժեշտ ապացույցների համակցության և բավարարության համատեքստում.

Վերոգրյալ նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը համարվում է վարչական իրավախախտում (զանցանք), և առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով: Վարչական իրավախախտումը պարզելու պարտականությունը դրված է դրա վերաբերյալ գործը քննող մարմնի վրա, որը պարտավոր է գործի հանգամանքները պարզել ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն՝ տվյալ գործը լուծելով օրենսդրությանը ճիշտ համապատասխան, իսկ վարչական իրավախախտման փաստը հաստատվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներով, որոնց հիման վրա միայն գործը քննող մարմինը կարող է հաստատել վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

Վճռաբեկ դատարանը վերոգրյալ դիրքորոշումների լույսի ներքո փաստում է, որ ոստիկանության ծառայողի կողմից հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման վերաբերյալ գործը քննելիս, համապատասխան վարչական մարմինը, ի թիվս այնի, որոշում է ապացույցների բավարարությունը, մասնավորապես այն, թե ինչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ վարչական իրավախախտման առկայությունը հաստատելու և դրա հիման վրա որոշումը կայացնելու համար: Այսինքն՝ վարչական իրավախախտման առկայության փաստը ամբողջությամբ պարզելու համար անհրաժեշտ է վերաբերելի, թույլատրելի ու արժանահավատ ապացույցների այնպիսի համակցություն, որը ողջամիտ անձը կհամարեր բավարար վարչական պատասխանատվության ենթարկվող անձին վերագրվող իրավախախտման առկայությունը հաստատված համարելու համար: Այլ կերպ ասած՝ ապացուցման պարտականությունը կրող կողմը պետք է ներկայացնի ապացույցների այնպիսի ծավալ, որը հնարավորություն կտա հաղթահարել ապացույցների բավարարության շեմը և գալ հստակ հետևության վարչական իրավախախտման առկայության վերաբերյալ:

Այսպես՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը (...) (ժը) սահմանում է ճանապարհապարեկային ծառայության իրականացման կարգը (...):

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (...) (ժա) իրականացնում է ճանապարհապարեկային ծառայություն (...):

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողը պարտավոր է նույն հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով ազդանշան տալով կանգնեցնել տրանսպորտային միջոցը, եթե ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները, կամ տրանսպորտային միջոցի ընթացքը կամ տեղափոխվող բեռը, կամ վարորդը կամ ուղևորներն իրենց վարքագծով ակնհայտորեն վտանգ են ստեղծում երթևեկության անվտանգության համար:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցը կանգնեցնելուց հետո կարգավորող ոստիկանության ծառայողը պարտավոր է անհապաղ մոտենալ վարորդին, ներկայանալ, հայտնել կանգնեցնելու պատճառը և օրենքով սահմանված կարգով արձանագրելու խախտումը՝ թույլատրել տրանսպորտային միջոցի հետագա երթևեկությունը, բացառությամբ նույն

օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի «ա», «բ», «գ», «դ», «ե», «զ», «է», «ը», «թ», «ժ», «ժգ», «ժդ» և «ժզ» կետերով նախատեսված դեպքերի:

ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի «Ճանապարհապարեկային ծառայության իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1769-Ն որոշման 1-ին կետով սահմանվել է ճանապարհապարեկային ծառայության իրականացման կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի: Նույն հավելվածով սահմանված «Ճանապարհապարեկային ծառայության իրականացման» կարգի 12-րդ կետի համաձայն՝ պարեկային ավտոմոբիլները (մոտոցիկլետները) պետք է կահավորված լինեն հատուկ լուսային և ձայնային ազդանշաններ արձակելու համար նախատեսված սարքավորումներով, բորտհամակարգչով, իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով (արագաչափ, պկոմետր, տեսախցիկ և այլն), կապի միջոցներով, լուսարձակով, մահակով, կրակմարիչով, մինչքժշկական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված պայուսակով, ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով համապատասխան տեխնիկական միջոցներով ու ճանապարհային նշաններով: Ճանապարհային նշանների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

Ծառայություն իրականացնող պարեկային ավտոմոբիլում (մոտոցիկլետի վրա) տեղադրված տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը և երթևեկության ուղղությունը ցույց տվող սարքավորումը և (կամ) ճանապարհապարեկային ծառայության իրականացման հսկողական տեսախցիկը պետք է միացվեն ծառայության դուրս գալու պահից և չանջատվեն (հսկողական տեսախցիկը՝ բացառությամբ ընդմիջման ժամանակի) մինչև ծառայության ավարտից հետո շարային ստորաբաժանում վերադառնալը:

Եթե ծառայության ընթացքում այդ սարքերը շարքից դուրս են գալիս, ապա կարգախմբի ավագը պարտավոր է դրա մասին անհապաղ տեղեկացնել շարային ստորաբաժանման հերթապահին կամ հրամանատարին և հրամանատարի ցուցումով վերադառնալ շարային ստորաբաժանում՝ տեխնիկական թերությունները վերացնելու համար:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրահանգման, որ օրենքով սահմանվել է ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողի տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պարտավորությունն այն դեպքերում, երբ ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները: Նշված դեպքում ոստիկանության ծառայողը պարտավոր է անհապաղ մոտենալ վարորդին, ներկայանալ, հայտնել կանգնեցնելու պատճառը և օրենքով սահմանված կարգով արձանագրել խախտումը: Մինևնույն ժամանակ՝ ՀՀ կառավարության թիվ 1769-Ն որոշմամբ սահմանված «Ճանապարհապարեկային ծառայության իրականացման» կարգի համաձայն՝ պարեկային ավտոմոբիլները պետք է կահավորված լինեն իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով (արագաչափ, պկոմետր, տեսախցիկ և այլն), ընդ որում, ճանապարհապարեկային ծառայության իրականացման հսկողական տեսախցիկը պետք է միացվի ծառայության դուրս գալու պահից և չանջատվի մինչև ծառայության ավարտից հետո շարային ստորաբաժանում վերադառնալը, իսկ շարքից դուրս գալու դեպքում պետք է անհապաղ տեղեկացվեն շարային ստորաբաժանման հերթապահը կամ հրամանատարը և հրամանատարի ցուցումով վերադառնան շարային ստորաբաժանում՝ տեխնիկական թերությունները վերացնելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարեկային ավտոմոբիլները իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով (արագաչափ, պկոմետր, տեսախցիկ և այլն) կահավորելու պահանջն ինքնանպատակ չէ, և երբ ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները, ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողը՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պարտականությունից զատ պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի

վարչական իրավախախտման փաստը իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով արձանագրելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որը ենթադրյալ իրավախախտում կատարած անձը ստորագրել է՝ առանց որևէ առարկության վկայակոչման, վարչական իրավախախտման փաստը հաստատված համարելու համար բավարար հիմք չէ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարագրմանը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության 1-ին գումարտակի 2-րդ դասակի տեսուչ Գ. Մարգարյանի կողմից 11.04.2018 թվականի ժամը 13:20-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, ըստ որի՝ Արծրուն Խաչատրյանը Ձորափի փողոցում ժամը 13:15-ին չի կատարել «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը: Նույն արձանագրության «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» հատվածում առկա է Արծրուն Խաչատրյանի ստորագրությունը: Ծառայության 11.04.2018 թվականի վարչական իրավախախտման գործով թիվ ԱԴ-550128 որոշմամբ Արծրուն Խաչատրյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին հիմքով «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը չկատարելու համար ենթարկվել է 5.000 ՀՀ դրամի չափով տուգանքի: Դիմելով դատարան՝ Արծրուն Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 11.04.2018 թվականի թիվ ԱԴ-550128 որոշումն այն հիմքով, որ հայցվորին վերագրվող արարքն իր կողմից չի կատարվել, իսկ որոշումը կայացվել է առանց համապատասխան ապացույցների և հիմքերի:

Դատարանը բավարարել է Արծրուն Խաչատրյանի հայցը՝ պատճառաբանելով, որ սույն գործով չի հաստատվում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստը, որ հայցվոր Արծրուն Խաչատրյանը չի կատարել «Մուտքն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը: Թեև օրենքով ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողի համար սահմանվել է տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պարտավորություն այն դեպքում, երբ ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները, այնուամենայնիվ դրան զուգահեռ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել է, որ պարեկային ավտոմոբիլները պետք է կահավորված լինեն իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով, այդ թվում նաև տեսախցիկով: Այսինքն՝ թեև ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողի համար ակնհայտ ճանապարհային երթևեկության կանոնների պահանջների խախտումը տեսնելը հիմք է տրանսպորտային միջոցը կանգնեցնելու համար, այնուամենայնիվ նման հանգամանքը բավարար չէ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով որևէ փաստ հաստատված համարելու համար, որպիսի փաստերը հաստատելու համար էլ պարեկային ավտոմոբիլները կահավորվել են տեսախցիկներով:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ծառայության վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ այն հիմնավորմամբ, որ Ծառայության վիճարկվող որոշումը չի պարունակում պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների առկայության կամ բացակայության, վարչական իրավախախտման հետևանքով գույքային վնաս պատճառված լինելու կամ չլինելու՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի ընթացքում պարտադիր պարզման ենթակա հանգամանքների շարադրանքը: Հետևաբար վիճարկվող վարչական ակտը չի համապատասխանում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով դրան ներկայացվող հիմնավորվածության վերոգրյալ չափանիշներին:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ հավելել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որը հայցվորը ստորագրել է՝ առանց որևէ առարկության վկայակոչման, վիճարկվող որոշումն իրավաչափ որակելու հիմք չէ, քանի որ վարչական

իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն առանց որևէ առարկության ստորագրված լինելը չի սահմանափակում վարչական վարույթի արդյունքում ընդունված միջամտող վարչական ակտը վիճարկելու անձի իրավունքը և նրան չի զրկում այդ ակտի ոչ իրավաչափ լինելու մասին վկայող իրավական և փաստական հիմքեր ու հիմնավորումներ վկայակոչելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից: Ըստ այդմ, ընդգծելով քննարկվող դեպքում հայցվորին վերագրվող իրավախախտման մասին վկայող այլ ապացույցների բացակայության փաստը՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը հայցվորին վերագրված իրավախախտումը հաստատված համարելու բավարար հիմք չէ:

Վճռաբեկ դատարանը, վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապացույցման բեռը կրում է՝ վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունման ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: (...) ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացույցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացույցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին *(լրես, Ջաջուրի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարության առջնօրեք անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Ծառայությունը, կրելով 11.04.2018 թվականի թիվ ԱԴ-550128 որոշման կայացման համար հիմք ծառայած փաստերի ապացույցման պարտականությունը, ներկայացրել է միայն վարչական իրավախախտման

վերաբերյալ արձանագրությունը, որի «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» հատվածում առկա է Արծրուն Խաչատրյանի ստորագրությունը՝ առանց որևէ առարկության վկայակոչման:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» հատվածում ստորագրության առկայությունը չի բացառում այն հանգամանքը, որ Արծրուն Խաչատրյանը Ձորափի փողոցում ժամը 13:15-ին չի կատարել «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը Ծառայության կողմից ներկայացված միակ ապացույցն է և այն բավարար չէ վարչական իրավախախտման փաստը հաստատված համարելու համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով սույն գործով վիճարկվող որոշման համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը կրել է հենց վարչական մարմինը, որպիսի պարտականությունը վերջինս չի կատարել: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա չէ որևէ այլ ապացույց, որով կարող է հաստատվել Արծրուն Խաչատրյանի կողմից «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը չկատարելու փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «ժը» կետի և այդ օրենքի հիման վրա ընդունված ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշման 12-րդ կետի խախտմամբ: Հետևաբար ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերով իրավացիորեն են եզրահանգել, որ Ծառայության 11.04.2018 թվականի վարչական իրավախախտման գործով թիվ ԱԴ-550128 որոշումը ոչ իրավաչափ է և ենթակա է վերացման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով:

Անփոփոխելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Դատարանը, բավարարելով Արծրուն Խաչատրյանի հայցը և անվավեր ճանաչելով Ծառայության 11.04.2018 թվականի թիվ ԱԴ-550128 որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի նշված վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ծառայության կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը նույնպես պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.03.2020 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/6527/05/18 վարչական գործով 19.11.2021 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

19.11.2021 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 2021 թվականի նոյեմբերի 19-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.03.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արծրուն Խաչատրյանի ընդդեմ Ծառայության՝ Ծառայության 11.04.2018 թվականի թիվ ԱԴ-550128 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որոշել է վճռաբեկ բողոքը մերժել, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.03.2020 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

Վճռաբեկ դատարանի դատավոր Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս, Ա. Մկրտչյանս, Էդ. Սեդրակյանս, Տ. Պետրոսյանս համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Գործի դարավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Արծրուն Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 11.04.2018 թվականի թիվ ԱԴ-550128 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 13.12.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.03.2020 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.12.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքը քննվել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ 11.04.2018 թվականին ժամը 13:20-ին Ծառայության տեսուչի կողմից կազմված «Վարչական իրավախախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ Արծրուն Խաչատրյանը թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների խախտում և Ձորափի փողոցում ժամը 13:15-ին չի կատարել «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը: Նշված արձանագրության «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» հատվածում հայցվորը ստորագրել է՝ առանց որևէ առարկության:

Վերաքննիչ դատարանն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ վիճարկվող որոշումը չի պարունակում պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների վերաբերյալ նշում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ծառայությունն իր որոշումները կայացնում է միատեսակ ձևաթղթի վրա և որևէ գործով պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների չի անդրադարձել, ինչը դատարանների կողմից համարվել է իրավաչափ: Հետևաբար, իրավախախտում թույլ տված անձի պատասխանատվությունը չի կարող հաղթահարվել ձևական պատճառաբանությամբ, բացառությամբ օրենքով ուղղակի նախատեսված դեպքերի:

Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, չի համապատասխանում գործում եղած ապացույցներին և հակասում է ՀՀ օրենսդրությանը, քանի որ այն կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտումներով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.03.2020 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2. Հարուկ կարծիքի պարճառասանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ բողոքի քննության համար որպես էական նշանակություն ունեցող առանձնացվել են հետևյալ փաստերը.

1) Ծառայության 1-ին գումարտակի 2-րդ դասակի տեսուչ Գ. Սարգսյանի 11.04.2018 թվականի ժամը 13:20-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության համաձայն՝ Արծրուն Խաչատրյանը Ձորափի փողոցում ժամը 13:15-ին չի կատարել «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը: Նույն արձանագրության «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» հատվածում առկա է Արծրուն Խաչատրյանի ստորագրությունը **(գ.թ. 31)**:

2) Ծառայության 11.04.2018 թվականի վարչական իրավախախտման գործով թիվ ԱԴ-550128 որոշմամբ Արծրուն Խաչատրյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամ գումարի չափով այն բանի համար, որ վերջինս չի կատարել «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը **(գ.թ. 9)**:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտում կատարած անձի ներկայությամբ կազմելու և այն վերջինիս կողմից առանց որևէ առարկության ստորագրելու դեպքում կարո՞ղ է արդյոք համարվել վարչական իրավախախտման առկայության փաստը հաստատող բավարար ապացույց:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության 1-ին գումարտակի 2-րդ դասակի տեսուչ Գ. Սարգսյանի կողմից 11.04.2018 թվականի ժամը 13:20-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, ըստ որի՝ Արծրուն Խաչատրյանը Ձորափի փողոցում ժամը 13:15-ին չի կատարել «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը: Նույն արձանագրության «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» հատվածում առկա է Արծրուն Խաչատրյանի ստորագրությունը: Ծառայության 11.04.2018 թվականի վարչական իրավախախտման գործով թիվ ԱԴ-550128 որոշմամբ Արծրուն Խաչատրյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը չկատարելու համար ենթարկվել է 5.000 ՀՀ դրամի չափով տուգանքի:

Դիմելով դատարան՝ Արծրուն Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 11.04.2018 թվականի թիվ ԱԴ-550128 որոշումն այն հիմքով, որ հայցվորին վերագրվող արարքն իր կողմից չի կատարվել, իսկ որոշումը կայացվել է առանց համապատասխան ապացույցների և հիմքերի:

Դատարանը բավարարել է Արծրուն Խաչատրյանի հայցը՝ պատճառաբանելով, որ սույն գործով չի հաստատվում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստը, որ հայցվոր Արծրուն Խաչատրյանը չի կատարել «Մուտքն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջը: Թեև օրենքով ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողի համար սահմանվել է տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պարտավորություն այն դեպքում, երբ ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները, այնուամենայնիվ դրան զուգահեռ ՀՀ կառավարության

որոշմամբ սահմանվել է, որ պարեկային ավտոմոբիլները պետք է կահավորված լինեն իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով, այդ թվում նաև տեսախցիկով: Այսինքն՝ թեև ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողի համար ակնհայտ ճանապարհային երթևեկության կանոնների պահանջների խախտումը տեսնելը հիմք է տրանսպորտային միջոցը կանգնեցնելու համար, այնուամենայնիվ նման հանգամանքը բավարար չէ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով որևէ փաստ հաստատված համարելու համար, որպիսի փաստերը հաստատելու համար էլ պարեկային ավտոմոբիլները կահավորվել են տեսախցիկներով:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ծառայության վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ այն հիմնավորմամբ, որ Ծառայության վիճարկվող որոշումը չի պարունակում պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների առկայության կամ բացակայության, վարչական իրավախախտման հետևանքով գույքային վնաս պատճառված լինելու կամ չլինելու՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի ընթացքում պարտադիր պարզման ենթակա հանգամանքների շարադրանքը: Հետևաբար վիճարկվող վարչական ակտը չի համապատասխանում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով դրան ներկայացվող հիմնավորվածության վերոգրյալ չափանիշներին:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ հավելել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որը հայցվորը ստորագրել է՝ առանց որևէ առարկության վկայակոչման, վիճարկվող որոշումն իրավաչափ որակելու հիմք չէ, քանի որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն առանց որևէ առարկության ստորագրված լինելը չի սահմանափակում վարչական վարույթի արդյունքում ընդունված միջամտող վարչական ակտը վիճարկելու անձի իրավունքը և նրան չի զրկում այդ ակտի ոչ իրավաչափ լինելու մասին վկայող իրավական և փաստական հիմքեր ու հիմնավորումներ վկայակոչելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից: Ըստ այդմ, ընդգծելով քննարկվող դեպքում հայցվորին վերագրվող իրավախախտման մասին վկայող այլ ապացույցների բացակայության փաստը՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը հայցվորին վերագրված իրավախախտումը հաստատված համարելու բավարար հիմք չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Ծառայությունը, կրելով 11.04.2018 թվականի թիվ ԱԴ-550128 որոշման կայացման համար հիմք ծառայած փաստերի ապացուցման պարտականությունը, ներկայացրել է միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որի «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» հատվածում առկա է Արծրուն Խաչատրյանի ստորագրությունը՝ առանց որևէ առարկության վկայակոչման:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության «վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» հատվածում ստորագրության առկայությունը չի բացառում այն հանգամանքը, որ Արծրուն Խաչատրյանը Ձորափի փողոցում ժամը 13:15-ին չի կատարել «Մուտքն արգելվում է» նշանի պահանջը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը Ծառայության կողմից ներկայացված միակ ապացույցն է և այն բավարար չէ վարչական իրավախախտման փաստը հաստատված համարելու համար:

Վճռաբեկ դատարանի որոշումից հետևում է, որ բոլոր դեպքերում ճանապարհային ոստիկանի կողմից կազմված վարչական իրավախախտումների արձանագրությունը, անկախ դրա վերաբերյալ անձի առարկության բացակայությունից, որպես ապացույցի տեսակ չի կարող դրվել անձին վարչական պատասխանատվության ենթարկելու որոշման հիմքում, եթե արձանագրված արարքը չի ամրագրվել հատուկ տեխնիկական միջոցներով, այդ իրավական դիրքորոշման հիմքում դնելով ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի «Ճանապարհապարեկային ծառայության իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1769-Ն որոշումը, որի 1-ին կետով սահմանվել է ճանապարհապարեկային

ծառայության իրականացման կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի, ըստ որի սահմանված «Ճանապարհապարեկային ծառայության իրականացման» կարգի 12-րդ կետի համաձայն՝ պարեկային ավտոմոբիլները (մոտոցիկլետները) պետք է կահավորված լինեն հատուկ լուսային և ձայնային ազդանշաններ արձակելու համար նախատեսված սարքավորումներով, բորտհամակարգչով, իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով (արագաչափ, ակոմետր, տեսախցիկ և այլն), կապի միջոցներով, լուսարձակով, մահակով, կրակնարհիչով, մինչքժշկական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված պայուսակով, ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով համապատասխան տեխնիկական միջոցներով ու ճանապարհային նշաններով, և ճանապարհապարեկային ծառայության իրականացման հսկողական տեսախցիկը պետք է միացվի ծառայության դուրս գալու պահից և չանջատվի մինչև ծառայության ավարտից հետո շարային ստորաբաժանում վերադառնալը, իսկ շարքից դուրս գալու դեպքում պետք է անհապաղ տեղեկացվեն շարային ստորաբաժանման հերթապահը կամ հրամանատարը և հրամանատարի ցուցումով վերադառնան շարային ստորաբաժանում՝ տեխնիկական թերությունները վերացնելու համար: Արձանագրել է, որ միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որը ենթադրյալ իրավախախտում կատարած անձը ստորագրել է՝ առանց որևէ առարկության վկայակոչման, վարչական իրավախախտման փաստը հաստատված համարելու համար բավարար հիմք չէ:

Վերոգրյալ իրավական եզրահանգումների հետ համաձայն չենք հետևյալ նկատառումներից ելնելով.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ **վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը** (...):

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու ընդհանուր կանոնները, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները նախատեսված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ և 255-րդ հոդվածներով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում է՝ դրա կազմելու ամսաթիվն ու տեղը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը. տեղեկություններ խախտողի անձի մասին. վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը. այն նորմատիվ ակտը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ իրավախախտման համար. վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան. խախտողի բացատրությունը. գործի լուծման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ: Արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը. վկաների և տուժողների առկայության դեպքում արձանագրությունը կարող են ստորագրել նաև այդ անձինք: Եթե իրավախախտում կատարած անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, դրանում այդ մասին նշում է կատարվում: Իրավախախտում կատարած անձն իրավունք ունի ներկայացնելու արձանագրությանը կցվող բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, ինչպես նաև շարադրելու այն ստորագրելուց իր հրաժարվելու շարժառիթները: Արձանագրություն կազմելիս խախտողին բացատրվում է նույն օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, որի մասին արձանագրության մեջ նշվում է արվում:

Վերոգրյալ իրավադրույթներից բխում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ

տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը պետք է կազմեն ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ, և վերջինս պետք է ստորագրի այն, իսկ եթե նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու իրավասություն ունեցող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) դրա մասին համապատասխան նշում է կատարում արձանագրության մեջ: Անձը, որին վերագրվում է ենթադրյալ վարչական իրավախախտումը, իրավունք ունի ներկայացնել բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, որոնք կցվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը, իսկ այն դեպքերում, երբ նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա կարող է արձանագրությունում շարադրել այն շարժառիթները, որոնք իր կարծիքով հիմք են հանդիսացել արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու համար: Բացի այդ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն կազմելիս անձին պետք է բացատրեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված՝ նրա իրավունքներն ու պարտականությունները, և դրա մասին նույնպես համապատասխան նշում կատարեն արձանագրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝ (...) (2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս կյուրթերը (...):

Այսինքն մինչև անձին վարչական պատասխանատվության ենթարկելը նախ և առաջ պետք է պարզվի վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության օրենքով կազմված լինելու հանգամանքն այն հաշվով, որ խախտված չլինեն տվյալ վարչական վարույթի մասնակիցների սահմանադրությամբ և օրենքով երաշխավորված իրավունքները և այս կապակցությամբ կարող ենք փաստել, որ արդեն իսկ ձևավորված է կայուն դատական պրակտիկա, որ օրենքի պահանջների անտեսմամբ կազմված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը չի կարող դրվել վարչական պատասխանատվության հիմքում:

Վերոգրյալից հետևում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջներին համապատասխան կազմված արձանագրությունը հիմք է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար, եթե սահմանված կարգով չեն բացահայտվել օրենքով արձանագրությունը կազմելու կարգին և բովանդակությանը ներկայացվող պահանջների էական շեղումներ:

Այդ համարերստում պետք է գնահատվի նաև ենթադրյալ իրավախախտում կատարած անձի արձանագրության բովանդակության վերաբերյալ արձանագրությանը կցվող բացատրություններ և դիտողություններ կատարելու, ինչպես նաև այն ստորագրելուց իր հրաժարվելու շարժառիթները շարադրելու իրավունքի ապահովված լինելու հանգամանքը, քանի որ վարչական պատասխանատվության ենթակա արարքի ժխտումը ենթադրում է այլ ապացուցողական միջոցների ու եղանակների ապահովման հարց:

Այլ է խնդիրը, որ ճանապարհային երթևեկության կանոնների որոշ խախտումներ կարող են ամրագրվել և արձանագրվել բացառապես տեխնիկական սարքերով՝ այդ թվում նաև տեսանկարահանման և լուսանկարահանման եղանակով, որպիսի հանգամանքը ևս պետք արտացոլվի վարչական իրավախախտման արձանագրությունում:

Սույն գործով վիճարկվող իրավախախտման համար օրենսդրությամբ սահմանված չի այդ փաստն ամրագրելու համար բացառապես տեխնիկական միջոցի կիրառմամբ ամրագրում՝ բացառելով ճանապարհային ոստիկանի կողմից ենթադրյալ իրավախախտման ուղղակի արձանագրում:

Իհարկե, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունում առանց առարկության ստորագրելը ինքնին չի նշանակում վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու իրավունքի սահմանափակում, սակայն վարչական իրավախախտման արձանագրությունում *արձանագրված արարքի առնչությամբ բացառությունների, դիտողությունների ու առարկությունների չներկայացնելը ևս պետք է իրավական գնահատականի արժանանա վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտը վիճարկելիս այն առումով, որ ՀՀ վարչական դատարան-վարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունման ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա (...)*, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝ անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի շրջանակներում իրականացվող վարչարարությունում անձին օրենքով վերապահված իրավունքներից չօգտվելը կամ անբարեխղճորեն օգտվելը, որը կարող է անբարենպաստ հետևանքներ առաջացնել տվյալ անձի համար չի կարող մեկնաբանվել հօգուտ անբարեխղճություն ցուցաբերած անձի, եթե չի ապացուցվել այդ իրավունքներից օգտվելու անհնարինությունը կամ գրկված լինելը որևէ այլ ձևով:

Վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշման արդյունքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը *բոլոր դեպքերում ինքնաբերաբար դուրս մղվում*՝ Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրք 251-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման փաստը հիմնավորող ապացույցների շրջանակից, վարչական իրավախախտումների վերաբերյալ այն գործերով, որոնցով վարչական իրավախախտման փաստն արձանագրվել է ճանաչարհային ոստիկանի կողմից:

Գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանի պետք է իրավական գնահատական տար նաև վարչական ակտում մեղմացուցիչ հանգամանքների առկայության կամ բացակայության հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ վարչական դատարանի պատճառաբանությանը՝ քանի որ վերաքննիչ վարչական դատարանի վերլուծություններից չի երևում արդյո՞ք եղել են հանգամանքներ, որոնք կարող էին ազատել վարչական պատասխանատվությունից, կամ առաջացնել վարչական այլ տույժ նշանակելու հիմքեր: Հակառակ դեպքում ստացվում է, որ այդ հանգամանքների վերաբերյալ դատողություններն ու եզրահանգումներն արվել են առանց այդ հանգամանքների առկայության վերաբերյալ համապատասխան փաստարկների:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ վճռաբեկ բողոքը ենթակա էր բավարարման՝ դատական ակտը պետք է բեկանվեր և հայցը մերժվեր:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Ա. Մկրտչյան
Տ. Պետրոսյան
Էդ. Սեդրակյան

**15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր
Դատավորներ

ՎԴ/10397/05/18
Ա. Առաքելյան
Կ. Մաթևոսյան
Հ. Բեդկյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/10397/05/18**
2021թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի հոկտեմբերի 1-ին
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝
Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.04.2021 թվականի
որոշման դեմ՝ ըստ հայցի անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանի ընդդեմ Կոմի-
տեի՝ 31.07.2018 թվականի թիվ 4103554 ակտը և 21.08.2018 թվականի թիվ 48/8 որոշումն
անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանը պահանջել է
անվավեր ճանաչել Կոմիտեի 31.07.2018 թվականի թիվ 4103554 ակտը և հարկային և մա-
քային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 21.08.2018 թվականի թիվ 48/8 որո-
շումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 19.02.2020
թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.04.2021 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.02.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ Արամ Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսագիրք) 343-րդ հոդվածի 6-րդ մասը և 345-րդ հոդվածի 15-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հարկային ուսումնասիրությունները և հարկային ստուգումները Օրենսգրքով նախատեսված տարբեր ընթացակարգեր են, ունեն տարբեր նպատակներ և իրականացման առանձնահատուկ ընթացակարգ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում գնում կատարելը ընթացակարգային անհրաժեշտություն է, որն իրականացնելու համար հսկիչ գնման հանձնարարագրի առկայություն կամ հանձնարարագրում դրա իրավական հիմքն ամրագրելու պահանջ առկա չէ:

Եթե Օրենսգրքի 339-342-րդ հոդվածներով կարգավորված են հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգմանն առնչվող մի շարք հարցեր, ապա ՀԴՄ կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում հարկային մարմնի իրավասու անձի կողմից իրականացվող գնման գործընթացի իրականացման կարգն ու պայմանները կարգավորված են նույն օրենսգրքի 345-րդ հսկիչ գնման կարգն ու պայմանները սահմանող հոդվածով: Օրենսդիրը հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգում իրականացնելու առանձին կարգ և պայմաններ չի սահմանել՝ ամրագրելով, որ դրանք կարգավորվում են հսկիչ գնումների համար նախատեսված նորմերով: Հանձնարարագրով, որպես առանձին ընթացակարգ, հսկիչ գնում նախատեսելու անհրաժեշտություն առկա չէ, քանի որ իրականացվել է միայն հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ այս դեպքում հարկային մարմինը նպատակ է ունեցել իրականացնել ոչ թե հսկիչ գնում, այլ հարկային ստուգում՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ հարկային ստուգում, որը նախատեսված է եղել հանձնարարագրով: Տվյալ դեպքում հսկիչ գնում ուսումնասիրության տեսակը չի իրականացվել, սակայն հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու նպատակով կիրառվել են Օրենսգրքով նախատեսված հսկիչ գնմանը հատուկ ընթացակարգերը:

Հսկիչ գնման ընթացակարգ կիրառելու համար առանձին հանձնարարագիր կազմելու կամ դրա իրավական հիմքերի նշագրում կատարելու անհրաժեշտություն առկա չէ, քանի որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման իրավական հիմքն Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետն է:

Հանձնարարագրում հսկիչ գնում կատարելու իրավական հիմքեր չնշելը ոչ իրավաչափ գնահատվել և վիճարկվող ստուգման ակտի անվավերության հանգեցնել չի կարող:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.04.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցն ամբողջությամբ մերժել, կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 11.06.2018 թվականի թիվ 4103554 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանի մոտ հանձնարարվել է իրականացնել նաև հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Որպես հանձնարարագրի տրման հիմք նշված են §Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքը, օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերը: **(հատոր 1, գ.թ. 18):**

2) Կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 11.06.2018 թվականի թիվ 4103554 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանի մոտ իրականացված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման արդյունքում Կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության կողմից 31.07.2018 թվականին կազմվել է թիվ 4103554 ակտը: Նշված ակտով արձանագրվել է, որ.

§(...) Գլխավոր հարկային տեսուչ Արամ Մաճկալյանի կողմից 10.07.2018թ-ին ժամը 12:35-ին ք. Երևան, Տերյան 252, բն. 19 հասցեում գործունեություն իրականացնող Հասմիկ Խաչատրյան Ա/Ձ-ին պատկանող հանրային սննդի կետում կատարվեց կանխիկ դրամով վճարում 10000 դրամի չափով՝ տրվեց կանխավճար պատվիրված ծառայության համար: Մատուցող Անուշ Պողոսյանը գումարը չմուծեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագրի՝ ծանութացման: Այնուհետ ժամը 13:34-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց §Հ, հաշվետվություն՝ 1200 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: §Հ, հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 10000 դրամը, ժամը 13:36-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 13:42-ին նորից դուրս բերվեց §Հ, հաշվետվություն՝ 10000 դրամ ընդհանուր գումարով: Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, մասնավորապես՝ ՀԴՄ կտրոնի չտրամադրումը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց, դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում (...):

Անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանին Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրվել է տուգանք՝ 600.000 ՀՀ դրամի չափով **(հատոր 1, գ.թ. 15-17):**

3) Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 21.08.2018 թվականի թիվ 48/8 որոշմամբ անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանի բողոքը բավարարվել է՝ Կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 31.07.2018 թվականի թիվ 4103554 ակտով առաջադրված տուգանքը փոփոխվել է և սահմանվել է 150.000 ՀՀ դրամ **(հատոր 1, գ.թ. 9-12):**

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասի միատեսակ կիրառության համար, քանի որ առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է հակասող մեկնաբանությամբ և դատարանի կիրառած՝ ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Այս որոշմանը Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ արդյո՞ք հսկիչ գնումների իրականացման կարգն ու պայմանները հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմայիկ պրոպանան ընթացքում կիրառելի լինելու վերաբերյալ Օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասը հարկային մարմնին

իրավունք է վերապահում առանց գրավոր հանձնարարագրի կամ դրանում հսկիչ գնում իրականացնելու իրավական հիմքը վկայակոչելու հսկիչ-դրամարկղային մեթոդների կիրառման ճշգրտության թեմատիկ հարկային սրուզման շրջանակներում իրականացնել հսկիչ գնում:

Օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային օրենսգիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և Օրենսգրքով նախատեսված վճարների հետ կապված հարաբերությունները (այսուհետ՝ հարկային հարաբերություններ) (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկային հարաբերությունները (...) հարկային հսկողության իրականացման (...) հետ կապված հարաբերություններն են:

Օրենսգրքի 328-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային հսկողությունը հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողությունն է՝ հարկային մարմնին վերապահված լիազորությունների շրջանակներում հարկային մարմնի (պաշտոնատար անձանց)՝ Օրենսգրքով նախատեսված գործողությունների ամբողջությունը (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային հսկողության նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումների կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված ղեպքերում ու կարգով հարկային պարտավորությունները ճշգրտելը, այդ թվում՝ ինքնուրույն հաշվարկելն ու վերահաշվարկելը, ինչպես նաև հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ հարկային հսկողությունն իրականացվում է հետևյալ եղանակներով՝ հարկային ստուգումներ, հարկային ուսումնասիրություններ:

Շարադրված նորմերի բովանդակությունից բխում է, որ հարկային հսկողությունը, լինելով հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողության տեսակ, իրենից ներկայացնում է այդ լիազորությունների շրջանակներում հարկային մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների ամբողջություն: Գործողությունների այդ ամբողջությունը նպատակ ունի պարզել հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման համապատասխանությունը, հայտնաբերել իրավական ակտերով սահմանված պահանջների խախտումները, կանխել ու խափանել դրանք, օրենքով սահմանված ղեպքերում ճշգրտել, ինքնուրույն հաշվարկել և վերահաշվարկել հարկային պարտավորությունները, ինչպես նաև հայտնաբերված խախտումների համար կիրառել պատասխանատվություն: Թվարկված նպատակների իրականացումն ապահովվում է հարկային ստուգումների և հարկային ուսումնասիրությունների եղանակով:

Օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային ստուգումը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկ վճարողների (...) մոտ սույն գլխով սահմանված կարգով իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված ղեպքերում և կարգով հարկային պարտավորությունները ճշգրտելը, այդ թվում՝ ինքնուրույն հաշվարկելն ու վերահաշվարկելը, հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմնին իրավունք ունի իրականացնելու հետևյալ տեսակների հարկային ստուգումները՝ թեմատիկ հարկային ստուգում՝ հարկ վճարողի

գործունեությանն առնչվող՝ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի՝ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված առանձին պահանջի (պահանջների) կատարման ստուգում:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ թեմատիկ հարկային ստուգումների տեսակներն են՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հարկային ստուգումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի տված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են ստուգման տեսակը և իրավական հիմքերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լինելով հարկային հսկողության, այն է՝ թեմատիկ հարկային ստուգման եղանակ, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումը հարկ վճարողի մոտ և նրա գործունեությանն առնչվող՝ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի և դրա առանձին պահանջների կատարումը պարզելուն, դրանց խախտումները հայտնաբերելուն, կանխելուն և խափանելուն, հարկային պարտավորությունները ճշգրտելուն ուղղված ընթացակարգ է: Ընդ որում, այն իրականացվում է խիստ որոշակի ընթացակարգով՝ հարկային մարմնի ղեկավարի տված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են ստուգման տեսակը և իրավական հիմքերը:

Օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային ուսումնասիրությունը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում սույն գլխով սահմանված կարգով իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, սույն բաժնով սահմանված դեպքերում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված կարգով հարկային պարտավորությունների առաջադրումն ու հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկային հսկողության շրջանակներում հարկային ուսումնասիրություններն իրականացվում են հետևյալ եղանակներով՝ արտագնա՝ հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով սույն գլխով սահմանված կարգով հարկ վճարողի մոտ իրականացվող ուսումնասիրություն:

Օրենսգրքի 343-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հարկային հսկողության շրջանակներում արտագնա հարկային ուսումնասիրությունների տեսակներն են՝ հսկիչ գնումը:

Նույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ արտագնա հարկային ուսումնասիրություններն իրականացվում են հարկային մարմնի ղեկավարի տված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են ուսումնասիրության տեսակը, նպատակը և իրավական հիմքերը:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկ վճարողի հարկման օբյեկտների, հարկման բազաների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման), հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման, հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների գրանցման, ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման, ինչպես նաև արժույթային գործարքների իրականացման համար սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանման նկատմամբ ուսումնասիրության նպատակով հարկային մարմինը կարող է իրականացնել հսկիչ գնում (գնումներ):

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկիչ գնումներն իրականացվում են Օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան տրված հանձնարարագրի հիման վրա (...):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ի տարբերություն դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման, հսկիչ գնումը հարկային հսկողության մեկ այլ հարկային ուսումնասիրության եղանակ է: Այն, ի թիվս հարկային ստուգման հետապնդած նպատակների, հետապնդում է Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված կարգով հարկային պարտավորություններ հարկ վճարողին առաջադրելու և հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելու նպատակ: Հսկիչ գնման, որպես արտագնա հարկային ուսումնասիրության տեսակի, դեպքում նույնպես պահանջվում է փաստական հիմքի՝ հարկային մարմնի ղեկավարի տված գրավոր հանձնարարագրի առկայություն, որտեղ նշվում են ուսումնասիրության տեսակը, նպատակը և իրավական հիմքերը: Հսկիչ գնման դեպքում գրավոր հանձնարարագրի առկայության մասին ուղղակի պահանջ նախատեսում է Օրենսգրքի 345-րդ հոդվածի 3-րդ մասը, որը միաժամանակ սահմանում է դրա ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները՝ հղում կատարելով նույն օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ անդրադարձել է իրավական այն հարցին, թե արդյոք հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումը նույնանում է հսկիչ գնման հետ, և արձանագրել, որ §(...) հսկիչ գնումը ստուգումից տարբերվում է ինչպես հետապնդվող նպատակով, այնպես էլ այն իրականացնելու համար անհրաժեշտ իրավական հիմքով: Մասնավորապես՝ ստուգումը համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսվարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին: Իսկ հսկիչ գնումը հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի գրավոր հանձնարարագրի հիման վրա հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն է: Այսինքն՝ հսկիչ գնում իրականացնելու համար դրա վերաբերյալ հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից պարտադիր կերպով պետք է տրվի գրավոր հանձնարարագիր, որի բացակայության դեպքում հարկային մարմնի կողմից իրականացվող որևէ գործողություն, այդ թվում՝ նաև՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա իրականացվող ստուգումը որևէ դեպքում չի կարող համարվել հսկիչ գնում՝ *(ընես անհար ձեռնարկարեր Հրաչուհի Ասարյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Եղեգնաձորի փարածքային հարկային տեսչության թիվ ՎԴ3/0182/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Եղեգնաձորի փարածքային հարկային տեսչությունն ընդդեմ անհար ձեռնարկարեր Արթուր Հովսեփյանի թիվ ՎԴ3/0011/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումն ու հսկիչ գնումը հարկային հսկողության տարբեր եղանակներ են և հետապնդում են միմյանցից տարբերվող նպատակներ: Հարկային հսկողության այդ երկու տարբեր եղանակների միակ նույնությունը դրանց իրականացման փաստական հիմքի գրավոր հանձնարարագրի, առկայությունն է: Հարկային հսկողություն իրականացնելիս գրավոր հանձնարարագրի առկայության համապարտադիր պահանջ նախատեսելու նպատակը հարկային մարմնի, նաև՝ դրա պաշտոնատար անձանց, լիազորությունների շրջանակը սահմանելն է, քանզի հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք իրավասու են իրականացնելու հարկային հսկողության հանձնարարագրում

նշված նպատակներից բխող և հարցերի կատարմանն ուղղված գործողություններ: Մասնավորապես, ըստ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի Տբ¹ ենթակետի՝ հարկային մարմինը (հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը) պարտավոր է հարկային հսկողության ընթացքում դուրս չգալ հարկային հսկողության հանձնարարագրում նշված նպատակների և հարցերի շրջանակից:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված՝ հսկիչ գնումների իրականացման կարգն ու պայմանները կիրառվում են նաև հարկային մարմնի կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված նորմը թեև հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում կիրառելի է համարում հսկիչ գնումների ընթացակարգը կարգավորող կանոնները, այդուհանդերձ այդ կիրառելիությունը սահմանափակում է միայն իրականացման կարգով և պայմաններով: Նշվածից բխում է, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում կիրառելի են հսկիչ գնումների ընթացքը սահմանող այն նորմերը միայն, որոնք վերաբերում են հարկային այդ ուսումնասիրության իրականացման բուն ընթացքին, հարկային մարմնի, ինչպես նաև դրա պաշտոնատար անձանց իրավասության շրջանակին, տնտեսվարող սուբյեկտի իրավունքներին և պարտականություններին, կատարման ենթակա գործողությունների հաջորդականությանն ու այն հարցերին, որոնք կարգավորում են հարկային հսկողության իրականացման գործընթացը: Իսկ մինչև հսկիչ գնում իրականացնելն անհրաժեշտ գործողությունների, այդ թվում՝ գրավոր հանձնարարագրի առկայության և դրա ձևի ու բովանդակության վերաբերյալ նորմերը սահմանված են առանձին՝ Օրենսգրքի 345-րդ հոդվածի 3-րդ մասով: Նշված հոդվածն ուղիղ և համապարտադիր ձևով ամրագրում է Օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան տրված հանձնարարագրի հիման վրա միայն հսկիչ գնում իրականացնելու կանոնը և որևէ բացառություն չի նախատեսում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հսկիչ գնում իրականացնելիս գրավոր հանձնարարագրի առկայության կանոնի պարտադիր լինելու հանգամանքը պայմանավորված է նաև Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի Տբ¹ ենթակետով: Մասնավորապես հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի՝ հսկիչ գնում իրականացնելու լիազորությունը կարող է հաստատվել, իսկ կատարման ենթակա գործողությունների շրջանակը՝ որոշվել, համապատասխան իրավական հիմքեր պարունակող՝ հարկային մարմնի ղեկավարի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա միայն:

Անդրադառնալով հսկիչ գնում իրականացնելու անհրաժեշտ պայմաններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ §(...) հսկիչ գնում կատարելու լիազորությունը կարող է հաստատվել միայն հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրով, որը պետք է պարունակի հետևյալ վավերապայմանները՝ հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, տնտեսվարող սուբյեկտի տվյալները, հսկիչ գնում իրականացնելու վայրը, ժամկետները, հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի տվյալները: Հսկիչ գնումն այլ անձի միջոցով իրականացնելու դեպքում հանձնարարագրում պետք է նշվի նաև այդ անձի տվյալները (*դեմս «Մթաթ Դիվայր» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ/5848/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2009 թվականի որոշումը*):

Ամբողջ շարադրվածի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկային մարմնին վերապահելով հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառության և/կամ հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների գրանցման կարգերի ու կանոնների պահանջների պահպանման նկատմամբ ուսումնասիրության նպատակով հսկիչ գնում (գնումներ) իրականացնելու իրավունք, օրենսդիրը միաժամանակ սահմանել է այդպիսի իրավասության իրականացման փաստական հիմքի՝ հարկային մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարագրի առկայություն: Իսկ Օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասն էլ ի չիք չի դարձնում

պարադիբր այդ կանոնի գործածությունը, քանի որ, ինչպես նշվեց, դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում կիրառելի է համարում հսկիչ գնումների կարգն ու պայմանները կարգավորող ընթացակարգային կանոնները միայն, իսկ իրականացման համար անհրաժեշտ և պարտադիր նախադրյալների՝ գրավոր հանձնարարագրերի, նույնության կամ մեկը մյուսին լրացնելու կամ փոխարինելու վերաբերյալ որևէ բացառություն նախատեսված չէ:

Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում հսկիչ գնում իրականացնելու՝ Օրենսգրքով հարկային մարմնին վերապահված լիազորությունն ի չիք չի դարձնում դրանց իրականացման համար առանձին գրավոր հանձնարարագրերի կամ նույն հանձնարարագրում դրանց իրականացման իրավական հիմքերը հատուկ նշելու՝ նույն օրենսգրքով պարտադիր համարվող կանոնի գործողությունը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Այս գործի՝ վերը շարադրված փաստերից պարզ է, որ Կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 11.06.2018 թվականի թիվ 4103554 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանի մոտ հանձնարարվել է իրականացնել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում և որպես հանձնարարագրի տրման հիմք նշվել են §Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը, օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերը՝:

11.06.2018 թվականի թիվ 4103554 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանի մոտ իրականացված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման արդյունքում Կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության կողմից 31.07.2018 թվականին կազմվել է թիվ 4103554 ակտը: Նշված ակտով արձանագրվել է, որ §(...) *Գլխավոր հարկային տեսուչ Արամ Մաճկալյանի կողմից 10.07.2018թ-ին ժամը 12:35-ին ք. Երևան, Տեղյան 252, բն. 19 հասցեում գործունեություն իրականացնող Հասմիկ Խաչատրյան Ա/Ձ-ին պարկանող հանրային անդի կետրում կարարվեց կանխիկ դրամով վճարում 10000 դրամի չափով՝ տրվեց կանխավճար պարավիճակած ծառայության համար: Մալուցող Անուշ Պողոսյանը գումարը չմուրքագրեց ՀՀՄ և համապարասխան գումարի ՀՀՄ կորոն չգրամադրեց՝: Պատվիրված ծառայության համար տրված կանխավճարը հսկիչ-դրամարկղային մեքենա չմուրքագրելու և հսկիչ-դրամարկղային կտրոնը չտրամադրելու հիմքով անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանին Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրվել է տուգանք՝ 600.000 ՀՀ դրամի չափ:*

Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 21.08.2018 թվականի թիվ 48/8 որոշմամբ անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանի բողոքը բավարարվել է՝ Կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 31.07.2018 թվականի թիվ 4103554 ակտով առաջադրված տուգանքը փոփոխվել է և սահմանվել է 150.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թիվ 4103554 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանի մոտ իրականացված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում հարկային վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից կատարվել է պատվիրված ծառայության համար 10.000 ՀՀ դրամի չափով վճարում, ինչը սակայն կարող էր իրականացվել միայն հսկիչ գնում իրականացնելու համար Օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով: Տվյալ դեպքում բացակայել է անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանի մոտ հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ հարկային մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարագիրը: Կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 11.06.2018 թվականի թիվ 4103554 հանձնարարագիրը տրվել է անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանի մոտ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում իրականացնելու նպատակով և որպես դրա տրման հիմք նշվել

են Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերը, ուստի այն չէր կարող հիմք հանդիսանալ հսկիչ գնում իրականացնելու համար:

Շարադրվածից բխում է, որ անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանի մոտ հսկիչ գնում իրականացվել է առանց այդպիսին իրականացնելու համար անհրաժեշտ փաստական հիմքի՝ Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի կողմից տրված գրավոր հանձնարարագրի, ուստի Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում հսկիչ գնում իրականացնելու իրավասության բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը, հայցը բավարարելով, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր:

5. Վճռաբեկ դատարանի պարզադատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ բողոքաբերը վճարել է վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, իսկ վճռաբեկ բողոքը մերժվում է, և գործով առկա չեն գործի քննության հետ կապված այլ ծախսեր, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.04.2021 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԳ/0286/05/17
Կ. Ավետիսյան
Կ. Բաղդասարյան
Կ. Մաթևոսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0286/05/17
2021թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի մայիսի 27-ին,
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ
բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.09.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի «Նոր-Հենդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առը-
նթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ վարչական ակտն անվա-
վեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատախազական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի
18.11.2016 թվականի թիվ 5013012/1 ակտն ամբողջությամբ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան)
27.09.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.09.2018
թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի
27.09.2017 թվականի վճիռը բեկանվել է ու փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վիճարկվող վերստուգման ակտի 1-ին՝ «Շահութահարկ» բաժնում գրառվել է՝ «01.09.2014թ. թիվ 5010586 ակտի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ (...», նույն վերստուգման ակտի 4-րդ՝ «Ավելացված արժեքի հարկ» բաժնում նշվել է՝ «01.09.2014թ. թիվ 5010586 ակտի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ (...», իսկ վերստուգման ակտի 23-րդ՝ «Հարկային գործակալի կողմից պահվող (գանձվող) եկամտային հարկ» բաժնում գրառվել է՝ «04.03.2016թ. թիվ 5013012 ակտի 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ (...»: Նշված գրառումների հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, թե վերստուգման ակտով փոփոխություններ են կատարվել այլ ստուգման ակտերում, մինչդեռ վերստուգման արդյունքում պետք է ընդունվեր նոր ակտ, քանի որ Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 31.05.2016 թվականի թիվ 11/1 որոշմամբ արդեն իսկ անվավեր է ճանաչվել 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտը, հետևաբար վերստուգման արդյունքում կազմված նոր՝ թիվ 5013012/1 ակտով, չէին կարող վերաշարադրվել դրա առանձին կետերը: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ կատարված վերստուգման արդյունքում կազմվել է նոր՝ թիվ 5013012/1 ակտը, իսկ նշված գրառումները կատարվել են նշելու համար, որ նշված պարտավորություններն առաջադրվել են վերստուգման արդյունքում, և որ տվյալ հարկատեսակների գծով նախկինում իրականացվել են ստուգումներ, որոնց վերաբերյալ նշված ակտերի համապատասխան կետերով արձանագրվել են խախտումներ, առաջադրվել պարտավորություններ: Թիվ 5013012/1 ակտը կայացվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան և չի կարող անվավեր ճանաչվել միայն ձևական նկատառումներով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ օրենսդրությամբ սահմանված որևէ իրավական կամ փաստական հանգամանքով չի հիմնավորվում որպես ներկայացուցչի վարձատրության փոխհատուցում բռնագանձվող 200.000 ՀՀ դրամի չափը, ինչից հետևում է, որ գումարի չափը համաչափ և ողջամիտ չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.09.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.09.2017 թվականի վճռին կամ գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ ֆինանսների նախարարության Սևանի տարածքային հարկային տեսչության 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտի համաձայն՝ Ընկերությանն առաջադրվել է 36.520.773 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն, որից՝ շահութահարկի (ակտի 1-ին կետ) գծով՝ 19.027.773 ՀՀ դրամ, հարկային գործակալի կողմից պահվող (գանձվող) եկամտային հարկի (ակտի 21-րդ կետ) գծով՝ 17.493.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 97-103**).

2) Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 31.05.2016 թվականի թիվ 11/1 որոշման համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության Սևանի տարածքային հարկային տեսչության 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտը ճանաչվել է անվավեր, որոշվել է միջնորդություն ներկայացնել Կոմիտեի նախագահին՝ Ընկերությունում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում կատարելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 120-126**).

3) Կոմիտեի նախագահի 24.06.2016 թվականի թիվ 5013012/1 հանձնարարագրի համաձայն՝ Կոմիտեի ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության ստուգումների դիտարկման բաժնի գլխավոր հարկային տեսուչներին հանձնարարվել է Ընկերությունում ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա հարկային մարմին ներկայացված հաշվետվությունների, հաշվարկների և այլ փաստաթղթերի արժանահավատությունը պարզելու, ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու նպատակով անցկացնել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում (**հատոր 1-ին, գ.թ. 14**).

4) Կոմիտեի քննչական վարչության ՀԿԳ քննիչի 13.07.2016 թվականի որոշման համաձայն՝ որոշվել է Ընկերությունում նշանակել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմինների կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում՝ թիվ 5010586 ակտով ստուգված 01.01.2010 թվականից մինչև 27.07.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար (**հատոր 2-րդ, գ.թ. 79-80**).

5) Կոմիտեի ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության ստուգումների դիտարկման բաժնի գլխավոր հարկային տեսուչը 15.07.2016 թվականին կազմված զեկուցագրով, հաշվի առնելով Կոմիտեի քննչական վարչության ՀԿԳ քննիչի 13.07.2016 թվականի որոշումը, խնդրել է Կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի կարգադրությունը՝ Կոմիտեի նախագահի 24.06.2016 թվականի թիվ 5013012/1 հանձնարարագրի համաձայն կատարվող վերստուգման ժամանակաշրջանին 01.01.2010-27.07.2014 թվականների ժամանակաշրջանն ավելացնելու մասին (**հատոր 2-րդ, գ.թ. 85**).

6) Կոմիտեի նախագահի 20.07.2016 թվականի թիվ Ս-1097-Ա հրամանի համաձայն՝ Ընկերությունում Կոմիտեի նախագահի 24.06.2016 թվականի թիվ 5013012/1 հանձնարարագրով իրականացվող բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգման շրջանակներում ներառվել են հրամանում նշված վերստուգվող հարցերը համապատասխան ժամանակահատվածներով (**հատոր 1-ին, գ.թ. 39-40**).

7) Կոմիտեի ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչությունում 18.11.2016 թվականին կազմվել է թիվ 5013012/1 ակտը, որի 1-ին («Շահութահարկ») կետի համաձայն՝ այլ խմբագրությամբ են շարադրվել 01.09.2014 թվականի թիվ 5010586 ակտի և 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտի 1-ին կետերը, 4-րդ («Ավելացված արժեքի հարկ») կետի համաձայն՝ այլ խմբագրությամբ է շարադրվել 01.09.2014 թվականի թիվ 5010586 ակտի 5-րդ կետը, իսկ 23-րդ («Հարկային գործակալի կողմից պահվող (գանձվող) եկամտային հարկ») կետի համաձայն՝ այլ խմբագրությամբ է շարադրվել 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտի 21-րդ կետը: Արդյունքում արձանագրվել է, որ Ընկերությանն առաջադրվում է 27.473.408 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն (**հատոր 2-րդ, գ.թ. 91-98**).

8) Ընկերության (Պատվիրատու), ի դեմս տնօրեն Տիգրան Տիգրանյանի, և անհատ ձեռնարկատեր Հրանտ Ավետյանի (Կատարող) միջև 28.02.2017 թվականին կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման մասին թիվ 7-հ-17 պայմանագիրը, որով Կատարողը պարտավորվել է Պատվիրատուին մատուցել նույն պայմանագրի 1.1-1.3 կետերում նշված իրավաբանական ծառայությունները՝ պայմանագրի գինը սահմանելով 1.000.000 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 25-28**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները վերստուգման ակտով նախորդ ստուգման ակտի համապատասխան կետերն այլ խմբագրությամբ շարադրելու իրավական հնարավորության հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք հարկային մարմինն իրավասու է վերստուգման արդյունքում կազմվող ակտով նախորդ ստուգման ակտի համապատասխան կետերը շարադրել այլ խմբագրությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս ընդգծել է, որ ստուգման կազմակերպման և անցկացման վարույթը հանդիսանում է առանձին տեսակի վարչական վարույթ, որի առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով (յո՞ւն, օրինակ, ՀՀ *Կրեմլիական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն ընդդեմ «Վագրա» ՍՊԸ-ի քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի թիվ 3-1714(ՏԴ) որոշումը*):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման հրամանում կան հանձնարարագրում նշված ժամկետն ավարտվելուց հետո (...) ստուգումն իրականացնող անձը (...) ամփոփում է ստուգման արդյունքները՝ խախտումներ չհայտնաբերելու դեպքում կազմում տեղեկանք,

իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ ակտի նախագիծ: (...) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը (...): Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից (...) ակտի նախագիծ վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում ստուգող մարմինը ուսումնասիրում է դրանք և (...) ակտի մեկ օրինակը (...) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստորագրմանը:

Վերոգրյալ իրավական նորմերի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստուգման ակտով եզրափակվող ստուգման վարչական վարույթն սկսվում է ստուգումն իրականացնող մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) կողմից ստուգումն իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագիր հրապարակելու միջոցով ստուգումն իրականացնող մարմնի նախաձեռնության դրսևորմամբ («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետ և նույն հոդվածի 3-րդ մաս) և ավարտվում ստուգման ակտի կազմմամբ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե առկա են նույն օրենքով սահմանված վերստուգումներ անցկացնելու իրավական հիմքերը, ստուգող մարմինն իրավունք ունի նույն հոդվածի 3-րդ մասով մեկ ստուգման համար սահմանված ժամանակահատվածում իրականացնել կրկնակի ստուգում: Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվող տնտեսավարող սուբյեկտի թեմատիկ ստուգումից (բացառությամբ նույն հոդվածի 3.1-ին մասի 5-րդ կետով սահմանված ստուգումների) հետո նույն տնտեսավարող սուբյեկտում նույն ժամանակաշրջանի համար կատարվող պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ցանկացած ստուգում համարվում է կրկնակի ստուգում: Իսկ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վերստուգումն ստուգում իրականացնող մարմնի կողմից նույն տնտեսավարող սուբյեկտի (վերակազմակերպման դեպքերում իրավահաջորդի (իրավահաջորդների)) մոտ նույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամանակահատվածում կատարված երկրորդ (կրկնակի) ստուգումն է, բացի նույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 1-9-րդ կետերով սահմանված, ինչպես նաև հարկային հաշվանցումներ և (կամ) վերադարձ ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձ իրականացնելուց առաջ տնտեսավարող սուբյեկտի մոտ կատարվող ստուգման դեպքերի, երբ վերստուգումները մեկից ավելի ստուգումներն են: (...):

Միաժամանակ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը սպառիչ կերպով ամրագրում է վերստուգման հիմքերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ վերստուգման վարույթը ստուգման վարույթից տարանջատված՝ առանձին, ինքնուրույն վարչական վարույթ է, որի հարուցմամբ ոչ թե վերաբացվում, նորոգվում է նախորդ ստուգման վարույթը, այլ հարուցվում է երկրորդ (կրկնակի) ստուգման վարույթ, որի արդյունքում ընդունվում է նոր ստուգման ակտ: Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերստուգման արդյունքում նախորդ ստուգման ակտի վերանայում տեղի չի ունենում, այլ կրկնակի ստուգման արդյունքում ընդունվում է նոր ստուգման ակտ (յրեն, «Ռուբեն Գևորգյան» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առջնորդ պետական եկամուտների կոմիտեի Սևանի տարածքային հարկային տեսչության թիվ ՎԴ2/0302/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ եթե վերստուգման արդյունքում ըստ ստուգման հարցերի արձանագրված խախտումները կամ հարկային պարտավորությունները

տարբերվում են նախորդ ստուգման ընթացքում ըստ ստուգման հարցերի արձանագրված խախտումներից կամ հարկային պարտավորություններից, սպա վերստուգման վարույթը եզրափակող ստուգման ակտում պետք է շարադրվեն վերստուգման արդյունքները, այսինքն՝ դրա արդյունքում արձանագրված խախտումները կամ հարկային պարտավորությունները: Սակայն դա չի նշանակում, որ վերստուգման ակտով կարող են այլ խմբագրությամբ շարադրվել նախորդ ստուգման ակտի համապատասխան կետերը: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերստուգման արդյունքում ոչ թե վերանայվում, փոփոխվում է նախորդ ստուգման ակտը, այլ կրկնակի ստուգման արդյունքում ընդունվում է նոր ստուգման ակտ: Դա նշանակում է, որ նոր ստուգման ակտում պետք է արձանագրվեն վերստուգման արդյունքները, և ոչ թե նախորդ ստուգման ակտի համապատասխան կետերն այլ խմբագրությամբ շարադրելու միջոցով ըստ էության փոփոխություններ կատարվեն դրանում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային մարմինն իրավասու չէ վերստուգման արդյունքում կազմվող ակտով նախորդ ստուգման ակտի համապատասխան կետերը շարադրել այլ խմբագրությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Ֆինանսների նախարարության Սևանի տարածքային հարկային տեսչության 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտի համաձայն՝ Ընկերությանն առաջադրվել է 36.520.773 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն, որից՝ շահութահարկի (ակտի 1-ին կետ) գծով՝ 19.027.773 ՀՀ դրամ, հարկային գործակալի կողմից պահվող (գանձվող) եկամտային հարկի (ակտի 21-րդ կետ) գծով՝ 17.493.000 ՀՀ դրամ: Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 31.05.2016 թվականի թիվ 11/1 որոշման համաձայն՝ ՀՀ Ֆինանսների նախարարության Սևանի տարածքային հարկային տեսչության 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտը ճանաչվել է անվավեր: Կոմիտեի ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչությունում 18.11.2016 թվականին կազմվել է թիվ 5013012/1 ակտը, որի 1-ին («Շահութահարկ») կետի համաձայն՝ այլ խմբագրությամբ են շարադրվել 01.09.2014 թվականի թիվ 5010586 ակտի և 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտի 1-ին կետերը, 4-րդ («Ավելացված արժեքի հարկ») կետի համաձայն՝ այլ խմբագրությամբ է շարադրվել 01.09.2014 թվականի թիվ 5010586 ակտի 5-րդ կետը, իսկ 23-րդ («Հարկային գործակալի կողմից պահվող (գանձվող) եկամտային հարկ») կետի համաձայն՝ այլ խմբագրությամբ է շարադրվել 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտի 21-րդ կետը: Արդյունքում արձանագրվել է, որ Ընկերությանն առաջադրվում է 27.473.408 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն:

Դատարանը, մերժելով Ընկերության 18.11.2016 թվականի թիվ 5013012/1 ակտն անվավեր ճանաչելու պահանջը, պատճառաբանել է նաև, որ օրենքով սահմանված կարգով տնտեսվարող սուբյեկտի մոտ վերստուգում նշանակելու հիմքերի դեպքում, հարուցվում է նոր, ինքնուրույն վարչական վարույթ, որը եզրափակվում է մեկ այլ վարչական ակտի ընդունմամբ: Նման պայմաններում Դատարանն անհիմն է համարել հայցվորի փաստարկներն այն մասին, որ 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտը վերացված լինելու պայմաններում այդ ակտի 21-րդ կետում նշված հիմնավորումներով նոր ակտ կայացվել չի կարող, քանի որ վերստուգման ակտով կրկնակի ստուգման արդյունքում կայացվում է նոր վարչական ակտ: Դատարանը գտել է, որ բացակայում են նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ 18.11.2016 թվականի թիվ 5013012/1 ակտն անվավեր ճանաչելու հիմքերը:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Ընկերության վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը և այն փոփոխել՝ հայցը բավարարել է: Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է նաև այն պատճառաբանությունը, որ վիճարկվող թիվ 5013012/1 ակտում կատարված գրառումներից ուղղակիորեն բխում է, որ վերստուգման ակտով փոփոխություններ են նախատեսվել համապատասխանաբար շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով թիվ 5010586 ստուգման ակտում, իսկ հարկային գործակալի կողմից պահվող (գանձվող) եկամտային հարկի գծով՝ թիվ 5013012 ստուգման ակտում: Ի դեպ՝ վերջին ակտը Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման

հանձնաժողովի 31.05.2016 թվականի որոշմամբ ճանաչվել է անվավեր: Սա նշանակում է, որ վերստուգման ակտով փոփոխություններ են կատարվել այլ ստուգման ակտերում, մինչդեռ վերստուգման արդյունքում պետք է ընդունվեր նոր ակտ: Ընդ որում, վերստուգման ակտի 23-րդ կետով ամրագրվածը, հաշվի առնելով, որ Կոմիտեի հարկային և մաքսային մարմնի գանգատարկման հանձնաժողովի թիվ 11/1 որոշմամբ ճանաչվել է անվավեր, ըստ էության չի կարող որակվել՝ որպես իրավաբանական հետևանքներ առաջացնող, քանի որ դրանով, փաստորեն, համապատասխան մասով այլ խմբագրությամբ շարադրվել է մի ստուգման ակտ, որը Կոմիտեի հարկային և մաքսային մարմնի գանգատարկման հանձնաժողովի թիվ 11/1 որոշմամբ ճանաչվել է անվավեր:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ վիճարկվող՝ 18.11.2016 թվականի թիվ 5013012/1 ակտի 1-ին («Շահութահարկ») կետի համաձայն՝ այլ խմբագրությամբ են շարադրվել 01.09.2014 թվականի թիվ 5010586 ակտի և 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտի 1-ին կետերը, 4-րդ («Ավելացված արժեքի հարկ») կետի համաձայն՝ այլ խմբագրությամբ է շարադրվել 01.09.2014 թվականի թիվ 5010586 ակտի 5-րդ կետը, իսկ 23-րդ («Հարկային գործակալի կողմից պահվող (գանձվող) եկամտային հարկ») կետի համաձայն՝ այլ խմբագրությամբ է շարադրվել 01.09.2014 թվականի թիվ 5010586 ակտի 21-րդ կետը: Մինչդեռ իրավահարաբերության ծագման պահին գործող իրավակարգավորումների հիման վրա Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարում վերստուգման արդյունքում կազմվող ակտով նախորդ ստուգման ակտի համապատասխան կետերն այլ խմբագրությամբ շարադրելը: Դա նշանակում է, որ 01.09.2014 թվականի թիվ 5010586 ակտի և 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտերի համապատասխան կետերն այլ խմբագրությամբ շարադրող՝ 18.11.2016 թվականի թիվ 5013012/1 ակտը ոչ իրավաչափ վարչական ակտ է:

Ավելին, ինչ վերաբերում է 18.11.2016 թվականի թիվ 5013012/1 ակտի այն կետերին, որոնցով այլ խմբագրությամբ են շարադրվել 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտի համապատասխան կետերը, Վճռաբեկ դատարանը, բացի վերոգրյալից, արձանագրում է նաև հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է ինչպես դրա անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու, այնպես էլ վարչական ակտն ընդունելու պահից՝ նույն մասի երկրորդ պարբերությամբ և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառություններով: (...) Անվավեր ճանաչված ոչ իրավաչափ վարչական ակտը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների: (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստուգման ակտի նկատմամբ նաև կիրառելի են վարչական ակտի անվավերության հիմքերին և հետևանքներին առնչվող՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները: Դա նշանակում է, որ որպես ոչ իրավաչափ վարչական ակտ անվավեր ճանաչվելու դեպքում ստուգման ակտը վերացվում է, կորցնում է իր իրավաբանական ուժը և չի հանգեցնում իրավաբանական հետևանքների:

Տվյալ դեպքում Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 31.05.2016 թվականի թիվ 11/1 որոշմամբ 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտը ճանաչվել է անվավեր, ուստի այն կորցրել է իր իրավաբանական ուժը և չի կարող

հանգեցնել իրավաբանական հետևանքների: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 04.03.2016 թվականի թիվ 5013012 ակտի համապատասխան կետերն այլ խմբագրությամբ շարադրելու մասով 18.11.2016 թվականի թիվ 5013012/1 ակտը ոչ իրավաչափ է նաև այն պատճառաբանությամբ, որ դրանով այլ խմբագրությամբ են շարադրվել անվավեր ճանաչված ստուգման ակտի համապատասխան կետերը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի՝ վերը նշված պատճառաբանությունները և գտնում, որ դրանք բավարար են 18.11.2016 թվականի թիվ 5013012/1 ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով անվավեր ճանաչելու համար:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշմամբ որպես ներկայացուցչի վարձատրության փոխհատուցում բռնագանձվող 200.000 ՀՀ դրամի ողջամիտ չլինելու վերաբերյալ բողոքարեթի փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում առանձնացրել է այն չափորոշիչները, որոնք դատարանները պետք է հաշվի առնեն վիճարկման հայցի բավարարման դեպքում դատավարության մասնակցի ներկայացուցչի վճարի հատուցման հարցը լուծելիս: Այդ չափորոշիչները հետևյալն են.

1) փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը),

2) գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը),

3) նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը,

4) ներկայացուցչին վճարված գումարի և վիճարկվող վարչական ակտով առաջադրված գումարի չափի հարաբերակցությունը,

5) անձի կողմից փաստացի կատարված ծախսերի այն ծավալը, որն անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար (*տես, Անի Դավթյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/6377/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Տվյալ դեպքում Ընկերության (Պատվիրատու), ի դեմս տնօրեն Տիգրան Տիգրանյանի, և անհատ ձեռնարկատեր Հրանտ Ավետյանի (Կատարող) միջև 28.02.2017 թվականին կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման մասին թիվ 7-հ-17 պայմանագիրը, որով Կատարողը պարտավորվել է Պատվիրատուին մատուցել նույն պայմանագրի

1.1-1.3 կետերում սշված իրավաբանական ծառայությունները՝ պայմանագրի գինը սահմանելով 1.000.000 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը, եզրահանգելով, որ Ընկերության կողմից ներկայացված վիճարկման հայցը ենթակա է բավարարման, և անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, գտել է, որ Կոմիտեից հօգուտ Ընկերության անհրաժեշտ է բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչին վճարման ենթակա (վճարված) գումարի փոխհատուցում:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն գործի բարդությունը, ներկայացուցչի կատարած աշխատանքի ծավալը (մասնակցություն դատական նիստերին ինչպես Դատարանում, այնպես էլ Վերաքննիչ դատարանում, վերաքննիչ բողոքի ներկայացում և այլն), Ընկերության և անհատ ձեռնարկատեր Հրանտ Ավետյանի միջև 28.02.2017 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված՝ ներկայացուցչին վճարման ենթակա գումարի չափի և վիճարկվող վարչական ակտով առաջադրված գումարի չափի հարաբերակցությունը, անհիմն է համարում բողոքաբերի այն փաստարկը, թե Վերաքննիչ դատարանի կողմից որոշված՝ բռնագանձման ենթակա 200.000 ՀՀ դրամը գերազանցում է սույն գործով ներկայացուցչի վճարի ողջամիտ չափը:

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, Ընկերության հայցը մերժելու մասին Դատարանի վճիռը բեկանելով, այն փոփոխելով՝ հայցը բավարարելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.09.2018 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/2338/05/18**
2021թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/2338/05/18**
Նախագահող դատավոր՝ **Ա. Բարայան**
Դատավորներ՝ **Ա. Պողոսյան**
Ա. Թովմասյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅԱՆ

2021 թվականի փետրվարի 16-ին
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝
Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.06.2019 թվականի
որոշման դեմ՝ ըստ «ՌՈՒԲ և ԿԱՐԵՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ Կո-
միտեի՝ վարչական ակտը մասնակիորեն վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է մասնակիորեն՝ ավելացված արժե-
քի հարկի մատով, վերացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտնե-
րի կոմիտեի Փոքր հարկ վճարողների հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)
28.12.2017 թվականի թիվ 1013121 ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան)
15.10.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.06.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.10.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է 14.05.1997 թվականին ընդունված (ուժը կորցրել է 01.01.2018 թվականին) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) մինչև 01.01.2015 թվականը գործող խմբագրությամբ 20-րդ և 431-րդ հոդվածները, 01.01.2015 թվականից գործող խմբագրությամբ Օրենքի 20-րդ, 23-րդ և 431-րդ հոդվածները, 2018 թվականի փետրվարի 7-ին ընդունված ՀՀ դատական օրենսգրքը սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես չէ, հետևյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերությունը 2014-2017 թվականների ընթացքում ձեռք բերված ապրանքների և ստացած ծառայությունների գծով էլեկտրոնային եղանակով ստացած հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չի ներկայացրել, իսկ այդ հարկային հաշիվներն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացվել են տեղեկանքի ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո, ինչը հանգեցրել է Օրենքի 20-րդ և 43.1-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտման:

Վերաքննիչ դատարանը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված իմպերատիվ պահանջը դիտարկելով որպես ձևական պահանջ, նշել է, որ ամրագրված պարտականության կատարումն էական չէ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Օրենքը հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարի հաշվանցում կատարելու համար տվյալ դեպքում Օրենքի 20-րդ, 23-րդ և 43.1-րդ հոդվածներով նախատեսում է որոշակի պայմանների ամբողջություն, որոնք որևէ դեպքում չեն կարող մեկնաբանվել իբրև հիմնական և ձևական պահանջներ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ վճարումներ կատարելու փաստը հարկ վճարողին չի ազատում Օրենքի 20-րդ հոդվածով վերջինիս վրա դրված՝ հարկային հաշիվներն էլեկտրոնային կարգով հաստատելուց հետո միայն հաշվանցում կատարելու պարտավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.06.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նախագահի 25.10.2017 թվականի թիվ 1013121 հանձնարարագրով հանձնարարվել է Ընկերությունում «ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա հարկային մարմնին ներկայացված հաշվետվությունների, հաշվարկների և այլ փաստաթղթերի արժանահավատությունը պարզելու, ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու նպատակով անցկացնել բյուջեի հետ

փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում» (**հատոր 1-ին, գ.թ. 33-34**).

2) Տեսչության կողմից 28.12.2017 թվականին ընդունված թիվ 1013121 ստուգման ակտի 4-6-րդ կետերով արձանագրվել է նաև, որ 2014-2017 թվականների՝ նույն կետերում նշված ժամանակաշրջանների համար Ընկերության կողմից ձեռք բերված ապրանքների, մատուցված ծառայությունների գծով էլեկտրոնային եղանակով ստացած հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել, այդ հարկային հաշիվները հարկ վճարողի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացվել են տեղեկանքի ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո, ուստի այդ հարկային հաշիվների դեբետի գումարները հաշվանցման ենթակա չեն տվյալ ժամանակաշրջանների ավելացված արժեքի հարկի հաշվարկներում, պետք է հաշվանցվեն այդ հարկային հաշիվներն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու օրն ընդգրկող հետագա հաշվետու ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համար ներկայացվող ավելացված արժեքի հարկի հաշվարկով:

Նշված իրավախախտման համար Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 13.643.562 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 7-15**):

4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, որը դրսևորվել է Վերաքննիչ դատարանի կողմից Օրենքի մինչև 01.01.2015 թվականը գործող խմբագրությամբ 20-րդ և 43.1-րդ հոդվածներն ու 01.01.2015 թվականից գործող խմբագրությամբ Օրենքի 20-րդ, 23-րդ և 43.1-րդ հոդվածները խախտելու արդյունքում արդարադատության բուն էությունը խաթարելու եղանակով:

Վերոգրյալով պայմանավորված Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ավելացված արժեքի հարկի հաշվարկով հաշվանցման ենթակա են հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և սրացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները, եթե դրանք մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ չեն վավերացվել էլեկտրոնային ստորագրությամբ:

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Օրենքի 18-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ (...) ԱԱՀ վճարող համարվող անձինք կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ապրանք մատակարարելիս կամ ծառայություն մատուցելիս պարտավոր են դուրս գրել նույն օրենքի համաձայն հարկային հաշիվ համարվող հաշվարկային փաստաթուղթ, եթե այդ գործարքը ենթակա է ԱԱՀ-ի 20% (16.67%՝ հաշվարկային) դրույքաչափով հարկման: Հարկային հաշիվը դուրս է գրվում ապրանք մատակարարելու կամ ստացողի կողմից ծառայությունն ընդունելու օրը (...):

Մինչև 01.01.2015 թվականը գործող խմբագրությամբ Օրենքի 18-րդ հոդվածի հինգերորդ պարբերության համաձայն՝ հարկային հաշիվ է համարվում նույն օրենքի 20 հոդվածով սահմանված կարգով լրացված և դուրս գրված հաշվարկային թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթը: Էլեկտրոնային հարկային հաշիվը էլեկտրոնային փաստաթուղթ է և պաշտպանված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ (...):

Մինչև 01.01.2015 թվականը գործող խմբագրությամբ Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ (...) հարկային հաշիվները դուրս են գրվում էլեկտրոնային եղանակով կամ հարկային մարմնից ձեռք բերված հարկային հաշիվների թղթային ձևերի լրացմամբ: (...) Նույն օրենքի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք եռամսյակի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում են տեղեկանք եռամսյակի ընթացքում իրենց ձեռք բերած ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ: (...) Նույն մասում նշված տեղեկանքը կարող է ներկայացվել էլեկտրոնային եղանակով: (...) Էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններն այդ հաշիվները դուրս գրողի կողմից չեն ներառվում նույն հոդվածով սահմանված տեղեկանքում այն հաշիվների մասով, որոնք դուրս են գրվել ինտերնետային կապի միջոցով, այն հաշիվների մասով, որոնք դուրս են գրվել առանց ինտերնետային կապի, և որոնց վերաբերյալ տեղեկատվությունը մինչև տեղեկանքի ներկայացման ժամկետի ավարտը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է հարկային մարմին: Էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները չեն ներառվում այդ հարկային հաշիվները ստացողի կողմից ներկայացման ենթակա՝ նույն հոդվածով սահմանված տեղեկանքում, եթե այդ հաշիվների ստացումը էլեկտրոնային կարգով մինչև տեղեկանքի ներկայացման ժամկետի ավարտը հավաստել է ստացողը (...):

Օրենքի 23-րդ հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ նույն օրենքի համաձայն՝ ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված այն ապրանքների և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով (բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի), որոնց դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարվել է վճարում, բացառությամբ նույն հոդվածով սահմանված դեպքերի (...):

Մինչև 01.01.2015 թվականը գործող խմբագրությամբ Օրենքի 43.1-րդ հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ (...) ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց վերաբերյալ, նույն օրենքի 20 հոդվածին համապատասխան, հարկային մարմին տեղեկություններ (այդ թվում՝ ճշգրտված) չեն ներկայացվել կամ որոնց վերաբերյալ ներկայացված կամ չներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում հարկային հաշվում արտացոլված տվյալներին (վավերապայմաններին)՝ հաշվանցման ենթակա չեն: Ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնք ներկայացվել են (ներառվել են տեղեկանքում) հարկային հաշվի ստացմանը հաջորդող որևէ հաշվետու ժամանակաշրջանում, հաշվանցվում են տեղեկությունների ներկայացման ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով (...):

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ մինչև 01.01.2015 թվականը գործող խմբագրությամբ Օրենքի 43.1-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ օրենսդիրը սահմանել է, որ հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման, *inter alia*, այն դեպքում, երբ այդ հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին չեն ներկայացվել նույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները: Փաստորեն, օրենսդիրը հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման հնարավորությունը պայմանավորել է այդ հարկային հաշիվների վերաբերյալ մինչև 01.01.2015 թվականը գործող

խմբագրությամբ Օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները հարկային մարմինն ներկայացվելու կամ չներկայացվելու հանգամանքով: Մինչև 01.01.2015 թվականը գործող խմբագրությամբ Օրենքի 20-րդ հոդվածով սահմանված իրավական նորմերի վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ պետական բյուջե վճարվող հարկատեսակ համարվող ավելացված արժեքի հարկ վճարող անձինք, եռամսյակի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը, ներկայացնում են տեղեկանք եռամսյակի ընթացքում իրենց ձեռք բերած ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնցում տվյալ եռամսյակի ընթացքում ստացված կամ տրամադրված հաշիվներում ներառված հարկվող շրջանառության արժեքը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափը: Ընդ որում, այդ տեղեկությունը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով: Այսինքն՝ օրենսդիրը տնտեսվարող սուբյեկտին հնարավորություն է ընձեռել ընտրելու նշված տեղեկությունը հարկային մարմինն ներկայացնելու եղանակը (յրեն, «Ինեսս և Իրինա քույրեր» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ2/0073/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2019 թվականի որոշումը):

07.07.2011 թվականին ընդունված, 30.07.2011 թվականին ուժի մեջ մտած և 23.06.2018 թվականին ուժը կորցրած «Հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը հարկային մարմիններին ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 937-Ն որոշման հավելվածով հաստատված «Հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը հարկային մարմիններին ներկայացնելու կարգի» (այսուհետ՝ Հավելված) 1-ին կետի համաձայն՝ նույն կարգով կանոնակարգվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի պահանջներին համապատասխան դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքի (այսուհետ՝ տեղեկանք), օրենքի 33-րդ հոդվածին համապատասխան ճշգրտված տեղեկությունների ներկայացման, օրենքի 43.1-ին հոդվածի պահանջներին համապատասխան հաշվանցումների կատարման կարգը (...):

Հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվում՝ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով դուրս գրված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով և ժամկետում հարկ վճարողի կողմից անվավեր ճանաչված հարկային հաշիվների) վերաբերյալ, **ձեռք բերած ապրանքների, ստացած ծառայությունների գծով էլեկտրոնային եղանակով ստացած այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնց ստացումը, մինչև տեղեկանքի ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը, վավերացված է հարկ վճարողի էլեկտրոնային ստորագրությամբ:**

Հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ **էլեկտրոնային եղանակով ստացած հարկային հաշիվ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացումը համարվում է հարկային հաշիվ վերաբերյալ տեղեկության ներկայացում:** Մինչև տեղեկանքի ներկայացման վերջնաժամկետի օրը (ներառյալ) էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ներառվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում և հաշվանցվում են օրենքով սահմանված դեպքերում, կարգով և չափերով: Տեղեկանքի ներկայացման վերջնաժամկետից հետո էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ ստացողի կողմից ներկայացվում են նույն կարգին համապատասխան: Տեղեկանքի ներկայացման վերջնաժամկետից հետո էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը կատարվում է նույն կարգով սահմանված հաշվետու ժամանակաշրջանում օրենքով սահմանված՝ դեպքերում, կարգով և չափերով:

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով վերը նշված իրավական դիրքորոշումը, արձանագրում է, որ վկայակոչված իրավակարգավորումներից բխում է, որ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու պարտականություն չեն կրում նաև այն դեպքում, երբ ձեռք բերած ապրանքների, ստացած ծառայությունների գծով հարկային հաշիվներն ստացել են էլեկտրոնային եղանակով և մինչև տեղեկանքի ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը դրանց ստացումը վավերացրել են հարկ վճարողի էլեկտրոնային ստորագրությամբ: Ընդ որում, այդ դեպքում ինքնին էլեկտրոնային եղանակով ստացած հարկային հաշվի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացումը համարվում է հարկային հաշվի վերաբերյալ տեղեկության ներկայացում, իսկ այդ հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ներառվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում և հաշվանցվում են օրենքով սահմանված դեպքերում, կարգով և չափերով:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն պարագայում, երբ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային հաշիվներն ստացել են էլեկտրոնային եղանակով և մինչև տեղեկանքի ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը դրանց ստացումը չեն վավերացրել հարկ վճարողի էլեկտրոնային ստորագրությամբ, ապա հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման, քանի որ այդ դեպքում համարվում է, որ այդ հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին չեն ներկայացվել նույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև 01.01.2015 թվականից գործող խմբագրությամբ Օրենքի համապատասխան դրույթներին: Այսպես՝

01.01.2015 թվականից գործող խմբագրությամբ Օրենքի 18-րդ հոդվածի հինգերորդ պարբերության համաձայն՝ հարկային հաշիվ է համարվում նույն օրենքի 20 հոդվածով սահմանված կարգով լրացված և դուրս գրված հաշվարկային էլեկտրոնային փաստաթուղթը: Հարկային հաշիվը էլեկտրոնային փաստաթուղթ է և պաշտպանված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ (...):

01.01.2015 թվականից գործող խմբագրությամբ Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ (...) հարկային հաշիվները դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով: Նույն օրենքի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկային մարմին են ներկայացնում տեղեկատվություն իրենց կողմից առանց ինտերնետային կապի դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ, **էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնում են հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների և ծառայություն մատուցողների կողմից դուրս գրված հարկային հաշիվները:**

01.01.2015 թվականից գործող խմբագրությամբ Օրենքի 43.1-րդ հոդվածի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում (այդ թվում՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո դուրս գրված, սակայն այդ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող) առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնք **մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) էլեկտրոնային ստորագրությամբ չեն վավերացվել, տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով հաշվանցման ենթակա չեն** և կարող են հաշվանցվել այդ հարկային հաշիվներն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու օրն ընդգրկող հետագա հաշվետու ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով (հաշվարկներով):

Վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ԱԱՀ վճարող համարվող անձինք մինչև օրենքով սահմանված ժամկետի ավարտը կրում են կա՛մ իրենց կողմից առանց ինտերնետային կապի դուրս

գրված հարկային հաշիվների վերաբերյալ սահմանված կարգով հարկային մարմին տեղեկատվություն ներկայացնելու, կա՛մ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների ու ծառայություն մատուցողների կողմից դուրս գրված հարկային հաշիվներն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու պարտականություն: Ընդ որում, 01.01.2015 թվականից գործող խմբագրությամբ Օրենքի 43.1-րդ հոդվածում օրենսդիրը հստակ նախատեսել է, որ համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված ու մինչև օրենքով սահմանված ժամկետի ավարտն էլեկտրոնային ստորագրությամբ չվավերացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով հաշվանցման ենթակա չեն: Միաժամանակ օրենսդիրը սահմանել է, որ այդ ԱԱՀ-ի գումարները կարող են հաշվանցվել համապատասխան հարկային հաշիվներն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու օրն ընդգրկող հետագա հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով:

Վճռաբեկ դատարանը, անհրաժեշտ համարելով բացահայտել վերը նշված իրավակարգավորումները սահմանելիս օրենսդրի հետապնդած նպատակը, արձանագրում է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում էլեկտրոնային ստորագրությամբ հարկային հաշիվների վավերացման պահանջը հանդիսանում է հարկային հաշիվների դեբետի գումարների հաշվանցումն իրականացնելու համար անհրաժեշտ նախապայման և հարկատուի կողմից իր հարկային պարտավորությունների բարելիսիճ կատարման ու հնարավոր խախտումների, մասնավորապես՝ անապրանք գործարքների իրականացումը բացառելու համար հուսալի երաշխիք:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Օրենքի թե՛ մինչև 01.01.2015 թվականը գործող և թե՛ 01.01.2015 թվականից հետո գործող խմբագրությունների՝ վկայակոչված դրույթներով ըստ էության նախատեսվել են նույնաբովանդակ ու հավասարազոր իրավակարգավորումներ, որոնց համակարգային վերլուծությունից հետևում է, որ Օրենքի 23-րդ հոդվածի իմաստով ԱԱՀ վճարող անձինք համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարից արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարներն առանց հարկային մարմին տեղեկատվություն ներկայացնելու հաշվանցելու (պակասեցնելու) իրավունք ունեն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարել են համապատասխան վճարում,

2) հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների ու ծառայություն մատուցողների կողմից դուրս գրված այդ հարկային հաշիվները վերը նշված ժամկետում վավերացրել են իրենց էլեկտրոնային ստորագրությամբ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է մասնակիորեն՝ ավելացված արժեքի հարկի մասով, վերացնել Տեսչության 28.12.2017 թվականի թիվ 1013121 ստուգման ակտը, որի 4-6-րդ կետերով արձանագրվել է նաև, որ Տեսչության կողմից 28.12.2017 թվականին ընդունված թիվ 1013121 ստուգման ակտի 4-6-րդ կետերով արձանագրվել է նաև, որ 2014-2017 թվականների՝ նույն կետերում նշված ժամանակաշրջանների համար Ընկերության կողմից ձեռք բերված ապրանքների, մատուցված ծառայությունների

գծով էլեկտրոնային եղանակով ստացած հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել, այդ հարկային հաշիվները հարկ վճարողի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացվել են տեղեկանքի ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո, ուստի այդ հարկային հաշիվների դեբետի գումարները հաշվանցման ենթակա չեն տվյալ ժամանակաշրջանների ավելացված արժեքի հարկի հաշվարկներում, պետք է հաշվանցվեն այդ հարկային հաշիվներն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու օրն ընդգրկող հետագա հաշվետու ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համար ներկայացվող ավելացված արժեքի հարկի հաշվարկով: Միաժամանակ նշված իրավախախտման համար Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ ընդամենը 13.643.562 ՀՀ դրամի չափով:

Դատարանը 15.10.2018 թվականի վճռով հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ մինչև 01.01.2015 թվականը գործող խմբագրությամբ, ինչպես նաև դրանից հետո «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված է եղել բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին վճարում կատարելու դեպքում ավելացված արժեքի հարկ վճարող անձանց կողմից հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի վճարվող գումարից հաշվանցում (պակասեցում) կատարելու հնարավորություն», գտել է, որ «հայցվորը, համարվելով ավելացված արժեքի հարկ վճարող, բովանդակային առումով կատարել է ստուգման ակտով իրեն առաջադրված պարտավորությունը՝ ավելացված արժեքի հարկի մասով, հետևաբար վիճարկվող ակտը՝ վիճարկվող մասով, կայացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի սխալ կիրառման հետևանքով»:

Վերաքննիչ դատարանը 19.06.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 15.10.2018 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ «տվյալ դեպքում 28.12.2017 թվականին կազմված թիվ 1013121 ստուգման ակտում հարկային մարմնի կողմից որևէ կերպ չի նշվել (որևէ խախտում չի արձանագրվել) դրանում վկայակոչված հարկային հաշիվներով Ընկերության կողմից համապատասխան սուբյեկտներին վճարումներ կատարված չլինելու մասին, որպիսի հանգամանքը պատասխանողի կողմից որևէ կերպ չի վիճարկվել նաև թե՛ Դատարանում գործի քննության ընթացքում ներկայացված գրավոր առարկություններով, թե՛ բերված վերաքննիչ բողոքում, միաժամանակ հարկային մարմնի կողմից որևէ առարկություն կամ հակափաստարկ չի ներկայացվել Դատարանում գործի քննության ընթացքում Ընկերության կողմից ներկայացված՝ բանկի միջոցով կատարված վճարումների (վճարման հանձնարարագրերի) վերաբերյալ», «սույն գործի փաստական հանգամանքների, մասնավորապես՝ 28.12.2017 թվականի թիվ 1013121 ստուգման ակտում նշված ժամանակահատվածներում գնված ապրանքների և ստացված ծառայությունների գծով համապատասխան կազմակերպությունների (մատակարարների) դուրս գրած հարկային հաշիվներով Ընկերության կողմից բանկի միջոցով վերջիններիս վճարումներ փաստացի կատարված լինելու, այդ հանգամանքը թիվ 1013121 ստուգման ակտով արձանագրված լինելու պայմաններում է հայցվորի կողմից վճարվող ԱԱՀ-ի գումարներից հիշյալ հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով հաշվանցում (պակասեցում) կատարելու համար այդ հարկային հաշիվներն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելը հանդիսացել ոչ էական, այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե վերոհիշյալ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածով սահմանված պահանջի՝ ընդհանրապես ձևական լինելուն, այլ ընդամենը, սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում Ընկերության կողմից նշված իրավանորմի պահանջի կատարման անհրաժեշտությունն է կրել ձևական բնույթ»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը (*լրե՛ս, Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը հստակորեն կանխորոշել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության դատական վերահսկողության սահմանները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Դատարանի կողմից վարչական ակտի իրավաչափության գնահատումը պետք է կատարվի տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերով սահմանված պահանջների պահպանման հարցը պարզելու միջոցով (*լրե՛ս, Հասմիկ Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/8975/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը, սույն գործի շրջանակներում ձեռնամուխ լինելով գնահատելու վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը՝ ստուգելով դրա համապատասխանությունն օրենսդրության պահանջներին,

արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ պատճառաբանությունները չէին կարող հիմք հանդիսանալ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 15.10.2018 թվականի վճիռն անփոփոխ թողնելու համար, քանի որ Ընկերությունը կարող էր վերը նշված ավելացված արժեքի հարկի գումարներն առանց հարկային մարմնին տեղեկատվություն ներկայացնելու հաշվանցման (պակասեցման) իրավունք ձեռք բերել միայն այն դեպքում, եթե, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, առկա լինել նաև նման իրավունքի իրացման համար անհրաժեշտ մյուս պարտադիր պայմանը, այն է՝ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների ու ծառայություն մատուցողների կողմից դուրս գրված համապատասխան հարկային հաշիվներն օրենքով սահմանված ժամկետում վավերացրած լինել էլեկտրոնային ստորագրությամբ, որպիսի փաստի հաստատման ուղղությամբ ստորադաս դատարանները քննություն չեն իրականացրել: Ավելին՝ նշված պայմանը չպահպանելը գնահատել են որպես ոչ էական և ձևական խախտում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, ոչ իրավաչափորեն սույն գործի քննության և լուծման համար էական են համարել ու Տեսչության 28.12.2017 թվականի թիվ 1013121 ակտը մասնակիորեն՝ ավելացված արժեքի հարկի մասով, անվավեր են ճանաչել ըստ էության միայն այն հիմքով, որ 28.12.2017 թվականի թիվ 1013121 ստուգման ակտում նշված ժամանակահատվածներում գնված ապրանքների և ստացված ծառայությունների գծով համապատասխան մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներով Ընկերության կողմից վերջիններիս վճարումները փաստացի կատարված են եղել:

Մինչդեռ սույն որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով նշված եզրահանգման իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ավելացված արժեքի հարկի հաշվարկով այդ ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները հաշվանցման ենթակա կլինեին, եթե առկա լինել նաև մատակարարների կողմից դուրս գրված համապատասխան հարկային հաշիվներն օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված լինելու պայմանը, որն ուղղակիորեն ամրագրված է սույն որոշմամբ վկայակոչված իրավական նորմերում: Արդյունքում ստորադաս դատարանները չեն պարզել սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերը նշված հարցը՝ ունենալով գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու պարտականություն: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը չէր կարող անվերապահորեն հանգել եզրակացության առ այն, որ Տեսչության 28.12.2017 թվականի թիվ 1013121 ակտը մասնակիորեն՝ ավելացված արժեքի հարկի մասով, իրավաչափ չէ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոնշյալ հարցը՝ գործի փաստական հանգամանքները նաև ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու արդյունքում պարզելու նպատակով ու դրա արդյունքում Տեսչության 28.12.2017 թվականի թիվ 1013121 ակտի իրավաչափությունն օրենքով սահմանված կարգով գնահատելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և գործն ուղարկվում է նոր քննության, գտնում է, որ տվյալ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.06.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/2553/05/19
2022թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/2553/05/19
Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան
Դատավորներ՝ Կ. Բաղդասարյան
Ա. Սարգսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- | | |
|-----------------------------|---------------|
| <i>նախագահող և զեկուցող</i> | Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ |
| | Ս. ԱՆՏՈՆՅԱՆ |
| | Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ |
| | Հ. ԲԵԴԵՎՅԱՆ |
| | Մ. ԴՐՄԵՅԱՆ |
| | Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ |
| | Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ |
| | Ա. ՄԿՐՏՉՅԱՆ |
| | Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| | Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ |
| | Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ |

2022 թվականի մայիսի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով «Դալար Գազ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Ռուբիկ Փանոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.07.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի ընդդեմ Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) Կոմիտեի 04.02.2019 թվականի թիվ 000274 որոշումն ամբողջությամբ վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը
Դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը պահանջել է ամբողջությամբ վերացնել Կոմիտեի 04.02.2019 թվականի թիվ 000274 որոշումը:
ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ալ. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 24.02.2020 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.07.2021 թվականի որոշմամբ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.02.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը (ներկայացուցիչ՝ Երեմիա Ասատրյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ հարկային օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետը, կիրառել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անվավեր է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործի բոլոր հանգամանքները և գործում առկա ապացույցները, հաշվի չի առել, որ քննիչի որոշումը բողոքարկված լինելու պայմաններում հարկային մարմնի կողմից ՀՀ հարկային օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները առերևույթ խախտված լինելու փաստի առկայությունը «որոշում» է ինքը՝ հարկ վճարողը (դրա պաշտոնատար անձը), այսինքն՝ տվյալ փաստի առկայությունը նրա սուբյեկտիվ ընկալման արդյունքն է, նրա կողմից հարկային մարմնի համապատասխան վարքագծի գնահատման հետևանք, ուստի այդ գնահատմամբ նշված իրավունքի բնույթի ցանկացած այլ մեկնաբանություն գործնականում անհնարին կդարձնի դրա իրացումը՝ վերածելով հոչակագրային կառուցակարգի, ուստի տվյալ պարագայում հայցվորի արարքում բացակայում են Վարչական իրավախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով սահմանված իրավախախտման հատկանիշները կամ առնվազն դրա սուբյեկտիվ կողմը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող իրավական հարցն այն չէ, թե արդյոք հարկային մարմինը կամ հայցվորը իրավասու էր կամ պետք է գնահատեր քրեական գործով կայացված որոշման պատճառաբանվածությունը կամ իրավաչափությունը, թե՛ ոչ: Այստեղ էականն այն է, որ սույն գործի պարագայում վիճարկվել է քննիչի որոշման իրավաչափությունը, և հայցվորի ընկալմամբ «առկա» չի եղել ստուգում նշանակելու և իրականացնելու հիմքը՝ այն է՝ քննիչի պատճառաբանված որոշումը:

Բացի այդ, միատեսակ փաստական հանգամանքներ ունեցող թիվ ՎԴ/3200/05/19 վարչական գործով ըստ հայցի «Արտաշատ Սիթի» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Մարգարյանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 01.03.2019 թվականի թիվ 024021-Վ որոշումը վերացնելու պահանջի մասին, որով համալիր հարկային ստուգում նշանակելու մասին քննիչի որոշումը բողոքարկված լինելու հիմքով տնտեսավարող սուբյեկտի տնօրենն արգելել էր հարկային ստուգումը և ենթարկվել վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը 01.03.2021 թվականի որոշմամբ, որը մտել է օրինական ուժի մեջ, հանգել է ամբողջովին հակառակ եզրահանգումների ի տարբերություն սույն գործի: Մասնավորապես, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը արձանագրել է հետևյալը. «*օրենսդիրը, նույն հարկ վճարողի մուր, կախված ռիսկայնության աստիճանից, համալիր հարկային ստուգումների իրականացման հաճախականություն սահմանելով, մի կողմից, ասպահովում է օրինականությունը և հնարավորինս բացառում է կամայականությունը հարկային մարմնի գործելաճան հարկային հսկողություն իրականացնելիս, իսկ մյուս կողմից, խթանում է թափանցիկ ու կանխարձեռնի ձեռնարկափորձական միջավայրի ձևավորումը: (...)Վերաքննիչ դատարանի գնահատմամբ քննիչի (ներառյալ) ստուգման մարմնի) որոշման պարզապես անվավեր լինելու հարկանիշի ամրագրումն ինքնանպարակ չէ. նման օրենսդրական ձևակերպումը միտքով է կանխելու կամայական*

վարքագծի դրսևորումը թե՛ քննիչի (հետաքննության մարմնի) և թե՛ հարկային մարմնի կողմից:

Նշված նորմի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ հարկային մարմնի ղեկավարի կողմից կարող է հարկային ստուգման հանձնարարագիր տրվել և դրա հիման վարող է համալիր հարկային ստուգում իրականացվել միայն քննիչի (հետաքննության մարմնի) պարճատարանված որոշման հիման վրա, ինչը նշանակում է, որ որոշման պարճատարանված լինելու հանգամանքը յուրաքանչյուր նման դեպքում հարկային մարմնի համար առանձին ու ինքնուրույն գնահատման առարկա է»:

Այսինքն՝ առկա է մի իրավիճակ, երբ միատեսակ փաստական հանգամանքներ ունեցող երկու գործերով Վերաքննիչ դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի, ՀՀ հարկային օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 337-րդ հոդվածի վերաբերյալ տվել է իրար հակասող կամ միմյանցից տարբերվող մեկնաբանություններ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.07.2021 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

2.1. Վճարել բողոքի պարտահանսի հիմնավորումները

ՀՀ հարկային օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի ուժով հարկ վճարողը և դրա պաշտոնատար անձը ՀՀ հարկային օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի խախտման շրջանակներում իրավունք են ձեռք բերում արգելելու հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը միայն այն դեպքում, երբ նշված նորմի խախտում թույլ է տվել հարկային մարմինը: Այս համատեքստում աներկբա է, որ հարկային մարմինը տեսականորեն կարող է խախտում թույլ տալ միայն իրեն առաջադրված պարտադիր կատարման ենթակա պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման միջոցով:

ՀՀ հարկային օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի շրջանակներում հարկային մարմնին առաջադրված պարտականությունների շրջանակն ընդգրկում է միայն ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի կողմից նույն կետով նախատեսված՝ հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը ստուգման հանձնարարագրի հետ միասին հարկ վճարողին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին տրամադրելու պարտականությունը: Ուստի ՀՀ հարկային օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի խախտում կարող է համարվել միայն նշված պարտականության չկատարումը:

Միաժամանակ, որևէ վերաբերելի իրավանորմ հարկային մարմնին քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում քննիչի կողմից իր լիազորությունների սահմաններում քրեական գործով կայացված որոշման պատճառաբանվածության գնահատման լիազորությամբ չի օժտում, ինչը ևս մեկ անգամ հաստատվում է ՀՀ հարկային օրենսգրքի 36-րդ հոդվածով:

Ինչ վերաբերում է թիվ ՎԳ/3200/05/19 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշմանը, ապա դատավարության կողմի՝ մեկ այլ գործով դատական ակտի մեջբերման պարագայում ՀՀ վարչական դատարանի կողմից այդ փաստարկին անդրադառնալու պարտականություն ծագում է միայն այն պարագայում, երբ կողմը հիմնավորում է քննվող գործի և մեջբերված գործի փաստական հանգամանքների նույնանման լինելու հանգամանքը, ինչը տվյալ դեպքում հայցվորը չի արել:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ռաֆիկ Մաշադյանի 21.11.2018 թվականի թիվ 1011747/1 հանձնարարագրի (այսուհետ՝ Հանձնարարագիր) համաձայն՝ Կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության

ստուգումների թիվ 11 բաժնի գլխավոր հարկային տեսուչներ Գագիկ Գևորգյանին, Մարտին Դոխոյանին և Արամ Նիկոյանին հանձնարարվել է Ընկերությունում իրականացնել համալիր հարկային վերստուգում: Հանձնարարագրի հրապարակման համար որպես հիմք է նշվել ՀՀ հարկային օրենսգրքը, ՀՀ հարկային օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին համապատասխան ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Մինասյանի «Թիվ 58158918 քրեական գործով ստուգում կամ վերստուգում նշանակելու մասին» 31.10.2018 թվականի որոշումը: Հանձնարարագրում 27.11.2018 թվականին արված գրառման համաձայն Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը ծանոթացել է Հանձնարարագրին, հրաժարվել է ստորագրել և ստանալ այն (**հաստոր 1-ին, գ.թ. 70-71**).

2) Ընկերության գործադիր տնօրեն Ռուբիկ Փանոսյանի գրավոր հայտարարության համաձայն տեսուչների կողմից իրեն է ներկայացվել Հանձնարարագիրը, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Մինասյանի «Թիվ 58158918 քրեական գործով ստուգում կամ վերստուգում նշանակելու մասին» 31.10.2018 թվականի որոշումը: Նշվել է նաև, որ Հանձնարարագրին ծանոթանալուն զուգահեռ ծանոթացել է քննիչի որոշմանը և գտել է, որ Ընկերությունը, ինչպես նաև հիմնադիրները որևէ առնչություն չունեն քննվող քրեական գործի հետ, և վերստուգումը իրականացնելու հանգամանքը պատճառաբանված չէ, որը համարվում է օրենքի պահանջ (**հաստոր 1-ին, գ.թ. 72**).

3) Ստուգման Հանձնարարագրում նշված գլխավոր հարկային տեսուչների կողմից 19.12.2018 թվականին կազմվել է հարկային պարտավորությունների հաշվարկումն անհնարին դառնալու վերաբերյալ թիվ 1011747/1 արձանագրությունը (**հաստոր 1-ին, գ.թ. 68-69**).

4) Կոմիտեի իրավաբանական վարչության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Բաղդասարյանի կողմից 31.01.2019 թվականին կազմվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 274 արձանագրությունը (**հաստոր 1-ին, գ.թ. 41-42**).

5) Կոմիտեի նախագահի տեղակալ Ռ. Բաղասյանի 04.02.2019 թվականի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 000274 որոշմամբ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ նշանակելով տուգանք 250.000 ՀՀ դրամի չափով՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի (**հաստոր 1-ին, գ.թ. 9-12, 35-38**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ այլ գործով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածը կիրառվել է հակասող մեկնաբանությամբ, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման հիման վրա իրականացվող հարկային ստուգումը տնտեսավարող սուբյեկտի (հարկ վճարողի) կողմից արգելելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- *արդյո՞ք ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու իրավահամարումն առկա է այն պայմաններում, երբ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարն արգելում է հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը (հարկային արտոգումը)՝ ստուգման իրականացման համար հիմք հանդիսացող հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը պատճառաբանված չլինելու հիմքով:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 1821 հոդվածի համաձայն՝ իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանում նրա մուտք գործելն արգելելը կամ ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնելով կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրիստասպատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի իրավակարգավորման առանձնահատկություններին, արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է այդ վարույթի խնդիրները: Դրանցից են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմնին պարզել գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտում, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված

հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները՝ ղեկավարվելով օրենքով (*տե՛ս, Սուրեն Մխնյանս ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 33-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձը պարտավոր է չխոչընդոտել հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց ծառայողական պարտականությունների կատարմանը, կատարել նրանց օրինական պահանջները:

Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձն իրավունք ունեն՝ արգելելու հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը, հարկային մարմնի պաշտոնատար անձանց չտրամադրելու փաստաթղթեր կամ բացատրություններ, եթե **հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք** խախտել են Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և (կամ) 36-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի դրույթները, և (կամ) եթե հարկային մարմինը խախտել է Օրենսգրքի 337-339-րդ և (կամ) 341-րդ հոդվածների դրույթները՝ այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցելով հարկային մարմնի ղեկավարին:

Օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային ստուգումը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկ վճարողների (համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջաններում կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերում՝ իրավահաջորդի (իրավահաջորդների) մոտ նաև իրավանախորդների մասով), բացառությամբ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հաշվառումից հանված անհատ ձեռնարկատիրոջ մոտ նույն գլխով սահմանված կարգով իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով հարկային պարտավորությունները ճշգրտելը, այդ թվում՝ ինքնուրույն հաշվարկելն ու վերահաշվարկելը, հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմինն իրավունք ունի իրականացնելու հետևյալ տեսակների հարկային ստուգումները.

- 1) համալիր հարկային ստուգում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջների կատարման ստուգում.
- 2) թեմատիկ հարկային ստուգում՝ հարկ վճարողի գործունեությանն առնչվող հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի՝ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված առանձին պահանջի (պահանջների) կատարման ստուգում:

Օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համալիր հարկային ստուգումները նույն հարկ վճարողի մոտ, կախված ռիսկայնության աստիճանից, իրականացվում են հետևյալ հաճախականությամբ.

- 1) բարձր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան հարկային տարվա ընթացքում մեկ անգամ.
- 2) միջին ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան երեք հաջորդական հարկային տարիների ընթացքում մեկ անգամ.

3) ցածր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան հինգ հաջորդական հարկալին տարիների ընթացքում մեկ անգամ:

Նույն հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները չեն տարածվում համալիր հարկային ստուգումների անցկացման այն դեպքերի վրա, երբ համալիր հարկային ստուգումը նշանակվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան: Նույն կետում նշված համալիր հարկային ստուգումներն իրականացվում են հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա՝ որոշմամբ նշված հարցերի և ժամանակաշրջանի շրջանակներում: Հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը ստուգման հանձնարարագրի հետ միասին տրամադրվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ որպես վերստուգման իրականացման հիմք նախատեսվել է նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան վերստուգում նշանակելը: Այս դեպքում ևս վերստուգումներն իրականացվում են հետաքննության մարմնի կամ քննիչի **պատճառաբանված որոշման հիման վրա**՝ որոշմամբ նշված հարցերի և ժամանակաշրջանի շրջանակներում: Հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը ստուգման հանձնարարագրի հետ միասին տրամադրվում է հարկ վճարողին կամ նրա պաշտոնատար անձին:

ՀՀ վճարեկ դատարանը, նախկինում կայացրած իր որոշմամբ անդրադառնալով ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու իրավախախտման բովանդակությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու համար, որը կարող է դրսևորվել հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ.

- իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը,

- տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանում իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի մուտք գործելն արգելելը,

- ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձին չտրամադրելը,

- կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը,

- օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ընթացքին այլ կերպ խոչընդոտելը:

Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի դիսպոզիցիայի բովանդակությունից բխում է, որ նշված հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է վրա հասնել միայն այն դեպքում, երբ անձը, կատարելով վերոգրյալ արարքներից որևէ մեկը, խոչընդոտում է ստուգումներ իրականացնող իրավասու պետական մարմինների աշխատանքին: Հետևաբար յուրաքանչյուր կոնկրետ գործով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման առկայության փաստը բացահայտելու համար վարչական մարմինը նախևառաջ պետք է պարզի, թե արդյոք տնտեսավարող սուբյեկտի մոտ օրենքով սահմանված կարգով ստուգում իրականացվել է, թե՛ ոչ: Այնուհետև համապատասխան վարչական մարմինը պետք է պարզի ստուգում

իրականացնող պաշտոնատար անձին խոչընդոտելու փաստի առկայությունը կամ բացակայությունը:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման փաստը կարող է առկա լինել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով իրականացվում է ստուգում,

բ) տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված եղանակներից որևէ մեկով խոչընդոտում է ստուգում իրականացնող պաշտոնատար անձի աշխատանքին (*տես, Հովհաննես Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/5166/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու համար նախ և առաջ անհրաժեշտ է, որպեսզի ստուգումն իրականացվի օրենքով սահմանված կարգով, և երկրորդ՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարվեն այդ ստուգման բնականոն ընթացքը խոչընդոտելուն ուղղված գործողություններ: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ **օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգմանը խոչընդոտելն է** հանգեցնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի դիսպոզիցիայի բովանդակությանը համապատասխանող վարչական պատասխանատվության:

Ընդ որում, ստուգումը համարվում է օրենքով սահմանված կարգով իրականացվող, եթե այն համապատասխանում է ստուգման հիմքերին, ինչպես նաև դրա անցկացման ընթացակարգերին ներկայացվող օրենսդրական պահանջներին:

Միաժամանակ, ՀՀ հարկային օրենսդրությամբ հարկային ստուգումների իրականացման հաճախականության կարգից նախատեսված է բացառություն՝ ստուգումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված լինելու դեպքերի համար, որպիսի պարագայում ստուգման հիմքը հետաքննության մարմնի կամ քննիչի **պատճառաբանված որոշումն է**: Նույն հիմքը նախատեսվում է նաև օրենքով սահմանված կարգով անցկացվող վերստուգումների համար: Ընդ որում, հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման պատճառաբանվածության պահանջ սահմանելու օրենսդրի նպատակն ուղղված է հետաքննության մարմնի կամ քննիչի, ինչպես նաև ստուգում իրականացնող մարմնի կողմից կամայական վարքագիծ դրսևորելու ռիսկի նվազեցմանը: Իսկ որոշման պատճառաբանվածության հատկանիշի ամրագրումը պայմանավորված է նաև տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգումների անցկացման համար հիմք հանդիսացող հանգամանքների և ստուգմամբ պարզման ենթակա հարցերի բացահայտմամբ, քանի որ, ինչպես արդեն իսկ նշվեց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումը համարվում է ՀՀ հարկային օրենսդրությամբ հարկային ստուգումների իրականացման հաճախականության կարգից բացառություն, և առանց համապատասխան հիմքերի տնտեսավարող սուբյեկտի մոտ անհարկի ստուգում իրականացնելը կհանգեցնի տնտեսավարող սուբյեկտի իրավունքների անտեղի միջամտության: Ուստի ստուգման համար հիմք հանդիսացող հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը պետք է պարունակի բավարար պատճառաբանություններ և հիմնավորումներ, որպեսզի տնտեսավարող սուբյեկտի մոտ ձևավորվի այն համոզմունքը, որ իր մոտ ստուգումն իրականացվում է օրենքի հիման վրա և ստուգմանն ուղղված գործողություններն իրավաչափ են:

Ուստի, վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված հարկային ստուգումների հիմքում դրված հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման պատճառաբանվածության հատկանիշի ամրագրումն ինքնանպատակ չէ, քանի որ այն առանցքային նշանակություն

ունի ինչպես դրա հիման վրա անցկացվող ստուգումների (վերստուգումների)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան անցկացված լինելու, այնպես էլ դրանց իրավաչափության գնահատման համար: Վերոգրյալով պայմանավորված էլ Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով տնտեսվարող սուբյեկտի համար ամրագրվել է այն իրավունքը, ըստ որի՝ որոշ դեպքերում հարկ վճարողին կամ դրա պաշտոնատար անձին հնարավորություն է ընձեռվում արգելելու հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը, ինչպես նաև հարկային մարմնի պաշտոնատար անձանց չտրամադրելու փաստաթղթեր կամ բացատրություններ: *Հերևաքար այն դեպքում, երբ տնտեսվարող սուբյեկտը, հերաքննության մարմնի կամ քննիչի որոշումն իրեն տրամադրելուց հետո դրա ուսումնասիրության արդյունքում ողջամերժելու եզրահանգում է, որ այն պարճատարանված չէ, այսինքն՝ որոշման մեջ չեն նշվել այն փաստական և իրավական հիմքերը, որոնցով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել հարկային արուզում իրականացնել րվյալ տնտեսվարող սուբյեկտի մուր, սպա նման պայմաններում հարկ վճարողի կողմից Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով իրեն վերապահված իրավունքի իրացումը՝ Վճարելի դատարանի գնահատմամբ չի կարող հանգեցնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված՝ արուզումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու իրավախախտման արձանագրմանը և նույն հոդվածով նախատեսված վարչական պարտախանայությունն միջոցը կիրառելի չի կարող լինել: Այլ կերպ ասած, հարկ վճարողին չի կարող իրավախախտում վերագրվել օրենքով, րվյալ դեպքում Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված իր իրավունքն իրացնելու համար:*

Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ռաֆիկ Մաշադյանի կողմից 21.11.2018 թվականին հրապարակված Հանձնարարագրով հանձնարարվել է Ընկերությունում իրականացնել համալիր հարկային վերստուգում:

Հանձնարարագրի հրապարակման համար որպես հիմք նշվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Մինասյանի «Թիվ 58158918 քրեական գործով ստուգում կամ վերստուգում նշանակելու մասին» 31.10.2018 թվականի որոշումը: Հանձնարարագրում 27.11.2018 թվականին արված գրառման համաձայն՝ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը ծանոթացել է Հանձնարարագրին, հրաժարվել է ստորագրել և ստանալ այն:

Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի գրավոր հայտարարության համաձայն՝ տեսուչների կողմից իրեն է ներկայացվել Հանձնարարագրը, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Մինասյանի «Թիվ 58158918 քրեական գործով ստուգում կամ վերստուգում նշանակելու մասին» 31.10.2018 թվականի որոշումը: Հանձնարարագրին ծանոթանալու գուցա հետ ծանոթացել է քննիչի որոշմանը և գտել է, որ Ընկերությունը, ինչպես նաև հիմնադիրները որևէ առնչություն չունեն քննվող քրեական գործի հետ, և վերստուգումն իրականացնելու հանգամանքը պատճառարանված չէ, որը համարվում է օրենքի պահանջ:

Ստուգման Հանձնարարագրում նշված գլխավոր հարկային տեսուչների կողմից 19.12.2018 թվականին կազմվել է հարկային պարտավորությունների հաշվարկում անհնարին դառնալու վերաբերյալ թիվ 1011747/1 արձանագրությունը:

Կոմիտեի նախագահի տեղակալ Ռ. Բադալյանի 04.02.2019 թվականի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 000274 որոշմամբ, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի, Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ նշանակելով տուգանք 250.000 ՀՀ դրամի չափով:

Դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը պահանջել է վերացնել Կոմիտեի 04.02.2019 թվականի թիվ 000274 որոշումը:

Դատարանը մերժել է Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի հայցը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Դատարանն արձանագրում է, որ ո՛չ Օրենսգրքի 337-րդ և 338-րդ հոդվածները, ո՛չ էլ որևէ այլ նորմ հարկային մարմնի ղեկավարին չի վերապահել քննիչի կողմից կայացված արուզում կամ վերարուզում նշանակելու որոշման հիմնավորվածությունը կամ պարճատարանվածության աստիճանը գնահատելու լիազորություն: (...) Հաշվի առնելով տվյալ գործով հասարակած փաստական հանգամանքները՝ դատարանն արձանագրում է, որ հարկային մարմինն ամբողջությամբ կատարել է օրենքով իրեն վերապահված պարտականությունը՝ հանձնարարագիրը քննիչի որոշման պարզեցիկ հետ միասին հայցվորին փրամադրելով: (...) «Դատար Գագ» ՄՊԸ-ի տնօրեն Ռուբիկ Փանոսյանի կողմից հարկային արուզման հանձնարարագիրն արանայուց հրաժարվելը, ինչպես նաև արուզման փաստացի սկսելու մասին նշում կատարելուց հրաժարվելը հանգեցրել է իր լիազորությունների շրջանակում արուզումներ իրականացնելու իրավասությանը օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով արուզում իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջների չկատարմանը, հետևաբար նաև՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված իրավախախտման կատարմանը»:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը՝ Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ հետևյալ հիմնավորմամբ. «Վերաքննիչ դատարանի համոզմամբ, հարկային մարմինն իրավասու էր ՀՀ հարկային օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի խնսարով քննիչի որոշման հիման վրա իրականացնել համալիր հարկային վերարուզում: Մինչդեռ, սույն վարչական գործում առկա՝ 19.12.2018թ. կազմված հարկային պարտավորությունների հաշվարկումն անհնարին դառնալու վերաբերյալ թիվ 1011747/1 արձանագրությամբ և այլ ասպացույցներով հասարակում է, որ «Դատար Գագ» ՄՊԸ-ի տնօրեն Ռուբիկ Փանոսյանը չի կատարել հարկային մարմնի տեսուչների օրինական պահանջները՝ իր վարքագծով խոչընդոտելով վերարուզման քննարկումն իրականացնանք, ինչն իրավաչափորեն հանգեցրել է վարչական պարտախանսարվության առաջացմանը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.1-ին հոդվածի հիմքով»:

Սույն որոշմամբ հայտնած իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Տվյալ դեպքում և՛ Դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը Օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետը ենթարկել են նեղ մեկնաբանության՝ նշված հոդվածի խախտում սահմանելով միայն հարկային մարմնի կողմից հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը հարկ վճարողին տրամադրելու պարտականության չկատարումը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի նման նեղ մեկնաբանությունը կարող է կամայականությունների տեղիք տալ և արժեզրկել վերոնշյալ իրավանորմի բովանդակությունը, քանի որ ՀՀ հարկային օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի կիրառման համար էական է ոչ թե այն, թե ով պետք է գնահատի հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման պատճառաբանվածությունը, այլ այն, որ տվյալ որոշումն իր էությունը պետք է լինի պատճառաբանված, այսինքն՝ առնվազն բովանդակի այն փաստական և իրավական հիմքերի շարադրանքը, որոնք հիմք են հանդիսացել նման որոշման կայացման համար: Հակառակ պարագայում, երբ որոշումը պատճառաբանված չէ, և հարկ վճարողի մոտ ողջամիտ կասկած է առաջանում դրա պատճառաբանվածության հարցում, վերջինս իրավասու է իրացնելու Օրենսգրքով իրեն վերապահված իրավունքը, այն է՝ արգելել հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը, ինչպես նաև հարկային մարմնի պաշտոնատար անձանց չորամադրել փաստաթղթեր կամ բացատրություններ: Ընդ որում, այդ դեպքում վերջինիս գործողությունները Վճռաբեկ դատարանի գնահատմամբ չեն կարող հանգեցնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության: Ստորադաս դատարանների եզրահանգումների արդյունքում, սակայն, ստացվում է, որ անկախ նրանից, թե հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը պատճառաբանված է, թե՛ ոչ, որևէ կերպ առնչվում է հարկ վճարողի

հետ, թե՛ ոչ, եթե հարկային մարմինը կատարել է նշված որոշումը հարկ վճարողին տրամադրելու իր պարտականությունը, ապա այդ դեպքում հարկ վճարողի կողմից ստուգմանը խոչընդոտելու գործողությունները հանգեցնում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության, ինչը Վճարել դատարանի գնահատմամբ իրավաչափ չէ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ անդրադառնալով թիվ ՎԳ/3200/05/19 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ Վճարել դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճարել դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճարել դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճարել դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաբնկալման հետևանքով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին:

Տվյալ դեպքում բողոքաբերի կողմից, որպես իրավական փաստարկ, վկայակոչվել է թիվ ՎԳ/3200/05/19 վարչական գործով ըստ հայցի «Արտաշատ Սիթի» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Մարգարյանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 01.03.2019 թվականի թիվ 024021-Վ որոշումը վերացնելու պահանջի մասին գործով կայացված դատական ակտում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի արտահայտած այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ քննիչի (հետաքննության մարմնի) որոշման պատճառաբանված լինելու հատկանիշի ամրագրումն ինքնանպատակ չէ, նման օրենսդրական ձևակերպումը միտված է կանխելու կանայական վարքագծի դրսևորումը թե՛ քննիչի (հետաքննության մարմնի) և թե՛ հարկային մարմնի կողմից: Հարկային մարմնի ղեկավարի կողմից կարող է հարկային ստուգման հանձնարարագիր տրվել և դրա հիման կարող է համալիր հարկային ստուգում իրականացվել միայն քննիչի (հետաքննության մարմնի) պատճառաբանված որոշման հիման վրա, ինչը նշանակում է, որ որոշման պատճառաբանված լինելու հանգամանքը յուրաքանչյուր նման դեպքում հարկային մարմնի համար առանձին ու ինքնուրույն գնահատման առարկա է:

Իրացնելով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու լիազորությունը՝ Վճարել դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Ստուգման համար հիմք հանդիսացող հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը պետք է լինի պատճառաբանված, որի հիման վրա միայն հարկ վճարողի մոտ անցկացվող ստուգումները և դրան ուղղված գործողությունները կարող են համարվել օրենքով սահմանված կարգով իրականացվող: Այսինքն՝ հարկային մարմինների կողմից Օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի խախտում է համարվում և՛ նշված որոշումը հարկ վճարողին չտրամադրելը, և՛ չպատճառաբանված որոշում տրամադրելը,

հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված պայմաններից թեկուզ և մեկի բացակայության պայմաններում հարկ վճարողի կողմից ստուգումն արգելելու արարքի դրսևորումը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի իմաստով չի կարող որակվել վարչական իրավախախտում և հանգեցնել նույն իրավանորմով նախատեսված վարչական պատասխանատվության:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները և դրանց վերլուծության արդյունքում արված եզրահանգումներն ու հետևությունները՝ Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի իրավակարգավորումով, գտնում է, որ վիճարկվող որոշումն ընդունվել է օրենքի սխալ մեկնաբանման հետևանքով, ուստի ելնթակա է անվավեր ճանաչման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանությամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով:

ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վերաքննիչ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը վերաքննիչ վարչական դատարանի կողմից մերժվում է, ապա վերջինս չպետք է կրի պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի հատուցման պարտականություն (յրեն, *Գագիկ Ավետիսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/1390/05/17 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով, որ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով օրենքի ուժով ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում, ՀՀ վճարեկ դատարանն արձանագրել է, որ վերը նշված իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև այն դեպքում, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վճարեկ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը ստորադաս դատարանի դատական ակտի բեկանման և փոփոխման արդյունքում մերժվում է վճարեկ դատարանի կողմից: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա չի կարող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վճարեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ այդ վճարեկ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվորի փոխվելու հանգամանքից (յրեն, *Քրիստինա Գևորկյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/6661/05/15 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 03.07.2020 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով, որ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է եղել սույն գործով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից, և նրա կողմից ներկայացված հայցը ենթակա է բավարարման Վճարեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճարեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.07.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «Դավար Գագ» ՍՊԸ-ի տնօրեն Ռուբիկ

Փանոսյանի հայցը բավարարել: Անվավեր ճանաչել Պետական եկամուտների կոմիտեի 04.02.2019 թվականի թիվ 000274 որոշումը:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/2553/05/19 վարչական գործով
10.05.2022 թվականին կայացված որոշման պատճառաբանական
և եզրափակիչ մասերի վերաբերյալ

10.05.2022 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 10.05.2022 թվականին գրավոր ընթացակարգով քննելով «Դալար Գագ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Ռուբիկ Փանոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.07.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) Կոմիտեի 04.02.2019 թվականի թիվ 000274 որոշումն ամբողջությամբ վերացնելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.07.2021 թվականի որոշումը բեկանել և փոփոխել այն՝ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի հայցը բավարարել: Անվավեր ճանաչել Պետական եկամուտների կոմիտեի 04.02.2019 թվականի թիվ 000274 որոշումը:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս, Տ. Պետրոսյանս, Է. Սեդրակյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապայմանություն նշել է հերկայար

Դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը պահանջել է ամբողջությամբ վերացնել Կոմիտեի 04.02.2019 թվականի թիվ 000274 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ալ. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 24.02.2020 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.07.2021 թվականի որոշմամբ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.02.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը (ներկայացուցիչ՝ Երեմիա Ասատրյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

2. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հերկայար

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ հարկային օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետը, կիրառել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հերկայար փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործի բոլոր հանգամանքները և գործում առկա ապացույցները, հաշվի չի առել, որ քննիչի որոշումը բողոքարկված լինելու պայմաններում հարկային մարմնի կողմից ՀՀ հարկային

օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները առերևույթ խախտված լինելու փաստի առկայությունը «որոշում» է ինքը՝ հարկ վճարողը (դրա պաշտոնատար անձը), այսինքն՝ տվյալ փաստի առկայությունը նրա սուբյեկտիվ ընկալման արդյունքն է, նրա կողմից հարկային մարմնի համապատասխան վարքագծի գնահատման հետևանք, ուստի այդ գնահատմամբ նշված իրավունքի բնույթի ցանկացած այլ մեկնաբանություն գործնականում անհնարին կդարձնի դրա իրացումը՝ վերածելով հոչակագրային կառուցակարգի, ուստի տվյալ պարագայում հայցվորի արարքում բացակայում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով սահմանված իրավախախտման հատկանիշները կամ առնվազն դրա սուբյեկտիվ կողմը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող իրավական հարցն այն չէ, թե արդյոք հարկային մարմինը կամ հայցվորը իրավասու էր կամ պետք է գնահատեր քրեական գործով կայացված որոշման պատճառաբանվածությունը կամ իրավաչափությունը, թե՛ ոչ: Այստեղ էականն այն է, որ սույն գործի պարագայում վիճարկվել է քննիչի որոշման իրավաչափությունը, և հայցվորի ընկալմամբ «առկա» չի եղել ստուգում նշանակելու և իրականացնելու հիմքը՝ այն է՝ քննիչի պատճառաբանված որոշումը:

Բացի այդ, միատեսակ փաստական հանգամանքներ ունեցող թիվ ՎԴ/3200/05/19 վարչական գործով ըստ հայցի «Արտաշատ Սիթի» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Մարգարյանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 01.03.2019 թվականի թիվ 024021-Վ որոշումը վերացնելու պահանջի մասին, որով համալիր հարկային ստուգում նշանակելու մասին քննիչի որոշումը բողոքարկված լինելու հիմքով տնտեսվարող սուբյեկտի տնօրենն արգելել էր հարկային ստուգումը և ենթարկվել վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը 01.03.2021 թվականի որոշմամբ, որը մտել է օրինական ուժի մեջ, հանգել է ամբողջովին հակառակ եզրահանգումների՝ ի տարբերություն սույն գործի: Մասնավորապես, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը արձանագրել է հետևյալը. «օրենսդիրը, նույն հարկ վճարողի մոտ, կախված ռիսկայնություն աստիճանից, համալիր հարկային ստուգումների իրականացման հաճախականություն սահմանելով, մի կողմից, ապահովում է օրինականությունը և հնարավորինս բացառում է կամայականությունը հարկային մարմնի գործելառում հարկային հսկողություն իրականացնելիս, իսկ մյուս կողմից, խթանում է թափանցիկ ու կանխատեսելի ձեռնարկատիրական միջավայրի ձևավորումը: (...)Վերաքննիչ դատարանի գնահատմամբ քննիչի (հետաքննության մարմնի) որոշման պատճառաբանված լինելու հատկանիշի ամրագրումն ինքնանպատակ չէ. նման օրենսդրական ձևակերպումը միտված է կանխելու կամայական վարքագծի դրսևորումը թե՛ քննիչի (հետաքննության մարմնի) և թե՛ հարկային մարմնի կողմից:

Նշված նորմի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ հարկային մարմնի ղեկավարի կողմից կարող է հարկային ստուգման հանձնարարագիր տրվել և դրա հիման կարող է համալիր հարկային ստուգում իրականացվել միայն քննիչի (հետաքննության մարմնի) պատճառաբանված որոշման հիման վրա, ինչը նշանակում է, որ որոշման պատճառաբանված լինելու հանգամանքը յուրաքանչյուր նման դեպքում հարկային մարմնի համար առանձին ու ինքնուրույն գնահատման առարկա է»:

Այսինքն՝ առկա է մի իրավիճակ, երբ միատեսակ փաստական հանգամանքներ ունեցող երկու գործերով Վերաքննիչ դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի, ՀՀ հարկային օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 337-րդ հոդվածի վերաբերյալ տվել է իրար հակասող կամ միմյանցից տարբերվող մեկնաբանություններ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.07.2021 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

2.1. Վճուարեկ բողոքի պարտասխանի հիմնավորումները

ՀՀ հարկային օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի ուժով հարկ վճարողը և դրա պաշտոնատար անձը ՀՀ հարկային օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի խախտման շրջանակներում իրավունք են ձեռք բերում արգելելու հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը միայն այն դեպքում, երբ նշված նորմի խախտում թույլ է տվել հարկային մարմինը: Այս համատեքստում աներկբա է, որ հարկային մարմինը տեսականորեն կարող է խախտում թույլ տալ միայն իրեն առաջադրված պարտադիր կատարման ենթակա պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման միջոցով:

ՀՀ հարկային օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի շրջանակներում հարկային մարմնին առաջադրված պարտականությունների շրջանակն ընդգրկում է միայն ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի կողմից նույն կետով նախատեսված հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը ստուգման հանձնարարագրի հետ միասին հարկ վճարողին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին տրամադրելու պարտականությունը: Ուստի ՀՀ հարկային օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի խախտում կարող է համարվել միայն նշված պարտականության չկատարումը:

Միաժամանակ, որևէ վերաբերելի իրավանքում հարկային մարմնին քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում քննիչի կողմից իր լիազորությունների սահմաններում քրեական գործով կայացված որոշման պատճառաբանվածության գնահատման լիազորությամբ չի օժտում, ինչը ևս մեկ անգամ հաստատվում է ՀՀ հարկային օրենսգրքի 36-րդ հոդվածով:

Ինչ վերաբերում է թիվ ՎԴ/3200/05/19 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշմանը, ապա դատավարության կողմի մեկ այլ գործով դատական ակտի մեջբերման պարագայում ՀՀ վարչական դատարանի կողմից այդ փաստարկին անդրադառնալու պարտականություն ծագում է միայն այն պարագայում, երբ կողմը հիմնավորում է քննվող գործի և մեջբերված գործի փաստական հանգամանքների նույնանման լինելու հանգամանքը, ինչը տվյալ դեպքում հայցվորը չի արել:

3. Վճուարեկ դատարանը որպես վճուարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հերկայալը

1) Կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ռաֆիկ Մաշադյանի 21.11.2018 թվականի թիվ 1011747/1 հանձնարարագրի (այսուհետ՝ Հանձնարարագիր) համաձայն՝ Կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ստուգումների թիվ 11 բաժնի գլխավոր հարկային տեսուչներ Գագիկ Գևորգյանին, Մարտին Դոխոյանին և Արամ Նիկոյանին հանձնարարվել է Ընկերությունում իրականացնել համալիր հարկային վերստուգում: Հանձնարարագրի հրապարակման համար որպես հիմք է նշվել ՀՀ հարկային օրենսգրքը, ՀՀ հարկային օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին համապատասխան ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Մինասյանի «Թիվ 58158918 քրեական գործով ստուգում կամ վերստուգում նշանակելու մասին» 31.10.2018 թվականի որոշումը: Հանձնարարագրում 27.11.2018 թվականին արված գրառման համաձայն՝ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը ծանոթացել է Հանձնարարագրին, հրաժարվել է ստորագրել և ստանալ այն (**հատոր 1-ին, գ.թ. 70-71**):

2) Ընկերության գործադիր տնօրեն Ռուբիկ Փանոսյանի գրավոր հայտարարության համաձայն՝ տեսուչների կողմից իրեն է ներկայացվել Հանձնարարագիրը, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Մինասյանի «Թիվ 58158918 քրեական գործով ստուգում կամ վերստուգում նշանակելու մասին» 31.10.2018 թվականի որոշումը: Նշվել է նաև, որ Հանձնարարագրին ծանոթանալուն զուգահեռ ծանոթացել է քննիչի որոշմանը և գտել է, որ Ընկերությունը, ինչպես նաև հիմնադիրները որևէ առնչություն չունեն քննվող քրեական գործի հետ, և վերստուգումը իրականացնելու հանգամանքը պատճառաբանված չէ, որը համարվում է օրենքի պահանջ (**հատոր 1-ին, գ.թ. 72**):

3) Ստուգման Հանձնարարագրում նշված գլխավոր հարկային տեսուչների կողմից 19.12.2018 թվականին կազմվել է հարկային պարտավորությունների հաշվարկումն անհնարին դառնալու վերաբերյալ թիվ 1011747/1 արձանագրությունը (**հատոր 1-ին, գ.թ. 68-69**).

4) Կոմիտեի իրավաբանական վարչության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Բաղդասարյանի կողմից 31.01.2019 թվականին կազմվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 274 արձանագրությունը (**հատոր 1-ին, գ.թ. 41-42**).

5) Կոմիտեի նախագահի տեղակալ Ռ. Բադալյանի 04.02.2019 թվականի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 000274 որոշմամբ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ նշանակելով տուգանք 250.000 ՀՀ դրամի չափով՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի (**հատոր 1-ին, գ.թ. 9-12, 35-38**):

4. Վճարելի դատարանը որպես Վճարելի դատարանի պարճատարանություններ և եզրահանգումներ նշել է հետևյալը

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ այլ գործով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածը կիրառվել է հակասող մեկնաբանությամբ, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման հիման վրա իրականացվող հարկային ստուգումը տնտեսավարող սուբյեկտի (հարկ վճարողի) կողմից արգելելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անորոշարտնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- արդյո՞ք արուզումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու իրավախախտումն ստկա է այն պայմաններում, երբ փնտնախարող սուբյեկտի ղեկավարն արգելում է հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը (հարկային արուզումը)՝ արուզման իրականացման համար հիմք հանդիսացող հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը պարճատարանված չլինելու հիմքով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ունձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անգոյշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 1821 հոդվածի համաձայն՝ իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանում նրա մուտք գործելն արգելելը կամ ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը նպաստող և առաջացնում է տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն

աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրհիսնապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյոք վարչական իրավախախտում (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի իրավակարգավորման առանձնահատկություններին, արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է այդ վարույթի խնդիրները: Դրանցից են յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմինն պարզել գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին հանդգնամբ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները՝ ղեկավարվելով օրենքով (*տե՛ս, Մուրեն Միմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 33-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձը պարտավոր է չխոչընդոտել հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց ծառայողական պարտականությունների կատարմանը, կատարել նրանց օրինական պահանջները:

Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձն իրավունք ունեն՝ արգելելու հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը, հարկային մարմնի պաշտոնատար անձանց չորսամղթելու փաստաթղթեր կամ բացառություններ, եթե **հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք** խախտել են Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և (կամ) 36-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի

դրույթները, և (կամ) եթե հարկային մարմինը խախտել է Օրենսգրքի 337-339-րդ և (կամ) 341-րդ հոդվածների դրույթները՝ այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցելով հարկային մարմնի ղեկավարին:

Օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային ստուգումը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկ վճարողների (համալիր հարկային ստուգմանը ստուգվող ժամանակաշրջաններում կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերում՝ իրավահաջորդի (իրավահաջորդների) մոտ նաև իրավանախորդների մասով), բացառությամբ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հաշվառումից հանված անհատ ձեռնարկատիրոջ մոտ նույն գլխով սահմանված կարգով իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով հարկային պարտավորությունները ճշգրտելը, այդ թվում՝ ինքնուրույն հաշվարկելն ու վերահաշվարկելը, հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմինն իրավունք ունի իրականացնելու հետևյալ տեսակների հարկային ստուգումները.

- 1) համալիր հարկային ստուգում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջների կատարման ստուգում.
- 2) թեմատիկ հարկային ստուգում՝ հարկ վճարողի գործունեությանն առնչվող հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի՝ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված առանձին պահանջի (պահանջների) կատարման ստուգում:

Օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համալիր հարկային ստուգումները նույն հարկ վճարողի մոտ, կախված ռիսկայնության աստիճանից, իրականացվում են հետևյալ հաճախականությամբ.

- 1) բարձր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան հարկային տարվա ընթացքում մեկ անգամ.
- 2) միջին ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան երեք հաջորդական հարկային տարիների ընթացքում մեկ անգամ.
- 3) ցածր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան հինգ հաջորդական հարկային տարիների ընթացքում մեկ անգամ:

Նույն հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները չեն տարածվում համալիր հարկային ստուգումների անցկացման այն դեպքերի վրա, երբ համալիր հարկային ստուգումը նշանակվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան: Նույն կետում նշված համալիր հարկային ստուգումներն իրականացվում են հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա՝ որոշմամբ նշված հարցերի և ժամանակաշրջանի շրջանակներում: Հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը ստուգման հանձնարարագրի հետ միասին տրամադրվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ որպես վերստուգման իրականացման հիմք նախատեսվել է նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան վերստուգում նշանակելը: Այս դեպքում ևս վերստուգումներն իրականացվում են հետաքննության մարմնի կամ քննիչի **պատճառաբանված որոշման հիման վրա**՝ որոշմամբ նշված հարցերի և ժամանակաշրջանի շրջանակներում: Հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը

ստուգման հանձնարարագրի հետ միասին տրամադրվում է հարկ վճարողին կամ նրա պաշտոնատար անձին:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած իր որոշմամբ անդրադառնալով **ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու իրավախախտման** բովանդակությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու համար, որը կարող է դրսևորվել հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ.

- իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությանը օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը,

- տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանում իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի մուտք գործելն արգելելը,

- ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձին չտրամադրելը,

- կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը,

- օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ընթացքին այլ կերպ խոչընդոտելը:

Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի դիսպոզիցիայի բովանդակությունից բխում է, որ նշված հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունը կարող է վրա հասնել միայն այն դեպքում, երբ անձը, կատարելով վերոգրյալ արարքներից որևէ մեկը, խոչընդոտում է ստուգումներ իրականացնող իրավասու պետական մարմինների աշխատանքին: Հետևաբար յուրաքանչյուր կոնկրետ գործով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման առկայության փաստը բացահայտելու համար վարչական մարմինը նախնառաջ պետք է պարզի, թե արդյոք տնտեսավարող սուբյեկտի մոտ օրենքով սահմանված կարգով ստուգում իրականացվել է, թե՛ ոչ: Այնուհետև համապատասխան վարչական մարմինը պետք է պարզի ստուգում իրականացնող պաշտոնատար անձին խոչընդոտելու փաստի առկայությունը կամ բացակայությունը:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման փաստը կարող է առկա լինել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով իրականացվում է ստուգում,

բ) տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված եղանակներից որևէ մեկով խոչընդոտում է ստուգում իրականացնող պաշտոնատար անձի աշխատանքին (տե՛ս, Հովհաննես Հովհաննիսյանն *ընդդեմ* ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎՊ/5166/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու համար նախ և առաջ անհրաժեշտ է, որպեսզի ստուգումն իրականացվի օրենքով սահմանված կարգով, և երկրորդ՝ տնտեսավարող

սուբյեկտի կողմից կատարվեն այդ ստուգման բնականոն ընթացքը խոչընդոտելուն ուղղված գործողություններ: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ **օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգմանը խոչընդոտելն է** հանգեցնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի դիսպոզիցիայի բովանդակությանը համապատասխանող վարչական պատասխանատվության:

Ընդ որում, ստուգումը համարվում է օրենքով սահմանված կարգով իրականացվող, եթե այն համապատասխանում է ստուգման հիմքերին, ինչպես նաև դրա անցկացման ընթացակարգերին ներկայացվող օրենսդրական պահանջներին:

Միաժամանակ, ՀՀ հարկային օրենսդրությամբ հարկային ստուգումների իրականացման հաճախականության կարգից նախատեսված է բացառություն՝ ստուգումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված լինելու դեպքերի համար, որպիսի պարագայում ստուգման հիմքը հետաքննության մարմնի կամ քննիչի **պատճառաբանված որոշումն է**: Նույն հիմքը նախատեսվում է նաև օրենքով սահմանված կարգով անցկացվող վերստուգումների համար: Ընդ որում, հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման պատճառաբանվածության պահանջ սահմանելու օրենսդրի նպատակն ուղղված է հետաքննության մարմնի կամ քննիչի, ինչպես նաև ստուգում իրականացնող մարմնի կողմից կամայական վարքագիծ դրսևորելու ռիսկի նվազեցմանը: Իսկ որոշման պատճառաբանվածության հատկանիշի ամրագրումը պայմանավորված է նաև տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգումների անցկացման համար հիմք հանդիսացող հանգամանքների և ստուգմամբ պարզման ենթակա հարցերի բացահայտմամբ, քանի որ, ինչպես արդեն իսկ նշվեց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումը համարվում է ՀՀ հարկային օրենսդրությամբ հարկային ստուգումների իրականացման հաճախականության կարգից բացառություն, և առանց համապատասխան հիմքերի տնտեսվարող սուբյեկտի մոտ անհարկի ստուգում իրականացնելը կհանգեցնի տնտեսվարող սուբյեկտի իրավունքների անտեղի միջամտության: Ուստի ստուգման համար հիմք հանդիսացող հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը ձևտք է այն աստիճան պատճառաբանված լինի, որպեսզի տնտեսվարող սուբյեկտի մոտ ձևավորվի այն հանդգնությունը, որ իր մոտ անցկացվող ստուգման անցկացվում է օրենքի հիման վրա և ստուգմանն ուղղված գործողություններն իրավաչափ են:

Ուստի, վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված հարկային ստուգումների հիմքում դրված հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման պատճառաբանվածության հատկանիշի ամրագրումն ինքնանպատակ չէ, քանի որ այն առանցքային նշանակություն ունի ինչպես դրա հիման վրա անցկացվող ստուգումների (վերստուգումների)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան անցկացված լինելու, այնպես էլ դրանց իրավաչափության գնահատման համար: Վերոգրյալով պայմանավորված էլ Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով տնտեսվարող սուբյեկտի համար ամրագրվել է այն իրավունքը, ըստ որի՝ որոշ դեպքերում հարկ վճարողին կամ դրա պաշտոնատար անձին հնարավորություն է ընձեռվում արգելելու հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը, ինչպես նաև հարկային մարմնի պաշտոնատար անձանց չտրամադրելու փաստաթղթեր կամ բացատրություններ: *Հեղուկարար այն դեպքում, երբ փորձավարող սուբյեկտը, հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումն իրեն փրամադրելուց հեղու դրա ուսումնասիրության արդյունքում ողջամերթուն եզրահանգում է, որ այն պարճառաբանված չէ, այսինքն՝ որոշման մեջ չեն նշվել այն փաստական և իրավական հիմքերը, որոնցով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել հարկային պտուգում իրականացնել փյոյպ փորձավարող սուբյեկտի մոտ, սպա նման պայմաններում հարկ վճարողի կողմից Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով իրեն վերապահված իրավունքի իրացումը՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ չի կարող հանգեցնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված՝ պտուգումներ իրականացնող պերական մարմինների աշխատանքին խոչընդոտելու իրավախախտման արճանագրմանը և նույն հոդվածով նախատեսված վարչական պարտախանսարվության միջոցը կիրառելի չի կարող լինել: Այլ կերպ սասած, հարկ վճարողին չի*

կարող իրավախախտում վերագրվել օրենքով, չլիցիտացիայի դեպքում Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված իր իրավունքն իրացնելու համար:

Վճուարեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ռաֆիկ Մաշադյանի կողմից 21.11.2018 թվականին հրապարակված Հանձնարարագրով հանձնարարվել է Ընկերությունում իրականացնել համալիր հարկային վերստուգում:

Հանձնարարագրի հրապարակման համար որպես հիմք նշվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Մինասյանի «Թիվ 58158918 քրեական գործով ստուգում կամ վերստուգում նշանակելու մասին» 31.10.2018 թվականի որոշումը: Հանձնարարագրում 27.11.2018 թվականին արված գրառման համաձայն՝ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը ծանոթացել է Հանձնարարագրին, հրաժարվել է ստորագրել և ստանալ այն:

Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի գրավոր հայտարարության համաձայն՝ տեսուչների կողմից իրեն է ներկայացվել Հանձնարարագիրը, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Մինասյանի «Թիվ 58158918 քրեական գործով ստուգում կամ վերստուգում նշանակելու մասին» 31.10.2018 թվականի որոշումը: Հանձնարարագրին ծանոթանալուն զուգահեռ ծանոթացել է քննիչի որոշմանը և գտել է, որ Ընկերությունը, ինչպես նաև հիմնադիրները որևէ առնչություն չունեն քննվող քրեական գործի հետ, և վերստուգումն իրականացնելու հանգամանքը պատճառաբանված չէ, որը համարվում է օրենքի պահանջ:

Ստուգման Հանձնարարագրում նշված գլխավոր հարկային տեսուչների կողմից 19.12.2018 թվականին կազմվել է հարկային պարտավորությունների հաշվարկումն անհնարին դառնալու վերաբերյալ թիվ 1011747/1 արձանագրությունը:

Կոմիտեի նախագահի տեղակալ Ռ. Բադասյանի 04.02.2019 թվականի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 000274 որոշմամբ, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի, Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ նշանակելով տուգանք 250.000 ՀՀ դրամով չափով:

Իմնելով դատարան՝ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը պահանջել է վերացնել Կոմիտեի 04.02.2019 թվականի թիվ 000274 որոշումը:

Դատարանը մերժել է Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի հայցը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Դատարանն արձանագրում է, որ ոչ Օրենսգրքի 337-րդ և 338-րդ հոդվածները, ո՛չ էլ որևէ այլ նորմ հարկային մարմնի ղեկավարին չի վերապահել քննիչի կողմից կայացված արտոգում կամ վերապարտում նշանակելու որոշման հիմնավորվածությունը կամ պարտաբանվածության աստիճանը գնահատելու լիազորություն: (...) Հաշվի առնելով չլիցիտացիայի հատկանիշները, հանձնարարագրի կիրառումը, որի հարկային մարմնին ամբողջությամբ կատարել է օրենքով իրեն վերապահված պարտականությունը՝ հանձնարարագիրը քննիչի որոշման պարձեռի հետ միասին հայցվորին պրամանդրելով: (...) «Կալար Գազ» ՍՊԸ-ի տնօրեն Ռուբիկ Փանոսյանի կողմից հարկային պարտքերի հանձնարարագիրն արանալուց հրաժարվելը, ինչպես նաև արտոգումն փաստացի սկսելու մասին նշում կատարելուց հրաժարվելը հանգեցրել է իր լիազորությունների շրջանակում արտոգումներ իրականացնելու իրավասությանը օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով արտոգում իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջների չկատարմանը, հետևաբար նաև՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածով նախատեսված իրավախախտման կատարմանը»:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը՝ Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ հետևյալ հիմնավորմամբ. «Վերաքննիչ դատարանի համոզմամբ, հարկային մարմնին իրավասու էր ՀՀ հարկային օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի խնամարով քննիչի որոշման հիման վրա իրականացնել համալիր հարկային վերապարտում: Մինչդեռ, սույն վարչական գործում սուկա՝ 19.12.2018թ. կազմված

հարկային պարտավորությունների հաշվարկումն անհնարին դառնալու վերաբերյալ թիվ 1011747/1 արձանագրությամբ և այլ ապացույցներով հաստատվում է, որ «Դավար Գազ» ՄՊԸ-ի տնօրեն Ռուբիկ Փանոսյանը չի կատարել հարկային մարմնի տեսուչների օրինական պահանջները՝ իր վարքագծով խոչընդոտելով վերաբուցման բնականոն իրականացմանը, ինչն իրավաչափորեն հանգեցրել է վարչական պարտախանաարվության ստացացմանը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.1-ին հոդվածի հիմքով»:

Սույն որոշմամբ հայտնաձև իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Տվյալ դեպքում և՛ Դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը Օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետը ենթարկել են նեղ մեկնաբանության՝ նշված հոդվածի խախտում սահմանելով միայն հարկային մարմնի կողմից հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը հարկ վճարողին տրամադրելու պարտականության չկատարումը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի նման նեղ մեկնաբանությունը կարող է կամայականությունների տեղիք տալ և արժեզրկել վերոնշյալ իրավանորմի բովանդակությունը, քանի որ ՀՀ հարկային օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի կիրառման համար էական է ոչ թե այն, թե ով պետք է գնահատի հետաքննության մարմնի կամ քննիչի որոշման պատճառաբանվածությունը, այլ այն, որ տվյալ որոշումն իր էությունը պետք է լինի պատճառաբանված, այսինքն՝ առնվազն բովանդակի այն փաստական և իրավական հիմքերի շարադրանքը, որոնք հիմք են հանդիսացել նման որոշման կայացման համար: Հակառակ պարագայում, երբ որոշումը պատճառաբանված չէ, և հարկ վճարողի մոտ ողջամիտ կասկած է առաջանում դրա պատճառաբանվածության հարցում, վերջինս իրավասու է իրացնելու Օրենսգրքով իրեն վերապահված իրավունքը, այն է՝ արգելել հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը, ինչպես նաև հարկային մարմնի պաշտոնատար անձանց չտրամադրել փաստաթղթեր կամ բացատրություններ: Ընդ որում, այդ դեպքում վերջինիս գործողությունները Վճռաբեկ դատարանի գնահատմամբ չեն կարող հանգեցնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.1 հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության: Ստորադաս դատարանների եզրահանգումների արդյունքում, սակայն, ստացվում է, որ անկախ նրանից, թե հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը պատճառաբանված է, թե՛ ոչ, որևէ կերպ առկա է հարկ վճարողի հետ, թե՛ ոչ, եթե հարկային մարմինը կատարել է նշված որոշումը հարկ վճարողին տրամադրելու իր պարտականությունը, ապա այդ դեպքում հարկ վճարողի կողմից ստուգմանը խոչընդոտելու գործողությունները հանգեցնում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.1 հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության, ինչը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավաչափ չէ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ անդրադառնալով թիվ ՎԴ/3200/05/19 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաբնկարման հետևանքով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին:

Տվյալ դեպքում բողոքաբերի կողմից, որպես իրավական փաստարկ, վկայակոչվել է թիվ ՎԴ/3200/05/19 վարչական գործով ըստ հայցի «Արտաշատ Սիթի» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Մարգարյանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 01.03.2019 թվականի թիվ 024021-Վ որոշումը վերացնելու պահանջի մասին գործով կայացված դատական ակտում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի արտահայտած այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ քննիչի (հետաքննության մարմնի) որոշման պատճառաբանված լինելու հատկանիշի ամրագրումն ինքնանպատակ չէ, նման օրենսդրական ձևակերպումը միտված է կանխելու կամայական վարքագծի դրսևորումը թե՛ քննիչի (հետաքննության մարմնի) և թե՛ հարկային մարմնի կողմից: Հարկային մարմնի ղեկավարի կողմից կարող է հարկային ստուգման հանձնարարագիր տրվել և դրա հիման կարող է համալիր հարկային ստուգում իրականացվել միայն քննիչի (հետաքննության մարմնի) պատճառաբանված որոշման հիման վրա, ինչը նշանակում է, որ որոշման պատճառաբանված լինելու հանգամանքը յուրաքանչյուր նման դեպքում հարկային մարմնի համար առանձին ու ինքնուրույն գնահատման առարկա է:

Իրացնելով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու լիազորությունը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Ստուգման համար հիմք հանդիսացող հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը պետք է լինի պատճառաբանված, որի հիման վրա միայն հարկ վճարողի մոտ անցկացվող ստուգումները և դրան ուղղված գործողությունները կարող են համարվել օրենքով սահմանված կարգով իրականացվող: Այսինքն՝ հարկային մարմինների կողմից Օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի **խախտում է համարվում և՛ նշված որոշումը հարկ վճարողին չտրամադրելը, և՛ չպատճառաբանված որոշում տրամադրելը, հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված պայմաններից թեկուզ և մեկի բացակայության պայմաններում հարկ վճարողի կողմից ստուգումն արգելելու** արարքի դրսևորումը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182՝ հոդվածի իմաստով չի կարող որակվել վարչական իրավախախտում և հանգեցնել նույն իրավանորմով նախատեսված վարչական պատասխանատվության:

Շիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները և դրանց վերլուծության արդյունքում արված եզրահանգումներն ու հետևությունները՝ Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի իրավակարգավորումով, գտնում է, որ վիճարկվող որոշումն ընդունվել է օրենքի սխալ մեկնաբանման հետևանքով, ուստի ենթակա է անվավեր ճանաչման, ինչն անտեսվել է ստորագրող դատարանների կողմից:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ բողոքի պարասիսանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանությամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերագրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս, Տ. Պետրոսյանս, Է. Սերբակյանս համաձայն չլինելով վերը նշված որոշման պարճատարանական և եզրափակիչ մաներում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արդասացված կարծիքի հերք, շարադրում ենք մեր հայրուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Այսպես՝

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրքը) 33-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձը պարտավոր է չխոչընդոտել հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց ծառայողական պարտականությունների կատարմանը, կատարել նրանց օրինական պահանջները:

Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձն իրավունք ունեն՝ արգելելու հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը, հարկային մարմնի պաշտոնատար անձանց չտրամադրելու փաստաթղթեր կամ բացատրություններ, եթե հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք խախտել են Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և (կամ) 36-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի դրույթները, և (կամ) եթե հարկային մարմինը խախտել է Օրենսգրքի 337-339-րդ և (կամ) 341-րդ հոդվածների դրույթները՝ այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցելով հարկային մարմնի ղեկավարին:

Օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային ստուգումը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկ վճարողների (համալիր հարկային ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջաններում կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերում՝ իրավահաջորդի (իրավահաջորդների) մոտ նաև իրավանախորդների մասով), բացառությամբ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հաշվառումից հանված անհատ ձեռնարկատիրոջ մոտ նույն գլխով սահմանված կարգով իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմնի հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց

հայտնաբերելը, հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով հարկային պարտավորությունները ճշգրտելը, այդ թվում՝ ինքնուրույն հաշվարկելն ու վերահաշվարկելը, հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմինն իրավունք ունի իրականացնելու հետևյալ տեսակների հարկային ստուգումները.

1) համալիր հարկային ստուգում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջների կատարման ստուգում.

2) թեմատիկ հարկային ստուգում՝ հարկ վճարողի գործունեությանն առնչվող՝ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի՝ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված առանձին պահանջի (պահանջների) կատարման ստուգում:

Օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համալիր հարկային ստուգումները նույն հարկ վճարողի մոտ, կախված ռիսկայնության աստիճանից, իրականացվում են հետևյալ հաճախականությամբ.

1) բարձր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան հարկային տարվա ընթացքում մեկ անգամ.

2) միջին ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան երեք հաջորդական հարկային տարիների ընթացքում մեկ անգամ.

3) ցածր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան հինգ հաջորդական հարկային տարիների ընթացքում մեկ անգամ:

Նույն հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները չեն տարածվում համալիր հարկային ստուգումների անցկացման այն դեպքերի վրա, երբ համալիր հարկային ստուգումը նշանակվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան: Նույն կետում նշված համալիր հարկային ստուգումներն իրականացվում են հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա՝ որոշմամբ նշված հարցերի և ժամանակաշրջանի շրջանակներում: Հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը ստուգման հանձնարարագրի հետ միասին տրամադրվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ որպես վերստուգման իրականացման հիմք նախատեսվել է նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան վերստուգում նշանակելը: Այս դեպքում ևս վերստուգումներն իրականացվում են հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա՝ որոշմամբ նշված հարցերի և ժամանակաշրջանի շրջանակներում: Հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը ստուգման հանձնարարագրի հետ միասին տրամադրվում է հարկ վճարողին կամ նրա պաշտոնատար անձին:

Օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հարկային ստուգումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի տված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են ստուգման տեսակը և իրավական հիմքերը:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում գտնում ենք, որ անկախ ստուգման կամ վերստուգման իրավական հիմքից՝ համալիր հարկային ստուգում կամ վերստուգումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի գրավոր հանձնարարագրի հիման վրա: Այն դեպքում, երբ համալիր հարկային ստուգման կամ վերստուգման համար հիմք է ծառայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննիչի կողմից պատճառաբանված որոշման առկայությունը, հարկային մարմնի ղեկավարի կողմից գրավոր հանձնարարագիր տալու միակ անհրաժեշտ և բավարար պայմանը քննիչի համապատասխան պատճառաբանված որոշման առկայությունն է:

Նման որոշման առկայության պայմաններում հարկային մարմնի ղեկավարի համար ծագում է համալիր հարկային ստուգում իրականացնելու համար հանձնարարագիր տալու ուղղակի պարտականություն: Ընդ որում, Օրենսգրքը, սահմանելով հանձնարարագրում ներառման ենթակա հարցերի շրջանակը, հարկային մարմնի ղեկավարին պարտավորեցրել է հանձնարարագրում, ի թիվս այլնի, նշել ստուգման իրավական հիմքը, ինչը տվյալ դեպքում քննիչի որոշումն է:

Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննիչի կողմից ընդունված որոշման հետևանքով հարկային մարմնի ղեկավարի համար ծագում է համալիր հարկային ստուգման գրավոր հանձնարարագիր տալու պարտականություն, ինչպես նաև այդ հանձնարարագիրը և պատճառաբանված որոշման պատճենը հարկային մարմնի կողմից հարկ վճարողին կամ նրա պաշտոնատար անձին տրամադրելու պարտականություն: Միաժամանակ հարկային մարմինն օժտված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննիչի կողմից կայացված ստուգում կամ վերստուգում նշանակելու որոշման հիմնավորվածությունը կամ պատճառաբանվածության աստիճանը գնահատելու լիազորությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Մինասյանը, իրացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունը, կայացրել է «Թիվ 58158918 քրեական գործով ստուգում կամ վերստուգում նշանակելու մասին» 31.10.2018 թվականի որոշումը: Կոմիտեի նախագահը, ստանալով վերը նշված որոշումը, 21.11.2018 թվականին տվել է թիվ 1011747/1 հանձնարարագիրը: Հանձնարարագրում նշված գլխավոր հարկային տեսուչներն այդ հանձնարարագիրն ու քննիչի նշված որոշման պատճենը տրամադրել են հարկ վճարողին՝ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանին: Վերջինս, ծանոթանալով հանձնարարագրին ու քննիչի որոշմանը, հրաժարվել է ստանալ հանձնարարագրի օրինակը, ինչպես նաև հրաժարվել է ստորագրել ստուգման փաստացի սկսված լինելու վերաբերյալ:

Ստուգման հանձնարարագրում նշված գլխավոր հարկային տեսուչների կողմից 19.12.2018 թվականին կազմվել է հարկային պարտավորությունների հաշվարկումն անհնարին դառնալու վերաբերյալ թիվ 1011747/1 արձանագրությունը:

Կոմիտեի իրավաբանական վարչության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Բաղդասարյանի կողմից 31.01.2019 թվականին կազմվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 274 արձանագրությունը:

Կոմիտեի նախագահի տեղակալ Ռ. Բաղասյանի 04.02.2019 թվականի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 000274 որոշմամբ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ նշանակելով տուգանք 250.000 ՀՀ դրամի չափով՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.1 հոդվածի:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ հարկային մարմինը, հանձնարարագրի օրինակը և քննիչի որոշման պատճենն Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանին տրամադրելով, կատարել է Օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով իր վրա դրված պարտականությունը:

Տվյալ դեպքում առկա է եղել հարկային մարմնի կողմից համալիր հարկային ստուգում իրականացնելու հանձնարարագիր տալու իրավական հիմքը, իսկ հարկային մարմնի կողմից հայցվորին առաջադրված պահանջը՝ ստանալ հանձնարարագիրը և ստորագրել ստուգման փաստացի սկսելու մասին, բխել է Օրենսգրքով սահմանված կարգավորումներից, հետևաբար Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը պարտավոր էր չխոչընդոտել հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց ծառայողական պարտականությունների կատարմանը, կատարել նրանց օրինական պահանջները, մինչդեռ Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանը չի կատարել հարկային մարմնի տեսուչների օրինական պահանջները՝ իր վարքագծով խոչընդոտելով վերստուգման քննիչին իրականացմանը: Ավելին, Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանն արգելելով հարկային մարմնի կողմից հարկային հսկողության իրականացումը,

այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր չի ծանուցել հարկային մարմնի ղեկավարին:

Բացի այդ, Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանն իր կողմից ներկայացված հայտարարության մեջ նշել է ոչ թե քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում քննիչի կողմից իր լիազորությունների սահմաններում քրեական գործով կայացված որոշման պատճառաբանվածությունը, այլ բուն վերստուգումն իրականացնելու հանգամանքի պատճառաբանված լինելը, ինչը չի կարող նույնացվել:

Հետևաբար Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի վարքագիծն իրավաչափորեն հանգեցրել է վարչական պատասխանատվության առաջացմանը՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.1-ին հոդվածի հիմքով:

Տվյալ դեպքում գտնում ենք, որ Դատարանը մերժելով Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի հայցը, իսկ Վերաքննիչ դատարանն անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր, ուստի Ընկերության տնօրեն Ռուբիկ Փանոսյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէր կարող լինել Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ա. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Տ. Պետրոսյան
Էդ. Սեդրակյան

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԳ/7522/05/17
Կ. Ավետիսյան
Կ. Բաղդասարյան
Կ. Մաթևոսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/7522/05/17
2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի մարտի 03-ին
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝
Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.09.2018 թվականի
որոշման դեմ՝ ըստ հայցի «ԱՄՈԿԱ ԳԼԱՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կո-
միտեի՝ Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության 29.05.2017 թվականի
արտագնա մաքսային ստուգման թիվ 0012-Ա վարչական ակտը, ապրանքների մաքսային
արժեքի ճշտգրման մասին 29.05.2017 թվականի թիվ 0012-Ո-1 և 29.05.2017 թվականի թիվ
0012-Ո-2 որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի
հետքացթողումային հսկողության վարչության 29.05.2017 թվականի արտագնա մաքսա-
յին ստուգման թիվ 0012-Ա վարչական ակտը, ապրանքների մաքսային արժեքի ճշտգրման
մասին 29.05.2017 թվականի թիվ 0012-Ո-1 և 29.05.2017 թվականի թիվ 0012-Ո-2 որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 12.02.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.09.2018 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 12.02.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Ա. Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, Մաքսային միության մաքսային օրենսգրքի 98-րդ հոդվածի 2-րդ մասը, 111-րդ հոդվածի 2-րդ մասը, 132-րդ, 188-րդ, 189-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերության անվամբ տեղափոխվող բեռի տեսակի, քաշի, տեղափոխող տրանսպորտային միջոցի, ինչպես նաև մատակարարի վերաբերյալ տվյալները Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններին ներկայացված հաշիվ-ապրանքագրերում նույնական են, սակայն առկա է տարբերություն տեղափոխվող ապրանքի արժեքների և առաքման պայմանի մեջ: Արտահանման երկրում ներկայացված հաշիվ-ապրանքագրերում ապրանքների արժեքները եղել են 36.448 և 32.897,86 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ ներմուծված և մաքսային մարմիններին ներկայացված հաշիվ-ապրանքագրերում արժեքները ներկայացվել են ցածր՝ 16.747.2 և 20.762 ԱՄՆ դոլար:

Վերաքննիչ դատարանը նշված հանգամանքները չի դիտարկել պատճառահետևանքային կապի մեջ և չի գնահատել, թե գործարքի կողմերի համար այն ինչ փաստացի հետևանքներ է առաջացրել: Ակնհայտ է, որ հաշիվ-ապրանքագրերում գործարքի արժեքը ցածր ներկայացնելը ձեռնտու էր միայն ՀՀ ներմուծող ընկերությանը, քանի որ վերջինս այդ պարագայում վճարում է պակաս մաքսային վճարներ, իսկ մատակարարող թուրքական ընկերության և Վրաստանից վերաարտահանող ընկերության համար ապրանքների արժեքը իրականից ավելի բարձր ներկայացնելը որևէ տրամաբանական բացատրություն չունի, քանի որ ապրանքների արժեքն արհեստականորեն բարձրացնելով, արտահանող կազմակերպությունը կարող էր առանց որևէ տրամաբանության կրել վնասներ՝ հարկային ավել վճարումներ կատարելու տեսքով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ մաքսային մարմինն ունեցել է Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը, և դրանց արժանահավատության մեջ հավաստիանալու նպատակով, ինքնուրույն, իր հաշվին ձեռնարկել է միջոցներ այլ պացույցներ ձեռք բերելու ուղղությամբ, այսինքն՝ իրականացրել է համապատասխան հարցումներ և ձեռք է բերել բավարար պացույցներ, որոնցով հաստատել է Ընկերության կողմից ոչ արժանահավատ տեղեկություններ և փաստաթղթեր ներկայացնելու փաստը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը որևէ գնահատական չի տվել այն փաստին, որ մաքսային մարմնի կողմից իրականացված ստուգման ընթացքում Ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերում վերոնշյալ գործարքների դիմաց կատարված վճարման վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի հայտնաբերվել: Ընկերությունը հայտարարության մեջ նշել է, որ ներմուծված ապրանքների համար թուրքական ընկերությանը վճարել է մաս-մաս՝ կանխիկ եղանակով, սակայն նույնիսկ այս պարագայում դա պետք է արտացոլվեր հաշվապահական հաշվառման փաստաթղթերում, ուստի սա ևս վկայում է այն մասին, որ Ընկերության կողմից մաքսային հայտարարագրման ժամանակ ներկայացված տեղեկություններն արժանահավատ չեն եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.09.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

3. Վճուարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության Ստուգումների պլանավորման և ռազմավարության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Վ. Սաղաթեյանի կողմից 16.05.2017 թվականին կազմվել է Ընկերության վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական տեղեկանք, որով, որպես վերլուծական աշխատանքի իրականացման հիմք, նշվել է Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 14.02.2017 թվականի թիվ 21-10/20545 (ՀՀ ԿԱ ՊԵԿ մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17) գրությանը կից տեղեկատվությունը: Վերլուծության ընթացքում պարզվել է, որ Վրաստանի մաքսային մարմիններից ՀՀ ԿԱ ՊԵԿ 20.12.2016 թվականի թիվ 9.1/39289-16 հարցման ի պատասխան ստացված 14.02.2017 թվականի թիվ 21-10/20545 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության կողմից ներմուծված ապրանքների մասով առկա են են հետևյալ անհամապատասխանությունները՝ 1) 12.02.2015 թվականի թիվ C3580 ՄՀ-ով հայտարարագրված հաշիվ ապրանքագրային արժեքը կազմում է 16.747,2 ԱՄՆ դոլար, իսկ մաքսային արժեքը՝ 8.119.489 դրամ: Առաքման պայմանը՝ CIP Երևան: Տեղեկատվության համաձայն՝ հաշիվ ապրանքագրային արժեքը կազմում է 36.448 ԱՄՆ դոլար՝ FCA Sadakhlo բազիսային պայմանով: Մաքսային արժեքը կկազմի 17.475.723 դրամ (36.448 ԱՄՆ դոլար x 479.47 փոխարժեք)՝ պակաս հայտարարագրված մաքսային արժեք՝ 9.356.234 դրամ: 2) 26.07.2016 թվականի թիվ C21168 ՄՀ-ով հայտարարագրված հաշիվ ապրանքագրային արժեքը կազմում է 20.762 ԱՄՆ դոլար, իսկ մաքսային արժեքը՝ 10.439.958 դրամ: Առաքման պայմանը՝ CIP Երևան: Տեղեկատվության համաձայն՝ հաշիվ ապրանքագրային արժեքը կկազմի 15.995.272 դրամ (32.897,865 ԱՄՆ դոլար + 700 ԱՄՆ դոլար x 476.08 փոխարժեք)՝ պակաս հայտարարագրված մաքսային արժեք՝ 5.555.314 դրամ:

Այսպիսով, 2 ՄՀ-ներով պակաս է հայտարարագրվել 14.911.548 դրամ մաքսային արժեք:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վրաստանի մաքսային մարմիններից ստացված տեղեկության համաձայն առաջանում են լրացուցիչ գանձման ենթակա մաքսային վճարներ, ուստի առաջարկվել է Ընկերությունում իրականացնել արտագնա արտապլանային մաքսային ստուգում (**հատոր 1-ին, գ.թ. 42**).

2) Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության ստուգումների պլանավորման և ռազմավարության բաժնի պետը, հիմք ընդունելով 16.05.2017 թվականին կազմված տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը՝ Ընկերության կողմից մաքսային օրենսդրության հնարավոր խախտման մասին վկայող տեղեկատվության առկայության վերաբերյալ, 16.05.2017 թվականի զեկուցագրով հետքացթողումային հսկողության վարչության պետին առաջարկել է Ընկերությունում իրականացնել արտապլանային արտագնա մաքսային ստուգում (**հատոր 1-ին, գ.թ. 43**).

3) Կոմիտեի նախագահը, հիմք ընդունելով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 16.05.2017 թվականի թիվ 0012 արտագնա մաքսային ստուգում իրականացնելու մասին հանձնարարականով հանձնարարել է Ընկերությունում իրականացնել արտապլանային արտագնա մաքսային ստուգում (**հատոր 1-ին, գ.թ. 41**).

4) «Ապավեն» ՍՊԸ-ի 02.03.2017 թվականի թիվ F/17-016 գրության համաձայն՝ 2016 թվականի հուլիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում Բաթումի-Երևան բեռնափոխադրման պարագայում Բաթումի քաղաքից մինչև Բագրատաշենի կամ Բավրայի Մ/Կ հատվածի համար մեկ բեռնատարի 18-25 տոննա բեռի ընդհանուր քաշով տեղափոխման արժեքը կարող էր կազմել 700-850 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 53**).

5) Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության կողմից 29.05.2017 թվականին կազմվել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0012-Ա ակտը, որի համաձայն՝ Ընկերությունում 17.05.2017 թվականի թիվ 0012 հանձնարարականի հիման վրա իրականացվել է արտասպանային արտագնա մաքսային ստուգում՝ 12.02.2015 թվականի թիվ C3580 և 26.07.2016 թվականի թիվ C21168 մաքսային հայտարարագրով ՀՀ ներմուծված և հայտարարագրված ապրանքների վերաբերյալ ԵԱՏՄ և ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման ճշտության վերաբերյալ:

Ստուգման ժամանակ իրականացվել են հետևյալ միջոցառումները. թիվ C3580 առ 12.02.2015 թվականի և թիվ C21168 առ 26.07.2017 թվականի մաքսային հայտարարագրերում նշված տեղեկությունները և կից փաստաթղթերը համադրվել են Վրաստանի մաքսային մարմիններից ստացված փաստաթղթերում նշված տեղեկությունների և հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հետ: Կատարվել է հարցում միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող «Ապավեն» ՍՊԸ-ին՝ Բաթումի քաղաքից մինչև ՀՀ սահման, մեկ բեռնատար ավտոմեքենայով 18-25տ բեռի տեղափոխման ճանապարհաձևի վերաբերյալ (...):

Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 14.02.2017 թվականի թիվ 21-10/20545 (ՀՀ ԿԱ ՊԵԿ մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17) գրությանը կից փաստաթղթերի համաձայն՝

12.02.2015 թվականի թիվ C3580 մաքսային հայտարարագրով ձևակերպված և EBE279/VV087 պետհամարանիշի բեռնատարով ՀՀ տարածք ներմուծված երեք անվանում ապրանքները (ապակյա բաժակներ՝ մեծ, ապակյա բաժակներ՝ փոքր և ամրացված ապակուց մուրաբայի աման) Վրաստանից ստացված հաշիվ-ապրանքագրում արտացոլված է մեկ անվանմամբ (ապակե սպասք խոհանոցային), որի հաշիվ-ապրանքագրային արժեքը՝ համաձայն թուրքական «KAYA OTOMOTI ITH.IHR» ընկերության 10.02.2015 թվականի թիվ 12007 հաշիվ ապրանքագիրը (դուրս գրված Ընկերության անունով) կազմում է 36.448 ԱՄՆ դոլար՝ հայտարարագրված 16.747,2 ԱՄՆ դոլարի փոխարեն, FCA Sadahklo մատակարարման բազիսային պայմանով: Հետևաբար, մաքսային արժեքը կկազմի 17.475.722 դրամ (36.448 ԱՄՆ դոլար ինվոյսային արժեք) X 479.47 (փոխարժեքը), հայտարարագրված 8.119.489 դրամի փոխարեն արդյունքում պակաս է հայտարարագրվել 9.356.233 դրամ մաքսային արժեք: (...)

26.07.2016 թվականի թիվ C21168 մաքսային հայտարարագրով ձևակերպված SE222RT/BA364L պետհամարանիշի բեռնատարով ՀՀ տարածք ներմուծված 11 անվանում ապրանքները (ապակյա բաժակ փոքր ոտքով (օդու), բաժակ փոքր, ապակյա բաժակ մեծ ոտքով, բաժակ մեծ հյութի, աղաման, պիպա, պաղպաղակի աման, ջրաման, մոխրաման, համեմունքի աման, ափսե) Վրաստանից ստացված հաշիվ-ապրանքագրում արտացոլված է մեկ անվանմամբ (ապակե սպասք խոհանոցային), որի հաշիվ-ապրանքագրային արժեքը՝ համաձայն վրացական «Reqtrans» ընկերության 23.07.2011 թվականի թիվ 18 հաշիվ-ապրանքագիր (դուրս գրված Ընկերության անունով), կազմում է 32.897,86 ԱՄՆ դոլար հայտարարագրված 20.762 ԱՄՆ դոլարի փոխարեն, FCA Batumi մատակարարման բազիսային պայմանով: Հետևաբար, մաքսային արժեքը կկազմի 15.995.269 դրամ ((32.897,865 ԱՄՆ դոլար (ինվոյսային արժեք) X 476.08 (փոխարժեք) + 333.256 դրամ (ճանապարհաձևիս)), հայտարարագրված 10.439.958 ՀՀ դրամի փոխարեն, արդյունքում պակաս է հայտարարագրվել 5.555.311 դրամ մաքսային արժեք:

Ակտի համաձայն՝ Ընկերության կողմից խախտվել են Մաքսային միության մաքսային օրենսգրքի 27-րդ գլխի պահանջները՝ հայտարարագրվել են ոչ ճշգրիտ տեղեկություններ ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 76-80**).

6) Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչությունը, հիմք ընդունելով 29.05.2017 թվականի թիվ 0012-Ա ակտը, նույն օրը կայացրել է «Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին» թիվ 0012-Ո-1 (13.02.2015 թվականի C3580 /ՄՀ/) և 0012-Ո-2 (26.07.2016 թվականի C21168 /ՄՀ/) որոշումները, որոնցով առաջադրվել է Մաքսային միության օրենսգրքի 191-րդ հոդվածին համապատասխան՝ ապրանքների հայտարարագրերում կատարել համապատասխան որոշմամբ ներկայացված

փոփոխությունները և լրացումները՝ ճշգրտված տվյալների հիման վրա (**հատոր 1-ին, գ.թ. 12-20**):

4. Վճռաբեկ դատարանի պարզապահությունները և կզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի «ա» կետի կիրառման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ այն իրավական հարցադրմանը, թե ինչ միջոցներով կարող է անձը վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում կարարել իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարզապահությունը և ինչ հեղինակը կարող է ունենալ նրա կողմից այդ պարզապահությունը չկարարելը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես 2005 թվականի, այնպես էլ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունը հռչակվել է իրավական պետություն:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից 18.02.2004 թվականին ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածում ամրագրվել է, որ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:

Նշված օրենքի 2-րդ գլխում (հոդվածներ 4-12) ամրագրվել են նաև վարչարարության հիմնարար սկզբունքները: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: Նույն հոդվածի 2-րդ

մասի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

Վերոգրյալ իրավակարգավորումներից հետևում է, որ իրավական պետությունում վարչական մարմիններն իրենց գործունեությունում «ազատ» չեն, այլ կապակցված են իրավունքով և օրենքով, ինչը դրսևորվում է նաև օրենքի գերակայությամբ (վարչական մարմնի ոչ մի իրավական ակտ, գործողություն կամ անգործություն չպետք է հակասի օրենքին) և օրենքի վերապահմամբ (վարչական մարմինը որևէ լիազորություն իրականացնելու համար պետք է լիազորված լինի օրենքով): Վարչարարություն իրականացնող բոլոր մարմինները պարտավոր են պահպանել վարչարարության հիմնարար սկզբունքները, որոնցից առավել մեծ նշանակությամբ, թերևս, առանձնանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված՝ վարչարարության օրինականության սկզբունքը: Այն իրավական պետության հիմնաքարերից մեկն է, քանի որ, եթե վարչական մարմինները գործում են ոչ թե իրավաչափորեն, այլ կամայականորեն, ապա մյուս սկզբունքների պահպանումն այլևս իմաստազրկվում է:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր նախկին որոշումներից մեկում անդրադառնալով օրինականության սկզբունքին՝ նշել է, որ այս սկզբունք ուղղակիորեն պահանջում է, որ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունը հիմնված լինի Սահմանադրության և օրենքի վրա. (...): Օրինականության սկզբունքը բացառիկ կարևոր նշանակություն ունի հատկապես այն ժամանակ, երբ պետական մարմիններն առնչվում են մասնավոր անձանց հիմնական իրավունքների հետ (*լրեն, «Ինտելոքուալ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատարանի ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը նախատեսել է օրինականության ենթասկզբունք հանդիսացող օրենքի վերապահումը: Օրենքի վերապահում նշանակում է, որ վարչական մարմինը որևէ գործողություն իրականացնելու համար պետք է լիազորված լինի օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքում՝ նաև այլ իրավական ակտով (*լրեն, ՀՀ ֆինանսների նախարարության Կապանի տարածքային իրակային տեսչությունն ընդդեմ «Վարդանի Զարթոնք» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/11193/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում գտել է, որ վարչական վարույթը մի գործընթաց է, որը կարող է բաղկացած լինել մի քանի փուլերից, և այդ բոլոր փուլերը հետապնդում են միասնական նպատակ, այն է՝ վարչական ակտի ընդունումը (*լրեն ՀՀ կառավարությանն առընթեր իրակային պետական ծառայության հանքարարողների ոլորտային իրակային տեսչությունն ընդդեմ «Գևորգ-Ա» ՍՊԸ-ի թիվ 3-918(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի որոշումը*):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Ապացույցները վարչական վարույթում» վերտառությամբ 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Ապացուցման պարտականությունը բաշխելը» վերտառությամբ 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Վերոգրյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հստակ ամրագրել է վարչական վարույթում ապացուցման պարտականության կանոնները, սահմանելով, որ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է տվյալ անձը, իսկ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Մինևույն ժամանակ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը սահմանել է այն ապացույցների շրջանակը, որոնց միջոցով անձը և վարչական մարմինը կարող են կատարել ապացուցման իրենց պարտականությունը: Ընդ որում, վարչական վարույթի ընթացքում հետազոտվել և գնահատվել կարող են միայն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված և օրենքին համապատասխանող ապացույցները:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ անձի կողմից ապացուցման իր պարտականությունը չկատարելու որևէ բացասական հետևանք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը չի սահմանել: Նշված օրենքով բացասական հետևանք չի սահմանվել նաև վարչական մարմնի կողմից իր պարտականությունը չկատարելու համար, այդուհանդերձ վարչական մարմնի վրա օրենսդիրը դրել է գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու ուղղությամբ անհրաժեշտ ու համարժեք միջոցները ձեռնարկելու պարտականություն, քանի որ հենց վարչական մարմինն է կրում հիմնավորված և իրավաչափ վարչական ակտ ընդունելու պարտականությունը: Այսինքն՝ վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինը պարտավոր է վարչական վարույթի եզրափակման և վարչական ակտ ընդունելու համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ ու համարժեք միջոցներ՝ իր գործողությունները որևէ կերպ չպայմանավորելով անձի կողմից ապացուցման պարտականությունը չկատարելու հանգամանքով: Ավելին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում (հոդված 10-րդ), որպես վարչական մարմինների հետ հարաբերություններում վարչական վարույթի մասնակցի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք, ամրագրվել է հավաստիության կանխավարկածի սկզբունքը, համաձայն որի՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իր համար բարենպաստ փաստական հանգամանքների

առկայության ապացուցման պարտականությունն անձը կարող է կատարել «Վարչա-րարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցներ ներկայացնելու միջոցով, որոնցում պարունակվող տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Մինևույն ժամանակ օրենսդիրը վարչական մարմնին պարտավորեցրել է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության մեջ հավաստիանալու համար, եթե հիմնավոր կասկածներ ունի այդ տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ: Ընդ որում, վարչական մարմնի կողմից անհրաժեշտ միջոցները պետք է ձեռնարկվեն օրենքին համապատասխան, իսկ ձեռք բերված ապացույցներ պետք է համապատասխանեն օրենքի պահանջներին, որպեսզի դրանք համարվեն թույլատրելի, ենթակա լինեն հետազոտման և գնահատման:

Վերոգրյալ իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության 29.05.2017 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0012-Ա վարչական ակտը, ապրանքների մաքսային արժեքի ճշտգրման մասին 29.05.2017 թվականի թիվ 0012-Ո-1 և 29.05.2017 թվականի թիվ 0012-Ո-2 որոշումները:

Դատարանը բավարարել է Ընկերության հայցը՝ պատճառաբանելով, որ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Տվյալ դեպքում մաքսային մարմինը, անարժանահավատ համարելով մատակարարից ստացած հաշիվ-ապրանքագրերը, հիմք է ընդունել Վրաստանի մաքսային մարմնից ստացված տեղեկությունները: Հարկ է նշել, որ թուրքական «KAYA OTOMOTI ITH.IHR» LTD.STI ընկերությունից ստացած 10.02.2015 թվականի թիվ 014320, 23.07.2016 թվականի թիվ 015387 հաշիվ-ապրանքագրերը որևէ ընթացկարգով կեղծ կամ անվավեր ճանաչված չեն, այդ հաշիվ-ապրանքագրերով կատարված գործարքները դատական կարգով շինծու ճանաչված չեն, այդ հաշիվ-ապրանքագրերով կատարված գործարքները հանդիսանում են իրավաբանական ուժ ունեցող գործարքներ:

Դատարանը եզրահանգել է, որ Ընկերության հայտարարագրած մաքսային արժեքների վերաբերյալ տվյալները, ապրանքների ձեռք բերման փաստաթղթերը պատշաճ ապացույցներ են, որոնք հաստատում են, թե ապրանքն ունից է ձեռք բերվել և ինչ արժեքով: Ակտով ստուգողների կողմից ապրանքի այլ մաքսային արժեք կարող էր հաշվարկվել միայն այն դեպքում, եթե հայցվոր ընկերության կողմից ներկայացված տվյալները հավաստի չհամարվեին և ստուգողները ապացուցեին հակառակը: Մինչդեռ վիճարկվող ակտում առկա չէ որևէ հիմնավորում ապրանքների ձեռքբերման փաստաթղթերը թուրքական «KAYA OTOMOTI ITH.IHR» LTD.STI ընկերությունից վերը նշված հաշիվ-ապրանքագրերը, ոչ հավաստի համարելու վերաբերյալ, առավել ևս չի պատճառաբանվում ակտի հիմքում դրված, Վրաստանից ստացված տեղեկությունները առավել հավաստի համարվելու հանգամանքը: Բացի այդ, վարչական վարույթի շրջանակներում առկա չէ գործարքի մյուս կողմ հանդիսացող ընկերության կողմից տրված որևէ բացատրություն, տեղեկություն առկա հակասությունների մասին: Վարչական վարույթով առկա չէ նաև որևէ տեղեկատվություն այն մասին, թե գործարքի մյուս կողմ հանդիսացող վաճառող կազմակերպության հաշվապահական հաշվառման տվյալներում վերոհիշյալ գործարքներն ինչ ձևակերպումներ են ստացել, այսինքն՝ ձևակերպված են հայցվորի կողմից ներկայացված փաստաթղթերով, թե Վրաստանի Հանրապետության մաքսային մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերով:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի հետևությունները: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերը բավարար հիմք չեն եղրահանգելու, որ Ընկերությունը Կոմիտեին ներկայացրել է ոչ արժանահավատ տեղեկություններ իր ներմուծած ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ, քանի որ այլ ապացույցների բացակայության պայմաններում դրանք ողջամտորեն չեն կարող ավելի որակյալ համարվել, քան Ընկերության կողմից ներկայացված տվյալները: Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով հաշիվ-ապրանքագրերում ավելի բարձր արժեքների ամրագրումն արտահանող ընկերությանը ձեռնառու չլինելու վերաբերյալ փաստարկին, գտել է, որ այն ապահովված չէ որևէ պատշաճ ապացույցով, բացի այդ՝ նշված փաստաթղթերը չեն ներկայացվել ՀՀ մաքսային մարմնին հենց արտահանող ընկերության կողմից, հետևապես բացառված չէ, որ Ընկերության անունով ավելի բարձր արժեքների մատնանշմամբ այլ հաշիվ-ապրանքագրերի ներկայացումն արտահանող ընկերության կողմից՝ իր երկրի և Վրաստանի մաքսային մարմիններին, հետապնդել է, օրինակ՝ արտահանվող ապրանքների արժեքներում ներառված ավելի բարձր ծավալի ավելացված արժեքի հարկ իր երկրից հետ ստանալու նպատակ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Օրենսդիրը, ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, մինևույն ժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վիճարկման հայցի առարկան միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է՝ հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*յոթն, Սահմելե Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցը՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց, օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական կարգով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնելուն: Վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում դատարանը ձեռնամուխ է լինում վարչական ակտի իրավաչափության գնահատմանը՝ ստուգելով վիճարկվող վարչական ակտի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդիրը հստակորեն կանխորոշել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության դատական վերահսկողության սահմանները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Դատարանի կողմից վարչական ակտի իրավաչափության գնահատումը պետք է կատարվի տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերով սահմանված պահանջների պահպանման հարցը պարզելու միջոցով (*Կրե՛ս, Հասմիկ Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ/8975/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկով արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից:

Դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը (*Կրե՛ս, Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով օրենսդիրը սահմանել է, որ վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում դատարանը ձեռնամուխ է լինում վարչական ակտի իրավաչափության գնահատմանը՝ ստուգելով վիճարկվող վարչական ակտի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրենսդիրը հստակորեն կանխորոշել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության դատական վերահսկողության սահմանները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում:

Անփոփելիվ վերոգրյալը և վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատմանն ուղղված դատական

վերահսկողությունը պետք է ուղղված լինի այդ ակտի ընդունման հիմքում ընկած բոլոր փաստական և իրավական հիմքերի ստուգմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության Ստուգումների պլանավորման և ռազմավարության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Վ. Սաղաթեյանի կողմից 16.05.2017 թվականին կազմվել է Ընկերության վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական տեղեկանք, որով, որպես վերլուծական աշխատանքի իրականացման հիմք, նշվել է Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 14.02.2017 թվականի թիվ 21-10/20545 (ՀՀ ԿԱ ՊԵԿ մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17) գրությանը կից տեղեկատվությունը (**հաստր 1-ին, գ.թ. 42**): Ընդ որում, նշված տեղեկատվական-վերլուծական տեղեկանքում շարադրվել է Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 14.02.2017 թվականի թիվ 21-10/20545 (մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17) օտարալեզու գրության (**հաստր 1-ին, գ.թ. 47**) բովանդակությունը:

Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության ստուգումների պլանավորման և ռազմավարության բաժնի պետը, հիմք ընդունելով 16.05.2017 թվականին կազմված տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը՝ Ընկերության կողմից մաքսային օրենսդրության հնարավոր խախտման մասին վկայող տեղեկատվության առկայության վերաբերյալ, 16.05.2017 թվականի զեկուցագրով հետքացթողումային հսկողության վարչության պետին առաջարկել է Ընկերությունում իրականացնել արտապլանային արտագնա մաքսային ստուգում (**հաստր 1-ին, գ.թ. 43**).

Կոմիտեի նախագահը, հիմք ընդունելով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 16.05.2017 թվականին հրապարակել է «Արտագնա մաքսային ստուգում իրականացնելու մասին» թիվ 0012 հանձնարարականը (**հաստր 1-ին, գ.թ. 41**), որի հիման վրա 17.05.2017 թվականից իրականացվել է արտապլանային արտագնա մաքսային ստուգում, որը վերաբերել է Ընկերության 12.02.2015 թվականի թիվ C3580 և 26.07.2016 թվականի թիվ 021168 մաքսային հատարարագրերով ՀՀ ներմուծված և հայտարարագրված ապրանքներին վերաբերվող ՀՀ և ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման ճշտությանը:

Ստուգման արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ հետքացթողումային հսկողության վարչության կողմից 29.05.2017 թվականին կազմվել է սույն գործով վիճարկվող արտագնա մաքսային ստուգման թիվ 0012-Ա ակտը, որով արձանագրվել է, որ (...)Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 14.02.2017 թվականի թիվ 21-10/20545 (ՀՀ ԿԱ ՊԵԿ մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17) գրությանը կից փաստաթղթերի համաձայն՝

12.02.2015 թվականի թիվ C3580 մաքսային հայտարարագրով ձևակերպված և EBE279/VV087 պետհամարանիշի բեռնատարով ՀՀ տարածք ներմուծված երեք անվանում ապրանքները (ապակյա բաժակներ՝ մեծ, ապակյա բաժակներ՝ փոքր և ամրացված ապակուց մուրաբայի աման) Վրաստանից ստացված հաշիվ-ապրանքագրում արտացոլված է մեկ անվանմամբ (ապակե սպասք խոհանոցային), որի հաշիվ-ապրանքագրային արժեքը՝ համաձայն թուրքական «KAYA OTOMOTI ITH.IHR» ընկերության 10.02.2015 թվականի թիվ 12007 հաշիվ ապրանքագիրը (դուրս գրված Ընկերության անունով) կազմում է 36.448 ԱՄՆ դոլար հայտարարագրված 16.747,2 ԱՄՆ դոլարի փոխարեն, FCA Sadahklo մատակարարման բազիսային պայմանով: Հետևաբար, մաքսային արժեքը կկազմի 17.475.722 դրամ (36.448 ԱՄՆ դոլար ինվոյսային արժեք) X 479.47 (փոխարժեքը), հայտարարագրված 8.119.489 դրամի փոխարեն արդյունքում պակաս է հայտարարագրվել 9.356.233 դրամ մաքսային արժեք: (...)

26.07.2016 թվականի թիվ C21168 մաքսային հայտարարագրով ձևակերպված SE222RT/BA364L պետհամարանիշի բեռնատարով ՀՀ տարածք ներմուծված 11 անվանում ապրանքները (ապակյա բաժակ փոքր ոտքով (օդու), բաժակ փոքր, ապակյա բաժակ մեծ ոտքով, բաժակ մեծ հյութի, աղաման, պիալա, պաղպաղակի աման, ջրաման, մոխրաման, համեմունքի աման, ափսե) Վրաստանից ստացված հաշիվ-ապրանքագրում արտացոլված է մեկ անվանմամբ (ապակե սպասք խոհանոցային), որի հաշիվ-ապրանքագրային արժեքը՝ համաձայն վրացական «Reqtrans» ընկերության 23.07.2011 թվականի թիվ 18 հաշիվ-ապրանքագիր (դուրս գրված Ընկերության անունով), կազմում է 32.897,86 ԱՄՆ

դոլար հայտարարագրված 20.762 ԱՄՆ դոլարի փոխարեն, FCA Batumi մատակարարման բազիսային պայմանով: Հետևաբար, մաքսային արժեքը կկազմի 15.995.269 դրամ ((32.897,865 ԱՄՆ դոլար (ինվոյսային արժեք) X 476.08 (փոխարժեք) + 333.256 դրամ (ճանապարհաձախս)), հայտարարագրված 10.439.958 ՀՀ դրամի փոխարեն, արդյունքում պակաս է հայտարարագրվել 5.555.311 դրամ մաքսային արժեք:

Ակտի համաձայն՝ Ընկերության կողմից խախտվել են Մաքսային միության մաքսային օրենսգրքի 27-րդ գլխի պահանջները՝ հայտարարագրվել են ոչ ճշգրիտ տեղեկություններ ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 76-80**):

Նշված ակտի հիման վրա նույն օրը՝ 29.05.2017 թվականին ընդունվել են նաև սույն գործով վիճարկվող «Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին» թիվ 0012-Ո-1 և թիվ 0012-Ո-2 որոշումները (**հատոր 1-ին, գ.թ. 12-20**):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեն փաստորեն անարժանահավատ է համարել ներմուծված ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ Ընկերության կողմից մաքսային մարմնին ներկայացված հայտարարագրերում պարունակվող տեղեկությունը, փոխարենը հավաստի համարելով Վրաստանի Մաքսային մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերով տեղեկատվությունը, որի հիման վրա էլ եզրահանգում է արել այն մասին, որ Ընկերությունը ճիշտ չի ներկայացրել հայտարարագրման ենթակա ապրանքների մաքսային արժեքները:

Անդրադառնալով Կոմիտեի կողմից որպես արժանահավատ ապացույց ընդունված Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված տեղեկատվությանը՝ կից փաստաթղթերով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթն իրականացվում, և վարչական ակտն ընդունվում է հայերենով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

Եթե վարույթի մասնակիցները փաստաթղթեր են ներկայացրել այլ լեզվով, ապա վարչական մարմնի պահանջով նրանք պարտավոր են ներկայացնել նաև դրանց՝ օրենքով սահմանված կարգով կատարված հայերեն թարգմանությունները:

Վերոգրյալ իրավակարգավորումներից ակնհայտ է, որ վարչական վարույթի ընթացքում վարչական մարմիններն իրավունք չունեն օգտագործելու օտարալեզու փաստաթղթեր (գրավոր ապացույցներ):

Տվյալ դեպքում վարչական վարույթում հայերեն լեզվով կազմված են միայն Ընկերության կողմից մաքսային մարմնին ներկայացված հայտարարագրերն ու այլ փաստաթղթերը: Մնացած գրավոր ապացույցներն օտարալեզու են, ուստի դրանք չեն կարող հանդիսանալ թույլատրելի ապացույցներ, գնահատվել ու դրվել վարչական ակտի հիմքում: Մինչդեռ վարչական մարմինը հղում է կատարել Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված տեղեկատվությանը՝ կից փաստաթղթերով:

Այսպես, սույն գործով վիճարկվող՝ 29.05.2017 թվականի թիվ 0012-Ա վարչական ակտում, որպես հայցվոր Ընկերությանը վերագրվող խախտումը հիմնավորող ապացույց, վկայակոչվել է Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 14.02.2017 թվականի թիվ 21-10/20545 (մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17) գրությունը և դրան կից փաստաթղթերը:

Վկայակոչված գրությունը՝ «մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17» գրառմամբ (հատոր 1-ին, գ.թ. 47) օտարալեզու է, ուստի ակնհայտ է, որ Կոմիտեն վարչական վարույթի ընթացքում գնահատել է օտարալեզու փաստաթուղթ՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները:

Ավելին՝ նշված իրավանորմների խախտմամբ գնահատված օտարալեզու փաստաթուղթը Կոմիտեն դրել է վիճարկվող վարչական ակտի հիմքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը, ի կատարումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված իր պարտականության, վարչական մարմինն է ներկայացրել օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող ապացույցներ, այդ թվում հայերեն լեզվով կազմված փաստաթղթեր, մինչդեռ վարչական մարմինը դրանց համեմատ առավելություն է տվել օտարալեզու փաստաթղթերին՝ չունենալով դրանց պատշաճ թարգմանված օրինակները: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերը բավարար հիմք չեն եզրահանգելու, որ Ընկերությունը Կոմիտեն ներկայացրել է ոչ արժանահավատ տեղեկություններ իր ներմուծած ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ, քանի որ այլ ապացույցների բացակայության պայմաններում դրանք ողջամտորեն չեն կարող ավելի որակյալ համարվել, քան Ընկերության կողմից ներկայացված տվյալները:

Փաստորեն Վերաքննիչ դատարանը սույն գործով վիճարկվող վարչական ակտերի ընդունման հիմքում ընկած բոլոր փաստական և իրավական հիմքերի ստուգման միջոցով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատական վերահսկողության է ենթարկել նշված վարչական ակտերի իրավաչափությունը և անդրադանալով Կոմիտեի կողմից վարչական ակտերի հիմքում դրված գրավոր ապացույցներին, իրավացիորեն եզրահանգել է, որ վարչական մարմինը ճիշտ չի գնահատել վարչական վարույթում առկա ապացույցները՝ առանց որևէ հիմնավորման դրանցից մեկին տալով առավելություն մյուսի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Ընկերության ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ հիմնավոր կասկածներ ունենալու պարագայում վարչական մարմինը ոչ միայն իրավունք ուներ, այլ նաև պարտավոր էր ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար, սակայն այդ միջոցները ձեռնարկման արդյունքում ձեռք բերված ապացույցները պետք է համապատասխանեին օրենքի պահանջներին, որպեսզի դրանք համարվեն թույլատրելի և ենթակա լինեին հետազոտման և գնահատման:

Տվյալ դեպքում, ինչպես վերն արդեն նշվել է, **սույն գործով վիճարկվող՝ 29.05.2017 թվականի թիվ 0012-Ա վարչական ակտում, որպես հայցվոր Ընկերությանը վերագրվող խախտումը հիմնավորող ապացույց, վկայակոչվել է Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 14.02.2017 թվականի թիվ 21-10/20545 (մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17) գրությունը և դրան կից փաստաթղթերը, որոնք օտարալեզու են, չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում պետական լեզվի մասին սահմանադրական կարգավորմանը, ինչպես նաև վարչական վարույթը հայերենով իրականացնելու և վարչական ակտը հայերենով ընդունելու, վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը հայերենով կազմելու և ամբողջ գործավարությունը հայերենով իրականացնելու օրենսդրական կարգավորումներին, ուստի դրանք չեն կարող հետազոտվել, գնահատվել վարչական վարույթի ընթացքում և դրվել վիճարկվող վարչական ակտերի հիմքում:**

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտերն ընդունվել են օրենքի խախտմամբ՝ միաժամանակ ոչ իրավաչափորեն միջամտելով օրենքով չնախատեսված պարտականություններ չկրելու՝ ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող Ընկերության իրավունքներին, ինչն էլ հիմք է եզրահանգելու, որ քննարկվող դեպքում առկա է վիճարկվող վարչական ակտերն անվավեր ճանաչելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հիմքը, որպիսի իրավացի եզրահանգման են եկել ստորագրատ դատարանները:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ

Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը, անվավեր ճանաչելով Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության 29.05.2017 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0012-Ա վարչական ակտը, ապրանքների մաքսային արժեքի ճշտգրման մասին 29.05.2017 թվականի թիվ 0012-Ո-1 և 29.05.2017 թվականի թիվ 0012-Ո-2 որոշումները, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարունատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.09.2018 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԳ/7522/05/17 վարչական գործով 03.03.2022 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

03.03.2022 թվական

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Պալատ), գրավոր ընթացակարգով քննելով թիվ ՎԳ/7522/05/17 վարչական գործով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.09.2018 թվականի որոշման դեմ՝ «ԱՄՈԿԱ ԳԼԱՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության 29.05.2017 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0012-Ա վարչական ակտը, ապրանքների մաքսային արժեքի ճշտգրման մասին 29.05.2017 թվականի թիվ 0012-Ո-1 և 29.05.2017 թվականի թիվ 0012-Ո-2 որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, Պալատի դատավորների մեծամասնությամբ (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 03.03.2022 թվականին որոշել է վճռաբեկ բողոքը մերժել, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.09.2018 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

Պալատի դատավորներ *S. Պարոտյան, Ս. Ասրոնյան, Ա. Բարսեղյան, Էդ. Սեդրակյան* համաձայն չլինելով Պալատի դատավորների մեծամասնության կարծիքին, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը ՀՀ վճռաբեկ դատարանի 03.03.2022 թվականի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը այսպիսով թողել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի կիրառման կապակցությամբ իրավունքի զարգացման խնդրի առկայությամբ:

Վերոգրյալով այսպիսով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե ինչ միջոցներով կարող է անձը վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում կարարել իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը և ինչ հերևանք կարող է ունենալ նրա կողմից այդ պարտականությունը չկարարելը:

Նշված հարցադրման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կատարել է հետևյալ վերլուծություններն ու եզրահանգումները: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Ապացույցները վարչական վարույթում» վերտառությամբ 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Ապացուցման պարտականությունը բաշխելը» վերտառությամբ 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Վերոգրյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը հստակ ամրագրել է վարչական վարույթում ապացուցման պարտականության կանոնները, սահմանելով, որ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է տվյալ անձը, իսկ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Մինչույն ժամանակ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը սահմանել է այն ապացույցների շրջանակը, որոնց միջոցով անձը և վարչական մարմինը կարող են կատարել ապացուցման իրենց պարտականությունը: Ընդ որում, վարչական վարույթի ընթացքում հետազոտվել և գնահատվել կարող են միայն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված և օրենքին համապատասխանող ապացույցները:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ անձի կողմից ապացուցման իր պարտականությունը չկատարելու որևէ բացասական հետևանք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը չի սահմանել: Նշված օրենքով բացասական հետևանք չի սահմանվել նաև վարչական մարմնի կողմից իր պարտականությունը չկատարելու համար, այդուհանդերձ վարչական մարմնի վրա օրենսդիրը դրել է գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու ուղղությամբ անհրաժեշտ ու համարժեք միջոցները ձեռնարկելու պարտականություն, քանի որ հենց վարչական մարմինն է կրում հիմնավորված և իրավաչափ վարչական ակտ ընդունելու պարտականությունը: Այսինքն՝ վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինը պարտավոր է վարչական վարույթի եզրափակման և վարչական ակտ ընդունելու համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ ու համարժեք միջոցներ՝ իր գործողությունները որևէ կերպ չչայմանավորելով անձի կողմից ապացուցման պարտականությունը չկատարելու հանգամանքով: Ավելին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում (հոդված 10-րդ), որպես վարչական մարմինների հետ հարաբերություններում վարչական վարույթի մասնակցի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք, ամրագրվել է հավաստիության կանխավարկածի սկզբունքը, համաձայն որի՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունն անձը կարող է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցներ ներկայացնելու միջոցով, որոնցում պարունակվող տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Միննույն ժամանակ օրենսդիրը վարչական մարմնին պարտավորեցրել է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության մեջ հավաստիանալու համար, եթե հիմնավոր կասկածներ ունի այդ տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ: Ընդ որում, վարչական մարմնի կողմից անհրաժեշտ միջոցները պետք է ձեռնարկվեն օրենքին համապատասխան, իսկ ձեռք բերված ապացույցներ պետք է համապատասխանեն օրենքի պահանջներին, որպեսզի դրանք համարվեն թույլատրելի, ենթակա լինեն հետազոտման և գնահատման:

Այնուհետև Վճռաբեկ դատարանը սույն գործի փաստերից ելնելով եկել է հետևյալ հետևության:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Կոմիտեն փաստորեն անարժանահավատ է համարել ներմուծված ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ Ընկերության կողմից մաքսային մարմնին ներկայացված հայտարարագրերում պարունակվող տեղեկությունը, փոխարենը հավաստի համարելով Վրաստանի Մաքսային մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերով տեղեկատվությունը, որի հիման վրա էլ եզրահանգում է արել այն մասին, որ Ընկերությունը ճիշտ չի ներկայացրել հայտարարագրման ենթակա ապրանքների մաքսային արժեքները:

Անդրադառնալով Կոմիտեի կողմից որպես արժանահավատ ապացույց ընդունված Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված տեղեկատվությանը՝ կից փաստաթղթերով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել հետևյալը:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթն իրականացվում, և վարչական ակտն ընդունվում է հայերենով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

Եթե վարույթի մասնակիցները փաստաթղթեր են ներկայացրել այլ լեզվով, ապա վարչական մարմնի պահանջով նրանք պարտավոր են ներկայացնել նաև դրանց՝ օրենքով սահմանված կարգով կատարված հայերեն թարգմանությունները:

Վերոգրյալ իրավակարգավորումներից ակնհայտ է, որ վարչական վարույթի ընթացքում վարչական մարմիններն իրավունք չունեն օգտագործելու օտարալեզու փաստաթղթեր (գրավոր ապացույցներ):

Տվյալ դեպքում վարչական վարույթում հայերեն լեզվով կազմված են միայն Ընկերության կողմից մաքսային մարմնին ներկայացված հայտարարագրերն ու այլ փաստաթղթերը: Մնացած գրավոր ապացույցներն օտարալեզու են, ուստի դրանք չեն կարող հանդիսանալ թույլատրելի ապացույցներ, գնահատվել ու դրվել վարչական ակտի հիմքում: Մինչդեռ վարչական մարմինը հղում է կատարել Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված տեղեկատվությանը՝ կից փաստաթղթերով:

Այսպես. **սույն գործով վիճարկվող՝ 29.05.2017 թվականի թիվ 0012-Ա վարչական ակտում, որպես հայցվոր Ընկերությանը վերագրվող խախտումը հիմնավորող ապացույց, վկայակոչվել է Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 14.02.2017 թվականի թիվ 21-10/20545 (մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17) գրությունը և դրան կից փաստաթղթերը:**

Վկայակոչված գրությունը՝ «մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17» գրառմամբ (հատոր 1-ին, գ.թ. 47) օտարալեզու է, ուստի ակնհայտ է, որ Կոմիտեն վարչական վարույթի ընթացքում գնահատել է օտարալեզու փաստաթուղթ՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները: Ավելին՝ նշված իրավանորմների խախտմամբ գնահատված օտարալեզու փաստաթուղթը Կոմիտեն դրել է վիճարկվող վարչական ակտի հիմքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Ընկերությունը, ի կատարումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված իր պարտականության, վարչական մարմնին է ներկայացրել օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող ապացույցներ, այդ թվում հայերեն լեզվով կազմված փաստաթղթեր, մինչդեռ վարչական մարմինը դրանց համեմատ առավելություն է տվել օտարալեզու փաստաթղթերին՝ չունենալով դրանց պատշաճ թարգմանված օրինակները: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերը բավարար հիմք չեն եզրահանգելու, որ Ընկերությունը Կոմիտեին ներկայացրել է ոչ արժանահավատ տեղեկություններ իր ներմուծած ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ, քանի որ այլ ապացույցների բացակայության պայմաններում դրանք ողջամտորեն չեն կարող ավելի որակյալ համարվել, քան Ընկերության կողմից ներկայացված տվյալները:

Փաստորեն Վերաքննիչ դատարանը սույն գործով վիճարկվող վարչական ակտերի ընդունման հիմքում ընկած բոլոր փաստական և իրավական հիմքերի ստուգման միջոցով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատական վերահսկողության է ենթարկել նշված վարչական ակտերի իրավաչափությունը և անդրադառնալով Կոմիտեի կողմից վարչական ակտերի հիմքում դրված գրավոր ապացույցներին, իրավացիորեն եզրահանգել է, որ վարչական մարմինը ճիշտ չի գնահատել վարչական վարույթում առկա ապացույցները՝ առանց որևէ հիմնավորման դրանցից մեկին տալով առավելություն մյուսի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Ընկերության ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ հիմնավոր կասկածներ ունենալու պարագայում վարչական մարմինը ոչ միայն իրավունք ուներ, այլ նաև պարտավոր էր ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար, սակայն այդ միջոցները ձեռնարկման արդյունքում ձեռք բերված ապացույցները պետք է համապատասխանեին օրենքի պահանջներին, որպեսզի դրանք համարվեն թույլատրելի և ենթակա լինեին հետազոտման և գնահատման:

Տվյալ դեպքում, ինչպես վերն արդեն նշվել է, **սույն գործով վիճարկվող՝ 29.05.2017 թվականի թիվ 0012-Ա վարչական ակտում, որպես հայցվոր Ընկերությանը վերագրվող խախտումը հիմնավորող ապացույց, վկայակոչվել է Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 14.02.2017 թվականի թիվ 21-10/20545 (մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17) գրությունը և դրան կից փաստաթղթերը, որոնք օտարալեզու են, չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում պետական լեզվի մասին սահմանադրական կարգավորմանը, ինչպես նաև վարչական վարույթը հայերենով իրականացնելու և վարչական ակտը հայերենով ընդունելու, վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը հայերենով կազմելու և ամբողջ գործավարությունը հայերենով իրականացնելու օրենսդրական կարգավորումներին, ուստի դրանք չէին կարող հետազոտվել, գնահատվել վարչական վարույթի ընթացքում և դրվել վիճարկվող վարչական ակտերի հիմքում:**

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտերն ընդունվել են օրենքի խախտմամբ՝ միաժամանակ ոչ իրավաչափորեն միջամտելով օրենքով չնախատեսված պարտականություններ չկրելու՝ ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող Ընկերության իրավունքներին, ինչն էլ հիմք է եզրահանգելու, որ քննարկվող դեպքում առկա է վիճարկվող վարչական ակտերն անվավեր ճանաչելու՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հիմքը, որպիսի իրավացի եզրահանգման են եկել ստորադաս դատարանները:

Անփոփոխելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը, անվավեր ճանաչելով Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության 29.05.2017 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0012-Ա վարչական ակտը, ապրանքների մաքսային արժեքի ճշտգրման մասին 29.05.2017 թվականի թիվ 0012-Ո-1 և 29.05.2017 թվականի թիվ 0012-Ո-2 որոշումները, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

2. Հարուկ կարծիքի պարճատարանություններ և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանի դատավորներ **Տ. Պետրոսյանս, Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս, Էդ. Սեդրակյանս** գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանը, ի խախտումն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանը բողոքարկվող որոշումը վերանայում է վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջների սահմաններում, քննության առարկա է դարձրել այնպիսի հարցեր, որոնք դուրս են ոչ միայն վճռաբեկ բողոքի, այլև սույն գործով ներկայացված հայցապահանջի սահմաններից:

Ասվածը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով. «Վճռաբեկ դատարանի որոշման Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը» վերտառությամբ երկրորդ բաժնի համաձայն՝ սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, Մաքսային միության մաքսային օրենսգրքի 98-րդ հոդվածի 2-րդ մասը, 111-րդ հոդվածի 2-րդ մասը, 132-րդ, 188-րդ, 189-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերության անվամբ տեղափոխվող բեռի տեսակի, քաշի, տեղափոխող տրանսպորտային միջոցի, ինչպես նաև մատակարարի վերաբերյալ տվյալները Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններին ներկայացված հաշիվ-ապրանքագրերում նույնական են, սակայն առկա է տարբերություն տեղափոխվող ապրանքի արժեքների և առաքման պայմանի մեջ: Արտահանման երկրում ներկայացված հաշիվ-ապրանքագրերում ապրանքների արժեքները եղել են 36.448 և 32.897,86 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ ներմուծված և մաքսային մարմիններին ներկայացված հաշիվ-ապրանքագրերում արժեքները ներկայացվել են ցածր՝ 16.747.2 և 20.762 ԱՄՆ դոլար:

Վերաքննիչ դատարանը նշված հանգամանքները չի դիտարկել պատճառահետևանքային կապի մեջ և չի գնահատել, թե գործարքի կողմերի համար այն ինչ փաստացի հետևանքներ է առաջացրել: Ակնհայտ է, որ հաշիվ-ապրանքագրերում գործարքի արժեքը ցածր ներկայացնելը ձեռնտու էր միայն ՀՀ ներմուծող ընկերությանը, քանի որ վերջինս այդ պարագայում վճարում է պակաս մաքսային վճարներ, իսկ մատակարարող թուրքական ընկերության և Վրաստանից վերաարտահանող ընկերության համար ապրանքների արժեքը իրականից ավելի բարձր ներկայացնելը որևէ տրամաբանական բացատրություն չունի, քանի որ ապրանքների արժեքն արհեստականորեն բարձրացնելով, արտահանող

կազմակերպությունը կարող էր առանց որևէ տրամաբանության կրել վնասներ՝ հարկային ավել վճարումներ կատարելու տեսքով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ մաքսային մարմինն ունեցել է Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը, և դրանց արժանահավատության մեջ հավաստիանալու նպատակով, ինքնուրույն, իր հաշվին ձեռնարկել է միջոցներ այլ ապացույցներ ձեռք բերելու ուղղությամբ, այսինքն՝ իրականացրել է համապատասխան հարցումներ և ձեռք է բերել բավարար ապացույցներ, որոնցով հաստատել է Ընկերության կողմից ոչ արժանահավատ տեղեկություններ և փաստաթղթեր ներկայացնելու փաստը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը որևէ գնահատական չի տվել այն փաստին, որ մաքսային մարմնի կողմից իրականացված ստուգման ընթացքում Ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերում վերոնշյալ գործարքների դիմաց կատարված վճարման վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի հայտնաբերվել: Ընկերությունը հայտարարության մեջ նշել է, որ ներմուծված ապրանքների համար թուրքական ընկերությանը վճարել է մաս-մաս՝ կանխիկ եղանակով, սակայն նույնիսկ այս պարագայում դա պետք է արտացոլվեր հաշվապահական հաշվառման փաստաթղթերում, ուստի սա ևս վկայում է այն մասին, որ Ընկերության կողմից մաքսային հայտարարագրման ժամանակ ներկայացված տեղեկություններն արժանահավատ չեն եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.09.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վիճարկման հայց ներկայացնելիս հայցվոր Ընկերության հիմնական փաստարկները վերաբերել են այն հանգամանքին, որ Կոմիտեն անհիմն կերպով է Վրաստանի մաքսային ծառայությունից ձեռք բերված տվյալները համարել հավաստի, իսկ Ընկերության ներկայացրած տվյալները ոչ արժանահավատ: Սույն գործով ո՛չ ներկայացված հայցադիմումում, ո՛չ ՀՀ վարչական դատարանի վճռում, ո՛չ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ, ոչ էլ Կոմիտեի ներկայացրած բողոքներում խոսք չի գնացել վարչական վարույթում օտարալեզու փաստաթղթերի առկայության մասին, մինչդեռ Վճռաբեկ դատարանի որոշումը կառուցված է այդ հանգամանքի վերլուծության վրա, որպիսի հիմքեր քննվող բողոքը չունի, իսկ եզրահանգումն էլ արված է այդ վերլուծության հիման վրա:

Գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանը պետք է քննարկման առարկա դարձներ բողոքի հիմքերը, իսկ այդ դեպքում անհրաժեշտ էր քննարկել հետևյալ հարցադրումը՝ արդյո՞ք հայտարարատուի կողմից ՀՀ մաքսային մարմիններին ներկայացված ու մաքսային արժեքի որոշման համար հիմք հանդիսացած հայտարարագրերի և մաքսային ստուգման արդյունքում օտարերկրյա պետությունների մաքսային մարմիններից վարչական փոխօգնության կարգով ստացված տեղեկատվության միջև առկա հակասությունների պայմաններում կարելի է վերջինը դիտարկել առավել արժանահավատ ապացույց և դնել ստուգման ակտի հիմքում:

Այդ կապակցությամբ արձանագրում ենք, որ ապրանքների մաքսային արժեքի որոշումը էական դեր է կատարում արտաքին տնտեսական գործունեության պետական կառավարման ոլորտում և ծառայում է որպես նախնական մեծություն մաքսային վճարների, որոշ հարկատեսակների գանձումն իրականացնելու համար: «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի վերոշարադրյալ դրույթների վերլուծությունից պարզ է դառնում, որ ապրանքի մաքսային արժեքի որոշման հիմնական մեթոդը ներմուծվող ապրանքների գործարքի արժեքի մեթոդն է, իսկ մաքսային արժեքի որոշման յուրաքանչյուր հաջորդ մեթոդ կիրառվում է նախորդի կիրառման անհնարինության դեպքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի նախագահի առաջին տեղեկալ Ս. Ավետիքյանի 20.12.2016 թվականի թիվ 91/39289-16 գրությամբ Վրաստանի ֆինանսների նախարարության Մաքսային դեպարտամենտից տեղեկատվություն է պահանջվել Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումների, հաշիվ-ապրանքագրերի և բոլոր բեռնաուղեկցող փաստաթղթերի վերաբերյալ:

Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության Ստուգումների պլանավորման և ռազմավարության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Վ. Սադաթեյանի կողմից 16.05.2017 թվականին կազմվել է Ընկերության վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական տեղեկանք, որով, որպես վերլուծական աշխատանքի իրականացման հիմք, նշվել է Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 14.02.2017 թվականի թիվ 21-10/20545 (մուտք 22.02.2017 թվականի թիվ 8748-17) գրությանը կից տեղեկատվությունը:

Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության ստուգումների պլանավորման և ռազմավարության բաժնի պետը, հիմք ընդունելով 16.05.2017 թվականին կազմված տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը՝ Ընկերության կողմից մաքսային օրենսդրության հնարավոր խախտման մասին վկայող տեղեկատվության առկայության վերաբերյալ, 16.05.2017 թվականի գեկուցագրով հետքացթողումային հսկողության վարչության պետին առաջարկել է Ընկերությունում իրականացնել արտապլանային արտագնա մաքսային ստուգում: Կոմիտեի նախագահի 16.05.2017 թվականի թիվ 0012 արտագնա մաքսային ստուգում իրականացնելու մասին հանձնարարագրով, հիմք ընդունելով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, հանձնարարվել է Ընկերությունում իրականացնել արտապլանային արտագնա մաքսային ստուգում:

«Ապավեն» ՍՊԸ-ի 02.03.2017 թվականի թիվ F/17-016 գրության համաձայն՝ 2016 թվականի հուլիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում Բաթումի-Երևան բեռնափոխադրման պարագայում Բաթումի քաղաքից մինչև Բագրատաշենի կամ Բավրայի Մ/Կ հատվածի համար մեկ բեռնատարի 18-25 տոննա բեռի ընդհանուր քաշով տեղափոխման արժեքը կարող էր կազմել 700-850 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության կողմից 29.05.2017 թվականին կազմվել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0012-Ա ակտը, որի համաձայն Ընկերությունում 17.05.2017 թվականի թիվ 0012 հանձնարարականի հիման վրա իրականացվել է արտապլանային արտագնա մաքսային ստուգում, որը վերաբերում է 12.02.2015 թվականի թիվ C3580 և 26.07.2016 թվականի թիվ C21168 մաքսային հայտարարագրով ՀՀ ներմուծված և հայտարարագրված ապրանքների վերաբերյալ ԵԱՍՄ և ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման ճշտության ստուգումը: Ակտի համաձայն՝ Ընկերության կողմից խախտվել են Մաքսային միության մաքսային օրենսգրքի 27-րդ գլխի պահանջները՝ հայտարարագրվել են ոչ ճշգրիտ տեղեկություններ ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ:

Դատարանը, Ընկերության հայցը բավարարելիս, պատճառաբանել է, որ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Տվյալ դեպքում, մաքսային մարմինն անարժանահավատ համարելով մատակարարից ստացած հաշիվ-ապրանքագրերը, հիմք է ընդունել Վրաստանի մաքսային մարմնից ստացված տեղեկությունները: Հարկ է նշել, որ թուրքական «KAYA OTOMOTI ITH.IHR» LTD.STI ընկերությունից ստացած 10.02.2015 թվականի թիվ 014320, 23.07.2016 թվականի թիվ 015387 հաշիվ-ապրանքագրերը որևէ ընթացակարգով կեղծ կամ անվավեր ճանաչված չեն, այդ հաշիվ-ապրանքագրերով կատարված գործարքները դատական կարգով շինծու ճանաչված չեն, այդ հաշիվ-ապրանքագրերով կատարված գործարքները հանդիսանում են իրավաբանական ուժ ունեցող գործարքներ:

Դատարանը եզրահանգել է, որ Ընկերության հայտարարագրած մաքսային արժեքների վերաբերյալ տվյալները, ապրանքների ձեռք բերման փաստաթղթերը պատշաճ ապացույցներ են, որոնք հաստատում են, թե ապրանքն ումից է ձեռք բերվել և ինչ արժեքով: Ակտով ստուգողների կողմից ապրանքի այլ մաքսային արժեք կարող էր հաշվարկվել միայն այն դեպքում, եթե հայցվոր ընկերության կողմից ներկայացված տվյալները հավաստի չհամարվեին և ստուգողները ապացույցեին հակառակը: Մինչդեռ, վիճարկվող ակտում առկա չէ որևէ հիմնավորում ապրանքների ձեռքբերման փաստաթղթերը թուրքական «KAYA OTOMOTI ITH.IHR» LTD.STI ընկերությունից վերը նշված

հաշիվ-ապրանքագրերը, ոչ հավաստի համարելով վերաբերյալ, առավել ևս չի պատճառաբանվում ակտի հիմքում դրված Վրաստանից ստացված տեղեկությունները առավել հավաստի համարվելու հանգամանքը: Բացի այդ, վարչական վարույթի շրջանակներում առկա չէ գործարքի մյուս կողմ հանդիսացող ընկերության կողմից տրված որևէ բացատրություն, տեղեկություն առկա հակասությունների մասին: Վարչական վարույթով առկա չէ նաև որևէ տեղեկատվություն այն մասին, թե գործարքի մյուս կողմ հանդիսացող վաճառող կազմակերպության հաշվապահական հաշվառման տվյալներում վերոհիշյալ գործարքներն ինչ ձևակերպումներ են ստացել, այսինքն՝ ձևակերպված են հայցվորի կողմից ներկայացված փաստաթղթերով, թե Վրաստանի հանրապետության մաքսային մարմինների կողմից տրամադրված փաստաթղթերով:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի հետևությունները: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերը բավարար հիմք չեն եզրահանգելու, որ Ընկերությունը Կոմիտեին ներկայացրել է ոչ արժանահավատ տեղեկություններ իր ներմուծած ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ, քանի որ այլ ապացույցների բացակայության պայմաններում դրանք ողջամտորեն չեն կարող ավելի որակյալ համարվել, քան Ընկերության կողմից ներկայացված տվյալները: Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով հաշիվ-ապրանքագրերում ավելի բարձր արժեքների ամրագրումն արտահանող ընկերությանը ձեռնառու չլինելու վերաբերյալ փաստարկին, գտել է, որ այն ապահովված չէ որևէ պատշաճ ապացույցով, բացի այդ՝ նշված փաստաթղթերը չեն ներկայացվել ՀՀ մաքսային մարմնին հենց արտահանող ընկերության կողմից, հետևապես բացառված չէ, որ Ընկերության անունով ավելի բարձր արժեքների մատնանշմամբ այլ հաշիվ-ապրանքագրերի ներկայացումն արտահանող ընկերության կողմից՝ իր երկրի և Վրաստանի մաքսային մարմիններին, հետապնդել է, օրինակ՝ արտահանվող ապրանքների արժեքներում ներառված ավելի բարձր ծավալի ավելացված արժեքի հարկ իր երկրից հետ ստանալու նպատակ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ արձանագրում ենք հետևյալը.

Տվյալ դեպքում վարչական վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ արտապայանային արտագնա մաքսային ստուգման ընթացքում կատարվել է գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, ուսումնասիրվել են Ընկերության հաշվապահական, ապրանքն ուղեկցող փաստաթղթերը, կատարվել է նաև հայտարարագրված տվյալների համադրում, որի արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից հայտարարագրվել են ոչ ճշգրիտ տեղեկություններ ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ, ինչի արդյունքում Ընկերությանն առաջադրվել է Մաքսային միության օրենսգրքի 191-րդ հոդվածին համապատասխան՝ ապրանքների հայտարարագրերում կատարել համապատասխան որոշմամբ ներկայացված փոփոխությունները և լրացումները՝ ճշգրտված տվյալների հիման վրա:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերը բավարար հիմք չեն եզրահանգելու, որ Ընկերությունը Կոմիտեին ներկայացրել է ոչ արժանահավատ տեղեկություններ իր ներմուծած ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ, ապա արձանագրում ենք հետևյալը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել (...): Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 46-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային մարմինների միջև տեղեկությունների փոխանակումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան:

Մաքսային մարմինները օտարերկրյա պետությունների մաքսային մարմինների հետ, ինչպես նաև միջազգային և այլ կազմակերպությունների հետ տեղեկատվության միջազգային փոխանակմանը մասնակցում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Վրաստանի Կառավարության միջև մաքսային գործերում վարչական փոխօգնության մասին» 15.10.2007 թվականի համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մաքսային ծառայությունները, հարցման հիման վրա, միմյանց տրամադրում են տեղեկատվություն ծրագրավորված, ընթացքում գտնվող կամ ավարտված գործառնությունների մասին, որոնք պարունակում են կամ կարող են պարունակել մաքսային իրավախախտում:

Նույն համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցվող մաքսային ծառայությունը, հարցման հիման վրա, մաքսային փաստաթղթերի կեղծումը կանխարգելելու նպատակով, հայցող մաքսային ծառայությանը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, եթե վերջինիս մոտ առաջացել են կասկածներ՝ մաքսային հայտարարագրի կեղծված լինելու կամ դրա ճիշտ լրացված լինելու վերաբերյալ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հարցման ղեպքում մաքսային ծառայությունները փոխանակում են գանձվող մաքսատուրքերի, հարկերի, գանձումների և այլ վճարների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես այնպիսի տեղեկատվություն, որը կարող է օգտակար լինել մաքսային նպատակներով ապրանքների արժեքի գնահատման և սակագնային դասակարգման հաստատման ժամանակ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Այսպիսով, արձանագրում ենք, որ մաքսային մարմինն ունեցել է հիմնավոր կասկածներ Ընկերության ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ և ներկայացված փաստաթղթերի արժանահավատության մեջ հավաստիանալու նպատակով, ղեկավարվելով մաքսային օրենսդրության նորմերով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով, **ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել է միջոցներ** այլ ապացույցներ ձեռք բերելու ուղղությամբ, այսինքն՝ իրականացրել է համապատասխան հարցումներ և ձեռք է բերել բավարար ապացույցներ, որոնցով հաստատել է Ընկերության կողմից ոչ արժանահավատ տեղեկություններ և փաստաթղթեր ներկայացնելու փաստը: Ավելին, մաքսային մարմնի կողմից իրականացված ստուգման ընթացքում Ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերում վերոնշյալ գործարքների դիմաց կատարված վճարման վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի հայտնաբերվել: Ընկերության հայտարարության մեջ նշվել է, որ ներմուծված ապրանքների համար թուրքական ընկերությանը վճարել է մասմաս՝ կանխիկ եղանակով, որոնք հաշվապահական հաշվառման փաստաթղթերում չեն արտացոլվել:

Միաժամանակ արձանագրում ենք, որ մաքսային մարմինների կողմից ապացույցները ձեռք են բերվել «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Վրաստանի Կառավարության միջև մաքսային գործերում վարչական փոխօգնության մասին» 15.10.2007 թվականի համաձայնագրի հիման վրա, մինչդեռ առանց հստակ պատճառաբանության Վերաքննիչ դատարանը Կոմիտեի ներկայացրած գրավոր ապացույցը արժանահավատ չի համարել:

Սույն գործով Ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերում վերոնշյալ գործարքների դիմաց կատարված վճարման վերաբերյալ որևէ փաստաթղթի չի հայտնաբերվել: Ընկերությունը հայտարարության մեջ նշել է, որ ներմուծված ապրանքների համար թուրքական ընկերությանը վճարել է մաս-մաս՝ կանխիկ եղանակով, սակայն նույնիսկ այս պարագայում դա պետք է արտացոլվեր հաշվապահական հաշվառման փաստաթղթերում, այսինքն՝ Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել Ընկերության բանավոր հայտարարությունը և հաշվի չի առել Կոմիտեի կողմից ներկայացված գրավոր ապացույցներն առ այն, որ Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններին ներկայացված հաշիվ-ապրանքագրերում նշված բեռի տեսակը, քաշը, մատակարարի վերաբերյալ տվյալները նույնական են, սակայն առկա է տարբերություն տեղափոխվող ապրանքի արժեքների և առաքման պայմանի մեջ: Արտահանման երկրում ներկայացված հաշիվ-ապրանքագրերում ապրանքների արժեքները եղել են 36.448 և 32.897.86 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ ներմուծված և մաքսային մարմիններին ներկայացված հաշիվ-ապրանքագրերում արժեքները ներկայացվել են ցածր՝ 16.747.2 և 20.762 ԱՄՆ դոլար:

Ստորադաս դատարանները բավարար չեն համարել Կոմիտեի ներկայացրած ապացույցները, սակայն չեն պատճառաբանել, թե ինչու են եկել հենց այդ եզրահանգման, այսպիսով առանց բավարար հիմքերի հանգել են վիճարկվող վարչական ակտերի անվավերության վերաբերյալ եզրակացության:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական և փաստական հիմնավորումները: Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը (տե՛ս, ըստ հայցի ՀՀ Ֆինանսների նախարարության ընդդեմ «Ձինո-Լենդ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/4437/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2010 թվականի որոշումը):

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը համարում ենք բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ գտնում ենք, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերագրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված

իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում էր արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Վերոգրյալի հիման վրա գալիս ենք այն եզրակացության, որ տվյալ դեպքում անհրաժեշտ էր վճռաբեկ բողոքը բավարարել՝ բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.09.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «ԱՄՈԿԱ ԳԼԱՍ» ՍՊԸ-ի հայցը մերժել:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Տ. Պետրոսյան
Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Է. Սեդրակյան

**20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր
Դատավորներ

ՎԳ/0325/05/19
Ա. Առաքելյան
Կ. Մաթևոսյան
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ ՎԳ/0325/05/19
2021թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի հոկտեմբերի 22-ին
գրավոր ընթացակարգով քննելով Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 06.04.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի
Դավիթ Մելիք-Ստեփանյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ ուղղակի վաճա-
րքով հողամասն օտարելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու
պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Դավիթ Մելիք-Ստեփանյանը պահանջել է պարտավորեցնել
Երևանի քաղաքապետարանին ընդունելու բարենպաստ վարչական ակտ՝ Երևան քաղաքի
Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի պողոտա 15/5 հասցեում գտնվող 32.35 քմ սեփա-
կան տարածքի անմիջապես մուտքի դիմաց գտնվող լրացուցիչ 28 քմ մակերեսով հողա-
մասն (այսուհետ նաև՝ Հողամաս) ուղղակի վաճառքով Դավիթ Մելիք-Ստեփանյանին

օտարելու վերաբերյալ, և որպես հետևանք վերացնել 11.12.2018 թվականի թիվ 18-06/118-10513 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան) 25.02.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ անվավեր է ճանաչվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի 11.12.2018 թվականի թիվ 18-06/1-Մ-10512 մերժումը, և պարտավորեցվել է Երևանի քաղաքապետին ընդունելու բարենպաստ վարչական ակտ՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի պողոտա 15/5 հասցեում գտնվող 32.35 քմ տարածքին կից 28 քմ մակերեսով հողամասը (ըստ ՖՔաղաքաշինություն՝ փակ բաժնետիրական ընկերության 07.05.2019 թվականի հատակագծի) Դավիթ Մելիք-Ստեփանյանին ուղղակի վաճառելու մասին:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.04.2021 թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.02.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի քաղաքապետարանը (ներկայացուցիչ Անդրանիկ Մուրադյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Դավիթ Մելիք-Ստեփանյանը (ներկայացուցիչ Կարեն Սարգսյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 66-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 02.04.2001 թվականի թիվ 286 որոշման 3-րդ կետի «գ» ենթակետը:

Բողոք բերած անձը նշված այդտեղի պարճատարանն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի հետազոտել Երևանի քաղաքապետարանի ներկայացրած հետևյալ ապացույցները՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 08.02.2019 թվականի թիվ ԱՏ-06/02/2019-1-0441 տեղեկանքը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի 26.02.2019 թվականի թիվ 18-06/162 և 26.02.2019 թվականի թիվ 18-06/162 գրությունները, Կենտրոն վարչական շրջանի գոտևորման նախագծից կատարված հատվածները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ արդարադատության նախարարության «Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 03.12.2019 թվականի թիվ 21421907 փորձագիտական եզրակացությամբ (այսուհետ՝ Եզրակացություն) անդրադարձ չի կատարվել Հոդամասը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներում ներառված լինելու կամ չլինելու վերաբերյալ և փորձագետին էլ չի առաջադրվել Հոդամասը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ներառված լինելու վերաբերյալ հարցադրում: Ավելին՝ Եզրակացությամբ չի հերքվել Դավիթ Մելիք-Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից Հոդամասը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ներառված լինելու հանգամանքը, մինչդեռ Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ Հոդամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում: Ստացվում է՝ Հոդամասը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում չգտնվելու փաստը Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել ոչ վերաբերելի ապացույցի Եզրակացության հիման վրա:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հոդամասը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված լինելու փաստն ինքնին բացառում է դրա օտարումը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որևէ միջոցով՝

անկախ Եզրակացությանը նշված այն հանգամանքից, որ Հոդամասը «(...) նպատակահարմար է բացառապես օգտագործել՝ Երևան քաղաքի, Մաշտոցի պողոտայի թիվ 15/5 հասցեում գտնվող շինության համար, (...)»:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Եզրակացությունը չի հանգեցնում այն բանին, որ Հոդամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, քանի որ դրանում նշված չափանիշներով չէ, որ որոշվում է Հոդամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքը: Այդ մասին տեղեկատվությանը տիրապետող և այն տրամադրող իրավասու մարմինը Երևան համայնքի ղեկավարն է (*այդ կապակցությամբ իր իրավական դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/4566/05/11 վարչական գործով 04.10.2013 թվականին կայացված որոշմամբ*):

Եթե անգամ 26.02.2019 թվականի թիվ 18-06/162 գրությանը հայտնած տեղեկատվության հավաստիության վերաբերյալ առկա էին կասկածներ, ապա Դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածին համապատասխան, իրավասու էր լրացուցիչ ապացույց ձեռք բերելու նպատակով ձեռնարկելու համապատասխան միջոցներ և նշանակված փորձաքննության շրջանակներում փորձագետին առաջադրելու նաև այն հարցադրումը, թե արդյոք Հոդամասն ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, թե ոչ: Նշվածն անելու փոխարեն հիմք ընդունելով միայն փորձագետի կողմից այլ հարցերի շրջանակներում կատարված փորձաքննության արդյունքում տրված Եզրակացությունը, Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ Հոդամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

Երևանի քաղաքապետարանը ներկայացրել էր Հոդամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված լինելու փաստը հաստատող ապացույցները, իսկ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով դատարանին վերապահված չէ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներում ներառված լինելու կամ չլինելու կապակցությամբ եզրահանգումներ կատարել, այն էլ՝ այդ փաստը հիմնավորող թույլատրելի ապացույցի բացակայության պայմաններում:

Նշվածի հետևանքով Երևանի քաղաքապետարանի վրա է դրվել ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունելու պարտականություն:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է քեկանել Վերաքննիչ դատարանի 06.04.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Երևանի քաղաքապետարանը չի ներկայացրել ապացույցներ առ այն, թե ինչու է Հոդամասն ընդգրկվել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և չի վկայակոչել փաստական, իրավական և քաղաքաշինական այնպիսի հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ Հոդամասը ենթակա չէ օտարման: Երևանի քաղաքապետարանը, որպես հիմնավորում ներկայացրել է միայն ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պնդումներն այն մասին, որ Հոդամասը գտնվում է բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման բակային տարածքում և Կենտրոն վարչական շրջանի նախագծով գտնվում է բարձրահարկ բնակելի կառուցապատման գոտում, որպիսիք Հոդամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածում ընդգրկված լինելու փաստը հաստատող մասնագիտական կամ իրավական հիմնավորումներ համարվել չեն կարող: Ավելին՝ Դատարանն իրականացրել է տեղագնություն և առկա է փորձագիտական եզրակացություն, որոնց արդյունքներով հերքվել է Հոդամասը որպես ընդհանուր օգտագործման տարածք օգտագործելու հնարավորությունը, առավել ևս, որ այն սահմանազատված է ցանկապատով: Հայցվորին սեփականության

իրավունքով պատկանող հողամասն օտարվել է Երևանի քաղաքապետարանի կողմից, իսկ վիճելի Հողամասը, որպես ընդհանուր օգտագործման տարածք օգտագործելու ուղղությամբ Երևանի քաղաքապետարանը հավակնություններ չի ունեցել:

Հողամասը չի համապատասխանում ընդհանուր օգտագործման հող համարվելու՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված պայմաններին:

Երևանի քաղաքապետարանը չի հիմնավորել իր այն պնդումը, թե ինչու Եզրակացությամբ չի կարող հաստատվել Հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների շարքում լինելու փաստը:

Հողամասն ուղղակի վաճառքի ենթակա լինելու վերաբերյալ իր եզրակացության հիմքում Վերաքննիչ դատարանը դրել է ոչ միայն Եզրակացությունը, այլև գործում եղած սպացույցների համակցությունը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Հողամասը հայցվորից բացի այլ անձի օտարելն անհնարին է ՀՀ կառավարության 26.05.2016 թվականի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերում նշված հիմքերով:

Վերոգրյալի հիման վրա՝ Դավիթ Մելիք-Ստեփանյանը խնդրել է մերժել վճարել բողոքը:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևան, Կենտրոն, Մաշտոցի պողոտա 15/5 տարածքը սեփականության իրավունքով պատկանում է Դավիթ Մելիք-Ստեփանյանին (սեփականության իրավունքի գրանցման թիվ 30102017-01-130 վկայական) (**հատոր 1, գ.թ. 6**):

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Մ. Աղաբեկյանը 11.12.2018 թվականին Դավիթ Մելիք-Ստեփանյանին հասցեագրված թիվ 18-06/1-18-10513 գրությամբ տեղեկացրել է, որ Մաշտոցի պողոտա 15/5 հասցեին կից գտնվող լրացուցիչ հողամասը բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման բակային տարածքում է և ոչ մի սուբյեկտի, այդ թվում նաև՝ Դավիթ Մելիք-Ստեփանյանին, տրամադրվել չի կարող (**հատոր 1, գ.թ. 5**):

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Մ. Աղաբեկյանը 26.02.2019 թվականի թիվ 18-06/162 գրությամբ հայտնել է, որ Դավիթ Մելիք-Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Մաշտոցի պողոտա 15/5 հասցեում գտնվող հողամասին կից՝ 28 քմ մակերեսով հողամասը (Հողամաս) ՀՀ կառավարության 15.12.2005 թվականի թիվ 2330-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծով բնակավայրերի նպատակային նշանակության (կատեգորիայի) խառը կառուցապատման գոտում է, որն իր մեջ ներառում է և՛ բնակելի, և՛ հասարակական կառուցապատում՝ ընդհանուր օգտագործման տարածքների հավասարաչափ համադրությամբ: Հողամասն ընդհանուր օգտագործման է, ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում (6-րդ կետ) և ենթակա չէ օտարման (մասնավորեցման): Ընդ որում, Հողամասը ներառված չէ Մաշտոցի պողոտա 15 բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած հողամասի սահմաններում, և գտնվում է Մաշտոցի պողոտա 15 և 18 բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքում:

Գրությանը կից ներկայացվել են Հողամասի տեղադրության վերաբերյալ հատակագծերը, հետագայում նաև Կենտրոն վարչական շրջանի գտնիվորման նախագծից հատվածներ՝ Հողամասի նշագրմամբ (**հատոր 1, գ.թ. 27-29, 31, 32, 59-61**):

4) 11.12.2018 թվականին կայացած դատական նիստի ընթացքում Դատարանը որոշել է Մաշտոցի պողոտա 15/5 հասցեում նշանակել տեղագնություն, որը իրականացվել է 27.03.2019 թվականին՝ ժամը 18:00-ին:

Տեղագնության արդյունքում Դատարանն արձանագրել է §(...) այդ տարածքը չի կարող ծառայել որպես հրապարակ, փողոց, ճանապարհ, զբոսայգի, պուրակ, այգի կամ համանման այլ ընդհանուր օգտագործման տարածք: Այն տվյալ պահին փաստացի

սահմանազատված է ցանկապատով, իսկ, (...) Երևանի քաղաքապետարանը մինչ օրս միջոցներ չի ձեռնարկել տարածքն այլ նպատակներով օգտագործելու ուղղությամբ, §(...) տվյալ տարածքը, այսպես թե այնպես, փաստացի օգտագործվելու է հայցվորի կողմից՝ **(հատոր 1, գ.թ. 37-41, 138, 139):**

5) Արդարադատության նախարարության «Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 03.12.2019 թվականի թիվ 21421907 Եզրակացության համաձայն՝ §(...) կախված հողամասի օգտագործման կարգավիճակի վերաբերյալ իրավասու մարմնի կողմից կայացված որոշման պայմաններից, ելնելով գուտ շինարարատեխնիկական տեսանկյունից, նպատակահարմար է բացառապես օգտագործել՝ Երևան քաղաքի, Մաշտոցի պողոտայի թիվ 15/5 հասցեում գտնվող շինության համար, (2) (...) Երևան քաղաքի, Մաշտոցի պողոտայի 15/5 հասցեում գտնվող հողամասին (վկայական թիվ 30102017-01-0130) կից գտնվող 07.05.2019 թվականի հատակագծում նշված 32,35քմ մակերեսով հողամասի դիրքի ռելիեֆի առանձնահատկություններից ելնելով, Երևան քաղաքի, Մաշտոցի պողոտայի 15/5 հասցեում գտնվող հողամասին (վկայական թիվ 30102017-01-0130) տրանսպորտային միջոցներով մոտեցման որևիցե այլընտրանքային հնարավորություն առկա չէ, բացի Մաշտոցի պողոտայի 15/5 հասցեում գտնվող հողամասին (վկայական թիվ 30102017-01-0130) կից գտնվող 07.05.2019 թվականի հատակագծում նշված 32,35քմ հողամասից (...) 32,35քմ մակերեսով հողամասը չի հանդիսանում կառուցապատման գուրի: Ուստի, այն չի կարող կառուցապատվել, թե՛ Դավիթ Մելիք-Ստեփանյանի կողմից, թե՛ այլ անձի կողմից, (...) նշված 32,35քմ մակերեսով հողամասում այլ անձի կողմից որևէ քաղաքաշինական գործունեության իրականացումը կհանգեցնի՝ Երևան քաղաքի, Մաշտոցի պողոտայի 15/5 հասցեում գտնվող հողամասի (վկայական թիվ 30102017-01-0130) սահմաններում գտնվող 32,35քմ արտաքին և 28,0 քմ ներքին մակերեսով շինության շահագործման, անվտանգության, սեյսմակայունության կամ սպասարկման համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերի խախտման կամ ըստ նպատակային (գործառնական) նշանակությամբ շինության օգտագործելու հետագա անհնարիության՝ **(հատոր 1, գ.թ. 83-88):**

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի կապակցությամբ, առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ որևէ հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում ընդգրկված լինելու հարց քննարկելիս արդյո՞ք դատարանն իրավասու է ինքնուրույն որոշելու դրա նպարակային նշանակությունը կամ զնահարելու սահմանված նպարակային նշանակությամբ այն օգտագործելու հնարավորությունը:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ իրավական պետությունում ի թիվս այլնի՝ պետական մարմինների գործունեության հիմնարար սկզբունք է հանդիսանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասությունը կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով: Այս սկզբունքն ամրագրված է օրինակա-նության հիմնարար սկզբունքը սահմանող՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում:

ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում և հաստատում են համայնքի (քնակավայրի) գլխավոր հատակագիծը (այսուհետ՝ գլխավոր հատակագիծ), քաղաքաշինական գոտիավորման նախագիծն ու հողերի օգտագործման սխեման, ինչպես նաև սահմանում և փոփոխում են հողերի նպատակային և գործառնական նշանակությունը՝ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հողերի նպատակային նշանակությունը, հողատեսքերն ու գործառնական նշանակությունը և հողերի օգտագործման նկատմամբ սահմանափակումները նշվում են համայնքների հողերի օգտագործման սխեմաներում, գլխավոր հատակագծերում:

Շարադրված նորմերի բովանդակությունից բխում է, որ համայնքի (քնակավայրի) գլխավոր հատակագիծը, քաղաքաշինական գոտիավորման նախագիծը, հողերի օգտագործման սխեման կազմելու և հաստատելու, ՀՀ կառավարության սահմանած կարգին համապատասխան՝ հողերի նպատակային և գործառնական նշանակությունը սահմանելու և փոփոխելու իրավասությամբ օժտված են տեղական ինքնակառավարման մարմինները: Ընդ որում, հողերի նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, հողերի օգտագործման նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ նշումներն արվում են համայնքների հողերի օգտագործման սխեմաներում և գլխավոր հատակագծերում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը (...):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (քնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը կամ դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները:

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կամ դրանց փոփոխությունների, ինչպես նաև նախագծման առաջադրանքների նախագծերը, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը հողօգտագործման բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմում է համայնքների հողերի օգտագործման սխեմաներն ու քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին նույն օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին:

Նշված նորմերից բխում է, որ համայնքի ղեկավարը կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, հողերի օգտագործման նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ նշումներ պարունակող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, այն է՝ համայնքի (քնակավայրի) գլխավոր հատակագիծը, քաղաքաշինական գոտիավորման նախագիծը և հողերի օգտագործման սխեմաները, իսկ համայնքի ավագանին ընդունում է դրանք հաստատելու

մասին որոշում: Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ են հաստատվում այդ համայնքի վարչական տարաքում գտնվող հողերի նպատակային նշանակությունը և դրանց օգտագործման նկատմամբ նախատեսված սահմանափակումները: Հետևաբար համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը կազմելու, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի նպատակային նշանակությունը, հողատեսքերը և գործառնական նշանակությունը սահմանելու իրավասությունը վերապահված է համայնքի ղեկավարին, իսկ դրանք հաստատելու իրավասությունը՝ համայնքի ավագանուն: Պետական և տեղական ինքնակառավարման որևէ այլ մարմին կամ պաշտոնատար անձ այդ իրավասությամբ օժտված չէ, հետևաբար չի կարող իրականացնել այդ իրավասության հետ կապված գործողություններ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ Երևանի ավագանին (այսուհետ՝ ավագանի):

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ և 20-րդ կետերի համաձայն՝ ավագանին որոշում է ընդունում Երևան քաղաքի գլխավոր հատակագծի, դրա փոփոխությունների, ինչպես նաև նախագծման առաջադրանքի վերաբերյալ, որոշում է ընդունում Երևան քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխան մշակված՝ Երևան քաղաքի առանձին տարածքների գոտիավորման նախագծերի, ինչպես նաև նախագծման առաջադրանքի վերաբերյալ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ ավագանու հետ հարաբերություններում քաղաքապետն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ ավագանու և ներկայացնում Երևան քաղաքի գլխավոր հատակագծի և դրա փոփոխությունների, ինչպես նաև նախագծման առաջադրանքի նախագծերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխան մշակված Երևանի առանձին տարածքների գոտիավորման, ինչպես նաև նախագծման առաջադրանքի նախագծերը:

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության կապակցությամբ շարադրված կանոնակարգումները Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունների ներքո մեկնաբանելու արդյունքում պարզ է դառնում, որ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի վերաբերյալ որոշումն ընդունվում է ավագանու կողմից՝ Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված նախագծի հիման վրա: Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա և դրան համապատասխան՝ մշակվում են Երևանի առանձին տարածքների գոտիավորման, ինչպես նաև նախագծման առաջադրանքի նախագծերը: Երևան համայնքի տարածքների գոտիավորումն իրենից ենթադրում է այդ համայնքի կամ դրա առանձին հատվածների տարածքների, հողամասերի և այլ անշարժ գույքի օգտագործման պարտադիր պահանջների սահմանում՝ դրանց իրավական ռեժիմին, նպատակային ու գործառնական նշանակությանը, թույլատրված օգտագործումներին համապատասխան՝ ՏՔաղաքաշինության մասին՝ ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն:

Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի նպատակային և գործառնական նշանակությունը որոշելու և դրանց օգտագործման նկատմամբ սահմանափակումներ սահմանելու իրավասությունը վերապահված է Երևանի քաղաքապետին և ավագանուն:

ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հողային հարաբերությունների կարգավորման բնագավառում տեղական ինքնակառավարման

մարմինները գլխավոր հատակագծին, քաղաքաշինական գոտիավորման նախագծին և հողերի օգտագործման սխեմային համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրում ու հետ են վերցնում համայնքին և պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասերը:

ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության և համայնքների սեփականության հողամասերը տրամադրվում են սեփականության, կառուցապատման կամ օգտագործման իրավունքով: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման նպատակով կարող են տրամադրվել այլ անձանց միայն սեփականության իրավունքով, *բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված՝ սեփական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերի, որոնց տրամադրումը սեփականության իրավունքով արգելված է (...):*

Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ տեղական ինքնակառավարման մարմինները հողամասերը տրամադրում են նույն օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերին, քաղաքաշինական գոտիավորման նախագծերին ու հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան:

Վերոգրյալ իրավակարգավորումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համայնքի սեփականությանը պատկանող որևէ հող այլ անձի կարող է փոխանցվել այն դեպքերում միայն, եթե այն սեփականության իրավունքով տրամադրելն արգելված չէ օրենքով: Քանի որ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանն է վերապահված կազմելու և հաստատելու քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, իրենց վարչական տարածքում գտնվող որևէ հողի նկատմամբ նախատեսելու սահմանափակումներ, հողն ի սեփականություն այլ անձի հանձնելու հարցի լուծումը ևս վերապահվել է այդ մարմիններին: Մինչ համայնքին կամ պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասերն այլ անձի փոխանցելը, տեղական ինքնակառավարման մարմինները կրում են իրենց կազմած և տիրապետման ներքո գտնվող գլխավոր հատակագիծը, քաղաքաշինական գոտիավորման նախագիծը ու հողերի օգտագործման սխեմաները հետազոտելու պարտականություն: Այդպիսի պարտականություն սահմանելը կապված է հողամասի նկատմամբ սահմանափակումներ առկա չլինելու փաստը պարզելու անհրաժեշտությամբ, իսկ սահմանափակումների մասին նշումներ պարունակում են հենց քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը: Եթե համայնքի վարչական տարածքում գտնվող որևէ հողի նկատմամբ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով նախատեսված է որևէ սահմանափակում, ինչը ՀՀ հողային օրենսգրքով արգելում է այն սեփականության իրավունքով այլ անձանց տրամադրելը, ապա տեղական ինքնակառավարման մարմինն արդեն կաշկանդված է ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արգելքով և այդ հողը չի կարող տրամադրել որևէ քաղաքացու կամ իրավաբանական անձի: Մինչ հողն այլ անձի տրամադրելը քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերն ուսումնասիրելու պարտականություն սահմանելով օրենսդիրը հետապնդում է որոշակի նշանակություն ունեցող հողամասերի պահպանությունն ապահովելու նպատակ:

ՀՀ հողային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը, ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների), դասակարգվում է նաև բնակավայրերի:

ՀՀ հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բնակավայրերի հողեր են համարվում բնակավայրերի զարգացման, կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ստեղծման, կառուցապատման, բարեկարգման համար նախատեսված հողերը:

ՀՀ հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բնակավայրերի հողերը, ըստ գործառնական նշանակության, դասակարգվում են բնակելի կառուցապատման, հասարակական կառուցապատման, խառը կառուցապատման, ընդհանուր օգտագործման հողերի և այլ հողերի:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բնակավայրերի հողերի դասակարգումը, ըստ գործառնական նշանակության, սահմանվում է գլխավոր հատակագծերով և քաղաքաշինական գոտիավորման նախագծերով:

ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք՝

1) պատմական և մշակութային արժեքների օբյեկտներ են, բացառությամբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով փոխանցված և փոխանցվող եկեղեցիների և եկեղեցապատկան կառույցների կառուցապատման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի.

2) բնության հատուկ պահպանվող տարածքներից պետական բնական արգելոցներ են, բնության պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ, ազգային զբոսայգիներ, ծառաբանական զբոսայգիներ, բուսաբանական այգիներ, ինչպես նաև այդ նպատակների համար պահեստավորված տարածքներ.

3) օրենքով պաշտպանվող սանիտարական պահպանության տարածքների սահմանների շրջանում բուժիչ-առողջարանային վայրեր են, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը.

4) զբաղեցված են պետական սեփականություն հանդիսացող անտառով.

5) պետական մեխորատիվ համակարգերի կամ ջրային ֆոնդի կազմի մեջ մտնող ջրային օբյեկտների հողեր են, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը.

6) բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են (հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գերափեր, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ).

7) պետության կողմից հաշվառված և գրանցված օգտակար հանածոների տեղադրվածություններ են.

8) ենթարկված են ռադիոակտիվ և քիմիական աղտոտման, կենսածին վարակման.

9) կառավարության սահմանած ցանկով տրամադրված են պետական գիտահետազոտական կազմակերպություններին (կրթական, սելեկցիոն և այլն)՝ մինչև սահմանված կարգով դրանց լուծարումը.

10) զբաղեցված են ընդհանուր օգտագործման արտավայրերով, անասունների անցատեղերով, ճանապարհներով, բնական ջրհորներով, աղբյուրներով և տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ, այլ օբյեկտներով.

11) ջրային օբյեկտների և ավազանների առափնյա շերտերի, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային, երկաթուղային ճանապարհների, խողովակաշարային և այլ տրանսպորտի համար առանձնացված շերտերի, էլեկտրահաղորդիչ գծերի, մայրուղային ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, գազատարների, ջրանցքների, ինչպես նաև դրանց հեռանկարային զարգացման համար առանձնացված (պահեստավորված) հողեր են.

12) վիճելի տարածքներ են՝ մինչև վեճերի լուծումը.

13) հատուկ նշանակության հողեր, պետական կամ համայնքային գերեզմանատներ են, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի (...):

ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածում հստակ թվարկված են պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողերը, որոնք քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցվել չեն կարող: Այդպիսի սահմանափակում նախատեսելը պայմանավորված է այդ հողերի՝ հանրային, մշակութային, էկոլոգիական, սանիտարական, գիտահետազոտական կամ այլ հատուկ նշանակությամբ, ինչպես նաև հանրության առողջության պաշտպանության կամ կենդանական և բուսական աշխարհի պահպանության անհրաժեշտությամբ:

Վերը նշված իրավանդումների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցման ենթակա չեն նաև բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողերը, այդ թվում՝ հրապարակները, փողոցները, ճանապարհները,

գետափերը, զբոսայգիները, պուրակները, այգիները, լողափերը և ընդհանուր օգտագործման այլ տարածքները: ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ կետում օգտագործված՝ Տնտեսական օգտագործման հողեր, բառակապակցությունից պարզ է, որ դրանք ընդհանուր հանրության լայն շերտերի կողմից օգտագործման ենթակա հողեր են, և նախատեսված են բնակավայրերի զարգացման, կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ստեղծման, կառուցապատման և բարեկարգման համար: Հանրային կարևոր նշանակություն ունենալու պատճառով էլ դրանք քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցման և նրանց կողմից միանձնյա տիրապետման ու օգտագործման ենթակա չեն:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածում թվարկված հողերը քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցելու սահմանափակումը նույն օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն արգելքներից է, որը տեղական ինքնակառավարման մարմիններին կաշկանդում է այլ անձանց սեփականության իրավունքով տրամադրել դրանք: Եթե քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերն ուսումնասիրելիս տեղական ինքնակառավարման մարմինը պարզում է, որ քաղաքացին կամ իրավաբանական անձը ցանկանում է սեփականության իրավունք ձեռք բերել բնակավայրերում ընդհանուր օգտագործման հող սահմանված հողերի, օրինակ՝ հրապարակի կամ պուրակի նկատմամբ, ապա վերջինս ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արգելքի ուժով պարտավոր է մերժել այդ դիմումը՝ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ կետով այդպիսի հողերի նկատմամբ սահմանափակում նախատեսված լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում անդրադարձել է հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված լինելու կամ չլինելու մասին համապատասխան տեղեկատվությունը տրամադրելու իրավասու սուբյեկտի հարցին և արտահայտել իրավական այն դիրքորոշումը, որ §(...) հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված լինելու կամ չլինելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կարող է տրամադրվել համայնքի ղեկավարի (կամ վերջինիս աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման) կողմից: Նշված տեղեկատվությունը յուրաքանչյուր դեպքում պետք է բովանդակի ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի համապատասխան կետը, որին վերաբերում է սահմանափակումը՝ *(տես, Գևորգ Քիչոյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անչարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևան փարածքային արտարաժանման, երրորդ անձ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎՊ/4566/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.09.2013 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը և զարգացնելով այն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները, իրականացնելով համայնքի գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի մշակման և հաստատման, համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի նպատակային և գործառնական նշանակությունը սահմանելու գործընթացներ, հողամասերի տեղադրության, դրանց նպատակային նշանակության և ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված լինելու կամ չլինելու վերաբերյալ հավաստի և արժանահավատ տեղեկատվություն տրամադրող վարչական մարմիններ են:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Ինչպես նշվեց, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով և §Տեղական ինքնակառավարման մասին՝ ՀՀ օրենքի մի շարք հոդվածներով համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը, քաղաքաշինական գոտիավորման նախագիծն ու հողերի օգտագործման սխեման կազմում և հաստատում, նաև հողերի նպատակային և գործառնական նշանակությունը սահմանում և փոփոխում են տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ

Երևան համայնքում՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ և 20-րդ կետերի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ Երևանի քաղաքապետն ու ավագանին:

Նշված նորմերով սպառիչ և հստակ սահմանված է այն մարմինը (պաշտոնատար անձը), որը լիազորված է կազմելու և հաստատելու կոնկրետ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և այդ փաստաթղթերով սահմանելու հողերի նպատակային և գործառնական նշանակությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանները, հանդիսանալով դատական իշխանություն իրականացնող մարմին, ՀՀ Սահմանադրությամբ կամ որևէ օրենքով իրավասու չեն որոշելու որևէ հողի նպատակային և գործառնական նշանակությունը կամ գնահատելու այդ նպատակային նշանակությամբ հողամասն օգտագործելու նպատակահարմարությունը: Հողամասի նպատակային նշանակությունը, ուստի ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված լինելու փաստը կարող է հաստատվել տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ներկայացված ապացույցներով՝ գլխավոր հատակագծերով, քաղաքաշինական գոտիավորման նախագծերով, հողերի օգտագործման սխեմաներով: Դատարանն իրավասու է ստուգելու ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում հողամասն ընդգրկված լինելու փաստի վերաբերյալ մարմնի կողմից տրված փաստաթղթի օրինականությունը, ինչպես նաև դրա վերաբերելիությունը և արժանահավատությունը վերաբերելի փաստին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պացույցներ են վկայի ցուցումները, փորձագետի եզրակացությունը (ցուցումները), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել, որը կարող է հանձնարարվել կամ մասնագիտացված փորձագիտական հաստատությանը, կամ փորձագետին:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որով սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե փորձագետը փորձաքննություն կատարելիս պարզում է գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, որոնց կապակցությամբ նրան հարցեր չեն առաջադրվել, ապա նա իրավունք ունի այդ հանգամանքների վերաբերյալ հետևություններն արտացոլելու իր եզրակացությունում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը հրապարակվում է, հետազոտվում դատական նիստում և գնահատվում մյուս ապացույցների հետ:

Շարադրված նորմերի բովանդակությունից բխում է, որ դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող և հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակել փորձաքննություն՝ իր որոշմամբ սահմանելով հարցերի ցանկը և բովանդակությունը: Ընդ որում, փորձագետի եզրակացությունն ապացույցի տեսակ է, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես

ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած մյուս բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ փորձաքննության նշանակումն ինքնանպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ *(տե՛ս, «Օրինեպ Մթն» ՄՊԸ-ի ընդդեմ «Վազ քար» ՄՊԸ-ի և մյուսների թիվ ԱՎԴ/0074/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):*

Անդրադառնալով փորձագետի եզրակացության, որպես ապացույցի առանձին տեսակի, առանձնահատկություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փորձագետի եզրակացությունը գնահատվում է ընդհանուր հիմունքներով և, ինչպես գործով ձեռք բերված ցանկացած այլ ապացույց, այն ենթակա է գնահատման գործում առկա մյուս ապացույցների հետ համակցության մեջ, ինչը հնարավորություն է տալիս ստուգելու ոչ միայն փորձագետի եզրակացության տրամաբանությունը, այլ նաև կատարված հետազոտության գիտական հիմնավորվածության աստիճանն ու կատարված հետևությունների լրիվությունն ու հավաստիությունը: Ընդ որում փորձագետի եզրակացությունը որևէ առավելություն չունի գործում առկա մյուս ապացույցների նկատմամբ և ենթակա է գնահատման ընդհանուր կարգով՝ վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության տեսանկյունից: Այդուհանդերձ ապացույցի յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները, ինչը կարող է պայմանավորված լինել ապացույցի կազմավորման բնույթով, աղբյուրով, արտահայտման ձևով և այլ գործոններով: Հետևաբար անգամ ընդհանուր կարգով գնահատումն անհրաժեշտ է իրականացնել այդ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Անդրադառնալով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի գնահատման առանձնահատկություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն առանձնացրել է այն հիմնական չափորոշիչները, որոնք ենթակա են կիրառման վերոնշյալ ապացույցի գնահատումը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից իրականացնելիս:

Վերաբերելիության առումով փորձագետի եզրակացությունը գնահատելիս նախևառաջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե փորձագետին առաջադրված հարցերը որքանով նշանակություն ունեն գործի լուծման համար, ապա միայն անդրադառնալ այդ հարցադրումների վերաբերյալ արված եզրահանգումներին: Ընդ որում, հարցադրումների բովանդակությունը ոչ միայն էական նշանակություն ունի փորձագետի եզրակացության վերաբերելիության գնահատման տեսանկյունից, այլև կարևորվում է երկու և ավելի եզրակացությունների պարագայում դրանց միջև առկա հակասությունները վեր հանելու առումով:

Փորձագետի եզրակացությունը թույլատրելիության տեսանկյունից գնահատման ենթարկելիս առաջնահերթ կարևորվում է փորձաքննությունն իրականացնող անձի որակավորումը և ձեռնհասությունը, նշված անձի օբյեկտիվությունը, սահմանված դատավարական կարգի պահպանված լինելը, հետազոտության ընթացքի և արդյունքների պատշաճ դատավարական ձևակերպումը:

Արժանահավատության տեսանկյունից փորձագետի եզրակացության գնահատում իրականացնելիս պետք է հաշվի առնել փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը, փորձաքննությանը տրամադրված նյութի որակը և բավարարությունը, ելակետային տվյալների բնույթը, փորձագետի հետևությունների փաստարկվածության աստիճանը, գործին մասնակցող անձանց՝ փորձաքննությանը ներկա գտնվելու իրական հնարավորությունը, եզրակացության համապատասխանությունը գործում առկա այլ ապացույցներին *(տե՛ս «Կանաչապարուն» ՊՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանն ընդդեմ Կարեն Ափիկյանի և մյուսների թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ փորձագիտական եզրակացությունների գնահատումը պետք է կատարել այնպես, որ ամբողջ եզրակացությունը, այլ ոչ թե այդ եզրակացության որոշակի բաժնում արտացոլված տվյալները գնահատվեն որպես մեկ ապացույց

(ըն՝ս, Ռաֆայել Ավերիսյանն ընդդեմ Սեյրան Վարդանյանի իրավահաջորդներ Արթուր և Անժելա Վարդանյանների թիվ ԿԳՆ/0133/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դարարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Շարադրվածից բխում է, որ որևէ հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ներքո գտնվելու հարց քննարկելիս՝ փորձաքննություն նշանակելու դեպքում, դատարանները պետք է փորձագետին առաջադրեն հարցադրում այն մասին, թե արդյոք խնդրո առարկա հողամասը համընկնում է նշված հոդվածով սահմանված հողերից որևէ մեկի հետ: Այսինքն՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով որոշակի նպատակային նշանակություն ունեցող հողամասն արդյո՞ք չի նույնանում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով թվարկված հողերից մեկի հետ:

Ուստի փորձագիտական եզրակացությունը կբավարարի վերաբերելիության՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ներկայացվող պահանջին, եթե փորձագետին առաջադրված լինի կամ վերջինս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա եզրակացության մեջ արտացոլի խնդրո առարկա հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածում ներառված հողերից որևէ մեկի հետ համընկնելու, այսինքն՝ սահմանափակումների ներքո գտնվելու, կամ հակառակի մասին հետևություններ: Ընդ որում՝ հողամասի նպատակային նշանակությունը փորձագետը պետք է բացահայտի բացառապես քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի հիման վրա: Վերոշարադրյալի ամփոփմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ներքո գտնվելու հարց քննարկելիս դատարանները թույլատրելի ապացույցների հիման վրա ընդամենը պետք է պարզեն դրա նպատակային և գործառնական նշանակությունն ու հատուկ գիտելիքներ պահանջվելու դեպքում՝ փորձագետի միջոցով պարզեն այդ հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի հետ համընկնելու հարցը: Արդյունքում՝ եթե խնդրո առարկա հողամասն իր նպատակային նշանակությամբ համընկնում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածում թվարկված հողերից մեկի հետ, ապա այն այդ նույն հոդվածով նախատեսված սահմանափակումների շարքում է: Այլ կերպ ասած՝ դատարանները թույլատրելի ապացույցների հիման վրա իրավասու են գնահատելու այն հարցը, թե վեճի առարկա՝ կոնկրետ նպատակային նշանակություն ունեցող հողամասը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով թվարկված հողերի շարքում ընդգրկված է, թե ոչ: Եթե նման համեմատության արդյունքում դատարանը հանգում է այն եզրակացության, որ խնդրո առարկա՝ որոշակի նպատակային նշանակություն ունեցող հողը համընկնում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերից որևէ մեկի հետ, ապա այն որևէ քաղաքացու կամ իրավաբանական անձի սեփականության իրավունքով տրամադրվել չի կարող՝ անկախ այդ նպատակային նշանակությամբ հողն օգտագործելու հնարավորության բացակայության վերաբերյալ փորձագիտական կամ մասնագիտական եզրակացությունից կամ դատարանի համոզմունքից:

Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների հարցը պարզելու տեսանկյունից դատարանների իրավասությունը սահմանափակ է, և ներառում է վեճի առարկա հողի նպատակային նշանակությունը բացահայտելու և այն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով թվարկված հողերի հետ համեմատական վերլուծություն իրականացնելու գործողությունները:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի պողոտա 15/5 հասցեում գտնվող 32.35 քմ սեփական տարածքի անմիջապես մուտքի դիմաց գտնվող լրացուցիչ 28 քմ մակերեսով Հողամասն ուղղակի վաճառքով Դավիթ Մելիք-Ստեփանյանին օտարելու վերաբերյալ վերջինիս դիմումը Երևանի քաղաքապետարանի կողմից մերժվել է Հողամասը բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման բակային տարածքում լինելու պատճառաբանությամբ:

Դիմելով դատարան՝ Դավիթ Մելիք-Ստեփանյանը պահանջել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին ընդունելու բարենպաստ վարչական ակտ՝ Հոդամանս իրեն ուղղակի վաճառքով օտարելու մասին, և որպես հետևանք վերացնել Երևանի քաղաքապետարանի 11.12.2018 թվականի թիվ 18-06/118-10513 որոշումը:

Դատարանը 25.02.2020 թվականի վճռով հայցը բավարարել է այն պատճառաբանությամբ, որ Հոդամասը «(...) չի կարող ծառայել որպես հրապարակ, փողոց, ճանապարհ, զբոսայգի, պուրակ, այգի կամ համանման այլ ընդհանուր օգտագործման տարածք: Այն տվյալ պահին փաստացի սահմանազարկված է ցանկապարտով, իսկ Երևանի քաղաքապետարանը մինչ օրս միջոցներ չի ձեռնարկել տարածքը այլ նպատակներով օգտագործելու ուղղությամբ: Տեղագնություն արդյունքում դատարանի համար պարզ դարձավ, որ տվյալ տարածքը, այսպես թե այնպես, փաստացի օգտագործվելու է հայցվորի կողմից: Արդյունքում անհասկանալի է Երևանի քաղաքապետարանի մտրեցումն առ այն, որ դա չպետք է օտարվի հայցվորին և պետք է օգտագործվի որպես ընդհանուր օգտագործման տարածք այն պայմաններում, երբ Երևանի քաղաքապետարանը, ունենալով բավարար լիազորություններ, չի ձեռնարկել որևէ միջոց այդ ուղղությամբ և չունի որևէ նախագիծ տվյալ հարվածի համար: Պապասխաստողի դիրքորոշումից պարզ չէ նաև ընդհանուր օգտագործման կոնկրետ որպես ինչ տարածք կարող է ծառայել ինդրո առարկա հողամասը»:

Վերաքննիչ դատարանը վերահաստատել է Հոդամասի նպատակային օգտագործման վերաբերյալ Դատարանի եզրակացությունները և անփոփոխ է թողել Դատարանի վճիռը՝ արձանագրելով, որ «(...) վեճի առարկա հողամասը կից է հայցվորին սեփականության իրավունքով պարկանոց կառուցապարկված հողամասին, նույն չափի է, որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով դրա օտարումը, համաձայն ՀՀ կառավարության 26.05.2016 թվականի թիվ 550-Ն որոշման չափանիշների, անհնար է, հողամասը ներառված չէ Հոդային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սեփականության իրավունքով փոխանցման ոչ ենթակա հողատեսակների ցանկում: Ուարի առկա են Հոդային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված հիմքերը՝ տվյալ հողամասը հայցվորին ուղղակի վաճառելու համար»: Երևանի քաղաքապետարանի այն փաստարկը, որ Հոդամասը գտնվում է բարձրահարկ բնակելի կառուցապատման գոտում և բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածք է, Վերաքննիչ դատարանը դիտել է ոչ իմնավոր Եզրակացության վկայակոչմանն ուղեկցող այն պատճառաբանությամբ, որ «(...) հողամասում չի կարող բազմաբնակարան շենք կառուցվել, քանի որ այն կարող է հանգեցնել հայցվորի օգտագործման և, ըստ դրա, սեփականության իրավունքի խախտմանը»:

Վերոշարադրյալից բխում է, որ դատարանները, ինքնուրույն գնահատելով Հոդամասի տեղադրությունը, չափն ու փաստացի վիճակը, և հիմք ընդունելով դրանց կապակցությամբ Եզրակացությամբ արված հետևությունները, հերքել են Հոդամասը՝ որպես բնակավայրերում ընդհանուր օգտագործման տարածք օգտագործելու հնարավորությունը, և հանգել այն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածում նշված հողերի կազմում ընդգրկված չլինելու մասին եզրակացության:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Հոդամասի՝ բնակավայրերում ընդհանուր օգտագործման տարածք լինելու կամ չլինելու, այսինքն՝ նպատակային կամ գործառնական նշանակության, փաստը հաստատող թույլատրելի պայացույց կարող են լինել Երևան քաղաքի գլխավոր հատակագիծն ու գոտիավորման նախագիծը: Ինչ վերաբերում է Եզրակացությանը, ապա այն չի պարունակում Հոդամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի հետ համադրման միջոցով սահմանափակումների ներքո գտնվելու կամ չգտնվելու մասին հետևություններ, և բովանդակում է միայն Հոդամասը սահմանված նպատակով կամ հայցվորից բացի այլ անձի կողմից օգտագործվելու հավանականության մասին փորձագետի կարծիքը: Եզրակացությունը չի պարունակում գործի լուծման համար նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ հետևություններ, ուստի այն չի բավարարում եզրակացությանն առաջադրվող վերաբերելիության պահանջին: Վճռաբեկ դատարանն

արձանագրում է, որ այս գործով առկա Եզրակացությունը Հոդամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված լինելու փաստի հաստատմանը ծառայող վերաբերելի ապացույց չէ և այդ կապակցությամբ բողոքաբերի փաստարկը հիմնավորված է:

Ինչ վերաբերում է այն փաստերին, որ Հոդամասը սահմանագատված է ցանկապատով, իսկ Քաղաքապետարանը միջոցներ չի ձեռնարկել այն այլ նպատակներով օգտագործելու ուղղությամբ, ապա դրանք չեն փոփոխում Հոդամասի նպատակային նշանակությունը, առավել ևս՝ երրորդ անձանց այն օտարելու՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումը:

Այդուհանդերձ թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանը անտեսել են գործում եղած՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծից և Կենտրոն վարչական շրջանի գոտիավորման նախագծից արված հատվածները և իրականացրել Հոդամասի նպատակային և գործառնական նշանակության գնահատում՝ ՀՀ Սահմանադրությամբ և այլ օրենքներով չունենալով այդպիսի գործողություն կատարելու իրավասություն: Դատարանն իրավասու չէր քննարկման առարկա դարձնել Հոդամասի նպատակային նշանակությունը կամ արդեն սահմանված նպատակային նշանակությամբ Հոդամասն օգտագործելու հնարավորությունը, քանի որ այդ իրավասությունը ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերապահված է տեղական ինքնակառավարման մարմիններին, իսկ Երևան քաղաքում՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ և 20-րդ կետերի և 53-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ Երևանի քաղաքապետին և ավագանուն: Դատարանը պետք է ստուգման ենթարկեր Հոդամասի՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով սահմանված նպատակային նշանակությունը և ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի հետ համադրում անելու արդյունքում հանգեր այն քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցող հող լինելու կամ չլինելու մասին եզրակացության: Մինչդեռ ստորադաս դատարաններն այդ փաստը ստուգման առարկա չեն դարձրել, այլ իրականացրել են Հոդամասի նպատակային և գործառնական նշանակության ինքնուրույն սահմանում և գնահատում, որպիսի իրավասությամբ, ինչպես նշվեց, օժտված չեն եղել:

Վճռաբեկ բողոքի պարտասխանում քերված փաստարկները հերքվում են վերոշարադրյալ պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը քեկանելու և գործն ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ

իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 06.04.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԳ/5267/05/19
Ա. Պողոսյան
Կ. Բաղդասարյան
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԳ/5267/05/19**
2022թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Է. ՄԵԴԻԱԿՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի մարտի 04-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «ՄԵԳԱՇԻՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկե-
րություն) ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախա-
րարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, երրորդ անձինք՝ Երևանի քաղա-
քապետարան և Քաղաքաշինության կոմիտե՝ Ջրվեժի բազալտների հանքավայրի 1,41
հա մակերեսով տարածքի օգտակար հանածոյի 22 տարով արդյունահանման իրավունք
տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ
վարչական դատարանի 23.03.2021 թվականի որոշման դեմ ՀՀ տարածքային կառա-
վարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի
բերած վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել ՀՀ տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանն իրեն տրամադրել Ջրվեժի

քազալտնների հանքավայրի 1,41հա մակերեսով տարածքի օգտակար հանածոյի 22 տարով արդյունահանման իրավունք:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գևորգ Սոյան) (այսուհետ՝ Դատարան) 14.08.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.03.2021 թվականի որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Երևանի քաղաքապետարանի ներկայացրած վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 14.08.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և Երևանի քաղաքապետարանը (ներկայացուցիչ Անդրանիկ Մուրադյան):

Ընկերությունը վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացել (ներկայացուցիչ Ժենյա Մինասյան):

2. ՀՀ գաղտնիության կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 1-ին հոդվածի 1-ին մասի, 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի, 50-րդ հոդվածի 2-րդ և 51-րդ հոդվածի 14-րդ մասերի, «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարչության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ հոդվածի, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի 6-րդ և 51-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետերով ամրագրված դրույթների կիրառման վերաբերյալ պաշտոնական պարզաբանումը հաստատելու մասին» 23.08.2017 թվականի թիվ 104-Ն հրամանի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և էներգետիկ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի բացասական եզրակացության հիման վրա չի կարող տրամադրել ընդերքօգտագործման իրավունք, քանի որ հայցվող իրավունքը պետք է հիմնված լինի օրենքի վրա, չխախտի այլոց իրավունքներն ու ազատությունները: Բացասական եզրակացության հիման վրա նման իրավունքի տրամադրումը հանգեցնում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի խախտման, այն է՝ առանց փորձաքննական դրական եզրակացության արգելվում է հիմնադրությային փաստաթղթի ընդունումը կամ նախատեսվող գործունեության իրականացումը: Այսուհանդերձ, փորձաքննական բացասական եզրակացության հիման վրա օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքների տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին և մերժման հիմք է:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանի կողմից կատարված արդարադատության պայմաններում տրված եզրահանգման իմաստով անիմաստ է դառնում փորձաքննական եզրակացության դրական կամ բացասական լինելու և դրա հիման վրա իրավունք տրամադրելու կամ մերժելու իրավահարաբերությունը, որպիսի մեկնաբանությունը բազմապիսի խնդիրների հիմք կարող է հանդիսանալ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ փորձաքննական բացասական եզրակացության հիման վրա օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոյի

արդյունահանման իրավունքները տրամադրելը հակասում է Օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի, 51-րդ հոդվածի 14-րդ մասով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դրույթներին: Լիազոր մարմնի կողմից քննարկման առարկա չի կարող դառնալ ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Ընկերության ներկայացրած ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ տրված փորձագիտական եզրակացությունը, և Նախարարությունն օրենքով կամ որևէ ենթաօրենսդրական ակտով սահմանված որևէ իրավասություն չունի միջամտելու վերջինիս գործունեությանը՝ պարզաբանում պահանջելով բացասական եզրակացության որևէ դրույթի վերաբերյալ: Փորձագիտական գործունեության նպատակը վարույթն իրականացնող մարմնին որոշակի փաստական տվյալներով ապահովելն է, որոնք որոշակի պահանջների բավարարման դեպքում ճանաչվում են որպես ապացույցներ և դրվում գործով կայացվող այս կամ այն որոշման հիմքում: Փորձաքննական դրական եզրակացության առկայությունը հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունք տրամադրելու համար պարտադիր իրավաբանական փաստ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 23.03.2021 թվականի որոշումը բեկանել և փոփոխել՝ հայցն ամբողջությամբ մերժել:

2.1. Պալատի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 37-րդ, 42-րդ, 45-րդ հոդվածները, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ կետերը, 13-րդ հոդվածի 1-ին մասը, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետը, 20-րդ հոդվածի 6-րդ մասը, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 4-րդ, 50-րդ, 51-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 3-րդ, 5-րդ հոդվածները, 25-րդ հոդվածի 1-ին մասը, 27-րդ հոդվածի 1-ին մասը, 124-րդ հոդվածը, 126-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ջրվեժի բազալտների հանքավայրի 1.41հա մակերեսով տարածքի օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք տրամադրելու օրենսդրական պահանջն է հանդիսանում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փորձաքննական դրական եզրակացության առկայությունը, մինչդեռ տվյալ դեպքում գործով առկա է լիազոր մարմնի կողմից տրված բացասական եզրակացություն: Դատարանը վիճարկող որոշումը կայացնելիս անտեսել է և գործով էական չի համարել այն հանգամանքը, որ բացի այն, որ գործով առկա է լիազոր մարմնի կողմից տրված բացասական եզրակացություն, Դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացրել է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող անհրաժեշտ ապացույցի բացակայության պայմաններում, այսինքն, Դատարանը, չունենալով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փորձաքննական դրական եզրակացություն, գտել է, որ առկա են անհրաժեշտ բավարար հիմքերը հայցվող իրավունքի տրամադման համար:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ տվյալ իրավահարաբերություններում օրենսդրի կողմից սահմանված պարտադիր պահանջ հանդիսացող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պետական փորձաքննություն կատարելու և եզրակացություն ստանալու ընթացակարգը կարգավորվում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված իրավակարգավորումներով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով:

Վերոգրյալից հետևում է, որ Դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության չի ենթարկել, գործը քննել է թերի, որի

արդյունքում, թույլ տալով նյութական և դատավարական նորմերի էական խախտումներ, կայացրել է սխալ դատական ակտ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 23.03.2021 թվականի որոշումը բեկանել և հայցն ամբողջությամբ մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.2. Վճռաբեկ բողոքների պայրասխանի հիմքը, հիմնավորումները

Վճռաբեկ բողոքներն անհիմն են և ենթակա են մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 17.04.2019 թվականին հաստատված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 17.04.2019 թվականի թիվ ԲՓ20 պետական փորձաքննական եզրակացությունը հանդիսանում է վարչական վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույց, հետևաբար վարչական մարմինը պարտավոր էր վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցն ուսումնասիրել և գնահատել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածին համապատասխան:

Ստորադաս դատարանները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով այլ ապացույցների հետ համադրման արդյունքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատել են վերը նշված եզրակացությունը և արձանագրել, որ այն հիմնավորված, օրինական և օբյեկտիվ չէ, ուստի և չէր կարող իրավաչափ հիմք հանդիսանալ իրավունքի տրամադրումը մերժելու համար:

Փաստացի հանքավայրի համար նախատեսված հողատարածքը չի հանդիսանում կանաչ տարածք, այն ոչ խորը ձորերով կտրտրված բլրային տարածք է, որի լանջերը մասամբ լցված են բազալտի քարերով, այն բնութագրվում է քարքարոտ, ծառափոխուսյին բուսականությունից զուրկ տարածք:

Ընկերությունն ինչպես վարչական մարմնին, այնպես էլ դատարանին ներկայացրել է համապատասխան հիմնավորումներ, որոնց արդյունքում միանշանակ է, որ իր գործունեությանը շարջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա հնարավոր ազդեցության գնահատումը նորմերի սահմաններում է, իսկ պատասխանողի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել հակառակն ապացուցելու համար:

Ընկերությունը խնդրել է ներկայացված վճռաբեկ բողոքները մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության կողմից 20.04.2018 թվականին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պաշտոնակատարին է ներկայացվել Ջրվեժի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ՝ սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեխնիկական առաջադրանք ստանալու նպատակով (**հատոր 1-ին, գ.թ. 26**),

2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 01.06.2018 թվականին Ընկերությանը տրվել է նախատեսվող գործունեության թիվ SU36 տեխնիկական առաջադրանքը (**հատոր 1-ին, գ.թ. 20-21**),

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի 04.04.2018 թվականի թիվ 17/7556ել, 22.05.2018 թվականի թիվ 17/32362լր, 18.06.2018 թվականի թիվ 17/13979ել գրությունների համաձայն՝ Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցած Ջրվեժի բազալտի հանքավայրի աշխատանքային նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ քննարկումներին մասնակցության արդյունքում Բնապահպանության վարչությունը տվել է իր դրական եզրակացությունը նախատեսվող գործունեությանը (**հատոր 1-ին, գ.թ. 16, 19, 22**),

4) Ընկերությունը 24.10.2018 թվականին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պաշտոնակատարին ուղղված դիմումով խնդրել է իրեն տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք 22 տարի ժամկետով՝ կից ներկայացնելով սահմանված, թվով 17 փաստաթղթերը, այդ թվում՝ ընդերքի տեղամասի երկրաբանական նկարագրությունը, օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը, տեղամասի շահագործման աշխատանքների բնապահպանական կառավարման պլանը, թափոնների կառավարման պլանը, հանրային լուսմների արձանագրությունը և տեսաձայնագրությունը **(հատոր 1-ին, գ.թ. 17)**,

5) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 14.01.2019 թվականի թիվ Ֆ-7/19 գրության համաձայն՝ ՀՀ օգտակար հանածոների պետական հաշվեկշիռը վարվում է ըստ մետաղային, ոչ մետաղային և բնական շինարարական նյութերի: Ջրվեժի (Վարդաշենի) բազալտի հանքավայրի պաշարները հաշվառվում են բնական շինարարական նյութերի հաշվեկշռում՝ որպես շինարարական քար: Հանքավայրի պաշարները հաստատվել են 1966 թվականին 5879,7հազ.մ³ քանակով: Հանքավայրը շահագործվում է 1969 թվականից: Արդյունահանման աշխատանքները դադարեցված են 11.07.2017 թվականից **(հատոր 1-ին, գ.թ. 90)**,

6) Բնապահպանության նախարարի կողմից 17.04.2019 թվականին հաստատված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 17.04.2019 թվականի թիվ ԲՓ20 պետական փորձաքննական եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը. «(...) Ջրվեժի բազալտների հանքավայրը գտնվում է Նոր Նորք վարչական շրջանի հարավ-արևելյան ծայրամասի արդյունաբերական գոտում, բնակելի կառուցապատված տարածքից մոտ 280մ հեռավորության վրա, իսկ Ջրվեժ գյուղի ծայրամասային բնակելի տնից 700մ հեռավորության վրա (...): Հանքավայրի տարածքը հանդիսանում է տնտեսապես յուրացված շրջան, կատարվել են տարբեր ընդերքօգտագործման աշխատանքներ, առկա են ենթակառուցվածքներ (ճանապարհներ, էլեկտրահաղորդման գծեր և այլն): «ՄԵԳԱՇԻՆ» ՄՊԸ-ի կողմից նախագծված բացահանքը ներկայումս անօգտագործելի, մասնակիորեն խախտված, ոչ խորը ձորերով կտրտված բլրային տարածք է, որի լանջերը մասամբ լցված են բազալտի քարերով: Այն բնութագրվում է քարքարոտ, ծառայփուտային բուսականությունից զուրկ տարածքով, զբաղեցնում է 1,41 հա մակերեսով տարածք(...): ՀՀ օրենսդրության սահմանված կարգով Երևան քաղաքում Ջրվեժի բազալտների հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում իրականացվել են հանրային քննարկումներ (չորս քննարկում): Փորձաքննական գործընթացին ներգրավվել են Քաղաքաշինության կոմիտեն, Առողջապահության, Արտակարգ իրավիճակների նախարարությունները և Բնապահպանության նախարարության ստորաբաժանումները, որոնց կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա նախագիծը լրամշակվել է: Նախատեսվող գործունեության վերաբերյալ Քաղաքաշինության կոմիտեն արտահայտել է իր բացասական դիրքորոշումը, համաձայն որի՝ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի Երևանի գլխավոր հատակագծի հաստատման մասին թիվ 2330-Ն որոշմամբ Ջրվեժի բազալտների հանքավայրի համար նախատեսված հողատարածքն ընդգրկված է հասարակական նշանակության կանաչ տարածքների գոտում, ինչպես նաև չի ապահովվում սանիտարապաշտպանիչ գոտին (...): Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի Երևանի գլխավոր հատակագծի հաստատման մասին թիվ 2330-Ն որոշմամբ Ջրվեժի բազալտների հանքավայրի համար նախատեսված հողատարածքն ընդգրկված է հասարակական նշանակության կանաչ տարածքների գոտում, ինչպես նաև հնարավոր չէ ապահովել սանիտարապաշտպանիչ գոտին, ինչն աննպատակահարմար է դարձնում տարածքում օգտակար հանածոյի արդյունահանումը (...):

(...) Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումը՝ «ՄԵԳԱՇԻՆ» ՄՊԸ-ի կողմից ներկայացված Ջրվեժի բազալտների հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:» **(հատոր 1-ին, գ.թ. 10-12)**,

7) Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 25.04.2019 թվականի թիվ 1/32/10911-19 գրության համաձայն՝ Քաղաքաշինության նախարարության 01.10.2001 թվականի «Նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» թիվ 82 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հանրապետական և միջպետական շինարարական նորմերի ցանկի» (պետական գրանցում թիվ 11701172 ստ 2001-11-12) ՄՆ 245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերի» «Շինարարական արդյունաբերություն» բաժնի V դասի 1-ին կետի համաձայն՝ բազալտների հանքավայրի (առանց պայթեցման աշխատանքների) սանիտարապաշտպանիչ գոտին սահմանվում է 50 մետր (**հատոր 1-ին, գ.թ. 91**),

8) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 06.05.2019 թվականի թիվ 01/29.2ԱԱ/2853-19 գրությամբ մերժվել է Ընկերության Ջրվեժի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու վերաբերյալ դիմումը (**հատոր 1-ին, գ.թ. 9**),

9) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Պ. Անպարջյանի 08.01.2020 թվականի թիվ 1806/2-123523 գրության համաձայն՝ Ընկերությանն արդյունահանման իրավունքով տրամադրման համար նախատեսված Ջրվեժ բազալտների հանքավայրի 1,41հա մակերեսով տարածքը Կառավարության 15.12.2005 թվականի թիվ 2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծով սնտառների գոտում է: Հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին և, համաձայն Կառավարության 15.12.2005 թվականի թիվ 2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի, ընդգրկված է նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի (կետ 7) սահմանափակումների ցանկում (սեփականության իրավունքով փոխանցման ենթակա չէ): Միաժամանակ, համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է, որը կարող է տրամադրվել օգտագործման միայն երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով»: Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները հնարավոր կլինի փոփոխել շահագրգիռ անձանց կողմից սահմանված կարգով Երևանի քաղաքապետարան համապատասխան հայտ ներկայացվելու պարագայում (**հատոր 3-րդ, գ.թ. 51**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման առնչությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին. արդյո՞ք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փորձաքննական դրական եզրակացությունը պարտադիր է ընդերքօգտագործման իրավունք տրամադրելու համար և արդյո՞ք այդ եզրակացության բացակայության պարագայում կարող է քավարարվել հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք տրամադրելուն վարչական մարմնին պարտավորեցնելու հայցապահանջը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսգրքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման, ընդերքն

օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝ սախագիծ՝ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման նպատակով մշակված և օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքնություններ անցած փաստաթուղթ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման հիմնադրույթներն են՝

բնակչության անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը.
(...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն.

«1. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում իրականացվում են հետևյալ փորձաքնությունները՝

- 1) ընդերքաբանական.
- 2) շրջակա միջավայրի վրա ազդեցության.
- 3) տեխնիկական անվտանգության:

(...) 4. Ընդերքի տրամադրումն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թույլատրվում է միայն դրանում պարունակվող պաշարների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ընդերքաբանական փորձաքնությունից և ուսումնասիրված ու գնահատված պաշարների քանակը և որակը սահմանված կարգով հաստատվելուց հետո:

5. Սույն օրենսգրքով սահմանված փորձաքնություններն ընդերքօգտագործողի դիմումի հիման վրա սահմանված կարգով կարող են կատարվել ընդերքի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության յուրաքանչյուր փուլում, եթե ընդերքօգտագործողը ցանկանում է սկսել օգտակար հանածոյի արդյունահանում, և փորձաքնության ներկայացված նյութը թույլ է տալիս կատարել օգտակար հանածոների որոշակի քանակի և որակի, դրանց արդյունաբերական նշանակության, լեռնատեխնիկական, ինժեներա-երկրաբանական, հիդրոերկրաբանական, բնապահպանական և այլ պայմանների օբյեկտիվ գնահատում:

6. Ընդերքաբանական փորձաքնությունը կատարվում է կառավարության սահմանած կարգով և ժամկետում, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքնության կատարման կարգը սահմանվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, իսկ տեխնիկական անվտանգության փորձաքնության կատարման կարգը՝ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումն, առանց սահմանված կարգով պետական փորձաքնությունների ենթարկված նախագծի, արգելվում է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն.

(...) 3. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, լիազոր մարմինը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կից փաստաթղթերով (այդ թվում՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն

օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով), ներկայացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

4. Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունն ստանալուց հետո՝ մինչև 100-օրյա ժամկետում, տրամադրում է համապատասխան փորձաքննական եզրակացություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ համապատասխան փորձաքննական եզրակացություն մինչև 100-օրյա ժամկետում չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական, իսկ լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:

6. Եթե դիմումատուի ներկայացրած՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմված է թերի, ապա շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը գնահատման հաշվետվությունն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, տեղեկացնում է լիազոր մարմնին՝ նշելով թերությունները: Լիազոր մարմինը տեղեկությունը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, այդ մասին ծանուցում է դիմումատուին: Դիմումատուն ծանուցումն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմնին այդ հիմքով մերժում է դիմումը:

7. Լիազոր մարմինը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության լրամշակված տարբերակն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, այն ներկայացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Սույն օրենսգրքով սահմանված ժամկետում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական, իսկ լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:

8. Փորձաքննական դրական եզրակացություններն ստանալուց հետո լիազոր մարմինը մինչև 25-օրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն (...):»:

Նույն հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումն, առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի, արգելվում է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության կցվում են համապատասխան փորձաքննություններ անցած օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը, հանքարդյունահանման պայմանագիրը և լեռնահատկացման ակտը, որոնք թույլտվության անքակտելի մասերն են:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը, օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը, լեռնահատկացման ակտը և համապատասխան փորձաքննություններ անցած նախագիծը միասին հանքարդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթեր են:

«Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների (այսուհետ՝ գնահատում), այդ թվում՝ անդրսահմանային, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) ոլորտի հասարակական հարաբերությունները:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

(...) 6) **հիմնադրության փաստաթուղթ՝** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ. (...)

(...) 11) **փորձաքննություն՝** հիմնադրության փաստաթղթի, նախատեսվող գործունեության հայտի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում դրանց թույլատրելիության վերաբերյալ պետական փորձաքննական եզրակացություն տալու գործընթաց (այսուհետ՝ փորձաքննություն). (...):»

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փորձաքննության նպատակն է հայտի կամ գնահատման հավաստիության ստուգումը, հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության թույլատրելիության որոշումը:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն.

«1. Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են մինչև հիմնադրության փաստաթղթի ընդունումը և (կամ) նախատեսվող գործունեության իրականացումը: Փորձաքննության իրականացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը:

3. Փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝

1) նախնական փուլ, որի ընթացքում ուսումնասիրվում է նախնական գնահատման հայտը.

2) հիմնական փուլ, որի ընթացքում փորձաքննվում է հիմնական գնահատման հաշվետվությունը:»

Նույն օրենքի 20-րդ հոդվածի համաձայն.

«1. Փորձաքննական եզրակացությունը բաղկացած է ներածական, նկարագրական, պատճառաբանական, եզրափակիչ հետևյալ մասերից.

1) ներածական՝ համառոտ տեղեկատվություն ձեռնարկողի, հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության մասին.

2) նկարագրական՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության նկարագրությունը՝ ըստ ներկայացված հիմնադրության կամ նախագծային փաստաթղթի.

3) պատճառաբանական՝ հիմնադրության փաստաթղթի դրույթների կամ նախատեսվող գործունեության թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ հիմնավորված եզրահանգումները.

4) եզրափակիչ՝ եզրակացություն փորձաքննական եզրակացության դրական կամ բացասական լինելու վերաբերյալ (...):

4. Փորձաքննական եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների ներկայացրած եզրակացությունները կամ կարծիքները: Գործընթացի մասնակիցների կարծիքները չընդունելու դեպքում լիազոր մարմինը տալիս է հիմնավոր պատճառաբանումներ: Փորձաքննական եզրակացությունը հաստատում է լիազոր մարմինը (...):

6. Առանց փորձաքննական դրական եզրակացության արգելվում է հիմնադրության փաստաթղթի ընդունումը կամ նախատեսվող գործունեության իրականացումը (...):

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 23.08.2017 թվականի թիվ 104-Ն հրամանով պաշտոնապես պարզաբանվել է, որ.

«1) Սահմանված կարգով պետական փորձաքննություն անցած նախագծերի փորձաքննական դրական և բացասական եզրակացությունները չեն կարող նույնանման հետևանքներ ունենալ:

2) Փորձաքննական բացասական եզրակացության դեպքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքների տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին և մերժման հիմք է օրենսգրքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի 6-րդ և 51-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետերի հիմքով:

Վերոգրյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ընդերքօգտագործման երկու ձևեր՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով: Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը, կախված ձևից, իրականացվում է մի շարք փուլերից բաղկացած ընթացակարգով: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունքի հայցման համար իրավաբանական անձինք և քաղաքացիները լիազոր մարմին են ներկայացնում շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: Լիազոր մարմինն օրենքով սահմանված ժամկետում նշված հայտը ներկայացնում է շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին, որն էլ սահմանված ժամկետում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում տրամադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեխնիկական առաջադրանք: Հարկ է հավելել, որ ընթացակարգը տարբերվում է՝ կախված մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման հանգամանքից:

Իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը) մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով դիմում է լիազոր մարմնին: Դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով, որտեղ ներառված է նաև օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը: Դիմումի գրանցումից հետո իրականացվում են հետևյալ փորձաքննությունները՝ տեխնիկական անվտանգության, որի կատարման կարգը սահմանված է Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով, և շրջակա միջավայրի վրա ազդեցության, որի կատարման կարգը սահմանված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով: Սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի փորձաքննական եզրակացությունը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական:

Օրենսդիրը սահմանել է լիազորված մարմնի կողմից համապատասխանաբար օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումների մերժման հիմքերը, որոնցից է նաև սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի փորձաքննական բացասական եզրակացության առկայությունը: Ավելին, վերոգրյալ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ բացառապես դրական փորձաքննական եզրակացության հիման վրա է որոշում ընդունվում իրավունքի տրամադրման վերաբերյալ: Այսինքն, փորձաքննական եզրակացության դրական լինելու դեպքում է միայն կատարվում օրենքով նախատեսված իրավահարաբերության կարգավորման հաջորդ քայլը, որն ուղղված է կոնկրետ իրավունքը տրամադրելուն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փորձաքննական եզրակացության բացասական լինելու դեպքում «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է հստակ արգելք՝ առանց փորձաքննական դրական եզրակացության հիմնադրությամբ փաստաթղթերի ընդունման կամ նախատեսվող գործունեության իրականացման համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել, որը կարող է հանձնարարվել կամ մասնագիտացված փորձագիտական հաստատությանը, կամ փորձագետին:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով դատարանի կողմից փորձաքննություն նշանակելու իրավական հնարավորությանը, նշել է, որ դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակելու փորձաքննություն՝ իր որոշմամբ սահմանելով հարցերի ցանկը և բովանդակությունը: Փորձագետի եզրակացությունն ապացույցի տեսակ է, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած մյուս բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ փորձաքննության նշանակումն ինքնանպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ (տե՛ս, «Օրինք Սթոն» ՄՊ ընկերությունն ընդդեմ «Վագ քար» ՄՊ ընկերության և մյուսների թիվ ԱՎԴՆ/0074/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013թ. որոշումը):

Սեկ այլ որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու իրավասությունը դատարանն իրականացնում է դատական հայեցողության իրավունքով՝ ելնելով հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակից (տե՛ս, Ռազմիկ Մարգարյանը և Լիդա Սևոյանն ընդդեմ Ռա.ֆիլի Հախվերդյանի թիվ 3-259(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007թ. որոշումը):

Թեև նշված իրավական դիրքորոշումներն արտահայտվել են քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործերի շրջանակներում, սակայն Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական գործով փորձաքննություն նշանակելու վերաբերյալ առանձնահատկությունները նույնական են:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի վերաբերյալ պատասխանները պետք է ստացվեն համապատասխան որակավորում ունեցող մասնագետի՝ փորձագետի կողմից, և գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող կայացվել մինևնայն հարցերի վերաբերյալ դատարանի կողմից իր սեփական դատողությունների արդյունքում ձևավորված կարծիքի հիման վրա:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործով վարչական գործը հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված պարտավորեցման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է պարտավորեցնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանն ընդունել բարենպաստ վարչական ակտ, այն է՝ իրեն տրամադրել Ջրվեժի բազալտների հանքավայրի 1,41հա մակերեսով տարածքի օգտակար հանածոյի 22 տարով արդյունահանման իրավունք:

Դատարանն Ընկերության հայցը բավարարել է այն պատճառաբանությամբ, որ Բնապահպանության նախարարի կողմից 17.04.2019 թվականին հաստատված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 17.04.2019 թվականի թիվ ԲՓ20 պետական փորձաքննական եզրակացությունը հիմնավորված, օրինական և օբյեկտիվ չէ, ուստի այն չէր կարող իրավաչափ հիմք հանդիսանալ Ըներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 06.05.2019 թվականի թիվ 01/29.2ԱԱ/2853-19 գրությամբ Ընկերության հայցած իրավունքի մերժման համար: Դատարանը, ուսումնասիրելով Ընկերության կողմից 24.10.2018 թվականին Ըներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ուղղված դիմումին կից ներկայացված փաստաթղթերը, այդ թվում՝ ընդերքի տեղամասի երկրաբանական նկարագրությունը, օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը, տեղամասի շահագործման աշխատանքների

քննապահականական կառավարման պլանը, թափոնների կառավարման պլանը, հանրային լուսամտերի արձանագրությունը և այլն, ու դրանք համադրելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանված կանոնների հետ, գտել է, որ Ընկերության հայցած պահանջն իրավաչափ է:

Վերաքննիչ դատարանը, մերժելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Երևանի քաղաքապետարանի ներկայացրած վերաքննիչ բողոքները, արձանագրել է, որ Բնապահպանության նախարարի կողմից 17.04.2019 թվականին հաստատված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 17.04.2019 թվականի թիվ ԲՓ20 պետական փորձաքննական եզրակացության հիմնավորված, օրինական և օբյեկտիվ լինելը պետք է քննարկման առարկա դարձվեր վարչական մարմնի կողմից վարչական վարույթի շրջանակներում՝ վարչական վարույթի մասնակիցների դիրքորոշումների և վարչական վարույթի այլ նյութերի հաշվառմամբ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի վերլուծությունների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսպես, Վերաքննիչ դատարանը, վերլուծելով Բնապահպանության նախարարի կողմից 17.04.2019 թվականին հաստատված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 17.04.2019 թվականի թիվ ԲՓ20 պետական փորձաքննական եզրակացությունը, թույլ է տվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում, քանի որ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք կարող է տրամադրվել միայն լիազոր մարմնի կողմից տրված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ դրական փորձաքննության առկայության դեպքում, մինչդեռ տվյալ պարագայում լիազոր մարմնի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկման առարկա հանդիսացող Ջրվեժի բազալտների հանքավայրի 1.4I հա մակերեսով տարածքի օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք տրամադրելու օրենսդրական պահանջն է հանդիսանում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փորձաքննական դրական եզրակացության առկայությունը, մինչդեռ ստորադաս դատարանները սույն գործով անտեսել և էական չեն համարել այդ հանգամանքը: Ավելին, Վերաքննիչ դատարանը, մանրամասնորեն վերլուծելով բացասական փորձաքննական եզրակացությունը, արձանագրել է, որ այն անհիմն է, մինչդեռ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության կատարման կարգի համաձայն՝ հայտի նախնական գնահատման փուլը, ինչպես նաև հաշվետվության հիմնական գնահատման փուլն իրականացվում է համապատասխան լիազոր մարմնի կողմից (հիմնական փուլում նաև գործընթացի մասնակիցների ներգրավմամբ):

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որի համաձայն՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի 14-րդ մասին համապատասխան պետական փորձաքննության է ենթարկվում նախագիծը, որը նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի իմասով համարվում է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման նպատակով մշակված և օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություններ անցած փաստաթուղթ, մինչդեռ տվյալ պարագայում փորձաքննությանն է ենթարկվել հայցվորի կողմից ներկայացված Ջրվեժի բազալտների հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը:

Այսպես, 21.06.2014 թվականին ընդունված ««Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքը» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 31.07.2014 թվականին) 15-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի «Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փորձաքննությունները» վերտառությամբ 52-րդ հոդվածը ճանաչվել է ուժը կորցրած: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 21.06.2014 թվականին (ուժի մեջ է մտել 09.08.2014 թվականին): Նշված օրենքի և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանն է ներկայացվում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը, որին ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանված են վերոնշյալ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով, մինչդեռ Վերաքննիչ դատարանի կողմից հիշատակված նախագիծը թե՛ բովանդակությամբ, թե՛ ներկայացվող պահանջներով հանդիսանում է այլ փաստաթուղթ:

Վճռաբեկ դատարանը թեև հիմնավոր է համարում նաև ստորադաս դատարանների կողմից Բնապահպանության նախարարի կողմից 17.04.2019 թվականին հաստատված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 17.04.2019 թվականի թիվ ԲՓ20 պետական փորձաքննական եզրակացության առնչությամբ կատարված վերլուծությունները: Այնուամենայնիվ սույն գործում առկա նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ կողմերի միջև առկա է տարաձայնություն վերոնշյալ փորձաքննական եզրակացության հիմնավորվածության և հավաստիության առնչությամբ: Նման պայմաններում, հաշվի առնելով դատարանի՝ պարտավորեցման հայցի էությունից բխող հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը պարզելու պարտականությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը մանրամասն վերլուծության ենթարկելով փորձագետի կողմից տրված բացասական եզրակացությունը և այն համարելով ոչ իրավաչափ, հայցը բավարարել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պարտավորեցնելով հայցվորին տրամադրել Ջրվեժի բազալտների հանքավայրի 1,41հա մակերեսով տարածքի օգտակար հանածոյի 22 տարով արդյունահանման իրավունք: Մինչդեռ՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք տրամադրելու օրենսդրական պահանջն է հանդիսանում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փորձաքննական դրական եզրակացության առկայությունը: Հետևաբար նման տարաձայնությունը վերացնելու համար անհրաժեշտ է գործի քննության ժամանակ ծագած հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակել փորձաքննություն:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափության հարցը որոշելիս խախտել են դատական ակտի կայացման պահին գործող տվյալ իրավահարաբերությունները կարգավորող օրենքների պահանջները, դատական ակտը կայացրել են գործի փաստերի ու ապացույցների ոչ ճիշտ գնահատման, պատշաճ ապացույցների բացակայության պայմաններում, որոնք հանգեցրել են սխալ համոզմունք ձևավորելուն և դատավարական ու նյութական նորմերի էական խախտումներով ոչ իրավաչափ դատական ակտ կայացնելուն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերը պարզելու նպատակով սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 23.03.2021 թվականի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքները ենթակա են բավարարման և գործն ուղարկվում է նոր քննության, գտնում է, որ տվյալ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.03.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ5/0136/05/19
2022թ.

Վարչական գործ թիվ ՎԴ5/0136/05/19
Նախագահող դատավոր Կ. Թովմայան
Դատավորներ Կ. Ավետիսյան
Ք. Մկոյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի փետրվարի 22-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.03.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գագիկ Կոստանյանի ընդդեմ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային բաժնի և երրորդ անձ Նաիրա Ասատրյանի՝ 16.07.2019 թվականի և 08.08.2019 թվականի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատարանական նախապայքանությունը

Դիմելով դատարան՝ Գագիկ Կոստանյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Է. Ղազարյանի 16.07.2019 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը և նույն բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող,

արդարադատության փոխգնդապետ Գ. Տեր-Ղազարյանի 08.08.(2018) թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը վերադատության կարգով վերանայելու և մասնակի փոփոխելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ռ. Մաքեյան) (այսուհետ՝ Դատարան) 13.02.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.03.2021 թվականի որոշմամբ Ծառայության և Նախրա Ասատրյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 13.02.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը (ներկայացուցիչ Էլմիրա Մեջլումյան):
Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք չպետք է կիրառել, և չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, նույն օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասը, «Դատարանի ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 14-րդ և 53-րդ հոդվածները, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 35.1-րդ հոդվածի 5-րդ մասը, սիսայ է մեկնաբանել «Դատարանի ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը, խախրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/12638/05/17 և թիվ ՎԴ/0927/05/19 վարչական գործերով, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը թիվ ՎԴ/0781/05/16 վարչական գործով եզրահանգել են, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ կիրառելի չէ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, մինչդեռ Վերաքննիչ դատարանի կողմից սույն վարչական գործով 30.03.2021 թվականին կայացված որոշմամբ արձանագրվել է, որ նշված դրույթը կիրառելի է հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ:

Հետևաբար, ՀՀ վարչական դատարանի և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած վերոհիշյալ դատական ակտերով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվել է սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից այդ նորմին տրված մեկնաբանությանը ակնհայտորեն հակասող մեկնաբանությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության, կամ փոփոխել այն՝ կայացնելով հայցը մերժելու մասին նոր դատական ակտ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Թիվ ԵԱԲԳ/3555/02/16 քաղաքացիական գործով ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 08.05.2018 թվականին տրված կատարողական թերթի համաձայն՝ նույն դատարանի կողմից վճռվել է Գագիկ Կոստանյանից հոգուտ Բալասան Կոստանյանի բռնագանձել 10.120.000 ՀՀ դրամ՝ որպես պարտքի գումար, 120.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար, ինչպես նաև

Գագիկ Կոստանյանից հոգուտ Բալասան Կոստանյանի հաշվարկել և բռնագանձել տոկոսներ պարտավորության գումարի մնացորդի նկատմամբ, ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ սկսած 11.10.2015 թվականից մինչև պարտքի լրիվ մարման օրը **(հատոր 2-րդ, գ.թ. 121):**

2) Թիվ ԵԱԲԳ/3555/02/16 քաղաքացիական գործով ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 08.05.2018 թվականին տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 02447793 կատարողական վարույթի շրջանակներում Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 22.05.2018 թվականի «Ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին» որոշմամբ նշանակվել է ապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «Ամինտաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Փորձագետին առաջադրվել է հետևյալ հարցը՝ որքան է կազմում ք. Երևան, Ա. Խաչատրյան փողոց, 17 շենք, թիվ 38 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը **(հատոր 2-րդ, գ.թ. 125):**

3) «Ամինտաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 04.05.2019 թվականի թիվ Գ/Վ-ԵԴ02 եզրակացության համաձայն՝ Երևան քաղաք, Արաբկիր, Ա. Խաչատրյան փողոց, 17 շենք, թիվ 38 հասցեում գտնվող բնակարանի սեփականության իրավունքի շուկայական արժեքը առ 27.04.2019 թվականը կազմել է 24.700.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 103):**

4) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի ավագ հարկադիր կատարող Է. Ղազարյանի 16.07.2019 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ (այսուհետ՝ նաև Որոշում) Գագիկ Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ք. Երևան, Արաբկիր համայնք, Ա. Խաչատրյան փողոց, 17 շենք, բնակարան 38 հասցեում գտնվող անշարժ գույքը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Լոտի գնահատման գին նշված է 27.870.000 ՀՀ դրամ, իսկ մեկնարկային գին՝ 20.902.500 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 37):**

5) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի պետ Պ. Գրիգորյանի 16.07.2019 թվականի թիվ եր13520/04 գրությամբ Գագիկ Կոստանյանին է ուղարկվել 16.07.2019 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը: Որոշումը նույն օրն ուղարկվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետին՝ Գագիկ Կոստանյանին հանձնելու նպատակով:

Նշված գրությունով պարտապանը միաժամանակ տեղեկացվել է, որ գույքի աճուրդի գործընթացին, իրացվող գույքի մեկնարկային գնին, ինչպես նաև բոլոր փոփոխություններին և մանրամասներին կարող է ծանոթանալ հարկադիր էլեկտրոնային աճուրդի ինտերնետային կայքից (www.ajurd.am) **(հատոր 1-ին, գ.թ. 98-99):**

Գագիկ Կոստանյանը Որոշումը ստացել է 19.08.2019 թվականին **(անվիճելի փաստ):**

6) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող Գ. Տեր-Ղազարյանը վերադասության կարգով վերանայել է Որոշումը և 08.08.(2018) թվականի (ակնհայտորեն վրիպակ է) որոշմամբ դրա եզրափակիչ մասը մասնակի փոփոխել հետևյալ կերպ՝

«(...) ք. Երևան, Արաբկիր համայնք, Ա. Խաչատրյան փողոցի 17 շենք, թիվ 38 հասցեում գտնվող անշարժ գույքի «Գնահատման գինը» մասում «27.870.000 ՀՀ դրամ»-ի փոխարեն գրառումը կարդալ «24.700.000 ՀՀ դրամ», իսկ «Մեկնարկային գինը» մասում «20.902.500 ՀՀ դրամ»-ի փոխարեն գրառումը կարդալ «18.525.000 ՀՀ դրամ»» **(հատոր 1-ին, գ.թ. 38-39):**

7) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող Գ. Տեր-Ղազարյանի 08.08.2019 թվականի թիվ եր15692/04 գրությամբ Գագիկ Կոստանյանին է ուղարկվել 08.08.(2018)

թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը վերադասության կարգով վերանայելու և մասնակի փոփոխելու մասին» որոշումը:

Որոշումը նույն օրն ուղարկվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետին՝ Գագիկ Կոստանյանին հանձնելու նպատակով **(հատոր 1-ին, գ.թ. 107-108):**

8) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայրը Է. Ղազարյանի 16.07.2019 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը և նույն բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, արդարադատության փոխգնդապետ Գ. Տեր-Ղազարյանի 08.08.(2018) թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը տեղադրվել են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում **(հատոր 1-ին, գ.թ. 83):**

9) 13.09.2019 թվականին հարկադիր կատարող Էդգար Ղազարյանի և աճուրդում հաղթած Նաիրա Ասատրյանի միջև կազմվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին թիվ գ02447793-19/01 արձանագրությունը, ըստ որի՝ թիվ 334613 լոտի վաճառքի գինը կազմել է 18.625.000 ՀՀ դրամ **(հատոր 2-րդ, գ.թ. 11):**

10) Հայաստանի Հանրապետության ի դեմս Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի ավագ հարկադիր կատարող Էդգար Ղազարյանի և Նաիրա Ասատրյանի միջև 23.09.2019 թվականին կնքվել է քաղաք Երևան, Արաբկիր, Ա, Խաչատրյան փողոց, 17 շենք, թիվ 38 բնակարանի առուվաճառքի պայմանագիրը **(հատոր 1-ին, գ.թ. 14-15):**

11) 30.09.2019 թվականին տրված թիվ 30092019-01-0028 վկայականի համաձայն՝ Երևան, Արաբկիր, Ա, Խաչատրյան փողոց, 17 շենք, թիվ 38 բնակարանի նկատմամբ գրանցվել է Նաիրա Ասատրյանի սեփականության իրավունքը: Գրանցման հիմք է հանդիսացել 23.09.2019 թվականի թիվ 7579 պայմանագիրը **(հատոր 1-ին, գ.թ. 40):**

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և կորահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ ՀՀ վարչական դատարանի և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվել է սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից այդ նորմին տրված մեկնաբանությամբ հակասող մեկնաբանությամբ:

Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լոտի մեկնարկային գնի և ավելի բարձր մեկնարկային գնի առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունն արդյո՞ք գործում է նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ, թե ոչ:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) օրենքը տարածվում է էլեկտրոնային

համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների և հարկադիր աճուրդների վրա, բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների:

Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների իմաստը բացահայտող Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակային սակարկությունները կամ սակարկություններն աճուրդի (մրցույթի) կազմակերպման միջոցով պայմանագրերի կնքման գործընթաց են, որին կարող է մասնակցել նույն օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակ, իսկ աճուրդը սակարկությունների ձև է, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին:

Նշվածից բխում է, որ աճուրդը պայմանագրերի կնքման գործընթաց է, որին կարող է մասնակցել Օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակ, իսկ հաղթող ճանաչվել՝ առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Օրենքի «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը կրող 4-րդ գլխում ներառված են հարկադիր աճուրդի, այդ թվում նաև՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգը սահմանող նորմերը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր է ճանաչվում այն աճուրդը, որն անցկացվում է կատարողական թերթին և նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդի լուս կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդը կազմակերպում և անցկացնում է հարկադիր կատարողը:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ լուս աճուրդով վաճառվող կամ մրցույթով առաջարկվող գույքը կամ իրավունքն է, որն ունի համապատասխան նկարագրություն, նույն օրենքով նախատեսված այլ տվյալներ, իսկ աճուրդի դեպքում՝ նաև մեկնարկային գին: Մեկնարկային գինը լուսի վաճառքի համար նախատեսված գինն է, որն աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուսում ընդգրկվող գույքի կազմը և քանակը սահմանում է հարկադիր կատարողը՝ գնահատելով լուսի արժեքը: Անշարժ գույքի, բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայի), մշակութային արժեքների և գնահատման առումով առավել բարդություն ներկայացնող գույքի գնահատումը կատարվում է հարկադիր կատարողի նշանակած գնահատողի միջոցով: Անշարժ գույքի գնահատումն իրականացվում է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով, որոնց ընտրության կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդում վաճառվող լուսի մեկնարկային գինը սահմանվում է գնահատված լուսի գնի 75 տոկոսի չափով:

Նշված հոդվածների մեկնաբանությունից բխում է, որ կատարողական թերթին և նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան անցկացվող հարկադիր աճուրդով կարող է վաճառքի հանվել ցանկացած գույք և իրավունք, որը կունենա համապատասխան նկարագրություն, Օրենքով նախատեսված այլ տվյալներ և մեկնարկային, այսինքն՝ աճուրդի սկզբում դրա մասնակիցներին առաջարկվող գին: Ընդ որում, աճուրդի մասնակիցներին առաջարկվող մեկնարկային գինը սահմանում է հարկադիր կատարողը՝ Օրենքով սահմանված կարգով լուսը գնահատելու արդյունքում ստացված արժեքի 75 տոկոսի չափով:

Նախատեսելով լուսի մեկնարկային գինը սահմանելու կարգ և դրա նվազագույն արժեք՝ օրենսդիրը միաժամանակ թույլատրել է լուսի մեկնարկային ավելի բարձր գին առաջարկելու հնարավորություն: Մասնավորապես.

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աճուրդի ներկայացվող լուսի մեկնարկային գնի մասին հարկադիր կատարողը պատշաճ ծանուցում է պարտապահին և պահանջատիրոջը (պահանջատերերին)՝ նշելով լուսի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու վերաբերյալ կողմի իրավունքի իրականացման կարգն ու ժամկետները: Եթե

մինևնույն պարտապանի գույքի նկատմամբ առկա են բռնագանձման վերաբերյալ երկու և ավելի կատարողական վարույթներ, ապա պատշաճ ծանուցումն ուղարկվում է տվյալ կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջատերերին: Պարտապանը և պահանջատերն (պահանջատերերը) իրավունք ունեն ծանուցումն իրենց ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ներկայացնելու գրավոր առաջարկություն՝ սահմանելով լոտի ավելի բարձր մեկնարկային գին:

Այդ դեպքում վաճառվող լոտի մեկնարկային գին է սահմանվում առաջարկվող ավելի բարձր գինը, եթե առաջարկություն ներկայացնողն իր առաջարկած գնի երեք տոկոսի չափով վճարում է կատարում հարկադիր կատարման բաժնի դեպոզիտ հաշվին կամ դրամարկը: Վճարի կատարման անդորրագիրը ներկայացվում է առաջարկությանը կից:

Եթե սահմանված ժամկետում առաջարկություն են ներկայացնում մեկից ավելի անձինք, ապա լոտի մեկնարկային գին է սահմանվում ավելի բարձր գինը, իսկ ավելի ցածր գին առաջարկած անձի (անձանց) կատարած վճարը վերադարձվում է:

Եթե նույն հոդվածով սահմանված ժամկետում և կարգով լոտի մեկնարկային գնի վերաբերյալ պարտապանը և պահանջատերը (պահանջատերերը) չեն ներկայացնում առաջարկություն, ապա աճուրդի մեկնարկային գին է համարվում նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գինը:

Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով լոտի մեկնարկային գինը որոշելուց հետո հարկադիր կատարողը առաջարկություն ներկայացնելու համար սահմանված երկշաբաթյա ժամկետի ավարտման օրվան հաջորդող օրը, որոշում է ընդունում հարկադիր աճուրդի անցկացման մասին՝ նշելով աճուրդի ժամը, վայրը, ինչպես նաև լոտի մեկնարկային գինը, և նույն օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում կատարում է հրապարակային ծանուցում:

Շարադրված իրավանդությունների համակարգային մեկնաբանությունից բխում է, որ հարկադիր կատարողը կրում է լոտի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով որոշված մեկնարկային գնի և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին պարտապանին և վերջինիս գույքի նկատմամբ տարբեր կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջատերերին ծանուցելու պարտականություն: Նշված ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում պարտապանն ու պարտատերերն իրավունք ունեն ներկայացնելու լոտի ավելի բարձր մեկնարկային գնի վերաբերյալ գրավոր առաջարկություն՝ դրան կցելով առաջարկվող այդ գնի երեք տոկոսի չափով վճարը հարկադիր կատարման բաժնի դեպոզիտ հաշվին կամ դրամարկը վճարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը: Եթե առաջարկ ներկայացրած անձը պահպանել է վերը շարադրված պահանջը, ապա աճուրդի մեկնարկային գին է սահմանվում առաջարկվող ավելի բարձր գինը: Երկշաբաթյա ժամկետում մեկից ավելի անձանց կողմից առաջարկություն ներկայացված լինելու դեպքերում լոտի մեկնարկային գին է սահմանվում ավելի բարձր գինը, իսկ ավելի ցածր գին առաջարկած անձի (անձանց) կատարած վճարը վերադարձվում է: Եթե պարտապանն ու պարտատերերը սահմանված ժամկետում չեն ներկայացնում լոտի ավելի բարձր մեկնարկային գնի մասին գրավոր առաջարկություն, ապա մեկնարկային գինը մնում է անփոփոխ՝ լոտի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով:

Այլ կերպ ասած՝ լոտի արժեքը գնահատելու և դրա 75 տոկոսի չափով մեկնարկային գին որոշելու գործողություններով սահմանվում է հարկադիր աճուրդի հանված լոտի նվազագույն այն արժեքը, որը կողմերի համար ուղենիշային է լոտի ավելի բարձր գին առաջարկելու իրենց իրավունքն իրացնելու նպատակահարմարությունը որոշելու հարցում, և որից ցածր մեկնարկային գին առաջարկվել չի կարող:

Լոտի մեկնարկային գին ներկայացնելու նպատակով սահմանված երկշաբաթյա ժամկետի ավարտի հաջորդ օրը, երբ վերոշարադրյալ գործողությունների արդյունքում աճուրդի հանված լոտի մեկնարկային գինն արդեն սահմանվել է, հարկադիր կատարողը ընդունում է հարկադիր աճուրդի անցկացման մասին որոշում, որը պարտանկում է նշում աճուրդի ժամի, վայրի, լոտի մեկնարկային գնի մասին: Նշված գործողությանը զուգահեռ

հարկադիր կատարողն Օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում կատարում է նաև հրապարակային ծանուցում:

Օրենքի 35.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային համակարգերի (այսուհետ՝ համակարգ) կիրառմամբ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է ծառայությունը՝ կատարողական թերթին, ինչպես նաև նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի լոտ կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Շարադրված իրավանորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից պարզ է, որ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով հատուկ էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ կազմակերպվող և անցկացվող աճուրդների հիմքը նույնպես կատարողական թերթն ու նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթն են: Ընդ որում, տվյալ դեպքում ևս աճուրդի կարող է հանվել ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, օրենքով նախատեսված բացառություններ չպարունակելու դեպքում: Տեխնիկական և էլեկտրոնային հատուկ համակարգերի և միջոցների կիրառումն ու դրանք ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով իրականացվելու հանգամանքը հաշվի անելով՝ այդպիսի աճուրդները կոչվում են հարկադիր էլեկտրոնային աճուրդներ: Մինչդեռ դրանք հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման որոշակի առանձնահատկություններ ունեցող տարատեսակ են:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված են նորմատիվ իրավական ակտի մեկնաբանման կանոնները, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի գյուղի սկզբունքներից:

Վճռաբեկ դատարանի իրավական այն դիրքորոշումը, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը հարկադիր աճուրդի տարատեսակ է և ներառվում է դրանում, բխում է ոչ միայն Օրենքի 35.1-րդ հոդվածում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից, այլև Օրենքի «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը կրող 4-րդ գլխի կարգավորման համատեքստից, որում համապատասխանաբար ներառված է նշված հոդվածը:

Մասնավորապես, Օրենքի 4-րդ գլուխը կրում է «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը և դրանում ներառված իրավանորմերը կարգավորում են հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման հետ կապված իրավանորմերը ևս ներառված են այդ գլխում (տե՛ս Օրենքի 35.1-35.4-րդ հոդվածները): Ունենալով հարկադիր աճուրդների կազմակերպման և անցկացման կարգը սահմանող նորմերը համակարգելու և բովանդակությամբ համատեքստից հոդվածները մեկ գլխի ներքո միավորելու նպատակ՝ օրենսդիրը դրանք ներառել է «Հարկադիր աճուրդներ» վերտառությամբ գլխում: Ավելին՝ էլեկտրոնային աճուրդն իր անվան մեջ ինքնին պարունակում է «հարկադիր» եզրույթը, նույնստում են հարկադիր աճուրդի և հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման փաստական հիմքերը, ինչպես նաև լոտի առարկաները:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման որոշակի առանձնահատկություններով օժտված փոսակ է, և այդ առանձնահատկությունների հաշվառմամբ էլ դրա իրականացման կարգն ու պայմանները սահմանված են առանձին հոդվածով:

Անդրադառնալով հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով լոտի գնահատում իրականացնելու կանոնների՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ կիրառելի լինելու պահանջն ուղղակիորեն ամրագրված է նույն Օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասով:

Վերևում արդեն մանրամասն շարադրվել է հարկադիր աճուրդների անցկացման դեպքում լոտի մեկնարկային գինը որոշելու և սահմանելու ընթացակարգը, որից պարզ է, որ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված գործողությունների կատարումը ղեկն թավարար չէ լոտի մեկնարկային գինը որոշված համարելու համար: Այն ներկայացնում է մեկը մյուսի հետ փոխկապակցված, որոշակի հաջորդականություն պահանջող գործողությունների համալիր: Լուրը գնահատելու և մեկնարկային գինը սահմանելու՝ Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված գործողություններն իրարից անջատ գնահատելու դեպքում խեղաթյուրվում է այդ նորմով օրենսդրի հետապնդած նպատակը: Իրավանդումների նման նեղ մեկնաբանության դեպքում ստացվում է մի իրավիճակ, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների դեպքում լոտի մեկնարկային գինը սահմանելու հարցում հարկադիր կատարողի պարտականությունները սահմանափակվում են լոտի արժեքը գնահատելու և դրա մեկնարկային գինը գնահատված գնի 75 տոկոսի չափով սահմանելու գործողություններով: Մինչդեռ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված գործողությունների արդյունքում ընդամենը սահմանվում է աճուրդի դրված լոտի մեկնարկային նվազագույն գինը՝ կողմերի համար որոշակի դարձնելով գնային այն շեմը, որից ավելի բարձր գին իրենք կարող են առաջարկել: Օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասը նեղ մեկնաբանելու և հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ Օրենքի 30-րդ հոդվածի միայն 1-ին և 2-րդ մասերը կիրառելի համարելու պայմաններում կատարվի, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ հարկադիր կատարողը չի կրում նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունելու պարտականությունը, քանի որ վերջինիս համար այդպիսի պարտականություն սահմանված է Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով, որոնց Օրենքի 35.1-րդ հոդվածում ուղիղ հղում արված չէ: Սակայն հարկադիր կատարողը պարտավոր է ոչ միայն հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունել՝ Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, այլև Օրենքի 35.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որոշման մասին պատշաճ ծանուցել պարտապանին և պահանջատիրոջը, և սահմանված ժամկետում և կարգով կատարել հրապարակային ծանուցում: Հարկ է նշել, որ վկայակոչված՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման ենթակա լինելու դեպքում գույքի վերաբերյալ որոշումն ընդունելու ժամկետների վերաբերյալ կանոն, այն է՝ պարտապանի գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման ենթակա լինելու դեպքում դրա վերաբերյալ որոշումը կայացվում է գույքի գնահատումից հետո՝ եռօրյա ժամկետում:

Շարադրվածից բխում է, որ Օրենքի 30-րդ հոդվածն ամբողջացնում է 35.1-րդ հոդվածը՝ դրանում սահմանված ընդհանուր կանոններով կարգավորելով նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման կարգը:

Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը, լինելով հարկադիր աճուրդի տեսակ, հատուկ կանոններով չկարգավորվելու կամ ընդհանուր կանոնից բացառություն չնախատեսելու դեպքերում կարգավորվում է հարկադիր աճուրդի իրականացման և կազմակերպման կարգը սահմանող ընդհանուր կանոններով, քանի որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի հանված լոտը գնահատելու և մեկնարկային գին որոշելու հատուկ կանոններ նախատեսված չեն, իսկ այդ հարցերը կարգավորող իրավանդումներից որևէ բացառություն նախատեսված չէ հարկադիր էլեկտրոնային

աճուրդի համար: Հետևաբար՝ Օրենքի 30-րդ հոդվածով սահմանված գործողությունները՝ տրամաբանական հաջորդականությամբ, կիրառելի են նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ:

Վճուրքի դադարմանի գնահատմամբ հարկադիր էլեկտրոնային աճուրդների դեպքում ևս հարկադիր կարարողը կրում է լուրի մեկնարկային գնի և այդ գնից ապելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին պարարապայանի և վերջինիս գույքի նկարմամբ տարբեր կարարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջարկերին ծանուցելու պարարականություն: Նշված պարարականության կարարմանը հաջորդող որոշակի գործողությունների արդյունքում սահմանվում է լուրի մեկնարկային գինը, որից հետո եռօրյա ժամկետում ընդունվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման մասին որոշումը և ծանուցումը հրապարակվում է հրապարակային ծանուցումների կայքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնում հարուցված թիվ 02447793 կատարողական վարույթի շրջանակներում պարտապան Գագիկ Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Ա. Խաչատրյան փողոցի 17 շենքի բնակարան 38 հասցեում գտնվող անշարժ գույքը (այսուհետ նաև՝ Անշարժ գույք) ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Ի կատարումն Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 35.1-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների՝ իրականացվել է Անշարժ գույքի գնահատում՝ հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի նշանակած գնահատողի՝ «Ամինտաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցով: Անշարժ գույքի շուկայական արժեքն առ 27.04.2019 թվականը կազմել է 24.700.000 ՀՀ դրամ՝ համաձայն 04.05.2019 թվականի թիվ Գ/Վ-ԵԴ02 եզրակացության:

Հիմք ընդունելով Անշարժ գույքի՝ 24.700.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունենալու հանգամանքը և առաջնորդվելով լուրի մեկնարկային գինը դրա գնահատված գնի 75 տոկոսի չափով սահմանելու օրենսդրական պահանջով՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող, արդարադատության մայրը Է. Ղազարյանը 16.07.2019 թվականին ընդունել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշում և լուրի մեկնարկային գին սահմանել 20.902.500 ՀՀ դրամը:

Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի պետ Պ. Գրիգորյանի 16.07.2019 թվականի թիվ եր13520/04 գրությամբ Որոշումն ուղարկվել է Գագիկ Կոստանյանին և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետին՝ Գագիկ Կոստանյանին հանձնելու նպատակով:

Նշված գրությունով պարտապանը միաժամանակ տեղեկացվել է, որ գույքի աճուրդի գործընթացին, իրացվող գույքի մեկնարկային գնին, ինչպես նաև բոլոր փոփոխություններին և մանրամասներին կարող է ծանոթանալ հարկադիր էլեկտրոնային աճուրդի ինտերնետային կայքից (www.ajurd.am): Գագիկ Կոստանյանը Որոշումը ստացել է 19.08.2019 թվականին **(անվիճելի փաստ):**

Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող Գ. Տեր-Ղազարյանը վերադասության կարգով վերանայել է Որոշումը և 08.08.(2018) թվականի որոշմամբ դրա եզրափակիչ մասը մասնակի փոփոխել հետևյալ կերպ՝ «(...) ք. Երևան, Արաբկիր համայնք, Ա. Խաչատրյան փողոցի 17 շենք, թիվ 38 հասցեում գտնվող անշարժ գույքի «Գնահատման գինը» մասում «27.870.000 ՀՀ դրամ»-ի փոխարեն գրառումը կարդալ «24.700.000 ՀՀ դրամ», իսկ «Մեկնարկային գինը» մասում «20.902.500 ՀՀ դրամ»-ի փոխարեն գրառումը կարդալ «18.525.000 ՀՀ դրամ»»:

Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող Գ. Տեր-Ղազարյանի 08.08.2019 թվականի թիվ Եր15692/04 գրությամբ 08.08.(2018) թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը վերադասության կարգով վերանայելու և մասնակի փոփոխելու մասին» որոշումն ուղարկվել է

Գագիկ Կոստանյանին և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետին՝ Գագիկ Կոստանյանին հանձնելու նպատակով:

Նշված որոշումները տեղադրվել են նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

Շարադրվածից բխում է, որ Անշարժ գույքի, որպես հարկադիր էլեկտրոնային աճուրդով վաճառքի ներկայացված լուտի, մեկնարկային գինը որոշելու և սահմանելու՝ Օրենքի 30-րդ և 35.1-րդ հոդվածներով նախատեսված գործողությունները Ծառայության կողմից կատարվել են ոչ ամբողջությամբ: Ծառայությունը ոչ իրավաչափորեն ձեռնպահ է մնացել լուտի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով որոշված մեկնարկային գնի և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին թիվ 02447793 կատարողական վարույթի պարտապան Գագիկ Կոստանյանին և բոլոր պահանջատերերին ծանուցելու, ավելի բարձր գնի մասին գրավոր առաջարկ ստանալու դեպքում սահմանված ընթացակարգն ու ժամկետները պահպանելու պարտականության կատարումից: Ընդ որում, նշված պարտականությունը չի կատարվել ոչ Որոշումը Գագիկ Կոստանյանին ուղարկելիս, ոչ էլ այդ Որոշումը վերանայելու և փոփոխելու արդյունքում 08.08.(2018) թվականին կայացված և լուտի մեկնարկային այլ գին սահմանելու մասին որոշումն ուղարկելիս: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուտի մեկնարկային գնի և ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու՝ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունը գործում է նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ:

Արդյունքում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Անշարժ գույքի մեկնարկային գնի և դրանից ավելի բարձր գին սահմանելու ընթացակարգի վերաբերյալ պարտապան Գագիկ Կոստանյանին և բոլոր պարտատերերին ծանուցելու պարտականությունը չկատարելու հետևանքով վերջիններս զրկվել են լուտի մեկնարկային գնի մասին իրագրվելու, ինչպես նաև լուտի մեկնարկային ավելի բարձր գին առաջարկելու՝ Օրենքով երաշխավորված իրավունքն իրացնելու հնարավորությունից: Անշարժ գույքի, որպես աճուրդի հանված լուտի, մեկնարկային գինը հարկադիր կատարողի կողմից սահմանվել է Օրենքով թույլատրված դրա նվազագույն արժեքի չափով, իսկ կատարողական վարույթի կողմերին չի ընձեռվել Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված թույլատրելի գործողությունները կատարելու միջոցով լուտի մեկնարկային գինը որոշելու գործընթացին մասնակից դառնալու հնարավորություն:

Փաստորեն՝ Որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում պարտապան Գագիկ Կոստանյանին լուտի մեկնարկային գնի և ավելի բարձր գին առաջարկելու իր իրավունքի մասին չծանուցելու հետևանքով վերջինս ոչ իրավաչափ կերպով զրկվել է աճուրդի կազմակերպման և իրականացման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշում ներկայացնելու և ընթացակարգային այլ գործողությունների միջոցով վարչական մարմնի որոշման վրա ազդելու հնարավորությունից:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայության կողմից Որոշումը կայացնելիս և վերանայելու արդյունքում այն հետագայում փոփոխելիս ամբողջությամբ չեն պահպանվել Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված պահանջները, հետևաբար Որոշումն ընդունվել է Օրենքի խախտմամբ, ինչը բավարար էր Որոշումն անվավեր ճանաչելու համար, որպիսի իրավաչափ հետևության և հանգել է Վերաքննիչ դատարանը:

Նկատի ունենալով, որ 08.08.(2018) թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումն ընդունվել է Որոշման մեջ տեղ գտած սխալը շտկելու նպատակով, իսկ Որոշումը ենթակա է անվավեր ճանաչման, հետևաբար անվավեր է նաև 08.08.(2018) թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շարադրվածն արդեն բավարար է Ռոռշումն Օրենքի խախտմամբ ընդունված լինելու և այդ հիմքով անվավեր ճանաչման ենթակա լինելու մասին հետևության հանգելու համար:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ Գագիկ Կոստանյանին փորձագետ նշանակելու մասին չծանուցելու հետևանքով պարզ չէ, թե նրա որ իրավունքն է խախտվել, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական վարույթի կողմերն են՝ պահանջատերը և պարտապանը (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ կատարողական վարույթի ընթացքում կողմերն իրավունք ունեն մասնակցել կատարողական գործողություններին:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման համար հարկադիր կատարողն իրավունք ունի նշանակել փորձագետ (փորձագետներ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փորձագետ նշանակելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փորձագետի անաչառության վերաբերյալ կասկած հարուցող հանգամանքների առկայության դեպքում պահանջատերը կամ պարտապանն իրավունք ունի բացարկ հայտնել:

Շարադրված նորմերի մեկնաբանությունից բխում է, որ օրենքով կատարողական վարույթի կողմերին ընձեռվել է վարույթի ընթացքում ձեռնարկվող կատարողական գործողություններին, որպիսին համարվում է նաև հատուկ գիտելիքներ պահանջող հարցեր պարզելու նպատակով փորձագետ նշանակելը, մասնակցելու իրավունք: Փորձագետ նշանակելու գործողությանը կատարողական վարույթի մասնակիցների մասնակցությունը կարևորվում է նաև փորձագետի անաչառությանն ու ձեռնհասությանը, ինչպես նաև նրա կողմից տրված եզրակացության իրավաչափությանը վստահելու տեսանկյունից, որի կապակցությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով պարտապանին և պահանջատիրոջն ընձեռվել է փորձագետին բացարկ հայտնելու իրավունքը:

Տվյալ դեպքում վարչական գործի, ինչպես նաև կատարողական վարույթի նյութերում առկա չէ Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 22.05.2018 թվականի «Այրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին» որոշումը Գագիկ Կոստանյանին ուղարկված լինելու փաստը հաստատող ապացույց: Վերոգրյալի հետևանքով Գագիկ Կոստանյանն առնվազն զրկվել է փորձագետի անաչառության վերաբերյալ կասկած հարուցող հանգամանքների առկայության դեպքում փորձագետին բացարկ հայտնելու իր իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուսի մեկնարկային գնի և ավելի բարձր գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի պարտականություն ունենալու վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները համահունչ են միևնույն իրավանորմին՝ Վերաքննիչ դատարանի կողմից տրված մեկնաբանություններին, ուստի վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը բեկանելու համար, քանի որ Դատարանը 13.02.2020 թվականի վճռով հայցը բավարարելով, իսկ Վերաքննիչ դատարանն այդ վճիռն անփոփոխ թողնելով, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր:

5. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ բողոքաբերը վճարել է վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, իսկ վճռաբեկ բողոքը մերժվում է, և գործով առկա չեն գործի քննության հետ կապված այլ ծախսեր, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.03.2021 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ5/0136/05/19 վարչական գործով 22.02.2022 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

22.02.2022 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2022 թվականի փետրվարի 22-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.03.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ Գագիկ Կոստանյանի հայցի ընդդեմ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային բաժնի, երրորդ անձ Նաիրա Ասատրյանի՝ վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը մերժել, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.03.2021 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապարունություն նշել է հետևյալը

«Դիմելով դատարան՝ Գագիկ Կոստանյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայրը Է. Ղազարյանի 16.07.2019 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը և նույն բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, արդարադատության փոխգնդապետ Գ. Տեր-Ղազարյանի 08.08.(2018) թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը վերադատության կարգով վերանայելու և մասնակի փոփոխելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ռ. Մաքեյան) (այսուհետ՝ Դատարան) 13.02.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.03.2021 թվականի որոշմամբ Ծառայության և Նաիրա Ասատրյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 13.02.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը (ներկայացուցիչ Էլմիրա Մեջլումյան):
Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի հիմք, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը

«Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածը, «Հարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք չպետք է կիրառվեն, և չի կիրառել «Հարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, նույն օրենքի 64-րդ

հողվածի 1-ին մասը, «Դարավան ակրեթի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 14-րդ և 53-րդ հոդվածները, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 35.1-րդ հոդվածի 5-րդ մասը, սիսայ է մեկնաբանել «Դարավան ակրեթի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը, խախտել է ՀՀ վարչական դատարանի 25-27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով:

ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/12638/05/17 և թիվ ՎԴ/0927/05/19 վարչական գործերով, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը թիվ ՎԴ/0781/05/16 վարչական գործով եզրահանգել են, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ կիրառելի չէ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, մինչդեռ վերաքննիչ դատարանի կողմից սույն վարչական գործով 30.03.2021 թվականին կայացված որոշմամբ արձանագրվել է, որ նշված դրույթը կիրառելի է հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ:

Հետևաբար, ՀՀ վարչական դատարանի և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած վերոհիշյալ դատական ակտերով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվել է սույն գործով վերաքննիչ դատարանի կողմից այդ նորմին տրված մեկնաբանությամբ ակնհայտորեն հակասող մեկնաբանությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է բեկանել վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության, կամ փոփոխել այն՝ կայացնելով հայցը մերժելու մասին նոր դատական ակտ:

3. Վճուրակ դատարանը որպես վճուրակ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը

«Վճուրակ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Թիվ ԵԱԲԴ/3555/02/16 քաղաքացիական գործով ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 08.05.2018 թվականին տրված կատարողական թերթի համաձայն՝ սույն դատարանի կողմից վճռվել է Գագիկ Կոստանյանից հոգուտ Բալասան Կոստանյանի բռնագանձել 10.120.000 ՀՀ դրամ՝ որպես պարտքի գումար, 120.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար, ինչպես նաև Գագիկ Կոստանյանից հոգուտ Բալասան Կոստանյանի հաշվարկել և բռնագանձել տոկոսներ պարտավորության գումարի մնացորդի նկատմամբ, ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույթի՝ սկսած 11.10.2015 թվականից մինչև պարտքի լրիվ մարման օրը (**հատոր 2-րդ, գ.թ. 121**):

2) Թիվ ԵԱԲԴ/3555/02/16 քաղաքացիական գործով ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 08.05.2018 թվականին տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 02447793 կատարողական վարույթի շրջանակներում Ծառայության Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 22.05.2018 թվականի «Ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին» որոշմամբ նշանակվել է ապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «Ամինտաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Փորձագետին առաջադրվել է հետևյալ հարցը որքան է կազմում ք. Երևան, Ա. Խաչատրյան փողոց, 17 շենք, թիվ 38 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը (**հատոր 2-րդ, գ.թ. 125**):

3) «Ամինտաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 04.05.2019 թվականի թիվ Գ/Վ-ԵԴ-02 եզրակացության համաձայն՝ Երևան քաղաք, Արարկիր, Ա. Խաչատրյան փողոց, 17 շենք, թիվ 38 հասցեում գտնվող բնակարանի սեփականության իրավունքի շուկայական արժեքը առ 27.04.2019 թվականը կազմել է 24.700.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 103**):

4) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի ավագ հարկադիր կատարող Է. Ղազարյանի 16.07.2019 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ (այսուհետ՝ նաև Որոշում) Գագիկ Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Արաբկիր համայնք, Ա. Խաչատրյան փողոց, 17 շենք, բնակարան 38 հասցեում գտնվող անշարժ գույքը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Լոտի գնահատման գին նշված է 27.870.000 ՀՀ դրամ, իսկ մեկնարկային գին՝ 20.902.500 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 37**):

5) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի պետ Պ. Գրիգորյանի 16.07.2019 թվականի թիվ եր13520/04 գրությամբ Գագիկ Կոստանյանին է ուղարկվել 16.07.2019 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը: Որոշումը նույն օրն ուղարկվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետին՝ Գագիկ Կոստանյանին հանձնելու նպատակով:

Նշված գրությունով պարտապանը միաժամանակ տեղեկացվել է, որ գույքի աճուրդի գործընթացին, իրացվող գույքի մեկնարկային գին, ինչպես նաև բոլոր փոփոխություններին և մանրամասներին կարող է ծանոթանալ հարկադիր էլեկտրոնային աճուրդի ինտերնետային կայքից (www.ajurd.am) (**հատոր 1-ին, գ.թ. 98-99**):

Գագիկ Կոստանյանը Որոշումը ստացել է 19.08.2019 թվականին (**անվիճելի փաստ**):

6) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող Գ. Տեր-Ղազարյանը վերադասության կարգով վերանայել է Որոշումը և 08.08.(2018) թվականի (ակնհայտորեն վրիպակ է) որոշմամբ դրա եզրափակիչ մասը մասնակի փոփոխել հետևյալ կերպ՝

«(...) ք. Երևան, Արաբկիր համայնք, Ա. Խաչատրյան փողոցի 17 շենք, թիվ 38 հասցեում գտնվող անշարժ գույքի «Գնահատման գինը» մասում «27.870.000 ՀՀ դրամ»-ի փոխարեն գրառումը կարդալ «24.700.000 ՀՀ դրամ», իսկ «Մեկնարկային գինը» մասում «20.902.500 ՀՀ դրամ»-ի փոխարեն գրառումը կարդալ «18.525.000 ՀՀ դրամ»» (**հատոր 1-ին, գ.թ. 38-39**):

7) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող Գ. Տեր-Ղազարյանի 08.08.2019 թվականի թիվ եր15692/04 գրությամբ Գագիկ Կոստանյանին է ուղարկվել 08.08.(2018) թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը վերադասության կարգով վերանայելու և մասնակի փոփոխելու մասին» որոշումը:

Որոշումը նույն օրն ուղարկվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետին՝ Գագիկ Կոստանյանին հանձնելու նպատակով (**հատոր 1-ին, գ.թ. 107-108**):

8) Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայր Է. Ղազարյանի 16.07.2019 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը և նույն բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, արդարադատության փոխգնդապետ Գ. Տեր-Ղազարյանի 08.08.(2018) թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը տեղադրվել են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (**հատոր 1-ին, գ.թ. 83**):

9) 13.09.2019 թվականին հարկադիր կատարող Էդգար Ղազարյանի և աճուրդում հաղթած Նաիրա Ասատրյանի միջև կազմվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին թիվ գ02447793-19/01 արձանագրությունը, ըստ որի՝ թիվ 334613 լոտի վաճառքի գինը կազմել է 18.625.000 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 11**):

10) Հայաստանի Հանրապետության ի դեմս Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի ավագ հարկադիր կատարող Էդգար Ղազարյանի և Նաիրա Ասատրյանի միջև 23.09.2019 թվականին կնքվել է քաղաք Երևան, Արաբկիր, Ա, Խաչատրյան փողոց, 17 շենք, թիվ 38 բնակարանի առուվաճառքի պայմանագիրը (**հատոր 1-ին, գ.թ. 14-15**):

11) 30.09.2019 թվականին տրված թիվ 30092019-01-0028 վկայականի համաձայն՝ Երևան, Արաբկիր, Ա, Խաչատրյան փողոց, 17 շենք, թիվ 38 բնակարանի նկատմամբ գրանցվել է Նաիրա Ասատրյանի սեփականության իրավունքը: Գրանցման հիմք է հանդիսացել 23.09.2019 թվականի թիվ 7579 պայմանագիրը (**հատոր 1-ին, գ.թ. 40**)»:

4. Վճռաբեկ դատարանը որպես Վճռաբեկ դատարանի պարզառարանություններ և եզրահանգում՝ նշել է հետևյալը

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ ՀՀ վարչական դատարանի և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվել է սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից այդ նորմին տրված մեկնաբանությամբ հակասող մեկնաբանությամբ:

Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ *հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուրի մեկնարկային գին և ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունն արդյոք գործում է նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ, թե ոչ:*

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) օրենքը տարածվում է էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների և հարկադիր աճուրդների վրա, բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների:

Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների իմաստը բացահայտող Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակային սակարկությունները կամ սակարկություններն աճուրդի (մրցույթի) կազմակերպման միջոցով պայմանագրերի կնքման գործընթաց են, որին կարող է մասնակցել նույն օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակ, իսկ աճուրդը սակարկությունների ձև է, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին:

Նշվածից բխում է, որ աճուրդը պայմանագրերի կնքման գործընթաց է, որին կարող է մասնակցել Օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակ, իսկ հաղթող ճանաչվել՝ առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Օրենքի «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը կրող 4-րդ գլխում ներառված են հարկադիր աճուրդի, այդ թվում նաև՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգը սահմանող նորմերը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր է ճանաչվում այն աճուրդը, որն անցկացվում է կատարողական թերթին և նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդի լուր կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ

3-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդը կազմակերպում և անցկացնում է հարկադիր կատարողը:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ լուսն աճուրդով վաճառվող կամ մրցույթով առաջարկվող գույքը կամ իրավունքն է, որն ունի համապատասխան նկարագրություն, նույն օրենքով նախատեսված այլ տվյալներ, իսկ աճուրդի դեպքում՝ նաև մեկնարկային գին: Մեկնարկային գինը լուսն վաճառքի համար նախատեսված գինն է, որն աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուսն ընդգրկվող գույքի կազմը և քանակը սահմանում է հարկադիր կատարողը՝ գնահատելով լուսն արժեքը: Անշարժ գույքի, բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայի), մշակութային արժեքների և գնահատման առումով առավել բարդություն ներկայացնող գույքի գնահատումը կատարվում է հարկադիր կատարողի նշանակած գնահատողի միջոցով: Անշարժ գույքի գնահատումն իրականացվում է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով, որոնց ընտրության կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդում վաճառվող լուսն մեկնարկային գինը սահմանվում է գնահատված լուսնի գնի 75 տոկոսի չափով:

Նշված հոդվածների մեկնաբանությունից բխում է, որ կատարողական թերթին և նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան անցկացվող հարկադիր աճուրդով կարող է վաճառքի հանվել ցանկացած գույք և իրավունք, որը կունենա համապատասխան նկարագրություն, Օրենքով նախատեսված այլ տվյալներ և մեկնարկային, այսինքն՝ աճուրդի սկզբում դրա մասնակիցներին առաջարկվող գին: Ընդ որում, աճուրդի մասնակիցներին առաջարկվող մեկնարկային գինը սահմանում է հարկադիր կատարողը՝ Օրենքով սահմանված կարգով լուսն գնահատելու արդյունքում ստացված արժեքի 75 տոկոսի չափով:

Նախատեսելով լուսն մեկնարկային գինը սահմանելու կարգ և դրա նվազագույն արժեք՝ օրենսդիրը միաժամանակ թույլատրել է լուսն մեկնարկային ավելի բարձր գին առաջարկելու հնարավորություն: Մասնավորապես.

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աճուրդի ներկայացվող լուսն մեկնարկային գնի մասին հարկադիր կատարողը պատշաճ ծանուցում է պարտապանին և պահանջատիրոջը (պահանջատերերին)՝ նշելով լուսն ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու վերաբերյալ կողմի իրավունքի իրականացման կարգն ու ժամկետները: Եթե միննույն պարտապանի գույքի նկատմամբ առկա են բռնագանձման վերաբերյալ երկու և ավելի կատարողական վարույթներ, ապա պատշաճ ծանուցումն ուղարկվում է տվյալ կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջատերերին: Պարտապանը և պահանջատերն (պահանջատերերը) իրավունք ունեն ծանուցումն իրենց ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ներկայացնելու գրավոր առաջարկություն՝ սահմանելով լուսն ավելի բարձր մեկնարկային գին:

Այդ դեպքում վաճառվող լուսն մեկնարկային գին է սահմանվում առաջարկվող ավելի բարձր գինը, եթե առաջարկություն ներկայացնողն իր առաջարկած գնի երեք տոկոսի չափով վճարում է կատարում հարկադիր կատարման բաժնի դեպոզիտ հաշվին կամ դրամարկը: Վճարի կատարման անդորրագիրը ներկայացվում է առաջարկությանը կից:

Եթե սահմանված ժամկետում առաջարկություն են ներկայացնում մեկից ավելի անձինք, ապա լուսն մեկնարկային գին է սահմանվում ավելի բարձր գինը, իսկ ավելի ցածր գին առաջարկած անձի (անձանց) կատարած վճարը վերադարձվում է:

Եթե նույն հոդվածով սահմանված ժամկետում և կարգով լուսն մեկնարկային գնի վերաբերյալ պարտապանը և պահանջատերը (պահանջատերերը) չեն ներկայացնում առաջարկություն, ապա աճուրդի մեկնարկային գին է համարվում նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գինը:

Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով լուսն մեկնարկային գինը որոշելուց հետո հարկադիր կատարողը առաջարկություն ներկայացնելու համար սահմանված երկշաբաթյա ժամկետի

ավարտման օրվան հաջորդող օրը, որոշում է ընդունում հարկադիր աճուրդի անցկացման մասին՝ նշելով աճուրդի ժամը, վայրը, ինչպես նաև լոտի մեկնարկային գինը, և նույն օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում կատարում է հրապարակային ծանուցում:

Շարադրված իրավանքների համակարգային մեկնաբանությունից բխում է, որ հարկադիր կատարողը կրում է լոտի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով որոշված մեկնարկային գնի և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին պարտապանին և վերջինիս գույքի նկատմամբ տարբեր կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջատերերին ծանուցելու պարտականություն: Նշված ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում պարտապանն ու պարտատերերն իրավունք ունեն ներկայացնելու լոտի ավելի բարձր մեկնարկային գնի վերաբերյալ գրավոր առաջարկություն՝ դրան կցելով առաջարկվող այդ գնի երեք տոկոսի չափով վճարը հարկադիր կատարման բաժնի դեպոզիտ հաշվին կամ դրամարկղ վճարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը: Եթե առաջարկ ներկայացրած անձը պահպանել է վերը շարադրված պահանջը, ապա աճուրդի մեկնարկային գին է սահմանվում առաջարկվող ավելի բարձր գինը: Երկշաբաթյա ժամկետում մեկից ավելի անձանց կողմից առաջարկություն ներկայացված լինելու դեպքերում լոտի մեկնարկային գին է սահմանվում ավելի բարձր գինը, իսկ ավելի ցածր գին առաջարկված անձի (անձանց) կատարած վճարը վերադարձվում է: Եթե պարտապանն ու պարտատերերը սահմանված ժամկետում չեն ներկայացնում լոտի ավելի բարձր մեկնարկային գնի մասին գրավոր առաջարկություն, ապա մեկնարկային գինը մնում է անփոփոխ՝ լոտի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով:

Այլ կերպ ասած՝ լոտի արժեքը գնահատելու և դրա 75 տոկոսի չափով մեկնարկային գին որոշելու գործողություններով սահմանվում է հարկադիր աճուրդի հանված լոտի նվազագույն այն արժեքը, որը կողմերի համար ուղենիշային է լոտի ավելի բարձր գին առաջարկելու իրենց իրավունքն իրացնելու նպատակահարմարությունը որոշելու հարցում, և որից ցածր մեկնարկային գին առաջարկվել չի կարող:

Լոտի մեկնարկային գին ներկայացնելու նպատակով սահմանված երկշաբաթյա ժամկետի ավարտի հաջորդ օրը, երբ վերոշարադրյալ գործողությունների արդյունքում աճուրդի հանված լոտի մեկնարկային գինն արդեն սահմանվել է, հարկադիր կատարողը ընդունում է հարկադիր աճուրդի անցկացման մասին որոշում, որը պարունակում է նշում աճուրդի ժամի, վայրի, լոտի մեկնարկային գնի մասին: Նշված գործողությանը զուգահեռ հարկադիր կատարողն Օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում կատարում է նաև հրապարակային ծանուցում:

Օրենքի 35.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային համակարգերի (այսուհետ՝ համակարգ) կիրառմամբ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է ծառայությունը՝ կատարողական թերթին, ինչպես նաև նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի լոտ կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Շարադրված իրավանքում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից պարզ է, որ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով հատուկ էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ կազմակերպվող և անցկացվող աճուրդների հիմքը նույնպես կատարողական թերթն ու նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթն են: Ընդ որում, տվյալ դեպքում ևս աճուրդի կարող է հանվել ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, օրենքով նախատեսված բացառություններ չպարունակելու դեպքում: Տեխնիկական և էլեկտրոնային հատուկ համակարգերի և միջոցների կիրառումն ու դրանք ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով իրականացվելու հանգամանքը հաշվի անելով՝ այդպիսի աճուրդները կոչվում են հարկադիր էլեկտրոնային աճուրդներ:

Մինչդեռ դրանք հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման որոշակի առանձնահատկություններ ունեցող տարատեսակ են:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված են նորմատիվ իրավական ակտի մեկնաբանման կանոնները, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վճռաբեկ դատարանի իրավական այն դիրքորոշումը, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը հարկադիր աճուրդի տարատեսակ է և ներառվում է դրանում, բխում է ոչ միայն Օրենքի 35.1-րդ հոդվածում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից, այլև Օրենքի «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը կրող 4-րդ գլխի կարգավորման համատեքստից, որում համապատասխանաբար ներառված է նշված հոդվածը:

Մասնավորապես, Օրենքի 4-րդ գլուխը կրում է «Հարկադիր աճուրդներ» վերտառությունը և դրանում ներառված իրավանորմերը կարգավորում են հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման հետ կապված իրավանորմերը ևս ներառված են այդ գլխում (տե՛ս Օրենքի 35.1-35.4-րդ հոդվածները): Ունենալով հարկադիր աճուրդների կազմակերպման և անցկացման կարգը սահմանող նորմերը համակարգելու և բովանդակությամբ համատեղ հոդվածները մեկ գլխի ներքո միավորելու նպատակ՝ օրենսդիրը դրանք ներառել է «Հարկադիր աճուրդներ» վերտառությամբ գլխում: Ավելին՝ էլեկտրոնային աճուրդն իր անվան մեջ ինքնին պարունակում է «հարկադիր» եզրույթը, նույնանուն են հարկադիր աճուրդի և հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման փաստական հիմքերը, ինչպես նաև լոտի առարկաները:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման որոշակի առանձնահատկություններով օժտված տեսակ է, և այդ առանձնահատկությունների հաշվառմամբ էլ դրա իրականացման կարգն ու պայմանները սահմանված են առանձին հոդվածով:

Անդրադառնալով հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով լոտի գնահատում իրականացնելու կանոնների՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ կիրառելի լինելու պահանջն ուղղակիորեն ամրագրված է նույն Օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասով:

Վերևում արդեն մանրամասն շարադրվել է հարկադիր աճուրդների անցկացման դեպքում լոտի մեկնարկային գինը որոշելու և սահմանելու ընթացակարգը, որից պարզ է, որ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված գործողությունների կատարումը դեռևս բավարար չէ լոտի մեկնարկային գինը որոշված համարելու համար: Այն ներկայացնում է մեկը մյուսի հետ փոխկապակցված, որոշակի հաջորդականություն պահանջող գործողությունների համալիր: Լոտը գնահատելու և մեկնարկային գինը սահմանելու՝ Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված գործողություններն իրարից անջատ գնահատելու դեպքում խեղաթյուրվում է այդ նորմով օրենսդրի հետապնդած նպատակը: Իրավանորմերի նման նեղ մեկնաբանության դեպքում ստացվում է մի իրավիճակ, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների դեպքում լոտի մեկնարկային գինը սահմանելու հարցում հարկադիր կատարողի պարտականությունները սահմանափակվում են լոտի արժեքը գնահատելու և դրա մեկնարկային գինը գնահատված գնի 75 տոկոսի չափով սահմանելու գործողություններով: Մինչդեռ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված

գործողությունների արդյունքում ընդամենը սահմանվում է աճուրդի դրված լուսի մեկնարկային նվազագույն գինը՝ կողմերի համար որոշակի դարձնելով գնային այն շենք, որից ավելի բարձր գին իրենք կարող են առաջարկել: Օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասը նեղ մեկնաբանելու և հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ Օրենքի 30-րդ հոդվածի միայն 1-ին և 2-րդ մասերը կիրառելի համարելու պայմաններում կատարելի, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ հարկադիր կատարողը չի կրում նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունելու պարտականություն, քանի որ վերջինիս համար այդպիսի պարտականություն սահմանված է Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով, որոնց Օրենքի 35.1-րդ հոդվածում ուղիղ հղում արված չէ: Սակայն հարկադիր կատարողը պարտավոր է ոչ միայն հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունել՝ Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, այլև Օրենքի 35.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որոշման մասին պատշաճ ծանուցել պարտապահին և պահանջատիրոջը, և սահմանված ժամկետում և կարգով կատարել հրապարակային ծանուցում: Հարկ է նշել, որ վկայակցված՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման ենթակա լինելու դեպքում գույքի վերաբերյալ որոշումն ընդունելու ժամկետների վերաբերյալ կանոն, այն է՝ պարտապահի գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման ենթակա լինելու դեպքում դրա վերաբերյալ որոշումը կայացվում է գույքի գնահատումից հետո՝ եռօրյա ժամկետում:

Շարադրվածից բխում է, որ Օրենքի 30-րդ հոդվածն ամբողջացնում է 35.1-րդ հոդվածը՝ դրանում սահմանված ընդհանուր կանոններով կարգավորելով նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման կարգը:

Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը, լինելով հարկադիր աճուրդի տեսակ, հատուկ կանոններով չկարգավորվելու կամ ընդհանուր կանոնից բացառություն չնախատեսելու դեպքերում կարգավորվում է հարկադիր աճուրդի իրականացումն և կազմակերպման կարգը սահմանող ընդհանուր կանոններով, քանի որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի համար լուսի գնահատելու և մեկնարկային գին որոշելու հատուկ կանոններ նախատեսված չեն, իսկ այդ հարցերը կարգավորող իրավանքներից որևէ բացառություն նախատեսված չէ հարկադիր էլեկտրոնային աճուրդի համար: Հետևաբար՝ Օրենքի 30-րդ հոդվածով սահմանված գործողությունները՝ տրամաբանական հաջորդականությամբ, կիրառելի են նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հարկադիր էլեկտրոնային աճուրդների դեպքում ևս հարկադիր կատարողը կրում է լուսի մեկնարկային գին և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին պարտապահին և վերջինիս գույքի նկարագրի վարքեր կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջարկերի մասնուցելու պարտականություն: Նշված պարտականության կատարմանը հաջորդող որոշակի գործողությունների արդյունքում սահմանվում է լուսի մեկնարկային գինը, որից հետո եռօրյա ժամկետում ընդունվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման մասին որոշումը և ծանուցումը հրապարակվում է հրապարակային ծանուցումների կայքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քաղաքապետ-Ջեյթոն բաժնում հարուցված թիվ 02447793 կատարողական վարույթի շրջանակներում պարտապահ Գագիկ Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Ա. Խաչատրյան փողոցի 17 շենքի բնակարան 38 հասցեում գտնվող անշարժ գույքը (այսուհետ նաև՝ Անշարժ գույք) ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի: Ի կատարումն Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 35.1-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների իրականացվել է Անշարժ գույքի գնահատում՝ հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի նշանակված գնահատողի՝

«Ամինտաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցով: Անշարժ գույքի շուկայական արժեքն առ 27.04.2019 թվականը կազմել է 24.700.000 ՀՀ դրամ՝ համաձայն 04.05.2019 թվականի թիվ Գ/Վ-ԵԴ02 եզրակացության:

Հիմք ընդունելով Անշարժ գույքի՝ 24.700.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունենալու հանգամանքը և առաջնորդվելով լուրի մեկնարկային գինը դրա գնահատված գնի 75 տոկոսի չափով սահմանելու օրենսդրական պահանջով՝ Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող, արդարադատության մայրը Է. Ղազարյանը 16.07.2019 թվականին ընդունել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշում և լուրի մեկնարկային գին սահմանել 20.902.500 ՀՀ դրամը:

Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի պետ Պ. Գրիգորյանի 16.07.2019 թվականի թիվ եր13520/04 գրությամբ Որոշումն ուղարկվել է Գագիկ Կոստանյանին և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետին՝ Գագիկ Կոստանյանին հանձնելու նպատակով:

Նշված գրությունով պարտապանը միաժամանակ տեղեկացվել է, որ գույքի աճուրդի գործընթացին, իրացվող գույքի մեկնարկային գնին, ինչպես նաև բոլոր փոփոխություններին և մանրամասներին կարող է ծանոթանալ հարկադիր էլեկտրոնային աճուրդի ինտերնետային կայքից (www.ajurd.am): Գագիկ Կոստանյանը Որոշումը ստացել է 19.08.2019 թվականին **(անվիճելի փաստ)**:

Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող Գ. Տեր-Ղազարյանը վերադասության կարգով վերանայել է Որոշումը և 08.08.(2018) թվականի որոշմամբ դրա եզրափակիչ մասը մասնակի փոփոխել հետևյալ կերպ՝ «(...) ք. Երևան, Արաբկիր համայնք, Ա. Խաչատրյան փողոցի 17 շենք, թիվ 38 հասցեում գտնվող անշարժ գույքի «Գնահատման գինը» մասում «27.870.000 ՀՀ դրամ»-ի փոխարեն գրառումը կարդալ «24.700.000 ՀՀ դրամ», իսկ «Մեկնարկային գինը» մասում «20.902.500 ՀՀ դրամ»-ի փոխարեն գրառումը կարդալ «18.525.000 ՀՀ դրամ»:

Ծառայության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող Գ. Տեր-Ղազարյանի 08.08.2019 թվականի թիվ եր15692/04 գրությամբ 08.08.(2018) թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը վերադասության կարգով վերանայելու և մասնակի փոփոխելու մասին» որոշումն ուղարկվել է Գագիկ Կոստանյանին և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետին՝ Գագիկ Կոստանյանին հանձնելու նպատակով:

Նշված որոշումները տեղադրվել են նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

Շարադրվածից բխում է, որ Անշարժ գույքի, որպես հարկադիր էլեկտրոնային աճուրդով վաճառքի ներկայացված լուրի, մեկնարկային գինը որոշելու և սահմանելու՝ Օրենքի 30-րդ և 35.1-րդ հոդվածներով նախատեսված գործողությունները Ծառայության կողմից կատարվել են ոչ ամբողջությամբ: Ծառայությունը ոչ իրավաչափորեն ձեռնպահ է մնացել լուրի գնահատված արժեքի 75 տոկոսի չափով որոշված մեկնարկային գնի և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին թիվ 02447793 կատարողական վարույթի պարտապան Գագիկ Կոստանյանին և բոլոր պահանջատերերին ծանուցելու, ավելի բարձր գնի մասին գրավոր առաջարկ ստանալու դեպքում սահմանված ընթացակարգն ու ժամկետները պահպանելու պարտականության կատարումից: Ընդ որում, նշված պարտականությունը չի կատարվել ոչ Որոշումը Գագիկ Կոստանյանին ուղարկելիս, ոչ էլ այդ Որոշումը վերանայելու և փոփոխելու արդյունքում 08.08.(2018) թվականին կայացված և լուրի մեկնարկային այլ գին սահմանելու մասին որոշումն ուղարկելիս: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուրի մեկնարկային գնի և ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու՝ Օրենքի

30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունը գործում է նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ:

Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Անշարժ գույքի մեկնարկային գնի և դրանից ավելի բարձր գին սահմանելու ընթացակարգի վերաբերյալ պարտապան Գագիկ Կոստանյանին և բոլոր պարտատերերին ծանուցելու պարտականությունը չկատարելու հետևանքով վերջիններս զրկվել են լոտի մեկնարկային գնի մասին իրազեկվելու, ինչպես նաև լոտի մեկնարկային ավելի բարձր գին առաջարկելու՝ Օրենքով երաշխավորված իրավունքն իրացնելու հնարավորությունից: Անշարժ գույքի, որպես աճուրդի հանված լոտի, մեկնարկային գինը հարկադիր կատարողի կողմից սահմանվել է Օրենքով թույլատրված դրա նվազագույն արժեքի չափով, իսկ կատարողական վարույթի կողմերին չի ընձեռվել Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված թույլատրելի գործողությունները կատարելու միջոցով լոտի մեկնարկային գինը որոշելու գործընթացին մասնակից դառնալու հնարավորություն:

Փաստորեն՝ Որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում պարտապան Գագիկ Կոստանյանին լոտի մեկնարկային գնի և ավելի բարձր գին առաջարկելու իր իրավունքի մասին չծանուցելու հետևանքով վերջինս ոչ իրավաչափ կերպով զրկվել է աճուրդի կազմակերպման և իրականացման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշում ներկայացնելու և ընթացակարգային այլ գործողությունների միջոցով վարչական մարմնի որոշման վրա ազդելու հնարավորությունից:

Վերագրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայության կողմից Որոշումը կայացնելիս և վերանայելու արդյունքում այն հետազայում փոփոխելիս ամբողջությամբ չեն պահպանվել Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված պահանջները, հետևաբար Որոշումն ընդունվել է Օրենքի խախտմամբ, ինչը բավարար էր Որոշումն անվավեր ճանաչելու համար, որպիսի իրավաչափ հետևության և հանգել է Վերաքննիչ դատարանը:

Նկատի ունենալով, որ 08.08.(2018) թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումն ընդունվել է Որոշման մեջ տեղ գտած սխալ շտկելու նպատակով, իսկ Որոշումը ենթակա է անվավեր ճանաչման, հետևաբար անվավեր է նաև 08.08.(2018) թվականի «Թիվ 02447793 կատարողական վարույթով ավագ հարկադիր կատարողի կողմից 16.07.2019թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շարադրվածն արդեն բավարար է Որոշումն Օրենքի խախտմամբ ընդունված լինելու և այդ հիմքով անվավեր ճանաչման ենթակա լինելու մասին հետևության հանգելու համար:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ Գագիկ Կոստանյանին փորձագետ նշանակելու մասին չծանուցելու հետևանքով պարզ չէ, թե նրա որ իրավունքն է խախտվել, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական վարույթի կողմերն են՝ պահանջատերը և պարտապանը (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ կատարողական վարույթի ընթացքում կողմերն իրավունք ունեն մասնակցել կատարողական գործողություններին:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման համար հարկադիր կատարողն իրավունք ունի նշանակել փորձագետ (փորձագետներ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փորձագետ նշանակելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փորձագետի անաչառության վերաբերյալ կասկած հարուցող

հանգամանքների առկայության դեպքում պահանջատերը կամ պարտապանն իրավունք ունի բացարկ հայտնել:

Շարադրված նորմերի մեկնաբանությունից բխում է, որ օրենքով կատարողական վարույթի կողմերին ընձեռվել է վարույթի ընթացքում ձեռնարկվող կատարողական գործողություններին, որպիսին համարվում է նաև հատուկ գիտելիքներ պահանջող հարցեր պարզելու նպատակով փորձագետ նշանակելը, մասնակցելու իրավունք: Փորձագետ նշանակելու գործողությանը կատարողական վարույթի մասնակիցների մասնակցությունը կարևորվում է նաև փորձագետի անաչառությանն ու ձեռնհասությանը, ինչպես նաև նրա կողմից տրված եզրակացության իրավաչափությանը վստահելու տեսանկյունից, որի կապակցությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով պարտապանին և պահանջատիրոջն ընձեռվել է փորձագետին բացարկ հայտնելու իրավունքը:

Տվյալ դեպքում վարչական գործի, ինչպես նաև կատարողական վարույթի նյութերում առկա չէ Ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի հարկադիր կատարող Կ. Մարտիրոսյանի 22.05.2018 թվականի «Ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին» որոշումը Գագիկ Կոստանյանին ուղարկված լինելու փաստը հաստատող ապացույց: Վերոգրյալի հետևանքով Գագիկ Կոստանյանն առնվազն զրկվել է փորձագետի անաչառության վերաբերյալ կասկած հարուցող հանգամանքների առկայության դեպքում փորձագետին բացարկ հայտնելու իր իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկադիր աճուրդում վաճառքի ենթակա լուտի մեկնարկային գնի և ավելի բարձր գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին կողմերին ծանուցելու՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հարկադիր կատարողի պարտականություն ունենալու վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները համահունչ են մինևույն իրավանորմին՝ Վերաքննիչ դատարանի կողմից տրված մեկնաբանություններին, ուստի վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի 30.03.2021 թվականի որոշումը բեկանելու համար, քանի որ Դատարանը 13.02.2020 թվականի վճռով հայցը բավարարելով, իսկ Վերաքննիչ դատարանն այդ վճիռն անփոփոխ թողնելով, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր»:

Վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյան, համաձայն չլինելով վերը նշված որոշման պարճառաբանական և եզրափակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արքաժայգրված կարծիքի հետ, շարադրում են իմ հարուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

Այսպես՝

Ինչպես արդեն իսկ նշվեց վերը, Վճռաբեկ դատարանը սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ գտնելով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի միատեսակ կիրառության համար այն առումով, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտում նշված նորմը ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի համեմատ, կիրառվել է հակասող մեկնաբանությամբ:

Նախ ցանկանում եմ կարծիք հայտնել այն մասին, որ նշված հիմքով բողոքը վարույթ ընդունելու դեպքերում Վճռաբեկ դատարանն իր կողմից կայացվելիք դատական ակտում պարտավոր էր պատճառաբանական մասում վկայակոչել ինչպես համապատասխան ստորադաս դատարանները, վերջիններիս կողմից նույնաման փաստական հանգամանքներով կայացված դատական ակտերի ամսաթվերը և գործի համարները, այնպես էլ

համեմատական վերլուծություն կատարել Վերաքննիչ դատարանի դատական ակտի և այդ ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի միջև՝ մեջբերելով դրանց հակասող մասերը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի որոշումը վերը նշվածների վերաբերյալ որևէ նշում չի պարունակում, որը համարում եմ անթույլատրելի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքից չբխող, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը պարտավոր էր իր որոշման մեջ նշել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համապատասխան հիմքի առկայության մասին հիմնավորումը:

Այնուամենայնիվ վերոգրյալից բացի, ցանկանում եմ կարծիք հայտնել նաև Վճռաբեկ դատարանի այն շարժառիթների վերաբերյալ, որոնք հիմք են հանդիսացել վճռաբեկ բողոքը մերժելու և Վերաքննիչ դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու համար: Այսպես՝

Վճռաբեկ դատարանը, դիրքորոշում հայտնելով այն մասին, որ «հարկադիր աճուրդում հարկադիր կատարողը կրում է լուրի գնահատված արժեքի 75 փոկոսի չափով որոշված մեկնարկային գնի և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի ու ժամկետների մասին պարտապանին և վերջինիս գույքի նկատմամբ փարբեր կատարողական վարույթներով հանդես եկող բոլոր պահանջարկերին ծանուցելու պարտականություն», «հարկադիր էլեկտրոնային աճուրդը, լինելով հարկադիր աճուրդի տեսակ, հարույկ կանոններով չկարգավորվելու կամ ընդհանուր կանոնից բացառություն չնախատեսելու դեպքերում կարգավորվում է հարկադիր աճուրդի իրականացման և կազմակերպման կարգը սահմանող ընդհանուր կանոններով, քանի որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի համարված լուրը գնահատելու և մեկնարկային գին որոշելու հարույկ կանոններ նախատեսված չեն, իսկ այդ հարցերը կարգավորող իրավանորմերից որևէ բացառություն նախատեսված չէ՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի համար: Հելուսարար՝ Օրենքի 30-րդ հոդվածով սահմանված գործողությունները՝ փրամաբանական հաջորդականությամբ, կիրառելի են նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ», եզրահանգել է, որ «Անշարժ գույքի, որպես հարկադիր էլեկտրոնային աճուրդով վաճառքի ներկայացված լուրի, մեկնարկային գինը որոշելու և սահմանելու՝ Օրենքի 30-րդ և 35.1-րդ հոդվածներով նախատեսված գործողությունները Օտուայության կողմից կատարվել են ոչ ամբողջությամբ: Օտուայությունը ոչ իրավաչափորեն ձեռնպահ է մնացել լուրի գնահատված արժեքի 75 փոկոսի չափով որոշված մեկնարկային գնի և այդ գնից ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կարգի և ժամկետների մասին թիվ 02447793 կատարողական վարույթի պարտապան Գագիկ Կուսրանյանին և բոլոր պահանջարկերին ծանուցելու, ավելի բարձր գնի մասին գրավոր առաջարկ արանալու դեպքում սահմանված ընթացակարգն ու ժամկետները պահպանելու պարտականության կատարումից», «Որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում պարտապան Գագիկ Կուսրանյանին լուրի մեկնարկային գնի և ավելի բարձր գին առաջարկելու իր իրավունքի մասին չձանուցելու հետևանքով վերջինս ոչ իրավաչափ կերպով գրկվել է աճուրդի կազմակերպման և իրականացման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշում ներկայացնելու և ընթացակարգային այլ գործողությունների միջոցով վարչական մարմնի որոշման վրա ազդելու հնարավորությունից»:

Կարծում եմ, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդ իրականացնելիս հարկադիր կատարողը չունի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին նրան ծանուցելու պարտականություն հետևյալ պատճառաբանությամբ.

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է այն տեղեկությունների սպառիչ ցանկը, որոնք հարկադիր կատարողը պարտավոր է ներառել կայքում հրապարակվող հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ: Նշված կարգավորման համաձայն՝ հարկադիր կատարողն ունի այդ ծանուցման մեջ վերը նշվածներից միայն նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված լուրի մեկնարկային գնի մասին տեղեկությունը ներառելու պարտականություն. ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու կողմի իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին տեղեկություն ներառելու

պարտականություն հարկադիր կատարողը, ի տարբերություն հարկադիր աճուրդի դեպքերի, չունի: Նման պայմաններում կարծում են, որ այդ առումով հարկադիր կատարողին չի կարող վերագրվել նման խախտում թույլ տալը:

Ավելին՝ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 35.3-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից բխում է, որ օրենսդիրը սահմանել է հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու սպառիչ հիմքեր՝ նշելով, որ դատարանը կարող է շահագրգիռ անձի պահանջով հարկադիր էլեկտրոնային աճուրդը ճանաչել անվավեր միայն այն դեպքում, երբ այն անց է կացվել նույն օրենքի 35.1-րդ և 35.2-րդ հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ: Տվյալ դեպքում «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվող լոտի գնահատումն իրականացվում է նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով. նշված դրույթը որևէ հղում չի պարունակում «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասին, որից հետևում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը՝ իրացվող լոտի գնահատման առումով, կարող է անվավեր ճանաչվել բացառապես այն հիմքով, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվող լոտի գնահատումն իրականացվել է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի հենց 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգի խախտմամբ. օրենսդիրը հարկադիր էլեկտրոնային աճուրդն «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնների խախտմամբ իրականացված լինելն անգամ չի դիտում որպես աճուրդն անվավեր ճանաչելու ինքնուրույն հիմք:

Վերոգրյալից բխում է, որ եթե, օրինակ, հարկադիր կատարողը պարտապանին և պահանջատիրոջը (պահանջատերերին) պատշաճ չի ծանուցել աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին, կամ չի նշել լոտի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու վերաբերյալ կողմի իրավունքի իրականացման կարգն ու ժամկետները, կամ չի պահպանել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասում նշված մնացած պայմանները, ապա այդ հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու համար, քանի որ, ինչպես արդեն իսկ նշեցի վերը, օրենսդիրը որպես այդպիսի հիմքեր նախատեսել է բացառապես նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջների խախտումը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ են համարում նշել, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի դեպքում պարտապանը և պահանջատերը (պահանջատերերը)՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.2-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ունեն ինչպես նոր գնային հայտ ներկայացնելու, այնպես էլ լոտի մեկնարկային գնի նվազագույն հավելումներ կատարելու իրավունքներ, որոնցից կարող են անմիջականորեն օգտվել հարկադիր էլեկտրոնային աճուրդի դեպքում:

Նման պայմաններում կարծում են, որ այդ առումով հարկադիր կատարողին չի կարող վերագրվել վերը նշված խախտումները թույլ տալը, որի պայմաններում վերը նշված շարժառիթները չէին կարող հիմք հանդիսանալ վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. Հակոբյան

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ 2-2040
2022թ.

Քաղաքացիական գործ թիվ 2-2040
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Հ. Ենքյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2022 թվականի ապրիլի 13-ին
գրավոր ընթացակարգով քննելով Տիգրան Սահակյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերա-
քննիչ քաղաքացիական դատարանի 16.10.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի
Տիգրան Սահակյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ պետական մարմնի
անգործությունը վիճարկելու և խախտված իրավունքը վերականգնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Սահակյանը պահանջել է պարտավորեցնել Երևա-
նի քաղաքապետին Երևանի Աբեղյան փողոցի հարակից տարածքում 11350,0քմ ընդհա-
նուր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել իրեն՝ հողամասի ուղղակի
վաճառքի գին սահմանելով մինչև ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի թիվ 1746-Ն
որոշման ընդունումը գործող կադաստրային գինը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի
(դատավոր՝ Գ. Կարախանյան) (այսուհետ՝ Դատարան) 09.04.2004 թվականի վճռով
դիմումը բավարարվել է՝ Դատարանը վճռել է վերականգնել Տիգրան Սահակյանի
խախտված իրավունքը և պարտավորեցնել Երևանի քաղաքապետին Երևանի Աբեղյան

փողոցի հարակից տարածքում 11350,0քմ ընդհանուր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել գնման նախապատվության իրավունք ունեցող Տիգրան Սահակյանին՝ վաճառքի գին սահմանելով մինչև ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի թիվ 1746-Ն որոշման ընդունումը գործող կադաստրային գինը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.10.2020 թվականի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի 09.04.2004 թվականի վճիռը և գործն ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազությունը և Տիգրան Սահակյանը (ներկայացուցիչ՝ Լուսինյազ Բեժանյան):

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.03.2021 թվականի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազության բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Տիգրան Սահակյանի վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 209-րդ, 302-րդ, 611-րդ հոդվածները, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող խնդրագրությամբ ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ, 66-րդ և 80-րդ հոդվածները, «Կարախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 7-րդ, 18-րդ, 119-րդ, 360-րդ, 361-րդ, 371-րդ և 372-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է վճռի օրինակյան ուժի մեջ մտնելուց հետո և առկա չեն եղել նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, որպիսի պայմաններում միայն վերաքննիչ բողոքը ենթակա կլիներ վարույթ ընդունման կամ քննության: Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազությունը տվյալ դեպքում չէր կարող հանդիսանալ գործին մասնակից չդարձված անձ, որպիսի հիմքով կարողանար բողոք բերել վճռի օրինակյան ուժի մեջ մտնելուց հետո:

Վերաքննիչ դատարանը, խախտելով դատավարական իրավունքի նորմերը, վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ, թեև վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է եղել մերժման նաև այն հիմքով, որ բողոքը ներկայացրել է այն անձը, որը դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի, քանի որ դատախազի մոտ բողոք բերելու իրավունքը, տվյալ դեպքում, ծագում է այն ժամանակ, երբ գործին մասնակցած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը հայտնում է իր մտադրությունը՝ նշված վճռի դեմ բողոք ներկայացնելու մասին:

Վերաքննիչ դատարանը չի պարզել, թե արդյոք կայացված դատական ակտը վերաբերել է նաև բողոք բերող անձի իրավունքներին և պարտականություններին, և արդյոք խախտվել են բողոք բերող անձի իրավունքները և օրինական շահերը: Տվյալ դեպքում, պատասխանող է հանդիսացել և հանդիսանում Երևանի քաղաքապետարանը, հայցը վերաբերում է քաղաքապետարանի գործողությունների վիճարկմանը, որպիսի պայմաններում այլ անձի, այդ թվում՝ պետական մարմնի ներգրավվածության անհրաժեշտություն չկար, քանի որ պետական մարմինն արդեն իսկ ներգրավված էր գործով:

Ավելին, խախտվել է նաև գործի ենթակայության պահանջը, քանի որ թիվ 2-2040/2004 քաղաքացիական գործով վեճն իր բնույթով հանրային իրավահարաբերություններից ծագած վեճ է, և առնվազն 2008 թվականից հետո նշված վեճերը քննության են առնվում մասնագիտացված դատարանների կողմից: ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածը նույնպես սահմանում է, որ վարչական դատարանին ընդդատյա վեճերը չեն համարվում քաղաքացիաիրավական վեճեր, իսկ ընդհանուր իրավասության առաջին ատյանում ենթակա են քննության քաղաքացիաիրավական վեճերը: Այսինքն՝ սույն գործով Վերաքննիչ դատարանն իրավասու չէր իրականացնելու քննությունն նաև այն հիմքով, որ վեճը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ 13.07.2003 թվականի գույքի մասնավորեցման պայմանագրով Տիգրան Սահակյանին են անցել վեճի առարկա հողամասի նկատմամբ այն բոլոր իրավունքները, որոնք ունեցել է «Երևանի քաղաքապետարանի «Երառուսպասարկում»» ՓԲԸ-ն, իսկ վերջինս դեռևս 2002 թվականի դրությամբ այդ հողամասի նկատմամբ ունեցել է գրանցված վարձակալության իրավունք, ինչով հերքվում են բողոքաբերի այն փաստարկները, որ Տիգրան Սահակյանը գրանցված վարձակալության իրավունք 2003 թվականի դրությամբ չի ունեցել: Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթները, որոնք ենթակա չէին կիրառման, քանի որ դեռևս 2002 թվականին հողամասի նկատմամբ կար գրանցված վարձակալության իրավունք: Հետևաբար, շենքի, որով ծանրաբեռնված էր հողամասը, օտարման դեպքում օրենքի ուժով նոր սեփականատիրոջն են անցել նաև հողամասի նկատմամբ առկա իրավունքները, այդ թվում՝ վարձակալության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Տիգրան Սահակյանը, պետական գույքի մասնավորեցման պայմանագրով 2003 թվականի հուլիս ամսին ձեռք բերելով ք. Երևան, Աբելյան փող. 8 հասցեում գտնվող արտադրամասը, ձեռք է բերել այդ արտադրամասի սպասարկման համար նախատեսված հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու իրավունք: Ուստի, այդ հողամասի չափի քսան տոկոսից ավելի չափով հողամաս օգտագործելու դեպքում՝ իրավունք է ստացել ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու ավել օգտագործվող հողամասը՝ այդ հողամասի կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով:

Միաժամանակ, Տիգրան Սահակյանը նաև ավել օգտագործվող՝ 3880քմ հողամասից 1494քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով՝ այդ հողամասի կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով սահմանված գնով գնելու իրավունք է ունեցել, ունեցել է նաև 3880քմ հողամասի ձեռքբերման նախապատվության իրավունք: Ավելին, նա 2003 թվականի նոյեմբերին դիմել է Երևանի քաղաքապետարան՝ վեճի առարկա հողամասն իրեն ուղղակի վաճառքով օտարելու խնդրանքով, սակայն Երևանի քաղաքապետարանի անգործության արդյունքում, իրավահարաբերության ծագման պահին գործող «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջների խախտմամբ նրա դիմումին օրենքով սահմանված ժամկետներում ընթացք չի տրվել, ինչի արդյունքում նա գրկվել է նշված հողամասը 2003 թվականի գործող կադաստրայի արժեքով գնելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը բողոքի շրջանակներում չէր կարող արձանագրել պետական շահերի խախտում, քանի որ նման հարց չէր քննարկվել առաջին ատյանի դատարանում, պետական շահերի խախտում կարող էր հաստատվել բացառապես այլ գործի քննության շրջանակներում, որից հետո միայն նշված հիմքով սույն գործով վճիռը ենթակա կլիներ վերանայման բացառապես նոր երևան եկած հանգամանքների փաստով: Այսինքն, Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր իրավասությունների շրջանակներից: Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը խախտել է մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքները, արդար դատաքննության իրավունքը, դատական ակտերի որոշակիության սկզբունքը, դրանով իսկ ակնհայտորեն և ուղղակիորեն խախտելով պատասխանողի արդար դատաքննության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 16.10.2020 թվականի որոշումը և վերաքննիչ բողոքը մերժել»:

2.1 ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի պարասիանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանությունները դատական ակտը բեկանելու մասով հիմնավոր են, իսկ վճռաբեկ բողոքում նշված պատճառաբանություններն անհիմն են և հիմք չեն դատական ակտը բեկանելու համար:

Տվյալ դեպքում վեճի առարկա հողամասը մինչև օտարումը հանդիսացել է պետական սեփականություն, ուստի դրա օտարումը նախատեսվածից ցածր գնով վնաս է հասցրել Հայաստանի Հանրապետությանը, հետևաբար՝ դատական ակտը վերաբերել է պետական շահերին: Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանը դատական ակտի դեմ բողոք չի բերել, որի հետևանքով այն մտել է օրինական ուժի մեջ, ուստի բողոքարկման պահին առկա է եղել վերջինիս մտադրությունը դատական ակտը չբողոքարկելու մասին:

Դատական ակտը բողոքարկելիս դատախազությունը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վերաքննիչ բողոք բերելու՝ օրենքով նախատեսված 20 տարվա ժամկետը սույն գործով չի լրացել. մասնավորապես՝ դատական ակտի կայացման պահից անցել է 16 տարի:

Քննարկվող գործով արդարադատության ոչ պատշաճ իրականացման արդյունքում խախտվել է պետության սեփականության իրավունքը և հողամասը ձեռք է բերվել ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի թիվ 1746-Ն որոշմամբ սահմանված կադաստրային գներից ավելի ցածր գնով: Ինչ վերաբերում է բողոքի պատճառաբանություններին այն մասին, որ դիմողը գնման նախապատվություն ունեցել է մինչև 2003 թվականը, ուստի նրա նկատմամբ կիրառելի են 2002 թվականին գործող գները, ապա նման իրավունքի առկայության մասին քաղաքացիական գործում բացակայում են տվյալները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Տիգրան Սահակյանը 26.06.2003 թվականին դիմելով Երևանի քաղաքապետին՝ հայտնել է, որ համաձայն ՀՀ կառավարության 23.04.2003 թվականի թիվ 573-Ա որոշման՝ գնել է Աբելյան 8 հասցեում գտնվող «Աջափնյակ» ունիվերսամը, որը զբաղեցնում է 7470քմ հողամաս: Խնդրել է վերակառուցման, սպասարկման օբյեկտների կառուցման, սպասարկման տարածքի ընդլայնման, ավտոկայանատեղի կազմակերպման, բարեկարգման և կանաչապատման նպատակով իրեն տրամադրել մոտ 3600քմ հողամաս և ճանաչել հողի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 7**):

2) Երևանի քաղաքապետի 11.09.2003 թվականի թիվ 1730-Ա որոշման 1-ին կետի համաձայն՝ Աբելյան փողոցի հ. 8 հասցեում Տիգրան Սահակյանի զբաղեցրած 7470,0քմ մակերեսով հողամասը տրամադրվել է վերջինիս՝ վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով, վարձավճարի չափը սահմանելով տվյալ հողի հարկի տարեկան դրույքաչափով՝ տալով գնման նախապատվության իրավունք: Որոշման 2-րդ կետի համաձայն՝ Տիգրան Սահակյանին (հետագայում կառուցապատող) Աբելյան փողոցի հ. 8 հասցեում նույն որոշմամբ տրամադրվող հողամասին կից ունիվերսամի վերակառուցման, սպասարկման, օբյեկտի կառուցման, սպասարկման տարածքի ընդլայնման, ավտոկայանատեղի կազմակերպման և բարեկարգման ու կանաչապատման նպատակով լրացուցիչ տրամադրվել է 3880,0քմ մակերեսով հողամաս՝ վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով, տալով գնման նախապատվության իրավունք (**հատոր 1-ին, գ.թ. 18**):

3) Ըստ Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի (Վարձատու), մի կողմից, և Տիգրան Սահակյանի (Վարձակալ), մյուս կողմից, միջև Երևանի քաղաքապետի 11.09.2003 թվականի թիվ 1730-Ա որոշման հիման վրա «10.02.2003 թվականին» կնքված Հողամասի վարձակալության մասին պայմանագրի 1-ին կետի՝ Վարձատուն Վարձակալին, համապատասխան վարձավճարի դիմաց, նրա տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրել Աբելյան փող. հ. 8 վայրում գտնվող 3880քմ մակերեսով հողամասը (...): Պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ հողամասը տրամադրվել է ավտոկայանատեղի կազմակերպման, բարեկարգման և կանաչապատման համար: Պայմանագրի

8-րդ կետի համաձայն՝ հողամասի տարեկան վարձավճարը կազմում է տվյալ հողամասի կադաստրայի արժեքի 1 տոկոսը, որը 175.531 ՀՀ դրամ է: Պայմանագրի կնքման պահին 1հա մակերեսով հողամասի կադաստրային արժեքը 1քմ՝ 4824, 1հա՝ 45.240.000 ՀՀ դրամ է: Պայմանագրի 15-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը կնքվել է 25 տարի ժամկետով և գործում է մինչև 11.09.2028 թվականը ներառյալ:

Պայմանագրի 29-րդ կետով ձեռագիր մակագրությամբ ավելացվել է՝ «Գնման նախապատվության իրավունք» (**հատոր 1-ին, գ.թ. 9-10**):

4) Ըստ Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի (Վարձատու), մի կողմից, և Տիգրան Սահակյանի (Վարձակալ), մյուս կողմից, միջև Երևանի քաղաքապետի 11.09.2003 թվականի թիվ 1730-Ա որոշման հիման վրա «10.02.2003 թվականին» կնքված Հողամասի վարձակալության մասին պայմանագրի 1-ին կետի՝ Վարձատուն Վարձակալին, համապատասխան վարձավճարի դիմաց, նրա տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրել Արելյան փող. հ. 8 վայրում գտնվող 7470քմ մակերեսով հողամասը (...): Պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ հողամասը տրամադրվել է որպես շինության զբաղեցրած տարածք: Պայմանագրի 8-րդ կետի համաձայն՝ հողամասի տարեկան վարձավճարը կազմում է տվյալ հողամասի կադաստրայի արժեքի 1 տոկոսը, որը 337.943 ՀՀ դրամ է: Պայմանագրի կնքման պահին 1հա մակերեսով հողամասի կադաստրային արժեքը 1քմ՝ 4524 դրամ է: Պայմանագրի 15-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը կնքվել է 25 տարի ժամկետով և գործում է մինչև 11.09.2028 թվականը ներառյալ:

Պայմանագրի 29-րդ կետով ձեռագիր մակագրությամբ ավելացվել է՝ «Գնման նախապատվության իրավունք» (**հատոր 1-ին, գ.թ. 11-12**):

5) Համաձայն 13.02.2004 թվականի թիվ 1638551 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի՝ ք. Երևան, Աջափնյակ համայնքի Արելյան փողոցի 8 հասցեի «Աջափնյակ» ունիվերսամի նկատմամբ գրանցվել է Տիգրան Սահակյանի սեփականության, իսկ ունիվերսամի սպասարկման համար նախատեսված 1135հա հողամասի նկատմամբ՝ վարձակալության իրավունքը (հիմք՝ 10.07.2003 թվականի թիվ 12011 պետգույքի մասնավորեցման պայմանագիր, 10.02.2004 թվականի թիվ 333 և 10.02.2004 թվականի թիվ 334 հողամասի վարձակալության պայմանագրեր) (**հատոր 1-ին, գ.թ. 13-17**):

6) Երևանի քաղաքապետարանի 09.03.2004 թվականի թիվ 2/1-044 գրությամբ Տիգրան Սահակյանին տեղեկացվել է, որ Երևանի քաղաքապետարան հասցեագրված դիմումը, Արելյան փողոցի հարակից տարածքում գտնվող 11350,0քմ մակերեսով հողամասն օտարելու մասին, քննարկվել է: Նշվել է, որ օտարվող հողամասի վաճառքի գինը պետք է հաշվարկվի ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» հ. 1746-Ն որոշմամբ սահմանված հողերի կադաստրային գնահատման կարգի համաձայն (**հատոր 1-ին, գ.թ. 8**):

7) Տիգրան Սահակյանը դիմում է ներկայացրել Դատարան՝ խնդրելով պարտավորեցնել Երևանի քաղաքապետին Երևանի Արելյան փողոցի հարակից տարածքում 11350,0քմ ընդհանուր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել իրեն՝ հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանելով մինչև ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի թիվ 1746-Ն որոշման ընդունումը գործող կադաստրային գինը (**հատոր 1-ին, գ.թ. 3-4**):

8) Դատարանի 09.04.2004 թվականի վճռով դիմումը բավարարվել է (**հատոր 1-ին, գ.թ. 28-30**):

9) Սույն գործով Դատարանի 09.04.2004 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազությունը (**հատոր 2-րդ, գ.թ. 2-13**):

10) Վերաքննիչ դատարանը 29.09.2019 թվականի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազության կողմից բերված վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ և քննել է ըստ էության (**հատոր 2-րդ, գ.թ. 77**):

4. Վճռարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռարելի դատարանը, վերահասարարելով նախկինում հայտնած դիրքորոշումը, անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. որ դատարանին է վերապահված այն վերաքննիչ բողոքի քննությունը, որը բերվել է վարչական և վերաքննիչ վարչական դատարանների արեղծումից հետո, սակայն մինչև դրանց արեղծումը քաղաքացիական գործեր քննող դատարանի կողմից հանրային իրավահարաբերություններից բխող իրավական վեճով կայացված վճռի դեմ:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

«ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի:

«ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

Վերը նշված իրավանքների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանն է հանձնել դատական կարգով քննության ենթակա այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Մինևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերը⁵: Փա-

⁵ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը վարչական դատարանի և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի միջև գործերի բաշխումը կարարում է ընդդատության նորմերի միջոցով, մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը մինևնույն հարցը կարգավորում է ենթակայության նորմերով: Ուստի սույն որոշման մեջ «ընդդատություն» և «ենթակայություն» եզրույթները կիրառվում են մինևնույն իմաստով և փոխադրում ցույց են տալիս դատական գործերի բաշխումը վարչական դատարանի և ընդհանուր իրավասության դատարանի միջև:

ստորեն, դատական գործը վարչական դատարանում կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Ինչ վերաբերում է վերաքննիչ վարչական և վերաքննիչ քաղաքացիական դատարանների իրավասությանը վերապահված գործերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև նույն օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

- 1) դատավարության մասնակիցները.
- 2) դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածով սահմանվում են վարչական դատարանի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռների և նույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝ գործին մասնակցող անձինք, դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում, գործին մասնակից չդարձած անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ, այն անձինք, որոնց նկատմամբ առաջին ատյանի դատարանի կողմից կիրառվել է դատական տուգանք՝ դատական տուգանք կիրառելու մասին որոշման մասով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածով սահմանվում են առաջին ատյանի դատարանի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշումները:

ՀՀ վճռաբեկ դատարանը *Կարո Պարպարյանն ընդդեմ ՀՀ ԱԾ ԴԱԿԿ ծառայության* գործով արձանագրել է, որ վերաքննիչ վարչական դատարանը վերաքննության կարգով վերանայում է վարչական դատարանի կողմից կայացված դատական ակտերը, իսկ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված դատական ակտերի դեմ բերված բողոքները ենթակա են քննության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից: Փաստորեն, եթե առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի միջև գործերի բաշխումը որոշվում է ենթակայության (ընդդատության) նորմերով և պայմանավորված է իրավահարաբերության բնույթով (մասնավոր կամ հանրային), ապա վերաքննիչ դատարանների իրավասությունն անմիջականորեն կապված է այն հանգամանքի հետ, թե որ դատարանի կողմից կայացված դատական ակտն է բողոքարկվում:

Մինևույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի միջև գործերի բաշխման անհրաժեշտությունը ծագել է վարչական դատարանի ստեղծումից հետո (վարչական դատարանը սկսել է գործել 01.01.2008 թվականից՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի): Մինչև վարչական դատարանի ստեղծումն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում էր նաև հանրային իրավահարաբերություններից ծագող վեճեր: Քաղաքացիական գործեր քննող դատարանը քննում էր նաև պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու ոչ առևտրային կազմակերպությունների միջև վեճերով, ինչպես նաև դրանց միջև վեճերով գործեր (մինչև 01.01.2008 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.06.1998 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականին, ուժը կորցրել է 09.04.2018 թվականին) 15-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ): Փաստորեն,

հանրային իրավահարաբերություններից ծագող և քաղաքացիական գործեր քննող դատարանի քննությանը հանձնված վեճերը 01.01.2008 թվականից հետո հանձնվեցին հատկապես այդ բնույթի վեճերի լուծման մեջ մասնագիտացված դատարանին՝ վարչական դատարանին: 2010 թվականից Հայաստանի Հանրապետությունում սկսեց գործել վերաքննիչ վարչական դատարանը (նախկինում՝ վարչական վերաքննիչ դատարան), որին վերապահվեց օրենքով նախատեսված դեպքերում վարչական դատարանի դատական ակտերի դեմ բերված բողոքների քննության իրավասություն: «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.10.2010 թվականին ընդունված ՀՕ-135-Ն օրենքով սահմանվեցին որոշ անցումային դրույթներ՝ պայմանավորված նոր՝ վերաքննիչ վարչական դատարանի ստեղծմամբ: Մինչև ժամանակ, նշված անցումային դրույթներով չկարգավորվեց այն հարցը, թե վերաքննիչ որ դատարանի քննությանն է ենթակա այն դատական ակտի դեմ բերված բողոքի քննությունը, որը կայացվել է քաղաքացիական գործեր քննող դատարանի կողմից հանրային իրավահարաբերությունից բխող վեճով՝ մինչև վարչական դատարանի ստեղծումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ մինչև վարչական դատարանի ստեղծումը քաղաքացիական գործեր քննող դատարանի կողմից կայացված վճիռների դեմ բերված բողոքները քննելու իրավասություն ունեցող դատարանը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե տվյալ վճիռն ինչ բնույթի իրավահարաբերություններից ծագող վեճին է վերաբերում: Մասնավորապես՝ եթե քաղաքացիական գործեր քննող դատարանը մինչև վարչական դատարանի ստեղծումը քննել և լուծել է հանրային իրավահարաբերություններից ծագող վեճ, ապա այդ գործով կայացված վճիռը ներկայումս ենթակա է բողոքարկման վերաքննիչ վարչական դատարան, իսկ մասնավոր իրավահարաբերություններից ծագող վեճերի կապակցությամբ կայացված վճիռների դեմ բերված բողոքները քննելու իրավասությամբ օժտված է վերաքննիչ քաղաքացիական դատարանը: ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մինչև վարչական դատարանի ստեղծումը քաղաքացիական գործեր քննող դատարանի կողմից հատուկ հայցային վարույթի կարգով քննվել են նաև հանրային իրավահարաբերությունից ծագող վեճեր (*լրե՛ս, Կարո Պարսպարյան ընդդեմ ՀՀ ԱԵ ԴԱՀԿ ծառայության թիվ 2-1445 քաղաքացիական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 18.12.2020 թվականի որոշումը):

Միաժամանակ վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ, ի տարբերություն վերաքննիչ բողոքը վերադարձնելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշումների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման՝ անմիջական կարգով վճռաբեկ բողոքարկման իրավական հնարավորություն չի նախատեսում: Անմիջական բողոքարկման ընթացակարգի բացակայությունը, սակայն, չի բացառում նման որոշման բողոքարկման հնարավորությունը գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում: Մասնավորապես, բողոք բերող անձը գործն ըստ էության լուծող դատական ակտի իրավաչափությունը կարող է վիճարկել նաև վերաքննության վարույթի ոչ իրավաչափ հարուցված լինելու հիմքով՝ մասնավորապես փաստարկելով այն հանգամանքը, որ առկա է եղել վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմք, ինչը, սակայն, անտեսվել է վերաքննիչ դատարանի կողմից, և որն օբյեկտիվ կասկած է հարուցել վերաքննության վարույթի հետագա փուլերի և դրանք եզրափակող գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինականության վերաբերյալ: Նման դեպքում վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում, այդուհանդերձ, հիմնավորվում է, որ վերաքննիչ դատարանում առկա է եղել վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմք, ինչն անտեսվել է դատական այս առյուծի կողմից, ապա դատավարական այդպիսի խախտումը պետք է հանգեցնի գործն ըստ էության լուծող դատական ակտի բեկանման, քանի որ թույլ է տրվել այնպիսի դատական սխալ, որը կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

Անդրադառնալով վերաքննիչ վարույթի հարուցման իրավաչափության պայմանների չպահպանման հիմքով գործն ըստ էության լուծող դատական ակտի բեկանման իրավական

հետևանքներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն դեպքում վերաքննիչ վարույթը վերադառնում է մեկնարկային կետին, այսինքն՝ վերաքննության վարույթի հարուցման փուլ, որի շրջանակներում պետք է կիրառվի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու լիազորությունն այն պատճառաբանությամբ, որ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տիգրան Սահակյանի կողմից 25.03.2004 թվականին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան է ներկայացվել հետևյալ դիմումը. պարտավորեցնել Երևանի քաղաքապետին Երևանի Արելյան փողոցի հարակից տարածքում 11350,0քմ ընդհանուր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել իրեն՝ հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանելով մինչև ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի թիվ 1746-Ն որոշման ընդունումը գործող կադաստրային գինը:

Դատարանի 09.04.2004 թվականի վճռով դիմումը բավարարվել է՝ վերականգնվել է Տիգրան Սահակյանի խախտված իրավունքը և պարտավորեցվել է Երևանի քաղաքապետին Երևանի Արելյան փողոցի հարակից տարածքում 11350,0 քմ ընդհանուր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել Տիգրան Սահակյանին՝ հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանելով մինչև ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի թիվ 1746-Ն որոշման ընդունումը գործող կադաստրային գինը:

Վերաքննիչ դատարանի 16.10.2020 թվականի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի 09.04.2004 թվականի վճիռը և գործն ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոք բերած անձի կողմից բարձրացվել է Վերաքննիչ դատարանի՝ սույն գործը քննելու իրավասության հարցը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոք բերած անձը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման՝ անմիջական բողոքարկման ենթակա չլինելու պայմաններում վճռաբեկ բողոքով ըստ էության վիճարկում է նաև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու որոշման իրավաչափությունը:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սույն գործի կողմերի միջև առկա վեճի հիմքում ընկած իրավահարաբերության բնույթին:

ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարբերակման հարցին: Այսպես, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշման՝ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,
2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,
3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը (լրես, «Վեսթ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության

գործակալության թիվ ՎԴ/0823/05/14, թիվ ՎԴ/0830/05/14 և թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործերով ՀՀ վճարելի դատարանի 22.04.2016 թվականի որոշումները):

Տվյալ դեպքում, սույն գործով ներկայացված վերաքննիչ բողոքը քննելու իրավասություն ունեցող վերաքննիչ ասյանին բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել սույն գործով ներկայացված հայցապահանջի ենթակայությունը: Ըստ այդմ՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործի հարուցման համար հիմք հանդիսացած՝ պետական մարմնի անգործությունը վիճարկելու և խախտված իրավունքը վերականգնելու պահանջի մասին դիմումը բխում է հանրային իրավահարաբերություններից հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝ սույն գործը հարուցվել է Տիգրան Սահակյանի կողմից 25.03.2004 թվականին ներկայացված դիմումի հիման վրա ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, որով վերջինս պահանջել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետին Երևանի Աբելյան փողոցի հարակից տարածքում 11350,0քմ ընդհանուր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել իրեն՝ հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանելով մինչև ՀՀ կառավարության 24.12.2003 թվականի թիվ 1746-Ն որոշման ընդունումը գործող կադաստրային գինը:

1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի համաձայն՝ Երևան քաղաքն ունի մարզի կարգավիճակ: Երևանի քաղաքապետին վարչապետի ներկայացմամբ նշանակում և ազատում է Հանրապետության Նախագահը: Տեղական ինքնակառավարումը Երևանում իրականացվում է թաղային համայնքներում:

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի համաձայն՝ Երևանը համայնք է: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով (...):

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինները կազմավորվում են համապատասխան օրենքի ընդունումից հետո ոչ ուշ, քան երկու տարվա ընթացքում: Մինչ այդ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումը և տարածքային կառավարումը իրականացվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրի (ուժը կորցրել է 18.06.2009 թվականին) 1.2-րդ կետի համաձայն՝ պետական կառավարումը Երևանում ապահովվում է Երևանի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Երևանի քաղաքապետն օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում Երևանի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնում է հետևյալ բնագավառներում՝ ֆինանսներ, քաղաքաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն, տրանսպորտ և ճանապարհաշինություն, առևտուր, հանրային սնունդ և սպասարկում, գյուղատնտեսություն և **հողօգտագործում**, կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, մշակույթ և սպորտ, բնության և շրջակա միջավայրի պահպանություն (...):

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 26.12.2008 թվականին, ուժի մեջ է մտել 26.01.2009 թվականին) 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Երևան քաղաքում (...) տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածից հետևում է, որ Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են Երևանի ավագանին և Երևանի քաղաքապետը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ավագանու ընտրություններից հետո Երևանի թաղային համայնքները համարվում են վերակազմակերպված՝ որպես Երևան համայնք:

Վերոգրյալ իրավական նորմերի համալիր վերլուծությունից հետևում է, որ ըստ 1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության՝ Երևան քաղաքն ունեցել է մարզի կարգավիճակ, և Երևան քաղաքում պետական կառավարման իրականացման կարգը սահմանվել է ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրով (ուժը կորցրել է 18.06.2009 թվականին), որի համաձայն՝ Երևանի տարածքում ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացրել է Երևանի քաղաքապետը՝ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ Երևան քաղաքի կարգավիճակը փոխվել է. Երևանը համայնք է, որի տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Ընդ որում, 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության անցումային դրույթներում նախատեսվել է նաև, որ մինչ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորումը Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումը և տարածքային կառավարումն իրականացվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Երևանի քաղաքապետի՝ որպես տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) ձևավորումից հետո Երևանի քաղաքապետը՝ որպես տարածքային կառավարման մարմին, դադարել է գոյություն ունենալ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Երևան քաղաքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում տեղի ունեցած վերը նշված հայեցակարգային փոփոխությունների արդյունքում Երևանի քաղաքապետի՝ որպես տարածքային կառավարման մարմնի իրավահաջորդ է Հայաստանի Հանրապետությունը, քանի որ մինչև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Երևանի քաղաքապետի՝ որպես տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) ձևավորումը Երևանի քաղաքապետն ունեցել է պետական մարմնի (մարզպետի) կարգավիճակ և իրականացրել է պետական (տարածքային) կառավարման գործառնություններ՝ «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ պետական մարմնի (տվյալ դեպքում՝ Երևանի քաղաքապետի) անգործությունը վիճարկելու և դիմումատուի խախտված իրավունքը վերականգնելու մասին դիմումը ներկայացվել է 25.03.2004 թվականին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Երևանի քաղաքապետարանը դեռևս տարածքային կառավարման մարմին էր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տարածքային կառավարումը պետության գործադիր իշխանության ոլորտում տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող գործունեության հատուկ տեսակ է: Գործելով պետության անունից և իրականացնելով պետական կառավարման գործառնություններ՝ տարածքային կառավարման մարմիններն օժտված են պետաիշխանական լիազորություններով և կառավարչական գործունեությունն իրականացնում են բացառապես օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության շրջանակներում: Հետևաբար տարածքային կառավարումը, ինչպես նաև դրա գործառնություններն իրականացնող տարածքային կառավարման մարմինները հանդիսանում են պետական իշխանության միասնական կառուցակարգի բաղկացուցիչ մասը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն վեճը բխում է հանրային իրավահարաբերություններից, քանի որ պահանջն ուղղված է Երևանի քաղաքապետարանի դեմ, իսկ վերջինս վեճի ծագման պահին հանդիսացել է տարածքային

կառավարման մարմին և իրականացրել է իր կարգավիճակից բխող՝ հանրային իշխանական լիազորություններ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Տիգրան Սահակյանի հետ կնքված վարձակալության պայմանագրերի կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, ինչը ևս վկայում է, որ սույն գործով իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

1. սույն վեճի կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ Երևանի քաղաքապետարանը,

2. սույն վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հողօգտագործման ոլորտում իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը,

3. վիճելի իրավահարաբերությունը ծագել է Երևանի քաղաքապետարանի կողմից հանրային շահի իրացման՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասի տրամադրման կապակցությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով բողոքարկվող վճիռը կայացվել է մինչև վարչական դատարանի ստեղծումը, գործը քաղաքացիական գործեր քննող դատարանի կողմից քննվել է հատուկ հայցային վարույթի կարգով՝ որպես հանրային իրավահարաբերությունից ծագող վեճ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Դատարանի 09.04.2004 թվականի վճիռը ենթակա էր բողոքարկման վարչական դատավարության կարգով:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի 09.04.2004 թվականի վճիռը գործող իրավակարգավորումների պայմաններում վերաքննության կարգով ենթակա էր բողոքարկման ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը 27.07.2020 թվականի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազության կողմից բերված վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ և գործն ըստ էության քննել է, մինչդեռ պետք է կիրառեր վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու լիազորությունը: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի 27.07.2020 թվականի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը վերադատության կարգով բողոքարկվել է գործն ըստ էության լուծող դատական ակտի շրջանակներում, այլ կերպ ասած հետաձգված բողոքարկման կառուցակարգի շրջանակներում: Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթը հարուցվել է և բողոքն ըստ էության քննվել է ոչ իրավաչափորեն, ուստի Վերաքննիչ դատարանի 16.10.2020 թվականի որոշումը ենթակա է բեկանման: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված դեպքում գործն անհրաժեշտ է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու լիազորությունը կիրառելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ, մասնավորապես՝ նկատի ունենալով վերաքննության վարույթի հարուցման ոչ իրավաչափ լինելը, Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում անդրադառնալ վերաքննիչ բողոքի ըստ էության քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի եզրահանգումների կապակցությամբ ներկայացված վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին և հիմնավորումներին:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանությամբ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են («Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ) գլխի կանոններին համապատասխան:

Սկստի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.10.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/9652/05/16
2021թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/9652/05/16
Նախագահող դատավոր՝ Ք. Մկրյան
Դատավորներ՝ Հ. Բեդկյան
Ա. Սարգսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող զեկուցող</i>	Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ Ս. ԱՆՏՈՆՅԱՆ Մ. ԴՐՄԵՅԱՆ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ
-------------------------------	--

2021 թվականի ապրիլի 22-ին դռնբաց դատական նիստում քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.11.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գարեգին Խաչատրյանի ընդդեմ Երևան համայնքի, երրորդ անձինք ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Դարյա Տուրիֆիի՝ վարչական ակտերը մասնակիորեն անվավեր ճանաչելու և հետևանքների վերացման պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Գարեգին Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 17.06.2014 թվականի թիվ 2314-Ա որոշման հավելվածի 59-րդ կետը և 11.07.2014 թվականի թիվ 2716-Ա որոշման թիվ 1 հավելվածը, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 15.07.2014 թվականին Դարյա Տուրիֆիի և Քաղաքապետարանի միջև կնքված թիվ 49/6-ԱԳ գույքի առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա Դարյա Տուրիֆիի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 23.06.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.11.2018 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.06.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքի առկայությունը պարզապես անհաստատել է նաև հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Գարեգին Խաչատրյանը քննարկվող տարածքների նկատմամբ որևէ օրինական իրավունք, այդ թվում՝ օգտագործման իրավունք, չի ունեցել, որը կսահմանափակեր տարածքի սեփականատեր Երևան համայնքի՝ գույքն օտարելու իրավունքը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Գարեգին Խաչատրյանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթն, ըստ էության, չի եզրափակվել, քանի որ հետագայում նրա կողմից չի ներկայացվել համապատասխանեցված նախագիծը, որի պայմաններում վարչական մարմինը հնարավորություն չի ունեցել անդրադառնալու հայցվող խնդրանքի օրինաչափ լինելու կամ չլինելու հարցին:

Վերաքննիչ դատարանը լիարժեք չի ուսումնասիրել գործի նյութերը, չի պարզել՝ արդյոք Գարեգին Խաչատրյանի կողմից Երևանի քաղաքապետին ուղղված խնդրանքն իրավաչափ է եղել, թե ոչ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.11.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Կենտրոնի թաղապետ Ա. Զուրաբյանը 24.11.1998 թվականին կայացրել է թիվ 23/312 որոշումը, որի 1-ին կետով որոշել է անհատ ձեռնարկատեր Գարեգին Խաչատրյանին հատկացնել Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի տակ գտնվող սյուների միջև 20քմ մակերեսով տարածքը: Նշված որոշման հիման վրա Երևանի Կենտրոնի թաղապետ Ա. Զուրաբյանը 10.12.1998 թվականին անհատ ձեռնարկատեր Գարեգին Խաչատրյանին տրամադրել է Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի տակ գտնվող 20քմ մակերեսով տարածքում առևտրի և սպասարկման սրահ կառուցելու համար շինարարական աշխատանքների կատարման թիվ 5 թույլտվությունը (**հատոր 2-րդ, գ.թ. 38, 39**).

2) 20.09.2004 թվականին Երևանի Կենտրոն համայնքի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 1-ին հարկի 14քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի նկատմամբ գրանցվել է Կենտրոն թաղապետարանի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 70, 71**).

3) Գարեգին Խաչատրյանը դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետին (դիմումը Քաղաքապետարանում ստացվել է 14.05.2013 թվականին), որով խնդրել է Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի տակ գտնվող օժանդակ կառույցը (շինության տարածքը) մասնավորեցնել իր անվամբ (**հատոր 1-ին, գ.թ. 119, 120**).

4) Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ Հ. Ասատրյանը 30.05.2013 թվականի թիվ 19/Խ-1295 գրությամբ Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասարյանին հայտնել է, որ Երևանի Նալբանդյան փողոցի թիվ

50 շենքի 27-րդ բնակարանի պատշգամբի տակ գտնվող միջայունային տարածքում կառուցված շինության լուծումները չեն համապատասխանում Գարեգին Խաչատրյանի 14.05.2013 թվականի դիմումին կից ներկայացված նախագծին, և առաջարկվել է կառուցապատողի կողմից ՀՀ կառավարության 08.05.2003 թվականի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» թիվ 626-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի համաձայն՝ մինչև սահմանված կարգով նախատեսված ընդունող հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումն ապահովել շինության նախագծային լուծումների համապատասխանեցումը հաստատված նախագծի պահանջներին (**հատոր 2-րդ, գ.թ. 84**).

5) ի պատասխան Գարեգին Խաչատրյանի 14.05.2013 թվականի վերը նշված դիմումի՝ Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասարյանը 12.06.2013 թվականի թիվ 18-06/1-Խ-1295 գրությամբ հայտնել է, որ համաձայն Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության 30.05.2013 թվականի թիվ 19/Խ-1295 գրության՝ Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի տակ գտնվող միջայունային տարածքում կառուցված շինությունն իրականացված է համաձայնեցված նախագծից շեղումներով. շինության նախագիծը փաստացի վիճակին համապատասխանեցնելու և ըստ սահմանված կարգի վերահամաձայնեցվելու պարագայում Քաղաքապետարանում հնարավոր կլինի կրկին անդրադառնալ հարցի քննարկմանը (**հատոր 2-րդ, գ.թ. 83**).

6) Գարեգին Խաչատրյանը դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետին (դիմումը Քաղաքապետարանում ստացվել է 18.06.2013 թվականին), որով խնդրել է վերահամաձայնեցնել Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի տակ գտնվող միջայունային տարածքի պարփակման փոփոխված նախագիծը, և երկարաձգել Կենտրոն թաղապետարանի կողմից 10.12.1998 թվականին տրամադրված թիվ 5 շինարարության թույլտվության ժամկետը (**հատոր 2-րդ, գ.թ. 86**).

7) Գարեգին Խաչատրյանի կողմից ներկայացված վերը նշված դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չի ընդունվել (**անվիճելի փաստ**).

8) Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը 17.06.2014 թվականին կայացրել է «Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու մասին» թիվ 2314-Ա որոշումը, որի 1-ին կետով աճուրդով օտարելու նպատակով առանձնացվել է նաև նույն որոշման թիվ 1 հավելվածի 59-րդ կետում նշված Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 14-րդ մակերեսով ոչ բնակելի տարածքը (**հատոր 1-ին, գ.թ. 55-58**).

9) Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը 11.07.2014 թվականին կայացրել է «Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի 2014 թվականի հուլիսի 3-ին կայացած աճուրդային վաճառքի հաղթողին գույք տրամադրելու և գույքի օտարման պայմանագիր կնքելու մասին» թիվ 2716-Ա որոշումը, որի 1-ին կետով 2014 թվականի հուլիսի 3-ին կայացած գույքի աճուրդային վաճառքի հաղթողին տրամադրել է նույն որոշման թիվ 1 հավելվածում նշված Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 14-րդ մակերեսով տարածքը (**հատոր 1-ին, գ.թ. 53, 54**).

10) 15.07.2014 թվականին Երևան համայնքը, ի դեմս Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանի (այսուհետ՝ Վաճառող) և Դարյա Տուրիֆին (այսուհետ՝ Գնորդ) կնքել են թիվ 49/6-ԱԳ գույքի առովաճառքի մասին պայմանագիրը, որի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Գնորդին որպես սեփականություն հանձնել սեփականության իրավունքով Վաճառողին պատկանող Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 14-րդ մակերեսով գույքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել 1.500.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 64, 65**).

11) Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը 02.08.2014 թվականին կայացրել է «Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին» թիվ 2995-Ա որոշումը, որի 1-ին կետով նույն որոշման հավելվածում նշված Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի

14քմ մակերեսով ոչ բնակելի տարածքին տրամադրել է Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 50 շենք, 192-րդ շինություն հասցեն (**հատոր 1-ին, գ.թ. 68, 69**).

12) 06.08.2014 թվականին Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 192-րդ շինության նկատմամբ Երևանի քաղաքապետի 11.07.2014 թվականի թիվ 2716-Ա, 02.08.2014 թվականի թիվ 2995-Ա որոշումների ու 31.07.2014 թվականի առուվաճառքի պայմանագրի հիման վրա գրանցվել է Դարյա Տուրիֆիի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 63**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբացումները և կզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու ֆիկցիայի գործողության համար անհրաժեշտ պայմանների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք բոլոր դեպքերում է վարչական ակտը համարվում ընդունված, եթե դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտն ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտն օրենքով սահմանված ժամկետում չի ընդունվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից:

Մինչև 02.12.2017 թվականը գործող խմբագրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը նախատեսում է օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու իրավական հնարավորություն: Այսինքն՝ վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտը նշված իրավադրույթի ուժով որոշ դեպքերում կարող է համարվել ընդունված և առաջացնել այդ վարչական ակտին բնորոշ բոլոր իրավաբանական հետևանքները: Տվյալ դեպքում դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտի ընդունման օրենքով սահմանված ժամկետը խախտվելու դեպքում գործում է այն ֆիկցիան, որ պահանջվող բարենպաստ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է օգտվել դիմում ներկայացնելիս իր ակնկալած իրավունքից, որը տրամադրման էր ենթակա ընդունվելիք վարչական ակտով: Քննարկվող իրավաբանական ֆիկցիայի նպատակն է ապահովել վարչարարության իրականացումը ողջամիտ ժամկետում, բարձրացնել վարչական մարմինների պատասխանատվությունը և բացառել այնպիսի դեպքերը, երբ իրավասու վարչական մարմինը, խախտելով օրենքով իր վրա դրված պարտականությունները, սահմանված

ժամկետում չի քննարկում անձի դիմումը և դրա վերաբերյալ որևէ վարչական ակտ չի ընդունում:

Մինևոյն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու ֆիկցիայի գործողությունը կապված է որոշակի պայմանների առկայության հետ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով մինչև 02.12.2017 թվականը գործող խմբագրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի մեկնաբանությանը, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ տվյալ դրույթը չի կարող մեկնաբանվել որպես հայցվող ցանկացած ակտի ընդունված լինելը հաստատող նորմ: Հայցվող վարչական ակտը, ինչպես նաև հայցվող իրավունքը պետք է հիմնված լինեն օրենքի վրա, չխախտեն այնոց իրավունքները և ազատությունները: Հետևաբար, նշված նորմի բովանդակության մաս պետք է կազմի նաև հայցվող վարչական ակտի իրավաչափությունը, որի առկայությունը հաստատվելուց հետո միայն հնարավոր կլինի փաստել վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը (*լրեն Սերգեյ Գասպարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/5557/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով իր այդ դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ մինչև 02.12.2017 թվականը գործող խմբագրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետով սահմանված իրավական նորմը չի ենթադրում վարչական մարմնի կողմից վարչարարություն չիրականացնելու դեպքում վարչարարությունն իրականացված լինելու և պահանջվող վարչական ակտն ընդունված լինելու կանխավարկածի առկայություն: Յուրաքանչյուր գործով մինչև 02.12.2017 թվականը գործող խմբագրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի կիրառման հարցը քննարկելիս դատարանները պետք է հաշվի առնեն ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները և վարչական վարույթի առանձնահատկությունները: Վարչարարության որոշակի տեսակների դեպքում իրավունքի գոյության հարցն ուղղակիորեն կապված է վարչարարության իրականացման հետ, որի արդյունքում է միայն հնարավոր որոշել հայցվող վարչական ակտի իրավաչափությունը (*լրեն Փառսնձեմ Գևորգյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԳ/2731/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, իրացնելով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու, իրավունքի զարգացմանը նպաստելու իրեն վերապահված գործառնությունները, անհրաժեշտ է համարում վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից Սերգեյ Գասպարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/5557/05/08 վարչական գործով 17.04.2009 թվականի որոշմամբ արտահայտված և հետագա որոշումներով վերահաստատված իրավական դիրքորոշումը՝ օրենքի ուժով վարչական ակտի ընդունված համարվելու իրավական կառուցակարգի գործողության համար անհրաժեշտ պայմանների վերաբերյալ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ նախագահի 30.06.2012 թվականի թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագրով վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների շարքում ներառվել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով ընդունված վարչական ակտերով տրամադրվող իրավունքների իրացման գործնականում ապահովումը (5.4-րդ կետ): Մասնավորապես՝ այդ ծրագրի 5.4.1-րդ կետով արձանագրվել է, որ «(...) գործնականում առկա է ընդունված համարվող վարչական ակտերով մասնավոր անձին տրամադրված իրավունքի իրացման խնդիր: Մասնավոր անձը գործնականում ոչ միշտ է օգտվում այդ իրավունքից: Դատական մի շարք

ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դատական պրակտիկայում նման վարչական ակտերին երբեմն ներկայացվում են պահանջներ, որոնք սահմանված չեն օրենքով, օրինակ, մինչև վարչական ակտով արացված իրավունքից օգտվելը այդ ակտի իրավաչափության հաստատումը: Օրենքով սահմանված չէ այնպիսի ընթացակարգ, որով անհրաժեշտ է հաստատել 48-րդ հոդվածով արացված վարչական ակտի իրավաչափությունը: Ուարի պետք է կարարվի համապարասիան ուսումնասիրություն՝ նշված ինարխրուրն այնպես կարգավորելու համար, որ մի կողմից չհայթարվի 48-րդ հոդվածում անրագրված այս կարևոր ինարխրուրի բուն էությունը, մյուս կողմից պաշարպանալի հասարակական շահը»:

ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով վերը նշված կարգադրությունը, ՀՀ Ազգային ժողով է ներկայացրել ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով առաջարկել է փոփոխություն կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նաև 48-րդ հոդվածում՝ նաև դրա 1-ին և 2-րդ մասերը շարադրելով հետևյալ խմբագրությամբ՝

«1. Եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, վարչական ակտը համարվում է ընդունված և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դրանով ակտի հասցեատիրոջը տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք»:

Մինչև 07.04.2018 թվականը գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նախագիծն իրավաստեղծ մարմին քննարկման ներկայացնելիս նախագիծ մշակող մարմինը դրան կցում է իրավական ակտի ընդունման հիմնավորումը (...):

ՀՀ կառավարությունը, ի կատարումն օրենքի նշված պահանջի, ՀՀ Ազգային ժողով է ներկայացրել նաև այդ իրավական ակտի ընդունման հիմնավորումը՝ դրանում նշելով նաև, որ ««Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի ներկայիս կարգավորմամբ՝ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը: Նշված նորմի հիմնական նպատակն է վարչական վարույթի շրջանակներում բարձրացնել վարչական մարմինների պատասխանատվությունը: Այս դրույթի կիրառումը կարող է կանխել կամ նվազեցնել այն դեպքերը, երբ մասնավոր անձինք դիմում են իրավասու վարչական մարմնին՝ բարենպաստ վարչական ակտ ստանալու ակնկալիքով, իսկ վարչական մարմինը սահմանված ժամկետում որևէ կերպ չի արձագանքում դիմումին: Սակայն գործնականում առկա է ընդունված համարվող վարչական ակտերով մասնավոր անձին տրամադրված իրավունքի իրացման խնդիր: Մասնավոր անձը գործնականում ոչ միշտ է օգտվում այդ իրավունքից: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ նման վարչական ակտերին երբեմն ներկայացվում են պահանջներ, որոնք սահմանված չեն օրենքով, օրինակ, մինչև վարչական ակտով ստացված իրավունքից օգտվելը այդ ակտի իրավաչափության հաստատումը: Ուստի՝ անհրաժեշտ է հստակեցնել Օրենքի 48-րդ հոդվածը՝ ապահովելով այդ հոդվածի գործնական կիրառելիությունը: Մասնավորապես պետք է կարգավորվեն այն դեպքերը և դրանից բխող հետևանքները, երբ օրենքով սահմանված ժամկետում դիմումով հայցվող վարչական ակտն այն ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից չի ընդունվում: Անհրաժեշտ է սահմանել, որ այդ դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը: Սակայն անգամ այդ դեպքում վարչական

ակտը չի կարող համարվել ընդունված, եթե դրանով ակտի հասցեատիրոջը տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք կամ ներկայացված դիմումը չի համապատասխանում օրենքով սահմանված որոշակի պահանջների: Դիմումը պետք է պարունակի դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը, դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկա) և դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են): (...) Նշված փոփոխությունների անհրաժեշտությունը անմիջականորեն բխում է ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 20-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի 5.2-րդ և 5.4-րդ և միջոցառումների ցանկի 3.2-րդ և 3.4-րդ կետերից»:

Դրանից հետո ՀՀ Ազգային ժողովը 25.10.2017 թվականին ընդունել է ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-193-Ն օրենքը, որի 2-րդ հոդվածով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել է հետևյալ խմբագրությամբ՝

«1. Եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առ չչինչ է»:

Նշված օրենքն ուժի մեջ է մտել 02.12.2017 թվականին:

Հաշվի առնելով ՀՀ Նախագահի վերը նշված կարգադրությունը, օրենքի նախագծի վերը նշված հիմնավորումը և դրանց հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում կատարված վերը նշված փոփոխությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը ի դեմս իր օրենսդրելի մարմնի, հիմք ընդունելով ՀՀ Նախագահի 30.06.2012 թվականի թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագրի 5.4-րդ և 5.4.1-րդ կետերը, ու դրանց հիման վրա նախաձեռնված օրենսդրական փոփոխությունների հիմնավորումը, օրենքի ուժով վարչական ակտի ընդունված համարվելու իրավական կառուցակարգի առումով որդեգրել է այն քաղաքականությունը, որով այդ կառուցակարգի գործողությունը տարածել է բոլոր այն դեպքերի վրա, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում իրավասու վարչական մարմինն օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում: Նշված կանոնից բացառություն է սահմանված միայն այն դեպքի համար, երբ հայցվող վարչական ակտը բլինի առ չչինչ ակտով դրա հասցեատիրոջը ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրվելու հիմքով: Կատարված օրենսդրական փոփոխությունները վկայում են այն մասին, որ օրենսդրի կամքն ուղղված է վարչական մարմիններին առավել խիստ պահանջներ ներկայացնելուն: Դրանց ուժով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված իրավաբանական ֆիկցիայի գործողությունը պայմանավորված չէ հայցվող վարչական ակտի իրավաչափությամբ, և նույնիսկ ոչ իրավաչափ վարչական ակտը, նշված իրավադրույթի համաձայն, կարող է համարվել ընդունված, բացառությամբ՝ եթե այդ ակտով դրա հասցեատիրոջը տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվող վարչական ակտի իրավաչափությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի

մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված իրավաբանական ֆիլցիայի գործողության պայմանն է: Նշվածից բացառություն է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված վարչական ակտի առոչնչության հիմքի առկայությունը, այն է՝ ակտով դրա հասցեատիրոջը տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Այսինքն՝ օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու ֆիլցիայի գործողությունը պարզելիս դատական վերահսկողությունը սահմանափակվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված վարչական ակտի առոչնչության հիմքի առկայությունը (բացակայությունը) գնահատելով: Ինչ վերաբերում է հայցվող վարչական ակտի հնարավոր անվավերության հիմքերին, ինչպես նաև հնարավոր առոչնչության մյուս հիմքերին, ապա քննարկվող իրավաբանական ֆիլցիայի գործողությունը պարզելիս դրանց առկայությունը (բացակայությունը) պետք է ենթակա չլինի դատարանի կողմից գնահատման:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե ինչ պահանջների պետք է համապատասխանի վարչական մարմնին ներկայացվող դիմումը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մինչև 02.12.2017 թվականը գործող խմբագրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածն ուղղակիորեն չէր սահմանում, որ ֆիլցիայի գործողության համար անհրաժեշտ է, որ վարչական մարմնին ներկայացվող դիմումը համապատասխանի որոշակի պահանջների: Ի տարբերություն այդ կարգավորման՝ ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 25.10.2017 թվականի ՀՕ-193-Ն օրենքով նախատեսվել է, որ քննարկվող իրավաբանական ֆիլցիան գործում է, եթե վարչական մարմնին ներկայացվող դիմումը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջներին: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 25.10.2017 թվականի ՀՕ-193-Ն օրենքը ոչ թե ֆիլցիայի գործողության համար լրացուցիչ պայման (դիմումի համապատասխանությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջներին) է առաջադրել, այլ ընդամենն այդ մասով հստակեցրել է նախկինում գործող կարգավորումը: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է դիմումին ներկայացվող վերը նշված պահանջների բնույթով: Մասնավորապես՝ այդ դրույթների համաձայն՝ դիմումը պետք է պարունակի դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը, դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկա), դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են): Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված պահանջների բնույթով պայմանավորված՝ դրանց չբավարարող դիմումի ներկայացումն ինքնին բացառում է սահմանված ժամկետում վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու ֆիլցիայի գործողությունը: Հետևաբար անկախ այն հանգամանքից, որ մինչև 02.12.2017 թվականը գործող օրենսդրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջներին դիմումի համապատասխանությունն ուղղակիորեն սահմանված չէր որպես քննարկվող իրավաբանական ֆիլցիայի գործողության պայման, դրա առկայությունն ինքնին ենթադրվում էր:

Ամփոփելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 25.10.2017 թվականի ՀՕ-193-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց (02.12.2017 թվական) հետո, այնպես էլ մինչև նշված փոփոխություններն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական

վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքի ուժով վարչական ակտի ընդունված համարվելու իրավական կառուցակարգը գործում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

անձը դիմել է վարչական մարմնին՝ հայցելով որոշակի բարենպաստ վարչական ակտի ընդունում, այսինքն՝ վարչական վարույթը հարուցվել է անձի դիմումի հիման վրա, և դիմումը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջներին,

բացակայում է վարչական ակտի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված առոչնչության հիմքը,

տվյալ վարչական ակտի ընդունման ուղղված վարչական վարույթն իրականացնող վարչական մարմնին օժտված է այդ վարչական ակտն ընդունելու իրավասությամբ,

վարչական վարույթն իրականացնող վարչական մարմնին օրենքով սահմանված ժամկետում ցուցաբերել է անգործություն՝ չի ընդունել հայցվող բարենպաստ վարչական ակտը կամ չի կայացրել անձի դիմումը մերժելու մասին որոշում կամ վարչական վարույթը եզրափակող օրենքով նախատեսված որևէ այլ անհատական իրավական ակտ:

Վճուրակ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարագրում.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գարեգին Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 17.06.2014 թվականի թիվ 2314-Ա որոշման հավելվածի 59-րդ կետը և 11.07.2014 թվականի թիվ 2716-Ա որոշման թիվ 1 հավելվածը, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 15.07.2014 թվականին Դարյա Տուրիֆիի և Քաղաքապետարանի միջև կնքված թիվ 49/6-ԱԳ գույքի առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա Դարյա Տուրիֆիի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանը 23.06.2017 թվականին վճիռ է կայացրել հայցը բավարարելու մասին՝ պատճառաբանելով, որ «*հայցվորը 14.05.2013 թվականին դիմել է Երևանի քաղաքապետարանի ք.Երևան, Նալբանդյան 50, 27 բնակարանի պարտքավերականգնման (իրեն օտարելու) ինդունքով: Ի պարտահան՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետը հայցվորին հասցեագրված 12.06.2013 թվականի գրությամբ հայտնել է, որ խնդրո առարկա շինությունն իրականացված է համաձայնեցված նախագծի շեղումներով: Շինության նախագիծը փաստացի վիճակին համապատասխանեցնելու և ըստ սահմանված կարգի վերահամաձայնեցնելու պարագայում Երևանի քաղաքապետարանում կշարունակվի հարցի քննարկումը: Հայցվորը, ի կատարումն նշված պահանջի, Երևանի քաղաքապետարան է ներկայացրել շինության նոր նախագիծ՝ համապատասխանեցված շինության փաստացի վիճակին...»:* «(...) գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունը վկայում է, որ առ այսօր Երևանի քաղաքապետարի կողմից հայցվորի 14.05.2013 թվականի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը եզրափակող վարչական ակտ ընդունված չէ (այդ փաստն ընդունում է նաև պարտահանտողը): Նման պայմաններում վրա են հասել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված՝ օրենքով սահմանված ժամկետում հայցվող բարենպաստ վարչական ակտը չընդունելու իրավական հետևանքները, այն է՝ հայցվորի կողմից հայցված վարչական ակտը համարվել է ընդունված: Ընդ որում, եթե նույնիսկ ի պարտահան հայցվորի դիմումի ընդունված համարվող վարչական ակտը ոչ իրավաչափ վարչական ակտ է, ապա այս դեպքում անգամ այն պաշտպանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ վարչական ակտին վարահեղու՝ ակտի հասցեատիրոջ իրավունքով», «Ֆիլցիայի ուժով ընդունվել և գործել է հայցվորի կողմից Երևանի քաղաքապետից հայցված վարչական ակտը, որպիսի պայմաններում Երևանի քաղաքապետն այլևս իրավասու չէր ընտրել խնդրո առարկա շինությունն աճուրդի միջոցով օտարելու եղանակը՝ կայացնելով վիճարկվող վարչական ակտերը»:

Վերաքննիչ դատարանը Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ «*տրվյալ դեպքում Գարեգին Խաչատրյանի կողմից 18.06.2013 թվականին Երևանի քաղաքապետին է ուղղվել դիմում, որի կապակցությամբ վարչական մարմինը պետք է կայացներ համապատասխան որոշում, մինչդեռ, հայցվորի այդ դիմումին վարչական մարմնի կողմից ընթացք չի տրվել, որպիսի պարագայում (...) գործել է այն ֆիկցիան, որ պահանջվող բարենպաստ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է օգտվել դիմում ներկայացնելիս իր ակնկալած իրավունքից, որը տրամադրման էր ենթակա ընդունվելիք վարչական ակտով*», «*ընդ որում, համապատասխան վարչական ակտի իրավաչափության արուգումը սույն վարչական գործի ընտրության առարկա չի հանդիսանում*»:

Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ «*այն պայմաններում, երբ գործել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նահապետաված չընդունված վարչական ակտն ընդունված համարվելու ֆիկցիան, վարչական մարմինն այլևս իրավասու չէր 17.06.2014 թվականին կայացնել «Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու մասին» թիվ 2314 որոշումը, որի հավելված թիվ 1-ով հասարակված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու, օտարման աճուրդը և միջոյթը կազմակերպող ու անցկացնող հանձնաժողովի կողմից օտարման աճուրդի ներկայացված գույքի ցանկի 59-րդ կետով որպես աճուրդով օտարվող գույք է ճանաչվել Նալբանդյան 50 հասցեում գրնվող 14քմ ոչ բնակելի տարածքը*»:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ «*Դատարանի պարճառարանություններն անհիմն են այն մասով, որ Դատարանը կայացված վճռով հասարակված փաստական հանգամանքներում և վճռի պարճառարանական մասում նման եզրահանգման է եկել կապված հայցվորի կողմից վարչական մարմնին ներկայացված 14.05.2013 թվականի դիմումի հետ: Վերաքննիչ դատարանը այդ կապակցությամբ հարկ է համարում նշել, որ սույն վարչական գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվորեն հեղազույրելով գործում առկա ապացույցները, պարզ է դառնում, որ Գարեգին Խաչատրյանի 14.05.2013 թվականի դիմումին վարչական մարմինը պարասխանել է 12.06.2013 թվականի թիվ 18-06/1-Խ-1295 գրությանը: Մինչդեռ այդ գրությանը մարնանշված թերությունները շրկելուց հետո Գարեգին Խաչատրյանի կողմից 18.06.2013 թվականին Երևանի քաղաքապետին ուղղված դիմումին վերջինիս կողմից որևէ պարասխան չի տրվել: Հերևաքար սույն վարչական գործով իտաքը վերաքերում է ոչ թե Գարեգին Խաչատրյանի 14.05.2013 թվականի դիմումին չպարասխանելուն, այլ 18.06.2013 թվականի դիմումին*»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի հիմնավորումներին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Գարեգին Խաչատրյանը դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետին, որը Քաղաքապետարանում ստացվել է 18.06.2013 թվականին: Նշված դիմումով Գարեգին Խաչատրյանը խնդրել է վերահամաճայնեցնել Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի տակ գտնվող միջայունային տարածքի պարփակման փոփոխված նախագիծը, երկարաճգել Կենտրոն թաղապետարանի կողմից 10.12.1998 թվականին տրամադրված թիվ 5 շինարարության թույլտվության ժամկետը: Նշված դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չի ընդունվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված իրավաբանական ֆիկցիայի գործողության վերաբերյալ հետևության է եկել միայն այն հիմքով, որ Գարեգին Խաչատրյանի կողմից 18.06.2013 թվականին Երևանի քաղաքապետին ուղղված համապատասխան դիմումի վերաբերյալ վարչական մարմնի կողմից օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չի ընդունվել: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը վարչական մարմնի կողմից անգործություն դրսևորելը դիտել է բավարար պահանջվող բարենպաստ վարչական ակտը ֆիկցիայի ուժով ընդունված համարելու

համար՝ նշելով, որ համապատասխան վարչական ակտի իրավաչափության ստուգումը չի ներառվում սույն վարչական գործի քննության շրջանակներում:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված իրավաբանական ֆիլցիայի գործողության համար, ինչպես արդեն իսկ վերը նշվեց, անհրաժեշտ պայման է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված առոչնչության հիմքի բացակայությունը: Տվյալ դեպքում վերը նշված դիրքորոշումների համատեքստում սույն գործով ենթակա էր պարզման ու հաստատման նաև հետևյալ հանգամանքը՝ արդյո՞ք Գարեգին Խաչատրյանի կողմից ներկայացված դիմումով հայցվող վարչական ակտով դրա հասցեատիրոջը չի տրամադրվում ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Նշված հանգամանքը պարզվելուց հետո միայն հնարավոր կլիներ փաստել վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը, ինչն իր հերթին, կախված հայցվող վարչական ակտի բովանդակությունից և դրանով տրամադրվող իրավունքի էությունից, կարող էր էական նշանակություն ունենալ սույն գործով վիճարկվող վարչական ակտերի իրավաչափությունը գնահատելիս:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Մինևսյն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու անհրաժեշտության մասին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոգրյալ հարցերը պարզելու նպատակով սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

5. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.11.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/9652/05/16 վարչական գործով 22.04.2021 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

22.04.2021 թվական

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան), գրավոր ընթացակարգով քննելով Երևանի քաղաքապետարանի վճարելի բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.11.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գարեգին Խաչատրյանի ընդդեմ Երևան համայնքի, երրորդ անձինք ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Դարյա Տուրիֆիի՝ վարչական ակտերը մասնակիորեն անվավեր ճանաչելու և հետևանքների վերացման պահանջների մասին, որոշել է. « Վճարելի բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.11.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության»:

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորներ Ս. Անտոնյանս, Տ. Պետրոսյանս, Էդ. Սեդրակյանս համաձայն չլինելով ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 22.04.2021 թվականին թիվ ՎԴ/9652/05/16 վարչական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում կատարված եզրահանգումների հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Գարեգին Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 17.06.2014 թվականի թիվ 2314-Ա որոշման հավելվածի 59-րդ կետը և 11.07.2014 թվականի թիվ 2716-Ա որոշման թիվ 1 հավելվածը, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 15.07.2014 թվականին Դարյա Տուրիֆիի և Քաղաքապետարանի միջև կնքված թիվ 49/6-ԱԳ գույքի առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա Դարյա Տուրիֆիի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 23.06.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.11.2018 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.06.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճարելի բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարելի դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Սույն վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Գարեգին Խաչատրյանը քննարկվող փարածքների նկարմամբ որևէ օրինական իրավունք, այդ թվում՝ օգրագործման իրավունք, չի ունեցել, որը կսահմանափակեր փարածքի սեփականատեր Երևան համայնքի գույքն օտարելու իրավունքը:

Վերաքննիչ դատարանն անարեւել է նաև, որ Գարեգին Խաչատրյանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը, ըստ էության, չի եզրափակվել, քանի որ հետագայում նրա կողմից չի ներկայացվել համապարասխանեցված նախագիծը, որի պայմաններում վարչական մարմինը հնարավորություն չի ունեցել անդրադառնալու հայցվող խնդրանքի օրինաչափ լինելու կամ չլինելու հարցին:

Վերաքննիչ դատարանը լիարժեք չի ուսումնասիրել գործի նյութերը, չի պարզել արդյոք Գարեգին Խաչատրյանի կողմից Երևանի քաղաքապետին ուղղված խնդրանքն իրավաչափ է եղել, թե ոչ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.11.2018 թվականի որոշումը և փոփոխել այն հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Կենտրոնի թաղապետ Ա. Զուրաբյանը 24.11.1998 թվականին կայացրել է թիվ 23/312 որոշումը, որի 1-ին կետով որոշել է անհատ ձեռնարկատեր Գարեգին Խաչատրյանին հատկացնել Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի տակ գտնվող պլաների միջև 20քմ մակերեսով տարածքը: Նշված որոշման հիման վրա Երևանի Կենտրոնի թաղապետ Ա. Զուրաբյանը 10.12.1998 թվականին անհատ ձեռնարկատեր Գարեգին Խաչատրյանին տրամադրել է Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի տակ գտնվող 20քմ մակերեսով տարածքում առևտրի և սպասարկման սրահ կառուցելու համար շինարարական աշխատանքների կատարման թիվ 5 թույլտվությունը (**հատոր 2-րդ, գ.թ. 38, 39**).

2) 20.09.2004 թվականին Երևանի Կենտրոն համայնքի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 1-ին հարկի 14քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի նկատմամբ գրանցվել է Կենտրոն թաղապետարանի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 70, 71**).

3) Գարեգին Խաչատրյանը դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետին (դիմումը Քաղաքապետարանում ստացվել է 14.05.2013 թվականին), որով խնդրել է Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի տակ գտնվող օժանդակ կառույցը (շինության տարածքը) մասնավորեցնել իր անվամբ (**հատոր 1-ին, գ.թ. 119, 120**).

4) Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ Հ. Ասատրյանը 30.05.2013 թվականի թիվ 19/Խ-1295 գրությամբ Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասաբյանին հայտնել է, որ Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի պատշգամբի տակ գտնվող միջպլանային տարածքում կառուցված շինության լուծումները չեն համապատասխանում Գարեգին Խաչատրյանի 14.05.2013 թվականի դիմումին կից ներկայացված նախագծին, և առաջարկվել է կառուցապատողի կողմից ՀՀ կառավարության 08.05.2003 թվականի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» թիվ 626-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի համաձայն՝ մինչև սահմանված կարգով նախատեսված ընդունող հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումն ապահովել շինության նախագծային լուծումների համապատասխանեցումը հաստատված նախագծի պահանջներին (**հատոր 2-րդ, գ.թ. 84**).

5) ի պատասխան Գարեգին Խաչատրյանի 14.05.2013 թվականի վերը նշված դիմումի՝ Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասաբյանը 12.06.2013 թվականի թիվ 18-06/1-Խ-1295 գրությամբ հայտնել է, որ համաձայն Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության 30.05.2013 թվականի թիվ 19/Խ-1295 գրության՝ Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի պատշգամբի տակ գտնվող

միջայունային տարածքում կառուցված շինությունն իրականացված է համաձայնեցված նախագծի շեղումներով. շինության նախագիծը փաստացի վիճակին համապատասխանեցնելու և ըստ սահմանված կարգի վերահամաձայնեցվելու պարագայում Քաղաքապետարանում հնարավոր կլինի կրկին անդրադառնալ հարցի քննարկմանը **(հատոր 2-րդ, գ.թ. 83)**.

6) Գարեգին Խաչատրյանը դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետին (դիմումը Քաղաքապետարանում ստացվել է 18.06.2013 թվականին), որով խնդրել է վերահամաձայնեցնել Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 27-րդ բնակարանի տակ գտնվող միջայունային տարածքի պարփակման փոփոխված նախագիծը, և երկարաձգել Կենտրոն թաղապետարանի կողմից 10.12.1998 թվականին տրամադրված թիվ 5 շինարարության թույլտվության ժամկետը **(հատոր 2-րդ, գ.թ. 86)**.

7) վերը նշված դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չի ընդունվել **(անվիճելի փաստ)**.

8) Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը 17.06.2014 թվականին կայացրել է «Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով օտարելու մասին» թիվ 2314-Ա որոշումը, որի 1-ին կետով աճուրդով օտարելու նպատակով առանձնացվել է նաև նույն որոշման թիվ 1 հավելվածի 59-րդ կետում նշված Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 14-րդ մակերեսով ոչ բնակելի տարածքը **(հատոր 1-ին, գ.թ. 55-58)**.

9) Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը 11.07.2014 թվականին կայացրել է «Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի 2014 թվականի հուլիսի 3-ին կայացած աճուրդային վաճառքի հաղթողին գույք տրամադրելու և գույքի օտարման պայմանագիր կնքելու մասին» թիվ 2716-Ա որոշումը, որի 1-ին կետով 2014 թվականի հուլիսի 3-ին կայացած գույքի աճուրդային վաճառքի հաղթողին տրամադրել է նույն որոշման թիվ 1 հավելվածում նշված Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 14-րդ մակերեսով տարածքը **(հատոր 1-ին, գ.թ. 53, 54)**.

10) 15.07.2014 թվականին Երևան համայնքը, ի դեմս Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանի (այսուհետ՝ Վաճառող) և Դարյա Տուրիֆին (այսուհետ՝ Գնորդ) կնքել են թիվ 49/6-ԱԳ գույքի առուվաճառքի մասին պայմանագիրը, որի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Գնորդին որպես սեփականություն հանձնել սեփականության իրավունքով Վաճառողին պատկանող Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 14-րդ մակերեսով գույքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել 1.500.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 64, 65)**.

11) Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը 02.08.2014 թվականին կայացրել է «Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին» թիվ 2995-Ա որոշումը, որի 1-ին կետով նույն որոշման հավելվածում նշված Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 14-րդ մակերեսով ոչ բնակելի տարածքին տրամադրել է Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 50 շենք, 192-րդ շինություն հասցեն **(հատոր 1-ին, գ.թ. 68, 69)**.

12) 06.08.2014 թվականին Երևանի Նալբանդյան փողոցի թիվ 50 շենքի 192-րդ շինության նկատմամբ Երևանի քաղաքապետի 11.07.2014 թվականի թիվ 2716-Ա, 02.08.2014 թվականի թիվ 2995-Ա որոշումների ու 31.07.2014 թվականի առուվաճառքի պայմանագրի հիման վրա գրանցվել է Դարյա Տուրիֆինի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 63)**:

4. Հարուկ կարծիքի պարզաբարոյությունները և եզրահանգումը

Բանը նրանում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը նախատեսում է վարչական վարույթի ժամկետում վարչական ակտ չընդունելու հետևանքներ երկու խումբ ղեկավարի համար:

Մինչև 02.12.2017 թվականը գործող խմբագրությանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտը ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի

կողմից այդ ակտը չընդունելու դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 25.10.2017 թվականին ընդունված ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-193-Ն օրենքի 2-րդ հոդվածով փոփոխություն է կատարվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածում՝ մասնավորապես դրա 1-ին և 2-րդ մասերը շարադրելով հետևյալ խմբագրությամբ՝

«1. Եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, վարչական ակտը համարվում է ընդունված և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասին «դ» կետի համաձայն առ ոչինչ է»:

Այսինքն՝ դիմողի կողմից համապատասխան իրավունքի իրականացմանը ձեռնամուխ լինելու համար անհրաժեշտ է, որ վարչական ակտն ընդունելու լիազորություն ունեցող վարչական մարմին ներկայացվի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ վարչական վարույթ հարուցելու մասին դիմում և դրա արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմնի կողմից որոշում չկայացվի: Դրա հետ մեկտեղ օրենսդիրը սահմանել է, որ հայցվող վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առոչինչ է, այսինքն՝ ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն կամ նրան տրամադրվել է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ֆիկցիայի մյուս խումբը վերաբերում է որոշակի փաստ հաստատելու կամ արձանագրելու վերաբերյալ վարչական ակտի չընդունման դեպքին, որով սահմանված իրավունքներն անձինք կարող են հավաստել սահմանված ձևի փաստաթղթով, երբ փաստաթուղթը չստացած անձն ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականություններից, որոնք օրենքով սահմանված են այդ փաստաթուղթը չունենալու համար:

Այս դեպքի համար օրենսդիրը վարչական մարմնի համար սահմանել է այդ փաստաթուղթն իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա դիմող անձին վարչական ակտն ընդունելու ժամկետը լրանալուց հետո ոչ ուշ, քան յոթնօրյա ժամկետում տրամադրելու պարտականություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել նաև օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:

Գտնում ենք, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումներով այսօրվա վերաբերյալ վարչական ակտն ընդունված լինելու դեպքում, երբ դիմողը ձեռնամուխ է լինում համապատասխան իրավունքի իրականացմանը, այդ իրավունքը չպետք է առնչվի երրորդ անձանց օրենքով և այլ իրավական ակտերով պաշտպանվող իրավունքներին և ազատություններին:

Հետևաբար, մինչև երրորդ անձանց վերաբերյալ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելը՝ ֆիկցիայի ուժով համապատասխան իրավունք ունենալու հիմքով, ֆիկցիայի ուժով որոշակի իրավունքի առկայությամբ հավակնող անձի մոտ այդպիսի իրավունքի առկայությունը կարող է հիմնավորված լինել բացառապես ՀՀ

վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողության կատարման հայցատեսակով ներկայացված և բավարարված հայցով: Հակառակ կանխավարկածի դեպքում երրորդ անձինք գրկվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված նախապայմանների առկայությունը ստուգելու և պարզելու հնարավորությունից:

Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ ֆիլցիայի ուժով անձին տրամադրված իրավունքն առնչվելու է այլ անձանց իրավունքներին և օրինական շահերին, ինչպես նաև այն դեպքերում, երբ այդ իրավունքը ենթակա է պետական գրանցման, նման իրավունք վերապահող վարչական ակտը պետք է ակտի հասցեատիրոջը տրամադրված լինի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված: Այն է. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ «գործողության կատարման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը, ինչպես նաև կարող է պահանջել օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:

Նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝ գործողության կատարման հայցի դեպքում՝

ա. մեկամյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից գործողության կատարումը մերժելու մասին իրազեկվելու պահից,

բ. երկամյա ժամկետում այն պահից, երբ լրացել է հայցվող գործողության կատարման համար սահմանված ժամկետը,

գ. եռամյա ժամկետում այն պահից, երբ դիմում է ներկայացվել հայցվող գործողությունը կատարելու համար, եթե առկա չեն սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված դեպքերը:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ անձը, դատական պաշտպանության սահմանադրական իրավունքն իրացնելիս պետք է առաջնորդվի տվյալ դատական պաշտպանության ձևի համար օրենսդրությամբ նախատեսված կանոններով, մասնավորապես՝ ղեկավարվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հայց հարուցելու կարգավորումներով: Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սպառիչ ցանկով ամրագրված են այն բոլոր հայցատեսակները, որոնց հիման վրա կարող են հարուցվել վարչական գործեր, ավելին՝ ըստ տեսակների հայցերի տարբերակումը կանխորոշվում է հայցվորի հայցադիմումով ներկայացվող պահանջով: Որպես օրինակ, վիճարկման հայցի առարկա կարող է հանդիսանալ բացառապես միջամտող վարչական ակտը (նեոարյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները), ընդ որում՝ վիճարկման հայցի դեպքում սահմանված է հայցը Դատարան ներկայացնելու համար երկամյա ժամկետ, որը սկսում է հոսել վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

Այսպիսով, իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում անձը կարող է օգտվել դատական պաշտպանության իրավունքից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հայցատեսակի շրջանակներում՝ ներկայացնելով օրենքով սահմանված ժամկետում դրա էությունից և բովանդակությունից ծագող հայցապահանջ:

Սույն դեպքում հայցվորը ներկայացնելով վիճարկման հայց, խնդրել է վերացնել Երևանի քաղաքապետի 17.06.2014 թվականի թիվ 2314-Ա որոշումը մասնակիորեն՝ հավելվածի 59-րդ կետի մասով, և 11.07.2014 թվականի թիվ 2716-Ա որոշման թիվ 1 հավելվածը: Ստորադաս դատարանները հաշվի չառնելով այն հանգամանքը, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի հիմքով իրավաբանական ֆիլցիայի ինստիտուտը դատական կարգով իրացնելու համար անհրաժեշտ է ներկայացնել նախևառաջ գործողության կատարման հայց, սույն պարագայում վիճարկման հայցի բավարարման հիմքում դրել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ հայցվորի պահանջը ենթակա էր մերժման, քանի որ վիճելի տարածքի վերաբերյալ համապատասխան վարչական ակտի և օտարման գործարքի պայմաններում հայցվոր կողմի հավակնությունը ֆիկցիայի ուժով բարենպաստ վարչական ակտի ընդունման վերաբերյալ, իրավաչափ չէ:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ բողոքը ենթակա էր բավարարման, դատական ակտը պետք է բեկանվեր և հայցը մերժվեր:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Անտոնյան
Տ. Պետրոսյան
Է. Սեդրակյան

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/2778/05/16
2021թ.

Վարչական գործ թիվ

ՎԳ/2778/05/16

Նախագահող դատավոր՝

Կ. Բաղդասարյան

Դատավորներ՝

Կ. Մաթևոսյան

Կ. Ավետիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 27-ին

գրավոր ընթացակարգով քննելով Արարատ Բարսեղյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.07.2019 թվականի որոշման դեմ, ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ընդդեմ Արարատ Բարսեղյանի՝ 2.108.375 դրամ գումարի բռնագանձման պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Իմնելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Արարատ Բարսեղյանից բռնագանձել 2.108.375 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Թովմասյան) (այսուհետ՝ Դատարան) 10.05.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.07.2019 թվականի որոշմամբ Արարատ Բարսեղյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.05.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արարատ Բարսեղյանը (ներկայացուցիչ Անի Երիշանյան) :

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճուարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճուարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, 76-րդ հոդվածի 2-5-րդ մասերը, 150-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 103-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ինտերնետով հրապարակային և անհարական ծանուցման մասին» և «Փաստաթղթերի հարույլ առաքման մասին» ՀՀ օրենքները:

Վերաքննիչ դատարանը չի ուսումնասիրել և համապատասխան իրավական գնահատական չի տվել այն փաստին, որ քաղաք Երևան, Մոլդովական 17, բնակարան թիվ 6 հասցեով ուղարկված ծանուցումները պատասխանողի կողմից ստացված չլինելու պայմաններում Դատարանը ծանուցումը տեղադրել է ինտերնետային ծանուցման պաշտոնական կայքում, սակայն թերի՝ Մոլդովական 17 (առանց բնակարան 6 նշման) հասցեով, ինչի հետևանքով պատասխանողը չի ծանուցվել և օրենքի ուժով չի հանդիսացել պատշաճ ծանուցված դատավարության կողմ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ինտերնետային կայքում տեղադրված և պատասխանողի հաշվառման հասցեները չեն համընկնում, բացի այդ, քաղաք Երևան, Նոր Նորք, Մոլդովական 17 հասցեով հաշվառված է ևս մեկ այլ անձ՝ բողոքաբերի նույն անուն ազգանվամբ, այսինքն ծանուցումը շփոթություն է ստեղծում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ դատաքննությունն ավարտելու և վճռի կայացման փուլ անցնելու համար անհրաժեշտ կողմերի ծանուցումն ապահովված լինելու հիմք հանդիսացող ինտերնետային կայքում տեղադրված հասցեի թերի լինելու պայմաններում Դատարանը չէր կարող վճիռ կայացնել, իսկ կայացված վճիռն իրավաչափ չէ և ենթակա է բեկանման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.07.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճուարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճուարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կոմիտեն 19.05.2016 թվականի փոստային առաքմամբ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումով խնդրել է Արարատ Բարսեղյանից հօգուտ իրեն բռնագանձել 2.108.375 ՀՀ դրամ՝ որպես Արարատ Բարսեղյանի հասցե՝ նշելով քաղաք Երևան, Նոր Նորք, Մոլդովական 17 հասցեն մինչդեռ հայցադիմումին կից Կոմիտեի կողմից ներկայացվել է գումարի բռնագանձման համար հիմք հանդիսացող 19.10.2019 թվականի թիվ 1238 որոշումը Արարատ Բարսեղյանի կողմից ստանալը հավաստող անդորրագիրը, որում որպես վերջինիս հասցե նշված է Մոլդովական 17/6 (**հատոր 1-ին գ.թ. 2-13**).

2) 01.07.2016 թվականին ժամը 12:35-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17 և Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17/6 հասցեներով Արարատ Բարսեղյանին ուղարկված 27.05.2016 և 16.06.2016 թվականի ծանուցագրերը վերադարձվել են «Այլ» նշումով (**հատոր 1-ին գ.թ. 19-21**).

3) 01.07.2016 թվականի նշանակված դատական նիստը հետաձգվել է՝ պատասխանողի պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով (**հատոր 1-ին գ.թ. 26-29**).

4) 04.10.2016 թվականին ժամը 11:20-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17 հասցեով Արարատ Բարսեղյանին ուղարկված 01.07.2016 թվականի ծանուցագիրը վերադարձվել է «թերի հասցե» նշումով, նշված դատական նիստի վերաբերյալ ծանուցագիրը տեղադրվել է նաև www.azdarar.am կայքում՝ որպես Արարատ Բարսեղյանի հասցե նշվել է Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17, 04.10.2016 թվականի դատական նիստի ծանուցագիրը Արարատ Բարսեղյանին փոխանցելու համար ուղարկվել է նաև Երևան համայնքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին, որպես Արարատ Բարսեղյանի ծանուցման հասցե նշելով Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17 (**հատոր 1-ին գ.թ. 32-37**).

5) Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի 02.08.2016 թվականի գրությամբ Դատարանին հայտնվել է, որ ծանուցագիրը Արարատ Բարսեղյանին չի հանձնվել, քանի որ վերջինս չի բնակվում Երևան քաղաքի Մոլդովական 17 շենքի թիվ 6 բնակարան հասցեում (**հատոր 1-ին գ.թ. 59**).

6) 14.02.2017 թվականին ժամը 15:00-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17 հասցեով Արարատ Բարսեղյանին ուղարկված 09.11.2016 թվականի ծանուցագիրը վերադարձվել է «չպահանջված» նշումով, նշված դատական նիստի վերաբերյալ ծանուցագիրը տեղադրվել է նաև www.azdarar.am կայքում՝ որպես Արարատ Բարսեղյանի հասցե նշվել է Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17 (**հատոր 1-ին գ.թ. 65-68**).

7) 20.04.2017 թվականին ժամը 12:35-ին նշանակված դատաքննության վերաբերյալ Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17 հասցեով Արարատ Բարսեղյանին ուղարկված 09.11.2016 թվականի ծանուցագիրը վերադարձվել է «այլ» նշումով, նշված դատաքննության վերաբերյալ ծանուցագիրը տեղադրվել է նաև www.azdarar.am կայքում՝ որպես Արարատ Բարսեղյանի հասցե նշվել է Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17 (**հատոր 1-ին գ.թ. 71-73, 76**).

8) 20.04.2017 թվականին դատաքննությունը հայտարարվել է ավարտված և դատական ակտի հրապարակման օր է հայտարարվել 10.05.2017 թվականին (**հատոր 1-ին գ.թ. 77-79**).

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքով դատական նիստի ժամանակի մասին պատշաճ ծանուցելու վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը անմասնաբաժնի գործերով նախկինում արդարահայրած իրավական դիրքորոշումների համարեքսպում անհրաժեշտ է համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքով դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց պարզաձև ծանուցման հարցին:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, ներառյալ՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ ծանուցագրով դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին տեղեկացվում են դատավարության մասնակիցները, վկաները, փորձագետները և թարգմանիչները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծանուցագիրը բովանդակում է՝

- 1) դատարանի (ստավայրի) անվանումը և հասցեն.
- 2) դատարան կանչվող անձի անունը (անվանումը).
- 3) նշում՝ հասցեատիրոջ դատավարական կարգավիճակի մասին.
- 4) նշում՝ ներկայանալու ժամանակի մասին.
- 5) նշում այն գործի մասին, որի վերաբերյալ անձը ծանուցվում է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծանուցագրի հանձնումն իրականացվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Դատավարության մասնակիցները կարող են համաձայնվել ծանուցման այլ եղանակի մասին, մասնավորապես ֆաքսով, էլեկտրոնային փոստով, հեռախոսով, հեռագրով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ դատավարության մասնակցի հասցեն անհայտ է, ապա պատշաճ ծանուցում է համարվում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցագիր տեղադրելը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ծանուցագրերն ուղարկվում են անձի նշած հասցեով, իսկ նման հասցե նշած չլինելու դեպքում՝ նույն օրենսգրքի 76-րդ հոդվածով սահմանված հասցեով, ընդ որում, նույն օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-5-րդ մասերով նախատեսված դեպքերում ծանուցագիրը մինչև նույն ժամանակ հրապարակվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձ պատասխանողին հայցադիմումը և կից փաստաթղթերն ուղարկվում են նրա՝ բնակչության պետական ռեգիստրում նշված հասցեով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բնակչության պետական ռեգիստրում մշտական բնակության վայրը նշված չլինելու, ինչպես նաև պատասխանողի՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունենալու դեպքում հայցադիմումը և կից փաստաթղթերն ուղարկվում են պատասխանողի որևէ անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով պատասխանողի հասցեն որոշելու անհնարինության դեպքում հայցադիմումը և կից փաստաթղթերն ուղարկվում են պատասխանողի բնակության վերջին հայտնի վայրի հասցեով, իսկ բնակչության պետական ռեգիստրի տվյալների համաձայն՝ նույնականացման քարտ ունեցող պատասխանողի դեպքում՝ նաև նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով:

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում հրապարակային և անհատական ծանուցման ինտերնետով իրականացման կարգն ու պայմանները:

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝ հրապարակային ծանուցում՝ տեղեկատվություն պարունակող հայտարարություն, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք՝ համացանցի <http://www.azdarar.am/> հասցեում գտնվող կայք (այսուհետ՝ կայք):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ դատարանը

գործը քննել է դատավարության մասնակիցներից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ չի ծանուցվել նիստի ժամանակի և վայրի մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ դատական նիստի օրվա, ժամի և վայրի մասին վարչական դատավարության մասնակիցների իրազեկումը դատարանի պարտականությունն է, որի չպահպանումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով դատավարական իրավունքի նորմի էական խախտում է (*Կրեն, Կոմիտեն ընդդեմ Հայկ Մուրադյանի թիվ ՎԿ/1473/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2020 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ցանկացած դեպքում դատարանը պետք է կատարի դատավարության մասնակիցներին դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելուն ուղղված ակտիվ գործողություններ և պետք է ձեռնարկի օրենսդրությամբ նախատեսված՝ կոնկրետ իրավիճակում հնարավոր բոլոր ծանուցման միջոցները և եղանակները: (...) անկախ ծանուցման ընտրված եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել դատավարության համապատասխան մասնակիցների՝ դատական նիստի մասին պատշաճ տեղեկացված լինելու փաստը (*Կրեն, Խաչիկ Պողոսյանն ընդդեմ Ֆենյա և Հարություն Պողոսյանների թիվ ԵԿԿ/2767/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (*Կրեն, Անկերյն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը, կետ 38*):

Վերոգրյալ իրավանդումների վերլուծության ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործող օրենսդրությամբ դատարանների վրա դրվել է պարտականություն իրականացնելու համապատասխան ակտիվ գործողություններ դատավարության մասնակիցներին դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու համար:

Այն դեպքերում, երբ դատավարության մասնակցի հասցեն անհայտ է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված է դատավարության մասնակիցներին դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու մի շարք եղանակներ, որոնք ապահովելու պայմաններում միայն դատավարության մասնակիցը կարող է համարվել պատշաճ ծանուցված, այն է՝ անձի կողմից նշված հասցեով ծանուցագրերն ուղարկելու, նման հասցե նշած չլինելու դեպքում՝ բնակչության պետական ռեգիստրում նշված հասցեով ուղարկելու, բնակչության պետական ռեգիստրում մշտական բնակության վայրը նշված չլինելու, ինչպես նաև պատասխանողի՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունենալու դեպքում պատասխանողի որևէ անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեով ուղարկելու, պատասխանողի հասցեն որոշելու անհնարինության դեպքում պատասխանողի բնակության վերջին հայտնի վայրի հասցեով ուղարկելու, բնակչության պետական ռեգիստրի տվյալների համաձայն՝ նույնականացման քարտ ունեցող պատասխանողի դեպքում՝ նաև նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելու եղանակներ, նշված դեպքերում ծանուցագիրը միևնույն ժամանակ հրապարակվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ (<http://www.azdarar.am/>):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքով հրապարակային ծանուցումը տեղեկատվություն պարունակող հայտարարություն է, որի նպատակն է

ծանուցագրի հասցեատիրոջը իրազեկել դատական նիստի ժամանակի և վայրի մասին, ուստի նշված ծանուցագրում պետք է հստակ նշվեն դատարանի (ստավայրի) անվանումը և հասցեն, դատարան կանչվող անձի անունը (անվանումը), նշում՝ հասցեատիրոջ դատավարական կարգավիճակի մասին, նշում՝ ներկայանալու ժամանակի մասին, նշում այն գործի մասին, որի վերաբերյալ անձը ծանուցվում է, ինչպես նաև ծանուցագրի հասցեատիրոջ կողմից նշված հասցեն կամ նման հասցե նշած չլինելու դեպքում՝ բնակչության պետական ռեգիստրում նշված հասցեն, բնակչության պետական ռեգիստրում մշտական բնակչության վայրը նշված չլինելու, ինչպես նաև դատավարության մասնակցի Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակչության վայր չունենալու դեպքում վերջինիս որևէ անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեն կամ նրա բնակչության վերջին հայտնի վայրի հասցեն, այսինքն նշված ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր լինի ապացուցել դատավարության համապատասխան մասնակցի՝ դատական նիստի մասին պատշաճ տեղեկացված լինելու փաստը:

Սույն գործով Կոմիտեն 19.05.2016 թվականի փոստային առաքմամբ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումով խնդրել է Արարատ Բարսեղյանից հօգուտ իրեն բռնագանձել 2.108.375 ՀՀ դրամ:

Դատարանը 10.05.2017 թվականի վճռով Կոմիտեի հայցը բավարարել է: Նշված վճռի դեմ Արարատ Բարսեղյանի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք այն հիմքով, որ գործում բացակայում է իրեն պատշաճ ծանուցելու վերաբերյալ ապացույցը:

Վերաքննիչ դատարանը 12.07.2019 թվականի որոշմամբ մերժել է Արարատ Բարսեղյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը և Դատարանի 10.05.2017 թվականի վճիռը թողել անփոփոխ՝ պատճառաբանելով, որ Դատարանի կողմից Արարատ Բարսեղյանին ուղղված ծանուցագրերն ուղարկվել են քաղաք Երևան, Նոր Նորք, Մոլդովական 17 շենք, բնակարան 6 հասցեով, որտեղ դրանք ստացված չլինելու պայմաններում վերադարձվել են ուղարկողին, վերաքննիչ բողոքում ևս բողոքաբերի կողմից մատնանշվել է նույն՝ քաղաք Երևան, Նոր Նորք, Մոլդովական 17 շենք, բնակարան 6 հասցեն, որպես իր բնակչության հասցե, հետևապես առարկայագուրկ է բողոքաբերի այն պնույնը թե ծանուցումը պատշաճ չի կարող դիտվել:

Վերջ նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեն 19.05.2016 թվականի փոստային առաքմամբ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումում որպես Արարատ Բարսեղյանի հասցե՝ նշել է քաղաք **Երևան, Նոր Նորք, Մոլդովական 17**, մինչդեռ հայցադիմումին կից Կոմիտեի կողմից ներկայացվել է գումարի բռնագանձման համար հիմք հանդիսացող թիվ 19.10.2019 թվականի թիվ 1238 որոշումը Արարատ Բարսեղյանի կողմից ստանալը հավաստող անդորրագիրը, որում որպես վերջինիս հասցե նշված է **Մոլդովական 17/6**: 01.07.2016 թվականին ժամը 12:35-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17 և Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17/6 հասցեներով Արարատ Բարսեղյանին ուղարկված 27.05.2016 և 16.06.2016 թվականի ծանուցագրերը վերադարձվել են «Այլ» նշումով, 04.10.2016 թվականին ժամը 11:20-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ **Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17** հասցեով Արարատ Բարսեղյանին ուղարկված 01.07.2016 թվականի ծանուցագիրը վերադարձվել է «թերի հասցե» նշումով, նշված դատական նիստի վերաբերյալ ծանուցագիրը տեղադրվել է նաև www.azdarar.am կայքում՝ որպես Արարատ Բարսեղյանի հասցե նշվել է **Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17**, 04.10.2016 թվականի դատական նիստի ծանուցագիրը Արարատ Բարսեղյանին փողանցելու համար ուղարկվել է նաև Երևան համայնքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին, որպես Արարատ Բարսեղյանի ծանուցման հասցե նշելով **Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17**, Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի 02.08.2016 թվականի գրությամբ Դատարանին հայտնվել է, որ ծանուցագիրը Արարատ Բարսեղյանին չի հանձնվել, քանի որ վերջինս չի բնակվում **Երևան քաղաքի Մոլդովական 17**

շենքի թիվ 6 բնակարան հասցեում, 14.02.2017 թվականին ժամը 15:00-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ Երևան քաղաք, **Նոր Նորք, Մոլդովական 17 հասցեով** Արարատ Բարսեղյանին ուղարկված 09.11.2016 թվականի ծանուցագիրը վերադարձվել է «չպահանջված» նշումով, նշված դատական նիստի վերաբերյալ ծանուցագիրը տեղադրվել է նաև www.azdarar.am կայքում՝ որպես Արարատ Բարսեղյանի հասցե նշվել է **Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17**, 20.04.2017 թվականին ժամը 12:35-ին նշանակված դատաքննության վերաբերյալ **Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17** հասցեով Արարատ Բարսեղյանին ուղարկված 09.11.2016 թվականի ծանուցագիրը վերադարձվել է «այլ» նշումով, նշված դատաքննության վերաբերյալ ծանուցագիրը տեղադրվել է նաև www.azdarar.am կայքում՝ որպես Արարատ Բարսեղյանի հասցե նշվել է **Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17**:

Վերոգրյալ փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ եզրահանգելով, որ ծանուցումը ոչ պատշաճ լինելու վերաբերյալ բողոքաբերի պնդումն առարկայազուրկ է՝ հաշվի չի առել, որ Դատարանը Արարատ Բարսեղյանին համարել է ՀՀ ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքի միջոցով պատշաճ ձևով ծանուցված և դատական նիստերն անց է կացրել պատասխանողի բացակայությամբ, մինչդեռ սույն վարչական գործում առկա չէ դատական նիստերի մասին Արարատ Բարսեղյանի պատշաճ տեղեկացված լինելու փաստը հաստատող որևէ ապացույց:

Ինչ վերաբերվում է սույն վարչական գործում առկա Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքով հրապարակային ծանուցումներին, ապա դրանք չենք կարող համարվել Արարատ Բարսեղյանի՝ դատական նիստի մասին պատշաճ տեղեկացված լինելու փաստը հաստատող ապացույցներ՝ նկատի ունենալով, որ դրանցում որպես Արարատ Բարսեղյանի հասցե նշվել է **Երևան քաղաք, Նոր Նորք, Մոլդովական 17**, մինչդեռ ըստ գործի նյութերի՝ Արարատ Բարսեղյանի բնակության վերջին հայտնի վայրի հասցեն է եղել **Երևան քաղաքի Մոլդովական 17 շենքի թիվ 6 բնակարան**:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամի և վայրի մասին վարչական դատավարության մասնակիցների տեղեկանալու իրավունքը և դատարանի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ Մահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված՝ գործի քննության ընթացքում կողմերին քննվող գործի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու հավասար հնարավորությունների ընձեռման անհրաժեշտության սկզբունքի հետ:

Նշված սկզբունքն ամբողջ ծավալով կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ վարչական դատավարության մասնակիցներից յուրաքանչյուրի համար ապահովված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն: Այդ իսկ պատճառով դատական նիստի օրվա, ժամի և վայրի մասին վարչական դատավարության մասնակիցների իրազեկումը դատարանի պարտականությունն է, որի չպահպանումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով դատավարական իրավունքի նորմի էական խախտում է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարզապահանջությունները և եզրահանգումները դատարանի ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.07.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/6098/05/17**
2021թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/6098/05/17**
Նախագահող դատավոր՝ **Ա. Պողոսյան**
Դատավորներ՝ **Ա. Բաբայան**
Ա. Թովմասյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2021 թվականի հուլիսի 21-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.03.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Լուսակերտի Հարություն թոշնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ վարչական ակտերը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դարավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 03.03.2017 թվականի թիվ 1000061/2 վերստուգման ակտը և մասնակի անվավեր ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017 թվականի թիվ 29/2 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 30.01.2018 թվականի որոշմամբ 03.03.2017 թվականի թիվ 1000061/2 ակտի՝ շահութահարկի

գծով 1-ին ենթակետն անվավեր ճանաչելու պահանջի մասով, վարչական գործի վարույթը կարճվել է:

Դատարանի 19.06.2018 թվականի վճռով Ընկերության հայցը բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչվել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության 03.03.2017 թվականի թիվ 1000061/2 ակտի 1-ին կետի 2-րդ ենթակետը և 4-րդ կետի 9-րդ ենթակետը, ինչպես նաև թիվ 1000061/2 ակտի 1-ին կետի 2-րդ ենթակետը և 4-րդ կետի 9-րդ ենթակետն անփոփոխ թողնելու մասով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 23.05.2017 թվականի թիվ 29/2 որոշումը, մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.03.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.06.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ Գևորգ Հարությունյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել իրավահարաբերության ծագման պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի առաջին պարբերության «դ» ենթակետը, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին պարբերության 1-ին կետը, չի կիրառել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին պարբերության 1-ին կետը, կիրառել է իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ կետը, 10-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը, 13-րդ հոդվածի 1-ին կետը, 14-րդ հոդվածը, 289-րդ հոդվածը, 301-րդ հոդվածի 1-ին կետը, 302-րդ և 436-րդ հոդվածները, որոնք պետք է չկիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը, 146-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հերկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հարկային օրենսդրության իմաստով գործարքի բնորոշումն այլ է, ավելին՝ դատական ակտը կայացվել է հաշտության համաձայնության հիման վրա, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված գործարք, ուստի ստուգման ակտի 1-ին և 9-րդ կետերի վերաբերյալ ստորադաս դատարանի վերլուծություններն անհիմն են, քանի որ Օսիկ Հարությունյանն անշարժ գույքի սեփականատեր է դարձել թե՛ հարկային օրենսդրության, թե՛ քաղաքացիական օրենսդրության իմաստով գործարքի արդյունքում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը սխալ իրավական գնահատական է տվել գործի փաստերին, քանի որ թեպետ քաղաքացիական պայմանագրային հարաբերության իմաստով նշված երևույթը հանգեցրել է փոխառությամբ տրված գումարի հատուցմանը, պայմանագրային պարտավորության բավարարմանը, հարկային օրենսդրության իմաստով հիմնական միջոցի օտարումը չի դիտվում որպես պարտավորության մարում: Այն պարտավորության մարում կդիտվեր, եթե փոխառությամբ տրված գումարի չափով գումար վերադարձվեր պարտատիրոջը, ուստի հիմնական միջոցի օտարումը բոլոր դեպքերում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի «դ» ենթակետի իմաստով պետք է դիտվի սեփականությամբ հիմնական միջոց հանդիսացող շենք, շինության օտարում, ուստի անկախ անշարժ գույքի օտարման եղանակից անշարժ գույքի օտարումից ստացած հասույթը պետք է դիտվի որպես եկամուտ և ներառվի համախառն եկամտի մեջ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ անշարժ գույքի հետ կապված բոլոր գործարքները կնքված համարվելու համար անհրաժեշտ է պետական գրանցում, հետևաբար քանի դեռ գործարքը կնքված չէ, խոսք չի կարող գնալ հարկային օրենսդրության իմաստով հարկի առաջադրման մասին:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ԱԱՀ-ի իմաստով կարևոր պայման է դիտվում սեփականության փոխանցումը մեկ անձից մյուսին, որի դեպքում վրա են հասնում հարկային օրենսդրությամբ սահմանված հետևանքները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.03.2019 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պարտասխանի հիմնավորումները

Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, 10-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, 289-րդ հոդվածի, 301-րդ հոդվածի 1-ին կետի, 302-րդ հոդվածի և 436-րդ հոդվածի կիրառումն իրավաչափ է, քանի որ վիճարկվող ակտի հիմքում ընկած գործարքների, մատակարարման և սեփականության իրավունքի հետ կապված հարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ և չեն կարող կարգավորվել այլ կերպ քան քաղաքացիական օրենսդրության նորմերի կիրառմամբ:

Օրենսդիրը նախկին օրենսդրությամբ ԱԱՀ վճարելու պարտավորության ծագման հիմքում դրել է քաղաքացիաիրավական կատեգորիա հանդիսացող հատուցելի գործարքներն ու ծառայությունների մատուցումը: Բացի այդ, բոլոր այն դեպքերում, երբ չկա համապատասխան հարաբերությունը համապարփակ կերպով կարգավորող իրավական ակտ, ապա օրենքի ընդհանուր ձևակերպումը պետք է մեկնաբանվի հօգուտ իրավաբանական անձի:

Բողոքաբերն ըստ էության ընդունել է, որ Օսիկ Հարությունյանի նկատմամբ Ընկերության պարտավորությունը դատական ակտի ուժով մարվել է, սակայն պնդում է, թե հարկային օրենսդրության իմաստով հիմնական միջոցի օտարումը չի դիտվում որպես պարտավորության մարում: Բացի այդ, տվյալ դեպքում գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը տեղի է ունեցել դատական ակտի, այլ ոչ թե գործարքի հիմքով և արդյունքում որևէ հատույթ չի ստացել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության հիմնադիր (74%) Օսիկ Հարությունյանը 30.11.2009 թվականի թիվ փ-2009/2, 16.02.2010 թվականի թիվ փ-2010/1, 28.11.2011 թվականի թիվ փ-2011/1 և 09.01.2012 թվականի թիվ փ-2012/1 փոխառության տրամադրման պայմանագրերի հիման վրա փոխառության կարգով Ընկերությանն է տրամադրել 466.000.000 ՀՀ դրամ գումար՝ կրեդիտորական պարտքերի մարման և կերերի ձեռքբերման նպատակով (**հատոր 2-րդ, գ.թ. 103-108, հատոր 4-րդ, գ.թ. 60-65**):

2) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ/0352/02/13 քաղաքացիական գործով 18.10.2013 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով՝ ըստ հայցի Օսիկ Հարությունյանի ընդդեմ Ընկերության գումարի բռնագանձման պահանջի մասին, հաստատվել է հաշտության համաձայնություն, որի համաձայն՝ Ընկերությունը ընդունել է Օսիկ Հարությունյանի նկատմամբ ունեցած 289.600.000 ՀՀ դրամ գումարի չափով պարտքը և, հիմք ընդունելով մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը, հիշյալ պարտքի դիմաց իրեն սեփականության իրավունքով պատկանող և նույն հաշտության համաձայնության 2 և 2.1 կետերով նախատեսված գույքի տեսակների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել է պարտատեր Օսիկ Հարությունյանին (**հատոր 4-րդ, գ.թ. 53-59**):

3) 21.11.2013 թվականին կազմված հանձնման-ընդունման ակտի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ/0352/02/13 քաղաքացիական գործով 18.10.2013 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա Ընկերությունն Օսիկ Հարությունյանին է հանձնել նույն հանձնման-ընդունման ակտի 2-րդ կետում նշված գույքային միավորները՝ 07-048-1400-0010-002-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-003-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-004-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-005-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-006-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-007-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-015-000 ենթակայականը և նշված գույքային միավորների սպասարկման հողամասը: Հանձնման-ընդունման ակտով կողմերը հաստատել են, որ կատարել են գույքային միավորների հանձնում-ընդունումը **(հատոր 4-րդ, գ.թ. 1):**

4) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ/0352/02/13 քաղաքացիական գործով 18.10.2013 թվականի վճռի հիման վրա Օսիկ Հարությունյանին անցած գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը կատարվել է 23.05.2014 թվականին **(անվիճելի փաստ):**

5) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 13.09.2016 թվականի թիվ 1000061/2 հանձնարարագրի համաձայն՝ Ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության 03.03.2017 թվականի թիվ 1000061/2 վերստուգման ակտը:

Ակտի «1. Շահութահարկ» վերտառությամբ 1-ին կետի 2-րդ ենթակետով արձանագրվել է.

«(...) Կատարված վերստուգմամբ «Լուսակերտի Հարություն թոչնաբուծական ֆաբրիկա» ՄՊ ընկերության կողմից բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութահարկի գումարը տույժ և տուգանքների հետ մասին ընդամենը կազմում է 153.280.190 դրամ (...):»

Ակտի «4. Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 4-րդ կետի 9-րդ ենթակետով արձանագրվել է.

« (...) արդյունքում «ԼՀԹՖ» ՄՊ ընկերության կողմից բյուջե լրացուցիչ վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը տույժ և տուգանքների հետ միասին ընդամենը կազմում է 153.280.190 դրամ» **(հատոր 3-րդ, գ.թ. 126-142):**

6) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017 թվականի թիվ 29/2 որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության 03.03.2017 թվականի թիվ 1000061/2 ակտի 1-ին կետից նվազեցվել են շահութահարկի պարտավորությունները՝ 30.656.038 ՀՀ դրամի չափով, այդ թվում՝ շահութահարկը 11.579.240 ՀՀ դրամ, տույժերը՝ 6.339.634 ՀՀ դրամ, տուգանքը՝ 12.737.164 ՀՀ դրամ, ակտի մնացած կետերը թողնվել են անփոփոխ:

Հանձնաժողովը գտել է, որ Ակտի 4-րդ կետի 9-րդ ենթակետով արձանագրված ԱԱՀ-ի գումարը որպես չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկ, պետք է հաշվի առնվեր շահութահարկի պարտավորությունները հաշվարկելիս որպես համախառն եկամտից նվազեցում: Ուստի Հանձնաժողովը գտել է, որ այս մասով շահութահարկի պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման, մնացած մասով Հանձնաժողովը գտել է, որ գանգատը ենթակա է մերժման **(հատոր 1-ին, գ.թ. 62-96):**

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար,

և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները դատական կարգով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը գործարք դիտարկելու, ինչպես նաև դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա անշարժ գույքի օտարումը փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց իրավահարաբերության ծագման պահին գործող «Շահութահարկի մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքների իմաստով հարկվող գործարք հանդիսանալու վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) դատական կարգով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը գործարք է, թե՛ ոչ:

2) արդյո՞ք դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա անշարժ գույքի օտարումը փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց իրավահարաբերության ծագման պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով եկամտի աղբյուր է:

3) արդյո՞ք դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա անշարժ գույքի օտարումը փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց կարող է համարվել աստիճանի մատակարարում և առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն:

4) դատական կարգով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնության արդյունքում անշարժ գույքի նկարմանը սեփականության իրավունքը ծագում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու, թե այդ դատական ակտի հիման վրա իրավունքի պետական գրանցման պահից:

1) ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով

նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) **օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.**

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) **քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.**

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտություն» հասկացությունները: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց **ներքին կամքի և արտաքին կամահայտության համակցությունն է** (տե՛ս Նեյի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Հասիսայ» ՄՊԸ-ի թիվ ԵԿԿ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձին հնարավորություն է տալիս սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքներն ու դրանց պաշտպանության եղանակները (տե՛ս, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն ընդդեմ «Գորիս-Ապակի» ՄՊԸ-ի թիվ ՄԴՅ/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ թիվ ԿԳ/0352/02/13 քաղաքացիական գործով հաշտության համաձայնությունը ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից հաստատվել է 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող)

վերաբերելի իրավակարգավորումների կիրառմամբ, հարկ է համարում բողոքում բարձրացված հարցադրմանն անդրադառնալ նշված կարգավորման համատեքստում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն՝

1. Կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ:

2. Կողմերի միջև կայացված հաշտության համաձայնությունը ձևակերպվում է գրավոր: 3. Դատարանը, նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը, կողմերին պարզաբանում է դրա դատավարական հետևանքները:

4. Դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այդ դեպքերում դատարանը վեճը քննում է ըստ էության:

Համանման կարգավորում է բովանդակում նաև 09.02.2018 թվականին ընդունված, 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով դատական կարգով կնքված հաշտության համաձայնությանը, արձանագրել է, որ հաշտության համաձայնությունը կողմերի միջև փոխզիջման արդյունքում ձեռքբերված պայմանավորվածություն է, որը հաստատվում է դատարանի կողմից: Հաշտության համաձայնություն կնքելը տնօրինչական դատավարական գործողություն է, որի միջոցով կողմերը տնօրինում են ինչպես իրենց նյութական, այնպես էլ՝ դատավարական իրավունքները: Մասնավորապես, կնքելով նման համաձայնություն՝ կողմերը փոխադարձ պայմանավորվածությամբ որոշակի փոփոխության են ենթարկում վիճելի իրավահարաբերությունը՝ այդ իրավահարաբերության շրջանակներում ստանձնելով նոր պարտավորություններ կամ վիճելի իրավահարաբերությունը փոխարինելով մեկ այլ իրավահարաբերությամբ կամ ուղղակիորեն դադարեցնելով այն: Վերը նշվածում դրսևորվում է հաշտության համաձայնության նյութաիրավական (քաղաքացիաիրավական) կողմը: Հաշտության համաձայնությամբ կողմերը միաժամանակ տնօրինում են իրենց դատավարական իրավունքները, ինչի արդյունքում դատավարության հետագա ընթացքը գործի վարույթի կարճմամբ դադարում է: Նշվածում էլ դրսևորվում է հաշտության համաձայնության դատավարական կողմը: Ընդ որում, հաշտության համաձայնությունը հաստատող դատարանի վճիռն իր դատավարական նշանակությամբ և հետևանքներով հավասարեցված է գործն ըստ էության լուծող վճռին, որի կամավոր չկատարումը հանգեցնում է դատական ակտի հարկադիր կատարման (յուն., «Յունիքսնս») ՓԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապսպա» ՍՊԸ-ի թիվ ԼԿ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Ջարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Տնօրինչականության սկզբունքը քաղաքացիական դատավարության հիմնաքարային սկզբունքներից է, որը բնութագրվում է որպես գործին մասնակցող անձանց տրված հնարավորություն՝ սեփական հայեցողությամբ տնօրինելու օրենքով իրենց վերապահված իրավունքները և դրանց պաշտպանության միջոցները: Քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքն առավել ցայտուն արտահայտվում է դատարանի վարույթում գտնվող վեճը հաշտության համաձայնությամբ ավարտելու կողմերին վերապահված հնարավորության մեջ, որն ուղղված է կողմերի միջև ծագած նյութաիրավական վեճի փոխադարձ կարգավորմանը՝ երկկողմանի ընդունելի պայմաններով: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել այն, որ տնօրինչականության սկզբունքը բացարձակ չէ, և նշված տնօրինչական գործողությունները կարող են իրացվել միայն օրինականության սկզբունքի պահպանության շրջանակներում՝ դատարանի վերահսկողություն ներքո: Այս տեսանկյունից դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատումը դիտարկվում է որպես օրինականության սկզբունքի ապահովման նախադրյալ, քանի որ միայն նման պայմաններում է հնարավոր

ճիշտ կիրառել նյութական իրավունքի նորմերը և հասնել վեճի օրինաչափ լուծման: Հետևաբար՝ կողմերի կնքած հաշտության համաձայնությունը ենթակա է հաստատման դատարանի կողմից, որի արդյունքում կողմերը փոխադարձ նյութաիրավական զիջումների ճանապարհով նորովի որոշում են իրենց իրավունքները և պարտականությունները և պարտավորվում են կանավոր կարգավորել իրենց միջև ծագած վեճը՝ փոխադարձաբար ընդունելի պայմաններով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական կարգով հաստատված հաշտության համաձայնությունը, ըստ էության, նույնացվում է «գործարք» եզրույթի բնորոշմանն այն հաշվառմամբ, որ վերջինիս պայմանների վավերականությունը պետք է քննարկվի նյութական օրենսդրության կարգավորումների լույսի ներքո, և միայն կնքման ձևը և դատավարական հետևանքները պետք է կարգավորվեն դատավարական օրենսդրությամբ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը պետք է դիտարկել որպես՝

1. կողմերի տնօրինչական գործողություն, որն ուղղված է դատավարական վեճը լուծելու պայմանների համաձայնեցման միջոցով այն դադարեցնելուն,
2. նյութաիրավական վեճերն օրենքին չհակասող, այլ անձանց իրավունքները չխախտող փոխադարձաբար ընդունելի պայմաններով լուծելու եղանակ,
3. կողմերի միջև **կնքվող քաղաքացիաիրավական պայմանագիր (գործարք)**, որի ուժով վերջիններս վիճելի իրավահարաբերության մասով նորից են որոշում իրենց իրավունքները և պարտականությունները՝ դրանով իսկ դադարեցնելով իրենց միջև եղած վեճը:

2) 30.09.1997 թվականին ընդունված, 01.01.1998 թվականին ուժի մեջ մտած և 01.01.2018 թվականին մասնակի ուժը կորցրած «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող) 2-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկը հարկ վճարողների կողմից նույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում (հարկատու են) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող **հարկվող շահույթը**:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ **հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է (...):**

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր **եկամուտների հանրագումարն է՝** անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Նույն օրենքի իմաստով՝

ա) **եկամուտ** է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ **պարտավորությունների նվազումը**, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը.

բ) **սեփական կապիտալ** է համարվում ակտիվների և պարտավորությունների տարբերությունը.

գ) **ակտիվ** է համարվում հարկատուին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած միջոցը՝ գույքը (նյութական ակտիվները), գույքային իրավունքները և գույքային իրավունքների հետ կապված անձնական ոչ գույքային իրավունքները (ոչ նյութական ակտիվները), արտարժույթը, արժեթղթերը, դերժիտորական պարտքը և այլ գույքը.

դ) պարտավորություն է համարվում հարկատուի առկա պարտքը (վարկ, կրեդիտորական պարտք, հարկային պարտավորություն և այլն):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եկամուտների թվին են դասվում, մասնավորապես (...)

գ) հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացվող հասույթը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող օբյեկտը որոշելիս եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով: Հաշվեգրման եղանակով հաշվառման դեպքում հարկատուն եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է, համապատասխանաբար ելնելով հարկատուի կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի «դ» կետի համաձայն՝ հաշվեգրման եղանակով եկամուտները հաշվառելիս հարկատուն հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունները՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների օտարման դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքի կատարման օրվա դրությամբ: (...)

ՀՀ վճարելի դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված իրավանքների վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ շահութահարկը պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որի հարկվող օբյեկտը ռեզիդենտների համար Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթն է: Ընդ որում, հարկվող շահույթ է հարկատուի համախառն եկամտի, այսինքն՝ հաշվետու տարում անկախ դրանց ստացման աղբյուրներից հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի, և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը: Օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում սահմանել է, որ նշված օրենքի իմաստով եկամուտը հաշվետու տարվա ընկացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումն է, որը հանգեցնում է հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը:

ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ տնտեսվարող սուբյեկտի հարկվող շահույթը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել օրենքով սահմանված հետևյալ երկու տարրերը՝ տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, որտեղ համախառն եկամուտը տնտեսվարող սուբյեկտի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից, իսկ թույլատրելի նվազեցումներն օրենքով սահմանված ծախսերն են, կորուստները և այլ նվազեցումները: Նշված երկու տարրերի՝ համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունը տնտեսվարող սուբյեկտի մոտ առաջացնում է հարկվող շահույթ, որի հիման վրա էլ հաշվարկվում է օրենքով սահմանված շահութահարկի գումարը: Ընդ որում, տնտեսվարող սուբյեկտի կողմից ծախսերի մասով համախառն եկամուտը թույլատրվում է նվազեցնել, եթե կատարված ծախսերը անհրաժեշտ են եղել կապված եկամտի ստացման հետ և փաստաթղթերով հիմնավորված: Այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտի կատարած բոլոր ծախսերը չեն, որոնք կարող են նվազեցվել համախառն եկամտից, այլ դրանք անմիջականորեն և բացառապես պետք է կապված լինեն համախառն եկամտի ստացման հետ, իսկ այն ծախսերը, որոնք տնտեսվարողի կողմից կարող են կատարվել ոչ եկամտի ստացման նպատակով, չեն կարող նվազեցվել: Օրենսդրական նման մոտեցումը նպատակ է հետապնդում պաշտպանելու թե՛ պետության, թե՛ տնտեսվարող սուբյեկտների շահերը, քանի որ խթանում է տնտեսվարող սուբյեկտի կողմից իր միջոցներն անմիջականորեն եկամուտ ստանալուն ուղղելուն, ինչն իր հերթին նպաստում է պետության ընդհանուր տնտեսության զարգացմանը: Երաբարվածը չի նշանակում, սակայն, որ տնտեսվարող սուբյեկտը զրկված է այնպիսի ծախսեր անելու հնարավորությունից, որոնք անմիջականորեն և

քացառապես ուղղված չեն տնտեսվարողի համախառն եկամուտը ձևավորելուն. այդպիսի ծախսերի կատարումն ընդամենը զրկում է տնտեսվարողին այդ ծախսերի մասով իր համախառն եկամտից նվազեցումներ կատարելու իրավունքից (տե՛ս, «Արթիկի «Սյրեկյումնա»» ԲԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գյուլնու փարածքային հարկային տեսչության թիվ ՎՂ5/0519/05/13 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Վերը նշված դիրքորոշումների լույսի ներքո, անդրադառնալով փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց անշարժ գույքի օտարմանը, որը կատարվել է դատական ակտով հաստատված հաշտության համաձայնությամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն պարագայում հարկային պարտավորությունների առաջացման համար հատկանշական է հիմնական միջոցների և այլ ակտիվների օտարման կամ սեփականության իրավունքի փոխանցման փաստը, այլ ոչ թե նշված գործողության իրացման եղանակը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ փոխառության պայմանագրով նախատեսված վերադարձման ենթակա գումարի կամ գումարի չվերադարձված մասի դիմաց օտարվում է անշարժ գույք, ըստ էության տեղի է ունենում հիմնական միջոցի օտարում, իսկ փոխառության պայմանագրով տրամադրված գումարը կամ դրա չվերադարձված մասը դիտարկվում է որպես հիմնական միջոցի օտարումից ստացվող հասույթ: Վերջինս իր հերթին դասվում է եկամուտների թվին և ենթակա է ներառման հաշվետու տարում հարկատուի համախառն եկամտի մեջ: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հակառակ մեկնաբանության պայմաններում հարկային օրենսդրության իմաստով գույքի օտարումը կարող է ներկայացվել որպես փոխառության պայմանագրով ստացված և չվերադարձված գումարի դիմաց տրվող հատուցում և պարտավորության մարում՝ հնարավորություն տալով շրջանցել գույքի օտարման համար սահմանված հարկային պարտավորությունները:

Վերոգրյալի արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեպետև կողմերի միջև կնքվել է փոխառության պայմանագիր և համաձայն ընդհանուր կանոնի՝ փոխառում պարտավոր է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխատուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխառուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք, սակայն փոխառության պայմանագրով նախատեսված վերադարձման ենթակա գումարի փոխարեն օտարվում է անշարժ գույք, տեղի է ունենում հիմնական միջոցի օտարում, իսկ փոխառությամբ տրված գումարը հանդիսանում է եկամտի աղբյուր:

3) Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (...) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարում են ԱԱՀ վճարող համարվող և (կամ) ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ ապրանքների մատակարարումը՝

գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) **սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:**

Նույն հոդվածի 5-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն՝ նույն օրենքի դրույթների կիրառման առումով գործարք է դիտվում որոշակի մեկ տեսակի ապրանքի օտարումը կամ մեկ տեսակի ծառայության մատուցումը՝ այն քանակով կամ ծավալով, որն իրականացվում է մեկ առաքմամբ կամ գնորդին մեկանգամյա հանձնումով (գնորդի կողմից ընդունմամբ): Ընդ որում՝ որպես մեկ առաքմամբ մատակարարված ապրանքի քանակ կամ մեկ հանձնումով ծառայության մատուցման ծավալ ընդունվում է հաշվարկային փաստաթղթում, իսկ դրա բացակայության դեպքում՝ վճարային փաստաթղթում, ընդունման-հանձնման կամ կատարողական ակտում կամ այլ փաստաթղթում արձանագրված քանակությունը (ծավալը):

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավելացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որի առանձնահատկություններից է այն, որ վերջինս կիրառվում է տնտեսական գործունեության բավականին լայն շրջանակում ընդգրկված գործարքների նկատմամբ, որոնք «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են ապրանքի մատակարարում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկի՝ որպես անուղղակի հարկի հարկվող օբյեկտն ավելացված արժեքի հարկ վճարողների կամ ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություն կրող անձանց կողմից իրականացվող օրենքով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքն է (շրջանառությունը): Ընդ որում, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով ավելացված արժեքի հարկով հարկվում են, *inter alia*, ապրանքների մատակարարման գործարքները (գործառնությունները), այսինքն՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելուն ուղղված գործարքները: Որպես կանոն՝ ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտը ձեռնարկատիրական գործունեություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերի) իրականացրած գործարքներն են (*լրես, օրինակ, ՀՀ կառավարությանն ստորթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Ռազմիկ Սեդրակյանի թիվ ՎՊ/0560/05/15 վարչական գործով 20.07.2017 թվականի որոշումը*):

Մինչև նույն ժամանակ, նախկինում կայացրած որոշումներից մեկում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքների (գործառնություններ) թվին դասելով ապրանքների մատակարարումը, միաժամանակ բացահայտում է նաև դրա հասկացությունը: Մասնավորապես, օրենսդիրն ապրանքների մատակարարում է համարել այն գործարքը, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը **որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց** այլ անձի փոխանցելու միջոցով: Փաստորեն, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքի մատակարարում են միայն հատուցելի գործարքները, այսինքն՝ այն գործարքները, որոնցով ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվում հատուցման դիմաց (*լրես, Տիգրան Սահակյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն ստորթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎՊ/6067/05/16 վարչական գործով 25.12.2019 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, ևս մեկ անգամ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, հարկ է համարում ընդգծել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ գործարքն ապրանքների մատակարարում որակելու և ըստ այդմ՝ ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն ծագելու համար էական է սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

սույն պարագայում փոխառության պայմանագրով նախատեսված վերադարձման ենթակա գումարի կամ գումարի չվերադարձված մասի դիմաց ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա այլ անձի փոխանցելը ևս համարվում է ապրանքների մատակարարում, քանի որ առկա է ապրանքի սեփականության իրավունքի փոխանցում այլ անձի, ընդ որում հատուցման դիմաց, այն է՝ փոխառության պայմանագրով ստացված գումարը կամ դրա չվերադարձված մասը:

Այլ կերպ ասած, դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա անշարժ գույքի օտարումը փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է ապրանքների մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք:

4) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական գրանցումը նույն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից իրականացման ենթակա պարտադիր գործառույթ է, որն ուղղված է պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման, փոխանցման, դադարման և սահմանափակումների ճանաչման, ինչպես նաև պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների հավաքագրման, մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության ու միասնականության ապահովմանը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (14.04.1997 թվականին ընդունված, 30.05.1997 թվականին ուժի մեջ մտած և 01.01.2018 թվականին ուժը կորցրած) 30.1-ին հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

Սույն հոդվածի առաջին պարբերության իմաստով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային պարտավորությունների հաշվարկման առումով խախտման կատարման տարի է համարվում համապատասխան հաշվարկի, հայտարարագրի, հաշվետվության, տեղեկության կամ այլ փաստաթղթի (անկախ դրանց ներկայացման հանգամանքից) հարկային մարմնի ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը ներառող օրացուցային տարին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարողների կողմից

հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառման, ինչպես նաև դրա հետ կապված հարկային պարտավորության (ԱԱՀ-ի հաշվարկման) ծագման պահ է համարվում այն պահը, երբ տեղի է ունեցել ներքոհիշյալ դեպքերից որևէ մեկը՝

1) ապրանքները առաքվել կամ հանձնվել են գնորդներին կամ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին. (...):

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, գործարքը կարող է կնքված համարվել միայն դրանից ծագող իրավունքները, տվյալ դեպքում՝ սեփականության իրավունքը գրանցելու պահից: **Հետևաբար անշարժ գույքի օտարման պահը համընկնում է օտարման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման պահի հետ:**

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքի հանձնման պահի վերաբերյալ ընդհանուր կանոնը պետք է կիրառվի նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործարքներով օտարվող գույքի առանձնահատկությունների հաշվառմամբ, և ըստ այդմ, որպես ապրանքը հանձնելու պահ, հետևաբար նաև՝ հարկային պարտավորության (ԱԱՀ-ի հաշվարկման) առաջացման պահ, պետք է դիտարկվի գույքը ձեռք բերող անձի՝ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահը:

Նշված տրամաբանությունը ընկած է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի Միեր Կակոսյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության վարչական գործով կայացված որոշման հիմքում. նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ նման դիրքորոշումը բխում է այն հանգամանքից, որ (...) ապրանքը հանձնելու պահն օտարվող գույքը ձեռք բերողին փաստացի հանձնելու պահը դիտարկելու պարագայում հնարավոր են դեպքեր, երբ գույքի փաստացի հանձնման և ձեռք բերողի կողմից դրա նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահերը կարող են չհամընկնել: Այդպիսի դեպքերում հնարավոր է ստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի ուժով անձի մոտ կառաջանա հարկային պարտավորություն այն դեպքում, երբ գույքը փաստացի հանձնվել է ավելի վաղ, քան դրա նկատմամբ գրանցվել է ձեռքբերողի սեփականության իրավունքը, այլ կերպ ասած՝ անձի մոտ հարկային պարտավորությունը կառաջանա ավելի վաղ, քան օրենքով նախատեսված օտարումը: Նման պայմաններում առկա է անձի նկատմամբ հարկային օրենսդրությամբ նախատեսված տույժերի և տուգանքների անհարկի առաջադրման վտանգ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հաշվետու ժամանակաշրջանը, սահմանային իրավիճակներով պայմանավորված, վրա կհասնի ավելի վաղ, քան գույքի օտարումը (յրե՛ս, թի՛վ ՎԳ/0811/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության հիմնադիր (74%) Օնիկ Հարությունյանը 2009-2012 թվականների ընթացքում կազմված համապատասխան պայմանագրերի հիման վրա փոխառության կարգով Ընկերությանն է տրամադրել 466.000.000 ՀՀ դրամ գումար՝ կրեդիտորական պարտքերի մարման և կերերի ձեռքբերման նպատակով:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԳ/0352/02/13 քաղաքացիական գործով 18.10.2013 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով՝ ըստ հայցի Օնիկ Հարությունյանի ընդդեմ Ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, հաստատվել է հաշտության համաձայնություն: 21.11.2013 թվականին կազմված հանձնման-ընդունման ակտի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր

իրավասության դատարանի թիվ ԿԳ/0352/02/13 քաղաքացիական գործով 18.10.2013 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա Հնկերությունն Օսիկ Հարությունյանին է հանձնել նույն հանձնման-ընդունման ակտի 2-րդ կետում նշված գույքային միավորները: Հանձնման-ընդունման ակտով կողմերը հաստատել են, որ կատարել են գույքային միավորների հանձնում-ընդունումը: Նշված վճռի հիման վրա Օսիկ Հարությունյանին անցած գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը կատարվել է 23.05.2014 թվականին:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 13.09.2016 թվականի թիվ 1000061/2 հանձնարարագրի համաձայն՝ Ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության 03.03.2017 թվականի թիվ 1000061/2 վերստուգման ակտը:

ա) Սույն գործով վիճարկվող 03.03.2017 թվականի թիվ 1000061/2 ստուգման ակտի «1. Շահութահարկ» վերտառությամբ 1-ին կետի 2-րդ ենթակետով արձանագրվել է հետևյալը.

«Կատարված վերադրումների պարզվել է նաև, որ «Լուսակերպի Հարություն թոչնաբուծական ֆաբրիկա» ՍՊ ընկերության հիմնադիր (74%) Օսիկ Հարությունյանը 2009-2012թթ. ընթացքում կազմված համապատասխան պայմանագրերի հիման վրա փոխառության կարգով ՍՊ ընկերությանն է փոխել 465.881.000 դրամ կանխիկ գումար, որից 176.400.000 դրամը հետ է վերադարձվել 2010-2012թթ. ընթացքում: Մնացած 289.481.000 դրամը հետ վերադարձնելու և բռնագանձելու պահանջով վերջինս դիմել է դատարան: Այնուհետև «Լուսակերպի Հարություն թոչնաբուծական ֆաբրիկա» ՍՊ ընկերության և Օսիկ Հարությունյանի միջև կնքվել է հաշտության համաձայնագիր, համաձայն որի 2013թ. հոկտեմբերի 18-ի Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռով 289.481.000 դրամի դիմաց ՍՊ ընկերությանը պարկանոդ անշարժ գույքի մի մասը թվով 6 մասնաշենք /անասնագոմ/ 9860.76 քառ. մետր մակերեսով, ենթակայան 43.45 քառ. մետր մակերեսով և 60.5 քառ. մետր թոչնադրի հավաքման կետերը սեփականության իրավունքով փոխվել է Օսիկ Հարությունյանին: Ընդհանուր կատարման վճռի հիման վրա ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտվյանի սպասարկման գրասենյակի կողմից Օսիկ Հարությունյանի անվամբ փոխվել է 23.05.2014թ. հաստատված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի «դ» ենթակետով սահմանված է, որ շենքերի, շինությունների, բնակելի կամ այլ փորձարկման օբյեկտների հետքում եկամտի արացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքի կատարման օրվա դրությամբ, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից, որը փոխյալ դեպքում կատարվել է 23.05.2014 թվականին:

Հարկային գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ընկերության կողմից 2014 թվականի արդյունքներով շահութահարկի հաշվարկ հարկային տեսչություն չի ներկայացվել:

Վերոգրյալի արդյունքում «Լուսակերպի Հարություն թոչնաբուծական ֆաբրիկա» ՍՊ ընկերության կողմից բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութահարկի գումարը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանված 20% դրույքաչափի հաշվարկով կկազմի 57.896.200 դրամ (289481 000 X 20%), (շահութահարկի հաշվարկման գծով նվազեցումներ չեն կատարվում, քանի որ հիմնական միջոցների մնացորդային արժեքները կազմում են 0): «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվարկը /հայրաբարագիրը, հաշվետվությունը/ հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու կամ չներկայացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 լրացած օրվա համար հարկ վճարողից գանձվում է փոստանք (նաև ստուգման ակտով) հաշվարկված հարկի ընդհանուր գումարի 5%-ի չափով (այդ փոստանքների հանրագումարը չպետք է գերազանցի այդ հարկի հաշվարկված ընդհանուր գումարը), որը կազմում է 57.896.200 դրամ: «Հարկերի մասին» ՀՀ

օրենքի 25 հոդվածի համաձայն հաշվապահական հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու, հաշվապահական հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերն ու տեղեկությունները սխալ կազմելու համար հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով պակաս հաշվարկված հարկի գումարի 10 փոկոսի չափով, որ կազմում է 5.789.620 դրամ: «Հարկերի մասին» 23-րդ հոդվածի 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկի գումարը սահմանված ժամկետին բյուջե չվճարելու համար հաշվարկվում է ուշացման օրական տույժ 31.698.170 դրամի չափով (57.896.200 X 0.15% X 365):

Կարարված վերադրումներ «Լուսակերպի Հարություն թոշնաբուժական ֆարմիկա» ՍՊ ընկերության կողմից բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութահարկի գումարը տույժ և տուգանքների հետ մասին ընդամենը կազմում է 153.280.190 դրամ (...):

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.05.2017 թվականի թիվ 29/2 որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության 03.03.2017 թվականի թիվ 1000061/2 ակտի 1-ին կետից նվազեցվել են շահութահարկի պարտավորությունները 30.656.038 ՀՀ դրամի չափով, այդ թվում՝ շահութահարկը 11.579.240 ՀՀ դրամ, տույժերը՝ 6.339.634 ՀՀ դրամ, տուգանքը՝ 12.737.164 ՀՀ դրամ, ակտի մնացած կետերը թողնվել են անփոփոխ:

Դատարանը հայրը բավարարել է մասնակիորեն և պատճառաբանել, որ հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ դատական ակտը չի կարող դիտվել որպես գործարք, հետևաբար տվյալ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չեն իրավահարաբերության ծագման պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի «դ» կետի դրույթները: Մինևնույն ժամանակ Դատարանը գտել է, որ սույն գործով չի հիմնավորվել պարտատիրոջը հանձնված գույքի՝ շահութահարկի իմաստով զրո արժեք ունենալու հանգամանքը: Դատարանի 19.06.2018 թվականի վճռով Ընկերության հայրը բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչվել 03.03.2017 թվականի թիվ 1000061/2 ակտի 1-ին կետի 2-րդ ենթակետը և 4-րդ կետի 9-րդ ենթակետը, ինչպես նաև թիվ 1000061/2 ակտի 1-ին կետի 2-րդ ենթակետը և 4-րդ կետի 9-րդ ենթակետն անփոփոխ թողնելու մասով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 23.05.2017 թվականի թիվ 29/2 որոշումը, մնացած մասով հայրը մերժվել է:

Վերաքննիչ դատարանը 04.03.2019 թվականի որոշմամբ մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ նույն որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումների և հիմնավորումների շրջանակում: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանն իրավացիորեն է եկել այն եզրահանգման, որ դատական ակտն իր բնույթով գործարք չէ, մինևնույն ժամանակ հավելելով, որ 18.10.2013 թվականի թիվ ԿԴ/0352/02/13 քաղաքացիական գործով կայացված և 20.11.2013 թվականին օրինական ուժի մեջ մտած ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռով հաստատված հաշտության համաձայնությամբ, ըստ էության, տեղի է ունեցել ընկերության պարտավորության նվազեցում, որը չի հանգեցրել հարկատու ընկերության սեփական կապիտալի ավելացմանը, քանի որ այս առումով առկա չէ ակտիվների և պարտավորության տարբերություն. սույն դեպքում փոխառության պարտքի գումարի դիմաց որոշակի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն ընկերության կողմից ընդամենը փոխանցվել է պարտատիրոջը: Արդյունքում, սույն դրվագով խոսք չի կարող գնալ ընկերության եկամտի, համախառն եկամտի և հարկվող շահույթի առկայության մասին:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, ստորադաս դատարանները ոչ իրավաչափորեն են եկել այն եզրահանգման, որ դատական կարգով հաստատված հաշտության համաձայնությունը գործարք չէ:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ

ԿԴ/0352/02/13 քաղաքացիական գործով 18.10.2013 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հաշտության համաձայնությամբ Հնկերությունը ընդունել է Օսիկ Հարությունյանի նկատմամբ ունեցած 289.600.000 ՀՀ դրամ գումարի չափով պարտքը և, հինք ընդունելով մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը, հիշյալ պարտքի դիմաց իրեն սեփականության իրավունքով պատկանող 07-048-1400-0010-002-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-003-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-004-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-005-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-006-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-007-000 անասնաշենքը, 07-048-1400-0010-015-000 ենթակայականը և նշված գույքային միավորների սպասարկման հողամասը փոխանցել է պարտատեր Օսիկ Հարությունյանին՝ ի սեփականություն:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոնշյալ դատական կարգով հաստատված հաշտության համաձայնությունը ըստ էության գործարք է. այսինքն՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ/0352/02/13 քաղաքացիական գործով 18.10.2013 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հաշտության համաձայնությամբ սահմանված փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասը՝ 289.600.000 ՀՀ դրամ գումարը, նշված դեպքում հատուցումն է, ինչը պետք է հաշվի առնել համախառն եկամուտը որոշելիս:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վիճարկվող վարչական ակտի շահութահարկի մասով հարկային պարտավորությունների իրավաչափությունը ենթակա է գնահատման վերագրյալի հաշվառմամբ:

բ) Վիճարկվող 03.03.2017 թվականի թիվ 1000061/2 ստուգման ակտի «4. Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 4-րդ կետի 9-րդ ենթակետով նշվել է հետևյալը.

«*«Լուսակերտի Հարություն թոչնարուծական ֆաբրիկա» ՍՊ ընկերության հիմնադիր (74%) Օսիկ Հարությունյանը 2009-2012թթ. ընթացքում կազմված համապարասիան պայմանագրերի հիման վրա փոխառության կարգով ՍՊ ընկերությանը է փոխել 465.881.000 դրամ կանխիկ գումար, որից 176.400.000 դրամը հեղձ է վերադարձվել 2010-2012թթ. ընթացքում: Մնացած 289.481.000 դրամը հեղձ վերադարձնելու և բռնագանձելու պահանջով վերջինս դիմել է դատարան: Այնուհետև «ԼՀԹՖ» ՍՊ ընկերության և Օսիկ Հարությունյանի միջև կնքվել է հաշտության համաձայնագիր, համաձայն որի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռով 289.481.000 դրամի դիմաց ՍՊ ընկերությանը պարկանող անշարժ գույքի մի մասը թվով 6 մասնաշենք /անասնազու/ 9860.76 քառ. մետր մակերեսով, ենթակայան՝ 43.45 քառ. մետր մակերեսով և 60.5 քառ. մետր թոչնարի հավաքման կետերը սեփականության իրավունքով փոխվել է Օսիկ Հարությունյանին: Հետագայում դատարանի վճիռի հիման վրա ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտվյանի սպասարկման գրասենյակի կողմից Օսիկ Հարությունյանի անվամբ փոխվել է 23.05.2014 թվականին հաստատված անշարժ գույքի նկարմամբ իրավունքների պետական գրանցման վկայական: Օտարված հիմնական միջոցների գծով ընկերության կողմից դուրս չի գրվել համապարասիան հարկային հաշիվ, սահմանված կարգով չի հաշվարկվել ԱԱՀ խախտելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի ԱԱՀ-ով հարկվող գործարքներ /գործառնություններ/ են համարվում, մասնավորապես՝ ապրանքների մարակարգումը գործարք, որն իրականացվում է ապրանքների /այդ թվում արտադրանքի և անշարժ գույքի/ սեփականության իրավունքը որևէ ձևով կարարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով: Հարկային գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ընկերության կողմից 2014 թվականի արդյունքներով ԱԱՀ-ի գծով հաշվարկներ հարկային տեսչություն չի ներկայացվել: Ուարի կարարված վերագրյալ գործարքի գծով «ԼՀԹՖ» ՍՊԸ-ի կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը կկազմի 57.896.200 դրամ (289481000 X 20%): «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվարկը /հայրարարագիրը, հաշվարկությունը/ հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու կամ ներկայացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր լրացած օրվա համար հարկ վճարողից գանձվում է փուզանք (նաև արուզման ակտով) հաշվարկված հարկի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով (այդ փուզանքների հանրագումարը չպետք*

է գերազանցի այդ հարկի հաշվարկված ընդհանուր գումարը, որը կազմում 157.896.200 դրամ: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի համաձայն հաշվապահական հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու, հաշվապահական հաշվե-
փոխությունները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախա-
փեսված այլ փաստաթղթերն ու րեղելությունները սխալ կազմելու համար հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով պակաս հաշվարկված հարկի գումարի 10 տոկոսի չափով, որը կազմում է 5.789.620 դրամ: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն հարկի գումարը սահմանված ժամկետին բյուջե չվճարելու համար հաշվարկվում է ուշացման օրական տոյժ 31.698.170 դրամի չափով: Վերոգրյալի արդյունքում «ԼՀԹՖ» ՄՊ ընկերության կողմից բյուջե լրացուցիչ վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը տոյժ և տուգանքների հետ միասին ընդամենը կազմում է 153.280.190 դրամ:

Դատարանը, հայցը բավարարելով մասնակիորեն, ավելացված արժեքի հարկի մասով պատճառաբանել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված հարկային պարտավորությունների ծագումը և հարկային պարտավորությունների առաջացումը պայմանավորված է գործարքի իրականացման հետ: Նկատի ունենալով, որ հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ դատական ակտը չի կարող դիտվել որպես գործարք, Դատարանը գտել է, որ սովյալ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չեն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դրույթները: Մինևույն ժամանակ Դատարանը գտել է, որ Օսիկ Հարությունյանի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է, իսկ Ընկերության՝ գումար վճարելու պարտականությունը դադարել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու, այլ ոչ թե այդ դատական ակտի հիման վրա իրավունքի պետական գրանցման պահից: Դատարանի գնահատմամբ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, հետևապես ակտի 4-րդ կետի 9-րդ ենթակետով արձանագրված պարտավորությունը չէր կարող առաջանալ նաև իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի առաջին պարբերության իմաստով: Այսպիսով՝ Դատարանը գտել է, որ 03.03.2017 թվականի թիվ 1000061/2 ակտի 4-րդ կետի 9-րդ ենթակետն ընդունվել է օրենքի խախտմամբ, ուստի այդ մասով վարչական ակտը վերացնելու պահանջը բավարարվել է, իսկ հայցը մնացած մասով մերժվել:

Վերաքննիչ դատարանը, կրկին անգամ վերահաստատելով դատական ակտի իր բնույթով գործարք չհանդիսանալու իր դիրքորոշումը, արձանագրել է, որ վիճելի ակտում հիշատակված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով ապրանքի մատակարարումը՝ գործարքը, (...) սույն գործով բացակայում է: Մինևույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումն առ այն, որ վիճարկվող ակտի 4-րդ կետի 9-րդ ենթակետով արձանագրված պարտավորությունը չէր կարող առաջանալ նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-ին հոդվածի առաջին պարբերության իմաստով, այլ կերպ ասած՝ սովյալ դեպքում ենթադրյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո: Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանի 04.03.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.06.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանի այն եզրահանգմանը, որ հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ դատական ակտը չի կարող դիտվել որպես գործարք, գտնում է, որ այն անհիմն է, քանի որ դատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը տնօրինչական սկզբունքի իրացման արդյունքում կողմերի միջև կնքվող գործարք է, որի ուժով վերջիններս վիճելի իրավահարաբերության մասով նորից են որոշում իրենց իրավունքները և պարտականությունները՝ դրանով իսկ վերացնելով իրենց միջև եղած վճիռը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Ընկերության կողմից դատական կարգով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա անշարժ գույքի օտարումը, ավելացված արժեքի հարկով հարկվող ապրանքի մատակարարում որակելու համար որևէ էական նշանակություն չունի այն հանգամանքը, թե ինչ ձևով է անշարժ գույքը օտարվել, քանի որ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքի խմբագրության համաձայն գործարքն ապրանքի մատակարարում համարելու համար էական է ոչ թե գույքի օտարման եղանակը, այլ սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելը, ինչը հաշվի չի առնվել ստորադաս դատարանների կողմից: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի սխալ մեկնաբանության վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկները հիմնավոր են:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքի հանձնման պահի վերաբերյալ ընդհանուր կանոնը կիրառելիս, հաշվի չի առել նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործարքներով օտարվող գույքի՝ սույն դեպքում անշարժ գույքի, առանձնահատկությունները: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թիվ ԿԻ/0352/02/13 քաղաքացիական գործով 18.10.2013 թվականի վճռի հիման վրա Օսիկ Հարությունյանին անցած անշարժ գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը կատարվել է 23.05.2014 թվականին, հետևաբար նույն օրենքի իմաստով անշարժ գույքի հանձնման պահ անհրաժեշտ է դիտարկել անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման պահը:

Անդրադառնալով հարկային մարմնի կողմից առաջադրված հարկային պարտավորությունների առաջացման ծավալին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիմքով ծագած հարկային պարտավորությունների առընչությամբ հատկապես կարևոր է ճիշտ բնորոշել իրավահարաբերության բնույթը, քանի որ հաշտության համաձայնությունը, ըստ էության, ուղղված լինելով հայացողիմունով դատարան ներկայացված նյութաիրավական վեճի լուծմանը, իր մեջ կարող է պարունակել քաղաքացիաիրավական մի քանի տարբեր իրավահարաբերությունների տարբեր:

Սույն գործով հարկային պարտավորության ծագման հիմքում դրված է հաշտության համաձայնությունից փոխառության պարտավորության դադարումը և դրան համապատասխան անշարժ գույքի փոխանցելու պարտականությունը:

Տվյալ դեպքում վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահի դրությամբ փոխառության գումարը վերադարձնելու պարտավորության դադարեցումը չի կարող դիտվել անշարժ գույքի օտարման գին «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի եզրութաբանության իմաստով, քանի որ գիշված գումարը գործարքի գին դիտելու համար անհրաժեշտ է պարզել փոխանցվելիք անշարժ գույքի արժեքը, որը ըստ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված տվյալների, չի համապատասխանել հաշտության համաձայնությամբ դադարած փոխառության գումարին, այնինքն՝ չէր կարող դիտվել որպես գործարքի գին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի «դ» կետով, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով **հարկային պարտավորությունների առաջացումը պայմանավորել է գործարքի իրականացման (կատարման) հետ**, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը ելել է այն եզրահանգման, որ դատական կարգով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը ևս գործարք է, իսկ դատական կարգով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնության արդյունքում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից, հետևաբար դատարանն ակտով հաստատված հաշտության համաձայնության հիմքով ծագած հարկային պարտավորությունների առընչությամբ սույն գործով իրավահարաբերության բնույթը ճիշտ

քննորոշելու, ինդիքո առարկա գործարքով Ընկերության նկատմամբ հարկային պարտավորությունների առաջացման հանգամանքը սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո պարզելու, գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու, ինչպես նաև վարչական ակտի իրավաչափությունն օրենքով սահմանված կարգով գնահատելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ բողոքի պարտասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանությամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.03.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

Վարչական գործ թիվ ՎԴ/11082/05/20
2021թ.
ՎԴ/11082/05/20
Կ. Մաթևոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 17-ին
գրավոր ընթացակարգով քննելով «Էյ Քեյ Էյ Ջի» սահմանափակ պատասխանա-
տվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ
վարչական դատարանի 03.03.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որո-
շման դեմ՝ ըստ հայցի Ընկերության տնօրեն Արթեն Դուլյանի ընդդեմ ՀՀ բնապահպա-
նության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ նաև Տեսչական մարմին)՝ Տեսչական
մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման

ակտը, 08.12.2020 թվականի թիվ 04/-07-Ա որոշումը և 08.12.2020 թվականի թիվ 04/-72-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Արբեն Ղուլյանը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը, 08.12.2020 թվականի թիվ 04/-07-Ա և թիվ 04/-72-Ա որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 08.01.2021 թվականի որոշմամբ հայցադիմումը՝ Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 08.12.2020 թվականի թիվ 04/-07-Ա և թիվ 04/-72-Ա որոշումները վիճարկելու պահանջների մասով ընդունվել է վարույթ, իսկ Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը վիճարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.03.2021 թվականի որոշմամբ Ընկերության տնօրեն Արբեն Ղուլյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 08.01.2021 թվականի որոշումը հայցադիմումի ընդունումը մերժելու մասով թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ի պաշտոնե ներկայացուցիչ, տնօրեն Արբեն Ղուլյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածը, որը չպիտի կիրառեր, չի կիրառել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառեր, սխալ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել բողոքարկվող որոշումը վերացնելու պահանջի հիմնավորվածությանը վերաքննիչ բողոքում նշված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածին վերաբերող հիմնավորումների սահմաններում:

Վերաքննիչ դատարանի դատողությունները չեն բխում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից, որը, ըստ էության, ստուգման ակտի հասցեատիրոջ համար (կամ այն անձանց համար, ում իրավունքները և օրինական շահերը կարող են շոշափվել ստուգման ակտով) սահմանում է դատական կարգով ստուգման ակտը վիճարկելու երաշխիք: Վերաքննիչ դատարանը քննարկվող օրենքի համեմատ սահմանափակել է բողոքարկվող ակտերի շրջանակը օրենքից չբխող հանգամանքներով և պայմաններով՝ ստուգման ակտերի մի մասի հասցեատերերին գրկելով ստուգման ակտը բողոքարկելու հնարավորությունից, իսկ գործնականում գրկելով օրենքով սահմանված երաշխիքից:

Վարչական դատարան դիմելու փուլում իր իրավունքների խախտման փաստը կամ անմիջական խախտման հնարավորությունը որոշում է հայցվորը՝ իր սուբյեկտիվ գնահատումով: Տվյալ դեպքում հայցվորը համարել է, որ վիճարկվող ստուգման ակտով անմիջականորեն կարող էին խախտվել իր իրավունքները և օրինական շահերը, որովհետև ակտով արձանագրվել են իրավախախտման մասին վկայող, հայցվորի գնահատմամբ

իրականությանը չհամապատասխանող փաստեր, արձանագրվել է ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի պահանջի խախտում, որը կարող էր հետագայում հիմք հանդիսանալ հայցադիմումով վիճարկվող մյուս երկու վարչական ակտերի կայացման համար, որոնցով Հայցվորի նկատմամբ նշանակվել է տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով, և իրեն ներկայացվել է պատճառված 1.135.642 ՀՀ դրամի չափով վնասը հատուցելու պահանջ:

Ստուգման ակտի իրավաչափության վիճարկումը ընդգրկում է նաև վարչական կարգով բողոքարկման ընթացքում պատասխանողի ոչ իրավաչափ գործողությունների վիճարկումը: Ստուգման ակտն այնքանով, որքանով դրանով արձանագրված են իրավաբանական պատասխանատվության հիմքեր, արդեն իսկ միջանոսում է հայցվորի իրավունքներին:

Նշվածից հետևում է, որ Դատարանը սխալ է կիրառել և մեկնաբանել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 03.03.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և փոփոխել այն, կայացնել նոր դատական ակտ՝ Ընկերության տնօրեն Արբեն Դուլյանի ներկայացրած հայցադիմումը Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասով վարույթ ընդունելու մասին:

3. Վճուրքի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճուրքի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճուրքի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 80-րդ հոդվածների, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճուրքի դատարանն անհրաժեշտ է համարում անդարարանալ այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը եզրափակող փաստաթուղթը, որում արձանագրվել են կոնկրետ որոշող կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումներ, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում կարող է որակվել վարչական ակտ և ըստ այդմ՝ վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցով:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական

կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությանը կամ անգործությանը՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վկայակոչված իրավանորմերը սահմանում են, որ յուրաքանչյուր ոք իր իրավունքների պաշտպանության համար իրավունք ունի դիմելու վարչական դատարան: Այսինքն՝ սկզբունքորեն ենթադրվում է, որ անձի իրավունքի խախտման հնարավորություն գոյություն ունի և իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի դիմելու վարչական դատարան:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որ որպես ընդհանուր կանոն՝ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ (*լրե՛ս, Կարինե Զլալյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը 07.09.2010 թվականի թիվ ՄԴՌ-906 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր դեպքերում ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ:

Մեկ այլ՝ 17.04.2012 թվականի թիվ ՄԴՌ-1022 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, նախատեսելով վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը, նրանց՝ դատարան դիմելու իրավունքի իրականացումը յուրաքանչյուր դեպքում պայմանավորել է որոշակի իրավական նախադրյալների, այն է՝ «իրավական շահի» առկայությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր դատավարական սուբյեկտի պարագայում այն կրում է իրեն ներհատուկ բնույթ: Նրանց «իրավական շահը», կախված գործի փաստական հանգամանքներից, ինչպես նաև կոնկրետ սուբյեկտի իրավական կարգավիճակից, կրում է անհատականացված, կոնկրետ հասցեավորված բնույթ, և դրա առկայությունը յուրաքանչյուր դեպքում ենթակա է պարտադիր բացահայտման վարչական դատավարության՝ հայցադիմումի ընդունելիության փուլում: Արդյունքում սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու նկատմամբ իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների

անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները: Այսինքն՝ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և գործը քննող դատարանն իրավասու է գնահատելու այս հասկացությունը յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և, պարզելով, թե արդյոք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե ոչ (*յրե՛ս, Տիգրան Սամասարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով խնդրո առարկա հարցի վերաբերյալ իր ձևավորած իրավական դիրքորոշումը, ևս մեկ անգամ փաստում է, որ անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական ակտերը, գործողությունները կամ անգործությունը վարչական դատավարության կարգով վիճարկելու դեպքում անձը պետք է հիմնավորի, որ այդ վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով կամ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը: Եթե գործի քննության ընթացքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ վարչական դատարանը հանգում է այն եզրակացության, որ վիճարկվող վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ հայցով դատարան դիմած անձի որևէ իրավունք չի խախտվել, կամ վիճարկվող վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը որևէ կերպ չեն առնչվում տվյալ անձի ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով կամ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին, սպա գործի քննության պահին գործող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն պետք է վճիռ կայացնի վերջինիս հայցը մերժելու վերաբերյալ:

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, նույն օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից են նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վիճարկման հայցի առարկան միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է՝ հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*յրե՛ս, Սամվել Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի, դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է

մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են (տե՛ս, Սվե-տլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Այսպես, ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի 66-րդ հոդվածի համա-ձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակի-որեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձա-նագրում է, որ օրենսդրի կողմից անձին իրավունք է վերապահվել հայց ներկայացնել ՀՀ վարչական դատարան այն դեպքում, երբ վարչական մարմնի կողմից կայացված վարչական ակտով խախտվում են կամ կարող են խախտվել իր իրավունքները: Այսինքն՝ դատարան վիճարկման հայց ներկայացնելու համար պարտադիր պայման է հանդիսա-նում վարչական ակտի առկայությունը, որն այն վիճարկող անձի համար պետք է ունենա միջամտող ազդեցություն: Այլ կերպ ասած՝ գործող վարչադատավարական կանոնների համաձայն՝ վիճարկման հայցի առարկա կարող է հանդիսանալ բացառապես միջամտող վարչական ակտը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում հանդի-սանում է վարչական ակտ, թե ոչ, հետևաբար վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե ոչ:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմի-նների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիզիկական ու իրավաբանա-կան անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրի-նական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք ապահովելու նպատակով ՀՀ Ազգա-յին ժողովի կողմից 18.02.2004 թվականին ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածում ամրագրվել է որ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգո-րծությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմի-նների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն է, որը եզրափակվում է **վարչա-կան կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգո-րծություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմնի արտաքին ներ-գործություն ունեցող որևէ գործունեություն բնավ ինքնանպատակ չէ և պետք է հետապնդի նպատակներ, որոնց հասնելով էլ՝ այդ գործունեությունը պետք է եզրափակվի: Վարչա-կան մարմինը չի կարող գործունեություն ծավալել լոկ գործելու պատրանք առաջացնե-լու համար: Դա էական չափով հարկատուների միջոցների հաշվին գոյացող պետական բյուջեի միջոցների վատնում կլինի:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմինների արտաքին ներ-գործությանն ուղղված գործունեությունը պետք է իր տրամաբանական ավարտին հասնի, արտահայտվելով որոշակի վարչական (իրավական) ակտի կամ փաստացի ներգո-րծության տեսքով: Այդ գործունեությունը, ըստ «Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտի ընդունմամբ, ինչպես նաև գործողությամբ կամ անգործությամբ, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Այլ կերպ ասած վարչարարության արդյունքը վրա է հասնում հետևյալ եղանակներով.

- վարչական կամ նորմատիվ ակտի ընդունում,
- ռեալ ակտի ընդունում (գործողության կամ անգործության կատարում):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և **ուղղված է** անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Անդրադառնալով վերոգրյալ իրավանորմի բովանդակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր գործով վարչական ակտի հատկանիշների պարզաբանման համար դատարանը պետք է գնահատի վիճարկվող ակտի անհատական ակտ լինելու, վարչական մարմնի կողմից ընդունված լինելու, արտաքին ներգործություն ունենալու, հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու, կոնկրետ գործի կարգավորման նպատակ հետապնդելու, անձի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու հանգամանքների միաժամանակյա առկայությունը (*տե՛ս «Օլիմպ» արտադրական կոոպերատիվն ընդդեմ՝ ՀՀ կառավարությանն առնիթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎՂ/4538/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի որոշումը*):

Ընդհանրացնելով վարչական ակտի հասկացության մեջ մտնող տարրերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ գտել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով.այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական

անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

Ընդ որում, թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար՝ գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտին բնորոշ կարևորագույն հատկանիշն այն է, որ վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար (յրեն՝ *Վարդիթեր Ավդյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նույնանման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման ակտերի կապակցությամբ՝ դրանք չհամարելով վարչական ակտ (յրեն, օրինակ, «Տայջրնոդկոյոդի» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության թիվ 3-1655(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը, «Տայջրնոդկոյոդի» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/0155/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.10.2011 թվականի որոշումը):

Անդրադառնալով վարչական ակտի բնորոշման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Վկայակոչված իրավական դիրքորոշումները վերաբերում են միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությանը, այսինքն՝ վարչական ակտի ընդհանուր բնորոշմանը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասում նշված բարենպաստ և միջամտող վարչական ակտերին ներկայացվող կոնկրետացված պահանջների վերաբերյալ որևէ վերլուծություն ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից չի արվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի իմաստով.

ա) **բարենպաստ վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ **նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման.**

բ) **միջամտող վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա **կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:**

Վերահաստատելով վարչական ակտի բնորոշմանը վերաբերող վեց հատկանիշներից առաջին հինգի, մասնավորապես՝ վարչական ակտն անհատական իրավական ակտ հանդիսանալու, վարչական մարմինների կողմից հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով ընդունված լինելու և արտաքին ներգործություն ունենալու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած

իրավական դիրքորոշումները և անհրաժեշտ համարելով անդրադառնալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար վարչական ակտով ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու, դրանով վերջիններիս համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու մասով վարչական ակտի բնորոշմանը վերաբերող հատկանիշին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Ինչպես վերև արդեն նշվել է՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական ակտի ընդհանուր բնորոշմանը՝ նշված իրավանդումի վերլուծությամբ հանգելով նաև այն հետևության, որ վարչական ակտն *ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում*՝ վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

Անհրաժեշտ համարելով զարգացնել վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի բովանդակությանը:

Այսպես. Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական ակտի հասկացությունը և տեսակները սահմանող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի՝ հաշվի առնելով նշված նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդունումը նպատակ է հետապնդել պատշաճ երաշխիք ապահովելու ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության վարչական մարմինների հետ հարաբերություններում: Ընդ որում, նշված օրենքի 2-րդ գլխում, որպես իրավաչափ վարչարարության իրականացման լրացուցիչ երաշխիքներ, ամրագրվել են նաև վարչարարության հիմնարար սկզբունքները, որոնցից ամենակարևորը թերևս վարչարարության օրինականության սկզբունքն է, որն անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում նաև մյուս բոլոր սկզբունքները պահպանելու համար: Ըստ այդմ, օրենսդրի նպատակը միտված է եղել նրան, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք հնարավորություն ունենան արդյունավետ կերպով պաշտպանվել վարչական մարմինների միջամտող վարչական ակտերից, գործողություններից և անգործությունից: Օրենսդիրն անձանց իրավունքների և օրինական շահերի վարչական կամ դատական կարգով պաշտպանության միջոցները պայմանավորել է վարչական մարմնի գործունեության եզրափակման եղանակով: Մասնավորապես, վարչական կամ նորմատիվ ակտերից իրավական պաշտպանությունն այդ ակտերի իրավաչափության վիճարկումն է վարչադատավարական կարգով՝ անվավերության կամ առոչնչության հիմքերով, ինչպես նաև պարտավորեցման հայցը, եթե ոչ իրավաչափ կերպով մերժվել է հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը, իսկ ռեալ ակտից, այսինքն՝ վարչական մարմնի դրսևորած ոչ իրավաչափ գործողությունից կամ անգործությունից իրավական պաշտպանությունը գործողության կատարման հայցն է, եթե ոչ իրավաչափ կերպով մերժվել է հայցվող գործողության կատարումը կամ դրսևորվել է անգործություն: Ընդ որում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վիճարկման հայցի առարկա կարող է լինել միայն միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները), կարևորվում է վիճարկվող փաստաթուղթը վարչական ակտ որակելու հարցը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում առանձնահատուկ ուշադրության արժանացնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավակարգավորումը, ըստ որի՝

ա) **բարենպաստ վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ **նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման**։

բ) **միջամտող վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա **կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը**։

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, նշված հոդվածի 1-ին մասով, որպես ընդհանուր կանոն, վարչական ակտը սահմանել է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և **ուղղված է** անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն։

Այսինքն՝ վարչական ակտի որակյուն օրենսդիրը պայմանավորել է ոչ թե դրանով ուղղակի իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հանգամանքով, այլ միայն նշված իրավական հետևանքների առաջացմանն ուղղված լինելու հանգամանքով։ Այլ կերպ ասած, բնավ պարտադիր չէ, որ վարչական ակտը անպայմանորեն անձանց համար ուղղակիորեն սահմանի, փոփոխի, վերացնի կամ ճանաչի իրավունքներ և պարտականություններ, բավարար է միայն այն, որ այդ վարչական ակտն ուղղված լինի այդ իրավունքների և պարտականությունների սահմանմանը, փոփոխմանը, վերացմանը կամ ճանաչմանը։

Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը կոնկրետացրել է բարենպաստ և միջամտող վարչական ակտերին ներկայացվող պահանջները, ի թիվս այլնի, ամրագրելով նաև վարչական ակտի միջոցով անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող կամ վատթարացնող պայմանը։ Այսինքն՝ վարչական վարույթը եզրափակող իրավական ակտի բնորոշումն օրենսդիրը պայմանավորել է նաև վարչական ակտի միջոցով անձանց **իրավական կամ փաստացի դրությունը բարելավող կամ վատթարացնող հետևանքի առաջացմամբ**։ Այլ կերպ ասած, եթե վարչական վարույթը եզրափակվել է այնպիսի վարչական ակտի ընդունմամբ, որի միջոցով ցանկացած եղանակով բարելավել կամ վատթարացել է անձանց իրավական կամ փաստացի դրությունը, ապա իրավական համակարգում այդ ակտը չի կարող բնորոշվել այլ կերպ, քան համապատասխանաբար որպես բարենպաստ կամ միջամտող վարչական ակտ։

Վերոգրյալ իրավական դիրքորոշումը, սակայն, չի բացառում վարչական ակտով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար ուղղակի հետևանքներ առաջացնելը, հետևաբար վարչական վարույթը եզրափակող փաստաթուղթը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է որակվի որպես վարչական ակտ ինչպես այն դեպքում, երբ դրանով **ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար առաջանում են ուղղակի հետևանքներ, այնպես էլ այն դեպքում, երբ ուղղված (միտված) են այդ հետևանքների առաջացմանը և ակներև է, որ դրանում արձանագրված խախտումներն ինքնին վատթարացնում են վերջիններիս իրավական կամ փաստացի դրությունը**։

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը։

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման Վճռաբեկ դատարանի գործառույթը ենթադրում է ոչ միայն միասնական դիրքորոշման ձևավորում՝ իրավական նորմի մեկնաբանության արդյունքում, այլև՝ ձևավորված

դիրքորոշման հետագա զարգացում: Նման իրավիճակներում իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված նոր դիրքորոշումը պետք է գերակայի նախորդ դիրքորոշման նկատմամբ և հիմք ընդունվի Վճռաբեկ դատարանի նոր դիրքորոշումը՝ ձևավորած որոշման կայացման պահին դատարանների վարույթներում գտնվող գործերի լուծման համար:

Այսպիսով, զարգացնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, **Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես** վարչական ակտին բնորոշող հատկանիշներ անհրաժեշտ է դիտարկել հետևյալները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) **վարչական ակտն առաջացնում է ուղղակի իրավական հետևանքներ կամ ուղղված (միտված) է այդ հետևանքների առաջացմանը** վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, դրանով վարչական մարմինը վերջիններիս համար սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև նրանց տրամադրում է իրավունքներ կամ ստեղծում է այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, կամ մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է նրանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն է դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական վարույթը եզրափակող փաստաթուղթը, ի թիվս այլ հատկանիշների, վարչական ակտ պետք է որակվի ոչ միայն այն պարագայում, երբ դրանով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար **ուղղակի իրավական հետևանքներ են առաջանում, այլ նաև այն դեպքում, երբ տվյալ վարչական ակտն ուղղված է իրավական հետևանքներ**

առաջացնելուն և ակներև է, որ դրանում արձանագրվածն ինքնին բավարար է վերջիններիս իրավական կամ փաստացի դրությունը վատթարացնելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ վարչական դատարան ներկայացրած վիճարկման հայցով Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը, 08.12.2020 թվականի թիվ 04/-07-Ա և թիվ 04/-72-Ա որոշումները:

Դատարանը 08.01.2021 թվականի որոշմամբ Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը՝ Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 08.12.2020 թվականի թիվ 04/-07-Ա և թիվ 04/-72-Ա որոշումները վիճարկելու պահանջների մասով ընդունել է վարույթ, իսկ Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը վիճարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժել է՝ գտնելով, որ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը որևէ միջամտող հետևանք չի առաջացրել հայցվորի համար, ինչն էլ իր հերթին վկայում է այն մասին, որ հայցվորի որևէ իրավունք վիճարկվող ստուգման ակտով չի խախտվել:

Վերաքննիչ դատարանը 03.03.2021 թվականի որոշմամբ մերժել է Ընկերության տնօրեն Արբեն Դուլյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի 08.01.2021 թվականի որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասով թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ «վարչական մարմինների գործունեության ոչ բոլոր արդյունքներն են հանդիսանում վարչարարության արդյունք (վարչական կամ ռեալ ակտ) և, ըստ այդմ, դրանցից ոչ բոլորն են ինքնուրույն առաջացնում անձանց համար իրավական կամ փաստական հետևանքներ: Հարչական մարմիններն իրենց գործունեության ընթացքում կարող են սրելով մի շարք փաստաթղթեր, որոնք ինքնին չեն միջանրում անձանց իրավունքներին ու ազատություններին: Դրանք, թեև, կարող են հետագայում հիմք հանդիսանալ անձի համար հետևանքներ առաջացնելուն, սակայն քանի դեռ չեն դրվել որևէ վարչական կամ ռեալ ակտի հիմքում, չեն հանդիսանում իրավական հետևանքներ առաջացնող (օրինակ՝ վարչական վարույթի ապացույց հանդիսացող) վարչական մարմնի արեղծած որևէ փաստաթուղթ կամ վարչական վարույթի վերաբերյալ ծանուցմանն ուղղված որևէ գործողություն): Ուարի նման փաստաթղթերը կամ գործողությունները ենթակա չեն ինքնուրույն վիճարկման: Դրանց իրավաչափության հարցը կարող է վարչադատական վերահսկողության առարկա դառնալ բացառապես վերջնական ակտի իրավաչափության ստուգման շրջանակներում:

Փաստորեն, վարչական մարմնի կողմից արեղծված ոչ բոլոր փաստաթղթերն են միտված անձանց համար իրավունքներ և պարտավորություններ սահմանելուն: Դրանք թեև կրում են ապացուցողական բնույթ և հետագայում կարող են դրվել արդեն պարտավորություն առաջացնող վարչական ակտի հիմքում (օգտագործվել որպես ապացույց), սակայն վերջնական վարչական ակտի բացակայության պայմաններում դրանք առանձին վիճարկման առարկա չեն կարող դառնալ:

Տվյալ պարագայում հայցվորի կողմից վիճարկման առարկա է դարձվել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը, որպիսի ակտով արձանագրվել է, որ տեղի է ունեցել ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի խախտում:

(...) այդ ստուգման ակտն ինքնին որևէ հետևանք չի առաջացնում որևէ տարբերակի, այդ թվում հայցվորի համար: Այն թեև հետագայում որպես ապացույց դրվել վիճարկվող ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 08.12.2020 թվականի թիվ 04/-07-Ա և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 08.12.2020 թվականի թիվ 04/-72-Ա որոշումների հիմքում, սակայն ինքնին այդ ստուգման ակտը որևէ հետևանք չի առաջացրել, որպիսի պայմաններում, հայցվորի մտք չէր կարող առաջանալ դատական պաշտպանության դիմելու հնարավորություն:

Ի վերջո վիճարկվող ստուգման ակտն այս պահին կրում է բացառապես ապացուցողական փաստաթղթի բնույթ»:

Մինչդեռ վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն վարչական գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 4-րդ հոդվածի 3.1-րդ մասի 2-րդ կետով, 08.06.2020 թվականին հրապարակել է թիվ 59-Ա հանձնարարագիրը (այսուհետ՝ թիվ 59-Ա հանձնարարագիր), որով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչներ Լևոն Թադևոսյանին և Հայկ Մանուկյանին հանձնարարել է Ընկերությունում իրականացնել ստուգում, որպես ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջան նշելով 13.07.2020 թվականից մինչև ստուգման ավարտը, ստուգման ժամկետ նշելով 5 աշխատանքային օր, իսկ ստուգման նպատակ նշելով բնապահպանության ոլորտը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին ստուգվող սուբյեկտի ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունը պարզելը: Թիվ 59-Ա հանձնարարագիրը, ըստ դրա դարձերեսին առկա գրառման, ստուգվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավար Արթեն Դուլյանին է հանձնվել 08.06.2020 թվականին **(գ.թ. 20):**

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչներ Լևոն Թադևոսյանի և Հայկ Մանուկյանի կողմից 18.06.2020 թվականին կազմվել է թիվ 59 ստուգման ակտի նախագիծը, որը նույն օրը հանձնվել է ստուգվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավար Արթեն Դուլյանին վերջինիս նաև ծանուցելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության պահանջների համաձայն 5 աշխատանքային օրվա ընթացքում ակտի նախագծում նշված խախտումների վերաբերյալ առարկություններ ներկայացնելու իրավունքի մասին **(գ.թ. 21)::**

Ընկերության տնօրենի կողմից ներկայացվել են առարկություններ **(գ.թ. 22-23):**

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչներ Լևոն Թադևոսյանի և Հայկ Մանուկյանի կողմից 26.06.2020 թվականին կազմվել է թիվ 59 ստուգման ակտը, որով, որպես ստուգմամբ բացահայտված խախտում, արձանագրվել է, որ Ընկերությունն իր գործունեության ընթացքում 2019 թվականի հոկտեմբեր ամսին թիվ 000143 առ 11.09.2013 թվականին տրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված նորմերից ավել ջուր է վերցրել, որպես խախտված իրավական նորմ է նշվել ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածը, իսկ որպես պատասխանատվություն առաջացնող իրավանդում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասը **(գ.թ. 27-28):**

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչ Լևոն Թադևոսյանի կողմից 26.06.2020 թվականին կազմվել է ««Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ի կողմից ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառի իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման» Հաշվարկ **(գ.թ. 29)**, ըստ որի՝ վճարման ենթակա գումար է հաշվարկվել 1.135.642 ՀՀ դրամ և որը կցվել է ստուգման ակտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ 26.06.2020 թվականին կազմված թիվ 59 ստուգման ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է վարչական ակտ, որպիսի եզրահանգումը հիմնավորվում է ներքոշարադրյալով.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (**հարուցման փուլ**): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառույթները (**ընթացիկ փուլ**): Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (**եզրափակիչ փուլ**):

Սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի եզրափակմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

(...)

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ **վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը**, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկով գտել է, որ վարչական վարույթը մի գործընթաց է, որը կարող է բաղկացած լինել մի քանի փուլերից, և այդ բոլոր փուլերը հետապնդում են միասնական նպատակ, այն է՝ վարչական ակտի ընդունումը (*յրեն, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հանրաքարտերողների ոլորտային հարկային րեսուրսներն ընդդեմ «Գևորգ-Ա» ՍՊԸ-ի թիվ 3-918(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտն ընդունվում է վարչական մարմնի հատուկ գործունեության արդյունքում, որը կոչվում է վարչական վարույթ: Օրենսդիրը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում սպառիչ կերպով թվարկել է վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող հանգամանքները. դրանք են՝ (1) ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումը կամ բողոքը և (2) վարչական մարմնի նախաձեռնությունը: Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումը կարող է տեղի ունենալ միայն օրենքով վարչական մարմնին համապատասխան վարչական ակտ ընդունելու իմպերատիվ կամ հայեցողական լիազորություն վերապահված լինելու դեպքում: Իրացնելով իր այդ լիազորությունը՝ վարչական մարմինը հարուցում է վարչական վարույթ, որը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (*յրեն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ «Էդ-Վան» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/0883/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումը, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական մարմինն իրավասու է իր նախաձեռնությամբ հարուցել վարչական վարույթ միայն **վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջի**, դրանից բխող անհրաժեշտության կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորության առկայության դեպքում, քանի որ

վարչական մարմինների հիմնական գործառնությանն նպատակը Սահմանադրության և օրենքների իրականացումն է (կատարումը) իրավական պետության սկզբունքներին և կանոններին համապատասխան:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ օրենսդիրը վարչական մարմնին իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու իրավասություն է տվել միայն այն դեպքում, երբ առկա է վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջ, դրանից բխող անհրաժեշտություն կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորություն: Ընդ որում, որպես վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու օր, օրենսդիրը դիտարկել է վարչական ակտի ընդունմանը նպատակամղված գործողությունն (գործողությունները) սկսելու օրը, որին փաստորեն հաջորդում է գործի քննարկման հետ կապված՝ օրենքով նախատեսված գործառնությունների իրականացումը (**ընթացիկ փուլ**) և վարչական ակտի ընդունումը (**եզրափակիչ փուլ**): Այսինքն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը չի կարող եզրափակվել այլ կերպ, քան վարչական ակտի ընդունմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերոգրյալ իրավանորմի մեկնաբանությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դրանում ամրագրված իրավակարգավորումը բնավ չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, հատկապես այն հարաբերությունների մասով, որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում (*լրեն, Սարգիս Խարիկյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎՊ/12466/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կարգավորվող վարույթի առանձնահատկությունները սահմանվում են նշված օրենքով, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վեճի առարկա իրավահարաբերությունների նկատմամբ միայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ, այլ խոսքով, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված վարչական վարույթի ընթացքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է միայն այն հարաբերությունների մասով, որոնք «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կամ կարգավորված են մասամբ կամ առհասարակ կարգավորված չեն:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ մարմինների, Հայաստանի Հանրապետության տարածքում իր լիազորությունների շրջանակներում

ստուգումներ իրականացնելու իրավասությանը օժտված են նաև Հայաստանի Հանրապետության տեսչական մարմինները:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր, որտեղ նշվում են ստուգում իրականացնող մարմնի անվանումը, ստուգվող տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգաթերթով նախատեսված այն հարցերի շրջանակը, որոնք անհրաժեշտ է պարզաբանել տվյալ ստուգման ընթացքում (Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողության ղեկաբերում ստուգման հարցերը), ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման նպատակը, ժամկետը, ստուգման իրավական հիմքերը, նույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասով նախատեսված ղեկաբերում՝ նաև ստուգումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները, իսկ նույն մասով նախատեսված դիմում կամ տեղեկատվություն ստանալու դեպքերում՝ նաև դրանք տրամադրողի տվյալները: Հրամանում կամ հանձնարարագրում չնշված պաշտոնատար անձինք չեն կարող մասնակցել ստուգմանը: Ծառայողական պարտականությունները կատարելու անհնարինության պատճառով ստուգումն իրականացնող պաշտոնատար անձին այլ անձով փոխարինելու դեպքում փոփոխությունը կատարվում է հրամանով, որի մասին տնտեսավարող սուբյեկտը ծանուցվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետն ավարտվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, ստուգումն իրականացնող անձը (...) հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա ամփոփում է ստուգման արդյունքները՝ խախտումներ չհայտնաբերելու դեպքում կազմում տեղեկանք, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ ակտի նախագիծ: Տեղեկանքը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը:

Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում ստուգող մարմինը ուսումնասիրում է դրանք և առարկություններ ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ակտի մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող

սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստորագրմանը: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունները կցվում են ակտին և կազմում դրա անբաժանելի մասը:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի՝ ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում ակտում այդ մասին կատարվում է համապատասխան գրառում:

(...)

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խախտումներ չհայտնաբերվելու դեպքում կազմված տեղեկանքում արձանագրվում են այն կազմելու ամսաթիվն ու վայրը, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի անվանումները, ստուգող պաշտոնատար անձանց կազմը, ստուգման նպատակը, ժամկետը, արդյունքները:

Ակտում նշվում են՝

1) ակտի անվանումը, համարը, կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

2) ստուգում իրականացնող պետական մարմնի անվանումը.

3) ստուգում նշանակելու մասին հրամանի կամ հանձնարարագրի ամսաթիվն ու համարը.

4) ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը.

5) ստուգվող տնտեսավարող սուբյեկտի անվանումը, ինչպես նաև վերջինիս պաշտոնատար անձի կամ նրան փոխարինող անձի անունը, ազգանունը.

6) ստուգում անցկացնելու ամսաթիվը, վայրը և ժամանակահատվածը.

7) փորձագիտական եզրակացությունը՝ ստուգման ընթացքում փորձաքննություն անցկացնելու դեպքում: Փորձագիտական եզրակացությունը կցվում է ակտին և կազմում է դրա անբաժանելի մասը.

8) ստուգաթերթի անվանումը, ընդունման ամսաթիվը, հերթական համարը, որում ընդգրկված հարցերի շրջանակներում իրականացվել է ստուգումը, ինչպես նաև ստուգաթերթի այն հարցերը, որոնց պատասխանները հիմք են հանդիսացել խախտումն արձանագրելու համար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողության դեպքերի.

9) ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել.

10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը.

11) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունների ընդունման վերաբերյալ նշումները:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման արդյունքներն ամփոփվում են տեղեկանքում (խախտումներ չհայտնաբերելու դեպքում) կամ ստուգման ակտում (խախտումներ հայտնաբերելու դեպքում), ստուգման ակտը՝ որպես վարչական ակտ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ է մտնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) հանձնելուն հաջորդող օրվանից, իսկ նույն օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ստուգման ակտը դառնում է բողոքարկման ոչ ենթակա (անբողոքարկելի), եթե բաց է թողնված դրա ուժի մեջ մտնելուն հաջորդող վարչական կարգով բողոքարկման համար սահմանված վեցամսյա ժամկետը:

Վերոհիշյալ նորմերի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ստուգման վարչական վարույթն սկսվում է ստուգումն իրականացնող մարմնի ղեկավարի

(փոխարինող պաշտոնատար անձի) կողմից ստուգում իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագրի հրապարակելու միջոցով ստուգումն իրականացնող մարմնի նախաձեռնության դրսևորմամբ և ավարտվում ստուգման ակտի կազմմամբ *(տե՛ս, «Ռուբեն Գևորգյան» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտարևերի կոմիտեի թիվ ՎՊ2/0302/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստուգում իրականացնելու վարույթը հարուցվում է համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի հրապարակմամբ, որին հաջողում է այդ վարույթի ընթացիկ փուլը՝ հանձնարարագրում նշված պաշտոնատար անձանց կողմից փաստացի ստուգողական գործողությունների իրականացումը սահմանված ժամկետներում և ստուգման նպատակների շրջանակներում, որը եզրափակվում է տեղեկանքի կազմմամբ, եթե խախտումներ չեն հայտնաբերվում և ակտի կազմմամբ, եթե հայտնաբերվում են խախտումներ: Այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստուգում իրականացնելու վարույթի եզրափակման հնարավոր եղանակները երկուսն են.

- տեղեկանքի կազմումը,
- ակտի կազմումը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վարչական վարույթը եզրափակող նշված երկու փաստաթուղթը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով հանդիսանում են համապատասխանաբար բարենպաստ և միջամտող վարչական ակտեր, քանի որ տեղեկանքի կազմումը հաստատում է խախտումների բացակայությունը, ինչը տվյալ տնտեսավարող սուբյեկտի համար ունի նրա իրավական և փաստացի դրությունը բարելավող ազդեցություն, իսկ ակտի կազմումը հաստատում է խախտումների առկայությունը՝ վատթարացնելով տնտեսավարող սուբյեկտի իրավական և փաստացի դրությունը: Այլ կերպ ասած, եթե տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստուգում իրականացնելու վարույթը եզրափակվում է տեղեկանք կազմելով, այսինքն՝ նրա գործունեությունը գնահատվում է օրենքի պահանջներին համահունչ, ապա այդ վարույթում քննարկված հարցերով պայմանավորված այլևս բացառվում է նշված սուբյեկտի գործունեությանը հետագա միջամտությունը, մինչդեռ ստուգման վարույթն ակտի կազմմամբ եզրափակվելու պարագայում տվյալ տնտեսավարող սուբյեկտի ծավալած գործունեությունը գնահատվում է օրենքի պահանջների խախտմամբ իրականացված՝ դրանից բխող բացասական հետևանքներով:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածում ամրագրվել են Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի սկզբունքները, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

(...)

7) **ինքնահայտարարագրում և հարկային կարգապահություն՝** հարկ վճարողները պետք է Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով ինքնուրույն հաշվարկեն ու վճարեն հարկերը, վճարները:

ՀՀ հարկային օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձը պարտավոր է Օրենսգրքով այլ բան սահմանված չլինելու դեպքում Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում ինքնուրույն հաշվարկել և կատարել իր հարկային պարտավորությունները՝ Օրենսգրքով

և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով կատարելով նաև հարկի և (կամ) վճարի կանխավճարներ:

ՀՀ հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

- 1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝ (...)

բ. բնօգտագործման վճարը:

ՀՀ հարկային օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ և համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման համար սույն բաժնին համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է:

ՀՀ հարկային օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բնօգտագործման վճար վճարող են համարվում Օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող գործունեություն և (կամ) գործառույթ իրականացնող՝ նույն հոդվածում նշված կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

- 1) մակերևութային ջրերի օգտագործման համար բնօգտագործման վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրային ռեսուրսների (գետեր, լճեր) ջրօգտագործողները:

ՀՀ հարկային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բնօգտագործման վճարի օբյեկտներ են համարվում մակերևութային ջրերի օգտագործումը:

ՀՀ հարկային օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բնօգտագործման վճարի բազա է համարվում բնօգտագործման վճարի օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա՝ նույն բաժնով սահմանված դրույքաչափերով ու կարգով հաշվարկվում է բնօգտագործման վճարի գումարը:

Մասնավորապես՝

- 1) մակերևութային ջրերի օգտագործման համար բնօգտագործման վճարի բազա է համարվում մակերևութային ջրային ռեսուրսներից ջրառի՝ բնական ջրաղբյուրներից օգտագործման նպատակով վերցրված ջրի փաստացի ծավալը:

ՀՀ հարկային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բնօգտագործման վճարի հաշվարկման և դրույքաչափերի կիրառության համար սահմանվում են բնօգտագործման վճարի բազայի հետևյալ չափաքանակները.

- 1) մակերևութային ջրերի օգտագործման համար՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի համաձայն տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման (մակերևութային ջրերի ջրառի) ծավալները:

ՀՀ հարկային օրենսգրքի 211-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բնօգտագործման վճարի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու եռամսյակը, (...):

ՀՀ հարկային օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մակերևութային ջրերի օգտագործման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում բնական ջրաղբյուրներից օգտագործման նպատակով անմիջապես վերցրած ջրի ծավալի հիման վրա՝ հաշվի առնելով բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ հարկային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բնօգտագործման վճար վճարողները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը՝ ներառյալ, Օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներին համապատասխան, կազմում և Կառավարության սահմանած կարգով բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և հարկային մարմին են ներկայացնում բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բնօգտագործման վճար վճարողները ներկայացված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական

հարկային հաշվարկներում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով, Օրենսգրքի 52-54-րդ հոդվածներին համապատասխան, կարող են կազմել և բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների ճշտված միասնական հարկային հաշվարկները Կառավարության սահմանած կարգով ներկայացնել բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և հարկային մարմին:

ՀՀ հարկային օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Օրենսգրքի 213-219-րդ հոդվածներով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի գումարները պետական բյուջե են վճարվում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

Վերոգրյալ իրավակարգավորումները կառուցված են կարգապահ և օրինապահ հարկատուի կանխավարկածով, որը պարտավոր է ինքնուրույն հաշվարկել ու վճարել օրենքով նախատեսված հարկերն ու վճարները: Այսինքն՝ կարգապահ և օրինապաշտ հարկատուն, համապատասխան ելակետների առկայության պարագայում, հիմք ընդունելով այդ ելակետներում պարունակվող տվյալներն ու տեղեկությունները, պետք է ինքնուրույն հաշվարկի վճարման ենթակա հարկերն ու վճարները և կատարի համապատասխան վճարումները: Հետևաբար, եթե վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտով արձանագրվում են խախտումներ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել հարկային կամ այլ պարտավորությունների առաջացմանը, ապա կարգապահ և օրինապահ հարկատուն, հիմք ընդունելով արձանագրված տվյալներն ու տեղեկությունները, եթե չի վիճարկում դրանց առկայությունը, պարտավոր է ինքնուրույն հաշվարկել ու վճարել օրենքով նախատեսված հարկերն ու վճարները: Հակառակ պարագայում հարկային կամ այլ պարտավորությունների հաշվարկը կկատարի հարկային կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ վարչական մարմինը: Այլ կերպ ասած՝ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ստուգմամբ խախտումներ հայտնաբերելու և արձանագրելու պարագայում բնավ պարտադիր չէ, որ դրանցում ներառված տվյալների և տեղեկությունների հիման վրա հնարավոր հարկային կամ այլ պարտավորությունների առաջացման հարցը քննարկվի ու լուծվի հարկային կամ այլ մարմնի կողմից, այլ դա կարող է և նույնիսկ պարտավոր է կատարել հարկատուն՝ հիմք ընդունելով արձանագրված ելակետները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից 11.09.2013 թվականին Ընկերությանը տրամադրվել է թիվ 000143 ջրօգտագործման թույլտվությունը, որի 5-րդ կետով մակերևութային ջրային ռեսուրսների ջրօգտագործման ծավալ է սահմանվել. IV-0.327մ³/վրկ, V-2.5 մ³/վրկ, VI-2.245 մ³/վրկ, VII-1.68 մ³/վրկ, VIII-1.657 մ³/վրկ, IX-0.727 մ³/վրկ, X-0.292 մ³/վրկ:

Տվյալ դեպքում ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարը, հիմք ընդունելով **վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը** և դրանից բխող անհրաժեշտությունը, 08.06.2020 թվականին հրապարակած թիվ 59-Ա հանձնարարագրով հարուցել է վարչական վարույթ, որն ուղղված է եղել բնապահպանության ոլորտը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին Ընկերության ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունը պարզելուն: Վարչական վարույթի ընթացիկ փուլում պարզվել է, որ Ընկերությունն իր գործունեության ընթացքում 2019 թվականի հոկտեմբեր ամսին թիվ 000143 առ 11.09.2013 թվականին տրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված նորմերից ավել ջուր է վերցրել:

Վերոգրյալ վարչական վարույթը եզրափակվել է թիվ 59 ստուգման ակտի կազմմամբ, որում արձանագրվել է բացահայտված խախտումն ու խախտված իրավական նորմը՝ ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածը: Մինչև սույն ժամանակ ակտին կցված՝ «Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ի կողմից ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառի իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման» հաշվարկով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի ավագ

պետական տեսուչ Լևոն Թադևոսյանը ՀՀ կառավարության 03.04.2003 թվականի «Ջրերի հաշվառման այլընտրանքային կարգը հաստատելու մասին» թիվ 499-Ն որոշմամբ սահմանված բանաձևով հաշվարկել է ջրի ծավալը և, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված չափաքանակից ավել օգտագործված ջրի քանակը 56782լիտ է, արձանագրել է վճարման ենթակա 1.135.642 ՀՀ դրամ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ 08.06.2020 թվականին հրապարակված թիվ 59-Ա հանձնարարագրով վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը եզրափակվել է թիվ 59 ստուգման ակտի ընդունմամբ, որով Հնկերությանը վերագրվել են ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի խախտումներ այն բանի համար, որ Հնկերությունն իր գործունեության ընթացքում 2019 թվականի հոկտեմբեր ամսին թիվ 000143 առ 11.09.2013 թվականին տրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված նորմերից ավել ջուր է վերցրել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ հարկային օրենսգրքի վերոգրյալ իրավակարգավորումների հաշվառմամբ Հնկերությունը պարտավոր է թիվ 000143 ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ծավալներով ջրօգտագործման համար ինքնուրույն հաշվարկել և բյուջե վճարել բնապահպանական վճար: Ընդ որում, նշված ծավալներից ավելի չափով ջրօգտագործման փաստն արձանագրելու պարագայում ևս Հնկերությունը պարտավոր է ինքնուրույն հաշվարկել և բյուջե վճարել այդ ծավալին համապատասխան բնօգտագործման վճարներ: Ավելին, նշված ստուգման ակտն ուժի մեջ մնալու պարագայում այն մեկ այլ վարչական վարույթ հարուցելու և ստուգման ակտով արձանագրված խախտումների համար պատասխանատվություն սահմանող վարչական ակտ ընդունելու նախադրյալ է հանդիսանալու:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ 59 ստուգման ակտը համապատասխանում է վարչական ակտի բնորոշմանը, մասնավորապես, այն ընդունվել է վարչական մարմնի՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից, հանրային իրավունքի, այն է՝ պետական վճարների վերահսկողության իրականացման բնագավառում, կոնկրետ գործի կարգավորման, այն է՝ բնապահպանության ոլորտը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին Հնկերության ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունը պարզելու նպատակով, իրավական ակտ է և ունի հստակորեն որոշված հասցեատեր՝ Հնկերությունը, ունի արտաքին ներգործություն, մասնավորապես, նշված ակտն **ուղղված (միտված) է որոշակի հետևանքների առաջացմանը և ակնհայտ է, որ դրանով վատթարանում է Հնկերության իրավական կամ փաստացի դրությունը, քանի որ նախ**՝ ակտին կցված ««Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ի կողմից ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառի իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման» Հաշվարկի համաձայն՝ ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված չափաքանակից ավել օգտագործված 56782լիտ ջրի քանակի համար հաշվարկվել է վճարման ենթակա 1.135.642 ՀՀ դրամ, երկրորդ՝ այն նախադրյալ է հանդիսանում վարչական իրավախախտման վարույթ հարուցելու և վարչական պատասխանատվություն կիրառելու համար:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը վիճարկելու պահանջի մատով հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել, մինչդեռ նշված պահանջի մատով Դատարանը մերժել է Հնկերության հայցադիմումի ընդունումը՝ վերջինիս գրկվելով դատական կարգով իր խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից: Ընդ որում, Դատարանն իր որոշմամբ չի վկայակոչել հայցադիմումի ընդունումը մատով մերժման ենթակա լինելու մեր եզրահանգման իրավական հիմքը: Մասնավորապես, հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը նախատեսված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածով, սակայն Դատարանն իր որոշմամբ չի արձանագրել, թե նշված իրավանորմում թվարկված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու յոթ հիմքերից որն է կիրառել: Վճռաբեկ դատարանը հարկ է

համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածում թվարկված հիմքերից կոնկրետ հիմքին անդրադարձ չի կատարել նաև ՀՀ վերաքննիչ դատարանը:

Ամփոփելով վերոգրյալ փաստական և իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման հաշվառմամբ Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը վիճարկելու պահանջի մասով ևս պետք է ընդունվեր վարույթ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 03.03.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. մասնակի՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը վիճարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասով, վերացնել ՀՀ վարչական դատարանի 08.01.2021 թվականի որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/11082/05/20 վարչական գործով 12.12.2021 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

12.12.2021 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով «Էյ Քեյ Էյ Ջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 03.03.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության տնօրեն Արբեն Դուլյանի ընդդեմ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ նաև Տեսչական մարմին)՝ Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը, 08.12.2020 թվականի թիվ 04/07-Ա որոշումը և 08.12.2020 թվականի թիվ 04/72-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, 17.12.2021 թվականին որոշել է «Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 03.03.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. մասնակի՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը վիճարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասով, վերացնել ՀՀ վարչական դատարանի 08.01.2021 թվականի որոշումը»:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Ս. Անտոնյանս, Էդ. Սեդրակյանս, Ա. Բարսեղյանս, Տ. Պետրոսյանս համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը որոշման այդ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Արբեն Դուլյանը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը, 08.12.2020 թվականի թիվ 04/07-Ա և թիվ 04/72-Ա որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 08.01.2021 թվականի որոշմամբ հայցադիմումը՝ Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 08.12.2020 թվականի թիվ 04/07-Ա և թիվ 04/72-Ա որոշումները վիճարկելու պահանջների մասով ընդունվել է վարույթ, իսկ Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը վիճարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.03.2021 թվականի որոշմամբ Ընկերության տնօրեն Արբեն Դուլյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 08.01.2021 թվականի որոշումը հայցադիմումի ընդունումը մերժելու մասով թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ի պաշտոնե ներկայացուցիչ, տնօրեն Արբեն Դուլյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածը, որը չափտի կիրառեր, չի կիրառել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառեր, սխալ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել բողոքարկվող որոշումը վերացնելու պահանջի հիմնավորվածությանը վերաքննիչ բողոքում նշված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածին վերաբերող հիմնավորումների սահմաններում:

Վերաքննիչ դատարանի դատողությունները չեն բխում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից, որը, ըստ էության, ստուգման ակտի հասցեատիրոջ համար (կամ այն անձանց համար, ում իրավունքները և օրինական շահերը կարող են շոշափվել ստուգման ակտով) սահմանում է դատական կարգով ստուգման ակտը վիճարկելու երաշխիք: Վերաքննիչ դատարանը քննարկվող օրենքի համեմատ սահմանափակել է բողոքարկվող ակտերի շրջանակը օրենքից չբխող հանգամանքներով և պայմաններով՝ ստուգման ակտերի մի մասի հասցեատերերին գրկելով ստուգման ակտը բողոքարկելու հնարավորությունից, իսկ գործնականում գրկելով օրենքով սահմանված երաշխիքից:

Վարչական դատարան դիմելու փուլում իր իրավունքների խախտման փաստը կամ անմիջական խախտման հնարավորությունը որոշում է հայցվորը՝ իր սուբյեկտիվ գնահատմամբ: Տվյալ դեպքում Հայցվորը համարել է, որ վիճարկվող ստուգման ակտով անմիջականորեն կարող էին խախտվել իր իրավունքները և օրինական շահերը, որովհետև ակտով արձանագրվել են իրավախախտման մասին վկայող, Հայցվորի գնահատմամբ իրականությանը չհամապատասխանող փաստեր, արձանագրվել է ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի պահանջի խախտում, որը կարող էր հետագայում հիմք հանդիսանալ հայցադիմումով վիճարկվող մյուս երկու վարչական ակտերի կայացման համար, որոնցով Հայցվորի նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով, և իրեն ներկայացվել է պատճառված 1.135.642 ՀՀ դրամի չափով վնասը հատուցելու պահանջ:

Ստուգման ակտի իրավաչափության վիճարկումը ընդգրկում է նաև վարչական կարգով բողոքարկման ընթացքում Պատասխանողի ոչ իրավաչափ գործողությունների վիճարկումը: Ստուգման ակտն այնքանով, որքանով դրանով արձանագրված են իրավաբանական պատասխանատվության հիմքեր, արդեն իսկ միջամտում է Հայցվորի իրավունքները:

Նշվածից հետևում է, որ Դատարանը սխալ է կիրառել և մեկնաբանել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 03.03.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և փոփոխել այն, կայացնել նոր դատական ակտ՝ Ընկերության տնօրեն Արբեն Դույյանի ներկայացրած հայցադիմումը Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասով վարույթ ընդունելու մասին:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և կզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 80-րդ հոդվածների, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման

և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անորոշարժանալ այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը եզրափակող փաստաթուղթը, որում արձանագրվել են կոնկրետ ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումներ, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում կարող է որակվել վարչական ակտ և ըստ այդմ վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայց:

(...) Անդրադառնալով վարչական ակտի բնորոշման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել հետևյալը.

Վկայակոչված իրավական դիրքորոշումները վերաբերում են միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությանը, այսինքն՝ վարչական ակտի ընդհանուր բնորոշմանը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասում նշված բարենպաստ և միջամտող վարչական ակտերին ներկայացվող կոնկրետացված պահանջների վերաբերյալ որևէ վերլուծություն ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից չի արվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի իմաստով.

ա) **բարենպաստ վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ **նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման.**

բ) **միջամտող վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա **կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:**

Վերահաստատելով վարչական ակտի բնորոշմանը վերաբերվող վեց հատկանիշներից առաջին հինգի, մասնավորապես՝ վարչական ակտն անհատական իրավական ակտ հանդիսանալու, վարչական մարմինների կողմից հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով ընդունված լինելու և արտաքին ներգործություն ունենալու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները և անհրաժեշտ համարելով անդրադառնալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար վարչական ակտով ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու, դրանով վերջիններիս համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու մասով վարչական ակտի բնորոշմանը վերաբերող հատկանիշին, Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

Ինչպես վերն արդեն նշվել է՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական ակտի ընդհանուր բնորոշմանը՝ նշված իրավանորմի վերլուծությամբ հանգելով նաև այն հետևության, որ վարչական ակտն **ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում** վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

Անհրաժեշտ համարելով զարգացնել վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել կրկին անդրադառնալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի բովանդակությանը:

Այսպես. Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական ակտի հասկացությունը և տեսակները սահմանող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի՝ հաշվի առնելով նշված նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդունումը նպատակ է հետապնդել պատշաճ երաշխիք ապահովելու ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ ՀՀ Մահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության վարչական մարմինների հետ հարաբերություններում: Ընդ որում, նշված օրենքի 2-րդ գլխում, որպես իրավաչափ վարչարարության իրականացման լրացուցիչ երաշխիքներ, ամրագրվել են նաև վարչարարության հիմնարար սկզբունքները, որոնցից ամենակարևորը թերևս վարչարարության օրինականության սկզբունքն է, որն անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում նաև մյուս բոլոր սկզբունքները պահպանելու համար: Ըստ այդմ, օրենսդրի նպատակը միտված է եղել նրան, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք հնարավորություն ունենան արդյունավետ կերպով պաշտպանվել վարչական մարմինների վարչական ակտերից, գործողություններից և անգործությունից: Օրենսդիրն անձանց իրավունքների և օրինական շահերի վարչական կամ դատական կարգով պաշտպանության միջոցները պայմանավորել է վարչական մարմնի գործունեության եզրափակման եղանակով: Մասնավորապես, վարչական կամ նորմատիվ ակտերից իրավական պաշտպանությունն այդ ակտերի իրավաչափության վիճարկումն է վարչադատավարական կարգով՝ անվավերության կամ առոչնչության հիմքերով, ինչպես նաև պարտավորեցման հայցը, եթե ոչ իրավաչափ կերպով մերժվել է հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը, իսկ ռեալ ակտից, այսինքն՝ վարչական մարմնի դրսևորած ոչ իրավաչափ գործողությունից կամ անգործությունից իրավական պաշտպանությունը գործողության կատարման հայցն է, եթե ոչ իրավաչափ կերպով մերժվել է հայցվող գործողության կատարումը կամ դրսևորվել է անգործություն: Ընդ որում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վիճարկման հայցի առարկա կարող է լինել միայն միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները), կարևորվում է վիճարկվող փաստաթուղթը վարչական ակտ որակելու հարցը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել առանձնահատուկ ուշադրության արժանացնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավակարգավորմանը, ըստ որի՝

ա) **բարենպաստ վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ **նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման**.

բ) **միջամտող վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որն է պարտականություն են դնում նրանց վրա **կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը**:

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, նշված հոդվածի 1-ին մասով, որպես ընդհանուր կանոն, վարչական ակտը սահմանել է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և **ուղղված է** անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Այսինքն՝ վարչական ակտի որակումն օրենսդիրը պայմանավորել է ոչ թե դրանով ուղղակի իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հանգամանքով, այլ միայն նշված իրավական հետևանքների

առաջացմանն ուղղված լինելու հանգամանքով: Այլ կերպ ասած, բնավ պարտադիր չէ, որ վարչական ակտն անպայմանորեն անձանց համար ուղղակի սահմանի, փոփոխի, վերացնի կամ ճանաչի իրավունքներ և պարտականություններ, բավարար է միայն այն, որ այդ վարչական ակտն ուղղված լինի այդ իրավունքների և պարտականությունների սահմանմանը, փոփոխմանը, վերացմանը կամ ճանաչմանը:

Միննույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը կոնկրետացրել է բարենպաստ և միջամտող վարչական ակտերին ներկայացվող պահանջները, ի թիվս այլնի, ամրագրելով նաև վարչական ակտի միջոցով անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող կամ վատթարացնող պայմանը: Այսինքն՝ վարչական վարույթը եզրափակող իրավական ակտի բնորոշումն օրենսդիրը պայմանավորել է նաև վարչական ակտի միջոցով անձանց **իրավական կամ փաստացի դրությունը բարելավող կամ վատթարացնող հետևանքի առաջացմամբ**: Այլ կերպ ասած, եթե վարչական վարույթը եզրափակվել է այնպիսի վարչական ակտի ընդունմամբ, որի միջոցով ցանկացած եղանակով բարելավել կամ վատթարացել է անձանց իրավական կամ փաստացի դրությունը, ապա իրավական համակարգում այդ ակտը չի կարող բնորոշվել այլ կերպ, քան համապատասխանաբար որպես բարենպաստ կամ միջամտող վարչական ակտ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումը, սակայն, չի բացառում վարչական ակտով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար ուղղակի հետևանքներ առաջացնելը, հետևաբար վարչական վարույթը եզրափակող փաստաթուղթը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է որակվի որպես վարչական ակտ ինչպես այն դեպքում, երբ դրանով **ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար առաջանում են ուղղակի հետևանքներ, այնպես էլ այն դեպքում, երբ ուղղակի հետևանքներ թեև չեն առաջանում, սակայն ուղղված (միտված) են այդ հետևանքների առաջացմանը և ակներև է, որ դրանում արձանագրված խախտումներն ինքնին վատթարացնում են կամ կարող են վատթարացնել վերջիններիս իրավական կամ փաստացի դրությունը:**

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման Վճռաբեկ դատարանի գործառույթը ենթադրում է ոչ միայն միասնական դիրքորոշման ձևավորում՝ իրավական նորմի մեկնաբանության արդյունքում, այլև՝ ձևավորված դիրքորոշման հետագա զարգացում: Նման իրավիճակներում իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված նոր դիրքորոշումը պետք է գերակայի նախորդ դիրքորոշման նկատմամբ և հիմք ընդունվի Վճռաբեկ դատարանի նոր դիրքորոշումը՝ ձևավորած որոշման կայացման պահին դատարանների վարույթներում գտնվող գործերի լուծման համար:

Այսպիսով, զարգացնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, **Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ որպես** վարչական ակտին բնորոշող հատկանիշներ անհրաժեշտ է դիտարկել հետևյալները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հատկորեն որոշված հասցեատեղ,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման

մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն առաջացնում է ուղղակի իրավական հետևանքներ կամ թեև չի առաջացնում ուղղակի իրավական հետևանքներ, սակայն ուղղված (միտված) է այդ հետևանքների առաջացմանը վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, դրանով վարչական մարմինը վերջիններին համար սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև նրանց տրամադրում է իրավունքներ կամ ստեղծում է այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, կամ մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է նրանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն է դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական վարույթը եզրափակող փաստաթուղթը, ի թիվս այլ հատկանիշների, վարչական ակտ պետք է որակվի ոչ միայն այն պարագայում, երբ դրանով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար **ուղղակի իրավական հետևանքներ են առաջանում, այլ նաև այն դեպքում, երբ տվյալ վարչական ակտն ուղղված է իրավական հետևանքներ առաջացնելուն և ակներև է, որ դրանում արձանագրվածն ինքնին վատթարացնում է վերջիններիս իրավական կամ փաստացի դրությունը:**

(...) Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 4-րդ հոդվածի 3.1-րդ մասի 2-րդ կետով, 08.06.2020 թվականին իրապարակել է թիվ 59-Ա հանձնարարագիրը (այսուհետ՝ թիվ 59-Ա հանձնարարագիր), որով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչներ Լևոն Թադևայանին և Հայկ Մանուկյանին հանձնարարել է Ընկերությունում իրականացնել ստուգում, որպես ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջան նշելով 13.07.2020 թվականից մինչև ստուգման ավարտը, ստուգման ժամկետ նշելով 5 աշխատանքային օր, իսկ ստուգման նպատակ նշելով բնապահպանության ոլորը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին ստուգվող սուբյեկտի ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունը պարզելը: Թիվ 59-Ա հանձնարարագիրը, ըստ դրա դարձերեսին առկա գրառման, ստուգվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավար Արբեն Դուլյանին է հանձնվել 08.06.2020 թվականին (գ.թ. 20):

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչներ Լևոն Թադևայանի և Հայկ Մանուկյանի կողմից 18.06.2020 թվականին կազմվել է թիվ 59 ստուգման ակտի նախագիծը, որը նույն օրը հանձնվել է ստուգվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավար Արբեն Դուլյանին՝ վերջինիս նաև ծանուցելով «Հայաստանի

Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության պահանջների համաձայն 5 աշխատանքային օրվա ընթացքում ակտի նախագծում նշված խախտումների վերաբերյալ առաքելություններ ներկայացնելու իրավունքի մասին (գ.թ. 21):

Ընկերության տնօրենի կողմից ներկայացվել են առարկություններ (գ.թ. 22-23):

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչներ Լևոն Թադևայանի և Հայկ Մանուկյանի կողմից 26.06.2020 թվականին կազմվել է թիվ 59 ստուգման ակտը, որով, որպես ստուգմամբ բացահայտված խախտում, արձանագրվել է, որ Ընկերությունն իր գործունեության ընթացքում 2019 թվականի հոկտեմբեր ամսին թիվ 000143 առ 11.09.2013 թվականին տրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված նորմերից ավել ջուր է վերցրել, որպես խախտված իրավական նորմ է նշվել ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածը, իսկ որպես պատասխանատվություն առաջացնող իրավանմորմ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասը (գ.թ. 27-28):

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչ Լևոն Թադևայանի կողմից 26.06.2020 թվականին կազմվել է ««Էյ Քեյ Էյ Ջի» ՄՊԸ-ի կողմից ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառի իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման» Հաշվարկ (գ.թ. 29), ըստ որի՝ վճարման ենթակա գումար է հաշվարկվել 1.135.642 ՀՀ դրամ և որը կցվել է ստուգման ակտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ 26.06.2020 թվականին կազմված թիվ 59 ստուգման ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է վարչական ակտ, որպիսի եզրահանգումը հիմնավորել է ներքոշարադրյալով.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառնությունները (ընթացիկ փուլ): Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):

Սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի եզրափակմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

(...)

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկով գտել է, որ վարչական վարույթը մի գործընթաց է, որը կարող է բաղկացած լինել մի քանի փուլերից, և այդ բոլոր փուլերը հետապնդում են միասնական նպատակ, այն է՝ վարչական ակտի ընդունումը (*յրեն, ՀՀ կառավարությանն առնչվող հարկային պետական ծառայության հանրապրադրողների ոլորտային հարկային տեսչությունն ընդդեմ «Գևորգ-Ա» ՍՊԸ-ի թիվ 3-918(ՏԻ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտն ընդունվում է վարչական մարմնի հատուկ գործունեության արդյունքում, որը կոչվում է վարչական վարույթ: Օրենսդիրը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում սպառնալից կերպով թվարկել է վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող հանգամանքները. դրանք են՝ (1) ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումը կամ բողոքը և (2) վարչական մարմնի նախաձեռնությունը: Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումը կարող է տեղի ունենալ միայն օրենքով վարչական մարմնին համապատասխան վարչական ակտ ընդունելու ինպերատիվ կամ հայեցողական լիազորություն վերապահված լինելու դեպքում: Իրացնելով իր այդ լիազորությունը՝ վարչական մարմինը հարուցում է վարչական վարույթ, որը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (*յրեն, ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ «Էդ-Վան» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/0883/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումը, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական մարմինն իրավասու է իր նախաձեռնությամբ հարուցել վարչական վարույթ միայն վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջի, դրանից բխող անհրաժեշտության կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորության առկայության դեպքում, քանի որ վարչական մարմինների հիմնական գործառնությունն սպատակը Սահմանադրության և օրենքների իրականացումն է (կատարումը) իրավական պետության սկզբունքներին և կանոններին համապատասխան:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը վարչական մարմնին իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու իրավասություն է տվել միայն այն դեպքում, երբ առկա է վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջ, դրանից բխող անհրաժեշտություն կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորություն: Ընդ որում, որպես վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու օր, օրենսդիրը դիտարկել է վարչական ակտի ընդունմանը նպատակամղված գործողություն (գործողությունները) սկսելու օրը, որին փաստորեն հաջորդում է գործի քննարկման հետ կապված՝ օրենքով նախատեսված գործառնությունների իրականացումը (ընթացիկ փուլ) և վարչական ակտի ընդունումը (եզրափակիչ փուլ): Այսինքն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը չի կարող եզրափակվել այլ կերպ, քան վարչական ակտի ընդունմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերոգրյալ իրավանքումի մեկնաբանությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դրանում ամրագրված իրավակարգավորումը բնավ չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, հատկապես այն հարաբերությունների մասով,

որոնք իրենց կարգավորումը չեն ստացել հատուկ օրենքներում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում (յրեն, Սարգիս Խարիկյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/12466/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կարգավորվող վարույթի առանձնահատկությունները սահմանվում են նշված օրենքով, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վեճի առարկա իրավահարաբերությունների նկատմամբ միայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ, այլ խոսքով, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված վարչական վարույթի ընթացքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է միայն այն հարաբերությունների մասով, որոնք «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կամ կարգավորված են մասամբ կամ առհասարակ կարգավորված չեն:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ մարմինների, Հայաստանի Հանրապետության տարածքում իր լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված են նաև Հայաստանի Հանրապետության տեսչական մարմինները:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր, որտեղ նշվում են ստուգում իրականացնող մարմնի անվանումը, ստուգվող տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգաթերթով նախատեսված այն հարցերի շրջանակը, որոնք անհրաժեշտ է պարզաբանել տվյալ ստուգման ընթացքում (Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողության ղեպքերում ստուգման հարցերը), ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման նպատակը, ժամկետը, ստուգման իրավական հիմքերը, նույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասով նախատեսված ղեպքերում՝ նաև ստուգումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները, իսկ նույն մասով նախատեսված դիմում կամ տեղեկատվություն ստանալու ղեպքերում՝ նաև դրանք տրամադրողի տվյալները: Հրամանում կամ հանձնարարագրում չնշված պաշտոնատար անձինք չեն կարող մասնակցել ստուգմանը: Ծառայողական պարտականությունները կատարելու անհնարինության պատճառով ստուգումն իրականացնող պաշտոնատար անձին այլ անձով փոխարինելու ղեպքում փոփոխությունը կատարվում է հրամանով, որի մասին տնտեսավարող սուբյեկտը ծանուցվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետն ավարտվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, ստուգումն իրականացնող անձը (...) հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա ամփոփում է ստուգման արդյունքները՝ խախտումներ չհայտնաբերելու դեպքում կազմում տեղեկանք, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ ակտի նախագիծ: Տեղեկանքը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը:

Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում ստուգող մարմինը ուսումնասիրում է դրանք և առարկություններ ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ակտի մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստորագրմանը: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունները կցվում են ակտին և կազմում դրա անբաժանելի մասը:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի՝ ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում ակտում այդ մասին կատարվում է համապատասխան գրառում:

(...)

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խախտումներ չհայտնաբերվելու դեպքում կազմված տեղեկանքում արձանագրվում են այն կազմելու ամսաթիվն ու վայրը, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի անվանումները, ստուգող պաշտոնատար անձանց կազմը, ստուգման նպատակը, ժամկետը, արդյունքները:

Ակտում նշվում են՝

1) ակտի անվանումը, համարը, կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

2) ստուգում իրականացնող պետական մարմնի անվանումը.

3) ստուգում նշանակելու մասին հրամանի կամ հանձնարարագրի ամսաթիվն ու համարը.

4) ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը.

5) ստուգող տնտեսավարող սուբյեկտի անվանումը, ինչպես նաև վերջինիս պաշտոնատար անձի կամ նրան փոխարինող անձի անունը, ազգանունը.

6) ստուգում անցկացնելու ամսաթիվը, վայրը և ժամանակահատվածը.

7) փորձագիտական եզրակացությունը՝ ստուգման ընթացքում փորձաքննություն անցկացնելու դեպքում: Փորձագիտական եզրակացությունը կցվում է ակտին և կազմում է դրա անբաժանելի մասը.

8) ստուգաթերթի անվանումը, ընդունման ամսաթիվը, հերթական համարը, որում ընդգրկված հարցերի շրջանակներում իրականացվել է ստուգումը, ինչպես նաև ստուգաթերթի այն հարցերը, որոնց պատասխանները հիմք են հանդիսացել խախտումն արձանագրելու համար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողության դեպքերի.

9) ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել.

10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը.

11) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունների ընդունման վերաբերյալ նշումները:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման արդյունքներն ամփոփվում են տեղեկանքում (խախտումներ չհայտնաբերելու դեպքում) կամ ստուգման ակտում (խախտումներ հայտնաբերելու դեպքում), ստուգման ակտը որպես վարչական ակտ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ է մտնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) հանձնելուն հաջորդող օրվանից, իսկ նույն օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ստուգման ակտը դառնում է բողոքարկման ոչ ենթակա (անբողոքարկելի), եթե բաց է թողնված դրա ուժի մեջ մտնելուն հաջորդող վարչական կարգով բողոքարկման համար սահմանված վեցամսյա ժամկետը:

Վերոհիշյալ նորմերի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ստուգման վարչական վարույթն սկսվում է ստուգումն իրականացնող մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) կողմից ստուգում իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագիր հրապարակելու միջոցով ստուգումն իրականացնող մարմնի նախաձեռնության դրսևորմամբ և ավարտվում ստուգման ակտի կազմմամբ (*տե՛ս*, «*Թուրքեն Գևորգյան*» ՄՊԸ-ն *ընդդեմ* ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամտային կոմիտեի թիվ ՎԴԶ/0302/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստուգում իրականացնելու վարույթը հարուցվում է համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի հրապարակմամբ, որին հաջորդում է այդ վարույթի ընթացիկ փուլը՝ հանձնարարագրում նշված պաշտոնատար անձանց կողմից փաստացի ստուգողական գործողությունների իրականացումը սահմանված ժամկետներում և ստուգման նպատակների շրջանակներում, որը եզրափակվում է տեղեկանքի կազմմամբ, եթե խախտումներ չեն հայտնաբերվում և ակտի կազմմամբ, եթե հայտնաբերվում են խախտումներ: Այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստուգում իրականացնելու վարույթի եզրափակման հնարավոր եղանակները երկուսն են.

- տեղեկանքի կազմումը,
- ակտի կազմումը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ վարչական վարույթը եզրափակող նշված երկու փաստաթուղթը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով հանդիսանում

են համապատասխանաբար բարենպաստ և միջամտող վարչական ակտեր, քանի որ տեղեկանքի կազմումը հաստատում է խախտումների բացակայությունը, ինչը տվյալ տնտեսավարող սուբյեկտի համար ունի նրա իրավական և փաստացի դրությունը բարելավող ազդեցություն, իսկ ակտի կազմումը հաստատում է խախտումների առկայությունը՝ վատթարացնելով տնտեսավարող սուբյեկտի իրավական և փաստացի դրությունը: Այլ կերպ ասած, եթե տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստուգում իրականացնելու վարույթը եզրավակվում է տեղեկանք կազմելով, այսինքն՝ նրա գործունեությունը գնահատվում է օրենքի պահանջներին համահունչ, ապա այդ վարույթում քննարկված հարցերով պայմանավորված այլևս բացառվում է նշված սուբյեկտի գործունեությանը հետագա միջամտությունը, մինչդեռ ստուգման վարույթն ակտի կազմմամբ եզրավակվելու պարագայում տվյալ տնտեսավարող սուբյեկտի ծավալած գործունեությունը գնահատվում է օրենքի պահանջների խախտմամբ իրականացված՝ դրանից բխող բացասական հետևանքներով:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգրքը) 3-րդ հոդվածում ամրագրվել են Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի սկզբունքները, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

(...)

7) ինքնահայտարարագրում և հարկային կարգապահություն՝ հարկ վճարողները պետք է Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով ինքնուրույն հաշվարկեն ու վճարեն հարկերը, վճարները:

ՀՀ հարկային օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձը պարտավոր է Օրենսգրքով այլ բան սահմանված չլինելու դեպքում Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում ինքնուրույն հաշվարկել և կատարել իր հարկային պարտավորությունները՝ Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով կատարելով նաև հարկի և (կամ) վճարի կանխավճարները:

ՀՀ հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝

(...)

բ. բնօգտագործման վճարը:

ՀՀ հարկային օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ և համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման համար սույն բաժնին համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է:

ՀՀ հարկային օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բնօգտագործման վճար վճարող են համարվում Օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող գործունեություն և (կամ) գործառույթ իրականացնող՝ նույն հոդվածում նշված կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

1) մակերևութային ջրերի օգտագործման համար բնօգտագործման վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրային ռեսուրսների (գետեր, լճեր) ջրօգտագործողները:

ՀՀ հարկային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բնօգտագործման վճարի օբյեկտներ են համարվում մակերևութային ջրերի օգտագործումը:

ՀՀ հարկային օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բնօգտագործման վճարի բազա է համարվում բնօգտագործման վճարի օբյեկտի արժեքային կամ

Ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա նույն բաժնով սահմանված դրույքաչափերով ու կարգով հաշվարկվում է բնօգտագործման վճարի գումարը:

Մասնավորապես՝

1) մակերևութային ջրերի օգտագործման համար բնօգտագործման վճարի բազա է համարվում մակերևութային ջրային ռեսուրսներից ջրառի՝ բնական ջրաղբյուրներից օգտագործման նպատակով վերցրված ջրի փաստացի ծավալը:

ՀՀ հարկային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բնօգտագործման վճարի հաշվարկման և դրույքաչափերի կիրառության համար սահմանվում են բնօգտագործման վճարի բազայի հետևյալ չափաքանակները.

1) մակերևութային ջրերի օգտագործման համար՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի համաձայն տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման (մակերևութային ջրերի ջրառի) ծավալները:

ՀՀ հարկային օրենսգրքի 211-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բնօգտագործման վճարի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու եռամսյակը, (...):

ՀՀ հարկային օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մակերևութային ջրերի օգտագործման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում բնական ջրաղբյուրներից օգտագործման նպատակով անմիջապես վերցրած ջրի ծավալի հիման վրա՝ հաշվի առնելով բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ հարկային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բնօգտագործման վճար վճարողները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, Օրենսգրքի 52-րդ և 53-րդ հոդվածներին համապատասխան, կազմում և Կառավարության սահմանած կարգով բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և հարկային մարմին են ներկայացնում բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բնօգտագործման վճար վճարողները ներկայացված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկներում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով, Օրենսգրքի 52-54-րդ հոդվածներին համապատասխան, կարող են կազմել և բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների ճշտված միասնական հարկային հաշվարկները Կառավարության սահմանած կարգով ներկայացնել բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին և հարկային մարմին:

ՀՀ հարկային օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Օրենսգրքի 213-219-րդ հոդվածներով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի գումարները պետական բյուջե են վճարվում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

Վերոգրյալ իրավակարգավորումները կառուցված են կարգապահ և օրինապաշտ հարկատուի կամխավարկածով, որը պարտավոր է ինքնուրույն հաշվարկել ու վճարել օրենքով նախատեսված հարկերն ու վճարները: Այսինքն՝ կարգապահ և օրինապաշտ հարկատուն, համապատասխան ելակետների առկայության պարագայում, հիմք ընդունելով այդ ելակետներում պարունակվող տվյալներն ու տեղեկությունները, պետք է ինքնուրույն հաշվարկի վճարման ենթակա հարկերն ու վճարները և կատարի համապատասխան վճարումները: Հետևաբար, եթե վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտով արձանագրվում են խախտումներ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել հարկային կամ այլ պարտավորությունների առաջացմանը, ապա կարգապահ և օրինապաշտ հարկատուն, հիմք ընդունելով արձանագրված տվյալներն ու տեղեկությունները, եթե չի վիճարկում դրանց առկայությունը, պարտավոր է ինքնուրույն հաշվարկել ու վճարել օրենքով նախատեսված հարկերն ու վճարները: Հակառակ պարագայում հարկային կամ այլ պարտավորությունների հաշվարկը կկատարի հարկային կամ

համապատասխան լիազորություններով օժտված այլ վարչական մարմինը: Այլ կերպ ասած՝ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ստուգմամբ խախտումներ հայտնաբերելու և արձանագրելու պարագայում բնավ պարտադիր չէ, որ դրանցում ներառված տվյալների և տեղեկությունների հիման վրա հնարավոր հարկային կամ այլ պարտավորությունների առաջացման հարցը քննարկվի ու լուծվի հարկային կամ այլ մարմնի կողմից, այլ դա կարող է և նույնիսկ պարտավոր է կատարել հարկատուն հիմք ընդունելով արձանագրված ելակետները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից 11.09.2013 թվականին Ընկերությանը տրամադրվել է թիվ 000143 ջրօգտագործման թույլտվությունը, որի 5-րդ կետով մակերևույթային ջրային ռեսուրսների ջրօգտագործման ծավալ է սահմանվել. IV-0.327մ/վրկ, V-2.5 մ/վրկ, VI-2.245 մ/վրկ, VII-1.68 մ/վրկ, VIII-1.657 մ/վրկ, IX-0.727 մ/վրկ, X-0.292 մ/վրկ:

Տվյալ դեպքում ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարը, հիմք ընդունելով վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը և դրանից բխող անհրաժեշտությունը, 08.06.2020 թվականին հրապարակած թիվ 59-Ա հանձնարարագրով հարուցել է վարչական վարույթ, որն ուղղված է եղել բնապահպանության ոլորտը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին Ընկերության ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունը պարզելուն: Վարչական վարույթի ընթացիկ փուլում պարզվել է, որ Ընկերությունն իր գործունեության ընթացքում 2019 թվականի հոկտեմբեր ամսին թիվ 000143 առ 11.09.2013 թվականին տրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված նորմերից ավել ջուր է վերցրել:

Վերոգրյալ վարչական վարույթը եզրափակվել է թիվ 59 ստուգման ակտի կազմմամբ, որում արձանագրվել է բացահայտված խախտումն ու խախտված իրավական նորմը՝ ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածը: Մինևույն ժամանակ ակտին կցված՝ «Էյ Քեյ Էյ Ջի» ՄՊԸ-ի կողմից ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառի իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման» Հաշվարկով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչ Լևոն Թադևոսյանը ՀՀ կառավարության 03.04.2003 թվականի «Ջրերի հաշվառման այլընտրանքային կարգը հաստատելու մասին» թիվ 499-Ն որոշմամբ սահմանված բանաձևով հաշվարկել է ջրի ծավալը և, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված չափաքանակից ավել օգտագործված ջրի քանակը 567821լիտր է, արձանագրել է վճարման ենթակա 1.135.642 ՀՀ դրամ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ 08.06.2020 թվականին հրապարակած թիվ 59-Ա հանձնարարագրով վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը եզրափակվել է թիվ 59 ստուգման ակտի ընդունմամբ, որով Ընկերությանը վերագրվել են ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի խախտումներ այն բանի համար, որ Ընկերությունն իր գործունեության ընթացքում 2019 թվականի հոկտեմբեր ամսին թիվ 000143 առ 11.09.2013 թվականին տրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված նորմերից ավել ջուր է վերցրել:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ հարկային օրենսգրքի վերոգրյալ իրավակարգավորումների հաշվառմամբ Ընկերությունը պարտավոր է թիվ 000143 ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ծավալներով ջրօգտագործման համար ինքնուրույն հաշվարկել և բյուջե վճարել բնապահպանական վճար: Ընդ որում, նշված ծավալներից ավելի չափով ջրօգտագործման փաստն արձանագրելու պարագայում ևս Ընկերությունը պարտավոր է ինքնուրույն հաշվարկել և բյուջե վճարել այդ ծավալին համապատասխան բնօգտագործման վճարներ: Ավելին, նշված ստուգման ակտն ուժի մեջ մնալու պարագայում այն մեկ այլ վարչական վարույթ հարուցելու և ստուգման ակտով արձանագրված խախտումների համար պատասխանատվություն սահմանող վարչական ակտ ընդունելու նախադրյալ է հանդիսանալու:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ թիվ 59 ստուգման ակտը համապատասխանում է վարչական ակտի բնորոշմանը, մասնավորապես, այն ընդունվել է վարչական մարմնի ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից, հանրային իրավունքի, այն է՝ պետական վճարների վերահսկողության իրականացման բնագավառում, կոնկրետ գործի կարգավորման, այն է՝ բնապահպանության ոլորտը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին Ընկերության ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունը պարզելու նպատակով, իրավական ակտ է և ունի հստակորեն որոշված հասցեատեր՝ Ընկերությունը, ունի արտաքին ներգործություն, մասնավորապես, նշված ակտը թեև չի առաջացնում ուղղակի իրավական հետևանքներ, այդուհանդերձ ուղղված (միտված) է այդ հետևանքների առաջացմանը և ակնհայտ է, որ դրանով վատթարանում է Ընկերության իրավական կամ փաստացի դրությունը, քանի որ նախ՝ ակտին կցված «Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ի կողմից ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառի իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման» Հաշվարկի համաձայն՝ ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված չափաքանակից ավել օգտագործված 56782լիտր ջրի քանակի համար հաշվարկվել է վճարման ենթակա 1.135.642 ՀՀ դրամ, երկրորդ՝ այն նախադրյալ է հանդիսանում վարչական իրավախախտման վարույթ հարուցելու և վարչական պատասխանատվություն կիրառելու համար:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը վիճարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել, մինչդեռ նշված պահանջի մասով Դատարանը մերժել է Ընկերության հայցադիմումի ընդունումը՝ վերջինիս գրկվելով դատական կարգով իր խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից: Ընդ որում, Դատարանն իր որոշմամբ չի վկայակոչել հայցադիմումի ընդունումը մասով մերժման ենթակա լինելու իր եզրահանգման իրավական հիմքը: Մասնավորապես, հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը նախատեսված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածով, սակայն Դատարանն իր որոշմամբ չի արձանագրել, թե նշված իրավանդումում թվարկված հայցադիմումի ընդունումը մերժելու յոթ հիմքերից որն է կիրառել: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածում թվարկված հիմքերից կոնկրետ հիմքին անդրադարձ չի կատարել նաև ՀՀ վերաքննիչ դատարանը:

Ամփոփելով վերոգրյալ փաստական և իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման հաշվառմամբ Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը վիճարկելու պահանջի մասով ևս պետք է ընդունվեր վարույթ:

4. Հարուկ կարծիքի պարունատարությունները և եզրահանգումները

Գտնում ենք, որ սույն գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը ուղղակի հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի 20.05.2021 թվականի թիվ ՎԴ/4610/05/19 վարչական գործով նույնանման հարցով արտահայտված իրավական դիրքորոշմանը և բացակայում են այնպիսի ծանրակշիռ փաստարկներ, որոնք թույլ կտային հիմնավորել այդպիսի շեղումը:

Հատկանշական է, որ քննարկվող որոշման բովանդակությունը կազմում է նույն իրավական հարցի վերաբերյալ նախկինում վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի երեք դատավորի կողմից ներկայացված հատուկ կարծիքը:

Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների կարուկ փոփոխությունն առանց դրա խորը և համակողմանի հիմնավորման

բերում է ոչ թե իրավունքի զարգացման, այլ իրավական անվտանգության հիմնախնդրի, քանի որ խաթարում է կայուն դատական պրակտիկան:

Մասնավորապես՝ որոշման իրավական վերլուծություններում նշված է, որ Վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում անդրադարձել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասին, չբացահայտելով նույն հոդվածի 2-րդ մասի «բարենպաստ» և «միջամտող» վարչական ակտերի բովանդակությունը և քննարկվող որոշման պատճառաբանական մասում վերլուծություններ են արված բարենպաստ և միջամտող վարչական ակտերի մասին՝ արդյունքում եզրահանգելով, որ այս դեպքում կիրառելի է վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վիճարկման հայցատեսակը:

Վճռաբեկ դատարանի որոշումը կառուցելով իրավունքի զարգացման համատեքստում և պարզաբանելով միջամտող և բարենպաստ վարչական ակտերի բովանդակությունը, պետք է նշել, որ այդպես էլ չեն հերքվել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից այս հարցի կապակցությամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հիմքում դրված այն փաստարկները, որոնք թույլ կտային կայացնելու դրան տրամագծորեն հակառակ այս որոշումը: Այսինքն՝ չհերքելով կամ զարգացնելով վարչական ակտին տրված **ընդհանուր** նկարագիրը, անհնար է **մասնավոր** բնորոշումով որոշել դրա **վարչական ակտ** լինելը և վերագրել իրավական հետևանքներ:

Գտնում ենք, որ այդ եզրահանգման արդյունքում չի կարող վերանայվել ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության արդյունքում անմիջական ազդեցություն չունեցող ստուգման ակտը վարչական ակտ չհամարելու և վիճարկման հայց ներկայացնելը բացառելու պայմաններում իմաստագործել է դառնում նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված բարենպաստ և միջամտող վարչական ակտի բովանդակության իրավական վերլուծությամբ որոշել, որ կարող է ներկայացվել վիճարկման հայց:

Իմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Արբեն Դուլյանը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը, 08.12.2020 թվականի թիվ 04/-07-Ա և թիվ 04/-72-Ա որոշումները:

Սույն գործի փաստերից հետևում է, որ հայցվորի կողմից վիճարկման առարկա է դարձվել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը, որպիսի ակտով արձանագրվել է, որ տեղի է ունեցել ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի խախտում:

Այն որպես ապացույց դրվել է վիճարկվող ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 08.12.2020 թվականի թիվ 04/-07-Ա և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 08.12.2020 թվականի թիվ 04/-72-Ա որոշումների հիմքում:

Պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև իրավահարաբերություններ են առաջացել ջրօգտագործման պայմանագրի առնչությամբ, և ստուգվել է ջրօգտագործողի կողմից ստացված ջրի փաստացի և պայմանագրով որոշված ծավալների համապատասխանությունը, որը չէր կարող իրականացվել առանց «Ստուգումների կազմակերպման և իրականացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տնտեսավարող սուբյեկտից անհրաժեշտ տեղեկությունները ստանալու, քանի որ ՀՀ իրավական համակարգում առկա է ձեռնարկատիրական գործունեությանը միջամտելու արգելք:

Ստուգման ակտով արձանագրված տեղեկությունները վերաբերում են ջրառի թույլտվությանը և դրա հիման վրա կնքված պայմանագրով պարտավորությունների պատշաճ կատարմանը: Եթե ստուգման ակտի արդյունքը պետք է լիներ վարչական տույժ կիրառելը և պատճառված վնասը գանձելը, ապա այդ մասին պետք է հստակ ամրագրվեր ստուգման ակտի եզրափակիչ մասում՝ հստակ սահմանելով դրա կատարման ժամկետը, վարչական հարկարանք կիրառելու հնարավորությունը՝ կանավոր չկատարելու դեպքում: Պետական մարմնի կազմած ստուգման ակտն ինքնին տնտեսավարող կազմակերպության համար կատարման ենթակա պարտականություններ և անմիջական

իրավական հետևանքներ չի սահմանել, որպեսզի հնարավոր լինի վիճարկման հայց ներկայացնել: Ստուգման ակտում ամրագրված փաստական տեղեկություններն իրավական գնահատական են ստացել համապատասխանաբար վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի և վնասի հատուցման վերաբերյալ դատարան ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Ընդ որում հատկանշական է, որ այս հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման լույսի ներքո տվյալ ստուգման ակտը չի կարող ունենալ նաև պարտադիր լինելու հատկանիշ, որը հատուկ է վարչական ակտին:

Ի վերջո, հնարավոր չէ հավասարության նշան դնել անձի համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնող վարչական ակտի և այն ակտի մեջև, որից անձի համար ուղղակի իրավական հետևանքներ չեն բխում: Դա էլ հանգեցնում է նրան, որ նման տարբեր ակտերից անձը կարող է պաշտպանվել իրավական պաշտպանության տարբեր եղանակներով ուղղակի իրավական հետևանքներ առաջացնող ակտը անմիջականորեն կարող է դատական կարգով վիճարկվել վիճարկման հայցի միջոցով, իսկ ուղղակի իրավական հետևանքներ չառաջացնող ակտից նման եղանակով իրավական պաշտպանությունը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ արձանագրված փաստերի հիման վրա իրողություն դառնա անձի իրավական դրության վատթարացումը, այն է՝ նրան առաջադրվեն կոնկրետ պարտա վորություններ: Քանի դեռ անձի նկատմամբ ակտի հիման վրա իրավական հետևանքներ չեն կիրառվել, նա իր փաստական դրությունը վատթարացնող ակտից կարող է պաշտպանվել նման փաստերի աձանագրումը ոչ իրավաչափ չճանաչելու միջոցով և այս դեպքում էլ էական չէ որ դա կարող է արվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հինգ տարվա ժամկետում: Այդ ժամկետը կարող է կրճատվել ցանկացած ժամանակ, երբ վարչական մարմինը վարչական ակտով անձին կառաջադրի կոնկրետ պարտավորություններ:

Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական մասում մեջբերումներ են արված վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից, որոնք, սակայն, ունեն բոլորովին այլ փաստական հանգամանքներ՝ մասնավորապես կասկած չի հարուցել փաստաթղթի վարչական ակտ լինելու և հետևաբար վիճարկման հայց ներկայացնելու իրավունքը:

Անթոյյա տրելի ենք համարում քննարկվող որոշման պատճառաբանական մասում արված ցուցումը՝ այլևս կիրառելու սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների փոխարեն: Գտնում ենք, որ վճռաբեկ դատարանը չունի նման լիազորություն ինչպես սահմանադրական առաքելության իրականացման, այնպես էլ դատական օրենսգրքով վերապահված իրավասությունների շրջանակում: Ընդունելով այն անվիճելի իրողությունը, որ հասարակական հարաբերությունների զարգացումը բերում է նաև դրանց իրավակարգավորումների փոփոխության և զարգացման, պետք է նկատել, որ օրենքի միատեսակ կիրառումն ապահովող դատական ատյանում հատկապես կարևորվում «ինստիտուցիոնալ հիշողության» սկզբունքի պահպանումը և հարգանքը նախկինում կայացված որոշումների նկատմամբ, որպիսի սկզբունքով է գործում նաև մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

Գտնում ենք նաև, որ վճռաբեկ դատարանը դուրս է եկել վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից և ըստ էության վճռաբեկ բողոքի փաստարկները գնահատելիս հիմք է ընդունել ոչ թե վճռաբեկ դատարանի կողմից այս հարցին առնչվող իրավական դիրքորոշումը, այլ այդ կապակցությամբ ներկայացված հատուկ կարծիքը:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ ներկայացված վճռաբեկ բողոքը ենթակա էր մերժման:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Տ. Պետրոսյան
Էդ. Սեդրակյան

**2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/2635/05/19**
2021թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/2635/05/19**
Նախագահող դատավոր՝ **Ա. Բաբայան**

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 19-ին գրավոր ընթացակարգով քննելով Հայկ Ֆարմանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.10.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ Հայկ Ֆարմանյանի հայցի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Հայկ Ֆարմանյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 11.02.2019 թվականի թիվ 1/490-Ա հրամանը, իրեն վերականգնել Կոմիտեի 12.07.2019 թվականի գրությամբ նշված համարժեք պաշտոններից ցանկացած մեկում, ինչպես նաև բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ՝ հայցվորի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 30.06.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է

անվավեր ճանաչել Կոմիտեի 11.02.2019 թվականի թիվ 1/490-Ա հրամանը, որպես հետևանք՝ պարտավորեցնել Կոմիտեին Հայկ Ֆարմանյանին վճարել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հատուցում միջին աշխատավարձի չափով՝ սկսած 11.02.2019 թվականից մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը. մնացած մասով հայցը մերժվել է:

Դիմելով դատարան՝ Հայկ Ֆարմանյանը պահանջել է կայացնել լրացուցիչ վճիռ՝ պարտավորեցնել Կոմիտեին վճարել իրեն աշխատանքում չվերականգնելու դիմաց դրամական հատուցում՝ միջին աշխատավարձի տասներկուսպատիկի չափով:

Դատարանի 30.07.2020 թվականի որոշմամբ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին Հայկ Ֆարմանյանի միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.10.2020 թվականի որոշմամբ Հայկ Ֆարմանյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.07.2020 թվականի «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայկ Ֆարմանյանը (ներկայացուցիչ Վարազդատ Դանիելյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը, «Շորմուստի իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը Դատարան է ներկայացվել 03.07.2020 թվականին, Դատարանը միջնորդությունը քննել է 24.07.2020 թվականին, իսկ դրա վերաբերյալ որոշումը կայացրել է 30.07.2020 թվականին: Նշված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքը ներկայացվել է 30.07.2020 թվականին, երբ դեռևս հրապարակված չի եղել միջնորդությունը քննության առնելու վերաբերյալ որոշումը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ միջնորդության մեջ նշված հիմքերով վերաքննիչ բողոք չի ներկայացվել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ սույն գործով առկա է եղել լրացուցիչ վճիռ կայացնելու հիմք, քանի որ Դատարանը, վճռի պատճառաբանական մասում անդրադառնալով աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց դրամական հատուցում վճարելու պարտավորության հարցին, վճռի եզրափակիչ մասում, ըստ էության, չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է կայացնել նոր դատական ակտ՝ բավարարել լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արճանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի միատեսակ կիրառության համար, ու գտնում է, որ սույն դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասում նշված՝ լրացուցիչ վճիռ կայացնելու արգելքին՝ բացահայտելով նույն նորմում գործածված «այն հարցի կապակցությամբ» արտահայտության բովանդակությունը,

ՀՀ աշխարհաբանի օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ աշխարհորդին դատական կարգով հարուցում տրամադրելու իրավական հնարավորությանը՝ վերջինիս կողմից նման հայցապահանջ ներկայացված չլինելու պարագայում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության կարգը սահմանվում է նույն օրենսգրքով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դատական ակտում առկա վրիպակների, գրասխապների և թվաբանական սխալների ուղղման, **լրացուցիչ վճռի կայացման**, վճռի պարզաբանման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ որպես կանոն վարչական դատավարության կարգը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով: Մինչև նույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է որոշակի դեպքեր, երբ վարչական դատավարության կարգը կարող է սահմանվել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, սակայն այդ հնարավորությունը պետք է հատուկ նախատեսված լինի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով:

Տվյալ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հատուկ նախատեսված է, որ վարչական դատարանի կողմից լրացուցիչ վճռի կայացման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Հաշվի առնելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով այլ բան նախատեսված չլինելու հանգամանքը՝ վարչական դատարանի կողմից լրացուցիչ վճռի կայացման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վճիռ կայացրած առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձանց միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կայացնում է լրացուցիչ վճիռ, **եթե վճռի պարճառաբանական մասում որևէ պահանջի անդրադառնալով՝ վճռի եզրափակիչ մասում ըստ էության չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը:**

Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վճիռը դատարանի նախաձեռնությամբ կարող է կայացվել, իսկ դրա վերաբերյալ միջնորդությունը կարող է ներկայացվել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած վճիռներով լրացուցիչ վճիռ կայացնելու մասին դիմումը կարող է ներկայացվել հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Սույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ **առաջին ատյանի դատարանը չի կարող լրացուցիչ վճռի կայացնել այն հարցի կապակցությամբ, որի վերաբերյալ ներկայացվել է բողոք:**

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ վճիռ կայացրած առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձանց միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է կայացնել լրացուցիչ վճիռ, եթե վճռի պատճառաբանական մասում որևէ պահանջի անդրադառնալով՝ վճռի եզրափակիչ մասում ըստ էության չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը: Այսինքն, լրացուցիչ վճիռն ուղղված է վճռի լրիվության և որոշակիության ապահովմանը: Ընդ որում, լրացուցիչ վճիռը դատարանի նախաձեռնությամբ կարող է կայացվել, իսկ դրա վերաբերյալ միջնորդությունը կարող է ներկայացվել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Միևնույն ժամանակ, օրենսդիրը որոշակի արգելք է սահմանել այն առնչությամբ, երբ առաջին ատյանի դատարանը չի կարող լրացուցիչ վճիռ կայացնել այն հարցի կապակցությամբ, որի վերաբերյալ ներկայացվել է բողոք:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը նույն հոդվածի 8-րդ մասի հետ համադրմամբ մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի կարգավորման համատեքստից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած օրենսդիրը որպես լրացուցիչ վճիռ կայացնելու ինքնուրույն հիմք նախատեսել է այն դեպքը, երբ վճիռ կայացրած առաջին ատյանի դատարանը, վճռի պատճառաբանական մասում որևէ պահանջի անդրադառնալով, վճռի եզրափակիչ մասում ըստ էության չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը, մինչդեռ անգամ այդ դեպքում օրենսդիրն առաջին ատյանի դատարանին արգելել է լրացուցիչ վճիռ կայացնելն այն հարցի կապակցությամբ, որի կապակցությամբ արդեն իսկ ներկայացվել է վերաքննիչ բողոք:

Այսինքն՝ օրենսդիրը դատարանի վրա պարտականություն է դրել մինչև լրացուցիչ վճիռ կայացնելը բոլոր դեպքերում պարզելու՝ արդյո՞ք այն հարցի կապակցությամբ, որի վերաբերյալ խնդրարկվում է կայացնել լրացուցիչ վճիռ, չի ներկայացվել վերաքննիչ բողոք, քանի որ, ինչպես արդեն իսկ վերը նշվեց, նշված հանգամանքը լրացուցիչ վճիռ կայացնելու արգելք է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային

հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

ՀՀ Սահմանադրական դատարանը 07.07.2010 թվականի թիվ ՄԴՈ-902 որոշմամբ նշել է, որ խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրն է հանդիսանում անձի խախտված իրավունքի վերականգնումը: Վերջինս ենթադրում է այն բացասական հետևանքների վերացում, որոնք անձի համար առաջացել են իրավունքի խախտման արդյունքում: Որպես կանոն, այդ բացասական հետևանքների վերացումը տեղի է ունենում *մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնմամբ*: Սակայն, առանձին դեպքերում, մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը կարող է օբյեկտիվորեն անհնարին լինել: Այս դեպքում որպես խախտման բացասական հետևանքները վերացնելու իրավական միջոց է ծառայում, ինչպես նշվեց, անձի կրած վնասի դիմաց տրվող փոխհատուցումը: Այս մտտեցումն է արտահայտված նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում (տե՛ս, մասնավորապես, Վասիլեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով, Vasilescu v. Romania, 1998թ. մայիսի 22-ի վճիռը, կետ 61): Տվյալ դեպքում անօրինականորեն ազատված անձին աշխատանքում չվերականգնելու, այն է՝ մինչև իրավախախտման փաստը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհնարինության դեպքում անձի խախտված իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանությունը կարող է տեղի ունենալ նրան փոխհատուցում վճարելու միջոցով: Այս գաղափարն է ամրագրված նաև վերոհիշյալ ԱՄԿ թիվ 158 կոնվենցիայի 10-րդ հոդվածում:

Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը նախատեսել է աշխատանքային պայմանագրի վերաբերյալ վեճերով աշխատողի խախտված իրավունքները վերականգնելու երկու հնարավոր կառուցակարգ: Առաջին դեպքում աշխատողը վերականգնվում է նախկին աշխատանքում՝ ստանալով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ, իսկ երկրորդ դեպքում նախկին աշխատանքային հարաբերությունները չեն վերականգնվում, և աշխատողը ստանում է հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ, ինչպես նաև աշխատանքում չվերականգնվելու դիմաց հատուցում: Ընդ որում, նշված կառուցակարգերը չեն կարող գործել միաժամանակ, քանի որ բացառում են միմյանց: Այսինքն՝ աշխատանքում վերականգնվելու պահանջը չբավարարվելու պայմաններում ինքնաբերաբար սկսում է գործել աշխատողի՝ չվերականգնվելու դիմաց հատուցում ստանալու իրավունքը: Հետևաբար, հայցադիմումում հատուցում ստանալու վերաբերյալ պահանջի բացակայության պայմաններում դատարանի կողմից նշված խնդիրը պետք է դառնա պարտադիր քննության առարկա:

Վճարել դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայկ Ֆարմանյանը, դիմելով Դատարան, պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 11.02.2019 թվականի թիվ 1/490-Ա հրամանը, ***իբեև վերականգնել Կոմիտեի 12.07.2019 թվականի գրությամբ նշված համարժեք պաշարումներից ցանկացած մեկում***, ինչպես նաև բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ՝ հայցվորի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Դատարանը, նշելով նաև, որ «հայցվորը խնդրել է իրեն վերականգնել Պետական եկամուտների կոմիտեի 12.07.2019թ. թիվ 1/16-3/37702-2019 գրությամբ ներկայացված հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան

պաշտոններից մեկում», գտել է, որ «վերը նշված իրավանորմերով արդեն իսկ բացահայտված են աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում աշխատողների խախտված իրավունքների վերականգման դեպքերը, որպիսի իրավանորմերը մասնագիտական պատրաստվածությամբ և որակավորմամբ համապատասխան այլ պաշտոններում վերականգնելու իրավասություն դատարանին չեն տալիս: Ընդ որում, ինչպես նշվեց, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասում և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում խոսքը գնում է միայն նախկին աշխատանքում վերականգնվելու մասին, այսինքն՝ այն աշխատանքում, որն աշխատողը հրամանի կամ աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարել է աշխատանքից ազատվելու հրամանն արձակելու պահի դրությամբ: Որևէ հաստիքի առաջարկման լիազորությունը պատկանում է գործատուին, տվյալ դեպքում՝ Կոմիտեին, և դատարանը չի կարող որոշում կայացնել վարչական մարմնի փոխարեն և անձին վերականգնել իր նախկին աշխատանքից տարբերվող որևէ կոնկրետ պաշտոնում»: Դատարանը նշել է նաև, որ «Արևմտյան մաքսատուն-վարչության փաստաթղթային հսկողության բաժնի գործունեությունը դադարեցվել է, իսկ նոր ձևավորված բաժնում որպես բաժնի պետ է նշանակվել գանձումների համակարգման և հաշվառման բաժնի պետը: Ելնելով վերոգրյալից՝ դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջը՝ Պետական եկամուտների կոմիտեի 12.07.2019թ. թիվ 1/16-3/37702-2019 գրությամբ ներկայացված հայցվորի մասնագիտական պատրաստվածությամբ և որակավորմամբ համապատասխան պաշտոններից մեկում վերականգնելու մասին, անհիմն է և ենթակա է մերժման»:

Արդյունքում, Դատարանը **30.06.2020 թվականին** վճիռ է կայացրել հայցը մասնակիորեն բավարարելու՝ Կոմիտեի 11.02.2019 թվականի թիվ 1/490-Ա հրամանն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ հարկադիր պարտավորողի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի չափով՝ սկսած 11.02.2019 թվականից մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը Հայկ Ֆարմանյանին հատուցում վճարելուն Կոմիտեին պարտավորեցնելու և հայցը մնացած մասով մերժելու մասին:

03.07.2020 թվականին, այսինքն՝ մինչև վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, Հայկ Ֆարմանյանը միջորդություն է ներկայացրել Դատարան լրացուցիչ վճիռ կայացնելու մասին՝ խնդրելով լրացուցիչ վճռով Կոմիտեին պարտավորեցնել աշխատանքում չվերականգնելու դիմաց վճարել դրամական հատուցում միջին աշխատավարձի տասներկուսպատիկի չափով՝ միջնորդության մեջ նշելով նաև, որ դատարանն անձին աշխատանքում չվերականգնելու դիմաց գործատուին պարտավորեցնում է աշխատողին վճարել դրամական հատուցում՝ անկախ այդ մասին հայցապահանջում ներկայացված լինելու փաստից, այն է՝ օրենքի ուժով:

Դատարանի **30.07.2020 թվականի** «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշմամբ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին Հայկ Ֆարմանյանի միջնորդությունը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությամբ խնդրարկված պահանջը հայցվորի կողմից չի ներկայացվել, հետևաբար դատարանն իրավասու չէր առանց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված համապատասխան պահանջի անդրադառնալ հայցվորին նախկին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում վճարելու հարցին:

29.07.2020 թվականին Հայկ Ֆարմանյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 30.06.2020 թվականին վճիռն ինքնուրույն մասնակիորեն՝ աշխատանքում չվերականգնելու մասով, բեկանել Դատարանի 30.06.2020 թվականի վճիռը և այն փոփոխել՝ այդ մասով հայցը բավարարել. *աշխատանքում չվերականգնելու դիմաց միջին աշխատավարձի տասներկուսպատիկի չափով դրամական հատուցում վճարելը վճռում չնախատեսելու կապակցությամբ վերաքննիչ բողոք չի ներկայացվել:*

Վերաքննիչ դատարանի 26.08.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ Դատարանի 30.07.2020 թվականի «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշման դեմ բեկված վերաքննիչ բողոքը

վերադարձվել է, իսկ 14.09.2020 թվականին որոշում է կայացվել կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին:

Վերաքննիչ դատարանը, 12.10.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշմամբ արձանագրելով, որ «այն դեպքում, երբ դատարանը աշխատողին (ծառայողին) աշխատանքից (ծառայությունից) ազատելու հետ կապված վեճի քննության արդյունքներով գալիս է այն եզրահանգման, որ վիճարկվող աշխատանքից (գրադեցրած պաշտոնից, ծառայությունից) ազատելու (աշխատանքային պայմանագիրը լուծելու) մասին անհատական իրավական ակտը ոչ իրավաչափ է, սակայն անհնարին է վերացնել դրա բացասական հետևանքը՝ վերականգնել աշխատողին նախկին աշխատանքում, ապա դատարանը, չվերականգնելով աշխատողին իր նախկին աշխատանքում (ծառայությունում), անկախ հայցվորի կողմից նման պահանջ ներկայացված լինելու հանգամանքից, կրում է դրանից բխող պոզիտիվ պարտականություն՝ պարտավորեցնելու գործատուին վճարել հատուցում՝ հարկադիր պարապյուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, ինչպես նաև պարտավորեցնելու գործատուին վճարել հատուցում՝ աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով», «տվյալ դեպքում Դատարանը գործով կայացրած վճիռն պատճառաբանական մասում անդրադարձել է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգվորմանը, սակայն իր եզրահանգումները նաև վճռի եզրավակիչ մասում կատարել է միայն այդ իրավակարգվորմամբ սահմանված՝ հարկադիր պարապյուրդի ամբողջ ժամանակահատվածի համար գործատուին միջին աշխատավարձի չափով հատուցում վճարել պարտավորեցնելուն, անհիմն է գնահատում Դատարանի պատճառաբանություններն առ այն, որ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությամբ խնդրարկված պահանջը հայցվորի կողմից չի ներկայացվել, հետևաբար Դատարանն իրավասու չէր առանց համապատասխան ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված պահանջի անդրադառնալ հայցվորին նախկին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում վճարելու հարցին», մինևույն ժամանակ Հայկ Ֆարմանյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 30.07.2020 թվականի «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշումը թողել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ «վարչական դատարանի լրացուցիչ վճռի կայացման վրա տարածվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվել է, որ առաջին ատյանի դատարանը չի կարող լրացուցիչ վճիռ կայացնել այն հարցի կապակցությամբ, որի վերաբերյալ ներկայացվել է բողոք: Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարան 29.07.2020թ.-ին Բ-1772 մուտքի համարով և 04.08.2020թ.-ին Բ-1822 մուտքի համարով մուտքագրվել են թիվ ՎԴ/2635/05/19 վարչական գործով հայցվոր Հայկ Ֆարմանյանի և պատասխանող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ Դատարանի 30.06.2019թ. վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքները, մասնավորապես՝ վերաքննիչ բողոքներ են բերվել Դատարանի 30.06.2019թ. վճռի՝ թե՛ հայցը մասնակի բավարարելու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 11.02.2019թ. թիվ 1/490-Ա հրամանն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին Հայկ Ֆարմանյանին վճարել հարկադիր պարապյուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հատուցում՝ միջին աշխատավարձի չափով՝ սկսած 11.02.2019թ. մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, պարտավորեցնելու մասի, թե՛ մնացած՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 12.07.2019թ. թիվ 1/16-3/37702-2019 գրությամբ ներկայացված հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորման համապատասխան պաշտոններից մեկում վերականգնելու և հարկադիր պարապյուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ՝ հայցվորի միջին օրական աշխատավարձի չափի համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով հոգուտ հայցվորի բռնագանձելու պահանջների մասին հայցը մերժելու մասի դեմ: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վերաքննիչ

դատարանը, նկատի ունենալով, որ հայցվորի կողմից ներկայացված «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին» միջնորդությամբ խնդրարկված հարցը, այն է՝ թիվ ՎԴ/2635/05/19 վարչական գործով կայացնել լրացուցիչ վճիռ և լրացուցիչ վճռով պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ Հայկ Ֆարմանյանին աշխատանքում չվերականգնելու դիմաց վճարել դրամական հատուցում միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով, անմիջականորեն կապված է գործով քննված՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 11.02.2019թ. թիվ 1/490-Ա հրամանն անվավեր ճանաչելու, և հայցվոր Հայկ Ֆարմանյանին աշխատանքում վերականգնելու պահանջները Դատարանի կողմից կայացրած վճռով համապատասխանաբար բավարարելու և մերժելու հետ, եզրահանգում է, որ 30.06.2019թ. վճռի դեմ վերը նշված վերաքննիչ բողոքները ներկայացված լինելու պայմաններում Դատարանը բոլոր դեպքերում իրավասու չէ (չի կարող) լրացուցիչ վճիռ կայացնել այդ հարցի կապակցությամբ, որից ելնելով գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված հիմքով և վերը նշված պատճառաբանությամբ բողոքում նշված հիմքերն ու հիմնավորումները չեն կարող հիմք հանդիսանալ բողոքը բավարարելու և Դատարանի 30.07.2020թ. «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշումը վերացնելու համար»:

Վերլուծելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած Վերաքննիչ դատարանն իրավացիորեն անհիմն է համարել Դատարանի կողմից լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման հիմքում դրված պատճառաբանությունները, այնուամենայնիվ, վերաքննիչ բողոքը, ըստ էության, մերժել է այն հիմքով, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված՝ լրացուցիչ վճիռ կայացնելու արգելքը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների հիման վրա և նորմատիվ իրավական ակտերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն անհիմն է և չէր կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը մերժելու ու Դատարանի 30.07.2020 թվականի որոշումն անփոփոխ թողնելու համար, քանի որ տվյալ դեպքում բացակայել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված՝ լրացուցիչ վճիռ կայացնելու արգելքը, այն է՝ լրացուցիչ վճիռ կայացնելու վերաբերյալ միջնորդությամբ չի հայցվել այնպիսի հարցի կարգավորում, որի կապակցությամբ նաև ներկայացվել է վերաքննիչ բողոք:

Սույն գործի փաստերից բխում է, որ Դատարանը, 30.06.2020 թվականին իր կողմից կայացված վճռի պատճառաբանական մասում անդրադառնալով Հայկ Ֆարմանյանի պահանջին՝ կապված իրեն Կոմիտեի 12.07.2019 թվականի գրությամբ նշված համարժեք պաշտոններից ցանկացած մեկում վերականգնելու հետ, և այն համարելով անհիմն ու մերժման ենթակա, և վճռի եզրափակիչ մասում մերժելով այդ պահանջը՝ *ստանց գործատուին պարտավորեցնելու Հայկ Ֆարմանյանին աշխատանքում չվերականգնելու դիմաց նրան վճարելու համապարասխան հարուցում*, ըստ էության, չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է *Քրիստինա Նեբիչն ընդդեմ «ԱրմենՏեյ» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/1879/02/11* քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասին անդրադառնալու պայմաններում արտահայտված դիրքորոշմամբ այն մասին, որ որոշակի հանգամանքներից ելնելով՝ աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց դատարանը գործատուին պարտավորեցնում է վճարել հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

Նշված հանգամանքը բավարար համարելով՝ Հայկ Ֆարմանյանը, օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով իրեն վերապահված իրավունքից, մինչև Դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը միջորդություն է ներկայացրել Դատարան լրացուցիչ վճիռ կայացնելու մասին՝

խնդրելով լրացուցիչ վճռով Կոմիտեին պարտավորեցնել աշխատանքում չվերականգնելու դիմաց վճարել դրամական հատուցում միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

Վերը նշված միջնորդությունն ուսումնասիրելու արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լրացուցիչ վճիռ կայացնելու վերաբերյալ միջնորդությունը վերաբերում է աշխատանքում չվերականգնվելու դիմաց հատուցում ստանալուն, մինչդեռ 30.06.2020 թվականի վճռի դեմ հայցվոր Հայկ Ֆարմանյանի կողմից 29.07.2020 թվականին ներկայացված բողոքով վերջինս խնդրել է մասնակիորեն՝ *աշխատանքում չվերականգնելու մասով, բեկանել Դատարանի 30.06.2020 թվականի վճիռը և այն փոփոխել՝ այդ մասով հայցը բավարարել*: Ավելին՝ ներկայացված վերաքննիչ բողոքում բացակայել է աշխատանքում չվերականգնելու դիմաց միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով դրամական հատուցում վճարելը վճռում չնախատեսելու վերաբերյալ հիմքը: Նշված հիմքը բացակայել է նաև կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում: Պատասխանող ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 04.08.2020 թվականին ներկայացված բողոքով խնդրել է բեկանել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/2635/05/19 վարչական գործով 30.06.2020 թվականին կայացված վճիռը, և փոփոխել այն՝ մերժելով Հայկ Ֆարմանյանի հայցը: Ավելին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված միջնորդությունը ներկայացնելու պահի դրությամբ Դատարանի 30.06.2020 թվականի վճիռը դեռևս վերաքննության կարգով բողոքարկված չի եղել: Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոքն առաջին անգամ ներկայացվել է 29.07.2020 թվականին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, 12.10.2020 թվականին կայացնելով վերը նշված պատճառաբանությամբ վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասը կիրառել է սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումներին հակասող մեկնաբանությամբ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի կողմից նշված խախտումը չվերացվելու պարագայում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ միևնույն ժամանակ օրինական ուժի մեջ մտնեն ինչպես հայցվորին նախկին աշխատանքում չվերականգնելու մասին դատական ակտը, այնպես էլ՝ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը, որի դեպքում հայցվորը կգրկվի նախկին աշխատանքում չվերականգնելու դիմաց իրեն հասանելիք՝ օրինական ակնկալիք հանդիսացող հատուցում ստանալու իրավունքից, որը Վճռաբեկ դատարանը վերը նշված դիրքորոշումների համատեքստում համարում է անթույլատրելի:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ, 163-րդ և 169-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու՝ ՀՀ վարչական դատարանի 30.07.2020 թվականի «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշումը վերացնելու համար, որպիսի հանգամանքից ելնելով՝ գործը պետք է ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ Հայկ Ֆարմանյանի միջնորդությունը բավարարման ենթակա լինելու պայմաններում նրան աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցման չափը որոշելու հարցը լուծելու և այն գործատուին վճարել պարտավորեցնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.10.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 30.07.2020 թվականի «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/2635/05/19 վարչական գործով 19.11.2021 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

19.11.2021 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով Հայկ Ֆարմանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.10.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Հայկ Ֆարմանյանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի), երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին որոշել է. «Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.10.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 30.07.2020 թվականի «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշումը»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորներ Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս, Տ. Պետրոսյանս, Էդ. Սեդրակյանս համաձայն չլինելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 19.11.2021 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարմությունը

Իմնելով դատարան՝ Հայկ Ֆարմանյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 11.02.2019 թվականի թիվ 1/490-Ա հրամանը, իրեն վերականգնել Կոմիտեի 12.07.2019 թվականի գրությամբ նշված համարժեք պաշտոններից ցանկացած մեկում, ինչպես նաև բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ՝ հայցվորի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 30.06.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է անվավեր ճանաչել Կոմիտեի 11.02.2019 թվականի թիվ 1/490-Ա հրամանը, որպես հետևանք՝ պարտավորեցնել Կոմիտեին Հայկ Ֆարմանյանին վճարել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հատուցում միջին աշխատավարձի չափով՝ սկսած 11.02.2019 թվականից մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը. մնացած մասով հայցը մերժվել է:

Իմնելով դատարան՝ Հայկ Ֆարմանյանը պահանջել է կայացնել լրացուցիչ վճիռ՝ պարտավորեցնել Կոմիտեին վճարել իրեն աշխատանքում չվերականգնելու դիմաց դրամական հատուցում՝ միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

Դատարանի 30.07.2020 թվականի որոշմամբ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին Հայկ Ֆարմանյանի միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.10.2020 թվականի որոշմամբ Հայկ Ֆարմանյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.07.2020 թվականի «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայկ Ֆարմանյանը (ներկայացուցիչ Վարազդատ Դանիելյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով

Վերաքննիչ դատարանը խստիվ է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը Դատարան է ներկայացվել 03.07.2020 թվականին, Դատարանը միջնորդությունը քննել է 24.07.2020 թվականին, իսկ դրա վերաբերյալ որոշումը կայացրել է 30.07.2020 թվականին: Նշված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքը ներկայացվել է 30.07.2020 թվականին, երբ դեռևս հրապարակված չի եղել միջնորդությունը քննության առնելու վերաբերյալ որոշումը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ միջնորդության մեջ նշված հիմքերով վերաքննիչ բողոք չի ներկայացվել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ սույն գործով առկա է եղել լրացուցիչ վճիռ կայացնելու հիմք, քանի որ Դատարանը, վճռի պատճառաբանական մասում անդրադառնալով աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց դրամական հատուցում վճարելու պարտավորության հարցին, վճռի եզրակացության մասում, ըստ էության, չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է կայացնել նոր դատական ակտ՝ բավարարել լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի միատեսակ կիրառության համար, ու գտել է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասում նշված՝ լրացուցիչ վճիռ կայացնելու արգելքին՝ բացահայտելով նույն նորմում գործածված «այն հարցի կապակցությամբ» արտահայտության բովանդակությունը,

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ աշխատողին դատական կարգով հարուցում տրամադրելու իրավական հնարավորությանը՝ վերջինիս կողմից նման հայցապահանջ ներկայացված չլինելու պարագայում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության կարգը սահմանվում է նույն օրենսգրքով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման, *լրացուցիչ վճռի կայացման*, վճռի պարզաբանման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ որպես կանոն վարչական դատավարության կարգը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով: Մինևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է որոշակի դեպքեր, երբ վարչական դատավարության կարգը կարող է սահմանվել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, սակայն այդ հնարավորությունը պետք է հատուկ նախատեսված լինի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով:

Տվյալ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հատուկ նախատեսված է, որ վարչական դատարանի կողմից լրացուցիչ վճռի կայացման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Հաշվի առնելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով այլ բան նախատեսված չլինելու հանգամանքը՝ վարչական դատարանի կողմից լրացուցիչ վճռի կայացման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վճիռ կայացրած առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձանց միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կայացնում է լրացուցիչ վճիռ, *եթե վճռի պարճառաբանական մասում որևէ պահանջի անդրադառնալով՝ վճռի եզրափակիչ մասում ըստ էության չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը*:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վճիռը դատարանի նախաձեռնությամբ կարող է կայացվել, իսկ դրա վերաբերյալ միջնորդությունը կարող է ներկայացվել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած վճիռներով լրացուցիչ վճիռ կայացնելու մասին դիմումը կարող է ներկայացվել հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *առաջին ատյանի դատարանը չի կարող լրացուցիչ վճիռ կայացնել այն հարցի կապակցությամբ, որի վերաբերյալ ներկայացվել է բողոք*:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ վճիռ կայացրած առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձանց միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է կայացնել լրացուցիչ վճիռ, եթե վճռի պատճառաբանական մասում որևէ պահանջի անդրադառնալով՝ վճռի եզրափակիչ մասում ըստ էության չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը: Այսինքն, լրացուցիչ վճիռն ուղղված է վճռի լրիվության և որոշակիության ապահովմանը: Ընդ որում, լրացուցիչ վճիռը դատարանի նախաձեռնությամբ կարող է կայացվել, իսկ դրա վերաբերյալ միջնորդությունը կարող է ներկայացվել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Մինևնույն ժամանակ, օրենսդիրը որոշակի արգելք է սահմանել այն առնչությամբ, երբ առաջին ատյանի դատարանը չի կարող լրացուցիչ վճիռ կայացնել այն հարցի կապակցությամբ, որի վերաբերյալ ներկայացվել է բողոք:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,

ամբողջ հողվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը նույն հոդվածի 8-րդ մասի հետ համադրմամբ մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հողվածի կարգավորման համատեքստից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ չնայած օրենսդիրը որպես լրացուցիչ վճիռ կայացնելու ինքնուրույն հիմք նախատեսել է այն դեպքը, երբ վճիռ կայացրած առաջին ատյանի դատարանը, վճռի պատճառաբանական մասում որևէ պահանջի անդրադառնալով, վճռի եզրափակիչ մասում ըստ էության չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը, մինչդեռ անգամ այդ դեպքում օրենսդիրն առաջին ատյանի դատարանին արգելել է լրացուցիչ վճիռ կայացնելն այն հարցի կապակցությամբ, որի կապակցությամբ արդեն իսկ ներկայացվել է վերաքննիչ բողոք:

Այսինքն՝ օրենսդիրը դատարանի վրա պարտականություն է դրել մինչև լրացուցիչ վճիռ կայացնելը բոլոր դեպքերում պարզելու՝ արդյո՞ք այն հարցի կապակցությամբ, որի վերաբերյալ խնդրարկվում է կայացնել լրացուցիչ վճիռ, չի ներկայացվել վերաքննիչ բողոք, քանի որ, ինչպես արդեն իսկ վերը նշվեց, նշված հանգամանքը լրացուցիչ վճիռ կայացնելու արգելք է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

ՀՀ Սահմանադրական դատարանը 07.07.2010 թվականի թիվ ՍԴՈ-902 որոշմամբ նշել է, որ խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրն է հանդիսանում անձի խախտված իրավունքի վերականգնումը: Վերջինս ենթադրում է այն բացասական հետևանքների վերացում, որոնք անձի համար առաջացել են իրավունքի խախտման արդյունքում: Որպես կանոն, այդ բացասական հետևանքների վերացումը տեղի է ունենում *մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնմամբ*: Սակայն, առանձին դեպքերում, մինչև իրավունքի

խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը կարող է օբյեկտիվորեն անհնարին լինել: Այս դեպքում որպես խախտման բացասական հետևանքները վերացնելու իրավական միջոց է ծառայում, ինչպես նշվեց, անձի կրած վնասի դիմաց տրվող փոխհատուցումը: Այս մտեցումն է արտահայտված նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում (տե՛ս, մասնավորապես, Վասիլեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով, Vasilescu v. Romania, 1998թ. մայիսի 22-ի վճիռը, կետ 61): Տվյալ դեպքում անօրինականորեն ազատված անձին աշխատանքում չվերականգնելու, այն է՝ մինչև իրավախախտման փաստը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհնարինությունը դեպքում անձի խախտված իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանությունը կարող է տեղի ունենալ նրան փոխհատուցում վճարելու միջոցով: Այս գաղափարն է ամրագրված նաև վերոհիշյալ ԱՄԿ թիվ 158 կոնվենցիայի 10-րդ հոդվածում:

Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը նախատեսել է աշխատանքային պայմանագրի վերաբերյալ վեճերով աշխատողի խախտված իրավունքները վերականգնելու երկու հնարավոր կառուցակարգ: Առաջին դեպքում աշխատողը վերականգնվում է նախկին աշխատանքում՝ ստանալով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ, իսկ երկրորդ դեպքում նախկին աշխատանքային հարաբերությունները չեն վերականգնվում, և աշխատողը ստանում է հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ, ինչպես նաև աշխատանքում չվերականգնվելու դիմաց հատուցում: Ընդ որում, նշված կառուցակարգերը չեն կարող գործել միաժամանակ, քանի որ բացառում են միմյանց: Այսինքն՝ աշխատանքում վերականգնվելու պահանջը չբավարարվելու պայմաններում ինքնաբերաբար սկսում է գործել աշխատողի՝ չվերականգնվելու դիմաց հատուցում ստանալու իրավունքը: Հետևաբար, հայցադիմումում հատուցում ստանալու վերաբերյալ պահանջի բացակայության պայմաններում դատարանի կողմից նշված խնդիրը պետք է դառնա պարտադիր քննության առարկա:

Վճարել դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայկ Ֆարմանյանը, դիմելով Դատարան, պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 11.02.2019 թվականի թիվ 1/490-Ա հրամանը, ***իդեն վերականգնել Կոմիտեի 12.07.2019 թվականի գրությամբ նշված համաժողով պաշտոններից ցանկացած մեկում***, ինչպես նաև բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ՝ հայցվորի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Դատարանը, նշելով նաև, որ «հայցվորը խնդրել է իրեն վերականգնել Պետական եկամտուների կոմիտեի 12.07.2019թ. թիվ 1/16-3/37702-2019 գրությամբ ներկայացված հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան պաշտոններից մեկում», գտել է, որ «վերը նշված իրավանորմերով արդեն իսկ բացահայտված են աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում աշխատողների խախտված իրավունքների վերականգնման դեպքերը, որպիսի իրավանորմերը մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան այլ պաշտոններում վերականգնելու իրավասություն դատարանին չեն տալիս: Ընդ որում, ինչպես նշվեց, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասում և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում խոսքը գնում է միայն նախկին աշխատանքում վերականգնվելու մասին, այսինքն՝ այն աշխատանքում, որն աշխատողը հրամանի կամ աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարել է աշխատանքից ազատվելու հրամանն արձակելու պահի դրությամբ: Որևէ հատիքի առաջարկման լիազորությունը պատկանում է գործատուին, տվյալ դեպքում՝ Կոմիտեին, և դատարանը չի կարող որոշում կայացնել վարչական մարմնի փոխարեն և անձին վերականգնել իր նախկին աշխատանքից տարբերվող որևէ կոնկրետ պաշտոնում»: Դատարանը նշել է նաև, որ «Արևմտյան մաքսատուն-վարչության փաստաթղթային հսկողության բաժնի գործունեությունը դադարեցվել է, իսկ նոր ձևավորված բաժնում որպես բաժնի պետ է

նշանակվել գանձումների համակարգման և հաշվառման բաժնի պետը: Ելնելով վերոգրյալից դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջը՝ Պետական եկամուտների կոմիտեի 12.07.2019թ. թիվ 1/16-3/37702-2019 գրությամբ ներկայացված հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան պաշտոններից մեկում վերականգնելու մասին, անհիմն է և ենթակա է մերժման»:

Արդյունքում, Դատարանը **30.06.2020 թվականին** վճիռ է կայացրել հայցը մասնակիորեն բավարարելու՝ Կոմիտեի 11.02.2019 թվականի թիվ 1/490-Ա հրամանն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ հարկադիր պարտապարտի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի չափով՝ սկսած 11.02.2019 թվականից մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը Հայկ Ֆարմանյանին հատուցում վճարելուն Կոմիտեին պարտավորեցնելու և հայցը մնացած մասով մերժելու մասին:

03.07.2020 թվականին, այսինքն՝ մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, Հայկ Ֆարմանյանը միջորդություն է ներկայացրել Դատարան լրացուցիչ վճիռ կայացնելու մասին՝ խնդրելով լրացուցիչ վճռով Կոմիտեին պարտավորեցնել աշխատանքում չվերականգնելու դիմաց վճարել դրամական հատուցում միջին աշխատավարձի տասներկուսպատիկի չափով՝ միջնորդության մեջ նշելով նաև, որ դատարանն անձին աշխատանքում չվերականգնելու դիմաց գործատուին պարտավորեցնում է աշխատողին վճարել դրամական հատուցում՝ անկախ այդ մասին հայցապահանջում ներկայացված լինելու փաստից, այն է՝ օրենքի ուժով:

Դատարանի **30.07.2020 թվականի** «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշմամբ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին Հայկ Ֆարմանյանի միջնորդությունը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությամբ խնդրարկված պահանջը հայցվորի կողմից չի ներկայացվել, հետևաբար դատարանն իրավասու չէր առանց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված համապատասխան պահանջի անդրադառնալ հայցվորին նախկին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում վճարելու հարցին:

29.07.2020 թվականին Հայկ Ֆարմանյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 30.06.2020 թվականին վճռի դեմ՝ խնդրելով մասնակիորեն՝ աշխատանքում չվերականգնելու մասով, բեկանել Դատարանի 30.06.2020 թվականի վճիռը և այն փոփոխել՝ այդ մասով հայցը բավարարել. **աշխատանքում չվերականգնելու դիմաց միջին աշխատավարձի տասներկուսպատիկի չափով դրամական հատուցում վճարելը վճռում չնախատեսելու կապակցությամբ վերաքննիչ բողոք չի ներկայացվել:**

Վերաքննիչ դատարանի 26.08.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ Դատարանի 30.07.2020 թվականի «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշման դեմ բեկված վերաքննիչ բողոքը վերադարձվել է, իսկ 14.09.2020 թվականին որոշում է կայացվել կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին:

Վերաքննիչ դատարանը, 12.10.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշմամբ արձանագրելով, որ «այն դեպքում, երբ դատարանը աշխատողին (ծառայողին) աշխատանքից (ծառայությունից) ազատելու հետ կապված վճռի քննության արդյունքներով գալիս է այն եզրահանգման, որ վիճարկվող աշխատանքից (զբաղեցրած պաշտոնից, ծառայությունից) ազատելու (աշխատանքային պայմանագիրը լուծելու) մասին անհատական իրավական ակտը ոչ իրավաչափ է, սակայն անհնարին է վերացնել դրա բացասական հետևանքը՝ վերականգնել աշխատողին նախկին աշխատանքում, ապա դատարանը, չվերականգնելով աշխատողին իր նախկին աշխատանքում (ծառայությունում), անկախ հայցվորի կողմից նման պահանջ ներկայացված լինելու հանգամանքից, կրում է դրանից բխող պոզիտիվ պարտականություն՝ պարտավորեցնելու գործատուին վճարել հատուցում՝ հարկադիր պարտապարտի ամբողջ ժամանակահատվածի համար՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, ինչպես նաև պարտավորեցնելու գործատուին վճարել հատուցում՝ աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան

միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով», «տվյալ դեպքում Դատարանը գործով կայացրած վճռի պատճառաբանական մասում անդրադարձել է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորմանը, սակայն իր եզրահանգումները նաև վճռի եզրափակիչ մասում կատարել է միայն այդ իրավակարգավորմամբ սահմանված՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար գործատուին միջին աշխատավարձի չափով հատուցում վճարել պարտավորեցնելուն, անհիմն է գնահատում Դատարանի պատճառաբանություններն առ այն, որ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությամբ խնդրարկված պահանջը հայցվորի կողմից չի ներկայացվել, հետևաբար Դատարանն իրավասու չէր առանց համապատասխան ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված պահանջի անդրադառնալ հայցվորին նախկին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում վճարելու հարցին», մինչև ժամանակ Հայկ Ֆարմանյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 30.07.2020 թվականի «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշումը թողել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ «վարչական դատարանի լրացուցիչ վճռի կայացման վրա տարածվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվել է, որ առաջին ատյանի դատարանը չի կարող լրացուցիչ վճիռ կայացնել այն հարցի կապակցությամբ, որի վերաբերյալ ներկայացվել է բողոք: Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարան 29.07.2020թ.-ին Բ-1772 մուտքի համարով և 04.08.2020թ.-ին Բ-1822 մուտքի համարով մուտքագրվել են թիվ ՎԴ/2635/05/19 վարչական գործով հայցվոր Հայկ Ֆարմանյանի և պատասխանող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ Դատարանի 30.06.2019թ. վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքները, մասնավորապես՝ վերաքննիչ բողոքներ են բերվել Դատարանի 30.06.2019թ. վճռի թե՛ հայցը մասնակի բավարարելու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 11.02.2019թ. թիվ 1/490-Ա հրամանն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին Հայկ Ֆարմանյանին վճարել հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար հատուցում՝ միջին աշխատավարձի չափով՝ սկսած 11.02.2019թ. մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, պարտավորեցնելու մասի, թե՛ մնացած՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 12.07.2019թ. թիվ 1/16-3/37702-2019 գրությամբ ներկայացված հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորման համապատասխան պաշտոններից մեկում վերականգնելու և հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ՝ հայցվորի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով հօգուտ հայցվորի բռնագանձելու պահանջների մասին հայցը մերժելու մասի դեմ: Վերոգրյալի հաշվառմամբ՝ վերաքննիչ դատարանը, նկատի ունենալով, որ հայցվորի կողմից ներկայացված «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին» միջնորդությամբ խնդրարկված հարցը, այն է՝ թիվ ՎԴ/2635/05/19 վարչական գործով կայացնել լրացուցիչ վճիռ և լրացուցիչ վճռով պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ Հայկ Ֆարմանյանին աշխատանքում չվերականգնելու դիմաց վճարել դրամական հատուցում միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով, անմիջականորեն կապված է գործով քննված՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 11.02.2019թ. թիվ 1/490-Ա հրամանն անվավեր ճանաչելու, և հայցվոր Հայկ Ֆարմանյանին աշխատանքում վերականգնելու պահանջները Դատարանի կողմից կայացրած վճռով համապատասխանաբար բավարարելու և մերժելու հետ, եզրահանգել է, որ 30.06.2019թ. վճռի դեմ վերը նշված վերաքննիչ բողոքները ներկայացված լինելու պայմաններում Դատարանը բոլոր դեպքերում իրավասու չէ (չի կարող) լրացուցիչ վճիռ կայացնել այդ հարցի կապակցությամբ, որից ելնելով գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված հիմքով և վերը նշված պատճառաբանությամբ բողոքում նշված հիմքերն ու հիմնավորումները չեն կարող հիմք հանդիսանալ բողոքը բավարարելու և Դատարանի 30.07.2020թ. «Լրացուցիչ

վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշումը վերացնելու համար»:

Վերլուծելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ չնայած Վերաքննիչ դատարանն իրավացիորեն անհիմն է համարել Դատարանի կողմից լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման հիմքում դրված պատճառաբանությունները, այնուամենայնիվ, վերաքննիչ բողոքը, ըստ էության, մերժել է այն հիմքով, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված՝ լրացուցիչ վճիռ կայացնելու արգելքը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների հիման վրա և նորմատիվ իրավական ակտերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն անհիմն է և չէր կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը մերժելու ու Դատարանի 30.07.2020 թվականի որոշումն անփոփոխ թողնելու համար, քանի որ տվյալ դեպքում բացակայել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված՝ լրացուցիչ վճիռ կայացնելու արգելքը, այն է՝ լրացուցիչ վճիռ կայացնելու վերաբերյալ միջնորդությամբ չի հայցվել այնպիսի հարցի կարգավորում, որի կապակցությամբ նաև ներկայացվել է վերաքննիչ բողոքը:

Սույն գործի փաստերից բխում է, որ Դատարանը, 30.06.2020 թվականին իր կողմից կայացված վճիռի պատճառաբանական մասում անդրադառնալով Հայկ Ֆարմանյանի պահանջին՝ կապված իրեն Կոմիտեի 12.07.2019 թվականի գրությամբ նշված համարժեք պաշտոններից ցանկացած մեկում վերականգնելու հետ, և այն համարելով անհիմն ու մերժման ենթակա, և վճռի եզրակակիչ մասում մերժելով այդ պահանջը՝ *սուսնաց գործարարին պարտավորեցնելու Հայկ Ֆարմանյանին աշխատանքում չվերականգնելու դիմաց նրան վճարելու համապատասխան հատուցում*, ըստ էության, չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն իր նման եզրահանգումը պայմանավորել է *Քրիստինա Ներիշն ընդդեմ «ԱրմենՏեր» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/1879/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասին անդրադառնալու պայմաններում արտահայտված դիրքորոշմամբ այն մասին, որ որոշակի հանգամանքներից ելնելով՝ աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց դատարանը գործատուին պարտավորեցնում է վճարել հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:*

Նշված հանգամանքը բավարար համարելով՝ Հայկ Ֆարմանյանը, օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով իրեն վերապահված իրավունքից, մինչև Դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը միջորդություն է ներկայացրել Դատարան լրացուցիչ վճիռ կայացնելու մասին՝ խնդրելով լրացուցիչ վճռով Կոմիտեին պարտավորեցնել աշխատանքում չվերականգնելու դիմաց վճարել դրամական հատուցում միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

Վերը նշված միջնորդությունն ուսումնասիրելու արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ լրացուցիչ վճիռ կայացնելու վերաբերյալ միջնորդությունը վերաբերում է աշխատանքում չվերականգնվելու դիմաց հատուցում ստանալուն, մինչդեռ 30.06.2020 թվականի վճռի դեմ հայցվոր Հայկ Ֆարմանյանի կողմից 29.07.2020 թվականին ներկայացված բողոքով վերջինս խնդրել է մասնակիորեն՝ *աշխատանքում չվերականգնելու մասով, բեկանել Դատարանի 30.06.2020 թվականի վճիռը և այն փոփոխել՝ այդ մասով հայցը բավարարել*: Ավելին՝ ներկայացված վերաքննիչ բողոքում բացակայել է աշխատանքում չվերականգնելու դիմաց միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով դրամական հատուցում վճարելը վճռում չնախատեսելու վերաբերյալ հիմքը: Նշված հիմքը բացակայել է նաև կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում: Պատասխանող ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 04.08.2020 թվականին ներկայացված բողոքով խնդրել է բեկանել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/2635/05/19 վարչական գործով

30.06.2020 թվականին կայացված վճիռը, և փոփոխել այն՝ մերժելով Հայկ Ֆարմանյանի հայցը: Ավելին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերը նշված միջնորդությունը ներկայացնելու պահի դրությամբ Դատարանի 30.06.2020 թվականի վճիռը դեռևս վերաքննության կարգով բողոքարկված չի եղել: Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոքն առաջին անգամ ներկայացվել է 29.07.2020 թվականին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, 12.10.2020 թվականին կայացնելով վերը նշված պատճառաբանությամբ վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասը կիրառել է սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների հակասող մեկնաբանությամբ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի կողմից նշված խախտումը չվերացվելու պարագայում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ միևնույն ժամանակ օրինական ուժի մեջ մտնեն ինչպես հայցվորին նախկին աշխատանքում չվերականգնելու մասին դատական ակտը, այնպես էլ՝ լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը, որի դեպքում հայցվորը կգրկվի նախկին աշխատանքում չվերականգնելու դիմաց իրեն հասանելիք օրինական ակնկալիք հանդիսացող հատուցում ստանալու իրավունքից, որը Վճռաբեկ դատարանը վերը նշված դիրքորոշումների համատեքստում համարել է անթույլատրելի:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտել է բավարար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ, 163-րդ և 169-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու՝ ՀՀ վարչական դատարանի 30.07.2020 թվականի «Լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշումը վերացնելու համար:

4. Հարուկ կարծիքի պարճառաբանությունները և եզրահանգումները

Լիովին համաձայն լինելով սույն գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանի տեսական վերլուծությունների հետ, գտնում ենք, որ սույն գործի փաստերի նկատմամբ Վճռաբեկ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասը, որպիսի պնդումը հիմնավորվում է ներքոհիշյալ պատճառաբանություններով:

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը չի կարող լրացուցիչ վճիռ կայացնել այն հարցի կապակցությամբ, որի վերաբերյալ ներկայացվել է բողոք:

Շարադրված նորմի ճիշտ մեկնաբանման համար նախ անհրաժեշտ է ըմբռնել, թե օրենսդիրն ինչ նպատակ է հետապնդել նման արգելք սահմանելով: Նորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդրի նպատակն է եղել արգելել առաջին ատյանի դատարանին վճիռ կայացնել մի հարցի կապակցությամբ, որն արդեն քննության առարկա պետք է դառնա վերադաս դատական ատյանում: Նման արգելքի անհրաժեշտությունը թելադրված է իրավական անորոշությունը բացառելու շարժառիթով, այն է՝ որպեսզի երկու տարբեր դատարաններ միաժամանակ չքննեն նույն հարցը, ընդ որում՝ օրենսդրի հստակ կամքն այն է, որ բողոք ներկայացված լինելու դեպքում այդ հարցը քննվի վերադաս դատական ատյանում, այսինքն՝ առաջին ատյանի դատարանը գրկվում է իր վճռի թերությունները լրացուցիչ վճիռ կայացնելու միջոցով վերացնելու հնարավորությունից, եթե տվյալ հարցի քննությունն արդեն պետք է կատարվի վերադաս դատական ատյանում:

Ասվածը մասնավորեցնելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ, արձանագրում ենք հետևյալը:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը կատարված վերլուծության արդյունքում հանգել է այն հետևության, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կողմերի աշխատանքային հարաբերությունները չվերականգնվելու դեպքում «ինքնաբերաբար սկսում է գործել աշխատողի՝ չվերականգնվելու դիմաց հատուցում ստանալու իրավունքը», իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից ակնհայտ է, որ այդ հատուցումն իր մեջ ընդգրկում է ինչպես մինչև

վճռի օրինական ուժ ստանալը հարկադիր պարապուրդի, այնպես էլ աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցման գումարը՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

Վճռաբեկ դատարանը սույն գործով իր որոշման մեջ իրավացիորեն բացատել է միևնույն վեճի նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի իրավակարգավորումների միաժամանակյա կիրառումը: Դա իր հերթին նշանակում է, որ եթե հայցվորը վերաքննիչ բողոքով պահանջում է իր կարծիքով առաջին ատյանի դատարանի կողմից սխալմամբ չկիրառված ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը կիրառել, մասնավորապես՝ իրեն վերականգնել նախկին աշխատանքում, ապա բողոքի բավարարման արդյունքում անխուսափելիորեն պետք է փոխվի նաև աշխատողին տրվող հատուցման չափը, այն է՝ նրան պետք է տրվի միջին աշխատավարձի չափով հատուցում հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ մինչև աշխատանքում վերականգնելը, և այլևս չեն կարող տրվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հատուցումները: Հետևաբար եթե նման պահանջով բողոք է բերվել, ապա հնարավոր չէ պնդել, որ հատուցման հարցի վերաբերյալ բողոք չի ներկայացվել, քանի որ հատուցման պահանջն ամենայն էլ աշխատանքում վերականգնելու պահանջից և նախկին աշխատանքում վերականգնելու կամ չվերականգնելու դեպքում դատարանը պետք է լուծի նաև վերականգնման կամ չվերականգնման դեպքերի համար սահմանված հատուցումների հարցը:

Սույն գործի հանգամանքները լիովին համապատասխանում են վերը շարադրված իրավիճակին, այն է. առաջին ատյանի դատարանը 30.06.2020 թվականի վճռով Հայկ Ֆարմանյանի հայցը բավարարել է մասնակիորեն, մասնավորապես մերժել է նրան նախկին աշխատանքում վերականգնելը, ինչի դեմ Հայկ Ֆարմանյանի կողմից 29.07.2020 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ պահանջելով այդ մասով բեկանել և փոփոխել վճիռը՝ վերականգնել նախկին աշխատանքում: Ի դեպ, սույն գործով կայացված վճռի դեմ 29.07.2020 թվականին վերաքննիչ բողոք է ներկայացրել նաև Կոմիտեն՝ պահանջելով հայցն ամբողջությամբ մերժել: Ակնհայտ է, որ երկու բողոքներից ցանկացածի բավարարման դեպքում աշխատողին վճարվող հատուցումների չափը պետք է փոփոխվի կամ հատուցումը պետք է ընդհանրապես մերժվի: Դա իր հերթին նշանակում է, որ աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցման հարցով բողոքներ ներկայացվել են:

Հայցվորը միաժամանակ 03.07.2020 թվականին առաջին ատյանի դատարան է ներկայացրել լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդություն, որի վերաբերյալ որոշումը հրապարակվել է 30.07.2020 թվականին, այսինքն՝ այն ժամանակ, երբ ներկայացված են եղել աշխատողին վճարվելիք հատուցման հարցերի վերաբերյալ վերաքննիչ բողոքները: Քանի որ բողոքների քննության արդյունքում հատուցման հարցն անխուսափելիորեն պետք է քննության առարկա դառնա Վերաքննիչ դատարանում, կարող են ստեղծվել հետևյալ իրավիճակները. հայցվորի բողոքը բավարարվելու դեպքում աշխատողը կվերականգնվի նախկին աշխատանքում, և Դատարանի լրացուցիչ վճիռը կդառնա ավելորդ, իսկ պատասխանողի բողոքը բավարարվելու դեպքում հայցը կմերժվի, և լրացուցիչ վճիռը կմնա անկատար, երկու դեպքում էլ լրացուցիչ վճիռը կդառնա հիմնական վճռից կտրված և կատարման ոչ ենթակա դատական ակտ: Այսպիսով, քանի որ օրենսդիրը առաջին ատյանի դատարանին արգելել է բողոքներ ներկայացված լինելու պայմաններում լրացուցիչ վճիռ կայացնել, ուստի առաջին ատյանի դատարանը՝ մերժելով լրացուցիչ վճիռ կայացնելը, իսկ Վերաքննիչ դատարանը՝ անփոփոխ թողնելով նշված դատական ակտը, կայացրել են ճիշտ, օրինական որոշումներ, իսկ Վերաքննիչ դատարանն իր 12.10.2020 թվականի որոշմամբ նաև տվել է իր որոշման հիմնավոր պատճառաբանությունները:

2. Բացի վերոգրյալը, գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանը սույն գործի փաստերը հաշվի չի առել՝ գալով այն եզրահանգման, որ տվյալ դեպքում դատարանը լրացուցիչ վճիռ կայացնելը չէր կարող մերժել, քանի որ առկա են լրացուցիչ վճիռ կայացնելու օրենքով սահմանված նախապայմանները: Այսպես.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն վճիռ կայացրած առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձանց միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կայացնում է լրացուցիչ վճիռ, եթե՝ վճռի պատճառաբանական մասում որևէ պահանջի անդրադառնալով՝ վճռի եզրափակիչ մասում ըստ էության չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը:

Նորմի տառացի մեկնաբանությունից բխում է, որ դատարանը վճռի եզրափակիչ մասում որևէ պահանջի բավարարման կամ մերժման հարցը լուծած չլինելու թերությունը կարող է վերացնել միայն այն դեպքում, երբ վճռի պատճառաբանական մասում անդրադարձել է տվյալ պահանջին: «Պահանջին անդրադառնալով» բառակապակցությունը տվյալ դեպքում նշանակում է, որ դատարանի վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրակացություն՝ գործին մասնակցող անձի պահանջի հիմնավոր լինելու վերաբերյալ (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետ), հակառակ դեպքում գործ կունենանք այդ մասով չպատճառաբանված վճռի հետ:

Օրենսդրի կողմից նման կարգավորումը նույնպես ինքնանպատակ չէ, քանի որ օրենսդիրն առաջին ատյանի դատարանին թույլատրել է ուղղել ոչ թե վճռի թերություններն ընդհանրապես, այլ միայն տեխնիկական (ձևական) թերությունները, իսկ վճռում լուծման ենթակա որևէ պահանջին ընդհանրապես չանդրադառնալը և միաժամանակ չլուծելը չի կարող համարվել տեխնիկական (ձևական) թերություն: Դա արդեն դատական սխալ է, որի վերացման համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը սահմանել է այլ կառուցակարգեր:

Սույն գործով Դատարանի 30.06.2020 թվականի վճռի պատճառաբանական մասի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այնտեղ բացակայում է որևէ դատողություն, առավել ևս՝ եզրակացություն՝ աշխատողին նախկին աշխատանքում չվերականգնելու դիմաց տրվող հատուցման պահանջի հիմնավոր կամ անհիմն լինելու վերաբերյալ: Վճռի պատճառաբանական մասը եզրահանգում է պարունակում միայն աշխատանքում չվերականգնելու դիմաց հարկադիր պարապորդի վճարման պահանջի հիմնավորվածության վերաբերյալ (հատոր 3-րդ գ.թ. 130-136), որպիսի պայմաններում վճռի քննարկվող թերությունը չի կարող վերացվել լրացուցիչ վճիռ կայացնելու միջոցով:

Տվյալ դեպքում խոսք կարող է գնալ դատական սխալի մասին, ինչը կարող է ուղղվել միայն համապատասխան հիմքով վերաքննիչ բողոք բերելու եղանակով:

Այսպիսով, կարծում ենք, որ սույն գործի փաստերի նկատմամբ Վճռաբեկ դատարանը սխալ մեկնաբանությամբ է կիրառել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ քննարկվող դատավարական նորմերին տալով միայն տառացի մեկնաբանություն, անտեսել է, որ նման մեկնաբանություն տալիս պետք է հաշվի առնել «նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը»:

Նման պայմաններում գտնում ենք, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի բողոքարկվող որոշումը վերացվել չի կարող, քանի որ անկախ վերաքննիչ բողոք ներկայացրած անձանց գնահատականներից, աշխատողին նախկին աշխատանքում չվերականգնելու դիմաց տրվող հատուցման հարցն առհասարակ չլուծելու վճռի թերությունը չի կարող վերացվել լրացուցիչ վճիռ կայացվելու միջոցով: Հետևաբար Վերաքննիչ դատարանի 30.07.2020 թվականի որոշումը պետք է թողնվի անփոփոխ:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Աստոնյան
 Ա. Բարսեղյան
 Տ. Պետրոսյան
 Էդ. Սեդրակյան

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/1951/05/20**
2021թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/1951/05/20

Նախագահող դատավոր՝

Ա. Առաքելյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող և գեկուցող

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 09-ին

գրավոր ընացակարգով քննելով ըստ հայցի ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ի դեմս ՀՀ կառավարության, երրորդ անձինք ««Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ), Երևան համայնքի՝ «Ազատության պողոտայում գտնվող «Հաղթանակ» զբոսայգու զբաղեցրած հողամասի մակերեսը վերաճշտելու և տարածքում առկա ինքնակամ կառուցված շինությունների նկատմամբ Երևանի քաղաքապետարանի սեփականության իրավունքը ձևակերպելու մասին» 12.03.2008 թվականի թիվ 1004-Ա որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը վերացնելու, 08.04.2008 թվականի «Ազատության պողոտայի 2/5 հասցեում կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասն օտարելու մասին» թիվ 1619-Ա որոշումն ամբողջությամբ վերացնելու, որպես հետևանք՝ 29.05.2008 թվականին Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի և Ընկերության միջև կնքված հողամասի ուղղակի վաճառքի մասին թիվ 4204 պայմանագիրն անվավեր ճանաչելու, 21.08.2008 թվականին Երևանի քաղաքապետի կողմից կայացված Երևանի քաղաքապետի 07.04.2008 թվականի թիվ 1619-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին թիվ 3759-Ա, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 19.09.2008 թվականի թիվ 4199-Ա որոշումներն ամբողջությամբ վերացնելու, Երևան քաղաքի Ազատության պողոտայի թիվ 2/5 հասցեում Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, 29.05.2005 թվականին Բանկի և Ընկերության միջև կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի)

թիվ **ԲԳՊ15/172-01** պայմանագիրը, դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը, ինչպես նաև թիվ **ԲԳՊ15/172-01** պայմանագրի հիման վրա **08.06.2015** թվականին կնքված **ԲԳՊՀ715/103-01**, **11.12.2015** թվականին կնքված **ԱԳՊՀ15/219-01** և **23.03.2017** թվականին կնքված **ԱԳՊՀ17/31-01** համաձայնագրերին անվավեր ճանաչելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի **04.06.2020** թվականի որոշման դեմ Բանկի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Դատախազությունը պահանջել է վերացնել «Ազատության պողոտայում գտնվող «Հաղթանակ» զբոսայգու զբաղեցրած հողամասի մակերեսը վերաճշտելու և տարածքում առկա ինքնակամ կառուցված շինությունների նկատմամբ Երևանի քաղաքապետարանի սեփականության իրավունքը ձևակերպելու մասին» **12.03.2008** թվականի թիվ **1004-Ա** որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, **08.04.2008** թվականի «Ազատության պողոտայի 2/5 հասցեում կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասն օտարելու մասին» թիվ **1619-Ա** որոշումը, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել **29.05.2008** թվականին Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի և Ընկերության միջև կնքված հողամասի ուղղակի վաճառքի մասին թիվ **4204** պայմանագիրը, ամբողջությամբ վերացնել **21.08.2008** թվականին Երևանի քաղաքապետի կողմից կայացված Երևանի քաղաքապետի **07.04.2008** թվականի թիվ **1619-Ա** որոշման մեջ լրացում կատարելու մասին թիվ **3759-Ա**, ինչպես նաև Երևանի քաղաքապետի **19.09.2008** թվականի թիվ **4199-Ա** որոշումները, անվավեր ճանաչել Երևան քաղաքի Ազատության պողոտայի թիվ **2/5** հասցեում Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցումը, **29.05.2005** թվականին Բանկի և Ընկերության միջև կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ **ԲԳՊ15/172-01** պայմանագիրը, դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը, ինչպես նաև թիվ **ԲԳՊ15/172-01** պայմանագրի հիման վրա **08.06.2015** թվականին կնքված **ԲԳՊՀ715/103-01**, **11.12.2015** թվականին կնքված **ԱԳՊՀ15/219-01** և **23.03.2017** թվականին կնքված **ԱԳՊՀ17/31-01** համաձայնագրերը:

Մինևույն ժամանակ Դատախազությունը միջնորդել է վերականգնել վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետը՝ պատճառաբանելով, որ «վարչական ակտի գոյության, ինչպես նաև դրա ոչ իրավաչափ լինելու հանգամանքը հայտնի է դարձել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից **23.02.2020** թվականին կայացված «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ»:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) **01.04.2020** թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու, հայցադիմումը վարույթ ընդունելու, նախնական նիստ հրավիրելու և ապացույց պահանջելու մասին» որոշմամբ բավարարվել է Դատախազության միջնորդությունը և վերականգնվել է հայցադիմումը դատարան ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) **04.06.2020** թվականի որոշմամբ մերժվել է Բանկի վերաքննիչ բողոքը և Դատարանի **01.04.2020** թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու, հայցադիմումը վարույթ ընդունելու, նախնական նիստ հրավիրելու և ապացույց պահանջելու մասին» որոշումը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու բողոքարկված մասով, թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը (ներկայացուցիչ՝ Հ. Անդրիսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Վ. Արյան), Դատախազությունը (ներկայացուցիչ՝ Ա. Մադոյան), Երևան համայնքը (ներկայացուցիչ՝ Ա. Գալստյան), ՀՀ կառավարությունը (ներկայացուցիչ՝ Լ. Փաշայան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 54-րդ հոդվածները, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Նախ՝ Դատախազությունը, որը ներկայացնում է պետության շահը և ըստ էության հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, դեռևս 2008 թվականին կայացված որոշումները վիճարկելու հայցը ներկայացրել է 25.03.2020 թվականին և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությամբ հայտնել է, որ վարչական ակտի գոյության, ինչպես նաև դրա ոչ իրավաչափ լինելու հանգամանքը հայտնի է դարձել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից 23.02.2020 թվականին կայացված «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ՝ որպես հիմնավորում ներկայացնելով ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից 23.01.2020 թվականին կայացված «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշումը:

Հատկանշական է, որ Դատախազությունը հանդես չի գալիս իր անունից, այլ սույն գործով վերջինս ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահը և հանդես է գալիս վերջինիս անունից, իսկ Հայաստանի Հանրապետությունը վիճարկվող որոշումների ոչ միայն գոյության, այլև դրանց հիման վրա կնքվող պայմանագրի մասին գիտեր դեռևս 2008 թվականից: Մասնավորապես՝ վիճարկվող ակտերի մասին Դատախազությունը, որպես պետության ներկայացուցիչ, իմացել է կամ առավելագույնը կարող էր իմանալ դեռևս 29.05.2008 թվականից, երբ վիճարկվող որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության և Ընկերության միջև կնքվել է հողամասի ուղղակի վաճառքի մասին պայմանագիր: Այսինքն՝ ակնհայտ է, որ վիճարկվող որոշումների ընդունման օրվանից անցել է ավելի քան 10 տարի, հետևաբար նշված որոշումներն օրենքի ուժով դարձել են անվիճարկելի: Ավելին՝ վիճարկվող որոշումներից՝ 08.04.2008 թվականին ընդունված թիվ 1619-Ա որոշումն իրեն արդեն «սպառել է», քանի որ դրանով նախատեսված իրավունքն արդեն իսկ իրացվել է, մասնավորապես՝ 29.05.2008 թվականին Հայաստանի Հանրապետության և Ընկերության միջև կնքվել է հողամասի ուղղակի վաճառքի մասին պայմանագիր: Այսինքն՝ ըստ էության, նշված որոշումն այլևս չի կարող բողոքարկվել, առավելագույնը կարող է բողոքարկվել դրա հիման վրա կնքված հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիրը, որն էլ վարչական դատավարության կարգով բողոքարկման առարկա չի հանդիսանում:

Երկրորդ՝ եթե անգամ եզրակացվի, որ ավելի քան 12 տարի Հայաստանի Հանրապետությունը չի իմացել իր իսկ կողմից կայացված և այժմ էլ վիճարկվող որոշումների գոյության մասին և տեղեկացել է միայն «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ, ապա այս դեպքում էլ հարկ է ընդգծել, որ այդ որոշումը կայացվել է ոչ թե 23.02.2020 թվականին, ինչպես նշել է Դատախազությունը, այլ 23.01.2020 թվականին: Այսինքն՝ վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը այդ դեպքում լրանում է 24.03.2020 թվականին, մինչդեռ հայցադիմումը ներկայացվել է 25.03.2020 թվականին: Այսինքն՝ հայցադիմումը սահմանված ժամկետից մեկ օր ուշ է ներկայացվել և այդ մասով Դատախազության կողմից որևէ հիմնավորում Դատարանում չի ներկայացվել, մինչդեռ անհասկանալի պատճառաբանությամբ Դատարանը բավարար է համարել միջնորդությամբ ներկայացված հիմնավորումները, իսկ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը լրացել է մինչև 25.03.2020 թվականը և այն բաց է թողնվել հայցվորի կողմից, ըստ այդմ՝ երկամսյա ժամկետի պահպանումը 23.01.2020 թվականից հետո՝ վիճարկվող որոշումների գոյության

ու իրավաչափության մասին իրազեկվելուց հետո, չի բխում գործող իրավակարգավորումներից: Ավելին, հայցվորը վերաքննիչ բողոքի պատասխանին կից ներկայացրել է ապացույց առ այն, որ հայցադիմումը կից փաստաթղթերով ուղարկել է Դատարան ԱԱԾ սուրհանդակային կապի վարչության միջոցով 24.03.2020 թվականին:

Ամբողջ վերոգրյալը վկայում է այն մասին, որ ստորադաս դատարանները հաշվի են առել բացառապես Դատախազության իրավունքները՝ անտեսելով իրավական որոշակիության սկզբունքը, վարչական ակտի անբողոքարկելի լինելու հանգամանքը, գործին մասնակցող այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, դրանով իսկ խախտելով նյութական և դատավարական նշված նորմերի պահանջները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բավարարել վճռաբեկ բողոքը և կայացնել նոր դատական ակտ, այն է՝ մերժել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացրած միջնորդությունը»:

2.1. Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Ընկերության պարասխանի հիմնավորումները

Ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Դատախազությունը, ստանալով քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը, ակնհայտորեն իմացել է ոչ միայն քրեական գործ հարուցվելու և այն դեպքերի մասին, որոնց առթիվ հարուցվել է քրեական գործը, այլև իմացել է քրեական գործի նյութերի և բոլոր մանրամասնությունների մասին, քանի որ առանց դրանց հնարավոր չէր լինի իրականացնել մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունը, հետևաբար դատարանի այն դատողությունը, որ հայցվորը միայն 23.01.2020 թվականին է իմացել վարչական ակտի մասին, չի կարող տեղավորվել որևէ ողջամիտ դատողության մեջ և անհիմն է: Նման պայմաններում միայն այն հանգամանքը, որ Դատախազությունն իրականացնում է հսկողություն հետաքննության և նախաքննության նկատմամբ, Դատարանի համար պետք է բավարար լիներ արձանագրելու այն փաստը, որ հայցվորն առնվազն քրեական գործը հարուցված լինելու պահից, այն է՝ 30.08.2019 թվականից իմացել է քրեական գործ հարուցվելու և այն դեպքերի մասին, որոնց առթիվ հարուցվել է քրեական գործը: Հատկանշական է, որ դեռևս 08.01.2018 թվականին հարուցվել է թիվ 62232418 քրեական գործը՝ Երևանի քաղաքապետարանի բարձրատիճան պաշտոնատար անձանց կողմից անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով իրենց պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու դեպքի առթիվ: Թիվ 62232418 քրեական գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա 30.08.2019 թվականին հարուցվել է թիվ 62223519 քրեական գործը: Ըստ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 23.01.2020 թվականի որոշման՝ 30.08.2019 թվականի նույն օրը հարուցված թիվ 62223519 քրեական գործը միացվել է թիվ 62232418 քրեական գործին: Ընդամենը 28 օր անց նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների բավարար համակցության հիման վրա 27.09.2019 թվականին Երևանի նախկին քաղաքապետ Երվանդ Զախարյանին և նախկին ճարտարապետ Արսեն Լալայանցին մեղադրանք է առաջադրվել: Բնականաբար, եթե քրեական հետապնդումն իրականացվել է օրենքով սահմանված կարգով, ապա նշված բոլոր որոշումներն ուղարկվել են հսկող դատախազին հսկողություն իրականացնելու համար: Հետևաբար նման պայմաններում ակնհայտ է, որ Դատախազությունը, ի դեմս 62232418 և 62223519 քրեական գործերով հսկողություն իրականացնող դատախազի(ների), ի պաշտոնե իրավունք ունեն և պարտավոր էր տեղյակ լինել քրեական գործում առկա նյութերին և նշված անձը կամ անձինք, եթե անգամ պատշաճ կերպով չեն իրականացրել իրենց պարտականությունները, ապա դա դեռ չի նշանակում, որ առկա է օբյեկտիվ կամ սուբյեկտիվ որևէ պատճառ հայցադիմում ներկայացնելու ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու համար:

ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից 23.01.2020 թվականին կայացված «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշումից հետևում է, որ ՀՔԾ-ի կողմից քրեական գործ հարուցելու համար առիթ է հանդիսացել 24.09.2018 թվականին

«www.hetq.am» լրատվական կայքում հրապարակված «Ընտրյալների թաղամասը» վերտառությամբ հոդվածը, այսինքն՝ քրեական հետապնդման մարմինը մամուլից է իրազեկվել Երևանի քաղաքապետի 12.03.2008 թվականի և 08.04.2008 թվականի որոշումների մասին: Նշվածից ակնհայտ է դառնում, որ Դատախազությունը ևս իմացել է վերոնշյալի մասին, իսկ եթե ՀՀԾ-ն չանդրադառնար տվյալ հարցին, ապա դրան պետք է անդրադառնար Դատախազությունը և հարուցեր քրեական գործ կամ մերժեր քրեական գործի հարուցումը: Նման պայմաններում մամուլում դրա մասին հրապարակվելու փաստը ևս բավարար էր արձանագրելու այն փաստը, որ Դատախազությունը գիտեր Երևանի քաղաքապետի 12.03.2008 թվականի և 08.04.2008 թվականի որոշումների մասին: Վերոնշյալից բացի, Դատարանը պետք է հիմք ընդուներ ՀՀ, և ոչ թե ՀՀ անունից այս կամ այն մարմնի, առանձին ստորաբաժանման կամ ստորաբաժանման առանձին պաշտոնատար անձի իմանալու պահը, հակառակ պարագայում պետությունը կարող է իր մարմինների միջոցով անընդհատ վկայակոչել վարչական ակտի մասին չիմանալու մասին և վարչական ակտը վիճարկել ցմահ: Սույն դեպքում վարչական ակտը կայացվել է պետության կողմից և պետության անունից հանդես եկող անձի կողմից, հետևաբար պետությունը առնվազն 12.03.2008 թվականից և 08.04.2008 թվականից իրազեկված է եղել վիճարկվող վարչական ակտերի մասին, դրանից հետո իրականացվել է իրավունքի պետական գրանցում պետության համապատասխան մարմնում, հետո տարիներ շարունակ Հնվերությունը վճարել է հողի հարկ պետությանը և բարեկարգել է տարածքը, հետևաբար պետությունն անընդհատ իրազեկված է եղել վերոնշյալ վարչական ակտերի և դրանից բխող որոշակի իրավունքների իրացված լինելու մասին: Նշվածից հետևում է, որ ներկայացված միջնորդությունն անհիմն է և ենթակա էր մերժման:

2.2 Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Դատախազության պարասպանի հիմնավորումները

Վարչական ակտերի ոչ իրավաչափ լինելու հանգամանքը և դրանով պայմանավորված վարչական ակտերը վիճարկելու անհրաժեշտության մասին հայցվորը տեղեկացել է ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից 23.01.2020 թվականին կայացված «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ:

Տվյալ դեպքում հայցվորը չի հանդիսանում վարչական ակտն ընդունած մարմին կամ վարչական ակտն ընդունած մարմնի վերադաս, ուստի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածը հայցվորի նկատմամբ չի կարող տարածվել, վերջինիս նկատմամբ կարող են տարածվել բացառապես դատավարական իրավունքի նորմերը:

Բողոքաբերի պնդումն առ այն, որ հայցադիմումը ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետը 23.01.2020 թվականին կայացված «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշման պահից հաշվարկված ավարտվում է 24.03.2020 թվականին, մինչդեռ հայցադիմումը ներկայացվել է 25.03.2020 թվականին, անհիմն է, քանի որ հայցադիմումը ՀՀ ԱԱԾ սուրհանդակային կապի վարչությանն է հանձնվել 24.03.2020 թվականին:

Դատախազությունը, այրիորի՝ «a priori», չէր կարող տեղեկացված լինել այս կամ այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից կայացված բոլոր վարչական ակտերի գոյության մասին, առավել ևս գնահատել դրանց իրավաչափության հիմնահարցը:

Դատախազությունն առնչվել է սույն գործով վիճարկվող որոշումներին թիվ 62232418 քրեական գործով մինչդատական քրեական վարույթի օրինակնության նկատմամբ հսկողություն իրականացնելիս: Ավելին, խնդրահարույց որոշումների գոյության մասին իրազեկվելն ինքնին չէր կարող հիմք հանդիսանալ Դատախազության կողմից վարչական դատավարության կարգով հայցի հարուցման գործընթացը նախաձեռնելու համար, քանի որ անհրաժեշտ էին համապատասխան իրավական հիմքեր, որոնք ի հայտ են եկել միայն քրեական գործով վերջնական որոշման՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից 23.01.2020 թվականին կայացված «Քրեական

հետապնդումը դադարեցնելու մասին» որոշման ընդունմամբ, որով և հաստատվել է սույն գործով էական նշանակություն ունեցող որոշակի փաստերի առկայությունը:

Դատախազության ներկայացուցիչը խնդրել է վճռաբեկ բողոքը մերժել:

2.3. Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Երևան համայնքի պապրասիանի հիմնավորումները

Մինչդատական վարույթը հատուկ սուբյեկտների կողմից իրականացվող գործողությունների ընթացակարգ է, որը բաղկացած է մի շարք փուլերից՝ սկսած քրեական գործ հարուցելու հարցի լուծման պահից մինչև գործն ըստ էության քննելու համար դատարան ուղարկելը:

Տվյալ պարագայում եթե անգամ պայմանականորեն ընդունվի, որ հայցվորը կարող էր և կամ պարտավոր էր իմանալ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտերի մասին, ապա անգամ այդ պարագայում հայցվորը, առանց գործի հանգամանքները քննելու իրավասու չէր գնահատել Երևանի քաղաքապետի վիճարկվող որոշումների իրավաչափությունը, չէր կարող համոզմունք ձևավորել առ այն, որ Երևանի քաղաքապետի որոշումներով խախտվում է պետության շահը, քանի որ նման իրավիճակը կարող էր դիտարկվել ոչ այլ ինչ, քան մինչև գործի ըստ էության լուծումը (տվյալ դեպքում «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշում կայացնելը) տվյալ վարույթի շրջանակներում հարցի վերաբերյալ դատախազի սուբյեկտիվ դիրքորոշման արտահայտում, մինչդեռ դատարանում հայցը հարուցվում է ոչ թե վարչական ակտի մասին տեղեկացված լինելու փաստի ուժով, այլ դրա հիման վրա իրավունքի խախտման փաստի բացահայտման հիմքով:

Հետևաբար սույն վարչական գործով հայցադիմումը ներկայացվել է մինչդատական վարույթն ավարտելու, այն է՝ «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշման կայացման պահից օրենքով նախատեսված ժամկետների պահպանմամբ, հետևաբար վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկներն անհիմն են, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

2.4. Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Կատավարության պապրասիանի հիմնավորումները

Հայցվորը չի հանդիսանում վարչական ակտն ընդունած մարմին կամ վարչական ակտն ընդունած մարմնի վերադաս, ուստի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածը հայցվորի նկատմամբ չի կարող տարածվել, վերջինիս նկատմամբ կարող են տարածվել բացառապես դատավարական իրավունքի նորմերը:

Դատախազությունը տեղեկացել է վարչական ակտերի գոյության և դրանց ոչ իրավաչափ լինելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԳԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի 23.01.2020 թվականի «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշումից, որպիսի պայմաններում դատավարական ժամկետների բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը ենթակա էր բավարարման, հակառակ պարագայում Դատախազությունը կգրկվի իրավասու դատարանի կողմից պետական շահերի պաշտպանության հայցի՝ ըստ էության քննության հնարավորությունից:

Սույն գործով 23.01.2020 թվականին կայացված «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշման օրինականության ստուգման պահից դատախազը կարող էր գնահատել հայց հարուցելու իրավական հիմքերի առկայությունը կամ բացակայությունը:

Վերոգրյալ հիմնավորումներով Կատավարության ներկայացուցիչը խնդրել է վճռաբեկ բողոքը մերժել:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 54-րդ, 72-րդ հոդվածների խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

- արդյո՞ք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու համար կարող է հիմք ընդունվել նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դատավարական ժամկետը.

- ո՞ր պահից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտների համար հոսում նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը:

Նախևառաջ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին և 28-րդ հոդվածներին համապատասխանության հարցի վերաբերյալ սույն գործով հիմնավոր կասկած ձևավորված լինելու հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 13.07.2021 թվականին որոշում է կայացրել ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին:

ՀՀ սահմանադրական դատարանը 05.08.2021 թվականի թիվ ՍԴԱՈ-175 որոշմամբ մերժել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննությունն այն պատճառաբանությամբ, որ օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությունը Սահմանադրական դատարանում քննության առարկա դարձնելու հնարավորության հարցն առաջանում է այն դեպքում, երբ արձանագրվում է օրենսդրական բացի առկայությունը: Մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը վիճարկման հայց ներկայացնելու ժամկետ է սահմանում ոչ միայն վարչական վարույթի մասնակիցների, այլև դրա մասնակից չհանդիսացած անձանց, այդ թվում՝ նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտների համար: Վերոնշյալից հետևում է, որ տվյալ դեպքում առկա է վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի վերաբերյալ օրենսդրական կարգավորում, որի հաշվառմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հնարավորություն ունի գնահատելու կոնկրետ դեպքում նշված ժամկետի բացթողման պատճառները հարգելի համարելու և այն վերականգնելու հարցի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումների իրավաչափությունը, որպիսի լիազորությունների իրականացումն էլ բացառապես Վճռաբեկ դատարանի սահմանադրական առաքելության իրացման տիրույթում է (յրեն՝ ՀՀ սահմանադրական դատարանի 05.08.2021 թվականի թիվ ՍԴԱՈ-175 որոշումը):

Վերոգրյալի հաշվառմամբ սույն որոշմամբ առաջադրված իրավական հարցերին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադատության կարգով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկանյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետ է սահմանել նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված սուբյեկտների համար, այդ հարցի լուծումը պայմանավորելով վիճարկվող վարչական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքով, իսկ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-60-րդ հոդվածներում ամրագրված կարգավորումներով օրենսդիրը պայմանավորել է ակտի ընդունման մասին վարույթի մասնակիցներին հանձնման կամ հրապարակման եղանակով իրագեկելու հանգամանքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներն են (այսուհետ՝ վարույթի մասնակիցներ)

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտները «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով վարչական վարույթի մասնակիցներ չեն կարող հանդիսանալ, ուստի վարչական ակտի ուժի մեջ մտնելու կանոնը, հետևաբար և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետը նրանց համար կիրառելի չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով պետության իրավունքները խախտող վարչական ակտը վիճարկելու իրավունք վերապահելով այն պետական մարմիններին կամ պաշտոնատար անձանց, որոնց վրա դրված է այդ իրավունքների պաշտպանության լիազորությունը, միաժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով չի սահմանել այն ժամկետները, որոնց ընթացքում նշված սուբյեկտները կարող են դիմել ՀՀ վարչական դատարան:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.04.2014 թվականի ՍԴՈ-1143 որոշմամբ նշել է. «(...) Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրոեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»:

Իր մեկ այլ՝ 05.02.2010 թվականի ՍԴՈ-864 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը փաստել է. «իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և ՀՀ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առկայությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: ՀՀ սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Ջարգացնելով հիշատակված իրավական դիրքորոշումը՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.09.2010 թվականի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է. «օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս ՀՀ սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՛ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը: ... օրենսդրական բացը կարող է հանդիսանալ ՀՀ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ ՀՀ սահմանադրական դատարանի քննությանը»:

Տվյալ պարագայում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրության մեջ առկա չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու իրավունքի իրացման ժամկետային սահմանափակում, ուստի, որպես այդ բացը լրացնելու իրավական երաշխիք կարող է հանդիսանալ գործող իրավակարգավորումների կիրառման

առանձնահատկությունների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը:

Այսպես.

ՀՀ Սահմանդրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: Սույն դրույթով ամրագրված սեփականության տարբեր ձևերի հավասարաչափ ճանաչման և պաշտպանության սահմանադրական սկզբունքին համապատասխան, պետությունը պարտավոր է ապահովել հավասար պաշտպանության հնարավորություն բոլոր սեփականատերերի համար, հետևաբար պետական սեփականությունը սեփականության այլ ձևերի համեմատությամբ չի կարող ունենալ իրավական պաշտպանության ոչ մի առավելություն: Սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանության սահմանադրական սկզբունքը տարածվում է ոչ միայն սեփականության պաշտպանության ձևերի և եղանակների սահմանման, այլ նաև շահագրգիռ անձանց կողմից համապատասխան իրավունքների պաշտպանության պայմանների օրենսդրական ամրագրման վրա:

Սեփականատիրոջը տրամադրվող իրավական պաշտպանության պայմաններից մեկը նրա կողմից իրավունքի պաշտպանության պահանջ ներկայացնելն է՝ օրենքով սահմանված նյութական և դատավարական ժամկետի սահմաններում: Հետևաբար, իրավունքների պաշտպանության ժամկետներ սահմանելիս օրենսդիրը նույնպես պետք է ելնի սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանության սահմանադրական սկզբունքից:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նյութական և դատավարական ժամկետների նախատեսման նպատակն է ինչպես հանրային գործառույթների իրականացման արդյունավետության ապահովումը, այնպես էլ համապատասխան իրավական հարաբերությունների անհրաժեշտ կանխատեսելիության հուսալիության ու կայունության պահպանումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նշել է, որ պետությունը կարող է իրականացնել հանրային գործառույթներ մասնավոր իրավական ոլորտում, սակայն պետական կառույցին պատկանելու փաստն ինքնին չի արդարացնում պետությանն արտոնությունների տրամադրումը հայցային վաղեմության ժամկետների կապակցությամբ: Ընդ որում, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ պետության շահագրգռվածությունն իր հանդեպ ունեցած պարտքի բռնագանձման հարցում կամ բյուջեի վրա չնախատեսված ծանրաբեռնվածությունը բացառելու անհրաժեշտությունն ինքնին չեն կարող դիտարկվել որպես հանրային կամ ընդհանուր շահ, որն արդարացնում է անհատական իրավունքներին միջամտությունը՝ պետության պահանջների նկատմամբ հայցային վաղեմության չափազանց երկար ժամկետ սահմանելու միջոցով:

Արդյունքում Եվրոպական դատարանը հանգել է այն եզրակացության, որ պետության կողմից արտոնությունների տրամադրումը մասնավոր անձանց պահանջների համեմատ՝ օրենսդրությամբ հայցային վաղեմության ավելի երկար ժամկետներ ամրագրելու տեսքով, խախտում է վերջիններիս գույքային իրավունքները, ինչպես նաև արդար հավասարակշռությունը, որը պետք է սահմանվի գույքային իրավունքների պաշտպանության և հանրային շահի պահանջների միջև:

Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ հայցային վաղեմության ժամկետի նման ամրագրումը օրենսդրության մեջ ոչ միայն նյութաիրավական, այլև դատավարական ասպեկտ ունի, քանի որ պետությանը տրվում է արտոնություն դատական քննության ժամանակ, որը մասնավոր անձանց համեմատ դնում է ավելի բարենպաստ դրության մեջ: Արդյունքում խախտվում է կողմերի դատավարական հնարավորությունների հավասարության սկզբունքը, ինչպես նաև դատարանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված իրենց իրավունքների դատական պաշտպանության մասնավոր անձանց երաշխիքները (*սինս Zouboulidis v. Greece (N 36963/06) գործով Եվրոպական դատարանի 25.06.2009 թվականի վճիռը, Varnima Corporation International S.A. v. Greece (№ 48906/06) գործով Եվրոպական դատարանի 28.05.2009 թվականի վճիռը*):

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում արձանագրում է, որ Եվրոպական դատարանը հայցային վաղեմության ժամկետները դիտարկում է ոչ միայն նյութաիրավական, այլև դատավարական առումներով: Մասնավորապես, դատավարական առումով հայցային վաղեմության ժամկետը համարժեք է դատարան դիմելու համար նախատեսված ժամկետային սահմանափակումներին, հետևաբար Եվրոպական դատարանի՝ վկայակոչված դիրքորոշումը հավասարապես կիրառելի է ինչպես նյութական օրենսդրությամբ սահմանված՝ հայցային վաղեմության ժամկետների կապակցությամբ, այնպես էլ՝ դատավարական օրենսդրությամբ նախատեսված՝ դատարան դիմելու ժամկետային սահմանափակումների նկատմամբ: Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անգամ հանրային շահի պաշտպանության պարագայում նման ժամկետների սահմանումն իրավական պետության կարևոր նախադրյալ է հանդիսանում, քանի որ ապահովում է հանրային և մասնավոր շահերի հավասակշռումը:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն (...) իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրանք որևէ համապատասխան վարքագիծ:

Իր բազմաթիվ որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-731, ՄԴՈ-753, ՄԴՈ-984, ՄԴՈ-1142, ՄԴՈ-1176, ՄԴՈ-1213, ՄԴՈ-1270 և այլն) Սահմանադրական դատարանն անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ նշելով, մասնավորապես.

- «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՄԴՈ-630),

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (ՄԴՈ-753),

- «(...) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (ՄԴՈ-1176),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (ՄԴՈ-1213):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սահմանադրական վերոգրյալ սկզբունքները համընդհանուր և հիմնարար սկզբունքներ են, որոնց ուժով, ի թիվս այլնի, պետք է ապահովվեն նաև հավասար պայմաններ դատարան դիմող յուրաքանչյուր սուբյեկտի համար: Մասնավորապես, դատարան դիմելու համար օրենսդրական կարգավորումները, այդ թվում՝ նաև ժամկետային սահմանափակումները, պետք է հավասարապես կիրառելի լինեն յուրաքանչյուրի նկատմամբ՝ անկախ նրանց

կարգավիճակից: Այլ կերպ ասած՝ անկախ հայցվորի ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ վարչական մարմին լինելու հանգամանքից, վերջիններիս համար պետք է ապահովվի միևնույն պայմանները և որևէ սուբյեկտ չի կարող ունենալ դատարան դիմելու առավել բարենպաստ պայմաններ, քան մյուսները: Միևնույն ժամանակ դատարան դիմելու համար օրենսդրական կարգավորումները պետք է բավարար չափով որոշակի լինեն, որպեսզի հիմնական իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված չլինելու հետևանքով վերջիններս ձեռք են բերում դատարան դիմելու առավել բարենպաստ պայմաններ, քան ֆիզիկական կամ իրավաբանական անձինք և հնարավորություն են ստանում վիճարկման հայցը դատարան ներկայացնել առանց ժամկետային սահմանափակման: Հետևաբար անձանց գույքային շահերին առնչվող վարչական ակտերը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա բողոքարկելու հնարավորությունը ժամկետային սահմանափակման չենթարկելու պարագայում նրանց համար ստեղծվում է իրավական անորոշություն: Որպես հետևանք խախտվում են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության բոլոր ձևերի ճանաչման և հավասարապես պաշտպանության, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքները: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված կարգավորման մեջ անհրաժեշտ է հանրային և մասնավոր շահերի՝ որպես սահմանադրորեն պաշտպանվող արժեքների արդարացի հավասարակշռության հաստատում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ 01.01.2008 թվականին Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատություն ներդնելու նպատակը եղել է մի կողմից պետական (վարչական մարմինների), մյուս կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև գոյություն ունեցող իրական անհավասարությունը վերացնելը, վերջիններիս դիրքը պետության (վարչական մարմինների) համեմատ ուժեղացնելը և դրանով իսկ առկա ուժային տարբերությունը նվազեցնելը հոգուտ քաղաքացու: Այլ կերպ ասած՝ վարչական արդարադատությունը միտված է վարչաիրավական հարաբերությունն իրավական պետության պետության ոգով ձևավորելուն, այդ թվում՝ վարչական մարմնի և քաղաքացու միջև հավասարակշռություն ապահովելուն:

Վարչական վարույթը կարգավորող իրավունքը՝ ՏՎարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը և վարչական դատավարական իրավունքը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը իրավական պետության այնպիսի նվաճումներ են, որոնք երաշխավորում են ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը վարչական մարմինների վարչական ակտերից, գործողություններից և անգործությունից: Այդ երկու օրենքները պետք է թույլ չտան, որ վարչական մարմինը հիշատակված ուժային տարբերության պատճառով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերվի որպես լոկ օբյեկտի և հաշվի չառնի նրանց օրինական շահերը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական վարույթը, վարչական դատարանը և վարչական դատավարական իրավունքը իրավական ինստիտուտներ են, որոնք հատկապես սերտորեն են կապված իրավական պետության սկզբունքի հետ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի իմաստով: Նրանք հարաբերական են դարձնում կառավարության (գործադիր իշխանության) և քաղաքացու միջև անխուսափելի կառուցվածքային ուժային տարբերությունը՝ ընթացակարգային իրավունքներով տևականորեն ուժեղացնելով քաղաքացու իրավական կարգավիճակը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտները չեն կարող ունենալ դատարան դիմելու առավել բարենպաստ պայմաններ, քան մյուսները, հետևաբար նրանց համար ևս պետք է ապահովվեն միևնույն պայմանները, ինչը նախատեսված

Է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի այլ մասերում նշված սուբյեկտների համար:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սուբյեկտներին վերապահելով պետության իրավունքները խախտող վարչական ակտը վիճարկելու իրավունք, մինևույն ժամանակ, սակայն, նույն օրենսգրքի 72-րդ հոդվածով չի սահմանել նշված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական դատավարությունում վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև հավասարակշռությունն ապահովելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետի հաշվարկման համար պետք է հիմք ընդունվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորումն այն մեկնաբանմամբ, որ նշված իրավանքում օգտագործված «վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից» եզրույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների համար պետք է դիտարկվի որպես վիճարկվող վարչական ակտի մասին վերջիններիս կողմից իրենց լիազորությունների իրականացման ընթացքում իրազեկվելու պահ: Այսինքն՝ **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից ընդդեմ վարչական մարմինների վիճարկման հայցը կարող է ներկայացվել երկամսյա ժամկետում՝ այն պահից սկսած, երբ հայցվոր վարչական մարմինն իր լիազորությունների իրականացման ընթացքում իրազեկվել է վարչական ակտի գոյության մասին:**

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը վերոգրյալ մեկնաբանմամբ կիրառելը ոչ միայն բխում է իրավական պետության, իրավական որոշակիության, սեփականության բոլոր ձևերի ճանաչման և հավասարապես պաշտպանության սահմանադրական հիմնարար սկզբունքներից՝ երաշխավորելով իրավական անվտանգությունը, այլ նաև ապահովում է հավասար պայմաններ դատարան դիմող յուրաքանչյուր սուբյեկտի համար՝ անկախ նրանց կարգավիճակից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, սահմանելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ հատուկ սահմանել է բաց թողնված ժամկետները վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել է, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ գտել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսամաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից՝ երկարատև հիվանդության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսամաժորային իրավիճակներից, բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները (*յրեն, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Գայանե Մելքոնյանի թիվ ՎԴ/0059/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2014 թվականի որոշումը*):

Այլ որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձինք իրենց դատական պաշտպանության իրավունքից կարող են օգտվել օրենքով սահմանված ժամկետներում, և որպեսզի վարչական դատարանն իրավասու լինի գործադրելու օրենքով սահմանված իր լիազորությունները կոնկրետ իրավական վեճն ըստ էության լուծելու համար, անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայություն, առաջին՝ համապատասխան հայցի առկայություն, երկրորդ՝ հայցի ներկայացում վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Դատավարական ժամկետները բաց թողնելու դեպքում երկրորդ պայմանն ապահովված կարող է համարվել միայն կոնկրետ վարչական գործում բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման բավարարված միջնորդության առկայության դեպքում, իսկ մնացած դեպքերում անձը չի կարող օգտվել դատական պաշտպանության իրավունքից, իսկ ՀՀ վարչական դատարանն իրավասու չէ գործադրելու օրենքով վարչական դատարանի համար նախատեսված լիազորությունները (*յրեն, Աշոտ Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/9439/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2013 թվականի որոշումը, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի Դալիրայանի թիվ ՎԴ/2499/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2014 թվականի որոշումը, Հրաչյա Գրիգորյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և մյուսների թիվ ՎԴ/1963/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.12.2014 թվականի որոշումը, «2ԷԴ» ՓԲԸ-ի տնօրեն Էդգար Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/5086/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.07.2015 թվականի որոշումը, Եղեգնուրի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանման թիվ ՎԴ/0196/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2016 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 25.03.2020 թվականին ՀՀ վարչական դատարան է մուտքագրվել Դատախազության ներկայացրած հայցադիմումը, որով վերջինս պահանջել է վերացնել «Ազատության պողոտայում գտնվող «Հաղթանակ» զբոսայգու զբաղեցրած հողամասի սակերեւը վերաճշտելու և տարածքում առկա ինքնակամ կառուցված շինությունների նկատմամբ Երևանի քաղաքապետարանի սեփականության իրավունքը ձևակերպելու մասին» 2008 թվականի մարտի 12-ի թիվ 1004-Ա որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, ամբողջությամբ վերացնել 08.04.2008 թվականի «Ազատության պողոտայի 2/5

հասցեում կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասն օտարելու մասին» թիվ 1619-Ա որոշումը, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 29.05.2008 թվականին Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի և «Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ-ի միջև կնքված հողամասի ուղղակի վաճառքի մասին թիվ 4204 պայմանագիրը, ամբողջությամբ վերացնել 21.08.2008 թվականին Երևանի քաղաքապետի կողմից կայացված Երևանի քաղաքապետի 07.04.2008 թվականի թիվ 1619-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին թիվ 3759-Ա, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 19.09.2008 թվականի թիվ 4199-Ա որոշումները, Երևան քաղաքի Ազատության պողոտայի թիվ 2/5 հասցեում «Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ-ի սեփականության իրավունքի պետական գրանցումը, 29.05.2005 թվականին «Արդշինբանկ» ՓԲԸ-ի և «Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ-ի միջև կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ ԲԳՊ15/172-01 պայմանագիրը, դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը, ինչպես նաև թիվ ԲԳՊ15/172-01 պայմանագրի հիման վրա 08.06.2015 թվականին կնքված ԲԳՊՀ715/103-01, 11.12.2015 թվականին կնքված ԲԳՊՀ15/219-01 և 23.03.2017 թվականին կնքված ԲԳՊՀ17/31-01 համաձայնագրերը:

Միաժամանակ Դատախազության ներկայացուցիչը Դատարանին է ներկայացրել միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին, որով հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «վարչական ակտի գոյության, ինչպես նաև դրա ոչ իրավաչափ լինելու հանգամանքը հայտնի է դարձել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից 23.02.2020 թվականին կայացրած «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ», միջնորդել է վերականգնել վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետը:

Դատարանը 01.04.2020 թվականին կայացրել է «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու, հայցադիմումը վարույթ ընդունելու, նախնական նիստ հրավիրելու և ապացույց պահանջելու մասին» որոշում՝ արձանագրելով հետևյալը. «Հայցադիմումին կից ներկայացվել է 23.09.2020թ. «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշումը, որի համաձայն թիվ 62232418 քրեական գործով մեղադրյալ Երվանդ Վազգենի Զախարյանի, Արսեն Նիկոլայի Լալայանցի նկարումսը ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետին անցած լինելու հիմքով: Նշված որոշումից հետևում է, որ թիվ 62232418 քրեական գործն հարուցվել է այն դեպքի առթիվ, որ Երևան քաղաքի՝ 2005թ. հաստատված գլխավոր հարակազմով հասարակական նշանակության կանաչ տարածքների գոյում ներառված, Երևան քաղաքի Ազատության պողոտա 2/5 հասցեում գրնվող 10000 քմ հողատարածքը, որը Երևանի քաղաքապետի 2007թ. դեկտեմբերի 28-ի որոշման հիման վրա կառուցապատման իրավունքով տրամադրվել է «Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ-ին, Երևանի քաղաքապետի 2008թ. մարտի 12-ի որոշման հիման վրա դուրս է թողնվել «Հաղթանակ» զբոսայգու տարածքից, այնուհետև, Երևանի քաղաքապետի 08.04.2008թ. թիվ 1619-Ա որոշմամբ օտարվել է «Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ-ին:

Նման պայմաններում հիմք ընդունելով միջնորդությանը ներկայացված հիմնավորումները, դատարանը գրնում է, որ հայցվորը վիճարկվող ակտերի գոյության մասին տեղեկացել է ՀՀ հարուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի 23.01.2020թ. «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ, ուստի հայցվորի կողմից սույն հայցը ներկայացնելու դատավարական ժամկետի բացթողնման պարզապես հարգելի են և այն ենթակա է վերականգնման: Միաժամանակ, րվյալ դեպքում դատավարական ժամկետը չվերականգնելը կարող է սահմանափակել հայցվորի՝ արդյունավետ միջոցներով իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունն ստանալու սահմանադրական իրավունքը»:

Վերաքննիչ դատարանը 04.06.2020 թվականի որոշմամբ մերժել է գործով երրորդ անձ Բանկի ներկայացրած վերաքննիչ բողոքը և անփոփոխ է թողել Դատարանի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու, հայցադիմումը վարույթ ընդունելու, նախնական նիստ հրավիրելու և ապացույց պահանջելու մասին» որոշումը հետևյալ պատճառաբանությամբ.

« (...) Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, (...) գլխավոր դատախազությունը, «a priori» ապրիորի, չէր կարող տեղեկացված լինել այս կամ այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից կայացված բոլոր վարչական ակտերի գոյության մասին, առավել ևս գնահատել դրանց իրավաչափության հիմնահարցը: Դեռ ավելին, ինչպես հայտնի է, ՀՀ դատախազությունը գործում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով անրագրված լիազորությունների շրջանակում, որտեղ ընդգրկված չէ հանրային մարմինների ընդունած բոլոր որոշումների նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավական հնարավորությունը: ՀՀ դատախազությունն օժտված չէ, այսպես կոչված, ընդհանուր հսկողություն՝ իրականացնելու գործառնությունը և Երևանի քաղաքապետին էլ պարտավոր չէ իր բոլոր վարչական /անհատական իրավական/ ակտերի մասին տեղեկացնել ՀՀ դատախազությանը: Որպիսի պարագայում, տրամաբանական է, որ ՀՀ գլխավոր դատախազությունը կարող էր տեղեկանալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված վարչական ակտերի գոյության մասին բացառապես ի պաշտոնե գործելիս՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների կատարման ընթացքում, ինչպես և տեղի է ունեցել սույն դեպքում: Այսպես, ՀՀ գլխավոր դատախազությունն առնչվել է սույն գործով վիճարկվող որոշումներին թիվ 62232418 քրեական գործով մինչդատարանական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս:

Ավելին, ինդրահարույց որոշումների գոյության մասին իրագեկվելն ինքնին չէր կարող հիմք հանդիսանալ ՀՀ գլխավոր դատախազության կողմից վարչական դատավարության կարգով հայցի հարուցման գործընթացը նստաձեռնելու համար, քանի որ անհրաժեշտ էին համապարասիան իրավական հիմքեր, որոնք ի հայտ են եկել միայն քրեական գործով վերջնական որոշման ՀՀ հայտնի քննչական ծառայության ՀԳԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից 23.01.2020 թվականին կայացված «Քրեական հետապնդումը դատարեցնելու մասին» որոշման ընդունմամբ, որով և հասարակել է սույն գործով էական նշանակություն ունեցող որոշակի փաստերի առկայությունը:

(...) ՀՀ գլխավոր դատախազությունը կարող էր իրագործել իր լիազորություններից բխող իրավական ակնկալիքը հարուցված քրեական գործի շրջանակում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, սակայն թիվ 62232418 քրեական գործով մեղադրյալ Երվանդ Վազգենի Զահարյանի, Արսեն Նիկողոսյի Լալայանցի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը վաղեմության ժամկետին անցած լինելու հիմքով դադարեցվելու հետևանքով անհրաժեշտություն է ծագել օգրագործել այլ իրավական գործիքներ, այն է՝ դիմել ՀՀ վարչական դատարան մարմինը վարչական ակտերն անվավեր ճանաչելու նպատակով, ինչն էլ իրացվել է ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ դատախազությանը վերապահված իրավազորությունների շրջանակում:

(...) գործի նյութերում առկա չէ որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց առ այն, որ հայցվոր կողմը տեղեկացել է նշյալ որոշումների գոյության և դրանց ոչ իրավաչափ լինելու մասին ավելի վաղ մինչև 23.01.2020 թվականի որոշման ընդունումը: Որպիսի պարագայում, հայցվորի մտրեցումը չի կարող հարուցել որևէ կասկած»:

Վերաքննիչ դատարանն անդրադարձել է նաև Բանկի պնդմանն առ այն, որ վիճարկվող որոշումների ընդունման օրվանից անցել է ավելի քան տասը տարի, հետևաբար նշված որոշումներն օրենքի ուժով դարձել են անվիճարկելի և, վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածը, եզրահանգել է, որ իրավասու վարչական մարմինը կարող է վարչական բողոքի բացակայության պայմաններում անվավեր ճանաչել ոչ իրավաչափ վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում, միաժամանակ օրենսդրորեն ամրագրվել է, որ վարչական ակտը դառնում է անվիճարկելի, ինչպես նաև վարչական մարմինը գրկվում է չբողոքարկված ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու իրավունքից այն դեպքում, եթե վարչական ակտի ընդունման օրվանից անցել է տասը տարի:

Վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ անվիճարկելի վարչական ակտն անվավեր ճանաչելու սահմանափակման վերաբերյալ կանոնը գործում է ոչ միայն վարչական ակտն ընդունած վարչական մարմնի, այլ նաև վերադաս վարչական մարմնի նկատմամբ: Վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը գտել է, որ

Դատախազությունը տվյալ դեպքում չի հանդիսանում ո՛չ վարչական ակտն ընդունած վարչական մարմին և ո՛չ էլ վարչական ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս, որն օժտված է Երևանի քաղաքապետի վարչական ակտերն անվավեր ճանաչելու իրավազորությամբ, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածում գետեղված իրավադրույթը չի կարող տարածվել սույն գործով հայցվորի նկատմամբ:

Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ «*ըստ ընդհանուր կանոնի, վիճարկման հայցի դեպքում հայցը Դատարան կարող է ներկայացվել երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից (ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Այսինքն՝ վիճարկման հայցի դեպքում սահմանված է հայցը Դատարան ներկայացնելու համար երկամսյա ժամկետ, որը սկսում է հոսել վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից: (...) Տվյալ դեպքում հիմնական հայցապահանջներով վիճարկվող՝ «Ազատության պողոտայում գրնվող «Հաղթանակ» զբոսայգու զբաղեցրած հողամասի մակերեսը վերաճշտելու և ցարածքում առկա ինքնակառ կառուցված շինությունների նկարագրի Երևանի քաղաքապետարանի սեփականության իրավունքը ձևակերպելու մասին» թիվ 1004-Ա որոշումն ընդունվել է 2008 թվականի մարտի 12-ին, «Ազատության պողոտայի 2/5 հասցեում կառուցապարման իրավունքով տրամադրված հողամասն օտարելու մասին» թիվ 1619-Ա որոշումը՝ 2008 թվականի ապրիլի 08-ին, իսկ հայցադիմումը՝ Դատարան է մուտքագրվել 25.03.2020 թվականին (գ.թ. 4): Որպիսի պարագայում, ակնհայտ է, որ հայցվոր ՀՀ գլխավոր դատախազությունը բաց է թողել վիճարկման հայց ներկայացնելու համար նախատեսված երկամսյա ժամկետը և այն չի կարող հաշվարկվել 23.01.2020 թվականի «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշումը կայացնելուց հետո. տվյալ պարագայում խոսք կարող է գնալ դատարարական իրավունքի իրացման ողջամիտ ժամանակահատվածի մասին: (...) կարելի է փաստել, որ վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը լրացել է մինչև 25.03.2020 թվականը և այն բաց է թողնվել հայցվորի կողմից, ըստ այդմ՝ երկամսյա ժամկետի պահպանումը՝ 23.01.2020 թվականից հետո՝ վիճարկվող որոշումների գոյության ու իրավաստիության մասին իրազեկվելուց հետո, չի բխում գործող իրավակարգավորումներից: Դեռ ավելին, հայցվորը վերաքննիչ բողոքի պատասխանին կից ներկայացրել է ապացույց առ այն, որ հայցադիմումը կից փաստաթղթերով ուղարկել է Դատարան ԱԱԾ ստորախմբային կապի վարչության միջոցով 24.03.2020 թվականին»:*

Մինևս ժամանակ Վերաքննիչ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել վիճարկվող որոշումներից մեկի՝ 08.04.2008 թվականին ընդունված թիվ 1619-Ա որոշման իրեն սպառած լինելու մասին Բանկի ներկայացրած փաստարկի վերաբերյալ, արձանագրելով, որ Դատարանը կարող է կատարել եզրահանգում վիճարկվող որոշումների «սպառված» լինելու կամ չլինելու վերաբերյալ վեճն ըստ էության լուծելիս՝ ձեռք բերված բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների հետազոտման ու գնահատման արդյունքում ներքին համոզմամբ:

Վերոգրյալ վերլուծությունների արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ գործի նյութերով հաստատվում է, որ հայցվոր կողմը տեղեկացել է վարչական ակտերի գոյության և դրանց ոչ իրավաստի լինելու մասին ՀՀ հարուն քննչական ծառայության ՀԿԳ առկա քննիչ Գ. Մարգարյանի 23.01.2020 թվականի «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշումից, ուստի հայցվորի կողմից բերված փաստարկները ՀՀ վարչական դատարարության օրենսգրքով նախատեսված դատարարական ժամկետի բաց թողնելը հարգելի համարելու և վերականգնելու համար բավարար ինքն են հանդիսանում, քանի որ հայցվորի կողմից ներկայացվել են հիմնավոր ապացույցներ, որոնք հանգեցնում են այն համոզման, որ հայցվորը ձեռնարկել է իրենից կախված բոլոր ողջամիտ ու բավարար միջոցներն իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելու ուղղությամբ, սակայն դրան խոչընդոտ են հանդիսացել իր կամքից անկախ հանգամանքներ:

Մինչդեռ վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն վարչական գործի փաստերին և ստորադաս դատարանի պատճառաբանություններին հիմնավորվածությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով 25.03.2020 թվականին դատարան մուտքագրված հայցադիմումով Դատախազությունը հիմնական պահանջով վիճարկել է Երևանի քաղաքապետի կողմից 12.03.2008 թվականին ընդունված թիվ 1004-Ա որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, 08.04.2008 թվականին ընդունված թիվ 1619-Ա որոշումը, միաժամանակ, որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ ներկայացնելով նաև Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի և «Գորդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ-ի միջև 29.05.2008 թվականին կնքված հողամասի ուղղակի վաճառքի մասին թիվ 4204 պայմանագիրն անվավեր ճանաչելու, Երևանի քաղաքապետի կողմից 21.08.2008 թվականին կայացված Երևանի քաղաքապետի 07.04.2008 թվականի թիվ 1619-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին թիվ 3759-Ա, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 19.09.2008 թվականի թիվ 4199-Ա որոշումները, Երևան քաղաքի Ազատության պողոտայի թիվ 2/5 հասցեում «Գորդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ-ի սեփականության իրավունքի պետական գրանցումը, 29.05.2005 թվականին «Արդշինբանկ» ՓԲԸ-ի և «Գորդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ-ի միջև կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ ԲԳՊ15/172-01 պայմանագիրը, դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը, ինչպես նաև թիվ ԲԳՊ15/172-01 պայմանագրի հիման վրա 08.06.2015 թվականին կնքված ԲԳՊՀ715/103-01, 11.12.2015 թվականին կնքված ԱԳՊՀ15/219-01 և 23.03.2017 թվականին կնքված ԱԳՊՀ17/31-01 համաձայնագրերն ամբողջությամբ վերացնելու պահանջներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնական պահանջներով վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը Դատախազությունը հիմնավորել է այն փաստարկով, որ վարչական ակտի գոյության, ինչպես նաև դրա ոչ իրավաչափ լինելու հանգամանքը հայտնի է դարձել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից 23.02.2020 թվականին կայացված «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ (իրականում քննիչի որոշումը կայացվել է 23.01.2020 թվականին, որը կցվել է նաև հայցադիմումին՝ հ.1-ին, գ.թ. 18-28):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Դատախազությունը սույն գործով հայցադիմումը դատարան է ներկայացրել հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումը:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատախազության կողմից պետության իրավունքները խախտող վարչական ակտի վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետ օրենքով նախատեսված չլինելու պարագայում, Դատախազությունը պետք է ղեկավարվեր ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետով՝ այդ ժամկետի հոսքը պայմանավորելով վիճարկվող վարչական ակտի մասին իրազեկվելու պահով: Ընդ որում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Դատախազության կողմից հարուցված հայցով դատավարական ժամկետի հարցի քննարկումը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կարող է կարևորվել միայն այն դեպքում, եթե վիճարկվող վարչական ակտով պետության խախտված իրավունքների պաշտպանության լիազորությունը դրված է Դատախազության վրա և **այդ վեճը ենթակա չէ լուծման վերադատության կարգով:**

Տվյալ դեպքում Երևանի քաղաքապետի 12.03.2008 թվականի թիվ 1004-Ա որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը և 08.04.2008 թվականի թիվ 1619-Ա որոշումը վերացնելու հայցը Դատախազությունը Դատարան է ներկայացրել 25.03.2020 թվականին՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությամբ, պատճառաբանելով, որ այդ որոշումների գոյության, ինչպես նաև դրա ոչ իրավաչափ լինելու հանգամանքը հայտնի է դարձել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից 23.01.2020 թվականին կայացրած «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու հանգամանքի հայտնի դառնալու մասին Դատախազության փաստարկը որևէ

նշանակություն չունի հայց հարուցելու դատավարական ժամկետը հարգելի համարելու հարցի քննարկման համար, քանի որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու լիազորությունը վերապահված է դատարանին, որպիսի լիազորությունը դատարանը կարող է իրացնել միայն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված հայցի հիման վրա հարուցված գործի քննության արդյունքում դատական ակտ կայացնելով, հետևաբար անկախ նրանից, թե Դատախազությունը որ պահին է վարչական ակտը որակում ոչ իրավաչափ, այդ ակտի վիճարկման պահանջը պետք է դատարան ներկայացվի դրա մասին իրազեկվելու պահից սկսած երկամսյա ժամկետում:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին Դատախազության մյուս սույն գործով վիճարկվող որոշումների գոյության մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից 23.01.2020 թվականին կայացրած «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ հայտնի դառնալու փաստարկին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) Քննիչը քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկում է դատախազին՝ որոշման օրինականությունը ստուգելու նպատակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) Դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում (...) հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված են նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելու ընթացքում դատախազի բացառիկ լիազորությունները: Ըստ նշված իրավա-նորմի՝ ի թիվս այլնի, դրանք են ստուգման համար հետաքննության մարմնից, քննիչից պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում, հետաքննության մարմնին, քննիչին գրավոր ցուցումներ տալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ, գործի քննության օրինականությունն ապահովելու նպատակով հսկողություն իրականացնող դատախազին տալ գրավոր ցուցումներ, հաստատել մեղադրական եզրակացությունը, իսկ այն անձանց նկատմամբ քրեական գործերով, որոնք քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում կամ անմեղսունակ են դարձել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց հետո՝ եզրափակիչ որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 6-րդ կետերի համաձայն՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազն իրավասու է նաև իր իրավասության շրջանակներում հետաքննության մարմնից տեղեկություններ ստանալ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման և հանցագործությունների բացահայտման, անհայտ կորած անձանց և կորած գույքի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին, պահանջել փաստաթղթեր, նյութեր և գործեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքերի և դրանց առնչվող անձանց մասին, հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց, կարճել քրեական գործով վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում դատախազն իրականացնում է նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նախատեսված հիմքերի առկայության դեպքում քննիչը, դատախազը պատճառաբանված որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշվում են մեղադրյալի անունը, ազգանունը և նրա անձի մասին այլ տվյալներ, մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են գործի նյութերով: Եզրափակիչ մասում շարադրվում է անձին գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և քրեական օրենսգրքի հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված է կատարված հանցանքի համար պատասխանատվությունը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկվում է դատախազին:

Վերոգրյալ իրավանքների վերլուծությունից հետևում է, որ քննիչը հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում քրեական գործ հարուցելու մասին այդ որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկում է դատախազին՝ որոշման օրինականությունը ստուգելու նպատակով, իսկ Դատախազն իր իրավասության սահմաններում հսկողություն է իրականացնում նախաքննության օրինականության նկատմամբ, որի ընթացքում իրավունք ունի ստուգման համար քննիչից պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում, քննիչին գրավոր ցուցումներ տալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ, գործի քննության օրինականությունն ապահովելու նպատակով հսկողություն իրականացնող դատախազին տալ գրավոր ցուցումներ, հաստատել մեղադրական եզրակացությունը, ինչպես նաև իրականացնել օրենսով նախատեսված այլ լիազորություններ: Դա նշանակում է, որ քրեական գործ հարուցելու կամ առնվազն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը ստանալու պահից Դատախազությունը տիրապետում է բավարար տեղեկությունների՝ ՀՀ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի հետևանքով պետության շահերին առնչվող վարչական ակտերի գոյության վերաբերյալ, ուստի այդ պահից էլ Դատախազությունը հնարավորություն է ստանում իրացնել այդ վարչական ակտերը վարչադատավարական կարգով վիճարկելու իր իրավունքը, այն էլ այն պարագայում, եթե նշված վարչական ակտերով վեճը ենթակա չէ լուծման վերադատության կարգով:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործ հարուցելու կամ առնվազն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը ստանալու պահից էլ Դատախազության համար սկսվում է վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետի ընթացքը: Ըստ այդմ՝ սույն գործով հայցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետում դատարան ներկայացված լինելու հարցի պարզումն ուղղակիորեն պայմանավորված է այն հանգամանքով, թե երբ է Դատախազությունն իրազեկվել վարչական ակտի գոյության մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի 23.01.2020 թվականի «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշման համաձայն՝ 24.09.2018 թվականին «www.hetq.am» լրատվական կայքում հրատարակված «Ընտրյալների թաղանասը» վերադատությանը հոդվածի հիման վրա ՀՀ հայրուկ քննչական ծառայությունում 08.10.2018 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 62232418 քրեական գործը՝ Երևանի քաղաքապետարանի բարձրաստիճանի պաշտոնատար անձանց կողմից անձնական

այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով իրենց պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգրագործելու դեպքի առթիվ:

Նախաքննության ընթացքում րվյալներ են ձեռք բերվել գործադիր իշխանության մարմնի ղեկավար աշխատողի՝ Երևանի նախկին քաղաքապետ Երվանդ Զախարյանի կողմից անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգրագործելու վերաբերյալ, որի հիման վրա 30.08.2019 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 62223519 քրեական գործն այն դեպքի առթիվ, որ Երևան քաղաքի 2005 թվականին հաստատված գլխավոր հասրակագծով հասարական նշանակության կանաչ տարածքների գոյում ներառված, Երևան քաղաքի Ագարության պողոտա 2/5 հասցեում գրավող 10.000քմ հողատարածքը, որն ընդգրկված է եղել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և այդ հիմքով Երևանի քաղաքապետի 28.12.2007 թվականի որոշման հիման վրա կառուցապարման իրավունքում տրամադրվել է «Գողթեն Փեյիս» Հյուրանոց» ՍՊ ընկերությանը, Երևանի քաղաքապետի 12.03.2008 թվականի որոշման հիման վրա՝ «Հաղթանակ» զբոսայգու զբաղեցրած տարածքի վերաճշմանն արդյունքում թողարկված նոր գլխավոր հատակագծով անհիմն կերպով դուրս է թողնվել հիշյալ զբոսայգու տարածքից, սակա Երևանի քաղաքապետի 08.04.2008 թվականի որոշմամբ, առանց հողատարածքի գործառնական նշանակությունը փոփոխելու, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարվել է «Գողթեն Փեյիս» Հյուրանոց» ՍՊ ընկերությանը: Հերազայում, երբ հողատարածքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժվել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային արտաբաժնանն կողմից, «Գողթեն Փեյիս» Հյուրանոց» ՍՊ ընկերության տնօրենի դիմումի հիման վրա Երևանի քաղաքապետը, առանց բավարար հիմքերի 21.08.2008 թվականին որոշում է կայացրել Ագարության պողոտա 2/5 հասցեում գրավող հիշյալ հողատարածքի գործառնական նշանակությունը որպես հասարակական կառուցապարման սահմանելու մասին, այնուհետև ընկերության զբաղեցրած հողատարածքները մյուս հողօգրագործողների տարածքներից առանձնացնելու դիմումի հիման վրա 19.09.2008 թվականի որոշմամբ փոփոխություն է կատարվել Երևանի քաղաքապետի 08.04.2008 թվականի որոշման մեջ: Նշված որոշումները հիմք են հանդիսացել րվյալ հողատարածքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնելու համար և 02.10.2008 թվականի ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային արտաբաժնանն կողմից Ագարության պողոտա 2/5 հասցեում գրավող 10.000քմ հողատարածքի նկատմամբ գրանցվել է «Գողթեն Փեյիս» Հյուրանոց» ՍՊ ընկերության սեփականության իրավունքը:

Նույն օրը թիվ 62223519 քրեական գործը միացվել է թիվ 62232418 քրեական գործին: (...)

27.09.2019 թվականին Երևանի նախկին քաղաքապետ Երվանդ Զախարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հանրորեն վրանգավոր այն արարքի կատարման համար, որը դրսևորվել է նրանում, որ նա 01.07.2003 թվականից մինչև 04.03.2009 թվականը զբաղեցնելով գործադիր իշխանության մարմնի ղեկավար աշխատողի՝ Երևանի քաղաքապետի պաշտոնը, և որպես այդպիսին ՀՀ հողային օրենսգրքով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով, «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրով, ՀՀ կառավարության 03.10.2002 թվականի թիվ 1788-Ն որոշմամբ հաստատված՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությանը սահմանված դրոյթների ուժով հանդիսանալով տեղական ինքնակառավարման մարմնում մշտապես կազմակերպական-տնօրինչական գործառնություններ իրականացնող պաշտոնատար անձ, ի պաշտոնե պարտավոր լինելով պետական սեփականության հողերը տնօրինել և օգրագործել օրենսդրությանը սահմանված կարգով, Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում ընդգրկված և պետական սեփականություն հանդիսացող «Հաղթանակ» զբոսայգու զբաղեցրած հողամասի մակերեսի վերաճշման գործընթացում չարաշահել է իր պաշտոնական լիազորությունները, ինչով ծանր հետևանք է առաջացրել հասարակության և պետության օրինական շահերի համար (...)**(հատոր 1-ին. գ.թ. 18-28):**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող՝ Երևանի քաղաքապետի 12.03.2008 թվականի թիվ 1004-Ա և 08.04.2008 թվականի թիվ 1619-Ա որոշումների գոյության մասին Դատախազությունը իմացել է ոչ ուշ, քան թիվ 62232418 քրեական գործը հարուցելու մասին 08.10.2018 թվականի որոշման պատճենը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն 24 ժամվա ընթացքում ստանալու պահից, քանի որ նշված որոշումը տեղեկություններ է պարունակել Երևանի քաղաքապետի կողմից 12.03.2008 թվականին և 08.04.2008 թվականին ընդունված համապատասխանաբար թիվ 1004-Ա և թիվ 1619-Ա որոշումների մասին, հետևաբար անհիմն է Դատախազության պնդումն այն մասին, որ վերոգրյալ որոշումների գոյության մասին վերջինս իրազեկվել է միայն ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Մարգարյանի կողմից 23.01.2020 թվականին կայացրած «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ:

Այսպիսով, սույն գործով հիմնական պահանջով մասնակի և ամբողջությամբ վիճարկվող վարչական ակտերի՝ Երևանի քաղաքապետի 12.03.2008 թվականի թիվ 1004-Ա և 08.04.2008 թվականի թիվ 1619-Ա որոշումների գոյության մասին Դատախազությունն իրազեկվել է ոչ ուշ, քան 31.08.2019 թվականին, այսինքն՝ թիվ 62223519 քրեական գործը հարուցելու մասին 30.08.2019 թվականի որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ստանալու պահից, հետևաբար վիճարկման հայցը դատարան կարող էր ներկայացվել այդ պահից սկսած երկամսյա ժամկետում, այն է՝ 01.11.2019 թվականը ներառյալ, մինչդեռ հայցը դատարան է ներկայացվել միայն 25.03.2020 թվականին, իսկ այդ ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու որևէ հիմնավոր փաստարկ Դատախազության միջնորդությունը չի պարունակում: Ընդ որում, հայցը ԱԱԾ սուրհանդակային կապի վարչության միջոցով 24.03.2020 թվականին Դատարան ներկայացված լինելու պարագայում նույնիսկ վերոգրյալ հիմնավորումներով Դատախազությունը բաց է թողել վիճարկվող վարչական ակտերի գոյության մասին իրազեկվելու պահից սկսած երկամսյա ժամկետը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններում առկա չի եղել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու որևէ հիմք, ուստի հիմնավորվում է բողոք բերող անձի պնդումն այն մասին, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ և 72-րդ հոդվածների խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ Վերաքննիչ դատարանը, մերժելով Բանկի վերաքննիչ բողոքը, օրինական ուժի մեջ է թողել Դատարանի որոշումը, որով առանց բավարար հիմքերի բավարարվել է բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ Դատախազության միջնորդությունը և վերջինիս տրամադրվել է դատական պաշտպանություն, ըստ էության, թույլատրելի համարելով ժամկետի խախտմամբ ներկայացված վիճարկման հայցի քննությունը:

Վճռաբեկ բողոքի դեմ Դատախազության, Երևան համայնքի և ՀՀ կառավարության կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի պատրաստմանն անհղի վիճակում փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի վերոգրյալ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար, հետևաբար Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի մյուս՝ վիճարկվող որոշումներից՝ 08.04.2008 թվականին ընդունված թիվ 1619-Ա որոշումն իրեն սպառած լինելու, վիճարկվող որոշումների ընդունման օրվանից ավելի քան տասը տարի անցած լինելու և օրենքի ուժով անվիճարկելի դարձած լինելու հիմքերին:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.06.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու մասով վերացնել ՀՀ վարչական դատարանի 01.04.2020 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու, հայցադիմումը վարույթը ընդունելու, նախնական նիստ հրավիրելու և ապացույց պահանջելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՐ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/11139/05/18**
2021թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/11139/05/18**
Նախագահող դատավոր՝ **Կ. Ավետիսյան**

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2021 թվականի սեպտեմբերի 10-ին
գրավոր ընթացակարգով քննելով Լաուրա Սահակյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերա-
քննիչ վարչական դատարանի 11.01.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու
մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Նարինե Չարչյանի, Վահե և Աննա Տեր-Եսայաննե-
րի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 22.04.2005 թվականի
թիվ 854-Ա որոշումը և Լաուրա Սահակյանի անվամբ 24.07.2009 թվականին կատարված
սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու
պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարամոթյունը

Դիմելով դատարան՝ Վահե Տեր-Եսայանը, Աննա Տեր-Եսայանը և Նարինե Չարչյա-
նը պահանջել են մասնակիորեն անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 22.04.2005
թվականի թիվ 854-Ա որոշումը և Լաուրա Սահակյանի անվամբ 24.07.2009 թվականին
կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան)
16.11.2018 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու
վերաբերյալ միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժվել են:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.01.2019 թվականի որոշմամբ Նարինե Չարչյանի, Վահե և Աննա Տեր-Եսայանների բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 16.11.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լաուրա Սահակյանը (ներկայացուցիչ՝ Կ. Բաղայան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասը, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 144-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, հաշվի չի առել, որ հայցվորները փորձում են վիճարկել Երևանի Մաշտոցի պողոտայի 20 շենք 60 բնակարան հասցեին վերաբերող 22.04.2005 թվականի վարչական ակտը, այն դեպքում, երբ Երևանի Մաշտոցի պողոտայի 20/1 հասցեի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել 02.03.2012 թվականի թիվ 790 բռնագանձման ծանուցագրի, 25.10.2011 թվականին նոտարի կողմից վավերացված հայտարարության, թիվ 4822 ժառանգության իրավունքի վկայագրի և ըստ կտակի 08.02.2017 թվականի վկայագրի հիման վրա: Մինչդեռ հայցվորների կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որ Երևանի Մաշտոցի պողոտայի 20/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նախկին սեփականատերերն անտեղյակ են եղել վիճարկվող վարչական ակտից կամ դրա հիման վրա կադաստրում կատարված պետական գրանցումից:

Հայցվորների փաստարկներն առ այն, որ Երևանի Մաշտոցի պողոտայի 20/1 հասցեի շինությունը բնակելի չէ, այլ հասարակական նշանակության է, իսկ հայցվորները միայն բնակվելու դեպքում կարող էին տեղեկանալ իրենց իրավունքների խախտման մասին, հերքվում է իրենց իսկ բերած փաստերով այն մասին, որ ի սկզբանե իմացել են Երևանի Մաշտոցի պողոտայի 20 շենք 60 բնակարան հասցեի ինքնակամ շինությունների գոյության մասին, որպիսի հանգամանքը ևս անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «վերացնել Վերաքննիչ դատարանի 11.01.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ օրինական ուժ տալ նույն գործով ՀՀ վարչական դատարանի 16.11.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշմանը»:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անորոշառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված դատավարական ժամկետը կարող է վերականգնվել այն

պարագայում, երբ հայցադիմումը ներկայացվել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է ընդհանուր կանոն, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ (*րե'ս, Կարինե Ջյալյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով, որի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, ներառյալ՝ գուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

Անդրադառնալով դատական կարգով վարչական ակտի իրավաչափության վիճարկման հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ոստի դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են (*տե՛ս, Սվեդլյանսա Օհանյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Ջարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներից մեկում արտահայտել է այն տեսակետը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները: Այսինքն՝ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և գործը քննող դատարանն իրավասու է գնահատելու այս հասկացությունը յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և պարզելով, թե արդյոք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե ոչ (*տե՛ս, Տիգրան Սանասարյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը, «Լուսի» ՄՊԸ-ի փնտրեն Հասմիկ Հովհաննիսյանի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/4009/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.03.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանը պարտավոր է հայցադիմումն ստանալու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, վարույթ ընդունել նույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն նույն օրենսգրքի 79-81-րդ հոդվածներով սահմանված՝ հայցադիմումը վերադարձնելու, դրա ընդունումը մերժելու կամ այն վերահասցեագրելու հիմքերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջ է հանդիսանում նաև հայցադիմումը դատավարական ժամկետներում ներկայացնելը:

Այսպես. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու

իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը՝ ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջնորդող դրույթները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, սահմանելով վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցը, միաժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածում սահմանել է այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Մինևնույն ժամանակ օրենսդիրը հատուկ սահմանել է բաց թողնված ժամկետները վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետ է սահմանել նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված սուբյեկտների համար, այդ հարցի լուծումը պայմանավորելով վիճարկվող վարչական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքով, իսկ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-60-րդ հոդվածներում ամրագրված կարգավորումներով օրենսդիրը պայմանավորել է ակտի ընդունման մասին վարույթի մասնակիցներին հանձնման կամ հրապարակման եղանակով իրազեկելու հանգամանքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներն են՝

ա) **վարչական ակտի հասցեատերը՝** այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.

բ) **երրորդ անձինք՝** այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի «բ» կետում նշված վարույթի մասնակիցները վարչական վարույթում ներգրավվում են իրենց դիմումի համաձայն կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն է, որը **եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի իմաստով.

ա) բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման.

բ) միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որն է պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Վերոգրյալ իրավունքների վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտը բնորոշող հատկանիշներով ցարտաքին ներգործությունը կարող է վերաբերել լինել միայն այն անձանց, ովքեր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հանդիսանում են կամ կարող են հանդիսանալ վարչական վարույթի մասնակիցներ: Մասնավորապես, վարչական ակտը կարող է առնչվել միայն վարչական ակտի հասցեատիրոջը և/կամ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող այն անձանց, ովքեր վարչական ակտի ընդունման պահին ունեն որոշակի իրավունքներ կամ օրինական շահեր, որոնք կարող են շոշափվել այդ վարչական ակտով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչարարությունն իրականացնելիս վարչական մարմինները պարտավոր են գործել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները ոչ իրավաչափ վարչական ակտով չխախտելու, այդ իրավունքների ու ազատությունների իրականացման համար խոչընդոտներ չհարուցելու, դրանց իրականացման համար Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով անհրաժեշտ պայմաններ ապահովելու և նրանց վրա ոչ իրավաչափորեն որևէ պարտականություն չդնելու հաշվառմամբ: Ընդ որում, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները պետք է առկա լինեն վարչական ակտն ընդունելու պահի դրությամբ, քանի որ օբյեկտիվորեն հնարավոր չէ կանխատեսել ապագայում ձեռք բերվող իրավունքների ու օրինական շահերի վրա այդ ակտի արտաքին ներգործություն ունենալու հանգամանքը: Նշվածը հիմնավորվում է նաև նրանով, որ վարչական մարմինը ոչ միայն պարտավորություն ունի վարչական վարույթում ներգրավել այն անձանց, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական

ակտով, այլ նաև՝ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում վարչական մարմինը պարտավոր է հանձնել վարույթի մասնակիցներին, հետևաբար այդ ակտը չի կարող հանձնվել այնպիսի անձի, ով վարչական ակտն ընդունելու պահին չունի վարչական ակտով շոշափվող իրավունքներ կամ օրինական շահեր:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական ակտը որևէ ձևով չի կարող առնչվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով վարչական վարույթի մասնակիցներ չհանդիսացող անձանց, ուստի և վարչական ակտի ուժի մեջ մտնելու կանոնը վերաբերելի չի կարող լինել վարչական ակտի հասցեատեր կամ վարչական ակտի ընդունման պահին որոշակի իրավունքներ կամ օրինական շահեր չունեցող անձանց:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով վարչական վարույթի մասնակիցներ չհանդիսացող անձանց կողմից վիճարկման հայց ներկայացնելու պարագայում դատավարական ժամկետների հաշվարկման, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու իրավական հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումից հետևում է, որ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը: Այսինքն՝ դատավարական գործողությունները պետք է կատարվեն դատավարական ժամկետների ընթացքում, իսկ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով ենթակա է մերժման, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետի հարցին հնարավոր է անդրադառնալ միայն այն պարագայում, եթե անվիճելի է, որ հայցադիմումը ներկայացվել է «իրական (ռեալ)» իրավունքներ ունեցող սուբյեկտի կողմից:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ հարկ է համարում ընդգծել, որ վարչական ակտի արտաքին ներգործությունը կարող է տարածվել միայն վարչական ակտի հասցեատիրոջ և/կամ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող այն անձանց վրա, ովքեր **վարչական ակտի ընդունման պահին** ունեն Հայաստանի Հանրապետության Մասնաճյուղային, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներ և ազատություններ, որոնք խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել այդ վարչական ակտով: Ըստ այդմ, վերջիններս էլ հանդիսանում են վիճարկման հայց հարուցելու «իրական (ռեալ)» իրավունքներ ունեցող սուբյեկտներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

Անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցադիմումի ընդունումը մերժելու այն հիմքին, որ հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ ընդգծել է, որ հայցադիմում ներկայացնելու իրավունքի ակնհայտ բացակայության պարագայում դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է մերժել դրա ընդունումը: Օրենսդիրը նման իրավակարգավորմամբ իրավացիորեն խուսափել է ոչ տեղին ու քննության ոչ ենթակա գործերի հետազոտությունից, ինչը հանգեցնում է դատարանի ավելորդ և անհիմն ծանրաբեռնվածության և դատարանի վարույթում գտնվող մյուս գործերի քննության ձգձգումների: ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսված «ակնհայտություն» եզրույթն իրենից ներկայացնում է անմիջապես աչքի զարնող, առաջին իսկ դիտարկման

պահին երևացող, աչքի ընկնող և ոչ մի կերպ չվրիպող ու կասկած չհարուցող ակնբերություն: Այսինքն՝ սույն իրավական կարգավորումը կարող է վերաբերել միայն հայցադիմում ներկայացնելու՝ չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ իրավունք չունենալուն, երբ դատարանն աներկբայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ակնհայտորեն սնան իրավունք չունեցող անձի կողմից հայցադիմում ներկայացվելու պարագայում հայցադիմումը վարույթ չի ընդունվում, քանի որ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության փուլում ինչպես բուն հայցադիմումի, այնպես էլ դրան կից փաստաթղթերի ընդհանրական ուսումնասիրությունն ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայցվորն այդ գործով շահագրգիռ անձ չի հանդիսանում (*տե՛ս, Տիգրան Սանասարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎՊ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը, «Լույի» ՄՊԸ-ի փնտրեն Հասմիկ Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎՊ/4009/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.03.2015 թվականի որոշումը*):

Անփոփոխելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկման հայց հարուցելու «իրական (ռեալ)» իրավունքներ ունեցող սուբյեկտներ են վարչական ակտի հասցեատեր հանդիսացող և/կամ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող, սակայն **վարչական ակտի ընդունման պահին** Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներ և ազատություններ ունեցող անձինք, իսկ նշված պայմաններին չբավարարող սուբյեկտները չեն հանդիսանում իրենց համար ներգործող ազդեցություն չունեցող վարչական ակտը վիճարկելու իրավունք ունեցող «շահագրգիռ անձինք»: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի ընդունումից հետո միայն որոշակի իրավունքներ ձեռք բերած սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու իրավունք չունենալը չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ է, անմիջապես աչքի է զարնում, առաջին իսկ դիտարկման պահին երևում, աչքի է ընկնում և ոչ մի կերպ չի կարող վրիպել ու կասկած հարուցել, քանի որ վիճարկվող վարչական ակտով այն ընդունող վարչական մարմինը որևէ կերպ չէր կարող խախտել **վարչական ակտի ընդունման պահին** Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներ և ազատություններ չունեցող անձի իրավունքները, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով նման անձի կողմից ներկայացված վիճարկման հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման, որպես այն ներկայացնելու իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից ներկայացված, որպիսի պարագայում դատավարական ժամկետների հարցն այլևս ենթակա չէ քննարկման:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետի 22.04.2005 թվականի թիվ 854-Ա որոշմամբ ճանաչվել է հավելված 1-ում ընդգրկված Մելքոնյան Նաիրայի սեփականության իրավունքը Երևանի Մաշտոցի 20-րդ շենքի թիվ 60 բնակարանում գտնվող ինքնակամ շինությունների նկատմամբ (**հատոր 1-ին, գ.թ. 32-33**):

ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 17.02.2017 թվականին տրված թիվ 17022017-01-0075 վկայականով հաստատվել է Երևանի Մաշտոցի պողոտա 20/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Նարինե Չարչյանի, Վահե և Աննա Տեր-Եսայանների սեփականության իրավունքի պետական գրանցումը (**հատոր 1-ին, գ.թ. 21**):

Նարինե Չարչյանը, Վահե և Աննա Տեր-Եսայանները 08.11.2018 թվականին հայցադիմում են ներկայացրել Դատարան՝ պահանջելով մասնակիորեն անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 22.04.2005 թվականի թիվ 854-Ա որոշումը և Լաուրա Սահակյանի անվամբ 24.07.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: Միաժամանակ հայցադիմումին կից ներկայացվել է «Բաց թողնված

դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին» միջնորդություն՝ պատճառաբանելով, որ վիճարկվող վարչական ակտի մասին տեղեկացել են 04.10.2018 թվականին, որի փաստը հաստատվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 04.10.2018 թվականին տրված թիվ ԱՏ-02/10/2018-4-0012 տեղեկանքով (**հատոր 1-ին, գ.թ. 3-11, 22**):

Դատարանի 16.11.2018 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժվել են այն հիմնավորմամբ, որ հայցվորները դեռևս ինքնակամ կառույցների շինարարության ժամանակ ողջամտորեն պետք է իմանային իրենց իրավունքի ենթադրյալ խախտման մասին: Մինչդեռ գործի նյութերում բացակայում է որևէ փաստարկ և (կամ) ապացույց առ այն, որ մինչև 04.10.2018 թվականը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի դիմելը 10 տարուց ավելի հայցվորները որևէ քայլ են ձեռնարկել իրենց իրավունքի ենթադրյալ խախտումը վերացնելու ուղղությամբ (դիմել են իրավասու մարմիններ՝ կառույցների կարգավիճակը ճշտելու նպատակով, դիմել են իրավասու վարչական կամ դատական մարմիններ, որպեսզի վերականգնվի մինչև ինքնակամ շինարարության վիճակը և այլն) (**հատոր 1-ին, գ.թ. 38-40**):

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Նարինե Չարչյանի, Վահե և Աննա Տեր-Եսայանների վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ «բողոքում նշված փաստական հանգամանքները՝ դրանք հերքող ապացույցների բացակայության պայմաններում, դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունք ընձեռելու բավարար հիմք են, քանի որ այդ փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ չբնակվելով այն հասցեում, որտեղ գտնվող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի խախտման մասին էլ մատնանշվել է բողոքում (նաև հայցադիմումում)՝ հայցվորները ողջամտորեն կարող էին տևական ժամանակ իրագել չլինել կատարված կառուցապատումներին, և ըստ այդմ՝ դրանց առնչությամբ ընդունված վիճահարույց վարչական ակտերի մասին» (**հատոր 1-ին, գ.թ. 75-79**):

Մինչդեռ վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն վարչական գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով վիճարկվող՝ Երևանի քաղաքապետի թիվ 854-Ա որոշումն ընդունվել է 22.04.2005 թվականին, այնինչ Երևանի Մաշտոցի պողոտա 20/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հայցվորները ձեռք են բերել միայն 17.02.2017 թվականին: Այսինքն՝ 22.04.2005 թվականին ընդունված թիվ 854-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետը որևէ կերպ չէր կարող խախտել գրեթե 12 տարի անց սեփականության իրավունք ձեռք բերած անձանց իրավունքները: Այլ կերպ ասած, սույն գործով վիճարկվող վարչական ակտը արտաքին ներգործություն չունի դրա **ընդունման պահին** Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներ և ազատություններ չունեցող անձանց վրա, հետևաբար Երևանի քաղաքապետի 22.04.2005 թվականի թիվ 854-Ա որոշումը վիճարկելու իրավունք հայցվորներն ակնհայտորեն չունեն, ինչն ակնհայտ է, ուստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով հայցադիմումի ընդունումը ենթակա է եղել մերժման, որպիսի պարագայում դատավարական ժամկետների հարցն այլևս ենթակա չի եղել քննարկման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածին 2-րդ մասի կիրառմամբ չէր կարող վերականգնվել, քանի որ հայցադիմումը ներկայացրել են դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձինք:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ

հողվածների ուժով Վերաքննիչ դատարանի 11.01.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.01.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. ՀՀ վարչական դատարանի 16.11.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/4608/05/19**
2022թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/4608/05/19**
Նախագահող դատավոր՝ **Կ. Ավետիսյան**

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
գեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
Մ. ԴԻՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ

2022 թվականի հունիսի 24-ին
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝
Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 13.09.2019 թվականի
«Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Տիգրան Կոտոլիկյա-
նի ընդդեմ Կոմիտեի՝ «Տ. Կոտոլիկյանին մաքսային ծառայությունից ազատելու մասին»
06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա հրամանն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ Կո-
միտեին Տիգրան Կոտոլիկյանին աշխատանքում վերականգնելուն և հարկադիր պարա-
պուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 06.02.2019 թվականից մինչև
փաստացի աշխատանքում վերականգնելու պահը, հարկադիր պարապուրդի գումարնե-
րը վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Կոտոլիկյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի
06.02.2019 թվականի «Տ. Կոտոլիկյանին մաքսային ծառայությունից ազատելու մասին»
թիվ 1/429-Ա հրամանը, և որպես հետևանք՝ պարտավորեցնել Կոմիտեին Տիգրան Կոտո-
լիկյանին վերականգնել աշխատանքում և պարտավորեցնել հարկադիր պարապուրդի

ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 06.02.2019 թվականից մինչև փաստացի աշխատանքում վերականգնելու պահը վճարել հարկադիր պարապորդի գումարները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 15.07.2019 թվականի որոշմամբ Տիգրան Կոտոլիկյանի՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը, բավարարվել է և հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.09.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.07.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարզապես է հերքելով փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կոմիտեի նախագահի 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա հրամանով Տիգրան Կոտոլիկյանն ազատվել է մաքսային ծառայությունից և նույն օրը ստացել է հրամանը:

Սույն գործով ՀՀ վարչական դատարան հայցադիմում ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը պայմանավորված է նրանով, որ Կոմիտեի նախագահի 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա հրամանն էլեկտրոնային կարգով ստանալով՝ Տիգրան Կոտոլիկյանը դիմել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով իրեն վերականգնել նախկին աշխատանքում և բռնագանձել հարկադիր պարապորդի գումարը: Մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հստակ սահմանված է, որ հանրային ծառայությունից ազատման հետ կապված վեճերն ընդդատյա են ՀՀ վարչական դատարանին, և աշխատանքից ազատելու մասին հրամանը որպես վարչական ակտ երկամսյա ժամկետում կարող էր վիճարկման առարկա դառնալ ՀՀ վարչական դատարանում:

Այսպիսով, նշված ժամկետը Տիգրան Կոտոլիկյանը բաց է թողել, այսինքն՝ արդյունավետ չի օգտվել իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից:

Սույն գործով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պարզաբանման է ենթակա վարչական դատարանին ընդդատյա վեճով քաղաքացիական դատարան դիմելու հանգամանքով պայմանավորված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով նախատեսված դատավարական ժամկետի վերականգնման հարցը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 13.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կասցնել նոր դատական ակտ:

3. Վճռաբեկ դատարանի պարզապարզությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի

3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

(...)

3. Օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաբանական հետևանքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչի հաշվառմամբ հարկ է համարում անդրադառնալ նշված իրավանորմի բովանդակությանը և բացահայտել դրանով կարգավորվող հարաբերությունները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Դատավարական ժամկետները բաց թողնելը և վերականգնելը» վերտառությամբ 54-րդ հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը.

«1. Դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

2. Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է սույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

3. Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվում է այն դատարան, որտեղ պետք է կատարվի դատավարական գործողությունը: Միջնորդության ներկայացման հետ միաժամանակ, եթե դա հնարավոր է, կատարվում են անհրաժեշտ դատավարական գործողությունները (դիմումի, բողոքի, փաստաթղթերի ներկայացում և այլն), որոնց կատարման ժամկետը բաց է թողնվել:

4. Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը քննվում է դատարանում այն ստացվելու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում՝ առանց դատավարության մասնակիցների ծանուցման, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

5. Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին դատարանը կայացնում է որոշում և հետագայում այդ մասին նշում է գործն ըստ էության լուծող դատական ակտում: Դատարանը բաց թողնված ժամկետը վերականգնելու հետ միաժամանակ կարող է սահմանել իրավունքի իրականացման համար նոր դատավարական ժամկետ,

որը չի կարող գերազանցել օրենքով սահմանված ժամկետը: Որոշման պատճենը ուղարկվում է կողմերին ոչ ուշ, քան որոշման կայացման հաջորդ օրը:

6. Բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնումը մերժելու մասին դատարանը կայացնում է որոշում:

7. Որոշման պատճենն ուղարկվում է կողմերին ոչ ուշ, քան որոշման կայացման հաջորդ օրը»:

Համակարգային վերլուծության ենթարկելով վերոգրյալ իրավանորմն ու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի դատավարական գործողությունները կատարվում են նույն օրենսգրքով, այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետներում, իսկ դրանց սահմանված չլինելու դեպքում՝ դատարանի սահմանած ժամկետներում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրորեն սահմանվել են ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելու դատավարական ժամկետներ, որոնց ընթացքում հայցվորները կարող են իրացնել դատական պաշտպանության իրենց իրավունքը, իսկ այդ ժամկետների ավարտից հետո վերջիններս այլևս կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը: Միևնույն ժամանակ, սակայն, օրենսդրորեն ամրագրվել է դատավարական ժամկետները բաց թողնված լինելու դեպքում դատական պաշտպանություն ստանալու իրավական հնարավորություն՝ դրա տրամադրումը պայմանավորելով համապատասխան միջնորդության հիմքով դատավարական ժամկետը վերականգնելու մասին դատարանի կողմից որոշում կայացնելու գործոնով:

Այսինքն՝ ՀՀ վարչական դատարան դիմած անձը կարող է ակնկալել և ստանալ դատական պաշտպանություն միայն այն դեպքում, եթե պահպանել է դատական պաշտպանության դիմելու օրենքով սահմանված ժամկետները, իսկ այդ ժամկետները բաց թողնված լինելու դեպքում վերջինս պարտավոր է ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի կապակցությամբ դատարանի կայացրած որոշումով էլ կկանխորոշվի նրան դատական պաշտպանություն տրամադրելու հարցը: Ըստ այդմ, միջնորդությունը մերժելու պարագայում անձն այլևս չի կարող իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, իսկ բավարարելու դեպքում նրան կտրամադրվի դատական պաշտպանություն:

Սույն գործի փաստերի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիությունը որոշելու չափորոշիչներին՝ վերահաստատելով նաև նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Այսպես.

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից

ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկանյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայցադիմումը ներկայացվել է դատավարական ժամկետը լրանալուց հետո, ապա կարող է ներկայացվել հայցվորի միջնորդությունն այն վերականգնելու մասին՝ դրանում նշելով բացթողման պատճառները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե լրացել են հայցադիմում ներկայացնելու համար նույն օրենսգրքով սահմանված ժամկետները, իսկ ժամկետները վերականգնելու մասին միջնորդությունը վարչական դատարանը մերժել է:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ արձանագրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքում ձևավորված իրավական դիրքորոշման համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*պե՛ն, Աջի-Նզդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ-ի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57, Ashingdane v. The United Kingdom, judgment of 28 May 1985, Series A no. 93, p. 24, para. 57*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*պե՛ն, Սրաբբինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ-ի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 51,55, Stubbings and Others v. The United Kingdom, judgment, 22.10.1996, par. 51,55*):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն ՀՀ Սահմանադրությանը և Կոնվենցիայով երաշխավորված անձանց՝ վերագրյալ հիմնարար իրավունքների լույսի ներքո:

Մասնավորապես, օրենսդիրը, սահմանելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ, հատուկ սահմանել է բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ նշված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը զրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները (*տե՛ս, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Գայանե Մեկրոնյանի թիվ ՎՊ/0059/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2014 թվականի որոշումը*):

Վերը նշված իրավական նորմերի, ինչպես նաև ՄԻԵԴ-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձինք իրենց դատական պաշտպանության իրավունքից կարող են օգտվել օրենքով սահմանված ժամկետներում և որպեսզի վարչական դատարանն իրավասու լինի գործադրել օրենքով սահմանված իր լիազորությունները կոնկրետ իրավական վեճն ըստ էության լուծելու համար, անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայություն, առաջին՝ համապատասխան հայցի առկայություն, երկրորդ՝ հայցի ներկայացում վարչական դատարան՝ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Դատավարական ժամկետները բաց թողնելու դեպքում երկրորդ պայմանն ապահովված կարող է համարվել միայն կոնկրետ վարչական գործում բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման բավարարված միջնորդության առկայության դեպքում, իսկ մնացած դեպքերում անձը չի կարող օգտվել դատական պաշտպանության իրավունքից, իսկ վարչական

դատարանն իրավասու չէ գործադրել օրենքով վարչական դատարանի համար նախատեսված լիազորությունները:

Վերահաստատելով և զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերով:

Իր մի շարք որոշումներով (թիվ ՍԴՈ-652, թիվ ՍԴՈ-690, թիվ ՍԴՈ-719, թիվ ՍԴՈ-765, թիվ ՍԴՈ-844, թիվ ՍԴՈ-873, թիվ ՍԴՈ-890, թիվ ՍԴՈ-932, թիվ ՍԴՈ-942, թիվ ՍԴՈ-1037, թիվ ՍԴՈ-1052, թիվ ՍԴՈ-1115, թիվ ՍԴՈ-1127, թիվ ՍԴՈ-1190, թիվ ՍԴՈ-1192, թիվ ՍԴՈ-1196, թիվ ՍԴՈ-1197, թիվ ՍԴՈ-1220, թիվ ՍԴՈ-1222, թիվ ՍԴՈ-1257, թիվ ՍԴՈ-1289) Սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր: Մասնավորապես.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, ինստագրելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ (ՍԴՈ-1127),

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում (ՍԴՈ-1257):

ՀՀ սահմանադրական դատարանն իր 07.02.2017 թվականի թիվ ՍԴՈ-1344 որոշմամբ վերահաստատել է վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ արձանագրելով, որ օրենսդրական կարգավորումները պետք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսեն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 01.01.2008 թվականից Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է վարչական արդարադատությունը, որով սահմանվել են այդ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման առանձնահատկությունները, այդ թվում նաև վարչական դատարանի առարկայական ընդդատության սահմանները, թույլատրելի հայցատեսակները և դրանցից յուրաքանչյուրով դատարան հայց ներկայացնելու դատավարական ժամկետները:

Միևնույն ժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանվել են հայցադիմումներն առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ ներկայացնելու իրավական հետևանքները:

Այսպես. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում օրենսդիրն ամրագրել է վերահասցեագրման ինստիտուտը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է նշված իրավակարգավորմանը՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդիրը, նպատակ ունենալով վարչական արդարադատության համակարգում ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, նախատեսել է հայցադիմումի վերահասցեագրման ինստիտուտը: Ընդ որում, այս կառուցակարգը վարչական դատավարության համակարգ է ներդրվել 05.12.2013 թվականին ընդունված և 07.01.2014 թվականին ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (մինչ այդ գործող՝ 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը՝ նշված կանոնի խախտումը դիտում էր որպես գործի վարույթի կարճման հիմք): Հայցադիմումը վերահասցեագրելը սահմանելով որպես վարչական դատարանի պարտականություն՝ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է, որ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության: Այսպիսով, վարչական դատարանը,

կաշկանդված լինելով արդարադատության պատշաճ իրականացման և անձանց իրավունքների ու ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանության ապահովման կոնվենցիոն կարգավորումներով, պարտավոր է պարզել, թե արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է վարչական դատարանին, թե՛ ոչ, և գործը վարչական դատարանին ընդդատյա չլինելու պարագայում վերահասցեագրել այն ըստ ընդդատության՝ դրանով իսկ ապահովելով անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի գործնական իրականացման երաշխավորումը:

Փաստորեն օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում սահմանել է, որ վարչական դատարանին որևէ գործի ընդդատյա չլինելու հանգամանքն այդ գործի քննության ընթացքում պարզվելու իրավաբանական հետևանքն այն է, որ վարչական դատարանը որոշում է կայացնում տվյալ գործն ըստ ընդդատության վերահասցեագրելու մասին (որև՛ն, «Վեսթ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության միջավոր սեփականության գործակալության թիվ ՎՆ/0830/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում համանման ինստիտուտ առկա չէ: Այսինքն՝ այն դեպքում, երբ հայցվորը սխալմամբ, մասնավորապես սխալ առարկայական ընդդատությամբ դիմում է ՀՀ վարչական դատարան, նա երաշխավորված է հետագա բոլոր բացասական հետևանքներից (այդ թվում՝ որոշ հայցերի ներկայացման համար սահմանված ժամկետները կամ հայցային վաղեմության ժամկետները բաց թողնելու ռիսկից), մինչդեռ սխալ առարկայական ընդդատությամբ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու պարագայում հայցվորի համար նման երաշխիքներ սահմանված չեն, քանի որ այդ դեպքում դատարանը ոչ թե վերահասցեագրում է հայցադիմումն ըստ ընդդատության, այլ մերժում է հայցադիմումի ընդունումը: Նման իրավաճակում գրեթե անխուսափելի է դառնում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետների պահպանմամբ հայց ներկայացնելը, ուստի անրաժեշտություն է առաջանում ներկայացնել բաց թողված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների արդյունավետ իրականացման համար կազմակերպական կառուցակարգ և ընթացակարգ վերը նկարագրված դեպքերի համար օրենսդիրը նախատեսել է բաց թողված դատավարական ժամկետները վերականգնելու իրավական հնարավորություն, այդ հարցի լուծումը թողնելով դատարանի հայեցողությանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ սխալ առարկայական ընդդատությամբ դատական պաշտպանության դիմած, մասնավորապես վարչական դատարանին ընդդատյա հայցն ընդհանուր իրավասության դատարան ներկայացնելու պարագայում ևս հայցվորները երաշխավորված լինեն բացասական հետևանքներից: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անհրաժեշտ է հավասարակշիռ վարչական դատարանին ընդդատյա պահանջն ընդհանուր իրավասության դատարան ներկայացնելու և վեճն ընդհանուր իրավասության դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու դեպքում հայցադիմումը ՀՀ վարչական դատարան ներկայացնելու ժամկետային սահմանները՝ հնարավոր չարաշահումները կանխելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված նպատակի իրագործումը հնարավոր է ընդհանուր իրավասության դատարան ներկայացված, սակայն վարչական դատարանին ընդդատյա պահանջով հայցադիմումի ընդունումը՝ վեճն ընդհանուր իրավասության դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով մերժելուց հետո հայցադիմումը ՀՀ վարչական դատարան ներկայացնելու դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիության հարցը որոշակի չափորոշիչների հաշվառմամբ գնահատելու միջոցով: Մասնավորապես, այն դեպքում, երբ հայցադիմումը ՀՀ վարչական դատարան է ներկայացվում ընդհանուր իրավասության դատարանի կողմից հայցադիմումի

ընդունումը՝ վեճն ընդհանուր իրավասության դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով մերժելուց հետո (ներառյալ նաև հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման բողոքարկման արդյունքում վերադաս դատարանների որոշումները կայացնելուց հետո), ապա դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հարցի քննարկման համար որպես չափորոշիչ կարող է հանդիսանալ թեկուզև սխալ առարկայական ընդդատությամբ, սակայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետներում դատական պաշտպանության դիմելու փաստը: Այլ կերպ ասած, եթե անձն ընդհանուր իրավասության դատարան է ներկայացնում վարչական դատարանին ընդդատյա պահանջով հայցադիմում, որի ընդունումը՝ վեճն ընդհանուր իրավասության դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով մերժելու մասին որոշում է կայացվում, որից հետո (ներառյալ նաև հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման բողոքարկման արդյունքում վերադաս դատարանների որոշումները կայացնելուց հետո) հայցվորը դիմում է ՀՀ վարչական դատարան և ներկայացնում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ պատճառաբանելով, որ դատավարական ժամկետը բաց է թողել սխալմամբ առարկայական ընդդատության խախտմամբ ընդհանուր իրավասության դատարան հայց ներկայացնելու պատճառով, ապա ՀՀ վարչական դատարանի կողմից նախևառաջ պետք է պարզվի, թե հայցվորը թեկուզև սխալ առարկայական ընդդատությամբ արդյո՞ք դատական պաշտպանության է դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետում: Ըստ այդմ, եթե վարչական դատարանին ընդդատյա պահանջով հայցադիմումն ընդհանուր իրավասության դատարան ներկայացնելու պահին հայցվորի կողմից պահպանված է եղել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետը, այսինքն՝ թեկուզև սխալ առարկայական ընդդատությամբ դատական պաշտպանության անձը դիմել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետում, ապա նշված հանգամանքը պետք է գնահատվի որպես դատավարական ժամկետը բաց թողնելու հարգելի (օբյեկտիվ) պատճառ: Համապատասխանաբար, եթե վարչական դատարանին ընդդատյա պահանջով հայցադիմումն ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետի խախտմամբ, ապա այն չի կարող գնահատվել, որպես դատավարական ժամկետը բաց թողնելու հարգելի (օբյեկտիվ) պատճառ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սխալ առարկայական ընդդատությամբ դատական պաշտպանության դիմելու հանգամանքն ինքնին չի կարող խոչընդոտել կամ կանխել ճիշտ ընդդատությամբ դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: Նշվածը հիմնավորվում է նաև նրանով, որ վեճերի առարկայական ընդդատության կամ ենթակայության հարցում բավարար որոշակիություն առկա չէ, ինչի հետևանքով օրենսդրորեն անգամ ամրագրվել է ենթակայության մասին վեճերը լուծելու կարգ:

Այսպես. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն (...) ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի (...) ենթակայությանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի (...) ենթակայությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Նույն հոդվածի 4րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական կամ սնանկության դատարանի կողմից համապատասխանաբար վերահասցեացված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ:

Վերոգրյալ իրավակարգավորումը վկայում է այն մասին, որ վեճերի ենթակայության (առարկայական ընդդատության) վերաբերյալ հարցը վիճելի կարող է լինել անգամ

դատարանների համար, ուստի նշված հանգամանքով պայմանավորված անձին դատական պաշտպանության իրավունքից զրկելը կհանդիսանա Մահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքների անհամաչափ սահմանափակում:

Անվտոնացված վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդհանուր իրավասության դատարան ներկայացված, սակայն վարչական դատարանի քննությանը ենթակա հայցադիմումի ընդունումը՝ վեճն ընդհանուր իրավասության դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով մերժելուց հետո (ներառյալ նաև հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման բողոքարկման արդյունքում վերադաս դատարանների որոշումները կայացնելուց հետո) ՀՀ վարչական դատարան հայցադիմում ներկայացնելու դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները պետք է գնահատվեն հարգելի, եթե հաստատվի, որ թեկուզև սխալ առարկայական ընդհատությամբ դատական պաշտպանության դիմելու պահին պահպանված են եղել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետները, և հայցվորը ՀՀ վարչական դատարան է դիմել վեճն ընդհանուր իրավասության դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը կայացնելուց կամ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման բողոքարկման արդյունքում վերադաս դատարանների որոշումները կայացնելուց հետո ողջամիտ ժամկետում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ ուղղությամբ դատական պրակտիկայի ձևավորումը կնպաստի դատական պաշտպանության հիմնական իրավունքների արդյունավետ իրականացմանը:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տիգրան Կոտոլիկյանը 10.04.2019 թվականին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել Կոմիտեի նախագահի 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարները վճարելու պահանջի մասին հայցադիմում:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, գտնելով, որ վեճն ենթակա է քննության վարչական դատավարության կարգով, հետևաբար այն ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ 16.04.2019 թվականին կայացրել է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/10335/02/19):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 10.06.2019 թվականի որոշմամբ մերժել է Տիգրան Կոտոլիկյանի և Ակսել Դանիելյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը և «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 16.04.2019 թվականին որոշումը թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս, court.am պաշտոնական կայք):

Տիգրան Կոտոլիկյանի և Ակսել Դանիելյանի ներկայացուցիչն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ. Անանյանի հայցադիմումը 18.06.2019 թվականին ներկայացրել է ՀՀ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանի 26.06.2019 թվականի թիվ ՎԴ/4608/05/19 որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է: Ակսել Դանիելյանի և Տիգրան Կոտոլիկյանի կողմից պահանջներն առանձնացվել են և 08.07.2019 թվականին կրկին ներկայացվել է թվով 2 հայցադիմում՝ կից փաստաթղթերով, որոնցից Տիգրան Կոտոլիկյանի ներկայացրած հայցադիմումը դիտվել է որպես թիվ ՎԴ/4608/05/19 վարչական գործով կրկին ներկայացված, իսկ Ակսել Դանիելյանի կողմից ներկայացվածը՝ որպես նոր հայցադիմում (**գ.թ. 42-44**):

Տիգրան Կոտոլիկյանը հայցադիմումին կից ներկայացրած՝ բաց թողված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությամբ հայտնել է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 16.04.2019 թվականի թիվ ԵԴ/10335/02/19 քաղաքացիական գործով կայացված

որոշմամբ, որն օրինական ուժի մեջ է մտել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.06.2019 թվականի որոշմամբ, հայցվորը տեղեկացել է, որ Կոմիտեի նախագահի 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա հրամանից բխող իրավահարաբերությունները հանրային իրավահարաբերություններից ծագող վեճ է, իսկ բոլոր գործերը, ներառյալ հանրային կամ այլնորանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանին են ընդդատյա, և հետևաբար այդ պատճառով հայցվորը բաց է թողել ՀՀ վարչական դատարան դիմելու դատավարական ժամկետը, նշված հանգամանքը պետք է համարել բաց թողնված ժամկետի օբյեկտիվ համարվող պատճառ և բավարարել միջնորդությունը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնել և ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ **(գ.թ. 78-80):**

Դատարանը, 15.07.2019 թվականի որոշմամբ քննարկելով Տիգրան Կոտոլիկյանի միջնորդությունը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ, գտել է, որ այն ենթակա է բավարարման, քանի որ հայցվորն օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատական պրոցեսին մասնակցելու ուղղությամբ: Մասնավորապես՝ հայցադիմումին կից ներկայացված թիվ ԵԴ/10335/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.06.2019 թվականի որոշումից հետևում է, որ հայցվոր Տիգրան Կոտոլիկյանը 10.04.2019 թվականին հայց է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որի ընդունումը 16.04.2019 թվականի որոշմամբ մերժվել է, իսկ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նույն որոշմամբ մերժվել է դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը: Նման պայմաններում Դատարանը գտել է, որ դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի է, և Տիգրան Կոտոլիկյանի ներկայացուցչի կողմից ներկայացված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունն անհրաժեշտ է բավարարել **(գ.թ. 89-93):**

Վերաքննիչ դատարանը, 13.09.2019 թվականի որոշմամբ մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հայցվոր կողմը ձեռնամուխ է եղել իր ենթադրաբար խախտված իրավունքների դատական պաշտպանության ուղղությամբ գործողություններ ձեռնարկելուն, հետևապես այս իրողությունը չի կարող դատավարական ժամկետն անհարգելի պատճառով բաց թողնված լինելու մասին եզրահանգման գալու հիմք որակվել:

Վերը նշվածի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հիմնավոր է որակում դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին եզրահանգման համար հիմք ընդունված Դատարանի դիրքորոշումը **(գ.թ. 142-149):**

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասում ևս ամրագրված է աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթ) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում դատարան դիմելու աշխատողի իրավունքը:

Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվել են աշխատանքից ազատելու մասին գործատուի հրամանն անվավեր ճանաչելու նպատակով դատական պաշտպանության դիմելու համանման ժամկետներ,

այն է՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու կամ որ նույնն է անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում:

Սույն գործով վիճարկվող՝ «Տ. Կոտոլիկյանին մաքսային ծառայությունից ազատելու մասին» թիվ 1/429-Ա հրամանը Կոմիտեի նախագահ Դ. Անանյանն ընդունել է 06.02.2019 թվականին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, թե երբ է նշված հրամանը հանձնվել Տիգրան Կոտոլիկյանին:

Կոմիտեի նախագահի 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա հրամանն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապորդի գումարները վճարելու պահանջի մասին հայցադիմումը Տիգրան Կոտոլիկյանը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել 10.04.2019 թվականին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, գտնելով, որ վեճը ենթակա է քննության վարչական դատավարության կարգով, հետևաբար այն ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ 16.04.2019 թվականին կայացրել է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեի նախագահի 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա հրամանն օրենքով սահմանված կարգով Տիգրան Կոտոլիկյանին հանձնված լինելու ապացույցի բացակայության պարագայում հնարավոր չէ միանշանակ հետևություն անել այն մասին, որ Կոմիտեի նախագահ Դ. Անանյանի «Տ. Կոտոլիկյանին մաքսային ծառայությունից ազատելու մասին» 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա հրամանի վիճարկման նպատակով հայցվորը դատական պաշտպանության է դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի Դատարանը, կայացնելով վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին որոշում, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի որոշումը, կայացրել են ճիշտ դատական ակտեր:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանին չի կարող վերագրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից նշված իրավանդումը մեկնաբանվել ու կիրառվել է սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ, ուստի Կոմիտեի բողոքը բավարար չէ Վերաքննիչ դատարանի 13.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 13.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/4608/05/19 վարչական գործով 24.06.2022 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

24.06.2022 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Տիգրան Կոտոլիկյանի ընդդեմ Կոմիտեի՝ «Տ. Կոտոլիկյանին մաքսային ծառայությունից ազատելու մասին» 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա հրամանն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ Կոմիտեին Տիգրան Կոտոլիկյանին աշխատանքում վերականգնելուն և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 06.02.2019 թվականից մինչև փաստացի աշխատանքում վերականգնելու պահը, հարկադիր պարապուրդի գումարները վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, որոշել է. «Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորներ **Տ. Պետրոսյանս, Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս, Էդ. Սեդրակյանս** համաձայն չլինելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 24.06.2022 թվականին թիվ ՎԴ/4608/05/19 վարչական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում կատարված եզրահանգումների հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դարավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Կոտոլիկյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 06.02.2019 թվականի «Տ. Կոտոլիկյանին մաքսային ծառայությունից ազատելու մասին» թիվ 1/429-Ա հրամանը, և որպես հետևանք՝ պարտավորեցնել Կոմիտեին Տիգրան Կոտոլիկյանին վերականգնել աշխատանքում և պարտավորեցնել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 06.02.2019 թվականից մինչև փաստացի աշխատանքում վերականգնելու պահը վճարել հարկադիր պարապուրդի գումարները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 15.07.2019 թվականի որոշմամբ Տիգրան Կոտոլիկյանի՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը, բավարարվել է և հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.09.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.07.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դարավարանք բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով

Սույն վճարքն արդարև քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Սրբորադաս դատարանները հաշվի չեն առել, որ դատավարական ժամկետը բաց թողնելու հարգելի պարճատ հայցվորի կողմից չի ներկայացվել և դատարաններն էլ չեն վկայակոչել որևէ հարգելի հանգամանք, որը հիմք է հանդիսացել հայցվորի կողմից դատարան հայց ներկայացնելու դատավարական ժամկետը բաց թողնելու համար: Ինչ վերաբերում է «Տ. Կուրդիլյանին մարաշյին ծառայությունից ազատելու մասին» 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան հայց ներկայացնելուն, ապա այն չի կարող հիմք հանդիսանալ հայցվորի միջնորդությունը բավարարելու համար, քանի որ Տիգրան Կուրդիլյանը 06.02.2019 թվականի հրամանի դեմ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան է դիմել երկամսյա ժամկետը խախտելով՝ 10.04.2019 թվականին:

Սրբորադաս դատարաններն անբռնել են, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հարակ սահմանված է, որ հանրային ծառայությունից ազատման հետ կապված վեճերն ընդարարյա են ՀՀ վարչական դատարանին, և աշխարանքից ազատելու մասին հրամանը, որպես վարչական ակտ, երկամսյա ժամկետում կարող էր վիճարկման ատարկա դառնալ ՀՀ վարչական դատարանում: Նշված ժամկետը հայցվորը բաց է թողել, այսինքն՝ արդյունավետ չի օգրվել իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածին չորհրապետելու հանգամանքը չի կարող դիտարկել բաց թողնված ժամկետը վերականգնելու օրյելկրիվ հիմք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 13.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատարկան ակտ:

3. Հարուկ կարծիքի պարճատությունները և եզրահանգումները

Տիգրան Կոտոլիկյանը 18.06.2019 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պետական եկամտների կոմիտեի նախագահ Դ. Անանյանի: ՀՀ վարչական դատարանի 26.06.2019 թվականի թիվ ՎԴ/4608/05/19 որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է: Ակսել Դանիելյանի և Տիգրան Կոտոլիկյանի կողմից պահանջներն առանձնացվել են և 08.07.2019 թվականին կրկին ներկայացվել է թվով 2 հայցադիմում՝ կից փաստաթղթերով, որոնցից Տիգրան Կոտոլիկյանի ներկայացված հայցադիմումը դիտվել է որպես թիվ ՎԴ/4608/05/19 վարչական գործով կրկին ներկայացված, իսկ Ակսել Դանիելյանի կողմից ներկայացվածը՝ որպես նոր հայցադիմում (**գ.թ. 89-93**):

Տիգրան Կոտոլիկյանը հայցադիմումին կից ներկայացված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությամբ հայտնել է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 16.04.2019 թվականի թիվ ԵԴ/10335/02/19 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ, որն օրինական ուժի մեջ է մտել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.06.2019 թվականի որոշմամբ, հայցվորը տեղեկացել է, որ Կոմիտեի նախագահի 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա հրամանից բխող իրավահարաբերությունները հանրային իրավահարաբերություններից ծագող վեճ է, իսկ բոլոր գործերը, ներառյալ հանրային կամ այնտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանին են ընդդատյա և հետևաբար այդ պատճառով հայցվորը բաց է թողել ՀՀ վարչական դատարան դիմելու դատավարական ժամկետը, նշված հանգամանքը պետք է համարել բաց թողնված ժամկետի օրյելկրիվ համարվող պատճառ և բավարարել միջնորդությունը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնել և ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ (**գ.թ. 58-68**):

Դատարանը 15.07.2019 թվականի որոշմամբ քննարկելով Տիգրան Կոտուրիկյանի միջնորդությունը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ, գտել է, որ այն ենթակա է բավարարման, քանի որ հայցվորն օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատական պրոցեսին մասնակցելու ուղղությամբ: Մասնավորապես՝ հայցադիմումին կից ներկայացված թիվ ԵԴ/10335/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.06.2019 թվականի որոշումից հետևում է, որ հայցվոր Ակսել Դանիելյանը 10.04.2019 թվականին հայց է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որի ընդունումը 16.04.2019 թվականի որոշմամբ մերժվել է, իսկ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նույն որոշմամբ մերժվել է դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը: Նման պայմաններում Դատարանը գտել է, որ դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի է, և Տիգրան Կոտուրիկյանի կողմից ներկայացված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունն անհրաժեշտ է բավարարել **(գ.թ. 89-93)**:

Վերաքննիչ դատարանը 13.09.2019 թվականի որոշմամբ մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը պատճառաբանել է, որ սույն գործով հայցվորն իսկապես ձեռնամուխ է եղել իր իրավունքների պաշտպանությանը, հստակ քայլեր է կատարել այդ ուղղությամբ և ժամկետը բաց է թողել դատարանի կողմից արձանագրված օբյեկտիվ պատճառներից ելնելով: Վերը նշվածի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հայցվորի կողմից ներկայացված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը հիմնավոր է, որպիսի պայմաններում ՀՀ վարչական դատարանն իրավացիորեն բավարարել է այն **(գ.թ. 142-149)**:

Վճռաբեկ դատարանի եզրահանգումներն իրավաչափ չեն, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը թույլ տալով դատավարական ժամկետի բացթողնման պատճառները հարգելի համարելու հնարավորություն, այդ հարցը պայմանավորել է դրա պատճառների հարգելիության հետ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ արձանագրել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը զրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները *(յրե՛ս, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Գայանե Մելքոնյանի թիվ ՎԴ/0059/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2014 թվականի որոշումը)*:

Ընդ որում այդ պատճառները չեն կարող պայմանավորվել իրավունքների պաշտպանությանն ուղղված ընդհանրական և առհասարակ գործողություններով:

Դատավարական ժամկետները համարվում են պահպանված, երբ դատավարական սուբյեկտն օրենքով նախատեսված գործողությունները պատշաճ կատարում է

այդ ժամկետներում, հակառակ դեպքում պարտավոր է հիմնավորել այդպիսի գործողությունների կատարման անհնարինությունը:

Սույն գործի նյութերից ակնհայտ է, որ Տիգրան Կոտոլիկյանի կողմից Կոմիտեի նախագահի 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա որոշման դեմ հայցադիմումը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվել է աշխատանքային իրավահարաբերություն շրջանակներում քննելու նպատակով: Նշված հանգամանքն էլ հայցվորի կողմից նշվել է որպես Դատարանում հայց ներկայացնելու ժամկետի բաց թողումը հարգելի համարելու հիմք:

Հարկ ենք համարում արձանագրել, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 25.4.2019 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասը, արդեն իսկ հստակորեն սահմանել է, որ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերն ընդդատյա են վարչական դատարանին: Նշված վեճերի ընդդատության հարցի վերաբերյալ առաջացող հարցերի վերաբերյալ պատասխանները տրված են դեռևս 05.12.2013 թվականին ընդունված և 07.01.2014 թվականին ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով: Հետևաբար Տիգրան Կոտոլիկյանը «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 16.04.2019 թվականի որոշմամբ արդեն իսկ իրազեկված է եղել, որ իր հայցապահանջն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին:

Միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե Դատարանը, թե Վերաքննիչ դատարանը Տիգրան Կոտոլիկյանի կողմից ժամկետի բաց թողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը դիտել են հիմնավոր, անհրաժեշտ ենք համարում արձանագրել նաև, որ Տիգրան Կոտոլիկյանի կողմից Կոմիտեի նախագահի 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա որոշումը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված երկամսյա ժամկետի խախտմամբ: Տիգրան Կոտոլիկյանը վիճարկվող որոշումը ստանալու օրվանից հետո, թե աշխատանքային օրենսգրքի, թե վարչական դատավարության կանոններին համապատասխան կարող էր կանխատեսել, որ նշված որոշումը դատական կարգով կարող էր վիճարկել երկու ամսվա ընթացքում: Սակայն վերջինս Կոմիտեի նախագահի 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա որոշման դեմ հայցադիմում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ներկայացրել է 10.04.2019 թվականին՝ խախտելով օրենքով սահմանված երկամսյա ժամկետը: Հետևաբար Դատարանը և Վերաքննիչ դատարանը բավարարելով Տիգրան Կոտոլիկյանի ներկայացրած միջնորդությունը՝ ժամկետի բացթողումը հարգելի համարելով և փաստելով, որ հայցվորը ձեռնամուխ է եղել իր իրավունքների պաշտպանությանը և հստակ քայլեր է կատարել այդ ուղղությամբ, հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան հայց ներկայացնելիս արդեն իսկ երկամսյա ժամկետը բաց թողնված է եղել:

Ավելին, օգտվելով իրավաբանական օգնությունից, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից գործը վարչական դատարանում քննության ենթակա լինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու պայմաններում Տիգրան Կոտոլիկյանը շարունակել է համապատասխան իրավական գործընթացներն՝ ուղղված տվյալ հայցն ընդհանուր իրավասության դատարանում քննելուն: Հետևաբար՝ ի սկզբանե աշխատանքային իրավահարաբերություններից բխող վեճով դատարան դիմելու բաց թողնված ժամանակահատվածը չի կարող դիտվել հայցվորի կողմից անկախ պատճառով բաց թողնված ժամկետ: Ավելին՝ դատարանների գնահատման առարկա չի դարձել նաև այն հանգամանքը, որ Տիգրան Կոտոլիկյանը կարող էր կանխատեսել վեճի ենթակայության հարցը նաև ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումը ստանալու պահից, մինչդեռ հայցվորի համար լիովին կանխատեսելի իրավիճակում դատարանի կողմից հայցվորի թույլ տված սխալը մատնանշելուց հետո հայցվորը շարունակել է այդ իրավական գործընթացը:

Նման պայմաններում գտնում ենք, որ Տիգրան Կոտոլիկյանի՝ Կոմիտեի նախագահի 06.02.2019 թվականի թիվ 1/429-Ա որոշման դեմ վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա չէր բավարարման:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ բողոքը ենթակա էր բավարարման՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 13.09.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը պետք է վերացվեր և կայացվեր նոր դատական ակտ. վերացվեր ՀՀ վարչական դատարանի 15.07.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Տ. Պետրոսյան
Էդ. Սեդրակյան

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/6418/05/21**
2022թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/6418/05/21

Նախագահող դատավոր՝

Է. Նահապետյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2022 թվականի ապրիլի 29-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Հայկանուշ Մանուկյանի ընդդեմ ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ նոտարական պալատի, ՀՀ կադատորի կոմիտեի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի՝ Երևանի քաղաքապետարանի 30.04.2001 թվականի թիվ 419 որոշման 1-ին, 3-րդ և 5-րդ կետերը և նշված որոշման թիվ 1 հավելվածի 23-րդ կետը՝ Հայկանուշ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող «ք. Երևան, Ներքին Շենգավիթ 4 փողոց 38 տուն» հասցեին վերաբերող մատով անվավեր ճանաչելու և որպես ածանցյալ պահանջ՝ Երևանի քաղաքապետարանի և «Երևանի էլեկտրացանց» ՓԲԸ-ի միջև 07.09.2001 թվականին նոտարական կարգով կնքված թիվ 3-9137 հողի վարձակալության պայմանագիրը և դրա հիման վրա նշված վարձակալության պայմանագրի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին Հայկանուշ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող «ք. Երևան, Ներքին Շենգավիթ 4 փողոց 38 տուն» հասցեում գտնվող հողամասը նախկին տեսքի բերելու՝ էլեկտրական ենթակայանն իր պատկանելիքներով ապամոնտաժել պարտավորեցնելու և դրանով ծանրաբեռնված հողամասը Հայկանուշ Մանուկյանին վերադարձնելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.08.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Հայկանուշ Մանուկյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Հայկանուշ Մանուկյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 30.04.2001 թվականի թիվ 419-րդ որոշման 1-ին, 3-րդ և 5-րդ կետերը և նշված որոշման թիվ 1 հավելվածի 23-րդ կետը՝ Հայկանուշ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող «ք. Երևան, Ներքին Շենգավիթ 4 փողոց 38 տուն» հասցեին վերաբերող մասով, որպես անձանցյալ պահանջ՝ անվավեր ճանաչել դրա հիման վրա Երևանի քաղաքապետարանի և «Երևանի էլեկտրացանց» ՓԲԸ-ի միջև 07.09.2001 թվականին նոտարական կարգով կնքված թիվ 3-9137 հոդի վարձակալության պայմանագիրը և դրա հիման վրա նշված վարձակալության պայմանագրի պետական գրանցումը, պարտավորեցնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին Հայկանուշ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող «ք. Երևան, Ներքին Շենգավիթ 4 փողոց 38 տուն» հասցեում գտնվող հողամասը բերել նախկին տեսքի՝ էլեկտրական ենթակայանն իր պատկանելիքներով ապամոնտաժել և դրանով ծանրաբեռնված հողամասը վերադարձնել հայցվորին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքունյան) (այսուհետ՝ Դատարան) 11.06.2021 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.08.2021 թվականի որոշմամբ Հայկանուշ Մանուկյանի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Դատարանի 11.06.2021 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայկանուշ Մանուկյանը (ներկայացուցիչ՝ Արտավազդ Պետրոսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 10-րդ հոդվածի 1-ին մասը, 11-րդ հոդվածի 3-րդ մասը, 70-րդ, 73-րդ հոդվածները, 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և 79-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-2-րդ մասերը, 121-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Ստորադաս դատարանները պատշաճ կերպով չեն ուսումնասիրել գործին կցված փաստաթղթերը և ակնհայտ անհիմն կերպով կիրառել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջը (ինքնակամ կառույց), մինչդեռ էլեկտրական ենթակայանը ոչ թե ինքնակամ կառույց է, այլ սեփականության իրավունքով գրանցված է «Երևանի էլեկտրացանց» ՓԲԸ-ի անվամբ (իրավահաջորդ՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ):

Բացի այդ, ստորադաս դատարաններն անտեսել են, որ Հայկանուշ Մանուկյանի ներկայացրած հիմնական պահանջը ենթակա է ՀՀ վարչական դատարանին, իսկ անձանցյալ պահանջները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, ուստի անձանցյալ պահանջների վարույթ ընդունման և քննության մասով ենթակա են կիրառման բացառապես ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ քաղաքացիական օրենսգրքերի պահանջները:

Ավելին՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել նաև, որ պատասխանողների հստակեցումը և Երևանի քաղաքապետարանի 30.04.2001 թվականի թիվ 419-րդ որոշման

անընթեռնելիության հարցը կարող էր պարզվել գործի քննության ընթացքում, ուստի նշված հանգամանքները ևս չէին կարող հայցադիմումը վերադարձնելու հիմք հանդիսանալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 30.08.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Դատարանի 11.06.2021 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը»:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և կզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի և 70-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր: Բացի այդ, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի, 70-րդ հոդվածի, 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ միևնույն հետ փոխկապակցված մի քանի պահանջների ներկայացման դեպքում պարամիանողի ներգրավման ստանձնահարկություններին՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ և 70-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումների համարեքարում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արդրադառնալ այն հարցադրմանը, թե արդյոք հայցադիմումին կից ներկայացված վիճարկվող վարչական ակտի կամ դրա պարճենի անընթեռնելի լինելը կարող է հիմք հանդիսանալ հայցադիմումը վերադարձնելու համար:

1. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրոյթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն

անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից բխում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում:

Երաշխավորելով անձի դատական պաշտպանության իրավունքը, օրենսդիրը միաժամանակ սահմանել է այն իրավական միջոցները, որոնք հնարավորություն են տալիս գործնականում ապահովելու այդ իրավունքի իրացումը: Դրանցից է նաև դատավարական նորմերով սահմանված այն դատարանի և այն դատավորի կողմից գործի քննության իրավունքը, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով: Այսինքն՝ դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովվում է դատավարական այնպիսի կառուցակարգի միջոցով, ինչպիսին է ընդդատությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը: Ինչպես ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերը, այնպես էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում են գործերի առարկայական ընդդատության իրենց կանոնները (*ընեն, ՀՀ սահմանադրական դատարանի 03.02.2009 թվականի թիվ ՄԴՈ-787 որոշումը*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի ճիշտ ընդդատության որոշումն ունի գործնական կարևոր նշանակություն, քանի որ դատական պաշտպանությունը կարող է արդյունավետ լինել միայն այն պարագայում, եթե գործի քննությունն իրականացվում է իրավասու դատարանի կողմից՝ տվյալ դատավարությանը բնորոշ կանոններով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ և հակառակը, եթե գործը քննում է այն դատարանը, որը տվյալ գործը քննելու իրավասություն չունի, ապա դա հանգեցնում է դատական պաշտպանության սահմանադրորեն ամրագրված իրավունքի խախտմանը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում գործը քննում են քաղաքացիական կամ քրեական մասնագիտացման դատավորները:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝

- 1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը.
- 2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով.
- 3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը:

Փաստորեն, օրենսդիրը հստակ տարանջատել է այն գործերի ցանկը, որոնք ընդդա-
սյա են կոնկրետ դատարանների քննությանը:

Մինևույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ դեպքերում դատա-
րան ներկայացվող հայցադիմումները կարող են պարունակել միմյանց հետ փոխկապա-
կցված վարչաիրավական և քաղաքացիաիրավական բնույթի պահանջներ՝ օրենսդիրը
թե՛ ՀՀ վարչական դատավարության և թե՛ ՀՀ քաղաքացիական դատավարության օրե-
նագրքերում ամրագրել է միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործե-
րի ընդդատության կանոնները:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին
մասի համաձայն՝ միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, եթե
այդ պահանջներից մեկը ենթակա է առաջին ատյանի դատարանին, իսկ մյուսը՝ վարչա-
կան դատարանին, քննում է այն դատարանը, որին ենթակա է հիմնական պահանջը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական է այն պահանջը, որի բավարա-
րումը կամ մերժումը կանխորոշում է դրանից ածանցվող պահանջների լուծումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, եթե այդ պահանջնե-
րից մեկն ընդդասյա է վարչական դատարանին, իսկ մյուսը՝ ընդհանուր իրավասության
դատարանին, քննում է այն դատարանը, որին ընդդասյա է հիմնական պահանջը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական է այն պահանջը, որի լուծման
արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է դրանից ածանցվող պահա-
նջների լուծման ելքը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **քաղաքացիաիրավական ածանցյալ պահա-
նջ քննելիս դատարանը կիրառում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի-
ական դատավարության օրենսգրքի կանոնները**, եթե դրանց կիրառումը չի հակասում
վարչական դատավարության՝ նույն օրենսգրքով ամրագրված սկզբունքներին:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով մի քանի փոխկապակցված հայցապա-
հանջների հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության որոշման
խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ
ներկայացվում են երկու և ավելի հայցապահանջ, որոնք ունեն տարբեր առարկայական
ընդդատություն, ապա գործը պետք է քննվի այն դատարանում, որին ընդդասյա է ներկա-
յացված հիմնական պահանջը (*Կրե՛ս, Ռուբեն Միրաբյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի
և մյուսների թիվ ՎԴ/0476/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2010
թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ բացահայտելով հիմնական պահանջի հասկացությունը՝ ՀՀ
վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ միմյանց հետ փոխկապակցված մի քանի հայցա-
պահանջներից հիմնական է այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատա-
կան ակտը կանխորոշում է մյուս պահանջների լուծումը (*Կրե՛ս, Արևիկ Արուսյանն ընդդեմ
«ՀԷԳ-90» ՍՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի թիվ ԵԱԲԳ/0433/02/11 քաղաքացիական գործով ՀՀ
վճռաբեկ դատարանի 27.07.2011 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը՝ նախ և առաջ եզրահանգում է, որ
թե՛ ՀՀ վարչական դատավարության, և՛ թե՛ ՀՀ քաղաքացիական դատավարության օրե-
նագրքերը բովանդակում են կարգավորումներ, որոնք տարանջատում են դնում հիմնա-
կան և ածանցյալ պահանջների միջև: Ընդ որում, վկայակոչված երկու օրենսգրքերն էլ
հիմնական են համարում հայցվորի կողմից ներկայացված այն պահանջը, որի բավարա-
րումը կամ մերժումը կանխորոշում է դրանից ածանցվող պահանջների լուծումը: Վճռա-
բեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից դատավարական օրենսգրքերում նման
կարգավորում նախատեսելն ինքնանպատակ չէ, քանի որ այն միտված է արդարադա-
տության իրականացման արդյունավետության ապահովմանը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրարից տարբերվող, մասնավորապես քաղա-
քացիաիրավական և վարչաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկա-
պակցված պահանջների քննությունը մինևույն դատարանի կողմից իրականացնելն առա-
վել արդյունավետ կարող է լինել տվյալ գործի լուծման համար, քանի որ հենց հիմնական

պահանջի լուծումով է կանխորոշվում ածանցյալ պահանջի լուծումը: Այլ կերպ ասած, գործի ըստ էության ճիշտ լուծումը պայմանավորված է հիմնական պահանջի (պահանջների) ճիշտ լուծմամբ, որն ինքնին կանխորոշելու է նաև ածանցյալ պահանջի (պահանջների) լուծումը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տարաբնույթ, սակայն միմյանց հետ փոխկապակցված պահանջների համատեղ քննության հնարավորությունը սահմանելու հետ միաժամանակ օրենսդիրն ամրագրել է նաև նման պահանջների համատեղ քննության առանձնահատկությունները:

Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատարանին ընդդարյա հիմնական պահանջի (պահանջների) հետ միասին ներկայացված քաղաքացիաիրավական բնույթի պահանջի (պահանջների) քննությունը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման ուժով, պետք է իրականացվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կանոններով, եթե դրանց կիրառումը չի հակասում վարչական դատավարության օրենսգրքով ամրագրված սկզբունքներին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը հնարավոր է համարել միմյանց հետ փոխկապակցված վարչաիրավական և քաղաքացիաիրավական պահանջների համատեղ քննությունը, սակայն միաժամանակ մատնանշել է, թե դրանցից յուրաքանչյուրի քննության համար դատավարական որ կանոնները պետք է կիրառվեն:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից դատավարական կանոնների ընտրության վերոգրյալ առանձնահատուկ կանոններ նախատեսելն ինքնանպատակ չէ, քանի որ թեև հայցվորի կողմից դատարան ներկայացված միմյանց հետ փոխկապակցված տարաբնույթ պահանջները քննվում են համատեղ, այնուամենայնիվ դրանցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ յուրահատուկ հատկանիշներ:

Ի հիմնավորումն վերոգրյալի՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում հայցվորի կողմից դատարան ներկայացվող տարաբնույթ պահանջները վերաբերում են այս կամ այն իրավահարաբերությանը, որոնցից յուրաքանչյուրն ունի օրենսդրի կողմից ամրագրված հատուկ կարգավորումներ՝ հաշվի առնելով կոնկրետ իրավահարաբերության առանձնահատկությունները: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միմյանց հետ փոխկապակցված վարչական և քաղաքացիաիրավական մի քանի պահանջների համատեղ քննության հնարավորություն նախատեսելով՝ օրենսդիրը միաժամանակ հաշվի է առել այդ պահանջների լուծման արդյունքում կարգավորվող հարաբերությունների բնույթն ու առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված էլ սահմանել է դրանցից յուրաքանչյուրը համապատասխան դատավարական նորմերով քննելու պահանջը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն դեպքում, երբ վարչական դատարան ներկայացվում են միմյանց հետ փոխկապակցված վարչաիրավական և քաղաքացիաիրավական պահանջներ, որոնցից հիմնականն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանի քննությանը, ՀՀ վարչական դատարանը քաղաքացիաիրավական բնույթի պահանջի (պահանջների) քննությունը պետք է իրականացնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կանոններով, եթե դրանց կիրառումը չի հակասում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված սկզբունքներին:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադարձ կատարել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Հայցերի միացումը» վերաբառությամբ կրող 70-րդ հոդվածի կարգավորումներին՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ սույն գործով ներկայացված հայցադիմումը վերադարձնելիս Դատարանը, ի թիվ այլնի, կիրառելի է համարել հենց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածով ամրագրված կարգավորումը, իսկ Վերաքննիչ դատարանն իրավաչափ է դիտարկել նշված հոդվածի կիրառումը:

Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ հայցվորը կարող է մեկից ավելի պահանջներ միավորել մեկ հայցում, եթե դրանք ուղղված են միևնույն պատասխանողի դեմ և փոխկապակցված են:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե մեկ հայցադիմումում միացված են մեկ կամ մի քանի պատասխանողին ուղղված՝ միմյանց հետ չկապված պահանջներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի վերլուծությանը, նշել է, որ օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովել անձանց դատական պաշտպանության իրավունքի գործնականում արդյունավետ երաշխավորումը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում հայցվորի համար նախատեսել է մեկից ավելի պահանջներ մեկ հայցում միավորելու իրավական հնարավորությունը՝ սահմանելով, որ մեկից ավելի պահանջները կարող են միավորվել մեկ հայցում՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում. առաջին՝ դրանք ուղղված են միևնույն պատասխանողի դեմ, երկրորդ՝ եթե այդ պահանջները փոխկապակցված են:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգավորումը մյուս կողմից բխում է նաև դատական խնայողության սկզբունքից՝ հնարավորություն տալով դատարանին՝ իր իրավունքների պաշտպանության համար դատարան դիմած անձի՝ մեկից ավելի փոխկապակցված պահանջներից բաղկացած գործը քննել ավելի սեղմ ժամկետներում՝ վատնելով ավելի քիչ ռեսուրսներ, քան անհրաժեշտ կլինեք, եթե պահանջները ներկայացված լինեին առանձին-առանձին:

Նման պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր դեպքերում, երբ անձը, օգտվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հնարավորությունից, մեկ պատասխանողի դեմ մեկ հայցով ներկայացնում է մի քանի պահանջ, դատարանն առաջին հերթին պետք է պարզի, արդյո՞ք նշված պահանջները փոխկապակցված են, թե՛ ոչ: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նկատել, որ յուրաքանչյուր դեպքում պահանջների փոխկապակցվածության հարցը լուծելը պետք է հիմնվի դատարանի ներքին համոզման վրա, որը, սակայն, չպետք է լինի կանայական, այլ պետք է ուղղված լինի վարչական դատավարության նպատակների իրականացմանը, որոնցից ամենահիմնականն իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է (տե՛ս, Համկար Պալատի *ընդդեմ ՀՀ սարիկավարության «Ճանակարհային սարիկանություն» ծառայության թիվ ՎՆ/4767/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.09.2015 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Հայցերի միացումը» վերտառությունը կրող 70-րդ հոդվածը իրավական հնարավորություն է ընձեռում հայցվորին միևնույն պատասխանողի դեմ ուղղված և միմյանց հետ փոխկապակցված մեկից ավելի *ինքնուրույն պահանջները* միավորել մեկ հայցում՝ ապահովել անձանց դատական պաշտպանության իրավունքի գործնականում արդյունավետ երաշխավորումը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ և 11-րդ հոդվածներով ամրագրված կարգավորումները թեև ունեն որոշակի ընդհանրություններ, այդուհանդերձ դրանք էապես տարբերվում են միմյանցից: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ երկու հոդվածներով ամրագրված կարգավորումների դեպքում էլ անհրաժեշտ է մեկից ավելի պահանջների առկայություն, որոնք փոխկապակցված են միմյանց հետ, և որոնք ներկայացվում են դատարան մեկ հայցադիմումի շրջանակում: Միևնույն ժամանակ, ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածով ամրագրված կարգավորումը կիրառելի չէ այն պարագայում, երբ մեկից ավելի պահանջներն ունեն անանցյալ բնույթ և ուղղված են երկու և ավելի պատասխանողի դեմ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածով նախատեսված միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործերի ընդդատության դեպքում հայցվորի կողմից ներկայացված մեկից ավելի տարաբնույթ պահանջները կարող են ուղղված լինել թե՛ նույն և թե՛ մի քանի

պատասխանողների դեմ: Մինչդեռ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածով նախատեսված հայցերի միացման դեպքում պահանջները պետք է ուղղված լինեն բացառապես միևնույն պատասխանողի դեմ: Այլ կերպ ասած՝ միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներ դատարան ներկայացված լինելու պարագայում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ կամ 70-րդ հոդվածի կիրառելիության համար հարկ է պարզել հետևյալ հանգամանքները՝

ա) արդյո՞ք պահանջների փոխկապակցվածությունը պայմանավորված է դրանց հիմնական և ավանդյալ բնույթով: Եթե պահանջների միջև առկա կապի հիմքում ընկած է նշված հանգամանքը, ապա կիրառման ենթակա է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի կարգավորումը, որպիսի պարագայում հիմնական և ավանդյալ բնույթի պահանջներով պատասխանողի կարգավիճակում կարող են հանդես գալ ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր սուբյեկտներ՝ ընդ որում նաև քաղաքացիադատավարական օրենսդրության իմաստով:

բ) արդյո՞ք պահանջների փոխկապակցվածությունը ենթադրում է նույն հացադիմումում այնպիսի հիմնական պահանջների մեկտեղում, որոնք չեն կանխորոշում միմյանց լուծման ելքը: Եթե պահանջների միջև առկա կապի հիմքում ընկած է նշված հանգամանքը, ապա կիրառման ենթակա է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգավորումը, որպիսի պարագայում փոխկապակցված պահանջներով պատասխանողի կարգավիճակում կարող է հանդես գալ բացառապես միևնույն սուբյեկտը:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ հայցադիմումին կցվում են վիճարկվող ակտը կամ դրա պատճենը, եթե այն հնարավոր է ներկայացնել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի և 74-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված՝ հայցադիմումին առաջադրվող պահանջները, ինչպես նաև նույն օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջը, եթե համապատասխան վիճարկվող ակտը կամ դրա պատճենը հնարավոր է ներկայացնել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իրավասու է կայացնելու որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով, դրանք պահանջելով դատավարության այն մասնակիցներից, պետական և տեղական ինքնակառավարման այն մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև դատավարությունում չներգրավված ֆիզիկական և իրավաբանական այն անձանցից, որոնց ազդեցության ոլորտում են դրանք կամ պետք է լինեն՝ սահմանելով ժամկետ դրանք դատարան ներկայացնելու համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանի պահանջները պարտադիր են կատարման համար նրա սահմանած ժամկետում: Այդ ժամկետում կատարման անհնարինության դեպքում պահանջի հասցեատերը պարտավոր է գրավոր դիմել դատարան՝ հայցելով կատարման նոր ժամկետ կամ հայտնելով որոշման կատարման անհնարինության

մասին՝ նշելով անհնարինության պատճառները: Դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել նոր ժամկետ կամ վերացնել նախկինում ընդունած որոշումը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ապացույց պահանջելու մասին դատարանի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ: Դատարանի որոշումը կամովին չկատարվելու դեպքում ենթակա է կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներից մեկով նշել է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է ապացույցներ ներկայացնելու ընդհանուր կանոն, համաձայն որի՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման համաձայն՝ վարչական մարմինը բոլոր դեպքերում, անկախ ապացուցման բեռը կրելու կամ չկրելու հանգամանքից, ունի իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած ապացույց ներկայացնելու պարտականություն, ինչը, սակայն, չի նշանակում, որ այդպիսիք ներկայացնելու անհնարինության դեպքում վարչական մարմինը պետք է կրի չապացուցված փաստով պայմանավորված բացասական իրավական հետևանքներ *(տե՛ս, ՀՀ Ֆինանսների նախարարության Շենակիթի հարկային տեսչությունն ընդդեմ՝ անհասարակաբար Մանուկ Նազարյանի թիվ ՎՆ/9439/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը)*:

Մեկ այլ գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին հանոգմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացման դատարանի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառարանված ներքին հանոգման հանգեցնելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից *(տե՛ս, ՀՀ կատավարությանն առնչվող պետական տեղամարմինների կոմիտեի Արսևի Մարկոսյանի տեսչությունն ընդդեմ՝ «Ջորջ ընդ Բրանդոն» ՍՊԸ-ի թիվ ՎՆ/5525/05/08 վարչական գործով 17.04.2009 թվականի որոշումը)*:

Հիմք ընդունելով վերը վկայակոչված իրավական նորմերը և շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ նշում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը որպես հայցադիմումը վերադարձնելու հիմք դիտարկել է հայցադիմումի ձևին և բովանդակությանը օրենքով ներկայացվող պահանջների չպահպանումը և հայցադիմումին կցվող որոշ փաստաթղթերի բացակայությունը, ներառյալ՝ վիճարկվող ակտը կամ դրա պատճենը հայցադիմումին չկցելը, եթե համապատասխան վիճարկվող ակտը կամ դրա պատճենը հնարավոր է ներկայացնել: Այսինքն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը որպես հայցադիմումը վերադարձնելու հիմք, ի թիվս այլ հիմքերի, սահմանել է ոչ թե վիճարկվող ակտը կամ դրա պատճենը ոչ ընթեռնելի վիճակում վարչական դատարան ներկայացնելը, այլ վիճարկվող ակտի կամ դրա պատճենի բացակայությունն առհասարակ: Օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի տարբերություն հայցադիմումին կցված, սակայն մասնակի ընթեռնելի կամ դժվար ընթեռնելի ակտի կամ դրա պատճենի առկայության դեպքի, վիճարկվող ակտի կամ դրա պատճենի հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերի շարքում առհասարակ բացակայությունը (բացառությամբ դրանցից որևէ մեկի՝ դատարան ներկայացնելու անհնարինության դեպքի) կարող է դատարանի մոտ ձևավորել կարծիք վիճարկվող ակտի՝ իրականության մեջ առհասարակ գոյություն չունենալու վերաբերյալ: Այսինքն՝ հայցադիմումին կից վիճարկվող ակտի կամ դրա պատճենը կցելու օրենսդրական պահանջի նպատակը դատարանին նշված ակտի՝ իրականության մեջ գոյություն ունենալու մասին հավաստիացնելն է: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ հայցվորը ներկայացնում է վիճարկվող ակտի՝ իր տիրապետության տակ

եղած պատճենը, սակայն մասնակի ընթեռնելի կամ դժվար ընթեռնելի վիճակում, ապա դատարանը չպետք է սահմանափակի անձի դատական պաշտպանության իրավունքը և դրա մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքը:

Վճռաբեկ դատարանն այնուամենայնիվ չի բացառում այնպիսի իրավիճակը, երբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կարգավորումը կարող է առավել լայն մեկնաբանվել: Մասնավորապես, այն դեպքում, երբ թեև վիճարկվող ակտը կամ դրա պատճենը նյութապես կցված են հայցադիմումին, սակայն կցված փաստաթուղթն առհասարակ հնարավոր չէ ընթերցել, ապա դատարանը կարող է նման իրավիճակը դիտարկել որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջի խախտում և վերադարձնել հայցադիմումը, եթե կցված վիճարկվող ակտի կամ դրա պատճենի անընթեռնելի-ությունը դատարանի մոտ կասկած է հարուցում վիճարկվող նման ակտի՝ իրականության մեջ առհասարակ գոյություն ունենալու վերաբերյալ: Այլ կերպ ասած, այն դեպքում, երբ հայցադիմումին կցված վիճարկվող ակտը կամ դրա պատճենն այն վիճակում են, որ հնարավորություն են տալիս առնվազն եզրահանգելու վիճարկվող ակտի՝ իրականության մեջ գոյության մասին, ապա դատարանը նման ակտի ընթեռնելի տարբերակի ձեռքբերումը կարող է ձեռնամուխ լինել նաև դատավարության հետագա փուլերում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ հայցվորն իր տիրապետման տակ ունեցած մասնակի ընթեռնելի վիճարկվող ակտը կամ դրա պատճենը ներկայացրել է դատարան, և բացակայում է Վճռաբեկ դատարանի կողմից՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կարգավորումը լայն մեկնաբանելու վերը բացահայտված անհրաժեշտությունը, ապա դատարանն օժտված է անհրաժեշտ ամբողջ գործիքակազմով դատավարության հետագա փուլերում ստանալու համապատասխան անհրաժեշտ ապացույցի ընթեռնելի տարբերակը: Նման դիրքորոշումը բխում է նախ և առաջ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքից (ex officio): Այլ կերպ ասած, նկարագրված իրավիճակում, դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակցի ներկայացրած ապացույցով և իր նախաձեռնությամբ կարող է ձեռնարկել համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Ի հիմնավորումն վերը շարադրված դիրքորոշման՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վկայակոչել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումն առ այն, որ վարչական մարմինը պարտավոր է ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները: Հիմք ընդունելով նշված կարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ գալիս է այն եզրահանգման, որ հայցադիմումին կցված մասնակի ընթեռնելի կամ դժվար ընթեռնելի վիճարկվող ակտը կամ դրա պատճենը դատավարության հետագա փուլերում կարող է փոխարինվել ընթեռնելի ապացույցով:

Վճռաբեկ դատարանի վերագրյալ իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Հայկանուշ Մանուկյանի կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է.

1. անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 30.04.2001 թվականի թիվ 419 որոշման 1-ին, 3-րդ և 5-րդ կետերը և նշված որոշման թիվ 1 հավելվածի 23-րդ կետը հայցվորին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Ներքին Շենգավիթ 4 փողոց 38 տուն հասցեին վերաբերող մասով (ինքնուրույն պահանջ),

2. անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի և «Երևանի էլեկտրացանց» ՓԲԸ-ի միջև 07.09.2001 թվականի նոտարական կարգով կնքված թիվ 3-9137 հողի վարձակալության պայմանագիրը և դրա հիման վրա նշված վարձակալության պայմանագրի

պետական գրանցումը /03.10.2001 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 481085 վկայական/ (աժանցյալ պահանջներ),

3. պարտավորեցնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով հայցվորին պատկանող ք.Երևան, Ներքին Շենգավիթ 4 փողոց 38 տուն հասցեում գտնվող հողամասը բերել նախկին տեսքին՝ ապամոնտաժել էլեկտրական ենթակայանն իր պատկանելիքներով, քանդել շինությունը և դրանով ծանրաբեռնված հողամասը վերադարձնել հայցվորին (աժանցյալ պահանջներ):

Դատարանի 11.06.2021 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ «(…) 30.04.2001 թվականի թիվ 419 որոշման և դրա հավելվածի պարճեններն ընթեռնելի չեն (...), հայցվորի կողմից չեն ներկայացվել հիմնավորումներ և սպառույցներ՝ 30.04.2001 թվականի թիվ 419 վարչական ակտի և դրա հավելվածի ընթեռնելի պարճենները ձեռք բերելու և դրանք դադարաւն ներկայացնելու անհնարինության մասին:

(...) հիքնակաւ կառույցի քանդման հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով (...), ինքնակաւ կառույցը քանդելու վերաբերյալ պահանջը չի կարող աժանցվել վիճարկման հայցից՝ վերջինս չի կողմնորոշում կառույցը քանդելու պահանջի լուծման ելք:

(...) ներկայացված հայցը չի համապարասիասնում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներին, որի համաժայն՝ հայցվորը կարող է մեկից ավելի պահանջներ միավորել մեկ հայցում, եթե դրանք ուղղված են միևնույն պարասիասնողի դեմ և փոխկապակցված են, մինչդեռ հայցադիմումում նշվել են հինգ պարասիասնողներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ և 7-րդ կերերի համաժայն հայցադիմումը բովանդակում է պարասիասնողի անվանումը, (...) հայցվորի պահանջը:

Յույն օրենսգրքի 16-րդ հոդվածի համաժայն՝ պարասիասնողն այն վարչական մարմինն է, պաշտոնարար անձը, ֆիզիկական կաւ իրավաբանական անձը, որի դեմ հայց է ներկայացվել վարչական դարարան:

Տվյալ պարագայում հայցվորը, որպես հիմնական պահանջ, ինդրել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի որոշումը, որպիսի պահանջն ուղղված է Երևանի քաղաքապետարանի դեմ: Դարարանն արճանագրում է, որ հայցադիմումում որպես պարասիասնող նշված ՀՀ կաւաւարության դեմ որևէ պահանջ չի ներկայացվել, իսկ ՀՀ նուրարական պալատի, Կաղապորի կոմիտեի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության մասնակցությունը սույն գործին կարող է սահմանափակվել երրորդ անձի կարգավիճակով):

Վերաքննիչ դատարանը 30.08.2021 թվականի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ իրավաչափ համարելով հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ Դատարանի եզրահանգումները:

Մինչդեռ, սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ արճանագրում է հետևյալը.

Սույն գործով հայցվորը մեկից ավելի պատասխանողների դեմ ներկայացրել է իրար հետ փոխկապակցված մի քանի պահանջ, որոնցից առաջինը՝ Երևանի քաղաքապետարանի 30.04.2001 թվականի թիվ 419 որոշման 1-ին, 3-րդ և 5-րդ կետերը և նշված որոշման թիվ 1 հավելվածի 23-րդ կետը հայցվորին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Ներքին Շենգավիթ 4 փողոց 38 տուն հասցեին վերաբերող մասով անվավեր ճանաչելու մասին, ըստ հայցվորի հիմնական է և ընդդատյա է վարչական դատարանին: Մյուս պահանջները, այն է՝ Երևանի քաղաքապետարանի և «Երևանի էլեկտրացանց» ՓԲԸ-ի միջև 07.09.2001 թվականի նտարական կարգով կնքված թիվ 3-9137 հողի վարճակալության պայմանագիրը և դրա հիման վրա նշված վարճակալության պայմանագրի պետական գրանցումն անվավեր ճանաչելը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին պարտավորեցնելը սեփականության իրավունքով հայցվորին պատկանող ք. Երևան, Ներքին Շենգավիթ 4 փողոց 38 տուն հասցեում գտնվող հողամասը բերել նախկին տեսքին՝ ապամոնտաժել էլեկտրական ենթակայանն իր պատկանելիքներով, քանդել

շինությունը և դրանով ծանրաբեռնված հողամասը վերադարձնել հայցվորին, ըստ հայցվորի ածանցյալ են:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորը, իրացնելով դատական պաշտպանության իր իրավունքը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներին համապատասխան դատարան է ներկայացրել միմյանց հետ փոխկապակցված մեկից ավելի պահանջներ: Հայցվորի կողմից ներկայացված պահանջներից հիմնականն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանի քննությանը, ուստի, քաղաքացիաիրավական բնույթ կրող ածանցյալ պահանջները ևս ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից: Ինչպես արդեն նշվեց, ածանցյալ պահանջների քննության մասով կիրառման են ենթակա Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի կանոնները, եթե դրանց կիրառումը չի հակասում վարչական դատավարության օրենսգրքով ամրագրված սկզբունքներին: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանելու հիմքով վերադարձնելը իրավաչափ չէ, քանի որ տվյալ իրավակարգավորումը նշված դեպքում կիրառելի չէ, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Բացի այդ, Դատարանը, հիմնվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կանոնների վրա, անդրադարձ է կատարել հայցվորի կողմից ներկայացված հայցում մատնանշված պատասխանողների դատավարական կարգավիճակին՝ գտնելով, որ ՀՀ նոտարական պալատի, Կադաստրի կոմիտեի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի մասնակցությունը սույն գործին կարող է սահմանափակվել երրորդ անձի կարգավիճակով: Մինչդեռ, վերոշարադրյալ վերլուծությունները հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացիաիրավական պահանջներով հայցվորի կողմից մատնանշված պատասխանողների վերաբերյալ Դատարանի նման եզրահանգումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կարգավորումներով կառուցելը, և Վերաքննիչ դատարանի կողմից Դատարանի նման եզրահանգումը հիմնավոր դիտարկելը ոչ իրավաչափ է: Մասնավորեցնելով նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից ներկայացված քաղաքացիաիրավական պահանջների և այդ պահանջներով պատասխանողների ընտրության և դատավարական կարգավիճակի վերաբերյալ Դատարանը կարող էր գնահատական տալ առաջնորդվելով վերաբերելի դատավարական կանոններով, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումներով: Վերոգրյալից ևս հետևում է, որ սույն գործով կիրառելի չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով հայցադիմումը վերադարձնելու հաջորդ հիմքի վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվորի կողմից ներկայացված վիճարկվող վարչական ակտի և դրա հավելվածի պատճենները հնարավորություն են տվել Դատարանին արձանագրելու, որ իրականության մեջ առկա է Երևանի Քաղաքապետարանի 30.04.2001 թվականի թիվ 419 որոշումը՝ «Երևանի էլեկտրացանց» ՓԲԸ-ի տրանսֆորմատորային ենթակայանների զբաղեցրած հողատարածքների սահմանների ճշտման և կարգավիճակի որոշման մասին», որի հավելված 1-ում ներկայացված են վարձակալության հանձնված հողամասի հասցեները: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստորեն Դատարանը, արձանագրած լինելով հայցվորի կողմից ներկայացված վիճարկվող ակտի՝ իրականության մեջ գոյություն ունենալու հանգամանքը, վերադարձրել է հայցը՝ պահանջելով Դատարան ներկայացնել դրա և կից հավելվածի ընթեռնելի տարբերակը, իսկ Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել Դատարանի նման դիրքորոշումը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկվող ակտի՝ իրականության մեջ գոյություն ունենալու վերաբերյալ բավարար ապացույցներ ունենալու պայմաններում՝ անընթեռնելի վարչական ակտ ներկայացված լինելու պատճառաբանությամբ հայցը վերադարձնելու մասին Դատարանի եզրահանգումը Վերաքննիչ դատարանի կողմից հիմնավոր համարվելն իրավաչափ չէ: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

սույն գործով ստորադաս դատարանները եկել են սխալ եզրահանգման՝ հայցադիմումին կից վիճարկվող ակտը կամ դրա պատճենը կցելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջի խախտված լինելու վերաբերյալ, ինչի հետևանքով սահմանափակել են հայցվորի դատական պաշտպանության իրավունքը և դրա մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.08.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 11.06.2021 թվականի որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/6829/05/14 2021թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/6829/05/14
Նախագահող դատավոր՝ Ք. Մկոյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
Ա. Սարգսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2021 թվականի մայիսի 21-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Ներսես, Խաչատուր և Սերգեյ Հակոբյանների և Էլեոնորա Մախլովայի ընդդեմ Երևան համայնքի, Երևանի քաղաքապետարանի, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, երրորդ անձ Արմեն Թերեգյանի՝ Երևան քաղաքի Արարատյան 37 և 37/2 հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Երևան համայնքի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները, Երևանի քաղաքապետի 16.07.2013 թվականի թիվ 3542-Ա որոշումը և, որպես հետևանք, Արմեն Թերեգյանի անվամբ կատարված իրավունքի պետական գրանցումը վերացնելու և Երևան քաղաքի Արարատյան փողոցի հ. 37 (այդ թվում 37/2) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն իրենց անհատույց փոխանցելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.09.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Ներսես, Խաչատուր և Սերգեյ Հակոբյանների ու Էլեոնորա Մախլովայի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատարանական նախապարունությունը

Դիմելով դատարան՝ Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյանները և Էլեոնորա Մախլովան պահանջել են վերացնել Երևանի քաղաքապետի 28.12.2011 թվականի թիվ 7159-Ա որոշումը, Երևան քաղաքի Արարատյան 37 և 37/2 հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Երևան համայնքի անվամբ կատարված 04.07.2012 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցումները, Երևանի քաղաքապետի 16.07.2013 թվականի թիվ 3542-Ա որոշումը և, որպես հետևանք, Արմեն Թերեգյանի անվամբ կատարված իրավունքի պետական գրանցումը, և պարտավորեցնել Երևան համայնքին ընդունել բարենպաստ վարչական ակտ Երևան քաղաքի Արարատյան փողոցի հ. 37 (այդ թվում 37/2) հասցեում գտնվող անշարժ գույքի (175,58 քմ բնակելի տուն, 10,9 քմ և 30,73 քմ օժանդակ շինությունների և 0,037846 հա հողամասի) նկատմամբ սեփականության իրավունքն իրենց անհատույց փոխանցելու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան) 06.06.2018 թվականի որոշմամբ սույն վարչական գործի վարույթը մասնակիորեն՝ Երևանի քաղաքապետի 28.12.2011 թվականի թիվ 7159-Ա որոշումը վերացնելու պահանջի մասով, կարճվել է:

Դատարանի՝ նույն օրը կայացված վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. անվավեր են ճանաչվել Երևան քաղաքի Արարատյան 37 և 37/2 հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Երևան համայնքի անվամբ համապատասխանաբար 04.07.2012 և 29.04.2013 թվականներին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները (վկայականներ թիվ 04072012-01-1045 և թիվ 29042013-01-0095), Երևանի քաղաքապետի 16.07.2013 թվականի թիվ 3542-Ա որոշումը և Արմեն Թերեգյանի անվամբ 04.09.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը (վկայական թիվ 04092013-01-0004), մնացած մասով հայցը մերժվել է: Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյանների և Էլեոնորա Մախլովայի հայցը՝ Երևանի քաղաքապետարանի և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության դեմ ներկայացված մասով մերժվել է ոչ պատշաճ պատասխանողների դեմ ուղղված լինելու պատճառով:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.09.2018 թվականի որոշմամբ Դատարանի 06.06.2018 թվականի վճռի դեմ Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյանների և Էլեոնորա Մախլովայի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյանները և Էլեոնորա Մախլովայ (ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյան):
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 130-րդ հոդվածը և 137-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարճառաբանել են հետևյալ փաստարկներով.

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ որևէ նորմ, որն արգելում է վերաքննիչ բողոք բերել վճռի պատճառաբանական մասի դեմ:

Վերաքննիչ դատարանը պետք է վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ, քննել և վճիռը փոփոխել ու կրկին պատճառաբանել՝ վերաքննիչ բողոքում ներկայացված

հիմնավորումների սահմաններում: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը սխալ հիմնավորումներով առհասարակ մերժել է վերաքննիչ բողոքի ընդունումը, որի հետևանքով բողոք բերած անձանց գրկել է դատական պաշտպանության իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են վերացնել Վերաքննիչ դատարանի 07.09.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական դատարանի վճիռը միայն պատճառաբանական մասով բողոքարկվելու դեպքում վերաքննիչ բողոքի ընդունումը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունեցող անձի կողմից այն բերված լինելու հիմքով մերժելու իրավական հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք վարչական դատարանի վճիռը միայն պատճառաբանական մասով բողոքարկվելու դեպքում այդ բողոքի ընդունումը ենթակա է մերժման՝ վերաքննիչ բողոքը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունեցող անձի կողմից բերված լինելու հիմքով:

3.1. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...) ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն

էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յրե՛ս, Ashingdane v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետք 57*):

Եվրոպական դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*յրե՛ս, ophնակ, Khalifaoui v. France գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետքեր 35, 36, Papon v. France գործով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, կետք 90*):

Ըստ Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքը չի ներառում վերաքննության իրավունքը: Եվրոպական դատարանն իր որոշումներում արտահայտել է այն դիրքորոշումը, համաձայն որի՝ Եվրոպական կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե նման դատարաններ գոյություն ունեն, ապա 6-րդ հոդվածի երաշխիքներն պետք է տրամադրվեն (*յրե՛ս, ophնակ, Staroszczyk v. Poland գործով Եվրոպական դատարանի 22.03.2007 թվականի վճիռը, կետք 125*):

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում ձևավորել է այն դիրքորոշումը, որ դատական ակտի բողոքարկման կամ վերաքննության իրավունքը թեև վերաքննիչ և վճռաբեկ ատյանի դատարաններ ստեղծված լինելու պարագայում հանդիսանում է դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների բաղադրատարր, այնուամենայնիվ, նշված իրավունքները բացարձակ չեն և ենթակա են որոշակի սահմանափակման (*յրե՛ս, ophնակ, ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2012 թվականի թիվ ՄԴՈ-1037 որոշումը*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*յրե՛ս, նաև «Ճաստք Սիլվայ» ՄԳԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴՅ/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներում (*յրե՛ս, ՄԴՈ-652, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-765, ՄԴՈ-844, ՄԴՈ-873, ՄԴՈ-890, ՄԴՈ-932, ՄԴՈ-942, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1052, ՄԴՈ-1115, ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1196, ՄԴՈ-1197, ՄԴՈ-1220, ՄԴՈ-1222, ՄԴՈ-1257, ՄԴՈ-1289*) կարևորելով իրավակարգավորման մի շարք սկզբունքներ, նաև արձանագրել է, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպլեմենտիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների լույսի ներքո պետք է մեկնաբանվի նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը: Այսպես՝

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ կողմերն իրավունք ունեն նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բողոքարկելու դատական ակտերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանի՝ **գործն ըստ էության լուծող դատական ակտերի**, ինչպես նաև նույն օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի **դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն դատավարության մասնակիցները**:

Վերոգրյալ նորմերի համակարգային մեկնաբանությունից հետևում է, որ դատավարության մասնակիցներն իրավունք ունեն բողոքարկելու դատական ակտերը, ընդ որում, գործն ըստ էության լուծող դատական ակտերն առանց բացառության, իսկ միջանկյալ դատական ակտերի դեպքում՝ այն ակտերը, որոնց բողոքարկման հնարավորությունը նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վարչական դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք առավել հաճախ բերում է դատավարության այն մասնակիցը, որը գործի ելքում դատավարական իմաստով պարտվել է, այսինքն՝ դատավարության այն մասնակիցը, ի վնաս որի կայացվել է վճիռը: Սակայն գործնականում հանդիպում են դեպքեր, երբ դատավարության այս կամ այն մասնակիցը, համաձայն լինելով վճռի եզրափակիչ մասին, համաձայն չէ դրա պատճառաբանական մասին (դրա մի մասին): Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանելով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը բողոքարկելու՝ դատավարության մասնակիցների իրավունքը, օրենսդիրն այդ իրավունքի իրացումը որևէ կերպ չի պայմանավորել դատական ակտի եզրափակիչ մասի՝ դատավարության տվյալ մասնակցի համար ամբողջությամբ կամ մի մասով անբարենպաստ լինելու հետ: Դա նշանակում է, որ դատավարության մասնակիցների՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը բողոքարկելու իրավունքը երաշխավորվում է՝ առանց այդ դատական ակտերի միջև տարանջատման՝ ի վնաս կամ հօգուտ դատավարության տվյալ մասնակցի լինելու չափանիշով:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճիռը միայն պատճառաբանական մասով (դրա մի մասով) բողոքարկելը ևս ինքնանպատակ չէ: Նման հնարավորություն ապահովելու անհրաժեշտությունը Վճռաբեկ դատարանը պայմանավորում է այն հանգամանքով, որ դատավարության մասնակիցների համար հետևանքներ է առաջացնում, նրանց իրավունքները և պարտականությունները շոշափում է վճռի ոչ միայն

եզրափակիչ մասը, այլև պատճառաբանական մասը: Վերոգրյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը մինևույն կողմերի մասնակցությամբ սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական, սնանկության կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով դատական ակտերի նախադատելիության հարցին, արձանագրել է, որ գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն՝ ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում: Որպես կանոն, դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով՝ թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա: Հետևաբար նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս (յրե՛ս, «Մայթն» ՄՊԸ-ն ընդդեմ Աշոր և Հենրիկ Այվազյանների թիվ 3-93(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական գործով կայացված վճիռը, ուժի մեջ մտնելով, ի թիվս այլ հատկանիշների (պարտադիրություն, անհերքելիություն, կատարելիություն), ձեռք է բերում նաև նախադատելիության հատկանիշ, որի հիման վրա էլ այդ դատական ակտով հաստատված փաստերը նույն կողմերի միջև (անձանց մասնակցությամբ) նոր վարչական կամ քաղաքացիական գործ քննելիս, որպես ընդհանուր կանոն, պարտադիր նշանակություն են ունենում դատավարության մասնակիցների և դատարանի համար և ներմուծվում են նոր կայացվող դատական ակտում՝ որպես այլևս ապացուցման կարիք չունեցող փաստեր: Հետևաբար վճռով վարչական դատարանի կողմից որոշակի փաստերի հաստատումը դատավարության մասնակիցների համար էական նշանակություն կարող է ունենալ ոչ միայն տվյալ վարչական գործի ելքի վրա դրանց ունեցած ազդեցության ուժով, այլև այն կարող է ազդել նրանց մասնակցությամբ վարչական կամ քաղաքացիական այլ գործով ապացուցման ենթակա փաստերի շրջանակի որոշման վրա՝ դրանց կազմից բացառելով նախադատելի փաստերը: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նաև սրանով պայմանավորված՝ վարչական դատավարության մասնակիցների համար պետք է նաև ապահովվի վճիռը միայն պատճառաբանական մասով բողոքարկելու հնարավորությունը:

Այսպիսով, վարչական դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք կարող է քերվել ինչպես այն դեպքում, երբ գործն ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծվել է ի վնաս բողոք բերող անձի, այնպես էլ այն դեպքում, երբ վերջինս համաձայն չէ այդ դատական ակտի միայն պատճառաբանական մասին (դրա մի մասին):

3.2. Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը սահմանել է վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերը: Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝

1) նույն օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում անձը չի վերացրել բողոքում առկա սխալները, որոնց չվերացնելն արգելք է բողոքի քննության համար, կամ բողոքը բերել է նույն օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ կամ նույն օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացրել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է.

2) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է.

3) բողոքը բերել է այն անձը, որը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի.

4) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման.

5) բողոքարկվել է այն դատական ակտը, որն ընդդատյա չէ վերաքննիչ դատարանին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման: Ընդ որում, վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու վերը նշված հիմքերը սպառիչ են, ուստի վերաքննիչ դատարանն իրավասու չէ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել այլ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածով չնախատեսված որևէ հիմքով:

Հաշվի առնելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքին (բողոքը բերել է այն անձը, որը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի): Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված իրավանորմը ենթակա է մեկնաբանման՝ հաշվի առնելով նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի կարգավորումը: Ինչպես նշվեց, այդ հոդվածով սահմանված է վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու՝ դատավարության մասնակցի իրավունքը, հետևաբար վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ դատավարության մասնակցի կողմից բերված վերաքննիչ բողոքի ընդունումը (անկախ այն հանգամանքից, թե դատական ակտը բողոքարկվում է միայն պատճառաբանական, թե նաև եզրափակիչ մասով) չի կարող մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոքը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունեցող անձի կողմից բերված լինելու հիմքով:

Այսպիսով, վարչական դատարանի վճիռը դատավարության մասնակցի կողմից միայն պատճառաբանական մասով բողոքարկվելու դեպքում վերաքննիչ բողոքի ընդունումը չի կարող մերժվել՝ վերաքննիչ բողոքը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունեցող անձի կողմից բերված լինելու հիմքով:

Սույն վարչական գործը հարուցվել է Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյանների և Էլեոնորա Մաիրովայի հայցի հիման վրա, որով վերջիններս պահանջել են վերացնել Երևանի քաղաքապետի 28.12.2011 թվականի թիվ 7159-Ա որոշումը, Երևան քաղաքի Արարատյան 37 և 37/2 հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Երևան համայնքի անվամբ կատարված 04.07.2012 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցումները, Երևանի քաղաքապետի 16.07.2013 թվականի թիվ

3542-Ա որոշումը և, որպես հետևանք, Արմեն Թերեգյանի անվամբ կատարված իրավունքի պետական գրանցումը, և պարտավորեցնել Երևան համայնքին ընդունել բարենպաստ վարչական ակտ Երևան քաղաքի Արարատյան փողոցի հ. 37 (այդ թվում 37/2) հասցեում գտնվող անշարժ գույքի (175,58 քմ բնակելի տուն, 10,9 քմ և 30,73 քմ օժանդակ շինությունների և 0,037846 հա հողամասի) նկատմամբ սեփականության իրավունքն իրենց անհատույց փոխանցելու վերաբերյալ:

Դատարանը 06.06.2018 թվականի որոշմամբ սույն վարչական գործի վարույթը մասնակիորեն՝ Երևանի քաղաքապետի 28.12.2011 թվականի թիվ 7159-Ա որոշումը վերացնելու պահանջի մասով, կարճել է:

Դատարանի՝ նույն օրը կայացրած վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. անվավեր են ճանաչվել Երևան քաղաքի Արարատյան 37 և 37/2 հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Երևան համայնքի անվամբ համապատասխանաբար 04.07.2012 և 29.04.2013 թվականներին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները (վկայականներ թիվ 04072012-01-1045 և թիվ 29042013-01-0095), Երևանի քաղաքապետի 16.07.2013 թվականի թիվ 3542-Ա որոշումը և Արմեն Թերեգյանի անվամբ 04.09.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը (վկայական թիվ 04092013-01-0004), մնացած մասով հայցը մերժվել է: Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյանների և Էլեոնորա Մախլովայի հայցը՝ Երևանի քաղաքապետարանի և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության դեմ ներկայացված մասով մերժվել է ոչ պատշաճ պատասխանողների դեմ ուղղված լինելու պատճառով:

Վերաքննիչ դատարանը 07.09.2018 թվականի որոշմամբ Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյանների և Էլեոնորա Մախլովայի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ Վերաքննիչ դատարանը չունի այն անձի բողոքը քննելու լիազորություն, հօգուտ որի դատական ակտ է կայացվել, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ, վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման, քանի որ բողոքը համարվում է ներկայացված անձանց կողմից, ովքեր դատական ակտը բողոքարկելու իրավունք չունեն:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, դատավարության մասնակիցների համար սահմանելով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավական հնարավորություն, չի բացառել դատական ակտը միայն պատճառաբանական մասով բողոքարկելու հնարավորությունը: Հետևաբար՝ Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյանները և Էլեոնորա Մախլովան, չհամաձայնելով վճռում տեղ գտած պատճառաբանություններին, որպես դատավարության մասնակիցներ իրավունք ունեն բողոքարկելու Դատարանի 06.06.2018 թվականի վճիռը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ տվյալ դեպքում Դատարանի 06.06.2018 թվականի վճիռը բողոքարկելով՝ Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյանները և Էլեոնորա Մախլովան նպատակ են ունեցել վերաքննության կարգով գնահատման առարկա դարձնել Դատարանի կողմից բողոքարկվող դատական ակտով որոշակի փաստերի հաստատումը, ինչին բողոք բերած անձինք չեն համաձայնել: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ փաստերը կարող են Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում դառնալ նախադատելի, ուստի դատավարության մասնակիցների (այդ թվում՝ բողոք բերած անձանց) համար պետք է ապահովվի վերաքննիչ բողոք բերելու միջոցով Դատարանի կողմից այդ փաստերի հաստատումը վիճարկելու հնարավորություն:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ տվյալ դեպքում բացակայում է վերաքննիչ բողոքը քննելու համար ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանված՝ վերաքննիչ դատարանի համապատասխան լիազորություն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքով Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյանները և Էլեոնորա Մախլովան խնդրել են «մասնակի բեկանել և փոփոխել ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/6829/05/14 վարչական գործով 06.06.2018 թվականին կայացված դատական ակտը և կայացնել նոր դատական ակտ՝ հիմք ընդունելով վերաքննիչ բողոքում ներկայացված հիմնավորումները»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը, ի թիվս այլ լիազորությունների, մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն վարչական դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ իրավիճակում կարող է կիրառվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի լիազորությունը: Մասնավորապես՝ սույն վերաքննիչ բողոքը վարույթ ընդունվելու և քննվելու դեպքում հնարավոր են հետևյալ իրավիճակները.

ա) բողոքը հիմնավոր չէ, որի դեպքում կիրառելի կլինի վերաքննիչ բողոքը մերժելու և դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը.

բ) բողոքը հիմնավոր է, որի դեպքում այն, մինչև սույն է, բավարար չէ բողոքարկվող դատական ակտը բեկանելու համար: Դա նշանակում է, որ այդ դեպքում ևս կիրառելի կլինի վերաքննիչ բողոքը մերժելու և դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը: Մինչև սույն ժամանակ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում բողոքը հիմնավոր լինելը վկայում է դատական ակտը (մասնակիորեն) սխալ պատճառաբանված լինելու մասին, անհրաժեշտ կլինի նաև պատճառաբանել անփոփոխ թողնված դատական ակտը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում Դատարանի 06.06.2018 թվականի վճռի դեմ Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյանների և Էլեոնորա Մախլովայի ներկայացուցչի կողմից բերված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոքը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունեցող անձի կողմից բերված լինելու հիմքով՝ վերաքննիչ դատարանը բողոք բերած անձանց գրկել է Դատարանի 06.06.2018 թվականի վճիռը բողոքարկելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հնարավորությունից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.09.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
01.01.2021 – 01.07.2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

ՀԱՏՈՐ XV



Անտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am

